Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

ԳԻՐՔ
IV

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2010

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ս 504

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Գրքի տպագրական ծախսերը հոգացել է
ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ
հիմնարկության հայկական բաժանմունքը:
Հեղինակը երախտագիտություն է
հայտնում նրա ղեկավար, հայկական
մշակույթի անխոնջ նվիրյալ դոկտոր
ԶԱՎԵՆ ԵԿԱՎՅԱՆԻՆ՝
մեզ ընդառաջելու համար:

Սիմոնյան Հրաչիկ
Ս 504 ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ, Գիրք IV.
– Եր.: ԵՊՀ հրատ., 2010, 1204 էջ:

Գրքում համակողմանի քննության են առնված 1909-1911 թթ. հայաշխարհում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-8084-1322-1
© Սիմոնյան Հ., 2010 թ.
© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

ԻՐԱՐԱՆՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՐՁԱՆՔՆԵՐ

Հայաշխարհի երեք մասերում՝ Թուրքահայաստանում, Կովկասյան Հայաստանում և Պարսկահայքում ծավալվող իրարից տարբեր իրադարձությունները մի ընդհանրություն ունեին՝ հայությունը կանգնած էր նոր փորձությունների ու մարտահրավերների առջև:

ՆՈՐ ԱԼԵԿՈԾՈՒՄՆԵՐ ԹՈՒՐՔԱՀԱՅՈՑ ԿՅԱՆՔՈՒՄ

Ինչխանական վերնախավի հակասությունների խորացումը, երիտթուրքերի դեմ Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի գնալով ծավալվող պայքարը, տնտեսության տեղքայլը երկրում խառնաշփոթ իրավիճակ էին ստեղծել: Բնականաբար դա անդրադառնում էր նաև հայոց կյանքի վրա՝ բարդացնելով նրա ընթացքը:

Թուրքահայության կյանքը չարունակում էր ալեկոծ մնալ: Որոշ դրական միտումների կողքին ավելի ու ավելի մեծ ծավալներ էին ընդունում ազգային մարմինը խարխլող միտումները:

Որքան էլ տագնապալի էր Թուրքահայոց վիճակը, նրանք, սակայն, չէին կորցնում բարվոք ապագայի հույսը և կյանքի տարբեր բնագավառներում առաջընթացի քայլեր կատարելու ճիգեր էին թափում:

Չնայած իր համար ստեղծված անտանելի պայմաններին, հայ բուրժուազիան դեռ չարունակում էր տնտեսական կարևոր դիրքեր պահպանել Օսմանյան կայսրության տարածքում: Երկրի առևտրի և արդյունաբերության մեջ հայ բուրժուաներին էր պատկանում կապիտալի քառորդ մասը, երբ թուրք բուրժուաները վերահսկում էին առևտրական գործառնությունների միայն

15 տոկոսին և արտադրության 12 տոկոսին:

Տնտեսության մեջ դեռ ամուր դիրքեր էին պահպանում ոչ միայն հայ դրամատերերը: Օգտվելով կոտորածների միջև ընկած կարճատև դադարներից, հայ ժողովուրդն իրեն հատուկ ջանադրությամբ շարունակում էր ստեղծագործ աշխատանքը հայրենի լեռներում ու դաշտերում, միաժամանակ մտորում ապագայի նոր ծրագրեր՝ հույս ունենալով, թե գուցե օրերից մի օր իր համար էլ ապրելու մի դուռ կբացվի՝ առանց սարսափի ու կոտորածների: «Հայերն իրենց տարածքում ապրում են ավելի քան երեք հազար տարի,- ասված էր Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության զեկուցագրերից մեկում:- Նրանց մոտ 80 տոկոսն այնտեղ զբաղվում է հողագործությամբ, իսկ մնացածներն ապրում են քաղաքներում՝ զբաղվելով առևտրով ու արհեստներով: Ինչ վերաբերում է Փոքր Ասիայի արևմտյան մասում՝ օսմանյան Թուրքերի շրջանում ապրող հայերին, ապա սրանք գերազանցապես ընակվում են քաղաքներում և իրենց ձեռքում են կենտրոնացրել Ասիական Թուրքիայի ամբողջ առևտուրն ու արհեստները ...»: Փաստաթղթում այնուհետև ասված էր, որ չնայած բոլոր արհավիրքներին, հայերը հաջողել են պահպանել «իրենց ամբողջ ազգային կարգ ու սարքը և բուն իսկ տարածքը»[1]:

ՄԵԾ ԱՂԵՏ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Թուրքական սահմանադրության վերահաստատումից և իթթիհադականների իշխանության գալուց ընդամենը 9 ամիս հետո Թուրքերի հակահայկական մոլեռանդությունն իր արյունոտ արտահայտությունը գտավ այս անգամ Կիլիկիայում*, 1909 թ. ապրիլին: Հայությունը նորից դեմ հանդիման կանգնեց վայրե-

---

[1] **Б. А. Борьян**, Армения, международная дипломатия и СССР, часть II, Госиздат, Москва-Ленинград, 1929, с. 418.

* Կիլիկիայի հայության 1909 թ. ապրիլյան մեծ արհավիրքը մանրամասն լուսաբանված է 2009 թ. Երևանում տպագրված մեր «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)» մենագրության մեջ (529 էջ), ուստի այստեղ բավարարվում ենք այդ մեծ ողբերգության սեղմ նկարագրությամբ:

նացած ամբոխի ու նրա ետևում կանգնած իշխանությունների մոլուցքին:

Թուրքական 1892 թ. պաշտոնական վիճակագրության համաձայն, միայն Ադանայի վիլայեթում (որն ընդգրկում էր հայկական Կիլիկիայի հիմնական մասը) առաքելական հայերի թիվը մոտավորապես 150.000 հոգի էր՝ չհաշված զգալի թիվ կազմող հայ կաթոլիկներին ու ավետարանականներին*: Այդ թվաքանակի մեջ չէին հաշվվում հայկական ծագում ունեցող հայուկ, պոզան, չանդըր և այլ անուններով մուսուլմանները: Թիֆլիսի «Մշակ» օրաթերթի խմբագիր Համբարձում Առաքելյանը Կիլիկիայի (Ադանայի ամբողջ վիլայեթի և Հալեպի վիլայեթի արևմտյան մասի) բնակչության ընդհանուր թիվը 1896 թ. հաշվում էր մոտավորապես 500.000, իսկ միայն հայությանը՝ 150.000-200.000 հոգի[1]: Ըստ Ադանայի հայ ավետարանականների հոգևոր հովիվ վեր. Համբարձում Աչճյանի՝ տարբեր ազգի մուսուլմանների (թուրք, թուրքմեն, քուրդ, արաբ ալևի, չերքեզ, աբդալ, աֆշար, յուրուք ևն.) և քրիստոնյաների (հայ, հույն, ասորի, քաղդեացի) թվաքանակը 1909 թ. սկզբին մոտավորապես հավասար էր[2]: Կիլիկիայի Սիս քաղաքում էր գտնվում կենտրոնը Տանն Կիլիկիո կաթողիկոսության, որ Սահակ Խապայանի կաթողիկոսական ընտրությանը (1902 թ.) հաջորդած տարիներին սկսել էր աշխուժացման նշաններ ցույց տալ՝ ներքին պառակտումներից և թուրքական իշխանությունների ու Սսի Կոզանօղլու դերեբեյիների կամայականություններից դարերով տուժելուց հետո[3]:

---

* Ադանայի թեմի առաջնորդարանի 1905-1915 թթ. դիվանապետ Քերովբե Փափազյանը միայն հայ առաքելականների թիվը նշում է մոտ 125.000 (տե՛ս **Բիւզանդ Եղիայեան**, Ատանայի հայոց պատմութիւն, Անթիլիաս, 1970, էջ 296):

[1] Տե՛ս **Համբարձում Առաքելեան**, Զէյթուն: Տեղագրական, ազգագրական եւ վարչական տեսութիւն, Թիֆլիս, 1896, էջ 48-49:

[2] Տե՛ս **Վեր. Համբարձում Յ. Աչճեան**, Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր, Նիւ Եորք, 1950, էջ 14:

[3] **В. А. Гурко-Кряжин**, Национально-освободительное движение на Ближнем Востоке, часть I, Сирия и Палестина, Киликия, Месопотамия и Египет, Москва, 1923, с. 54 (տողատակ):

Ադանայի վիլայեթի ողջ տարածքը կազմում էր մոտավորապես 39.900 քառ. կիլոմետր, որից 20.000 քառ. կիլոմետրը պիտանի էր մշակության համար:

Ադանայի վիլայեթի դաշտային ցածրադիր գոտու բնակչության մեծ մասը զբաղված էր գյուղատնտեսությամբ, լեռնային շրջաններում՝ անասնապահությամբ: Գյուղացիական մանր տնտեսությունների կողքին ձգվում էին մասնավոր սեփականատերերի լայնատարած ագարակները (չիֆթլիկները): Դրանցում և գյուղատնտեսական բերքի վերամշակման ձեռնարկություններում սեզոնային աշխատանք կատարելու համար հատկապես Արևմտյան Հայաստանից ամեն տարի գալիս էին տասնյակ հազարավոր աշխատող ձեռքեր, որոնք գումարվելով հայ ագարակատերերի՝ երկրագործական առաջավոր ձևերի ներդրումներին, նպաստում էին գյուղատնտեսության մեծ թափով առաջընթացին:

Քաղաքների, մասնավորաբար մեծ կամ ծովափնյա բնակավայրերի հայության մի զգալի զանգված էլ զբաղված էր արհեստներով ու վաճառականությամբ: Արհեստավորների 85 տոկոսը հայ էր[1]: Երկրի պտղաբերությունը, ծովային առևտրի ընձեռած առավելությունները, եվրոպական արտադրության գնալով ուժեղացող ներթափանցումն ու հայերի աշխատասիրությունն այն հիմնական խթաններն էին, որոնցով Կիլիկիայի հայությունը տնտեսական առաջնակարգ դիրքեր էր ձեռք բերում և բարելավում իր կյանքի որակը, ինչն առաջացնում էր տգետ, խավարամիտ, ծուլության և քրիստոնյաների ունեցվածքը հափշտակելու հակված մուսուլման զանգվածների նախանձը ու գրգռում նրանց կողոպուտի ախորժակը:

Կիլիկիայի հայության 1909 թ. ապրիլյան աղետի **հիմնական պատճառներն** էին.

Ա) **Հայերի և թուրքերի միջև փոխադարձ անվստահությունը.**- Ցեղային ատելության հասնող այդ անվստահությունը չէր վերացել ու չէր էլ կարող վերանալ 1908 թ. հուլիսյան կեղծ «եղ-

---

[1] Տե՛ս **Հրաչեայ Աճառեան**, Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչեւ 1915 թ.), Նոր Նախիջեւան, 1915, էջ 57:

բայրական» ողջագուրումներով, «Օսմանյան հայրենիքին» նվիրվածության մասին ճոռոմ ճառերով և ցուցադրություններով: Մուսուլման խավարամիտ դանդվածը, հատկապես հեռավոր գյուղերում, բան չէր հասկանում «սահմանադրություն», «ազատություն» և նման հասկացություններից: Ավելին, նրա միտքը պղտորված էր չրջող տարաձայնություններից, թե սահմանադրության հայտնության մեջ խառն է ճարպիկ հայերի մատը, ուստիև սահմանադրություն կոչվածից իրենց համար միայն ու միայն վատ բան պետք է սպասել: Թուրքերն ու քրդերը հատկապես բորբոքված էին, որ սահմանադրությունը Կիլիկիայի հայերին ու մյուս քրիստոնյաներին օժտել է իրենց համահավասար իրավունքներով: Մի՞թե կարելի է, որ ստրուկ ռայան նման իրավունքներ ունենա. դա անկարելի է, վրդովեցուցիչ ու անընդունելի,- մտորում էին նրանք: Մուսուլման խավարամիտները չէին պատկերացնում, որ իրենք կարող են պատժվել երեկվա ստրուկ ռայային կողոպտելու, նույնիսկ սպանելու կամ նման ուրիշ «չնչին» բաների համար: Այդպիսի հեռանկարը նրանք ընկալում էին որպես ողբերգություն, չարիաթով իրենց չնորհված բացառիկ իրավունքների կոպտագույն ոտնահարում:

Բ) **Մուսուլմանական կրոնամոլությունը**.- Օսմանյան կայսրության բնակչության հիմնական երկու կրոնների հետևորդները՝ մուսուլմաններն ու քրիստոնյաները ո՛չ միայն գաղափար անգամ չունեին մեկը մյուսի կրոնից, այլև ներքուստ կամ բացահայտ ծաղրում էին մյուսի հավատը: Հատկապես եռանդուն քարոզչություն էին մղում մուսուլման հոգևորականները, որոնք ամբոխին գրգռում էին «սուրբ կրոնին սպառնացող վտանգների», «երկրագնդի վրա Ալլահի չուքը հանդիսացող սուլթան-խալիֆի աստվածատուր իրավունքների բռնաբարվածության», սահմանադրական կարգերի պատճառով երկրի մոտալուտ կործանման ու նման սադրական ելույթներով: Որպես այդ բոլորի սկզբնապատճառ նշում էին քրիստոնյաներին, ի մասնավորի՝ «անհավատ» (գյավուր) և «ստոր» հայերին:

Գ) **Թուրքական ազգայնամոլությունը**.- Սահմանադրության վերահաստատումից հաչված չաբաթներ անց՝ իթթիհադականները ցույց տվեցին իրենց իսկական դեմքը: Նրանք չատ

արագ անցում կատարեցին օսմանցիության գաղափարից դեպի Թունդ ազգայնամոլություն, դեպի Թուրքիզմ: Խտրականությունը դրսևորվեց նույնինքն ԻԹԹիհադի ներսում. այդ կուսակցության Թուրք անդամները միմյանց համարում էին սրտակից եղբայր, իսկ ոչ-Թուրքերին, հատկապես՝ քրիստոնյաներին, պարզապես կուսակից, որոնք չեն կարող իրենց հավասար լինել կուսակցության և պետության մեջ: ԻԹԹիհադն իրեն ծառայեցրեց արդուլհամիդյան ռեժիմի պաշտոնական գաղափարախոսությունը՝ համիսլամականությունը: Թուրքերի և քրդերի անուս ու տգետ զանգվածները Կիլիկիայում հանդիսացան այն պարարտ հողը, որի վրա փարթամորեն աճեցին Թուրքական ազգայնականության Թունավոր պտուղները: Իր համար բացառիկ և առանձնաշնորհյալ դիրք ստեղծած տգետ ու կրոնամոլ Թուրքը Թույլ էր տալիս հրապարակ բերել ամեն տեսակի արյունռուչտ ողբերգություններ: Նա չէր կարողանում դուրս գալ այն աղուրից, որը գծել էր Աբդուլ Համիդ II-ը:

*Դ) **Հայ գաղԹական գյուղացիների մի մասի վերադարձը**.- Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած 1895-1896 ԹԹ. զանգվածային կոտորածների և դրան հաջորդած տարիներին, Հայաստանի, Կիլիկիայի ու կայսրության հայաբնակ այլ շրջանների հարյուրավոր գյուղեր դատարկվել էին և Թուրքերի, քրդերի, չերքեզների ու մուսուլմանական ուրիշ ցեղերի փաստական սեփականությունը դարձել: Եվ ահա՛, սահմանադրության վերահռչակումից հետո, 10-12 տարի առաջ իրենց բնակավայրերից Կովկաս, Եգիպտոս, Բուլղարիա կամ այլուր հեռացած հայ գյուղացիների մի մասը, հավատք ընծայելով «ազատության», «հավասարության» ու «եղբայրության» նշանախոսքերին և անսալով հայոց ազգային մարմինների կոչերին, սկսել էր տուն դառնալ ու իր ունեցվածքի վերադարձը պահանջել: Իշխանություններն սկզբում ընդառաջ էին գնացել և մի քանի գյուղերից քուրդ ավազակներին տեղահանելով, դրանք հանձնել էին նախկին տերերին: Դա ուղղակիորեն սարսափի էր մատնել հայերի բոլոր հարստահարիչներին, որոնք կարծում էին, Թե հաշիվ տալու հերԹը նաև իրենց է հասնելու: Իշխանությունների այս խղճուկ քայլերն անգամ անընդունելի էին, և քրդերի ու մյուս ավազա-*

կաբարո մուսուլմանների շրջանում ծայր առած դժգոհության ու զայրույթի ալիքն իր սուր ծայրով ուղղվեց հայ վերադարձողների ու ընդհանրապես հայության դեմ՝ հակառակ այն բանի, որ Կ. Պոլսի երիտթուրքական կառավարությունը մուսուլման վերաբնակների տարհանման հարցը 1908 թ. վերջին ընդհանրապես հանել էր օրակարգից: Բայց ամոթխած քայլերն անգամ բավարար էին հրահրելու մուսուլման ամբոխի առանց այն էլ գրգռված ատելությունը հայերի նկատմամբ:

*Ե) **Հայերի պարծենկոտությունն ու ցուցադրական արարքները.**– Կ. Պոլսում և կայսրության մյուս մեծ քաղաքներում, երկրի զանազան վայրերում, այդ թվում՝ Կիլիկիայում, հայերի մի մասը, մասնավորաբար Հայ հեղափոխական դաշնակցության գործիչները հոխորտում էին, թե իրենք են առաջինը պայքար մղել Աբդուլ Համիդի արյունարբու վարչակարգի դեմ, դրա համար չափազանց թանկ վճարել և առաջ բերել 1908 թ. օսմանյան հեղափոխությունը[1]: Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության կարկառուն դեմքերից Վահան Թեքեյանը դատապարտում էր այս անիմաստ ելույթները, որոնք «աղմուկին մէջ կը խեղդէին ամէն լուրջ մտածում, անկարող դառնալով ո՛եւէ բանի վրայ խորհելու անգամ»[2]: Հայկական սրահներում բեմ էին բարձրացվում հայոց պատմության ավանդավիպային շրջանից վերցրած ներկայացումներ, հրապարակայնորեն երգվում հեղափոխական ու ազգային խրոխտ, մարտաչունչ երգեր, բնակարանների և վաճառատների պատերը զարդարվում էին հայոց պատմության հերոսների պատկերներով և այլն: Իր միամիտ խանդավառության մեջ, ազատության գինիով արբեցած հայը չէր ուզում շատ հեռուները դիտել: Փոխանակ սանձելու ժողովրդական խավերի՝ հանկարծակի ազատությամբ գինովությունը, հայության առաջնորդները «իրենք ալ քչուեցան հոսանքէն, իրենք ալ խելագարած՝ առաջ նետուեցան պարապ ու սնոտի ցոյցերու եւ կեցցէներու անձնատուր»[3]:*

---

[1] Տե՛ս **«Կոհակ»** (Կ. Պոլիս), № 1, 30 մայիսի 1909 թ.:

[2] **«Շիրակ»** (Կ. Պոլիս), № 14–15, 16 մայիսի 1909 թ., էջ 298:

[3] Տե՛ս **Լէօ**, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Բ, Փարիզ, 1935, էջ 60:

Զ) ***Ինքնապաշտպանության նկատմամբ հայի ցուցաբերած անհոգությունը.–*** Դատապարտելի էր հայ զանգվածի ավանդական կրավորականությունը, նրա անփույթ վերաբերմունքն իր ամենակենսական խնդրի՝ ինքնապաշտպանության նկատմամբ: Զէ՞ որ հայն ապրում էր մի միջավայրում, ուր, տարաբախտաբար, մուսուլման Թուրքերի ու քրդերի մեջ չափազանց բազմաքանակ էին խուժդուժ հարձակողական բնազդներ ունեցող տականքները, ուր դեռ կանգուն էին արդուլհամիդյան հին կարգերի սյունները:

Վերոհիշյալ պատճառներին գումարվեց և Կիլիկիայի եղերական դեպքերի խորացմանն ու աղետի ծավալմանը նպաստեց 1909 Թ. մարտի 31-ին արդուլհամիդականների սկսած հետադիմական շարժումը Կ. Պոլսում:

Այս ընդհանուր պատճառներից բացի, Կիլիկիայում ծագել էին նաև ուրիշ՝ ***տեղական պատճառներ***:

Այդ գործոններից էր չարաղետ դեր խաղացած, Ադանա քաղաքում հրատարակվող, իրենց չափավոր համարող իթթիհադականների օրգան ***«Իթթիդալ»*** (***«Չափավորություն»***) ***Թերթը***, որը «մասնագիտություն» էր դարձրել մուսուլման ամբոխին քրիստոնյաների ու հատկապես հայերի դեմ սադրանքներով գրգռելը: Թերթը չարաշահում էր մամուլի ազատությունը և թույն ու մաղձ թափում հայերի հասցեին, նրանց վերագրում, թե որոճում են կայսրության կործանման և մուսուլմանների վրա տիրապետություն հաստատելու մեղքեր: Այս սանձարձակ ապօրինությունը հնարավոր էր, քանի որ երկիրն ըստ էության նույնն էր մնացել, միայն անվանապես էր դարձել սահմանադրական, դեմոկրատական. վերջին հասկացություններից ինչ-որ դրսևորումներ լինում էին միայն մայրաքաղաքում, մինչդեռ գավառներում, այդ թվում՝ Կիլիկիայում, նախկին բռնակալական հարաբերություններից համարյա բան չէր փոխվել:

Երկրորդ տեղական պատճառը ***Կիլիկիայի Թուրքական վարչախմբի գործունեությունն*** էր: Բազմաթիվ փաստեր կասկած չեն թողնում, թե Թուրք իշխանավորները, Ադանայից մինչև Անտիոք, ո՛չ միայն տեղյակ էին կոտորածի նախապատրաստությունից, այլև հենց իրենք էին էական դեր խաղում այդ նախա-

պատրաստության նյութական ու գաղափարական հիմքերի ապահովման համար: Ինչպես կայսրության մյուս տարածքներում, այստեղ ևս Թուրք իշխանավորներն իրենց միապետականի չապիկը մեկ օրից մյուսը փոխել էին իթթիհադականի՝ առանց դույզն փոփոխություն մտցնելու իրենց մտածելակերպում ու գործելակերպում: Օրինակ՝ Ադանայի վալի Մեհմեդ Ջևադ բեյը մինչև այդ եղել էր Աբդուլ Համիդի «բաչ քյաթիբը» (ավագ քարտուղար): Իրականում նա և շրջապատը ողջ էությամբ մնացել էին բռնակալական միապետության և Թուրք ցեղի գերակայության մոլի կողմնակիցներ: Իսկ իշխանավորների այն չնչին մասը, որ չէր հասցրել գունափոխվել և զրկվել էր իշխանական կերակրամանից, ակնդետ սպասում էր քաղաքական իրավիճակի փոփոխության՝ նախկին աթոռներին վերադառնալու համար՝ թեկուզ հազարավորների արյան գնով: Այդ նպատակը հետապնդելով, նախկինները քարոզչական խուլ աշխատանք էին տանում և իրենց հերթին գրգռում ամբոխի հոռի բնազդները, նրան տրամադրում սահմանադրականների, և, առաջին հերթին՝ մուսուլմանների «գլխին փաթաթված» գյավուր հայերի դեմ: Եվ երբ 1909 թ. մարտի վերջին օրերին Կ. Պոլսում սկսվեցին խլրտումները, Կիլիկիայի նախկին ու ներկա իշխանավորներն անմիջապես գործի անցան՝ յուրաքանչյուրը փորձելով հայերի արյունը ոթելու հաշվին լուծել իր շահամոլական խնդիրները:

Կիլիկիայի աղետի տեղական լուրջ պատճառներից էր նաև ***տեղաբնակ հայերի տնտեսական համեմատաբար բարվոք վիճակը****: Թեև 1895-1896 թթ. ջարդերի ժամանակ կիլիկիահայությունն ունեցել էր կորուստներ, բայց դրանք բուն Հայաստանի համեմատ նվազ էին եղել, իսկ հետագա տարիներին այնտեղ ավելի խաղաղ էր եղել, ինչի շնորհիվ հայրենահայությունից հազարավորների իրեն էր քաշել: Այս գործոնը, մյուս նպաստավոր պայմաններին զուգակցվելով, առավել խթանեց Կիլիկիայի հայերի տնտեսական առաջադիմությունը՝ հարուցելով հիմնականում ծույլ և ավազակաբարո մուսուլմանական զանգվածի նախանձն ու դժգոհությունը: Վերջինս չէր կարողանում հասկանալ, թե այդ ինչպե՞ս է լինում, որ ինքը հալածում ու սպանում է հային, իսկ վերջինս ընդամենը հաշված տարիների ըն-*

թացքում հառնում է փյունիկի նման, նորից առաջադիմում: Հայերի հետ մրցակցելու անկարողությունը նրանց մոտ առաջացնում էր մի կողմից՝ ստորակայության բարդույթ, մյուս կողմից՝ վրեժի խոր զգացումներ: Նրանք սպասում էին այն պահին, երբ ազդանշան կտրվեր տիրանալու հայի կնոջն ու աղջկան, նրա կուտակած հարստությանը: Թուրք իշխող վերնախավն էլ եկել էր այն համոզման, որ հայերի տնտեսական, կրթական և այլ ոլորտներում առաջընթացը կասեցնելու միակ միջոցը նրանց ոչնչացնելն է նորանոր ջարդերի կազմակերպումով ու իրականացումով:

Ջարդն սկսելուց առաջ ոճրագործներն արդեն լուծել էին զինվելու խնդիրը՝ իշխանությունների անմիջական մեղսակցությամբ: Վերջիններս հրոսակներին հանձնել էին պետական պահեստներից դուրս բերված տարբեր տիպի հրացաններ ու ատրճանակներ, իսկ դրանց պակասը լրացնում էին տան մեջ ամբարված և թուրք զինագործների անվճար բաժանած դաշույններն ու սրերը: Ոմանք նույնիսկ ինքնաշեն ու դիվային զենքեր էին հնարել, օրինակ՝ սուր ու կեռ ծայրով երկաթե ձողը՝ հայերի գլուխներին հարվածելու և ուղեղները դուրս թափելու համար:

1909 թ. մարտի երրորդ տասնօրյակում ամեն ինչ պատրաստ էր. կա՛ր քարոզչական նախապատրաստությունը, կա՛ր արյունալի գործը գլխավորելու իշխանությունների վճռականությունը և կա՛ր կազմ ու պատրաստ ամբոխը, որը միայն առիթի ու հրամանի էր սպասում:

Եվ այդ չարագուշակ առիթը հրահրվեց: Մարտի 21-ի երեկոյան Աղանայի Շաաբանիե (որը նաև կոչվում էր Թոսբաղա Գալեսի) թաղամասում բնակվող, Բալուից եկած Կարապետի 20-ամյա որդու՝ Հովհաննեսի ճանապարհը երեկոյան կտրում է թուրք ստահակների մի խումբ և ցանկանում հենց տեղում հագուրդ տալ իր անասնական կրքերին: Հովհաննեսի դիմադրությանը հանդիպելով՝ անոպաները ծեծուջարդ տալուց հետո նրան գետնամած թողնելով հեռանում են: Հաջորդ օրը Հովհաննեսը բողոքով դիմում է ոստիկանություն, դատախազություն և նույնիսկ կուսակալին, սակայն նրան լսել անգամ չեն ուզում: Դա իմանալով՝ ստահակները որոշում են սպանել Հովհաննեսին:

Վերջինս, զգուշության համար, չուկայից գնում է մի ատրճանակ և պահում իր մոտ: Մարտի 27-ի երեկոյան դեպքը կրկնվում է. դարանակալ սրիկաները հարձակվում են հայ երիտասարդի վրա՝ առանց որևէ ուշադրություն դարձնելու իրեն հանգիստ թողնելու խնդրանքներին: Երբ նա հասկանում է, որ իր կյանքի վերջը մոտեցել է, հանում է ատրճանակը և կրակում իրեն տանջողների վրա: Ավազակապետ Իսֆենդիարն սպանված ընկնում է տեղում, մեկ ուրիշը ծանր, երրորդը թեթև վիրավորվում են: Հովհաննեսը փախչելով ազատվում է:

Հաջորդ օրը Թուրքերը Իսֆենդիարի դիակը շրջում են իրենց թաղերում՝ հայերից վրեժ լուծելու կոչեր հնչեցնելով: Թաղումից հետո պաշարում են Կարապետի տունը և պահանջում որդուն՝ նրա հետ հաշվեհարդար տեսնելու: Երբ Հովհաննեսի ծնողներն ու կինը հայտնում են, թե նրա գտնված վայրը չգիտեն, գազազած ամբոխը ոտնատակ է անում նրանց ու տունը ավերում:

Երկու օր հետո՝ մարտի 30-ին մահանում է նաև ծանր վիրավորված Թուրք ստահակը, ինչն է՛լ ավելի է գրգռում Թուրք խուժանի արյունածարավ ախորժակը: Սրան էլ թաղում են մեծ շուքով ու հրահրիչ դամբանականներով: Հաջորդ օրը խաժամուժը դիմում է նահանգապետ Մեհմեդ Ջևադ բեյին՝ Հովհաննեսին գտնելու ու պատժելու պահանջով: Երբ վերջինս հայտնում է իր անկարողությունը, խուժանն անմիջապես «գործի» է անցնում: Մտնում են հայերի տները, խուզարկում, ունեցվածքը տակնուվրա անում: Մի քանի զենք հայտնաբերելով, խուժանն ավելի է գրգռվում՝ դա մուսուլմաններին կոտորելու հայերի պատրաստությունների իբրև ապացույց ներկայացնելով: Այս նույն ժամանակ, վարչախումբը շրջակա գյուղերից Ադանա է կանչում նորանոր բաշիբոզուկների ու նրանց զինում: Կեսօրին, հատուկ խմբերն սկսում են նշաններ անել հայերի տների ու վաճառանոցների վրա: Իրենց հերթին, մոլլաներն ու սոֆթաները (մուսուլմանական հոգևոր դպրոցների ուսանողներ) մզկիթներում և մինարեթներից հրահրիչ ելույթներ են հնչեցնում՝ մուսուլմաններին կոչելով «սրբազան պատերազմի»՝ «հղփացած գյավուրներին դաս տալու» համար:

Հաջորդ օրը՝ ապրիլի 1 (14)-ին, Զատկի չորրորդ օրն սկսվում

է հայերի զանգվածային կոտորածը: Հայերն այդ օրը, սովորականի նման, գնում են աշխատանքի. հողագործները՝ դաշտերում, արհեստավորներն ու վաճառականները՝ իրենց խանութներում: Զատկական տոներից հետո հայկական դպրոցներն այդ օրը վերաբացում են իրենց դռները: Ժամը 10-ին մոտ չուկա են խուժում Թուրքերի, քրդերի, չերքեզների և ուրիշ ցեղերի կատաղած խմբեր՝ զինված տաք ու սառը տարբեր զենքերով: Տագնապի վրա՝ հայոց ազգային առաջնորդարանում հավաքվում են Ադանայի քրիստոնյա հոգևոր պետերն ու երևելիները, որոնցից կազմված մի պատվիրակություն գնում է նահանգապետ Ջևադի մոտ ու խնդրում կոտորածների վտանգի առաջն առնել: Ջևադը ո՛չ միայն ժխտում է նման հավանականությունը, այլև պատվիրակներին հանդիմանում անհիմն կերպով խուճապի մատնվելու համար ու նրանցից պահանջում գնալ չուկա և իրենց դավանակիցներին հորդորել անխոով շարունակել սովորական կյանքը:

Այս ընթացքում չուկայում խուժանի թվաքանակն անընդհատ ավելանում է: Այդ տեսնելով, քրիստոնյաների մեծ մասը փակում է խանութները և բռնում տան ճանապարհը: Թուրք զինավաճառներից ձրի ստանալով զենքեր, իսկ հայ զինավաճառների խանութները կողոպտելով, խուժանը վերջնականապես համալրում է իր զինանոցը ու անցնում «գործի»: Այս բոլորը կատարվում էին ոստիկանների ու զինվորների աչքի առջև, «որոնք կատարեալ անտարբերութեամբ եւ խորհրդաւոր ժպիտներով ականատես կ՚ըլլային այս ամէնուն»[1]: Մինչ այդ, նահանգապետի պահանջով մի քանի թուրք երևելիներ գնացել էին չուկա՝ հանգստացնելու քրիստոնյաների խռովքը: Ժամը 10:30-ին (թուրքաց ժամը 4:30-ին) հրացանաձգություն է սկսվում չուկայում: Թուրք երևելիներից Բաղդադի զաղե Աբդուլ Կադեր էֆենդիի տված նշանով՝ մի քուրդ տեղում սպանում է ականավոր փաստաբան և պետական ու հասարակական գործիչ, Ադանայի հայության պարծանք Դավիթ էֆենդի Ուրֆալյանին: Հետևում են ջարդն ու կողոպուտը. սպանվում են հանդիպած հայերը, իսկ

---

[1] ***Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, Կ. Պոլիս, 1912, էջ 28:*

նրանց ունեցվածքը՝ կողոպտվում: Նույն պահին հիմնահատակ ավերվում ու հրկիզվում են Շաաբանիե թաղամասի հայերի տները, իսկ բնակիչներն սպանվում են ամենաբարբարոսական եղանակներով: Նույնը կատարվում է թուրքական թաղերում բնակվող հայերի ու նրանց ունեցվածքի հետ: Զինված ամբոխից ուրիշ ոհմակներ հարձակվում են քաղաքի կենտրոնի վրա, ուր հայերի թիվն ավելի շատ էր, ու այստեղ էլ թողնում են իրենց գազանային արարքների հետքերը: Հերթը հասնում է հայկական թաղերին: Վերջիններիս բնակիչները ջարդի սկզբից միայն երկու ժամ հետո հասկանում են, որ իրենց կյանքը կախված է հակառակորդի քմայքից, թե կառավարական ուժերն իրենց չեն պաշտպանելու և թե փրկության միակ միջոցը ինքնապաշտպանությունն է[1]: Շուրջ 100 հայ երիտասարդներ սահմանադրության վերականգնումից հետո իրենց գնած զենքերով դեմառդեմ կանգնում են թաղերը խուժած բաշիբոզուկներին: Հայ քաջերի դիմադրությունից անակնկալի եկած՝ խաժամուժը սարսափահար փախչում է՝ փողոցներում դիակներ թողնելով:

Հայերի դիմադրությունը կոտրելու համար, կառավարչությունը քաղաք է բերում մոտակայքի բամբակի դաշտերում աշխատող շուրջ 20 հազար քրդերի, զինում նրանց և ուղարկում հայկական թաղերի դեմ: Ինքնապաշտպաններին միացել էին հայ պատանիներ ու կանայք, որոնք ձեռքի տակ եղած սառը և տաք զենքերով մահու և կենաց կռվի էին ելել 30 հազարը գերազանցող մարդախոշոշ վայրենիների դեմ[2]: Ամբողջ օրն անցնում է ստահակների անկանոն հարձակումներով և քրիստոնյաների կատաղի դիմադրությամբ: Վրա հասած մութը չի խաղաղեցնում հրոսակների կրքերը, որոնք դիմում են հրձիգության: Դրա համար նախօրոք 500 հրձիգ էին պատրաստել՝ նրանց նավթամթերքով ապահովելով: Կառավարչությունում Ադանա քաղաքի հատակագծի վրա նշանակված էին այն չինու-

---

[1] *Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթ. 14, վավ. 475:*

[2] ***Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 38-39:*

թյունները, որոնք առաջին հերթին պիտի մոխիր դառնային[1]: Շուտով հրդեհներն սկսում են մոխրի վերածել քրիստոնյաների թաղերի տները: Մարդասպանները դիվային հրճվանքով սպանում էին կրակի ճիրաններից փախչողներին՝ չխնայելով նույնիսկ ծերերին, կանանց ու երեխաներին: Այդ միջոցին Կ. Պոլսից ստացվում է ներքին գործերի նախարարության խորհրդական Ադիլ բեյի՝ Ադանայի նահանգի ողջ պաշտոնեությանն ուղղված հեռագիրը՝ վնաս չհասցնել օտար կրոնական հաստատություններին և հյուպատոսարաններին[2]: Դա նշանակում էր, որ բացի հիշյալներից, մնացյալ քրիստոնյաների նկատմամբ վայրագությունները ո՛չ միայն թույլատրելի են, այլև՝ ցանկալի:

Զինված հակամարտությունն ու հայերի ջարդերը տևում են երեք օր: Ապրիլի 3 (16)-ին, հայերի թաղամասում ապրող ու նրանց հետ միշտ ջերմ հարաբերություններ պահպանած Թաքելի զադե Օսման բեյի միջնորդությամբ, կառավարչատան մեջ թուրք և հայ երևելիների ու նահանգապետի մասնակցությամբ գումարվում է ժողով, որի ընթացքում հաշտություն է գոյանում հետևյալ պայմաններով. 1) Երկու կողմերն անմիջապես դադարեցնում են հրացանաձգությունը, 2) Հայերը պարտավոր են երեք օրվա ընթացքում լիովին զինաթափվել և զենքի մինչև վերջին միավորը հանձնել իշխանությանը, 3) Քաղաքի պաշտպանությունը հանձնվում է Ռումելիից նոր ժամանած զորքին, որը ոչնչացնելու է բոլոր պաշտպանական պատնեշները և չրջիկ պարեկներով հսկելու է անդորրությանը[3]: Այսպիսով, կոտորածի՝ ամբողջ 50 ժամ տևած առաջին ալիքը վերջ է գտնում ապրիլի 3 (16)-ի ժամը 13-ին (թուրքաց ժամը 7-ին):

Հայերը կասկածում էին թուրքերի անկեղծությանը, և չէին ցանկանում իրենց բոլոր զենքերը հանձնել կառավարությանը: Գործին միջամտում է Մերսինում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Դաութի Ուիլին և իր կառավարության անունից հայերին վստահեցնում, թե այլևս որևէ վտանգ չկա, ուստի զենքերը պետք է

---

[1] **Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 39:

[2] Նույն տեղում, էջ 38:

[3] Տե՛ս **«Հորիզոն»** (Թիֆլիս), № 52, 9 մարտի 1910 թ.:

հանձնել: Նույնպիսի հորդորներ են անում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն ու Ադանայի թեմի առաջնորդ Մուշեղ եպս. Սերոբյանը, որը կոտորածի օրերին գտնվում էր Եգիպտոսում, ուր գնացել էր հանգանակություն կատարելու՝ Ադանայում երկրագործական դպրոց բացելու համար: Անսալով այս խոսքերին, հայ երևելիները ինքնապաշտպաններին ստիպում են հանձնել զենքերը՝ հակառակ վերջիններիս բողոքներին: Դա ճակատագրական եղավ: Եթե հայերն այդ օրն իրենց բոլոր զենքերը հանձնած չլինեին, գուցե և Ադանայում տեղի չունենար երկրորդ, է՛լ ավելի լայնածավալ ու զարհուրելի, ջարդը, քանի որ թշնամին մեծ կասկածներ ուներ հայերի ուժի մասին:

Ապրիլի 4-ը Ադանա քաղաքում բացվեց «խաղաղությամբ», որի գինը հայերի հազարավոր կյանքերն էին: Քաղաքում մի զարհուրելի տեսարան էր պարզում: Հոշոտված անթիվ-անհամար դիակներ փողոցներում, կախված ծառերի վրա, ցցերի բարձրացված...[1]: Խուժանի գազանային կրքերի թիրախ էին դարձել նույնիսկ դիակները՝ առանց քթի, առանց ականջների, առանց շրթունքների... Մեռելների շարքերը լրացրել էին հարյուրավոր մանուկներ՝ հոշոտված բառիս բուն իմաստով: Նահանգապետ Մեհմեդ Ջևադ բեյը հրամայեց մուսուլմանների դիակները թաղել շուքով, իսկ քրիստոնյաների դիակները որքան հնարավոր է շուտ անհետացնել մեջտեղից: Այդ նպատակով գործի դրվեցին բազմաթիվ սայլեր: Հայերի դիակները հավաքում էին, լցնում սայլերի մեջ, տանում դեպի քաղաքի արևելյան կողմից անցնող Սիհուն գետը և կամրջի վրայից նետում ջուրը:

Թուրքերը «խաղաղությունը» օգտագործեցին Ադանայի շուրջը հավաքելու թուրք գյուղացիների և թալանչի քրդերի նոր խմբեր, որոնք համալրեցին ջարդարարների շարքերը՝ պատրաստվելով կոտորածի երկրորդ փուլին: Ընդամենը 4 օր անցած, ապրիլի 7 (20)-ին, պարզ դարձավ, որ հայերին նոր սարսափներ են սպասում: Արդարև, «Իթիդալ» թերթի այդ օրվա համարի (որը լույս էր տեսել սովորականից բազմապատիկ տպաքանա-

---

[1] *Տե՛ս* ***«Ախուրեան»*** *(Ալեքսանդրապոլ), № 28, 17 ապրիլի 1909 թ.:*

կով ու տարածվում էր անվճար) հրապարակումները ծայրից ծայր լցված էին հայերի նկատմամբ հերյուրածո ու սադրական նոր նյութերով, որոնցում հայությունը մեղադրվում էր իշխանությունների դեմ ապստամբություն բարձրացնելու համար: Հաջորդ օրը Կ. Պոլսից ստացվեց ազատարար բանակի հրամանատար Մահմուդ Շևքեթ փաշայի հեռագիրը, թե սուլթան Աբդուլ Համիդի ու նրա կողմնակիցների խոովությունը ճնշած իր բանակից մի զորամաս Դեղե-Աղաջից Ադանա է ուղարկում: Այս լուրն անհուն ցնծություն պարգևեց քաղաքի կենդանի մնացած հայերին, որոնք կարծում էին, թե «փրկիչ զորամասը» հատուկ ուղարկվում է իրենց անվտանգությունն ապահովելու համար: Բայց նրանք այս անգամ էլ չարաչար սխալվեցին:

Երկու գնդից բաղկացած զորամասը ապրիլի 12-ի կեսօրին հասավ Ադանա[1], արժանացավ հայերի չոնդալից դիմավորման ու բանակեց քաղաքից դուրս մի բացատում: Նույն օրն իսկ սկսվեց ջարդերի երկրորդ փուլը, որին պատրվակ ծառայեց ժամանած զորամասի վրա թուրքերի սադրած հրացանաձգությունը: Մեղքը բարդվեց հայերի վրա: Մինչ այդ, թուրքերի մի մեծ բազմություն հանրահավաքի էր եկել քաղաքի «Ժամացույցի հրապարակ» և հայերի դեմ գրգռիչ ելույթներ էր լսում, որոնցում «անիծյալ ազգին արմատախիլ անելու» կոչեր էին հնչում: Այդ պահին էլ զորքերի ուղղությամբ կատարվում է կրակոցը, և զինվորները, որոնց միացել էր խուժանը, անցնում են «գործի»: Տեղ հասնելով՝ զորքը մի քանի րոպեում չրջապատում է «թշնամի» հայոց թաղերը և կրակի տակ առնում դրանք: Կոտորածը տեղի էր ունենում ամենուր՝ փողոցներում, տներում, հրապարակներում, չուկայում... Գազանության մեջ թուրքերի հետ մրցակցում և տեղ-տեղ նրանց գերազանցում էին սարերից իջած քրդերը[2]: Շուտով վերսկսվում են հրդեհները: Հայ կանանց ու երեխաների հոգեվարքի հոնդյունները, ողբն ու կականը, հրազենների և հրդեհների ճարճատյունը իսկական դժոխքի տեսարաններ էին ստեղծել: Հայերը կա՛մ ողջ-ողջ այրվում էին սե-

---

[1] ***The New York Times*** *(New York), 29 April 1909.*

[2] *Տե՛ս* ***«Բիւզանդիոն»*** *(Կ. Պոլիս), № 3820, 23 ապրիլի (6 մայիսի) 1909 թ.:*

փական տներում, կա՛մ փախուստի փորձ անելիս հրացանա-զարկ կամ սրախողխող լինում: Սոսկալին այն էր, որ երկրորդ կոտորածի ժամանակ, հայոց դիմադրություն գրեթե չեղավ, քանի որ զենքերը միամտաբար հանձնվել էին կառավարության: Դիմադրության բացակայությունը քաջալերում էր մարդա-սպաններին, որոնք համոզված էին, որ անպատիժ են մնալու թե՛ ջարդերն իրականացնելիս և թե՛ դրանից հետո:

Կոտորվեցին նաև 5000-ից ավելի այն հայ գյուղացիները, որոնք առաջին կոտորածից հետո, մերկ ու քաղցած թափառում էին Աղանայի փողոցներում ու տների բակերում: Երբ վերսկսվել էր կոտորածը, նրանցից մի քանի հարյուր հոգի ապաստան էր գտել Մուշեղյան-Աբգարյան վարժարանի շենքում, որի հրդեհ-ման ժամանակ բոլորը ողջակիզվեցին:

Երկրորդ կոտորածի ժամանակ մեծ մարդասիրություն դրսևորեց քաղաքի հիսուսյան վարդապետներից ֆրանսիացի հայր Անթուան Դիոսկորը, որը հիսուսյանների վանքում ու նրա շրջակա տարածքում ապաստան տվեց սարսափահար հայերին: Այն բանից հետո, երբ խուժանը կրակի տվեց վանքը, Դիոսկորն ու բրիտանացի հյուպատոս Ուիլին նահանգապետ Մեհմեդ Ջևա-դին համոզեցին հայերին ապաստան տալ կառավարչատան հա-րակից պարտեզում: Այդտեղ հավաքված հայ խլյակների առաջ ելույթ ունենալով, «մեծահոգի» վալին նրանց պարտադրեց գոչել՝ «Մեշրութիեթ գահր օլսուն, փադիշահըմ չո՞ք յաշա»*: Դրանից հետո միայն նահանգապետը հայտարարեց, թե գյա-վուրներն ազատ են և կարող են իր աչքից չքվել: Բայց, 20 հազարի հասնող անտեր-անտիրական հայերն ո՞ւր գնային: Մի պահ վարանելուց հետո, զինվորների ուղեկցությամբ նրանք ուղղվեցին իրենց թաղերը՝ ամբոխի հայհոյանքների ու քրքիջնե-րի տարափի տակ: Նրանց առջև բացվեց զարհուրելի տեսարան. ամբողջ թաղամասեր մոխրի էին վերածվել: Բոցերի ճարակ էր դարձել մոտ 3500 տուն՝ իրենց տակ թողնելով հազարավոր ան-մեղների աճյուններ: Ամբողջ քաղաքով մեկ ցրված էին հրով ու սրով սպանված և այլանդակված դիակների կույտեր: Ոմանք

* Կորչի՛ սահմանադրությունը, թող չա՜ռ ապրես, իմ թագավո՛ր:

դեռ հոգեվարքի տվայտանքների մեջ էին: Այնպիսի առատությամբ էր արյուն թափվել, որ անցորդը փողոցով չէր կարող անցնել առանց ոտքերն արյունոտելու[1]:

Ադանայում մշտապես բնակվող քաղաքացիներից երկրորդ ջարդի ժամանակ զոհվել էր 3500 հոգի, որոնցից հայեր՝ 2500, այլ քրիստոնյաներ՝ 500, մուսուլմաններ՝ 500: Բացի այդ, սպանվել էին ուրիշ տեղերից եկած և այնտեղ ժամանակավոր աշխատանք գտած 1000 հայեր՝ առավելաբար խարբերդցիներ ու կեսարացիներ: Շրջակա ագարակներում աշխատող 200 հայերից փրկվել էր ընդամենը մեկ ընտանիք: Այսպիսով, երկրորդ կոտորածի ժամանակ հայերի մարդկային վնասները միայն Ադանայում ու նրա անմիջական շրջակայքում կազմել էր չուրջ 3700 հոգի[2]:

Ադանայի կոտորածը վերջնականապես թաղեց թուրքահայության վիճակը բարելավելու հնարավորության մասին եղած պատրանքները:

1909 թ. ապրիլին հայերի կոտորածներ իրականացվեցին նաև Ադանայի ու Հալեպի նահանգների հայաշատ քաղաքներում, ավաններում և գյուղերում:

Սոսկալի էր **Ադանայի սանջակի Գոզ-Օլուգ** և **Աբդօղլու** գյուղերի հայության ճակատագիրը: Վերջինիս մեջ ամեն վայրագություն գործելուց հետո, մարդակերպ հրեշները մի տեղ հավաքեցին հայ կանանց ու աղջիկներին, իրար մեջ բաժանեցին նրանց ու հենց տեղում սկսեցին բռնաբարել: «Փողոցի չուներն անգամ այն աստիճան կրքոտ ու անամօթ չէին կրնար ըլլալ»[3],- հայտնում է վկայագրողը: **Միսիս** ավանում կոտորվեց 350 հայ ու կրակի մատնվեց 80 տուն[4]: Կոտորվեցին նաև **Աղզը-Բեոյյուք**, **Շեյխ-Մուրադ** և **Խայբրլը** գյուղերի հայերը: Վերջինիս մեջ, Աբդալ Խալոյի աղջիկը՝ վայրագ Թրքուհի Սենեմ խանումը շրջակա գյուղերի Թուրք տղամարդկանց միջոցով հավաքել է տալիս

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 52, 9 մարտի 1910 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 64, 23 մարտի 1910 թ.:

[3] **Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 180:

[4] Տե՛ս **«Հորիզոն»**, № 64, 23 մարտի 1910 թ.:

գյուղի հայերին, կանանց ու աղջիկներին նրանց «նվեր» տալիս, իսկ տղամարդկանց կարգադրում է տանել գետեզերք, որտեղ այս արյունածարավ գազանը իր ձեռքով մեկ-մեկ մորթում է նրանց ու ջուրը թափում՝ «սիրտը հովացնելու համար»: Նույնպիսի վայրագություններ գործվեցին Ադանայի սանջակի **Գաղը-Քեոյ**, **Գեմի-Սյուրեն**, **Ինջիրլիք**, **Քրիստիան-Քեոյ**, **Կարաղաչ**, **Գեոզալթ** և ուրիշ գյուղերի հայերի նկատմամբ: **Տարսոն**ում խուժանը կրակի տվեց ս. Պողոս եկեղեցին՝ այնտեղ գտնվող հարյուրավոր հավատացյալներով[1]: Բարեբախտաբար, այս քաղաքում երևան եկան մարդկային խիղճը չկորցրած մի քանի մուսուլմաններ՝ Քերբալաի զադե Էսադը, Գյուվենդ զադե Մուխթարը ու վերջինիս ընկեր Մոմոճանը, որոնք մի քանի տասնյակ հայերի պահեցին իրենց տներում մինչև արհավիրքի ավարտը: Նույնպիսի մարդասիրություն դրսևորեցին ամերիկյան միսիոնարության՝ քաղաքի Սեյնթ Պոլ կոլեջի տնօրեն վեր. դոկտ. Թոմաս Քրիստին ու նրա տիկինը՝ Քարմելայթը, որոնք կոլեջի գլխամասային ու հարակից չենքերում ապաստան տվեցին մոտ 50 հայի: Այդուհանդերձ, վայրենացած ջոլիրը կրակի տվեց հարակից չենքը, որի բոցերի մեջ այրվեց դժբախտների մեծ մասը, իսկ մնացյալը կոտորվեց փախչելու փորձի ժամանակ: Շնորհիվ օտար հյուպատոսարանների ու ծովի ափին հանգրվանած եվրոպական երկրների մարտանավերի առկայության, **Մերսին** նավահանգստի հայերը արհավիրքից դուրս եկան նվազագույն վնասով: Դրան հակառակ, Կիլիկիայի հայկական թագավորության պարծանք **Այաս** նավահանգստի (որը 20րդ դարի սկզբին մի անչուք բնակավայր էր) բոլոր հայերին թուրք հարևանները սրի քաշեցին ապրիլի 2 (15)-ին[2]:

Կոտորածը սարսափելի էր հատկապես **Ջեբելի-Բերեքեթի** սանջակում, որի մութասերիֆ (կառավարիչ) Մեհմեդ Ասաֆ Էսադ բեյն անձամբ էր գլխավորում ջարդերը: Այդ նպատակի համար Փայասի բանտից ազատ էին արձակվել բոլոր մարդասպաններն ու ծանր հանցագործները՝ հայերի կոտորածին մաս-

---

[1] Տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 3815, 17 (30) ապրիլի 1909 թ.:

[2] Տե՛ս **«Արեւելք»** (Կ. Պոլիս), № 7090, 5 մայիսի 1909 թ.:

նակցելու պայմանով: Սանջակի **Էրզինի գավառակի Օսմանիե** ավանում հրեշները չվարանեցին խուժել այն ժողովարանը, ուր գտնվում էին Այնթապից ու Մարաշից Ադանա՝ ավետարանական հոգևոր հովիվների համաժողովին գնացող վերապատվելիները և նրանց կոտորել դանակներով[1]: Փախչողները հանդիպեցին դռան մոտ կանգնած «քաջարի» զինվորների և գնդակահար եղան: Հայ հոգևորականները չխնայվեցին նաև **Համիդիե** գյուղաքաղաքում, ուր 200-ի չափ հայեր ողջակիզվեցին մարաշցի Ղաթրի տան հրկիզման հետևանքով[2]: Այստեղի կոտորածից հրաշքով փրկված հայ կանայք չաբաթներ անց զարհուրելի բաներ էին պատմում աղետի հետքերով Կիլիկիա ժամանած Զապել Եսայանին[3]: Միայն մեկ Թաքստոցի հրկիզման ժամանակ մոխրացավ մոտ 70 հայ, այդ թվում՝ Էվերեկցի Մկրտիչ, Կարապետ, Սարգիս, Հաջի և Սիմոն Աղազարյան հինգ եղբայրները: Ավանում հայերի փրկության համար անձնազոհություն դրսևորեց Ֆրանսիացի Սաբաթիեների ընտանիքը: Նրանցից Շարլը իրենց տան վրա պարզելով Ֆրանսիայի դրոշը, դռան չեմին կանգնեց ջարդարարների առաջ ու գոչեց. «Դուք կարող եք ներս մտնել իմ դիակի վրայո՛վ միայն»: Խուժանն ստիպված նահանջեց[4]: Համեմատաբար քիչ կորուստներ ունեցան գավառակի կենտրոն **Էրզին** Թուրքական գյուղում գտնվող հայերը՝ շնորհիվ տեղի մարդասեր մուֆթիի, երևելիներից Մուսա էֆենդիի ու մարաշցի Մեհմեդ անունով Թուրք նորահաս երիտասարդի՝ իրենց ազգակիցների վայրագությունը զսպող խիզախ քայլերի: Նրանց հակառակ, **Սայ-Գեչիտ** գյուղի մոլլայի՝ մինարեթից հնչեցրած կոչով, ապրիլի 2 (15)-ին, գյուղի բոլոր հայերը կոտորվեցին սառը զենքերով: Ազատվել էր միայն մի հայ տղամարդ, որը 18 վերք ստանալով, արյունլվա ու նվաղած հասել էր Սիս և փրկվել[5]: Նման ձևով, աշխարհի երեսից ջնջվեցին գավառակի հայաբնակ

---

[1] **Բիւզանդ Եղիայեան**, Ատանայի հայոց պատմութիւն, էջ 240:
[2] **Արշակուհի Թէոդիկ**, Ամիս մը ի Կիլիկիա, Կ. Պոլիս, 1910, էջ 142:
[3] **Զապէլ Եսայեան**, Աւերակներուն մէջ, Կ. Պոլիս, 1910, էջ 218-220:
[4] **Արշակուհի Թէոդիկ**, Ամիս մը ի Կիլիկիա, էջ 142:
[5] **Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 214-215:

Էքիզլեր, Գաթրլար, Քեոր-Ղայս, Թուրինջլի, Ջեբիլ, Էքբեզ, Ֆասըլը, Կարագյուլներ, Քեոյօղլուն-Բոչայը, Կարա-Հեոյյուք և ուրիշ գյուղեր՝ իրենց հայ բնակչությամբ հանդերձ:

Դեորթ-Յոլի (**Ջորք-Մարզվան**) **գավառակի** կենտրոն համանուն ավանում մարդասպանները հանդիպեցին հայերի կազմակերպված ու համառ դիմադրության: Այստեղ ապրիլի 4 (17)-ին ապաստան էին գտել մոտակա **Նաջարլի** գյուղի հայերը, որոնց տղամարդիկ նախորդ օրը դիմադրելով խաժամուժի հարձակումներին, գիշերով կանանց ու երեխաների հետ անցել էին Դեորթ-Յոլ: Այստեղ էին հանգրվանել նաև 400 տուն ունեցող զուտ հայաբնակ **Օջագը** (**Օջախը**) և **Էոզերլի** (**Օզարլի**) գյուղերի հայերը: Դեորթ-Յոլը դարձել էր գավառակի հայերի ինքնապաշտպանության ամրոցը, որի դեմ Թուրքերը նետում են իրենց կանոնավոր ու անկանոն ուժերը՝ մութասերիֆ Մեհմեդ Ասաֆ Էսադի գլխավորությամբ: Ավանը ջրով սնուցող աղբյուրը կտրելով հայերին ծնկի բերելու նրանց բոլոր փորձերն ապարդյուն են անցնում: Շրջապատվածները ջրհորներ են փորում, անմաքուր ջուր խմում, բայց չեն հանձնվում թշնամու ողորմածությանը: Ամբողջ 11 օր դիմադրելուց հետո, Ալեքսադրեթի օտար հյուպատոսների միջնորդությամբ, օսմանյան երկրորդ բանակից 500 զինվոր հասնում է ավան և պաշարող խուժանին ցրում: Խաղաղությունը հաստատվում է հայերի գերմարդկային դիմադրության ու եվրոպացի հյուպատոսների աջակցության շնորհիվ: Դեորթյոլցիները 11 օրում կորցրել էին ընդամենը 6 հոգի, մինչդեռ հարևան այն գյուղերում, ուր դիմադրություն չէր եղել, հայերից զոհվել էր ավելի քան 600 հոգի[1]:

Սոսկալի դեպքեր տեղի ունեցան Ջեբելի-Բերեքեթի սանջակի **Բախչե** (**Բուլանըխ**) **գավառակում**: Նրա **Հասանբեյլի** մեծ գյուղի 385 տներից 365-ը պատկանում էր 2190 հայերին[2]: Ապրիլի 2 (15)-ին գյուղը պաշարում են տարբեր տեղերից հավաքված 10.000-ից ավելի Թուրքեր ու քրդեր, սակայն հանդիպում են կատաղի դիմադրության՝ գյուղապետ Կիրակոս աղա Քեչիչ-

---

[1] ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, № 2175/I, թ. 2:

[2] Տե՛ս **«Հորիզոն»**, № 66, 25 մարտի 1910 թ.:

յանի որդի Պետրոսի առաջնորդությամբ: Բայց անհավասար ուժերով կռվի մեջ մտած մի բուռ ինքնապաշտպանների զինամթերքը սպառվում է: Խուժանը մտնում է Հասանբեյլի և կոտորում հանդիպած հայերին՝ ներառյալ գյուղի երեք քահանաներին, որոնց սպանում են դժոխային տանջանքներով, իսկ գեղեցիկ կանանց ու աղջիկներին՝ առևանգում: Այնուհետև, մարդասպանները հետապնդում են լեռներ փախածներին ու ամբողջ մեկ ամիս շարունակում իրենց որսը: Նույն դաժանությամբ վերացվում են նաև ***Լափաջը*** *(****Լափաշը****) և* ***Խառնը*** *(****Հարունիե****) զուտ հայաբնակ գյուղերը:*

Սարսափելի դեպքեր պատահեցին գավառակի կենտրոնում՝ ***Բախչե****ում, ուր մոլի հայատյաց մուֆթի Իսմայիլն անձամբ էր առաջնորդում ջարդարարներին: Տեր Վահան քահանա Տեր-Ստեփանյանին գնդակահարում են, ապա գլխատում ու ապրիլի 2 (15)-ին նրա գլուխը «փողոցներուն մէջ [ոտքերով] իրարու կը նետեն անլուր յիշոցներով»: Նույն կերպ վարվում են երևելիներից Պողոս աղայի հետ[1]: Այնուհետև հրկիզում են հայոց եկեղեցին ու դպրոցը՝ ներսում ապաստանածներով հանդերձ: Իսկ Փալթաջի[*] Էոմեր անունով մի մարդակերպ գազան, կացինը ձեռքն առած, հոչոտում է գետին ընկած 30-ից ավելի վիրավորների՝ բոլորի գլուխներն անջատելով մարմիններից[2]:*

Կոտորածներ են տեղի ունենում գավառակի նաև մյուս հայաշատ բնակավայրերում՝ ***Էնթիլի, Սայ-Բուռնու, Գեոք-Զայիր, Գոյակ*** *(****Կոյակ****),* ***Գըզլաջ, Յանըք-Դեյիրմեն, Սարըլար, Գուչջու*** *և այլ գյուղերում: Նույնը կատարվում է նաև* ***Իսլահիեի գավառակի Քիչնազ, Քեսնե, Իսլահիե, Հաջի-Զավուշ, Քեզլերեն*** *գյուղերում ու նրանց հարակից ագարակներում, որոնց մի մասում, հատկապես վերջին երկու բնակավայրերում հրոսակները դեմ են առնում հերոսական դիմադրության և ընկրկում:*

Մեծ վնասներ կրեցին նաև ***Կոզանի սանջակի*** *հայաշատ*

---

[1] *Տե՛ս* ***«Բիւզանդիոն»****, № 3836, 13 (26) մայիսի 1909 թ.:*

[*] *Փալթաջի – կացնով (թուրքերեն՝ փալթա) գործող վարպետ:*

[2] *Տե՛ս* ***Գրիգոր Գուտուլեան****, Հայ լեռը: Կարմիր դրուագներ Կիլիկիոյ աղէտէն, Կ. Պոլիս, 1912, էջ 43:*

բնակավայրերը: Նույնանուն գավառակի կենտրոն **Սիս** քաղաքում Թուրք խուժանը՝ շուրջ 800 հոգի[1], ապրիլի 2-ից 6-ը բազմաթիվ անգամներ փորձեց կոտրել հայերի դիմադրությունը, որոնց ոգեշնչում էր Կիլիկիո աթոռի միաբան Ղևոնդ ծ. վարդապետ Թուրսարգիսյանը: Պարտություն կրելով՝ խուժանն իր կատաղությունը թափեց շրջակայքի հայկական **Թլան, Ուճաֆիկ-էորա, Թեքիրչե, Սալը Փունար, Աղդամ, Յավր էֆենդի, Վերին Զոքաքլի, Ներքին Զոքաքլի, Ալափունար** գյուղերի ու ագարակների վրա՝ ոչնչացնելով դրանք[2]: Ավերվում են նաև գավառակի **Ռումլու** և **Խաստրխան** գյուղերը:

Հաճընի գավառակի կենտրոն **Հաճըն** քաղաքը ապրիլի 4 (17)-ին շրջապատվեց մի քանի հազարի հասնող զինված խաժամուժով: Այդուհանդերձ, հայերը 12 օր չարունակ դիմադրեցին բազմապատիկ գերազանցող թշնամուն, մինչև որ ապրիլի 15 (28)-ին քաղաքի մոտակայք հասավ կառավարական մի զորամաս ու բաշիբոզուկները ցրվեցին: Հերոսական դիմադրություն ցույց տվեց նաև Հաճընի մոտակա **Շար** հայկական գյուղը, որին օգնեց հարևան չերքեզական գյուղը՝ Ասլան բեյի գլխավորությամբ: Վերջինիս զգուշացման վրա, պաշարողները չհամարձակվեցին իրենց սև գործն անել: **Կարս-Բազար** թուրքաբնակ ավանում ապրում էր շուրջ 1000 հայ, որոնք հավանաբար կկոտորվեին, եթե նրանց դիմադրությունը չկազմակերպեր կառավարական ոստիկան Ջին Թորոսը: Շրջակայքից ավան ապաստան գտած 600 հայ ընտանիքները ևս ընդգրկվում են ինքնապաշտպանական գործում: Ընդամենը 23 «Մարթին» և մի քանի տասնյակ որսորդական հրացաններով հայերը ի դերև են հանում թշնամու ծրագրերը: Ինքնապաշտպանության և ողջմիտ թուրքերի ջանքերի շնորհիվ, արհավիրքից համեմատաբար նվազ կորուստներով են դուրս գալիս գավառակի **Շար-Դերեսի, Երե-Բախան** ու **Կալե-Դերեսի** գյուղերի հայերը: **Ֆեքե** (**Վահկա**) **գավառակի** կենտրոն համանուն գյուղի հայությունը ազատվում

---

[1] Տե՛ս **Հրաչեայ Աճառեան**, Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.), էջ 59:

[2] Տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 3836, 13 (26) մայիսի 1909 թ.:

*է չնորհիվ ջարդարարների առաջ տեղի կառավարչի (գայմա-գամ) հարուցած արգելքին: Նմանապես փրկվում է **Մյուրֆետ** գյուղի հայությունը՝ չնորհիվ տեղի թուրք երևելի Հուսեյն էֆենդիի որդի Մահմուդ խոջայի, որը գյուղից դուրս է հանում այնտեղ հայտնված մարդախոշոշներին: Բայց **Գուլթազլի** գյուղի հայությունը սարսափելի վախճան է ունենում: Թուրքերը խուժում են գյուղ և մի հայի անգամ ողջ չեն թողնում:*

*Թեև Կիլիկիայի 1909 թ. աղետը ծանոթ է իբրև Ադանայի ջարդ, բայց դրան զոհ գնացին նաև **Հալեպի նահանգի** շատ քաղաքների ու գյուղերի հայեր՝ մարդկային ու նյութական մեծ կորուստներ տալով:*

*Նահանգի **Մարաշի սանջակի** կենտրոն համանուն քաղաքում խլրտումների առաջն առնել հաջողվեց չնորհիվ սթափ դատող թուրք երևելի Բայազիդ զադե Գաղրի փաշայի ջանքերի և զեյթունցիների՝ մարաշցի հայերին օգնության հասնելուց թուրքերի կրած սարսափի: Սակայն հրոսակներն իրենց գործն անում են գավառի **Սարըլար**, **Գեոք-Ջեիզ** և **Քիչիֆլի** գյուղերում, բայց ամենամեծ հայկական գյուղում՝ **Ֆնտրճագում** հանդիպում են դիմադրության: Գյուղը պաշարվում է ապրիլի 4 (17)-ին ու հաջորդ օրը հարձակման ենթարկվում: Շնորհիվ ինքնապաշտպանության, գյուղը կորուստներ չի տալիս: Ջարդից լիակատար դուրս մնաց քաջ ու հպարտ **Զեյթունը**, որի անունն իսկ սարսափ էր ազդում ավազակաբարո խառնամբոխի վրա: Ավելին, զեյթունցիների միջամտության վախից, ջարդից փրկվեցին ոչ միայն Մարաշ քաղաքի, այլև Զեյթունին հարևան **Ֆրնուզ** և **Դեոնզելե** գյուղերի հայերը: Նույնի չնորհիվ, համեմատաբար քիչ վնասներ կրեցին **Անդերունի** (**Էնդերուն**) **գավառակում** հարձակման ենթարկված **Անդերուն**, **Էջեմլի**, **Շիվիլգի** (**Շերեքլի**), **Զաքուրաղաջ**, **Դեյիրմեն-Դերե**, **Անըջըք**, **Արդատլի**, որոշ չափով նաև՝ **Պնդուզ** (**Բանդուզ**) ու **Կապան** (**Կեպեն**), ինչպես նաև **Կոկիսոնի** (**Գեոքսուն**) **շրջանի** յոթ գյուղերը: Վերջինիս **Դոլոլուք** գյուղը կրում է հիշյալներից ամենամեծ վնասը՝ զոհ տալով 31 հոգի ու կորցնելով չարժուն ու անշարժ ողջ ունեցվածքը:*

*Հալեպի **սանջակում** ջարդերը ծավալվեցին նրա արևմտյան երեք գավառակներում:*

Անթաքիայի (Անտիոք) գավառակի *կենտրոն համանուն քաղաքում ջարդն ընդունեց ահռելի չափեր: Քաղաքում մշտապես ապրում էին 800 հայ, ինչպես նաև ժամանակավոր աշխատանքի եկած 500-800 հայազգի բանվոր: Ապրիլի 6 (19)-ին ամբոխը հարձակվում է Թեմի առաջնորդարանի շենքի վրա, սպանում այնտեղ գտնվող կրոնավորներին ու հայ երևելիներին, ապա կոտորում չուկայում ու փողոցներում հանդիպած բոլոր քրիստոնյաներին: Քաղաքի 1000 հայերից չուրջ 700-ը կոտորվեց*[1]*, ավերվեցին քրիստոնյաների եկեղեցիները: Ջարդն անձամբ կազմակերպել էր Անտիոքի մութասերիֆը՝ մի քանի Թուրք երևելիների աջակցությամբ:*

Քեսապի գավառակի *հայկական տասնյակ գյուղերն ավերվեցին ապրիլի 2 (15)-ից 8 (21)-ի միջև ընկած օրերին, իսկ բնակիչներն ապաստանեցին* ***Քեսապ*** *գյուղում: Ապրիլի 9 (22)-ին, շրջակայքի Թուրքական, Թուրքմենական, քրդական ու այլազգի բնակավայրերից հավաքված ու 30.000-ի հասնող արյունածարավ խաժամուժը*[2] *հարձակվում է Քեսապի վրա: Կարճատև դիմադրությունից հետո, հայերը լեռնային դժվարամատչելի կածաններով հասնում են Բասիթի ծովափը, որտեղից ֆրանսիական նավերով տեղափոխում են Լաթաքիա: Փախուստի ընթացքում տասնյակներով հայեր կոտորվում են իրենց հետապնդողների ձեռքով: Կլընջյան ընտանիքից մի հարս, իր պատվին տեր մնալու համար, իրեն ծով է գցում Կարաղուրան գյուղի Բուրունեյ կոչվող խարակից ու նահատակվում: Մտնելով Քեսապ, հրոսակները հրդեհում են բոլոր տներն ու եկեղեցիները, որոնց փլատակների տակ են մնում փախուստի հնարավորություն չունեցած մեծաթիվ հիվանդներ, ծերեր ու երեխաներ: Ավերվում են նաև Քեսապից արևելք ու Անտիոքից հարավ գտնվող* ***Արֆալի, Յամադի*** *և* ***Գոչի*** *(****Գեոչչյու****) հայաբնակ գյուղակները*[3]*:* ***Սվեդիայի***

---

[1] *Տե՛ս* ***Վեր. Տիգրան Ճ. Խրլոպեան****, Ոսկեմատեան Հայ աւետարանական միութեան, հատ. Ա, Պէյրութ, 1950, էջ 335:*

[2] ***Յակոբ Զոլաքեան****, Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն), Անթիլիաս, 2006, էջ 108:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 94, 108:*

(**Մուսալեռ**) **գավառակի** հայությունը ջարդից զերծ է մնում գավառակի մուդիր (կառավարիչ) **Սեռքելի Խալիդ էֆենդիի** ձեռք առած միջոցների շնորհիվ: Իսկ Ռուճի հովտի **Գնիե** (**Ղնեյ**) և **Յակուբիե** հայաբնակ գյուղերը, որոնք ապրիլի 10 (23)-ից պաշարվել էին հազարավոր թուրքերով ու թուրքմեններով, ազատվում են նրանցում հաստատված լատին վարդապետների միջոցով **Ֆրանսիայի** և **Իտալիայի** Հալեպի հյուպատոսների՝ Հալեպի վալիի վրա գործադրած ճնշումների շնորհիվ[1]:

Կոտորածը սարսափելի հետևանքներ ունեցավ **Բեյլանի գավառակում**: **Գրրրգ-խան** գյուղի 90 հայկական տներն ավերելուց հետո, գեղեցիկ կանանց ու աղջիկներին վերցնում են իբրև ավար, իսկ տղամարդկանց տանում մոտակա մի ուխտատեղի ու այնտեղ բոլորին՝ 82 հոգու, կոտորում: **Մնացյալներին՝** 250 հոգի կանայք ու երեխաներ, մարդասպանները «նվիրում են» տարածքի սեփականատեր **Մուստաֆա փաշային**, որն էլ իր հերթին նրանց «նվիրում է» քրդերին[2]: Գրրրգ-խանի մերձակա **Աթրք**, **Գանլը-Դերե**, **Սարը-Զինար**, **Սողանջը**, **Մեզկիթեոնի** և **Հաջի-Մուսալը** գյուղերի հայերը թողնում են իրենց բնակավայրերը ու տեղափոխվում գավառակի կենտրոն **Բեյլան**: Դատարկված գյուղերը կողոպտվում են ու հրկիզվում: Ավազակները հարձակվում են Բեյլանի վրա, սակայն Հալեպից այնտեղ ուղարկված զինվորները կանգնում են նրանց դեմ ու ցրում արյունածարավ ամբոխին:

1909 թ. ապրիլին արհավրալի օրեր ապրեցին նաև **Կիլիկիայի** մերձակա տարածքների, հատկապես **Կեսարիայի** գավառի հայերը: Բայց այս վայրերում հնարավոր եղավ աղետը կանխել: Մի շարք շարժառիթներից զատ՝ դրա հիմնական պատճառն այն էր, որ **Կ. Պոլսում** և նրա շուրջ ծավալված արդուլհամիդյան շարժումը պարտություն էր կրել, և Բարձր Դուռը հայտարարել էր, թե միջոցներ է ձեռնարկելու աղետի տարածումը զսպելու համար:

1909 թ. ապրիլյան ջարդերն իրենց ետին թողեցին հազա-

---

[1] Տե՛ս **Յակոբ Զոլաքեան**, Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն), էջ 108-112:

[2] Տե՛ս **Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 258:

բավոր զոհեր, բյուրավոր այրիներ ու որբեր: Բնավեր եղածներից չատ չատերն իրենց մերկությունը ծածկող ցնցոտի իսկ չունեին, գլխի վերևում՝ ծածկ, ու ամենասոսկալին՝ ուտելու մի կտոր չոր հաց: Կիլիկիայի հայությունը վերջնական վերացման ստույգ վտանգ էր դիմագրավում:

Հարկավոր էր օգնության հասնել աղետյալներին: Եվ գործի անցան ազգային մարմինները, մասնավորապես Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, որտեղ հավաքվում էին աշխարհի տարբեր վայրերից հայերի հանգանակությունները՝ գումարների, հագուստեղենի, սննդի ու այլ տեսքով: Ազգակիցներին օգնության ձեռք մեկնելու կոչեր արեցին Մատթեոս Բ Իզմիրլյան Ամենայն հայոց կաթողիկոսը, Կիլիկիո Սահակ Բ Խապայան կաթողիկոսը, Ադանայի թեմի առաջնորդ Մուշեղ եպս. Սերոբյանը, գրողներ Սուրեն Պարթևյանը, Զապել Եսայանը և ուրիշներ, ողջ հայկական մամուլը: Միաժամանակ, պատրիարաքարանի պատասխանատուները դիմեցին Օսմանյան կայսրության ղեկավար դեմքերին՝ առաջարկելով չտապ օգնություն հասցնել աղետյալներին: ՀՅԴ Կ. Պոլսի Պատասխանատու մարմնի (Կենտրոնական կոմիտե) հովանավորությամբ կազմված «Կարմիր խաչի» առողջապահական խումբը չուտով հասավ Ադանա ու այնտեղ հաստատեց հիվանդանոց և դեղարան: Խումբը մեծ աշխատանք տարավ նաև շրջակա գավառներում:

Կոտորածներն ու աղետյալներին օգնելու խնդիրները 1909 թ. ապրիլից սկսած դարձան Կոստանդնուպոլսի Հայ ազգային ընդհանուր ժողովի օրակարգի գլխավոր հարցը: Իրենց հերթին, թուրքական իշխանությունները ևս «զբաղվեցին» կոտորածների ու աղետյալներին օժանդակելու հարցերով, սակայն՝ թուրքավարի ձևով: Այսպես, իշխանություններն ամեն կերպ փորձում էին կոտորածների մեղքը գցել հայերի վրա, բոլոր սպանվածների թիվը ներկայացնել 6 հազար հոգուց էլ պակաս, սպանված մուսուլմանների թիվը ավելի, իսկ եթե դա չէր հաջողվում՝ գոնե հավասար ցույց տալ քրիստոնյա զոհերի թվին՝ վերջինս մի քանի անգամ նվազեցնելով:

Իսկ որքա՞ն մարդ էր զոհվել կոտորածների երկու փուլի ժամանակ:

Եվրոպացի թղթակիցների ու դիվանագետների, ինչպես նաև հայկական մամուլի գնահատումով՝ մարդկային կորուստների թիվը գերազանցում էր 30 հազարը[1]: Սուրեն Պարթևյանը միայն Ադանայի վիլայեթում հաշվել էր 20.000 սպանված[2]: Հայ զոհերի թիվը նույնքան էր գնահատում վեր. Համբարձում Աշճյանը Ադանա քաղաքում և մերձակա բնակավայրերում[3], իսկ Օսմանյան պառլամենտի անդամ, փաստաբան Հակոբ Պապիկյանը քրիստոնյա զոհերի ընդհանուր թիվը նշել է 21.000, որից հայեր՝ 19.479, հույներ՝ 250, ասորիներ՝ 850, քաղդեացիներ՝ 422[4]:

Զոհերի ճշգրիտ թիվը շատ դժվար էր որոշել բազմաթիվ պատճառներով. առաջին՝ մեծաթիվ դիակներ հապշտապ կերպով Սիհուն գետն էին թափվել* կամ վայրի գազանների ու շների կողմից հոշոտվել, երկրորդ՝ որևէ մեկը սարսափի օրերին չէր մտածում զոհերի թիվը հաշվառելու մասին, և համաճարակներից վախենալով, հնարավորության դեպքում դիակները շտապ հանձնում էին հողին՝ առանց համապատասխան գրանցման, երրորդ՝ հազարավոր մեռելների, հատկապես դրսից աշխատանքի եկածների ինքնությունը պարզել հնարավոր չէր, չորրորդ՝ անհայտ կորած համարվողներից շատերն իրականում սպանվել էին, սակայն համարվում էին Կիլիկիայից հեռացածներ: Այս և այլ պատճառներով, որոնց մեջ առաջնային էր օսմանյան իշխանությունների քաղաքական քմահաճույքը, այդպես էլ ճշգրիտ տեղեկագիր չկազմվեց կոտորածների օրերին զոհվածների թվի մասին:

---

[1] Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 57, ցուցակ 3, գործ 19, թերթ 6, **«Բանբեր Հայաստանի արխիվների»** (Երևան), № 2 (102), 2003, էջ 17:

[2] **Սուրէն Պարթեւեան**, Կիլիկեան արհաւիրքը, Կ. Պոլիս, 1909, էջ 32:

[3] Տե՛ս **Վեր. Համբարձում Յ. Աշճեան**, Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր, էջ 27:

[4] «Ատանայի եղեռնը: Տեղեկագիր **Յակոբ Պապիկեանի**», Կ. Պոլիս, 1919, էջ 48:

* Գետն իր մեջ թափված հայերի դիակները տանում-քշում էր ու թափում Միջերկրական ծովը՝ Ադանա քաղաքից 20 կմ հեռու (տե՛ս **«Դրօշակ»** (Ժնեւ), № 5, մայիս, 1909, էջ 56): Ջարդերից չարաթներ հետո այլանդակված դիակներ էին հայտնաբերվում նույնիսկ Կիպրոսի ծովափում (տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 3841, 19 մայիսի (1 հունիսի) 1909 թ.):

Զոհերի թվում պետք է հաշվառել ջարդից հետո սովից, ցրտից ու հիվանդություններից մահացած ավելի քան 8000 հոգուն[1]:

Այսպիսով, 1909 թ. ապրիլի 1-13-ը տեղի ունեցած ջարդի զոհերի և դրանից հետո ստեղծված անտանելի պայմանների հետևանքով մահացածների ընդհանուր թիվը կարելի է մոտեցնել 40 հազարի[2], իսկ ըստ Ադանայի հայոց առաջնորդարանի քարտուղար Քերովբե Փափազյանի՝ ամեն դեպքում՝ այս թվից ոչ պակաս[3]: Իհարկե, այս թիվը նույնպես մոտավոր է:

Կոտորածից հետո մեծ թափ ստացավ հայության արտագաղթը ո՛չ միայն Կիլիկիայից, այլև Թուրքական բռնակալության տակ հեծող բուն Հայաստանից ու կայսրության հայաբնակ մյուս շրջաններից: Հոգեբանական հարվածն այնքան ուժեղ էր, որ հայկական մամուլում հայտնվեցին Կիլիկիայի հայությունը փրկելու համար նրան ամբողջապես մի որևէ օտար պետություն գաղթեցնելու ծրագրեր: Իշխանությունները ո՛չ միայն չէին խոչընդոտում հայոց արտագաղթին, այլ ընդհակառակը, աղետից հազիվ դուրս եկած ժողովրդի գլխին նորանոր ծանր տուրքեր դնելով, տատանվողներին էլ կողմնորոշում էին մեկնելու ուղղությամբ: Անհամեմատ մեծ ծավալներ ընդունեց նաև անձի ու ինչքի պաշտպանության նպատակով օտար եկեղեցիների հովանու տակ մտնելու՝ նախապես արդեն առկա գործընթացը:

Իսկ ովքե՞ր էին իրականում կազմակերպել կոտորածները:

Կոտորածների հենց առաջին օրերից հասարակական գիտակցության մեջ գոյացավ այն համոզումը, թե եղածը աբդուլ-համիդյան խմբակի վերջին հանցագործություններից է, որի գլխավոր դերակատարներն են Ադանայի նահանգապետ Ջևադ բեյը, այնտեղի զորքերի հրամանատարն ու նահանգի հայատյաց մյուս բռնակալ դեմքերը: Քանի որ կոտորածները ժամանակային առումով համընկել էին Կ. Պոլսում աբդուլհամիդականների

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 73, 2 ապրիլի 1910 թ.:

[2] Տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 3827, 1 (14) մայիսի 1909 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 3839, 16 (29) մայիսի 1909 թ.:

ապստամբության հետ, այդ հանգամանքը չատերին մղում էր այն համոզման, թե կոտորածը կազմակերպել են սուլթան Աբդուլ Համիդի կողմնակիցները՝ Եկրզից եկած հրամանով: Այդ կարծիքը պաշտոնապես առաջ էր քաշել այդ ժամանակաշրջանում իթթիհադականների հետ քաղաքական դաշինք կազմած Դաշնակցությունը: Ի զուր էին դաշնակցական գործիչներն ու մամուլը փորձում հայ զոհերի արյունից չքմեղացնել իրենց իթթիհադական «ընկերներին»: Հայկական միջավայրում սկզբում ուրիշներ ևս հավատում էին այդ վարկածին, այդ թվում՝ ՀՅԴ երդվյալ հակառակորդներից Սուրեն Պարթևյանը, որը կոտորածներից որոշ ժամանակ հետո գրում էր հայ-թուրքական «եղբայրության» մասին[1]: Իրականում, բոլոր փաստերն ու հետագա դեպքերը եկան աներկբայորեն ապացուցելու, որ կիլիկյան արհավիրքի պատասխանատուները երիտթուրքերն են: Դրա հիմնական ապացույցներն էին.

Ա) Իթթիհադի կոմիտեն Ադանա քաղաքում և նահանգում ուժեղ կազմակերպություն ուներ, և եթե ցանկանար, կարող էր արգելք հանդիսանալ աղետին: Մինչդեռ նրա անդամները ո՛չ միայն այդ ուղղությամբ ջանքեր ի գործ չդրին, այլև ընդհակառակը, նրանցից չատ չատերը միացան իրենց քաղաքական հակառակորդ աբդուլհամիդյան բռնակալ ուժերին՝ հայերին հոշոտելու համար: Այս մասին մեջբերենք ընդամենը մի քանի վկայություն: Իթթիհադի ղեկավարներից Մևլան զադե Ռիֆաթը գրել է, թե այդ կուսակցության «Ատանայի մասնաճիւղը կեդրոնէն ստացած հրահանգին համաձայն Կիլիկիոյ, մասնաւորապէս Ատանայի մէջ ընդհանուր ջարդ մը պատրաստելու սկսած էր»[2]: Մևլան զադեն նաև վկայում է, թե Իթթիհադի՝ հայոց 1915 թ. ցեղասպանությունը ծրագրավորելու նվիրված գաղտնի նիստի ժամանակ, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ

---

[1] *Տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 3823, 27 ապրիլի (10 մայիսի) 1909 թ., տե՛ս նույն տեղում, № 3834, 11 (24) մայիսի 1909 թ.:*

[2] ***Ռիֆաթ Մեւլան զատէ**, Թրքական յեղափոխութեան մութ ծալքերը (թարգմանություն օսմաներեն բնագրից), Պէյրութ, 1975, էջ 171:*

դոկտոր Նազըմը «հորդորել է» չբավարարվել Ադանայի ջարդի նման մասնակի ցեղասպանությամբ. «Լա՛ւ գործ պէտք է եւ վճռական գործադրութիւն: 1909ին, Ատանայի մէջ, ասդին-անդին **մեր ըրած ջարդերուն** պէս բան մը եթէ պիտի ընենք, օգուտի տեղ վնաս կը պատճառենք»[1]: Երիտթուրք գործիչներից մեկը աղանացի մի իսլամի հետ զրույցի ժամանակ նրան նախատել էր՝ ասելով. «Երբ մենք ձեզի ըսինք, թէ հայերուն քիթը քիչ մը գետին քսեցէ՛ք, չուզեցինք ըսել, թէ այդպէս բոլորին բնաջնջեցէ՛ք»[2]: Կազմակերպիչների՝ իթթիհադականները լինելու իրողությունը հաստատում է նաև ամերիկացի միջազգայնագետ և պատմաբան Հերբերտ Ադամս Գիբբոնսը[3]: Իսկ Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Ջերալդ Լոութերն իր պետության արտաքին գործերի նախարար Ջարլի Հարդինգին 1910 թ. մայիսի 29-ի թվով հղած «գաղտնի, անձնական և խորհրդապահական» նշումները կրող զեկուցագրում հայտնում էր, թե իթթիհադականները «հայերին հանգստացրին (տեղը դրեցին:- Հ. Ս.) Ադանայի կոտորածով (1909 թ.)»[4]:

Բ) Կոտորածները հրահրած տեղեկատվական «ծանր հրետանին»՝ «Իթիդալ» թերթը իթթիհադականների Ադանայի պաշտոնական օրգանն էր: Կոտորածներին հաջորդած չաբաթների քննչական հետապնդումները պարզեցին, որ նրա խմբագիր Իհսան Ֆիքրին ջարդի նախօրյակին և օրերին մշտական կապի մեջ է եղել քաղաքի երիտթուրքական կոմիտեի հետ:

Գ) Ջարդերի երկրորդ փուլն սկսվեց իթթիհադական կառավարության հրահանգով ու նրա տրամադրության տակ գտնվող Սալոնիկի երկրորդ զորաբանակին պատկանող զորամասի Ադանա ժամանումից ընդամենը հաշված ժամեր անց՝ զորամասի

---

[1] Մեկան զաղեի՝ Հալեպում 1929 թ. «Էլ-Վագրթ» տպարանից օսմաներենով լույս տեսած «Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը» գրքին հղում անելով մեջբերվել է հետևյալ հատորում. **Հայկազն Գ. Ղազարեան**, Ցեղասպան Թուրքը, Պէյրութ, 1968, էջ 342 (ընդգծումը մերն է:- Հ. Ս.):

[2] **Վեր. Համբարձում Ց. Աչճեան**, Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր, էջ 91:

[3] ***Гиббонс Г. А.***, *Последние избиение в Армении, Петроград, 1916, с. 26.*

[4] ***«Զգուշացե՛ք կեղծ բարեկամներից»***, Երևան, 2002, էջ 70:

զինվորների ամենաեռանդուն մասնակցությամբ: Զորամասի հրամանատարներն իրենց այդ խժդժություններն «արդարացնում էին» ստելով, թե հայերն իբր կրակել են իրենց ենթակաների վրա և իրենք պարզապես ստիպված են եղել զենքի ուժով հակադարձել ու ինքնապաշտպանվել[1]:

Դ) Եվրոպական մամուլի օրգանները բազմաթիվ ապացույցներ էին բերում ջարդերին իթթիհադականների Ադանայի կոմիտեի մասնակցության վերաբերյալ: Օրինակ՝ ֆրանսիական «Թան» թերթի 1909 թ. մայիսի 9-ի առաջնորդող հոդվածի հեղինակը հայերի արյունալի ջարդը երիտթուրքական իշխանությունների ծրագրածն էր հայտարարում: Պարբերականը գրում էր, թե Ադանայի վալին կոտորածները կազմակերպել է բարձրից ստացած ցուցումի համաձայն, որի ապացույց կարող է ծառայել ներքին գործերի նախարարության մուսթեշար (խորհրդական) Ադիլ բեյի հեռագիրը Ադանայի վալիին, որում հստակ հրահանգված էր. «Եվրոպացիներին ձեռք չտա՛լ»: Պարզ է, որ հասկացնել էր տրված, թե «հայերին ձեռք տվե՛ք»: Դրանից մի քայլ էր մնացել հայերին կոտորելը, որը եւ մուսուլման բնակչությունը կատարեց[2]: Ադիլ բեյի սույն հեռագրին անդրադառնալով, հայերի նկատմամբ միշտ բարյացակամ եղած Սուլեյման Նազիֆ բեյը Ստամբուլի «Օսմանլը» թերթի 1909 թ. մայիսի 3-ի համարում չեշտում էր, թե ջարդերի համար «պատասխանատուութեան մեծը կը պատկանի Բ. Դրան»[3]:

Ե) Իթթիհադի ուղղակի պատասխանատվության աղաղակող ապացույցներից է 1909 թ. ապրիլի կեսերին սուլթան Աբդուլ Համիդը գահընկեց հռչակելով երկրի ղեկն ամբողջությամբ իր ձեռքը վերցրած այդ կուսակցության ղեկավարության պահվածքը: Իթթիհադականները ո՛չ միայն կոտորածները դատապարտող պաշտոնական որևէ հայտարարություն չարեցին, դույզն ցավակցություն չհայտնեցին հայերին՝ կրած ծանր կո-

---

[1] Տե՛ս **«Շիրակ»**, № 11, 18 ապրիլի 1909 թ., էջ 259:

[2] «Թանի» առաջնորդող հոդվածի թարգմանությունը տե՛ս **«Մշակ»** (Թիֆլիս), № 94, 6 մայիսի 1909 թ.:

[3] **«Բիւզանդիոն»**, № 3818, 21 ապրիլի (4 մայիսի) 1909 թ.:

ռուստների համար, այլև պատահածի ամբողջ մեղքը գցեցին հայերի վրա: Ջարդերի հենց սկզբին այդպիսի հայտարարություն արեց նաև Իթթիհադի՝ այդ օրերին Փարիզում գտնվող պարագլուխ և Օսմանյան պառլամենտի նախագահ Ահմեդ Ռիզան[1]: Երիտթուրքական իշխանությունները ծաղրի ու խեղկատակության վերածեցին ոճրագործների դատավարությունները, իսկ կոտորածների անմիջական հրահրիչ կառավարական պատասխանատուներին ո՛չ միայն չպատժեցին, այլ, ընդհակառակը, պարգևատրեցին ավելի բարձր պաշտոններով: Օրինակ՝ ներքին գործերի նախարարության խորհրդական Ադիլ բեյը հաջորդ տարի իսկ, 1910 թ., «ընտրվեց» Իթթիհադի կենտրոնական կոմիտեի ընդհանուր քարտուղարի[2], այսինքն՝ կուսակցական աստիճանակարգի, բարձրագույն պաշտոնում, որը նա պարբերաբար պահեց մինչև 1916 թ.՝ ուրիշ ճիվաղների հետ անմիջականորեն ծրագրավորելով ու գործադրության մեջ դնելով նաև Հայոց ցեղասպանության՝ 1915 թ. սկսած նոր փուլը:

Այս և ուրիշ բազմաթիվ փաստեր կասկած չեն թողնում, որ Կիլիկիայի 1909 թ. ապրիլյան ջարդերը կազմակերպել և իրականացրել էր թուրքական դարավոր բռնակալությունը՝ ի դեմս «հին» թե «նոր» վարչակարգերի մարդկային թափթփուկների, որոնք միավորվել էին հայերի բնաջնջման հարցում:

Կիլիկյան արհավիրքը լայն արձագանք գտավ հայկական և օտար շրջանակներում, հատկապես պարբերական մամուլում, մտավորականների ու քաղաքական գործիչների միջավայրում, եվրոպական երկրների պառլամենտներում ու պետական այլ մարմիններում, Եվրոպայում թեև դրանք զիջում էին 1895–1896 թթ. տեղի ունեցած հայերի լայնածավալ կոտորածների արձագանքներին: Կոտորածներին քիչ թե շատ անդրադարձան Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Շվեյցարիայի և Ֆրանսիայի պառլամենտներում: Վերջինիս Ազգային ժողովում իրենց բողոքի ձայնը բարձրացրին պատգամավորներ Դենի Կոշենը, սոցիալիստների

---

[1] ***«Շիրակ»**, № 12–13, 2 մայիսի 1909 թ., էջ 288:*

[2] *Տե՛ս **Հայկազն Գ. Ղազարեան**, Ցեղասպան Թուրքը, էջ 360:*

առաջնորդ Ժան Ժորեսը և ուրիշներ՝ պահանջելով իրենց երկրի ազգու միջամտությունը: Գրելով կոտորածների մասին, այնուամենայնիվ, եվրոպական մամուլը լայն տեղ հատկացրեց թուրքական իշխանությունների խեղաթյուրված տեղեկատվություններին, որոնք հայերին ներկայացնում էին իբրև ապստամբներ ու խռովարարներ, կայսրության կործանման դավադրության գործիքներ: Հոդվածներից բացի, հիմնականում ֆրանսերենով, կոտորածների նույն տարում ու հաջորդ տարիներին լույս տեսան բազմաթիվ գրքեր, որոնց հեղինակներն էին Ժորժ Բրեզոլը (Պետրոս Ազնավուր), ֆրանսիացիներ Էմիլ Դումերգը, Պոլ դյու Վեուն, Ա. Ադոսիդեսը, անգլիացի Ֆրեդերիկ Զաքեոս Դուկետ Ֆերիմանը, ամերիկացի Հերբերտ Ադամս Գիբբոնսը և ուրիշներ: Հայերի կոտորածները դատապարտեցին նույնիսկ մուսուլման մտավորականներ ու կրոնական գործիչներ, ինչպես Կահիրեի ալ-Ազհար համալսարանի ռեկտոր և գերագույն իմամ շեյխ Սալիմ ալ-Բահրին (ով մուսուլմաններին ուղղված զգաստության խրատական ֆեթվա հրապարակեց), Եգիպտոսում բնակվող, ազգությամբ թուրք մտավորական Վելիէդդին Յեկենը, եգիպտացի արաբ մտավորական Մուհամմեդ Լութֆի ալ-Մանֆալութին և ուրիշներ: Հայերի կոտորածները դատապարտեցին նույնիսկ մի քանի թուրքական պարբերականներ, որոնց մեջ առանձնացավ Ստամբուլի «Սիբերի սայիքայի հյուրրիեթի» թերթը:

Կիլիկիայի ողբերգությունը, որպես «դեպքեր», «արժանացավ» նաև Օսմանյան պառլամենտի ուշադրությանը: Պատգամավորական ժողովի 1909 թ. ապրիլի 18-ի, 28-ի, 30-ի, մայիսի 10-ի և 11-ի նիստերում, հիմնականում հայ պատգամավորների, մասնավորաբար՝ Գրիգոր Զոհրապի, Վարդգեսի (Հովհաննես Սերենգյուլյան), Մեծն Մուրադի (Համբարձում Պոյաճյան) ու Նազարեթ Տաղավարյանի պահանջով բարձրացված հարցը թուրք գործընկերների ցինիկ պահվածքի պատճառով վերածվեց հակահայկական կրքերի բորբոքման հերթական ցուցադրության: Մայիսի 10-ի նիստում թուրք կառավարությունը, հիմնվելով Ադանայի վալիի, կոտորածների մյուս կազմակերպիչների ստահոդ տեղեկությունների վրա, հայ հեղափոխականներին

ամբաստանեց իբրև Կիլիկիայում ապստամբության թելադրիչ, իսկ հայերին ներկայացրեց իբրև նախահարձակ:

Օսմանյան խորհրդարանի նիստերում հնչեցին տարբեր առաջարկներ: Ժողովն ընտրեց երկու հոգուց բաղկացած քննիչ հանձնախումբ, որի կազմում էր Էդիրնեից պատգամավոր ընտրված, իր ազգի հետ կապը համարյա ամբողջովին կտրած, իթթիհադական Հակոբ Պապիկյանը: Հանձնախումբը մեկնելու էր «դեպքերի» վայրեր և վերադարձին իր տեղեկագիրը ներկայացնելու էր Պատգամավորական ժողովին:

Կոտորածներին յուրովի արձագանքեց նաև նոր սուլթանը՝ Մեհմեդ V Ռեշադը: Մայիսի 2 (15)-ին Դոլմաբախչեի պալատում ընդունելով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պատվիրակությանը, Օսմանյան կայսրության փաղիշահը հայտնեց իր «հայրական» զգացումներն իր հայազգի հպատակների նկատմամբ, ու հօգուտ աղետյալների ստեղծված միջազգային հանձնաժողովին նվիրաբերեց ... 500 օսմանյան ոսկի, մինչդեռ հայերի նյութական կորուստները միայն Ադանա քաղաքում գնահատվել էին 300.000 ոսկի[1]: Մեհմեդ V Ռեշադը հայկական պատվիրակությանը հավաստիացրել էր, թե «եթէ կարելի ըլլար, այս նպատակին համար ամբողջ ստացուածքս կը նուիրէի»[2]...

Կոտորածների դադարից անմիջապես հետո, թուրքական «արդարադատությունը» գործի անցավ՝ «մեղավորներին հայտնաբերելու և պատժելու համար»: Ադանայի վիլայեթի տեղական կառավարությունը նշանակեց մի քննիչ հանձնախումբ՝ ջարդերի կազմակերպիչներից Բաղդադի զադե Աբդուլ Կադեր էֆենդիի գլխավորությամբ, որի հիմնական աշխատանքը եղավ հայ տղամարդկանց ձերբակալությունն ու խստագույն հարցաքննությունը[3]: Այս հանձնախմբի գործունեությունը երկար չտևեց: Մեկ ամիս հետո նրան փոխարինելու եկան Կ. Պոլսից ուղարկած հանձնախմբերը: Բացի Պատգամավորական ժողովի վերոհիշյալ հանձնախմբից, Ադանա ժամանեց կառավարության կազմած եռանդամ քննիչ հանձնախումբը, որի կազմում էր Մանասթրի

---

[1] Տե՛ս **«Արեւելք»**, № 7075, 17 ապրիլի 1909 թ.:

[2] Տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 3848, 27 մայիսի (9 հունիսի) 1909 թ.:

[3] Տե՛ս **«Ախուրեան»**, № 33, 7 մայիսի 1909 թ.:

դատական քննիչ Հարություն Մոստիչյանը: Իր հերթին, պատերազմական նախարարությունը Ադանա ուղարկեց Ռումելիի զինվորական սպաներից կազմված մի ռազմական ատյան, որը տեղում ստեղծեց միայն երիտթուրք զինվորականներից կազմված երեք ռազմական դատական ատյան (դիվանը հարբի), որոնք էլ, իրենց կարգին, կյանքի կոչեցին հիմնականում հանցագործ տարրերից կազմված հանձնախմբեր:

Սակայն արդարության հասնելու հայերի սպասելիքներն ի դերև ելան: Թե՛ Կ. Պոլսից եկած երկու հանձնախմբերի թուրք անդամները և թե՛ մանավանդ Ռազմական ատյանը օրեցօր հակվեցին նախ հավասարեցնելու դահիճներին ու զոհերին, ապա՝ բացահայտորեն մեղադրելու միայն հայերին ու սահմանափակ թվով մուսուլման տգետ գյուղացիների: Դատական մարմիններն ամեն ինչ արեցին, որպեսզի բուն ճիվաղներն անպատիժ մնան. դատավարությունների արդյունքում մահապատիժ ստացան չուրջ հինգ տասնյակ մուսուլմաններ, որոնցից միայն մոտ 20 ոճրագործ, հիմնականում կրոնական հիպնոզից կուրացած անգիտակից տարրեր, կախաղան հանվեց: Ռազմական ատյանը չէր բավականանում դերերը շրջելով, այլ նաև հանձնառու էր անարգել զոհերը, դրանով է՛լ ավելի հուսահատության մատնել հայերին: Հայությանը ներկայացվեցին ո՛չ միայն քրեական, այլև քաղաքական բնույթի մեղադրանքներ՝ զենքի ու զինամթերքի ձեռբերում ու պահեստավորում, ապստամբության կազմակերպում՝ Ադանայի նահանգն ու Հալեպի նահանգի արևմտյան մասը Օսմանյան կայսրությունից անջատելու և հայկական անկախ թագավորություն հռչակելու նպատակով և այլն: Այս բոլոր մեղադրանքներն անհիմն, անհեթեթ ու ցինիկ էին: Հայերին ձերբակալում էին ամեն տեսակ սուտ վկայություններով, և խոստովանություններ կորզելու համար նրանց ենթարկում անմարդկային տանջանքների: Նման միջոցներ կիրառելով, Ռազմական ատյանը մահվան դատապարտեց 12 հայի, որոնցից 6 աղանահայեր, այդ թվում՝ երեք Պուլտուգյան եղբայրները, մայիսի 28 (հունիսի 11)-ին կախաղան հանվեցին Ադանայում: Մահվան դատապարտված մյուս 6-ի պատիժը փոխարինվեց ցմահ բանտարկությամբ: Հեռակա կարգով մահ-

վան դատապարտվեց նաև Ադանայի թեմի առաջնորդ Մուշեղ եպս. Սերոբյանը, որը մեղադրվում էր ապստամբության գլխավոր կազմակերպիչներից ու հայկական հեղափոխական «քոմիթեներից» մեկի տեղական կազմակերպության ղեկավարը լինելու համար: Տասնյակներով ուրիշ հայեր հնարովի մեղադրանքներով դատապարտվեցին տարբեր ժամկետներով բանտարկության՝ հիմնականում 10, 15, 20 տարով կամ ցմահ:

Դաշնակցությունը փոխանակ Ադանայի ջարդերից հետևություններ անելու և փոխելու իր վերաբերմունքը Իթթիհադի նկատմամբ, ընդհակառակը, ամեն ինչ արեց պատահարների ողջ մեղքը աբդուլհամիդյան հետադիմականների վրա գցելու իթթիհադականների հերյուրանքները հայկական միջավայրում տարածելու համար:

Պետական-կառավարական երկու հանձնախմբերից ավելի հետևողական գտնվեց Պատգամավորական ժողովի երկանդամ հանձնախումբը՝ շնորհիվ Հակոբ Պապիկյանի համառության: Երբ պառլամենտի ղեկավարները նրան հանձնախմբի անդամ էին նշանակում, մեծապես վստահ էին նրա օսմանցիական տրամադրություններին, հավատում էին, թե Թուրքի չարածը նա կանի՝ անպայման ծառայելով Թուրքական շահերին: Նրա ընտրությամբ, իթթիհադական ղեկավարները միաժամանակ լուծում էին ընդամենը երկանդամ հանձնախմբում հայերի ներկայացվածության խնդիրը: Բայց նրանց հաշիվները հօդս ցնդեցին. հայությունից ուծացած այս անձը, ի տես արհավիրքի հրեշային հետևանքների, ընդվզեց, նրա մեջ խլրտացին հայկական-մարդկային զգացմունքները: Հանձնախմբի մյուս անդամի՝ Յուսուֆ Քեմալ բեյի հետ աղետյալ վայրերում շրջելուց հետո, նա վերադարձավ Կ. Պոլիս ու պառլամենտի ղեկավարությանը հանձնեց իրականության ճշմարիտ պատկերը ներկայացնող, ապշեցնող փաստեր պարունակող տեղեկագիրը՝ Պատգամավորական ժողովի նիստերին դա կարդալու և քննարկելու համար: Տեղեկագրում Պապիկյանը եզրահանգել էր, որ

Ա) Ադանայի արյունալի դեպքերում քրիստոնյաները որևէ մեղք չունեն: Նրանք զենքի են դիմել միմիայն ինքնապաշտպանության անհրաժեշտությունից մղված. Բ) Ջարդերի համար

պատասխանատու է կենտրոնական կառավարությունը, իսկ տեղական իշխանությունն ուղղակի մեղսակից է. Գ) Ադանայում քննություններ և դատավարություններ կատարող ռազմական ատյանը անաչառ չէ. Դ) Հայերի և մյուս քրիստոնյաների կոտորածներն իրականացվել են ամենազազիր եղանակներով ու աներևակայելի դաժանությամբ: Դրանք «իրենց սարսափով գերազանցած են» Աբդուլ Համիդի հրահանգած ջարդերը. օրինակ, «Միսիսի, Համիտիէի եւ Պաղչէի, Հասան Պէյլիի եւ Օսմանիէի մէջ 12 տարեկանէն վեր բոլոր արուները գլխատած են»[1]: Պապիկյանը հայտնում էր, թե չի ուզեցել «ոչինչ ծածկել ճշմարտութենէն» ու հստակորեն նշում էր իր հետագա խնդիրը՝ ապացուցել, որ «այս ջարդին նպատակն էր բնաջնջումը հայերուն եւ քրիստոնեաներուն»[2]:

Պապիկյանը չէր կարող տեղեկագիրը հրատարակել այնքան ժամանակ, քանի դեռ Պատգամավորական ժողովը դա չէր քննարկել: Որոշ ժամանակ անց նա արդեն կասկածում էր, թե ժողովը դա երբևիցե կքննարկի: Ուստի որոշեց տեղեկագրի համառոտ բովանդակությունը փոխանցել հասարակության՝ մամուլի միջոցով: Կ. Պոլսի «Թասվիրի էֆքեարի» 1909 թ. հունիսի 25-ի համարում լույս տեսավ Թերթի թղթակցի հարցազրույցը Հակոբ Պապիկյանի հետ՝ տեղեկագրի մասին: Այսքան բացախոսությունը ճակատագրական եղավ ճշմարտության ու արդարության հետամուտ Պապիկյանի համար. 1909 թ. հուլիսի 20-ին նա «հանկարծամահ» եղավ, իսկ տեղեկագիրն «անհետացավ»: Որևէ մեկը չէր հավատում Պապիկյանի «բնական» մահվան վարկածին: Այս առթիվ ֆրանսիացի հայասեր Ֆրանսիս դը Պրեսանսեն նշում էր, թե «իր եզրակացություններից մի քանիսը հանրային ուշադրությանը հանձնելու անխոհեմության համար տարաբախտ Պապիկյանի կյանքը խլեցին»: Տեղեկագիրն առա-*

---

[1] *«Ատանայի եղեռնը: Տեղեկագիր **Յակոբ Պապիկեանի**», էջ 13-14:*

[2] *Նույն տեղում, էջ 17-21:*

* *Հղելով թուրքական աղբյուրների, Հ. Ղազարյանը հայտնում է, թե Պապիկյանը սպանվել է մի թուրք պատգամավոր խոջայի իր այցելության ժամանակ՝ նրա մատուցած թունավոր սիգարետի միջոցով. տե՛ս **Հայկազն Գ. Ղազարեան**, Յեղասպան Թուրքը, էջ 318 և 389:*

ջին անգամ հրատարակվեց ֆրանսերենով՝ Փարիզի «Pro Armenia» («Պրո Արմենիա») պարբերականում՝ Պրեսանսեի 1913 թ. ապրիլի 25-ին թվագրած հուժկու ու խարազանող առաջաբանով: Շուտով դա ամբողջովին արտատպվեց «Pro Armenia»-ին չուրջ մեկ տարի (1912 թ. դեկտեմբերի 10 – 1913 թ. նոյեմբերի 25) փոխարինած «Pour les Peuples d'Orient» («Պուր լե պեոպլը դ'Օրիան»՝ «Արևելքի ժողովուրդների համար») ամսագրում: Հետևեցին Պապիկյանի տեղեկագրի մասին հոդվածներ ֆրանսիական «La Revue» («Լա ռեվյու») և «La Droit des Peuples» («Լա դրուա դե պեոպլը»՝ «Ժողովուրդների իրավունքը») հանդեսներում: Տեղեկագրի բովանդակության վրա երկարորեն ծանրացան, զգայացունց մեկնաբանություն-մերկացումներ արեցին ու ցասում արտահայտեցին Լոնդոնի «Times» («Թայմզ») և Փարիզի «Le Temps» («Թան») մեծագույն հռչակ ունեցող թերթերը[1]: Վերջինս Պապիկյանի տեղեկագրին նվիրված ընդարձակ առաջնորդողում գրում էր.

«Պիտի կարողանա՞յ «Իտտիհատը» երբեւիցէ լիովին քաւել իր սատարած այդ վիթխարի ոճիրը – չգիտենք: Պապիկեանի տեղեկագիրը մերկացնում է թիւրքական սահմանադրականների ճշմարիտ պատկերը իր վայրենի եւ այլանդակ մերկութեամբ: Հայ ժողովուրդը եւ իր կուսակցութիւնները երբեք չեն մոռանայ եւ չեն ների արարքները այդ քստմնելի կամօռայի*, որ եւրոպականութեան շղարշի տակ պահպանում է իր դաժան, արիւնռուչտ մօնգոլականութիւնը»[2]:

Տեղեկագիրը հայերեն առաջին անգամ առանձին գրքով լույս տեսավ 1919 թ. Կ. Պոլսում, Հակոբ Սարգիսյանի թարգմանությամբ**:

---

[1] **«Դրօշակ»**, № 4, ապրիլ, 1913, էջ 61:

* Նկատի ունի Պաղեստինի Գոմոր քաղաքը, որն ըստ Բիբլիայի, Աստված ամբողջովին ավերել է բնակիչների անառակության պատճառով:

[2] **«Դրօշակ»**, № 4, ապրիլ, 1913, էջ 62:

** Հակոբ Պապիկյանի տեղեկագիրը հետագա տարիներին ունեցել է բազմաթիվ վերահրատարակություններ՝ տարբեր լեզուներով: Վերջինն է 2009 թ. Բերիո թեմի առաջնորդարանի՝ Հալեպում լույս ընծայած վերահրատարակությունը կիլիկյան աղետի 100-ամյակի առթիվ: Հակոբ Պապիկյանի տեղեկագիրն ամբողջությամբ տե՛ս սույն գրքի Հավելված 1-ում:

Աղետի տարողությունը չէր սահմանափակվում նյութական կորուստներով ու սպանվածներով: Կային նաև տասնյակ հազարների հասնող կենդանի զոհեր՝ այրիները, որբերը, հաշմանդամները, հոգեկան հավասարակշռությունը կորցրածները, բռնի իսլամացվածները ևն.: Հարկավոր էր զբաղվել նաև նրանցով, հայավարի ու քիչ թե շատ մարդավայել կյանքի հույս ներշնչել նրանց: Օգնություն էր գալիս հայկական գաղթօջախներից, օտար բարեսեր անհատներից, կազմակերպություններից, պետություններից ու նրանց դիվանագիտական ներկայացուցչություններից: Կիլիկիայի աղետյալներին այդ օրերի համար պատկառելի մի գումար՝ 50.000 դոլար նվիրաբերեց ԱՄՆ-ի կառավարությունը[1]:

Այրի կանանց թիվը 10.000-ից անցնում էր[2]: Նրանցից շատ շատերն անլուր կեղեքումների էին ենթարկվել կոտորածների ժամանակ: Հայկական զանազան մարմիններ, մասնավորաբար Կ. Պոլսի պատրիարքարանը ձեռնարկեցին այրիների համար աշխատատեղերի ստեղծման գործին: Բացվում էին ջուլհականոցներ, ասեղնագործության, գորգագործության, գուլպայագործության, կարի և այլ արհեստանոցներ:

Հայ հասարակության մեծագույն հոգսերից մեկը **որբերի** խնդիրն էր: Սովալլուկ, ցնցոտիների մեջ, հաճախ՝ հիվանդ ու ծնողազուրկ դարձած, նրանք ազգի հույսն էին: Հարկավոր էր նրանց ազգովի տիրություն անել: Ըստ Կ. Պոլսի հայոց պատրիարքական տեղապահ Հովհաննես եպս. Արշարունու՝ 1909 թ. մայիսի 23-ին Բարձր Դռանը մատուցած հիշատակագրի՝ աղետի հետևանքով որբացած հայ մանուկների թիվը նույնպես 10.000 էր, որոնցից 2000-ից ավելին միայն Ադանա քաղաքում և շրջակայքում[3]: Այդ թվից ավելի քան 4000-ին առևանգել էին քուրդ, թուրք և չերքեզ հրոսակները[4]:

---

[1] **Թէոդիկ**, Ամէնուն տարեցոյցը, Դ տարի, Կ. Պոլիս, 1910, էջ 40:

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 18:

[3] Տե՛ս **Յակոբ Ց. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, էջ 560:

[4] Տե՛ս **«Հորիզոն»**, № 9, 15 հունվարի 1912 թ.:

Առաջինը որբերի խնամքին ձեռնարկեցին Կիլիկիայի օտար հաստատությունները, որոնք լայնորեն բացեցին իրենց ունեցած որբանոցների դռները, ինչպես նաև արագորեն հիմնեցին նոր որբանոցներ: Սակայն դրանք բավարար չեղան պատսպարելու որբերի մեծ մասին, ուստի փաստական որբանոցների վերածվեցին հյուպատոսություններին և միսիոներական դպրոցներին կից չինություններն ու այգիները: Իր հերթին, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն ստեղծեց «Կիլիկիոյ կեդրոնական որբախնամ յանձնախումբ»՝ պատրիարքարանի քարտուղար Սարգիս Սուինի (Սարգիս Սյունգյուճյան) գլխավորությամբ: Հանձնախումբը սրտառուչ կոչով դիմեց ամբողջ հայությանը՝ «Ատանայի որբոց համար» հանգանակություն կազմակերպելու նպատակով, նրա ղեկավարն ու անդամների մեծ մասը եղան աղետի վայրերում: 1909 թ. հունիսի սկզբներից ազգային որբանոցներ բացվեցին: Նորաբաց վեց որբանոցներում տարեվերջին 1500 որբ էր պատսպարվել[1]: Մնացյալ որբերի մի մասը Բեյրութ, Ալեքսանդրիա, Կիպրոս, Կ. Պոլիս, Իզմիր և հայաբնակ այլ վայրեր տեղափոխվեց: Հայկական գաղթօջախներում կազմակերպվում էին զանազան միջոցառումներ, որոնցից ստացված չահույթը հատկացվում էր այրիների ու մասնավորապես որբերի խնամքի համար: Թուրքական իշխանությունները, իրենց հերթին, Ադանայում բացեցին մանչերի որբանոց, ուր 500 որբ էր հավաքվել[2]: Երբ հստակ դարձավ, որ իշխանությունների նպատակը նրանց թուրքացնելն է, հայ մայրերի մեծ մասը նրանց հետ վերցրեց. «Հո՛գ չէ, կ՚ըսէին, թող մեր քովիկը մեռնին, միթէ միւսներուն մեռնիլը չտեսա՞նք, բայց տիւչմանին մի՛ յանձնէք...»[3]:

Ազգային մեկ այլ ցավ էր բռնի իսլամացված հայերի հարցը, որոնց ջախջախիչ մեծամասնությունը կազմում էին առևանգված ու մարդասպանների հարեմներում որպես հարճ հայտնված հայուհիները: Արհավիրքի օրերին, որոշ թվով հայեր կյանքի

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 1202, թ. 18:

[2] **«Արագած»** (Նիւ Եորք), № 17, 17 օգոստոսի 1911 թ., էջ 197:

[3] Նույն տեղում:

փրկության համար դիմել էին կրոնափոխության: Բայց այս միջոցն էլ ոչ միշտ փրկարար էր եղել: Այսպես, Գրրրգ խանի վրա հարձակող բաշիբոզուկները «կը ստիպեն ժողովուրդը, որ Թուրք ըլլայ. խեղճ հայերը կը հաւանին այս առաջարկին, եւ սակայն իրենց դաւանափոխութիւնը օրինաւոր ըլլալու համար կը ստիպեն որ Մուսթաֆա փաշայի մզկիթը երթան. ժողովուրդը դարձեալ կը հաւանի, եւ երբ հազիւ քաղաքէն քիչ մը կը հեռանան, վայրագ խուժանը բոլոր էրիկ մարդիկը կը սպաննէ եւ կիներն ու աղջիկները իրենց մէջ կը բաժնէ»[1]: Այս իրադարձությունների ժամանակ գերեվարված հայուհիների հետ բերելու նրանց հարազատների և Մերսինում Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի հյուպատոսների փորձերն ի զուր են անցնում[2]: Բռնի իսլամացված հայուհիներին հետ բերելու Կ. Պոլսի ազգային իշխանությունների ջանքերը ևս ապարդյուն են մնում: Երբ պատրիարքարանից մի պատվիրակություն ներքին գործերի նախարար Ֆերիդ փաշայի հետ 1909 թ. մայիսի 2 (15)-ի հանդիպման ժամանակ արծարծում է այդ հարցը, վերջինս լկտիաբար պատասխանում է, թե «**Հայ կիներն ու աղջիկները կամավոր դիմեր են իսլամութիւն ընդունելու համար**»: Պատռելով բարձրաստիճան կեղծավոր պաշտոնատարի դիմակը, «Բիւզանդիոնի» խմբագրապետ Բյուզանդ Քեչյանն իր մեկնաբանության մեջ «զարմանալի» է համարում, որ հայուհիները «Ատանայի ջարդին խռովեալ ժամանակն ընտրեր են **ինքնաբերաբար իսլամութեան դիմելու համար**»[3]: Բռնի իսլամացումների վերաբերյալ հրապարակումները չատ էին հատկապես այս թերթում, որի խմբագրապետի՝ մայիսի 21-ին լույս տեսած «Թուրքերուն վէճն ու պատմական խնդիրներ» վերնագրված հոդվածը ճակատագրական եղավ: Հոդվածում Բ. Քեչյանը Թուրքական իշխանություններին բացահայտորեն մեղադրում էր հայերի բռնի իսլամացման հե-

---

[1] Տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 3818, 21 ապրիլի (4 մայիսի) 1909 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 3832, 8 (21) մայիսի 1909 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 3829, 4 (17) մայիսի 1909 թ. (ընդգծումները թերթինն են:- Հ. Ս.):

տեղական քաղաքականություն վարելու համար՝ դարերի ընթացքում: Պատիժը չուշացավ: Բ. Քեչյանի հարցաքննությունից ու ձևական դատավարությունից հետո խմբագրապետը մեկ օր բանտարկության և 10 ոսկի տուգանքի դատապարտվեց, իսկ թերթի հրատարակությունը դադարեցվեց 19 օրով[1]:

Հակառակ հայոց ազգային մարմինների համառ ջանքերի, կենտրոնական կառավարությունը հայերի բռնի խլամացումն արգելող կամ չեղյալ հռչակող որևէ հրահանգ չուղարկեց տեղեր: Բռնի խլամացված հայերը, սպառնալիքների ազդեցությամբ և իշխանությունների մեղսակցությամբ, համակերպվեցին իրենց սև ճակատագրին ու անհետ կորան հայության համար՝ համալրելով կոտորածի հայազգի զոհերի թիվը...

Եվ այսպես, Կիլիկիայի ողջ հայությունը գտնվում էր "between the devil and the deep sea"* վիճակում:

Կիլիկիահայոց կոտորածներից հետո հայաշխարհի բանաստեղծները ձոնեցին բազում եղերերգեր, ժողովրդական ողբասացները երկնեցին ասքեր, գուսանները հառաչում էին ու ազգի սև բախտը սգում: Կոտորածներին իրենց ստեղծագործություններով արձագանքեցին բանաստեղծներ **Սիամանթոն** (Ատոմ Յարճանյան)՝ կոտորածների տարում Կ. Պոլսում լույս տեսած «Կարմիր լուրեր բարեկամէս» ցասումնալից երկ-պատումով, **Արշակ Չոպանյանը**՝ Փարիզում 1909 թ. մայիսի 10ին գրած «Տեսիլ» բանաստեղծությամբ՝ լույս տեսած «Բիւզանդիոն» օրաթերթի 1909 թ. մայիսի 19-ի (հունիսի 1)-ի համարում (№ 3841), **Ռուբեն Սևակը** (Զիլինգիրյան)՝ Թեոդիկի «Ամէնուն տարեցոյցը»-ի 1910 թ. հատորում լույս ընծայած «Վերջին օրեր» բանաստեղծությամբ, **Լևոն Եսայանյանը**՝ «Դէպի Սիհուն» քերթվածով, **Էդուարդ Գոլանջյանը**՝ «Ատանայի նոր ամոլներուն» բանաստեղծական կտակով և այլն: Կոտորածից հետո մեծ տարածում ստացավ ու երգի վերածվեց **Սմբատ Բյուրատի** (Տեր-

---

[1] **Թէոդիկ**, Ամէնուն տարեցոյցը, Դ տարի, 1910, էջ 45:

* Սատանայի ու ծովանդունդի միջև (անգլերեն):

Ղազարյան) «Ատանայի երգը» բանաստեղծությունը*:

Ասպարեզ եկան նաև Թուրքերեն ողբեր, որոնց հեղինակ Թուրքախոս հայերը ոգեկոչում էին «Ադանա կըԹալը»-ն**: Դրանցից էր, օրինակ, Լևոն Էպեյանի «Ադանանըն ղեսԹանը»-ն, որը ևս ժողովուրդը երգի վերածեց:

Կիլիկիայի հայերի 1909 Թ. կոտորածը հայ ժողովուրդը Հայոց ցեղասպանությունից հետո ընկալեց ու շարունակում է ընկալել իբրև 1915 Թ. Մեծ եղեռնի նախափուլ ու այդպես էլ դա դրոշմված է մնում նրա հավաքական հիշողության մեջ: Նույնիսկ տասնամյակներ անց, ժողովրդական բանասացներն իրենց պատումներում ու երգերում շարունակում էին ոգեկոչել 1909 Թ. սպանդը: Հայոց ցեղասպանության տարբեր փուլերի արհավիրքների ականատեսներից ու նրանց ժառանգներից մեծարժեք վկայությունների գրառմանն ու դրանց գիտական ուսումնասիրությանը բազմաԹիվ տասնամյակներ նվիրաբերած ազգագրագետ-բանահավաք Վերժինե Սվազլյանը բերում է մի քանի վկայություններ կիլիկիահայոց 1909 Թ. կոտորածներից: Դրանք գրառվել են մեր օրերում, ինչը վկայում է, որ հայ ժողովուրդը Թարմ է պահում այդ սահմռկեցուցիչ իրադարձությունների հիշողությունը: Տաղասացներ Մարիամ Բաղդիչյանը, Գևորգ Հեքիմյանն ու Կարապետ Ախոյանը հայոց ցավը երգել են Թուրքերեն, իսկ Օվսաննա Լուսինյանը՝ արևմտահայերեն[1]:

Հայոց հավաքական հիշողության մեջ Կիլիկիայի 1909 Թ, կոտորածների պահպանման ևս մեկ արտահայտություն է երևանաբնակ երաժիշտ Արա Գևորգյանի նախաձեռնած «Ադանա» խտասալիկը: Ծագումով իսպանիոլ ամերիկացի Դանիել Դեկերի հեղինակած բառերով երգն առաջին անգամ հնչել է 2005 Թ.

---

* Նկատենք, որ Թուրքական իշխանությունները հիշյալ հեղինակներից նրանց, ովքեր 1915 Թ. գտնվում էին կայսրության տարածքում, ձերբակալեցին ու տանջամահ արեցին:

** Ադանայի կոտորածը (Թուրքերեն):

[1] **Վերժինե Սվազլյան**, Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, «Գիտություն», Երևան, 1994, էջ 172-173:

ապրիլի 24-ին Երևանում, չուրջ 10 երկրներից եկած օտար երգիչների կատարմամբ: Երգում նաև ասվում է.

Հայատյաց Թուրքը՝ արնոտ աչքերով,
Ջնջել էր ուզում հային ի սպառ:
Ցասկոտ, մոլեգին, թրերով զինված ...
Ճիչ ու աղաղակ լսվեց ամենուր,
Արնով ներկվեցին դաշտ ու սար:
Ընկան անարդար
Ծեր, մանուկ ու մայր[1]:

Այո՛, խորն ու անմոռաց է կսկիծը: Ազգի հիշողության մեջ դաջված են այն սոսկումները, որոնց ենթարկվեց հայ ժողովրդի կիլիկյան հատվածը 1909 թ. ապրիլին:*

Կիլիկիահայոց 1909 թ. արհավիրքից արվելիք հիմնական հետևությունն է՝ հավատալ ու ապավինել ազգի ոգուն և սեփական ուժերին: Այդ դեպքում միայն պարտությունների և աղետների հավանականությունը նվազում է, իսկ հաղթանակների և ապահովության հավանականությունը՝ մեծանում:

---

[1] *«Ադանա» խտասալիկի մասին տե՛ս* **«Ազդակ»** *բացառիկ (Պէյրութ), 1 հունվարի 2009 թ., էջ 134-136:*

* *Հայությունը 2009 թ. պատշաճ կերպով նշեց Կիլիկիայի ջարդերի 100-ամյակը: Հայաստանի Հանրապետությունում ու արտերկրում կայացան կոտորածներին ու բյուրավոր զոհերի հիշատակին նվիրված զանազան միջոցառումներ՝ գիտաժողովներ, հոգեհանգստյան արարողություններ, տեղադրվեցին խաչքարեր, գրվեցին ու լույս տեսան բանաստեղծություններ ու արձակ գործեր, հրատարակվեցին և վերահրատարակվեցին բազմաթիվ հոդվածներ, մենագրություններ ու գրքեր: Այս միջոցառումների մեծ մասի կազմակերպիչն եղավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, որը նաև հանդես եկավ միջազգային ատյաններում Կիլիկիայի 1909 թ. կոտորածների ժամանակ հայերի կրած վնասները Թուրքիայի կողմից հատուցելու նախաձեռնությամբ: Նշենք նաև, որ գիտաժողով գումարվեց նույնիսկ Թուրքիայում՝ Ստամբուլի «Սաբանջի» համալսարանում:*

Մարտի 31-ի հեղաշրջման փորձի ձախողումից հետո Իթթիհադը դա օգտագործեց առավելագույն հետևողականությամբ և իր համար մեծ արդյունավետությամբ:

Իթթիհադի աջ թևն ավելի ազդեցիկ դարձավ: Կուսակցության պարագլուխները մարտի 31-ի չարժման գլխավոր պատճառը համարեցին ոչ թե իշխանությանը վերադառնալու արդուլհամիդականների բուռն ձգտումը, այլ սահմանադրությամբ «ամբոխին չնորհած սանձարձակ ազատությունները», մամուլի, խոսքի, հավաքույթների, ընկերակցությունների գործունեության անվերահսկելիությունը:

Իթթիհադը և բանակը հատկապես լայն գործունեություն ծավալեցին օրենսդրական դաշտը «մաքրելու» համար: Այդ գործողության գլուխ կանգնեց Մեհմեդ Թալեաթ բեյը, որը 1909 թ. հունիսի կեսերին մտել էր կառավարության կազմի մեջ և ստանձնել վարչապետ Հուսեյն Հիլմի փաշայի պաշտոնից հետո ամենակարևոր՝ ներքին գործերի նախարարի պաշտոնը:

Ի դեպ, Դաշնակցությունը Թալեաթի այդ առաջխաղացումը գոհունակությամբ ընդունեց:

Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) պահպանվում է ՀՅԴ Կ. Պոլսի Պատասխանատու մարմնի (կենտրոնական կոմիտեի) 1909 թ. հուլիս 28 թվակիր պաշտոնական նամակ-հանձնարարականը՝ ուղղված կուսակցության Բուլանըխի կազմակերպության ղեկավար Մարզպետին (Ղազարոս Ղազարոսյան) և մյուս ընկերներին: Նամակում առաջադրված մի շարք խնդիրների հետ նաև հետևյալ տեսակետն էր հայտնված. «Թալէաթ բէյի ներքին գործոց նախարար ընտրուելը մեզ շատ յոյսեր է տալիս երկրի բարեկարգման տեսակէտից. նա մեր մօտիկ բարեկամներից էր մինչեւ օրս»[1]:

Ինչ խոսք, երիտթուրքերի պարագլուխներից մեկի՝ դեպի Դաշնակցությունն ունեցած կարծեցյալ բարեկամական վերաբերմունքին հայկական կուսակցության գործիչներն անձամբ

[1] ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 254, թ. 2 և շրջերես:

նրան և Իթթիհադի մյուս ղեկավարներին չէին ուշացնում հայտնել իրենց «անկեղծ» երախտագիտությունն ու պատրաստակամությունը: Այդ ցուցադրում-հավաստիացումները, հավատարմության զգացմունքների այդ խորալը նույնիսկ կեղծ ազատության օրերին խորթ էր մնում իրավ հայ մարդու համար, որը հատկապես Ադանայի կոտորածներից հետո, ընդվզում էր և կտրականապես մերժում Իթթիհադի հետ որևէ հույս կապելը: Դրան ի պատասխան Դաշնակցության ղեկավարներից ոմանք այս փաստարկն էին բերում. «Կարելի է հեծնել ամեն ալիք, որն ի վիճակի կլինի, ի վերջո, մեզ հասցնել բաղձալի ափը»:

Մինչ ՀՅԴ կուսակցության կարևորագույն կազմակերպություններից մեկը՝ Կ. Պոլսի Պատասխանատու մարմինը չէր կարողանում բարեկամը զատել թշնամուց, վերջինս մեկը մյուսի հետևից կոպիտ, դրակոնյան հրահանգներ էր իջեցնում: Իթթիհադի կոմիտեն, բանակի հրամանատարությունը և ներքին գործերի նախարարությունը համատեղ «խոհեմության» և զգուշավորության հորդորներ էին ուղղում խորհրդարանին: Նրանք ստիպեցին անդամահատել քննության ենթակա օրինագծերը՝ դրանց չարադրանքներից հանել տալով ազատություններին վերաբերող հատվածները: Դա պատճառաբանվում էր հետևյալ կերպ. «Մեր ժողովուրդը դեռ հասունացած չէ պատշաճորեն վայելելու չնորհված ազատությունները: Պետք է առաջ գնալ աստիճանաբար, ուստի պետք չէ դիպչել նրա կրոնական հավատալիքներին ու սովորություններին»:

Հենց այս դաստիարակիչ պարտադրանքով, խորհրդարանը, առանց քննելու մամուլի, գումարումների եւ ժողովների ազատությունը կաչկանդող՝ Իթթիհադի խմբագրած օրինագծերը, արագորեն վավերացնում էր դրանք: Այլևս որևէ պատգամավորի, հատկապես ոչ-մուսուլմանի և առանձնապես հայ պատգամավորի համար, չատ վտանգավոր էր սեփական կարծիք ունենալը: Իսկ հավաքական կամք դրսևորելու հնարավորության մասին խոսք անգամ չէր կարող լինել:

Ահա՛ այս պայմաններում էր, որ Իթթիհադի կոմիտեի որոշմամբ երկրում լայնորեն նշվեց օսմանյան հեղափոխության հաղթանակի առաջին տարեդարձը, որը լրացավ 1909 թ. հուլիսի

10-ին: Կառավարությունը կազմակերպեց մեծ հանդիսություններ հատկապես մայրաքաղաքում. լուսավորվեցին ու դրոշակազարդ-վեցին Բոսֆորի ափերը, մայրաքաղաքի կենտրոնը, մզկիթները, դպրոցները, բոլոր պաշտոնատները, իթթիհադական ակումբնե-րը: Հրթիռներն ու լուսարձակները դյութիչ տեսարաններ էին ստեղծել: Ժողովուրդը հոծ բազմությամբ լցվել էր փողոցները: Չնայած այդ ամեն չքեղությանը, մայրաքաղաքի բնակչությունը ուրախություն չէր ապրում ինչպես մեկ տարի առաջ, երբ հրա-պարակներն ու փողոցները ողողված էին ուրախությունից խե-լակորույս տասնյակ հազարավոր մարդկանցով: Հիմա էլ բազ-մամարդ էին փողոցներն ու հրապարակները, բայց մարդիկ միայն դիտողի դերում էին՝ մռայլ ու անտարբեր:

1909 թ. հուլիսի 10-ին այդ տեսակետից բացառություն էր Ելդրզի պալատում տեղի ունեցածը: «Իթթիհադ վե թերաքքի» կոմիտեն տոնի առթիվ այնտեղ ճոխ խնջույք էր սարքել: Նա իրավունք ուներ և պարտավոր էր դա անել, քանզի հեղափո-խության չնորհիվ էր անցել իշխանության գլուխ, ձեռք բերել բացարձակ իրավունքներ, դարձել երկրի տերն ու տիրականը՝ իր կամքի թելադրությամբ խաղալով երկրի ճակատագրի հետ:

Նախապես խնջույքին մասնակցելու հրավեր էին ստացել նաև հայ, հույն, արաբ եւ հրեա ազգությունների ներկայացու-ցիչները: Կ. Պոլսի հունաց պատրիարքարանը, սակայն, վճռա-կանապես մերժել էր հրավերը, պատճառաբանելով, թե Իթթի-հադի կառավարությունը վստահություն չի տածում հույն հա-մայնքի նկատմամբ, որի պատճառով նա ենթարկված է չեչտ-ված խտրականության:

Հայոց պատրիարքարանը նույնպես մերժել էր հրավերը, նկատի ունենալով, որ Ադանայում հայերի կոտորածը տեղի է ունեցել 1908 թ. հուլիսյան հեղափոխությունից հետո և որ նոր իշխանությունները կատարվածի համար հայերին անգամ ցա-վակցություն չեն հայտնել: Նույն կոտորածի հանդեպ դեռ անո-րոշ էր մնում խնջույքի կազմակերպիչների դիրքը:

Հրավերները մերժել էին նաև հին Հնչակի և Վերակազմյալ Հնչակի ներկայացուցիչներն ու «Բիւզանդիոն» օրաթերթի խմբագրությունը:

Խնջույքին ներկա էին Իթթիհադի բոլոր առաջին դեմքերը, նախարարներ, սենատի անդամներ, պատգամավորներ, մուսուլման բարձրաստիճան հոգևոր դեմքեր, զորահրամանատարներ, բանկային ու առևտրական մեծ հաստատությունների ներկայացուցիչներ: Այնտեղ ներկայացված էր նաև ՀՅ Դաշնակցությունը:

«Կոհակ» թերթը գրում էր, որ տիրող խավերի նշված ներկայացուցիչները իրավունք ու պարտականություն ունեն տոնելու հուլիսի 10-ի տարեդարձը, ինչպես որ նախկիններում հաճույքով տոնում էին Աբդուլ Համիդ II-ի գահակալության տարեդարձը: Եվ դա օրինաչափ է, «մանաւանդ որ անոնց համար ոչ մի բան ալ դեռ գէչ ընթացք չէ ստացեր եւ բոլորն ալ իրենց նախկին դիրքերուն վրայ են: Անոնք դեռ վաղը անօթի մնալու սարսափ չունէին, ո՛չ ալ չնորհազուրկ լինելու ահը: Ինչպէս կը տիրապետէին անցեալին մէջ հին ռեժիմի օրով, կը տիրապետեն անոնք ե՛ւ այսօր, պիտի տիրապետեն նաեւ վաղը»[1]:

Բայց ի՞նչ գործ ունեն այնտեղ՝ Ելդրզի խնջույքում, Գրիգոր Զոհրապը, Հարություն Շահրիկյանն ու Ռուբեն Զարդարյանը, ինչո՞ւ են նրանք սեղան նստել ժողովրդի արյունը ծծող տզրուկների, Իթթիհադի պարագլուխների հետ: Զէ՞ որ դեռ չի չորացել Կիլիկիայում խոշտանգված և սպանված տասնյակ հազարավոր անմեղ հայերի արյունը:

Կարծես իբրև դրա պատասխան «Հովիւը» մինչ այդ գրել էր. «Ինչպէ՞ս բացատրենք մեր սոցիալիստական կուսակցութեան վարմունքը, որ նա ամուր կապւել է երիտթուրքերի զուտ ազգային կուսակցութեան»: Այդ «անբնական վարմունքը» թերթը բացատրում էր նրանով, որ Դաշնակցությունը «ղեկավարւում է զուտ կուսակցական անհատական շահերով, այն է՝ քանի որ նա կորցրել է իր հմայքը տաճկահայութեան շրջանում», ուստի «Իթթիհադի ուժի զօրութեամբ ջանք է անում բռնութեամբ պահպանել իր ազդեցութիւնը»[2]: Այդ նույն օրերին Իթթիհադը և Դաշնակցությունը համատեղ ստեղծեցին ահաբեկչական մի խումբ՝ «սահմանադրական» իշխանություններին թշնամի անձանց ոչնչացնելու համար:

---

[1] **«Կոհակ»**, № 8, 18 հուլիսի 1909 թ.:

[2] **«Հովիւ»** (Թիֆլիս), № 6, 22 փետրվարի 1909 թ., էջ 82-83:

Կիլիկիայում հայերի զանգվածային կոտորածներից հետո երիտթուրքական կառավարությունը նպատակահարմար էր գտել ցույց տալու Եվրոպային, որ այդ կոտորածները ընդամենը «պատահական միջադեպ» էր և կայսրության մեջ հայերը հետայսու վայելելու են օսմանյան սահմանադրության ընձեռած բոլոր իրավունքներն ու հնարավորությունները: Այդ էր պատճառը, որ 1909 թ. երկրորդ կեսի 3-4 ամիսներին հայությունը Թուրքիայում քիչ թե չատ տանելի վիճակում էր:

1909 թ. զանգվածային ջարդերից հետո հայերը հատկապես մեծ նվիրումով էին փարվել իրենց ազգային մշակույթին: Անասելի դժվարություններ հաղթահարելով՝ նրանք վառ էին պահում լուսավորության ջահը: Օգտաչատ գործերով ծանրաբեռ հարյուրավոր ու հազարավոր նվիրյալ մտավորականներ՝ գրողներ, ուսուցիչներ, հոգևորականներ, բժիշկներ, փաստաբաններ, ազգային արժեքների նախանձախնդիր ավանդապահներ էին, որոնք ոչ միայն խանդաղատանքով պահում-պահպանում էին հայ ժողովրդի հոգևոր ժառանգությունը, այլև դա փոխանցում նոր սերնդին: Մասնավորապես նրանց ջանքերով էր կանգուն մնում հայոց՝ հարևանների նախանձը չարժող ազգային կրթական համակարգը: Բավական է ասել, որ եթե կայսրության ողջ տարածքի վրա պետական դպրոցների երկսեռ աշակերտների թիվը չէր անցնում 242 հազարից[1], ապա հանգանակություններով ու նվիրատվություններով պահպանվող և հիմնականում Հայ առաքելական եկեղեցու թեմերին պատկանող հայկական ավելի քան 1000 դպրոցներում[2] կրթություն էր ստանում 120 հազար աշակերտ[3]: Այդ թվի մեջ էին մտնում Կ. Պոլսում և գավառներում գործող ամերիկյան և ֆրանսիական դպրոցներում, ինչպես նաև օտար որբանոցներում ընդգրկված հայ աշակերտ-

---

[1] Տե՛ս **«Տրապիզոնի թեմի վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը»,** հատ. Ա, Պէյրութ, 1960, էջ 647:

[2] Տե՛ս **Հայկազն Գ. Ղազարեան,** Յեղասպան Թուրքը, էջ 223:

[3] Տե՛ս **«Տրապիզոնի թեմի վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը»,** հատ. Ա, էջ 667:

ները[1]: Մի այլ աղբյուրի համաձայն, ամբողջ Թուրքիայում կար տարբեր հարանվանությունների պատկանող ավելի քան 2000 հայկական դպրոց[2]: Դպրոցական ցանցի ընդլայնման ուղղությամբ մեծ ջանքեր էին թափում «Հայոց միացյալ ընկերությունը» և կրթական այլ մարմիններ:

Հայոց դպրոցական գործը հատկապես ամուր հիմքերի վրա էր դրված մայրաքաղաք Կ. Պոլսում:

1910 թ. հունիսի 1-ի դրությամբ Կ. Պոլսի 44 հայոց ազգային վարժարաններում ուսում էր ստանում 3.437 տղա և 3.079 աղջիկ: Ուսուցիչների թիվը 166 հոգի էր, ուսուցչուհիները՝ 153 (ընդամենը 319): Այս վարժարանները հիմնականում տարրական և միջին դասընթացներով նախակրթարաններ էին[3]:

Կրթական-մշակութային լուրջ ծրագրեր էին իրականացվում նաև հայկական նահանգներում: Գործընթացը լուսաբանենք թեկուզ մեկ տարածաշրջանում՝ Տարոն-Սասունում սկսված մշակութային-կրթական վերածննդի օրինակով:

1903 թ. սկսած արյունոտ կռիվների ասպարեզ եղած Տարոն-Սասունի շրջանը, որի հայ բնակչությունը չորս-հինգ տարի ենթակա էր անլուր զուլումների ու հալածանքների, հիմա կարծես ուշքի էր գալիս: Նա սթափվում էր, հավաքում իրեն ու ձեռք զարկում չինարար աշխատանքի:

Կյանքը շարունակվելու համար տարոնցին ու սասունցին ամենից առաջ նախանձելի տոկունությամբ վերականգնում էին իրենց քանդված օջախները. գործի դրվեցին գութանն ու փոցխը, գերանդին ու մանգաղը: Իսկ մեծագույն գործը, որ կատարվում էր Տարոնում ու Սասունում՝ դպրոցական-կրթական շարժումն էր, հատկապես գյուղական դպրոցների վերահաստատումը, որ հույսերի ու գուրգուրանքի առարկա էր դարձել:

Գյուղերում նոր տարրական դպրոցներ բացելու նպատակով 1909 թ. ամռանը ամբողջ Տարոն-Սասունի շրջանի ներկայացուցիչները հավաքվեցին ընդհանուր խորհրդակցության, և փոխա-

---

[1] Տե՛ս **Հայկազն Գ. Ղազարեան,** Յեղասպան Թուրքը, էջ 223:

[2] Տե՛ս **«Հայաստանի կոչնակ»** (Նիւ Եորք), № 31, 20 ապրիլի 1931 թ., էջ 810:

[3] Տե՛ս **«Արարատ»** (ս. Էջմիածին), № 11, նոյեմբեր, 1910, էջ 1050:

դարձ համաձայնությամբ որոշեցին յուրաքանչյուր հայկական գյուղի համայնքից համապատասխան միջոցներ գանձել ու կրթական ընդհանուր բյուջե պատրաստել: Կարճ ժամկետում հավաքվեց ոչ մեծ գումար, որը և հնարավորություն տվեց ձեռնարկել գյուղական նախակրթարանների ստեղծմանը՝ միևնույն ծրագրով և միևնույն ուղղվածությամբ:

Կրթական այս շարժման ամենամեծ խոչընդոտը պիտանի ուսուցիչների շատ մեծ պակասն էր: Զկային կարող ուժեր, որոնք ի վիճակի լինեին բավարար գիտելիքներ ու դաստիարակություն տալու երեխաներին: Մյուս կողմից, բյուջեի անբավարար լինելու պատճառով, անհնար էր անհրաժեշտ թվով հմուտ մանկավարժներ հրավիրել մոտակա նահանգներից՝ չխոսելով արդեն արտասահմանի մասին: Այնուամենայնիվ, հաջողվեց քիչ թե շատ պատրաստված ուսուցիչներ հրավիրել Խարբերդից, Վանից, Կարինից և ուրիշ վայրերից:

Մշո դաշտն ուներ 90-100 զուտ հայաբնակ կամ կես քրդաբնակ գյուղեր, որոնց մեծ մասում որոշվել էր բացել ծխական տարրական դպրոցներ: Արդեն 1909-1910 ուսումնական տարում դրանցում գործում էր 50-60 դպրոց՝ մեկ կամ երկու ուսուցիչներով: Գրենական պիտույքներն ու դասագրքերը, ինչպես և ուսուցիչների ռոճիկն ամբողջապես տալիս էր առաջնորդարանը՝ կրթական ընդհանուր բյուջեից: Զքավոր գյուղերն օգտվում էին կարող գյուղերի հավելավճարներից և հնարավորություն էին ունենում իրենց համար պահելու առանձին ուսուցիչ ու դպրոց[1]:

Այսպես, ուրեմն, սկսված կրթական շարժումը մխիթարական ու ոգևորիչ էր: Ամեն գյուղական համայնք չտապում էր օր առաջ բացված տեսնել իր վարժարանը: Ծնողներն ու երեխաները գալիս լցվում էին առաջնորդարան, ժամերով չէին հեռանում, մինչև որ չէին ստանում խոստումներ, որ ժամանակին լուծվելու են ուսուցիչ ունենալու, գիրք ու գրիչ ստանալու հարցերը: Հուզիչ էին այդքան եռանդն ու հետաքրքրությունը կրթության նկատմամբ, բարոյական վերածննդի բուռն ձգտումը:

Տարոն-Սասունի կրթական գործն ավելի աշխուժացավ, երբ

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 19, 27 Հունվարի 1910 թ.:

1909 թ. աշնանը այնտեղ եկավ Դաշնակցության նշանավոր ղեկավարներից Սիմոն Զավարյանը: Նա հաստատվեց Մուշում և վարում էր Տարոնի ազգային դպրոցների ընդհանուր տեսչի պաշտոնը[1]: Այդ նույն ժամանակ Մուշում հաստատվեց նաև Դաշնակցության մի ուրիշ գործիչ՝ բժ. Հովհաննես Զավրիևը (Զավրյան):

«Արօր» (Թիֆլիս) թերթը գրում էր, որ ոչ-դաշնակցական գործիչները երկյուղ ունեին, թե Սիմոն Զավարյանը, իբրև Դաշնակցության ղեկավար գործիչ, կաշխատի Տարոն-Սասունի ազգային դպրոցներում մտցնել կուսակցական ոգի, իսկ դա ուրացումն է ազգային ոգու, որի համար ազգային եկեղեցին, գրականությունը, պատմությունը, լեզուն երկրորդական տեղ են բռնում, մինչ առաջնակարգ տեղ են գրավում դասակարգային պայքարը և այնպիսի խնդիրներ, որոնց արծարծումը Հայաստանում, երբ ժողովուրդն ամբողջովին պետք ունի կազդուրվելու թե՛ տնտեսապես և թե՛ բարոյապես, կարող են աղետալի հետևանքներ ունենալ, այն է՝ ժողովրդի խավերը բաժանել իրարից, նրանց միջև սերմանել անհամաձայնություն և թշնամություն, ջլատել առանց այն էլ փխրուն ազգային կյանքը: «Ուստի եւ մենք մի առանձին ուշադրութեամբ հետեւում էինք Ս. Զաւարեանի գործունէութեան,- շարունակում էր «Արօրը»:- Եւ ուրախ ենք արձանագրելու, որ ըստ երեւոյթին, մեր երկիւղը չէ հաստատւում: Զաւարեան մեծ ջանքեր է գործ դնում դպրոցներ բանալու Տարօնի մէջ եւ նրա հրատարակած տեղեկագրերը, կարգադրութիւնները ցոյց են տալիս, որ նա գործում է ոչ իբրեւ կուսակցական, այլ իբրեւ մի ինտելիգենտ ազգասէր անհատ, որ նպատակ ունի տարածել ուսումը եւ կրթութիւնը Տարօնի պէս մի հայկական կենտրօնում: Այդ տեսակէտից նրա ջանքերը ար-*

---

[1] Տե՛ս **«Սիմոն Զաւարեան»,** հատ. Ա, Պէյրութ, 1983, էջ 72-73:

* Պետք է չեշտել, որ դպրոցական խնդիրներում Դաշնակցությունը լայնախոհ էր, խուսափում էր կուսակցական սկզբունքները ուսումնական գործընթացներում ներդնելուց: «Ազատամարտն» իրավացիորեն գրում էր. «Լաւագոյն դպրոցը չէզոք, անկուսակցական, քաղաքականութեան հետ առնչութիւն չունեցող, հոսանքներէ ազատ դպրոցն է: Քաղաքական և այլ գաղափարներ տարածելու համար կան ուրիշ շատ յարմար ասպարէզներ» (**«Ազատամարտ»** (Կ. Պոլիս), № 14, 11 (24) հոկտեմբերի 1910 թ.):

ժանի են խրախուսանքի, եւ անհրաժեշտ է, որ հայ հասարակութիւնը եւս չզլանայ իր աջակցութիւնը Տարօնի վարչութեան»[1]:

Մղված պարտքի զգացումից, բոցավառված հայրենասիրական ամենաջինջ հավատամքով՝ Ս. Զավարյանը և բժ. Հ. Զավրիևը հոժարակամ նետված լինելով Տարոն-Սասուն, մասնակցում էին դպրոցական բոլոր նախաձեռնություններին ու ձեռնարկումներին, ուղղություն տալիս բոլոր աշխատանքներին: Նրանք ապրում էին մեծ զրկանքներով, առանց հարմար բնակարանի և բավարար սննդի: «Մէկը ուսուցիչ ու քարոզիչ, միւսը՝ բժիշկ, անհուն սիրող ու կարեկցող սրտի տէր, երկուքն նուիրուածներ ..., երկուքն ալ անձնազոհ սպասաւոր տգիտութեան ու թշուառութեան մէջ կորած հարազատ ժողովրդի»[2]:

Զավարյանն ու Զավրյանը Մուշում մնացին մինչև 1911 թվականը:

ՀՅ դաշնակցությունն ու Հնչակն իրենց մտավորական ուժերին մանկավարժական աշխատանքի էին ուղարկում Թուրքահայաստանի այլ վայրեր նույնպես, ինչպես և Թուրքիայի ուրիշ հայաշատ շրջաններ: Այսպես, ՀՅԴ Կ. Պոլսի կենտրոնական կոմիտեի որոշմամբ Արամ Մանուկյանը (Սարգիս Հովհաննիսյան) և Սարգիս Բարսեղյանը (Վանա Սարգիս, Պողոս Օդաբաչյան) մեկնեցին Սև ծովի ափերը՝ իբրև հայ դպրոցների տնօրեններ Սամսունում, Օրդուում, Սինոպում: Այդ վայրերում նրանց հետ կրթական աշխատանքի էին լծված նաև Վահան Մինախորյանը, Բարունակ Կապուտիկյանը և ուրիշներ: Նրանցից ոմանք (Արամ, Սարգիս) դպրոցներում աշխատեցին 1910-1912 թթ., իսկ չատերը՝ մինչև համաշխարհային պատերազմի սկիզբը:

Թուրքահայաստանի կրթական-մշակութային ձեռնարկներին մեծ օգնություն էր գալիս դրսից: Կ. Պոլսից ու Թիֆլիսից հետզհետե հասնում էին դասագրքեր ու ձեռնարկներ, մանուկների ու պատանիների համար տպագրված պատկերազարդ ընթերցարաններ, քարտեզներ և այլն:

---

[1] **«Արօր»** (Թիֆլիս), № 8, 9, 10, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, 1910, էջ 194-195:

[2] Տե՛ս **«Սիմոն Զաւարեան»**, հատ. Ա, էջ 72-73:

Լուրջ ուշադրություն էր դարձվում կրթական գործի կազմակերպական կողմին: Ամիսը մեկ կամ երկու անգամ հրավիրվում էին ուսուցչական շրջանային ժողովներ, ուր քննարկվում էին մանկավարժական, ներքին կարգապահական, ինչպես նաև գյուղական համայնքների ներքին կյանքին վերաբերող ընթացիկ հասարակական հարցեր: Թե՛ առանձին դպրոցներում և թե՛ շրջանային հավաքույթների ժամանակ տեսուչները կազմակերպում էին օրինակելի-փորձնական դասեր, կատարվում էր կարծիքների փոխանակում: Հարմար եղանակներին կազմակերպվում էին աշակերտական զբոսանքներ, շրջագայություններ մոտակա գյուղեր, որոնց նպատակն էր փոքր տարիքից սկսած՝ ընկերական կապ ու մտերմություն ստեղծել տարբեր բնակավայրերի երեխաների միջև:

Բացի կրթական գործից, մանկավարժները գյուղերում կազմակերպում էին մշակութային տարբեր ձեռնարկներ: Գյուղացիների համար թատերական ներկայացումներ էին տրվում աշակերտների ուժերով, խաղացվում էին հատկապես հանրամատչելի պիեսներ, ողևիլներ, սկետչներ (մեկ գործողությամբ կատակերգություններ): Ձեռք բերված մոգական լապտերներն ու գրամոֆոնները տեղափոխում էին գյուղից գյուղ, գործի դրվում և գյուղացիներին տեղեկացնում այդ պարզագույն տեխնիկական նորությունների մասին:

Այսպիսով, զարթնումի հուսատու ծիլեր էին բողբոջում ամենուր: Եվ դա այն ժամանակ, երբ դեռ հազարավոր որբեր ու այրիներ տնետուն, գյուղեգյուղ ընկած՝ բոբիկ ու մերկ, հաց էին մուրում ամեն օր:

Նշենք, որ գավառներում այդ կրթական-մշակութային շարժման բոլոր ծախսերը հոգում էր հայությունը: Բայց պետք չէ կարծել, թե այդ շարժման արդյունքները գոհացուցիչ էին:

Նոր դպրոցներ բացելու համար չինություններ չկային, ուստի շատ հաճախ «դպրոցներ» էին բացվում գոմերի օդանոցներում, մարագներում, լքված կիսաքանդ տներում: Ձկային դասագրքեր, գրիչ ու թուղթ, օժանդակ այլ պիտույքներ[1]:

---

[1] Տե՛ս **«Արարատ»**, № 11, նոյեմբեր, 1910, էջ 1052-1053:

Թուրքահայ ժողովրդի կրթական գործը և ընդհանրապես մտավոր աշխարհն ընդհանուր առմամբ գտնվում էր անմխիթար վիճակում: Թեև Հայոց ազգային սահմանադրությունը արձանագրել էր, որ «ազգին պարտականութիւնն է՝ ազգայնոց բարոյական, մտաւորական եւ նիւթական պիտոյիցը հոգ տանիլ», «հարկաւոր եղած անհրաժեշտ գիտելեաց ուսումը՝ ամէն աստիճանի թէ՛ մանչ եւ թէ՛ աղջիկ տղայոց հաւասարապէս ծառայել», բայց իրականում, մանավանդ գավառում, վիճակը վհատեցուցիչ էր:

«Արօրը» սրտի անհուն դառնությամբ գրում էր. «... Բազմաթիւ գաւառներու եւ գիւղերու մէջ հազարաւոր հայեր, զրկուած դպրոցէ, կը տուայտին տգիտութեան ու խաւարի մէջ: Հողն ու հօտն, արտն ու դաշտը կը մնան դեռ նախնական վիճակի մէջ, եւ հայ գիւղացին գիւղատնտեսական ամենատարրական գիտելեաց անգամ անտեղեակ ըլլալով կը զրկուի մայր բնութեան հարստութեան վայելումէն»[1]: 1910 թ. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներում ճանապարհորդած Ա-Դօ-ն գրում էր, որ մեծ քաղաքներում, ինչպես օրինակ, Վանում և Էրզրումում կան օրինավոր դպրոցներ և թեպետ շատ ու քիչ տանելի դպրոցներ կան Մուշում և մի երկու խոշոր վանքերում, բայց գյուղերում գոյություն ունեցող սահմանափակ թվով դպրոցները մեծ մասամբ՝ մի-մի տերթոդիկյան դպրոցներ են, ուր մանուկ սերունդն ավելի ստրկության է մարզվում, քան կրթություն ստանում: Այլ խոսքով՝ օրինավոր դպրոցներ չկային հրապարակի վրա: Սանասարյան դպրոցի ընթացավարտները, շատ պիտանի կլինեին մատաղ սերնդի համար, բայց նրանք չէին երևում Վանի և Մուշի գավառներում. ուսուցիչների մեծ մասը տգետ էր, թերուս, վանական դպրոցավարտներ ու ինքնուս գրագետներ, միսիոներական դպրոցներում սովորածներ և հաճախ Նարեկի ու Ճաշոցների չկօլայով անցածներ.- ահա՛ այն չփոթը, որ կազմում էր այդ երկրի ուսուցչական դասը: Գյուղական ուսուցիչներն ստանում էին ցորեն, գարի՝ իբրև վարձ և կամ 3-4 արծաթ մեջիդ

---

[1] **«Արօր»**, № 8, 9, 10, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, 1910, էջ 196:

ամսական: Գյուղական դպրոցներից շատերը բոլորովին զուրկ էին նստարաններից, աշակերտները նստում էին հատակի վրա կամ լավագույն դեպքում մի մասը միայն տեղավորվում էր երկարուկ դրված տախտակների վրա, իսկ ուսուցիչը բազմում էր մի թախտի վրա[1]:

Թուրքահայաստանի գավառներում քիչ թե շատ տանելի դպրոցները գտնվում էին լեռների ու ձորերի մեջ մեկուսացված և ժողովրդից կտրված վանքերում, որոնք փոքր ի շատե ունեին ինքնուրույնության մնացորդներ: Ա-Դո-ն շարունակում էր. «Առանց այն էլ տանջված տաճկահայ մանուկ սերունդն այդ վանքերում ենթարկւում է նոր փորձութիւնների, կրօնական եւ պահոց նոր մարզանքների: Պէտք է երեւակայել, թէ որպիսի հրամայողական տօնով եւ որպիսի կարգադրութիւններով յայտնւում է դասարան մի փտած, տգէտ վանահայր եւ թելադրում իր մանկավարժական մեթոդները ուսուցչին»[2]: Բայց տաճկահայն իրեն երջանիկ էր համարում, եթե կարողանար իր որդուն տեղավորել այդ կրոնական հաստատութիւններում. վանական դպրոցների թիվը շատ սահմանափակ էր, սահմանափակ էր նաև ընդունվող աշակերտների թիվը, ուստի, այդ պատճառով շատ քչերին էր հաջողվում ընդունվել այդ դպրոցներում: «Մի քանի շատ ու քիչ օրինավոր դպրոցների կողքին մի քանի տասնեակ խալիֆայական եւ կամ կրօնական մարզարաններ. ահա՛ այն «փարոսը», որտեղից լոյս է տարածւում տաճկահայի խաւար մթնոլորտում»[3],- ցավով արձանագրում էր Ա-Դո-ն:

Ելնելով կրթության թափ առնող պահանջից, հայոց ազգային մարմինները մշակում էին ուսումնական ազգային ծրագրեր, որոնք ներառում էին դպրոցաշինական, մանկավարժական, մեթոդաբանական և այլ բազմաբնույթ խնդիրներ: Քանի որ ազգային դպրոցները ֆինանսական և այլ կարգի որևէ աջակցություն չէին ստանում պետությունից, այսինքն՝ կրթությունը գործնականում հանձնված էր տեղական ժողովրդին, հետևա-

---

[1] **Ա-Դո,** Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները, Երեւան, 1912, էջ 347:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

բար ենթադրվում էր, որ դպրոցական բնագավառում այլազգիների իրավունքները պետք է ընդլայնվեին, այսինքն՝ որքան հնարավոր է դպրոցներն ապակենտրոնացվեին ու ապաքաղաքականացվեին[1]:

Բայց այդ դեպքում էլ չէր լուծվի հիմնական խնդիրը՝ ազգային դպրոցների ֆինանսավորումը: Ուստի առաջ էր քաշվում ազգային դպրոցները պետական դպրոցներ ճանաչելու հարցը: Իսկ եթե այդ հարցը սկզբունքորեն չլուծվեր, առաջարկվում էր կրթական գործն ամբողջովին հանձնել ազգային ինքնավարություններին, որոնք կունենային իրենց տեղական և կենտրոնական մարմինները: Վերջիններս կունենային ընդհանուր հսկող դեր. կհետևեին, որ կրթական ծրագրերը գործադրվեն, կհոգային ուսուցիչների և դպրոցական գործիչների պատրաստումը, կկազմեին ազգային դպրոցների վիճակագրությունը, կապ կպահեին պետական կրթական վարչության հետ և այլն: Այդ դեպքում դպրոցների իրական տեր ու տնօրենը կլինեին տեղական ազգային մարմինները՝ գավառային ժողովները:

Կառավարությունն այդ ամենի մասին լսել անգամ չէր ուզում, քանի որ երիտթուրքերը հայերի նկատմամբ ունեին միանգամայն ուրիշ ծրագրեր, որոնք չուտով իրենց մարմնավորումը պիտի գտնեին թուրքիզմի գաղափարախոսության մեջ, որի հիմնական բաղադրիչը լինելու էր ոչ միայն հայերի, այլև կայսրության բոլոր այլազգիների ձուլումը թուրքերի մեջ, հետևապես նրանց կրթական ողջ կառույցի վերացումը:

Իշխանությունները ոչ միայն որևէ օգնություն չէին ցուցաբերում հայոց կրթական գործին, այլև ամեն ինչ անում էին խանգարելու դրան:

Օսմանյան կառավարությունը ձգտում էր ըստ ամենայնի իր հսկողության ենթարկել քրիստոնյա ազգությունների բոլոր դպրոցները: Այդ նպատակով ընդունվել էին որոշում-հրահանգներ, որոնցով հայկական, հունական, բուլղարական ազգային

---

[1] **Հրաչեայ Աճառեան**, Տաճկահայ հարցի պատմութիւնը (սկզբից մինչև 1915 թ.), էջ 67:

վարժարանները ենթարկված էին կառավարության ուղղակի և խիստ վերահսկողության, ամեն մի նոր դպրոց կարող էր բացվել միայն ժողովրդական լուսավորության նախարարության թույլտվությամբ, ազգային դպրոցների ծրագրերը քննության էին ուղարկվում կառավարություն, որի՝ զանազան ազգերի դպրոցներին տրվող կրթական նպաստը հանձնվում էր ոչ թե պատրիարքարաններին կամ առաջնորդարաններին, այլ ուղղակի ուսուցիչներին, ազգային դպրոցների օսմաներեն լեզվի ուսուցիչներն ուղղակի նշանակվում էին կառավարության կողմից, տարեկան քննությունները կատարվում էին կառավարական մարմինների հսկողության ներքո, աշակերտներն ազատ չէին համարվում զինվորագրությունից և այլն[1]*:*

Այդ ամենը, սակայն, թեւաթափ չէին անում Հայ եկեղեցուն և հասարակական ու բարեգործական կառույցներին, որոնց թվում առանձնանում էին երկուսը՝ Կ. Պոլսի Հայոց միացյալ ընկերությունը և Եգիպտոսի Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Սրանք իրենց առջև խնդիր էին դրել՝ Հայաստանում տարածել ուսումը, հատկապես գյուղատնտեսական գործնական գիտելիքներ հաղորդել գյուղացիներին, որպեսզի նրանք իմանան, թե հայրենի հողն ինչպես պետք է կյանքի բարելավմանը ծառայեցնել:

1910 թ. ամռանը Հայոց միացյալ ընկերությունը «Կոչ հայութեան» հայտագրի մեջ աղաղակում էր, որ երեսնամյա տառապանքի, ցավի ու արյունի, ավեր-քանդումներից փրկված հայությունը գերմարդկային ճիգ է անում վերաշինելու իր քանդված օջախը: Նոր հույսով, նոր հավատքով նա ձգտում է քայքայումի բեկորները և ավերակների մնացորդները ի մի բերել ու բարձրացնել ազգային նոր տունը: «Գաւառին հայը հաց չէ որ կը խնդրէ թախանձագին, այլ՝ ուսում, կրթութիւն, դպրոց, զի ան քաջ գիտէ, թէ դպրոցն է իր միակ ապաւէնը եւ դպրոցով միայն պիտի կրնայ փրկուիլ տառապանքէն, կանոնաւորել իր կեանքը, արդիւնաւորել իր գիւղական ժողովրդի տնտեսական եւ մտա-

---

[1] *Տե՛ս* ***«Արօր»****, № 2-3, փետրվար-մարտ, 1911, էջ 188:*

ւոր-բարոյական մակարդակը»: Ելնելով դրանից, Միացյալ ընկերությունը գտնում էր, որ նշված երկու կազմակերպությունները «պէտք է բաժանեն իրանց մէջ գործունէութեան շրջանն ու ասպարէզը եւ ըստ այնմ գործեն: Իսկ հայ հասարակութիւնը, բարեգործները Թիւրքիայում եւ Ռուսաստանում՝ պէտք է առատաձեռն օժանդակութիւն հայթայթեն նրանց՝ իրանց ազգաշէն եւ ժողովրդասէր միսիան գլուխ հանելու»[1]:

Չնայած դրան, հասարակական-քաղաքական կյանքն առաջվա պես եռում էր մայրաքաղաքում, որին տոն էր տալիս հայկական նահանգներից եկած ալեկոծ երիտասարդությունը: Շատերի համար տարօրինակ էր ու զարմանալի, որ բազմաթիվ հալածյալ գործիչներ չարունակում էին Ռուսաստանից փախչել ու ապաստան գտնել մոլեռանդության ու բռնապետության երկրում՝ Թուրքիայում: Այստեղ եկածների բացարձակ մեծամասնությունը կազմված էր կրթված, մտավոր ու մշակութային բարձր կամ գոնե միջին մակարդակ ունեցող անձանցից, որոնք էլ արդյունավորում էին մայրաքաղաքի հոգևոր կյանքը: Թատրոն, դասախոսություններ, հանդիպումներ, քննարկումներ՝ այս էր հայության առօրյան Կ. Պոլսում:

Հատկապես հաճախ էին կազմակերպվում բանախոսություններ ամենազանազան թեմաներով: Կարո Սասունին իր հուշերում նկարագրել է Սկյուտարի թատրոնի դահլիճում կազմակերպված երեկոն, ուր բանախոսություններով հանդես էին եկել Պոլսում գտնվող Ավետիս Ահարոնյանը և Արամ Մանուկյանը: Խուռներամ բազմությունն ափեափ լցվել էր սրահը, միջանցքները, նաև՝ դուրսը[2]: Պոլսահայության հետաքրքրությունը մեծ էր հատկապես քաղաքական խնդիրների նկատմամբ, և այդ թեմաներով դասախոսություններ ու զրույցներ լսելու էին գալիս հարյուրավոր մարդիկ՝ հույս ունենալով իրենց հուզող հարցերի պատասխանները ստանալ:

Դրական երևույթներից մեկը կարելի էր համարել այն, որ

---

[1] ***«Արօր»,*** *№ 8, 9, 10, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, 1910, էջ 196-197:*

[2] *Տե՛ս* ***«Արամը»,*** *Բ հրատ., Թեհրան, 1982, էջ 526:*

երիտթուրքական կառավարության սեղմիչ ձեռքը դեռ չէր կարողացել ամբողջովին ավերել այլազգիների մամուլը, որը դեռ չարունակում էր ազատություն վայելել: Կ. Պոլսում թուրքերեն, հայերեն, հունարեն ու եվրոպական լեզուներով հրատարակվող թերթերը ազատորեն ու խստորեն քննադատում էին կառավարական մարմինների, ատյանների և հաստատությունների գործունեությունը: Մեծ ազատություն կար նաև հանրահավաքների ու ժողովների կազմակերպման և գումարման համար: Հայկական թատրոնը և հայերեն երգը նույնպես վայելում էին կատարյալ ազատություն:

Դեռևս 1908 թ. սեպտեմբերին ՀՅԴ Կ. Պոլսի Պատասխանատու մարմինը (Կենտրոնական կոմիտեն) որոշել էր օսմանյան մայրաքաղաքում ֆրանսերեն հրատարակել մի օրգան, որի լույսընծայումը, ըստ այս կուսակցական մարմնի, թելադրված էր այն հանգամանքով, որ անհրաժեշտություն էր առաջացել հայկական, հունական ու թուրքական մամուլում տպագրվող և քաղաքական բովանդակություն ունեցող նյութերն այդ պարբերականի էջերում համադրել և պարզել, թե սահմանադրական շարժման հաջողության համար բաղմալեզու թերթերն ի՞նչ ընդհանուր գործելակերպ պետք է որդեգրեն: Միջազգային հասարակական կարծիքի առաջ թերթը պետք է պաշտպաներ օսմանյան սահմանադրության դատը, թև-թիկունք լիներ օսմանյան փոքր ժողովուրդների շահերին, իրավունքներին ու պահանջներին, դառնար Թուրքիայի բոլոր ժողովուրդների համերաշխության ու համագործակցության խոսափողը:

Պատասխանատու մարմինը նամակով դիմել էր Փարիզ՝ «Pro Armenia» թերթի խմբագիր, Հայ դատի նշանավոր պաշտպան Պիեռ Քիյառին, ուր նշվում էր, որ Կ. Պոլսում ֆրանսերեն թերթ ունենալը հրամայական անհրաժեշտություն է, ուստի գործը գլուխ բերելու համար կարիք կա նրա ներկայության Կ. Պոլսում: Թերթին պետք է աշխատակցեին տեղի նշանավոր գործիչներ, նրա էջերում, օրինակ, հաճախ հանդես գալու ցանկություն էր հայտնել նաև իշխան Մեհմեդ Սաբահէդդինը[1]: Բայց

[1] Տե՛ս «Գործ» (Թիֆլիս), № 62, 23 նոյեմբերի 1908 թ.:

այն ժամանակ գործը գլուխ չեկավ մեզ համար անհայտ պատճառներով:

Աբդուլհամիդյան խռովության ջախջախումից և Կիլիկիայում հայերի կոտորածներից հետո Իթթիհադի կառավարությունը ուժեղացրել էր հայկական մամուլի նկատմամբ վերահսկողությունը: Մեկը մյուսի հետևից փակվել էին Օսմանյան հեղափոխության հաղթանակից հետո առաջին ամիսներին հիմնադրված հայկական մի քանի պարբերականներ (հատկապես գավառներում), որոնք համարձակվել էին քննադատել Իթթիհադի և նրա կառավարության ազգային քաղաքականությունը:

Օրինակ՝ Իզմիրի «Դաշինք» թերթի խմբագիր Սուրեն Պարթևյանը և թերթի արտոնատեր Հրանտ Մամուրյանը քաղաքի գլխավոր դատախազից 1910 թ. ապրիլի 7 (20)-ին ստացել էին նույնիմաստ հետևյալ կոչնագիրը. «Կառավարութեան դէմ վիրաւորիչ պարսաւանքի համար Ընդհանուր Դատախազին կողմէ դատ բացուած է ձեզի դէմ, որուն ներկայ պիտի գտնուիք 17 Ապրիլի Շաբաթ օրը, ժամը 7ին*, Նախնական Դատարանի Պատժական Ատեանին առջեւ: Եւ եթէ նշանակեալ ժամանակին ներկայ չի գտնուիք՝ օրէնքի տրամադրութիւնները գործ պիտի դրուին ձեզ[ի] դէմ»[1]:

Երկար քաշքշուկից հետո, դատարանի որոշմամբ, «Դաշինքը» ժամանակավորապես փակվեց:

Թերևս բացառություն էր Կ. Պոլիսը, ուր հայկական թերթերն առաջվա նման կանոնավորաբար լույս էին տեսնում, թեև խմբագիրները պարբերաբար կառավարությունից զգուշացումներ էին ստանում: Նոր թերթերի բացման մասին այլևս խոսք լինել չէր կարող: Առանձին դեպքերում բացառություն էր արվում Դաշնակցության համար:

Եվ ահա՛, 1909 թ. ամռանը Կ. Պոլսի դաշնակցական շրջանակներում կրկին բարձրացավ մայրաքաղաքում նոր պարբերական ունենալու հարցը՝ այս անգամ մայրենի լեզվով: Մի նոր պարբերականի հրատարակման նախաձեռնությունը կրկին իր վրա վերցրեց ՀՅԴ Կ. Պոլսի Պատասխանատու մարմինը:

---

* Ըստ թուրքաց ժամանակի:

[1] **«Դաշինք»** (Իզմիր), № 208, 8 (21) ապրիլի 1910 թ.:

1909 թ. հունիսի 10-ից Կ. Պոլսում սկսեց լույս տեսնել ՀՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթ «Ազատամարտը»*: Բյուրոն հայտարարել էր, որ թերթը համերաշխ է լինելու Իթթիհադի հետ, բայց միաժամանակ բարձրացնելու է Թուրքահայոց ցավերը և առաջարկելու է դրանց բուժման միջոցներ:

Թերթը հստակ հետևում էր կուսակցության քաղաքականությանն ու առաջադրանքներին: Դրանք ամենից առաջ արտահայտում էին Թուրքահայաստանի ապագայի մասին ՀՅԴ որդեգրած նոր քաղաքականությունը, որի սկիզբը դրվել էր 1907 թ. դեկտեմբերին, Թուրքիայի ընդդիմադիր կուսակցությունների Փարիզի համաժողովում:

Ավելին, Դաշնակցությունն այժմ, հատկապես Ադանայի կոտորածներից հետո, շատ զգույշ էր դարձել: Համարից համար «Ազատամարտը» ժխտում էր Թուրքերի մոտ տարածված այն տեսակետը, թե հայերը կայսրությունից անջատվելու և անկախ պետություն ստեղծելու նպատակ են հետապնդում: Թերթը չեշտում էր, որ եթե մինչև օսմանյան սահմանադրության վերահաստատումը Թուրքահայերի պահանջը կայսրության կազմում ներքին ինքնավարություն ունենալն էր (այսինքն՝ միայն շրջանի ներքին գործերը վարելը՝ մյուս բոլոր գործերը թողնելով պետությանը), ապա այժմ նրանք այդ նվազագույն նպատակից անգամ հրաժարվում են:

Ելնելով դրանից՝ «Ազատամարտը» հետևողականորեն քարոզում էր Դաշնակցության որդեգրած քաղաքական նոր սկզբունքները. 1) Այլևս ոչ մի խոսք անջատական ձգտումների մասին, 2) Կտրականապես մերժել եվրոպական միջամտությունները Օսմանյան կայսրության ներքին գործերին, 3) Ոչ մի հիշատակություն Բեռլինի 1878 թ. կոնգրեսի ընդունած 61-րդ հոդվածի, «Հայաստանի բարենորոգումների» պահանջը փոխարի-

---

* «Ազատամարտի» արտոնատերը և խմբագրապետը Ռուբեն Զարդարյանն էր, խմբագիրներն էին Գեղամ Բարսեղյանը, Տիգրան Զուգասդյանը (Տիգրան Զավեն), Գասպար Իփեկյանը, Բարթող Զորյանը (Ժիրայր), աշխատակիցները՝ Խաչատուր Մալումյանը (Է. Ակնունի), Հարություն Շահրիկյանը (Ատոմ, Նիթրա), Ատոմ Յարճանյանը (Սիամանթո) և այլոք:

նել «Կայսրության բարենորոգումների» պահանջով, 4) Իսլամ դրացիների հետ ընդհանուր ուժերով կերտել սահմանադրական թուրքական պետությունը, 5) Վճռականապես հրաժարվել «պատմական Հայաստան» բառակապակցությունն արտաբերելուց, դրան պետք է փոխարինելու գա «հայ տարրի բնակավայր» հասկացությունը, այն էլ ոչ-պատմական, այլ տվյալ բնակավայրում հայ բնակչության խտության իմաստով, 6) Ամեն կերպ նպաստել երկիրը վերաշինելու երիտթուրքական կառավարության ջանքերին, 7) Միայն ակնարկներով նշել իշխանության մարմինների թույլ տված սխալներն ու սայթաքումները:

Ուշադրության է արժանի այն, որ քաղաքական հարցերի մասին իրենց պատկերացումներով Կ. Պոլսի դաշնակցականները բաժանվել էին երկու թևի՝ ծայրահեղներ ու չափավորներ, որոնք «Ազատամարտի» էջերում բանակռվում էին միմյանց դեմ: Ծայրահեղները, որոնց առավել ցայտուն ներկայացուցիչը Հարություն Շահրիկյանն էր, պահանջում էին շարունակել կուսակցության ընկերվարական ծրագիրը, իսկ ուրիշ ընկերներ՝ Արտաշես Զիլինգարյանը (Ռուբեն Դարբինյան), Միքայել Վարանդյանը և այլոք քարոզում էին այնպիսի մտքեր ու գաղափարներ, որոնք հարազատ էին չափավոր ազատականներին (մշակականներ և այլք): Դարբինյանն իր հոդվածներում ուղղակի պնդում էր, թե ինչպես Թուրքիայի, այնպես էլ Կովկասի հայերի շրջանում ներկայումս հող չկա ընկերվարական (սոցիալիստական) գաղափարների համար:

Իր հիմնական դեկավար կազմով Կ. Պոլսում աշխույժ աշխատանքի էր լծվել Հնչակյան կուսակցությունը: 1909 թ. հուլիսի 12-ին Կ. Պոլսում սկսվեցին այդ կուսակցության (հին Հնչակի) 6-րդ պատգամավորական ժողովի աշխատանքները, որոնք տևեցին չորս ամիս: Ընդունվեցին մի շարք կարևոր որոշումներ, այդ թվում նաև՝ եռանդուն գործունեություն ծավալել, «Տաճկաստանի մեջ գործել օրինական (լեկալ) գետնի վրայ, ցորչափ այդ օրինական իրաւունքները չեն խլուած աշխատաւոր ժողովուրդի ձեռքէն»[1]: Այս ժողովից հետո Հնչակյան կուսակցու-

---

[1] ***«Պատմութիւն Ս.-Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1962»***, *հատ. Ա, Պէյրութ, 1962, էջ 323:*

թյունն անվանվեց «Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցություն»[1]: Պատգամավորական ժողովն ընտրեց ՍԴ Հնչակյան կուսակցության Տաճկաստանի կենտրոնական վարիչ մարմին՝ կազմված հինգ հոգուց[2]:

Դրական երևույթներից էր այն, որ ուժեր էր հավաքում նորաստեղծ Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը, որին վիճակված էր կարևոր դեր խաղալ հայության հասարակական-քաղաքական կյանքում:

Կուսակցության հիմնադիրներն հույս ունեին իրենց շուրջը համախմբել հայության մտավորական ուժերը և դրանց միջոցով նպաստել ամրապնդելու սահմանադրական կարգերը, իրականացնելու մի շարք լուրջ բարեփոխումներ պետության մեջ: Կազմակերպության գործունեությունը պետք է հիմնվեր ռամկավարական (ժողովրդավարական) ընդհանուր սկզբունքների վրա: Պետության կենսագործունեության լիակատար տերը ժողովուրդն է – ահա՛ այն հայեցակետը, որին պետք է ձգտեր կուսակցությունը:

Ներազգային կյանքում կազմակերպությունը պետք է գործեր Հայոց ազգային սահմանադրության և Հայոց ազգային ժողովի ու նրա հիմնարկությունների լիազորությունների շրջանակներում: Կուսակցության ծրագրում նշված էր, որ ռամկավարությունը հիմնված լինելով ժողովրդական ազատ քվեի, ազատ ձայնի, ազատ քննադատության, ազգընտիր վարչության, պառլամենտական պետավարության վրա, պետք չունի բռնության և ահաբեկումների, որոնք միայն թյուրիմացություններ և դժբախտություններ են առաջացնում ժողովուրդների կյանքում: Բռնություններն ու ահաբեկումները բացառում են անհատի և հասարակության ազատ ձայնի և կամքի արտահայտությունը:

Արդեն 1909 թ. վերջերին Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը մի քանի հազար հետևորդներ ու անդամներ ուներ թե՛ Կ. Պոլսում և թե՛ մայրաքաղաքից դուրս:

---

[1] **«Պատմութիւն Ս.-Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1962»**, հատ. Ա, էջ 325:

[2] Տե՛ս նույն տեղում:

Գավառական այդ շրջաններից կուսակցության նկատմամբ ամենից ավելի հետաքրքրություն էին ցուցաբերում վանեցիները, որոնց առաջ ավելի կտրուկ, քան ուրիշ տեղերում, հարց էր դրված հաստատուն դիրք բռնել Թուրքիայի նորագույն կյանքում ծագած խնդիրների նկատմամբ, քաղաքակրթական բեղմնավոր գործունեության համար հետևողական գործելակերպ դրսևորել:

Հուսադրող էր, որ Թուրք մտավորականության առանձին հատվածներում որոշ հետաքրքրություն էր առաջացել հայ մշակույթի հանդեպ: Հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի առանձին դրական փոփոխության վկայությունն էր 1909 թ. կեսերից Թուրքերի մեջ սկսված այն նկատելի շարժումը, որի նպատակը նրանց օգտագործած արաբական տառերը հայկական տառերով փոխարինելն էր: Այդ տրամադրությունը փոխանցվել էր Կոստանդնուպոլսի Թուրքական Թերթերին, որոնց մի մասը ողջունել էր առաջարկը՝ արաբական և հայկական այբուբենների համադրության և դրանց առավելությունների ու Թերությունների համեմատական վերլուծության արդյունքում գերադասությունը տալով վերջինիս:

Բոստոնի «Հայրենիք» չաբաթաթերթը մի շրջաբերական էր հղել հայ գրողներին ու գործիչներին և հարցում արել, Թե այդ երևույթը կարո՞ղ է օգտակար լինել հայերի, նրանց լեզվի ու գրականության համար, Թե՞ հակառակը:

Հովհաննես Թումանյանը Թերթի հարցմանը պատասխանել էր, Թե ինքը ողջունում է այդ երևույթը, բայց կասկածում է նրա արդյունավետության վրա: Նշելով, որ «գլխարկն ավելի հեշտ կփոխվի, քան գլուխը», Թումանյանն այնուհանդերձ գրում էր. «Ես ոչ մի վնաս չեմ տեսնում, եթէ Թուրքերը որդեգրեն հայկական տառերը: Բայց մի՞Թէ, յիրաւի, որդեգրում են, եւ եթէ որդեգրում են, ես զարմանում եմ, Թէ ինչո՞ւ լատինական գեղեցիկ տառերը Թող արած, մեր աւելի տգեղ տառերն են ընտրել: Եւ եթէ դիտմամբ են խուսափում լատինական տառերից, հետաքրքրական է, Թէ ինչո՞ւ»[1]:

Ինչ-որ չափով մխիթարական էր, որ օսմանյան Պատգամա-

---

[1] ***«Հորիզոն»***, *№ 86, 24 ապրիլի 1910 թ.:*

վորական ժողովի որոշմամբ կառավարությունը որոշ գումար էր հատկացրել Կիլիկիայի ծնողազուրկ հայ երեխաների համար որբանոցներ բացելու նպատակով: Դրան հետևել էր սուլթան Մեհմեդ V Ռեշադի քայլը: Իմանալով, որ Ժնևի հայ ուսանողությունը գտնվում է նյութական անձուկ վիճակում, սուլթանը 1000 ֆրանկի նպաստ է ուղարկում: Դրան ի պատասխան Ժնևի հայ ուսանողները, այդ թվում սոցիալիստները և սոցիալիստամետները, մի հեռագրով իրենց երախտագիտությունն են հայտնում սուլթանին:

Սառնասրտությամբ քննելով այդ դեպքը՝ սուլթանի վարմունքը միայն կարելի էր գովել, նույնիսկ մի կողմ թողած այն կասկածը, թե այդ նպաստը կարող էր քաղաքական աստառ ունենալ և թելադրված լինել երիտթուրքերի կողմից՝ չահելու համար հայ ուսանողների համակրանքը:

Միանգամայն իրավացի էր «Սուրհանդակ» թերթի (№ 58, 1909 թ.) զայրույթն ու հանդիմանությունն այն ուսանողների ու գործիչների հասցեին, որոնք հանդես գալով իբրև արմատական հայացքների տեր, Կ. Պոլսի հայոց պատրիարքին դատապարտում էին, որ նպաստներ է ստանում սուլթանից, բայց ահա՛ այժմ գետնամած ստորագրել են նույն սուլթանին ուղարկած երախտագիտական հեռագրի տակ:

Բայց նշված որոշ դրական երևույթները հայերի մեծամասնությանը հույս չէին ներշնչում, թե շարունակություն կունենան: Նրանք ճիշտ էին, որովհետև աչքը տեսածից էր վախենում: Ամեն օր կյանքը ցույց էր տալիս, որ օսմանյան սահմանադրությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի դիմակ, որի տակ ծածկվում են երիտասարդ թուրքերը՝ Եվրոպային խաբելու և նրա հսկողությունից ազատվելու համար: Իթթիհադի օրվա խնդիրն էր՝ շարունակել կործանարար քաղաքականությունը, ոտնատակ տալ կայսրության բաղկացուցիչ ազգերի իրավունքներն ու ինքնուրույնության փչրանքները:

Թուրքիայի բաղկացուցիչ ազգերից յուրաքանչյուրն ուներ ոչ միայն իր ազգայնական հոսանքները, այլև ազգայնամոլական թևը: Առավել վտանգավորն ու աղետաբերը իշխող ազգի ազգայնամոլությունն էր, որի ձգտումը մյուս ազգերի և՛ ազգայնա-

մոլության, և՛ ազգայնականության ոչնչացումն էր:

Եթե կա տիրապետող ազգ, ուրեմն և պիտի լինեն ենթակա ազգեր: Հետևաբար Թուրքիայի նման մի երկրում միշտ անպակաս պիտի լինեին ազգային հողի վրա տեղի ունեցող խռովություններն ու ապստամբությունները: Նման երևույթները երկիրը կարող էին մատնել անդառնալի կորստի:

Ինչպես օսմանյան սահմանադրության վերահռչակումից հետո, առավել ևս այժմ հայկական մամուլը լայնորեն քննարկում էր այն հարցը, թե ինչպիսի՞ արմատական քայլերի պետք է դիմի Թուրքիան, եթե կամենում է ժողովրդապետական երկիր դառնալ:

Եթե ի մի բերենք հայկական քաղաքական ուղղությունների պատկերացումները Թուրքիայի լավագույն ապագայի վերաբերյալ, ապա դրանք կարելի է ամփոփել հետևյալ կետերի մեջ. 1) Պաշտոններից հեռացնել աբդուլհամիդյան շրջանի գործիչներին, ովքեր չէին կարող լինել սահմանադրության պահանջների և խորհրդարանի որոշումների գործադրողը, 2) Սանձահարել իսլամական կրոնի այն սպասավորներին, որոնք իրենց դասակարգային շահերից դրդված՝ միշտ թշնամական դիրքի մեջ են մնալու սահմանադրական կարգերի նկատմամբ, 3) Վերացնել սուլթանի կրոնապետական կոչումը և շարիաթի փոխարեն մտցնել ընդհանուր օրենսդրություն՝ շեյխ-ուլ-իսլամից վերցնելով բարձրագույն դատավորի իրավունքը, 4) Զինաթափ չանել քրիստոնյա ազգերին, քանի դեռ երկրում, առավելապես Թուրքիայի ասիական նահանգներում խլրտում են կիսավայրենի մուսուլման տարրերը, որոնք դաստիարակված լինելով մոլեռանդության ու կրոնամոլության ոգով, շարունակում են ատամ կրճտացնել քրիստոնյաների դեմ, 5) Նորաբաց դպրոցների միջոցով կայսրության հետամնաց ազգերի մեջ արագացնել կրթության և լուսավորության տարածումը՝ ընդսմին փակելով այն մեդրեսեները, որոնք վառ են պահում հետադիմության ու կրոնական անհանդուրժողականության ոգին, 6) Ճանաչել ոչ-թուրք ժողովուրդների ազգային իրավունքները կրթության բնագավառում, թույլ տալ, որ նրանցից յուրաքանչյուրը ոչ միայն իրավունք, այլև հնարավորություն ունենա ուսում առնելու և կրթվելու

մայրենի լեզվով, 7) Առաջ քաշել և պետական պաշտոնների հրավիրել կարող ու լուսամիտ անձանց՝ առանց կրոնի և ազգի խտրության:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԽՆԴԻՐԸ

Ինչպես արդեն նշվել է, կիլիկիահայոց գաղթը չղթայական հոսքով տոն տվեց հայերի նոր փախուստին բուն Թուրքահայաստանից: Հայերն օտար հորիզոններ էին փնտրում, որոնում մի նոր երկինք, որի տակ կարողանային գոնե չունչ առնել:

Ընդհանուր առմամբ համազգային խուճապ էր: Մարդիկ հապճեպ լքում էին երկիրը՝ իրենց թիկունքը դարձրած հետևում մնացած Սողոմին՝ մի մասը հայրենիք չվերադառնալու մտադրությամբ, մյուսները դեռ փափագ ունենալով վերադառնալ հայրենի եզերք, եթե կյանքն այնտեղ քիչ թե շատ տանելի դառնար: Շատերի զարհուրանքի թափն այնքան ուժեղ էր, որ նրանց դեպի օվկիանոսի մյուս ափերը մղեց: 1909-1911 թթ. հազարավոր մարդիկ գաղթեցին Ամերիկա: Ռուսաստանը, Պարսկաստանը, Բուլղարիան և մյուս սահմանակից երկրները լցվեցին հայ փախստականներով*:

Հայոց եկեղեցին, հասարակական ու քաղաքական կազմակերպությունները տագնապ էին բարձրացնում՝ փակելու համար հետագա աղետի ճանապարհը, և գաղթականությանը հայրենիք վերադարձնելու միջոցներ էին որոնում:

Այդ հարցը հայկական մամուլի էջերում ծեծվում էր սահմանադրության վերահրատարակման օրից: Դրանով զբաղվում էին ոչ միայն Թուրքիայի և Կովկասի, այլև աշխարհի այլազան մասերում հրատարակվող հայկական պարբերականները:

---

* 1901-1910 թթ. Թուրքիայից հայ գաղթականների թիվը տարեցտարի մեծանում էր: Եթե 1901-ին այդ թիվը եղել էր 1855, ապա հաջորդ տարիներին՝ միջինը 4-5 հազար մարդ: Միայն 1906-1907 թթ. Ամերիկա էր գաղթել 16.752 մարդ (տե՛ս **«Հորիզոն»**, № 28, 8 փետրվարի 1911 թ.): Գաղթողների թիվն անհամեմատ մեծացավ 1909-1911 թթ.:

Կարծիքները որոշակիորեն բաժանվում էին երկու մասի: Մի մասը կարճ ու կտրուկ հրավեր էր կարդում վերադառնալու երկիր, հարազատ օջախներ՝ առանց երկար-բարակ մտածելու, առանց ծանր ու թեթև անելու:

1909 թ. ամռանից հայկական պարբերական մամուլում չարունակաբար լույս էին տեսնում թուրքահայ զանազան թեմերի կոչերը, որոնցով հայ գաղթականներին հրավիրում էին որքան կարելի է չուտ վերադառնալ հայրենիք և տեր դառնալ իրենց նախկին հողերին, քանի որ, իբր, թուրքական իշխանությունները կարծես արդեն մտադիր են քրդերից բռնագրավել խլված հողերը: Կ. Պոլսի թերթերում նման բովանդակությամբ մի շարք կոչեր հրատարակեցին Վանի, Տարոնի, Կարինի և Թուրքահայաստանի ուրիշ առաջնորդարաններ:

Վանի առաջնորդարանը դիմեց նաև Ամենայն հայոց նոր ընտրված կաթողիկոս Մատթեոս Իզմիրլյանին՝ խնդրելով մի «ազգու կոչ» ուղղել կովկասաբնակ թուրքահայ գաղթականներին, նրանց հորդորել չուտով վերադառնալ և տեր դառնալ «իրենց գրաւած հողերուն ու կալուածներուն», հակառակ դեպքում «վախ կայ թէ անոնց վերադարձի յապաղումով կառավարութեան ներկայ լաւ տրամադրութիւնները եւ յօժարութիւնները ժամանակի ընթացքին կը փոխուէին»[1]:

Այդպես մտածողները չէին ուզում աչքի առաջ ունենալ գալիքում է՛լ ավելի բացասական հնարավոր դրսևորումները:

Մյուս կողմում ոչ-զգացմունքային, սառը դատողությամբ մարդիկ էին, որոնք գտնում էին, որ այդ հարցում չտապողականությունն անընդունելի է և Երկիր վերադառնալու կոչերը պետք է հիմնավորված լինեն:

«Հորիզոն» թերթում տպագրած «Տաճկահայ գաղթականներին յղած կոչերի առթիւ» հոդվածում Հայկակ Կոսոյանը գրում էր, թե «ազգու կոչերով» անհնար է իրականացնել երկրից հեռացածների վերադարձը: ««Ազգու կոչերի» փոխարէն,- գրում էր նա,- տէ՛ք ապացոյցներ, թուեր ու փաստեր, որոնք ցոյց տան, թէ այսինչ գաւառում այսքան գրաւած, խլուած հողեր յանձնե-

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 16, 21 օգոստոսի 1909 թ.:

ցին իրենց իսկական տէրերին: Այսպիսի մի երկու դէպքերի արձանագրումն աւելի ազդու, աւելի զօրեղ կլինեն, քան հազարաւոր գեղեցիկ կոչեր, որոնց ներքեւ ով կուզի թող ստորագրէ՝ կաթողիկո՞ս թէ՞ թեմական առաջնորդ»[1]:

Հոդվածագիրն այնուհետև նկատում էր, թե արժանապատիվ առաջնորդները չեն նշում, որ իրենց կոչերի մեջ ցոլում է ակնհայտ անվստահություն երիտթուրքական վարչակարգի նկատմամբ, որը նույնպես բացասաբար է ազդում գաղթականների վրա: Դրա ապացույցներից մեկը հենց այն պնդումն է, թե վախ կա, որ գաղթականների «վերադարձի յապաղումով կառավարութեան ներկայ լաւ տրամադրութիւնները եւ յօժարութիւնները ժամանակի ընթացքին կը փոխուին»: Ուրեմն խնդիրը ոչ թե դրված է պետության իրավական հիմունքների վրա, այլ կախված է «ժամանակի փոփոխությունից»: Հետևապես, որևէ երաշխիք չկա, թե քրդից կամ թուրքից վերցրած հողը նորից չի վերադարձվի նրանց:

Այսպես մտածողների ընդհանրական եզրակացությունն այն էր, որ առանց լուրջ նախապատրաստությունների ազդարարված կոչերն ու հորդորները ի վերջո միայն հիասթափության կմատնեն երկիր վերադարձողներին:

Նշված երկու տեսակետներն էլ գոյության իրավունք ունեին ու լրացնում էին իրար:

Փաստենք նաև, որ ոչ միայն Ադանայի կոտորածների առիթով, այլև տեսականորեն առաջ էր քաշվում և քննարկվում ընդհանրապես գաղթի, որպես երևույթի, թողած ազդեցությունը ազգային մարմնի վրա:

Եթե Դաշնակցության նշանավոր գործիչ Է. Ակնունին եռանդագին քարոզում էր «դեպի Երկիր»՝ ենթադրելով և հույս ունենալով կասեցնել գաղթի հոսանքը դեպի Ամերիկա, ապա նույն կուսակցության գործիչներից ոմանք պախարակելի որևէ բան չէին տեսնում գաղթի մեջ, ավելին՝ չեչտում էին նրա օգտակարությունը ազգային մարմնի առողջացման, ազգային առաջադիմության տեսակետից:

---

[1] *Տե՛ս* ***«Հորիզոն»****, № 16, 21 օգոստոսի 1909 թ.:*

Դաշնակցության գլխավորներից՝ իր անեզր հայրենասիրությամբ հայտնի Սիմոն Զավարյանը «Հոսանք մը եւ իր պատճառները» հոդվածաշարում գրում էր հետևյալ տողերը. «Ինծի այնպէս կ'երեւի, որ դարերու ընթացքին հայու ֆիզիքականին ու բարոյականին վրայ կուտակուած թերութիւններն ու ազդեցութիւնները ամէնէն շատ կը վերանան գաղթականութեան հոսանքին ուժեղացումով: Մինչեւ որ ախոռին ու աղտեղութեան մէջ մեծցած մեր գիւղացին չտեսնէ, չապրի քաղաքակիրթ աշխարհի մաքրութիւնը, չի կրնար գնահատել քաղաքակրթութեան արժէքը: Մինչեւ որ իր կիսադատարկ կրպակին մէջ կծկուած ու խաբեբայութեամբ թրծուած մեր առեւտրականը չտեսնէ եւրոպական կամ ամերիկեան հաստատութիւնները, չի գիտնար, թէ ի՞նչ է առեւտուրը: Տիրացուական նախապաշարումներէ, ձեւապաշտական, չարչիական խաբեբայութիւններէ, ասիական ստրկամտութենէ դուրս գալու համար, մեզի շատ օգտակար է ապրիլ Ուաշինկթընի եւ Լոնկֆելոյի երկրին մէջ»[1]:

Իհարկե, միանգամայն ըմբռնելի էին Ս. Զավարյանի մտահոգիչ մտածումները հայ գյուղացու հետամնաց կենցաղի ու բարքերի, հայ առևտրականի խաթարված բարոյականության և այլնի մասին, բայց այդ ամենը չէին կարող պատճառ լինել խրախուսելու գաղթը Հայրենիքից, որի գոյատևումն իսկ մեծապես կախված էր գյուղից, հայ գյուղացու հարատևությունից:

Այնուամենայնիվ, գաղթականության գերակշիռ մասը գրտնում էր, որ պետք է վերադառնալ Հայրենիք: Ծննդավայր վերադարձի համար խթաններ էին նոր միջավայրում գաղթածների թշվառ ու արհամարհված վիճակը, չքավորությունն ու սովը, որոնք հալածում էին նրանց և մղում հետ՝ դեպի հայրենի երկիր:

Գաղթականների վերադարձին նպաստում էին նաև այն կոչերը, որ անում էին թուրքահայ թեմերի առաջնորդները, վարդապետ-եպիսկոպոսները, դուռ ու դրկից հայրենակիցները, ռուսահայ հասարակական ու բարեգործական կազմակերպությունները: Այդ ամենն ապարդյուն չէր անցնում: Հայրենիք վերադարձածների թիվը 1909 թ. կեսերին չուրջ 25 հազարի էր հասել[2]:

---

[1] ***«Սիմոն Զաւարեան»***, *հատ. Ա, էջ 86:*

[2] *Տե՛ս* ***«Հորիզոն»***, *№ 28, 4 սեպտեմբերի 1909 թ.:*

Սկզբնական շրջանում իշխանությունները որոշ հետաքրքրություն էին հանդես բերում խլված հողերը հայերին վերադարձնելու խնդրում:

Արճակում Քեռռ Հուսեյն փաշայի բռնագրաված հողերի, մարգագետինների և արոտատեղերի մի կարևոր մասը վերադարձվեց իր տերերին: Նույնը պատահեց հայտնի հարստահարիչ Ռիզախի հետ, որից հետ առնվեց իր տարած կողոպուտների որոշ մասը: Ինչպես սրան, այնպես էլ Քեռռ Հյուսեինին իշխանությունները բանտարկել էին Մուշում և առաջարկել բանակցությունների մեջ մտնել հայերի հետ՝ նրանց պահանջների մասին համաձայնության գալու համար:

Որոշ հողեր հետ բերվեցին Խիզանի հայտնի չարագործ Սեիդ Ալիից:

Ժողովրդի դիմումի վրա կառավարությունը հափշտակիչ քրդերին հրաման իջեցրեց՝ դուրս գալ Բուլանըխի Շեյխ-Յաղուբ, Մաշեղլու, Փիրան ու այլ գյուղերից: Հրամանը որոշ չափով գործադրվեց:

Մշո դաշտի հայտնի Գոմս գյուղի հայերի հողերից հանվեցին 25-30 տուն չերքեզներ[1]:

Բայց այս և նման հատուկենտ օրինակները չէին կարող լուծում տալ հեռուներից Հայրենիք վերադարձած հայ գյուղացիների հիմնախնդիրներին: Նրանք այստեղ անհաղթահարելի խոչընդոտների հանդիպեցին: «... Հողային հարցը մնաց անլուծելի՝ կազմելով տաճկահայոց հարցի ամէնից ցաւոտ կողմը»[2]:

Քրդերը, չերքեզ և թուրք գյուղացիները շարունակում էին մնալ տուն վերադարձած հայերի սեփական հողերի վրա, իսկ սրանք, բույնն ավերված, թափառում էին այս ու այն կողմ: Նրանցից ոմանք բողոքագրեր ներկայացրին պատրիարքարան, առաջնորդարաններ, կուսակալներին՝ պահանջելով իրենց սեփականությունը, բայց ամեն անգամ թուրքական իշխանություններից ստանում էին պատասխան, թե «երբ ժամանակին

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 30, 6 սեպտեմբերի 1909 թ.:

[2] **Հրաչեայ Աճառեան**, Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչև 1915 թ.), էջ 68:

դուք ձեր հողերը լքել եք ու փախել եք, ձեր սեփականությունը մահլուլ* է հայտարարված և տրված է չերքեզ ու թուրք գաղթականներին»:

«Արեւելք» թերթի թղթակիցը Վանից հաղորդում էր, թե այնտեղ վերադարձած հայերի հողերը հետ չեն տալիս ամենազանազան պատճառաբանություններով: Օրինակ՝ «տեղական կառավարությունը կ'առարկէ, թէ որչափ հայ գաղթականներ եկած չէին, չէինք կարող հողերն անմշակ թողուլ, եւ մենք քիւրտերէն չենք առներ անոնց հողերը»[1]:

Այդ ամենը տեսնելով, օրինակ՝ Սասնո քրդերը նոր ոգևորությամբ շարունակում էին խարդախ ձևակերպումներով հայոց նորանոր գյուղեր հետզհետե յուրացնել: Հայերը գալիս էին Մուշ, բողոքում և վերաքննություն պահանջում, բայց դատարանը բոլորովին կտրում էր նրանց հույսը: Հեղափոխությունից հետո հրաշքի նման մի բան կլիներ, եթե հայը դատարանում իրավունք չահեր թուրքի կամ քրդի դեմ: «Հավասարություն» և «եղբայրություն», «արդարություն» և «սահմանադրություն» բառերը թուրք պաշտոնյաների ու դատավորների մոտ միայն ժպիտ էին հարուցում:

Հայերի համար հայտարարված իրավունքը պետության կողմից երաշխավորված իրավունք չէր, այլ ազդարարված էր ձևականորեն: Եթե նրանց իրավունքը իրոք հետաքրքրեր իշխանություններին, ապա զավթված հողը նրանք պետք է հետ խլեին և ձևակերպեին նախկին տիրոջ անունով, անկախ այն բանից, թե որտեղ է նա գտնվում:

Եթե քրդերի խլած հողերը չվերադարձվեին, ապա առանց հողի ու հողագործության անհնար էր տևական ժամանակով մնալ գյուղում:

Ինչպես աշխատության նախորդ գրքում նշել ենք, 1909 թ. առաջին կեսին Կովկասից մի ստվար բազմություն էր վերադարձել Հայրենիք, բայց նա նույն տարվա վերջերից կրկին մաս-մաս

---

* Լուծարված, չեղյալ:

[1] **«Արեւելք»,** № 7107, 11 օգոստոսի 1909 թ.:

դուրս էր եկել երկրից[1]: Այդպես էին վարվում նաև ուրիշ տեղերից եկածները:

Բացի բացարձակ հափշտակված հողերից, որոնց հետգրավումն առանձին դեպքերում հաջողվում էր*, կային և բազմաթիվ անուղղակի հափշտակումներ (պարտքի փոխարեն կամ կեղծ փաստաթղթերով հողին տիրած), որոնք իսկական տերերի համար մեծ դժվարություն էին ներկայացնում վերստանալու իրենց հողերը:

Այսպիսով, գաղթականության հարցը պետականորեն լուծում չէր ստանում: Քրդերը, նաև չերքեզներն ու թուրքերը դուրս չէին գալիս հայերի գյուղերից և չէին վերադարձնում նրանց հողերը: Վերադարձածները չափշփում էին իշխանությունների դռները Վանում, Մուշում, Արճեշում, Աղբակում և այլուր: Բայց որևէ պետական պաշտոնյա նրանց չէր լսում:

«Ինչո՞ւ մեզ խաբեցիք,- ասում էին նրանք ազգային իշխանություններին,- մեր տեղերում լավ թե վատ ապրում էինք. ինչո՞ւ մեզ կրկին բնավեր դարձրիք՝ հանելով մեզ մեր տեղերից ու բերելով մի երկիր, որը թեև մեր հայրենիքն է, ուր եթե դաղարել են ջարդերը, բայց սովից մեռնում են մարդիկ»[2]:

Մեկ անգամ արդեն գաղթած հայ գյուղացիները կրկին վերադառնում էին Կովկաս և արտասահմանյան այլ երկրներ ու պանդուխտ ազգակիցներին պատմում Հայրենիքի դժխեմ կացության մասին, նրանց հորդորում տեղից չշարժվել:

Օսմանյան կայսրության մեջ հայ տարրի համար ստեղծված բոլորովին նոր կացությունը հայկական բոլոր շրջանակներում լուրջ խորհրդածությունների նյութ էր դարձել:

«Արեւելքի» առաջնորդողում նշվում էր, որ հայկական մա-

---

[1] Այդ մասին տե՛ս **«Սուրհանդակ»** (Թիֆլիս), № 91, 9 ապրիլի 1910 թ.:

* Հողերը քրդերից հետ առնելու հեռանկարը լեռնակուտակ դայրույթ էր առաջացնում նրանց մեջ, և տագնապ, թե մի օր վերադարձնելու են բոլոր հափշտակածը: Հենց դա էր պատճառներից մեկը, որ վերահաս համաշխարհային պատերազմում, երբ պիտի սկսվեր հայերի մեծ եղեռնը, քրդերն անափ եռանդ դրսևորեցին կոտորելու և անհետացնելու իրենց դրկից հայերին՝ հողային հարցն այդ կերպ վերջնականապես լուծելու համար:

[2] Տե՛ս **«Արեւելք»**, № 7142, 6 հուլիսի 1909 թ.:

մուլի մեծագույն մասը՝ Կ. Պոլսում, գավառներում թե արտասահմանում, զբաղված է այն հարցով, թե ո՞րն է հայոց փրկության ճամփան: Առաջարկները շատ են ու տարբեր, բայց ամենքն էլ միասնական էին իրենց եզրակացության մեջ՝ ցեղը վտանգի մեջ է, չեչտում էր թերթը[1]:

Մարդիկ տեսնում էին, որ ազգը պարբերաբար ենթարկվում է հալածանքների ու կոտորածների՝ նրան վերջ տալու նպատակով: Կա՞ր արդյոք որևէ երաշխիք, որ հայությունը առաջիկայում չի նետվելու է՛լ ավելի ահավոր արյան բաղնիքի մեջ:

Թուրքիայից դուրս գտնվող մի հայ մտավորական համոզված էր, որ Եվրոպան ինչպես մինչ այժմ, ապագայում նույնպես իրական աջակցություն ցույց չի տալու հայ ժողովրդին, որովհետև նրա գլխավոր հոգսը շարունակում է մնալ Բալկանյան խնդիրը՝ իր խաղաղությունն ապահովելու համար: Միաժամանակ նա ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ եվրոպական երկրների, հատկապես Անգլիայի, կառավարությունները, ինչպես նաև հասարակական լայն շերտերը, որոնք սկսել են խստորեն քննադատել երիտթուրքական նոր ռեժիմը, բնավ հավատ չունեն, թե հայն ու թուրքը կարող են կողք-կողքի ապրել:

ԵՐԿՐԻՑ ԱԶԳՈՎԻՆ ԸՆԴՄԻՇՏ ՀԵՌԱՆԱԼՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ

Ցավի ու դառնության այդ ժամին հայ ժողովրդի շերտերի մեջ ծավալվում էին արտասովոր ու տարօրինակ գաղափարներ:

Դրանցից մեկը ծնունդ էր առել Թուրքիայի ծովեզրյա քաղաքների հայ էֆենդիների շրջանում: Սրանք ասում էին, որ երբ սկսվում են հայերի ջարդեր, ապա իրենք, լինելով ծովեզերքում, կարողանում են ժամանակին խույս տալ ու նավերով փախչել, ուստի «մեզ պետք չեն գալիս զենք, ընդդիմություն, ինքնապաշտպանություն»[2]: Ելնելով դրանից, նրանք գտնում էին, որ

---

[1] Տե՛ս **«Արեւելք»**, № 7139, 2 հուլիսի 1909 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

Հայաստանի խորքերում ապրող հայերին պետք է զանգվածաբար իջեցնել ծովեզրյա քաղաքները, որպեսզի վտանգի դեպքում նրանք նույնպես, իրենց օրինակով, կարողանան խույս տալ կոտորածներից, հետո, երբ խաղաղությունը վերահաստատվի, կվերադառնան իրենց ծովափնյա բնակավայրերը[1]: Այս տարօրինակ «ազգօգուտ» գաղափարը բավականին տարածում էր գտել Կ. Պոլսի հայ աղաների զգալի մասի և նույնիսկ առանձին մտավորականների մոտ:

Կիլիկյան կոտորածների առնչությամբ աշխատության սույն գրքում արդեն իսկ խոսք է եղել դեպի այլ երկրներ հայերի փախուստի մասին:

Անցել էին ամիսներ, բայց արտագաղթի հարցը ոչ միայն չէր կորցնում իր արդիականությունը, այլև դառնում էր հայության նորանոր չերտերի հետաքրքրության առարկա, որի բովանդակությունը երկրից բոլոր հայերի ընդմիշտ հեռանալու առաջարկն էր:

Այդ գաղափարի բովանդակությունը հետևյալն էր. կազմել ազգային մի պատվավոր մարմին, որի նպատակը պետք է լինի կազմակերպել հայերի գաղթը երկրից, այսինքն՝ ազգովին ձգել հայրենիքը, ընդմիշտ լքել պապենական օջախները, հեռանալ ու ապաստան գտնել աշխարհի մի հեռավոր կտորի վրա: Այդպիսի եղանակով, ասում էին նրանք, կապահովվեն հայ ցեղի հետագա գոյությունն ու անդորրը[2], այլ ոչ թե զենքով ու ինքնապաշտպանությամբ, ապստամբություններով ու կռիվներով:

Հայ մտավորականներից մեկն ուղղակի ասում էր, թե որևէ մեկն իրավունք չունի խրատելու, որ հայերը մնան իրենց տեղերում՝ ազգային գոյությունը պահպանելու համար: Նա տեղեկացնում էր, որ գավառից իրեն դիմումներ են արվում, որոնց հեղինակները պահանջում են որոշակի պատասխան. «Գաղթե՞նք, թե՞ ոչ. ասացե՛ք՝ այո՛ կամ ո՛չ»: Նա տեղեկացնում էր. «Ես

---

[1] Տե՛ս **Ստեփան Սապահ-Գիւլեան,** Պատասխանատուները, Փրավիտենս, 1916, էջ 39:

[2] Տե՛ս **«Արեւելք»**, № 7142, 6 հուլիսի 1909 թ.:

կ՚ըսեմ. գաղթեցէ՛ք, ընդարձակ գաղթականութիւններ կազմելու պայմանով միայն, մանաւանդ եթէ մեր ընտրած գաղթավայրերը հեռաւոր ըլլան»[1]: Գտնելով, որ ամենամեծ սարսափները դեռ առջևում են, մտավորականն իր այդ համոզումը հիմնավորում էր այսպես. «Նոր ռեժիմը դեռ ամենադոյզն ապացոյց մը չտուաւ թէ իրեն համար կրօնքները նշանակութիւն չունին եւ որեւէ տարբ հաւասարապէս պիտի վայելէ պաշտպանութիւն: Դեռ ոչ մէկ նշան չկայ, թէ մեծ մարդ մը պիտի ծնի իր ծոցէն, երկաթէ գաւազանով հաստատելու Արդարութիւնը»[2]: «Իսկ հնարավո՞ր է կասեցնել գալիք սարսափները» հարցին նա պատասխանում էր բացասաբար. «Երբ բողոքենք՝ մեզ կը խաբեն կոր խոստումներով, երբ աղաչենք՝ մեր վրայ կը խնդան կոր, երբ լանք՝ իրենց հաճոյք կը պատճառենք կոր: Ամբողջ ազգը այսօր ջղային տագնապներու մատնուած է. մեր ուղեղը ցնդելու դրութեան մէջ է...»: «Այո՛, ես անտանելի, ահռելի անքաւելի կը գտնեմ ազգովին հեռանալու գաղափարը, բայց ուրիշ ճար չկայ»[3],- եզրակացնում էր նա:

Գաղափարն աստիճանաբար վերածվում էր տեսության, որին հետևողները համոզված էին, թե հայը ուր էլ որ գնա՝ չի կորչի, քանզի նա իր հայտնի աշխատասիրությամբ, իր ճակատի արդար քրտինքով անհրաժեշտ դրամ կվաստակի և անվտանգ ու ապահով կապրի: Հայությունն իր բնակած նոր տեղը կարճ ժամանակում կչենացնի իր չնորհալի ձիրքերով ու աստիճանաբար կդարձնի նոր հայրենիք:

Ծնունդ առած տեսակետն արագորեն տարածում էր ստանում: Արդեն 1909 թ. կեսերից սկսել էին իրար հաջորդող մասնակի ու խմբակային արտագաղթեր: Ադանայի սարսափելի կոտորածներից հետո Կիլիկիան ընդմիշտ լքելու տրամադրությունը տարածվում էր նաև ամբողջ թուրքահայության մեջ և վտանգավոր ծավալներ ընդունում:

Նկատենք, որ Հայաստանն ազգովին լքելու գաղափարն առաջին անգամ ծագել էր մի ռուսահայ մտավորականի գլխում,

---

[1] **«Արեւելք»**, № 7139, 2 Հուլիսի 1909 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

որը Թուրքիայում հայերի 1895–1896 թթ. կոտորածներից հետո մի ընդարձակ ու բազմակողմանի հիմնավորված գրություն էր ներկայացրել Կ. Պոլսի այն ժամանակվա պատրիարք Մատթեոս արք. Իզմիրլյանին և նրան առաջարկել էր իր ամբողջ հոտով տեղափոխվել ու ընդմիշտ հիմնավորվել Անգլիայի գաղութներից Բրիտանական Կոլումբիայում (ներկայիս Կանադայի հյուսիս-արևմտյան մասը)՝ դա վերածելով հայոց նոր հայրենիքի[1]: Պատրիարքը այդ առաջարկն անպատասխան էր թողել:

Եվ հիմա նորից էր կենդանություն առել ազգովին երկրից հեռանալու գաղափարը:

Այո՛, գնալ, փախչել, գնալ հեռու, շա՜տ հեռու, անգամ աշխարհի ծայրը, միայն թե ազատվել Թուրքի ու քրդի արյունոտ ձեռքերից:

Այդ գաղափարին հետևողներն այժմ գտնում էին, որ հիմնավորվելու ամենահարմար տեղը Աֆրիկան է, և դա պատճառաբանում էին հետևյալ հանգամանքներով.

1) Աֆրիկյան մայրցամաքը հեռու չէ Հայաստանից, ուստի քիչ կլինեն այնտեղ տեղափոխվելու հետ կապված ծախսերը, այնինչ հեռավոր գաղթավայրեր գնալը ավելի մեծ դրամական միջոցներ և կորուստներ կպահանջի, 2) Մայրցամաքը դեռ լիովին բնակեցված չէ, շատ են ազատ տարածությունները, 3) Եվրոպական տերությունները չահագրգռված կլինեն իրենց գաղութներում ունենալու չինարար ձեռքեր, ինչպիսինը հայերինն է, 4) Աֆրիկայի բնիկները, որոնք դեռ գտնվում են քաղաքակրթական զարգացման ցածր աստիճանում, չունեն ազգայնական զգացումներ, հետևապես չեն ծագի «տեղացի» – «եկվոր» հարցերը, որը շատ կարևոր հանգամանք է*:

Հարուցելով հեռավոր ու մոտակա գաղթավայրերի խնդիրը

---

[1] Տե՛ս Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 3, վավ. 6[24], թթ. 1–30:

* Եթե Թուրքահայաստանից հայերը պիտի հեռանային, ապա ամենահարմարը պիտի լիներ ռուսական տիրապետության տակ մտնելը: Բայց բանն այն է, որ ցարական կառավարությունն ամեն տեսակ արգելքներ էր հարուցում արևմտահայերի՝ Ռուսաստանում հաստատվելու ցանկության առջև:

և առաջինին առավելություն տալով՝ ազգովին գաղթելու տեսակետի կողմնակիցներն անխուսափելի ու պարտադիր էին համարում դավանափոխությունը: «Կհարենք կաթոլիկ, բողոքական կամ օրթոդոքս եկեղեցուն և փրկված կլինենք»[1]:

Այս տեսությունը որքան տարօրինակ, նույնքան պարտվողական ու ազգավնաս էր: Դա Թուրքահայության դիմադրական շարժումը քանդող գաղափարներից մեկն էր, որը հակառակ գնալով ժողովրդի ներքին ուժերը զորահավաքելու խնդրին՝ մեծ արգելք եղավ հայության զինման, կազմակերպական ու ապրստամբական գործերին:

Երկրից ազգովին անվերադարձ դուրս գալու կողմնակիցները հայտարարում էին, որ հայության ինքնապաշտպանության գործին, զենք-զինամթերքի գնմանը երբեք որևէ գումար չեն տրամադրի:

Նույն ընթացքն էին բռնել արտասահմանում ընդմիշտ հաստատված նրանց համախոհները: Հայաստանից առանց հետ նայելու հեռացած այդ մարդիկ, որոնք կարողացել էին այս կամ այն երկրում ապրուստի քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծել, աշխատում էին մոռանալ իրենց ինքնությունը, թաքցնում ազգությունը, խուսափում հայրենակիցներին հանդիպելուց, չփվում էին միայն օտար չրջանների հետ, այլ խոսքով՝ ամեն ինչ անում էին որքան կարելի է չուտ ձուլվելու տեղացիների մեջ: Սրանց նմանների համար՝ հայոց ազատագրական շարժումը անեծքի նման բան էր:

Նրանցից մեկը զենք գնելու համար կազմակերպված ընդհանուր հանգանակության ժամանակ վրդովված ասել էր.

«Հայկական խնդիր ըսուածը դեռ չը վերջացա՞ւ, տալէն կործանուեցանք, հոգիներնիս դուրս եկաւ. ինչո՞ւ միչտ կը կատղեցնէք Թուրքը, ալ հերիք չէ՞ ըրածնիդ. վեց ամիս առաջ տասը ֆրանկ տուի «Բարեգործականին», զէնքը ի՞նչ պիտի ընեն, ինքնապաշտպանութիւնը ինչի՞ պէտք է, իմ ի՞նչ գործն է այդպիսի բաներու համար դրամ տալ ... Հայկական հարցը չը վերջացա՞ւ»[2]:

---

[1] **«Արեւելք»,** № 7142, 6 Հուլիսի 1909 թ.:

[2] Տե՛ս **Ստեփան Սապահ-Գիւլեան,** Պատասխանատուները, էջ 42-43:

Պատահական չէ, որ ազգովին երկրից ընդմիշտ գաղթելու գաղափարը հանդիպեց Հայաստանում մնալու և այնտեղ մեռնելու կողմնակիցների ուժգին դիմադրությանը: Սրանք, որ բացարձակ մեծամասնություն էին կազմում, առաջադրում էին իրենց հակափաստարկները, ընդդիմախոսներին հորդորում էին ազգովին գաղթելու ծրագիրը գործողության մեջ դնելուց առաջ լրջորեն խորհել և մանրակրկիտ հաշվարկել ձեռնարկումը. արդյո՞ք նոր միջավայրում հայությունը կունենա տևական ու հաստատուն ապահովություն՝ ցեղային գոյության իմաստով, թե՞ ազգապահպանման մտահոգությունից ծնված ծրագիրն ամենասեղմ ժամկետում կարող է հանգեցնել հայության ինքնության կորստին:

Սահմանադրական-ռամկավար ուսանողական միության օրգան «Վերածնունդ» (Կ. Պոլիս) պարբերականը գրում էր. «Հազարներու, բիւրերու կը հասնի այսօր թիւը անոնց՝ որոնք իրենց ծնած վայրկեանին, մօր կաթին հետ միասին դէպի օտարութիւն մղուելու բնազդ մը կ'իւրացնեն:

Հայաստանցիներն իրենք իսկ կ'երթան լուսաւորութեան կեդրոններու մէջ փճանալու, փոխանակ ջանալու որ լուսաւորութիւնը եւ Ազատութիւնը իրենց իսկ երկրին մէջ տարածուի»:

Պարբերականը հիշեցնում էր, որ վտանգի պահին հայությունը պետք ունի վայրենի խուժանը կասեցնողների, այլ ոչ թե տուն ու տեղ ձգող և հեռուներ փախչողների[1]:

Եթե ՀՅ դաշնակցության ղեկավարներից Սիմոն Զավարյանը դեմ չէր Հայաստանից արտագաղթին, ապա նույն կուսակցության օրգան «Ազատամարտը» տագնապ էր բարձրացնում, որ Հայաստանից ընդմիշտ հեռանալու տրամադրությունները լայն ծավալ են ստանում և խթանում են բնօրրանի հայաթափման ընթացքը: Թերթը ժողովրդին կոչ էր անում «մնալ իր հողին վրայ», քանզի գաղթը սպանիչ է[2]: Որքան էլ անտանելի լինեն

---

[1] **«Վերածնունդ»** (Կ. Պոլիս), № 5, սեպտեմբեր, 1912, էջ 12-13:

[2] **«Ազատամարտ»**, № 6, 16 (29) հունիսի 1909 թ.:

տնտեսական ու քաղաքական հանգամանքները Հայաստանում «Հայը չպիտի [ընդմիշտ] լքէ հայրենիքը, որովհետեւ առանց հայի չկայ Հայաստան»[1]:

Մոտավորապես նույնպիսի տեսակետ էր արտահայտում Դաշնակցության նշանավոր գործիչներից է. Ակնունին: ՀՅԴ Ամերիկայի շրջանային պատգամավորական ժողովին Պոլսից ուղարկած նամակում նա գրում էր.

«Նայեցէ՛ք միշտ դէպի Երկիր, եւ հաւատացէ՛ք նրա ապագային»: Թեև քաղաքական ծանրագույն վիճակը նորից պաշարել է հայությանը, բայց միևնույնն է՝ ազատագրությունը բոնապետական լծից անխուսափելի է: Մնում է ապառաժ համբերություն ունենալ և հավատալ, որ շատերը ներկա սերնդից «կ'երթան բազմելու Հայ ժողովուրդի ներկայացուցչական ժողովի, Հայկական Պարլամենտի մէջ...»[2]:

«Արեւելքի» խմբագիր Երվանդ Սրմաքեշխանլյանը (Երուխան) համոզված էր, որ հեռվում գտնվող օտար հողը երբեք չի կարող հայրենիք դառնալ փոքր ժողովրդի համար, որքան էլ նա չինարար ու տաղանդաշատ լինի: Հնարավո է, որ տեղացիները սկզբում նրան հանդուրժեն, բայց տարիներ անց հնարավոր է նաև հակառակը: «Իմ հաւատքս է, յամառ ու անդրդուելի, թէ հայը – ինչպէս որեւէ ուրիշ ցեղ – մատ մը հեռանալով իր հայրենիքին սահմաններէն՝ տասը մատ մօտեցած կ'ըլլայ իր կորստեանը, իսկ ամէն վտանգ, ամէն կորուստ աչք առած, յամառելով մնալ իր պապերուն երկրին մէջ, կրնայ ապահով ըլլալ իր գոյութեանը մասին»[3]:

Երկրից հեռանալը մերժողներն ընդդիմախոսներին հիշեցնում էին, որ անցյալ դարերում հարյուր հազարավոր հայեր հեռացել են Հնդկաստան, Հունգարիա, Ռումինիա, Բուլղարիա, Հոլանդիա, Եգիպտոս, Ղրիմ, Տրանսիլվանիա, և բոլորը ձուլվել են այդ երկրների ժողովուրդների մեջ՝ իրենց մասին թողնելով

---

[1] **«Ազատամարտ»,** № 13, 24 հունիսի (7 հուլիսի) 1909 թ.:
[2] **«Վէմ»** (Փարիզ), № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 89:
[3] **«Արեւելք»,** № 7111, 30 մայիսի 1909 թ.:

միայն հեռավոր հուշեր: Հակառակ դրան, որքան էլ անտանելի լինի Թուրքի լծի տակ ընկած հայության վիճակը, այնուամենայնիվ, ճիշտը հայրենիքում մնալն է, ուր հայը չի կորչի: «Արմատը քանի մեկուսացուի իր կանանչ ճիւղերէն, նոր-նոր ծիլերը կրնան յօտոցները փթացնել եւ զարնող բազուկներն անդամալուծել»[1],- նշում էր «Արեւելքի» խմբագիրը:

Երուխանի մտածումները մարդկայնորեն ըմբռնելի էին, ընդունելի: Աբդուլ Համիդ II-ը՝ այդ հրեշային էակը, 300.000 հայ կոտորել էր տվել: Արդյո՞ք հնարավոր է, որ մարդկային արգանդը այդպիսի ճիվաղ նորից լույս աշխարհ բերի: Որևէ մեկը դրան չէր հավատում, նաև՝ «Արեւելքի» խմբագիրը, որը գրում էր, թե անհավանական է 30.000-ոց ջարդ, ինչպես տեղի ունեցավ Կիլիկիայում: Եվ ասածը հիմնավորելու համար նա բերում էր հետևյալ պատճառաբանությունները. 1) Անգամ Աբդուլ Համիդն իր սարքած սպանդանոցից հետո 12 տարի դաղար առավ՝ արյան հեղեղները և դիակները մարսելու համար. հիմա, որ չկա այդ հրեշը, հավանական է, որ մինչև հաջորդ ջարդն ավելի երկար տևի կամ հավիտյանս երկարաձգվի, 2) Այժմ օսմանյան երկրի կառավարումն երիտթուրքական կուսակցության ձեռքին է, որը գոնե իր վարկը քաղաքակիրթ աշխարհի առջև անաղարտ պահելու համար չի ցանկանալու հետևել ջարդերի քաղաքականությանը. չէ՞ որ կիլիկյան ջարդերի պատասխանատվությունը նա նետեց նախ Աբդուլ Համիդի վրա, ապա ջանք թափեց այդ մեղքը Աբդուլ Համիդից վերցնել և նետել հայերի վրա, 3) Նոր կոտորածների դեպքում Եվրոպան գործուն կերպով կմիջամտի և կպատժի ջարդարարներին:

Երվանդ Սրմաքեշխանլյանը հարցի քննարկումը վերջացնում էր հետևյալ եզրահանգումով.

«Գաղթելը դասալքութիւն մըն է, եթէ վատութիւն մը չէ, ու նախատինք մըն ալ մեր ցեղին պատմական փառքին դէմ:

Եթէ ուրիշները մեզ կը սպաննեն, մենէ մաս մը, մենք մեր

---

[1] **«Արեւելք»**, № 7111, 30 մայիսի 1909 թ.:

ձեռքովը զմեզ ամբողջովին ջնջելու աւելի ահաւոր եղեռնովը չենք կրնար ծածկուիլ: Ցեղ մը, իրեն սեւ օրերուն իսկ, քիչ մը լաւատեսութեամբ չարժելով գուցէ չահաւոր ըլլայ»[1]:

Իսկ ի՞նչ անենք այժմ, հենց այսօր, այս պահին: Հետևում էր պատասխանը. «Առ այժմ, փրկութեան միակ ճամբան փրկութեան ճամբայ չփնտռելը եւ աննկուն, կոնակ-կոնակի, չրջահայեաց, դէպքերուն եւ իրերուն սպասելն է այն ամեհի ու զրահապատ համբերութեամբ, որով մեր ցեղը գիտցած է համբերել դարերով, երկա՜ր դարերով»[2]:

Երուխանի պես Երվանդ Օտյանը նույնպես հայերին կոչ էր անում չհուսահատվել ու ապրելու նոր կամք դրսևորել: «Արդ, ա՛լ ատենն է որ ինքզինքնիս ժողվենք, աղէտաւոր յուսահատութեան եւ լքումի ճիրաններուն անձնատուր չըլլանք ու չարունակենք մեր ապրելու ճիգը այն կորովով, որով չարունակած ենք հազարաւոր տարիներէ ի վեր»:

«Քիչ մը լաւատես ըլլանք» հոդվածում Ե. Օտյանը գրում էր, որ վայրկյանը գուցե տագնապալից է, բայց ոչ հուսահատական: Ըստ նրա, կարևոր և հուսալից կետն այն էր, որ ազատական վարչակարգը հետզհետե ամրանալու է երկրում, թեև տակավին տարիներ ու տասնամյակներ են պետք, որպեսզի Թուրքիան կատարելապես սահմանադրական երկիր դառնա, «բայց վերջապէս ուղիղ ճամբուն մէջ ենք ու կը սկսինք առաջ երթալ: ... Կը կրկնեմ՝ պէտք է թոթուրուինք, պէտք է քալենք: Սարսափահար ապուշի այս վիճակը ամօթ է մեզի համար»[3]:

Ապագայի նկատմամբ բարի հույսեր ունեցող Երուխանի և Օտյանի տեսակետը շատերը չէին բաժանում: «Իրենց լաւատեսութեան անկեղծութեանը վրայ կը տարակուսիմ ես»[4],- չեչտում էր հակառակ մտածողներից մեկը:

---

[1] **«Արեւելք»,** № 7142, 6 Հուլիսի 1909 թ.:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, № 7112, 1 Հունիսի 1909 թ.:
[4] Նույն տեղում, № 7139, 2 Հուլիսի 1909 թ.:

Գրչի երկու ազնիվ մչակներն ի՞նչ իմանային, որ ընդամենը վեց տարի հետո իրենց ժողովրդի գլխին այնպիսի արհավիրք էր գալու, որի մոտ աբդուլհամիդյան կոտորածները պիտի նսեմանային:

Եթե մինչև 1909 թ. կեսերը Ռուսաստան գաղթած թուրքահայ գաղթականները համեմատաբար հեշտությամբ էին վերադառնում իրենց բնակավայրերը, ապա այդ տարվա վերջերից թուրքական իշխանություններն ստեղծեցին զանազան նոր խոչընդոտներ ներգաղթողների ճանապարհին:

Իր օջախ վերադառնալու համար յուրաքանչյուր գաղթական նախկին 2 ռ. 50 կ. դիմաց այժմ պարտավոր էր թուրքական սահմանային ծառայություններին վճարել 11 ռ. 50 կ.: Սահմանվել էր նաև, որ Ռուսաստանի զանազան քաղաքներից Թուրքիա վերադարձողները սահմանի վրա թուրքական կողմին պետք է ներկայացնեին ռուսական իշխանություններից տրված տեղեկանք, որ իրենց որևէ մեղադրանք չի ներկայացված: Շատերը Ռուսաստանի այս կամ այն վայրից Թուրքիա մեկնելիս նախապես զգուշացված չէին լինում սահմանը հատելու նոր կարգի մասին, չէին ունենում պահանջվելիք տեղեկանքը, ուստի կանգնում էին անելանելի դժվարությունների առջև, որոնց հաղթահարման համար նոր, ավելորդ ծախսեր էին պահանջվում:

ՀԱՅԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԿՐԿԻՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Ինչպես Օսմանյան կայսրության մյուս քրիստոնյաները, հայերը նույնպես դարեր շարունակ չէին կանչվում զինվորական ծառայության:

Եվ դա երկու պատճառով.

1) Թուրքական իշխանությունները և ընդհանրապես թուրքերը չէին վստահում «գյավուրներին», անընդունելի էին համարում, որ զինվորական ծառայության ընթացքում նրանք սո-

վորեն զենք գործածելը: «Մինչդեռ Թուրքն ու քուրդը ազատ էին ուզած զէնքերը կրելու, քրիստոնեաները, մանաւանդ հայերը, նախապէս հասարակ դանակի էլ իրաւունք չունէին»[1]:

2) Զինվորական ծառայությունից ազատվելու դիմաց քրիստոնյաները մեծ տուրք էին վճարում պետությանը (բեդել-ի էսկերիե):

Քրիստոնյաների համար զինվորական ծառայության մերժումը «չատ աղէտալի հետեւանքներ էր ունեցել հայ կեանքում, սրան էին վերագրում յատկապէս հայկական ջարդերը եւ ռազմական ոգու թուլացումը հայերի մէջ»[2],- գրել է Հրաչյա Աճառյանը:

Օսմանյան հեղափոխությունից և սահմանադրության վերականգնումից հետո բանակում պիտի ծառայեին երկրի բոլոր քաղաքացիները՝ առանց հաշվի առնելու ազգային ու կրոնական պատկանելությունը: Այս դեպքում, բնականաբար, վերանում էր զինվորական տուրքը:

Բայց «Միություն և առաջադիմություն» կոմիտեն և երիտթուրքական կառավարությունը ձգձգում էին սահմանադրական այդ նորմի կենսագործումը:

Սույն աշխատության III գրքում հանգամանորեն անդրադարձ է եղել հայոց զինվորագրության հարցին, ցույց է տրվել, թե ինչպես քննարկելով Իթթիհադի ներկայացրած զինվորագրության մասին նախագիծը, Թուրքական պառլամենտի Պատգամավորական ժողովն ընդունել էր այն: Որոշման համաձայն՝ քրիստոնյաները նախկինի պես չպիտի կանչվեին բանակ, բայց դրա փոխարեն նրանցից պիտի գանձվեր նշված զինվորական տուրքը: Որոշումը մեծ դժգոհություն էր առաջ բերել հատկապես Հայաստանում, քանի որ աղքատության դուռը հասած հայ ընտանիքներն ի վիճակի չէին մուծելու տուրքը:

---

[1] ***Հրաչեայ Աճառեան***, *Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչեւ 1915 թ.), էջ 66:*

[2] *Նույն տեղում, էջ 65:*

Այդ իսկ պատճառով պառլամենտը ստիպված էր կրկին անդրադառնալ զինվորագրության հարցին: Կառավարության ներկայացրած նախագիծն ամիսներ ի վեր քննարկվում էր բուռն վիճաբանությունների մթնոլորտում: Դա պաշտպանում էին քրիստոնյա պատգամավորները՝ պահանջելով դրա արագ վավերացումը: Հայ պատգամավորներն այս անգամ ավելի նախանձախնդրորեն էին ուժ տալիս նախագծին: Բացի դրանից, գավառների հայերը բողոքի ժողովներով պառլամենտից պահանջում էին՝ որքան հնարավոր է արագացնել զինվորական օրինագծի վավերացումը, միաժամանակ հայտարարություններ էին անում, թե այլևս ի վիճակի չեն վճարելու ոչ միայն նախկինից մնացած (1908 թ.), այլև 1909 թ. զինվորական տուրքը:

1909 թ. մարտի 5-ին Հայոց Ազգային խառը ժողովը քննության առավ զինվորագրության հարցը և ընդունեց հետևյալ որոշումը. 1) Հայ զինվորները բանակում պետք է հնարավորություն ունենան կատարելու իրենց կրոնական պարտավորությունները, 2) Հայ քրիստոնյան իսլամությունն ընդունելով պետք չէ ազատվի զինվորական ծառայությունից*, 3) Միջնակարգ հայկական դպրոցի աշակերտները մինչև իրենց դասընթացների ավարտը, ինչպես և ուսուցիչներն ու դպիրները պետք է ազատ լինեն զինվորական ծառայությունից, 4) Բարձր Դռան հետ այդ

---

* Կ. Պոլսում մի հայ, իսլամություն ընդունելով ազատվել էր զինվորագրությունից: Օսմանյան օրենքով՝ յուրաքանչյուր արու մուսուլման պարտավոր էր իր զինվորական պարտքը կատարել. ազատ էին մնում միայն այն օտարազգիները, որոնք իսլամություն էին ընդունում: Զինվորագրությունն ընդհանուր դառնալուց հետո, բնականաբար, այս օրենքը պետք է փոխվեր: Կ. Պոլսի հույն պատրիարքը հարցումով դիմել էր կառավարություն իմանալու համար, թե քրիստոնյան մուսուլման դառնալով ազատվո՞ւմ է զինվորական ծառայությունից, թե՞ ոչ: Պատասխան էր ստացվել, որ «չի ազատվում»: Չնայած այդ հավաստիացմանը, իսլամություն ընդունած վերը նշված հայը ազատվել էր զինվորությունից: Կառավարությունը չէր փոխում օսմանյան նախկին օրենքը, որպեսզի շատ քրիստոնյաներ զինվորությունից ազատվելու համար մուսուլման դառնան: Այդ նոր սպառնալիքից դրդված, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը դիմել էր ռազմական նախարարություն և խնդրել հարց բարձրացնել խորհրդարանի առաջ՝ կրոնափոխության օրենքը փոխելու համար, բայց նախարարությունը հարցը առկախ էր թողել:

հարցերի չուրջ բանակցելու համար ստեղծել երեսփոխանական հանձնախումբ հետևյալ կազմով. Հովսեփ Գազազյան, Սարգիս Գնաճյան, Հակոբ Գարայան, Աղասի Աղասյան[1]:

Հանձնախումբը ներկայացավ Բարձր Դուռ և հանձնեց Հայոց Ազգային խառը ժողովի առաջարկները, բայց կառավարությունն ընդառաջ չգնաց դրանց՝ զանազան պատճառաբանություններ բերելով:

Երկար վիճաբանություններից հետո, 1909 թ. ապրիլի 28-ին պառլամենտն ընդունեց քրիստոնյաների զինվորագրության մասին օրենքը[2], որը նախարարների խորհրդի հավանության և հաստատման արժանացավ:

Օրենքի նախագծով նախատեսված էր ծառայության երեքամյա ժամկետ: Թեև պատգամավորների կողմից առաջարկներ էին եղել ծառայության ժամկետը կրճատել երկու տարով և թողնել մեկ տարի, բայց վիճաբանություններից հետո ձայների մեծամասնությամբ ընդունվել էր ծառայության եռամյա ժամկետը:

Աբդուլհամիդյան հեղաշրջման փորձի ձախողումից և Կիլիկիայի ջարդերից հետո հայերը, նկատի առնելով այն հանգամանքը, որ հակահեղափոխական հեղաշրջման օրերին օսմանյան սահմանադրության հենարանը և հետևողական պաշտպանները եղել են քրիստոնյաները, պահանջեցին վերջիններիս ընդհանուր զինվորագրությունից բացի, հենց այդ վստահելի տարրերից զինվորական մի խոշոր ուժ կազմել՝ սահմանադրական կարգը պաշտպանելու համար[3]: Ինչպես որ սպասելի էր, այդ պահանջը կտրականապես մերժվեց:

Զինվորագրության օրենքի ընդունման լուրը մեծ ուրախություն պարգևեց քրիստոնյաներին, հատկապես հայերին: Հայկական մամուլը ողջունեց որոշումը և դա ընդունելու ուղղությամբ խորհրդարանի հայ պատգամավորների տարած աշխատանքը:

---

[1] Տե՛ս **«Արարատ»**, № 3, մարտ, 1910, էջ 217-218:

[2] Տե՛ս **«Սուրհանդակ»**, № 5, 12 հուլիսի 1909 թ.:

[3] Տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 3867, 30 հունիսի (13 հուլիսի) 1909 թ.:

Ոչ-մուսուլմանների զինվորագրության մասին օրենքը որքան ուրախացրեց հայերին, այնքան զայրացրեց առավել ազգայնամոլ Թուրքերին: Սրանք հայտարարում էին, Թե իրենք երբեք Թույլ չեն տա, որ այդ գործը գլուխ գա:

Պառլամենտի ընդունած օրենքն ուժի մեջ կարող էր մտնել միայն սուլթանի վավերացումից հետո: Բայց սուլթան Մեհմեդ V Ռեշադը չէր չտապում, որովհետև նրա վրա ուժգին ճնշում էին գործադրում «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, Կ. Պոլսի և նահանգների առավել հետադիմական շրջանները:

Այդ տեսնելով՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, բազմաթիվ հասարակական գործիչներ նոր դիմումներ էին հղում Ելդըզ և խնդրում սուլթանին արագացնել զինվորական օրենքի վավերացումը:

Կառավարության մեջ կային պաշտոնյաներ, որոնք պաշտպանում էին սուլթանին ուղղված հայերի խնդրանքը:

Այսպես, հայերի զինվորագրության առթիվ ներքին գործերի երիտթուրք նոր նախարար Թալեաթ բեյն ասում էր.

«Հայերը Թուրք պետության ամենագործունյա, խելացի և աշխատասեր տարրն են: Նրանք սիրում են հայրենիքը, շատ բան քաշեցին նրա համար, մեզանից քիչ չաշխատեցին նրա ազատության համար, մեզանից նվազ զոհեր չտվեցին: Այժմ նրանք կմտնեն Թուրքական զորքերի շարքը՝ իբրև զինվոր, և այնտեղ էլ, համոզված եմ, ցույց կտան իրենց: Կարճ, կայսրության ապագա բարօրության, փառքի և զորության համար հայրենիքը նրանցից ավելի է սպասում, քան որևէ ուրիշից»[1]:

Վերջապես, 1909 Թ. հոկտեմբերի 28-ի սուլթանական ֆերմանով, Թուրքական պառլամենտի ընդունած որոշումն օրենքի ուժ ստացավ[2]:

Այդպիսով, Թուրքական բոլոր բարեկարգումներից քրիստոնյաներին, այդ Թվում՝ հայերին, մաս էր ընկել միայն մեկը՝ զինվորական ծառայությունը:

---

[1] ***«Հորիզոն»***, *№ 27, 3 սեպտեմբերի 1909 Թ.:*

[2] *Տե՛ս* ***«Սուրհանդակ»***, *№ 5, 12 հուլիսի 1909 Թ.:*

Սկզբում մուսուլմանները չէին հավատում, թե կառավարությունը կհետապնդի օրենքի կատարումը, բայց երբ տեսան ու համոզվեցին, որ իշխանություններն սկսել են դա լրջորեն կիրառել, փողոց դուրս եկան՝ բողոքելով այդ «դավաճանության» դեմ: Ահա՛ թե Մեհմեդ V-ի կառավարությունը ո՛ր աստիճան կարող է ծաղրի ենթարկել շարիաթը, ասում էին նրանք: Չէ՞ որ շարիաթում պարզ ու որոշակի ասված է, որ քրիստոնյաները զինվոր լինել չեն կարող, որովհետև նրանք մուսուլմանների թշնամիներն են: Ուրեմն, կարելի՞ է արդյոք զենք տալ թշնամու ձեռքը: Ի՞նչ բանի վրա նա կարող է գործածել այդ զենքը, եթե ոչ մուսուլմանների դեմ կռիվ մղելու համար: Դա խելագարություն է, դավաճանություն...

Զինապարտության մասին օրենքի ընդունումը հավասարակշռությունից հանել էր քուրդ ավատապետներին և դա հատկապես այն պատճառով, որ նրանք երկյուղում էին, որ եթե հայ գյուղացի երիտասարդները բանակում սովորեն զենք գործածելը, ապա զորացրվելուց հետո անպայման կձգտեն դա ձեռք բերել և այն ժամանակ քրդերին դժվար կլինի հայերին անպատիժ սպանել կամ կողոպտել՝ իրենց զրկելով «եկամտի» հիմնական աղբյուրից: Ուստի, ինչպես գրում է հայ-քրդական հարաբերությունների խորագիտակ ուսումնասիրող Վահան Բայբուրդյանը, «Էրզրումի, Մուշի և մի շարք այլ վիլայեթների աշիրեթները պահանջեցին չեղյալ հայտարարել քրիստոնյաների զինվորագրության մասին օրենքը, հակառակ դեպքում սպառնալով տհաճություններ պատճառել կառավարությանը...»[1]:

Ինչո՞ւ թուրքահայերը և օսմանյան մեջլիսում նրանց պատգամավորները մեծ ջանադրությամբ ձգտում էին զինվորագրության օրենքի հաստատմանը:

Ինչպես իր տեղում նկատել ենք տվել, գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ նրանք կարծում էին, թե Թուրքիայի հայերի զանգվածային նոր կոտորածների դեպքում, հանձինս թուր-

---

[1] ***Վահան Բայբուրդյան**, Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008, էջ 196:*

քական բանակի հայ զինվորների, Թուրքահայությունը ջարդարարներին դիմադրող և կոտորածները կանխելու ունակ ուժ կունենա: Մյուս պատճառն այն էր, որ հայերն ուզում էին երկրի սահմանադրական կառավարությանը ցույց տալ, որ դարեր շարունակ իրավազուրկ եղած Թուրքահայ ժողովուրդը նույնպես պատրաստ է արյան գնով պաշտպան կանգնել օսմանյան հայրենիքին:

Արդեն այն ժամանակ շատ հայեր չէին ընդունում այդ տեսակետը՝ գտնելով, որ Թուրքական բանակում ծառայող հայ երիտասարդներն ապագա զանգվածային կոտորածների դեպքում ի վիճակի չեն լինի պաշտպան կանգնել իրենց ժողովրդին[1]:

Նման տեսակետ ունեցողները վկայակոչում էին 1905-1907 թթ. Թուրք-հայկական ընդհարումները Կովկասում: Նրանք հիշեցնում էին, թե կովկասահայությունը, որ մինչ այդ, մոտ քառորդ դար, զինվոր էր տալիս ռուսական բանակին, երբ սկսվեց ընդհարումը, նրա ամբողջ ընթացքում այդ բանակի հայ զինվորները հնարավորություն չունեցան զենքով որևէ օգնություն ցույց տալու իրենց ազգակիցներին:

Թուրքիայում առավել ևս բացառված էր հայ զինվորների որևէ գործողություն հօգուտ իրենց ազգի նաև այն պատճառով, որ հայերը Թուրքական բանակում փոքր թիվ կկազմեին բոլոր քրիստոնյա զինծառայողների ընդհանուր թվի 25 տոկոսը, իսկ հայերի թիվը՝ 5 տոկոսից էլ պակաս[2]: Բացի այդ, հայերը մուտք չպիտի ունենային հրամանատարական կազմ, որը և որոշում է զինվորների չարժը: «Մեզմէ զօրք կ'առնեն, բայց երբեք չպէտք է ներուի մեզի նոյնիսկ յուսալ, որ օր մը հայ զօրավար մը, պարզ յիսնապետ մը հասնի: Հոն ալ պիտի մնանք ռայա»[3]: Եթե առանձին հայ զինվորներ փորձեին լքել բանակը և միանալ կոտորածի ենթարկվող ազգակիցներին, միևնույնն է, դրանից օգուտ չէր

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»** (Բոստոն), № 39 (544), 21 սեպտեմբերի 1909 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] **«Արեւելք»**, № 7139, 2 հուլիսի 1909 թ.:

լինի, քանզի նրանք կկոտորվեին, ինչպես մյուս հայ «գյավուր-ները»:*

Ինչ վերաբերում է թուրքական պետությանը նվիրված լի-նելու ճիգերին, ապա դա նույնպես որևէ արդարացում չուներ: 1908 թ. հուլիսյան մեծադղորդ օրերից արդեն անցել էր բավա-կան ժամանակ, բայց այդ ամբողջ ժամանակամիջոցում Թուր-քիայի հպատակ որևէ ազգություն երևան չէր բերել անկեղծու-թյան, ջերմ հայրենասիրության այնպիսի օրինակներ, ինչպիսին հայ ժողովուրդը: Հայերը գտնում էին, որ բոլոր օսմանցիները, իսլամ թե քրիստոնյա, անխտիր պետք է պատրաստ լինեն իբրև զինվոր պաշտպանելու ընդհանուր հայրենիքը, անշուշտ այն պայմանով, որ ցեղերի ու կրոնների նկատմամբ պահպանվի հա-վասարության սկզբունքը: Բայց ընդհանուր հայրենիքին այդ նվիրվածությունը հայերին բան չտվեց: Սահմանադրական Թուր-քիայի իշխանությունները որևէ բան չարեցին ամենափոքր իսկ չափով սիրաշահելու նրան: Ընդհակառակը, բոլոր միջոցներով ցույց էին տալիս, որ հայ ժողովրդի անկեղծ վերաբերմունքը որևէ նշանակություն չունի իրենց համար, հետևապես՝ նրա բա-րեկամությունն իրենց պետք չէ:

Այդպիսի բացահայտ թշնամանքի պայմաններում, որքան էլ ծանր էր զինվորական տուրքը, հայերը պետք է չարունակեին վճարել դա, բայց իրենց զավակներին չուղարկեին ծառայելու Թուրքական բանակում:

Եվրոպական բոլոր երկրների զինվորական օրենքներում զո-րակոչիկ երիտասարդները բաժանվում էին զանազան կատեգո-րիաների՝ համաձայն նրանց ընտանեկան և այլ կարգի հանգա-մանքների: Դա արվում էր նրա համար, որպեսզի ընտանիքը չզրկվի աշխատող ձեռքից, ժողովուրդը չտուժի տնտեսապես: Այդ երկրներում արտոնություններ ունեին նաև մտավոր աշխա-տանք կատարող երիտասարդները, մասնավորապես՝ ուսուցիչ-ներն ու ուսանողները: Դրա նպատակն այն էր, որպեսզի ժողո-

---

* *Մի քանի տարի հետո հաստատվեց այդ տեսակետը: 1915 թ. թուրքերը իրենց արյունոտ սուրն առաջին հերթին իջեցրին օսմանյան բանակի բյուրա-վոր հայ զինվորների գլխին և նրանց անխնա կոտորեցին:*

վուրդը չզրկվեր իր մտավոր ուժերից և չտուժեր կրթության գործը:

Այդ ամենը, սակայն, հաշվի չէր առնված Թուրքիայում ընդունված՝ ոչ-մուսուլմանների զինվորագրության մասին օրենքում:

Սուլթան Մեհմեդ V-ի վավերացումից հետո զինվորական օրենքը մտավ գործողության մեջ, և առաջին իսկ օրերից երևաց քրիստոնյաների համար նրա վնասակարությունը:

Կ. Պոլսի միջպատրիարքարանային հանձնաժողովն անհրաժեշտ էր գտել կառավարության ուշադրությունը հրավիրել հավասարության օրենքը և սկզբունքները խախտող զինվորագրության մի քանի խնդիրների վրա: Հանձնաժողովը պահանջել էր, որ քրիստոնյա ուսուցիչներն ու դաստիարակները վայելեն բոլոր արտոնություններն ու իրավունքները, որոնցից առհասարակ օգտվում են իրենց իսլամ պաշտոնակիցները: Հանձնաժողովը սխալ էր համարել ուսուցիչների զինակոչը, որը կնշանակեր շատ դպրոցներ փակել: Կառավարությունը խոստացավ հաշվի առնել այդ առաջարկությունը, բայց հակառակ տված խոստմանը՝ ապօրինությունները շարունակվում էին տեղի ունենալ և հատկապես՝ հայկական միջավայրում:

Հազիվ 21 տարին լրացրած երիտասարդը, որ ուսուցիչ էր դպրոցում, ստիպված էր թողնել աշխատանքը և գնալ զինվորական ծառայության: Գյուղական փոքրիկ ու աղքատ հայկական տարրական դպրոցը, որ հազիվ կարող էր մի ուսուցիչ պահել, ուսումնական տարվա սկզբին հանկարծ զրկվում էր նրանից, և դպրոցի դռները փակվում էին բազմատասնյակ երեխաների առաջ: Իշխանությունները հաշվի չէին առնում ո՛չ դպրոցական վարչությունների միջամտությունները, ո՛չ էլ կարևորություն էին տալիս ուսուցչի կրթական վկայականին:

Բազմաթիվ հայկական տարրական դպրոցներ, դեռ նոր բացված, իրար հետևից փակվում էին[1]:

Այսպես, 1910-1911 թթ. ուսումնական տարվա սկզբին ուսուցիչներին բանակ զորակոչելու պատճառով Մշո դաշտի մեկ

---

[1] ***«Հորիզոն»**, № 248, 7 նոյեմբերի 1910 թ.:*

տարի առաջ բացված հայկական դպրոցներից փակվել էր 42-ը: Մոտավորապես նույն պատկերն էր Էրզրումի նահանգում, որտեղ տարրական դպրոցների կեսից ավելին 1910 թ. աշնանը դադարեցրել էր իր աշխատանքը:

Օսմանյան բանակի ներքին կյանքում բան չէր փոխվել. այնտեղ նույն բռնապետական կարգերն էին, ինչպիսիք կային Աբդուլ Համիդի օրոք: Բանակը կազմված էր մի քանի հարյուր հազար հաշվող մարդ-մեքենայից, որն անտրտունջ ու անմռունչ կատարում էր վերից եկած հրամանները և առաջվա նման պատրաստ էր ամեն տեսակ բռնությունների ու արյունահեղության:

Քանի որ Թուրքիայում քրիստոնյաներն ընդհանրապես սովոր չէին զինվորության չարքաչ կյանքին, իշխանությունները քրիստոնյա հասարակության պետերին խոստացել էին միաժամանակ փոքր-ինչ մեղմ կերպով վարվել նրանց համայնքների զինվորների հետ:

Բայց տված խոստումը չկատարվեց:

Պատրիարքարանները խնդրել էին կառավարությանը, և վերջինս էլ խոստացել էր քրիստոնյա զինվորներին ծառայության չուղարկել զուտ խալամ բնակչությամբ վայրեր, ինչպես օրինակ՝ Հիջազ, Եմեն, Տրիպոլիս: Բայց դրժելով խոստումը՝ կառավարությունը հայ զինվորների մի մասն ուղարկել էր հենց խալամության երկու սրբազան կենտրոններից մեկի՝ Մեդինայի կողմերը, և որևէ ուշադրություն չէր դարձնում այդ առթիվ արած արդար բողոքներին:

Զինվորագրված հայ երիտասարդները պետք է հարմարվեին թուրքական բանակային ծառայության պայմաններին: Բայց այդպես չեղավ, քանի որ առաջին իսկ օրերից նրանց վիճակված էր կրել ոչ միայն զինվորական կյանքի բոլոր դառնությունները, այլև ազգային և կրոնական խտրականության ամենավայրենի դրսևորումները:

Բանակում հանգստյան օր էր կիրակի օրը՝ թե՛ հրամանատարների և թե՛ զինվորների համար, բայց քրիստոնյաները կիրակի օրերին հաճախ ազատ չէին լինում. նրանց ստիպում էին լարված աշխատել, նույնիսկ զրկված էին իրենց հոգևոր մխի-

թարությունններից: Իսլամ զինվորներն ուրբաթ օրերին նույնպես ազատ էին իրենց սովորական ծառայությունից ու զբաղմունքներից, իսկ այլակրոններն այդ օրը նույնպես ծառայում էին, ինչպես չաբաթվա մյուս բոլոր օրերին:

Հայ զինվորները ենթարկվում էին ոչ միայն հրամանատարների, այլև մուսուլման չարքային զինվորների ծաղր ու ծանակին, նախատինքի և ստորացումների[1], իսկ հրամանատարների կողմից ծեծն ու ջարդը սովորական բաներ էին: Քրիստոնյա զինվորների հանդեպ անարգական վերաբերմունքը ծայրագույն վիրավորանք էր նրանց ազգային և մարդկային արժանապատվությանը:

Անտանելի էր ամեն քայլափոխի քրիստոնյա զինվորների հավատքի այպանումը: Ոչ միայն հրամանատարները, այլև մուսուլման չարքային զինվորները նրանց դիմում էին «գյավուր» կամ «քյաֆիր» ածականներով: Պակաս չէին զինվորների ազգային և կրոնական զգացմունքներին ուղղված հայհոյանքները: «Մահմեդականները չէին կարողանում հաչտ աչքով նայել երէկւայ բայաների ներկայութեանը զօրքի չարքերում»[2], - գրում էր Ա-Դօ-ն:

Անդրադառնալով օսմանյան բանակում իրենց անագորույն վիճակից քրիստոնյա զինվորների դժգոհության չարժառիթներին՝ Կ. Պոլսում հրատարակվող հնչակյան «Կոհակ» թերթը գրում էր.

«Արդարեւ, ի՞նչը կրնայ աւելի զայրացնել քրիստոնեայ մը, քան այլազգի զինակիցներու ներկայութեամբ **կեավուր** կոչուիլը իր սպայի կողմէն, ինչ որ դժբախտաբար յաճախադէպ ըլլալով քանիցս նոյն իսկ լրագրութեան մէջ արձագանգ գտաւ:

Կեավուր, հիմա՞ ալ...»[3]:

---

[1] Տե՛ս **Հրաչեայ Աճառեան**, Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչեւ 1915 թ.), էջ 65:

[2] Տե՛ս **Ա-Դօ**, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թուականներին, Երեւան, 1917, էջ 4-5:

[3] **«Կոհակ»**, 24 դեկտեմբերի 1910 թ.:

Թուրքական զորամասերի հրամանատարները հայերին և մյուս այլազգի քրիստոնյա զինվորներին արգելում էին կրոնական ծիսակատարություններ կատարել, խաչ կրել ու խաչակնքել, միաժամանակ ստիպում էին գլուխներն ածիլել, պաս չպահել և այլն: Դրանք վերաբերում էին նաև բանակ կանչված քրիստոնյա հոգևորականներին:

Իթթիհադական կառավարությունը, որ ընդունում էր օսմանյան բանակում իսլամ կրոնավորների (իմամների) ներկայության կարևորությունը, մերժել էր ընդունել քրիստոնյա քահանաների պետքը: Դրա հետևանքով, բանակում ծառայության ժամանակ մահացած քրիստոնյա զինվորները թաղվում էին առանց քահանայի ու ծեսի:

Հայ զինվորների վիճակը հատկապես անտանելի էր մեծ քաղաքներից դուրս բանակած զորամասերում:

Սոսկալի բաներ էին պատմում Մուշի զորամասի մասին: Այդ դժոխք-տանջարանում իսկական կոտորած էր անում 1910 թ. ամռանը բռնկված տիֆը, որին զոհ էր գնացել զինվորների քառորդ մասը: Զկար բժշկական օգնություն. բժիշկների և դեղորայքի պակասի պատճառով օրական 5-10 զինվոր էր մահանում: Այստեղ առողջապահության ողբալի վիճակի ապացույցներից էր այն, որ առողջ զինվորներին պառկեցնում էին հիվանդների անկողիններում, որոշ հիվանդների՝ նույնիսկ մեռածների կողքին, իսկ երբ առողջ զինվորները բողոքում էին, դաժան ծեծի էին ենթարկվում[1]:

Անմարդկային վերաբերմունքը վրդովեցնում էր քրիստոնյա զինվորներին: Նրանցից չատերն սկսել էին փախչել զորամասերից: Դասալիք հայ զինվորների մի մասը կարողանում էր փախչել այլ երկրներ, այդ թվում՝ հեռավոր Ամերիկա:

Բայց բանակից դասալքումը փրկություն չէր: Քչերին էր հաջողվում փախչել երկրից: Դասալիքների բացարձակ մեծամաս-

---

[1] Տե՛ս **Համբարձում Երամեան**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, Աղեքսանդրիա, 1929, էջ 154:

նությունը ձերբակալվում էր, և 1909 թ. հունիսի 29-ի օրենքի համաձայն՝ դաժան պատիժների ենթարկվում:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, հայկական կազմակերպությունները և գործիչները դեմ էին բանակից հայ զինվորների դասալքումին, զենքին նրանց տիրապետելը և ընդհանրապես զինվորական ծառայությունը համարում էին չափազանց կարևոր հայության համար՝ զինվորական ուժ պատրաստելու տեսակետից: Մանավանդ կիլիկիահայության կոտորածներից հետո նրանք դա հրամայական անհրաժեշտություն էին համարում:

Բանակից հայ զինվորների փախուստի և զորակոչից հայ երիտասարդների խուսափելու առթիվ «Բիւզանդիոն» թերթը գրում էր. «Եւ այս եղած էր արդարեւ հայուն դերը. փախչիլ, միշտ փախչիլ...: Փախչիլ կռիւէն, փախչիլ կոտորածէն, փախչիլ պարտականութենէն եւ ամէնէն վերջն ալ փախչիլ, ահա՛, զինուորագրութենէն...»[1]:

Մայր աթոռի «Արարատ» հանդեսը, քննելով այդ անցանկալի երևույթը, ընդգծում էր. «Զինուորութիւնը քաղաքացիական մի գեղեցիկ պարտականութիւն է դէպի իւր հայրենիքը, եւ մի եւ նոյն ժամանակ կարգապահութեան, անձնական արժանապատուութիւնը յարգելու մի լաւ միջոց»[2]: Հանդեսը հիշեցնում էր, որ 1886 թվականից Կովկասում զինվորագրությունը բոլոր քրիստոնյաների համար պարտադիր է: Զինվորագրության առաջին տարիներին հասկանալի էր ժողովրդի ոչ հոժարակամ վերաբերմունքը. բայց 24 տարվա մեջ մեր ժողովուրդը տեսել և համոզվել էր, որ զինվորագրությունը բարիք է, վասն զի պատանիները գյուղական չրջանից դուրս գալով զարգանում են մտավորապես և ֆիզիկապես, սովորում են տոկունության, կարգապահության և իրենց մտքերը կանոնավոր արտահայտելուն: Երկյուղն ու վեհերոտությունը, որ մարդկային արատներից ամենից նողկալին է, տեղի է տալիս և զօրանում է անձնապաշտ-

---

[1] **«Բիւզանդիոն»**, № 4319, 24 դեկտեմբերի 1910 թ. (6 հունվարի 1911 թ.):
[2] **«Արարատ»**, № 1, հունվար, 1910, էջ 22:

պանության ու պարտքի կատարման գիտակցությունը: Այս ամենը օգուտ լինելով հայ զինվոր-անհատի համար, օգուտ էր նաև ազգին, որը գոնե երևութապես ձեռք էր բերում որոշ վստահություն: Նկատի առնելով հենց այդ հանգամանքը, հանդեսի հոդվածագիրը հարց էր տալիս. «Մի՞թէ արժէ առ առաւելն 3 տարի զինուորական պարտք կատարելու համար ցմահ խեղանդամ լինել եւ մնալ»[1]:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, հայկական չրջանների այդ մտահոգությունից դրդված, հրահանգեց առաջնորդարաններին՝ կազմակերպել այցելություններ իրենց թեմերի տարածքներում տեղակայված զինվորական մասեր, զրույցներ ունենալ հայ զինվորների հետ, նրանց հորդորել ծառայությունն անցկացնել բարեխղճորեն, աշխատել լիարժեք տիրապետել զինատեսակներին, հարմարվել կարգապահական կանոններին:

1910 թ. մայիսի 24-ին Եղիշե Դուրյան պատրիարքն իր հրապարակած անդրանիկ կոնդակում անդրադարձել էր նաև հայոց զինվորագրության խնդրին և հորդորել. «Զթողունք որ զինուորութեան պատիւն անարգուի մեր մէջ դասալիք ստորնութեամբ, որ ընդդէմ է քաղաքացիական առաքինութեան»[2]:

Նույն տարվա վերջերին, նոր տարվա և ծննդյան տոների առթիվ, Վանի հայկական կազմակերպությունները Հիսուսյան վարժարանում ջերմ հյուրասիրություն ցույց տվեցին քաղաքում տեղակայված հայ և մյուս քրիստոնյա զինվորներին: Եղան ճառեր, որոնց հեղինակները զինվորներին կոչ էին անում հաղթահարել բանակային կյանքի դժվարությունները և տուն վերադառնալ ռազմական գործին լիովին տիրապետած:

Անդրադառնալով քրիստոնյա զինվորների այդ ընդունելությանը, Կ. Պոլսի հայկական թերթերը նշում էին, որ դեպքից դեպք տեղի ունեցող նման միջոցառումները չեն կարող ոգևորություն առաջացնել բանակում ծառայող քրիստոնյա զինվոր-

---

[1] ***«Արարատ»**, № 1, հունվար, 1910, էջ 22-23:*

[2] *Նույն տեղում, № 8, օգոստոս, 1910, էջ 699:*

ների մոտ կամ նրանց անտանելի վիճակը փոխել: Հայկական կազմակերպություններն ու առաջնորդարանները պետք է ձգտեն, որպեսզի բանակում քիչ թե շատ փոխվի դժնի վերաբերմունքը հայ զինվորների հանդեպ և զինվորական ծառայությունը դառնա տանելի, այլապես ավելորդ է մտածել, թե հնարավոր է հայ զինվորականություն ունենալ:

Քրիստոնյա զինվորների նկատմամբ թուրք հրամանատարների և թուրք զինվորների վերաբերմունքն անփոփոխ էր: Ելնելով դրանից, հունաց պատրիարքը կառավարությունից պահանջել էր, որ քրիստոնյա երիտասարդները զինվորական պարտքը կատարեն իրենց բնակավայրերում. նրանցից կազմել ***առանձին վաշտեր****. նրանք պետք է ունենան աղոթատուն, քահանա, ազատ լինեն կատարելու իրենց կրոնական ծեսերը. իրենց կրթության և ծառայության համեմատ քրիստոնյա զինվորներին հնարավորություն տալ ստանալու սպայական աստիճան և այլն[1]:*

Իր հերթին, հրեից ռաբունապետը հրեա զինվորների համար ևս կառավարություն ներկայացրեց մի շարք պահանջներ[2], նույնիսկ հարց առաջադրելով, որ հրեա զինվորներին տրվելիք կերակուրները հրեա խոհարարները պատրաստեն[3]:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը մի պատվիրակություն ուղարկեց հունաց պատրիարքարան, որը լիակատար համաձայնություն հայտնեց հայոց արած առաջարկներին: Միաժամանակ, հայոց պատրիարքարանը կառավարություն ներկայացրեց իր առաջարկությունները, որոնց թվում առաջնայինը հայ հոգևորականներին բանակ չկանչելու պահանջն էր:

Քննելով այդ բոլոր առաջարկությունները՝ նախարարների խորհուրդը մերժեց դրանք: Նախարարները գտնում էին, որ եթե քրիստոնյաներից առանձին վաշտեր կազմվեն, առաջ կգան բազում անպատեհություններ ոչ միայն զինվորական ծառայու-

---

[1] *Տե՛ս* ***«Արարատ»****, № 1, հունվար, 1910, էջ 22-23:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 23:*

[3] *Տե՛ս նույն տեղում, № 12, դեկտեմբեր, 1909, էջ 936:*

թյան իմաստով, այլև այն պատճառով, որ ազգային պահանջների առջև տեղի կտա համաօսմանյան կարգը: Նրանք ասում էին, որ սահմանադրությունը կատարյալ և ամբողջական հավասարություն է տալիս կայսրության ժողովուրդներին՝ առանց կրոնի ու ազգի խտրության և նրանց բոլորին դնում է նույն դրոշի տակ:

Թերևս բացառություն էր հայերի պահանջներին մասնակիորեն ընդառաջելը: Կառավարությունը, նկատի առնելով հայոց պատրիարքարանի համապատասխան թագրիրները, որոշել էր զինվորագրությունից ազատել պատրիարքներին, առաջնորդներին, վարդապետներին և քահանաներին: Ազատվում էին նաև սարկավագները՝ որպես քահանայության ընտրելիներ, դպիրները՝ որպես եկեղեցու պաշտոնյաներ եթե, իհարկե, պատրիարքարանից վկայված լինեն: Միաժամանակ, Թուրքիայի զինվորական նախարարությունից հայտնել էին, որ հայ զինվորները հավանաբար չեն ուղարկվի Եմեն, նաև այն վայրերը, ուր եկեղեցիներ չկան[1]:

Բանակից տուն ուղարկած նամակներում արտացոլված էր հայ զինվորների տառապանքը: Նրանք դժգոհում էին իրենց վիճակից, նկարագրում, թե ինչպես են առանց պատճառի պարբերաբար ենթարկվում ծեծի, խոշտանգումների ու ծանր զրկանքների: «Մենք երկրի խորթ զավակներ ենք», «Մենք աչքի փուչ ենք» և նման խոսքերով էին նրանք իրենց բանակային ծանր կյանքի մասին տեղեկացնում հարազատներին:

Հայը դյավուր էր ոչ միայն բանակում, այլև Օսմանյան կայսրության ողջ տարածքի վրա: «Ցաւով կը տեսնենք, թէ դեռ մեր խլամ հայրենակիցներուն մտքին մէջ արմատացած չէ մեզ իրենց հաւասար օսմանցի ճանչնալու տարրական համոզումը»[2],- գրում էր Իզմիրում հրատարակվող «Դաշինք» թերթը:

---

[1] Տե՛ս **«Արարատ»**, № 10, հոկտեմբեր, 1909, էջ 931:

[2] **«Դաշինք»**, № 42, 6 (19) նոյեմբերի 1911 թ.:

ՏԵՎԱԿԱՆ ՀՈԳՍԵՐ
ԿՈՎԿԱՍԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Մկրտիչ Խրիմյանի մահից հետո հայ հասարակությանը հուզող խնդիրներից մեկն Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունն էր, որը լինելու էր հայկական իրականության նշանավոր երևույթներից մեկը: Դա միանգամայն հասկանալի է, քանզի առաջվա պես կարևորագույն նշանակություն ունեին կրոնական հարցերը:

Ռուսաստանում, Թուրքիայում թե Պարսկաստանում, նաև ամենուր, այդ թվում նաև լուսավորյալ Եվրոպայում, պետականությունից զուրկ հայ ազգի ներկայացուցիչը շարունակում էր մնալ կաթողիկոսը:

Կաթողիկոսական խնդիրը դեռ նոր էր սկսել քննարկվել թերթերի էջերում, երբ 1908 թ. մարտի կեսերին պետական դումայի աջակողմյան խմբակցության պատգամավորները հարցապնդում արեցին՝ պահանջելով պատասխանել, թե ի՞նչ հիման վրա է կառավարությունը հայերին թույլ տալիս նոր կաթողիկոս ընտրել, մանավանդ եթե նկատի առնվի, որ ոչ հեռու անցյալում էջմիածինն ինչպես է նպաստել հայերի շրջանում հակակառավարական տրամադրությունների աճին հատկապես 1903-1905 թվականներին՝ Հայ եկեղեցու ունեցվածքի պետականացման կապակցությամբ: Միաժամանակ, նրանք ներքին գործերի նախարարության ղեկավարությունից պահանջեցին ընդհանրապես Հայ եկեղեցու գործերի վիճակի մասին հաղորդում տալ դումայում:

Բայց նույնիսկ Ստոլիպինի կառավարությունը չգնաց կաթողիկոս չընտրելու կտրուկ, անօրինական քայլին՝ կաշկանդված լինելով Հայ եկեղեցու "Положение"-ով («Պոլոժենիե»):

Կաթողիկոսական խնդիրը, որը հայ մամուլի էջեր էր բարձրացել դեռևս 1907 թ. վերջերից, 1908 թ. ապրիլի սկզբներից այլևայլ հասարակական շրջանակներում լայն քննարկման

առարկա էր դարձել: Կովկասահայ թերթերի էջերը լի էին Հայ եկեղեցու պատմության, ազգային պետականությունից զուրկ ժողովրդի գոյապայքարում նրա խաղացած դերի, նշանավոր հայ հոգևորականների ազգանվեր ծառայությունների և թողած ավանդների, եկեղեցու ներքին կյանքի մասին տարաբնույթ հոդվածներով ու նյութերով: Մամուլի խիստ քննադատության կենտրոնում էին հատկապես հոգևոր բարձր դասի բարքերը, ժողովրդի հոգսերից ու տառապանքներից նրա կտրված լինելը: Մեծ տեղ էր հատկացվում նոր ընտրվելիք կաթողիկոսի անելիքներին, իշխանությունների հետ էջմիածնի փոխհարաբերություններին և այլն:

Մամուլի քննարկումների արդյունքում ծագել էին մի շարք էական խնդիրներ, որոնցից էին.

1) Ժողովուրդը ի՞նչ կերպ, ի՞նչ ձևով պետք է մասնակցություն բերի ընտրություններին.

2) Ռուսաստանում կա՞ն հարմարագույն և արժանավոր թեկնածուներ կաթողիկոսության համար, թե՞ նրանց պետք է որոնել Թուրքիայում.

3) Հնարավո՞ր է, որ աշխարհական անձն ընտրվի կաթողիկոս.

4) Հնարավո՞ր է, որ վարդապետներից նույնպես առաջադրվեն կաթողիկոսի թեկնածուներ:

Հարցերի այդ ցանկը հետագա ամիսներին գնալով մեծացավ: Բայց 1908 թ. երկրորդ կեսին աշխույժ քննարկվում էին հատկապես վերջին երկու հարցերը:

Առաջին հայացքից տարօրինակ այս առաջարկները գալիս էին ազատական ճամբարից, որի տրամադրությունների առավել ցայտուն արտահայտիչը «Մշակ» թերթի տեսաբան Համբարձում Առաքելյանն էր:

Նա գտնում էր, թե ըստ ավանդության և ըստ եկեղեցական կանոնական սովորության և իրավունքի, աշխարհականներից ու վարդապետներից կաթողիկոս ընտրելը բացառված չէ: Հայ եկեղեցին միայն հայ կրոնավորներին չի պատկանում, այլ պատկանում է նաև հայ աշխարհականներին: Հայոց հավատքի տները՝ եկեղեցիներն ու վանքերը, կառուցվել են ոչ թե եկեղեցա-

կանների, այլ աշխարհական ունևորների միջոցներով և հայ գյուղացիների և արհեստավորների բազկի ուժով: Կրոնական դասն իր գոյությունը պահպանում է աշխարհականների աշխատանքով: Ուրեմն, ենթադրելի է, որ հայ աշխարհականները ոչ պակաս (եթե ոչ ավելի) իրավունք ունեն իրենց միջից ազգի հովվապետ ընտրելու: Եթե մի աշխարհական իր հմտությամբ, կրթությամբ ու գիտելիքներով համապատասխանում է եպիսկոպոսին ներկայացվող պահանջներին, ապա ինչո՞ւ նրան արգելք հանդիսանալ լծվելու կաթողիկոսական ծառայության:

Համբարձում Առաքելյանը հիշեցնում էր, որ, օրինակ, Ավետարանական եկեղեցում որևէ արգելք չկա երեց կամ եպիսկոպոս ձեռնադրել ամուրի կամ ամուսնացած աշխարհականներից: Կարգն այդպես է եղել նաև Հայ եկեղեցում՝ նրա գոյության առաջին դարերում: Հայ եկեղեցու պարտադիր կանոնների մեջ չի եղել և չկա մեկը, որի ուժով աշխարհականին արգելվի եպիսկոպոս կամ կաթողիկոս ընտրվել: Դա հնարավորություն է տվել 854 թ. կաթողիկոս ընտրել Զաքարիա անունը կրող աշխարհականին, որը նույն օրը ձեռնադրվել է սարկավագ, քահանա, եպիսկոպոս և կաթողիկոս՝ Զաքարիա Ա Զագեցի անունով: Ճիշտ է, այդ և երկու ուրիշ դեպքերից հետո աշխարհականներից այլևս հայոց կաթողիկոս չի ընտրվել, բայց պետք է նկատել, որ հետագայում դա դարձել է դարերի ընթացքում նվիրագործված սովորություն միայն, այլ ոչ թե Հայ եկեղեցու ոգուց բխած կանոն:

Եթե պատմության ընթացքում երեք աշխարհական է կաթողիկոս ընտրվել (Հուսիկ ու Ներսես Պարթևները՝ 4-րդ դարում ու հիշյալ Զաքարիան), ապա վարդապետական դասից կաթողիկոս ընտրելու դեպքերը չորսն են:

Երբ 1441 թ. Ամենայն հայոց կաթողիկոսական աթոռը Սսից փոխադրվեց Էջմիածին, 700 հոգուց բաղկացած ժողովում կաթողիկոս ընտրվեց Կիրակոս վարդապետը: 1629-ին կաթողիկոս ընտրվեց Մովսես վրդ. Սյունեցին (Տաթևացին), 1655-ին՝ Հակոբ վրդ. Ջուղայեցին, 1763-ին՝ Սիմեոն վրդ. Երևանցին[1]:

Կաթողիկոսական ընտրությունների առթիվ հայկական հա-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 66, 23 մարտի 1908 թ.:*

սարակական շրջաններում հայտնվում էին այլևայլ կարծիքներ ևս, երբեմն՝ ականջի համար անընկալելի:

Օրինակ՝ առաջարկվում էր Հայ եկեղեցում վերացնել կաթողիկոսությունը՝ որպես ավելորդ չքեղություն[1]: Այդ տեսակետն առաջ քաշողների թվում դարձյալ Համբարձում Առաքելյանն էր, որը հակառակ այդ հարցում «Մշակի» և ընդհանրապես ազատականների բռնած ուղղությանը, իր իսկ թերթում տպագրած հոդվածներում իր մոտեցումը փորձում էր հիմնավորել զանազան փաստարկներով: Նա, օրինակ, մատնացույց էր անում այն փաստը, որ հարևան վրաց ազգը չունի կաթողիկոսություն, բայց Վրաց եկեղեցին իր ժողովրդի կյանքում հաջողությամբ կատարում է այն նույն դերը, ինչ Հայ եկեղեցին՝ հայոց մեջ: Շեշտելով հայոց կաթողիկոսության անկարևորությունը՝ նա ընթերցողներին փաստորեն առաջարկում էր կատարյալ անտարբեր վերաբերմունք ունենալ կաթողիկոսի առաջիկա ընտրությունների նկատմամբ:

1908 թ. հուլիսին երիտթուրքական հեղափոխության հաղթանակից և օսմանյան սահմանադրության վերահաստատումից հետո էջմիածնի կաթողիկոսական իշխանությունն ավելորդ համարողների փաստարկներին ավելացավ նաև մեկը: Նրանք գտնում էին, որ այդ սահմանադրությունը միանգամից որոշել է թուրքահայ ժողովրդի բարօր ապագան, ուստի հետայսու խոսք անգամ չի լինելու նորընտիր կաթողիկոսի քաղաքական-դիվանագիտական դերի մասին, այսինքն՝ միջազգային ոլորտում Թուրքահայաստանին առնչվող խնդիրներին նրա միջամտությունն այլևս ավելորդ է լինելու:

Թուրքահայ գործիչների թվում նույնպես քիչ չէին նրանք, ովքեր էջմիածնի կաթողիկոսությունն ավելորդ էին համարում: Այդպիսիք չատ էին նամանավանդ Կ. Պոլսում: Նրանք ավելի կարևոր նկատելով պատրիարքական աթոռը, գտնում էին, որ էջմիածինն ընդամենը մի վանք է, ուր կաթողիկոսի գործը պարզ վանահայրությունն է՝ շրջապատված ինքնամոլ ու նենգամիտ միաբաններով:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 57, 13 մարտի 1908 թ.:

Հ. Առաքելյանի առաջարկին արձագանքեցին տարբեր հասարակական ուժեր: Անտարբեր չմնացին նաև քաղաքական կուսակցությունները:

Այսպես, ծայրահեղ ձախակողմյանները (հնչակյաններ, սոցիալ-դեմոկրատներ, սոցիալիստ-հեղափոխականներ), հավատարիմ իրենց ծրագրերին, մամուլի («Երկրի ձայնը» և այլն) էջերում, մանավանդ մասնավոր ու հրապարակային ժողովներում այն տեսակետն էին պաշտպանում, թե կաթողիկոսության, որպես կղերական հաստատության, պահպանմամբ չահագրգռված է միայն հայ բուրժուազիան, և որ կրոնը ո՛չ անցյալում է ծառայել և ո՛չ էլ գալիքում ծառայելու է հայ աշխատավոր ժողովրդի չահերի պաշտպանությանը, հետևապես զուր ժամավաճառություն է հայոց կաթողիկոսական խնդրով զբաղվելը:

Ինչ վերաբերում էր Դաշնակցությանը, ապա նրա թերթերը դեպքից դեպք էին անդրադառնում կաթողիկոսական խնդրին, իսկ կուսակցությունն ինքը որոշակի կարծիք չէր արտահայտում հայ ժողովրդի կյանքում Էջմիածնի դերի մասին:

Խնայելով կաթողիկոսական ինստիտուտը, բայց վկայակոչելով Էջմիածնում ստեղծված անմխիթար վիճակը, Դաշնակցության մամուլն իսկական արշավանք սկսեց հայ կղերի դեմ՝ չխնայելով ո՛չ եպիսկոպոսական դասը, ո՛չ վարդապետներին և ո՛չ նույնիսկ գյուղական քահանայությանը: Որքան էլ տարօրինակ է, կրոնական դասի դեմ անզիջում կրքոտությամբ հանդես էին գալիս ոչ թե աստվածամերժ բոլշևիկները, այլ նրանք, ովքեր ցարիզմի՝ Հայ եկեղեցու գույքը բռնագրավելու օրերին (1903 թ.) ամուր կանգնել էին Էջմիածնի թիկունքում և կռվի մեջ էին մտել՝ պաշտպանելով նրա իրավունքները: Հիմա դաշնակցական մամուլն ընկել էր մյուս ծայրահեղության մեջ:

Դիմենք մեկ օրինակի միայն:

Կ. Պոլսում հրատարակվող դաշնակցական «Ազդակը» «Սեւ փորձանքը» վերնագրով հոդվածում (որի հեղինակը Գեղամ Բարսեղյանն էր) գրում էր. «Կղերը իրր մութ եւ ապականած տարը,- եւ տեղը չէ հոս ատոր պատճառները քննախուզելու,- մեր պատմութեան մէջ ալ եղած է միշտ սկզբնապատճառ խաւարի ու գերութեան, հեղինակը՝ ցեղային ինքնագիտակցութեան

ոչնչացման, դաւաճանութեան, աւազակութեան, գաղտնախորշերու մէջ գործուած ոճիրներու, «սեւ պատարագ»ներու բազմազան տեսակներուն: Բացառութիւնները չեն սրբագրեր ընդհանուրը, եւ եթէ առաջին հայրապետները հայ ժողովուրդին օգտակար եղած են՝ առաջին հայ մատենագրութիւնը ստեղծելով, այն ալ գիտենք թէ միշտ կրօնական ստուերամած ոգւովը, եթէ մեր կղերը ընծայած է կրօնական քերթողութեան չքնաղ ծաղիկը՝ Նարեկացին, եւ եթէ, ժամանակակից կեանքին մէջ, Աշտարակեցի մը կամ Խրիմեան մը յառաջապահներ եղան ազատութեան մարտերու, եւ իրենց հետեւորդներ ունեցան, բոլոր ատոնք պատճառ մը չեղան բարձրացմանը մեր կղերին, որ իր բոլոր երեւոյթներուն եւ պայմաններուն մէջ, կէս-քաղաքային հանգամանքներուն թէ զազիր անապատականութեան մէջ, առաջնորդական աթոռներու թէ վանահայրական դիրքերու վրայ, առհասարակ հանդիսացաւ միեւնոյն կեղծապարիշտ, յետադիմական, անխիղճ եւ մակաբոյծ գոյութիւնը, սառը գործիքը բոլոր ատեններու բռնակալութեանց, անողոք թշնամի բոլոր արդար եւ մարդկայնական շարժումներու: Այսպէս եղաւ ո՛չ միայն Լուսաւորչական, այլ եւ տարբեր դաւանանքներու եւ յարանուանութեանց պատկանող հայ կղերին մէջ ալ – միշտ բացառութիւնները հաշուելով»[1]:

Իր միտքը հաստատելու համար հոդվածագիրը բերում էր օրինակներ, դրանք համեմելով բազում ածականներով:

«Ահա՛ Էջմիածինը,- գրում էր Գ. Բարսեղյանը,- «Ընդհանրական Հայրապետութեան Մայր Աթոռը», հակառակ իր ճեմարանական կամ համալսարանական եկեղեցականներուն, այսօր ան աւելի լաւ վիճակ մը չունի, չըսելու համար աւելի վատթար վիճակ մը ունի, քան այն զզուելի եւ ընդվզեցուցիչ կացութիւնը զոր Բաֆֆի նկարագրած է իր «Խենթը»ին մէջ, եւ ուր կը ներկայանան մեզի այդ «Մայր Աթոռ»ին մէջ հաստատուած կղերականները՝ գող, աւազակ, պորտաբոյծ, անհոգ ու եսասէր:

Ահա՛ Արմաշը՝ որ, հակառակ ա՛յնքան նախանձախնդրու-

---

[1] **«Ազդակ»** (Կ. Պոլիս), № 7, 24 փետրվարի 1909 թ.:

թիւններու եւ հոգածութիւններու, իբր կղերական միջավայր, նուազ սրիկաներ, նուազ դաւաճաններ կամ նուազ մակաբոյծներ ու նուազ «կղերական»ներ չընծայեց ժողովուրդին, քան փոքրաւորութենէ առաջ եկած այս կամ այն վարդապետն ու եպիսկոպոսը:

Եւ վերջապէս, ահա՛ Երուսաղէմի վանքը, աւազակութեան եւ անպատկառ, անխիղճ, անբա[րո]յական ու անասնական բնազդներու տէր վեղարաւոր մարդակերպերու տխրահռչակ որջը,- ահաւասի՛կ **մօնիմանթալ** (կոթողային:- Հ. Ս.) զանգուածը կղերական ստորնութիւններու, կղերական չարավաստակութիւններու, կղերական եղբայրադաւութիւններու,- ահաւասի՛կ նորօրեայ Սոդոմ մը՝ կղերական խենէչութիւններու եւ անլուր սրիկայութիւններու»[1]:

«Եւ սակայն հնչած է մահավճռի ժամը,- շարունակում էր հոդվածագիրը:- Շուտով կու գայ այն օրը, երբ աշխարհական տարրը բոլորովին զօրեղացած, երբ Թրքահայ ժողովուրդը տէր դարձած ինքնագիտակցութեան, լուսաւորուած դէպի իր իրաւունքներն ու պարտականութիւնները, զարթած վերջնապէս այն չեփորէն զոր կը հնչեցնէ ընկերային արդարութիւնն եւ իսկական ճշմարտութիւնը, քաղաքական բռնակալութենէն ետք, փլուզումը կը տեսնէ միւս բոլոր բռնակալութիւններուն, բոլոր խաւար, պիղծ ու կեղեքիչ փորձանքներուն, որոնց եղերական հետեւանքները կրած էր մինչեւ այժմ, եւ որոնց ամէնէն ահաւորներէն մէկն է Սեւ Փորձանք – Կղերականութիւնը:

Ժողովո՛ւրդ, ակա՜նջ դիր այդ չեփորին»[2]:

Հայկական մամուլը, բացառութեամբ դաշնակցական և հնչակյան որոշ թերթերի, շատ բացասաբար արձագանքեց հայ հոգևորականության հանդեպ նման անիշխանական-անհանդուրժողական վերաբերմունքին: Ինչպես այն օրերին, մեր ժամանակներում նույնպես անընդունելի են Հայ եկեղեցու սպասավորներին տրված այս հախուռն «գնահատականները»: Հայու-

---

[1] **«Ազդակ»**, № 7, 24 փետրվարի 1909 թ.: Ընդգծումը թերթինն է:

[2] Նույն տեղում:

թյունն իր հոգևոր դասը վերացնելու խնդիր չուներ: Խնդիրը նրա բարոյական վերածնունդն էր, նրա չարքերում գոյություն ունեցող հոռի բարքերը արմատախիլ անելը:

Հայկական մամուլը միաժամանակ վճռականորեն հանդես էր գալիս Էջմիածնում կաթողիկոսական պաշտոնը վերացնելու առաջարկի դեմ:

«Մշակի» էջերում տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ, որոնց հեղինակները քննադատում էին Թերթի գլխավոր տեսաբանի առաջարկությունը և մերժում նրա հիմնավորումները: Նրանք գրում էին, որ թեև Թուրքիայում պետական հեղաշրջում է տեղի ունեցել և միդհատյան սահմանադրությունը վերահաստատվել, բայց ոչ ոք չի կարող հաստատապես պնդել, թե երիտթուրքերի կառավարությունը գավազանի մի հարվածով խաղաղություն է բերելու Թուրքահայաստանին, հետևապես այլևս պետք չեն լինելու Էջմիածնի կաթողիկոսության դիվանագիտական միջամտությունները Հայկական հարցում: Ուստի, հակառակ ծայրահեղական ու դաշնակցական պարբերականների, ազատական ու պահպանողական մամուլի օրգաններն անթույլատրելի էին համարում Հայ եկեղեցին բյուրոկրատական-վարչական կառույցներից ազատելը: Նրանք կաթողիկոսական հաստատությունը որպես հայ ժողովրդի կենսական իրողություն էին դիտում:

Պարսավելով կաթողիկոսի ընտրությունն անկարևոր համարողներին, Եգիպտոսի «Լրաբերը» գրում էր, որ նման մտայնությունը հարվածում է հայոց ինքնության պահպանման կարևոր հնարավորություններից մեկին և չի կարող ընդունելի լինել հայ ժողովրդի լայն զանգվածների համար[1]:

Ինչ վերաբերում էր այն փաստարկին, թե Վրաց եկեղեցին կաթողիկոսություն չունի, հետևապես Հայ եկեղեցին նույնպես կարող է հրաժարվել այդ ավելորդ բեռից, այս տեսակետի հակառակորդները գտնում էին, որ տեղին չէ նույնացնել հայոց և վրաց հանրությունների վիճակը: Նրանք հիշեցնում էին, որ դա-

---

[1] Տե՛ս **«Լուսաբեր»** (Գահիրէ), 7 մայիսի 1908 թ.:

րեր չարունակ վրացիները նույնպես ունեցել են կաթողիկոսություն և միայն ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո են զրկվել այդ ինստիտուտից, այն էլ ոչ հոժարակամ: Միաժամանակ նշում էին, որ հայոց պետականության համեմատ վրաց պետականությունը տևել է ավելի երկար ժամանակ՝ մինչև 18-րդ դարի վերջը, այնպես որ կաթողիկոսության կարիքը Վրաստանում այնպես սուր չի զգացվել, ինչպես հայոց մոտ: Վրացիներն իրենց բազմաթիվ խնդրանքներից հետո հասան այն բանին, որ մտան Ռուսական կայսրության կազմի մեջ՝ կամավոր զրկվելով իրենց ազգային պետականությունից ու ակամա զրկվելով կաթողիկոսությունից:

Հակառակ վրացիների, հայերն իրենց պետականությունից զրկվել են չատ դարեր առաջ, այն էլ ոչ թե վրացիների պես հոժարակամ, այլ հակառակ իրենց կամքի, ասիական մեծաքանակ բռնակալների հարվածներից: Այս պայմաններում է, որ Ամենայն հայոց կաթողիկոսությունը եկել է ինչ-որ չափով փոխարինելու ազգային պետականությանը: Նա էր միջնորդ հանդիսանում ժողովրդի և նրան հարստահարող օտար բռնակալների միջև, փորձում մեղմել վերջիններիս վայրենաբարո կրքերը ու գեթ մի փոքր ազդել նրանց խղճի վրա: Այդ նվաճողները, լինելով ասիական մուսուլմանական աստվածաբանական զանազան վարդապետությունների ներկայացուցիչներ, խոնարհվում էին ընդհանրապես բազմադարյան կրոնական հաստատությունների առջև և, իբրև նվիրյալ թեոկրատներ, ընդունում էին այդ հաստատությունների դերն ու նշանակությունը տվյալ եկեղեցու հավատացյալների համար: Այդ իսկ պատճառով, մուսուլման նվաճողները, սրանց աչխարհիկ ու հոգևոր պետերը Էջմիածնի կաթողիկոսության միջոցով հայությանը չնորհում էին ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական որոչ իրավունքներ: Հենց հայոց կաթողիկոսների այդ իրավունքների ճանաչումն էր, որ հնարավոր դարձրեց Հայկական հարցի բարձրացումը եվրոպական դիվանագիտության առջև՝ 1878 թ. Բեռլինում:

1908 թ. մարտ-ապրիլին Թիֆլիսում տեղի ունեցած մի չարք խորհրդակցությունների արդյունքում պարզվեց, որ հայկական հասարակության ստվար մասը կաթողիկոսական հարցում

վճռականապես հակառակ է ազատական Համբարձում Առաքելյանի անհատական կարծիքին ու ծայրահեղ ձախակողմյանների հայեցակետին և հակված է հակառակ տեսակետին: Այդ էր պատճառը, որ ծայրահեղ ձախակողմյանները հետ քաշվեցին թե՛ քարոզչություն մղելուց և թե՛ ընդհանրապես ընտրական ասպարեզից՝ մնալով դիտողի դերում:

* * *

Դեռևս Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի հուղարկավորությունից երկու օր անց՝ 1907 թ. նոյեմբերի 8-ին Կ. Պոլսի պատրիարք Մաղաքիա արք. Օրմանյանը Հայոց Ազգային խառը ժողովի որոշման համաձայն դիմել էր Էջմիածնի սինոդին և խնդրել միջնորդություն հարուցել Կովկասի փոխարքայի կամ ներքին գործոց նախարարության առաջ՝ հայրապետական ընտրությունը նշանակել ոչ թե կաթողիկոսի վախճանումից մեկ տարի հետո, ինչպես ամրագրված է "Положение"-ում[1], այլ ավելի շուտ՝ 1908 թ. մայիսին, համարելով, որ վեց ամիսը միանգամայն բավական է նախապատրաստական աշխատանքների ու պատգամավորների ընտրության համար: Հակառակ դեպքում՝ կաթողիկոսական ընտրությունը պետք է կատարել ոչ թե 1908 թ. նոյեմբերին, երբ կլրանար Խրիմյանի մահվան մեկ տարին, այլ ավելի ուշ՝ 1909 թ. գարնանը, որպեսզի ձմռան պատճառով Էջմիածին գնացող պատգամավորները ճանապարհի անհարմարություններ չունենան, թեև այդ դեպքում էլ հայրապետական աթոռը երկար ժամանակ թափուր կմնա, իսկ եկեղեցին՝ առանց պետի, մի բան, որ ցանկալի չէ: Նույն հարցի առթիվ պատրիարքը նաև դիմել էր Կ. Պոլսի ռուսաց դեսպան Զինովևին՝ խնդրելով նրա միջնորդությունն իր երկրի կառավարությանը[2]:

---

[1] *Հայոց եկեղեցու "Положение"-ի սահմանած իրավունքների ու պարտականությունների մասին տե՛ս «Մշակ», № 262, 24 նոյեմբերի, № 264, 26 նոյեմբերի, № 280, 16 դեկտեմբերի 1910 թ.:*

[2] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237[գ], վավ. 242, թ. 1:*

Քննարկելով Օրմանյանի միջնորդությունը, էջմիածնի սինոդը դա ընդունելի էր համարել: 1907 թ. նոյեմբերի 13-ին սինոդը իր հերթին միջնորդագիր էր ուղարկել փոխարքային՝ դրան կցելով Կ. Պոլսի պատրիարքի դիմումի ռուսերեն թարգմանությունը[1]:

Ինչպես նշվել է, դեռևս 1908 թ. մարտին Թիֆլիսում ստեղծվել էր ժամանակավոր նախընտրական հանձնախումբ, որը կոչված էր հասարակությանը նախապատրաստելու կաթողիկոսական ընտրություններին: Հանձնախումբը լայն գործունեություն ծավալեց հատկապես 1908-ի երկրորդ կեսին: Նույնիսկ ամռան ամիսներին նա համարյա ամեն շաբաթ ունենում էր նիստեր, որոնցում քննարկվում էին կաթողիկոսական նախընտրական շրջանին հատուկ այլազան հարցեր, ընդունվում էին հստակ որոշումներ:

1908 թ. սեպտեմբերին Ռուսաստանի ներքին գործերի նախարարության ղեկավարությունը Պյոտր Ստոլիպինից հանձնարարություն է ստանում՝ կոլեգիայի նիստում քննարկել Հայ եկեղեցու վիճակն ընդհանրապես և էջմիածնի կաթողիկոսի ընտրության հարցը մասնավորապես:

Նախարարության կոլեգիան հավաքվում է ընդլայնված կազմով, քանի որ Հայ եկեղեցու առաջիկա կաթողիկոսական ընտրությունը կովկասյան գործերի շարքում քաղաքական լուրջ խնդիր էր համարվում:

Կոլեգիան լսում է զեկուցում էջմիածնի վիճակի մասին: Առաջարկվում է վերաքննել "Положение"-ի որոշ հոդվածներ, որոնք հատկապես վերաբերում էին կաթողիկոսական գահի թափուր եղած ժամանակ էջմիածնի իրավունքներին ու պարտականություններին:

Նախարարության ղեկավարությունը տրամադիր էր միաժամանակ հետաձգելու 1908 թ. հոկտեմբերի 30-ին նշանակված կաթողիկոսական ընտրությունը, մինչև որ "Положение"-ում

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237գ, վավ. 242, թ. 2:

փոփոխություններ մտցնելու առաջարկները կստանային նախարարների խորհրդի և համապատասխան մյուս օրենսդրական բարձր հիմնարկությունների հավանությունը:

Զեկուցումից հետո կոլեգիայի նիստում մտքերի լայն փոխանակում է տեղի ունենում: Ելույթ ունեցողներից ոմանք չեչտում են, որ վերջին քառորդ դարում գնալով թուլացել է Հայ եկեղեցու կառավարումը, տեղի է ունեցել նրա ներքին կյանքի կազմալուծում, որն այժմ հասել է ծայրագույն աստիճանի[1]*:*

Ավելին, խոսվում է, որ Էջմիածնի վերջին երկու կաթողիկոսներն ամեն ինչ արել են, որպեսզի ազատվեն կառավարչական մարմինների հսկողությունից, արհամարհանք են դրսևորել պետական օրենքների և իշխանության պահանջների նկատմամբ: Կաթողիկոսների նման գործելակերպը համակրանք և բացահայտ աջակցություն է ստացել շրջապատից, մինչև անգամ Էջմիածնի սինոդի անդամներից, որոնք այնքան ամբարտավան են դարձել, որ նույնիսկ հրաժարվում են ներկա լինել սինոդի նիստերին:

Ելույթ ունեցողներից մի ուրիշն ասում էր, թե հենց իրենք՝ կաթողիկոսներն են խախտում "Положение"-ի պահանջները և նույնիսկ չեն մասնակցում սինոդի նիստերին, պարբերաբար անուշադրության են մատնում իրենց ապօրինի վճիռների դեմ պրոկուրորի բողոքները: Կաթողիկոսների նման վերաբերմունքը, ասում էր նա, լիովին համընկնում է հայ մտավորականության ցանկությանը, այն է՝ վերացնել Էջմիածնի սինոդը և նրա պրոկուրորի պաշտոնը, որոնք կառավարությունը հիմնել է կաթողիկոսական իրավունքները սահմանափակելու համար:

Նիստում հանդես գալով ծավալուն ելույթով՝ Պետերբուրգում գտնվող փոխարքա Իլարիոն Վորոնցով-Դաշկովը խստորեն քննադատում է նախորդ ելույթ ունեցողներին, ընդգծում, որ հնչած հայտարարություններն ու կատարած եզրահանգումները շատ հեռու են իրականությունից, և որ երեք տարի պաշ-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 203, 17 սեպտեմբերի 1908 թ.:*

տոնավարելով Կովկասում, ինքն Էջմիածնի կողմից վարչակազմի դեմ ուղղված որևէ քայլի չի հանդիպել:

Ելույթի վերջում փոխարքան հաստատում է, որ, իհարկե, Էջմիածնի վարչության աշխատանքներում կան բազմաթիվ թերություններ, բայց դրանք ոչ թե քաղաքական բնույթի են՝ անհնազանդության դրսևորումներով, այլ հիմնականում արդյունք են կաթողիկոսական իշխանության կողմից վատ կառավարման, տնտեսական դժվարությունների և առարկայական ու ենթակայական այլ պատճառների:

Այնուհետև կոլեգիայի նիստն անցնում է նոր կաթողիկոսի ընտրության հետ առնչվող որոշակի հարցերի քննարկմանը:

Նիստի մասնակիցների ընդհանուր ցանկությունն էր, որ Ամենայն հայոց կաթողիկոսներն իմանան կայսրության պետական լեզուն՝ ռուսերենը: Դրանով իսկ ներքին գործերի նախարարությունը հասկացնել էր տալիս, որ իշխանությունների համար նպատակահարմար է կաթողիկոս ընտրել ռուսահայ հոգևորականներից:

Կրկին ելույթ ունենալով՝ Վորոնցով-Դաշկովը ներկաներին հիշեցնում է, որ "Положение"-ում նման պահանջ չկա, հետևապես արված առաջարկը, այն է՝ կաթողիկոս ընտրել միայն ռուսահայ բարձր հոգևորականությունից, Հայ եկեղեցու հիմնական կանոնադրության կոպիտ խախտում է: Նա իր ասածը նաև հիմնավորում է այն հանգամանքով, որ առաջ քաշված պահանջին գործնականում անհնարին է բավարարություն տալ, քանզի կաթողիկոս ընտրող ռուսահայերն ունեն միայն 27, իսկ արտասահմանցի հայերը՝ 98 ձայն[1]:

Անդրադառնալով կաթողիկոսի՝ ռուսերենի պարտադիր իմացության խնդրին, փոխարքան ասում է, որ կաթողիկոսական թեկնածուների մեջ քաղաքական տեսակետից առավել հուսալի տարրը հենց եկեղեցու պատկառելի և լուրջ եպիսկոպոսներն են, որոնք թեև ռուսերեն չգիտեն, բայց զանազան քաղաքական

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 204, 18 սեպտեմբերի 1908 թ.:

հոսանքներից հեռու են: Դրա փոխարեն ռուսերենին լավ են տիրապետում հայերի երիտասարդ հոգևորականները, որոնք, սակայն, հեշտությամբ ենթարկվում են հեղափոխականների, այդ թվում՝ սոցիալ-դեմոկրատների ազդեցությանը:

Բացի դրանից, նշում էր փոխարքան, ռուսաց լեզվի պարտադիր իմացության դեպքում կնսեմանա Էջմիածնի պատրիարքի տիեզերական նշանակությունը, քանի որ ռուսերեն չիմացող արտասահմանցի պատվիրակների մասնակցությունն ընտրություններին միայն ձևական կդառնա:

Նախարարության կոլեգիայի նիստում նաև առաջարկ եղավ "Положение"-ի մեջ մտցնել հոդված, որի համաձայն կաթողիկոսը կարող է պաշտոնաթող լինել, եթե սինոդը կամ ներքին գործերի նախարարությունը դա անհրաժեշտ համարեն:

Փոխարքան կտրականապես հանդես եկավ հայոց կաթողիկոսի իշխանության սահմանները չափազանց նեղացնելու և կառավարչական բարձր իշխանությունից նրա ստորադասությունն Է՛լ ավելի շեշտված դարձնելու այս առաջարկի դեմ:

«Ներկայումս,- ասում էր Վորոնցով-Դաշկովը,- հայ ազգաբնակչությունը, որ հեղափոխականացվել էր Կովկասի նախկին կառավարչապետ իշխան Գոլիցինի վարած քաղաքականության հետևանքով, այժմ սկսել է հանգստանալ: Ցպետք է խախտել այդ հանգիստը՝ ազգաբնակչությանը կրոնական ազգային վիրավորանքներ հասցնելով: Երբ կփոխվի Էջմիածնի սինոդի պրոկուրորը, որն իր անհատականությամբ չկարողացավ հաշտ գործել կաթողիկոսի հետ, և որը Հայ եկեղեցում ստեղծված քաոսային դրության գլխավոր հանցավորն է, այնժամ, պետք է հուսալ, թե որևէ լրացուցիչ օրենք հարկավոր չի լինի»[1]:

Բազմակողմանի քննարկելով Հայ եկեղեցու վիճակը և առաջիկա կաթողիկոսական ընտրությունների հետ կապված խնդիրները՝ ներքին գործերի նախարարության կոլեգիան իր առաջարկները ներկայացրեց նախարարների խորհրդի հաստատ-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 204, 18 սեպտեմբերի 1908 թ.:

մանը: Այստեղի նիստին ևս մասնակցում էր Կովկասի փոխարքան, որը դարձյալ հանդես եկավ Էջմիածնի իրավունքների ջերմ պաշտպանությամբ:

Ի վերջո նախարարների խորհուրդը երկար քննարկումներից հետո որոշեց որևէ նոր օրենք չընդունել Հայ եկեղեցու մասին, նկատի առնելով նաև, որ Էջմիածնում դեռ նոր կաթողիկոս չկա: Նպատակահարմար համարվեց Ամենայն հայոց կաթողիկոսի առաջիկա ընտրությունները կատարել նախկին պայմաններով ու հիմունքներով:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ռուսաց կառավարության մեջ բավական ուժեղ էին Հայոց եկեղեցու իրավասությունների սահմանափակման տրամադրությունները, բայց այդ ժամանակ դրանք դեռևս որոշակի դրսևորումներ չունեցան:

Ընտրության օրերը մոտենում էին, բայց Պետերբուրգի կառավարությունը ընտրական ծանուցագրերն արտասահման չէր շտապում ուղարկել, որպեսզի այնտեղի թեմերը ևս ձեռնարկեն պատգամավորների ընտրության գործին: Այդ անհասկանալի հապաղումը տագնապ էր առաջացրել: Էջմիածնի միաբանությունում կասկածում էին, որ մայրաքաղաքում ինչ-որ մի բան է նյութվում Հայոց եկեղեցու իրավունքների դեմ: Անհանգստությունը զուր չէր. պարզվեց, որ ռուսաց իշխող շրջաններում կրկին բարձրացվել էր "Положение"-ի համապատասխան հոդվածները փոփոխությունների ենթարկելու միջոցով կաթողիկոսի անկախության ու անձեռնմխելիության հետ կապված որոշ իրավունքների սահմանափակման հարցը: Բարեբախտաբար հարցի քննարկումը տեղի չէր ունեցել նորից փոխարքա Վորոնցով-Դաշկովի վճռական միջամտության շնորհիվ և դա հետաձգվել էր անորոշ ժամանակով: Հետևապես պատգամավորների ընտրություններն այս անգամ էլ պիտի կատարվեին առաջվա նման: Շուտով իշխանությունները նրանց ծանուցողական թղթերն ուղարկեցին ըստ պատկանելության[1]:

---

[1] *Տե՛ս* ***«Արարատ»****, № 9, սեպտեմբեր, 1908, էջ 745:*

* * *

Նախընտրական շրջանում հասարակությունը հանգամանորեն քննարկում էր կաթողիկոսական ընտրությանը Հայ եկեղեցու թեմերի մասնակցության, նրանց թվի և նրանց բնակչության թվի համամասնականության պահպանման, այսինքն՝ պատգամավորների թվի արդար բաշխման հարցերը, որոնք բազմիցս առաջ էին քաշվել էջմիածնի վերջին երկու կաթողիկոսների ընտրության ժամանակ:

Հայ եկեղեցին 1908 թ. ուներ 74 թեմ, այդ թվում Ռուսաստանում 6 թեմ՝

1) Վրաստան և Իմերեթ, կենտրոն ունենալով Թիֆլիսը, 2) Բեսարաբիա և Նոր Նախիջևան, աթոռանիստ ունենալով Քիշինյովը, որին ենթակա էին նաև Մոսկվայի և Պետերբուրգի հայ եկեղեցիները, 3) Աստրախան՝ Վոլգայի շրջանակներով, 4) Գանձակ – Շամախի, որի իրավասության տակ էր նաև Բաքուն, որտեղ և գտնվում էր թեմի առաջնորդարանը, 5) Ղարաբաղ, որի կենտրոնը Շուշին էր, 6) Երևան, որն ընդգրկում էր նաև Կարսի և Ալեքսանդրապոլի շրջանները՝ կենտրոն ունենալով Երևանը**: Պարսկաստանում 2 թեմ կար՝ Ատրպատականի և Պարսկաստան-Հնդկաստանի (Նոր Ջուղայի): Թուրքիայում թեմերի թիվը 66 էր, որից 46 թեմ գտնվում էր Կ. Պոլսի պատրիարքության, 5 թեմ՝ Երուսաղեմի պատրիարքության, 13 թեմ՝ Կիլիկիո կաթողիկոսության, 2 թեմ՝ Աղթամարի կաթողիկոսության վարչական իրավասության ներքո[1]:*

Այս թվերից երևում է, որ Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի հայերը կաթողիկոսական ընտրությունների

---

* *Թեև թեմի կենտրոնը տեղափոխված էր Բաքու, բայց թեմը պաշտոնապես կրում էր «Շամախու թեմ» անվանումը:*

** *Այս թեմը բոլոր նշված թեմերի մեջ առաջինն էր իր բազմահայությամբ: Էջմիածնի մերձակայության հանգամանքով Երևանի թեմական առաջնորդին սահմանված էր կաթողիկոսական տեղապահությունը և, ըստ այնմ, նա, իբրև կաթողիկոսի փոխանորդ՝ պատվո առաջին տեղն էր գրավում վերոնշյալ հինգ թեմական առաջնորդների կողքին: Էջմիածնի կաթողիկոսներն անցյալում երբեմն կոչվում էին նաև «եպիսկոպոս Արարատայ»:*

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 58, 14 մարտի 1908 թ.:*

ժամանակ հավասար իրավունքներից չէին օգտվում: 1908 թ. Ռուսաստանի հայերի թիվը 1.5 միլիոն էր, բայց ռուսահայոց թեմերը վեցն էին, հետևաբար Հայ եկեղեցու պետերի ընտրությանը մասնակցում էր ընդամենը 12 պատգամավոր (յուրաքանչյուր թեմից մեկ հոգևորական և մեկ աշխարհական): Նույն ժամանակ Թուրքիայի հայերի թիվը 2 կամ 2.5 միլիոն էր, բայց թուրքահայոց թեմերի թիվը, ինչպես ասվեց, 66 էր, և մինչև Գևորգ Դ կաթողիկոսի վախճանումը (1882 թ.) Էջմիածին էր ուղարկում աշխարհական 66 և նույնքան հոգևորական պատգամավոր: 100.000 հայություն ունեցող Պարսկաստանից Էջմիածնի կաթողիկոսի ընտրության էր գալիս ընդամենը 2 աշխարհական և 2 հոգևորական պատգամավոր:

*Այդ վիճակը չէր բխում Էջմիածնի կամքից, այլ ռուսական կառավարության հաստատած "Положение"-ից, որի 1120-րդ հոդվածում ասված էր, թե «յուրաքանչյուր թեմ պատրիարքի (կաթողիկոսի: - Հ. Ս.) ընտրության համար **նշանակում է** (ոչ թե ընտրում է:- Հ. Ս.) երկու պատգամավոր՝ մեկը հոգևորական, մյուսը՝ աշխարհական»*: "Положение"-ի համաձայն, Ռուսական կայսրության սահմաններում հաստատված էր 6 թեմ, որոնց թիվը "Положение"-ի ընդունման ժամանակ (1836 թ.) համապատասխանում էր ռուսահայերի թվին: Բայց հետագա տասնամյակներին ռուսահայերի թիվն աճել էր մեծապես և, ինչպես նշեցինք, 1.5 միլիոնի էր հասել, իսկ թեմերի թիվն ավանդաբար նույնն էր մնացել: Եվ ահա՛ այժմ, 1908 թվին, միայն Թիֆլիսի, Ղարաբաղի և Երևանի հայոց եկեղեցական թեմերի հայության թիվն այնքան էր, որքան թուրքահայկական 30-40 թեմերի հայերի թիվը (Թուրքիայում կային թեմեր, որոնց ժողովուրդը բաղկացած էր հազիվ 2000 հոգուց):*

Ստեղծված ավանդույթի հետևանքն այն էր լինում, որ Թուրքիայից եկած և կաթողիկոս ընտրող պատգամավորներն իրենց ձայների մեծամասնության չնորհիվ կարողանում էին ճնշում

---

* *Հակառակ «յուրաքանչյուր թեմ պատրիարքի ընտրության համար **նշանակում է** երկու պատգամավոր...»՝ "Положение"-ի նշված հոդվածի պահանջի, Էջմիածնի հրահանգով՝ վերջին երկու կաթողիկոսների ընտրությանը մասնակցել էին թեմերից **ընտրված** պատգամավորներ միայն:*

գործադրել ռուսահայ պատգամավորների վրա և կաթողիկոս ընտրել այն անձին, որին իրենք էին ցանկանում:

Այդ դրությունն անարդար էր, անհամապատասխան Հայ եկեղեցու և ազգի ընդհանրական շահերին, հետևաբար՝ սրբագրման ենթակա:

Հատկանշական է, որ իրենք՝ թուրքահայերը նույնպես զգում և խոստովանում էին ձայների այդ անհավասար բաշխման անարդար լինելը, և համաձայն էին, որ գոնե այս անգամ կաթողիկոսական ընտրությունների անցկացման նոր կարգ ու կանոն սահմանվի և Ռուսաստանի հայությունն իր թվին համապատասխան ներկայացուցչություն ունենա:

Թուրքահայ և ռուսահայ թեմերի թվի և կաթողիկոսական ընտրություններում նրանց (թեմերի) իրավունքների մեծ տարբերությունները մեղմելու նպատակով ռուսական կառավարությունը, Գևորգ Դ կաթողիկոսի վախճանումից հետո, առանց փոխելու "Положение"-ի նշված հոդվածը, մերժել էր Թուրքիայում ճանաչել 66 թեմ՝ դրանցից միայն 47-ը օրինական համարելով: Ըստ որում՝ ընտրություններին մասնակցելու համար Կիլիկիո կաթողիկոսության 13 թեմերից Էջմիածինը ճանաչում էր միայն 7-ին՝ 14 պատվիրակով: Բայց այս անգամ, 1908 թ., կաթողիկոսական ընտրության համար, կառավարության հրահանգով, Մայր աթոռը ինչպես Կիլիկիան, այնպես և Աղթամարը մեկական թեմ էր համարել:

Ելնելով դրանից՝ Էջմիածնի սինոդը Կիլիկիո Սահակ Բ Խապայան կաթողիկոսին ուղարկել էր միայն մեկ հրավիրագիր, որի համաձայն Կիլիկիո կաթողիկոսությանը տվել էր երկու ձայնի իրավունք, այսինքն՝ առաջարկել էր Էջմիածին ուղարկել միայն մեկ հոգևորական և մեկ աշխարհական ներկայացուցիչ, թեև այդ կաթողիկոսության իրավասության տակ գտնվող հայության թիվը 100.000-ից ավելի էր*:

---

* Ինչպես նշել ենք Կիլիկիայի 1909 թ. կոտորածներին նվիրված բաժնում, Կիլիկիո կաթողիկոսության Ադանայի թեմի առաջնորդարանի 1905-1915 թթ. դիվանապետ Քերովբե Փափազյանը թեմի հայ առաքելականների թիվը նշում է մոտ 125.000 հոգի. տե՛ս **Բիւզանդ Եղիայեան**, Ատանայի հայոց պատմութիւն, էջ 296:

1908 թ. հոկտեմբերի 6-ին Կիլիկիո կաթողիկոսը հանդես եկավ հայտարարությամբ և դատապարտեց իր եկեղեցական թեմերի նկատմամբ անարդարացի, արհամարհական վերաբերմունքը: Հայտարարության մեջ նշվում էր, որ Թուրքիայում կան թեմեր, որոնք ունեն 2-3 հազար բնակիչ, և նրանցից ամեն մեկն երկու պատգամավոր է ուղարկում Էջմիածին: Քանի որ Էջմիածինը Կիլիկիայում օրինական է համարում 7 թեմ, ուրեմն կաթողիկոսական ընտրություններին պետք է մասնակցեն 7 հոգևորական և 7 աշխարհիկ պատգամավոր, բայց ինքն ստացել է միայն 2 պատգամավորի հրավեր:

Ելնելով դրանից՝ Սահակ կաթողիկոսը, արտահայտելով անձամբ իր և Կիլիկիո կաթողիկոսության միաբանության վրդովմունքը, հայտարարեց, որ Կիլիկիո կաթողիկոսությունն ընդհանրապես հրաժարվում է Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությանը մասնակցել, և ինքը պատվիրակ չի ուղարկի Էջմիածին:

Այդ հայտարարությունն իսկական իրարանցում առաջ բերեց: Կովկասահայ թերթերը գրում էին, որ Սահակ կաթողիկոսի տրտունջը և բողոքը միանգամայն արդարացի են, քանի որ անարդար է ռուսական կառավարության սահմանած կարգը, բայց նաև չէին մոռանում հիշեցնել, որ անարդար է նաև ռուսահայոց և թուրքահայոց թեմերի թվական հարաբերակցությունը: Ուստի Սահակ կաթողիկոսի պատճառաբանությունն ինչ-որ տեղ արդարացի գտնելով՝ մամուլը դա նաև համարում էր անժամանակ, հիշեցնելով, որ Եվրոպայի և Ամերիկայի հայերը բոլորովին զրկված են կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու իրավունքից:

Հաշվի առնելով այդ ամենը՝ կովկասահայ գործիչները գըտնում էին, որ այդ երկու անարդարությունները պետք է սրբագրվեն օրինական ճանապարհով, այլ ոչ թե բողոքներով և ընտրությունը բոյկոտելով:

Քանի որ ամենևին տեղին չէր հայ ժողովրդի տվյալ վիճակում նոր պառակտումներ առաջ բերելը և անջատողական հարցեր հարուցելը, ապա ինչպես Մայր աթոռը, այնպես էլ Կ. Պոլսի պատրիարքարանը Կիլիկիո կաթողիկոսից խնդրեցին՝ այնուա-

մենայնիվ վերանայել բռնած դիրքը և երկու պատգամավոր ուղարկել Էջմիածին:

Արդեն գարնան սկզբներից լայն խոսակցություն էր բացվել կաթողիկոսական հնարավոր թեկնածուների չուրջ:

Խրիմյանի մահից հետո կաթողիկոսական տեղապահ նշանակված Գևորգ արք. Սուրենյանցի հատուկենտ պաշտպաններն այն միտքն էին արծարծում, թե կարևոր է կաթողիկոս ընտրել ռուսահայ հոգևորականներից, որովհետև նրանք մոտիկից ծանոթ են Էջմիածնի գործերին, ականատես են վերջին տարիներին Ռուսաստանում տեղի ունեցած պատմական խոշոր անցքերին և հատկապես Կովկասի անցուդարձերին: Նրանց տեսակետը լիովին համընկնում էր կառավարության տեսակետին: Ռուսաստանի ներքին գործերի նախարարությունն այս անգամ Էջմիածնի առջև պահանջ էր դրել՝ կաթողիկոս ընտրել անպատճառ ռուսերեն իմացող հոգևորականի՝ նկատի առնելով կառավարության հետ խորհրդապահական հարաբերությունների ժամանակ դրա անհրաժեշտությունը:

Պահանջը՝ պահանջ, բայց երբ պետք էր որոշակիորեն մատնանշել ռուսահայ եպիսկոպոսներից գոնե մեկին, որն արժանի լիներ կաթողիկոսական գահին, չգիտես ինչու ամենքը՝ թե՛ ռուսահայ և թե՛ հատկապես թուրքահայ գործիչները միաբերան վկայում էին, որ ռուսահայ բարձրաստիճան հոգևորականությունը ներկայումս չունի արժանավոր թեկնածու, թեպետև կային այդպիսիք, այն էլ՝ ոչ քիչ թվով:

Առհասարակ Կ. Պոլսում լրիվ տեղեկություն չկար Էջմիածնի հոգևորականության մասին: Պոլսահայությունն այնպես էր կարծում, թե Էջմիածնի հոգևորականությունը տգետների մի հավաքածու է, որ տիրացել է վանքին: Ուստի «Արեւելքն» ստիպված էր մանրամասն տեղեկություններ տալ Էջմիածնի հոգևորականության, նրա միաբանության մասին, միաժամանակ նշելով, որ Էջմիածնի հոգևորականությունն իր գիտելիքներով, զարգացածության մակարդակով անհամեմատ բարձր է պոլսաբնակ հոգևորականներից: Այդ հանգամանքն ընդգծում էր նաև թուրքահայ հոգևորականներից մեկը, որը լինելով Կովկասում, վերադառնալով Կ. Պոլիս, Բոստոնի (ԱՄՆ) «Ազգ» թերթին իր

ուղարկած նամակում գրում էր, որ ռուսահայ թեմական առաջնորդները, Էջմիածնի սինոդի ու միաբանության անդամները, որպես կանոն, ավարտել էին Գևորգյան ճեմարանը, Ներսիսյան կամ Շուշիի թեմական դպրոցները, իսկ շատերն էլ կրթություն էին ստացել Ռուսաստանի ու Եվրոպայի համալսարաններում:

Մյուս կողմից, իրավացի էր բարձրաստիճան հոգևորականների հասցեին հնչած քննադատությունը, թե իրենց բարոյականությամբ նրանք արատավորում են եկեղեցականի անունը: Այն օրերի կովկասյան մամուլը վեր էր հանում և այպանում նրանց միջավայրում տիրող հոռի բարքերը: «Մշակը» հարց էր տալիս. «Արդեո՞ք ռուսահայ բարձրաստիճան հոգեւորականները եւ յատկապէս Էջմիածնի միաբանութիւնը որեւէ նշանակութիւն են տալիս, կամ ի նկատի առնելո՞ւ են այն գնահատականը, որին արժանացել են նրանք հայ ժողովրդից, թէ՞ առաջուայ պէս շարունակելու են իրենց սահմանափակ, հակաժողովրդական ու ազգակործան գործունէութիւնը՝ լի ինտրիգներով (դավադրութիւններով:- Հ. Ս.), փառասիրական եւ դրամապաշտական ձգտումներով: Նրանք եկեղեցին, ժողովուրդը, մեր կուլտուրական հաստատութիւնները, ամէն-ամէն ինչ զոհում են իրենց անհատական շահին»[1]: Ապա՝ «Արդեո՞ք ամօթաբեր չէ մեր ռուսահայ հոգեւորականութեան համար, երբ պատգամաւորներին պատուիրում է քուէ չտալ այսինչ կամ այնինչ ռուսահայ բարձրաստիճան հոգեւորականին: Արդեո՞ք համայն ժողովրդական այս բարոյական ապտակը սթափեցնելու է մեր բարձրաստիճան հոգեւորականութեանը, որը ներկայումս միանգամայն վարկաբեկ է եղած եւ ընկած ժողովրդի աչքից»[2]:

Նոր կաթողիկոսի թեկնածուներից ամենից հաճախ տրվում էր Կ. Պոլսի նախկին պատրիարք, Երուսաղեմում որպես աքսորական գտնված Մատթեոս արք. Իզմիրլյանի անունը, որի մասին հանգամանորեն խոսք կլինի աշխատության գալիք էջերում: Իզմիրլյանից հետո հիշատակվում էին թուրքահայ ուրիշ թեկ-

---

[1] **«Մշակ»,** *№ 239, 29 հոկտեմբերի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում:*

նածուների անուններ, որոնց թվում առաջնությունը տրվում էր մտավոր մեծ կարողությունների տեր՝ Կ. Պոլսի պատրիարք Մաղաքիա արք. Օրմանյանին:

Օրմանյանն ավելի քան 10 տարի եղել էր թուրքահայոց պատրիարքական աթոռի վրա: Նա անձնական բազում բարեմասնություններ ուներ, կրթված էր ու աշխատասեր, արթուն գործիչ էր իր պատասխանատու առաքելության մեջ:

Պատրիարքի գործունեությունը գլխավորապես ուղղված էր թուրքահայության և թուրքական կառավարության միջև համաձայնության ու հաշտության եզրեր գտնելուն: Այդ նպատակով նա ամեն կերպ կապեր էր պահպանում իշխանությունների հետ, հաճախակի հանդիպում նրանց ներկայացուցիչներին, միայնակ կամ պատրիարքարանի պատվիրակության հետ հանդիսավոր այցելություններ էր կատարում Բարձր Դուռ և այլն: Այդ բոլորն Օրմանյանն անում էր, սպասելով, որ գործունեության նման եղանակով ինքը կհաջողի դրական արդյունք ձեռք բերել իր հոտի համար:

Բայց Օրմանյանի այդ ջանքերը մեծ հաշվով դրական քիչ արդյունք էին տալիս, քանի որ իրականությունը չէր փոխվում, Հայաստանը մնում էր նույն թշվառ վիճակում, հայ մարդը՝ հալածական ու դժբախտ: Միայն Կ. Պոլսի հայերի մի չնչին մասն էր, որ բարեկեցիկ էր և փոքր ի շատե ապահով էր զգում իրեն: Այդ էր պատճառը, որ պատրիարքը մեծ կշիռ ունենալով թուրքահայ մտավորականության, քաղաքական, հասարակական ու կրոնական գործիչների մի մասի մոտ, ժողովրդական լայն զանգվածների բավարար վստահությունը չէր վայելում:

Օրմանյանը լայն ժողովրդականություն չէր վայելում նաև ռուսահայոց մեջ, թեև նրան ջերմորեն պաշտպանում էին կովկասահայ պահպանողականները, ինչպես նաև ազատականները՝ «Մշակի» գլխավորությամբ: Եղել էր մի պահ, որ Օրմանյանի անունը գրավել էր ռուսահայերի ուշադրությունը: Դա այն ժամանակ էր, երբ նրանց եկեղեցական կալվածքների գրավման առիթով պատրիարքը դիվանագիտական խողովակներով մի քանի դիմումներ էր հղել Կովկասի ռուսական իշխանություններին: Օրմանյանի այդ քայլերը ռուսահայոց հիշողության մեջ

մնացել էին որպես դիպված: Իրականում, վերջինիս անունը միշտ ենթակա է եղել ռուսահայոց քննադատության կամ, լավագույն դեպքում, հակասական գնահատականների: Այլ խոսքով՝ Օրմանյանն ընդհանուր ժողովրդականություն չի վայելել նրանց շրջանում: Նույնիսկ Էջմիածնի կղերի զգալի մասի մոտ նա ժամանակին թողել էր չափից ավելի մաքրակրոն ոգու տեր անձի տպավորություն:

Օրմանյանից հետո, իբրև նոր կաթողիկոսի թեկնածուի, հիշվում էին նաև թուրքահայ ուրիշ կրոնական առաջնորդների՝ Գևորգ արք. Երեցյանի, Եղիշե Դուրյան, Վահրամ Մանկունի և Տրդատ Պալյան, Մկրտիչ Վեհապետյան և Մուշեղ Սերոբյան եպիսկոպոսների, ինչպես նաև Կարապետ Տեր-Մկրտչյան ու Բագրատ Վարդազարյան ծայրագույն վարդապետների անունները:

Այս թեկնածուները հիմնականում թուրքահայեր էին, իսկ ռուսահայ եպիսկոպոսների անուններ, ինչպես ասվեց, չէին տրվում՝ նրանց մեջ չգտնելով արժանի որևէ մեկին: Թերևս բացառություն էր կազմում Աստրախանի և Վրաստան-Իմերեթի հայոց թեմերի նախկին առաջնորդ, իսկ այդ ժամանակ արդեն կաթողիկոսական տեղապահ և Էջմիածնի հոգևոր միաբանության ղեկավար Գևորգ արք. Սուրենյանցը: Նրա թեկնածությունը հաճախ էր հայտնվում Դաշնակցության մամուլի էջերում, քանի որ նրա համակրանքը այդ կուսակցության կողմն էր, որի պատճառով ենթարկվում էր «Մշակի» և ազատական մամուլի ուրիշ օրգանների քննադատություններին:

Կաթողիկոսական ընտրության նախապատրաստական շրջանում տեղի ունեցած քննարկումների շնորհիվ հասարակական տարբեր խավերում առաջացան համապատասխան տրամադրություններ, ձևավորվեցին զանազան հայեցակետերով այլևայլ խմբավորումներ:

Կաթողիկոսական խնդրով զբաղվելու համար դեռևս 1908 թ. մարտի կեսերին տեղի ունեցած հրապարակային ժողովներից մեկում առաջարկ էր եղել ընտրել մի ժամանակավոր նախընտրական հանձնախումբ: Առաջարկությունը հավանություն էր գտել և հենց նույն ժողովում կազմավորվել էր հանձնախումբը

հետևյալ կազմով՝ Ալեքսանդր Քալանթար, Սամսոն Հարությունյան, Համբարձում Առաքելյան, Ստեփան Մամիկոնյան, Առաքել Բաբախանյան, բժ. Ալեքսանդր Ստեփանյան, բժ. Վահան Արծրունի, Ավետիք Արասխանյան, Արամ Նազարեթյան: Մարտի վերջերից հանձնաժողովը պարբերաբար ունենում էր նիստեր, քննում ընտրությունների վերաբերյալ բազմազան հարցեր[1]:

Նախընտրական հանձնախումբը 1908 թ. մայիս-հունիս ամիսներին Թիֆլիսում կազմակերպեց ու անցկացրեց մի ամբողջ շարք խորհրդակցական ժողովներ՝ թեմական պատվիրակների և գավառային ներկայացուցիչների մասնակցությամբ: Ինչպես հանձնաժողովի, այնպես էլ խորհրդակցական ժողովների նպատակը մեկն էր՝ հասարակությանը պատրաստել, որպեսզի գիտակցաբար ու պատասխանատվությամբ մոտենա առաջիկա կաթողիկոսական ընտրության: Ընտրողական ձայն ունեցող յուրաքանչյուր անձնավորություն պետք է ներշնչվեր լրջորեն մոտենալու թեկնածուների ծանրակշիռ խնդրին, հստակ ու ճիշտ պատկերացում կազմելու նրանց մասին, ովքեր քվեարկելու էին իբրև թեմական պատգամավորներ:

Խորհրդակցական առաջին իսկ ժողովներից պարզ էր դարձել, որ կաթողիկոսական թեկնածուների մասին հասարակության մեջ կա երկու որոշակի հոսանք՝ իզմիրլյանական և հակիզմիրլյանական: Հասարակության ստվար մասը հարել էր Իզմիրլյանի թեկնածությանը, ուստի խորհրդակցական ժողովների մասնակիցների խոշոր մեծամասնությունը կազմում էին իզմիրլյանականները: Ազատական և դաշնակցական մամուլի օրգանները բացի Իզմիրլյանից ուրիշ թեկնածու չէին տեսնում, և ազատական «Մշակը» օրեր ու շաբաթներ շարունակ միայն նրան էր առաջ մղում:

Հակիզմիրլյանականները, ինչպես և սպասելի էր, կենտրոնացել էին գլխավորապես Օրմանյանի թեկնածության վրա՝ նրա համակերպման քաղաքականությունը տվյալ պահին ամենանպատակահարմարը համարելով:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 82, 18 ապրիլի 1908 թ.:

Թեև օրմանյանականներն իրենց թեկնածուին պաշտպանում էին շատ եռանդագին, բայց թեմական ժողովներում այդ թեկնածուի պաշտպաններն ամենուր պարտություն էին կրում: Դրա հիմնական պատճառներից մեկը դաշնակցականների և հնչակյանների հակաօրմանյանական բուռն քարոզչությունն էր:

Սա բացառիկ դեպք էր, երբ ՀՅ դաշնակցությունը և Հնչակը համատեղ ու միակամ էին հանդես գալիս:

* * *

Վերջապես 1908 թ. հոկտեմբերի վերջին էջմիածնում հավաքվեցին Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության ժողովի բոլոր 78 պատգամավորները, որոնցից 43-ը եկեղեցական էր, 35-ը՝ աշխարհական: 78-ից մի քանիսն ունեին երկու ձայնի իրավունք, այնպես որ ձայների ընդհանուր թիվը 105 էր: Բայց պետք է 125 լիներ: Ձայների պակասի պատճառն այն էր, որ էջմիածին չէին եկել հատկապես Թուրքահայերից ընտրված զգալի թվով պատգամավորներ, որոնք միասին 20 ձայն ունեին[1]: Ընդհանրապես Թուրքահայ ավելի քան 25 թեմ զրկվել էր կաթողիկոսական ընտրությանը պաշտոնապես մասնակցելու իրավունքից: Կիլիկիո կաթողիկոսությունից այնպես էլ որևէ պատգամավոր չէր եկել: Պատճառը Կ. Պոլսի ազգային պատրիարքարանի և Կիլիկիո կաթողիկոսության միջև հարուցված խնդիրներն էին, որոնց միջամտելու համար էջմիածնի սինոդը որևէ իրավասություն չուներ:

Թուրքիայից այդքան մեծ թվով պատգամավորներ էջմիածին առաջին անգամ էր տեսնում: Բանն այն է, որ էջմիածին գալը կապված էր մեծ ծախսերի հետ, ուստի նախկինում կաթողիկոսների ընտրության ժամանակ էջմիածին էին գալիս այն պատգամավորները, որոնք սեփական դրամական միջոցներ ունեին: Այժմ էլ Մայր աթոռում կարծում էին, թե Թուրքահայ

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 243, 2 նոյեմբերի 1908 թ.:*

պատգամավորները ռուսահայ պատգամավորների նման եկել են իրենց միջոցներով: Բայց տարիներ անց հայտնի դարձավ, որ նրանց թե՛ ճանապարհի և թե՛ կեցության ծախքը (որը կազմել էր մոտ 2400 օսմանյան ոսկի՝ մոտ 22.000 ռուբլի) հոգացել էր Կ. Պոլսի պատրիարքարանը (այսպես կոչված «Ազգային սնտուկ»-ը): Դա այն գումարից էր, որ ռուսահայերը ուղարկել էին պատրիարքարանին՝ թշվառ գաղթականներին օգնելու համար[1]:

Էջմիածնում հավաքված պատգամավորների վրա շատ ճնշիչ տպավորություն էր թողել վանքի և ընդհանրապես եկեղեցական գործերի վիճակը: Նրանք ականատես եղան, թե ի՞նչ աստիճանի է ավերված վանական եկեղեցական տնտեսությունը, ինչպե՛ս են վտանգված մշակութային հաստատությունները: Ամբողջապես խախտված էր ամեն կարգ ու կանոն: «Մշակը» գրում էր. «Ի՞նչ են ներկայացնում այժմ Էջմիածինը, միաբանությունը, ճեմարանը, թեմական եւ ծխական դպրոցները, վանական կալուածքները եւ այլն: Ամէն ինչ աւեր է ու թալանի վիճակում, ուր թագաւորում են միայն կամայականութիւնը եւ օրինազանցութիւնը»[2]:

Ժողովուրդն այդ բոլորն ամեն օր տեսել էր, ամեն կողմից տագնապ էր հնչեցվում, մարդիկ վշտանում, վրդովվում էին, բայց Էջմիածնի կազմալուծման ընթացքը կանգնեցնելու և այնտեղ բարեկարգ վիճակ հաստատելու որևէ լուրջ և էական հնար չէր գտնվում:

Պատգամավորները կոչված էին նոր կաթողիկոսի ընտրությունը կատարելիս ելնել համազգային շահերից, բացառելով դասային, կուսակցական և անձնական կողմնորոշումները: «Արարատ» հանդեսը, արտահայտելով Մայր աթոռի պաշտոնական տեսակետը, գրում էր.

«Հայոց ազգը այժմ ներքին բարոյական քայքայման կրիտիքական մոմենտի մէջ է, նա կարօտ է այժմ բարոյական մի հզօր նեցուկի եւ պէտք է յուսալ, որ թէ՛ հոգեւորական եւ թէ՛ աշխարհական պատգամաւորները ամենայն լրջութեամբ եւ անկողմ-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»,*** *№ 206, 22 սեպտեմբերի 1911 թ.:*

[2] *Նույն տեղում, № 239, 29 հոկտեմբերի 1908 թ.:*

նապահութեամբ կկատարեն իրանց վրայ դրուած պարտքը եւ իրանց համերաշխ եւ խոհուն ընտրութեամբ կկարողանան տալ եկեղեցուն ու ազգին այնպիսի մի հոգեւոր պետ, որ ամենայնիւ կանգնած կլինի իր կոչման ամենաբարձր աստիճանի վերայ»[1]:

Ընտրել ամենաարժանավորին նշանակում էր ընտրելին պետք է լինի անկեղծ հավատացյալ, խոհուն, բանիմաց, փորձառու, վարչական ընդունակությունների տեր, զարգացած և դարի ոգին ըմբռնող մի անձ,- ա՛յս էր օրվա պահանջը:

Ներկայացնելով Հայ եկեղեցում ստեղծված լճացման ու քայքայման վիճակը, «Արարատը» շարունակում էր. «Հերակլէսի ոյժեր են հարկաւոր բարձրացնելու այն ծանրութիւնը, որ կոչւում է արդի ազգային եկեղեցական վիճակ, իր ցիր ու ցան հօտով, կիսակռապաչտ եւ կիսաանհաւատ անդամներով, կազմալուծուած վարչութիւնով, անկերպարան կրթական գործերով, անչէն վանքերով, գռեհիկ եւ տգէտ քահանայական դասով, հակասութիւնների մէջ ընկած եւ անխորհուրդ միաբանութիւնով, անապահով ճեմարանով, քար ու քանդ եղած եւ տնտեսապէս ի սպառ քայքայուած Մայր Աթոռով»[2]:

Այդ լայնածավալ քայքայման պայմաններում նորընտիր կաթողիկոսը պարտավոր էր իր չուրջը համախմբել կարող լավագույն ուժերը, հաստատուն կարգեր մտցնել հանրային կյանքի բոլոր մարզերում՝ վարչական, տնտեսական, ուսումնական, ազգային: Նա պետք է կարողանար սերտ կապերով միացնել իր հոտի ցիր ու ցան և միմյանցից օտարված անդամները, անձնվեր սեր ունենար դեպի ազգը, պաչտպաներ նրա չահերը բոլոր տեսակ հողմերի և հատվածների դեմ, վճռականություն և հեղինակություն ունենար մտցնել եկեղեցական և վարչական գործերի մեջ այնպիսի բարենորոգումներ և անել այնպիսի անդամահատություններ, առանց որոնց չէր կարող կենդանանալ անհոգության և չարակամ հարձակումների մատնված ազգային

---

[1] ***«Արարատ»,*** *№ 9, սեպտեմբեր, 1908, էջ 746:*

[2] *Նույն տեղում, էջ 747:*

կեանքն առաջնորդող Հայոց եկեղեցին[1]:

1908 թ. հոկտեմբերի 30-ին Էջմիածնում սկսվեց կաթողիկոսական ընտրության գործընթացը: Առավոտյան ժամը 9 անց կեսին պատգամավորները վեհարանից հանդիսավոր երթ կատարեցին դեպի մայր տաճար, ուր կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցը պատարագ մատուցեց: Այստեղ, մայր տաճարում, աշխարհական ու եկեղեցական բոլոր պատգամավորները երդում ընդունեցին իրենց ընտրությունը կատարել խղճի մտոք:

Նույն օրը պատգամավորները հավաքվեցին խորհրդակցության, որպեսզի ավանդույթի համաձայն կազմեն ***կաթողիկոսական թեկնածուների*** *քառանուն ցանկը: Նախօրյակին սինոդի պրոկուրորը որոշել էր, որ յուրաքանչյուր պատգամավոր միայն մեկ ձայնի իրավունք պետք է ունենա: Առաջադրվեց չորս թեկնածու՝ Մատթեոս արք. Իզմիրլյան, Եղիշե եպս. Դուրյան, Էջմիածնի միաբաններից Մեսրոպ արք. Սմբատյան և Գրիգորիս արք. Գառնակերյան: Բազմակողմանի քննությունից հետո սկսվեց փակ, գաղտնի քվեարկությունը: Իզմիրլյանի օգտին ձայն էին տվել 78 պատգամավորներից 77-ը (ձայն չէր տվել Սուքիաս արք. Պարզյանցը, որը հայտարարել էր, թե Լուսավորչի գահի արժանավորագույն հաջորդը Մաղաքիա արք. Օրմանյանն է)[2]: Դուրյանն ստացել էր 66, Սմբատյանն ու Գառնակերյանը՝ 35-ական ձայն[3]:*

Հոկտեմբերի 31-ին կայացավ պատգամավորների խորհրդակցություն, որտեղ՝ 1) Միաձայն որոշվեց հեռագրով դիմել դեռևս Պետերբուրգում գտնվող փոխարքա Վորոնցով-Դաշկովին և խնդրել վերացնել կաթողիկոսի ընտրության գաղտնի քվեարկությունը՝ վերականգնելով նախկին ("Положение"-ից առաջ գոյություն ունեցող) բաց քվեարկության կարգը, 2) Կաթողիկոսական առաջին թեկնածու ճանաչել Իզմիրլյանին, որը քվեարկվել է համարյա միաձայն, 3) Կաթողիկոսական երկրորդ թեկնածու համարել Դուրյանին, որին ձայն է տվել պատգամավորների ճնշող մեծամասնությունը:

---

[1] ***«Արարատ»,*** *№ 9, սեպտեմբեր, 1908, էջ 748:*

[2] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 244, 4 նոյեմբերի 1908 թ.:*

[3] *Տե՛ս* ***«Արեւելք»****, № 6955, 19 նոյեմբերի 1908 թ.:*

Նույն օրը երեկոյան պատգամավորներին տեղեկացվեց, որ փոխարքան անմիջապես հեռագրով պատասխանել է, որ չի կարող հարգել ընտրությունների կարգում փոփոխություններ կատարելու միջնորդությունը, քանի որ գաղտնի քվեարկության նոր կարգը վերահաստատված է նախարարների խորհրդի հավանությամբ, և որ առանց նրա որոշման ինքը դա փոխելու իրավունք չունի: Փոխարքան նաև նշել էր, որ գաղտնի քվեարկությունն, իր կարծիքով, Հայ եկեղեցու ավանդական կարգը չի խախտում[1]:

Նոյեմբերի 1-ը կաթողիկոսի ընտրության օրն էր:

*Առավոտյան ժամը 11-ին պատգամավորները դիմեցին մայր տաճար՝ կատարելու **կաթողիկոսի ընտրությունը**՝ երկու օր առաջ կազմված քառանուն ցանկից: Ժողովին մասնակցում էին Երևանի նահանգապետ կոմս Վ. Տիզենհաուզենը և Էջմիածնի սինոդի պրոկուրոր Փ. Մելիք-Օհանջանյանը:*

Սկսվեց քվեարկությունը: Նախ քվեարկության դրվեցին քառանուն ցանկի անունները. Իզմիրլյան արք.-ն ստացավ 73 կողմ և 4 դեմ, Դուրյան եպս.-ը՝ 55 կողմ և 22 դեմ, Գառնակերյան արք.-ը՝ 19 կողմ և 59 դեմ, Սմբատյան արք.-ը՝ 11 կողմ և 65 դեմ[2]:

Դրանից հետո քվեարկության դրվեցին առավել ձայներ ստացած երկու հոգևոր գործիչների՝ Իզմիրլյանի և Դուրյանի թեկնածությունները: Երկանուն ցանկի քվեարկության արդյունքում Իզմիրլյանն ստացավ 73 կողմ և 4 դեմ, Դուրյանը՝ 55 կողմ և 22 դեմ:

Այդպիսով, հեռակա կարգով Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Կ. Պոլսի նախկին պատրիարք Մատթեոս արք. Իզմիրլյանը[*]:

Ժողովը միաձայն չնորհավորական հեռագիր ուղարկեց Կ. Պոլիս՝ Իզմիրլյանին[3]:

---

[1] *Տե՛ս **«Մշակ»**, № 243, 2 նոյեմբերի 1908 թ.:*

[2] *Տե՛ս **«Արեւելք»**, № 6556, 20 նոյեմբերի 1908 թ., տե՛ս նաև **«Մշակ»**, № 243, 2 նոյեմբերի 1908 թ., **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., Մայր աթոռ ս. Էջմիածին, 2001, էջ 5838:*

[*] *Կաթողիկոս ընտրված Մատթեոս Իզմիրլյանի կենսագրականը, գրված Ալ. Շիրվանզադեի ձեռքով, տե՛ս **«Մեր ձայնը»** (Նոր Նախիջեւան) թերթում, №№ 89, 90, 91, 93, 96, 1908 թ.:*

[3] *Տե՛ս **«Մշակ»**, № 243, 2 նոյեմբերի 1908 թ.:*

Հայկական հասարակության բացարձակ մեծամասնությունը ողջունում էր Հայ եկեղեցու նոր Վեհապետի ճիշտ ընտրությունը՝ նրա գործունեության հետ կապելով էջմիածնի վերածնության հույսը:

Իզմիրլյանի կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ Արշակ Զոպանյանը Փարիզից նամակով գրում էր. «Ահաւոր ցաւի, վտանգի օրերու մէջ ենք: Ձեր հոգեկան ուժը մեծ է: Կը մաղթեմ, որ բիւրապատկուի ան՝ որպէսզի իբր Հայոց Հայրապետ՝ կարենաք նպաստել թէ՛ ռուսահայոց, թէ՛ թրքահայոց մեծ ցաւերուն մեղմացման: Երանի՜ թէ յաջողէիք Ռուսին ու Հայուն մէջ մտած ողբալի թիւրիմացութիւնը փարատել եւ Ռուսին աչքը նորէն բարձրացնել մեր դժբախտ ժողովուրդին վրայ»[1]:*

«Անահիտում» տպագրած հատուկ հոդվածում Զոպանյանը վստահություն էր հայտնում, որ Իզմիրլյանն, իբրև հայրապետ, «կարգ ու կանոն պիտի դնէ էջմիածնայ միաբանութեան եւ ամբողջ հայ եկեղեցական գործերուն մէջ...»[2]:

Ռուսահայությունը նույնպես մեծապես գոհ էր Իզմիրլյանի ընտրությունից: Կովկասից և Ռուսաստանի զանազան տեղերից հեռագրեր ու նամակներ էին հղվում Կ. Պոլիս, որոնց հեղինակները ողջունում էին ընտրյալ կաթողիկոսին, նրան բարեմաղթանքներ հղում, իրենց համակրանքը և ուրախությունն արտահայտում, միաժամանակ կովկասահայ կյանքին միանգամայն անծանոթ Իզմիրլյանին էջմիածնի անմխիթար վիճակի մասին տեղեկություններ էին հաղորդում, զանազան խորհուրդներ տալիս, առաջարկություններ ներկայացնում:

Բաքվի հայ նշանավոր գործիչներից Իսահակ Թամամշյանը 1909 թ. փետրվարի 14-ի նամակով դեռևս Կ. Պոլսում գտնվող Իզմիրլյանին գրում էր. «...Ամէնքը միաբերան կուզեն, որ Դուք չուտով էջմիածնում լինէք ... Բոլոր էջմիածնական վիճակը աղաւաղուած եւ քայքայուած դրութեան մէջ է, ղեկավար չկայ,

---

* *Հավանաբար ակնարկում է գոլիցինյան ռեժիմի օրերին Հայ եկեղեցու կալվածքների բռնագրավման հետևանքները:*

[1] *Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթ. 14, վավ. 505:*

[2] ***«Անահիտ»*** *(Փարիզ), № 96, օգոստոս-սեպտեմբեր, 1909, էջ 141:*

ամէնքի յոյսը Ձեր վրայ է, միակ փրկութիւնը Դուք էք Հայոց համար, ուրեմն ամէնքը կուզեն, որ Ձեր Պետերբուրգ գնալը յաջող ելք ունենայ»: Նամակագիրը գտնում էր, որ ռուսահայութեան և ռուսաց պետութեան միջև գոյություն ունեցող հակասությունները պետք է հարթվեն նախարարապետ Ստոլիպինի և արտգործնախարար Ալեքսանդր Իզվոլսկու հետ հանդիպումների ժամանակ: Նա համոզված էր, որ տարաձայնություններն անպայման պետք է փոխարինել իրար հասկացողությամբ, քանզի «միայն խոհեմ բանակցութեամբ եւ համարձակութեամբ կհարթուի բաւարար ճանապարհ...»[1]: Թամամշյանը համոզված էր, որ «ոչ մի եւրոպական տէրութիւնից մաղաչափ օգնութիւն չկայ... Առ այժմ հայոց միակ յոյսը ռուսաց տէրութեան վրայ է, որ հայերին եկեղեցական ինքնավարութիւն չնորհել է, բայց մեր դրացի վրացիներին եկեղեցական ինքնավարութիւն մերժել է եւ կմերժէ միշտ: Բայց մեծ դժբախտութիւն է հայոց համար, որ չնայելով եկեղեցական ինքնավարութեան, Հայոց եկեղեցին անկեալ դրութեան մեջ է – փառասիրութիւն, շահասիրութիւն, կողոպտութիւն եւ բթամտութիւն, ուրիշ ոչինչ եկեղեցական ինքնավարութեան մէջ: Ռուսները մեր դրացիք են: Հինաւուրց առած կայ, որ դրացու հետ հարկաւոր է հաշտութեամբ ապրել: Որքան կուզէ դրացին վատ լինի, հարկաւոր է համաձայնութեամբ վարուիլ, որ չարամիտ դրացին տանը պատը չտապալէ»[2]:

Մայր աթոռի պաշտոնական օրգան «Արարատը» գրում էր.

«Ողջունելով ընտրութիւնը կասենք, որ ս. Էջմիածինը աւելի արժանաւոր տէր չէր կարող ունենալ եւ հայ ժողովուրդը աւելի գթառատ պահապան հայր չէր կարող գտնել: Միմիայն Նա, Նրա չուրջը թագաւորող ոգեւորութիւնն ու ցնծութիւնը կարող են վերակենդանացնել Էջմիածինը եւ հայ ժողովրդին կապել իր Մայր Աթոռի հետ»[3]:

---

[1] ***«Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան»,*** *գիրք Ը, Մատթէոս Բ Իզմիրլեան կաթողիկոս Ամենայն Հայոց: Կազմեց և առաջաբանը գրեց Սանդրօ Բէհրուդեանը, «Հայաստան» հրատ., Երեւան, 2001, էջ 247:*

[2] *Նույն տեղում, էջ 247–248:*

[3] ***«Արարատ»,*** *№ 11, նոյեմբեր, 1908, էջ 970:*

«Մի խումբ հայեր» ստորագրությամբ էջմիածնում ստացված նամակի հեղինակները գրում էին. «Մենք յոյս ունինք, որ Երկաթէ Պատրիարքը կաթողիկոս դառած՝ զօրաւոր եւ հաստատուն կամքի տէր կլինի, քանի որ ամբողջ ազգը մի սիրտ եւ մի հոգի պաշտում է նրան...»[1]:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՐՅԱՊՆԴՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

Երրորդ պետական դումայի աջ միապետական պատգամավորներն առիթը բաց չէին թողնում արտահայտելու իրենց հակակրանքը ընդհանրապես կայսրության այլազգիների, մասնավորապես կովկասցիների նկատմամբ:

*Մամուլը հաղորդում էր, որ պետական դումայում հայազգի ներկայացուցիչներից մեկի ճառը ռուս «հայրենասերները» անվանել են **հաչոց**: Տրամաբանորեն դատելով, ուրեմն հաչում էին այն բոլոր հայերը, որոնք իրենց քվեներով նրան դումա էին ուղարկել: Անդրադառնալով հայությանը հասցրած այդ վիրավորանքին, «Լուման» գրում էր. «Եթէ այժմեան ռուս ժողովուրդը գիտենար. թէ ի՞նչպիսի երախտագիտութեամբ էին յիշում Ռուսիայի ինքնակալները եւ իրանց նախնիքները հայ ժողովրդին, ի՞նչ պատիւներ էին տալիս այդ ծառայութիւնների փոխարէն, մի փոքր աւելի բարեմտութեամբ կվերաբերուէին դէպի այդ ժողովուրդը: Կարդացէ՛ք, պարոննե՛ր, «ռուս հայրենասէրնե՛ր», կարդացէ՛ք Ռուսաստանի վերջին դարերի պատմութիւնը հարազատ աղբիւրներից, մտէ՛ք մայրաքաղաքի հարուստ մատենադարանները եւ ուսումնասիրեցէ՛ք Ռուսիայի մեծ ինքնակալների անհամար արտօնագիրները: Գուցէ այն ժամանակ ամաչէք»[2]:*

Ամիսներ չարունակ ռուսական հետադիմական մամուլը կովկասցիներին սպառնալիքներ էր կարդում, թե պետական դումայի անդամների մի խումբ պատրաստվում է կովկասյան

---

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237[գ], վավ. 281, թ. 4:*

[2] ***«Լուսայ»** (Թիֆլիս), № 10, հոկտեմբեր, 1909, էջ 61–62:*

գործերի մասին հարցապնդումով հանդես գալ դումայում, որին հետևելու են կտրուկ խստացումներ երկրամասում:

Հարցապնդումը մերթ հետաձգվում էր, հետո նորից խոսվում էր դրա մասին, ապա կրկին հետաձգվում: Իսկ հետաքրքրությունը մնում էր ասպարեզի վրա՝ իբրև մի չարագուշակ ուրվական:

Վերջապես տեղի ունեցավ հարցապնդումը, որի տակ ստորագրել էր դումայի առավել հետադիմական 38 անդամ: Դա կազմված էր կոչտ ու հարձակողական ոգով ու բովանդակությամբ: Հարցապնդողները կովկասյան իշխանություններից և անձամբ փոխարքայից պահանջում էին պատասխան տալ, թե ինչո՞ւ նրանք չեն կարողանում կարգ ու կանոն հաստատել երկրամասում, բնում խեղդել այնտեղ ծայր առած և Ռուսաստանից անջատվելուն ուղղված չարժումները, կանխել բնիկների՝ ռուսներին հալածելու՝ գնալով հաճախակի դարձող դեպքերը, դաժանորեն արմատախիլ անել հայկական ու վրացական ահաբեկչությունը և այլն: Այդ ամենի գլխավոր պատասխանատուն նրանք համարում էին փոխարքային:

Դումայում այդ բոլոր հարցերին պատասխան տալու համար Իլարիոն Վորոնցով-Դաշկովը* Պետերբուրգ ուղարկեց գաղտնի խորհրդական բարոն Բորիս Նոլդեին: Սա ժողովել էր մեծաքանակ նյութ՝ հերքելու համար այն զրպարտությունները, որ Կովկասի և կովկասյան վարչակազմի մասին տարածել էին սևհարյուրյակային գործիչներն ու նրանց ձայնակցող թերթերը:

Հարցապնդման կապակցությամբ, վերջապես, 1908 թ. նոյեմբերի 3-ին պետական դուման որոշեց անդրադառնալ Կովկասի հարցին[1]: Այդ որոշումը մեծ հետաքրքրություն էր շարժել ոչ միայն Կովկասում, այլև համայն Ռուսաստանում:

Դումայի դեկտեմբերի 10-ի երեկոյան (30-րդ) նիստով, որին նախագահում էր դումայի նախագահ Նիկոլայ Խոմյակովը, սկսվեց «Կովկասյան ահաբեկչական գործողությունների մասին

---

* Փոխարքա Վորոնցով-Դաշկովը, որը Պետերբուրգ էր մեկնել 1908 թ. հուլիսի վերջերին, Թիֆլիս էր վերադարձել երեք ու կես ամիս անց՝ նոյեմբերի 2-ին:

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 27, 7 դեկտեմբերի 1908 թ.:

Վորոնցով-Դաշկովին ուղղված հարցապնդման քննությունը»[1]:

Կովկասի փոխարքայի լիազորությամբ և նրա անունից դումայում հաղորդումով հանդես եկավ բարոն Նոլդեն և անհրաժեշտ բացատրություններ տվեց:

Իր ելույթում Նոլդեն նշում էր, որ Կովկասի ազգաբնակչությունը կազմված է մոտ 60 ժողովրդից ու ցեղից, որոնցից ամենագլխավորները, բացի ռուսներից, թուրքերը, հայերը և վրացիներն են: Նա չեշտում էր, որ այդ էթնիկ հավաքականություններն իրենց տնտեսական և մշակութային զարգացման մակարդակով չափազանց տարբեր են՝ սկսած եվրոպական մշակույթի աստիճանի վրա գտնվող ժողովուրդներից, վերջացրած կիսավայրենի ցեղերով, որոնք աղոտ պատկերացում ու հասկացողություն ունեն հատկապես սեփականության իրավունքի և մարդկային կյանքի գնահատման մասին, որոնք և պայմանավորում են առանձին հանցագործությունների մեծ թիվը երկրամասում:

Սակայն զեկուցողը պատգամավորների ուշադրությունն առավելապես հրավիրում էր այն բանի վրա, որ չնայած դրան, հանցագործությունների բոլոր տեսակների մեջ չկան այնպիսիք, որոնք թելադրված լինեն Կովկասը Ռուսաստանից անջատելու մղումով: «Կովկասեան ոճրագործութիւնները,- ասում էր նա,- չունեն հակառուսական ուղղվածութիւն: Անջատական տրամադրութիւններ կան Կովկասի առանձին ազգութիւնների մի քանի խմբակցութիւնների մոտ միայն, բայց դրանք երբեք չեն արտայայտուել ռուս բնակչութեանը հալածելու փաստերով: Այո՛, բարձրաձայն հաւաստում եմ, որ Կովկասում գոյութիւն չունի հալածանք ռուս տարրի դէմ»[2]:

Զեկուցողը հատուկ կանգ է առնում Կովկասում 1903-1905 թթ. կատարված ահաբեկչական գործողությունների վրա, որոնք մեծ մասամբ տեղի էին ունեցել հայերի ձեռքով: Նույնիսկ այդ ահաբեկչական ակտերը, ասում էր նա, ներշնչված չեն եղել

---

[1] Տե՛ս **«Գործ»**, № 78, 14 դեկտեմբերի 1908 թ.: Դումայում սկսված հարցապնդման քննությունը լուսաբանված է նաև «Գործի» 1908 թ. 77-րդ և 79-րդ համարներում:

[2] Տե՛ս **«Զանգ»** (Բաքու), № 12, 31 դեկտեմբերի 1908 թ., էջ 179:

անջատողականության գաղափարներով: «Այդ ակտերը,- հայտարարում էր բարոն Նոլդեն,- անմիջական արգասիք են եղել հայերի նկատմամբ Կովկասի նախկին փոխարքա Գրիգորի Գոլիցինի չպատճառաբանուած խստութիւնների: Ահաբեկչական գործողութիւններից տուժել են միայն տեղացիները, մինչդեռ ռուսները բոլորովին անվնաս են մնացել յեղափոխական խռովութիւնների ժամանակ»[1]: Շարունակելով զեկուցումը, Նոլդեն ապա հայտնում է, որ եթե կովկասյան կառավարչական պաշտոնյաները, ինչպես կարծում են ոմանք, չեն կարողացել կատարել իրենց պարտականությունները, այդ ոչ թե նրա համար, որ տեղացիներն են նրանց հալածել, այլ որովհետև նրանք անծանոթ են եղել տեղական լեզուներին ու չեն կարողացել ու չեն կարողանում մոտիկից իմանալ ազգաբնակչության ցավերն ու կարիքները և նպաստել նրա բարեկեցության աճին[2]:

Այնուհետև, փոխարքայի ներկայացուցիչը նշում էր, որ հայկական ահաբեկչական ալիքն արդեն անկում է ապրել, և ընդհանրապես հայերի վրա թուլացել է Դաշնակցության ազդեցությունը: Դրան մեծապես նպաստել է Հայ եկեղեցու կալվածքները 1905 թ. օգոստոսի 1-ի Բարձրագույն հրամանով Էջմիածնին վերադարձնելու հանգամանքը[3]:

Քաղաքագիտորեն չատ հաջող կազմված և բարոն Նոլդեի միջոցով դումային ներկայացված Վորոնցով-Դաշկովի զեկույցը մինչ այդ արժանացել էր Նիկոլայ II կայսեր և նախարարների խորհրդի հավանության:

Բարոն Նոլդեի ելույթից հետո հանդես եկան դումայի մի չարք պատգամավորներ[4], որոնց թվում հատկապես արտակարգ եռանդ ցուցաբերեցին ծայրահեղ միապետական ազգայնամոլները:

Բայց ե՞րբ է ազգայնամոլությունը մտածել ու գործել տրամաբանորեն: Պետական դումայի աջակողմը ո՛չ միայն անբավա-

---

[1] Տե՛ս **«Զանգ»**, № 12, 31 դեկտեմբերի 1908 թ., էջ 179:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 270, 6 դեկտեմբերի 1908 թ.:

[4] Տե՛ս Кавказский запрос в Государственной думе. Полные речи всех ораторов по официальным стенограммам, Тифлис, 1909.

բար համարեց կովկասյան գործերի մասին Նոլդեի ներկայացրած զեկուցումը, այլև պնդեց, որ Կովկասում, այնուամենայնիվ, կայսրությունից անջատվելու շարժում կա, ու մասնավորապես չեշտեց, որ այդ շարժումը գոյություն ունի հատկապես հայերի մեջ:

Կովկասի փոխարքայի գաղտնի խորհրդականի հաղորդումից հետո առաջինն ամբիոն է բարձրանում Բեսարաբիայից պատգամավոր ընտրված տխրահռչակ Վլադիմիր Պուրիշկևիչը և խստիվ քննադատում դումային ներկայացրած հարցապնդման պատասխանը: Երկու ժամից ավելի տևած նրա երկար ու տաղտկալի ճառը լի էր դավադրական զրպարտություններով ու ակներև ստերով՝ համեմված ամենաանզուսպ հայհոյանքներով: Հասարակայնությունը դիպուկ գնահատական տվեց Պուրիշկևիչի այդ խայտառակ ելույթին՝ դա համարելով մի սև էջ պետական դումայի արձանագրությունների մեջ:*

Պուրիշկևիչն ասում էր, թե ցավալի է, որ Կովկասի ռուսական կառավարչությունը ոչ միայն չի պաշտպանում մուսուլմաններին, այլև բիրտ հալածանքներ է սկսել նրանց դեմ, այնինչ Կովկասում Ռուսաստանին հավատարիմ ազգաբնակչությունը միայն մուսուլմաններն են, և եթե կառավարչությունը հենվեր միայն նրանց վրա, ապա երկրամասն այնպիսի ողորմելի դրության մեջ չէր հայտնվի, ինչպիսին է այժմ: Դրա փոխարեն Վորոնցով-Դաշկովը հենվում է Ռուսաստանի վաղեմի հակառակորդների՝ հայերի վրա:

Պուրիշկևիչը Կովկասի հայերին մեղադրում էր նաև Պարսկաստանում տեղի ունեցող հակակառավարական ապստամբության համար: Դումայի աջակողմյան խմբակցությունների բուռն

---

* *Սիմոն Վրացյանն իր հուշերում նշել է, որ սևհարյուրյակային աջակողմի պատգամավոր Պուրիշկևիչի հետ իրեն ծանոթացրել է դումայի պատգամավոր Հովհաննես Սաղաթելյանը: «Իբրեւ շրջանային կրթական տեսուչ նա բաւական զարգացած էր եւ խօսելու էլ ընդունակութիւն ունէր: Սրամիտ, սրախօս, հայհոյաբան, յարաշարժ՝ նա հոպիտի դեր էր կատարում: ... Դումայում խայտառակ ելույթներում Պուրիշկևիչի հետ կարող էր մրցել միայն Նիկոլայ Մարկովը (Մարկով 2-րդը)՝ անասունի նման մի կալուածատէր» (**Սիմոն Վրացեան**, Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատ. Բ, Պէյրութ, 1960, էջ 119):*

ու երկարատև ծափահարությունների ուղեկցությամբ նա ասում էր. «Հայերը բուռն գործունէութիւն են ծաւալել Թավրիզում, նպատակ ունենալով ընդլայնել յեղափոխութեան սահմանները, որպէսզի արգելք հանդիսանան այդ երկիր թափանցելու Ռուսաստանի ջանքերին»[1]:

Անցնելով «Վրացիների և հայերի սեպարատիզմի» հարցին՝ ելույթ ունեցողը հատկապես ծանրանում է վերջիններիս անջատողական ձգտումների խնդրի վրա, որն, իբր դրսևորվում է 1828 թ. սկսած: Այդ անջատողականության նպատակը ոչ միայն Հայաստանի անկախության վերականգնումն է, այլև հարևան երկրների հողերի զավթումը և իրենց երազած պետությանը միացնելը: Նա ասում էր, թե արդեն հայտնի է դարձել հայերի կազմած քարտեզի գոյությունը, որի մեջ ներառված են ամբողջ Հյուսիսային Կովկասն ու մինչև Վորոնեժի նահանգն ընկած ռուսական տարածքները: Ըստ որում, բարբառում էր նա, ընդարձակածավալ անկախ Հայաստանի ստեղծման համար պայքարի ղեկավար ուժը... Բաքվի հայոց կուլտուրական միությունն (ԲՀԿՄ) է, որի նախագահ ինժեներ Կոստանդին Խատիսյանը այդ ստեղծվելիք պետության գլուխն է կանգնելու[2]:*

Հայկական ապագա պետության մեջ հսկայածավալ ռուսա-

---

[1] ***«Մշակ»**, № 270, 6 դեկտեմբերի 1908 թ.:*

* *1908 թ. սկզբից աշխատանքներ էին տարվում վերակենդանացնելու Կովկասի հայոց բարեգործական ընկերության (ԿՀԲԸ) գործունեությունը: Այդ բարեգործական ընկերությունը հիմնվել էր 1881 թ. բժ. Բագրատ Նավասարդյանի ջանքերով: Մինչև գոլիցինյան ռեժիմը ընկերությունը մշակութային աչքի ընկնող դերակատարություն էր ունեցել հայկական իրականության մեջ, բայց 1899 թ. դադարեցրեց իր գործունեությունը, ավելի ճիշտ՝ վերածվեց Թիֆլիսի ՀԲ ընկերության: 1908 թ. փետրվարի 2-ին Թիֆլիսի բորսայի շենքում կայացած ԿՀԲԸ ընկերության առաջին ընդհանուր ժողովը հաստատեց ընկերության առաջին աշխատանքային ծրագիրը (տե՛ս **«Հովիտ»**, № 4, 10 փետրվարի 1908 թ., էջ 61-62): Բոլորը հույս էին հայտնում, որ ընկերության գործունեությունն ավելի լայն ու ավելի բեղմնավոր կլինի, քան անցյալում: Այդպես էլ եղավ: Նույն թվականին ընկերությունը ստեղծեց նոր մասնաճյուղեր: ԿՀԲԸ-ի հետ սերտորեն համագործակցում էր Բաքվի հայոց կուլտուրական ընկերությունը (ԲՀԿԸ):*

[2] *Տե՛ս **«Մշակ»**, № 276, 14 դեկտեմբերի 1908 թ.:*

կան տարածքներ ներառելու հայերի ձգտման մասին պուրիշ-կևիչյան ցնդաբանությունը մամուլի միջոցով տարածվում էր Ռուսաստանով մեկ: Ռուս բնակչության մեծ մասը, հատկապես մտավորական շրջաններն այդ ամենը զառանցանք էին համարում, բայց դա, այնուամենայնիվ, սև հետք էր թողնում և ապակողմնորոշում ռուսական հասարակության որոշ շերտերի՝ առաջ բերելով հակակրանք հայության, որպես ռուսական հողերի վրա աչք դրած ազգի, նկատմամբ[1]:

Պուրիշկևիչն այնուհետև անցնում է կովկասյան վարչախմբի պատասխանատու գործիչների քննադատությանը՝ մեկ առ մեկ: Սկսելով Ի. Ի. Վորոնցով-Դաշկովից և նրան անվանելով «արդեն զառամյալ, կաշառակերներով շրջապատված անարժեք մարդ»՝ Պուրիշկևիչն առաջարկում է փոխարքային պաշտոնազուրկ անել, նաև փոխել նրան ենթակա ողջ անձնակազմը: «Մեր սրբազան պարտքն է աջակցել, որպէսզի Կովկասում տանջուող մեր ռուս եղբայրները ազատուեն վորոնցովեան բիրտ լծից եւ այնտեղ ապրեն մարդավայել»[2]: Ապա՝ «Ինքը փոխարքան է դաւաճանօրէն շահագրգռուած, որպէսզի ռուսներն արտաքսուեն Կովկասից»: Պուրիշկևիչին հետևելով՝ նույն զարմանալի տեսակետն էին արտահայտում նաև Մարկովը, Տիմոշկինը և ուրիշ սևհարյուրյակայիններ, որոնք ամբիոնից վարչապետ Ստոլիպինին և Պետական խորհրդին կոչ էին անում եռանդուն կերպով միջամուխ լինել կովկասյան գործերի մեջ՝ «քանի դեռ ուշ չէ», հակառակ դեպքում Ռուսաստանից Կովկասն անջատելու իրական վտանգ է հասունանում, և դա հատկապես այն պատճառով, որ դրանում շահագրգռված է Վորոնցով-Դաշկովը՝ իր հանցավոր նախաձեռնություններով[3]:

Սևհարյուրյակայինների այս խոսքերի վրա դումայի ազատական խմբակցությունների ամբիոններից լսվում են՝ «Իսկ ինչո՞ւ է փոխարքան ուզում ռուսների արտաքսումը», «Ի՞նչ յի-

---

[1] Տե՛ս **«Դրօշակ»**, № 2-3, փետրվար-մարտ, 1909, էջ 17:

[2] **«Մշակ»**, № 276, 14 դեկտեմբերի 1908 թ.:

[3] Տե՛ս **«Գործ»**, № 2, 3 հունվարի 1908 թ.:

մարութիւն էք դուրս տալիս», «Ի՞նչ ապացոյցներ ունէք, ասացէ՛ք»[1] և այլն:

Պետդումայի հաջորդ օրվա՝ դեկտեմբերի 11-ի առավոտյան նիստում, ուր շարունակվում էր օրակարգային հարցի քննարկումը, Վլադիմիր Պուրիշկևիչի հարցին պատասխանելու համար ձայն է ստանում բարոն Բորիս Նոլդեն: Ամբիոն բարձրանալով՝ նա դատապարտում է այն զրպարտությունները, որոնք հասցեագրվել էին Կովկասի փոխարքային, «մի մարդու, որ իր բոլոր ճանաչողների հսկայական յարգանքն է վայելում»: Ելույթի վերջում Նոլդեն հայտարարում է, թե Բեսարաբիայից ընտրված պատգամավորը նույնիսկ արժանի չէ քանդելու կապերը իր զրպարտած անձանց կոչիկների[2]: Այս խոսքերը զայրույթի փոթորիկ են առաջ բերում դումայի աջակողմում և հավանության ծափեր՝ ձախակողմում:

Ընդմիջմանը բարոն Նոլդեն պետական դումայից ներողություն է խնդրում անպարկեշտ արտահայտության համար, միաժամանակ հիշեցնելով, որ իր խոսքերը բացառապես վերաբերել են Պուրիշկևիչին:

Նույն օրվա երեկոյան նիստում, երբ դումայում քիչ թե շատ հանդարտվել էին կրքերը, ելույթ է ունենում Նիկոլայ Զխեիձեն: Ջերմորեն պաշտպանելով Կովկասի փոխարքային, նա վճռականորեն մերժում է երկրամասի ժողովուրդներին վերագրվող անջատողականության մեղադրանքը: Դիմելով Պուրիշկևիչին և հարցապնդման մյուս հեղինակներին՝ նա ասում է. «Երբ դուք խօսում էք Կովկասում ահաբեկչական գործողութիւնների մասին, աչքի առաջ ունէ՞ք, արդեօք, այն մարդասպաններին եւ ջարդարարներին, որոնք մեծ բազմութեամբ վխտում են «Կովկասի ռուսաց հայրենասիրական ընկերութիւն» կոչուած յանցաւոր կազմակերպութեան մէջ...»[3]:

Պուրիշկևիչի և նրա համախոհների զրպարտությունների քննադատությամբ և Վորոնցով-Դաշկովի պաշտպանությամբ

---

[1] Տե՛ս **«Գործ»**, № 2, 3 հունվարի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 276, 14 դեկտեմբերի 1908 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում:

դումայում հանդես են գալիս նաև Անդրկովկասի թուրք պատգամավորները[1]:

Դումայում հարցի քննարկումն ըստ էության ձախողվում էր: Դա անհանգստություն էր առաջ բերել արքունիքում և կառավարության մեջ, որովհետև անխուսափելի էր դառնալու դժգոհության ալիքի բարձրացումը Կովկասի նման մի անհանգիստ երկրամասում: Դեկտեմբերի 12-ի երեկոյան նիստում դումայի նախագահ Խոմյակովն ստիպված հայտարարեց, որ կովկասյան հարցապնդման քննությունը հետաձգվում է 1909 թ. հունվարի 20-ից հետո:

Արքունիքում և կառավարությունում առաջ եկած անհանգստությունը զուր չէր: Դումայում հարցապնդման քննությանը լարված հետևում էին Ռուսաստանում, հատկապես Կովկասում: Ամբողջ Կովկասում զայրույթի փոթորիկ էր բարձրացել: Հատկապես հուզված էին հայ և վրաց հասարակությունները: Պուրիշկևիչն իր անհիմն ու սուտ տեղեկություններով, իր առասպելներով, հայհոյանքներով, անզուսպ հարձակումներով և հանդուգն ընդհանրացումներով միանգամից վրդովեց բոլորի զգացմունքները Կովկասում: Թե՛ հասարակական հիմնարկությունների, թե՛ վարչական ատյանների, թե՛ ազգաբնակչության զանազան խավերի ներկայացուցիչները միատեսակ իրենց զգում էին զրպարտված ու բարոյապես վիրավորված: Ահա թե ինչո՛ւ կովկասատյաց սևհարյուրյակային զրպարտիչներին մերկացնելու ու նրանց հյուսած դավադրությունը խորտակելու ընդհանուր ցանկություն էր առաջացել:

Բոլոր հայերին հատկապես վրդովեցրել էին Բաքվի հայոց կուլտուրական միության (ԲՀԿՄ) հասցեին դումայում հնչած բացահայտ զրպարտությունները: ԲՀԿՄ-ի ոչ միայն նախագահի, այլ որևէ անդամի մտքով անգամ երբևիցե չէր անցել պայքար սկսել «Մեծ Հայաստան» ստեղծելու համար, ինչպես ճամարտակում էր Պուրիշկևիչը: Իր հիմնված օրից ԲՀԿԸ-ն միշտ

---

[1] Տե՛ս **Д. Б. Сеидзаде,** *Азербайджанские депутаты в Государственной думе России, Баку, 1991.*

հավատարիմ էր մնացել իր կրթալուսավորչական իդեալին, ամեն կերպ ջանացել էր հայաբնակ գյուղերում իր բացած դպրոցների միջոցով գրագիտություն տարածել, Կովկասի այլևայլ շրջաններում մանր գործեր հիմնելով բարձրացնել դրանց տնտեսական դրությունը և այդ հիմքի վրա զարկ տալ կրթական գործին: Ընկերությունը բժշկական օգնություն էր հասցնում (կամ կամենում էր հասցնել) ժողովրդի ամենաաղքատ զանգվածներին՝ այդ միջոցով նպատակ ունենալով նրանց շրջանում կրճատելու խրոնիկական դարձած և մեծ չափերի հասնող մահացությունները: Ժողովրդական ընթերցանության համար ԲՀԿՄ-ն հրատարակում էր գիտությունների, արվեստների ու գրականության մասին գրքույկներ, որոնք քաղաքական ձգտում կամ իդեալ չէին պարունակում: Ընկերության հանձնախմբերը ուսումնասիրում էին ժողովրդական բանահյուսությունը, միջնադարյան հայ եկեղեցական երաժշտությունը, նպաստում Անիի պեղումներին, «Պատանեկան գրադարան» մատենաշարով հրատարակվում էր հանրամատչելի գրքույկների շարք՝ հայ պատանիներին Ժյուլ Վերնի, Մայն Ռիդի և նման հեղինակների երկասիրություններին ծանոթացնելու համար, վերջապես ԲՀԿՄ-ն տպագրում էր իր պաշտոնական օրգան «Զանգ» թերթը՝ սեփական մտահղացումները ժողովրդականացնելու համար: Եվ եթե պետական դումայի պատգամավորներից որևէ մեկը, գրում էր «Զանգը», կամենար հետաքրքրվել Կուլտուրական միության գործունեությամբ, ապա անմիջապես կհամոզվեր, որ նա իր առջև նպատակ է դրել ոչ թե Կովկասն անջատելու Ռուսաստանից, այլ, ընդհակառակը դրանք ավելի ու ավելի սերտ կապերով միացնելու իրար[1]:

Կոստանդին Խատիսյանը Բաքվից 1908 թ. դեկտեմբերի 17-ին Ն. Ա. Խոմյակովին հղած հեռագրով պահանջում էր Պուրիշկևիչին պատասխանատվության կանչել Բաքվի հայոց կուլտուրական միությանը և անձամբ իրեն զրպարտելու համար[2]: Նա

---

[1] Տե՛ս **«Զանգ»**, № 12, 31 դեկտեմբերի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 278, 17 դեկտեմբերի 1908 թ.:

գրում էր. «Միութիւնը, որին զրպարտեց Պետական Դումայի անդամ Պուրիշկեւիչը, ինձ լիազօրութիւն է տւել Ձեր, որպէս Ռուսաստանի պետական խղճի պահապանի առաջ, արտայայտել իր բուռն բողոքը: Հիմնւելով 1906 թւին եւ օգտւելով բոլոր ռուս քաղաքացիներին հոկտ. 17-ի մանիֆէստով չնորհւած իրաւունքներից, Կուլտուրական Միութիւնը նպատակ դրեց բացառապէս խաղաղ ու լէգալ միջոցներով նպաստել Անդրկովկասի հայ ազգաբնակութեան կուլտուրական ու տնտեսական ուժերի բարձրացման»: Թվարկելով Միության գործունեության բոլոր ուղղությունները, Կ. Խատիսյանը հատկապես կանգ էր առնում այդ կազմակերպության կողմից հայ գյուղացիությանը ցուցաբերվող օգնության վրա, չեշտում, որ առանձնակի կարևորություն ունեն գյուղերում վարկային հաստատությունների հիմնումը, գյուղատնտեսության մեջ առաջավոր երկրների ձեռք բերած նվաճումների լայն պրոպագանդան և դրանք գյուղացիական տնտեսություններում ներդնելու ջանքերը: Միաժամանակ չեշտվում էր, որ Միությունը միշտ ձգտել է իրեն հեռու պահել քաղաքական բոլոր իդեալներից և գործել բացառապես բաց, բոլորի համար տեսանելի: Երկու տարվա գործունեության ընթացքում ոչ մի անգամ չի արժանացել կառավարության կողմից որևէ նկատողության, որովհետև գործել է բացառապես այն կուլտուրական սկզբունքների վրայ, որոնք արտահայտվել են Կովկասի Փոխարքայի մարդասեր գործունեության մեջ, որը շատ լավ գիտի, որ ժողովուրդների բախտավորության ու բարեկեցության և նրանց հանգստության ճանապարհն ընկած է ոչ թե կախաղանների ու կառափնարանների վրայով՝ այլ այն կենսակրթական ու առաջադիմական հաստատությունների շրջանով, որոնք միայն հասարակությանը կարող են ներշնչել բարու և ճշմարտի օրինավորության հավիտենական ու լուսավոր գաղափարները: Պարզ է, ուրեմն, որ ունենալով այդպիսի մի նպատակ, Միությունն աշխատում է ոչ թե սեպարատիզմ ժողովրդականացնել հայերի շրջանում, այլ պատրաստել մեր ընդհանուր հայրենիքի համար աղնիվ ու լուսավորված քաղաքացիներ:

Հեռագրում ասված էր նաև, որ հակառակ Պուրիշկևիչի

պնդումների, Միությունը կառավարությունից ոչ մի կոպեկ չի ստացել, որ նա իր տարեկան մոտ 50000 ր. բյուջեն հոգացել է միմիայն Անդրկովկասի հայ ազգաբնակչության ունևոր դասի կամավոր նվիրատվությամբ: «Տեղեկացնելով այս բոլորի մասին Ձեզ, յարգելի Նիկոլայ Ալէկսէեւիչ,- գրում էր Կ. Խատիսյանը,- եւ խնդրելով Ձեզանից, որ մեր ներկայ հեռագրի պատճէնը հաղորդէք Դումայի բոլոր ֆրակցիաներին, Բագւայ Հայոց Կուլտուրական Միութիւնը խորապէս համոզւած է, որ իր ներկայ բողոքը ջերմ ընդունելութիւն կը գտնի Պետական Դումայի բոլոր այն անդամների կողմից, որոնց համար թանկագին են մեր երկրի ամենախուլ անկիւններում երեւացած ամէն մի լուսաւոր, առողջ ու կուլտուրական գործ, որ այն պիտի կարողանայ մեր ընդհանուր հայրենիքը իրապէս ուժեղ, իրապէս մեծ եւ իրապէս փառաւոր դարձնել»[1]:

Մեկ օր անց Կ. Խատիսյանը Պուրիչկևիչից ստացավ հետևյալ հեռագիրը. «Իզուր եք դիմել պետական դումայի նախագահ Խոմյակովին, որովհետև նա միայն երկու աչք ունի, իսկ Ռուսաստանը՝ միլիոնավոր աչքեր»:

Խատիսյանը հեռագիր ուղարկեց նաև Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին՝ խնդրելով կարգադրություն անել մանրամասն ստուգելու Բաքվի հայոց կուլտուրական միության գործունեությունը: Հեռագրում ասված էր. «Ի նկատի ունենալով Պետերբուրգի մամուլի մի քանի օրգաններում Բագւայ Հայոց Կուլտուրական Միութեան մասին տարածւած սխալ տեղեկութիւնները եւ ի նկատի ունենալով նոյն այդ սխալ տեղեկութիւնների վրայ հիմնւած նոյնիսկ Պետական Դումայում մի քանի ճառախօսների՝ Միութեան հակակառավարչական գործունէութեան մատնանշումը, Բագւայ Հայոց Կուլտուրական Միութիւնը պատիւ ունի ամենախորին յարգանքով խնդրելու Ձերդ Պայծառափայլութեան՝ Միութեան գործունէութեան մասին քննութիւն նշանակել եւ այդ քննութեան հետեւանքը յայտարարել ընդհանուրին ի գիտութիւն»[2]:

---

[1] Տե՛ս «Զանգ», № 12, 31 դեկտեմբերի 1908 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

Խավարամոլ պատգամավոր Պուրիշկևիչի հարձակումների դեմ օրական բազմաթիվ հեռագրեր էին հասնում Պետերբուրգ:

Դեկտեմբերի 12-ին Դումայի նախագահի հասցեով բողոքի հեռագիր ուղարկեց Թիֆլիսի հայության ներկայացուցիչների ժողովը: Բողոքի հեռագրեր էին հղում նաև Բաքվի, Ելիզավետպոլի, Երևանի, Կարսի, Ալեքսանդրապոլի, Բաթումի, Շուշիի և այլ վայրերի հայերը:

Նույնիսկ Կովկասի մահմեդականները, որոնց մասին Պուրիշկևիչն իր տխրահռչակ ճառում գովեստի խոսքեր էր հնչեցրել, զայրալից բողոքներ էին ուղարկում Պետերբուրգ:

Հատուկ բանաձևեր էին ընդունվում Կովկասի քաղաքների դումաներում:

Պետական դումայում տեղի ունեցածը լայնորեն քննարկվում էր մամուլի էջերում:

«Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարն իր թերթում մերժելով այն սուտը, թե կովկասցիները, այդ թվում՝ հայերը, թշնամաբար են վերաբերվում ռուսական մշակույթին, գրում էր, որ ոչ միայն ռուս ժողովրդի լեզվի, այլև գրականության ու արվեստի նկատմամբ հայերը միշտ ցուցաբերել են մեծ հետաքրքրություն, յուրացրել ռուսական մշակույթի լավագույն նվաճումները: Նրանց համար թանկ է Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի, Գոգոլի, Տուրգենևի, Տոլստոյի և ռուսական գրականության մյուս խոշոր ներկայացուցիչների թողած գրական ժառանգությունը: «Եւ եթէ հայերը չեն սիրել, այլ զզուել են Վելիչկոյի, Կրուչեանի, Մենչիկովի, Պուրիշկեւիչի անուններից, դրանով իսկ ակնյայտօրէն ցոյց են տուել, որ իրենք գիտեն զանազանել մաքուրն ու ազնիւը կեղծիքից եւ ստորից, գիտեն գնահատել քաղաքակրթութիւնը եւ այն պաշտպանել քայքայիչ ու կաղմալուծող տարրերից»[1]*:*

"Кавказ" լրագիրը 1908 թ. դեկտեմբերի կեսին տպագրել էր Պետերբուրգում իր թղթակցի հարցազրույցը Նոր Նախիջևանից պետական դումայի պատգամավոր ընտրված Մովսես Աճեմյանի

---

[1] ***«Մշակ»,*** *№ 279, 18 դեկտեմբերի 1908 թ.:*

(Մոիսեյ Աճեմով) հետ՝ թեմա ունենալով կովկասյան հարցապնդումը:

Պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ Կովկասի հարցի քննությունն այդքան մեծ աղմուկ է առաջ բերել դումայում, Աճեմյանը պատասխանել էր. «Ես կարծում եմ, որ աջակողմյաններն ավելի հետաքրքրված են փոխարքայի անձնավորությամբ, հանդես են գալիս ազգությունների հանդեպ նրա վարած ազատամիտ քաղաքականության դեմ: Կարծում եմ անմտություն կլինի Կովկասում ուժեղացնել խստությունները, քանի որ այնտեղ արդեն մահավճիռները և այլ պատիժները գործադրվում են անհամեմատ ավելի մեծ չափերով, քան բուն Ռուսաստանում»[1]:

Պետերբուրգում լույս տեսնող "Правительственный вестник" («Կառավարական լրատու») թերթը դեկտեմբերի 19-ի համարում տպագրել էր Վորոնցով-Դաշկովի բացատրությունները դեկտեմբերի 10-ին Պետերբուրգում Պուրիշկևիչի արտասանած ճառի առթիվ: Կովկասի փոխարքան կտրականապես հերքում էր այն զրպարտությունը, թե Բաքվի հայոց կուլտուրական միությունը զբաղված է ոչ թե հայ բնակչության մեջ մշակույթ տարածելով, այլ հեղափոխական քարոզներով: Փոխարքան մեկ առ մեկ ժխտում էր նաև իր դեմ ուղղված մյուս մեղադրանքները:

Քանի որ կովկասցիներին ուղղված զրպարտիչ հարձակումները հասարակությունն իրավացիորեն ընկալում էր որպես հարձակում նաև փոխարքայի վրա, ուստի վերջինիս ամենաանձնվեր պաշտպան էին կանգնում հենց նույն կովկասցիները, որոնք փոխարքայի անձի հանդեպ համակրական ցույցեր կատարելը, նրան սատարելն ու թև-թիկունք լինելը դիտում էին որպես Պուրիշկևիչին և նմաններին հասցրած ապտակ[2]:

Բազմաթիվ հեռագրերը, համակրական նամակները, ընդունված բանաձևերը, որոնք Ռուսաստանի զանազան ծայրերից ուղարկվում էին Կովկասի փոխարքային և նրա մերձավոր

---

[1] Հարցազրույցի բովանդակությունը տե՛ս **«Մշակ»**, № 281, 20 դեկտեմբերի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Գործ»**, № 79, 16 դեկտեմբերի 1908 թ.:

աշխատակիցներին, առաջադիմական մամուլում լույս տեսած հոդվածները ցույց էին տալիս, որ կովկասյան հարցապնդումը խորապես վիրավորել ու վշտացրել է բոլոր ազնիվ մարդկանց սրտերը և Պուրիշկևիչի արշավանքը ճանաչել է իբրև վայրենության ու ստորության մի նվաստացուցիչ անարգ միջադեպ պետական դումայի տարեգրության մեջ[1]:

Վերջապես, կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոսը 1908 թ. դեկտեմբերի 22-ին Էջմիածնից հեռագրում է նախարարների խորհրդի նախագահ և ներքին գործերի նախարար Ստոլիպինին՝ բողոքելով պետական դումայում հայերի հասցեին «Պուրիշկևիչի նետած զազիր զրպարտությունների դեմ», միաժամանակ հայտնելով հայ հոգևորականության և ժողովրդի հավատարմության հավաստիքները ցարին:

Ստանալով հեռագիրը, Ստոլիպինը դա հանձնում է Նիկոլայ II-ին՝ ծանոթանալու: Ցարն անարձագանք չի թողնում հեռագիրը: Նա Ստոլիպինին հանձնարարում է Կովկասի փոխարքայի միջոցով պատասխան ուղարկել Էջմիածին:

1909 թ. հունվարի 15-ին Ստոլիպինի խնդրանքով փոխարքա Վորոնցով-Դաշկովը տեղապահ Գևորգ արքեպիսկոպոսին գրում է.

«Ձերդ Բարձր Սրբազնութիւն.

Պետական Դումայում նրա անդամներից մինի յայտարարութեան առթիւ, որ մեղադրում էր հայ Լուսաւորչական հոգեւորականութեան եւ Կովկասում գտնուած նրա հօտին անջատական եւ յեղափոխական ձգտումների մէջ, Ձերդ Բարձր Սրբազնութիւնը ի հերքումն յիշեալ յայտարարութեան, յիշելով դեռ հայերով բնակեցրած տեղերի Կայսրութեան հետ չմիացած ժամանակ յիշեալ հոգեւորականութեան եւ հայ ազգաբնակութեան ներկայացուցիչների արտայայտած անպայման անձնուիրութիւնն Ռուսաստանին, հեռագրով խնդրել էիք Ներքին Գործոց Նախարարին արկանել առ ոտս ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ յիշեալ հոգեւորականութեան հաւատարիմ անձնուէր

---

[1] Տե՛ս **«Գործ»**, № 79, 16 դեկտեմբերի 1908 թ.:

հպատակութեան զգացմանց հաւաստիքը:

Այժմ Ստատս Սեկրետար Ստոլիպինը տեղեկացրել է ինձ, որ նրա ամենահպատակ զեկուցման վրայ յիշեալ դիմումի առթիւ ***ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆԸ*** *հաճելի է եղել անցեալ դեկտեմբերի 24-ին սեպհական ձեռքով մակագրել.* ***«Անկեղծ շնորհակալ եմ եւ հաւատում եմ Ռուսաստանին անձնուէր լինելու զգացմունքին»:***

Այս մասին պատիւ ունիմ հաղորդել Ձերդ Բարձր Սրբազնութեան՝ հայցելով Ձեր աղօթքներն: Խորին յարգանքով եւ կատարեալ անձնուիրութեամբ պատիւ ունեմ մնալ Ձերդ Բարձր Սրբազնութեան՝

Խոնարհ ծառայ
Կոմս Վորոնցով-Դաշկով»[1]*:*

Նիկոլայ II-ը, որը միշտ ուշադիր էր ծայրահեղ աջակողմից կատարվող թելադրանքներին, այս անգամ տրամադրություն չի ցուցաբերում ընդառաջ գնալու նրա ցանկություններին և կանգնում է Վորոնցով-Դաշկովի կողմը: Ավելին, նա մի նամակ է գրում Թիֆլիս, Կովկասի փոխարքային, որով նրան հայտնում է իր կողմնակցությունն ու աջակցությունը, հավանություն է տալիս նրա վարած քաղաքականությանը Կովկասում:

Ի պատասխան ցարի այդ նամակի, 1909 թ. հունվարի 6-ին փոխարքան նրան գրում է հետևյալ շնորհակալական խոսքը:

«Ձերդ Կայսերական Մեծություն.

Մեծապես շնորհակալ եմ Ձերդ Մեծությունից այն նամակի համար, որ Դուք ուղարկել եք ինձ բարոն Նոլդեի միջոցով:

Անցավ զայրույթի բռնկումն այն զրպարտության համար, որ պետական դումայում բարդեցին Կովկասի վարչության վրա, և ես չեմ կարող չհամաձայնել Ձեր տեսակետների ճշմարտության հետ: Դուք շատ բարձր եք կանգնած, որպեսզի հավանություն տաք դումայում կատարվածին:

Ինչ վերաբերում է ինձ, ապա Ձեզ, Տե՛ր Արքա, հայտնի է, որ ես մեծ հավատ ունեմ Ձեզ և միայն Ձեզ հանդեպ: Եթե ես այդ

---

[1] ***«Արարատ»****, № 2, փետրվար, 1909, էջ 115-116:*

հավատը չունենայի, ոչ մի վայրկյան չէի մնա Կովկասում: Հավատացե՛ք, Տե՛ր Արքա, որ Դուք ինձնից միայն ճշմարտություն կլսեք: Այստեղ իմ դրությունս հաստատուն է, բայց ծանր է ամեն գործի մեջ զգալ, թե ինչպես կենտրոնական իշխանությունը փոս է փորում փոխարքայության ոտի տակ: Վա՞տ է փոխարքան, ուրեմն հարկավոր է նրան փոխել, բայց հանուն Ռուսաստանի և նրա հետ անքակտելի կապերով կապված Կովկասի շահերի՝ փոխարքայությունը պետք է որ պահպանվի:

Ցանկանում եմ Ձեզ, Տե՛ր Արքա, և Ձեր թանկագին ընտանիքին ամեն տեսակ բարեմասնություններ:

Հոգով ձեզ անձնվեր՝

Ի. Վորոնցով»[1]:

Կարդալով այս նամակը՝ ընթերցողը համոզվում է, թե որքան սերտ էին փոխարքայի ու ցարի անձնական հարաբերությունները, և թե առաջինը որքան մեծ ազդեցություն ուներ երկրորդի վրա: Այդ սերտ կապերը և փոխադարձ ջերմագին զգացումները սասանելու համար շատ անբավարար էին Վլադիմիր Պուրիչկևիչի և նրա կողմնակիցների եռանդորեն թափած ջանքերը: Հենց դա էր գլխավոր պատճառը, որ չնայած կառավարությունն ամուր կանգնած էր Պուրիչկևիչի և նրա համախոհների թիկունքին, բայց ցարի կամքով Վորոնցով-Դաշկովը չարունակեց մնալ Կովկասում, վարել ազատականությանը մոտ իր քաղաքականությունը, որը բավական հեռու էր Ստոլիպինի բռնակալ ռեժիմից:

Պետական դումայում կովկասյան հարցապնդման ընդհատված քննարկումը վերսկսվեց 1909 թ. փետրվարի 3-ին, 45-րդ նիստում:

Ելույթ ունենալով՝ դումայի անդամ Հովհաննես Սաղաթելյանն անարդարացի համարեց փոխարքա Վորոնցով-Դաշկովի հասցեին ուղղված քննադատությունները, ցույց տվեց, որ նրա ընդդիմախոսների բերած փաստերը և թվական տվյալները չեն

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 297ր, վավ. 20, թ. 12 և շրջ.:

համապատասխանում իրականությանը:

Սաղաթելյանը զրպարտություն համարեց Պուրիշկևիչի, Տիմոշկինի, Մարկով 2-րդի և մյուս սևհարյուրյակային պատգամավորների մեղադրանքները, թե հայերն ուզում են ստեղծել Մեծ Հայաստան՝ Արարատից մինչև Վորոնեժի նահանգի սահմանները: Անդրադառնալով այդ և ընդհանրապես հայերի անջատողականության առասպելներին՝ Սաղաթելյանը դա համարում էր հոգեկան հիվանդների հնարանք, մի մեծ սադրանք՝ ինչպես պարսավելի նենգամտության, այնպես էլ հրեչային հետևանքների իմաստով: Պատահական չէ, ասում էր նա, որ այդ առասպելը տարածելու նախաձեռնությունն իրենց վրա են վերցրել «Միքայել Հրեշտակապետի միության» փոխնախագահ Մարկով 2-րդը և տխրահռչակ Վլադիմիր Պուրիշկևիչը[1]:

Հայկական անջատողականության մասին խաբուսիկ գաղափարի սնանկությունը ցույց տալու համար Սաղաթելյանն օրինակներ էր բերում դեռ Պետրոս Մեծի ժամանակներից սկսած Ռուսաստանի հետ միանալու հայերի ձգտման մասին: Կովկասի գրավման ժամանակ հայերն իրենց ազատությունը կապեցին ռուսական զենքի հաղթանակի հետ և ամեն կերպ նպաստում էին այդ հաղթանակին[2]:

Սաղաթելյանի ելույթն արժանացավ դումայի ձախակողմյան մասի և կենտրոնից ձախ գտնվող պատգամավորների բուռն հավանությանը:

Հաջորդ օրը, փետրվարի 4-ին, 46-րդ նիստում առաջինը նորից հանդես է գալիս Հովհաննես Սաղաթելյանը և շարունակում նախորդ օրվա իր ելույթը: Պատգամավորն ասում է, որ կովկասահայ ժողովուրդը որևէ անջատողական ձգտում չունի Ռուսաստանից, քանի որ նա միանալով Ռուսաստանին, գտել է իր խաղաղությունը և հնարավորություն է ստացել առաջադիմելու տնտեսապես ու մշակութապես: Այնուհետև նա թվարկում

---

[1] Տե՛ս "Стенографический отчет о заседаниях второй сессии 3-й Государственной думы", Санкт-Петербург, типография газеты "Россия", 1909, с. 1426.

[2] Տե՛ս նույն տեղում, с. 1427:

է այն մեծ ծառայությունները, որ հայությունը մատուցել է Ռուսաստանին՝ կայսրության համար դժվարին ժամանակներում[1]:

Սաղաթելյանից հետո ելույթ է ունենում կատաղի խավարամոլ Նիկոլայ Մարկովը (Մարկով 2-րդը): Նա իր և համախոհների անունից ասում է, թե իրենց խնդիրը ռուս ժողովրդի և ռուսական պետության շահերի պաշտպանությունն է, ուստի այդ սուրբ նպատակին պիտի ծառայեցնեն իրենց ողջ ուժերն ու հնարավորությունները:

Այնուհետև ճառախոսն անցնում է հայերի հետ հաշիվներ մաքրելուն՝ իր ելույթն ամբողջովին նվիրելով նրանց դեմ պայքարի հարցերին:

Հայերի հարցը քննարկելով փոխարքային վարկաբեկելու խնդրի հետ՝ պատգամավորն ասում է, թե վերջինս պարզ գործիք է դարձել հայերի ձեռքին, և որպես իր ասածի հաստատում, բերում է երկու օրինակ. առաջին, Վորոնցով-Դաշկովն այցելել է հայկական երկու բարեգործական պարահանդեսներ, երկրորդ, «երկու ձկնորսարան կապալով տվել է ինչ-որ Փիթոևի»:

Կրկնելով հայերի հասցեին իր սովորական զրպարտությունները՝ Մարկով 2-րդն անդրադառնում է գոյություն չունեցող այն քարտեզին, որի վրա, իբր պատկերված է Հայաստանը՝ ներառած մինչև Վորոնեժ ընկած տարածությունները: Ոչ-հեռավոր գալիքում, ասում էր նա, «անխուսափելի է կովկասյան ճապոնացիների (իմա՝ հայերի:- Հ. Ս.) արշավանքը Ռուսաստանի վրա»[2]:

Շարունակելով իր խոսքը գոյություն չունեցող «հայկական արտառոց պահանջների» ու «երևակայական ծրագրերի» մասին՝ Մարկով 2-րդն ընդգծում էր. «Մինչև Վորոնեժ Հայաստան հաստատելու գաղափարը բնավ այնպիսի մի անհեթեթություն չէ, որի վրա կարելի լինի ծիծաղել: Համոզված եմ, որ պատմական որոշ պայմաններում դա կարող է իրագործվել: Շատերը հեգնում էին և՛ ճապոնական պատերազմի նախօրյակին, և՛

---

[1] *Տե՛ս "Стенографический отчет о заседаниях второй сессии 3-й Государственной думы", с. 1429-1431.*

[2] *Տե՛ս նույն տեղում, с. 1433:*

թուրքական հեղափոխությունից առաջ, բայց տեսա՞ք, թե ինչ կատարվեց»: Ըստ ճառախոսի՝ ելնելով իրական վտանգից, պետք է, վերջապես, ըմբռնել, որ հայկական վտանգը ոչ թե հեռավոր ապագայի, այլ օրվա հարց է: Ուստի «Եթե ռուսական իշխանությունը վերջ չդնի հայերի քայքայիչ գործունեությանը, ապա Հայաստանը կդառնա միացյալ պետություն, թերևս Ռուսաստանից կախված, բայց բոլորովին ինքնավար՝ մեր Ֆինլանդիայի նման»: Դրանից անմիջապես հետո Մարկով 2-րդը «հիշեցրեց» դումային, որ անցյալում ռուսական պետության ծառայության մեջ գտնված հայ գործիչները միշտ երազել են այդ մասին: Նրանք «միշտ եռանդով աջակցել են այդ գաղափարի իրականացմանը և Ռուսաստանում գործել են իբրև հայեր, բայց ոչ իբրև ռուսական ցարի պաշտոնյաներ...: Այժմ էլ ռուսաստանյան պաշտոնյաների թվում քիչ չեն այն հայերը, որոնք մտածում են հայկական ինքնուրույն պետականության մասին»[1]:

Իսկ ի՞նչ միջոցներով են հայերը ձգտում իրենց նպատակին: Հիմնական միջոցը փողի ուժն է, ասում է Մարկով 2-րդը: Հայերն այդ ուժով են սկսում իրենց կռիվը ռուսների դեմ: Այդ փողի աղբյուրներից մեկը Հայ եկեղեցու կալվածքներն էին, որ իշխան Գոլիցինն օտարել էր էջմիածնից, բայց Վորոնցով-Դաշկովի ջանքերով նորից վերադարձվեցին հայերին: Եվ հիմա այդ կալվածքներից ստացած փողերով նրանք զենք են ձեռք բերում պետության դեմ կռվելու համար:

Այնուհետև պնդելով, թե Կովկասում «սպառնալից չափեր ընդունած» անջատողական տրամադրությունները սերմանում են հայերը, ելույթ ունեցողը քննադատում է փոխարքայի «արմատապես սխալ» այն բացատրությունը, թե վրացիներից, հայերից ու թուրք-թաթարական ցեղերից անկարելի է անդրկովկասյան որևէ պետություն կազմել: Ըստ ճառախոսի՝ հայ-վրաց-դաղստանյան-ատրպատականյան-քրդական դաշինքի կազմումը միանգամայն իրական է, ուստի Կովկասի իշխանությունը պետք է կարողանա ձեռնարկել բոլոր միջոցները այդ վտանգը

---

[1] *Տե՛ս "Стенографический отчет о заседаниях второй сессии 3-й Государственной думы", с. 1433.*

խափանելու համար, բայց, ցավոք, ունակ չէ դրան: «Պետությունը պետք է հենվի ոչ թե Կովկասի բնիկ ազգությունների, այլ միայն ու միայն մեծ ու հզոր ռուս ժողովրդի և փոխարքայության սահմաններում ապրող ռուսների վրա»[1],- հայտարարում է Մարկով 2-րդը:

Վերջում Վորոնցով-Դաշկովի քաղաքականությունը համարելով պետական դավաճանություն՝ Նիկոլայ Մարկովը դումային առաջարկում է նշանակել սենատորական քննություն:

Եզրափակելով ելույթը՝ սևհարյուրյակային հռետորը դիմելով պատգամավորներին, ասում է. «Պարոննե՛ր, ընդունեցե՛ք հարցապնդումը: Մի՛ խայտառակեք ռուսական երկիրը, այլապես ռուսը ձեզ կդատապարտի»[2]: Լսվում են բացականչություններ աջակողմից՝ «Բրավո՜», «Կեցցե՛ս», որոնք ուղեկցվում են ծափահարություններով:

Ամբիոն է բարձրանում Կովկասում երկար տարիներ ապրած պատգամավոր Վասիլի Ստեպանովը: Հերքելով կովկասցիների անջատողականության մասին տարածված առասպելը՝ նա ասում է, որ դա հնարված է ռուսացման քաղաքականությունը արդարացնելու նպատակով: Այդ վնասակար քաղաքականության հետևանքն այն է, որ կովկասյան ազգաբնակչությունն ու իշխանությունը կանգնեցին դեմ-հանդիման, իբրև թշնամիներ: Ինչ վերաբերում է կովկասյան պաշտոնեությանը, որի դեմ սուր են ճոճում Պուրիշկևիչը և ընկ., ապա նրանք համարյա բոլորը կովկասյան նախկին ռեժիմի ժամանակներից մնացած հին պաշտոնյաներ են,- ասում է հռետորը: Կովկասում ստեղծված դրությունից դուրս գալու միակ ելքը Ստեպանովը համարում է դումային ներկայացված հարցապնդման մերժումը, որը կնպաստեր երկրամասի խաղաղեցմանը և գոհացում կտար տեղի ազգաբնակչության օրինական, մշակութային, ազգային և կրոնական պահանջներին[3]:

---

[1] *"Стенографический отчет о заседаниях второй сессии 3-й Государственной думы", с. 1433.*

[2] *Նույն տեղում, с. 1450-1451:*

[3] *Տե՛ս նույն տեղում, с. 1453-1454:*

Այնուհետև ելույթ է ունենում Կովկասի փոխարքայի՝ քաղաքացիական մասի օգնական սենատոր Միցկևիչը: Նա ասում է, թե ինքը չի պատասխանելու Վորոնցով-Դաշկովի հասցեին Պուրիշկևիչի հնչեցրած մեղադրանքներին, որովհետև այդ առթիվ փոխարքայի բացատրությունները տպագրված են "Правительственный вестник"-ում, բայց կտրականապես ժխտում է այն տեսակետը, թե փոխարքան մեղմ է վարվում ահաբեկիչների նկատմամբ, հիշեցնելով, որ նման գործերի վերաբերյալ դատավճիռների հաստատումը գեներալ-նահանգապետների իրավասությունն[1] է և ոչ թե փոխարքայինը:

Հայ հոգևորականության դեմ թշնամական հարձակումներով իր ելույթն սկսեց աջակողմյան պատգամավոր Զամիսլովսկին, հայտարարելով, թե Հայ եկեղեցին հեղափոխական է, հետևապես՝ Ռուսաստանի թշնամի[2]: Բարբաջանքներով նրան ձայնակցեց ամբիոն բարձրացած Լադոմիրսկին, ասելով, որ եթե հայերին հովանավորելու իր քաղաքականությամբ Իլարիոն Վորոնցով-Դաշկովը որոշ ժամանակ ևս չարունակի պաշտոնավարել, ապա «հարկ կլինի կրկին նվաճել Կովկասը»: Բանը հասցնելով զավեշտի՝ հայատյաց ազգայնամոլը փորձեց պատգամավորներին համոզել, թե հակառուսական ապստամբություն բարձրացնելու նպատակով ճապոնական մի նավ զենքեր է հասցրել Կովկաս[3]:

Դումայի նիստը չարունակվում է փետրվարի 5-ին: Առաջինն ելույթ է ունենում Եվգենի Գեգեչկորին, որին հետևում են Լիսիչկինի, Զխեիձեի, Պավլովիչի, Տիմոշկինի, Հեյդարովի, Բարդիժի, Բոբրինսկի 2-րդի, Միլյուկովի, Կամենսկու, Պուրիշկևիչի ելույթները՝ պատգամավորների մեկը մյուսին ժխտող հակասական ընկալումներով: Պուրիշկևիչը, դիմելով դումայի աջակողմյան և կենտրոնի պատգամավորներին, նրանց խնդրեց ընդունել հարցապնդումը[4]:

---

[1] "Стенографический отчет о заседаниях второй сессии 3-й Государственной думы", с. 1454.

[2] Նույն տեղում, с. 1461-1462:

[3] Տե՛ս նույն տեղում, с. 1465-1466:

[4] Նույն տեղում, с. 1467-1474:

Կրկին ու կրկին անդրադառնալով «հայ հեղափոխական ազգի»[1] Ռուսաստանից անջատվելու ձգտումներին, Վլադիմիր Պուրիշկևիչը նորից խոսում է հայերի և առհասարակ Կովկասի ժողովուրդների ապստամբական ուժերին ճզմելու անհրաժեշտության մասին:

Այս տողերը կարդալիս ակամայից վերհիշում ես ավելի քան մեկ դար առաջ (1905 թ.) ռուս մարդկանցից մեկի՝ բժիշկ Ս. Պատալովի գրավոր խոսքը, որի բնօրինակը պահպանվում է Մատենադարանում: Այնտեղ ասված է.

«Դժբա՛խտ Կովկաս: Ո՞ւր են մեծ պոետներ Պուշկինը, Լերմոնտովը և ուրիշները, որոնք սքանչանում էին քո փառահեղ տեսքով, քո հասարակ, բարեսիրտ ժողովրդի կյանքով: Որբացա՛ծ Կովկաս: Ո՞ւր է քո մեծ հովանավորը՝ Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչը, որը միշտ չեշտում էր, որ անսահման է Կովկասի ժողովուրդների նվիրվածությունը Գահին և Հայրենիքին»[1]:

Վիճաբանությունները վերջանալուց հետո քվեարկության է դրվում հարցապնդմանը հավանություն տվող բանաձևի նախագիծը, որը դումայի մեծամասնությունը մերժում է: Ավելին, նիստի մասնակիցները քվեարկությամբ ընդունեցին մի բանաձև, որով առաջ էր քաշվում Կովկասում լուրջ բարեփոխումներ մտցնելու խնդիրը: Փաստաթուղթն ընդգրկում էր հետևյալ կետերը՝ վարչական մարմինների բարեփոխություն, զեղծումների քննություն ու վերացում, հողային բարեկարգություն, դատական բարեփոխություններ, գաղթականների գործի կարգավորում, քաղաքային և զեմստվային ինքնավարություն:

Ինչպես տեսնում ենք, հանդես բերելով իրենց հարցապնդումը, Պուրիշկևիչը և նրա համախոհները նպատակ ունեին դումայի առաջ վարկաբեկելով Կովկասի փոխարքային՝ հեշտացնել նրա տապալումը, միաժամանակ երկրամասը վերադարձնել իր սոսկալի անցյալին՝ գոլիցինյան մղձավանջի օրերին:

Բայց հարցապնդման քննարկումն առաջ բերեց բոլորովին հակառակ հետևանք, քան սպասում էին նրա հեղինակները:

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ռ, վավ. 58, թ. 12 և շրջ.:

Դուման ոչ միայն մերժեց հարցապնդումը, այլև առաջ քաշեց կովկասյան բարենորոգումների խնդիրը, դրանով իսկ սահմանազատվելով պուրիշկևիչյան սև գնդի լուսաչեջ վայրենությունից: Պուրիշկևիչը և նրա համախոհները մեխվեցին ատելության ու խայտառակության սյունին:

Կովկասի փոխարքայի համաձայնությամբ, նրա օգնական Ն. Պետերսոնը 1909 թ. փետրվարի 20-ին զեկուցագիր է ներկայացնում Նիկոլայ II-ին, նրան հիշեցնում պետական դումայում հարցի քննարկման արդյունքների մասին, միաժամանակ բարձրացնում զրպարտությունների համար Վ. Պուրիշկևիչին դատական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտության հարցը[1]:

Թեև կովկասյան հարցապնդումը ձախողվել էր, բայց ինքնակալությունը մտածել անգամ չէր ուզում ձեռք քաշել պուրիշկևիչներից ու մենչիկովներից, չէր մտածում անգամ մի կողմ դնել նրանց՝ կովկասցիներին առաջադրած մեղադրանքները: Ոգեշնչված դրանից՝ նրանք մտադիր չէին հետ քաշվել իրենց անարժան ու լկտի «սխրագործություններից» և պատրաստվում էին նորանոր զրպարտություններով ու դավերով կրկին հանդես գալ պետական դումայում՝ մի անգամ ևս փորձելով հատկապես այլազգի պատգամավորների և ողջ հասարակության համբերությունը: Իր հերթին, հետադիմական մամուլն առաջվա հետևողականությամբ պաշտպանում էր սևհարյուրյակայիններին՝ թե՛ պետական դումայից ներս և թե՛ դումայից դուրս: Հայերի վրա շարունակում էին իրենց հարձակումները Պետերբուրգի "Новое время"-ն, Մոսկվայի "Московские ведомости"-ն, Թիֆլիսի "Голос Кавказа-ն և ուրիշ պարբերականներ, որոնց հրապարակումները նպաստում էին հատկապես հայ մտավորականության վրա հետադիմության հարձակումների ուժեղացմանը ոչ միայն Կովկասում[2]: Ստոլիպինը ոչ միայն չէր թուլացնում Ռուսաստանում

---

[1] "Всеподданнейший доклад Государю Императору от 20 февраля 1909 г. о привлечении к судебной ответственности члена Государственной думы В. Пуришкевича по обвинению его в клеветании Н. Петерсона и всеподданнейшая просьба Н. Петерсона на оклеветании его Пуришкевичем", Тифлис, 1909.

[2] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 24, 5 հոկտեմբերի 1909 թ.:

«երկաթյա կարգապահություն» հաստատելու իր ջանքերը, այլև գնալով ուժեղացնում էր հալածանքները բոլոր այն քաղաքական ուժերի դեմ, որոնք կարող էին իրական վտանգ սպառնալ ինքնակալությանը: Այդ կազմակերպությունների ցանկում առաջիններից մեկը ՀՅ դաշնակցությունն էր:

Զուր չէր, որ «Սուրհանդակ» թերթը հետևյալ դառը խորհրդածությունն էր անում.

«Մենք՝ հայերս, որ ամենաազնիւ ռուսից ոչ պակաս սիրել ու փայփայել ենք Ռուսաստանը, անձնուիրութեամբ ծառայել ենք պետութեան շահերին եւ դրա համար այնքան ջարդեր ենք կերել, հարիւր հազարաւոր զոհեր ենք տուել եւ տնտեսապէս քայքայուել՝ այստեղ թէ արտասահմանում, մենք իրաւունք ունենք բարձրաձայն բողոքելու այդ անարդարութեան դէմ»[1]:

Այո՛, ռուսահայերը անձնվիրաբար են ծառայել քրիստոնեական և առաջադիմական Ռուսաստանին, միշտ բարեհաճ են եղել դրա նկատմամբ, նաև հաշվի առնելով «Թուրքահայութեան ճնշած վիճակը եւ յոյս ունենալով որ Ռուսաստանը մի օր պիտի ազատագրէր Թրքահայաստանը...»[2]:

Հայ ժողովրդի, մասնավորապես կովկասահայության դեմ ռուս սևհարյուրյակայինների սկսած հարձակումներն ու չարաբանություններն առիթ էին, որպեսզի Հովհաննես Թումանյանն ի լուր ամենքի կրկին արտահայտեր իր տեսակետները հայ-ռուսական հարաբերությունների մասին: Եվ դա ժամանակի այն հատվածում, երբ բազմաթիվ հայ մտավորականների հետ ինքը նույնպես ենթարկված էր ստոլիպինյան բիրտ հալածանքներին:

Նախ նշենք, որ Մեծ Հայն ու հայոց Մեծ Պոետն իր հրապարակախոսական ելույթներում բազմիցս անդրադարձել է իր ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցերին և անվարան չեշտել է, որ հայ ժողովրդի ազգային շահը պահանջում է միշտ լինել Ռուսաստանի հետ: Թումանյանական պատմափիլիսոփայական այդ ըմբռնումը թելադրված էր Հայաստանի աշխարհա-

---

[1] **«Սուրհանդակ»**, № 35, 27 նոյեմբերի 1909 թ.:

[2] **Անդրէ Ամուրեան**, Յարական «Օխրանկա»-յի արխիւը, Ա գիրք, Թեհրան, 1978, էջ 68:

գրական դիրքով, հարևանների հետ բարդ փոխհարաբերություններով, ժողովրդի դարավոր մշակույթով, նրա հոգևոր կերտվածքով, առաջադիմության և լուսավորության անհագ ձգտումով և այլ հանգամանքներով: Նա գրում էր. «...Մենք մեջտեղն ենք **հոգևոր** Արևելքի և **գործնական** Արևմուտքի: Արևելքը մարդը հասցրել է Աստծուն, տիեզերքին, Աթմանին խառնել: Իսկ Արևմուտքը – ամենաչատը մինչև դասակարգը: Եվ ունեցել է էնպես թռիչքներ – ինչպես ֆրանսիական հեղափոխությունը – հավասարություն, եղբայրություն, և կամ անգլ[իական] մեծ խարտիան – մարդու իրավունքը... Երկուսի սինթեզը» (ընդգծումը Թումանյանինն է:- Հ. Ս.)[1]:

Քննության առնելով հայ ժողովրդի ողբերգական իրադարձություններով լի անցյալը և նրա պատմական ճակատագրի փրկարար չրջադարձը 19-րդ դարի 20-ական թվականների վերջերից սկսած, Թումանյանն արձանագրում էր. «Երևանի առումով Ռուսաստանին միացավ Մասսի էս կողմը գտնվող հայությունը և այդ օրվանից հայ ժողովրդի կյանքի ու պատմության մեջ բացվեց մի նոր չրջան: ... Ցնծությունն ընդհանուր էր, սրտալի ու մեծ, ինչպես ընդհանուր ու մեծ էր դարավոր «վերքի» ցավը: Այդ ցավի և այդ ցնծության ... հրաչունչ արտահայտությունը եղավ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին»: Այդ գրքի մեջ են ամփոփված հայ ժողովրդի վերջին ժամանակների տանջանքներն ու տենչանքները և գաղտնիքն էլ սրա մեջ է, որ նա մեզանում համարվում է սրբազան գիրք»[2]:

Հետևողականորեն զարգացնելով ռուսական կողմնորոշման գաղափարը, Թումանյանը «Հայկական հարցն ու իր լուծումը» հոդվածում գրում էր, որ հայ ժողովրդի կյանքն ու գոյքը, պատիվն ու զարգացումը միչտ վտանգված են եղել Պարսկաստանում և Տաճկաստանում, բայց այդ վտանգը երբեք «գոյություն չունի և չի ունեցել Ռուսաստանում, թեկուզ իչխան Գոլիցինի օրերում: Ընդհակառակը, հայ ժողովուրդը միչտ նայել է

---

[1] **Հովհաննես Թումանյան,** Երկերի ժողովածու, հատ. 6, Երևան, 1959, էջ 249:

[2] Նույն տեղում, էջ 256:

[3] Նույն տեղում:

Ռուսաստանի վրա որպես իր խնդրի ավանդական պաշտպանի վրա»[1]:

Հովհ. Թումանյանը վճռականապես մերժում էր Ռուսաստանից հայերի անջատվելու ամեն մի միտք, հերքում «հայկական սեպարատիզմի» հնարովի գաղափարը, պնդում, որ հայ ժողովուրդը չունի և չի կարող ունենալ հակառուսական որևէ նկրտում, որ իր էությամբ նա երախտագետ է ռուս ժողովրդի ազատագրական ոգորումներին, միաժամանակ հուչում էր, որ առանձին հայ ազգայնականների ձգտումը՝ հասնել Ռուսաստանից ազգային անկախության, իր հետ բերում է ազգի ֆիզիկական բնաջնջման վտանգ: Նա ասում էր. «Այո՛, անկախությունը լավ բան է», բայց եթե նա «թոկ է դառնալու հայությանը խեղդելու համար – չենք ուզում»[2]*: Ըստ Թումանյանի՝ մեզ պետք չէ այնպիսի Հայաստան, որ անկախանալուց հետո նման կլինի մի փոքրիկ վանդակի՝ բոլոր կողմերից դռները փակ, ուր նույնիսկ օդ չի լինելու շնչելու: Մենք չենք ուզում միայնակ մնալ տաճիկ ասկյարի սրի առջև: Թումանյանը բավարարված էր, որ Ռուսաստանի կազմում իր ազգի գոյությունը երաշխավորված է և ազգը բոլոր հնարավորություններն ունի ազատ զարգացնելու իր ինքնության վկայությունը՝ ազգային մշակույթը*[3]:

Մեծ մտավորականը չեչտում էր, որ ոչ միայն ռուսահայության, այլև Ռուսաստանի կազմում ընդգրկված քաղաքականապես և տնտեսապես թույլ մյուս բոլոր ժողովուրդների համար միանգամայն գայթակղիչ է ռուսական հովանավորությունը, որի պայմաններում նրանք հնարավորություն են ստացել բազմապատկելու իրենց նյութական և հոգևոր հարստությունը:

Մտքով անգամ չանցկացնելով, թե երբևիցե Ռուսաստանի հայ ժողովուրդը կարող է ազգային-ազատագրական կռվի ելնել ռուսական պետության դեմ հանուն անկախ ազգային պետականության, Թումանյանը միանում էր Վահան Տերյանի քարո-

---

[1] ***Հովհաննես Թումանյան,*** *Երկերի ժողովածու, հատ. 6, էջ 256:*

[2] *Նույն տեղում, էջ 248-249:*

[3] *Նույն տեղում, էջ 249:*

զած «Հոգևոր Հայաստանի» գաղափարին և այդ ուղիներում էր տեսնում հայ ժողովրդի ազգային ինքնուրույնության պահպանումը, տնտեսական և մշակութային վերելքը: «Ես իմ աշխարհայացքով,- գրում էր նա,- հայոց թագավորության կարոտով մաշվողը չեմ: Ինձ համար լիուլի հերիք է հայ ժողովրդի կուլտուրական ազատությունը կուլտուրական ժողովուրդների եղբայրության մեջ»[1]: «Ունենալ հարուստ, ապահով դպրոցներ և ուժեղ գրականություն՝ կնչանակի ամուր ու պատվավոր կանգնել լուսավոր ազգերի շարքում: Եվ գոնե ես խորապես հավատում եմ հայի էդ կուլտուրական ուժին, մենք կարող ենք էդպես լինել և պետք է լինենք»: Այս է այն ուղին, որով «անխորտակելի ու անսասան կապահովվի մեր ազգային ինքնուրույնությունը աշխարհքում և ազգերի շարքում»[2]: Այս դրույթը հենվում է պատմության որոշակի դասերի վրա և արդեն ստուգվել է Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու հարյուրամյա փորձով:

Մի որոշ տեսակետ պնդում էր, թե Ռուսական կայսրության մեջ կարող է տեղի ունենալ հայ հոգևոր հարստության մարում, որպես թե մրցակցությունն ավելի զարգացած մշակույթի ու գրականության հետ կարող է գուշակել միայն փոքր ժողովրդի հոգևոր ինքնության ոչնչացում: Թումանյանը մերժում էր նման պատկերացումը, ելնելով հենց պատմության փորձից. «Ռուսաստանում մենք ունեցել ենք և կարող ենք ունենալ կուլտուրական մաքառում: Եվ ես համաձայն չեմ էն ողբերի ու ողբասացների հետ, թե մենք կորչում ենք էդ մաքառման մեջ. էդ տրտունջները պետք է բացատրել գլխավորապես ավելի առաջ գնալու տենչանքով. ընդհակառակը, մի հետադարձ հայացք կհամոզեր, որ հենց ազգային տեսակետից երբեք էնքան ուժեղ չենք եղել, ինչպես էսօր»[3]:

---

[1] ***Հովհաննես Թումանյան,*** *Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1959, էջ 211:*

[2] *Նույն տեղում, էջ 255:*

[3] *Նույն տեղում, էջ 215:*

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՍԵԼԻ ԸՆԹԱՑՔԸ: ՄԱՀՄԵԴ ԱԼԻ ՇԱՀԻ ԳԱՀԸՆԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Պարսից միապետության դեմ ծավալված հեղափոխական շարժումը 1908 թ. կեսերին վերափոխվելով ապստամբության, 1909 թ. հուլիսին հասավ փայլուն հաղթանակի՝ Պարսկաստանի շահնշահի տապալման:

1908 թ. կեսերից Թավրիզում ու նրա շուրջը վիճակը գնալով ավելի ու ավելի սրվեց:

Շահ Մահմեդ Ալին հուլիսի 19-ին մի հեռագիր-հորդոր հղեց Թավրիզի բնակչությանը: Հորդորակում նա նշում էր, որ Թավրիզյան խլրտումները հետևանք են ո՛չ թե մեջլիսի ցրման և ո՛չ էլ իր նկատմամբ բնակչության ատելության, այլ՝ անիշխանության: «Զորավոր փաստերը ցույց են տալիս,- գրում էր շահը,- որ հեղափոխական շարժում կոչվածը պարզապես խուլիգանական ընդվզում է, անձնական կրքերի արգասիք, ուրիշ ոչինչ: Ցավալի է, որ թշվառ ժողովուրդն իր տգետ միամտությամբ զոհ է գնում ինքնակոչ հեղափոխականներ անվանյալ պորտաբույծների, որոնք դժբախտությունների ասպարեզ են դարձրել իրենց լոթիական շարժումը»: Շահը չեչտում էր, որ ժողովրդի անդորրությունը միշտ եղել է իր միակ մտածումը, ուստի Թավրիզի բնակչությանը կոչ էր անում «հանդես գալ այսպես կոչված հեղափոխականների դեմ» և կառավարական զորքերի աջակցությամբ արկածախնդիրներին դուրս մղել քաղաքից[1]: Շահի հորդորակում տագնապ էր արտահայտված, որ գոյություն ունեցող խառնակ վիճակը երկարաձգվելու դեպքում Պարսկաստանը վերջնականապես վերածվելու է մի թույլ ու անկարգ պետության, որից օգտվելով, գիշատիչ հարևանները հոչոտելու են նրա մարմինը, պոկելու իրենց համար համեղ պատառները: Ուստի երկրի տարածքային ամբողջականության պահպանման և ժողովրդի միասնության բոլոր կողմնակիցները պետք է իրենց մեջ ուժ գտնեն և երկիրը դուրս բերեն անօրինակ խոր ճգնաժամից:

---

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 86:*

Գնալով ակնհայտ էր դառնում, որ Թավրիզի Թուրք ղեկավարությունն ավելի ու ավելի հակվում է Օսմանյան կայսրության կողմը: Նա հանդես չէր գալիս Թուրքական զորքերի Պարսկաստան ներխուժման դեմ, տարբեր ճանապարհներով Թուրքիայից ստանում էր ռազմական և այլ կարգի օգնություն: Հեղափոխական գործը և ազգային զգացումը ընդհարման մեջ էին Թավրիզի Թուրքերի մտքերում:

Երիտթուրքական հեղափոխությունից և Կ. Պոլսում միդհատյան սահմանադրության վերահաստատումից հետո 1908 Թ. հուլիսի 22-ին Թավրիզի անջումենը, որի անդամների բացարձակ մեծամասնությունը Թուրքեր էին, տարածել էր մի Թռուցիկ-հայտարարություն, որի չարադրանքը նախապես համաձայնեցվել էր Թավրիզում Թուրքիայի հյուպատոսի հետ: Թռուցիկում ասված էր. «Նկատի ունենալով, որ մեր շահը, հակառակ օրենքին ու իր խոստման, ցրել է մեջլիսը և ժողովրդին աչքաթող անելով նրան մատնել է սովի ու կոտորածի, չի լսում մեր արդար բողոքը, և նկատելով, որ հարևան Օսմանյան կայսրության սուլթանը իր երկրին շնորհել է սահմանադրություն, մենք՝ երդվյալ սահմանադրականներս ստիպված ենք ներկայանալու տաճկական հյուպատոսին ու նրան հայտնելու մեր հպատակությունը Վեհափառ սուլթանին և ապավինելու նրա դրոշակին: Ուստի մեր բոլոր համակիրները թող վաղը հավաքվեն և միասին օսմանյան դրոշակներով ներկայանանք հյուպատոս էֆենդուն և նրան հայտնենք Թուրքիայի հպատակություն ընդունելու մասին մեր վճռականությունը»[1]:*

Ահա այսպես. հեղափոխականությունից մինչև երկրի շահերին դավաճանելը Թավրիզի անջումենի համար ընդամենը մի

---

* *Թավրիզի Թուրք բնակիչների մեծ մասը սահմանադրական էր: Նրանց ձեռքին էր ոչ միայն սալիմական անջումենը, այլև ժամանակավոր քաղաքային կառավարչությունը:*

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ը, վավ. 323, թ. 90:*

քայլ էր: Բարեբախտաբար չուտ հասկանալով նախատեսված միջոցառման ամբողջ վտանգավորությունն առաջին հերթին իր համար, անջումենը հուլիսի 23-ի առավոտյան չեղյալ համարեց հայտարարությունը: Բայց փաստն իսկ ցույց էր տվել, որ նա չատ հեռու է ինքնակառավարում իրականացնող մարմին լինելուց: Փաստը նաև վկայություն էր անջումենի անդամների մտավոր ու բարոյական սնանկության, այն բանի, որ նրանք անձեռնհաս են հետևելու սահմանադրական կարգերի պահանջներին, հեշտությամբ կարող են բռնել երկրին դավաճանելու ուղին՝ նույնիսկ խախտելով նրա տարածքային ամբողջականությունը:

Ինչպես վերը նշվել է, սահմանադրականներն, իրենց հերթին, դեռ 1907 թ. կեսերից երկրի տարածքային ամբողջականության խաթարման գլխավոր մեղավորներ էին համարում միապետականներին և անձամբ չահին: Հուլիսի վերջին կառավարական գնդերը և գումարտակները Ատրպատականի նորանշանակ ընդհանուր նահանգապետ, Մեհմեդ Ալի չահի փեսա Էյն Դովլեի (իսկական անունը՝ Սոլթան Աբդոլ Մեջիդ Միրզա) և զորքի հրամանատար Սիփահդարի (իսկական անունը՝ Ֆաթհոլլահ խան Ռեչտի) առաջնորդությամբ Թեհրանից ուղղու-*

** Մինչև Փահլավիների իշխանության առաջին տարիները՝ 1930-ական թվականները, Պարսկաստանի պետական վարչամեքենայի բարձրաստիճան պաշտոնյաներն ավելի չատ ճանաչվում էին իրենց տիտղոս(ներ)ով, քան՝ իսկական անուններով: Տիտղոսը չնորհում էր կամ չահը, կամ դրանով ճանաչվում էին որոչակի դիրք զբաղեցնող անձինք. օրինակ՝ Ամին օլ Զարբը (բառացի՝ զանձապետ) պետական բանկի կառավարչի տիտղոսն էր՝ անկախ տվյալ պաշտոնն զբաղեցնող անձի ինքնությունից: Նույնիսկ մասնագիտական գրականության մեջ հաճախ բացակայում է անձի իսկական անունը: Ավելին, երբեմն նույն անձը հիշատակվում է զանազան տարբերակներով (օրինակ՝ Ամիր Մոֆախխամ, Սալար Մոֆախխամ, Սարդար Մոֆախխամ...)՝ աստիճանակարգում առաջխաղացմամբ պայմանավորված: Անձնանուններն ու տիտղոսները ճչտել ենք Հիմնականում Ահմեդ Քեսրաուիի «Թարիիխե մաչրութիե Իրան» («Իրանական սահմանադրության պատմությունը») Բ հատորի և Էբրահիմ Սաֆա'ի «Ռեհբերան մաչրութիե» («Սահմանադրության առաջնորդները») պարսկերեն մենագրությունների անվանացանկերի օժանդակությամբ:*

թյուն վերցրին դեպի Թավրիզ:

Պարսկաստանում Ռուսաստանի դեսպանը Պետերբուրգ հղած ճեպագրով հաղորդում էր, որ շահն ու նրա շրջապատը պահպանում են զարմանալի հանգստություն և լիովին համոզված են, որ Թավրիզ ուղարկած զորքը կարճ ժամկետում ճնշելու է ապստամբությունը: «Թե որքանո՞վ կարելի է հավատ ընծայել այդ լավատեսական հավաստիացումներին՝ դժվար է որևէ բան ասել»[1],- չեշտում էր նա:

1908 թ. օգոստոսի 2-ին Ատրպատականի ընդհանուր նահանգապետ Էյն Դովլեն Թավրիզի մատույցներից, ավելի ճիշտ՝ Վասմինջ (Վասպինջ) գյուղից*, որտեղ նա տեղակայել էր իր զորակայանը, Սաթթար խանի մոտ է ուղարկում պատվիրակություն՝ նրա հետ բանակցելու և փոխանցելու իր առաջարկությունը. առանց դիմադրության հանձնվելու դեպքում երաշխավորված է բոլորի կյանքի անվտանգությունը: Պատվիրակության ղեկավարն ավելորդ չէր համարել ապստամբության առաջնորդին նաև հաղորդել, թե շուտով Թավրիզին մոտենալու է ևս 6000-անոց կառավարական մի զորախումբ՝ թնդանոթներով: Չնայած այդ սպառնալիքներին, բանակցությունը վերջանում է անարդյունք[2]:

Հինգ օր հետո՝ օգոստոսի 7-ին, Թավրիզ է հասնում նաև կառավարական զորքերի ընդհանուր հրամանատար Սիփահդարը, որը հասնելուն պես Էյն Դովլեի նման հաշտության փորձեր է սկսում հեղափոխականների հետ՝ գործը խաղաղ ճանապարհով վերջացնելու համար՝ այս անգամ արդեն Թավրիզի ռուսական հյուպատոս Պոխիտոնովի միջնորդությամբ[3]:

---

[1] *"Сборник дипломатических документов, касающихся событий в Персии с конца 1906 г. по июль 1909 г.", вып. I, СПб, военная типография, 1911, с. 263.*

* 600 տուն ունեցող թուրքաբնակ մեծ գյուղ Թեհրանի ճանապարհի վրա, 20 վերստ հեռու Թավրիզից:

[2] Տե՛ս **Հայրապետ Պանիրեան**, Յեղափոխական շարժումները Պարսկաստանում, Թաւրիզ, 1917, էջ 47:

[3] Տե՛ս նույն տեղում, **«Զանգակ»** (Թաւրիզ), № 28, 8 օգոստոսի 1908 թ.:

Ստեղծվում է անորոշ, սպասողական վիճակ, որը տևում է չուրջ երեք շաբաթ:

Օգոստոսի 27-ին կառավարական բանակին Թեհրանից օգնության է հասնում 300 հոգուց բաղկացած ջոկատ՝ մի քանի թնդանոթներով: Մյուս կողմից՝ Խոյը գրավելուց հետո, Մակուի սարդար, քուրդ Թիմուր աղայի թոռ Իկբալ Սալթանեն օգնական զորք է հասցնում 800 մարդով և 6 թնդանոթով[1]:

Միապետականներն ուժեղացնում են ճնշումը քաղաքի վրա: Թե՛ Թավրիզում և թե՛ նրա արվարձաններում տեղի էին ունենում կատաղի կռիվներ: Միապետական ուժերը և՛ ներսից, և՛ դրսից անընդհատ գրոհում էին ապստամբների դիրքերը: Մեկը մյուսին հաջորդում էին Էյն Դովլեի բազմաքանակ զորքերը, Ղարադաղի Ռահիմ խան Զելերիանլուի հեծելազորքը, Սամսամ խան և նրա եղբայր Զարղամ խան Զելերիանլուների զինված ջոկատները, Իկբալ Սալթանեի եղբայր Իզո (Իզզաթոլլահ) խանի գլխավորած Մակուի քրդերի ավազակախմբերը և այլն:

1908 թ. ամռանը տեղի ունեցած կռիվներից հատկապես առանձնանում է օգոստոսի 29-ի գոտեմարտը: Այդ օրը լրացել էր Թավրիզի համառ պաշտպանության 100-րդ օրը: Հակահեղափոխական ուժերը, համերաշխ ու համախումբ զորահավաքի ենթարկելով իրենց ողջ հնարավորություններն ու եռանդը, վճռական հարձակման անցան ապստամբական ուժերի դեմ: Հատկապես բազմաքանակ էր Իզո խանի զորքը՝ 3000 զինված քուրդ[2]:

Քաղաքի ներսում ապստամբների միջնաբերդը Ամրակըզ (Ամիրախըզ) թաղն էր, ուր Սաթթար խանը կռվում էր Աջի-չայի կողմից (Ջուլֆայի կողմից) եկած հարձակումների դեմ, իսկ Բաղր խանը՝ Խիաբանի ճակատի վրա՝ Թեհրանի կողմից եկած հարձակումների դեմ: Բացի այդ երկու դիրքերից, կռիվը տարվում էր նաև քաղաքի կենտրոն Արքի չրջակայքում և միապետական ուժերի միջնաբերդ Դավաչի թաղում:

Առաջինը պարտություն կրեցին Ամրակըզ թաղի ուղղությամբ անընդհատ գրոհող միապետական ուժերը: Այստեղից

---

[1] Տե՛ս **Հայրապետ Պանիրեան**, Յեղափոխական չարժումները Պարսկաստանում, էջ 48-49:

[2] Տե՛ս **«Հայրենիք»** (Բոստոն), № 10 (321), հոկտեմբեր, 1952, էջ 80:

հեղափոխականները չուրջ 25 թնդանոթներից արկեր էին նետում հակառակորդի վրա, որի պատճառով վերջինս ստիպված եղավ կասեցնելու գրոհը: Արքում ևս միապետականները պարտություն կրեցին: Միայն Աջի գետի կողմում Իզո խանին հաջողվեց գրավել ապստամբների դիրքերը և առաջանալ դեպի քաղաքի ներսը: Այս ուղղությամբ ապստամբների շարքերում կռվում էր Կովկասից եկած, սոցիալ-դեմոկրատ վրացիներից կազմված մի ջոկատ: Դրությունը դառնում էր օրհասական, թնդանոթն ու հրացանն այլևս անկարող էին գործ տեսնել: Վիճակը փրկեցին հայերի պատրաստած ձեռնառումբերը, որոնք հակառակորդից խլեցին 70-ից ավելի զոհ և անասելի խուճապ առաջացրին նրա շարքերում: Անցնելով հարձակման՝ ապստամբները միապետականներին քայլ առ քայլ դուրս էին մղում իրենց դիրքերից: Ի վերջո, Իզոյի ուժերը ստիպված դիմում են փախուստի: Ինքը՝ խանը, դեմքից վիրավոր, հազիվ փրկվում է գերվելուց: Կովի մյուս երկու ուղղություններում նույնպես Սաթթար խանի ուժերը հաջողության են հասնում:

Հաղթանակը թանկ էր ձեռք բերվել, ապստամբները մարդկային մեծ կորուստներ էին ունեցել : Մեկ զոհ և մի քանի վիրավոր էին ունեցել նաև վրաց կամավորները[1]:

Պարտություն կրելով քաղաքում, միապետական ուժերը հավաքվեցին նրա մատույցներում և սկսեցին վերախմբավորել իրենց ուժերը նոր հարձակման համար:

Սեպտեմբերի երկրորդ տասնօրյակի սկզբին Էյն Դովլեն Թավրիզը հնազանդեցնելու վերջին փորձն է անում: Նա սպառնում է ամսի 11-ին քաղաքը «գետնին հավասարեցնել» թնդանոթային կրակով: Սպառնալիքը կատարվում է մի օր ուշ՝ սեպտեմբերի 12-ին, բայց չատ չնչին արդյունքով: Քաղաքի արևելյան և հարավային բլուրների վրա դասավորած մի քանի թնդանոթներից հակահեղափոխականներն ամբողջ օրն արկեր էին թափում քաղաքի վրա, որոնք ընկնում էին Մարալան, Խիաբան և Ամիրախզ թաղերի այգիներում, ուր դատարկ փոչի ու ծուխ բարձրացնելուց բացի քաղաքին ու հեղափոխականների դիր-

---

[1] *Տե՛ս* ***«Շեփոր»*** *(Բաքու), № 7, 1908 թ.:*

քերին որևէ վնաս չէին հասցնում[1]:

Վերջապես, ապստամբական զորքերը 1908 թ. սեպտեմբերի 14-ին անցնում են հակահարձակման: Հարվածն ամենից առաջ ուղղվում է Թավրիզի մերձակայքում բանակած Էյն Դովլեի հրամանատարությամբ կառավարական զորքերի վրա: Մինչև լուսաբաց նրանց հալածում են քաղաքից բավական հեռու, ուր և սրանք կրկին բանակում են: Տեսնելով, որ իր տրամադրության տակ եղած ուժերով չի կարող նոր հարձակում կատարել Թավրիզի վրա, Էյն Դովլեն մի քանի օր հետո, հոկտեմբերի 2-ին, իր պատժիչ զորքով վերադառնում է Թեհրան: Սիփահդարը, որ նրանից ավելի հեռատես էր գտնվել, դեռ չխայտառակված, չուրջ երկու շաբաթ առաջ էր սուսուփուս մեկնել Թեհրան[2]:

Էյն Դովլեի զորքի խուճապահար փախուստից հետո Սաթթար խանի ուժերը վճռական հարձակման են անցնում Թավրիզի ներսի հակահեղափոխականների դեմ: Բուռն, բայց կարճատև դիմադրությունից հետո հետադիմականների Դավաչի թաղը, չորս ամիս հեղափոխականների դեմ կռվելուց հետո, անձնատուր է լինում: Գերի են հանձնվում հակահեղափոխական պարագլուխներ Միրզա Շիտին, Միրզա Հասանը, Միրզա Քերիմը, իսկ նրանց տները ավերվում են[3]: Միապետական «Անջումենը խալամիեն» քարոզանդ է լինում: Անձնատուր են լինում նաև միապետականների վերջին՝ Սուրխաբ և Շեշ-Գիլան թաղերը:*

Այսպիսով, քաղաքն իր արվարձաններով ամբողջովին անցնում է Սաթթար խանի ձեռքը: Հոկտեմբերի 4-ից Թավրիզում այլևս հրանոթների ձայն չէր լսվում: Հարաբերական խաղաղություն էր: Հեղափոխականների ոգևորությունն անսահման էր:

«Թաւրիզի ըմբոստութիւնը եւ նրա յաջող դիմադրութիւնը չչմեցրել էին շահին եւ նրա կողմնակիցներին,- գրում էր Հայ-

---

[1] *Տե՛ս* ***Հայրապետ Պանիրեան****, Յեղափոխական շարժումները Պարսկաստանում, էջ 50:*

[2] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 10 (321), հոկտեմբեր, 1952, էջ 81:*

* *Պարսկաստանում «միրզա» տիտղոսով պատվում էին «գրչի տէր» անձանց. տե՛ս* ***Գալուստ Շեմազանեան****, Երեւելի հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով, 1890, էջ 78, 127:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

բապետ Պանիրյանը:- Մահմէդ Ալու համար անսպասելի էր, որ իր նախկին աթոռանիստը, արիստոկրատ Թաւրիզը կարող էր այդպէս արագ եւ անակնկալօրէն դեմոկրատական շարժման բոյնը դառնալ»[1]:

Թեև թագավորական ուժերը երկար ժամանակ պաշարված պահելով Թավրիզը չկարողացան ներս մտնել ու գրավել այն, նկատենք նաև, որ քաղաքի պաշտպաններն էլ, իրենց հերթին, ի վիճակի չեղան պատերից դուրս գալով նրանց այնպես ջախջախել, որպեսզի այլևս չկարողանան գալ ապստամբների վրա:

Այնուհետև հեղափոխական ուժերը հարձակման անցան Թավրիզից և նրա արվարձաններից դուրս՝ Աջի-չայի ճակատում գտնվող Ռահիմ և Իզո խաների հրոսակախմբերի դեմ՝ նրանց հեռու քշելով:

Ատրպատականի ուրիշ տեղերում ևս հաջողությունն ուղեկցում էր ապստամբներին: Նրանց շարքերում նույնպես զգալի թիվ էին կազմում պարսկահայ մարտիկները, որոնք իրենց կարգապահությամբ ու հերոսական պահվածքով օրինակ էին հանդիսանում տեղացի հեղափոխականների համար:

Կարևոր համարվեց Մարաղայի գրավումը, ուր ամրացված միապետական զինված խմբերը դարձել էին բազմամարդ՝ ի հաշիվ Սուջ-Բուլաղից օգնության եկած քրդական ավազակախմբերի: Ոչ միայն Թավրիզի հաղթանակը, այլև Մարաղայի գրավումը սահմանադրականներին ոգեշնչեց վճռական գործողությունների: Ուրմիայում պարսիկ սահմանադրականները գավառում գործող Սմբատի դաշնակցական խմբի հետ հարձակում գործեցին կառավարչության շենքի վրա, ձերբակալեցին գավառապետին: Սալմաստում 60 հայ զինյալներից բաղկացած խումբը՝ Սամսոն խանի (Ստեփան Թաղևոսյան) գլխավորությամբ, միացած Հաջի Փեշնամազի և Իբրահիմ աղայի ղեկավարած պարսից հեղափոխականների հետ, կռիվ էր մղում Սալմաստ ներխուժած Մակուի սարդար Իկբալ Սալթանեի հակահեղափոխական ուժերի դեմ: Ի վերջո սրանք պարտություն կրեցին և

---

[1] ***Հայրապետ Պանիրեան,*** *Յեղափոխական շարժումները Պարսկաստանում, էջ 52-53:*

ցրվեցին տարբեր ուղղություններով[1]: Հեղափոխականները հաջողությամբ էին գործում Խոյում, ուր հայ զինյալները Զուլումաթի գլխավորությամբ սահմանադրականների հիմնական ուժն էին[2]:

Մնում էր Ջուլֆայի ճանապարհին ընկած Մարանդ գյուղաքաղաքը, ուր իշխում էր շահի կողմնակիցներից Շուջաա Նիզամը: Թավրիզից փոստով իր հասցեով ուղարկած ծանրոցը հոկտեմբերի 14-ին բացելիս այնտեղ զետեղված ռումբը պայթում է և նա սպանվում է տեղում: Մնալով առանց ղեկավարի, Մարանդի թագավորականները, համարյա առանց դիմադրության, հանձնվում են և, դրանով իսկ, բացվում է Թավրիզ-Ջուլֆա ճանապարհը[3]:

Այդպիսով համարյա ամբողջ Ատրպատականը հեղափոխականների ձեռքին էր: Գրված քաղաքներում ու գյուղերում ստեղծվում էին անջումեններ և ֆիդայական ջոկատներ, որոնք վռնդում էին հետադիմական կալվածատերերին, բռնագրավում նրանց հացի պաշարները և անասնագլխաքանակը: Գյուղացիները դադարեցրել էին կատարել կալվածատիրական պարհակները[4]:

Բայց վտանգը վերջնականապես չէր անցել: Շահը տեր էր Պարսկաստանի մնացած նահանգներին և կարող էր նոր ուժեր ուղարկել ըմբոստ Ատրպատականը պատժելու համար: Հետևաբար պետք էր օգտվել ժամանակավոր զինադադարից և պատրաստվել:

Ժամանակավոր դադարը Թավրիզի ապստամբության ղեկավարությանը հնարավորություն տվեց ամրապնդելու քաղաքի պաշտպանական դիրքերը, զինված ջոկատները համալրելու գավառներից եկած հակամիապետական կամավորներով, զենք ու զինամթերք հայթայթելու դրսից, հատկապես Պարսկաստան մտած թուրքական բանակից և բուն Թուրքիայից:

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»,** № 10 (321), հոկտեմբեր, 1952, էջ 81:

[2] Տե՛ս նույն տեղում, № 5, մայիս, 1967, էջ 53:

[3] Տե՛ս նույն տեղում, № 10 (321), հոկտեմբեր, 1952, էջ 81:

[4] **"История Ирана"**, Москва, 1977, с. 282.

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ յեղափոխական դաշնակցությունը սկզբում խուսափում էր ***պաշտոնապես*** *հայտարարել պարսկական հեղափոխությանը մասնակցելու մասին, որովհետև չէր հավատում նրա հաղթանակի հնարավորությանը և վախ ուներ, թե անհաջողության դեպքում Պարսկաստանի հայ բնակչությունը կարող է գլխովին կոտորածի ենթարկվել:*

Բայց կռիվներում Թավրիզի պաշտպանների ունեցած հաջողությունները և Սպահանում միապետական ուժերի դեմ բախտիարների տարած հաղթանակները աստիճանաբար փոխեցին Դաշնակցության ղեկավարության տեսակետը:

Պարսկական հեղափոխական շարժմանը մասնակցելու օգտին Դաշնակցության ղեկավարության ընդունած դիրքորոշմանը մեծապես նպաստեցին 1907 թ. դեկտեմբերին այդ շարժման ղեկավարների մի խմբի հետ կուսակցության հիմնադիրներից մեկի՝ Ռոստոմի ունեցած բանակցությունները, նրա անձնական եռանդուն մասնակցությունը Թավրիզի կռիվներին և կազմակերպության վերին մարմիններին տված թելադրությունները:

Չնայած մեր ձեռքի տակ չկան Դաշնակցության ղեկավարների վկայություններ և արխիվային համապատասխան նյութերի հաստատումներ, բայց չենք կասկածում, որ Թեհրանում գտնվող Ռոստոմը նաև եղել է ոգեշնչողը պարսկական հեղափոխական շարժմանը մասնակցելու մասին ՀՅԴ Վրեժի (Թավրիզի) Կենտրոնական կոմիտեի ընդունած որոշման, որը փաստորեն եղել է կուսակցության շարքերում այդ հարցի վերաբերյալ ընդունված առաջին պաշտոնական փաստաթուղթը՝ նախքան վերին մարմինների կողմից կազմակերպության դիրքի ճշգրտումը:

1908 թ. օգոստոսի վերջերին ՀՅԴ Թավրիզի կենտրոնական կոմիտեն քննության առավ այդ հարցը: Կոմիտեի անդամներն ութ հոգի էին. Ստեփան Ստեփանյան (Բալաջան), Վահան Զաքարյան, Կարապետ Պիոնյան, Արմենակ Մկրտչյան, Գաս-

պար Հակոբյան, Հովսեփ Հովհաննիսյան, Վարդան Վարդանյան և Հայրապետ Պանիրյան[1]:

Կ. կոմիտեի նիստում փոքրամասնություն կազմեցին Հ. Հովհաննիսյանը և Ա. Մկրտչյանը: Նրանք գտնում էին, որ այդ օրերի քաղաքական-տնտեսական պայմաններում Պարսկաստանում ծայր առած հեղափոխական շարժումը կանխահաս է ու չհիմնավորված, հետևապես՝ դատապարտված է վիժման:

Ըստ փոքրամասնության՝ Դաշնակցությունը որքան էլ ցանկանա, չի կարող սրտաբաց ու անկեղծ միաբանություն կազմել թուրք հեղափոխականների հետ և հույս ունենալ, թե նրանց հետ հնարավոր կլինի դժվարին կռվի գնալ հեղափոխականին վայել անկեղծությամբ: Հ. Հովհաննիսյանը և Ա. Մկրտչյանը համոզված էին, որ ծանր պահերին թուրքերն անպայման հայերին միայնակ կթողնեն և սրանք ամբողջ ծանրությունն ստիպված կկրեն իրենց վտիտ ուսերի վրա՝ անկանխատեսելի հետևանքներով: Մուսուլման ժողովրդի համեմատությամբ հայությունը Պարսկաստանում չնչին փոքրամասնություն է կազմում, ուստի հակաշահական պայքարին Դաշնակցության մասնակցության պատճառով անպայման կվտանգվի ողջ պարսկահայ ժողովուրդը, եթե հակահեղափոխականները հաղթանակ տանեն[2]:

Նիստին մասնակից հակառակ տեսակետ ունեցողները մերժեցին փոքրամասնության դատողությունները, չնչելով, որ պարսկական հեղափոխական շարժման հաղթանակն անխուսափելի է, նա վարակիչ ազդեցություն կունենա Թուրքիայի և Ռուսաստանի վրա, միաժամանակ կբարձրացնի հայ տարրի դերը Պարսկաստանում: Նրանք գտնում էին, որ պարսկահայ ժողովուրդը հեղափոխական գործին մասնակցելով, պետք չէ վախենա զոհաբերությունից: Իսկ թե ինչո՞ւ «պետք չէ վախենա», դրան որևէ խելամիտ բացատրություն չէին տալիս:

Նիստում ընդունվեց պարսկական ապստամբական շարժ-

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 10 (321), հոկտեմբեր, 1952, էջ 79:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 80:

մանը մասնակցելու ՀՅԴ Թավրիզի կենտրոնական կոմիտեի անդամների մեծամասնության տեսակետը[1]:

Ապստամբական շարժմանը մասնակցելու մասին որոշումն ընդունելուց հետո ՀՅԴ Թավրիզի կենտրոնական կոմիտեն անմիջապես ձեռնարկեց զինված մի տասնյակի կազմակերպմանը, որի կազմի մեջ էին Երվանդը, պոլսեցի Հրաչ Սեղբոսյանը, Լիլավա թաղի դպրոցի ուսուցիչներ Արմենակ Աֆթանդիլյանը և Մկրտիչ Զարգարյանը, սղերդցի արհեստավորներ Համբարձում և Ղարիբ Պետրոսյանները և այլոք: Կազմակերպվելուց հետո խումբն անմիջապես կռվի մեջ մտավ միապետական ուժերի դեմ:

*Հավանություն տալով ընդունած որոշմանը և արտահայտելով Թավրիզի դաշնակցականների տրամադրությունները, Զինագործ Պետրոսն ասում էր. «Մենք պէտք է օգնենք պարսից յեղափոխականներին: Պարսիկները մեր եղբայրներն են: Նրանք մեզ հետ լաւ են վարուում: Պէտք է որ մենք նրանց օգնենք եւ պէտք է որ միանգամից տապալենք **Ղաճարների** տիրապետութիւնը: Կը հաւատամ, որ յեղափոխութիւնը պիտի յաղթանակի ի վերջոյ ...»[2]:*

Թավրիզի դաշնակցական կազմակերպության որոշումն արագացրեց կուսակցության կողմնորոշման ճշտումը:

1908 թ. սեպտեմբերին և հոկտեմբերի առաջին օրերին Դաշնակցության թե՛ վերին և թե՛ շրջանային մարմինները քննարկում էին Պարսկաստանի ապստամբական ուժերին օգնության հասնելու հետ կապված հարցերը: Քննարկումները հատկապես սուր կերպարանք էին առել ՀՅԴ Կովկասի կազմակերպություններում՝ առաջ բերելով փոթորկալի վեճեր: Ի վերջո, այնտեղի բոլոր կ. կոմիտեները հակվել էին պարսկական շարժմանը մասնակցելու կողմը: Բացառություն էր կազմել Ոսկանապատի (Բաքվի) կենտրոնական կոմիտեն, որի ընդունած որոշման մեջ ասված էր, որ ոչ միայն պարսկահայությունը, այլև ամբողջ հայ ժողովուրդը որևէ շահ չունի Պարսկաստանում ծավալված

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 1 (205), նոյեմբեր, 1939, էջ 132:*

[2] *Տե՛ս նույն տեղում, № 10 (321), հոկտեմբեր, 1952, էջ 80:*

կոիվներին մասնակցելուց, ուստի աննպատակահարմար է Դաշնակցության մուտքը չարժման մեջ և որ կուսակցության ղեկավարությունը պետք է հրաժարվի կազմակերպության ունեցած ուժերն անհասկանալի նպատակների վրա սպառելու մտադրությունից:

Պարսկական հեղափոխական կռիվներին մասնակցելու հեռանկարով խանդավառված չէին ոչ միայն կուսակցության շարքայինները, այլև գործիչներից ոմանք:

Վերհիշելով ՀՅԴ Զորրորդ ընդհանուր ժողովի (1907 թ. փետրվար-ապրիլ) օրերին Վիեննայում Ռոստոմի հետ ունեցած իր թռուցիկ զրույցը պարսկական հեղափոխությանը կուսակցության մասնակցության մասին, ժողովի պատգամավոր Սիմոն Վրացյանը հետագայում գրել է.

« ... Ռոստոմը հարցրեց ինձ.

– Դու ինչո՞ւ հակառակ ես, որ Դաշնակցությունը մասնակցի պարսկական յեղափոխութեան:

Ինձ համար անակնկալ էր այս հարցումը. ես ո՞վ, որ Ռոստոմը հետաքրքրուի իմ կարծիքով:

– Ինձ թւում է, որ հայերը չահ չունին պարսկական յեղափոխութիւնից,– պատասխանեցի ես,– մենք ինչո՞ւ զոհեր պիտի տանք պարսիկների համար:

– Ի՞նչ զոհեր,– խնդաց Ռոստոմը,– տուէ՛ք ինձ 500 դաշնակցական ֆեդայիներ, եւ ես կը գրաւեմ ամբողջ Ատրպատականը:

Յաճախ դժուար էր լինում հասկանալ՝ լո՞ւրջ էր խօսում Ռոստոմը, թէ՞ հանաք էր անում:

Բալաջանը, որ լսում էր մեզ, հաստատեց Ռոստոմի խօսքերը.

– Հինգ հարիւր ֆեդային նոյնիսկ չատ է:

Հետագայ դէպքերը – Եփրեմ, Քեռի – ցույց տուին, որ Ռոստոմի ու Բալաջանի խօսքերը չափազանցութիւն չէին, բայց եւ այնպէս, ես այսօր էլ նոյն կարծիքի եմ. մենք գործ չունէինք Պարսկաստանում: Հայ ժողովրդին ի՞նչ չահ այն օրերի պարսկական յեղափոխութիւնից»[1]*:*

---

[1] ***Սիմոն Վրացեան***, *Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատ. Բ, էջ 103:*

Պարսկական հեղափոխությանը հայերի մասնակցության դեմ հանդես եկող դաշնակցական ղեկավար գործիչներից ամենահետևողականը, այնուամենայնիվ, մնում էր Նիկոլ Դումանը, որի հիմնավորումներին կանդրադառնանք աշխատության հետագա էջերում:

Հաշվի առնելով կուսակցական շրջանային մարմինների բացարձակ մեծամասնության դրական վերաբերմունքը առաջադրված հարցին, ՀՅ դաշնակցության Արևելյան բյուրոն որոշում ընդունեց պարսկական հեղափոխությանը կազմակերպության եռանդուն մասնակցության մասին:

Փաստաթղթում ասված էր, որ պարսկական հեղափոխության մեջ մտնելով, ՀՅ դաշնակցությունը հենվում է իր վերջին՝ Չորրորդ ընդհանուր ժողովի ընդունած որոշման վրա, որի մասին խոսք է եղել վերը:

Այս որոշումը ՀՅԴ-ն ընդունել էր պարսկական Թավչյա սահմանադրական շարժման եռուն օրերին, բայց այժմ այդ ժամանակից անցել էր ավելի քան մեկ ու կես տարի և շարժումը թևակոխել էր իր բարձրագույն՝ զինված ապստամբության փուլը: Իսկ դա ենթադրում էր կուսակցության կողմից նոր մարտավարության որդեգրում, որը միայն կարող էր անել ՀՅԴ նոր ընդհանուր ժողովը:

Կուսակցությունը հաշվի էր առնում մի կարևոր հանգամանք ևս՝ ընդունել այնպիսի գործելակերպ, որը չհակասեր օսմանյան երիտթուրքական կառավարության վարած քաղաքականությանը՝ պարսկական հեղափոխության հարցում: Ակնհայտ էր, որ ինքնուրույն բախտորոշ որոշումներ ընդունելու համար Դաշնակցության ձեռքերն այլևս ազատ չէին: Եվ Դաշնակցությունը բռնեց քաղաքական այն ուղին, որը չէր հակասում 1907 թ. դեկտեմբերին Փարիզում, օսմանյան հակասուլթանական ուժերի համաժողովում երիտթուրքերի հետ ձեռք բերած պայմանավորվածություններին:

Դաշնակցությունը մտավ Պարսկաստանի միապետական կարգերի դեմ ծավալվող հեղափոխական, ապստամբական շարժման մեջ՝ կարողանալով իր հետևից տանել պարսկահայության որոշ մասին:

*«Ինչո՞ւ արդեօք մասնակցեցանք պարսկական յեղափոխութեան,- գրում էր Միքայել Վարանդյանը,- ինչպէ՞ս կարողացանք ընել այդ ահաւոր **ռիսքը** ... Հարցում մըն է, որ այն օրերուն չատ էր յուզեր հայկական շրջանակները եւ մեր սեփական շարքերը: Հարցում մըն է, որ այսօր ալ երբեմնապէս դեռ կը տրուի ոմանց կողմէ՝ զարմացական եւ մեղադրական շեշտերով»[1]: Եվ Վարանդյանը արդարացված է համարում այդ «ահաւոր ռիսքը»:*

Ոչ միայն Վարանդյանի, այլև դաշնակցական մյուս հեղինակների ուսումնասիրություններում ևս, առավելապես դաշնակցական գործիչների հուշերում պարսկական հակամիապետական հեղափոխության մեջ ՀՅ դաշնակցության և նրա գլխավորած պարսկահայության մի մասի գործոն մասնակցությունը միանշանակ ու անառարկելիորեն ներկայացված է որպես հայանպաստ և չատ առաջադիմական քայլ:

Ինչպե՞ս և ինչպիսի՞ փաստարկներով էր Դաշնակցությունը հիմնավորում պարսկական հեղափոխության մեջ իր մասնակցության անհրաժեշտությունը: Ըստ նրա՝

Առաջին, Պարսկաստանի մոտ 10 միլիոն բնակչության մեջ չնչին փոքրամասնություն կազմող (մոտ 1 տոկոս) հայությունը ցրված է երկրի գրեթե բոլոր նահանգներում (Թեհրան, Ռեշտ, Ղազվին, Շիրազ, Համադան և այլն), բայց առավել չատ՝ Ատրպատականի և Սպահանի նահանգներում: Նրանք ապրում են և՛ քաղաքներում, և՛ գյուղերում, ապրում են այլազգիների հետ, չատ հաճախ՝ խառը: Պարսկահայ գյուղացին ճնչվում ու կեղեքվում է մահմեդական խաներից ու բեկերից, իսկ քաղաքաբնակ փոքրաթիվ հայ առևտրական դասակարգը դուրս է մղված ավելի խոշոր դրամագլուխներ ունեցող պարսիկ ու եվրոպացի տարրերի կողմից և նրան մնացել է սոսկ միջնորդի ասպարեզը:

Երկրորդ, դարեր չարունակ իսլամ իրանցին և քրիստոնյա հայը ապրել և ապրում են կողք-կողքի, բայց իրարից անջատ ու խորթացած: Թեև պարսից կղերը զերծ է Տաճկաստանի թուրք

---

[1] ***Միքայել Վարանդեան**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., Թեհրան, 1981, էջ 255:*

մուսուլմանական կղերի արյունռուչտ բնազդներից, բայց նրա մեջ զորավոր են կրոնական նախապաշարումն ու խտրականության զգացումը, ուստի քրիստոնյաների վրա նա միշտ նայում է բարձրից ու արգահատանքով:

Երրորդ, պարսկական սահմանադրական խաղաղ շարժումը, առավել ևս դրան հաջորդած հակամիապետական զինված ապստամբությունն ունեն համամարդկային նշանակություն այն առումով, որ արագացնում են խավար Ասիայում քաղաքակրթական գործընթացները, նպաստում ոչ միայն Պարսկաստանի, այլև հարևան մուսուլմանական երկրների առաջընթացի արագացմանը: Դաշնակցությունը, դավանելով եվրոպական հոգևոր ու մտավոր արժեքները և գնահատելով դրանց պատմական նշանակությունն Արևելքի համար, չի կարող անտարբեր լինել և իր մասնակցությունը չբերել համամարդկային առաջադիմության ընդհանուր գործին:

*Դաշնակցությունն, իհարկե, չէր անտեսում, որ պարսկահայությունն իր ազգային մշակույթը և աճող սերնդի դպրոցական կրթությունը զարգացնելու համար ունի ազատ հնարավորություններ: «Հայ կրթական հաստատութիւնները Պարսկաստանի քաղաքներուն մէջ իրօք աչքի կը զարնէին իրենց աւելի արդիական, եւրոպականացած ձեւերով՝ բաղդատմամբ խլամ դրացիներու նախնական **մադրասա**ներուն»[1]: Բայց այդ հանգամանքը համարվում էր երկրորդական: Առաջին գիծ էին մղվում պարսկահայ գյուղացու աղքատությունը, ճնշված լինելն ու հետամնացությունը, քրիստոնյաների նկատմամբ պարսիկ կղերի ցուցաբերած նախապաշարմունքը, խտրականությունն ու ատելությունը:*

Հաշվի առնելով այդ ամենը՝ կուսակցության ղեկավարությունը եկել էր վերջնական եզրակացության, որ Պարսկաստանի ընդհանուր խռովքի ու իրարանցման մեջ տեղի հայ բնակչությունը և մանավանդ Ատրպատականի խոշոր համրանք ունեցող հայությունը չի կարող բոլորովին անմասն մնալ երկրի

---

[1] ***Միքայէլ Վարանդեան,*** *Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 255:*

ներքին կյանքն ալեկոծող պայքարից: Ուզեն թե չուզեն, հայերը ևս ստիպված են որոշել իրենց դիրքը, աջակցելով պայքարող կողմերից այն մեկին, որի հաղթանակը նախընտրելի պետք է լինի հայության համար: Այդ նախընտրելին սահմանադրական առաջադիմական շարժումն է:

Պատահական չէ, գրում էր Վարանդյանը, որ երբ «Ատրպատականի մայրաքաղաք Թաւրիզը պարզեց ապստամբութեան դրօշը, հայ տարրի խորունկ համակրանքը ամէնուրեք ապստամբներու կողմն էր եւ ընդդէմ ուխտադրուժ վեհապետին ու անոր արբանեակներուն»[1]:

Ինչպես ՀՅԴ Վրեժի (Թավրիզի) կ. կոմիտեի որոշման, այնպես էլ կուսակցության ղեկավար մարմնի որոշման ընդունման հարցում վճռական դեր է ունեցել Ռոստոմը: Զմոռանանք, որ Դաշնակցության Զորրորդ (Վիեննայի) ընդհանուր ժողովում (1907 թ.) հենց նա էր կազմել և քվեարկության ներկայացրել Պարսկաստանի վերաբերյալ բանաձևը: Ակնհայտ է, որ ղեկավարության՝ պարսկական հեղափոխությանը մասնակցելու որոշումը հենված էր ոչ միայն նշված ընդհանուր ժողովի հիշատակված որոշման, այլև նույն թվականի դեկտեմբերին տեղի ունեցած Օսմանյան կայսրության հակասուլթանական ուժերի ներկայացուցիչների համագումարում (Փարիզ) երիտթուրքերի հետ կնքած բարեկամության պայմանագրի վրա, որը գործնական դրսևորումներ էր ունենում նաև պարսկական հեղափոխության տվյալ փուլում:

Որոշման ընդունման արագացմանը նպաստել էր նաև Ատրպատականում կռիվների կարճատև դադարից հետո հակահեղափոխական ուժերի նոր աշխուժացումը: Ըմբոստ Թավրիզը տապալելու համար Ղարադաղում, Մակուում, Խոյում, Պարսկական Քուրդիստանում և այլ տեղերում հակահեղափոխականները վերադասավորում ու համալրում էին իրենց հրոսակախմբերը:

Մյուս կողմից սկսել էր նվազել Թավրիզի պաշտպանների

---

[1] ***Միքայէլ Վարանդեան,*** *Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 257:*

հեղափոխական կորովը, արագորեն տեղի էր տալիս սկզբնական շրջանի ընդհանուր խանդավառությունը: Բարոյալքումը հասել էր այնտեղ, որ առաջավոր դիրքերում գնալով հաճախակի էին դառնում անձնատվությունները հակառակորդին, շատերն էլ զենքերը թողնելով դիրքերում, հետ էին քաշվում և ցրվում տները:

Պաշարված Թավրիզում գաղտնի գործակալներ ունեցող հակառակորդը տեղյակ էր սահմանադրականների շրջանում առաջ եկած պարտվողական տրամադրություններին, հեղափոխական մարտիկների դիմադրական կորովի ջլատմանը, մինչդեռ քաղաքից դուրս կառավարական կանոնավոր բանակը և միապետական ցեղախմբերի զինյալներն ավելի էին հզորանում ոչ միայն իրենց համրանքով, այլև մոտալուտ հաղթանակի վստահությամբ: Եվ եթե շարունակվեր իրերի այդ վիճակը, ապա հեղափոխականների պարտությունն անխուսափելի էր:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ԽՄԲԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Զորրորդ ամիսն էր, բայց Պարսկաստանը հանգիստ չէր առնում: Մի ամբողջ երկիր գտնվում էր կատարյալ անիշխանության մեջ, մի ամբողջ ժողովուրդ տառապում, հեծում էր դրա չարիքներից:

Այդ ծանր կացության մեջ շատերը համոզված էին, որ առաջիկայում սպասվելիք կռիվները լինելու են ավելի դաժան ու անզիջում, որ միապետական ուժերն այժմ ավելի մեծ հնարավորություն ունեն Թավրիզի վրա լայնածավալ հարձակում կատարելու, քաղաքը շրջապատելու և պրկելու պաշարման օղակով՝ իր բոլոր ողբերգական հետևանքներով: Ինչ վերաբերում էր հեղափոխական ուժերին, ապա իրենց շարքերի լուրջ համալրման ներքին հնարավորություններ նրանք չէին տեսնում, համարելով, որ իրական աջակցություն կարող է գալ միայն մի տեղից՝ Կովկասի հայությունից: Կովկասից եկած հայ մարտիկների մի խումբը՝ հեղափոխական պայքարի բովով անցած,

կռիվների մեծ փորձ ունեցող մի անվանի խմբապետի հրամանատարությամբ կարող էր մեծապես նպաստել Թավրիզի պաշտպանության ամրապնդմանը: Նման հրամանատարն իր հմտությամբ և անձնական հմայքով կարող էր իր շուրջը համախմբել ու ի մի բերել Ատրպատականի հայության կռվող տարրերին: Այլապես անհնարին էր դառնում միապետականների սպառնացող վտանգի առաջն առնելը:

Եվ օգնությունը եկավ:

ՀՅԴ Արևելյան բյուրոն հանձնարարեց Երևանի կենտրոնական կոմիտեին պատրաստել մի զինված խումբ՝ Ատրպատական-Թավրիզ ուղարկելու համար[1]:

1908 թ. սեպտեմբերի վերջերին Երևանից հարավ, Արաքսի ափին, կազմվեց 25 ընտիր հեծյալներից բաղկացած մի խումբ[*]: Եկել էին կռիվների բովով անցած մարտիկներ Նիկոլը, Արտեմը, Զեմլյակը, Հրաչը, Կարոն, Սեթոն, հայտնի ռմբաձիգ Բուլղարացի Գևորգը, դարաբաղցի Տատան և ուրիշներ: Խմբի մեջ ընդգրկվեցին նաև մի քանի ավազակներ, որոնք թրծված էին Անդրկովկասի 1905-1906 թթ. թուրք-հայկական ընդհարումներում և կողոպուտի ախորժակով էին եկել Պարսկաստան գնալու համար: Բայց տիրող ընդհանուր բարոյահոգեբանական մթնոլորտը նրանց մոտ առաջ բերեց հոգեկան հեղաշրջում: Տեսնելով, որ իրենց մտադրությունն անիրագործելի է և որ տարբեր տեղերից դաշնակցական կամավորները հավաքվել են ոչ թե նյութական շահ հետապնդելու, այլ կռվի գնալու հանուն գաղափարի, նախկին ավազակները կարճ ժամանակում վերափոխվեցին[2]:

Իսկ ո՞վ պետք է լիներ հրամանատարը: ՀՅ դաշնակցության վերին մարմինները կանգ առան հայ ժողովրդի ազատագրական պայքարի պանծալի հերոսներից մեկի՝ Խանասորի Վարդանի

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 10 (321), հոկտեմբեր, 1952, էջ 82:*

[*] *Աղբյուրներում խմբի մասնակիցների թիվը տարբեր է ներկայացված: Օրինակ՝ "Историк-марксист" («Իստորիկ-մարքսիստ») հանդեսում (Մոսկվա) նշված է 35 թիվը (№ 2, 1940, էջ 27):*

[2] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 10 (321), հոկտեմբեր, 1952, էջ 83:*

(Մեհրաբյան) վրա և առաջարկեցին կազմել խումբ ու անցնել Թավրիզ՝ մասնակցելու կռիվներին: Բայց Վարդանից մերժում է ստացվում: Դրանից հետո առաջարկ է արվում Նիկոլ Դումանին, որը նույնպես մերժում է: Պատճառն այն է, որ նրանք երկուսն էլ կանգնած էին այն տեսակետի վրա, որ կուսակցությունն իր ուժերը պետք չէ ծախսի Պարսկաստանի շարժումների մեջ: Վերջապես այս անգամ առաջարկ է արվում Սևքարեցի Սաքոյին, որը և տալիս է իր համաձայնությունը[1]: Բայց արտակարգ խիզախության և իր ժողովրդի դատին անհունորեն նվիրված հեղափոխականին վիճակված չէր կատարելու կուսակցության տված վերջին պատասխանատու հանձնարարությունը: Ինչպես միշտ, այս անգամ նույնպես նա պարտքի մեծ զգացումով ձեռնամուխ եղավ նոր առաջադրանքի կատարմանը: Նա հայրենի Սևքարից մեկնեց Երևան՝ այնտեղից Թավրիզ անցնելու համար: Բայց Երևանում Սաքոն անսպասելիորեն հիվանդացավ խոլերայով և կնքեց իր մահկանացուն:

Սաքոյի վախճանից հետո ՀՅԴ ղեկավարությունը նպատակահարմար գտավ Ատրպատական-Թավրիզ ուղարկել հայ ժողովրդի ազատագրական շարժման նշանավոր գործիչ Քեռուն (Արշակ Գավաֆյան, Ֆարհատ)՝ նրան օժտելով նույն լիազորություններով, ինչպիսիք ուներ Սաքոն[2]:

Մինչ այդ էրզրումցի Արշակը գործել էր իր ծննդավայրում և Ալաշկերտ-Բասենում, ապա՝ Սասունում, Վանում, այնուհետև՝ Զանգեզուրում: Բոլոր այդ վայրերն իր հայրենիքի մասերն էին: Բայց ահա՛ այժմ գնում էր գործելու հայրենիքից դուրս, կատարելու մի առաքելություն, որն ըստ էության չէր վերաբերելու հայության երկու հատվածներից որևէ մեկին, այլ վերաբերելու էր նախևառաջ ու գլխավորապես պարսիկ ժողովրդին, հանձին նրա այն մասի, որ հեղափոխության դրոշ էր պարզել երկիրը միապետական-ավատապետական միջնադարյան կարգերից ազատագրելու համար:

---

[1] Տե՛ս **Յովսէփ Յովհաննիսեան**, Յուշեր, Երեւան, 1995, էջ 174-175:

[2] Տե՛ս **«Հայրենիք»**, № 2 (408), փետրվար, 1960, էջ 58:

Իր ռազմիկների հետ Քեռին անցնում է Արաքս գետը և հասնում պարսկական Ջուլֆային մոտիկ Դարաչամբ գյուղի ս. Ստեփանոս Նախավկայի վանքը, որն այն ժամանակ փոխբեռնման կետ էր Անդրկովկասից Պարսկաստան և այնտեղից Արևմտյան Հայաստան անցնելիս: Բացի խմբի անդամների վրա եղած զենքերից, գետով անցկացվեցին նաև 50.000 փամփուշտ, 42 «Մոսին» և այլ տիպի 8 հրացան, 12 «Մաուզեր» ատրճանակ, ռումբեր և 12 ձի[1]*:*

*Կովկասյան պահնորդական բաժանմունքը Կովկասի փոխարքայի գրասենյակին տեղեկացնում էր. «Ջուլֆայից (նկատի ունի ռուսական Ջուլֆան:- Հ. Ս.) լաստերով գիշերները հեղափոխականները անցնում են գետն առանց անձնագրի: Նրանք իրենց հետ տանում են զենք ու փամփուշտներ: Տեղափոխվող ռազմամթերքը կենտրոնացվում է հայկական Դարաչի (Դարաչամբ:- Հ. Ս.) գյուղի** ս. Ստեփանոսի վանքում»*[2]*:*

Դուրս գալով Դարաչամբից, երկար ու դժվարին ճանապարհի բոլոր վտանգները հաղթահարելով, խումբը երեք օրից, հոկտեմբերի սկզբին, մտնում է Թավրիզ, ուր հեղափոխականները նրան էին սպասում:

Սկզբում Քեռու խումբը ներկայացավ Սաթթար խանին, հետո այցելեց անջումենին, որի նիստերի դահլիճում խանդավառ

---

[1] *Տե՛ս* ***Անդրէ Ամուրեան,*** *Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում 1890-1918, Թեհրան, 1950, էջ 65:*

* *Պարսից Ջուլֆայում այդ օրերին Դաշնակցության ներկայացուցիչն էր Ռուբեն Դերձակյանը (Փայլակ): Նա ընդունում էր անցնող խմբերին և զինամթերքը: Ջուլֆայում պահեստ կար, որտեղից զենքերի մի մասը ուղարկվում էր Թավրիզ և Ատրպատականի այլ տեղեր, իսկ մյուս մասը պահվում էր եկող նոր խմբի համար: Ջուլֆայում կար անջումեն, որի հետ գործակցում էր Փայլակը և ստանում նրա աջակցությունը (տե՛ս* ***Անդրէ Ամուրեան,*** *Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում 1890-1918, էջ 65):*

[2] ***"Историк-марксист",*** *№ 2, 1940, с. 27:* ***Նշենք, որ զենք-զինամթերքից բացի Կովկասից պարսկական Ջուլֆայի վրայով Թավրիզ և Ատրպատականի ուրիշ քաղաքներ էին տեղափոխվում ու տարածվում հեղափոխական կազմակերպությունների թռուցիկներ ու կոչեր*** *(տե՛ս* ***Михаил Сергеевич Иванов,*** *Иранская революция 1905-1911 годов, изд. Гемо, Москва, 1957, с. 82):*

բացականչություններով պատգամավորները դիմավորեցին հայ մարտիկներին:

Քեռին անմիջապես ձեռնամուխ է լինում իր պարտականությունների կատարմանը: Քաղաքի հուսաբեկ ու եռանդաթափ պաշտպանները ոգի են առնում, իսկ նրանցից բարոյալքվածները, դուրս գալով թաքստոցներից, մեկնում են դիրքերը: Բոլորը գիտեին, որ թեև փոքր է հայ մարտիկների թիվը, բայց նրանք կարգապահ են ու գիտակից, մեծ ու հուժկու է նրանց ոգեշնչությունը:

Ատրպատականում ՀՅԴ Արևելյան բյուրոյի ներկայացուցիչ Ստեփան Թադևոսյանի (Սամսոն) հանձնարարականով Դաշնակցության Սալմաստի կոմիտեն չուտով Թավրիզ հասցրեց իր ազատ ուժերը՝ Սարգիս Սարուխանյանի գլխավորությամբ, և Քեռու խմբի անդամների թիվը հասավ մոտ 50-ի[1]:

Քեռու մուտքը Թավրիզ ոչ միայն գոտեպնդել էր քաղաքի պաշտպաններին, այլև վերջիններիս մոտ առաջ էր բերել հաճոյալի տրամադրություններ հայ մարտիկների կարգապահության, վարմունքի, նույնիսկ հագ ու կապուստի նկատմամբ: Այդ մարտիկներից մեկը հետագայում վերհիշել է. «Զինուած էի ոտքէս մինչեւ ակռաներս եւ հագած էի ֆէտայական հագուստ: Ոտերս ունէի երկար փողով կօշիկներ, զոր Կովկասէն բերած էի: Գլուխս դրած էի քոլոզ, եւ շուրջը պատած էի զանազան խատուտիկ փոշիներով: Ձեռիկս ունէի «Մոսին» հրացան, կողքիս՝ տասհարուածեան «Մաուզեր» ատրճանակ»[2]:

Ընդհանրապես Պարսկաստանում այսպես էր հագնված ու հանդերձավորված հայ մարտիկների զգալի մասը:

Քեռու խումբը միակը չէր, որ Կովկասից անցել էր Պարսկաստան: Օգտվելով նրանից, որ Ռահիմ խանի հրոսակների պարտություն կրելուց հետո Ջուլֆա-Թավրիզ գիծը ժամանակավորապես բացվել է, հայ կամավորական անջատ-անջատ նորանոր խմբեր էին անցնում Արաքսը, ուղղություն վերցնում

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 10 (321), հոկտեմբեր, 1952, էջ 82:

[2] Տե՛ս նույն տեղում, № 8 (402), օգոստոս, 1959, էջ 91:

դեպի Թավրիզ և Ատրպատականի մյուս հայաբնակ գավառները:

Հենց այդ ժամանակ դաշնակցական նշանավոր գործիչներ Գալուստ Ալոյանը (Թորոս) և Ռուբեն Դերձակյանը (Փայլակ) պարսկական Ջուլֆայում էին և ղեկավարում էին այդ շրջանի հակաշահական շարժումները: Դաշնակցական հայտնի գործիչներից մի ուրիշը՝ Մկրտիչ Աղամալյանը (Սարհատ), 10-12 հոգանոց մի խմբով անցնելով Արաքսը, դեկտեմբերի սկզբին գալիս, միանում է Թորոսի խմբին: Աղամալյանի խմբի մեջ էին նաև Անդրկովկասում հայ-թաթարական ընդհարումների ժամանակ իրենց քաջությամբ ու անվեհերությամբ մեծ անուն հանած փառակեցի Հրայրը և Կարոն:

Միապետական ուժերն ամրացել էին Ջուլֆայից ոչ հեռու գտնվող Ուզունուզ մեծ գյուղում և փակել դեպի Թավրիզ տանող ճանապարհը: Գալուստ Ալոյանի հանձնարարությամբ՝ Աղամալյանն իր փոքր խմբով այնպիսի արագությամբ է հարձակվում գյուղի վրա, որ այնտեղ գտնվող զորամասը, անակնկալի գալով, ի վիճակի չի լինում որևէ դիմադրություն ցույց տալ և խուճապահար փախչում է: Այդ փոքր խմբի գործողության հետևանքով հաջողվում է զսպել միապետական ուժերին և փաստորեն վերահսկողություն սահմանել այդ շրջանի վրա[1]:

Զինվորական գործիչներից և զինյալ կամավորներից բացի Թավրիզ են հասնում նաև ստոլիպինյան ռեժիմից, հատկապես լրժինյան հալածանքներից խույս տված դաշնակցական գործիչներ Սարգիս Օհանջանյանը, Ստեփան Տեր-Մկրտչյանը (Սուրեն), Տիգրան Դևոյանը և ուրիշներ, որոնք եռանդուն մասնակցություն են ունենում Թավրիզի, Սալմաստի, Ուրմիայի և Խոյի կազմակերպական-կուսակցական գործերին*:

---

[1] Տե՛ս **Աբրահամ Գիլխանդանեան**, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. Ա., Փարիզ, 1933, էջ 65-66:

* Զգալի թվով զինված հայերի մուտքն Ատրպատական ամրապնդեց պարսկական հեղափոխության չարժիչ ուժերը: Անվարան կարելի է ասել, որ հայկական զինված խմբերը կազմեցին դրանց առավել մարտունակ մասը (Հայերի, որպես պարսկական հեղափոխության չարժիչ ուժերից մեկի մասին տե՛ս **«Երկիր»** (Թիֆլիս), № 7, 8 հոկտեմբերի 1908 թ.):

«Դարձյալ հայերը», «Դարձյալ այդ խառնակիչները»,- լսվում էին պետերբուրգյան իշխանական միջանցքներում ու աչխատասենյակներում: Կառավարության մեջ և կայսերական պալատում ավելանում էր ատելությունը հայոց նկատմամբ:

Պարսկաստանի սահմանադրականների հետ Թեհրանում հերթական բանակցություններ վարելուց հետո Ռոստոմը 1908 թ. հոկտեմբերի կեսերին մեկնում է Թավրիզ, ուր նա հասնում է այն ժամանակ, երբ դեպքերի բերումով քաղաքն արդեն դարձել էր ապստամբության գլխավոր կենտրոնն ամբողջ Պարսկաստանում:

Գալով Թավրիզ, Ռոստոմը հանդիպում է Սաթթար խանին և նրա հետ մշակում հետագա գործողությունների ծրագիրը: ՀՅԴ Արևելյան բյուրոն, իր հերթին, պատրաստակամություն է հայտնում ունեցած հնարավորություններով աջակցել Թավրիզի ապստամբներին: Սաթթար խանի և Դաշնակցության ներկայացուցիչների բանակցությունների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվում հիմնականում չորս սկզբունքային հարցերի շուրջ.

1) Հայության դեմ ստոլիպինյան ռեակցիայի սանձազերծման պայմաններում Դաշնակցությունը հանձն է առնում իր կովկասյան մարմինների միջոցով Արաքսի պարսկական ափ տեղափոխել կովողների նոր խմբեր, ինչպես և տրամադրել փորձված ռազմիկ ղեկավարներ[1], 2) Դաշնակցական մարտիկները Թավրիզի ապստամբների շարքերը կմտնեն Կովկասից իրենց հետ բերած զենքերով, բայց տեղ հասնելուց հետո նրանք քաղաքի պահեստներից պետք է ստանան ռազմամթերք, ուտեստեղեն, անհրաժեշտ այլ բաներ, 3) Հաշվի առնելով թուրք ապստամբների որակները, որոնք ներկայացնում են անփորձ, անկարգապահ, խառնիճաղանջ և խառնափնթոր զանգված, հայ մարտիկները պետք է նրանց սովորեցնեն զենքի գործածություն, կատարեն հրամանատարների պարտականություն, վարեն թնդանոթային և ռմբային գործը, 4) Հայկական զինված

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 9 (438), սեպտեմբեր-հոկտեմբեր, 1962, էջ 51:*

խմբերն իրենց վերահսկողությունը հաստատած վայրերում պետք է նպաստեն սահմանադրական կարգերի վերականգնմանը, հատկապես աշխատանքների վերսկսմանն անջումեններում:

Երկու կողմերը պարտավորվեցին հարազատ մնալ պայմանավորվածությանը:

Ձեռք բերած համաձայնությունը կատարելուն զուգընթաց Դաշնակցությունը պետք է ուրիշ խնդիր ևս լուծեր՝ ՀՅԴ Թավրիզի կ. կոմիտեի ղեկավարությամբ Թեհրանի, Ռեշտի, Գիլանի, Սալմաստի և այլ վայրերի նրա կոմիտեներն ու ենթակոմիտեները պարսիկ ըմբոստների հետ պետք է համերաշխ արձագանք տային Թավրիզի կռվին:

Թավրիզում Քեռին Ռոստոմի հետ գործում էր սերտ համերաշխությամբ: Նրանք լրացնում էին մեկը մյուսին. նրանց գլխավոր հոգսը քաղաքի և հատկապես հայկական թաղերի պաշտպանության և միապետականների դեմ պայքարում Թավրիզահայության վստահության ամրապնդումն էր:

Ռոստոմն ու Քեռին մեծ աշխատանք էին տանում սահմանադրական անջումենի և քաղաքային կառավարչության ենթակայության տակ գտնվող թուրք և պարսիկ զինյալների մարտական ոգին և ռազմական պատրաստության աստիճանը բարձրացնելու համար: Դա շատ կարևոր գործ էր, քանի որ արդեն 10.000 հրացանավոր ունեցող սահմանադրական զորքը դեռ շատ հեռու էր մարտական կարևոր ուժ ներկայացնելուց: Նա անկարգապահ էր և ավելի շատ՝ զինված ամբոխի տպավորություն էր թողնում: Ճիշտ է, այդ զորքի դեմ կանգնած հակասահմանադրական ուժերի մի խոշոր մասը նույնպես անկարգապահ էր, քանի որ հիմնականում աշիրեթային, խաժամուժային տիպի էր, բայց գոնե մի մեծ առավելություն ուներ՝ լավ զինված էր և միշտ զբաղված լինելով գյուղեր կողոպտելով, որպես կանոն, ձիավոր ու արագաշարժ էր:

Այդ ամենը հաշվի առնելով, Քեռին առաջարկել էր Թավրիզում դիրքապահությունը դնել ազգային հողի վրա, որը կբարձրացներ մարտիկների պատասխանատվությունն իրենց հանձնարարված թաղերի պաշտպանության գործում: Նրա կազմած ռազմական ծրագրի համաձայն՝ որոշ դիրքեր հանձնվեցին հա-

յերի և փոքրաթիվ պարսիկների համատեղ պաշտպանությանը, իսկ թաղամասերի մեծ մասում դիրքավորվել էին տեղացի և եկ-վոր թուրքերը: Օրինակ՝ Մարաղայի, Լալայի-Սարդարի ուղղու-թյամբ մուտքերն ու բլուրները պահում էին հայերը, իսկ Թեհրա-նի ճանապարհը, Շամգազանը, Արքը, Աջի-չայի կողմերը և այլ քաղաքամասեր ու արվարձաններ՝ թուրք ազատականները: Հայերը հաճախ էին օգնության հասնում դիրքապահ թուրք զո-րամասերին, իսկ վերջիններս՝ հայ դիրքապահներին[1]:

Շատ չանցած՝ Քեռու ջոկատը մտավ մարտերի մեջ: Հայտնվե-լով պատնեշների վրա, հայ մարտիկները հենց առաջին օրից ցույց էին տալիս բարձր կարգապահություն ու անձնազոհու-թյուն և իրենց օրինակով վարակում, ոգևորում էին թուրք և պարսիկ հեղափոխականներին:

Դաշնակցական մարտիկները Թավրիզ եկան, երբ կառա-վարական զորքերն ու նրանց աջակցող հրոսակախմբերը սեպ-տեմբերյան մարտերում պարտություն էին կրել և հեղափոխա-կանները պաշտպանությունից անցել էին հարձակման: Հոկտեմ-բերի առաջին կեսին ջոկատը Թավրիզի շրջակայքում գրավեց մի քանի կարևոր դիրքեր, հետո գրոհով վերցրեց Աջի-չայի կամուր-ջը, որի վրա և շրջակայքում ամրացած էր միապետականների ուղեկալը: Այդ ամրության անկումը նշանակում էր, որ ճեղքված է քաղաքի շրջափակումը:

Իսկ բուն հեղափոխական Թավրիզն ապրում էր արտա-կարգ եռուզեռի օրեր: Ջնայած հակահեղափոխական զորքերով շրջապատված լինելուն, տեղի էին ունենում բազմամարդ հան-րահավաքներ, ուր պարսիկ, հայ և վրացի հեղափոխականներն արտասանում էին կրակոտ ու ոգևորիչ ճառեր[2]: Սաթթար խանը մնում էր անդրդվելի՝ պատրաստ նոր կռիվների: Նրա զորքը հա-մալրվել էր գավառներից եկած մի քանի հարյուր կամավորնե-րով, իսկ մի քանի փիդայիներ օգնության էին եկել Կովկասից: Զինյալ ապստամբները Սաթթարի և Ռոստոմի գլխավորու-

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 12 (66), հոկտեմբեր, 1930, էջ 159:

[2] Տե՛ս **Անդրէ Ամուրեան**, Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում 1890-1918, էջ 58:

թյամբ ամրացել էին այն թաղում, որի դեմ երկյուղում էին հարձակվել միապետական ուժերը: Հակառակ իր բարեկամների թախանձագին խնդրանքներին, որոնք Սաթթար խանին համոզում էին զենքը ցած դնել կամ հեռանալ քաղաքից, նա երդվել էր կռվել մինչև վերջին շունչը: Նրան հուսադրողը և համարձակության մղողը Ռոստոմն էր: Ստեղծվել էր մի իրադրություն, երբ քաղաքի պաշտպանության փաստացի ղեկավարը ըստ էության դարձել էր Ռոստոմը, թեև առաջնության պատիվը նախկինի պես թողնված էր Սաթթար և Բաղր խաներին: Բնությունից տաղանդով օժտված Սաթթարը, բոլորովին անգրագետ լինելով, առանց համալսարանական կրթություն առած Ռոստոմի հետ խորհրդակցելու և նրա հրահանգներն առնելու, որևէ որոշում չէր տալիս: Սաթթար խանը, գրում էր հեղափոխական շարժման եռանդուն մասնակից Հովսեփ Հովհաննիսյանը (Էլմար), «կատարեալ վստահութիւն ունէր Ռոստոմի վրայ, որին երկնքից իրեն մօտ ուղարկուած կարող եւ խելացի մարդ էր համարում: Մեծ հաւատ ունէր Քեռու եւ իր հետ յարաբերութիւն պահող հայ ներկայացուցիչների վրայ եւ առանձին արժէք էր տալիս նրանց կարծիքներին»[1]:

Ռոստոմը չէր բավարարվում միայն խորհուրդներ ու ցուցումներ տալով, այլև անմիջականորեն մասնակցում էր կռիվներին: Նա օրհասական պայքարի թեժ կետերում էր և իր օրինակով ոգեշնչում էր մարտիկներին: Ականատեսը գրել է. «Նրան կարելի էր տեսնել ամէն տեղ, ուր կարիք կար – մէկ՝ իր հսկողութեան տակ փոքրիկ «թնդանօթներ», ձեռնառումբեր, հրձիգներ չինող արհեստանոցում, մէկ՝ առաջաւոր դիրքերում, մէկ՝ փողոցները խուժած թշնամու հետ ճակատող մարտիկների մէջ՝ «Մաուզերը» ձեռքին, մէկ՝ հիւանդանոցի մէջ վիրաւորները մխիթարելիս...»[2]: Այդ օրերին հատկապես կատաղի դիմադրություն էր ցույց տալիս Դավաչի թաղը: Այնտեղից չարունակվում էին ռմբակոծվել Թավրիզի հեղափոխական թաղերը և այնտեղ

---

[1] Տե՛ս **Անդրէ Ամուրեան**, Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում 1890-1918, էջ 152:

[2] **«Ռոստոմ»**, Պէյրութ, 1979, էջ 253:

հաստատված դիրքերը: Այդ թաղի դեմ հիմնականում նետվել էին հայ մարտիկները: Հակառակորդի կամքը կոտրելու համար կարևոր դեր էին կատարում Ռոստոմի պատրաստած հրթիռները, ձեռնառումբերն ու ականները: Նրան աջակցում էին ռմբային գործում մեծ հմտություն ունեցող Թեքիրդաղցի (Բուլղարացի) Գևորգը և Լիլավայի Հայկազյան-Թամարյան դպրոցի տեսուչ Կարապետ Պիոնյանը: Օրեր անց նրանց միացան Մնջոն և Արշակ Սյունեցին[1]: Հրթիռներն անձամբ արձակում էր Ռոստոմը, ձեռնառումբերը նետում էին հայ մարտիկները, իսկ ականները տեղադրում էին Ռոստոմը, Մարտիրոս Զարուխչյանը և Ջումշուդը: Ռումբերն ու ականները և հատկապես հրթիռները մեծ զոհեր էին խլում հակառակորդից, ուժգին խուճապ առաջացնում նրա շարքերում[2]: Դաժան կռիվների ժամանակ անձնազոհ հերոսության փայլուն օրինակներ էին տալիս Կովկասից եկած կամավորները*:

1908 թ. հոկտեմբերի 12-ին Թավրիզցիների հեղափոխական ջոկատները գրավեցին հետադիմականների պատվարը՝ քաղաքի Դավաչի թաղը, որով և ավարտվեց Թավրիզյան ապստամբության առաջին շրջանը:

Թավրիզի հայկական մարտական խմբերը շատ նեղվում էին զենքի, զինամթերքի և դրամի պակասից: Բանն այն է, որ Սաթթար խանի հետ ունեցած պայմանավորվածության համաձայն,

---

[1] **«Պատմագրություն Հայ յեղափոխական դաշնակցության (Քառահատոր շարք նվիրված ՀՅԴ 100-ամյակին)»**, հատ. Բ, առանց տեղի և թվականի նշումի, էջ 235-236:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 272:

* Այդ օրերին Թավրիզի պաշտպանների թվում էր կովկասցի 96 կամավոր՝ 50 դաշնակցական, 14 հայ սոցիալ-դեմոկրատ, 20 վրացի, 4 ռուս և 8 մահմեդական սոցիալ-դեմոկրատ (տե՛ս **Г. В. Шитов,** Персия под властью последних Каджаров, изд. Академии наук СССР, Ленинград, 1933, с. 118-119): Սոցիալ-դեմոկրատների թվում հաշվվում էին նաև հնչակյանները: Ինչպես վրաց սոցիալ-դեմոկրատների, այնպես էլ հայերի մարտական խմբերը կազմված էին կուսակցական սկզբունքով: Որևէ հնչակյան չէր մտնում դաշնակցական խմբի մեջ և հակառակը: Լինելով տարբեր աշխարհայացքների տեր, կովկասցիներն ավելի լավ էին հասկանում թավրիզցիներին, քան թավրիզի դաշնակցականներն ու հնչակյանները՝ միմյանց:

նրա տրամադրության տակ գտնվող պահեստներից հայ կռվողները պետք է ստանային այդ բոլորը, բայց բավարար չափով չէին ստանում: Ուստի ՀՅԴ կովկասյան մարմինները հնարավորինս անում էին վիճակը չտկելու համար: Դրան էր նպատակաուղղված նաև այն դրամահավաքը, որ դաշնակցականները կազմակերպեցին Ամերիկայի, Բուլղարիայի, Եգիպտոսի և այլ հայկական գաղութներում:

Ավելին, մարտիկների թվի մեծացմանը զուգընթաց առաջ եկավ սեփական միջոցներով նրանց զինելու խնդիրը: Ուստի ՀՅԴ Արևելյան բյուրոն որոշում ընդունեց Պարսկաստան հասցնել Շուշիում պահվող այն հրացանները, որոնց թե՛ տեսակն էր լավ և թե՛ վիճակը: Այդ ժամանակ Շուշիում Դաշնակցությանը պատկանող պահեստներում կենտրոնացված կային հարյուրավոր հրացաններ և մեկ միլիոնի չափ փամփուշտ[1]: Լավ տեսակի հրացանները (հիմնականում «Մոսին») առանձնացվեցին և ուղարկվեցին Ատրպատականում կռվող դաշնակցական մարտիկներին*: Շուշիի այն հրացանները, որոնք հին տեսակի էին (օրինակ՝ «բերդան»), որոշվեց իրենց փամփուշտներով վաճառել Արցախից դուրս՝ հատկապես սահմանակից Մակուի, ինչպես նաև Խոյի և Սալմաստի թուրքալեզու գյուղացիներին, որոնք պատրաստ էին միանալու հակաշահական ուժերին:

Հրացանները նշված վայրերը տեղափոխելու և դրանք վա-

---

[1] Տե՛ս **Անդրէ Ամուրեան,** Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում 1890-1918, էջ 65:

* Այդ ժամանակ Սյունիք-Արցախից դեպի Պարսկաստան կային փոխադրական երկու գծեր: Դրանցից մեկը (գլխավորը) սկիզբ առնելով Շուշիից, գնում էր Գորիս-Սիսիան, ապա Սալվարդ սարի վրայով անցնում Հյուսիսային Նախիջևանի Գեոմուր և Խալխալ հայկական գյուղեր, այնտեղից իջնում Աստապատ - Կարմիր վանք - Արաքսի ափ և գետի վրայով հասնում էր ս. Ստեփանոս Նախավկայի վանք: Փոխադրական մյուս գիծը Սիսիանի Բռնակոթ գյուղից մեկնելով գնում էր Նախիջևանի Ղազանչի հայաբնակ գյուղը, ապա հանդերով ուղիղ դուրս էր գալիս ռուսական Ջուլֆայի մոտ գտնվող լեռան հետը: Այդտեղից չալակավորները, երբեմն ժայռերից թոկերով կախվելով, բեռներով իջնում էին Արաքսի ափ, ապա ռուս սահմանապահներից աննկատ անցնելով գետը, զենք-զինամթերքը հասցնում էին պարսկական Ջուլֆա (տե՛ս Ա. Ամուրյանի նշված աշխատության 65-րդ էջը):

ճառելու գործի կազմակերպումը հանձնարարվեց նշանավոր դաշնակցական գործիչ, արցախցի Կոստի (Կոստյա) Համբարձումյանին, որը նախապես եղել էր Խոյի ու Սալմաստի շրջաններում և համաձայնություններ ձեռք բերել: Նա երկու անգամ իր մարտիկներով մեկնում է Խոյ ու Մակու և վերադառնում կրկին փոխադրելու հրացանները: Այդ գործում նոր մարդկանց ներգրավելու համար Կոստին ուղևորվում է Թիֆլիս, որտեղ ձերբակալվում է նախազգուշացված ժանդարմների կողմից[1]:

ՄՈՒԺԱՄԲԱՐԻ ԿՌԻՎԸ

Բայց հարաբերական խաղաղ դադարը կարճ տևեց՝ մոտ կես ամիս: Կառավարական զորքերը և միապետական անկանոն հրոսակախմբերը փակեցին Թավրիզ տանող բոլոր ճանապարհները, հատկապես քաղաքը Անդրկովկասի հետ կապող ուղին: Դա հետապնդում էր երկու նպատակ՝ սովի մատնել Թավրիզը և թույլ չտալ դրսից նոր հեղափոխականների մուտքն այնտեղ:

Ջախջախիչ պարտություն կրելով Թավրիզում ու դրա մատույցներում, միապետական ուժերն սկսեցին հաչվեհարդար տեսնել այն տարրերի նկատմամբ, որոնք համակրում էին ապստամբ քաղաքի պաշտպաններին: Ինչպես և սպասելի էր, հակահեղափոխականների նշանառության թիրախներից մեկն աստիճանաբար դառնում էր հայությունը: Դրա ցայտուն վկայություններից մեկը միապետականների հարձակումն էր Մուժամբար հայկական գյուղի վրա:

Մուժամբարը գտնվում էր Թավրիզից հյուսիս, 40 վերստ հեռավորության վրա[2]: Ամենաչեն ժամանակ գյուղն ունեցել է ավելի քան 300 տուն (շուրջ 2000 չունչ)[3], որ 1910-ական թվա-

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 9-10 (438), սեպտեմբեր-հոկտեմբեր, 1962, էջ 51-52:

[2] Տե՛ս նույն տեղում, № 10 (321), հոկտեմբեր, 1952, էջ 84, **Բաբգէն եւ Սեդա Բալեան Տէր-Յակոբեան**, Պատմութիւն իրանահայերի, Գլենդել, 1985, էջ 81:

[3] Տե՛ս **Նորայր Մամեան**, «Մուժամբար», «Դիւան Ատրպատականի հայոց պատմութեան», հատ. Ա, կազմող՝ Վարդան եպս. Տէմիրճեան, Բ տպագր., Պէյրութ, 1980, էջ 172:

կաններին, 1908 թ. կովից ու կողոպուտից հետո, մեծապես նվազեց[1]:

Դա դեպի Ղարադաղ ճանապարհին ընկած միակ հայաբնակ գյուղն էր և գտնվում էր հին Վասպուրականի արևելյան սահմանին, Մշկունյաց լեռներում, Մուժամբար-չայ ձորում: Նրա հարևանությամբ կային 13 թուրքական գյուղեր[2]: Մուժամբարը գեղեցկադիր մի գյուղ էր՝ չորս կողմը սառնորակ ջրերով: Թավրիզի ամառային տոթից խուսափելով, ամեն տարի բազմաթիվ հայ ընտանիքներ երկու-երեք ամսով հանգստանալու էին գալիս այնտեղ[3]: Գյուղի հողերը պատկանում էին գռեհիկ վարք ունեցող մի ռուսահպատակի՝ Ադել խանին: Գյուղացիները կտրիճ էին ու դիմացկուն: Ինքնապաշտպանության վարժ լինելով, նրանք կարողացել էին կառչած մնալ իրենց ժայռերին և դիմագրավել թուրքական բազմաթիվ հարձակումների:

Գյուղն անցյալում մեծ ծառայություններ էր մատուցել հայ հեղափոխության գործին՝ մարդիկ ու զենք պահելով և տեղափոխելով Սալմաստ, Խոյ, Ջուլֆա ու այլ վայրեր: Իսկ պարսկական հեղափոխական շարժումներն սկսելուց ի վեր մուժամբարցիք տվեցին բազմաթիվ կովողներ*:

Դեռևս 1908 թ. հունիսին քոչվոր մի էյալեթի (ցեղ) զինված մարդիկ մտել էին Մուժամբար և քշել-տարել 25 կով: Գյուղատեր Ադել խանը միջոցներ էր ձեռնարկել տավարը հետ բերելու համար, բայց արդյունքի չէր հասել[4]:

---

[1] Տե՛ս Քեչիչզադեի (Արչակ Տեր-Հակոբյան) «Մուժամբար» գրությունը **«Աղաղան»** ամսագրում (Թաւրիզ), № 2, 1912:

[2] Տե՛ս **«Գործ»**, № 48, 6 նոյեմբերի 1908 թ.:

[3] Տե՛ս **Նազար Յ. Գորոյեանց,** Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968, էջ 149:

* Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ մուժամբարցի չատ երիտասարդներ մտան հայկական կամավորական խմբերի մեջ: Ռազմիկ լինելուց բացի՝ Մուժամբարի հայերը հայտնի էին նաև իրենց կրթասիրությամբ: Գյուղից սերվել էին բավական թվով մտավորականներ, հատկապես ուսուցիչներ: Մուժամբարի ծնունդ էր 1920 թ. օգոստոսի 4-ին Կիլիկիայի հայկական անկախ պետության ստեղծման նախաձեռնողներից Տիգրան Մնացականյանը, որը նշանակվել էր ընդամենը մեկ օր կյանք ունեցած ժամանակավոր կառավարության արտաքին գործերի վարիչ:

[4] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 65:

Հետևյալ 3-4 ամիսները Մուժամբարի համար համեմատաբար խաղաղ էին: Բայց հոկտեմբերի կեսերին միապետական Սամսամ (Սամի) խանի ու նրա եղբայր Զարղամ խանի զինյալ մարդիկ հարձակում են գործում գյուղախմբի վրա, կողոպտում գյուղացիների ունեցվածքը: Վերջիններս փախչում են Թավրիզ՝ իրենց հետ տանելով ունեցած անասունների մի մասը: Առաջինը կողոպտվում ու ավերվում են պարսկաբնակ Լուր և Սար գյուղերը[1]:

Մուժամբարցիք Թավրիզի հայոց առաջնորդարան տեղեկացնում են, որ Սամսամ խանը սպառնում է քարուքանդ անել իրենց գյուղը: Առաջնորդարանը նամակով դիմում է խանին՝ խնդրելով չմոտենալ Մուժամբարին և առիթ չտալ անախորժությունների, մանավանդ որ գյուղի հայ բնակչությունը հայտարարել է, թե ինքը հեռու է մնալու երկրի ներքին կռիվներից և չի ուզում խախտել իր այդ որոշումը: Թեև պարսից կառավարությունը ողջունել էր մուժամբարցիների չեզոքության հայտարարությունը և նույնիսկ հատուկ հրամանագիր էր արձակել գյուղի ապահովությունը միապետական ուժերի կողմից երաշխավորելու մասին, բայց բնակավայրի անվտանգության խնդիրը չարունակում էր մտահոգիչ մնալ, մանավանդ որ Սամսամ խանը 500 ձիավորներով արդեն բանակել էր գյուղի մերձակայքում և մտադիր էր չուտով հարձակում գործել ու կողոպտել Մուժամբարը:

Հոկտեմբերի 14-ին Մուժամբարի հասարակությունը նամակ է ուղարկում Թավրիզ՝ Ատրպատականի թեմական առաջնորդ Կարապետ ծ. վարդապետ Տեր-Մկրտչյանին և հայտնում Սամսամ խանի մտադրության մասին: Թեմական խորհուրդը խնդրանքով դիմում է Ատրպատականի նահանգապետ և նահանգի միապետական զորքի հրամանատար Էյն Դովլեին, որն այդ ժամանակ գտնվում էր Վասպինջ գյուղում:

Ի պատասխան այդ գրության, Էյն Դովլեն ուղարկում է երկու նամակ, մեկը՝ հայոց Թեմական խորհրդին, մյուսը՝ Սամսամ խանին:

Թեմական խորհրդին Էյն Դովլեն գրում էր, որ իր և իր կա-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 240, 30 հոկտեմբերի 1908 թ.:*

ռավարչության ցանկությունն է հայության կատարյալ ապահովությունը, ուստի դրա համար ամեն հարկ եղած միջոցի կդիմի:

Սամսամ խանին ուղարկած նամակում էյն Դովլեն նրան խստորեն պատվիրում է չհարձակվել հայկական գյուղերի վրա և ընդհանրապես հայերին որևէ վնաս չհասցնել[1]:

Բայց ո՛չ Սամսամ խանը և ո՛չ էլ նրա եղբայր Զարղամ խանը ուշադրություն չդարձրին Ատրպատականի կառավարչի հորդորներին: Մուժամբարը պաշտպանելու հայերին տված հավաստիացումներին որևէ որոշակի քայլ չհետևեց:

1908 թ. հոկտեմբերի 27-ի վաղ առավոտյան Զարղամ և Արշաղ ավազակապետ եղբայրների առաջնորդությամբ Ղարադաղի մերձակա լեռնաստաններից իջած շուրջ 1500 ձիավորներ, բռնելով Մուժամբարի շրջակա բլուրները, պաշարման մեջ են առնում գյուղը՝ նրան մատնելով ծանր կացության: Ուժգին հրացանաձգությունից հետո հրոսակախմբերը հարձակման են անցնում գյուղի վրա[2]:*

Գյուղի կռվող ուժերը միայն 20 հոգի էին, որոնք դիրքեր էին բռնել նրա զանազան կողմերում: Նրանք ունեին ընդամենը 8 հրացան՝ 130 փամփուշտով[3]:

Այս պայմաններում միակ փրկությունը կարող էր լինել դրսից՝ հայ մարտիկներից: Իմանալով, որ Մուժամբարը վտանգված է, հենց նոր Թավրիզ հասած Քեռին շտապ այնտեղ է ուղարկում իր խմբից 10 հոգու՝ կաղզվանցի խմբապետ Հրաչի (Պապաչա) ղեկավարությամբ, որոնք տեղ են հասնում հաջորդ օրը: Խմբի մեջ էին Մարտիրոս Զարուխչյանը, գանձակեցի Նիկոլը, Արտեմը (Ռազմիկ), գանձակեցի Միխոն, արտամետցի Կարոն, Դուդայը, Դալին, ագուլիսցի Լևոնը և ալեքսանդրապոլցի Սիմոնը[4]:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 248, 8 նոյեմբերի 1908 թ.:

[*] Մի ուրիշ աղբյուրում՝ 3000 զինյալներ (տե՛ս **«Հայրենիք»**, № 10 (321), հոկտեմբեր, 1952, էջ 84):

[2] Տե՛ս **«Գործ»**, № 48, 6 նոյեմբերի 1908 թ., **«Հայրենիք»**, № 1 (312), հունվար, 1952, էջ 46:

[3] Տե՛ս **Անդրէ Ամուրեան**, Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում 1890-1918, էջ 61:

[4] Տե՛ս **«Գործ»**, № 48, 6 նոյեմբերի 1908 թ.:

Դիրքավորվելով գյուղից դուրս գտնվող բնական ամրություններում, մարտիկների այս խումբը մտնում է կռվի մեջ և հետ մղում հակառակորդի առաջին կատաղի գրոհը՝ նրան զգալի կորուստներ պատճառելով: Բայց ձիավորները կրկնապատիկ ուժերով նորից գրոհի են անցնում հայերի փոքրաթիվ խմբի վրա: Թեժ կռիվը շարունակվում է մինչև ցերեկվա ժամը 4-ը: Փամփուշտները վերջանալու վրա էին, և մարտիկներն առջևի դիրքերից ստիպված քաշվում են դեպի գյուղ, բայց նրանցից վեցին է դա հաջողվում, իսկ չորս հոգի շրջապատվում են բազմատասնյակ ձիավորների կողմից:

Գյուղ մտած վեց մարտիկներն այստեղ նույնպես դիրքեր են գրավում և պատրաստվում վճռական մարտի: Մինչև երեկոյան ժամը 8-ը շարունակվում է տաք կռիվը, բայց փամփուշտ քիչ ունենալու պատճառով նրանք սկսում են նահանջել և կանանց ու երեխաների հետ մտնում են եկեղեցի՝ պատրաստվելով օրհասական կռվի[1]: Կատաղած ձիավորները, որոնց միացել էին նրանց օգնության եկած պարսիկ կազակներ, հարձակում են գործում Մուժամբարի եկեղեցու վրա և սկսում ջարդել դուռը: Ծայրահեղ հուսահատության մեջ, եկեղեցում փակված զինվորները դուրս են ցատկում և սկսում կրակել թուրքերի վրա: Հայերը նետում են նաև մի ձեռնառումբ, որը սարսափի է մատնում թշնամուն: Այդ հարձակումից թուրքերը հետ են փախչում՝ թողնելով 12 սպանված[2]:

Հեռանալով եկեղեցու մոտից և իրենց հետ տանելով դիակները, թուրքերը մտնում են թափուր մնացած տները և սկսում կողոպուտը, քշում գյուղի բոլոր անասունները, այրում դեղերը[3]:

Մինչ գյուղում շարունակվում էր կողոպուտը, միապետական բազմաթիվ ձիավորներով պաշարված չորս հայ մարտիկները շարունակում էին մաքառել «Մոսին»ներով: Սպառելով վերջին փամփուշտները, նրանք դեռ երկար ժամանակ պաշտպան-

---

[1] Տե՛ս **«Մշակ»,** № 248, 8 նոյեմբերի 1908 թ.:
[2] Տե՛ս **«Գործ»,** № 48, 6 նոյեմբերի 1908 թ.:
[3] Տե՛ս **«Մշակ»,** № 245, 5 նոյեմբերի 1908 թ.:

վում էին «Մաուզեր» ատրճանակներով, որից հետո, քաշելով դաշույնները, մխրճվում են պաշարողների շարքերի մեջ: Առաջինը հակառակորդի վրա նետված հայ երիտասարդի դաշույնի հարվածներից ընկնում են երկու հոգի: Մարտիկների այդ հուսահատական, միաժամանակ հերոսական քայլն այնքան անսպասելի է լինում, որ նրանց չրջապատողները տեղի են տալիս և փախչում[1]: Հաջողությամբ անցնելով հակառակորդի հսկողության տակ գտնվող տարածքներով, հայ մարտիկները ուղղություն են վերցնում դեպի Թավրիզ՝ լուր տալու կռվի մասին[2]: Մինչ այդ, մի քանի դասիղներ զանազան ճանապարհներով արդեն լուրը հասցրել էին քաղաք:*

Տեղեկանալով Մուժամբարի կռվի մասին, Թավրիզի հայոց ղեկավարությունն անմիջապես 28 զինյալ հայերից կազմած մի խումբ է ուղարկում դեպքի վայրը: Հոկտեմբերի 30-ին մտնելով Մուժամբար, խումբը գյուղն առնում է պաշտպանության տակ: Իր հերթին, ի պաշտպանություն Մուժամբարի, Սաթթար խանն ուղարկում է 30 ձիավոր զինյալներ՝ Մամեդ-ղուլի խանի և Ղահրամանի ղեկավարությամբ[3]:

Հայոց թեմական խորհուրդը թուրք խաների վայրագ ու դիվային արարքի դեմ բողոքում է քաղաքի բոլոր 5 հյուպատոսներին: Գյուղատեր ռուսահպատակ Ադել խանը իր հերթին դիմում է Թավրիզում ռուսաց հյուպատոսին, որը նույնպես անմիջապես իր փոխանորդին և գրագրին ուղարկում է էյն Դովլեի մոտ:

Հայոց թեմական առաջնորդ Կարապետ վարդապետի հանձնարարականով, Թեմական խորհրդի երկու անդամներ՝ Ավագ խան Ավագյանը և Նիկոլայ Տեր-Հովհաննիսյանը մեկնում են Վասպինջ, էյն Դովլեի մոտ, նրան աջակցության խնդրագիր

---

[1] *Տե՛ս* ***«Գործ»,*** *№ 48, 6 նոյեմբերի 1908 թ.:*

[2] *Մուժամբար գյուղի կռվի մասին մանրամասն տե՛ս ծնունդով մուժամբարցի Նորայր Մամյանի «Մուժամբար» գրությունը* ***«Դիւան Ատրպատականի հայոց պատմութեան»*** *մատենաշարի Ա. հատորում, Բ տպագր., էջ 187-190:*

* *Հետիոտն սուրհանդակ:*

[3] *Տե՛ս* ***«Մշակ»,*** *№ 248, 8 նոյեմբերի 1908 թ.:*

ներկայացնելով: Տեսակցության վերջում Ատրպատականի նահանգապետն ասել էր. «Մեմուր (պաշտոնյա:- Հ. Ս.) ուղարկելուց եւ խիստ հրամաններ գրելուց յետոյ էլ ի՞նչ կարող էի անել: Եթէ դուք մի բան գիտէք, կարող էք մի միջոց առաջարկել, ես պատրաստ եմ այն կատարելու, բայց երկիրը յեղափոխութեան եւ անարխիայի մէջ է, այլ միջոցներ չունեմ»[1]:

Բայց Մուժամբարն հերոսական ինքնապաշտպանությամբ արդեն ինքն իրեն փրկել էր վերահաս աղետից, վերականգնվել էր հաղորդակցությունը գյուղի և Թավրիզի միջև:

Մուժամբարի կռվում հայերն ունեցել էին ցավալի կորուստներ: Զոհվել էին Կովկասից եկած հերոս մարտիկներ՝ Դաշնակցության նշանավոր գործիչ Մարտիրոս Զարուխչյանը, անվեհեր հայդուկներ Կարոն, գանձակեցի Նիկոլը, Արտեմը, Բուլղարացի Գևորգը և ուրիշներ[2]:

Գյուղի հայերը տվել էին 17 զոհ, այդ թվում՝ երեք կին և երեք երեխա[3]: Տղամարդիկ կռվել էին հերոսաբար: Արտակարգ արիություն էր ցուցաբերել մուժամբարցի ծերունի Համբարձում Մամյանը. երկու տեղից վիրավոր՝ նա չարունակել էր կռվել ու ոգևորել մյուսներին, մինչև որ երրորդ գնդակն ընդունելով զոհվել էր[4]:

Գյուղի կրած նյութական վնասը կազմել էր չուրջ 40.000 թուման[5]:

Եթե չրջակա մուսուլմանաբնակ 12 գյուղերի մեծ մասը չկռվելու պատճառով իսպառ կողոպտվել ու հրդեհի էր մատնվել, ապա Մուժամբարը նրանց համեմատ քիչ էր տուժել՝ դիմադրության չնորհիվ:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 245, 5 նոյեմբերի 1908 թ., № 249, 9 նոյեմբերի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Հայրենիք»**, № 12 (66), հոկտեմբեր, 1930, էջ 155:

[3] Տե՛ս **«Գործ»**, № 48, 6 նոյեմբերի 1908 թ.: Մի այլ աղբյուրի համաձայն՝ 12 զոհ (տե՛ս **«Ախուրեան»**, № 79, 9 նոյեմբերի 1908 թ.):

[4] Տե՛ս **Անդրէ Ամուրեան**, Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում 1890-1918, էջ 81:

[5] Տե՛ս **«Գործ»**, № 48, 6 նոյեմբերի 1908 թ.:

Սաթթար խանի ստացած տեղեկության համաձայն՝ գյուղի վրա հարձակված միապետականներից սպանվել էր չուրջ 160, իսկ հայերի հավաքած տեղեկության համաձայն՝ մոտ 100 հոգի, որոնց թվում Սամսամ խանի եղբայրը[1]: «Մշակի» տվյալներով՝ թուրք հարձակողների կորուստները կազմել էին 50-60, իսկ հայ զինյալներինը՝ 7-8 մարդ[2]:

Մուժամբարի գյուցազնությունը մեծ տպավորություն էր թողել Թավրիզում: Քաղաքում երկար ժամանակ խոր պատկառանքով էին պատմում անհավասար ու հերոսական կռվի մասին:

Մուժամբարի դեպքերի կապակցությամբ Թավրիզի հեղափոխական առաջնորդները, թեև ուշացումով, կազմակերպեցին բողոքի հանրահավաք՝ գյուղում միապետականների կատարած չարագործությունը դատապարտելու համար: Այդ նպատակով՝ նոյեմբերի 20-ին պարսկերեն և հայերեն լեզուներով քաղաքում տարածվեց մի հայտարարություն, որով բոլոր Թավրիզցիները հաջորդ օրը հրավիրվում էին հանրահավաքի՝ քննելու համար քաղաքական հարցեր, հատկապես հայերի սպանության հարցը:

Նոյեմբերի 21-ի հանրահավաքին հավաքվել էր չուրջ 300 հայ ու մահմեդական: Եկել էին նաև Սաթթար և Բաղր խաները: Ելույթ ունեցող մահմեդականները վկայակոչում էին Մուժամբարի դեպքը և դատապարտում միապետականներին: Նրանք նաև չեչտում էին չահին գահընկեց անելու համար վրացական և հայկական կազմակերպությունների օգնության անհրաժեչտությունը: Վերջում ընթերցվեց Թեհրան ուղարկվելիք հեռագրի չարադրանքը, որով կառավարությունից պահանջվում էր հրաժարվել անմեղ հայերին ջարդի ենթարկելու մտադրությունից:

Բայց հանրահավաքում եղած հակաչահական ելույթների մասին տեղեկացված կառավարությունը չարձագանքեց: Դրա փոխարեն, հայերն արժանիորեն գնահատեցին հեղափոխականների արտահայտած մտահոգություններն իրենց նկատմամբ[3]:

---

[1] Տե՛ս **«Գործ»**, № 48, 6 նոյեմբերի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 248, 8 նոյեմբերի 1908 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 249, 9 նոյեմբերի 1908 թ.:

1908 թ. նոյեմբերի սկզբներից երկու կողմերը պատրաստվում էին նոր, վճռական բախման:

Շահը մտածում էր զորահավաքի ենթարկել իրեն հավատարիմ բոլոր զինվորական ուժերը և վճռական հարձակման անցնել Թավրիզի վրա: Նրա հույսն այն էր, որ Էյն Դովլեի զորքին միանար գնդապետ Լյախովի կազակների բրիգադը: Միացյալ այդ զորախմբին պետք է օգնության գային Ատրպատականի միապետական ուժերը: Էյն Դովլեի զորքին Վասպինջում միավորվելու համար պարսից կազակային բրիգադի մի մասը՝ 400 հոգի, նոյեմբերի սկզբին ուղևորվեց Թեհրանից: Մեկնելուց առաջ գնդապետ Լյախովը կազակներին դիմեց մի հրաման-կոչով, ուր չեշտում էր, որ եթե ապստամբները հաղթանակ տանեն, նրանք առաջին հերթին վրեժ են լուծելու հենց շահի ամենահավատարիմ համարվող զորամասից՝ կազակային բրիգադից, ուստի պետք է կռվել մինչև արյան վերջին կաթիլը: «Իմացէ՛ք,- նշել էր նա,- որ դուք, որպէս յաղթողներ, կպարգեւատրուէք չքանչաններով, դրամական նուէրներով՝ ինչպէս ռուսաց, այնպես էլ պարսիկ միապետների ողորմածութեամբ: Իսկ որքա՜ն հարստութիւն է իր մէջ ամփոփում Թաւրիզը ... Այդ բոլորը ձեզ կտրուի: Յիշեցէ՛ք այդ մասին եւ կռուեցէ՛ք առիւծի պէս: Կա՛մ դուք, կա՛մ սահմանադրութիւնը»[1]:

Դրանից հետո կազակները երաժշտական նվագածությամբ և դրոշներով գնացել էին Բաղեշահ՝ Մամեդ Ալի շահի նստավայրը: Տեսնելով նրանց շարքերը, շահը նվերներ էր բաժանել, ապա վերջում ասել. «Դուք եք իմ վերջին հույսը»:

Արդեն նոյեմբերի 2-ին Վասպինջում կենտրոնացել էր կազակային բրիգադի 400 անդամ՝ ռուս հինգ հրամանատարների (երկու գնդապետ և 3 սպա) գլխավորությամբ: Այստեղ կազակներին միացել էին չուրջ 2000 միապետական կամավորներ՝ հիմնականում ձիավոր[2]:

---

[1] ***«Մշակ»,*** *№ 246, 6 նոյեմբերի 1908 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

Առաջիկա կռիվներին տենդագին նախապատրաստվում էր նաև Թավրիզը:

Տարբեր ազգերի և տարբեր քաղաքական ուղղությունների ներկայացուցիչների այդպիսի միասնություն Թավրիզը չէր տեսել: Միասին էին Սաթթարի ֆիդայիները և դաշնակցականները, հնչակյաններն ու սոցիալ-դեմոկրատ բոլշևիկները և մենշևիկները:

Ի դեպ, հենց այդ օրերին էր, որ Թավրիզում Սեյիդ Հասան Թաղիզադեի ղեկավարությամբ գործող սոցիալ-դեմոկրատական խումբը, որը կովկասյան Թուրք սոցիալ-դեմոկրատական կուսակցության մասնաճյուղն էր, ձևավորվեց որպես ինքնուրույն քաղաքական կազմակերպություն՝ «Պարսկաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն» անվանումով: Նրա կազմավորման գործում կարևոր դեր են ունեցել հնչակյան կուսակցության Թիֆլիսի և Թավրիզի կազմակերպությունները: Նորակազմ կուսակցության ծրագրում տառացիորեն ընկած էին հնչակյան ծրագրի սոցիալիստական սկզբունքները: Նրա առաջին կենտրոնական վարչության հինգ անդամներից երեքը հնչակյաններ էին՝ Սեդրակ Բանվորյանը, Ֆլորա Վարդանյանը և Ռաֆայել Մովսիսյանը: Հարաբերության մեջ մտնելով Թիֆլիսի հնչակյան կազմակերպության ղեկավարության հետ, նորակազմ կենտրոնը ձեռք բերեց բավականաչափ զինամթերք, ինչպես նաև հավաքագրեց կամավորներ, որոնք Բաքվի վրայով ուղարկվեցին Էնզելի[1], որտեղից նրանց մեծ մասն անցավ Թավրիզ:

1908 թ. նոյեմբերի 17-ին ստորագրվում է ինը կետից կազմված համաձայնագիր գաղափարակից երկու կուսակցությունների միջև: Փաստաթղթի արձանագրական մասում ասված էր. «Մենք, պարսիկ մուճահիտներս, Էջթիմայունը Ամիյուն կուսակցութիւնս, Հնչակեան Կուսակցութեան հետ ներկայ դաշնագրով պայմանաւորուեցանք եւ ուխտեցինք, որ այս թուականէն սկսեալ միացեալ ուժերով աշխատինք եւ հարկ եղած զոհողութիւնները կատարենք Պարսկաստանի սահմանադրութեան

---

[1] *Տե՛ս «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1962», հատ. Ա, էջ 399:*

հաստատումին համար, եւ այդ ուղղութեամբ առնելիք մեր բոլոր քայլերը պիտի ըլլան Հնչակեան Կուսակցութեան համաձայնութեամբ եւ անոր հետ միասին»[1]:

Փաստաթղթի կետերում ձեւակերպված պարտականությունների անթերի կատարումը դիտվում էր որպես առաջնահերթ խնդիր երկու քաղաքական կազմակերպությունների համար:

Համաձայնագրի հիման վրա Հնչակի Թավրիզի մասնաճյուղը նորակազմ կուսակցությանն է հանձնում բավականաչափ զենք, որով զինվելով, նրա անդամները մտնում են քաղաքի պաշտպանության ղեկավար մարմնի տրամադրության տակ:

Ինչպես տեսնում ենք, Պարսկաստանի նորաստեղծ դեմոկրատական կուսակցությունը առայժմ մի կողմ էր դրել սոցիալիստական պահանջները և սկսել էր գործել երկրի՝ այդ ժամանակաշրջանի պահանջներին համահունչ՝ դեմոկրատական ազատություններ հաստատելու նշանաբանով: Այդ ժամանակ, Թավրիզի երկարատև պաշարման հետևանքով, կազմակերպությունը չկարողացավ արմատներ գցել երկրի ուրիշ քաղաքներում: Բայց հետագա մեկ-երկու տարիներին նա հետզհետե ծավալվեց և փաստորեն դարձավ Պարսկաստանի՝ դասական իմաստով սոցիալ-դեմոկրատական ուղղության միակ կազմակերպված հեղափոխական քաղաքական կազմակերպությունը[2]:

Թեև նախորդ ամիսների պաշտպանական կռիվները Թավրիզում հաղթական էին եղել, բայց քաղաքի տնտեսությունը ծայրահեղորեն քայքայվել էր և դրությունը գնալով օրեցօր ծանրանում էր: Առևտուրն ու արհեստագործությունը կանգ էին առել ողջ Ատրպատականի տարածքի վրա, երթևեկությունը դադարել էր գավառների միջև, նաև գավառների ու Թավրիզի միջև: Քաղաքի քառորդ միլիոնից ավելի բնակչությունը կանգնել էր սովի վտանգի առաջ:

Պաշարման առաջին երկու-երեք ամիսներին Թավրիզի

---

[1] *Տե՛ս* ***«Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1962»,*** *հատ. Ա., էջ 399:*

[2] *Տե՛ս* ***«Հայրենիք»,*** *№ 10 (326), հոկտեմբեր, 1952, էջ 79:*

բնակչությունը դեռ հաց ուներ, բայց գնալով վիճակը ծանրացավ: Դեռ սեպտեմբերը չէր կիսվել, բայց կենսամթերքը, ամենից առաջ հացը, սպառվելու վրա էր: «Հաց չկա» չարագուշակ միտքը սկսում էր հալածել ժողովրդին: Նույնիսկ հայկական թաղերի հայ չունևորները սպառնական հայտարարություններ էին անում, որ եթե մեկ-երկու օր էլ առանց հացի մնան, հարձակվելու են հայ հարուստների տների վրա և բռնագրավելու են նրանց ունեցած հացը: Հայ ունևորները չտապ հավաքվում են խորհրդակցության, որի որոշման համաձայն հավաքում և թեմական առաջնորդին են հանձնում ցորեն, ալյուր և փող՝ չունևորներին բաժանելու համար: Բայց դա փրկություն չէր, որովհետև հավաքած հացը բավականացրեց ընդամենը մեկ շաբաթ: Հացավաճառների խանութների առաջ անհույս կուտակված սովահար ամբոխը պատրաստ էր ամեն տեսակի անակնկալ մատուցել:

Թավրիզի ժողովրդի հետ նյութական ու այլ կարգի տառապանքներ էին կրում նույնիսկ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը և նրա գործակիցները: Հետագայում վերհիշելով այդ ծանր օրերը, թեմական առաջնորդ Կարապետ Տեր-Մկրտչյանը գրել է. «... Մի քանի ամիս ռոճիկ չէի ստացել, առաջնորդարանի գանձարանում պարտքից զատ կոպէկ չկար, ո՛չ իսկ մի վառարան վառելու փայտ, թեմական խորհուրդը հրաժարած էր, թեմական ժողովը՝ ժամանակն անցրած և գործից պաղած. ստիպուեցայ մի խումբ քաղաքացիների հրաւիրել, դրութիւնը ներկայացնել եւ հանգանակութիւն կատարել տալ, որպէսզի մի կերպ գլուխ հանէինք, մինչեւ քիչ-քիչ կարգի կընկնէր»[1]:

Դրության անորոշությունը, անգործությունը, թանկությունը, սկսված տարափոխիկ հիվանդությունները քիչ թե շատ միջոցներ ունեցողներին ստիպում էին հեռանալ քաղաքից. քրիստոնյաները հիմնականում անցնում էին Ռուսաստան, պարսիկները՝ Պարսկաստանի խաղաղ համարվող գյուղերն ու քաղաքները, իսկ շահի կառավարությունը, որ այժմ բաղկացած էր բացառապես տգետ ու վայրագ մարդկանցից, և ինքը շահը՝ իր

---

[1] **«Հովիտ»** (Թիֆլիս), № 5, 23 հունվարի 1911 թ.:

անհաշտ դիրքով, ավելի ու ավելի էին գրգռում և հուզում ժողովրդին, ավելի ու ավելի հուսահատեցնում նրան:

Չնայած դրան, Թավրիզի սահմանադրական ապստամբները լի էին կռվելու և հաղթելու վճռականությամբ: Նրանք ռազմական օգնություն էին ստանում տարբեր տեղերից, հատկապես՝ Թուրքիայից և Գերմանիայից: Օրինակ՝ նոյեմբերի 6-ին Տրապիզոնի վրայով Թավրիզում ստացվել էր 10.000 գերմանական «Մաուզեր»՝ երկու միլիոն փամփուշտով: Իթթիհադականները Սաթթարի կռվող ուժերին խոստացել էին Կ. Պոլսից շատ շուտով ուղարկել համալրում իրենց բանակից, նաև օգնել ռազմամթերքով և դրամով[1]:

Նոյեմբերի 3-ին Թավրիզում հանդիսավոր պայմաններում Սաթթար խանին հանձնվեց երիտթուրքերի ուղարկած համակրական նամակը և այն չքանչանը, որ սուլթան Աբդուլ Համիդը նրան էր նվիրել քաջության համար[2]:

Նոյեմբերի 10-ի կողմերը Թուրքիայից Սաթթար խանին օգնության եկավ 25 հոգուց բաղկացած թուրք զինվորների մի խումբ՝ Խալիլ բեյի* հրամանատարությամբ: Խումբը նախ ժամանեց Սալմաստ, բայց այստեղ հանդիպեց սառը վերաբերմունքի ոչ միայն միապետականների, այլև հեղափոխականների կողմից և ստիպված փոխադրվեց Խոյ: Բայց այստեղ նույնպես նա արժանացավ, առանց խտրության, տեղի բնակիչների սառը վերաբերմունքին, և որոշ ժամանակ անց, վշտացած ու վիրավորված, վերադարձավ Սալմաստ՝ Թուրքիա անցնելու համար[3]:

Կռիվները վերսկսելուց առաջ հակառակորդի ուժերը դասավորված էին հետևյալ կերպ. միապետական զորքերը էյն

---

[1] **«Մշակ»,** № 246, 6 նոյեմբերի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Հայրենիք»,** № 12 (66), հոկտեմբեր, 1930, էջ 159:

* Սա այն Խալիլ բեյն էր, որ Առաջին համաշխարհային պատերազմի օրերին 10.000 զորքով արշավեց Սալմաստի ուղղությամբ գործող ռուսական զորքերի վրա, բայց ջարդ կրեց գեներալ Թովմաս Նազարբեկյանի զորքի հակահարձակումներից: Նույն Խալիլն էր, որ 1920 թ. Հայաստանի Հանրապետության դեմ դավադիր աշխատանք էր տանում Մակուի և Նախիջևանի շրջաններում:

[3] Տե՛ս **«Հայրենիք»,** № 6 (412), հունիս, 1960, էջ 74:

Դովլեի հրամանատարությամբ բաժանված էին երեք մասի: Մի մասը նրա գլխավորությամբ բանակ էր դրել Նահանգի արևելյան մասում, երկրորդը՝ Նասեր Սալթանեի (նույն ինքը՝ Սիփահ-դարը, իսկական անունը՝ Ֆաթհոլլահ խան Ռեչտի) հրամանատարությամբ՝ հարավային շրջանում, երրորդը՝ Մաջդ Դովլեի հրամանատարությամբ՝ Ատրպատականի արևելյան մասում:

Նույն կարգով էր դիրք բռնել նաև Սաթթար խանը՝ իր մարտական խմբավորումներով: Նա ինքն անձամբ գլխավորում էր Նահանգի արևելյան մասի մարտական ուժերը, Հաջի Մահմեդը և ուսանող Շեյխ Սալիմը ղեկավարում էին հյուսիսային մասում տեղաբաշխված զորքերը, իսկ Բաղր խանը գործում էր Ատրպատականի հարավային մասում: Թավրիզյան բոլոր երեք խմբավորումներում էլ կային Կովկասից եկած հայ և վրացի կամավորական խմբեր:

Պաշարումն այնպես սաստկացավ, որ քաղաքն ամբողջովին կտրվեց աշխարհից. ճանապարհները փակվեցին, կանգնեցին ներմուծումն ու արտածումը, իրենց աշխատանքները դադարեցրին փոստը և հեռագրատունը, գլուխ բարձրացրեց սովը:

Թավրիզից հյուսիս և հյուսիս-արևելք ընկած տարածքներում սկսեցին լայնածավալ ավերածություններ գործել Ռահիմ խանի ավազակախմբերը, որոնք կողոպտում էին բնակչությանը, կատարում սպանություններ: Փետրվարի սկզբին նրանք գրավեցին Ջուլֆա-Թավրիզ ճանապարհը, որի պատճառով մեծապես նվազեցին Կովկասից եկող կամավորական խմբերի հնարավորությունները: Բնակչության նկատմամբ դաժան հաշվեհարդար էին տեսնում նաև կառավարական զորքերը[1]:

Չնայած միապետականների բոլոր ջանքերին, այս անգամ էլ նրանց չհաջողվեց ներխուժել քաղաք: Թավրիզի պաշտպանները կենաց ու մահու կռիվ էին մղում: Գերազանց էր գործում ապստամբների հրետանին՝ ցաքուցրիվ անելով հակառակորդի շարքերը՝ նրան պատճառելով մեծ կորուստներ: Դասալքությունը միապետականների մոտ զանգվածային կերպարանք էր

---

[1] ***Տե՛ս Михаил Сергеевич Иванов**, Очерки истории Ирана, Госполитиздат, Москва, 1952, с. 232.*

առել: Թեհրանից ուղարկած պարսկական կազակների զորամասն ամբողջովին անցավ հեղափոխականների կողմը: Քաղցած սարբազների խմբերը հետևում էին նրան: Էյն Դովլեն այլևս ի վիճակի չէր զորքերում ծայր առած խլրտումների առաջն առնել, որոնք, նրա կամքին հակառակ, բռնել էին դեպի Թեհրան նահանջի ճանապարհը: Հեղափոխականների զինված խմբերը, Թավրիզից դուրս գալով, մինչև Վասպինջ կրնկակոխ հետևում էին նրանց[1]:

Այդ օրերին շահը մայրաքաղաքում բրիտանական դեսպանին հայտնեց, որ ինքը պատրաստ է վերականգնել սահմանադրությունը, պայմանով, որ արտասահմանյան դեսպանները երաշխավորեն իր ընտանիքի անվտանգությունն ու գույքի անձեռնմխելիությունը: Դեսպանները, սակայն, հրաժարվեցին երաշխավորել և խոստումներ տալ[2]:

Ամրապնդելով իրենց դիրքերը Թավրիզում, ապստամբներն սկսեցին ջանքեր գործադրել ոտքի կանգնեցնելու համար ամբողջ Ատրպատականը: Արդեն 1908 թ. նոյեմբերի կեսերին հակամիապետական շարժումն ընդգրկել էր Ատրպատականի մեկ երրորդը: Սաթթար խանը թնդանոթներով զորախմբեր էր ուղարկում Թալիշ, Արդաբիլ և Խալխալ՝ օգնելու շահի դեմ կռվի ելած տեղի հեղափոխականներին: Միաժամանակ, տարբեր տեղերից Թավրիզին օգնության էին գալիս նորանոր ուժեր, քաղաքն ավելի էր ամրացվում պատնեշներով: Սաթթար խանն արդեն այնքան էր վստահ, որ նրա առանձին զորամասեր գիշերային հարձակումներ էին կատարում քաղաքից դուրս, հասնում նույնիսկ շատ հեռու, ուսումնասիրում թշնամու զորքերի դասավորությունը, և եթե հարկ էր լինում, ընդհարվում էին նրանց հետ: Նրանք կտրել էին դեպի Էյն Դովլեի նստավայր Վասպինջ տանող հաղորդակցության բոլոր ուղիները, որի պատճառով հակառակորդն այլևս որևէ տեղից օգնություն չէր ստանում:

Իր խմբով արշավանքի է դուրս գալիս նաև Քեռին, քանզի հայությունը վտանգված էր ոչ միայն Թավրիզում: Նա հենց սկզբից հանձնարարություն ուներ անհրաժեշտության դեպքում

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 250, 11 նոյեմբերի 1908 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում, № 247, 7 նոյեմբերի 1908 թ.:*

գործողություններ ձեռնարկել քաղաքից դուրս՝ պաշտպանելով հայաբնակ գյուղերը, որոնք պարբերաբար ենթարկվում էին դարաղաղցի ձիավոր հրոսակների հարձակումներին: Սրանք կողոպտում էին խաղաղ բնակավայրերը, ժողովրդին մատնում սարսափի և, որպես կանոն, մնում անպատիժ: Մեկնելով Թավրիզից, Քեռին իր խմբով եղավ չրջակա հայկական բոլոր բնակավայրերում: Նա բնակիչներին հորդորում էր զգաստ լինել, տղամարդկանց պատվիրում էր զինվել ու փակել ավարառուների ճանապարհը, իսկ եթե սեփական ուժերը չներեն, ժամանակին տեղեկացնել իրեն՝ օգնության հասնելու համար:

ԵՐԿՈՒ ՔԱՐԻ ԱՐԱՆՔՈՒՄ

Հայկական հասարակության ոչ բոլոր քաղաքական ուժերն ու հոսանքներն էին համաձայն հայերի մասնակցությանը պարսկական հեղափոխությանը: Այդպիսիք գտնում էին, որ իր ցածր դիրքի և ֆիզիկական անկարողության պատճառով պարսկահայությունը գտնվում է այնպիսի վիճակում, որը նրան թույլ չի տալիս հանդես գալու իբրև հեղինակավոր ուժ ունեցող առանձին համայնք, իբրև իր ուրույն ծրագիրն իրականացնող մի անկախ ամբողջություն:

Սակավաթիվ պարսկահայերի դրությունը հույժ վտանգված էր, քանի որ միապետականները ցանկանում էին, որ նրանք իրենց կողմում լինեն, իսկ հեղափոխականները պահանջում էին, որ աջակցեն իրենց գործողություններին: Կացությունն անելանելի էր: Եթե հայերը միանային հեղափոխականներին, իրենց դեմ կգրգռեին արքայականներին ու կառավարությանը, իսկ եթե միանային վերջիններին, իրենց դեմ կհանեին հեղափոխականներին:

Դրությունն սպառնալից էր հատկապես Թավրիզի և ողջ Ատրպատականի հայության համար: Հայերը չէին ուզում Պարսկաստանի հողի վրա նույնպես զոհեր ու կորուստներ տալ, որոնք նրանց համար այնքան աղետալի եղան Թուրքիայում և Անդրկովկասում:

1908 թ. նոյեմբերի 7-ին Թավրիզի հայերին լուր հասավ, թե շահը կարգադրել է մոտ օրերս սկսել Ղարադաղի և այլ տեղերի հայկական գյուղերի ջարդը՝ Սաթթար խանին աջակցելու պատճառով: Կառավարությունը մեղադրում էր, թե Թավրիզում հայերը ապստամբության ղեկավարներին աջակցում են զանգվածաբար, բայց Ատրպատականի հայոց առաջնորդարանը պարզաբանում էր, որ ճշգրիտ հաշվարկներով՝ Սաթթար խանին պաշտպանում է ընդամենը 26 հայ:

«Հայերին պատժելու» շահի մտադրության մասին տագնապալի լուրը լսելուց հետո նոյեմբերի 9-ին և 10-ին Թավրիզում, մեծահարուստ Խոսրով Հարությունյանի տանը տեղի ունեցան խորհրդակցություններ՝ ստեղծված ճգնաժամային վիճակից ելք գտնելու համար:

Հանդես գալով հաղորդումով, Ատրպատականի թեմական առաջնորդ Կարապետ ծ. վարդապետ Տեր-Մկրտչյանը մանրամասն կանգ առավ Մուժամբարի և Ղարադաղի դեպքերի վրա, ապա անդրադարձավ Թավրիզի հայերի վիճակին: Գալով Թեհրանի կառավարության մեղադրանքին, թե Թավրիզի հայերն աջակցում են հեղափոխականներին և նույնիսկ նրանց տրամադրում են իրենց տները, խնամում ու կերակրում վիրավորներին և այլն, նա նշում էր, որ հայերն ստիպված են իրենց մոտ պահել քաղաքի հարյուրավոր տառապյալների՝ անկախ նրանց քաղաքական հայացքներից ու ազգային պատկանելությունից: Այդ բանը չեն կարող չանել, քանզի հայերն իրենց վերջին պատառ հացը կիսում են սովահար մարդկանց հետ:

Ելույթներ ունեցան նաև խորհրդակցության ուրիշ մասնակիցներ, որոնք մտահոգություն էին հայտնում հայկական ազգային-հեղափոխական երկու կուսակցությունների բռնած դիրքի հետևանքների մասին, գտնելով, որ նրանց քաղաքականությունը պատճառ կդառնա պայքարող կողմերից մեկի վրեժխնդրության, հայկական գյուղերի ավերման, բազմաթիվ հայ կյանքերի կործանման, պարսիկ հասարակության մի մասի մոտ հայերի հանդեպ ունեցած ավանդական համակրանքը ատելությամբ փոխարինելու:

Խորհրդակցությունում որոշվեց թեմական առաջնորդի ա-

նունով դիմել Թեհրան՝ Մահմեդ Ալի շահին և խնդրել անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայերի վրա կախված վտանգը հեռացնելու համար[1]:

Այդ խորհրդակցությունից հետո Թավրիզի հայ հոգևորականությունը քաղաքի հայ երևելիներին, հատկապես մեծահարուստներին կոչ արեց քննության առնել շահին և ցար Նիկոլայ II-ին խնդրագիր ուղարկելու նպատակահարմարության հարցը, և նրանց խնդրել պաշտպանության տակ առնել պարսկահայությանը, որը «ոչ մի մասնակցություն չունի հեղափոխությանը»: Քաղաքի անջումենը, որը կատարում էր նաև ժամանակավոր կառավարության դերը, հակված էր հայոց թեմի առաջնորդին երաշխավորել այդ հարցով բանակցության մեջ մտնելու Թեհրանի կառավարության հետ: Դրան համաձայնություն էին տվել նաև Սաթթար և Բաղր խաները, որոնք, սակայն, քաղաքում գտնվող սոցիալ-դեմոկրատական (վրաց-մենշևիկյան) զինված ջոկատի ճնշման տակ հետ վերցրին իրենց տված համաձայնությունը և բանակցությունը տեղի չունեցավ[2]:

Հայերին սպառնացող վտանգի առթիվ Համբարձում Առաքելյանը «Մշակում» գրում էր, որ իհարկե, ավելի լավ կլիներ, եթե հայ հեղափոխականները կչոռաատեին, թե պարսիկ հեղափոխականներին օգնելը որքա՞ն նպատակահարմար է և կամ ինչպիսի՞ հետևանքներ կարող է ունենալ իրենց քայլը Պարսկաստանում ցիրուցան մի բուռ հայերի համար, եթե հեղափոխականները պարտություն կրեին: Բայց համենայն դեպս, 26 հեղափոխականների հախուռն գործողությունների համար չի կարող պատասխանատու ճանաչվել մի ամբողջ ժողովուրդ, և պարսիկ կառավարությունը ոչ մի բարոյական ու իրավագիտական հիմք և իրավունք չունի իր վրեժը լուծելու անմեղ, խաղաղ ժողովրդից ու հրամայել բնաջինջ անել տասնյակ գյուղեր: Այդ միևնույնը կլիներ, եթե Սաթթար խանի պատճառով շահը հրամայեր կոտորել Թավրիզի ամբողջ բնակչությանը... «Եթէ մի

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 251, 12 նոյեմբերի 1908 թ., **«Աւետաբեր»** (Կ. Պոլիս), № 35, 29 օգոստոսի 1908 թ.:

[2] Տե՛ս **В. Труа**, Кавказские социал-демократы в Персидской революции, Париж, 1910, с. 112.

քանի յեղափոխականներ, ըստ իրենց կոչման, օգնել են Սաթ-թար խանին, դրա համար պատասխանատու պէտք է ճանաչել միայն նրանց»: Այնուհետև հոդվածագիրը նշում էր, որ «իրենց սակաւութեան պատճառով ոչ մի ոյժ չներկայացնող» հայերը պետք է չչեղվեն որդեգրած չեզոքության քաղաքականությունից, եթե չեն ուզում նոր կոտորածների ենթարկվել այս անգամ մի երկրում, որը նրանց ավանդաբար հովանավորել է[1]:

Անդրադառնալով խնդրին, «Պարսկահայերը ճգնաժամի մէջ են» հոդվածում «Հովիւ» պարբերականը գրում էր, որ վերջին տարիներս հայերի համար մի սովորություն է դարձել, երբ որևէ տեղ մի աչքի ընկնող խլրտում է առաջ գալիս, լինի դա մի ազատագրական շարժում թե մի թյուրիմացություն, հայերը իրենց պարտքն են համարում գործի մեջ նետվել, ոչ թե ավելի օգտակար լինելու համար այդպիսի շարժման, այլ ավելի իրենց վրա խոսեցնել տալու ***ինապարծությամբ****... «Չի պատահել դեռ, որ հայերը մասնակցէին մի խլրտման եւ հետեւանքը առանց* ***ջարդի*** *անցնէր: Եւ կրկին երբ առիթ է ներկայանում, որ հայերը իմանան զգոյշ վարուել եւ իրանց հեռու պահել փորձանքից, նրանք անխուսափելիօրէն միչտ կրկնում են ճակատագրական սխալը: Չնայած որ մենք միչտ միեւնոյն ցեխի մէջ ենք ընկնում, մենք կրկին գնում ենք այն ճանապարհով, որտեղ ցեխի մէջ ընկնելը անխուսափելի է: Իսկ այդ բոլորի արդիւնքը լինում է ամենայաջող դէպքում՝* ***սուտ պարծանքը****»[2]:*

Թերթը բնական էր համարում, որ այդպիսի գործելակերպի պատճառով թուրքահայերի և ռուսահայերի քաչած տարաբախտ օրերից հետո հերթը հասել էր պարսկահայերին: Նախախնամությունը հիմա փորձանքի բաժակը նրանց էր մեկնել անորոշ հեռանկարով: Բազմաթիվ միամիտ ձեռքեր արդեն իսկ երկարած էին դեպի այդ բաժակը, բայց կային նաև այն դեն հրող ձեռքեր, փորձանքի բաժակի դառնության համը իմացողներ, որոնք նախագուչակում էին գալիքը, բայց անզոր էին խուսափել սպասվող նոր արհավիրքից:

---

[1] ***«Մշակ»,*** *№ 249, 9 նոյեմբերի 1908 թ.:*

[1] ***«Հովիւ»,*** *№ 44, 23 նոյեմբերի 1909 թ., էջ 693:*

«Պարսկահայերը կարօտ են ամբողջ ազգի բարոյական օգնութեան: Ուշացնել չի կարելի, պէտք է շուտով վտանգի առաջն առնել:

Վտանգը անխուսափելի է դառնում»[1], զգուշացնում էր «Հովիվը»:

Ապա Թերթը դաշնակցականներին և հնչակյաններին սթափության էր կոչում, նշելով, որ «Թուրքահայերի քաչած օրերից յետոյ միանգամայն անմտութիւն է նոր փորձեր անել Պարսկաստանում եւ պարսկահայերին մատնել ջարդերի: Թուրքիայում դեռ մենք պատճառ ունէինք ասելու, թէ մեր ազատագրութեան համար ենք աշխատում, իսկ Պարսկաստանում այդ առիթն էլ չունենք»: «Հովիւ»-ը հետաքրքիր հայացք նետելով հիշեցնում էր. «Քանի՞-քանի անգամ Թիւրքիայի Թէհրանի դեսպան[ն]երը եւ Թաւրիզի հիւպատոսները փորձեր են արել պարսից կառավարութիւնը թշնամացնել պարսկահայերի հետ, որոնց հետեւանքը հայերի համար սոսկալի կարող էր լինել, բայց միշտ պարսից շահերը եւ նրանց կառավարութիւնը պաշտպանել են պարսկահայերին եւ պարսից սահմաններում գտնուող օտարահպատակ հայերին»: Թերթը հայկական ազգային երկու կուսակցություններին կոչ էր անում մտաբերել, թե որքա՜ն դյուրություններ է ընծայել շահի կառավարությունը Թուրքիային սահմանակից Պարսկաստանի այն հայ հեղափոխականներին, որոնք Կովկասից այդ երկրի վրայով զենք ու զինամթերք էին տեղափոխում Թուրքահայաստան, երթևեկություններ էին կատարում Թուրք-պարսկական սահմանից այս ու այն կողմ, իսկ Թեհրանի կառավարությունը աչք էր փակում այդ ամենի առջև:

«Հովիւը» դիմում էր հայերին՝ ապերախտ չգտնվել, չմասնակցել Պարսկաստանի ներքին խլրտումներին և ***չեզոք*** *դիրք բռնել[2]:*

Տարիներ անց պարսկական հեղափոխական շարժմանը դաշնակցականների և հնչակյանների մասնակցության դրդա-

---

[1] ***«Հովիւ»,*** *№ 44, 23 նոյեմբերի 1909 թ., էջ 693-695:*

[2] *Նույն տեղում, էջ 699:*

պատճառների վերլուծության հիման վրա, ռամկավարների առաջնորդներից Արմենակ Եկարյանը ցավով նշել է. «Ես չեմ կրցած ըմբռնել, թե ո՞րն է Դաշնակցութեան ուղղութիւնը: Եթէ ազգայնական էր ան, ուրեմն եւ իր ջանքերը բացառապէս պէտք էր նուիրած ըլլար մեր ազգային դատին: Իսկ եթէ ընկերվարական ըմբռնումներով ինքզինքին իրաւունք կու տար ամէն ազգի գործերուն միջամուխ ըլլալու, որքա՜ն օգտակար պիտի հանդիսանար եթէ հեռու մնար մեր ճակատագրին հետ խաղալէն»[1]: Նա գրում էր, որ իր համար այնպես էլ մութ է մնացել, թե դաշնակցականներն ինչո՞ւ պետք է կռիվ հայտարարեին մի երկրի իշխանությանը, որը «միշտ բարեացակամ եղած էր մեզի հանդէպ եւ ազնուօրէն հիւրասիրած եւ պատսպարած ռուսական եւ թրքական բռնակալութիւններէն հալածական մեր հարիւրաւոր փախստականները: Միակ երկիրը, որ բնաւ չյանձնեց իրեն եկողները, հակառակ, մանաւանդ, թուրք պետութեան ստիպողական պահանջներուն:

Ու բնական է թէ այս ամէնը, վերջ ի վերջոյ, անբարեացակամութիւն պիտի ծնեցնէին հանդէպ մեզ՝ հայերուս, որ մինչ այդ նկատուած էինք իբր օգտաշատ տարր մը եւ մասնաւոր առանձնաշնորհումներով պաշտպանուած կառավարութենէն:

Դաշնակցութիւնը այսքան երկար եւ մանրամասն հաշիւներու մէջ չէր ուզեր մտնել»[2]:

Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությանը մասնակցած Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ ծ. վարդապետը էջմիածնից անցնելով Թիֆլիս, այնտեղ գտնվող պարսկահայերի անունից 1908 թ. նոյեմբերի 8-ին հետևյալ հեռագիրն ուղարկեց Թեհրան, Մահմեդ Ալի շահին.

«Նորին Կայսերական Մեծութիւն Իրանի Շահնշահին.

Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան առիթով անցնելով Թիֆլիսից, ես գտայ այստեղի հայերին խորապէս յուզուած այն աղէտից, որին ենթակայ է եղել Մուժամբարը եւ այն

---

[1] ***«Ցուչեր Արմենակ Եկարեանի»**, Գահիրէ, 1947, էջ 136:*

[2] *Նույն տեղում, էջ 137:*

վտանգներից, որոնք, ըստ հեռագրերի, սպառնում են Ղարադաղի հայերին: Բարեբաղդ կը լինեմ, եթէ Պարսկաստան մտնելուցս առաջ կարողանամ աւետել Ձեր Մեծութեան կողմից, որ իմ դաւանակիցները, որոնք միշտ եղել են լոյեալ եւ անձնուէր հպատակներ Պարսկաստանի, կարող են միշտ յոյս ունենալ Ձեր Մեծութեան հայրական պաշտպանութեան վրայ:

Առաջնորդ հայոց Ատրպատականի՝ Կարապետ վարդապետ»[1]:

Իրենց հերթին, Թիֆլիսաբնակ դարադաղցի հայերը նոյեմբերի 11-ին շահին ուղարկեցին հետևյալ հեռագիրը.

«Նորին Կայսերական Մեծութիւն Պարսկաստանի Շահին, Թեհրան.

Յուզուած այն լուրերից, որոնք յայտնում են, թէ մեր դաւանակիցներին Ղարադաղում հարստահարութեան ծանր վտանգներ են սպառնում, մենք աղերսում ենք Ձերդ Մեծութեանը բարեհաճել տարածել Ձեր Բարձր պաշտպանութիւնը այդ հայ ժողովրդի վրայ, որ միշտ ցոյց է տուել իր անձնուիրութիւնը Պարսկաստանի փառաւոր գահին իր խաղաղասիրական աշխատութեամբ»[2]:

Բայց դժվար էր ակնկալել շահի գործուն միջամտությունը, քանզի նա լավ տեղեկացված էր հայության զգալի մասի քաղաքական տրամադրությունների փոփոխությանը: Այդ դեպքում ո՞րն էր ելքը ստեղծված իրավիճակից:

Ի հակադրություն հնչակյանների ու դաշնակցականների, պահպանողական և ազատական հայացքների տեր բոլոր պարսկահայերը գտնում էին, որ ստեղծված վիճակում միակ բանական ու խելամիտ ելքը ***չեզոքության խստիվ պահպանումն է,*** *երկու կողմերի հանդեպ օրինապահ ու բարեկիրթ վերաբերմունքը: Միաժամանակ չեշտվում էր, որ չեզոքություն որդեգրելու պատճառները ոչ թե փոքրոգությունն ու վախկոտությունն են և սեփական մաշկը փրկելու տենչը, այլ՝ ազգագրական-աշխարհագրական հանգամանքները, միևնույն ժամանակ երկրի բնակ-*

---

[1] ***«Մշակ»,*** *№ 252, 13 նոյեմբերի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում:*

չության քաղաքակրթվածության ցածր աստիճանը, որոնց պատճառով բնիկ քաղաքացին դեռ չգիտե տարբերել քաղաքացիական պայքարները տեղական և ազգային պայքարներից:

Զեղոքության կողմնակիցները նաև չեչտում էին, որ Պարսկաստանի միապետները, հատկապես վերջին երեք շահերը՝ Մահմեդ I-ը, Նասրէդդինը և Մոզաֆֆերէդդինը հայերի նկատմամբ միշտ ցուցաբերել են հանդուրժող վերաբերմունք: Նրանց կառավարման տարիներին մեծ թվով հայեր աչքի էին ընկել պետական, հասարակական, քաղաքական, զինվորական գործունեությամբ: Պարսկաստանի ռազմական ոլորտում զգալի ծառայություն էր մատուցել մի շարք զինվորական ու քաղաքացիական պաշտոններ վարած, ապա պարսից զորանոցների գլխավոր կառավարիչ կարգված Ջհանգիր Էնիկոլոփ Մամիկոնյանը (1825-1891), պետական բարձր պաշտոններում էր գտնվել նրա կրտսեր եղբայր Նարիման խան Մամիկոնյան-Էնիկոլոփյանը (1830-1906), Նազեմ Դովլե տիտղոսով հայտնի նորջուղայեցի Միրզա Մելքոն խանը (Գրիգորյան-Մելքումյան, 1831-1908) իր նվիրական ու եռանդուն գործունեությամբ հանդիսացել էր բարենորոգչական հոսանքի ղեկավարն ու սահմանադրական գաղափարների սերմնացանը Պարսկաստանում, Հովհաննես խան Մասեհյանը (տիտղոսը՝ Մոսայեդ Սալթանե - 1864-1932) 1884 թ. մինչև իր կյանքի վերջը գտնվել էր պետական ծառայության մեջ, եղել էր Պարսկաստանի արտաքին գործերի նախարարության թարգմանիչ, լիազոր ներկայացուցիչ, ապա հյուպատոս և դեսպան Բեռլինում ու Լոնդոնում: Վերջին երեք շահերի գեներալ-ադյուտանտը եղել էր Արշակ խան Գորոյանը, երկրի ժանդարմերիայի պետը շատ տարիներ համադանցի հայ Զոհրաբ խանն էր, պարսկական բանակի նշանավոր զորավարներից էր Մոզաֆֆերէդդին շահի ամենահավատարիմներից՝ Ծատուր խան Սեթխանյանը և ուրիշներ:*

---

* *19-րդ դարում Պարսկաստանի պետական հայազգի գործիչների՝ երկրին մատուցած ծառայությունների մասին մանրամասն տե՛ս* ***Գալուստ Շերմազանյանի*** *«Երեւելի հայկազունք ի Պարսկաստան» գիրքը, 1890:*

Աշխատության նախորդ էջերում արդեն նշել ենք, որ ընդհանրապես պարսից շահերի հովանավորության տակ Պարսկաստանի հայ գաղութը առանձին խնամք է վայելել: Պատահական չէ, որ չեզոքության կողմնակիցները շեշտում էին, որ հայերը միշտ հնարավորություն են ունեցել դրսևորելու իրենց առևտրական և այլ կարգի ունակությունները: Հայ բուրժուաները, ազատված լինելով հարկերից, չեն զգացել առանձին դժվարություններ շահական ռեժիմից, առիթ չեն ունեցել սրելու հարաբերություններն իշխանությունների հետ, և որտեղ ու երբ պետք է եղել, կաշառք են տվել: Հայերն ազատ ու անկաշկանդ դավանել են իրենց կրոնը, միշտ հնարավորություն են ունեցել ունենալու իրենց կրթամշակութային հաստատությունները, պահպանելու լեզուն, սովորույթներն ու ավանդությունները: Ավելին, պարսից շահերը շատ հաճախ հայությանը պաշտպանել են մուսուլման տարրերի մոլեռանդությունից և խուլ են մնացել Պարսկաստանում ևս հայերի կոտորած կազմակերպելու սուլթան Աբդուլ Համիդի չարամիտ թելադրություններին: Հայ պահպանողականներն ասում էին, որ հայերի նկատմամբ այդ բարի վերաբերմունքը պահպանվում է այսօր էլ: Ուստի պարսկահայությունը երախտագիտական պարտականություն ունի Պարսկաստանի շահնշահերի հանդեպ և որևէ երախտամոռ արարք չպետք է թույլ տա:

Շահի դեմ պայքարի դրոշ բարձրացրած հնչակյան կուսակցության պաշտոնական օրգան «Հնչակը» նույնիսկ, համաձայնելով չեզոքների տեսակետին, գրում էր, որ հայերը Պարսկաստանում վայելում են այնպիսի առանձնաշնորհումներ, որոնք «անծանօթ էին Ռուսաստանի մէջ իսկ»[1]:

Չեզոքության կողմնակիցները միաժամանակ շեշտում էին, որ հայերը, իհարկե, մեծապես շահագրգռված են, որ Պարսկաստանում հաստատվեն սահմանադրական կարգեր, բայց այդ կարգերը ձեռք բերելու համար նրանք պետք է գործեն բացառապես օրինական միջոցներով, լիովին բացառեն իրաղարձությունների իրենց եռանդուն, ներգործական միջամտությունն-

---

[1] **«Հնչակ»** *(Փարիզ), № 4-5, ապրիլ-մայիս, 1913, էջ 22:*

ը, որոնք կարող են նկատվել իբրև ապստամբություն: Սկսված հեղափոխական շարժմանը պետք չէ միջամտեն մանավանդ դրսի հայերը:

Վերջապես, նրանք ուշադրություն էին հրավիրում մի ուրիշ ծանրակշիռ հանգամանքի վրա ևս. եթե հեղափոխականների և կառավարության միջև կռիվն այնպիսի կերպարանք ստանա, որ առաջ բերի օտար պետությունների միջամտություն և նրանց զորքերի ներխուժում երկիր, այն ժամանակ հայերի համար անկարելի կլինի ազատվել պարսիկ ապագա սերունդների կչտամբանքից ու մեղադրանքից, որոնք նրանց կպախարակեն, թե պատճառ են դարձել մեծ աղետի, որովհետև իրոք, ամեն մի երկրի և պետության համար մեծագույն աղետ է, երբ բանը հասնում է օտար միջամտության: Հետևապես, պատմության առաջ ապագա այդ մեծ պատասխանատվությունից և նզովքից ազատ լինելու համար հայերը պարտավոր են մնալ չեզոք սպասողականության մեջ[1]:

Բայց արդյո՞ք հեշտ էր տվյալ արտակարգ իրավիճակում խոսքն ու գործը համատեղել և մնալ չեզոքության սահմաններում:

Հայերի չեզոքության խախտման առաջին օրինակն եղել էր հօգուտ միապետականների: Օգոստոսի 29-ին Թավրիզի վրա հարձակվելու նպատակով Մակուից եկած Իզո խանն իր զորքի հետ բռնությամբ բերել էր չորս հայի, որոնցից երկուսը սպանվել էին Աջու բնակավայրի մոտ ապստամբների հետ տեղի ունեցած ընդհարման ժամանակ: Այդ մասին անմիջապես հայտնել էին Սաթթար խանին: Կարելի է պատկերացնել, թե ապստամբների համար որքան անախորժ էր միապետական բանակում հայեր տեսնելը:

Եղավ նաև հակառակը. միապետականների կողմից Մուժամբարի հայերի սպանության փաստն առավելագույնս օգտագործեցին հեղափոխության ղեկավարները:

Թեհրանից եկող վտանգները կանխելու համար Նոր Ջուղայից Թեհրան եկավ Պարսկա-Հնդկաստանի հայոց թեմի ա-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 19, 28 հունվարի 1909 թ.:*

ռաջնորդ Սահակ արք. Այվատյանը և դիմումներ հղեց կառավարությանը: Նա խնդրում էր միջոցներ ձեռնարկել, որպեսզի Մակուի խանը չխախտի հայերի չեզոքությունը, որոնց հասցեին առանց այն էլ բազմաթիվ զրպարտություններ, ամբաստանություններ և հերյուրանքներ էին տարածվում սահմանի այն կողմերում՝ Թուրքիայում և Ռուսաստանում:

Բայց ամեն բան իր գինն ունի, և կառավարությունը հայ հոգևորականի պահանջի դիմաց ուզում էր ոչ թե ձևական, այլ հաստատուն երաշխիքներ: Մինչ այդ էլ հայ եկեղեցականները կառավարությանը հավաստիացնում էին, թե հակաշահական շարժման մասնակից հայերի թիվը մատների վրա կարելի է հաշվել, բայց իրականում հայ համայնքի համակրանքը օրեցօր ավելի ու ավելի արագ թեքվում էր հեղափոխականների կողմը: Ուստի միապետականները ուշի-ուշով հետևում էին հայերի քաղաքական տրամադրությունների բնաշրջմանը:

Այդ օրերի դեպքերի մասնակից դաշնակցական գործիչներից մեկը վկայում էր. «... Միապետականներն ... ամէն կերպ աշխատում էին տարհամոզել դաշնակցական ներկայացուցիչներին կամ ազգային մարմինների անդամներին, որ հայերը չմասնակցեն կռիւներին: Նրանք միջոցներ էին գործադրում բաժանելու դաշնակցական մարտիկներին պարսիկ ազատականներից, որպէսզի դիւրութեամբ ճնշեն այս վերջիններին: Դաշնակցական մարմիններն ու ներկայացուցիչները, բացի բանաւոր խորհուրդներից, ստանում էին նաեւ այդ մտքով բազմաթիւ գրութիւններ...», նրանք «խոստանում էին աւելի լայն իրաւունքներ տալ եւ կատարելապէս ապահովել հայութեան հանգիստ կեանքը, եթէ հայերը չխառնուեն խռովարարների սարքած արկածախնդրութեան»[1]:

Հնչակյանների և Դաշնակցության մարտավարության դեմ հանդես եկող հայերի համար չեզոքությունը չէր նշանակում քաշվել սեփական պատյանի մեջ և Պարսկաստանի համար այդ բախտորոշ շրջանում որևէ մասնակցություն հանդես չբերել երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Նրանց առաջար-

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 3 (314), մարտ, 1952, էջ 44-45:*

կածը ***դրական չեզոքությունն*** *էր, որը նշանակում էր՝ 1) Հայերը պետք չէ անզեն լինեն, պետք է զինվեն՝ պաշտպանելու համար իրենց բնակավայրերն ավազակաբարո քրդերի, շահսևանների, կարափափախների և մյուս կիսավայրենի թափառաշրջիկ ցեղերի, Ղարադաղի ձիավորների և ընդհանրապես թալանչիական կրքով առաջնորդվող այն ուժերի դեմ, որոնք կփորձեն ներխուժել հայկական գյուղերը: Սեփական ուժերով սեփական կյանքն ու ինչքը, մերձավորների անվտանգությունն ու պատիվը պաշտպանելը տարրական պահանջ է: Դա ինչպես մարդկային ամեն մի անհատի, այնպես էլ ամեն մի համախմբումի անկապտելի իրավունքն է, 2) Պարսկահայերը, որպես շահնշահի (արքայից արքա) հպատակներ և Պարսկաստանի քաղաքացիներ, պարտավոր են պաշտպանել իրենց երկիրը, հանդես գալ նրա տարածքային ամբողջականությանն սպառնացող արտաքին թշնամիների, տվյալ պարագայում՝ Ատրպատական ներխուժած թուրք զավթիչների դեմ, 3) Պարսկաստանի պետության, նրա օրինական կառավարության դեմ ապստամբած ուժը հիմնականում նրա թուրքալեզու բնակիչներն են՝ իրենց թուրք առաջնորդ Սաթթար խանի գլխավորությամբ: Օսմանյան երիտթուրքական կառավարությունը, բացահայտորեն պաշտպանելով շահի դեմ հանդես եկող՝ հիմնականում թուրքալեզու ապստամբներին, ի վերջո, նպատակ ունի Ատրպատականն անջատել Պարսկաստանից և միացնել Տաճկաստանին. այդ գործում տվյալ պահին հիմնական դերը տրված է Սաթթար խանին և Թավրիզի թուրքերին: Այլևս քչերն են կասկածում, որ Թեհրանի դեմ իրենց կռվում թուրք ապստամբները ռազմական և այլ կարգի օգնություն են ստանում Թուրքիայից: Նույնիսկ շահն էր հայտարարել, թե կառավարական զորքերի դեմ կռվող Սաթթար խանի զինված ջոկատները գլխավորում են գերմանացի և թուրք սպաներ, որոնք ամեն ջանք գործ են դնում Թավրիզն առ միշտ Պարսկաստանից բաժանելու և իր ուրույն սահմանադրությամբ ու կառավարությամբ մի անկախ երկիր դարձնելու՝ հետագայում Օսմանյան կայսրությանը միացնելու հեռանկարով*[1]*: Հետևապես,*

---

[1] *Տե՛ս* ***«Զանգ»*** *(Թաւրիզ), № 3, նոյեմբեր, 1908, էջ 51:*

հայերը որևէ չահ չունեն մտնելու Թուրք Սաթթար խանի գլխավորած Ատրպատականի Թրքության բարձրացրած ապստամբության դրոշի տակ՝ լի մեծագույն վտանգներով ու անկանխատեսելի հետևանքներով, 4) Մտնելով պարսկական հեղափոխության մեջ, փոքրաթիվ պարսկահայերը չեն կարող նպաստել համամարդկային գաղափարների հաղթանակին: Պարսկահայության ուժերն աննշան են, որպեսզի այդ գործում կարողանա որևէ էական դերակատարություն ունենալ: Հայ ազգի առջև կանգնած են այնքան մեծ ու տարողունակ խնդիրներ, նրա ազգային հոգսերն այնքան շատ ու ծանրաբեռ են, որ հարկ չկա նոր գլխացավանքներ հորինել ու դրանք նրա ուսերին բարդել: Հետևապես, հայության միակ ճշմարիտ պահվածքը դրական չեզոքությունն է:*

Բայց մարտահրավերն արդեն նետվել էր:

ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ

1908 թ. նոյեմբերի վերջին տասնօրյակին և ամբողջ դեկտեմբեր ամսին՝ ավելի քան մեկ ամիս Թավրիզում ու նրա շուրջը, ինչպես և երկրի մյուս նահանգներում համեմատաբար խաղաղ էր: Միապետականները չէին համարձակվում դրությունը նորից սրել Ատրպատականի նահանգում, հատկապես նրա կենտրոն Թավրիզում, իսկ հեղափոխականները մտածում էին ժամանակավոր դադարն օգտագործել մարտական չարքերը կարգի բերելու և դրսից նոր օգնություն ստանալու համար:

1909 թ. սկզբից դրությունը փոխվեց: Հունվարի առաջին տասնօրյակում միապետական զորքերը Ատրպատականի հա-

---

* *Նկատենք, որ շատ տասնամյակներ հետո, 1975 թ. Լիբանանում արաբ մահմեդականների և մարոնիթների (քրիստոնյա արաբներ) միջև ծագած և ավելի քան մեկուկես տասնամյակ տևած արյունալի քաղաքացիական պատերազմի տարիներին, լիբանանահայությունը որդեգրել էր դրական չեզոքության քաղաքականություն, որի շնորհիվ նա դաժան պատերազմից դուրս եկավ նվազագույն կորուստներով:*

բավում գրավեցին մի չարք շրջաններ, ապա մոտենալով Թավրիզին, կրկին շրջապատեցին այն: Կտրվեցին քաղաքի կապերը դրսի հետ[1]:

Օրհասական այդ պահին սահմանադրականները չէին ընկճվում և եռանդով նորանոր ամրություններ էին կառուցում: Քաղաքի անջումենը մի թռուցիկ հրատարակեց, որով բոլոր բնակիչներին կոչ էր անում դիմել զենքի՝ իրենց ընտանիքների պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու համար[2]:

Այս անգամ միապետականների հիմնական ուժը Ռահիմ խանի գլխավորած և դարադաղցի ձիավորներից կազմված հորդան էր, որը փակել էր Ջուլֆա տանող ուղիները և կտրել հաղորդակցությունը Կովկասի հետ: Իսկ դա նշանակում էր, որ դադարեցվելու էր այնտեղից հայ և վրացի կամավորների ժամանումը, իսկ սահմանն անցած խմբերը չէին կարողանալու առաջանալ: Արաքս գետն անցել և պարսից Ջուլֆա էր հասել փառակեցի Մկրտիչ Աղամալյանի (Սարհատ) գլխավորած մարտական խումբը[3], որում հաշվվում էր 125 հոգի (50 կովկասցի և ատրպատականցի թուրք, 50 հայ և 25 վրացի): Խմբի հրամանատարի տեղակալն էր Արտուշ խան Շահրիարը, առաջին ջոկի հրամանատարը՝ Ղազար Քոչարյանը (Քաչալ Ղազար), երկրորդինը՝ փառակեցի Հրայրը: Խմբի մեջ էին Մարտիրոս Աբրահամյանը (Բաչգառնեցի Մարտիրոս), Խոսրով Եղիազարյանը և այլ նշանավոր մարտիկներ: Խումբը խնդիր ուներ հասնել Խոյ ու Սալմաստ, բայց անցնում էին օրերն ու շաբաթները, իսկ նա չէր կարողանում ճամփա հարթել դեպի նշված գավառները[4]: Վերջապես, մարտիկները մաքառումով կարողացան մի կերպ ճեղքել հակառակորդի շղթան և ոտքով երկար ճանապարհ կտրելուց հետո հասնել Սալմաստ:*

---

[1] *Այդ դեպքերի մասին տե՛ս Ատրպետի «Իրանի վիճակը» վերնագրված հոդվածը* ***«Ախուրեան»*** *թերթի 1909 թ. № 11-ում (8 փետրվարի 1909 թ.):*

[2] *Տե՛ս* ***«Ախուրեան»,*** *№ 16, 1 մարտի 1909 թ.:*

[3] *Տե՛ս* ***«Հայրենիք»,*** *№ 3 (385), մարտ, 1958, էջ 29:*

[*] *Մի ուրիշ աղբյուրում՝ 50 հոգի (տե՛ս* ***Աւօ [Թումոյեան]****, «Նժդեհ», Պէյրութ, 1968, էջ 30):*

[4] *Տե՛ս* ***«Հայրենիք»,*** *№ 3 (385), մարտ, 1958, էջ 28:*

Սարհատի խմբի բարեհաջող անցումից հետո կրկին փակվեց Ջուլֆայից Թավրիզ տանող ճանապարհը:

Զափազանց կարևորվեց ճանապարհի բացումը: Եվ ահա՛ Քեռին իր խմբով Թավրիզից ձեռնամուխ եղավ այդ անհնարին թվացող ռազմական գործողությանը:

Սաթթար խանն իր չուրջ 500 կռվողներով, իսկ Քեռին իր փոքրաթիվ խմբով պատրաստվեցին համատեղ հարձակման անցնել Ռահիմ խանի զորքի վրա: Բայց երբ հասավ հարձակման պահը, Սաթթարի ուժերից մնացել էին մի քանի հոգի միայն. մնացածը, օգտվելով գիշերային խավարից, լքել էին զորամասը և փախել տները:

Թվում էր, թե այդ պայմաններում անմտություն է մտածել թշնամու վրա հարձակվելու մասին, բայց Քեռին ու Սաթթարը դիմում են խելահեղ քայլի և իրենց փոքրաթիվ ուժերը տանում են գրոհի Ռահիմ խանի դիրքերի վրա: Հանկարծակիի եկած հակառակորդը, չչմած անսպասելի ու հանդուգն խոյանքից, փախուստի է դիմում:

Հայ մարտիկները հաղթական էին, բայց խոր վշտի մեջ: Հերոսականության պահին սպանվել էին աննման երեք հայ կտրիճներ՝ Մարտիրոսը, Սեթոն և Կարոն: Վերադառնալով Թավրիզ, խումբն իր հետ տարավ նահատակված տղաների մարմինները:

Նույն ժամանակ հայկական խմբերը նորանոր զինված ընդհարումների մեջ էին քուրդ ասպատակիչների դեմ Խոյում, Ուրմիայում և Սալմաստում: Այստեղի կռիվներում նույնպես հայկական խմբերը տվեցին թանկագին զոհեր: Սոֆիանի կատաղի կռիվների ժամանակ Սև Գևորգի խումբը 1909 թ. հունվարի 17-ին տվեց 13 զոհ, Ավարայրի պատմական դաշտում տեղի ունեցած մարտում զոհվեց նշանավոր մարտիկ Զուլումաթն իր ընկերներով (Մամիկոն, Հարություն, Պետրովիչ, Բաջի օղլի Տիգրան, Աբրահամ, Արսեն, Փանոս)[1]: Խոյում սպանվեց Շամիլը: Հայ կամավորներն իրենց կյանքի գնով ժողովրդին ազատ էին պահում քրդական ասպատակություններից: Ուրմիայի շրջանում

---

[1] Տե՛ս **«Գարուն»** (Կ. Պոլիս), № 16, 4 (17) ապրիլի 1909 թ.:

գործում էր Սմբատ Բորոյանը (Մախլուտո), որը Պարսկաստան էր եկել ՀՅԴ Արևելյան բյուրոյի որոշմամբ: Սալմաստի շրջանի հայությանը պաշտպանում էր երկար ժամանակից այնտեղ հաստատված Ստեփան Թաղևոսյանը (Սամսոն), որն իր օգնական էր նշանակել Գարեգին Տեր-Հարությունյանին (Նժդեհ):

Ծավալվող իրադարձությունները գերազանցապես ունեին տարերային, անկազմակերպ բնույթ: Երկու կողմերից թույլ էին տրվում մարդկային կեցությանն անհարիր գործողություններ, որոնք երկիրը տանում էին անիշխանության: Որևէ տեղ չկար օրինավոր ազդեցիկ կառավարչություն: Օգտվելով անիշխանությունից, ամեն տեղ վխտում էին ավազակային հրոսակախմբերը, որոնք կեղեքում էին առանց այն էլ աղքատ ու խաղաղ պարսիկ ժողովրդին: Եվ, ընդհանրապես, ո՛վ ուժեղ էր՝ հրապարակ էր նետվում՝ պղտոր ջրում ձուկ որսալու[1]:

Ի պատասխան հեղափոխական ուժերի վրա միապետականների նոր հարձակումների, երկրի տարբեր մասերում նորից բորբոքվեցին հակաշահական շարժումները: Այս անգամ հեղափոխական պայքարի հնոց Թավրիզին գումարվեց մի ուրիշը՝ Գիլանը: Այդ երկու հնոցները պիտի դառնային այն խթանիչները, որոնք հրահրելու էին ապստամբական նոր բռնկումներ Պարսկաստանի տարբեր մասերում: Շուտով երկիրը բոցավառվելու էր հակամիապետական հրդեհով, որի մարումն արդեն անհնարին էր լինելու շահի և նրա կառավարության համար:

Իրավամբ կարելի է ասել, որ 1909 թ. առաջին կեսը բեկումնային եղավ պարսկական հեղափոխության համար:

1909 թ. հունվարին հակաշահական ուժգին ելույթներ եղան Մեշհեդում և Պարսկաստանի ուրիշ քաղաքներում ու մարզերում, հատկապես Բախտիարիայում:

Բախտիարիայի նշանավոր խաներ, ֆեոդալական խոշոր հողատերեր իշխան Սամսամ Սալթանեն (իսկական անունը՝ Նաջաֆ-ղուլի խան Բախտիարի) և նրա կրտսեր եղբայր Սարդար Ասաղը (իսկական անունը՝ Ալի-ղուլի խան Բախտիարի) անձնական հողի վրա գժտվել էին շահի հետ: Նրանք դժգոհ էին,

---

[1] Տե՛ս **«Արեւելք»**, № 7108, 27 մայիսի 1909 թ.:

որ Մահմեդ Ալին սահմանափակել է Բախտիարիայում կիսանկախ վիճակ ունենալու իրենց ցանկությունը: Երկրում հակաշահական շարժումը նպաստավոր հող էր ստեղծել եղբայրների դիրքերը Բախտիարիայում ավելի ամրապնդելու համար: Նրանք նաև ձգտում էին բարձր պաշտոններ ձեռք բերել կառավարությունում, բայց քաջ գիտակցում էին, որ քանի դեռ իշխանության վրա Մահմեդ Ալին է, իրենք չեն կարող հասնել իրենց նպատակների իրականացմանը:

1909 թ. հունվարի 4-ին բախտիար ցեղի 800 հոգանոց ջոկատը Սամսամ Սալթանեի հրամանատարությամբ հարձակվեց ու գրավեց Իսֆահանը: Այդ պահից քաղաքը չահից միանգամայն անկախ էր: Իսֆահանը դարձավ հեղափոխական զորամասերի հավաքատեղի, այստեղ էին կազմվում ռազմական հետագա գործողությունների ծրագրերը[1]:*

Իսֆահանը գրավելուց հետո Սամսամ Սալթանեն իր և բոլոր պարսիկ հայրենասերների անունից դիմում է Փարիզում բնակվող իր ավագ եղբորը՝ Ալի-ղուլի խանին (որն ավելի հայտնի էր Սարդար Ասադ՝ «Ադյուծ զորավար» պատվավոր տիտղոսով) և խնդրում վերադառնալ Պարսկաստան ու ստանձնել հեղափոխական բանակի հրամանատարությունը[2]: Սարդար Ասադը, թողնելով Փարիզը, չտապ վերադառնում է հայրենիք: Նա իր հետ վերցնում է մի սուր, որի վրա փորագրված էր «Մա՛հ Ղաջարներին» նշանաբանը[3]:

Բախտիարների կողմից Իսֆահանի գրավումը նոր թափ հաղորդեց ողջ Պարսկաստանի հեղափոխական շարժմանը:

1909 թ. փետրվար-ապրիլ ամիսներին շարունակվում էր հեղափոխության վերընթացը:

Երկրում չդադարող հուզումները ստիպեցին շահին՝ խաղաղության քայլեր ձեռնարկել: Մարտի 2-ին միջնորդի դեր հանձն

---

* *Պարսկաստանում գոյություն ունեին 5 խոշոր ցեղեր՝ բախտիարներ, շահսևաններ, կաշկայներ, կամդեիներ և թուրքմեններ:*

[1] **Տե՛ս *М. Павлович, С. Иранский,*** *Персия в борьбе за независимость, Москва, 1925, с. 50.*

[2] **Տե՛ս նույն տեղում:**

[3] **Տե՛ս նույն տեղում:**

առած՝ շահի հորեղբայր իշխան Նաիբ Սալթանեի (նույն ինքը՝ Ազիզ օլ Մոլքը, իսկական անունը՝ Քամրան Միրզա) նախագահությամբ, տեղի ունեցավ մի քանի նախարարների նիստ: Արտաքին գործերի նախարար Սաադ Դովլեն (Ալի խան) առաջարկեց պետության ամենաժողովրդական անձերից կազմել մի խորհուրդ՝ սահմանադրության հիմունքները վերամշակելու և երկիրը խաղաղացնելու միջոցներ ձեռնարկելու համար: Ջնայած մի քանի պալատականների ընդդիմությանը, շահը, ռուսական դեսպանության բարեկամական խորհուրդների շնորհիվ, ընդունեց առաջարկը: Բայց ռազմաքաղաքական իրադարձություններն երկրում այնքան արագ էին փոփոխվում, որ Նաիբ Սալթանեի նախաձեռնությունը հետագա զարգացում չստացավ[1]:

Մարտի 13-ին պարսկական Ջուլֆայում տեղի ունեցավ արյունալի ընդհարում միապետական մի խոշոր ավազակախմբի և հեղափոխական զինյալների միջև: Երեք ժամ տևած կատաղի կռվում մեծ կորուստներ կրելով, ավազակախումբը ստիպված եղավ ցրվել տարբեր ուղղություններով: Հեղափոխականների խմբի զինյալների թիվը հասնում էր 120-ի, որոնց մեծ մասը հայ կամավորներ էին[2]:

Ջուլֆայում միապետականների այս պարտությունն առիթ դարձավ, որ շահը հրաժարվի սահմանադրականների հետ համերաշխության եզրեր գտնելու մտքից և հայտարարեց, թե կռիվը պիտի շարունակի մինչև հաղթական ավարտը: Այդ հայտարարությունը մեծ դժգոհություն առաջացրեց կառավարության մեջ: Սահմանադրության ջերմ կողմնակից, արտաքին գործերի նախարար Սաադ Դովլեն, խորապես վրդովված շահի զրգռիչ վարմունքից, մարտի 4-ին ռուսական դեսպանությանը հայտնեց, որ ինքնակալը կրկին խաբում է ժողովրդին, ուստի ինքը, իբրև բողոք, ստիպված հրաժարական է տալիս պաշտոնից: Այդ հայտարարությունը զորեղ տպավորություն թողեց ռուսաց դեսպանության վրա, որը Մահմեդ Ալիին մշտապես հորդորում էր ընդառաջ գնալ ժողովրդի պահանջներին: Շահի այդ երկդիմու-

---

[1] *Տե՛ս* ***«Ախուրեան»,*** *№ 18, 8 մարտի 1909 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Լրաբեր»*** *(Աստրախան), № 14, 29 մարտի 1909 թ.:*

թյունն առիթ տվեց, որպեսզի ռուսաց դեսպանությունը խիստ հուշագիր ուղարկի նրա նստավայր՝ Բաղեշահ և հիշեցնի, որ այդօրինակ տատանումների պատճառով դեսպանությունը չի կարող հավատ ընծայել նրա ընտրած քաղաքականությանը և եթե այդպես շարունակվի, ապա ռուսական կառավարությունը կհրաժարվի այսուհետև որևէ աջակցություն ցույց տալ նրան: Մարտի 5-ի գիշերն ստացվեց շահի չտապ պատասխանը, որով նա հայտնում էր, որ մարտի 20-ի կողմերը Բաղեշահի մարմարյա ապարանքում տեղի կունենա բարենորոգումներ մտցնելու մասին նշված հանձնախմբի հավաքը: Այդ հայտարարությունից հետո Սաադ Դովլեն հետ կանգնեց հրաժարական տալու մտքից և շահի հանձնարարությամբ սկսեց կազմել «70-ի ցուցակը»: Չնայած դրան, շահին լավ ճանաչող անձինք նախազգուշացնում էին, որ մինչև հանձնախմբի հավաքվելը նա էլի մի քանի իրար հակասող որոշումներ կկայացնի:

Իսկ գավառներում հեղափոխականները հայտարարում էին, որ չեն բավականանալու կիսատ-պռատ խոստումներով և շարունակելու են կռիվը մինչև շահի գահընկեցությունը[1]:

Անիշխանության խորացմանը նպաստում էր հետագա քայլերի համար Թեհրանի կառավարության մեջ միակամության բացակայությունը: Հատկապես սաստիկ լարվել էին շահի և զինվորական նախարար Էմիր Բահադուր Ջենգի հարաբերությունները, որի հետևանքով վերջինս ոչ միայն չէր ենթարկվում միապետի կարգադրություններին, այլև նրան փաստորեն պահում էր պալատական կալանքի տակ: Այդ հանգամանքից օգտվելով, սահմանադրական ուժերն ընդլայնում էին իրենց ազդեցության գոտիները: 1909 թ. մարտի կեսերին հեղափոխականները գրավեցին կասպիական ծովափին գտնվող Մեշեդեսերը, նույն ժամանակ նրանց կողմն անցան Համադանը և Ջասեկը: Անկման նախօրյակին էին Աստրաբադը և Բարֆրուշը: Ազգայնականներն ամենուրեք խափանում էին հեռագրական հաղորդակցությունը, կտրտում Լոնդոնից Հնդկաստան ձգվող հեռագրաթելերը և տապալում հեռագրասյուները: Ամեն տեղ հուզ-

[1] Տե՛ս **«Ախուրեան»**, № 20, 14 մարտի 1909 թ.:

մունք էր, բնակչությանը կոչեր էին արվում չենթարկվել պետական հիմնարկների կարգադրություններին: Աստրաբադում կովի դուրս եկած ամբոխը ձեռք ձգեց զինանոցի զենքերը: Թուրքմենական անապատում մեծ հուզմունք էր: Ավազակություններն ու սպանությունները սովորական բաներ էին դարձել[1]:

Տվյալ պահի դրությունն այսպես է ներկայացրել Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Իզվոլսկին՝ Ռուսաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Արթուր Նիկոլսոնին գրած նամակում. «Եթե հանգամանքները չարունակեն զարգանալ այդ ուղղությամբ, ապա որևէ մեկը չի կարող կանխատեսել, թե ե՞րբ կարելի կլինի կասեցնել Ղաջարների կայսրության քայքայումը»[2]:

Շահի բարեկամները երկրի ներսում և նրա պաշտպանները դրսում ինքնակալին խորհուրդ էին տալիս՝ երկրում տիրող անիշխանությանը վերջ տալու, Ղաջարների արքայատոհմի գահը փրկելու համար վերականգնել սահմանադրական կարգերը և վերացնել Թավրիզի պաշարումը: Նրանք շահին չտապեցնում էին հրավիրել «70-ի հանձնաժողովի» նիստ և սահմանադրականների պահանջներին ընդառաջ քայլեր անել:

Վերջապես, մարտի 13-ին Թեհրանում նիստի հավաքվեց հանձնաժողովը: Ազգայնականների ներկայացուցիչները չեկան նիստին, ներկա էին միայն ղաջարական արքայատոհմի մի քանի իշխանազուններ, վաճառականներ, հոգևորականության ներկայացուցիչներ, որոնք միապետի հավատարիմ անձեր էին: Նույնիսկ ներկա գտնվող արտաքին գործերի նախարար Սաադ Դովլեն այս անգամ որևէ խոսք չասաց հօգուտ սահմանադրության[3]:

Առանց հավատարիմ բազմաքանակ զորքերի և առանց դրամական լուրջ միջոցների մնացած Մահմեդ Ալի շահի դրությունը վհատեցուցիչ էր, բայց նա համառորեն չարունակում էր մերժել սահմանադրությունը վերադարձնելու պահանջը[4]:

---

[1] Տե՛ս **«Ախուրեան»,** № 21, 19 մարտի 1909 թ.:

[2] *"**Сборник дипломатических документов, касающихся событий в Персии с 2 ноября 1908 г. по 11 июля 1909 г.**", вып. II , СПб, 1911, с. 54-55.*

[3] Տե՛ս **«Ախուրեան»,** № 21, 19 մարտի 1909 թ.:

[4] Տե՛ս **Михаил Сергеевич Иванов**, *Очерки истории Ирана, с. 232.*

1909 թ. ապրիլի սկզբներին շահը, զորահավաքի ենթարկելով իր ռազմական բոլոր հնարավորությունները, Թավրիզը սեղմեց շրջապատման ամուր օղակի մեջ, որից դուրս գալն այլևս անհնար էր: Քաղաքը գտնվում էր անկման նախօրյակին՝ իր կանխատեսելի ողբերգական հետևանքներով: Ապստամբության ջախջախումը առաջ կբերեր երկրի մասշտաբով ուժերի հավասարակշռության կտրուկ փոփոխություն Ղաջարների օգտին:

Ապրիլի 7-ին ապստամբները վերջին անհաջող փորձն են անում ճեղքելու շրջապատման օղակը:

Ռուսաստանի և Անգլիայի ներկայացուցիչները շահից պահանջում են ժամանակավորապես դադարեցնել Թավրիզի դեմ ռազմական գործողությունները, որպեսզի հնարավոր լինի շրջապատված քաղաք մտցնել պարենամթերք՝ սովից փրկելու համար ռուսական և անգլիական միսիաների աշխատակիցներին, օտարերկրյա բոլոր հպատակներին, քաղաքի այն բնակիչներին, որոնք մասնակցություն չեն ունեցել ռազմական գործողություններին: Շահն ստիպված էր 6 օրով՝ ապրիլի 20-26-ը զինադադար հայտարարել[1]:

Վեցօրյա զինադադարը վերջանալուց հետո վերսկսվեցին գրոհները Թավրիզի վրա: Միաժամանակ, շահը սին խոստումներով շարունակում էր Անգլիայի և Ռուսաստանի դիվանագետներին կերակրել, թե ինքը նոր հնարավորություններ կստեղծի մեղմելու քաղաքի շրջափակումը:

Մինչ ինքնակալը ժամանակ էր կորցնում, Թավրիզում շարունակվում էին կատաղի մարտերը: Քաղաքի անջումենը կարողացել էր գլխովին զինել բնակչությանը: Կովկասից նոր համալրումներ էին ստացել Թավրիզի հայկական և վրացական կամավորական խմբերը: Այնտեղից եկել էին նաև զգալի թվով սոցիալ-դեմոկրատ մարտիկներ և ագիտատորներ: Վերջիններս կարողացել էին թափանցել Թավրիզի շրջակայքում տեղակայված միապետական զորքերի մեջ և զինվորների մի զգալի մասին համոզել անցնել հեղափոխականների կողմը:

---

[1] ***Տե՛ս М. Павлович, С. Иранский,*** *Персия в борьбе за независимость, с. 73.*

Անգլիացիները սարսափում էին, որ Պարսկաստանի հարավում նորանոր սկսվող հեղափոխական շարժումը կարող է թափանցել բրիտանական գաղութատիրության զարդը կազմող Հնդկաստան, ուստի իրենց ազդեցության գոտում զորքերի զանգվածային ափհանում կատարեցին և գրավեցին Բուշեհրը, Լինգեն, Խարկը և այլ քաղաքներ: Բուշեհրում նրանք ջախջախեցին անջումենը, գրաված բոլոր վայրերում դաժան դատաստան տեսան հեղափոխության մասնակիցների նկատմամբ[1]:

Թե՛ ռուսական և թե՛ անգլիական կառավարական շրջաններում գտնում էին, որ Պարսկաստանը գնում է դեպի կատարյալ անիշխանություն և կազմալուծում, քանի որ թե՛ շահը և թե՛ հեղափոխականներն անկարող են կարգ ու կանոն հաստատել երկրում: Նրանք նշում էին, որ պարսկական գործերում մինչև այսօր իրենք չեզոք դիրք են բռնել, ներգործական որևէ միջամտություն չեն ունեցել երկրում ծավալվող քաղաքական գործընթացներին և միայն բավարարվել են նրանով, որ շահին խորհուրդ են տվել հաշտվել ժողովրդի հետ և կատարել սահմանադրությունը վերականգնելու մասին տված խոստումները: Այդ ամենի հետևանքով գերազանցապես տուժում էր թշվառ ժողովուրդը՝ զրկված հացից, ապրուստի միջոցից, երկրագործությունից և որին սպառնում էր զանգվածային սովամահության ուրվականը:

1909 թ. ապրիլի 20-ին Թավրիզից Կարապետ ծ. վարդապետ Տեր-Մկրտչյանը Էջմիածին, Գարեգին վրդ. Հովսեփյանին գրում էր. «...Ծանր օրեր քաշեցինք. քաղաքում կառավարութեան ունեցած ցորենի պաշարը բոլորովին սպառուեց, փուռերը փակուեցին, տասնեակ հազարներով մարդիկ առանց կտոր հացի մնացին: Բազարում բացարձակ կերպով եօնջա էին ծախում հացի տեղ, հազարաւոր մարդիկ օրեր էին անցընում սոված կամ խոտ ուտելով. աչքով տեսել եմ, թէ ինչպէս թուրքի երեխայք աղբանոցում ոսկոր կամ այլ ուտելիքի կտորներ էին որոնում: Մուրացկանների ձեռքից փողոց ելնելու հնար չկայ»[2]:

---

[1] ***Տե՛ս Михаил Сергеевич Иванов,*** *Очерки истории Ирана, с. 232-233.*

[2] ***Մատենադարան, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթ. 95, վավ. 220:***

ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Դեռևս 1909 թ. մարտի վերջերին անգլիական «Ֆոքս» ռազմանավը մտել էր Բուշեհր, իսկ ռուսական «Կրասնովոդսկ» ռազմանավը՝ Էնզելի: Անգլիական նշված ռազմանավին միացել էին ուրիշները: Այդ նավերից ափ իջած անգլիական զորքերը կատաղի բռնաճնշումներ էին սկսել խաղաղ բնակչության նկատմամբ: Ձերբակալվեցին հարյուրավոր սահմանադրական գործիչներ և նետվեցին բանտերը, իսկ նրանցից առավել հայտնի դեմքերից մի քանի տասնյակը գնդակահարվեց:

Պարսկաստանի հարավում անգլիացիների ձեռնարկած վճռական գործողությունները նույն բանին դրդեցին նաև ռուսական կառավարությանը երկրի հյուսիսում:

Պետերբուրգն այլևս մտադիր չէր հանգիստ դիտելու, թե Պարսկաստանի իր ազդեցության գոտում հեղափոխական ուժերն ինչպես են հաջող կռիվներ մղում շահի զինված ուժերի դեմ: Այդպես չարունակվելու դեպքում հեռու չէր այն օրը, երբ կտապալվեր միապետը: Հենց այդ հանգամանքն էր, որ շատ անհանգստացնում էր Պյոտր Ստոլիպինի կառավարությանը: Զէ՞ որ հենց նա՝ Մահմեդ Ալի շահն էր նպաստել անգլո-ռուսական 1907 թ. պայմանագրի կնքմանը, որի համաձայն Պարսկաստանի հյուսիսային մասն անցել էր ռուսական ազդեցության տակ: Պետերբուրգի համար այդքան նպաստավոր այդ գործարքն էր պատճառը, որ ռուսական կառավարությունը նախորդ չուրջ երկու տարիներին ամեն տեսակ աջակցություն (զենք, զինամթերք, դրամ) էր ցույց տվել Մահմեդ Ալի շահին:

Բայց այժմ նման աջակցությունը, ինչպես նաև ռուս սպաներ ու հրահանգիչներ Թեհրան ուղարկելը շահի փրկության հարցը չէր լուծում: Օրեցօր ուժգնացող հեղափոխական շարժումը հավատ չէր թողնում, թե շահը երբևիցե կարող է «վիճակը շտկել» երկրում: Ուստի ստեղծված դրությունից ելքը Պետերբուրգը տեսավ Պարսկաստանի ներքին կյանքին ուղղակի, զինված միջամտության մեջ: Միայն հարկ էր գտնել պատրվակ՝ արդարացնելու համար նախատեսված ծրագիրը:

Եվ ահա Պարսկաստանի հյուսիսում՝ ռուսական գոտում, սադրիչ լուրեր տարածվեցին, թե Թավրիզում վտանգված է օտարերկրյա հպատակների կյանքը, որ իբր անգլիական և ռուսական հետախուզությունների տվյալներով՝ քաղաքում գտնվող նրանց հյուպատոսությունները, ինչպես նաև հայկական թաղամասը չուտով ենթարկվելու են հարձակման:

Այդ լուրերի ազդեցության տակ հյուպատոսությունները մտահոգություն էին հայտնում Սաթթար խանին, քաղաքային անջոմենի ղեկավարությանը, կամավորական խմբերի պատասխանատուներին: Թավրիզի ռուսական հյուպատոսության ավագ խորհրդական Միլլերը, կեղծ թե անկեղծ, իր անհանգստությունը հայտնել էր Ռոստոմին՝ նրա հետ ունեցած տեսակցության ժամանակ:

Ռուսական հետախուզական մարմինների հայթայթած տեղեկությունների մեջ կային, իհարկե, ճշմարտության տարրեր: Նույն օրերին Թավրիզի տեղական թուրքալեզու բնակչության կրոնական մոլեռանդությունը չափազանց գրգռվել էր Թուրքիայից և Կովկասից եկած թաթար պարագլուխների տարած հակահայկական քարոզչության միջոցով: Նրանք նույնիսկ ծրագրել էին քաղաքի հայության կոտորած սարքել: Այդ բանը չհաջողվեց, որովհետև թուրքալեզու բնակչությունը պահանջ չուներ գժտվելու հայերի հետ, որոնք քաղաքի պաշտպանության գործում իրենցից պակաս դեր չէին խաղում: Բացի այդ, Սաթթարն ու Բաղրը աչալրջորեն հսկում էին իրավիճակը: Չնայած այդ ամենին, քաղաքի հայերի գլխավոր հույսն ու հուսալի պաշտպանները Դաշնակցության ղեկավարությամբ գործող հայկական զինված խմբերն էին:

Ռուսևանգլիական փոխադարձ համաձայնությամբ՝ Թավրիզում արտասահմանցի հպատակներին պաշտպանելու, նրանց պարենամթերք հասցնելու պատրվակով Սանկտ Պետերբուրգից Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին տրված հրամանի համաձայն ռուսական 5000-անոց զորքը գեներալ Մնարսկու*

---

* *Մի ուրիշ աղբյուրի համաձայն՝ 4000 (տե՛ս* ***«Առաւօտ»*** *(Բաքու), № 1, 2 ապրիլի 1909 թ.):*

հրամանատարությամբ 1909 թ. ապրիլի 10 (23)-ին Նախիջևանից անցնում է Արաքսը: Հատելով սահմանը, զորքը ապրիլի 12-ին ուղղություն է վերցնում դեպի Թավրիզ՝ իր հետ մեծաքանակ ուտեստ տանելով:

Ռուսական զորաբանակը քաղաքը գրավելու հրաման չէր ստացել. այդ հարցը պիտի վճռվեր տեղում՝ ելնելով հանգամանքներից: Ասվել էր, որ եթե շահի զորքերի հրամանատարը համաձայնվեր քաղաք ներս թողնել սննդամթերքով բեռնված գումակները, ապա այն ժամանակ ռուսական զորքը պետք է բավականանար Թավրիզից դեպի ռուսական սահմանը տանող ճանապարհները հսկելով: Քաղաք պիտի մտներ միայն մի աննշան զորամաս՝ ռուսական հյուպատոսությունը պաշտպանելու համար:

Պարսից զինական ուժի հետ ռուսական զորքի առաջին ընդհարումը տեղի ունեցավ նույն օրը, Ջուլֆայից 22 վերստ հեռավորության վրա, Դարադիզ կիրճում: Թեև ռուսական ցարիզմը պարսկական միապետության երդվյալ պաշտպանն էր, բայց վերջինիս զինված ջոկատներից մեկը, որն առաջին հանդիպողն էր ռուսների, հայտնեց, թե զորքի առաջապահ կազակներին թույլ չի տալու անցնել կիրճով: Ռուսական զորքի հրամանատարությունից պատասխանեցին, թե իրենք որևէ զավթողական նպատակ չեն հետապնդում, այլ եկել են Թավրիզի սովահար բնակչությանը պարեն հասցնելու մղումով[1]:

Ապրիլի 15-ին ռուսական զորաբաժինն անարգել հասավ Ջուլֆայից 65 վերստ հեռավորության վրա գտնվող Մարանդ քաղաքը:

Ճանապարհին գեներալ Մնարսկու մոտ եկավ Մարանդի նահանգապետի պատվիրակը և հաղորդեց նրա խնդրանքը՝ չշարժվել առաջ, ավելացնելով, որ գլխավոր հրամանատարից հեռագիր է ստացված, որով նա պատվիրել է իմանալ, թե ինչո՞ւ են շարժվում ռուսները և արդյո՞ք դրա համար թույլտվություն ունեն պարսից իշխանություններից: Մնարսկին պատասխանում է. «Ես թույլտվություն ունեմ իմ գլխավոր հրամանատարից»: Ռուս գեներալը նաև ավելացրել էր, որ ռուսական զորքը երկ-

[1] Տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 3, 22 ապրիլի (5 մայիսի) 1909 թ.:

ում կգտնվի ժամանակավորապես, մինչև այնտեղ լիակատար խաղաղություն հաստատվի[1]: Խաղաղություն ասելով նա, իհարկե, հասկանում էր շահի իշխանության դեմ հեղափոխականների պայքարի դադարեցումը, անջոմենների ցրումը և սահմանադրության վերացումը:

Այսպիսով, Ջուլֆայից մինչև Թավրիզ ռուսական զորքն անցավ առանց հանդիպելու որևէ դիմադրության: Մոտենալով քաղաքին, զորքը բանակում է նրա մոտով անցնող Աջի գետի եզերքին[2]: Ընդառաջ եկան ռուսական հյուպատոսարանի պաշտոնյաները և ռուսական գաղութի ներկայացուցիչներ: Թավրիզի քրիստոնյա բնակչությունն ուրախություն արտահայտեց ռուսաց զորքերի գալստյան և քաղաքին սպառնացող նորանոր վտանգներից ազատվելու համար:

Ապրիլի 17 (30)-ին զորքի առաջապահը՝ 110 կազակ և 60 զինվոր, մտնում է Թավրիզ՝ քաղաքի պաշտպանների կողմից չհանդիպելով որևէ միջադեպի[3]: Այդ նույն ժամանակ ռուսական մի ուրիշ զորամաս գրավեց Արդաբիլ քաղաքը:

Այս պայմաններում, երբ իրենց դեմ կանգնել էր լավ զինված ռուսական ուժը, բնականաբար, ինչպես Սաթթար խանը, այնպես էլ Դաշնակցության և սոցիալ-դեմոկրատների զինված ջոկատների ղեկավարները չէին կարող արկածախնդրության դիմել՝ ընդհարվել այդ հզոր ուժի հետ: Նրանք գերադասեցին առայժմ դադարեցնել կռիվը միապետականների դեմ և իրենց դեմ պատժիչ գործողություններ սկսելու առիթ չտալ ռուսներին: Բայց ռուսական զորքը, այնուամենայնիվ, չհամարձակվեց զինաթափել ֆիդայական ջոկատները և ձերբակալել Սաթթարին ու Բաղրին: Վերջիններս, ինչպես նաև Սեյիդ Հասան Թաղիզադեն թաքնվեցին Թուրքական հյուպատոսարանում[4]:

Հակառակ սպասածի, ռուսական զորքը Թավրիզում իրեն «տանելի» էր պահում: Դա մտածել էր տալիս, որ եթե քաղաք

---

[1] Տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 3, 22 ապրիլի (5 մայիսի) 1909 թ.:

[2] Տե՛ս **М. Павлович, С. Иранский,** Персия в борьбе за независимость, с. 74.

[3] Տե՛ս **«Արեւելք»**, № 7108, 27 մայիսի 1909 թ.:

[4] Տե՛ս **«Ախուրեան»,** № 55, 2 օգոստոսի 1909 թ., **М. Павлович, С. Иранский,** Персия в борьбе за независимость, с. 74.

ռազմական ուժ մտցնելը կատարվեր միայն ապստամբության ջախջախման համար, ապա պետք էր սպասել, որ ռուսներից հետո քաղաք կմտնեն նաև միապետական զորքերը և համատեղ ուժերով կձերբակալեն և խստագույն պատիժների կենթարկեն հեղափոխականներին:

Բայց այդպես չեղավ: Տպավորություն էր ստեղծվում, թե ինչ-որ մեկը Պետերբուրգում որոշելով ռուսական զորքեր մտցնել Թավրիզ, դրանով իսկ փորձել էր խափանել միապետականների այնքան մոտ հաղթանակը[1]: Պարսկաստանի իրադարձություններին մասնակից վրաց սոցիալ-դեմոկրատները, խուսափելով ռուսների և տեղի միապետականների ձեռքն ընկնելուց, հաջողությամբ անցան Կովկաս: Ոտքով չորս օրյա ճանապարհ կտրելով նրանք գալիս էին Խոյ, այնտեղից մոտենում Արաքսին և գիշերը լողալով անցնում ռուսական ափ[2]:

Ռուսները բարյացակամ վերաբերմունք էին ցուցաբերում հատկապես հայ հեղափոխականների հանդեպ: Այդ տագնապալի օրերին Թավրիզի ռուս հյուպատոսը թեմական առաջնորդ Կարապետ ծ. վարդապետ Տեր-Մկրտչյանին է հանձնում հայ հեղափոխականների մի ցուցակ և առաջարկում, որ նա իր կողմից խորհուրդ տա նրանց չերևալ հրապարակում կամ հեռանալ քաղաքից: Հայտնել էր նաև, որ ռուսները մատների արանքով են նայելու նրանց հեռանալուն[3]:

Գարեգին վրդ. Հովսեփյանին ուղարկած նամակում Կարապետ ծ. վրդ. Տեր-Մկրտչյանը գրում էր. «ԵԹԷ քաղաքը (Թավրիզը:- Հ. Ս.) անձնատուր լինէր միապետականներին, կողոպուտ եւ սարսափներն անխուսափելի էին, տեղացի պարսիկների հետ ամենալաւ յարաբերութիւնների մէջ ենք, դժուար է գուշակել թէ մօտիկ ապագան ինչ կբերէ»[4]: Ապա ավելացնում էր. «Երէկ

---

[1] Տե՛ս **Завен Артемьевич Арабаджян,** *Иран. Власть, реформы, революция (XIX-XX вв.), "Наука", Москва, 1991, с. 34.*

[2] Տե՛ս **"Красный архив",** *т. 2 (105), Москва, 1941, с. 39.*

[3] Տե՛ս **Յովսէփ Յովհաննիսեան**, *Յուշեր, էջ 236:*

[4] **«Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան»**, *գիրք ԺԶ, Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան (1866-1915): Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Երեւան, 2006, էջ 143:*

տեսակցեցայ ռուսաց զօրաբանակի հրամանատար գեներալ Մնարսկու եւ սպաներից չատերի հետ հիւպատոսարանում: Գեներալը փոխայցելութեան եկաւ, հաւատացնում են, որ ոչ ոքի ձեռք չպիտի տան, հէնց որ կարգ հաստատուեց երկրում, յետ պիտի քաշուեն ...»[1]:

Ռուսական իշխանությունների մեղմ վերաբերմունքը հայ հեղափոխականների հանդեպ ինչ-որ չափով բացատրվում էր նրանով, որ լինելով Թավրիզի ապստամբության ոգին, վերջիններս ունակ էին տհաճություններ պատճառել նույնիսկ քաղաքին տիրացած ռուսական զորքերին[2]: Ռուսները խուսափում էին գործ ունենալ ոչ միայն դրսից եկած հայ հեղափոխականների, այլև ընդհանրապես տեղի հայերի հետ:

Ռուսների այդ վերաբերմունքը բոլոր հայ հեղափոխականներին, բացառությամբ մեկ-երկուսի, հնարավորություն տվեց թաքնվել կամ հեռանալ Թավրիզից: Ի տարբերություն սոցիալ-դեմոկրատ վրաց մենշևիկ կամավորների, դաշնակցական մարտիկներն ու ղեկավարներն անցնում են Ուրմիա, որպեսզի ապահովեն այնտեղի հոծ հայության անվտանգությունը: Որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո Սալմաստի վրայով Թուրքիա են հեռանում Ռոստոմը և Քեռին: Թուրքահայաստան ծպտյալ մտնում է նաև Ստեփան Ստեփանյանը (Բալաջան), որը հաստատվում է Կարինում[3]: Հեղափոխականների մյուս մասը կարողացավ դուրս գալ Թավրիզից, անցավ Ռեշտ և միացավ այնտեղի հակակառավարական ուժերին:

Ռուսների անսպասելի մեղմ վերաբերմունքը հեղափոխական ուժերի նկատմամբ՝ Պարսկաստանի միապետական ուժերի համար ծայրահեղ բացասական հետևանք ունեցավ:

Կովկասի հեղափոխականներին Թավրիզից դուրս մղելուց

---

[1] *Տե՛ս* ***«Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան»****, գիրք ԺԶ, Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան (1866-1915): Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, էջ 143:*

[2] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 12 (66), հոկտեմբեր, 1930, էջ 157:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 238: Կարինում Ս. Ստեփանյանն իր մոտ է կանչում ընտանիքի անդամներին: Նրանք բոլորը զոհ են գնում 1915 թ. ցեղասպանությանը:*

հետո գեներալ Մնարսկու հրամանով ռուս զինվորականները սկսեցին պարսիկ առավել հայտնի հեղափոխականների ձերբակալությունները: Քաղաքում պատնեշ հիշեցնող ամեն ինչ ռուսական զորքը ոչնչացնում էր, պատճառաբանելով, թե դրանք խանգարում են իր տեղաշարժմանը փողոցներով:

Իհարկե, ռուսաց զորքերի՝ պարսկական սահմանն անցնելը միանշանակ չի կարելի չարիք համարել: Ինչ-որ տեղ Թավրիզի բնակչության համար բարիք եղավ այն իմաստով, որ խանգարեց միապետական զորքերին շարունակելու Թավրիզի պաշարումը: Ռուսական զորքերը պաշտպանության տակ առան Թավրիզի հայկական թաղը, ինչ-որ չափով՝ նաև Հյուսիսային Պարսկաստանի այն քրիստոնեաբնակ բնակավայրերը, որտեղ նրանք ոտք էին դնում: Բացի այդ, ռուսներն իրենց հետ բերած մեծաքանակ պարենը բաժանեցին քաղաքի բնակչությանը և նրան փրկեցին սովից[1]*:*

Ռուսական ներխուժումից ամենից շատ դժգոհ էին Կ. Պոլսում: Թուրքիան երբեք չէր ցանկանա, որ հարևան Ռուսաստանը տևականորեն հաստատվեր Պարսկաստանում, քանզի այդ ժամանակ ինքն ստիպված կլիներ հազարավոր վերստերի վրա իր սահմաններն ամրացնել բերդերով ու զորքերով և, այդպիսով, անհատակ ծախսերի դուռ բացել: Բացի այդ, նա չէր կամենա, որ Պարսկաստանը Ռուսաստանի համար դառնար լայնածավալ շուկա՝ այնտեղից դուրս մղելով թուրքական ապրանքները: Ուստի, թուրքաց կառավարությունը հակազդեցության զանազան միջոցների էր դիմում, որոնցից մեկը մեծ տերությունների ուշադրությունը Ատրպատականում տեղի ունեցող դեպքերի վրա հրավիրելն էր:

«Ախուրեան» թերթը տպագրել էր Կ. Պոլսից ստացված հեռագիրը, որում հայտնվում էր, որ «ռուսական զորքերի պարսկական սահմանն անցնելը սաստիկ յուզում է առաջացրել Թիւրքիայի մայրաքաղաքում ապրող պարսիկների շրջանում, որոնց թիւը հասնում է մինչեւ 50.000-ի: Նրանք հաւաքուել էին ցոյց անել[ու] ռուսական դեսպանատան առաջ»[2]*: Ցուցարարներն ըն-*

---

[1] *Տե՛ս* ***«Առաւօտ»****, № 1, 12 ապրիլի 1909 թ.:*

[2] ***«Ախուրեան»****, № 70, 1 հոկտեմբերի 1908 թ.:*

դունել էին Մեծ Բրիտանիայի, Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի կառավարություններին ուղղված դիմում:

Օգտվելով ռուսական ներխուժումից, Ատրպատականի որոշ տարածքների տիրացած օսմանյան զորքերը 1909 թ. ապրիլի 22-ին գրավեցին նաև Ուրմիան:

1909 թ. երիտթուրքական կառավարությունը Ատրպատականի և Իրանական Քուրդիստանի գավթած տարածքներում սկսեց ներդնել օսմանյան պետական կառավարման համակարգը, կազմակերպել իշխանության իրենց ենթակա տեղական մարմիններ, հիմնել մաքսատներ, հավաքել հարկեր և այլն[1]:

Բայց երիտթուրքերի ախորժակը շատ ավելի մեծ էր. Պարսկաստանի հողերը գրավելով, նրանք ցատկահրապարակ էին ստեղծում իրենց քաղաքական ազդեցությունը հարևան մահմեդական երկրների վրա տարածելու համար[2]:

Թույլ ու անպաշտպան Պարսկաստանը, անկարող դիմադրելու թուրքական ու քրդական արշավախմբերին, անդադար բողոքներ էր ներկայացնում Բարձր Դռանը և այդ բողոքներին ուժ էին տալիս Պարսկաստանով ամենից ավելի շահագրգռված եվրոպական պետությունների Կ. Պոլսի ներկայացուցիչները՝ բրիտանական և ռուսական դեսպանները, որոնց ձեռնարկումներն առայժմ որևէ դրական արդյունքի չէին հասնում:

Թուրքական կառավարությունն այնքան վստահ էր դարձել Պարսկաստանում իր հետագա հաջողությունների վրա, որ Սաթթար խանին և Ատրպատականի հեղափոխության մյուս նշանավոր թուրք պարագլուխներին հրավիրել էր Կ. Պոլիս՝ քննարկելու պարսկական հեղափոխական շարժման ղեկավար կենտրոնը օսմանյան մայրաքաղաք տեղափոխելու հնարավորության հարցը[3]:

Չնայած դրան, Բարձր Դուռը լավ էր հասկանում, որ եթե իր զորքերը հետզհետե ավելի առաջանան, ապա Ռուսաստանը Անգլիայի հետ կնքած դաշնագրով Ատրպատականը իր ժառան-

---

[1] Տե՛ս **«Բանբեր Հայաստանի արխիվների»**, № 1, 1974, էջ 119:

[2] Տե՛ս **«Աւետարեր»**, № 34, 22 օգոստոսի 1908 թ.:

[3] Տե՛ս **«Ախուրեան»**, № 41, 7 հունվարի 1909 թ.:

գությունը նկատելով, Պարսկաստան խուժելուց հետո աստիճանաբար կմտնի նաև Ուրմիայում, Սալմաստում և Իրանական Քուրդիստանում թուրքերի գրաված տարածքներ և զինու ուժով նրանց դուրս կմղի, որն, անշուշտ, առիթ կդառնա Ռուսաստանի և Թուրքիայի միջև հակասությունների հետագա սրման: Ռուսները քաջ գիտակցում էին, որ օսմանյան թուրքերին Ատրպատականից վոնդելու համար նախ անհրաժեշտ է ճնշել այդ նահանգի տեղացի թուրքերի ապստամբությունը և խափանել նրանց անջատողական ձգտումները Թեհրանից: Ուստի, Սաթթար խանի և նրա ենթակաների դեմ կռիվը գնալով բարդանում էր և արդեն 1909 թ. հունիսի սկզբներից լուրջ թյուրիմացություններ էր հարուցել Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Ռուսաստանը Թուրքիայից պահանջում էր Սաթթար խանին և Ատրպատականի մյուս ապստամբ թուրք խաներին այլևս ցույց չտալ ռազմական և այլ կարգի օգնություն, ավելին՝ առաջարկում էր ռուսական կառավարությանը հանձնել Սաթթար խանին, որովհետև Ջուլֆայի ճանապարհի վրա կրած իր վնասների համար պահանջներ ունի նրանից*: Իրականում, Ռուսաստանի մտահոգությունն այլ էր. Ատրպատականի թուրքերն արդեն իրենց համարում էին Թուրքիայի քաղաքացիներ: «Կոհակը» նկատում էր. «Ադրբեյջանի (Ատրպատականի:- Հ. Ս.) ազգա-

* Պարսկական հեղափոխության խորհրդային հետազոտողներն իրենց ուսումնասիրություններում միանշանակ դրականորեն են գնահատել Ատրպատականի և ընդհանրապես Հյուսիսային Իրանի թուրքերի ապստամբական շարժումները երկրի կենտրոնական կառավարության դեմ, ինչպես նաև նրանց մղած կռիվները ռուսական զորքերի դեմ, վերջիններիս որակելով «զավթիչներ» և «բռնագրավիչներ», հաշվի չառնելով, որ հատկապես Թավրիզի ապստամբների թուրք պարագլուխները սերտ կապերի մեջ էին Օսմանյան Թուրքիայի կառավարության հետ և նրանց վերջնական նպատակը ոչ թե չարքաշ ժողովրդին շահական բռնապետությունից ազատագրելն էր, այլ վերջին հաշվով Պարսկաստանի թուրքալեզու տարածքները Օսմանյան կայսրությանը միացնելը: Սաթթար խանի գլխավորած իրանական թուրքերի ապստամբությանը միանշանակ դրական գնահատականներ են տրված նաև խորհրդահայ պատմաբանների աշխատություններում, ինչպես նաև, որքան էլ զարմանալի է, սփյուռքահայ, այդ թվում՝ դաշնակցական պատմագրության մեջ:

բնակութեան մի մասն արդէն ընդունել է տաճկահպատակութիւն եւ միւս մասն էլ պատրաստ է ընկնելու Տաճկաստանի գիրկը»[1]: Իսկ Թուրքիան վճռականապես մերժում էր Սաթթար խանին և նրա գործակիցներին իրեն հանձնելու Ռուսաստանի պահանջը՝ պատճառաբանելով, թե Սաթթար խանը, որպես պարսկահպատակ և քաղաքական գործիչ, դիմել է թուրքական իշխանությունների հովանավորությանը, որն օսմանյան համապատասխան օրենքի հիման վրա չի կարող նրան ցույց չտալ այդ հովանավորությունը[2]:

Իսկ ի՞նչ վերաբերմունք ունեին Կովկասի թուրքերը թուրք-պարսկական տարածքային վեճի նկատմամբ: Նրանք օսմանյան թուրքերի հետ կապված էին ցեղական ու ազգակցական կապերով, ունեին նույն լեզուն, բայց միաժամանակ պարսիկներին մոտ էին սովորույթներով, նիստ ու կացով, բարքերով, ունեին նույն շիա դավանանքը: Ահա՛ այդ երկատվածության հողի վրա տեղի էին ունենում խուլ, դանդաղ, բայց համառ ու հաստատ մտավոր-բարոյական խմորումներ և ցեղային ինքնորոշման ձգտումներ[3]: Այդ բոլորն արտացոլում էր գտնում գերազանցապես Բաքվում լույս տեսնող կովկասյան թուրքական մամուլում, որի համակրանքն անվերապահորեն Թուրքիայի կողմն էր:

ՀԱԿԱՄԻԱՊԵՏԱԿԱՆ ԿՌՎԻ ՆՈՐ ՃԱԿԱՏ: ԵՓՐԵՄ ԴԱՎԹՅԱՆԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

Թավրիզյան գոյապայքարի նախորդ ամիսներին Պարսկաստանի մյուս նահանգները մնացել էին լուռ հանդիսատեսի դերում և չկար հավատ, թե նրանք երբևիցե դուրս կգան կրավորական վիճակից: Այդ պայմաններում թվում էր, թե վերջնականապես չիջում է հակամիապետական պայքարի կրակը և ուր որ է կանգ է առնելու հեղափոխության ընթացքը:

---

[1] **«Կոհակ»**, № 4, 20 հունիսի 1909 թ.:

[2] Տե՛ս **«Ախուրեան»**, № 41, 7 հունիսի 1909 թ.:

[3] Տե՛ս **«Երկրի ձայնը»** (Թիֆլիս), № 5, 5 նոյեմբերի 1906 թ.:

Բայց հոռետեսությունը խաբուսիկ էր: Հակաշահական պայքարի կրակը 1909 թ. սկզբներից սկսեց բորբոքվել նոր ուժով՝ տարածվելով Պարսկաստանի ուրիշ նահանգներում և մայրաքաղաք Թեհրանի շուրջը: Հեղափոխությունը թևակոխեց հերոսական պայքարի նոր շրջափուլ: Այս անգամ ապստամբական կրակը բռնկվեց Ատրպատականի սահմաններից դուրս՝ հարևան Գիլանի նահանգում: Այս նահանգի կենտրոնը Ռեշտ քաղաքն էր, որը գտնվում է Կասպից ծովի մոտ, ծովափից հազիվ 40 վերստ հեռավորության վրա: Նահանգի նավահանգիստը Էնզելի քաղաքն էր:

Ռուսաստանին մոտիկ լինելը մեծապես նպաստել էր, որպեսզի Գիլանի նահանգը սերտ կապերի մեջ լինի Անդրկովկասի հետ: Ամեն տարի գիլանցի հազարավոր տարագիրներ սեզոնային աշխատանքի էին մեկնում այդ երկրամասի տարբեր վայրեր՝ կատարելով ամենասև աշխատանքներ հատկապես նավթարդյունաբերության ու պղնձարդյունաբերության մեջ:

Գիլանի նահանգում ապրում էին շուրջ հազար հայեր, հիմնականում Ռեշտում, Էնզելիում և ավելի փոքր բնակավայրերում:

1908 թ. ամռան վերջերից կապեր էին հաստատվել Գիլանի ու Անդրկովկասի հեղափոխական ուժերի միջև: Դրա նախաձեռնողներից առաջինը եղել էին հնչակյան կուսակցության կովկասյան կազմակերպությունները: Տվյալներ կան, որ վերջիններս գիլանցի հեղափոխականներին այդ ժամանակ տրամադրել են մի քանի հարյուր հրացան ու «Մաուզեր» ատրճանակ, տասնյակ հազարավոր փամփուշտներ[1]*:*

Կովկասյան հեղափոխական կազմակերպությունների նպատակն էր՝ հեղափոխական նոր օջախ բացել Պարսկաստանում, որպեսզի կառավարական զորքերին չեղեն Թավրիզի ճակատից և դրանով իսկ թեթևացնեն այնտեղի հեղափոխականների վիճակը:

1908 թ. հոկտեմբերին Բաքվից նավերով և Աստարայի կող-

---

[1] *Տե՛ս* ***"Красный архив",*** *т. 2 (105), с. 65-66.*

մից ոտքով Ռեշտ եկան անդրկովկասցի հեղափոխականների նոր խմբեր: Անդրկովկասից Պարսկաստան վերադարձան մեջլիսը ցրելուց հետո Կովկաս փախած գիլանցի համարյա բոլոր սահմանադրականները:

Գիլանը դարձավ պարսկական հեղափոխական պայքարի նոր հնոց, որի քուրան վառեց նշանավոր հեղափոխական և ռազմական գործիչ, դաշնակցական Եփրեմ Դավթյանը (Եփրեմ խան):

Կենսագրական գծեր. *Գրել Պարսկաստանում Եփրեմի ունեցած գործունեության մասին, նշանակում է գրել պարսկական հեղափոխության պատմությունն իր բոլոր ելևէջներով, դրվագներով ու մանրամասներով՝ հատկապես 1909 թ. սկզբներից մինչև 1912 թ. մայիսի սկիզբը: Նա բացառիկ դեմք էր, որն ապրեց վտանգավոր արկածներով ու տառապանքներով, խիզախ ու հերոսական թռիչքներով իմաստավորված մի կյանք:*

Ավետիք Իսահակյանը 1912 թ. գրել է, որ Եփրեմ Դավթյանի ծննդավայրը Արցախ-Սյունյաց աշխարհն է[1]: Ավելի ստույգ՝ Եփրեմը դաշտային Արցախից էր: Ծնվել է Շամխորի Բարսում գյուղում: Ծննդյան թվի վերաբերյալ տարբեր կարծիքներ կան: Ընդունված է ասել, որ նա կյանքից հեռացել է 44 տարեկանում, հետևաբար ծնվել է մոտավորապես 1868 թ. (այլ աղբյուրներում՝ 1867 թ., 1869 թ. և այլն): Հայրը, որ մի համեստ աշխատավոր գյուղացի էր, մահացել էր վաղ՝ իր այրուն թողնելով երկու մանուկ որբերի՝ Եփրեմի և նրա Շողի քրոջ խնամքը[2]: Ընտանիքի ապրուստի միակ աղբյուրը հոր թողած փոքրիկ այգին էր, ուրիշ ոչինչ: Մոր ավագ զավակը մանկությունն ու պատանեկությունը անցկացրել է ծննդավայրում՝ տանջալից աշխատության մեջ: Հաճախել է տեղի տարրական դպրոցը, հազիվ գրել-կարդալ սովորել: Թեև դրանով վերջացել էր նրա դպրոցական կրթությունը, բայց ընությունից լինելով խելոք և ուշիմ,

---

[1] ***«Սգապսակ Եփրեմին»,*** *Կ. Պոլիս, 1912, էջ 12:*

[2] *Տե՛ս* ***Անդրէ Ամուրեան****, Յեղափոխական Եփրեմի ողիսականը, Թեհրան, 1972, էջ 152:*

կարողացել էր ինքնակրթությամբ կերպարանափոխել իր հոգեկան աշխարհը:

Եփրեմը դեռ վաղ տարիքից էր ազատագրական գաղափարներ ներծծել: Թուրքահայաստանից Բարսում էին հասնում ահավոր լուրեր: Պատանին տարվում է թուրքերի տիրապետության տակ հեծող հայությանն օգտակար լինելու մտքով: Դեռ պատանի, նա հայտնվում է Թիֆլիսում և ստանում առաջին քաղաքական դաստիարակությունը՝ ընկնելով հայ ազատագրական շարժման վաղորդայնին հրապարակ եկած Արսեն Թոխմախյանի հեղափոխական գաղափարների ազդեցության տակ: 21 տարեկանում նա արդեն անդամագրվել էր Հունոյի (սալմաստեցի Հարություն աղա Տեր-Մարտիրոսյան) հայդուկային խմբին՝ իբրև տասնապետ: Փիչ անց խումբն անցնում է ռուս-թուրքական սահմանը՝ փորձելով գնալ Սասուն[1]:

Կարճ ժամանակով Եփրեմը վերադառնում է գյուղ, բայց նրա միտքը չարունակում էր զբաղված մնալ թուրքահայ տառապյալ ժողովրդին օգնության գնալու խնդրով: Զուչացավ դիպվածը: Թշվառ մորն ու քրոջը թողնելով գյուղում, 1890 թ. նա գնում ու միանում է Սարգիս Կուկունյանի արշավախմբին, որը նպատակ ուներ անցնել ռուս-թուրքական սահմանը և մասնակցել թուրքահայ եղբայրների ազատագրական պայքարին: Բայց ծրագիրը մատնվեց անհաջողության. սահմանն անցնելիս արշավախումբը ենթարկվեց ռուսական սահմանապահ ստորաբաժանումների հարձակմանը, կորուստներ տվեց և նահանջեց: Կուկունյանի խմբի մյուս մարտիկների հետ Եփրեմը նույնպես ձերբակալվեց: Ռուսական դատարանը խմբի անդամներին տարբեր ծանր պատիժներ տվեց: Եփրեմ Դավթյանը համեմատաբար «մեղմ» պատիժ ստացավ՝ 8 տարվա տաժանակրություն հեռավոր Սախալինում:

Աքսորի երկրորդ տարում Եփրեմը, պարսկաստանցի աքսորյալ Հովսեփ Մովսիսյանը և երեք ռուս աքսորյալներ ձմեռը

---

[1] *Տե՛ս* ***Անդրէ Ամուրեան****, Յեղափոխական Եփրեմի ողիսականը, էջ 152:*

սարքում են մի լաստ և սպասում գարնանը[1]:

1895 թ. հունիսի կեսերի մի օր, երբ մառախուղը ծածկել էր ամեն ինչ, ուշ գիշերին հինգ հոգով մեկտեղվում են լաստի վրա և նետվում Թաթարական նեղուցը:

Եփրեմի կյանքի այդ շրջանից մեզ միայն կցկտուր և հակասական տեղեկություններ են հասել: Պատճառն այն է, որ հետագայում նա խուսափում էր անդրադառնալ անցյալի դառը հուշերին: Այնուամենայնիվ հայտնի է, որ ծովում լաստն առաջ մղելով, փախստականներն ութ օր հետո հայտնվում են Թաթարական նեղուցի արևմտյան անտառապատ ափին և ապաստանում կիսավայրենի գիլակ ցեղի մոտ, որի անդամներից մի քանիսը օրեր շարունակ հում ձկով կերակրում ու խնամում են նրանց[2]: Կազդուրվելուց ու հանգստանալուց հետո նրանք շարունակում են ճանապարհն Ամուր գետի ձախ ափով դեպի Սիբիրի խորքերը: Խուսափելով մարդկանց հետ հանդիպելուց և հաղթահարելով տանջալից ճանապարհի բոլոր դժվարությունները, հալածյալները հասնում են Բայկալ լճի կողմերում գտնվող Ուդինսկ քաղաքը, ուր նրանց ձերբակալում են, բայց մի ազդեցիկ հայի օգնությամբ ազատվում[3] և շարունակում են ճանապարհը տարբեր ուղղություններով: Եփրեմը գնում է դեպի Կասպից ծովի հյուսիսակողմը, և Սախալինից սկսած ու երեք ամիս տևած ոդիսական դեգերումներով հասնում Աստրախան: Ճանապարհը շարունակելով, Եփրեմը, վերջապես, 1896 թ. հոկտեմբերին ոտք է դնում պարսից հողին, որը միշտ հյուրընկալ է եղել հայ հեղափոխականների համար: Նա գալիս է Թավրիզ և փորձում հաստատվել այնտեղ:

Եփրեմը Սախալինից վերադարձել էր հյուծված ու հիվանդ, սոսկալի ցավ էր զգում բազուկների ու ոտքերի ոսկորներում, որոնք հետևանք էին երկաթյա չղթաների ազդեցության և Սախալինի սոսկալի ցրտի: Հետագայում Թիֆլիսյան իր մերձավորներից մեկը վերհիշել է, որ նա ցավերից տանջվում էր, գիշերնե-

---

[1] **Անդրէ Ամուրեան,** Յեղափոխական Եփրեմի ոդիսականը, էջ 9:

[2] Տե՛ս **Ց. Էլմար (Յովսէփ Յովհաննիսեան),** Եփրեմ, Թեհրան, 1964, էջ 203:

[3] Տե՛ս նույն տեղում:

ը չէր կարողանում քնել ու հանգստանալ: Եփրեմը մեկ անգամ չէ, որ ասում էր, թե ինքը միշտ ատել է բռնությունը, դեռ մինչև Սախալին ընկնելը կռվել է այդ չարիքի դեմ, իսկ Սախալինից հետո, այնտեղ կրած տանջանքներից հետո, բազմապատկելու է իր ջանքերը բռնության ու ամեն չարիքի դեմ պայքարում[1]:

Թավրիզում Եփրեմը երկար չի մնում: Նա անցնում է Սալմաստ, ուր ապրում էր ամենահամեստ կյանքով: Այստեղ հանդիպելով մի խեղճ գեղջկուհու՝ Անահիտին, կարճատև ծանոթությունից հետո ամուսնանում է ու նրա հետ ապրում մինչև կյանքի վերջը:

Թվում էր, թե սախալինյան տաժանակրության հինգ տարիները կոտրել են Եփրեմի ոգին: Բայց՝ ոչ: Այս անգամ երիտասարդը մտնում է քրդական Մազրիկ ցեղին պատժելու համար ՀՅ դաշնակցության կազմակերպած արշավախմբի մեջ և ստանձնում մեկ տասնյակ հայդուկների ղեկավարությունը: 1897 թ. հուլիսի 25-ին Խանասորի դաշտում տեղի է ունենում վրեժխնդրական գործողությունը: Դա պատասխան էր 1896 թ. Աղբակի դաշտում, ս. Բարթողիմեոսի վանքի շրջակայքում Վանից նահանջող հարյուրավոր հայերի կոտորածին, որի եռանդուն մասնակիցն էր եղել այդ ցեղը:

Օսմանյան կառավարության պահանջով, պարսկական իշխանությունները ստիպված էին հետապնդել Խանասորի արշավանքից վերադարձողներին, ուստի, այդ պատճառով Եփրեմը մի քանիսի հետ ժամանակավորապես անցնում է Կովկաս: Կրկին Պարսկաստան գալով՝ 1899-1902 թթ. ուսուցչություն է անում Ղարադաղի Աղաղան գյուղում: Նա շատ սիրված էր իր աշակերտներից և առաջին հեղափոխական սերմերը Եփրեմը իր սաների մեջ ցանեց հենց այս դպրոցում: Այդ տարիներին շրջում է Ատրպատականի հայաբնակ վայրերը և գրեթե ամբողջ Հյուսիսային Պարսկաստանը: Ղարադաղից հեռանալուց հետո Սալմաստում և Թավրիզում գործ չգտնելով՝ միառժամանակ աշխատում է Ռեշտ-Ղազվին խճուղու շինարարությունում՝ սևա-

---

[1] Տե՛ս **«Սգապսակ Եփրեմին»**, էջ 16:

գործ բանվորի վիճակից աստիճանաբար բարձրանալով և դառնալով կապալառու: Այնուհետև անցնում է Գիլանի նահանգի Էնզելի քաղաք, որտեղ զբաղվում է փայտի առևտրով: Հաստատվելով Ռեշտում, Եփրեմն այստեղ հիմնում է աղյուսի սեփական գործարան[1]:

Իր խառնվածքով հանրային շահերին նվիրված հեղափոխական Եփրեմը թե՛ Ղարադաղում և թե՛ Սալմաստում ու մանավանդ Ռեշտում ամբողջ էությամբ լծվել էր կուսակցական և ազգային-հասարակական աշխատանքների: Լինելով ընդունակ ու հետաքրքրասեր, նա կարողացել էր յուրացնել ռուսերեն, պարսկերեն, թուրքերեն ու անգլերեն լեզուները: 1906-1907 թթ. Ռեշտի ուսումնական հոգաբարձության անդամ էր և հասցրել էր մի շարք բարեփոխումներ մտցնել հայկական դպրոցում*:

Երբ Պարսկաստանում սկիզբ է առնում ապստամբական շարժումը, ՀՅ դաշնակցության «Գիլան» կոմիտեի վարչության անդամ Եփրեմ Դավթյանը ամբողջ հոգով միանում է նրան:

1908 թ. հունիսի կեսերին «Գիլան» կոմիտեն Եփրեմին ուղարկում է Բաքու, ուր նա կապի մեջ է մտնում այնտեղ ապաստանած պարսիկ սահմանադրականների հետ, ինչպես նաև ՀՅԴ Ոսկանապատի (Բաքվի) կենտրոնական կոմիտեի աջակցությամբ լուծում է զենքի հետ կապված մի շարք հարցեր:

Վերադառնալով Ռեշտ, Եփրեմը ՀՅԴ «Գիլան» կոմիտեում հունիսի 29-ին ներկայացնում է Բաքվում իր կատարած աշխատանքների հաշվետվությունը և առաջարկում է առանց հապաղելու ձեռնարկել նահանգում հակամիապետական ապստամ-

---

[1] Տե՛ս **«Ասպարէզ»** (Ֆրեզնո), № 201, 14 հունիսի 1912 թ.: Եփրեմի կենսագրության մի շարք մանրամասների մասին տե՛ս նաև նույն թերթի 1912 թ. № 203, 204, 205, 206 համարներում:

* Ժամանակի հայկական և հատկապես ռուսական, նաև եվրոպական մամուլում բազմիցս սխալ գրվել է, թե Եփրեմը գործուն և ղեկավար մասնակցություն է ունեցել Կովկասում 1905-1906 թթ. տեղի ունեցած թուրք-հայկական ընդհարումներին: Նա ոչ միայն չի մասնակցել այդ կռիվներին, այլև խստորեն անարգում էր ցարական կառավարությանը, որ բորբոքել էր այդ արյունալի ընդհարումները:

բության բարձրացմանը: Եփրեմի առաջարկը լուրջ տարաձայնությունների պատճառ է դառնում: Դաշնակցական կոմիտեականների մի մասը գտնում էր, որ Պարսկաստանի դաշնակցականները դեռ պատրաստ չեն զինված պայքարի մեջ մտնելու, քանի որ ամենից առաջ բացակայում է անհրաժեշտ զենք-զինամթերքը: Ի վերջո որոշում է ընդունվում՝ նախապատրաստական աշխատանքներ սկսել երկրում ծավալվող ժողովրդական շարժմանը մասնակցելու համար[1]:

Այդ օրերին Ռեշտում տարածվում է մի թռուցիկ, որում ասված էր, թե սահմանադրության դեմ շահի ավազակային գործողությունները պետք է արժանանան ժողովրդի ուժգին հակահարվածին: Կոչ էր արվում ամեն կերպ օժանդակել Թավրիզի ապստամբներին:

Թավրիզի պաշտպաններին օգնություն ցույց տալու համար Եփրեմը 1908 թ. ամռանը քարոզչական աշխատանք էր տանում Ռեշտում: Միաժամանակ, Գիլանի նահանգում շարժում առաջացնելու համար հուլիսի սկզբներին ձեռնարկում է կազմակերպելու հայ-պարսկական մի միացյալ կոմիտե, բայց փորձը ձախողվում է: Այդ անհաջողությունը չի ընկճում նրան: Ցուցաբերելով անուրանալի տաղանդ, Եփրեմը շուտով պարսիկ հեղափոխականների հետ Ռեշտում կազմակերպում է «Սաթթար» անունով հեղափոխական կոմիտե, որի մեջ ընդգրկվում է յոթ հոգի՝ չորս պարսիկ և երեք հայ[2]: Իր գործունեության ծրագիրը կազմելիս կոմիտեն մեծապես օգտվել էր ՀՅ դաշնակցության ծրագրից ու կանոնագրից:

Այդ առաջին լուրջ հաջողությունը խթան է հանդիսանում ընդլայնելու հեղափոխական գործունեության շրջանակները: Եփրեմը հանդիպումներ է ունենում միապետական կարգերին ընդդիմադիր երևելի անձանց հետ, հրավիրում գաղտնի ժողովներ, որոնցում քննարկման է դնում Թավրիզի օրինակով Ռեշտում հակաշահական ապստամբություն բարձրացնելու հարցը: Արդյունքը լինում է քաղաքի, հատկապես երիտասարդության

---

[1] *Տե՛ս* ***«Ալիք»*** *հանդես (Թեհրան), № 2, 1961, էջ 37-40:*

[2] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 7 (31), մայիս, 1925, էջ 27:*

շրջանում հեղափոխական տրամադրությունների ուժեղացումը:

Չնայած թափած մեծ ջանքերին, չէր հաջողվել «Սաթթար» կոմիտեի շուրջը մեծ զանգված համախմբել: Բացի այդ, կոմիտեի ներսում առաջ էին եկել տարաձայնություններ Եփրեմի և մյուս անդամների միջև: Վերջիններս գտնում էին, որ պետք չէ շտապել և իրադարձություններից առաջ ընկնել, այլ պետք է սպասել Թավրիզի ապստամբության ելքին և միայն դրանից հետո ճշտել հետագա անելիքները: Ահա թե ինչո՛ւ Եփրեմն անցնում է Էնզելի և այնտեղ կազմակերպում մի ուրիշ կոմիտե «Բարդ» (Փայլակ) անունով, դարձյալ բաղկացած 7 հոգուց՝ դարձյալ չորս պարսիկ և երեք դաշնակցական: Իրեն սոցիալիստ-հեղափոխական համարող այս կոմիտեն հրաժարվում է ենթարկվել «Սաթթար» կոմիտեին, որը փորձում էր նրան դիտել լոկ որպես իր մասնաճյուղ[1]:

Չնայած հայացքներում եղած տարբերություններին, երկու կոմիտեները հետևողականորեն հետապնդում էին իրենց նպատակների իրականացումը՝ միապետության տապալումը:

Եփրեմը Ռեշտից նույն առաքելությամբ անցնում է Թալիշ, ուր ձեռք է բերում բավական թվով համակիրներ: Այստեղից վերադառնալով Ռեշտ, ձեռնարկում է որոշակի գործողություններ, որոնցից մեկը պարսիկ և հայ 12 երիտասարդներից կազմած զինական մի խմբի ստեղծումն էր:*

1908 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Եփրեմն զբաղված էր իր մարտական խմբի զինման և կամավորներով համալրման գործով: Արդեն 1909 թ. հունվարին Գիլանի կենտրոն Ռեշտում կար 10-ից ավելի պարսիկ հեղափոխական, Կովկասից

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»,*** *№ 7 (31), մայիս, 1925, էջ 27:*

* *Խորհրդային ռուս պատմաբան Միքայել Իվանովը, որն իր հրապարակումներում ամեն կերպ ստվերում է պարսկական հեղափոխական շարժման մեջ հայերի մասնակցությունը, աչքաթող անելով, որ Եփրեմը նախընթաց տարիներին ապրել է Ռեշտում և այնտեղ վաղուց կուսակցական-հեղափոխական գործունեություն էր ծավալել, գրում է, թե միայն Գիլանի իրադարձությունների նախօրյակին «Ռեշտ է գալիս և այնտեղ հիմնավորվում հայ դաշնակցականների մի խումբ՝ Եփրեմ Դավիդյանցի գլխավորությամբ» (տե՛ս* ***Михаил Сергеевич Иванов****, Очерки истории Ирана, с. 234):*

եկած չուրջ 30 վրացի կամավոր, տեղացի 20 հայ մարտիկ, որոնք միասին կազմում էին 60 պատերազմողից բաղկացած զինված խումբ: Դրա դիմաց միապետական կառավարությունը քաղաքում ուներ 500 սարբազ (հետևակ զինվոր), 60 կազակ, մի քանի տասնյակ ոստիկան և Ամին Սոլթանի (իսկական անունը՝ Միրզա Ասղար խան Աթաբեկ) հրամանի տակ գտնվող 70 գուրգարցի զինվոր[1]:

* * *

Վրա է հասնում բախտորոշ 1909 թ. հունվարի 26-ը (փետրվարի 8-ը):

Այդ օրն էր, որ լայն զանգվածների համար միանգամայն անհայտ մի հայորդի սկսելու էր աներևակայելի թռիչք անհայտությունից դեպի արժանի փառքի գագաթներ:

Այդ օրը Գիլանի նահանգապետ-դատավորը* գնացել էր այգի և զբաղված էր իր հյուրերով ու թղթախաղով, իսկ դարխանեում (նահանգապետարան) կեսօրին, ըստ տեղի սովորության, քնած էին լինում պալատի մեծ ու փոքր պաշտոնյաները: Ժամը 12-ի կողմերը Եփրեմն իր փոքրաթիվ խմբով (18 հոգի) հանկարծակի հարձակվում է Գիլանի կենտրոն Ռեշտի դարխանեի հսկա չինության վրա[2], ուր կար մի քանի հարյուր միապետական զինվոր[3]: Քանի որ հեղափոխականների թիվը շատ քիչ էր, ապա նրանք, այլ ելք չունենալով, հրդեհում են պալատը, որի ավերակների տակ են մնում հակառակորդի մի քանի զինվոր և նահանգապետարանի ամբողջ գույքը[4]: Դրանից հետո Եփրեմի

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (31), մայիս, 1925, էջ 27, նույն տեղում, № 12 (66), հոկտեմբեր, 1930, էջ 156:

* Պարսկաստանում նահանգապետը նաև տվյալ նահանգի գլխավոր դատավորն էր:

[2] Տե՛ս **В. Триа,** *Кавказские социал-демократы в Персидской революции, с. 114.*

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **Михаил Сергеевич Иванов,** *Очерки истории Ирана, с. 235*: Մի այլ աղբյուրում (**«Դրոշակ»**, № 2-3, փետրվար-մարտ, 1909, էջ 27-28) նշված է, որ միապետականներից զոհվել էր 50-ի չափ մարդ:

մարտիկները խուժում են ներս և, տալով երկու զոհ, գրավում են պալատը: Այնուհետև նրանք գավթում են քաղաքի զինապահեստը: Նահանգային կառավարչությունը ցրվում է և իշխանությունը քաղաքում ու նահանգում անցնում է Գիլանի նահանգային անջումենի ձեռքը: Գիլանցի հեղափոխականների հիմնական պահանջներն էին սահմանադրության վերականգնումը, մեջլիսի հրավիրումը և Մահմեդ Ալի շահի գահազրկումը[1]:

Նահանգապետությունը ցրելուց հետո Եփրեմն իր մարտական խմբի անդամներից մեկին՝ վրացի Վելիկոյին հանձնարարում է գտնել և ահաբեկել Գիլանի նահանգապետ Սարդար Աֆխամին (իսկական անունը՝ Աղա Բալախան): Առաջադրանքը կատարվում է արագ:

Փետրվարի 10-ին Ռեշտն ամբողջովին հեղափոխականների ձեռքում էր[2]:

Քաղաքն արդեն գրավված էր, երբ ապստամբներին միացավ գիլանցի խոշոր կալվածատեր Սիփահդարը (Ֆաթհոլլահ խան), որ Գիլանում և Մազանդարանում մի քանի հարյուր գյուղ ուներ: Ինչպես հայտնի է ընթերցողին, Ատրպատականի նահանգապետ Էյն Դովլեի հետ նա մինչ այդ գլխավորում էր կառավարական բանակը, որը 1908-ի ամռան վերջերին ու աշնանը բազմիցս հարձակումներ էր կատարել Թավրիզի վրա՝ հեղափոխական ուժերը ջախջախելու համար: Սակայն 1909 թ. սկզբներին անձնական հաշիվներով ընդհարվել էր Մահմեդ Ալի շահի հետ, դարձել նրան ընդդիմադիր, մտել սահմանադրականների շարքերը և Թեհրանից հեռացել Գիլանի իր կալվածքները: Ռեշտի բնակչությունը փետրվարի 15-ին նրան Գիլանի նահանգապետ հայտարարեց: Ռեշտը դարձավ գործողությունների խարիսխ Հյուսիսային Պարսկաստանի հեղափոխական սահմանադրական բանակի համար[3]:

Ռեշտի անջումենի վերականգնումից անմիջապես հետո

---

[1] Տե՛ս **Михаил Сергеевич Иванов,** *Очерки истории Ирана, с. 235.*

[2] Տե՛ս **М. Павлович, С. Иранский**, *Персия в борьбе за независимость, с. 50.*

[3] Տե՛ս նույն տեղում:

սկսվում են աշխատանքներ քաղաքի պաշտպանությունն ամրապնդելու ուղղությամբ*:

Այս առաջին հաղթանակը ցնծություն առաջ բերեց Ռեշտի բնակիչների մեծ մասի մոտ: Բայց քիչ չէր նաև հոռետեսների թիվը, որոնք մտածում էին, թե մի խումբ երիտասարդների կատարածն անհեռանկար արկածախնդրություն է, որը հակասահմանադրական ուժերը շատ շուտով կճնշեն: Իսկ քաղաքի նշանավոր միապետականներն երկյուղած սպասում էին իրադարձությունների հետագա զարգացմանը:

Բայց Եփրեմն ուշադրություն չէր դարձնում ո՛չ հոռետեսների տագնապներին և ո՛չ էլ միապետականների խուլ դժգոհությանը: Ռեշտի հանդուգն գործողության հաջողությունից հետո, նա, առանց ժամանակ կորցնելու, իր շուրջն է համախմբում քաղաքի ըմբոստ տարրերին և նրանց զինում զինանոցից հանված հրացաններով: Կարևոր էր, որ ռուսական բանակում ծառայած, բայց այդ ժամանակ Ռեշտում հաստատված կովկասահայ հրահանգիչների միջոցով նա կազմակերպեց նրանց մարզման գործը:

Ոգեշնչված Ռեշտում տարած հաղթանակով, Եփրեմն իր համալրված ջոկատով շարժվում է դեպի Էնզելի: Ջհանդիպելով որևէ դիմադրության, ապստամբները մտնում են քաղաք[1]: Ժողովուրդը ուրախությամբ է դիմավորում հեղափոխության մարտիկներին: Այստեղ նույնպես ծավալվում է քարոզչական աշխատանք, հրավիրվում է համաքաղաքային հանրահավաք, որտեղ ճառով հանդես է գալիս Եփրեմը, ժողովրդին բացատրում, որ

---

* Ռեշտում տեղի ունեցածը խեղաթյուրված է ներկայացված խորհրդային պատմական գրականության մեջ: Եփրեմ Դավթյանի կատարածը վերագրված է ուրիշների, նա ներկայացված է որպես մի արկածախնդիր: Օրինակ՝ *"История Ирана"* (*«Իրանի պատմությունը»*) գրքում (էջ 282) կարդում ենք, որ իբր, Ռեշտում 1908 թ. փետրվարի 8-ին տեղի ունեցած ապստամբությունը կազմակերպել էր այնտեղ մինչ այդ ստեղծված «Սաթթար խանի անվան կոմիտեն», որը «գտնվում էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ազդեցության տակ» և որին որպես հակակշիռ, ստեղծվել էր հայ դաշնակցականների խումբը՝ Եփրեմ Դավթյանի գլխավորությամբ:

[1] Տե՛ս **Николай Матвеевич Лавров**, *Турция и Иран в 1870-1918 годах, Москва, 1950, с. 42.*

միապետականները կատաղի պայքար են սկսել սահմանադրությունը վերացնելու համար, որովհետև դա սահմանափակում է հասարակ ժողովրդին ճնշելու ու կողոպտելու շահի, կառավարական պաշտոնյաների, կալվածատերերի ու վաշխառուների իրավունքները: Էնզելիի արի և ըմբոստ երիտասարդներից մի քանիսը զենք են վերցնում և համալրում Եփրեմի խմբի շարքերը, որի շնորհիվ կռվող մարտիկների թիվը հասնում է 40-ի: Բացի այդ, տեղի հեղափոխական երիտասարդներից կազմակերպվում են զինված փոքր խմբեր, որոնց հանձնարարվում է քաղաքում կատարել ոստիկանական պարտականություններ՝ պաշտպանել քաղաքացիների անդորրը քրեական տարրերից:

Դրանից հետո Եփրեմն իր խմբով վերադառնում է Ռեշտ: Այստեղ նա պատրաստություն է տեսնում իր 40 զինյալներով շարժվելու ճանապարհի վրա գտնվող Ղազվին քաղաքի վրա: Պարսիկ ընկերները հանդես են գալիս այդ մտադրության դեմ, գտնելով, որ ունեցած աննշան ուժերով նման գործողություն ձեռնարկելն անօրինակ հանդգնություն է: Նրանք Եփրեմին խորհուրդ են տալիս ամրացնել Ռեշտի պաշտպանությունը և նախապատրաստվել դիմադրելու կառավարական զորքերին, որոնք անխուսափելիորեն գալու են քաղաքի վրա[1]:

Եփրեմը կտրականապես հանդես է գալիս պարսիկ ընկերների առարկության դեմ, ասելով, որ շահի ուժերի դեմ կռվելու համար հարկավոր է ոչ թե քանակ, այլ՝ որակ: Նա բացատրում է, որ փակված մնալ քաղաքում, նշանակում է հակառակորդին հնարավորություն տալ շրջապատել քաղաքը՝ դրանից բխող բոլոր վտանգավոր հետևանքներով[2]: Եվ նա անմիջապես ձեռնարկում է իր հանդուգն ծրագրի իրագործմանը:

Գիլանի նահանգում պարսկական հեղափոխության երկրորդ ճակատի բացումը ջերմորեն ողջունեցին Դաշնակցության մամուլի բոլոր օրգանները տարբեր երկրներում: Կ. Պոլսում հրատարակվող «Ազդակ» շաբաթաթերթը գրում էր. «Անարժան միապետ մը կ'իշխէ վեց հազար տարուան ազգի մը վրայ:

---

[1] Տե՛ս **Ց. Էլմար,** Եփրեմ, էջ 242:

[2] Տե՛ս նույն տեղում:

Բոլորը պէտք է միանան իշխանութիւնը անոր ձեռքէն առնելու համար: Ուրեմն՝ դէպի գործ»: Դիմելով պարսիկներին, թերթը կոչ էր անում. «Կատարեցէ՛ք ձեր պարտականութիւնը. բոլոր տիեզերքը պիտի հիանայ ձեր վրայ եւ դուք անջնջելի յիշատակներ պիտի թողուք պատմութեան մէջ ... Թող ամէն կողմէ պատրաստուին կռուելու համար բռնակալին դէմ ... Պիտի վախնայի՞ք այն պահուն որ բոլոր ազգերը ձեր վրայ յառած են իրենց աչքերը: Տեսէ՛ք ինչ փառք վաստակեցան Սաթթար Խան, Պաղր Խան եւ Դաւրէժի բոլոր քաջարի ռազմիկները: Շտապեցէ՛ք անոնց օրինակին հետեւելու, որպէս զի անոնց պէս արժանի ըլլաք Պարսկաստանի[ն]»[1]:

ՂԱԶՎԻՆԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Քրիստոնյաներից կազմված իր սակավաթիվ խմբով՝ 10 հայ և 15 վրացի, Եփրեմը 1909 թ. փետրվարի 23-ին դուրս է գալիս Ռեշտից և շարժվում Ղազվինի ուղղությամբ: Ճանապարհին խումբը կանգ է առնում այդ քաղաքից մոտ 120 վերստ հեռավորության վրա գտնվող Ռութբարի կիրճում և այնտեղ մնում ավելի քան երկու շաբաթ: Այդ ընթացքում խմբի անդամների թիվը հասնում է 70-ի[2]: Առաջ շարժվելով, Եփրեմի ջոկատը Ղազվինից 45 վերստ հեռավորության վրա, Յուզբաշ-չայ բնակավայրում, հանդիպում է մեծաքանակ քրդական միապետական ուժերի՝ կառավարության ներկայացուցիչ, Ղազվինի քրդական էյալեթի ցեղապետ Ղիաս Նիզամ խանի որդի Նասեր խանի գլխավորությամբ: Սկզբում վերջինս հաջողում է կազմակերպել դիմադրություն, բայց, ի վերջո, մի քանի ժամ տևած կռվում միապետականները ջախջախվում են, կենդանի մնացածները ցրվում են զանազան կողմերի վրա:

Նկատենք, որ Եփրեմի կռվի մարտավարության առանձնա-

---

[1] **«Ազդակ»**, № 17, 11 (24) ապրիլի 1909 թ.:

[2] Տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (31), մայիս, 1925, էջ 28:

հատկությունը միշտ եղել է նախահարձակ լինելը: Նա թշնամուց պաշտպանվելու մասին երբեք չէր մտածում. նրա կռվելու մարտավարությունից առաջինը գրոհելն էր: Այդ էր պատճառը, որ նա հետագայում էլ միշտ խույս էր տալիս իր գլխավորած մեծ կամ փոքր զորամասը անվստահելի տարրերով ծանրաբեռնելուց:

Գնալով առաջ, Եփրեմն իր ջոկատով կանգ է առնում քաղաքից 35 վերստի վրա գտնվող Խարզան գյուղում: Հետախուզությունը հաղորդում է, որ ջոկատի վրա գալիս է հակառակորդի ավելի քան 400 հոգուց բաղկացած կառավարական մի զորամաս: Առանց սպասելու միապետականների մոտենալուն, Եփրեմն իր մարտիկներին տանում է գրոհի: Հանկարծակիի եկած հակառակորդը թեև չի հասցնում տեղանքում բացազատվել, բայց, ուշքի գալով, ուժգին դիմադրություն է ցույց տալիս: Կռիվը տևում է չորս ժամ, որի ընթացքում Եփրեմը վիրավորվում է ազդրից, բայց շարունակում է վարել մարտը: Միապետական զորքը նահանջում է՝ կռվի դաշտում թողնելով 58 սպանված և 48 վիրավոր: Հեղափոխական ջոկատը մտնում է Խարզան: Այս հաղթանակից հետո Եփրեմի ջոկատի թիվը մեծանում է՝ հասնելով 90 հոգու. 40 հայ, 30 պարսիկ, 20 վրացի[1]:

Մի ամիս Խարզանում մնալուց և ամբողջ շրջանը գրավելուց հետո Եփրեմն առաջ է շարժվում և բանակում Ղազվինից 21 վերստ հեռավորության վրա գտնվող Աղա-Բաբա գյուղում: Այստեղից նա լուր է ուղարկում Ղազվինի վարչախմբի ղեկավարին, այնտեղ տեղակայված զորքի հրամանատար Սալար Ֆաթեհին (նույն ինքը՝ Սարդար Ֆաթեհ, իսկական անունը՝ Միրզա Ալի խան Սարթիփ), քաղաքից դուրս 400 ձիավորով բանակած Սարդար Մոզաֆֆարին, նաև այնտեղ ապաստանած Ղիաս Նիզամին և պահանջում է քաղաքը հանձնել առանց կռվի: Եփրեմը պահանջել էր. «Ես գալիս եմ քաղաքի վրայ եւ ձեզ առաջարկում եմ՝ հեռացէ՛ք կամ հաշտուէ՛ք ինձ հետ»[2]: Միապետական ղեկավարները Եփրեմից խնդրում են պատասխանի համար տալ

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (31), մայիս, 1925, էջ 29:

[2] **Միքայէլ Վարանդեան,** Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 284-285:

երեք օր ժամանակ՝ հույս ունենալով ուրիշ տեղերից օգնություն ստանալ: Այդ նույն ժամանակ Ղազվինում ռուսաց հյուպատոս Ռոմանովը միապետական ղեկավարությանը խորհուրդ է տալիս կտրականապես մերժել Եփրեմի պահանջը:

Եփրեմը մտածել անգամ չէր ուզում երեք օր սպասելու մասին և նախապատրաստվեց գրոհելու քաղաքի վրա: Նա իր ջոկատը բաժանում է երեք մասի. առաջին խումբը, ճեղքելով քաղաքի՝ Ռեշտին դիմահայաց դարպասը, պետք է մտներ ներս և անմիջապես հարձակվեր Ղազվինի դարխանեի չենքի վրա, որն իր մեծությամբ ու ամրությամբ գերազանցում էր Ռեշտի դարխանեի շինությանը, երկրորդը գրոհելու էր քաղաքից Թեհրանի կողմը դուրս եկող դարպասը, երրորդը՝ քաղաքի մերձակայքում տեղակայված Մասեհ խանի հրամանատարության տակ գտնվող 300 ձիավորների վրա:

Ապրիլի 21-ի երեկոյան ժամը 8-ին Եփրեմն իր 90 հոգանոց* ջոկատով գրոհում է քաղաքը, որը պաշտպանվում էր ավելի քան 2000 զինվոր ունեցող զորքով[1]: Քաջերը «Զենդերադ մաշրութիե»** աղաղակելով, ներխուժում են քաղաք: Դարխանեն պաշտպանող հանկարծակիի եկած պահակազորը, ուշքի գալով, սկսում է դիմադրել: Մարտիկներն այրում են նահանգապետի պալատի փայտյա դարպասները և խուժում բակ: Ջոկատի մյուս երկու մասերը նույնպես հանդիպում են ուժգին դիմադրության:

Դարխանեում թողնելով պահակախումբը, Եփրեմը կտրիճների մի փոքր խմբով շրջանցում է Ղազվին-Ռեշտ խճուղին և ուղղություն է վերցնում դեպի «Ռեշտի դարպասը», որի մոտ գտնվող քարվանսարայում բանակել էր դարաղաղցիներից կազմված կառավարական խոշոր մի ջոկատ՝ Մասեհ խանի գլխավորությամբ: Օգտագործելով հարմար պահը, այն է՝ Մահմեդ Ալի շահի ծննդյան տարեդարձի առթիվ կազմակերպված տոնախմբությունը, հեղափոխականներն անմիջապես հարձակ-

---

* Մի այլ աղբյուրում՝ 200 հոգի (տե՛ս **М. Павлович, С. Иранский**, Персия в борьбе за независимость, с. 52):

[1] Տե՛ս **Միքայէլ Վարանդեան,** Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 284-285:

** Կեցցե՜ սահմանադրությունը:

ման են անցնում: Ուշքի եկած միապետականները հասցնում են կատաղի դիմադրություն ցույց տալ: Մի պահ նույնիսկ թվում էր, թե հաղթությունը կարող է թեքվել միապետականների կողմը, բայց հեղափոխականներն օգտագործում են իրենց փորձված զենքը՝ ձեռնառումբերը, թեև այդ օրվա կռվում նրանք հաջողության չեն հասնում: Հաջորդ օրը, առավոտյան կողմ, հավաքելով իրենց ուժերը, հակամիապետականները նորից գրոհում են դարաղաղցիների ջոկատի վրա, որը համառ դիմադրությունից հետո ստիպված անձնատուր է լինում: Կեսօրին կառավարական սարբազները նույնպես հանձնվում են՝ սպիտակ դրոշակ բարձրացնելով:

13 ժամ տևած ճակատամարտը պսակվեց ապստամբների լիակատար հաղթանակով: Դա 1909 թ. մայիսի 4-ն էր:

Հեղափոխականները Ղազվինում ընդհանուր հաշվով գրավել էին 4 թնդանոթ, 7 հազար հրացան, մեծաքանակ փամփուշտ: Հակառակորդը տվել էր 70 սպանված, գերի էր ընկել չորջ 1000 զինյալ: Մնացածները փախչելով ապաստանել էին շրջակա քրդական աշիրեթներում[1]: Գերի ընկածների թվում էին Մասեհ խանը և Ղազվինի նահանգապետ Ղասեմ խան Ամիրթումանը: Վերջինս գնդակահարվեց 1909 թ. հունիսին Թեհրանում տեղի ունեցած հակահեղափոխական հեղաշրջմանը գործուն մասնակցություն ցուցաբերած լինելու համար:

Քաղաքի համար կռվում Եփրեմի ջոկատից սպանվել էր երեք հոգի՝ արցախցի հայ մարտիկ Իվանը, մի վրացի և մի պարսիկ:

Ղազվինը գրավելուց մի քանի օր հետո միայն Ռեշտից այդտեղ եկավ Սիփահղարը:

Պետք է ասել, որ Ղազվինի մերձակայքում բանակած ռուսական զորքը որևէ միջամտություն չարեց երկու կողմերի կռվին: Այդ հանգամանքը առիթ տվեց տարբեր մեկնաբանությունների: Շատերը նույնիսկ կարծում էին, որ ռուսական հրամանատարությունն իր զորքի կորուստներից է խուսափում՝

---

[1] ***Տե՛ս Г. В. Шитов,*** *Персия под властью последних Каджаров, с. 127.*

առաջիկա օրերին ամբողջ կազմով դեպի Թեհրան չարժվելու համար:

Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի՝ այդ օրերին տեղի ունեցած նիստերից մեկում լորդ Լիվինգտոնը անհանգստություն էր հայտնել Ղազվինում ռուսական զորքի առկայության համար և կառավարությունից պահանջել էր Պետերբուրգին խորհուրդ տալ չմտածել Թեհրան մտնելու մասին[1]:

Եփրեմն իր ջոկատով Ղազվինում մնում է մոտ երկու ամիս: Այդ ժամանակամիջոցում նա հիմնականում զբաղված էր շրջակայքի միապետական հրոսակախմբերին զինաթափ անելով: Ղազվինից փախած և Նարգի ու Սիսդովի գյուղերում ամրացած շահսևանները հրաժարվել էին զինաթափ լինել: Եփրեմն այնտեղ է ուղարկում հայ մարտիկների մի խումբ, որը թեժ կռվից հետո զինաթափում է նրանց:

Ղազվինում Եփրեմի գտնված ժամանակ կտրուկ բարձրանում է նրա ջոկատի անդամների թիվը՝ հասնելով մի քանի հարյուր հոգու:

Իրար հաջորդող դեպքերի ու իրադարձությունների գահավեժ ընթացքը երկրով մեկ մեծ արձագանք ունեցավ, իսկ մայրաքաղաքում ցնցում ու խուճապ առաջ բերեց: Ոչ ոք չէր սպասում, թե միապետության համար երկրում առաջ կգա Թավրիզից ավելի լուրջ սպառնալիք, որը ծագել էր հանկարծակի և հուժկու թափով, այն էլ՝ մի քանի խիզախների ինքնաբուխ նախաձեռնությամբ:

Իշխանությունների համար նոր վտանգն այնքան իրական ու սպառնալից էր, որ Մահմեդ Ալի շահը 1909 թ. ապրիլի 23-ին ստիպված ստորագրեց մի հրովարտակ, որով խոստանում էր վերականգնել մեջլիսը և երկիրը ղեկավարել սահմանադրական օրենքներով: Միաժամանակ, նրա կարգադրությամբ ստեղծվեց հատուկ հանձնախումբ, որը երկու կողմերին հաշտեցնելու համար նրանց հետ պետք է բանակցություններ սկսեր: Բայց շահին հավատացողներն այլևս քիչ էին, քանզի նախկինում նա բազմիցս դրժել էր իր տված խոստումները: Կասկած չկար, որ այս

---

[1] Տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 3865, 27 հունիսի (10 հուլիսի) 1909 թ.:

անգամ էլ ինքնակալն անկեղծ չէ և վիճակն իր համար չտկվելու դեպքում անմիջապես հրաժարվելու է տված երդում-հավաստիքից:

Դրանով Մահմեդ Ալին նպատակ ուներ թուլացնել հեղափոխականների զգոնությունը: Քիչ ժամանակ պահանջվեց, որպեսզի ինքնակալի այդ խաղը պարզ դառնա բոլորի համար: Նախ լուրեր հասան, որ Գիլանից եկող վտանգը կանխելու համար շահի կարգադրությամբ կառավարական զորքը ձեռնարկել է ամրապնդելու Ղազվինի և Թեհրանի միջև ընկած Քերեջի կիրճը: Այնտեղ էր տեղափոխվել հրետանի և կուտակվել ռազմամթերքի մեծ պաշար: Հետո հայտնի դարձավ, որ Մահմեդ Ալին Սիփահդարին առաջարկել է Մազանդարանի նահանգապետի պաշտոնը՝ նրան հրապուրելու և ապստամբներից կտրելու համար:

Ստեղծվեց բավական անորոշ վիճակ: Հեղափոխականները կանգնած էին ընտրության առաջ՝ կա՛մ Ղազվինի գրավումով ավարտել իրենց արշավը, կա՛մ շարունակել շարժվել դեպի մայրաքաղաք Թեհրան:

Դրությունն ավելի ծանրացավ այն բանից հետո, երբ արշավախմբի կազմում գտնվող կովկասցի ոչ-հայ հեղափոխականների մեծ մասն սկսեց աստիճանաբար վերադառնալ Ռեշտ՝ հայրենիք մեկնելու համար: Վրացի, ռուս, թուրք 60 կովկասցիներից մայիսի կեսերին արշավախմբում մնացել էին 8-9 հոգի, որոնց ցարական իշխանությունները հետապնդում էին ձերբակալելու և խիստ պատիժներ տալու համար[1]:

Գիլանյան արշավախմբից կովկասցիների մի մասի հեռանալը ձեռնտու էր ցարական իշխանություններին: 1909 թ. մայիսի 23-ին Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովը Պարսկաստանից ստանում է հետևյալ հեռագիրը.

«... Ազգային ջոկատների դուրսբերումը Ռեշտից սկսվեց: Մի քանի կովկասցիներ արդեն լքել են Գիլանը: Ցանկալի կլիներ, որ

---

[1] ***Տե՛ս Антон Кириллович Келенджеридзе**, Серго Орджоникидзе – журналист, Институт ЦК КП Грузии, "Мерани", Тбилиси, 1969, с. 74.*

մեր Կովկասի իշխանությունները նրանց նկատմամբ չկիրառեին որևէ կարգապահական միջոց, որպեսզի դրանով չխափանվի մնացածների կամավոր վերադարձը հայրենիք: Մեր շահերի համար այդ բոլոր մարդիկ ավելի անվնաս կլինեն Կովկասում, քան Պարսկաստանում»[1]:

Դեպի մայրաքաղաք հեղափոխականների արշավանքը կանխելու համար լայն գործունեություն ծավալեցին Ղազվինի ռուսաց հյուպատոս Ռոմանովը և Թեհրանից եկած, Ռուսաստանի դեսպանատան ներկայացուցիչ Օվսեենկոն: Այն բանից հետո, երբ չհաջողվեց Եփրեմին համոզել, նրանք սպառնացին իրավիճակին ռուսական զորքերի միջամտությամբ: Միաժամանակ նրանք ամեն կերպ ազդում էին Սիփահդարի վրա և այդ գործում հասան որոշակի արդյունքների: Վերջինս տատանվում էր և մտածում հեղափոխականներից հեռանալու մասին, մանավանդ որ կառավարությունը խոստացել էր նրան տալ ոչ միայն Մազանդարանի նահանգապետի, այլև Գիլանի նահանգապետի պաշտոնը[2]: Որսալով պահը, Ռոմանովը և Օվսեենկոն Սիփահդարից պահանջեցին արշավախմբի հայ և վրացի մարտիկներին առանձնացնել պարսկաստանցիներից՝ վերջիններիս հետագա հեղափոխականացումը կանխելու համար: Սիփահդարը հայտնեց, որ դա իր ուժերից վեր է, քանի որ արշավախմբի իրական ղեկավարը ոչ թե ինքն է, այլ՝ Եփրեմը:

Հեղափոխականները չէին կարող չնկատել Սիփահդարի տատանումները: Տեսնելով, որ նա դեմ չէ ընդունելու շահի առաջարկները և նույնիսկ պատրաստվում է գնալ Ռեշտ և ստանձնել Գիլանի նահանգապետի պաշտոնը, «Սաթթար» կոմիտեն և Ղազվինի հեղափոխական կոմիտեն անհրաժեշտ նախազգուշական միջոցներ ձեռնարկեցին: Այդ կոմիտեների որոշումով՝ Եփրեմը պահակներ կարգեց Սիփահդարի վրանի մոտ, որպեսզի նրան բաժանի իրեն ենթակա հեծյալներից: Կոմիտեները նաև հրատարակեցին հատուկ թռուցիկ, որով ազդարարվում էր, որ հյուպատոս Ռոմանովի հետ բանակցություններում Սիփահդա-

---

[1] *"Красный архив"*, т. 2 (105), с. 67.

[2] Տե՛ս նույն տեղում:

ը չի ներկայացրել հեղափոխական ուժերի տեսակետները, ուստի այդ իսկ պատճառով նրա վարած բանակցությունները չեն կարող պաշտոնական համարվել, դրանք եղել են լոկ անձնական չփումներ:

Չնայած կովկասցի հեղափոխականների մեծ մասը վերադարձել էր հայրենիք, բայց Ղազվինում մնացածները և Ռեշտից եկած ու նրանց միացած մարտիկները չարունակում էին հայերի հետ կազմել արշավախմբի առավել մարտունակ ուժը՝ պատրաստ կատարելու նոր առաջադրանքներ:

ԴԵՊԻ ԹԵՀՐԱՆ

1909 թ. հունիսի 14-ին 900 հոգուց կազմած զորքը Ղազվինից շարժվեց դեպի Թեհրան: Զորքի մեջ Եփրեմն ուներ 180 ընտիր մարտիկ[1]: Մնացածը, որ հավաքված էր այլազան տեղերից և հետապնդում էր տարբեր նպատակներ, ենթակա էր Սիփահղարին:

Տեղեկանալով, որ գիլանյան հեղափոխական զորքը Ղազվինից դուրս գալով շարժվում է մայրաքաղաքի վրա, Մահմեդ Ալի շահը միջոցներ ձեռնարկեց կանգնեցնելու նրա ընթացքը: Նա զորահավաքի ենթարկեց իրեն հավատարիմ ռազմուժը և ուղարկեց համալրելու Քերեջի կիրճում գտնվող իր զորամասերի շարքերը: Այս վերջին զորքը հիմնականում տեղակայվեց ռազմական կարևոր նշանակություն ունեցող Քերեջի կամրջի շուրջը: Իր հերթին, նույն ուղղությամբ իր կազակային զորամասն ուղարկեց գնդապետ Լյախովը:

Հյուսիսային կողմից Թեհրան եկող զորամասի փաստացի հրամանատարը Եփրեմն էր: Հաշվի չառնելով միապետական զորքերի կազմի բազմաթվությունը և Թեհրանից եկող սպառնալիքները, նա իր փոքրաթիվ զորամասը նետեց վճռական մարտի: Առաջապահ ջոկատը գլխավորում էր Զարմահալ գավառի Լիվասյան գյուղացի Աբրահամ խան Բախտիարին (Հովակիմյան):

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»,*** *№ 12 (66), հոկտեմբեր, 1930, էջ 156:*

Հեղափոխության զինվորները տասնապատկված եռանդով նետվեցին հակառակորդի վրա, որը կատաղի դիմադրություն էր ցույց տալիս հատկապես Քերեջի կամրջի տարածքում: Այստեղ մարտը կարճ տևեց՝ ընդամենը մեկ ժամ: Միապետական ուժերը պարտություն կրեցին՝ տալով տասնյակ սպանվածներ*: Ապստամբներից զոհվեց հինգ հոգի՝ երկու պարսիկ և երեք հայ՝ ղազախեցի Խեչոն, Թեհրանցի Սմբատը և իգդիրցի Դանիելը[1]:

Չկարողանալով սպառնալից խոսքերով զսպել հեղափոխականներին, ռուսական և բրիտանական կառավարությունները որոշեցին իրադարձությունների վրա ազդել՝ դիմելով գործնական միջոցների:

Սահմանադրականների զորքը դեռ ճանապարհին էր, երբ գնդապետ Լյախովը դիմեց Կովկասի փոխարքային և խնդրեց լրացուցիչ օգնություն ուղարկել՝ այս անգամ Թեհրանի ուղղությամբ: Ստանալով Լոնդոնի համաձայնությունը, ռուսական կառավարությունը 1909 թ. հունիսի 23-ին Էնզելիում ափ է իջեցնում մի զորամաս, որի կազմում էին Լաբինսկի 500 հոգանոց կազակային գունդը, կովկասյան հրաձիգ հետևակ գումարտակը՝ չորս թնդանոթով և ուրիշ ստորաբաժանումներ՝ 2000 սվին ու թուր: Նրա առջև խնդիր էր դրված՝ հայտնվելով հեղափոխական արշավախմբի թիկունքում, նրան սաստել, որպեսզի չկարողանա շարժվել Թեհրանի վրա, դրանով իսկ նաև զսպել ու արգելակել հեղափոխական շարժման հետագա զարգացումը[2]: Այդ նույն ժամանակ, Պարսկաստանի անգլիական գոտում՝

---

* Քերեջի կամրջի տարածքում միապետականների ջախջախման մասին Թեհրանի ռուսական դեսպանությունն անմիջապես հաղորդեց Պետերբուրգ՝ 1909 թ. հունիսի 19 թվակիր զեկուցագրով, ուր օգտագործված էր «ոմն Եփրեմ» բառակապակցությունը: Դա ռուսական պաշտոնական դիվանագիտական փաստաթղթերում Եփրեմի անվան առաջին հիշատակումն էր (տե՛ս *"Сборник дипломатических документов касающихся событий в Персии с 2 ноября 1908 г. по 11 июля 1909 г."*, вып. II, с. 243):

[1] Տե՛ս **Միքայէլ Վարանդեան**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 287:

[2] Տե՛ս **«Հայրենիք»**, № 1 (25), նոյեմբեր, 1924, էջ 71:

Բուշեհրում հանգրվանեց Հնդկաստանից բերված սիփահիներից կազմված բազմաքանակ մի զորամաս:

Բայց այդ գործնական սպառնալիքները նույնպես ի վիճակի չեղան կանգնեցնելու ապստամբների ընթացքը, որոնք նախօրոք լուր ունենալով այդ մասին, արագացնում էին իրենց երթը՝ ուշադրություն չդարձնելով ռուսական զորամասի սպառնալիքներին:

Հասնելով Ղարա Թեփե գյուղ, Եփրեմը տեղեկանում է, որ սահմանադրության կողմնակից բախտիարցիների մի հեծյալ զորք Սարդար Ասադի գլխավորությամբ եկել ու բանակ է դրել Դեչահի մոտ[1]:

Հակաշահական այդ երկու ուժերը միմյանց մասին շատ աղոտ պատկերացում ունեին: Դա բնական էր ամենից առաջ այն իմաստով, որ Ռեչտն ու Իսֆահանը, որտեղից իրենց երթն սկսել էին բախտիարները, միմյանցից հեռու էին մոտ 700 կիլոմետրով:

Իր տեղում ցույց ենք տվել, թե որո՞նք էին այն պատճառները, որ բախտիար ցեղին, ավելի ստույգ՝ նրա մի մասին ոտքի էին հանել Մահմեդ Ալի շահի դեմ՝ Սամսամ Սալթանեի և նրա եղբայր Սարդար Ասադի գլխավորությամբ: Սրանք հաջողել էին իրենց զորքով գրավել Իսֆահանը և նախապատրաստվել հետագա կռիվների:

Բայց եղբայրները բուն Բախտիարիայում ունեին մեծաթիվ հակառակորդներ, որոնց գլուխն էր կանգնած միապետական Ամիր Մոֆախխամը: Այդպիսով, սահմանադրական շարժումների եռուն օրերին բախտիար ցեղը բաժանվել էր երկու հակառակորդ մասի: Առաջինը կռվի ասպարեզ էր մտել նոր կարգեր հաստատելու, երկրորդը՝ հին կարգերը պահպանելու համար:

Այս պայմաններում բախտիար սահմանադրական խաները որոշեցին գնալ ծայրահեղ համարձակ քայլի (ֆր. va banque)՝ շարժվել մայրաքաղաքի վրա և տապալել շահին: Անկախ այն բանից, թե նշված խաներն ինչպիսի՞ որոշակի նպատակներ էին հետապնդում, Թեհրանի վրա նրանց արշավանքն օբյեկտիվորեն

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 1 (25), նոյեմբեր, 1924, էջ 71:*

նպաստելու էր հեղափոխության զարգացմանը:

Սարդար Ասադի գլխավորությամբ գրավելով Իսֆահանը, բախտիարական 1200* հոգանոց զորքը երկու թնդանոթով 1909 թ. հունիսի 4 (17)-ին շարունակեց առաջխաղացումը և հունիսի 10 (23)-ին տիրացավ իսլամական կրոնի չիա ուղղության խոշոր կենտրոններից մեկին՝ Կում սուրբ քաղաքին: Շատ չանցած՝ զորքն ուղղություն վերցրեց դեպի Թեհրան:

Եվ այսպես, երկու հեղափոխական բանակները՝ մեկը Ղազվինից (հյուսիսից), մյուսը՝ Իսֆահանից (հարավից) տարբեր ուղղություններով շարժվում էին դեպի Թեհրան: Գիլանցիների և բախտիարների համատեղ արշավանքի լուրերն արդեն առաջ էին բերել հեղափոխական տրամադրություններ Թալիշում, Համադանում, Ֆարսում, Լուրիստանում, Աստրաբադում, Խորասանում և Պարսկաստանի ուրիշ շրջաններում:

Եթե բախտիարների բանակն իր ճանապարհին չէր հանդիպում լուրջ խոչընդոտների, ապա նույնը չի կարելի ասել գիլանյան բանակի մասին:

Առաջ շարժվելով, Եփրեմի և Սիփահդարի արշավախումբն անհրաժեշտաբար պետք է հաղթահարեր Քերեջի ամրությունները, որոնք պաշտպանում էին ռուս սպայի հրամանի տակ գտնվող պարսիկ կազակները: Վերջիններիս առջև դրված առաջին կարևոր խնդիրը Քերեջ գետի վրայի՝ թնդանոթներով ու գնդացիրներով ամրացված կամրջի պաշտպանությունն էր:

Եփրեմը, իր հետ վերցնելով մի քանի տասնյակ, հիմնականում հայ, խիզախ մարտիկներ, հանկարծակի հարձակվեց կամուրջը պաշտպանող կազակական զորամասի վրա: Մարտը տևեց մեկ ժամից էլ պակաս: Տալով չորս սպանված, կազակային զորամասը նահանջեց Շահաբադ՝ հասցնելով իր հետ տանել թնդանոթներն ու գնդացիրները[1]:

---

* Ուրիշ աղբյուրում (օր.՝ տե՛ս **«Հայրենիք»**, № 1 (25), նոյեմբեր, 1924, էջ 71)՝ 2000 հոգանոց:

[1] **Տե՛ս Ахмед Кесрави,** *История конституционного движения в Иране, т. 2, Москва, с. 595-597.*

Հենց այդ պահին էր, որ Քերեջի կամրջին մոտեցան բախտիար հեղափոխականների առաջապահ ջոկատները՝ Մոնթասեր Դովլեի, Մոիզ Սոլթանի (Աբդոլ Հասան խան) և այլոց հրամանատարությամբ, որոնք նույնպես շտապում էին Թեհրան[1]:

Իր հետ վերցնելով 40 հայ մարտիկի և լավ կռվող պարսիկներից 10 հոգու, Եփրեմը հունիսի 21-ի ուշ երեկոյան հարավային կողմից գրոհում է Շահաբադի վրա: Պարսկական կազակներից և շահական կարգերի ջերմեռանդ կողմնակից բախտիարներից բաղկացած միապետականները դիրք էին մտել գյուղի լավ ամրացված քարվանսարայում: Սկսվեց թեժ կռիվ, որը տևեց մինչև հաջորդ օրվա ժամը 10-ը: Երբ միապետականներն այլևս չէին կարողանում դիմադրել և նեղն ընկած մտածում էին փախչելու մասին, այդ նույն պահին օգնության է հասնում կազակների մի ուրիշ ջոկատ՝ թնդանոթով ու գնդացիրներով:

Շուտով Եփրեմին լուր են բերում, թե ջոկատի պարսիկ հեղափոխական մարտիկները նահանջել են՝ իրենց հետ տանելով միակ թնդանոթի արկերը, որպեսզի թնդանոթը թշնամու ձեռքն ընկնելու դեպքում վերջինս չկարողանար դա գործածել, չհասկանալով, որ դրա համար ուղղակի պետք է հանվեր թնդանոթի բանալին: Այդ տեսնելով, Եփրեմի մարտիկները, թողնելով թնդանոթը, նահանջում են, որի ընթացքում զոհվում է հայ մարտիկներից մեկը՝ Մաղաթը[2]: Մնալով հակառակորդի կարկտատարափ գնդակների տակ, Եփրեմը ջոկատի մարտիկներին հրամայում է արագ նահանջել Քերեջ, իսկ ինքը հինգ հոգով շարունակում է մարտը: Տեսնելով, որ կռիվն անօգուտ է, նա թնդանոթը փչացնում է՝ հանելով բանալին ու պտուտակները և իր չորս մարտիկների հետ նույնպես նահանջում է Քերեջ:

Գիլանի արշավախմբի մղած կռիվների ամփոփ նկարագրության մեջ անդրադառնալով այդ դեպքին, Եփրեմը հիշատակում է, որ «հաղթանակած» միապետականները վերցնելով կամավորների՝ դաշտում թողած արդեն անպետք թնդանոթը, անմիջապես փոխադրում են Թեհրան և «կազակների ու ստահակ-

---

[1] Տե՛ս **Ахмед Кесрави,** *История конституционного движения в Иране, т. 2, с. 598-599.*

[2] Տե՛ս **Ց. Էլմար**, Եփրեմ, էջ 254-255:

ների մի ստուար բազմութեամբ շրջապատած սկսում են հանդիսաւոր շուքով պտտել Թեհրանի հրապարակներում ու փողոցներում եւ սադրանք անում, միամիտ ժողովրդին հաւատացնելով, որ յեղափոխականներին ջարդեցինք եւ բոլորին էլ փախցրինք»[1]:

Բայց կրած անհաջողությունը չընկճեց հեղափոխական արշավախմբին, որն իր ուժերը վերականգնելով, կրկին առաջացավ դեպի մայրաքաղաք:

Հունիսի 23-ին պարսկական միապետական բանակի 300 արաբ զինվորներ Թեհրանի ճանապարհին անձնատուր եղան Եփրեմին[2]:

Թեհրանը գրավելու հեղափոխականների անկոտրում կամքը և համառությունը տագնապի մատնեցին շահին, նրա շրջապատին, ինչպես նաև մայրաքաղաքում Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի դիվանագիտական ներկայացուցչություններին: Դա էր պատճառը, որ վերջիններս հեղափոխականների մոտ շտապ ուղարկեցին մի քանի դիվանագետներ, որոնք պետք է փորձեին նրանց հետագա առաջխաղացումը կանգնեցնել:

Սկսած բանակցությունների ժամանակ հեղափոխականներն առաջ քաշեցին մի շարք պահանջներ. երկրից դուրս բերել ռուսական և թուրքական զորքերը, վերականգնել և ընդլայնել մեջլիսի ու անջումենների իրավունքները, ստեղծել միասնական, կենտրոնացված բանակ և այլն: Ինչպես և սպասելի էր, այդ պահանջներից որևէ մեկը մայրաքաղաքից եկած պատվիրակները չընդունեցին:

Բանակցությունների ձախողումից հետո Եփրեմը 50 հոգանոց իր ջոկատով հունիսի 24-ին Քերեջից առաջ է շարժվում[3]: Ղարա Թեփեից ոչ հեռու ջոկատն ընդհարվում է 600 հոգուց բաղկացած մի զորամասի հետ: Կատաղի կռիվը տևում է մինչև կեսօր: Հեղափոխականները հաղթանակ են տանում: Ջոկատից

---

[1] Տե՛ս **Ց. Էլմար**, Եփրեմ, էջ 255:

[2] Տե՛ս **«Ախուրեան»**, № 47, 1 հուլիսի 1909 թ.:

[3] Տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (31), մայիս, 1925, էջ 33:

զոհվում են երկու հայ՝ Խեչոն և կովկասցի Մամիկոնը, երկու պարսիկ և մեկ վրացի, վիրավորվում է 10 հոգի[1]:

Եփրեմը և նրա մարտիկները չգիտեին, որ գործ են ունեցել հակահեղափոխական բախտիարների հետ, որոնք նահանջելով, կարողանում են արագ վերախմբավորել իրենց չարքերը, բայց համոզված լինելով, որ չեն կարող նորից դեմ-հանդիման կռվի դուրս գալ, դիմում են նենգության. կարմիր դրոշակով մոտենալով Եփրեմի ջոկատին, նրանք ներկայանում են որպես Սարդար Ասադի մարդիկ, հավատացնելով, որ իրենց զորքը 15 վերստ հեռավորության վրա արյունալի կռիվ է մղում կառավարական զորքերի դեմ: Զորամասի մարտիկները մի պահ թուլացնելով աչալրջությունը, «բախտիար հեղափոխականներին» թույլատրում են ընդհուպ մոտենալ և մխրճվել իրենց չարքերը: Բանից անտեղյակ մարտիկները, հրացանները մի կողմ դրած, հանգրստանում էին: Եվ ահա «հյուրերը» հանկարծակի սկսում են զինաթափել նրանց, միաժամանակ հարցուփորձել, թե որտեղ է գտնվում իրենց հրամանատարը*: Եփրեմի ջոկատի հրամանատարներից Աբրահամ Հովակիմյանը, որը Բախտիարիայից լինելով, տիրապետում էր բարբառին**, նրանց խոսակցությունից գլխի է ընկնում, որ գործ ունեն խարդախ թշնամու հետ: Այդ մասին նա անմիջապես տեղեկացնում է Եփրեմին, որը վայրկյանապես հանելով «Մաուզերը», կրակ է բացում բախտիար միապետականների վրա: Նրան հետևում են կողքին գտնվող մարտիկները և փոթորկալի կրակ տեղում: Փախչելով, միապետական բախտիարները չուրջ 60 դիակ են թողնում: «Այդ միջոցին մեզ հետ կուում էին 600 հոգի, իսկ մենք 50 հոգի էինք»[2],- հիշա-

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»,** № 7 (31), մայիս, 1925, էջ 33:

* Հետո իմացվեց, որ Մահմեդ Ալի շահը իր զինվորներին հեղափոխականների դեմ կռվի ուղարկելիս խոստացել էր Եփրեմին անձամբ կամ նրա գլուխը բերողին տալ 10.000 թուման պարգև (տե՛ս **«Հայրենիք»,** № 7 (31), մայիս, 1925, էջ 33):

** Հենց այդ պատճառով Աբրահամը հայտնի էր «Բախտիարի» մականունով:

[2] **Ց. Էլմար**, Եփրեմ, էջ 259:

տակել է Եփրեմը Գիլանի արշավախմբի մարտերի ամփոփ նկարագրության մեջ:

Իսկ այդ ժամանակ հեղափոխական բախտիարների զորքի հիմնական մասը Սարդար Ասադի գլխավորությամբ արդեն հասել էր Թեհրանի հարավ-արևմտյան մասում գտնվող Շահրիար ավանը և պատրաստվում էր անցնել Բաղամաք: Շուտով Քերեջի կողմից գալով, զորքի հիմնական ուժերին միացավ բախտիարական առաջապահը:

Օգտվելով կարճատև դադարից, Սարդար Ասադը 100 ձիավորով գալիս է տեսակցելու Եփրեմին: Սակայն մինչև տեղ հասնելը տեղի է ունենում մի տհաճ թյուրիմացություն: Եփրեմի ջոկատի մոտ հայտնվում է բախտիարների մի ուրիշ խումբ: Գիլանի արշավախմբի ղեկավարներն ընդհանուր գծերով գիտեին բախտիար ցեղի ներսում գոյություն ունեցող առճակատումների մասին, բայց չէին կարող զատել բարեկամը հակառակորդից, քանի որ նրանք ամենքը խոսում էին նույն բարբառով, կրում նույն հագուստն ու զենքը: Կարծելով, թե եկողները նույնպես միապետականներ են, որ եկել են կատարելու նոր արյունահեղություն, Եփրեմի տղաները կրակ են բացում և սպանում յոթ հոգու, որոնցից չորսը լինում են նշանավոր խմբապետներ և հայտնի խաներ: Պարզվում է, որ այս անգամ ջոկատին մոտեցել են Սարդար Ասադի սահմանադրական բանակի զինյալները: Բախտիարները վերցնում են իրենց զոհերը և վերադառնում իրենց բանակը՝ վրեժխնդրությամբ լցված[1]:

Եփրեմի խմբապետներից մեկը հետագայում վերհիշել է.

«... Մենք սպասում էինք լուրջ բարդութիւնների այս արիւնահեղ միջադէպի պատճառով, բայց բարեբախտաբար յաջորդ օրն իսկ ստացւում է Սարդար Ասադի մի նամակը՝ ուղղուած Սիփահդարին, հետեւեալ բովանդակութեամբ.

«Խնդրում եմ իմ կողմից յայտնեցէ՛ք Եփրեմին եւ հայ յեղափոխականներին, որ տեղի ունեցածը շատ ցաւ ու կսկիծ պատճառեց ինձ, բայց հասկանում եմ, որ այն եղել է թիւրիմացու-

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (31), մայիս, 1925, էջ 33:

թեան արդիւնք, անգիտակցաբար: Ուստի խնդրում եմ պատահածը բոլորովին մոռացութեան տալ մեր եւ ձեր կողմից, որովհետեւ այդ է պահանջում ներկայ մոմենտում մեր վեհ գործի շահը՝ միահամուռ ոյժերով յարձակումը Թեհրանի վրայ: Կարծում եմ՝ Եփրեմը նկատի ունենալով ընդհանուր գործը եւ մեր նպատակը, չի մերժի իմ խնդրանքը, որով կանխապէս յայտնում եմ իմ շնորհակալութիւնները»[1]:

Եփրեմի մարտիկներն ուրախ էին խնդրի այսպես բարեհաջող կարգավորման համար: Նրանք առաջ չարժվեցին դեպի Բաղամաք:

Հակառակորդը նահանջելով ապաստանել էր բնական ամրութիւններով լավ պաշտպանված Բաղամաքում: Թեթեւ մի հարձակումով Եփրեմի ջոկատը նրան դուրս է մղում այդտեղից:

Եփրեմը և Սարդար Ասադը հանդիպում են Ղարա Թեփեում: Փոխադարձ ծանոթությունից հետո նրանք նստում են խորհրդակցության: Բախտիարները ներկա էին մեծ պատվիրակութեամբ, գիլանցիներից մասնակցում էին Եփրեմը, Աբրահամ խանը և մի քանի ուրիշ դաշնակցական կամավորներ՝ խմբապետեր ու զինվորներ: Այդ առաջին հանդիպման ժամանակ, Աբրահամ խան Բախտիարիի վկայությամբ, դիմելով Եփրեմին, Սարդար Ասադն ասել էր. «Հայերը մեր եղբայրներն են, մեր սիրելիները, մեր աչքի լոյսը: Այն գնահատելի աջակցութիւնը, որ նրանք անում են մեզ յանուն սահմանադրական կարգերի, երախտագիտութեամբ է լցնում մեր սրտերը: Նոյնանման պայմաններում հազիւ թէ մենք այդպիսի անկեղծ օգնութիւն հասցնէինք նրանց»[2]:

Հենց այստեղ, խորհրդակցության մասնակից բոլոր բախտիարցիները երդվում են, որ հայերին միշտ ընդունելու են իբրև հարազատ եղբայրների:

Խորհրդակցության ընթացքում կազմվում է գործողությունների միասնական ծրագիր: Սահմանադրության պաշտ-

---

[1] **«Հայրենիք»,** № 7 (31), մայիս, 1925, էջ 33:

[2] Տե՛ս նույն տեղում, № 1 (25), նոյեմբեր, 1924, էջ 70:

պան բախտիարները դառնում էին հեղափոխական գիլանցիների գործակիցներն ընդդեմ բոլոր միապետականների, այդ թվում՝ հակասահմանադրական բախտիարների: Միացյալ ճակատի ստեղծումը չէր նշանակում, թե երկու բանակներն ունենալու էին միացյալ հրամանատարություն: Ունենալով նույն նպատակը, նրանք գործելու էին ինքնուրույն:

Թեհրանի վրա գնացող սահմանադրական ուժը, այդպիսով, բաղկացած էր կովկասյան հեղափոխական կամավորներից, Ռեշտի, Ղազվինի, Հյուսիսային Պարսկաստանի այլևայլ վայրերի պարսիկ ֆիդայիներից (200 հոգի Սիփահդարի ու 100 հոգի Եփրեմի հրամանի տակ) և բախտիար լեռնական 2000 հեծյալներից՝ Սարդար Ասադի հրամանի տակ:

Մշակված ռազմական պլանի համաձայն, խորհրդակցության հաջորդ օրն իսկ սահմանադրական բանակն առաջ է շարժվում: Բանակի ստորաբաժանումները երեք ուղղություններով գնում էին Թեհրանից չուրջ 20 վերստի վրա գտնվող Ֆիրուզ-Բահրամի մոտ տեղակայված կառավարական զորքերի վրա: Աջ թևում հրամանատար էր նշանակված Սիփահդարը, ձախում՝ Սարդար Ասադը, իսկ կենտրոնում Եփրեմն էր՝ իր և Միրզա Ալի խան Սարթիփի ջոկատներով[1]:*

Կենտրոնի առջևում միապետականների լավ ամրացված դիրքերն էին, որտեղից նրանք թնդանոթային և գնդացրային անընդհատ կրակ էին տեղում եփրեմականների վրա: Այդ կրակի ծածկույթի տակ կազակներին հաջողվեց որոշ առաջխաղացում անել դեպի հեղափոխականների դիրքերը: Դա պատճառ եղավ, որ Սիփահդարը խուճապի մատնվի, կրկին դրսևորի տատանումներ և փորձի իր խմբով հեռանալ ճակատից: Ճիշտ է, այդ խմբի ներկայությունը տվյալ պահին որևէ նշանակություն չուներ ռազմական տեսակետից, բայց նրա փախուստը կարող էր ինչոր չափով լքում առաջ բերել շարքերում: Ուստի, Եփրեմի հանձնարարությամբ, Աբրահամ խան Բախտիարին մեկնում է

---

* *Նույն ինքը՝ Սարդար Ֆաթեհը, որը հեղափոխականների Ղազվին մուտքից հետո միացել էր նրանց:*

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»,*** *№ 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 65-66:*

Սիփահղարի մոտ և փորձում կանխել նրա հեռանալը: Կասկածներ ունենալով, որ Սիփահղարը կարող է չլսել Աբրահամին, Եփրեմն ստիպված ինքն է գնում նրա մոտ: Խոսքը տանք Եփրեմին. «Անցնելով գիւղի միւս ծայրը, տեսնում եմ Սիփահղարին, որը 70 հոգով ուզում է հեռանալ: Մօտենալով նրան, հարցնում եմ. «Ո՞ւր ես հեռանում»: Միաժամանակ ցոյց եմ տալիս պահակների «Մաուզէրները» եւ աւելացնում. «Եթէ չարժուես՝ գնդակահար կանեն»: Շփոթուած եւ երկիւղից դողալով հարցնում է. «Ի՞նչ է իմ պարտականութիւնը»: Պատասխանում եմ. «Քո պարտականութիւնն է ահա՛ այն մեծ ծառի տակ նստել եւ սպասել իմ կարգադրութեան»: Անսալով ինձ, իսկոյնեւեթ կատարում է պատուէրս»[1]: Ավելին, Եփրեմն ստիպված էր նորից պահակներ կարգել նրա վրանի մոտ:

Հակառակորդի սկզբնական որոշ հաջողությանը հաջորդեց նրա պարտությունը և խուճապահար փախուստը: Բոլորի ականջներին հնչում էր «Դեպի Թեհրան, դեպի Թեհրան...»[2]: Սահմանադրական զորամասերը, կրնկակոխ հետևելով միապետական զորքին, հայտնվեցին Թեհրանի մատույցներում:

Իսկ բուն Թեհրանում մեծ իրարանցում էր, իսկական քաոս: Օգտվելով ստեղծված խառնաշփոթից, ամեն տեսակ քրեական տարրերը գրավել էին հրապարակը: Ջարագործություն և սպանություն, ամենուրեք կողոպուտ – այդ ամենից ահաբեկված էր պարսիկ ազգաբնակչությունը, որն առանց այն էլ սարսափի էր ենթարկված ինչպես ֆիդայիներից, այնպես էլ Լյախովից և երկրում գտնվող օտար զինված ուժերից: Սարսափը տարածվել էր նաև Պարսկաստանի «պատվավոր հյուրերի»՝ եվրոպացիների վրա: Դա միանգամայն հասկանալի էր, որովհետև վերջիններս վստահ չէին, թե բախտիարների ու ազգայնականների՝ Թեհրանը գրավելուց հետո իրենց կյանքն ու գույքը վտանգի չեն ենթարկվելու[3]:

---

[1] Տե՛ս **Ց. Էլմար,** Եփրեմ, էջ 261-262:

[2] Տե՛ս **«Կոհակ»**, № 9, 25 Հուլիսի 1909 թ.:

[3] Տե՛ս **М. Павлович, С. Иранский**, Персия в борьбе за независимость, с. 55.

1909 թ. հունիսի 28-ին գիլանյան արշավախմբի առաջապահ ջոկատը Աբրահամ խանի առաջնորդությամբ արագ ընթացքով Թեհրանին է մոտենում հյուսիսարևմտյան կողմից և կանգ առնում Բեհջաղաբաղ արվարձանի փակ դարպասի առաջ: Մի քանի հոգի խրամատներից ներս են սողոսկում, զինաթափում պահակներին և բացում դարպասը:

Հունիսի 29-ի լույս 30-ի գիշերը Եփրեմը 100 հայ մարտիկներից կազմված իր ջոկատով աննկատ անցավ կառավարական զորքերի դիրքերի միջով, արևմուտքից շրջանցեց Թեհրանը և հյուսիսային Յուսուֆաբադի չպաշտպանված դարպասներով թափանցեց քաղաքի հյուսիսարևելյան մասը՝ թիկունքում թողնելով թշնամու մոտ 5 հազարանոց զորքը:

Նույն ժամին մայրաքաղաք մտավ նաև Սարդար Ասադի բանակի առաջապահ ջոկատը՝ Սալար Հիշամի գլխավորությամբ: Շատ չանցած Թեհրան մտան նաև հեղափոխական մյուս զինված ուժերը:

Թեհրանի առաջին պաշտպանական գիծը ճեղքած հայ կամավորներն անմիջապես չուռ են գալիս դեպի այն թաղը, որտեղ կենտրոնացած էին եվրոպական դեսպանատները: Առաջին կարճատև ընդհարումը տեղի է ունենում բրիտանական դեսպանատան պահակախմբի հետ: Բոպեների ընթացքում գրավվում է ամբողջ թաղը: Դեսպանատների մոտ անմիջապես նշանակվում են պահակախմբեր, որպեսզի Ռուսաստանը, Օսմանյան կայսրությունն ու Մեծ Բրիտանիան առիթ չունենան միջամտելու իրադարձություններին[1]:

Եփրեմը նախապես մարտիկներին խիստ պատվիրել էր մայրաքաղաքը գրավելիս որևէ բռնություն չգործադրել եվրոպացիների նկատմամբ: Հեղափոխական-ազգային զորախմբերն իրենց պահեցին միանգամայն օրինակելի՝ ոչ միայն որևէ վնաս չհասցնելով օտարահպատակներին, այլև առանձին ջանքեր

---

[1] *Տե՛ս* ***М. Павлович, С. Иранский****, Персия в борьбе за независимость, с. 55.*

գործադրեցին նրանց անձն ու գույքը պաշտպանելու համար[1]: Դրանով իսկ Թեհրանը գրավողները մասամբ կարողացան չեզոքացնել օտար պետությունների հնարավոր գործուն մասնակցությունը ծավալվող իրադարձություններին, ապացուցել, որ իրենք նույնպես ընդունակ են առանց օտարների միջամտության կարգ ու կանոն հաստատելու երկրում:

Օտար դեսպանատների անվտանգությունն ապահովելուց հետո հայ կամավորներն ուղղություն են վերցնում դեպի մեջլիսի հրապարակը, գրավում, ապա գրոհում մեջլիսի շենքը և նրան չատ մոտ գտնվող Սիփահ-Սալարի մզկիթը, որ մի կարևոր դիրք էր քաղաքի կենտրոնում:

Հետևից եկող Սիփահդարի զորքին հանձնելով նշված երկու դիրքերը, Եփրեմն իր մարտիկներով շտապում է շրջապատել կազակական զորքի բանակատեղին՝ Ղազախ-խանեն, որը նույնպես քաղաքի կենտրոնում էր: Այդ պահին տեղի է ունենում հետևյալ զավեշտական դեպքը, որի մասին մեզ է հաղորդել Եփրեմի թիկնապահ Գրիչա Տեր-Դանիելյանը՝ իր «Եփրեմի գործունեությունը Պարսկաստանում» վերտառությամբ հուշերում (հուշագրել է Ֆարրոն*): Նա վկայել է, որ երբ Եփրեմն իր մարտիկներով կռվում էր մայրաքաղաքի կենտրոնում, Շահաբադից կապիտան Բլագնովը** առավոտյան իր զինվորներով հասնելով Բաղամաք և տեսնելով, որ այնտեղ հեղափոխականներ չկան, իսկույն հեռախոսով կապվում է Թեհրան՝ գնդապետ Լյախովի հետ և հայտնում, թե «յեղափոխականներին այստեղից քշեցի Ղազվին» և թե ինքը հույս ունի, որ գիշերվա ընթացքում հետապնդելով նրանց, կիջևանի Քերեջում ու կգիշերի այնտեղ: Լյախովը կատաղած պատասխանում է. «Ի՞նչ ես դուրս տալիս, ի՞նչ ես խենթի պէս երգում: Եփրեմը համարեա ամբողջ քաղաքը գրաւել է, շրջապատել է Ղազախ-խանէն, իսկ դու երազ ես պատմում...»[2]:

---

[1] Տե՛ս **«Սուրհանդակ»**, № 2, 9 հուլիսի 1909 թ.:

* Հովսեփ Հովհաննիսյանի (Էլմար) գրական կեղծանուններից:

** Մի ուրիշ հուշագրության մեջ (տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (31), մայիս, 1925, էջ 34)՝ Ահմեդաբադից կապիտան Զաբլովսկին:

[2] Տե՛ս **«Հայրենիք»**, № 1 (25), նոյեմբեր, 1924, էջ 71, նույն տեղում, № 7 (31), մայիս, 1925, էջ 34:

Իրենց հերթին, հարավ-արևմուտքից մայրաքաղաք մտած բախտիարների խմբերը առաջանում են զանազան ուղղություններով և դիրքերից դուրս մղում պատահած միապետական պահակախմբերին: Գիլանցիների և բախտիարների համատեղ գործողություններով փակվում են Թեհրանին նեցուկ բոլոր դարպասները[1]:

Թեհրան խուժած հեղափոխական մարտիկների հանդգնությունից հանկարծակիի եկած իշխանություններն, այնուամենայնիվ, կարողացան դիմադրություն կազմակերպել: Ուժգին ընդհարում տեղի ունեցավ մեջլիսի մատույցներում, որին միապետականների կողմից մասնակցում էին հետիոտն ու ձիավոր զինվորներ, կազակների գումարտակը և միապետական բախտիարցիք[2]: Այստեղ կռիվը չարունակվեց մինչև ժամը 4-ը:

Հաջորդ երկու օրերին՝ հունիսի 30-ին և հուլիսի 1-ին, չարունակվեցին փողոցային կատաղի մարտերը: Եփրեմի զորամասը կռվի ամենաթեժ տեղերում էր: Հակառակորդի ուժերի թվում հատկապես կատաղի դիմադրություն էին ցույց տալիս պարսկական կազակները, բայց գիլանյան և բախտիարական խմբերն ուժեղացնում էին ճնշումը, առաջանում միապետականների վրա և մեկը մյուսի հետևից նրանց դուրս մղում դիրքերից: Եփրեմի մարտիկները գրավեցին ողջ Սիփահ-Սալար ընդարձակ թաղը, ուր մեջլիսն էր, բռնեցին կարևոր դիրքեր, չրջապատեցին կազակների բանակատեղին:

Ղազախ-խանեում չրջապատված Լյախովն իր զորամասով երկու օր կռվում էր: Նրա հրամանով՝ կազակներն ուժգնապես ռմբակոծում էին Եփրեմի գլխավոր դիրքերը՝ հայոց Հայկազյան դպրոցի չրջակայքը և չինությունները: Այս ռմբակոծությունների հետևանքով այդ դպրոցում և մերձակա «Փարք-օթելում» ապաստանած հայ ընտանիքները գիշերով տեղափոխվում են անգլիական, գերմանական և թուրքական դեսպանատներ: Դրանցում ապաստան էր որոնել Թեհրանի հայկական գաղութի զգալի մասը[3]:

---

[1] Տե՛ս **«Արեւելք»**, № 7143, 7 հուլիսի 1909 թ.:

[2] Տե՛ս **«Հայրենիք»**, № 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 68:

[3] Տե՛ս նույն տեղում, № 1 (25), նոյեմբեր, 1924, էջ 71, նույն տեղում, № 7 (31), մայիս, 1925, էջ 34:

Գնդապետ Լյախովը հուլիսի 2-ին ռուսական դեսպանատան երկրորդ թարգմանի միջոցով մի գրություն է ուղարկում մեջլիս՝ հետևյալ բովանդակությամբ. «Խնդրում եմ դադարեցնել կռիվները կազակների բրիգադի դեմ, մինչև որ բանակցությունները վերջանան: Առաջարկում եմ անձնատրության հետևյալ պայմանները. 1) Բրիգադն անձնատուր լինելուց հետո նրա ողջ կազակային անձնակազմին ընդհանուր ներում է շնորհվում, 2) Կազակային բրիգադի սպայական ողջ կազմը մնում է իր պաշտոնում, 3) Կազակներն իրենց ռոճիկները պետք է ստանան նախկինի չափով, 4) Կազակները զինաթափ չեն արվում, 5) Գնդապետ Լյախովը շարունակում է մնալ պարսկական կազակային բրիգադի հրամանատար»:

Այս գրությունն ստանալուն պես Եփրեմը կարգադրում է դադարեցնել կռիվը կազակային բրիգադի դեմ: Միաժամանակ, հեղափոխական բանակի հրամանատարությունը Լյախովին գրավոր պատասխանում է. «1) Անձնատուր լինելուց հետո կազակները կստանան ընդհանուր ներում, 2) Նրանք պետք է զինաթափվեն և այդպես մնան մինչև կռվի վերջը, 3) Զինաթափման օրվանից կազակներն իրենց ռոճիկները կստանան նոր կառավարությունից, 4) Գնդապետ Լյախովն առաջվա պես կմնա իր պաշտոնում և կենթարկվի նոր զինվորական նախարարին, 5) Բայց այժմ նա պետք է գա իր ձեռքով ոմբակոծված մեջլիս և անձնատուր լինի»[1]:

Տեղի ունեցավ չատերի համար անսպասելին. գնդապետ Լյախովն «անարխիստ» Եփրեմի պահանջով անձամբ գնաց մեջլիս և Սարդար Ասադի ու Սիփահդարի ներկայությամբ իր սուրը հանձնեց նրան[2]: Նա իր բրիգադին հրաման արձակեց անմիջապես վար դնել զենքերը, հեռացնել հրանոթները և բանալ զինանոցի հրապարակ տանող բոլոր դռները[3]: Միաժամանակ, գնդապետն անձնակազմից պահանջեց՝ քանի որ պա-

---

[1] Տե՛ս նաև՝ **Ց. Էլմար**, Եփրեմ, էջ 367-368:

[2] Տե՛ս **М. Павлович, С. Иранский,** Персия в борьбе за независимость, с. 55.

[3] Տե՛ս նույն տեղում:

տերազմը վերջացել է և չուտով հաստատվելու է նոր կառավարություն, ուստի անվերապահորեն ենթարկվել նրան[1]: Դրանից հետո Լյախովին վերադարձվեց նրա սուրը, ընդհանուր ներում չնորհվեց պարսից բոլոր կազակներին, որոնք պիտի չարունակեին պահել իրենց կազմը և անկեղծորեն ծառայեին հեղափոխությանը[2]:

Շահը հույսը դրել էր Սոլթանաբադ թաղում ամրացված իրեն հավատարիմ զորամասերի վրա, բայց դրանց մեծ մասն առանց դիմադրության անցավ ապստամբների կողմը, իսկ շատ նոսրացած կազակների բրիգադն ուներ միայն երկու օրվա ռազմամթերքի պաշար[3]:

Այդպիսով, 1909 թ. հուլիսի 1-ին արդեն ճնշված էին հակառակորդի դիմադրության գլխավոր օջախները, դինամիտված էին միապետական բանակի հիմնական ուժերը:

Կառավարությունը հայտարարվեց ցրված, բանտերից ազատվեցին ձերբակալված պատգամավորներն ու հեղափոխականները:

Մեջլիսը գրավելուց հետո նրա ավերված չենքի վրա բարձրացվեց հեղափոխության դրոշը, ապա բակում կայացավ թռուցիկ հանրահավաք, որի ընթացքում ելույթ ունեցողները պատիվ էին տալիս ժողովրդի ազատագրության ճանապարհին ընկած մարտիկներին:

Թեհրանի համար երեք օր տևած կռվում սպանվել էին երկու հայ տղաներ՝ Թուրքահայ Նատոն և Թավրիզեցի Ալեքսանը[4]:

Այդ նույն ժամանակ ռուսաց հյուպատոսը մայրաքաղաքի բոլոր ռուսահպատակներին կոչ արեց անվտանգության համար իրենց տների վրա բարձրացնել ռուսական դրոշներ, այնուհետև

---

[1] Տե՛ս **«Լրաբեր»**, № 28, 12 հուլիսի 1909 թ.:

[2] Տե՛ս **«Հայրենիք»**, № 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 66-69:

[3] Տե՛ս **«Կոհակ»**, № 9, 25 հուլիսի 1909 թ.:

[4] Տե՛ս **«Հայրենիք»**, № 1 (25), նոյեմբեր, 1924, էջ 72:

այցելեց հեղափոխականների պարագլուխներ Սիփահղարին, Սարդար Ասադին և Եփրեմին:

Տեղի ունեցող իրադարձություններից սարսափահար և իրեն միանգամայն անուժ զգալով, Մահմեդ Ալին կարողացավ, այնուամենայնիվ, խույս տալ և հուլիսի 3-ի առավոտյան ժամը 9-ին Թագուհու և Թագաժառանգի հետ Սոլթանաբադից տեղափոխվեց Զերգենդե[*] և ապաստանեց ռուսաց դեսպանությունում ու այնտեղ բեստ նստեց[1]: Նախապես այնտեղ բեստ էին նստել նաև շահի հարազատներից Իզզեթ Դովլեն և Նաիբ Սալթանեն: Ռուսաստանի ներկայացուցչի և Մեծ Բրիտանիայի դեսպանի փոխադարձ համաձայնությամբ, այստեղ շահի անձը պաշտպանում էր երկու պետությունների միացյալ պահակախումբը[2]:

Ապաստանելով ռուսական դեսպանությունում, Մահմեդ Ալի շահը դրանով իսկ ինքն իրեն գահընկեց արեց: Այստեղից նա հեռագրով դիմեց Պետերբուրգ և Նիկոլայ II ցարին հայտնեց, որ իր անձն ու իր ընտանիքը հանձնում է նրա հովանավորությանը:

Այս ու այն տեղ ցրված միապետականների դիմադրությունը վերջնականապես ճնշվեց հուլիսի 5-ին և մայրաքաղաքն ամբողջովին անցավ սահմանադրականների ձեռքը: Հետայսու նրանք էին լինելու երկրի նոր տերերը:

Ահա՛ այսպես տապալվեց բռնակալներից մեկը ևս՝ Մահմեդ Ալի շահը, որը չէր ուզում ունկնդիր լինել ժողովրդի ձայնին, ընդառաջ գնալ հեղափոխության առաջադրած պահանջներին:

Մահմեդ Ալին Թեհրանում գահընկեց արվեց ոչ թե ժողովրդի, այլ բանակի ուժով, ճիշտ այնպես, ինչպես մեկ տարի առաջ Թուրքերի մակեդոնական բանակը Կ. Պոլսում տապալել էր սուլթան Աբդուլ Համիդին:

Բայց նմանությունների կողքին մեծ էին Թուրքական և

---

[1] *Զարգենդե գյուղ-ամառանոցը գտնվում էր Թեհրանի հյուսիսում և Ռուսաստանի դեսպանության սեփականությունն էր նշված իրադարձությունների տարիներին. տե՛ս «Դիւան Ատրպատականի հայոց պատմութեան», հատ. Դ, կազմող՝* ***Վարդան եպս. Տէմիրճեան,*** *Պէյրութ, 1977, էջ 95:*

[1] *Տե՛ս* ***«Սուրհանդակ»,*** *№ 1, 5 հուլիսի 1909 թ., № 3, 10 հուլիսի 1909 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Լրաբեր»,*** *№ 28, 12 հուլիսի 1909 թ.:*

պարսկական հեղափոխությունների տարբերությունները: Հակառակ Թուրքիայի, ուր հեղափոխությունն սկիզբ առավ կենտրոններում և նրա միակ շարժիչ ուժը պետական զորքն էր, Պարսկաստանում ըմբոստությունն սկիզբ առավ երկրի ծայրամասային գավառներում, ուր վաղուց էր հասունացել կյանքի բարեփոխման պահանջը և որտեղից եկած ազատագրական հոսանքն ավելի ժողովրդական էր, այսինքն՝ ավելի արմատական, ավելի հեղափոխական:

Սկսած Ռեշտի գրավումից մինչև Թեհրանի գրավումը՝ հայ կամավորները 12 զոհ էին տվել[1]: Վիրավորվածների թիվը եռապատիկ էր: Հայ կովողները ձեռք էին բերել խիզախ ու անձնազոհ մարտիկների համբավ: Ռեշտում, Էնզելիում, Ղազվինում տարած փառավոր հաղթանակները կերտողի՝ Եփրեմ Դավթյանի փառքը, դեռ մինչև Թեհրան մտնելը, տարածվել էր հեռուներ, իսկ այժմ, մայրաքաղաքը գրավելուց հետո, նրա անունը հնչում էր ամբողջ Պարսկաստանով մեկ:

Չնայած ցավալի կորուստներին, Պարսկաստանի սահմանադրականները ցնծության մեջ էին: Մոլլաները մինարեթների բարձունքից ժողովրդին ավետում էին նոր շահի՝ Սոլթան Ահմեդի գահակալությունը: Փողոցներում ժողովուրդը մեծամեծ ցույցեր էր անում ի պատիվ Սիփահդարի, Սարդար Ասադի և Եփրեմի:

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»,*** *№ 7 (31), մայիս, 1925, էջ 38: Այս թիվը մոտավորապես համապատասխանում է ռուսական մի աղբյուրի տվյալին, ուր նշված է, որ Ռեշտից Թեհրան տեղի ունեցած կռիվներում Եփրեմի խմբից սպանվել է ընդամենը 7 մահմեդական և 13 քրիստոնյա, իսկ վիրավորների թիվը կազմել է 6 մահմեդական և 13 քրիստոնյա (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237, վավ. 320):*

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

ԿՈՎԿԱՍԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԳՆԱՊՆԵՐԸ

1909–1911 թվականները կովկասահայության ներքին կյանքում որոշ տեղաշարժերի ժամանակաշրջան էր, երբ աստիճանաբար երևակվում էին դրական միտումներ, որոնք, սակայն, ամեն անգամ խամրում էին ստոլիպինյան ռեակցիայի նորանոր հարվածների տակ:

ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԵԼԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Կաթողիկոս ընտրվելուց հետո Մատթեոս արք. Իզմիրլյանի մոտ մի պահ առաջացել էր Էջմիածնի գահից հրաժարվելու տրամադրություն: Հավանաբար նրան այդ մտքին դրդել էին Կ. Պոլսի հայ բարձրաստիճան եկեղեցականներից նրանք, որոնք օսմանյան մայրաքաղաքի ու բարեկեցիկ և եռուն մտավոր-մշակութային կյանքի համեմատ Վաղարշապատը համարում էին գավառական մի բնակավայր՝ իր անձուկ մթնոլորտով, իսկ Էջմիածնի վանքը՝ մի հետամնաց հաստատություն, ուր տգետ ու ամբարիշտ կղերականներ են իշխում:

Կաթողիկոսությունից հրաժարվելու Իզմիրլյանի մտադրությունը նույնիսկ հավանությանն էր արժանացել Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի Կրոնական և Քաղաքական ժողովների որոշ անդամների կողմից, որոնք փափագում էին նրա փոխարեն Էջմիածնի գահին տեսնել Եղիշե Դուրյան սրբազանին:

Հենց այս գործիչներն էին, որոնք անհրաժեշտ էին համարում Պետերբուրգ ուղարկել գրավոր դիմում՝ դրան կցելով մի քանի հայտնի բժիշկների ստորագրություններ կրող տեղեկա-

գիր, ռուսական կառավարությանը ծանուցելու, թե Ամենայն հայոց կաթողիկոս ընտրված Մատթեոս Իզմիրլյանը տառապում է մաչկային լուրջ հիվանդությամբ, որն արգելք է նրա պարտականությունների ըստ արժանվույն կատարմանը:

Իրոք, տվյալ պահին Իզմիրլյանի մոտ բորբոքվել էր նշված հիվանդությունը, որ նա ձեռք էր բերել երուսաղեմյան աքսորի տարիներին և պարբերաբար կրկնվում էր: Այդ մասին արդեն լսել էին Էջմիածնում, ուր երկյուղ էր առաջացել, որ Պետերբուրգի արքունիքում կարող են դժվարություններ ծագել կաթողիկոսին ընդունելիս:

Իզմիրլյանի հիվանդության մասին խոսակցությունները պոլսահայ թերթերի էջերն էին անցել: Մամուլը հույժ բացասաբար էր արտահայտվում Իզմիրլյանի՝ կաթողիկոսությունից հրաժարվելու մտադրության մասին, գտնելով, որ դա հիմքից պետք է մերժել: «Բիւզանդիոնը» գրում էր, որ նման քայլը շատ ուշացած է և որ եթե դա արվելու էր, ապա պետք է արվեր հայրապետական ընտրությունից առաջ կամ դրանից անմիջապես հետո, երբ պատգամավորները տակավին գտնվում էին Էջմիածնում և կարող էին ուրիշ մեկին ընտրել: Հրաժարականը պարունակում էր մի մեծ վտանգ, որը կարող էր գալ Պետերբուրգից. դա ռուսական կառավարությանը հարմար առիթ կտար սահմանելու կաթողիկոսի ընտրության նոր եղանակ՝ սահմանափակելով Էջմիածնի իրավունքները: Թերթը չեշտում էր, թե չի կարելի «տարի մը եւս թափուր թողուլ Մայր աթոռը»: «Ամէն պարագայի մէջ,- գրում էր «Բիւզանդիոնը»,- Վեհ. Տ. Մատթէոս կաթողիկոսի հրաժարումով կարելի չէ ստիպել Զարն որ երկրորդ թեկնածուն՝ Դուրեան Սրբազանը՝ կաթողիկոս հռչակէ, ինչ կը փափաքին շատեր: Տ. Մատթէոս Սրբազանի բոլոր կեանքն արդէն զոհողութիւն մ'է, եւ պարագայից բերմամբ հարկադրեալ է մինչեւ ցյետին կէտ ոգորելու ի ծառայութեան Հայ Ազգի եւ Հայաստանեայց Եկեղեցւոյս»[1]:

Հասարակական կարծիքի ճնշման տակ Իզմիրլյանը թողեց

---

[1] **«Բիւզանդիոն»**, № 3738, 12 (25) Հունվարի 1909 թ.:

կաթողիկոսական գահից հրաժարելու միտքը և Պետերբուրգ մեկնելու պատրաստվեց:

Դա փարատեց մտավախությունը նորընտիր կաթողիկոսի կողմնակիցների, որոնք նրանից էջմիածնում մեծագործություններ, հայության առջև կանգնած հուզող խնդիրների չուտափույթ լուծումներ էին սպասում:

1909 թ. հունվարի 29-ին Արշակ Զոպանյանը Փարիզից գրած նամակով Իզմիրլյանին խնդրում էր միջնորդել ցարի առաջ՝ ազատ արձակելու Հովհաննես Թումանյանին և Ավետիք Իսահակյանին, որոնք «թանկագին են ամբողջ հայութեան համար»[1], ինչպես նաև բարեգործ մեծահարուստ Ալեքսանդր Մելիք-Ազարյանին: Զոպանյանը համոզված էր, որ Պետերբուրգում ընդունելությունը բարեհաջող ավարտ է ունենալու, և դրա երաշխիքներից մեկն այն է, որ «հայը ռուսին պէտք ունի եւ ռուսը՝ հայուն»[2]:

Փետրվարի 10-ին սուլթան Աբդուլ Համիդ II-ի իրադեով Իզմիրլյանն ազատվեց պատրիարքական պաշտոնից և արձակվեց օսմանյան հպատակությունից: Հաջորդ օրը Կ. Պոլսի Հայոց Ազգային խառը ժողովը պատրիարքական տեղապահ ընտրեց Բուրսայի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոս Արշարունուն:

Նույն թվի ապրիլի 15-ին Նիկոլայ II-ը ստորագրեց Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության հաստատման կայսերական հրովարտակը[3], իսկ ապրիլի 28-ին ս. էջմիածնում ստացվեց այդ մասին պաշտոնական թուղթը[4]:

Պոլսահայ որոշ թերթեր տարածել էին, թե Պետերբուրգում ռուսաց կայսրը հայոց նորընտիր կաթողիկոսին փորձելու է սիրաշահել, որպեսզի «անոր հետ [կարողանայ] համաձայնութեան մը յանգիլ կովկասահայոց քաղաքական ուղղութեան մասին»:

---

[1] *Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթ. 14, վավ. 523, թ. 1:*

[2] *Նույն տեղում, թ. 3:*

[3] *Տե՛ս **«Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան»**, գիրք Ը, Մատթէոս Բ Իզմիրլեան կաթողիկոս Ամենայն հայոց, էջ 890:*

[4] *Տե՛ս **«Արարատ»**, № 12, դեկտեմբեր, 1912, էջ ԺԳ:*

Եվ եթե չստանա իր ուզածը, խափանելու է կաթողիկոսի օծումը:

Ի պատասխան այդ «տրամաբանօրէն ծիծաղելի» ենթադրության, «Արեւելեան մամուլ» (Զմյուռնիա) շաբաթաթերթում տպագրած իր հոդվածում սահմանադրական ռամկավար ղեկավար գործիչ Լևոն Մկրտիչյանը կարծում էր, թե միայն պետք է ուրախանալ, որ վիթխարի մի երկրի՝ Ռուսաստանի ցարը կարիք է զգում երկուստեք ծագած խնդիրների չուրջ բանակցել Իզմիրլյանի հետ: Դա նշանակում է, գրում էր հոդվածագիրը, որ «Ռուսիան կ'ուզէ, սրտանց կը փափաքի ինքզինքը բարեկարգել, յառաջդիմութեամբ զօրանալ, փոխանակ, որպէս երբեմն, աշխարհակալութեամբ եւ ռուսացմամբ տիրանալու եւ բռնանալու: Ցարը ըսել կ'ուզէ թէ կ'ընդունի որ հայերը իր երկրին մեծ ծառայութիւններ մատուցած են, ուշիմ եւ քաղաքակրթիչ տարր մըն են որոնք կրնան երկրին խաղաղ յառաջդիմութեան մեծապէս նպաստել, բայց թէ Ցարը եւ իր կառավարութիւնը չեն ընդունիր որ հայերը, փոխանակ երկրին խաղաղ եւ աստիճանական զարգացման նպաստելու, խռովարար, անբարեկարգ եւ ռուս խալիֆայութեան տապալման եւ հետեւաբար Ռուսիոյ ներքին կեանքին անժամանակ յեղաշրջումին սատարող տարր մը ըլլան, Ցարը կ'ուզէ Իզմիրլեանի ժողովրդականութենէն օգտուիլ հայերը զգաստութեան եւ իմաստութեան հրաւիրելու համար, որպէսզի հարկադրուի զանոնք հակառակ իր կամքին պատժել, հալածել...

Իզմիրլեանի բարոյականին, հայրենասիրութեան, խոհականութեան եւ իմաստութեանը վստահ ենք. գիտենք թէ այդ բարձր անձնաւորութիւնը իր պատասխանատուութեան գիտակցութիւնը եւ հանրային կեանքի ալ փորձառութիւնը ունի, ուրեմն եւ վստահ ենք թէ Իզմիրլեանի պատասխանները Ցարին զոհունակութիւն պիտի պատճառեն»[1]*:*

1909 թ. ապրիլի 23 (մայիսի 5)-ին "Русское Слово" լրագրի սեփական թղթակիցը հեռագրում էր Պոլսից, որ ինքը հանդիպում է ունեցել Ամենայն հայոց ընտրյալ կաթողիկոսի հետ, որը չուտով գնալու է Պետերբուրգ: Խոսակցության ժամանակ, նկատի ունենալով Կիլիկիայի հայերի կոտորածները, չափազանց

---

[1] ***«Արեւելեան մամուլ»*** *(Իզմիր), № 17, 21 ապրիլի 1909 թ.:*

ընկճված կաթողիկոսն ասել էր.

«Ես այժմ գտնվում եմ սարսափելի կոտորածների թարմ տպաւորության տակ: Նորից հարց է ծագում Ռուսաստանի հովանավորության մասին Փոքր Ասիայում բնակվող հայերի վրա այնպես, ինչպես որ նմանը գոյություն ունի Թուրքիայի կաթոլիկ ազգաբնակության վերաբերմամբ, որի շահերը պաշտպանում է Ֆրանսիան: Այդ հարցը նոր չէ եւ հարուցվել է մի քանի անգամ, դժբախտաբար, ապարդյուն:

Ամեն անգամ պետությունները խոստանում էին հայերին իրանց հովանավորությունը: Չնայած այդ հավաստիացումներին, որոշ ժամանակ անցնելուց հետո հայերին կրկին սկսում էին կոտորել»[1]:

Հայերի վերջին հույսը համարելով Ռուսաստանը, Իզմիրլյանն ասում էր, որ նրա կառավարության հովանավորությունը միակ միջոցն է, որով կարելի կլինի վերջ տալ ապագայի արյունահեղություններին[2]:

Կաթողիկոսն այնուհետև ասել էր, որ ուղևորվելով Պետերբուրգ, ինքը մտադիր է այնտեղ բարձրացնել Թուրքահայոց հարցը և որ այդ մասին նախնական բանակցություններ է վարել Կ. Պոլսում ռուսաց դեսպան Զինովևի հետ[3]:

Ապրիլի 30-ին կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցը նշանակեց չորս հոգուց կազմված պատվիրակություն՝ Ամենայն հայոց ընտրյալ կաթողիկոսին Պոլսից Պետերբուրգ ուղեկցելու և ապա Էջմիածին առաջնորդելու համար: Նրանք էին Վրաստանի և Իմերեթի առաջնորդ Գարեգին արք. Սաթունյանը, Արցախի թեմի առաջնորդ Աչոտ եպս. Շախյանը և սինոդի անդամներ Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյանն ու Բաբկեն վրդ. Աղավելյանը[4]:

Կ. Պոլիս գնացող պատվիրակության անդամ-հրավիրակները մայիսի 5-ին Թիֆլիսում ներկայացան Կովկասի փոխարքա-

---

[1] *"Русское Слово"* (СПб), 6 мая 1909 г.

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] **«Արարատ»**, № 5-6, մայիս-հունիս, 1909, էջ 415:

յին[1], իսկ 7-ին «Ստամբուլ» չոգենավով դուրս գալով Բաթումից, մայիսի 13-ին հասան օսմանյան մայրաքաղաք և ներկայացան Վեհափառ հայրապետին:

Մայիսի 18-ին Բերայի ս. Երրորդություն եկեղեցում էջմիածնի պատվիրակության ղեկավար Գարեգին արքեպիսկոպոսը մատուցում է պատարագ: Հանդես գալով պատարագից հետո, Իզմիրլյանը նշում է, որ խորապես գիտակցում է իր ստանձնած պաշտոնի ծանրությունը, բայց միաժամանակ համոզված է, որ ազգի աջակցությամբ պետք է գործի հետևողականորեն և ջանալու է վարչական գործերում արդարությանը հետևել:

Մայիսի 21-ին նույն եկեղեցում Վեհափառ հայրապետը հրաժեշտի ս. պատարագ է մատուցում և նույն օրը էջմիածնի հրավիրակների, տեղացի մի քանի բարձրաստիճան հոգևորականների ու աշխարհականների հետ ընդունվում է Դոլմաբախչեի պալատում, ներկայանում սուլթան Մեհմեդ V Ռեշադին և նրան հայտնում իր շնորհակալություններն այն բարյացակամ վերաբերմունքի համար, որ սուլթանը ցուցաբերում է հայ հպատակների նկատմամբ: Նույն օրը կաթողիկոսն իր ուղեկիցներով այցելում է նաև մեծ վեզիր Հուսեյն Հիլմի փաշային:

1909 թ. ապրիլի 28-ին կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցը, սինոդն ու պրոկուրորը փոխարքայից ստանում են գրություն, ուր ասված էր, որ Նիկոլայ II կայսրը ապրիլի 3-ին լսելով ներքին գործերի նախարարի օգնական Կուրլովի զեկուցումը, Իզմիրլյան արքեպիսկոպոսին հաստատել է Ամենայն հայոց կաթողիկոսի պաշտոնում, նրան շնորհել է վեղարի աղամանդյա խաչ, միաժամանակ հանձնարարել է Կ. Պոլսի ռուսաց դեսպանությանը Մատթեոս արքեպիսկոպոսին հայտնել, որ նախքան Կովկաս գնալը առաջիկա մայիսի երկրորդ կեսին ուղևորվի Պետերբուրգ՝ Նորին կայսերական մեծության հետ հանդիպում ունենալու համար և միայն դրանից հետո մեկնի էջմիածին՝ կաթողիկոս օծվելու Հայաստանյայց եկեղեցու ծեսի համաձայն[2]:

---

[1] ***«Արարատ»**, № 5-6, մայիս-հունիս, 1909, էջ 415-416:*

[2] *Նույն տեղում, № 4, ապրիլ, 1909, էջ 297:*

Վեհափառ Հայրապետը մայիսի 22-ին վերջին անգամ մասնակցում է Ազգային ընդհանուր (խառը) ժողովի նիստերին, որի բազմամյա անդամն էր եղել: Նիստի ավարտին երեսփոխանները չնորհակալություն են հայտնում նրան՝ Հայ եկեղեցուն ցույց տված անբասիր ծառայության համար:

Կ. Պոլսում ունեցած ուրիշ մասնավոր տեսակցություններից հետո, ընտրյալ կաթողիկոս Իզմիրլյանը 1909 թ. մայիսի 23-ին, խուռն բազմության ողջերթի խոսքերի ուղեկցությամբ մեկնում է մայրաքաղաքից: Ծովափում սպասում էր ռուսական «Զիխաչև» չոգենավը[1]: Նավապետը և անձնակազմը տախտակամածի վրա ջերմորեն ողջունում են հայոց հայրապետին: Ուղերթն էր՝ Կ. Պոլիս-Օդեսա-Ս. Պետերբուրգ-Մոսկվա-Բաքու-Թիֆլիս-Էջմիածին:

Մայիսի 24-ին նավը հասավ Օդեսա: Հենց նույն օրը Ռուսաստանի ներքին գործերի նախարարությունը հատուկ գրությամբ Մատթեոս Իզմիրլյանին տեղեկացրել էր Նիկոլայ II կայսրի կողմից նրա ընդունելության ժամանակի և հանգամանքների մասին: Հաղորդելով, որ կայսրի մոտ ընդունելությունը նախատեսվում է մայիսի 29-ին, միաժամանակ հայտնվում էր, որ այնտեղ հայերենից հատուկ նշանակված թարգմանիչ է լինելու Սանկտ Պետերբուրգի կայսերական համալսարանի իսկական պրոֆեսոր, գիտությունների կայսերական ակադեմիայի թեկնածու, պետական խորհրդական Նիկոլայ Մառը[2]:

Հաջորդ օրը, մայիսի 25-ին, Իզմիրլյանը գնացքով (հատուկ սալոն-վագոնով) Օդեսայից մեկնեց Պետերբուրգ: Բացի Էջմիածնի ուղարկած պատվիրակներից, կաթողիկոսին ուղեկցում էին նաև թուրքահայ հոգևորականներ Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանը, Արտակ վարդապետը, ինչպես և Մինաս Զերրազը[3]:

---

[1] Տե՛ս **«Արարատ»**, № 4, ապրիլ, 1909, էջ 297:

[2] Տե՛ս **«Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան»**, գիրք Ը, Մատթէոս Բ Իզմիրլեան կաթողիկոս Ամենայն Հայոց, էջ 282:

[3] Դեպի Պետերբուրգ հայոց կաթողիկոսի ուղևորության մասին տե՛ս **«Լրաբեր»**, № 22, 31 մայիսի 1909 թ.:

Մայիսի 27-ի առավոտյան ժ. 9-ին Մատթեոս արք. Իզմիրլյանը հասավ Պետերբուրգ:

1909 թ. մայիսի 28-ին Ամենայն հայոց ընտրյալ կաթողիկոսին ընդունեց մինիստր-նախագահ Պյոտր Ստոլիպինը: Իզմիրլյանին ուղեկցում էին Գարեգին արք. Սաթունյանը, Մեսրոպ Տեր-Մովսիսյան եւ Բարկեն Աղավելյան վարդապետները և պրոֆեսոր Նիկոլայ Մառը: Տեսակցությունը տևեց մեկ ժամից ավելի: Խոսակցության միջոցին Իզմիրլյանը չոչափեց մի շարք հարցեր, այն է՝ Ռուսաստանում հայ ժողովրդի վիճակը, Կովկասում տիրող ազգամիջյան թշնամությունները վերացնելու գործում հայ հոգևորականության պարտականությունները, կաթողիկոսական ընտրությունների կարգը փոփոխության ենթարկելու անհրաժեշտությունը և այլն:

Ստոլիպինի հետ ունեցած հանդիպումից հետո ընտրյալ կաթողիկոսն ասել էր, որ իր տպավորությամբ՝ Ռուսաստանի վարչապետը կայսրության այլազգիների նկատմամբ անաչառ վերաբերմունք ունեցող մարդ է: Նրա կարծիքով՝ Ստոլիպինը պետության այն բարձր պաշտոնյաներից է, որը բարյացակամորեն է տրամադրված ռուսահայերի նկատմամբ:

1909 թ. մայիսի 29-ի կեսօրից հետո ժամը 2:30-ին Պետերհոֆի Մեծ պալատում Նիկոլայ II կայսրն ընդունում է Ամենայն հայոց ընտրյալ կաթողիկոսին: Տեսակցության ժամանակ ներկա էր միայն թարգման պրոֆ. Ն. Մառը:

Մայր աթոռ ս. Էջմիածնի պաշտոնական օրգան «Արարատը» այսպես է ներկայացրել ընդունելության առաջին պահերը.

«Երբ Նորին Վեհափառութիւնը եկաւ իր չքախմբով, առաջնորդուելով երկու առաջընթաց սպասաւորներով, երկու հօփֆուրիէրներով եւ կամէրֆուրիէրով, նաեւ իր չաթիրներով եւ երկու վարդապետներով, որոնք տանում էին հայրապետական նշանները, Նորին Սրբութիւնը պալատի դահլիճներից անցնելով Պատկերների դահլիճի միջով առաջնորդուեց դէպի Զինական հիւրասենեակը:

Ցերեկուայ ժամը 2 եւ 30 րոպէին աւագ արարողապետ կոմս Գենդրիկովը Նորին Վեհափառութեանը թարգման պրոֆէսսոր Մարրի ուղեկցութեամբ առաջնորդեց ընդունարան, ուր գտնը-

վում էր Կայսրը[1]», որ կաթողիկոսին դիմեց հետևյալ խոսքերով.

«Ուրախ եմ, որ Ձերդ Վեհափառութեանը տեսնում եմ Ռուսաց պետութեան սահմանները ոտք դնելուց անմիջապէս յետոյ նախ քան Ձեր նոր պարտականութիւնները ստանձնելը:

Իմ նախնիքների օրինակով լցուած անփոփոխ բարեացակամութեամբ դէպի հայ ազգութեան պատկանող Իմ հպատակները ինչպէս եւ դէպի Ձեր հովութեան յանձնուած Հայ-Լուսաւորչական եկեղեցին, Ես չեմ կասկածում, որ Դուք Ձեր ապագայ գործունէութեան ժամանակ ամեն ջանք գործ կը դնէք՝ ամրապնդելու Ձեր հօտի անդամների մէջ քրիստոնէական հաւատի իսկական ոգին:

Ընդ սմին Ես հաւատացած եմ, որ Դուք, իբրեւ Ձեր նոր հայրենիքի հաւատարիմ զաւակ, որ Ձեզ ընդունում է սրտաբաց, կը դրդէք Ձեր հօտին դէպի խաղաղ, առաքինի կեանք եւ օրինական իշխանութիւններին ի հնազանդութիւն:

Իմ հոգածութիւններից մէկն է տեսնել դաստիարակուող մատաղ սերունդը Քրիստոսի եկեղեցու հետ կապուած եւ Ես ձեզանից սպասում եմ, որ առանձին ուշադրութիւն կդարձնէք, որ Ձեր խնամքին յանձնուած եկեղեցական-կրթական հաստատութիւնները օրէնքով ցոյց տուած սահմաններում կանոնաւորուեն, որպէս զի նրանց մէջ կրթութիւն ստացողները դէպի ընդհանուր հայրենիքը՝ Ռուսաստանը տածած սիրոյ եւ անձնուիրութեան ոգով դաստիարակուեն:

Թող Իմ վստահութիւնը զօրավիգ լինի Ձեզ որ արտայայտուեց Ձեզ ծանր եւ պատասխանատու պաշտօնում – Էջմիածնի Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոս հաստատելու մէջ»[2]:

Պաշտոնական խոսքի մեջ հայտնելով Ռուսաստանի և նրա «օգոստոսափառ կայսեր» հանդեպ իր հպատակային հավատարմությունը, Իզմիրլյանն առաջին պարտք համարեց բարձրացնել հայերի զանգվածային հալածանքների հարցը[3]: Դիմելով

---

[1] ***«Արարատ»**, № 4-5, մայիս-հունիս, 1909, չհամարակալված 4-րդ էջը:*

[2] *Նույն տեղում, № 4-5, մայիս-հունիս, 1909, էջ 293-294: Տե՛ս նաև՝ **"Новое Время"** (СПб), № 11929, 31 мая 1909 г.*

[3] *Տե՛ս **«Արեւելք»**, № 7111, 30 մայիսի, № 7120, 10 հունիսի 1909 թ.:*

Նիկոլայ II-ին, նա ասում է. «Եթէ կամենում էք, Ձերդ Մեծութի՛ւն, որ Կովկաս հասնելով կարողանամ ազդել ու խաղաղացնել մտքերը, կապել հայ ժողովուրդը գահի հետ, բարեհաճեցէ՛ք կատարել իմ ամենահպատակ խնդիրը. հայ կալանաւորների արձակման հրամանը տուէ՛ք, որով ինձ էլ ոյժ տուած կլինէք՝ օգտակար կերպով ծառայելու պետութեանը»[1]: Կայսրը ընդմիջելով կաթողիկոսի խոսքը, ասել էր. «Ձերդ Օծութիւնը դեռ Կովկաս չհասած, նրանք ազատուած կլինեն»[2]:

Կայսեր հետ տեսակցելուց հետո կաթողիկոսը գնում է Գատչինա և ընդունվում մայր կայսրուհի (Նիկոլայ II-ի մոր) Մարիա Ֆեոդորովնայի կողմից:

Այնուհետև նույն օրը, մայիսի 29-ին, Իզմիրլյան կաթողիկոսը երկար տեսակցություն է ունենում պրովոսլավ սինոդի օբերպրոկուրոր Լուկիանովի և ռուսաց սինոդի նախագահ միտրոպոլիտ Անտոնիի հետ:

1909 թ. մայիսի 30-ին Գարեգին արքեպիսկոպոսը Պետերբուրգից հետևյալ հեռագիրը հղեց Էջմիածին, կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցին.

«Երէկ երկու եւ կէս ժամին **Նորին Վեհափառութիւնը** չքախմբի հետ ներկայացաւ **Նորին Կայսերական Մեծութեան** Պետերհոֆի պալատում. ընդունելութիւնը հանդիսաւոր էր: **Կայսեր** գերողորմած վերաբերմունքը դէպի **Նորին Վեհափառութեան** անձը եւ նորա չքախումբը ընդ միշտ անջնջելի կմնայ մեր յիշողութեան մէջ»[3]:

Հաջորդ օրը մայրաքաղաքի թերթերն ամենայն մանրամասնությամբ անդրադարձան Նիկոլայ II-ի մոտ Իզմիրլյանի ընդունելությանը: Մամուլը նշում էր, որ կայսրն ուշադրությամբ է վերաբերվել հայոց ընտրյալ կաթողիկոսի ներկայացրած պահանջներին, հատկապես չեշտել է, որ կառավարությունը միջոց-

---

[1] **Է. Ակնունի**, Բողոքի ձայն: Կովկասահայ քաղաքական բանտարկեալները (ցարական հալածանքների մի էջ), Բոստոն, 1911, էջ 95-96:

[2] Նույն տեղում, էջ 96:

[3] **«Արարատ»**, № 4-5, մայիս-հունիս, 1909, էջ 394:

ներ կձեռնարկի հայոց հոգևոր դպրոցների վիճակը արմատապես բարելավելու համար[1]:

Հետագա օրերին նույնպես, ամբողջ մի չաբաթ, Պետերբուրգի և Մոսկվայի թերթերը հոդվածներով, պաշտոնական հաղորդագրություններով ու զանազան նյութերով լուսաբանում էին հայոց կաթողիկոսի այցելությունը մայրաքաղաք, նրա հանդիպումները և ձեռք բերած պայմանավորվածությունները: Ընդ որում՝ առանձին թերթեր նույն համարում զետեղում էին երկու, նույնիսկ երեք հոդված կամ հաղորդագրություն*:

Մամուլին դուր էր եկել հայոց նոր հայրապետը: Նրա հակիրճ կենսագրականները թերթերի էջերում տպագրվում էին համակրական արտահայտություններով: «Իզմիրլյանը միջին հասակից քիչ բարձրահասակ ծերունի է, մեծ, սպիտակ մորուքով, խելոք, մաշված դեմքով: Միայն աչքերը պատանու աչքերի նման փայլում են խիտ ու թավ հոնքերի տակից»[2],- գրում էր "Речь"-ը:

Պետերբուրգից եկող լուրերը հայերն ընկալում էին որպես երկար սպասված ավետիս:

Դեռ մինչև ազգընտիր կաթողիկոս Իզմիրլյանի Պետերբուրգ մեկնելը «Հովիւ» պարբերականը գրել էր, որ հայ ազգը Իզմիրլյանին կոչել է ամենաբարձր պաշտոնի, նրա անձի հետ է կապել իր լավագույն իղձերը, հայ եկեղեցու վերանորոգության, դպրոցական-վարչական-կալվածական վերածնության հույսերը: «Ողջունելով ամբողջ հայութեան համար նուիրական Ամենայն հայոց կաթողիկոսին, ցանկանք ի բոլոր սրտէ, որ նա ամեն

---

[1] Տե՛ս **«Նոր օր»** (Բաքու), № 3, 21 հունիսի 1909 թ.:

* Կաթողիկոսի՝ մայրաքաղաքում գտնվելու օրերին նրա կենսագրականը, այցելություններն ու հանդիպումները լուսաբանել են պետերբուրգյան հետևյալ թերթերը. **"Биржевыя Вѣдомости"** – № 11126, № 11127, № 11128, № 11129, № 11130, **"Россия"** – № 1077, **"Петербургская газета** – № 141, **"Новое Время"** –№ 11927, № 11929, № 11932, **"Русское Слово"** – № 128, № 130, **"Петербургский листок"** – № 144, № 145, № 146, **"Свѣть"** – № 137, № 139, **"Вечерь"** – № 344, № 347, **"Слово"** – № 809, № 810, № 812, **"Голос Правды"** – № 1115, № 1117, **"Рѣчь"** – № 143, № 144, № 145, № 146, **"Новая Русь"** – № 143, № 144, № 145, № 146, **"Газета Копѣйка"** – № 136, 1909 г.

[2] **"Рѣчь"**, 4 июня 1909 г.

կերպ արդարացնի հայ ժողովրդի լաւագոյն յոյսերը»[1]:

Իր հերթին, հայրապետական աթոռի պաշտոնական ամսագիր «Արարատը» ցարի հետ Իզմիրլյանի հանդիպումից հետո մեծ բավականությամբ ընդգծում էր.

«Վերջապէս երկար մտատանջութիւններ, կասկածներ եւ անհանգիստ օրեր անցընելուց յետոյ, այսօր մեր կրծքին ծանրացած քարը գլորուեցաւ, եւ մենք կարող ենք ազատ շունչ քաշել: Հայաստանեայց սգաւոր եկեղեցին այսօր ունենում է իր արժանաւոր Պետը, ս. Գրիգոր Լուսաւորչի Թափուր Գահը՝ իր ընտրելագոյն Գահակալը»[2]:

Մարդիկ իրավամբ կարծում էին, որ նոր կաթողիկոսը ի վիճակի կլինի հզոր վճռականությամբ վերականգնել էջմիածնի խոնարհված վարկը, համերաշխություն ստեղծել Հայ եկեղեցուց ներս, բեկում առաջ բերել նրա գործունեության բոլոր բնագավառներում:

«Ո՛չ մի կաթողիկոս կանգնած չի եղել այնպիսի առեղծուածների առաջ,- նշում էր «Արարատը»,- ինչպիսիք այսօր երեւան են եկել եւ որոնք հրամայական պահանջով լուծումն ու բացատրութիւն են սպասում: Ո՛չ մի ժամանակ մտքերի, հասկացողութեան, ուղղութիւնների այնպիսի սուր բախումներ չեն եղել, որպիսիք ներկայումս ցցուած են մեր առաջ եւ կրօնական Պետից, ս. Էջմիածնի Գահակալից, որ ղեկավար, կառավարիչ ու պատասխանատու անձն է, սպասում են բաւարարութեան»[3]:

Իզմիրլյանի պետերբուրգյան այցելությունը բարձր էին գնահատում ոչ միայն պահպանողականները, այլև ազատականները: Վահան Թեքեյանը դա համարում էր պատմական[4]: Ընդհակառակը՝ ազգային-հեղափոխականները քննադատում էին նրան, որ, իբր, ռուս միապետի առջև ստորանալով և ոտնակոխելով հայ ազգի արժանապատվությունը, նա փորձել է չահել

---

[1] **«Հովիւ»**, № 12, 12 ապրիլի 1909 թ.:

[2] **«Արարատ»**, № 5-6, մայիս-հունիս, 1909, էջ 401:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս **«Շիրակ»**, № 25-26, 15 օգոստոսի 1909 թ., էջ 473:

իր նկատմամբ նրա գթասրտությունը, ուրիշ ոչինչ: Դաշնակցության «Ազատամարտը» 1909 թ. հուլիսի 3 (16)-ի խմբագրականում գրում էր.

«Ցարին շրթունքները, ինչպէս սովորաբար, եղան միայն խոստմնազանց: Կաթողիկոսը խաբուեցաւ: Կովկասի մէջ մխիթարական նորութեան չհանդիպեցաւ, գտաւ անխնայ խուզարկութիւն, ձերբակալութիւն, բանտարկութիւն, հայ մտաւորականութեան ջլատումի գործ: Գտաւ միայն թախծութիւն, յուսաբեկութիւն, հալածանքի մղձաւանջ: Ոչինչ տարբերութիւն այն խաւար պատկերէն որ կը պարզուէր Թուրքիոյ մէջ դեռ տարի մը առաջ, նոյն սոսկումով, նոյն անիրաւութեան մտրակով»:

Սահմանադրական ռամկավար ղեկավարներից Լևոն Մկրտիչյանը Ալեքսանդրիայից (Եգիպտոս) Իզմիրի «Արեւելեան մամուլին» գրած հոդվածում դատապարտում էր Դաշնակցության մամուլի օրգաններից մեկում Իզմիրլյանին «Ցարին ծախուած վարձկան» որակումը[1]:

Պետերբուրգից ս. Էջմիածին գնալիս ընտրյալ կաթողիկոսը պետք է անցներ ռուսահայոց գրեթե բոլոր թեմերով: Այդ ճանապարհորդության ընթացքում, նորընտիր Վեհափառն անչուշտ, ո՛չ ժամանակ և ո՛չ էլ միջոց կունենար նույնիսկ թռուցիկ կերպով ծանոթանալու ռուսահայ թեմերի հետ, բայց գոնե ռուսահայ ժողովրդին կտար իր հայրապետական ողջույնն ու օրհնությունը, որոնց սպասում էր իր հոտը: Արդեն շատ տեղերում՝ Մոսկվայում, Ռոստովում, Բաքվում, Թիֆլիսում և մյուս հայաշատ նշանավոր կամ աննշան կենտրոններում հայերը բազմակողմանի պատրաստություններ էին տեսնում, ընտրում էին պատգամավորություններ ճանապարհորդության ընթացքում պատշաճ ընդունելություն ցույց տալու իրենց հոգևոր հովվապետին: «Ձպէտք է մոռանանք,- գրում էր «Հովիւը»,- որ Վեհափառ կաթողիկոսի ընդունելութիւնը մեզ համար ազգային արժանապատուութեան խնդիր է»[2]:

---

[1] **«Արեւելեան մամուլ»**, № 34, 19 օգոստոսի 1909 թ.:

[2] **«Հովիւ»**, № 18, 24 մայիսի 1909, էջ 274:

Հունիսի սկզբին Մատթեոս Իզմիրլյանը Պետերբուրգից մեկնում է Մոսկվա և տեղ հասնում հունիսի 5-ին: Հաջորդ օրը նա այցելում է Լազարյան ճեմարան:

Հունիսի 7-ին կաթողիկոսը Մոսկվայից մեկնում է Նոր Նախիջևան և այնտեղ մնում մինչև ամսի 11-ը:

Գնացքով չարունակելով ճանապարհը, կաթողիկոսը, ըստ նախնական ծրագրի, պետք է կանգ առներ Բաքվում, բայց ընթացքում փոխելով մտադրությունը, որոշում է չմտնել քաղաք, այլ նրանից ոչ հեռու Բելաջարի կայարանից ուղիղ մեկնել Թիֆլիս: Վեհին դիմավորելու համար հունիսի 23-ին Բաքվից Բելաջարի էին հասել Շամախու թեմի առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսը, վարդապետներ և նշանավոր աշխարհական անձինք: Այնտեղ էին եկել նաև Բաքու քաղաքի պատգամավորները, քաղաքապետական ժողովի պատգամավորներ, տարբեր հարանվանությունների ներկայացուցիչներ: Բարի գալստյան առաջին ճառն արտասանում է Կոստանդին Խատիսյանը[1]:

Բելաջարիում բաքվեցիների ջերմ ընդունելությունից հետո Վեհափառ հայրապետին նույնպիսի ընդունելություն էր սպասում Գանձակում: Քաղաքից ու շրջակա գյուղերից կայարանում հավաքվել էին հազարավոր հայեր, որոնք բուռն ոգևորությամբ ընդունեցին ու ճանապարհեցին իրենց հայրապետին[2]:

Վերջապես հունիսի 14-ին Իզմիրլյանը հասնում է Կովկասի վարչական կենտրոն Թիֆլիս, ուր արժանանում է մեծ պատիվների: Իջևանելուց և ժողովրդի ներկայացուցիչների հետ հանդիպելուց հետո նա այցելում է Կովկասի փոխարքա կոմս Իլարիոն Վորոնցով-Դաշկովին՝ արժանանալով արտակարգ սիրալիր ընդունելության[3]: Վեհը Թիֆլիսում մնում է 9 օր, և այդ ժամանակաշրջանում բացի այցելություններից ու ընդունելություններից, նախագահում Ներսիսյան հոգևոր դպրոցի նոր շինության հիմնադրման հանդեսին[4]:

---

[1] **«Բիւզանդիոն»**, № 3866, 29 հունիսի (12 հուլիսի) 1909 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, № 3861, 23 հունիսի (6 հուլիսի) 1909 թ.:

[4] Տե՛ս **«Արարատ»**, № 12, դեկտեմբեր, 1910, էջ ԺԶ:

Հունիսի 23-ին գնացքով մեկնելով Թիֆլիսից, Իզմիրլյանը հունիսի 28-ին ժամանում է Էջմիածին: Կայարանում նրան դիմավորելու էին գնացել սինոդի ամբողջ կազմը, Վաղարշապատի գավառապետը, Վաղարշապատի հայ հասարակության ներկայացուցիչներն ու Երևանի պատգամավորները[1]:

Ազգային պետականություն չունեցող ժողովուրդը կաթողիկոսի անձի մեջ տեսնում էր իր ազգային ինքնության խորհրդանիշը և բռնել էր նրա փեշերից:

Տեղ հասնելուց հետո Վեհափառ հայրապետի և սինոդի անուններով Էջմիածնում ստացվում էին հարյուրավոր նամակներ ու ողջույնի հեռագրեր:

Արշակ Զոպանյանը Փարիզից գրում էր*.

«Վեհափառ Հայրապետ,

Մեծ ուրախութեամբ իմացայ այն սիրալիր ընդունելութիւնը, զոր Ձարը Ձեզ[ի] չնորհեր է: ...Արդեօք Ձեր տեսակցութեան մէջ կարելի եղա՞ւ բառ մ'ըսել Կովկասի ձերբակալութեանց մասին, ձերբակալուածներուն մէջ կան անձնաւորութիւններ, որ թանկագին են ամբողջ հայութեան համար, Յովհաննէս Թումանեան եւ Աւ. Իսահակեան աննման բանաստեղծները (ձերբակալուած 7-8 ամիս առաջ)... Ինչո՞ւ այս մտաւոր ու մարդասիրական գործիչները թշնամի կը նկատուին Ռուսիոյ եւ կը խոշտանգուին: Այս բոպէիս կ'իմանամ, որ Թումանեան արձակուեր է, երանի թէ լուրը ճիշդ ըլլար: Միւսները դեռ բանտն են, եւ թէ իրենցմէ ոմանք հիւանդ են: Ինչ մեծ բարիք ըրած պիտի ըլլայիք հայութեան եթէ կարենայիք ստանալ իրենց (եւ անչուշտ բոլոր ձերբակալուածներուն) ազատումը: Երանի թէ փոխադարձ վստահութեան եւ խաղաղութեան շրջան մը սկսէր Ձեզմով»[2]:

Կայսերական խոստումից տպավորված կաթողիկոսը պա-

---

[1] Տե՛ս **«Արարատ»**, № 12, դեկտեմբեր, 1910, էջ ԺԶ:

* Նամակի վրա նշված է ամիսը՝ հունիս, բայց նշված չէ օրը:

[2] Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթ. 14, վավ. 523:

տասխան նամակով Զոպանյանին հուսադրել էր, որ չուտով, չատ չուտով բոլոր ձերբակալվածներն ազատ են արձակվելու[1]: Վեհափառն սպասեց օրեր, շաբաթներ ու ամիսներ, բայց ոչ միայն որևէ բանտարկյալ ազատ չարձակվեց, այլև նորանոր անմեղ մարդիկ նետվեցին բանտերը[2]:

Հայրապետական ս. օծումն* ընդունելով 1909 թ. սեպտեմբերի 13-ին, Գրիգոր Լուսավորչի ս. Գահի 126-րդ գահակալն ստացավ Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի Իզմիրլյան պաշտոնական անվանումը:

Վեհափառ կաթողիկոսն իր օծման առթիվ երախտագիտական հեռագիր էր ուղարկել Հիվանդանոցում գտնվող թագավոր-կայսրին[3] և նրանից ստացել հետևյալ պատասխանը.

«Սրտանց շնորհակալ եմ Ձերդ Սրբութիւնից աղօթքի եւ բարեմաղթութիւնների համար:

Թող օգնէ Ձեզ Տէրը ծառայելու Հայկական եկեղեցուն եւ Ձեզ յանձնուած հօտը կրթելու հաւատարմութեան եւ հպատակութեան մէջ իրանց թագաւորներին եւ Ռուսաստանին:

Նիկոլայ»[4]:

Իսկ Կովկասի փոխարքայի՝ կաթողիկոսին ուղղված հեռագրում ասված էր.

«Մատուցանում եմ Ձեր օծման նշանակալից օրը բարերաղդութեան եւ աջողութեան լաւագոյն բարեմաղթութիւններ յօգուտ հայ ժողովրդի եւ ի հաւատարիմ հպատակութիւն Թագաւոր Կայսրին: Յաւում եմ, որ այդ օրը չը կարողացայ լինել էջմիածնում: Յանձնում եմ ինձ Ձեր սուրբ աղօթքներին»[5]:

---

[1] Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթ. 14, վավ. 231ա:

[2] Տե՛ս **Է. Ակնունի**, Բողոքի ձայն, էջ 96:

* Մատթեոս Բ Իզմիրլյանին օծեց ավագագույն եպիսկոպոսը՝ Մեսրոպ արք. Սմբատյանը: Կաթողիկոսի օծման մասին մանրամասն տե՛ս **«Հորիզոն»**, № 36, 16 սեպտեմբերի, № 37, 17 սեպտեմբերի 1909 թ.:

[3] **«Արարատ»**, № 9, սեպտեմբեր, 1909, էջ 695-696:

[4] Նույն տեղում, էջ 695:

[5] Նույն տեղում, էջ 697:

Օծման առիթով շնորհավորական հեռագրերն ու նամակները չէին դադարում հետագա մի քանի ամիսներին:

Նշանավոր արևելագետ Կարլ Ֆրիդրիխ Լեհման-Հաուպտը 1909 թ. դեկտեմբերի 21-ի թվով Բեռլինից Ամենայն հայոց կաթողիկոս Իզմիրլյանին ուղարկելով Հայաստանի մասին հենց նոր լույս տեսած իր աշխատությունը, շնորհավորում էր նրան կաթողիկոսական պաշտոնն ստանձնելու համար և համոզմունք հայտնում, որ Հայոց հայրապետը ուշադրություն կդարձնի Հայաստանի հին և միջնադարի պատմության ավելի հանգամանալից ուսումնասիրման անհրաժեշտության վրա ու ամեն կերպ կաջակցի ուսումնասիրողներին[1]:

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՌՈՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿՈՎԿԱՍԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ֆինլանդիայի, Լեհաստանի և Կենտրոնական Ռուսաստանի պարտված հեղափոխական ուժերի հետ հաշվեհարդար տեսնելուց հետո ցարիզմն իր հայացքն ուղղեց Կովկասի և Անդրկովկասի կողմը: Հերթը հասավ հայերին, որոնց հանդեպ առանձնակի դաժանություն դրսևորվեց:

Պետական դումայում Կովկասյան հարցապնդման քննության ընթացքում ՀՅ դաշնակցության հասցեին հնչած մեղադրանքները չէին կարող անհետևանք մնալ: Դումայի սևհարյուրյակային պատգամավորներն առատ նյութ էին մատակարարել ցարական արքունիքում և Ստոլիպինի կառավարության մեջ եղած ծայրահեղ աջ ուժերին, ինչպես նաև հակահայկական մամուլին, որոնք հավաքաբար որոշեցին մահվան դատավճիռ կարդալ Ռուսական կայսրության տարածքում հայկական ամենաուժեղ քաղաքական կազմակերպությանը:

Բայց դումայում հնչած մեղադրանքները բավական չէին նման դրակոնյան որոշման համար: Առկա էին ավելի հիմնավոր պատճառներ:

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 291:

Նախ, ցարական իշխանությունները կովկասահայությանը դիտում էին որպես «հեղափոխության խմորիչ»: Հայ եկեղեցու կալվածքների գրավման փորձն անհաջողության էր հանդիպել հայ ժողովրդի հավաքական հակադարձության չնորհիվ, որի արդյունքում բռնապետությունը 1905 թ. օգոստոսին ստիպված էր եղել 1903 թ. հունվարի 12-ի բարձրագույն հրամանով գրավված եկեղեցական կալվածքները հետ տալ Էջմիածնին: Պետերբուրգը, իհարկե, չէր մոռացել իր այդ սկանդալային պարտությունը: Եվ ահա՛ հեղափոխության անկումը հայերից վրեժ լուծելու բացառիկ հնարավորություն էր ստեղծել:

Երկրորդ, տապալվել էր թուրք-հայկական ընդհարումները բորբոքելու միջոցով հայերին արյունաքամ անելու ցարական իշխանությունների ծրագիրը: Կառավարությունը զինել և հայերի դեմ էր հանել երկրամասի իսլամությանը, բայց իր սպասածը չէր ստացել: Սկզբում հանկարծակիի եկած հայերն աստիճանաբար սթափվել էին և ՀՅ դաշնակցության գլխավորությամբ ջախջախիչ հարվածներ էին հասցրել թուրք-թաթարական հրոսակներին Բաքվում, Երևանում, Թիֆլիսում, Նախիջևանում, Շուշիում, Արարատյան դաշտում, Զանգեզուրում և այլուր: Արյունահեղ ընդհարումներում երկու ժողովուրդները մեծ կորուստներ էին կրել, բայց ցարական արքունիքի դավադիր ծրագիրն ամբողջությամբ տապալվել էր հայերի հերոսական դիմադրության չնորհիվ: Բնական է, որ ռուսական բռնակալական ուժերը նոր վրեժով էին լցվել հանդուգն հայության դեմ և առիթ էին փնտրում նրան չամփրելու վրիժառության կրքով:

Այնուհետև, միապետությունը չէր հանդուրժում, որ Դաշնակցությունը դարձել էր Կովկասի ամենահզոր քաղաքական կազմակերպությունը, որն ուներ լայնամասշտաբ կռիվներ մղելու ունակ զինված ջոկատներ: Կուսակցությանը մեղադրելով, թե նա «պետություն է պետության մեջ», ցարական կառավարությունը հարմար առիթի էր սպասում ջարդելու այդ քաղաքական կազմակերպությանը, կոտրատելու նրա հանդգնությունը, դրանով իսկ կովկասահայությանը զրկելով պաշտպանական ուժից:

Վերջապես, ցարիզմը Դաշնակցությանը չէր ներում այն

բանի համար, որ նա իր վերջին՝ Չորրորդ ընդհանուր ժողովում (1907 թ. փետրվար-մայիս, Վիեննա) ընդունել էր «Կովկասյան նախագիծ», որն ըստ էության ուղղված էր բռնապետությունից ռուսահայերի պաշտպանությանը:

Այս ներքին պատճառներից զատ Դաշնակցության դեմ ցարիզմի սանձազերծած կռիվը պայմանավորված էր նաև այդ քաղաքական կազմակերպության արտաքին գործունեությամբ:

Խոսքն ամենից առաջ այն մասին է, որ Դաշնակցությունը տվյալ ժամանակ ամենագործուն մասնակցություն էր ունենում Պարսկաստանում 1906 թ. սկսած և շահական միապետական իշխանության տապալմանը և երկրում սահմանադրական կարգերի հաստատմանն ուղղված հեղափոխական շարժմանը: Պետերբուրգը չէր կարող թույլ տալ, թե հարևան պետության ժողովրդական ուժերն ինչպես են փորձում տապալել իրենց երկրի միապետական կարգերը և հաստատել այնպիսի կարգեր, որոնց 1905-1907 թթ. հեղափոխության օրերին ձգտում էին Ռուսաստանի հակացարական ուժերը: Զուր չէր ինքնակալության պաշտպանների վախը, թե պարսկական հեղափոխությունը կարող է արձագանքել ամենից առաջ Անդրկովկասում և այդտեղ իրական վտանգ ստեղծել ռուսական տիրապետության համար:

Ցարական իշխանություններին շատ էր անհանգստացնում այն հանգամանքը, որ պարսկական հեղափոխության մեջ նշանակալի դեր են ստանձնել այդ երկրի բնակչության մեջ չնչին տոկոս կազմող հայերը, որոնք մի կողմ դնելով կրոնական և ազգային տարբերությունները, սահմանադրական ուժերի շարքերում անձնազոհությամբ կռվում են «առաջադիմության համար»:

Դաշնակցության նշանավոր գործիչ Եփրեմ Դավթյանի գլխավորությամբ հայերի մասնակցությունը հեղափոխական շարժմանը, նրանց կռիվը շահական բանակի և երկիր ներխուժած ռուսական զորքերի դեմ զայրույթ էր առաջացրել Պետերբուրգում: Միապետությունն այս խնդրում նույնպես առիթ էր փնտրում Դաշնակցությանը ջարդելու համար, և այդ առիթը ներկայացել էր:

Ցարիզմը ոչ միայն պարսկական, այլև իր մյուս հարևանի՝

թուրքական միապետության պաշտպանն էր: 1908 թ. երիտ-թուրքական հեղափոխությունը և օսմանյան սահմանադրության վերահաստատումը ռուսական միապետական ռեժիմը սվիններով էր դիմավորել:

Աբդուլհամիդյան միահեծան ռեժիմի տապալումից հետո եկած առաջին ամիսներին սահմանադրությունից խանդավառված թուրքահայությունը և նրա քաղաքական կազմակերպություններից հատկապես ՀՅ դաշնակցությունը ջերմորեն պաշտպանում էին երիտթուրքական նորահաստատ իշխանությանը, նրա հռչակած ազատության և եղբայրության գաղափարները: Դաշնակցության համար գործունեության լայն դաշտ էր բացվել սահմանից այն կողմ, ուստի նա նորից իր գործունեության կենտրոնը տեղափոխել էր Թուրքահայաստան՝ առաջ բերելով ուժերի զգալի արտահոսք Անդրկովկասից: Դաշնակցությունը, որ հանդես էր եկել միապետական կարգերի դեմ Ռուսաստանում և ազատագրական կռվի մասնակից էր Պարսկաստանում, չէր կարող չառաջացնել միապետականների ատելությունն իր նկատմամբ: Եվ Պետերբուրգը Դաշնակցությունից վրեժ էր ուզում առնել:

Դաշնակցության դեմ լայնածավալ հալածանքներն սկսվել էին Թիֆլիսից, 1908 թ. վերջին:

Իշխանությունները մեկը մյուսի հետևից տուգանքների էին ենթարկում և փակում Դաշնակցությանը պատկանող տպագիր օրգանները: Ավերվում կամ փակվում էին տպարանները, բռնագրավվում տպատառերը, խուզարկվում, կնքվում էին խմբագրությունները, խմբագիրները փակվում էին բանտերում կամ աքսորվում: Ջախջախվեց կուսակցության ազդեցության տակ գտնվող արհմիությունների մեծ մասը: Ժողովրդական զանգվածների մեջ Դաշնակցության տարած քարոզչությունը թուլացել, հասցվել էր նվազագույնի, քանի որ անհնարին էին դարձել ոչ միայն մարդաշատ հանրահավաքները, այլ նույնիսկ կուսակցական խմբերի սովորական ժողովները: Լեոն նկատում էր, որ ցարիզմը «չափ ու սահման չէր դնում իր եռանդին եւ բանտարկում էր աջ ու ձախ, չզանազանելով դաշնակցականներին եւ ոչ-դաշնակցականներին»: Այնպէս որ «այս տագնապը, որ տեւեց

մօտ երեք տարի, մի ահաբեկում էր ամբողջ ռուսահայ ինտելիգենցիայի համար եւ մղձաւանջի պէս ծանրանում էր հայ հասարակութեան վրայ»[1]:

1905-1907 թթ. ազատագրական շարժման տարիներին Դաշնակցությունը մի կողմ էր նետել ամեն տեսակ գաղտնապահություն և աշխատում էր բաց, բոլորին ի տես: Հեղափոխական ժամանակաշրջանն անցնելուց հետո նա ստիպված եղավ կրկին անցնելու ընդհատակ, բայց դա այլևս դժվար էր իրագործել. նրա անդամներին և գործիչներին արդեն բոլորը գիտեին և հետևում էին[2]:

Ամենուրեք կուսակցության անդամների և համակիրների իսկական որս սկսվեց: Մեղադրվում էին և հետագայում ձերբակալվեցին կուսակցության ղեկավար գործիչներ Սիմոն Զավարյանը, Ստեփան Զորյանը (Ռոստոմ), Համազասպ (Համո) Օհանջանյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Գարեգին Փաստրմաջյանը (Արմեն Գարո), Հարություն Շահրիկյանը (Ատոմ, Նիթրա) և ուրիշներ, մտավորական-քարոզիչներ բժ. Հովհաննես Զավրիևը, Ավետիս Ահարոնյանը, Գարեգին Խաժակը, Եղիշե Թոփճյանը, Համազասպ Նորհատյանը և այլոք, բազմաթիվ խմբապետներ, այդ թվում՝ Նիկոլ Տեր-Հովհաննիսյանը (Նիկոլ Դուման) և Համազասպը (Սրվանձտյանց), ահաբեկիչներ՝ Դրաստամատ Կանայանը (Դրո), աստրախանցի Կարոն, Մկրտիչ Աղամալյանը (Սարհատ) և ուրիշներ:

1908 թ. դեկտեմբերի վերջերին Թիֆլիսում առաջին ձերբակալված դաշնակցականը ՀՅԴ Բաքվի Կենտրոնական կոմիտեի անդամ Արտեմ Թայիրյանն էր, որը կարևոր դեր էր կատարել հայ-թաթարական ընդհարումների ժամանակ[3]: Այնուհետև հետևեց ձերբակալությունների շարքը: Ձերբակալվածների թվում էին հասարակական գործիչներ, արհեստավորներ, առևտրականներ, գյուղացիներ, հարուստներ, ուսանողներ: Դրանց մեջ

---

[1] **Լէօ**, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Բ, էջ 65:

[2] Տե՛ս **«Ախուրեան»**, № 1, 3 հունվարի, № 6, 24 հունվարի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Հայրենիք»**, № 5 (210), ապրիլ, 1940, էջ 119:

քիչ չէին խեղճ ու կրակ աղքատ հայ մարդիկ՝ ձերբակալված իբրև դաշնակցական: Թիֆլիսի աղքատ հայ ձկնորսի հետ միասին ձերբակալվել էր քաղաքի մեծահարուստներից Ալեքսանդր Մելիք-Ազարյանը: Աչքի ընկնող հայ գործիչներից և մտավորականներից որևէ մեկն ազատ չէր խուզարկության ենթարկվելու և ձերբակալվելու վտանգից: Թիֆլիսի քաղաքապետ Ալեքսանդր Խատիսյանը շատ տարիներ հետո վերհիշել է.

«Ես ինքս տեղեկութիւններ ունէի, որ քննիչը, պատրուակ մը կը փնտռէր ինձ եւս հետապնդելու: «Մշակի» հանգուցեալ խմբագիր Համբարձում Առաքելեանը ինձ ըսաւ, որ քննիչը հետաքրքրուած է իմ մասին եւ հարցրած իրեն, թէ ի՞նչ կապեր ունիմ ես հայ կուսակցութեան (Դաշնակցութեան) հետ»[1]:

Արդեն 1909 թ. հունվարի սկզբներին Թիֆլիսում ձերբակալված էր ավելի քան 500 հոգի, որոնց թվում կային 22 բժիշկ ու փաստաբան, 24 պրոֆեսոր ու դասատու, 30 պաշտոնյա և ծառայող, 45 վաճառական, 70 արհեստավոր: Մյուս ձերբակալվածները հոգևորականներ էին, բանվորներ ու գյուղացիներ, նույնիսկ՝ աշակերտներ: Կային նաև կանայք[2]: Ձերբակալությունները Թիֆլիսում խստագույն աստիճանի հասան 1909 թ. հունվարի երկրորդ կեսին, երբ մի քանի հազար մարդ խուզարկվեց:

Օրեր անց ձերբակալություններ սկսվեցին Կովկասով մեկ, նաև Մոսկվայում, Ռոստով-Նոր Նախիջևանում և այլուր, կալանվեցին շատ կամ քիչ հայտնի այն գործիչները, ովքեր Դաշնակցության գործունեությանն այս կամ այն չափով առնչված էին:

Երևանյան նահանգում հիմնական ձերբակալությունները կատարվեցին Երևան և Կարս քաղաքներում, Ղափանի հանքերում, Ալավերդու արդյունաբերական շրջանում: Կարսում առաջիններից մեկը ձերբակալվեց Համբարձում Ղարիբյանը (Պլո Թագավոր) և ուղարկվեց Նովոչերկասկի բանտ: Այստեղ ձերբակալվեց նաև դաշնակցական նշանավոր հեղափոխական Արա-

---

[1] **«Հայրենիք»**, № 8 (116), Հունիս, 1932, էջ 125:

[2] Տե՛ս **Է. Ակնունի**, Բողոքի ձայն, էջ 33:

մայիս Ազնավուրյանը, բայց նա հաջողեց փախչել և անցնել Թուրքիա:

«Ցարական հալածանքը Հ. Յ. դաշնակցութեան դէմ» իր հուշագրության մեջ Ա. Ազնավուրյանը նկատել է, որ Ալեքսանդրապոլի դաշնակցականները զերծ էին մնացել հետապնդումներից ու հալածանքներից, և դա այն պատճառով, որ այս քաղաքի ՀՅԴ կազմակերպությունը 1907 թ. դեմ էր եղել «Կովկասյան նախագծին», որով կուսակցությունը կռվի մեջ էր մտել ռուսական ինքնակալության դեմ:

Շատերը վարչական կարգով աքսորվեցին Կովկասից: Աչքի ընկնող կուսակցական չատ գործիչներ էլ ստիպված հեռացան ուրիշ երկրներ:

Դաշնակցության ղեկավար գործիչների զանգվածային ձերբակալության հետևանքների մասին Սիմոն Վրացյանը գրել է, թե Կովկասում կուսակցությունը կիսակազմալույծ վիճակի մեջ էր: Պատասխանատու ղեկավարների մեծ մասը, ինչպես և Բյուրոյի անդամները բանտարկված էին կամ փախած արտասահման, կամ քշվել էին գործերից և պահվել: Ընդհանուր ղեկավարությունը փաստորեն անցել էր Ոսկանապատի (Բաքվի) կենտրոնական կոմիտեին:

Դաշնակցության դեմ պետական մակարդակով սկսած տեռորը չուտով ըստ էության տարածվեց ռուսահայության, հատկապես Անդրկովկասի հայության մտավոր ողջ ընտրանու՝ գրողների, հրապարակագիրների, կրոնավորների, բժիշկների վրա: Նրանցից չատերը բարձրագույն կրթություն էին ստացել Արևմտյան Եվրոպայում և Ռուսաստանում*: «Ցարական գարշելի բյուրոկրատիան,- գրում էր Լեոն,- ինքն էր սարքել հայ-

* Ձերբակալությունների օրերին հայկական մամուլում հաճախակի բարձրացվող ցավոտ հարցերից մեկը վերաբերում էր արտասահմանում կրթություն ստացող հայ երիտասարդների՝ դեպի հեղափոխական գաղափարներն ունեցած հակումներին: Կովկասի հայկական բարեգործական կազմակերպությունների ֆոնդերից, հատկապես Ալեքսանդր Մանթաչյանի ֆոնդից, ինչպես նաև հասարակական այլևայլ հիմնարկությունների ու անհատների գումարներից տարեկան ավելի քան 100000 ռուբլի էր հատկացվում արևմտաեվրոպական և

թաթարական կոտորածները և այժմ հալածում էր հայերին՝ նրանց կազմակերպած ինքնապաշտպանության համար»[1]: Ցարական իշխանությունները փորձում էին բանն այնպես ներկայացնել, թե պայքարում են միայն Դաշնակցության դեմ, բայց իրականում պատուհասվում էր ամբողջ հայ մտավորականությունը: Մտավորականների խուզարկությունները և ձերբակալությունները կատարվում էին Ռուսաստանի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում: «Զկար, կարելի է ասել, և ոչ մի հայ ինտելիգենտ,- շարունակում էր Լեոն,- որ բոպե առ բոպե չսպասեր իր ձերբակալմանը»[2]: Նրանց խմբերով էին տանում բանտերը: Թիֆլիսի Մետեխի բանտ, բացի Ավետիս Ահարոնյանից, նետվեցին նաև Ստեփան Մալխասյանը, Ավետիք Իսահակյանը, Գարե-

---

ռուսական համալսարաններում հարյուրների հասնող հայ ուսանողների կրթության և կեցության ծախսերը հոգալու համար: Բայց այդ մեծ ծախսերն սպասված արդյունքը չէին տալիս. հասարակության փողերով բարձրագույն կրթություն ստացածների մեծ մասն օգտակար էր լինում միայն իրեն և ոչ թե հասարակությանը: Նշվում էր նաև, որ հայ համալսարանականներից չատերն ուսումնառության ընթացքում հարելով հեղափոխական այս կամ այն ուղղությանը, վերադառնալով իրենց բնակության վայրերը՝ ընդգրկվում են տիրող կարգերի դեմ մղվող պայքարի մեջ, ենթարկվում բանտարկության կամ աքսորի, դրանով իսկ զրկվում ստացած գիտելիքներն իրենց ժողովրդին ծառայեցնելու հնարավորությունից: Պատահական չէ, որ ավելի ու ավելի հաճախ էին ձայներ լսվում, թե հայ երիտասարդների համալսարանական կրթության համար տրամադրվող հսկայական գումարի զգալի մասը պետք է ուղղել գյուղերում և ավաններում տարրական դպրոցներ բացելու, գրադարաններ, ընթերցարաններ ստեղծելու, հանրամատչելի գրքեր և ժողովրդական էժանագին լրագրեր հիմնելու գործին: Այս առաջարկի կողմնակիցներն իրենց տեսակետը փաստարկում էին զանազան օրինակներով: Օրինակ՝ թերթերը նշում էին, որ ԱՄՆ-ում, որպես կանոն, ուսանողն իր ապրուստը հոգալու համար չի ամաչում փողոցներում անցորդների կոշիկները մաքրելուց, Հոլանդիայում և Բելգիայում ուսանողներն ամառվա ընթացքում չեն քաշվում հասարակ մշակի գործի լծվելուց և իրենց աշխատանքով ապրելուց, միաժամանակ ծանոթանալով ժողովրդի հոգսերին, նրան բաժին հանելով իրենց ունեցած գիտական պաշարից;

[1] **«Թումանյանը ժամանակակիցների հուշերում»** (այսուհետև՝ «ԹԺՀ»), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969, էջ 122:

[2] Նույն տեղում, էջ 66:

գին Լևոնյանը: Լեոն վերհիշում է, որ «հայ գրողներից ես, [Ղազարոս] Աղայանը և մի քանի ուրիշներ էինք հրաչքով մնացել»[1]:

1908 թ. դեկտեմբերի 23-ին (կամ 24-ին)* իբրև քաղաքական հանցագործ ձերբակալվեց նաև հայ մեծ բանաստեղծ և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանը: Նա նույնպես ձերբակալվեց «Դաշնակցության գործով»՝ թեպետև հայ բանաստեղծը այդ կուսակցության անդամ չէր: Ավետիս Ահարոնյանի որդին, Վարդգես Ահարոնյանը, գրել է. «Յովհ. Թումանեանը երբեք կապ չէր ունեցել հայ քաղաքական եւ յեղափոխական կազմակերպութիւնների հետ: Նրա կապը եղել էր հայ քաղաքական կուսակցութիւնների անդամների հետ միայն, եւ այն էլ գրական ու հասարակական գործունէութեան ասպարէզներում, ինչը որ չէր կարող հիմք ծառայել նրան հակապետական գործունէութեան մէջ մեղադրելու»[2]:

Ձերբակալության ժամանակ Թումանյանի տանը ոստիկանությունը խուզարկություն կատարեց, որի ընթացքում բռնագրավեց արժեքավոր թղթեր, այդ թվում «Հին կռիվը» պոեմի ձեռագրի վերջին մասը, որն այդպես էլ չվերադարձվեց հեղինակին: Պոեմը (որտեղ գեղարվեստորեն վերարտադրված է հայ ժողովրդի ազատագրական պայքարը) բանաստեղծի ընտիր գործերից մեկն է, որը նույնիսկ չավարտված տեսքով ընթերցողին հիացմունք է պարգևում:

Հովհաննես Թումանյանի հետ միասին ձերբակալվեց նաև ավագ որդին՝ Մուշեղը**, որը Թիֆլիսի տարրական երրորդ գիմնազիայի 8-րդ դասարանի աշակերտ էր: Երկուսին էլ տարան

---

[1] **«ԹԺՀ»**, էջ 66:

* Հովհաննես Թումանյանի ավագ դուստրը՝ Աշխենը, «Հայրիկիս մասին» հուշերում գրում է, որ հայրը ձերբակալվել է 1908 թ. դեկտեմբերի 24-ին (տե՛ս **«ԹԺՀ»**, էջ 633), իսկ մյուս դստեր՝ Նվարդի հուշերում նշված է դեկտեմբերի 23-ը (տե՛ս **Նվարդ Թումանյան**, Հուշեր և գրույցներ, Երևան, 1969, էջ 90):

[2] **Վարդգէս Ահարոնեան**, Յովհաննէս Թումանեան: Մարդը եւ բանաստեղծը, Բոստոն, 1936, էջ 143-144:

** Հովհ. Թումանյանը հայր էր 10 զավակների՝ Մուշեղ, Աշխեն, Նվարդ, Արտավազդ, Համլիկ, Անուշ, Արփիկ, Արեգ, Սեդա, Թամար:

Մետեխի բանտ: Բանաստեղծը փակվեց № 15 խցում:

Գրիգոր Զոհրապը իր մի երկտողով* տագնապ էր հայտնում «Դաշնակցության գործով» տեղի ունեցող ձերբակալությունների կապակցությամբ: «Սիրելի՛ս,- գրում էր նա,- առի նամակդ. սիրտս խչխչաց բոլոր հայերուն համար որոնք ռուսական խստութեանց ենթարկուած են: Թումանեանի եւ Իսահակեանի համար դիմում պիտի ընեմ...»[1]:

Արխիվում պահպանվել է Հովհ. Թումանյանի հարցաքննություններից մեկի արձանագրությունը: Հարցաքննությունը կատարվել էր Մետեխի բանտում, Նովոչերկասկի նահանգային դատարանի առանձնապես կարևոր գործերի դատական քննիչի կողմից: Հարցաքննության արձանագրությունում կարդում ենք.

«Անուն, հայրանուն, ազգանունս է Հովհաննես Տեր-Թադևոսի Թումանյան: 40 տարեկան եմ, ծագումով Թիֆլիսի նահանգի տոհմիկ ազնվական: Մշտական բնակությանս վայրն է՝ Թիֆլիս, Բեհբութովի փողոց, 44 տուն, ծննդավայրս է Թիֆլիսի նահանգի Բորչալու գավառի Դսեղ գյուղը: Կրոնական պատկանելությունս՝ հայ լուսավորչական, գրագետ եմ, ամուսնացած: Զբաղմունքս՝ բանաստեղծ, արձակագիր: Ունեմ անշարժ կայք Շուլավեր և Դսեղ գյուղերում՝ տներ, այգիներ և վարելահող: Առանձնահատուկ նշաններ չունեմ, զինվորական պարտքս կատարել եմ, հետաքննության տակ չեմ գտնվել, դատված չեմ եղել»[2]:

Այնուհետև քննիչի այն հարցերին, թե «արդյոք իրեն մեղավոր ճանաչո՞ւմ է 1905-1908 թվականներին Ռուսական կայսրությունում կազմակերպված Հայ հեղափոխական դաշնակցությանը պատկանելու համար, այն բանի համար, որ եղել է այդ կուսակցության, այլև նրա տարբեր կոմիտեների անդամ», Թումանյանը ժխտական պատասխաններ է տալիս: Այնուհետև

---

* Զհաջողվեց պարզել, թե երկտողն ո՞ւմ է ուղղված եղել:

[1] ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, № 2174:

[2] ՀԱԱ, ֆ. 32/95, ց. 1, գ. 1, թ. 435:

քննիչը մեղադրանք է հարուցում, թե Թումանյանը կուսակցական գրագրության մեջ է եղել կազմակերպության տարբեր անդամների հետ, զորօրինակ 1907 թ. հունիսի 15-ին Թիֆլիսից Ղարաքիլիսա ուղարկած № 7546 հեռագրով Սերգեյ Եղիգարովին խնդրել է «կարգադրություն անել...»**, իսկ նույն թվականի հուլիսի 23-ին Մանգլիս ուղարկած № 9594 հեռագրով կուսակցության անդամ Արտյուշը «Խարիսխ» կուսակցական թերթի ներկայացուցչի հասցեով Թումանյանին հարցրել է նույն կուսակցության անդամ Զարգարյանցի գտնվելու վայրը, ինչպես նաև հարցրել է, թե ե՞րբ կազատվի*** Ղարաքիլիսայի կոմիտեի անդամ Վահրամ Նալբանդյանը[1]:*

Քրեական օրենսգրքի 102-րդ հոդվածով ներկայացրած այս բոլոր մեղադրանքներին Հովհ. Թումանյանը քննիչին պատասխանել է. «Ես ինձ մեղավոր չեմ ճանաչում»[2]:

Բայց հարցաքննությունն ավարտելուց հետո քննիչը գրում է եզրակացություն, թե ինքը Թիֆլիսում հարցաքննելով 40 տարեկան Հովհաննես Թադևոսով Թումանյանին հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության հետ հանցավոր կապի մեջ գտնվելու մեղադրանքով, այսինքն՝ Ռուսաստանի քրեական օրենսգրքի 102-րդ հոդվածով դատապարտելի հանցանքի մեջ, գտել է, թե 1) Թումանյանը մեղավոր է ճանաչվում ինչպես առգրավված հեռագրերի հիման վրա, այնպես էլ վկաների ցուցմունքների համաձայն, 2) Նրան սպառնացող պատիժը ուղեկցվում է սեփականության իրավունքի զրկումով:

Ելնելով վերը չարադրածից՝ դատական քննիչը, առաջնորդվելով քրեական օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ կետով և

---

* Հավանաբար՝ ՀՅԴ Բորչալուի կազմակերպության ղեկավարներից:

** Թե ի՞նչ կարգադրության մասին է եղել խոսքը, փաստաթղթում պարզաբանված չէ:

*** Հավանաբար բանտից ազատվելու մասին է խոսքը, իսկ թե ո՞ր բանտից, այդ մասին փաստաթղթից չենք իմանում:

[1] ՀԱԱ, ֆ. 32/95, ց. 1, գ. 1, թ. 434:

[2] Նույն տեղում, թ. 435:

102-րդ, 423-րդ, 428-րդ հոդվածներով՝

«Որոշեց: Հիշյալ մեղադրյալ Հովհաննես Թումանյանից պահանջել 5 հազար ռուբլի երաշխիք, իսկ մինչ այդ պահել Մետեխի բանտում՝ հսկողության տակ»[1]:

Դրանից մի քանի օր առաջ Մետեխում բանտարկված Արամ Եսայանը հետագայում (1935 թ.) վերհիշել է, որ երբ Թումանյանին «բերին մեր բաժանմունքը», «մեր մեջ վրացի մտավորականներ ու խմբագիրներ էլ կային. երևի բոլորն էլ ճանաչում էին Թումանյանին: Նրա այդտեղ երևալուն պես սովորական աղմուկն իսկույն դադարեց, և միառժամանակ խոր լռություն տիրեց:

– Այս ո՞ւմ ենք տեսնում... Ա՛յ թե բանը որտեղ է հասել,- ասում էին Թումանյանին ճանաչողները»[2]:

Հովհ. Թումանյանի ձերբակալման լուրը չատ ճնշող տպավորություն էր թողել ողջ հայ մտավորականության վրա: Հայ մշակույթի գործիչները տեսան ու համոզվեցին, որ իրենցից որևէ մեկի անձի անվտանգությունը երաշխավորված չէ, որ հայ մտավորականը ամեն րոպե կարող է ենթարկվել իշխանությունների ամեն տեսակի բռնությանը:

Կոմիտասն իր մտերիմներից մեկին՝ իշխանուհի Մարիամ Թումանյանին* ուղարկած 14. 2. 1909 թվակիր նամակում գրում

---

[1] «ԹԺՀ», էջ 599:

[2] Նույն տեղում:

* Իշխանուհի Մարիամ Թումանյանը (1870-1945 թթ.) գրական, թատերական, հասարակական գործիչ էր, Թիֆլիսում հրատարակվող "Новое Обозрение" («Նովոյե օբոզրենիե») թերթի խմբագիր իշխան Գեորգի Թումանյանի (Թումանով) կինը: Բազմաթիվ բարեգործական, մշակութային և այլ հասարակական կազմակերպությունների հիմնադիր էր և ղեկավար: Նյութապես և բարոյապես աջակցում էր հայ մշակույթի գործիչներին, սատար կանգնում հայ որբերին ու գաղթականներին: Հիմնել էր «Իշխանուհի Թումանյան և ընկ.» հրատարակչությունը, որը հայ երեխաների համար գրքեր էր տպագրում: Իշխանուհին Հովհ. Թումանյանի ամենամտերիմներից էր, նրա աջակիցը: Մարիամ Թումանյանի դրամական միջոցներով հրատարակվել է «Մանկական գրադարան Հովհաննես Թումանյանի» մատենաշարը: Բանաստեղծի հետ ազգակցական կապ չուներ:

էր. «Մեր Յովհաննէսի չարձակուելը շատ վատ տպաւորութիւն թողեց վրաս. որքա՜ն զրկւում է մեր գրական-բանաստեղծական կեանքը նորա անգործ բանտումն ընկած մնալով: Իհարկէ, երեւի դեռ երկար կպահեն, մինչեւ ամբողջ կծիկը բաց անեն: Լսւում է, որ շատ խիստ որոնում են զանազան տեղերում մի չարք անձանց: Այս խմորը դեռ շատ ջուր կառնի...»[1]:

«Մի վայրենի հալածանք է սկսւած հայ ժողովրդական կազմակերպութեան դէմ: Բոլոր սեւ ոյժերը միացել են՝ նրա գոյութիւնը վտանգելու համար»,- գրում էր ՀՅԴ գլխաւոր օրգան «Դրօշակը»[2]:

Ձերբակալվածների հարցաքննությունների և մեղադրյալներին դատարանին ներկայացնելու ողջ գործի ղեկավարությունը հանձնվել էր ցարական ամենաանխիղճ պաշտոնյաներից մեկին՝ Նովոչերկասկի նահանգային դատարանի առավել կարևոր գործերի քննիչ, իսկ ոչ վաղուց Վիլնոյի դատաստանական պալատի անդամ Ն. Ն. Լրժինին: Սրան այդ պաշտոնին նշանակել էր ցարական ռեժիմի ամենանվիրյալ պաշտոնյաներից մեկը՝ մոլի հայատյաց, արդարադատության սահմանադրական նախարար Շչեգլովիտովը, և հավանություն էր տվել ինքը՝ Ստոլիպինը:

Լրժինի հարցաքննություններն ընդգրկում էին դաշնակցականների չուրջ չորս տարվա գործունեությունն Անդրկովկասում՝ սկսած 1905 թվականից: Ձերբակալվածները մեղադրվում էին քրեական օրենսգրքի 102-րդ հոդվածով՝ «հակակառավարական արարքների համար»: Եթե այդ մեղադրանքը դատարանում հաստատվեր, ապա բոլորին սպառնում էր աքսոր Սիբիր: Ուստի Լրժինն ամեն միջոցի դիմում էր ներկայացված մեղադրանքն անպայման հաստատելու համար: Նա գործում էր կատաղությամբ, ամեն ինչ անում էր արդարացնելու համար տերերի վստահությունը: «Ավելի դահճի, քան դատաստանական քննիչի պաշտոնին արժանի այդ մարդկային վիժվածքը նույնիսկ

---

[1] **Կոմիտաս վարդապետ**, Նամականի, Երևան, 2009, էջ 156-157:

[2] **«Դրօշակ»**, № 2-3, փետրվար-մարտ, 1909, էջ 17:

վավերագրերի կեղծման էր դիմում՝ գործին իր ցանկացած ուղղությունը տալու համար»[1],- գրում էր Լեոն:

Դաշնակցականների զանգվածային ձերբակալությունների գլխավոր պատճառը ՀՅԴ առանձին ղեկավար գործիչներ բացատրում էին կուսակցության հակառակորդների և, առաջին հերթին, խմբապետ Միհրան Քեչիչյանի մատնություններով: Ուրիշները նույնիսկ մեղադրում էին Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա արք. Օրմանյանին, թե նա քննիչ Լըժինի հարցման ի պատասխան նրան աննպաստ տեղեկություններ է տվել դաշնակցականների մասին:

Հետագայում, սակայն, պարզվեց, որ իրականությանը դա չի համապատասխանում: Օրմանյանը տարիներ հետո ասել էր. «Լըժինը երբեք չէ դիմած ինձի թէ՛ ուղղակի եւ թէ՛ անուղղակի, ոչ մէկ հարցում չէ ուղղուած անոր կողմէ՝ դաշնակցականաց մասին»[2]:

Քննիչ Լըժինը և դատախազ Ակսակովը, որոնց նստավայրը Նովոչերկասկն էր, ամենախիստ գաղտնապահությամբ շրջում էին այն բոլոր քաղաքներն ու ավանները, ուր դաշնակցական բանտարկյալներ կային և տեղում նրանց ենթարկում էին հարցաքննության:

Սևաստոպոլի, Թիֆլիսի, Բաքվի, Օրյոլի և այլ տեղերի բանտերից Ռոստովի բանտ էին տեղափոխում հարյուրավոր բանտարկյալների՝ մտավորականների, կուսակցական գործիչների, առևտրականների և այլոց: Այս բանտն էին ընկել Ավետիս Ահարոնյանը, Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ), Համո Օհանջանյանը, Գարեգին Խաժակը, բժ. Լևոն Ալթարեկյանը, Հովսեփ Արղությանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Սարգիս Մանասյանը, Համազասպ Սրվանձտյանցը, Գերասիմ Բալայանը, Արտեմ Թայիրյանը, բժ. Ավետիք Մնացականյանը, Հայկ Սողոմոնյանը, Լևոն Թադևոսյանը, իրավաբան Լևոն Մուշեղյանը, Արշակ Մեհրաբյանը (Սրինգ), ուսուցիչ Ղևոնդ Մելքոնյանը, նախկին վար-

---

[1] **«ԹԺՀ»**, էջ 65:

[2] **«Մշակ»**, № 205, 21 սեպտեմբերի 1911 թ.:

դապետ Կորյուն Սահակյանը, Սարբաղ Խեչոն, Բաչգառնեցի Մարտիրոսը և ուրիշներ[1]:

Ռոստովի բանտի պայմաններն ահավոր էին: Պատահական չէ, որ չդիմանալով կտտանքներին և ծաղր ու ծանակին, այստեղ մահացավ Խանասորի արշավանքի մասնակից Սարբաղ Խեչոն: Բանտապահների ծեծից մահացել էր Գանձակի Աղջաղալա գյուղի քահանա Նիկողայոս Սողոմոնյանը: Նույն բանտը նետված «Մշակ» թերթի նախկին աշխատակից, իրավաբան Հովհաննես Մեղնիկյանին ենթարկել էին այնպիսի տանջանքների, որ նա հասել էր խելագարության[2]:

Լրժինը մտահոգված էր, որ Դաշնակցությունը կարող է իր վտանգված անդամներին փախցնել Ռոստովի բանտից: Նրա մտահոգությունը զուր չէր, քանզի Նոր Նախիջևան-Ռոստովում կար հոծ հայ բնակչություն, որի շրջանում Դաշնակցությունը մեծ հեղինակություն ուներ, իսկ նրա տեղական կոմիտեն («Նալբանդի» կոմիտե) կուսակցության առավել կարգապահ և իր կոչմանը գիտակից միավորներից մեկն էր, որը թեև ստոլիպինյան ռեակցիայի ժամանակ ծանր կորուստներ էր կրել, բայց դեռ այդ վիճակում նույնիսկ պատրաստ էր կատարելու պատասխանատու և վտանգավոր առաջադրանքներ: Այդ ամենը հաշվի առնելով՝ Լրժինը չտապ կարգադրություն էր արել աչքառու բանտարկյալներին Ռոստովի և մյուս բանտերից փոխադրել Նովոչերկասկի բանտը և առնել խիստ հսկողության տակ[3]: Այս բանտը, որ ժամանակին Դոնի կազակների ձիերի ախոռատուն էր եղել, նույնպես դաժան պայմաններ ունեցող բանտերից մեկն էր, ուր բանտարկյալներին անձամբ քննում էր Լրժինը: Բանտապահները բոլոր միջոցները գործադրել էին լիովին խզելու նրանց կապերն արտաքին աշխարհի հետ: Բայց, չնայած դրան, առանձին դեպքերում հաջողվում էր վերականգնել ընդհատակյա կապը, և այդ գործում մեծապես օժանդակում

---

[1] **«Հայրենիք»**, № 6 (352), հունիս, 1955, էջ 12, № 3 (305), մարտ, 1958, էջ 30:

[2] Տե՛ս **Է. Ակնունի**, Բողոքի ձայն, էջ 49:

[3] Տե՛ս **«Հայրենիք»**, № 8 (354), օգոստոս, 1955, էջ 84:

էր Նովոչերկասկի փոքրաթիվ, բայց հավատավոր ու զոհաբերող հայկական համայնքը[1]:

Նովոչերկասկի գնդանում բռնափակված 160 բանտարկյալները այնտեղ մնացին մի քանի տարի:

Դաժան հարցաքննություններ էին կատարվում նաև Թիֆլիսի, Բաքվի, Տագանրոգի և ուրիշ վայրերի բանտերում: «Բանտարկեալները կը տանէին իրենց խաչը ստոիկեան արիութեամբ»[2],- գրել է Միքայել Վարանդյանը:

Նրանցից մեկն էր Դաշնակցության մարտական անդամներից նշանավոր ահաբեկիչ Մկրտիչ Աղամալյանը (Սարհատ): Դաշնակցական Խեչոյի հետ 1908 թ. նա անցել էր Պարսկաստան, բայց չուտով կուսակցության հանձնարարությամբ նույն տարվա դեկտեմբերին կարևոր գործով վերադարձել էր Կովկաս, ուր արդեն սկսվել էին ուժգին հալածանքները Դաշնակցության դեմ: Քննիչ Լըժինի կարգադրությամբ նրան ձերբակալում և նետում են Երևանի բանտը: Այստեղ նա ամիսներ շարունակ ենթարկվում է անմարդկային տանջանքների, բայց չարունակում է անկոտրում մնալ նրա մարտական ոգին: Ի վերջո Մկրտչին թունավորում են և նա մահանում է բանտում[3]:

Ձգտելով հնարավորինս շատ մարդ խառնել գործին, շատ մեղադրական նյութեր հավաքել և դրանց հիման վրա չհիմնավորված զանգվածային ձերբակալություններ իրականացնել, Լըժինը և նրա ենթակաները գնալով ամբարտավան էին դառնում, մեկը մյուսից ոճրալից հանցապարտ որոշումներ հրապարակ հանում: Նախաքննություն, որպես այդպիսին, չկար: Քննիչի քմահաճ կամքից էր կախված այս կամ այն ձերբակալվածի բախտը:

Այսպես, իր 70 տարիները հետևում թողած գաղափարապաշտ գրող Ռոստոմովը (Ռոստոմյան) հրատարակել էր մի

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 8 (354), օգոստոս, 1955, էջ 84:

[2] **Միքայէլ Վարանդեան,** Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 481:

[3] Տե՛ս **Աբրահամ Գիւլխանդանեան**, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. Ա., էջ 55:

գրվածք, ուր նկարագրել էր հարյուր տարի հետո իր երազած մարդկային հասարակությունը՝ առանց զորքի, պատերազմների և դատարանների: Ըստ նրա՝ այդ ժամանակ երկրի վրա եղբայրությունն ու սերը պիտի տիրեին: Գրվածքն այնպես մեկնաբանվեց, թե հեղինակը դեմ է այն իրավակարգին, որում ինքն ապրում է, ուստի ապստամբելու և դա տապալելու կոչ է անում[1]: Քննիչները նրան որակեցին որպես հույժ վտանգավոր հեղափոխական և մեղադրանք ներկայացրին քրեական օրենսգրքի՝ սիբիրյան ցմահ աքսոր նախատեսող հոդվածով:

Բաքվում հրատարակվող "Баку" («Բաքու») անվամբ ռուսալեզու թերթի* խմբագիր Քրիստափոր Վերմիշյանը գործով Թիֆլիս գնալիս սովորաբար նրան փոխարինում էր մեկ ուրիշը, և թերթը լույս էր տեսնում վերջինիս ստորագրությամբ: Բայց մի անգամ, երբ Վերմիշյանը Թիֆլիս էր մեկնել չորս օրով, հանդես էր բերել անփութություն՝ բացակայության ժամանակ թերթի ճակատից չվերցնելով իր անունը: "Баку"-ն այդ օրերին չարունակել էր լույս տեսնել իր ստորագրությամբ և տպագրել էր Պարսկաստանից ստացված մի հոդված, որտեղ կար նաև պարսից շահ Մահմեդ Ալիի դեմ ուղղված՝ Դաշնակցության հրապարակած մի նամակը:

Ըստ ռուսական համապատասխան օրենքի, թերթում լույս տեսած բոլոր հոդվածների համար միակ պատասխանատուն խմբագիրն էր: Վերմիշյանը բանտարկվում է և գործը հանձնվում դատական բարձր ատյանին: Պարսից միապետի դեմ ուղղված նյութը ցարական գահի պահպաններն ընկալել էին որպես միաժամանակ ռուսաց միապետի դեմ ուղղված նյութ, թեև Վերմիշյանը որևէ հեղափոխական կազմակերպության անդամ երբեք չէր եղել և հայտնի էր որպես իշխանությունների կողմնակից:

---

[1] Տե՛ս «Հայրենիք», № 9 (117), հուլիս, 1932, էջ 101:

* 1909 թ. սկզբին Բաքվի երկու՝ "Бакинское Эхо" («Բակինսկոյե Էխո») և "Вестник Баку" («Վեստնիկ Բակու») ռուսալեզու թերթերը միավորվել էին, և այդ երկու թերթերի խմբագիր-հրատարակիչները՝ Քրիստափոր Վերմիշյանն ու Քրիստափոր Սարգսյանը, միացյալ ուժերով սկսել էին հրատարակել "Баку" թերթը:

Բայց նախաքննության ժամանակ քննիչները արձանագրության մեջ ցմահ բանտարկությամբ հոդված նախատեսեցին: Ք. Վերմիշյանը երկար ժամանակ տառապեց բանտախցում, բայց հարցի երկրորդ քննությունը նա հաջողեց Պետերբուրգ տեղափոխել: Ի վերջո, մեծ տուգանք վճարելուց հետո միայն հնարավոր եղավ նրան ազատել աքսորից և խնդիրը փակվեց որպես երջանիկ բացառություն[1]:

Մի քանի փաստերի հիման վրա պետք էր ձերբակալել ոմն մտավորական Գևորգի, որի բնակության տեղը ցույց էր տրված Թիֆլիսը: Որովհետև Թիֆլիսում «Գևորգ» անունը կրող մտավորականներ շատ կային, ուստի սկսեցին ձերբակալել այդ անունը կրող բոլոր կրթված հայերին: Քննիչները վերջիվերջո կանգ առան Գևորգ Առաքելյանի վրա՝ նրան պատասխանատվության ենթարկելով և բանտ նետելով: Դրանից ամիսներ հետո միայն հայտնի դարձավ, որ խոսքը վերաբերել էր դաշնակցական Գևորգին, որը 1909 թ. սեպտեմբերի սկզբին սպանվել էր Թավրիզի մոտերքում, և նրա մահվան փաստը վավերացրել էր տեղի ռուսաց հյուպատոսը[2]:

Նման բան տեղի ունեցավ նաև «Հաջի Հակոբի» հետ: Ձերբակալելու նպատակով որոնվում էր այս անունը կրող Թուրքահայ հայտնի գործիչ, բայց ձերբակալվեցին «Հաջի Հակոբ» անվանյալ 10 հոգի, որոնցից, ի վերջո, կանգ առան Երևանում կալանված Հաջի Հակոբ Ավետիսյանի վրա, մի ծերունի, որը երբևիցե որևէ կապ չէր ունեցել Դաշնակցության հետ[3]:

Ոստիկանությունը փնտրում էր արցախցի հեղափոխական Նիկոլ Պողոսյանին, որն անցել էր Վան, գլխավորում էր ՀՅԴ Լեռնապարի կազմակերպությունը և հայտնի էր «Վանա Իշխան» (ռուսերեն՝ "Князь Вана") անունով: Ձկարողանալով նրան իրենց ձեռքը գցել՝ ոստիկանները Ղամարլուի Դալլար գյուղում

---

[1] ***«Հայրենիք»***, *№ 9 (117), հուլիս, 1932, էջ 101:*

[2] ***«Սուրհանդակ»***, *№ 56, 17 հունվարի 1910 թ., տե՛ս նաև՝* ***«Մշակ»***, *№ 10, 17 հունվարի 1910 թ.,* ***«Ախուրեան»***, *№ 5, 21 հունվարի 1910 թ.:*

[3] ***«Սուրհանդակ»,*** *№ 56, 17 հունվարի 1910 թ., տե՛ս նաև՝* ***«Մշակ»***, *№ 10, 17 հունվարի 1910 թ.,* ***«Լումայ»***, *№ 1, հունվար, 1910, էջ 76:*

կալանավորում ու բանտարկում են հայտնի հեղափոխական գործիչ, Դաշնակցության հիմնադիրներից իշխան (князь) Հովսեփ Արղության-Երկայնաբազուկին[1]: Ամիսներ անց պարզվեց, որ ոստիկանության որոնածը գտնվում է Վանի շրջանում: Իմանալով Արղությանի ձերբակալման մասին՝ Վանա Իշխանը ներկայանում է տեղի ռուսաց հյուպատոսին և հայտնում, որ «Իշխանն» իր մականունն է՝ այդ բանը հաստատելով փաստաթղթերով: Նա բողոքում է, որ իր փոխարեն ուրիշին կալանավորելն անարդար է: Հյուպատոսն այդ մասին հայտնում է Պետերբուրգ, այնտեղից տեղեկացնում են Լրժինին, բայց բան չի փոխվում: Իշխան Հովսեփ Արղությանը չուրջ երեք տարի տանջվեց բանտում[2]:

Գաղտնի լրտեսներից ստանալով տեղեկություն Ղևոնդ Մալխասյանցի՝ դաշնակցություն կուսակցությանը պատկանելու մասին, բայց չգտնելով նրան, քննիչների հանձնարարությամբ ոստիկանությունը ձերբակալել էր Արտաշես Մալխասյանցին՝ նրա ազգանվան կից ավելացնելով "он же Гевонд"[3] («նա հենց ինքը Ղևոնդն է») բառերը...

Հայ մեծահարուստ և բարերար, 50-ամյա Ալեքսանդր Մելիք-Ազարյանը բանտ նետվեց չինծու մեղադրանքով. քննիչները «ապացուցել» էին, որ նրա գրասենյակի միջոցով կասկածելի անձանց գումարներ են փոխանցվել: Բժիշկ Լևոն Աթաբեկյանը բանտում մնաց մոտ երկու տարի այն մեղադրանքով, թե նա իշխանությունների դեմ հանցանքներ է կատարել Շուշիում, այն դեպքում, երբ անհերքելի փաստերը ցույց էին տալիս, որ այդ «հանցանքները» կատարելու ժամանակ նա եղել է Բաքվում: Բժիշկ Համո Օհանջանյանը ձերբակալվել էր Վլադիկավկազում տեղի ունեցած մի գաղտնի ժողովի մասնակցելու ամբաստանությամբ, չնայած նա այդ քաղաքում ընդհանրապես չէր եղել[4]:

---

[1] Տե՛ս **«Լումայ»**, № 1, հունվար, 1910, էջ 76, **«Հայրենիք»**, № 5 (327), մայիս, 1953, էջ 55:

[2] Տե՛ս **Է. Ակնունի**, Բողոքի ձայն, էջ 33, **«Հայրենիք»**, № 5 (327), մայիս, 1953, էջ 55:

[3] Տե՛ս **«Հորիզոն»**, № 36, 21 փետրվարի 1912 թ.:

[4] Տե՛ս **Է. Ակնունի**, Բողոքի ձայն, էջ 83:

Մեռած մարդկանց տեղ քննիչները կարգադրում էին ձերբակալել միանգամայն ուրիշ մարդկանց, եթե ունենում էին նույն անունները կամ ազգանունները: Շատ հաճախ ձերբակալությունից խուսափածների փոխարեն բանտարկում էին նրանց ազգականներին: Կալանավորվում էին հազիվ 18 կամ 19 տարեկան նորահաս երիտասարդներ, որոնք մեղադրվում էին 1903-ին կամ 1904-ին կատարած ահաբեկչություններին մասնակից լինելու համար, այսինքն՝ երբ նրանք այդ տարիներին եղել էին 12-13 տարեկան անչափահասներ[1]:

Կատարվում էին նաև անուղղակի հալածանքներ. այսպես, Գանձակի նահանգի մի քանի գյուղերում ժանդարմները սպառնացին կալանավորել կանանց, եթե նրանց ամուսինները ոստիկանություն չներկայանան:

Է. Ակնունին իր «Բողոքի ձայն» գրքում բերում է մի ուրիշ դեպք: Մի երիտասարդ անփորձ ռուս քննիչ մի հայ վարդապետի գործի առիթով Ելիզավետպոլի նահանգապետին զեկուցում է, ասելով, թե որևէ փաստ չկա նրան ձերբակալելու համար: Նահանգապետը քննիչին հարցնում է. «Երիտասա՞րդ է վարդապետը»: Վերջինս պատասխանում է. «Այո՛, երիտասարդ է, հազիվ 29 տարեկան»: «Եթե երիտասարդ է, մեղավոր կլինի, բռնեցե՛ք...»[2],- լինում է նահանգապետի կարգադրությունը:

Անչուշտ արտահայտելով ներքին գործերի նախարարության տրամադրությունները՝ Լրժինը հայ բանտարկյալներից մեկին նրա հարցաքննության ժամանակ ասել էր. «Ձեր մեղքն այն է, որ հայ եք և պատասխանատու եք այն բոլորի համար, ինչ անցնում-դառնում է հայկական կյանքի մեջ: Մեզ հարկավոր է մոխրի տակ թաղել ձեր ձգտումները, արմատից պոկել հեղափոխության ծիլերը, քանդել քաղաքական կուսակցությունները և գերեզմանել այն բոլորը, ինչ կենդանի է և կենսունակ պայքարի: Փա՞ստ եք ուզում – փաստը մեր քմահաճույքն է: Վավերագի՞ր եք ուզում – վավերագիրը ոստիկանական զեկուցագիրն է: Ո՛չ մի քաղաքական կուսակցություն, ո՛չ մի հայկական միտք,

---

[1] Տե՛ս **Է. Ակնունի**, Բողոքի ձայն, էջ 72-73:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 75:

ո՛չ մի չարժում – ահա՛ մեր կամքը...»[1]:

Ոստիկանները մոտավորապես նույն խոսքերն էին ասել Խրիմյան Հայրիկի նախկին դիվանապետ, իսկ այդ ժամանակ Գանձակի հայոց թեմի առաջնորդ Կորյուն վարդապետին՝ նրա ձերբակալության ժամանակ: Վարդապետի տան խուզարկության ընթացքում նրանք գտել էին նրա մի քանի նկարները, որոնցում նա պատկերված էր մարտական զենքը ձեռքին: Վարդապետը ձերբակալվեց, իսկ նկարները պետական դումայի թուրք անդամները հասցրին Պետերբուրգ և Մոսկվա՝ ցույց տալու համար, թե հայ հոգևորականներն ինչով են զբաղված[2]:

Ձերբակալություններին զուգընթաց ռուսական հետադիմական մամուլի օրգաններն ամեն կերպ արդարացնում էին ոստիկանության սանձարձակ անօրինականությունները:

Երբ հարյուրավոր դաշնակցականներ արդեն բանտերում էին, "Новое Время" («Նովոյե վրեմյա») թերթում լույս տեսավ հերթական հայատյաց հոդվածներից մեկը, որի հեղինակը քաջալերում էր կառավարությանը և խորհուրդ էր տալիս է՛լ ավելի ուժեղացնել Դաշնակցության ջախջախմանն ուղղված ջանքերը: Հոդվածում թվարկված էին մի քանի դաշնակցական մտավորականների անուններ, որոնց անհրաժեշտ էր անհապաղ ձերբակալել: Դրանց թվում էր նաև ոչ-դաշնակցական Սամսոն Հարությունյանը: Վերջինս փոխանակ բողոքելու թերթի սովորական ապատեղեկատվության դեմ, պարտք համարեց խմբագրությանն ուղարկած մի երկարաշունչ հեռագրով ոչ միայն հերքել լուրը, այլև հայտարարել, թե ինքը Դաշնակցության երդվյալ հակառակորդներից է և միշտ պայքարել է նրա ***վնասակար*** *ուղղության դեմ: Դրանով իսկ Ս. Հարությունյանը փաստորեն արդարացնում էր ոչ միայն Դաշնակցության, այլև հայ մտավորականության դեմ սկսված վայրենի հալածանքը:*

"Новое Время"-ն տպագրեց հեռագրի չարաղրանքը, չմոռանալով այդ կապակցությամբ հանդես գալ առաջնորդող հոդվա-

---

[1] ***«Ասպարէզ»***, *№ 119, 18 նոյեմբերի 1910 թ.:*

[2] ***"Стенографический отчет о заседаниях второй сессии 3-й Государственной думы"***, *с. 1431.*

ծով, ուր ասված էր, թե հայ ժողովրդի՝ պետությանը հավատարիմ մտավորականները համամիտ են Դաշնակցությանը պատժելու կառավարության քաղաքականությանը[1]:

Բայց Ս. Հարությունյանի պահվածքը եղակի էր կամ բացառություններից մեկը:

Իհարկե, հետամտությունները, հալածանքներն ու բանտարկությունները տեղի էին ունենում դատական օրենքների հիման վրա, բայց փաստը մնում է փաստ՝ ռուսական կառավարությունը որոշել էր սրով ու հրով բնաջնջել հայկական շարժումը և նրա առավել ուժեղ ղեկավարին՝ ՀՅ դաշնակցությանը:

Պետերբուրգի կառավարական վերնախավն ու ռուսական հետադիմական մամուլը փորձում էին մեղադրյալների աթոռին նստեցնել ամբողջ հայ ժողովրդին՝ իբրև հեղափոխական ազգի: Ինչպես անարդարության գլուխ կանգնած միապետական կարգը, այնպես էլ այդ գործի ներշնչողը՝ Ստոլիպինը և անարդարություն գործադրողը՝ Լրժինը, լավ գիտեին, որ վրդովեցուցիչ են իրենց արածները, որ հասարակական կարծիքը չի արդարացնի իրենց դրակոնյան գործողությունները: Զէ՞ որ անիմաստ բան էր մարդկանց համոզել, թե ընդհանրապես մեղավոր են բոլոր հայերը, այն դեպքում, երբ ամենքը գիտեին, որ ինչպես ամեն մի հավաքականություն, այնպես էլ հայությունը բաղկացած է տարբեր դասակարգերից ու խավերից, տարբեր քաղաքական հոսանքներից, որոնք հասարակական երևույթների մասին իրարամերժ կարծիքներ ու հայեցակետեր են ունենում:

Ահա թե ինչո՛ւ ինքնակալությանն անհրաժեշտ էր հայ ազգի դեմ սկսած հալածանքը վարագուրել: Եվ քանի որ կառավարության աչքում հայոց ինքնուրույնության գաղափարը մարմնավորված էր նաև Դաշնակցության մեջ, քանի որ այդ կուսակցության հակակառավարական ընթացքն ակնհայտ էր, ուստի նպատակահարմար համարվեց հայության դեմ հալածանքը ներկայացնել որպես ՀՅ դաշնակցության դեմ հալածանք: Այդ իսկ պատճառով էլ դատական գործը կնքվեց «ՀՅ դաշնակցության գործ» անունով:

---

[1] Տե՛ս **«Ասպարէզ»**, № 199, 31 մայիսի 1912 թ.:

Հայկական մամուլը համոզված էր, որ չնայած բոլոր հակահայկական ուժերի ջանքերին, անհնար է ապացուցել, թե ամբողջ հայ ազգը հեղափոխական է:

«Հորիզոն» թերթն իր առաջնորդողում գրում էր, որ երբ 1905-1907 թթ. ամբողջ Ռուսաստանը բռնված է եղել հեղափոխության կրակներով, այդ նույն ժամանակ հակացարական շարժման մեջ բազմաթիվ ազգերի նման հայությունը նույնպես իր միջից հրապարակ էր բերել հեղափոխական խմբակցություններ: Բայց այդ տարիներին հայերը չկատարեցին նույնիսկ մեկն այն գործերից, որոնք այնքան սովորական էին Ռուսաստանում: Այսպես, հայերը «երբեք եւ ոչ մի տեղ հանրապետութիւն չհռչակեցին, մի ռուս զինուորի անգամ զինաթափ չարեցին, չտիրացան պետական գումարներին, իրենց կալուածատէրերի դէմ դուրս չեկան հրով ու սրով, ինչպէս Ռուսաստանի բոլոր կողմերում է եղել: Եղել են, ճիշտ է, դասակարգային կռիւներ չափազանցրած, այո՛, նոյնիսկ ծայրայեղութիւնների հասցրած, բայց ոչ պետութեան դէմ՝ անջատական դիտաւորութեամբ»[1]:

Թերթը գրում էր, որ հայերի մեջ հակակառավարական համազգային շարժում չէր կարող լինել նախ այն պատճառով, որ նրանք մեկ միլիոնից միայն մի փոքր են ավելի՝ շրջապատված այլազգիների ծովով: Կարո՞ղ էր արդյոք մի փոքրաթիվ ժողովուրդ հանդես գալ նրան արյան մեջ թաթախելու ամեն միջոց ունեցող վիթխարի պետության դեմ:

Եղավ մի ժամանակ, երբ Ռուսաստանի շատ ազգեր ինքնավարության պահանջ առաջ քաշեցին: Եվ միայն հայ ժողովուրդն էր, որ հայտարարեց, թե ինքն այդպիսի բան ցանկանալ չի կարող, քանի որ միատարր զանգված չի կազմում: Հայ ժողովուրդը նույնիսկ վախենում էր, որ եթե Կովկասում զեմստվո մտցնելիս նկատի չառնվեն ազգաբնակչության տեղաբաշխման տեղական առանձնահատկությունները, ապա ինքը կարող է այնպիսի դրության մեջ ընկնել, որ շատ տեղերում զրկված կլինի զեմստվոյի ինքնավարությանը մասնակցելուց: «Մի՞թէ այդպիսի մի

---

[1] ***«Հորիզոն»,*** *№ 125, 13 հունիսի 1912 թ.:*

ժողովուրդ կարող էր իր մէջ սնուցանել անջատողականութիւն»[1],- հարց էր տալիս թերթը:

Մի ուրիշ առիթով «Հորիզոնը» զարմանում էր բոլոր «հայկերների» անմտության վրա, որ չեն ուզում հասկանալ մի պարզ ճշմարտություն՝ ռուսահայերն իրենց ընդհանուր հայրենիք Ռուսաստանի անքակտելի ու անբաժան մասնիկն են: «Մեծ Ռուսաստանի ցաւերը եւ ուրախութիւնները մեզ էլ են պատկանում», հետևապես հայերը երջանիկ են, երբ Ռուսաստանը հզոր է ու անպարտելի[2]:

Այնուհետև թերթը նշում էր, որ «մենք չենք վրդովուի, եթէ մեր թերութիւնները, մեր նոյնիսկ ակամայ սխալները – եթէ միայն եղել են – ջրաղացի քարերի նման մեր վզից կախէին: Բայց մեզ վրայ դիտմամբ ստեր են բարդում միմիայն նրա համար, որ մենք հայ ենք, որ մեզ զրպարտում են, դարձեա՜լ նրա համար միայն, որ մենք հայ ենք – ահա այդ ժամանակ ե՛ւ վրդովւում ենք, ե՛ւ զայրանում, ե՛ւ միեւնոյն ժամանակ՝ զարմանում...»[3]:

Մետեխի բանտում բռնափակված Հովհ. Թումանյանի հարցաքննությունը նույնպես կատարում էր Թիֆլիս ժամանած Ն. Լրժինը: Նա Թումանյանին առաջին անգամ հարցաքննության ենթարկեց 1909 թ. մարտի 20-ին: «Վտանգավոր քաղաքական բանտարկյալին» նա քննում էր առանց ամենադույզն անգամ հաշվի առնելու նրա ինքնությունը: Արամ Եսայանը վերհիշում է, որ ինքը՝ Թումանյանը, բանտում պատմել է, որ «իր հետ էլ կատարել են քաղաքական հանցավորներին վերաբերող բոլոր «արարողությունները»՝ լուսանկարել էին գլխարկով, առանց գլխարկի, նստած, կանգնած, ձախ թևին համար կպցրած, թանաքի մեջ թաթխած մատը դրոշմել էին սպիտակ թղթի վրա և այլն: Նա այդ համարում էր հավատաքննության (ինկվիզիցիա) դեռ առաջին չրջանը: «Այդ «արարողություններին» ենթարկվողը չի կարող սարսափ չզգալ, որովհետև նա դրանում տես-

---

[1] **«Հորիզոն»,** № 125, 13 հունիսի 1912 թ.:

[8] Տե՛ս նույն տեղում, № 55, 16 մարտի 1912 թ.:

[3] Նույն տեղում:

նում է իրեն սպասող հետագա ահավոր վտանգն ու խոչորագույն չարիքը,- ասում էր Թումանյանը:- Էդ վայրենի «արարողությունները» բոլորովին անհամապատասխան են մարդկային մտքի այժմյան զարգացմանը»[1]:

Չնայած այդ ամենին, Հովհ. Թումանյանը բանտում հոգեպես չէր ընկճվել: Ավելին, շարունակում էր աշխատել, ստեղծագործել: 1909 թ. փետրվարին բանտում լրացավ նրա 40-ամյակը: Այդ առթիվ նա գրեց «Վայրէջք» բանաստեղծությունը: Հաղթահարելով հոգեկան խոռվքները՝ բանաստեղծը բանտում գրեց նաև «Մի կաթիլ մեղրը»:

Ձերբակալվածներին, ինչպես ասվեց, մեղադրանք էր ներկայացվել քրեական օրենսգրքի 102-րդ հոդվածով:

Հովհ. Թումանյանին ներկայացրած մեղադրանքը հաստատելու համար նախաքննության ժամանակ իբրև վկաներ Ղազախից Թիֆլիս էին կանչվել տեղի ղեկավարներից Վեքիլովը և մի քանի ուրիշ կովկասյան թուրքեր, ինչպես նաև Լոռու Իգահատ (Այգեհատ) գյուղից Շահբազ Շահվերդյանը: Հովհ. Թումանյանի եղբայրներից Վահանը «Եղբորս մասին» հուշերում գրում է, որ ռուսական հեղափոխության ժամանակ «Լոռիում կային հատուկ ժանդարմական լրտեսներ, որոնք մատնում էին հեղափոխականներին: Այդ ժամանակ Լոռիում հայտնի էր Իգահատցի Շահբազը, որը կրծքին ուներ հատուկ նշան. այդ նա էր հայտնել Հովհաննեսին...»[2]:

Ղազախից և Լոռուց եկած բոլոր վկաները սխալ ցուցմունքներ էին տվել ի վնաս Թումանյանի, նրան մեղադրել ռուսական կառավարությունը տապալելու կոչեր անելու մեջ:

Վկաների և մեղադրյալ Հովհ. Թումանյանի ցուցմունքների հիման վրա ընդարձակ արձանագրություն էր կազմվել: 1909 թ. մայիսի 26-ին Նովոչերկասկի նահանգային դատարանի քննիչը բազմօրյա հարցաքննությունից հետո կազմում է Թումանյանի ցուցմունքների համառոտ արձանագրությունը և դատարանին ներկայացվելիք իր եզրակացությունը:

1909 թ. հունիսին, վեցամսյա բռնափակումից հետո, Հով-

---

[1] «ԹԺՀ», էջ 599:

[2] Նույն տեղում, էջ 241:

Հաննես Թումանյանի ավագ որդի, անմեղ ճանաչված Մուշեղին մի քանի ուրիշ բանտարկյալների հետ, մինչև դատավարության սկսվելը, գրավականով ու ժամանակավորապես բաց են թողնում Մետեխի բանտից: Իսկ Հովհաննես Թումանյանին բանտից ազատելու համար պահանջվեց 5 հազար ռուբլի, որը մուծեց Թիֆլիսի ունևորներից՝ Թումանյանի ամենամտերիմ մարդկանցից Փիլիպոս Վարդազարյանը: Սա նույնիսկ նեղացել էր, թե ինչո՞ւ Թումանյանին այդքան «էժան են գնահատել», այն դեպքում, երբ մյուսներին ժամանակավորապես ազատելու համար 20–25 հազար ռուբլի էր սահմանվել: Մետեխի բանտից գրավականով ազատվածների թվում էին նաև բանաստեղծ Ավետիք Իսահակյանը և դաշնակցական ուրիշ մտավորականներ:

Բանտից ազատվելուց հետո Թումանյանը 1909 թ. ամռանը ընտանիքով անցկացրեց հայրենի Դսեղ գյուղում: Ստեղծագործական լարված ժամերից հետո նա մանկության ընկերների հետ միասին բնության գրկում էր, ըմբոշխնում էր հարազատ եղերքի հմայքները:

1909 թ. ամռան վերջերին Թումանյանը նորից Թիֆլիսում էր: Նա ընկղմվեց հասարակական լարված աշխատանքի մեջ: 1910–1911 թթ. բանաստեղծը խմբագրում էր Դաշնակցության «Հորիզոն» թերթը, որի էջերում լույս ընծայեց բազմաթիվ հոդվածներ, անստորագիր առաջնորդողներ:

Այդ հոդվածների ու նյութերի որոշ մասը չոչափում էր հայ բանտարկյալների հետ կապված հարցեր, թերթում տպագրվում էին ընթերցողների բողոքները՝ ուղղված կատարվող անօրինականությունների դեմ:

Ինչպես «Հորիզոնում», այնպես էլ կովկասահայ ուրիշ պարբերականներում խուլ բողոքներ էին լսվում, թե Մայր աթոռ ս. էջմիածինը մի կողմ է քաշված, հանդես չի գալիս կատարվող բռնությունների դեմ: Իհարկե, դա այդպես էր, բայց էջմիածինը չէր ցանկանում ավելորդ միջամտություններով ավելի բարդացնել վիճակը, մանավանդ որ իր անունը բազմիցս չոչափվել էր Պետական դումայում, հատկապես «Կովկասյան հարցապնդման» կապակցությամբ: Բացի այդ, էջմիածինը գործին միջամտելու մեկ-երկու փորձ արել էր, որոնք ապարդյուն էին ավարտվել:

Արդեն 1910 թ. հունվարի սկզբին Լբժինը ավարտել էր 1200 մեծածավալ էջերից կազմված ամբաստանագրի կազմումը և դա պրակներով տպագրության տալով, բաժանել էր մեղադրյալներին:

1910 թ. հունվարի 13-ին չտապ Պետերբուրգ կանչվեց Նովոչերկասկի դատաստանական պալատի նախագահ Խոլոդովսկին: Նրան կանչել էին կառավարության նախագահ Պյոտր Ստոլիպինին զեկուցելու դաշնակցականների գործի ընթացքի մասին[1]:

Ստոլիպինը գոհ էր մնացել Լբժինի և նրա ենթակաների կատարած աշխատանքից և խորհուրդ էր տվել առժամանակ սահմանափակել ձերբակալությունները, բայց դրա փոխարեն արագացնել բանտերում գտնվողների հարցաքննությունները և արձանագրություններում ամենախիստ պատիժներ նախատեսել:

Թեև հիմնականում վերջացել էր կովկասյան դաշնակցականների գործերի քննությունը, բայց դա չէր նշանակում, թե ամբողջովին դադարեցվել էին խուզարկություններն ու ձերբակալությունները: Ոստիկանության ճանկն էին ընկնում նորանոր նկատելի գործիչներ, որոնց 1908-1909 թթ. հաջողվել էր խուսափել ձերբակալությունից: Հիմա էլ, իհարկե, ոմանց հաջողվում էր պատահական դիպվածով խույս տալ ոստիկանության նետած ցանցից և նույնիսկ անցնել արտասահման:

Այսպես, 1910 թ. ամռանը խուզարկվում է Սիմոն Վրացյանի

---

* *Նշենք, որ ամբաստանագիրն ըստ էության պատմական կարևոր արժեք ունեցող փաստաթղթերի մի հավաքածու է, ավելին՝ դա ՀՅ դաշնակցության պատմության ժամանակագրական կարգով դասավորված և օտար դիտողի կողմից վերլուծված ուրվագիծ է՝ նրա հիմնադրության օրերից մինչև 1908 թ. սկիզբները: Հենց այդ էր Լբժինի կատարած միակ գրական գործը: Նրա կազմած ամբաստանագրում հավաքված ու դասավորված են ՀՅԴ վերաբերյալ գրավոր տվյալներ, որոնք կարող են օգտակար լինել այդ կուսակցության պատմությունն ուսումնասիրողների համար:*

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 8, 15 հունվարի 1910 թ.:*

բնակարանը և ոստիկանների ձեռքն է ընկնում 1907 թ. սկզբին Վիեննայում գումարված ՀՅԴ Չորրորդ ընդհանուր ժողովի արձանագրությունների սևագրությունների մի մասը: Ինքը՝ Վրացյանը, պատահականորեն տանը չէր եղել և կարողացել էր թաքնվել: Նույն տարվա ամռանը նա հաջողում է կեղծ անցագրով անցնել Թուրքիա և ուսուցչի պաշտոն ստանձնել Կարինի Սանասարյան վարժարանում[1]:

Իր գործունեությանը Ստոլիպինի տված բարձր գնահատականից հետո Լրժինն է՛լ ավելի մեծ եռանդով շարունակեց տարբեր քաղաքների բանտերում տառապող հայերի հարցաքննությունները և ամբաստանագրերի կազմումը[2], որոնք, Միքայել Վարանդյանի վկայությամբ, 40 հազար էջից պակաս չէին[3]: «Գործի» հսկայածավալ արձանագրության մեջ ռուսերեն թարգմանությամբ զետեղված էին դաշնակցական կազմակերպությունների գրած ու տարածած բազմաթիվ թռուցիկներ և կոչեր, դաշնակցական մամուլի, մասնավորապես «Դրօշակի» էջերում ազատության կարճատև շրջանում լույս տեսած ամբողջական հոդվածներ, ընդարձակ քաղվածքներ այլ հրատարակություններից: Այդտեղ կար նաև պատմական տեղեկանք Դաշնակցության մասին, որտեղ տրված էին նրա ծագման պատմությունը, գործունեությունը, կազմակերպական կառուցվածքը, կազմը*: Զետեղված էին կուսակցության կանոնադրությունը, «Կովկասյան նախագիծը», ինքնապաշտպանության կոիվների մասին մի ուրիշ փաստաթուղթ և այլն: «Գործի» մեջ էին նաև

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 8 (354), օգոստոս, 1954, էջ 85: Նույն թվականին Կարինում է հաստատվում նաև Ռոստոմը՝ որպես ազգային վարժարանների ընդհանուր տեսուչ (տե՛ս նույն տեղում):

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 10, 17 հունվարի 1910 թ.:

[3] Տե՛ս **Միքայէլ Վարանդեան**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 122:

* Դաշնակցության մասին ավելի քան 70 էջանոց տեղեկանք է պահպանվում արխիվում (ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 237, թթ. 1–73): Ինչպես երևում է փաստաթղթի բովանդակությունից, դա գրվել է նշված ժամանակ և հնարավոր է, որ դատական գործի մեջ զետեղված որևէ տեղեկանքի նախնական տարբերակներից մեկն է:

Դաշնակցության կազմակերպությունների և ղեկավար մարմինների ուղարկած մեծաթիվ գրություններ, կուսակցության անդամների բազմաթիվ նամակներ և հեռագրեր, ամեն տեսակ այլազան փաստաթղթեր: Դատական իշխանություններին հայտնի էր դարձել Դաշնակցության ողջ ընդհատակյա գործունեությունը, գիտեին, թե պետական բարձրաստիճան պաշտոնյաներից որին ով է ահաբեկել, վերծանվել էին կուսակցության ղեկավար և ստորին մարմինների գրությունների ծածկագրերը, հայտնի էին դարձել Անդրկովկասի մեծ ու փոքր կենտրոններում ստեղծված զենքի պահեստների զգալի մասի տեղերը, գիտեին, թե զինամթերքը որտեղ է գնվել, ինչպես է բերվել երկրամաս և այլն:

Հայ գործիչների զանգվածային ձերբակալությունների, նրանց բանտային տառապանքների լուրերը թափանցում էին Կ. Պոլիս ու հայ գաղթաշխարհի այլ կենտրոններ, առաջ բերում խոր դժգոհություն, «աղմուկ ու յուզմունք»[1]:

1910 թ. ապրիլին Կ. Պոլսի Բերայի ս. Երրորդություն եկեղեցում տեղի ունեցավ բողոքի մեծ հանրահավաք, որտեղ Ակնունու և ուրիշների ճառախոսությունների առարկա էր դարձել հայերի իրավական դրությունը Ռուսաստանում և մասնավորապես այն ամբաստանյալների հարցը, որոնք մեկ տարուց ավելի գտնվում էին ցարական բանտերում:

Երբ հարցաքննությունները հիմնականում վերջացել էին, Պոլսի մտավորականությունը միջնորդություն ներկայացրեց պատրիարքին, որպեսզի նա դիմի ռուսական իշխանություններին և խնդրի դատավարությունն անկողմնակալ անցկացնել[2]:

Տարբեր երկրների հայկական գաղութների հայտնած փափագով՝ Կ. Պոլսում կազմվել էր մի կենտրոնական հանձնախումբ, որի անդամներն էին՝ Զապել Եսայանը, Տիլպերը (Երվանդ Տիլպերյան), Ստեփան Սպարթալը, Գրիգոր Զոհրապը, Վարդգեսը (Հովհաննես Սերենգյուլյան), Գարեգին Փաստրմաճ-

---

[1] Տե՛ս Լէօ, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Բ, էջ 65:

[2] ԳԱԹ, Արտաշես Գարագաշյանի ֆոնդ:

յանը և Վահան Փափազյանը: Հանձնախմբի նպատակն էր ստանալ կովկասահայ բանտարկյալների օգտին տրվելիք բոլոր նվիրատվությունները, դրանք գործածել իր նպատակին և մանրամասն հաշիվ տալ հասարակությանը[1]:

Բողոքում էր հայ գաղթաշխարհը: ԱՄՆ-ի հայկական համայնքներում տեղի էին ունենում բողոքի հավաքներ, որոնցում ընդունվում էին ցարական իշխանություններին դատապարտող բանաձևեր: 1910 թ. ամերիկյան 14 մեծ քաղաքների (Ֆիլադելֆիա, Դետրոյթ, Ուստր, Սան Ֆրանցիսկո, Բոստոն, Նյու Յորք և այլն) հայերը դիմումներ արեցին ԱՄՆ-ի կենտրոնական կառավարությանը՝ Դաշնակցության դատավարությունն արագացնելու համար պահանջելով նրա միջամտությունը:

Սակայն ռուսական իշխանությունների դեմ միջազգային հանրությանը տրամադրելու դաշնակցական գործիչների, հատկապես Ակնունու, ցուցաբերած մեծ աշխուժությունը հավանություն չէր գտնում ռուսահայոց մեջ, որոնք դա համարում էին կոպիտ միջամտություն Ռուսաստանի ներքին գործերին: Այդպես էր գտնում նաև դաշնակցականների մի մասը:

«Սուրհանդակը» գրում էր, որ հավաքներով ու Թիֆլիսի բողոքներով փորձելով ճնշում գործադրել ռուսական իշխանությունների վրա, որոշ քաղաքական ուժեր քիթը խոթում են ռուսական արդարադատության գործերի մեջ[2]:

Բանտից երաշխավորությամբ բաց թողնված Հովհ. Թումանյանը «Հորիզոն» թերթի 1910 թ. № 75-ում զետեղեց մի գրություն՝ ուղղված Կ. Պոլսի կուսակցականների անմիտ բողոքի դեմ: Հոդվածի իմաստն այն էր, որ բռնության ու հալածանքների մասին խոսելու, բողոքելու իրավունք չունեն Թուրքիայում ապրողները, քանի որ Թուրքիան միշտ բռնության երկիր է եղել:

Անդրադառնալով բանաստեղծի հոդվածին, Վարդգես Ահարոնյանը նկատել էր, թե «դրանով Յովհ. Թումանեանը ուզում

---

[1] Տե՛ս **«Ասպարէզ»**, № 128, 20 հունվարի 1911 թ.:

[2] Տե՛ս **«Սուրհանդակ»**, № 91, 9 ապրիլի 1910 թ.:

էր ցոյց տալ ռուս կառավարութեան, թէ ինքը բարեյոյս հպատակ է, եւ այդպիսով հեշտացնել իր պաշտպանութիւնը դատարանի առջեւ»[1]: Իհարկէ, այդ հաստատման մեջ կար ճշմարտութեան որոշակի բաժին, բայց միայն այդքանը: Պետք չէ, սակայն, մոռանալ, որ իր գիտակցական կեանքի ողջ ընթացքում Թումանյանը եղել է ռուսական մշակոյթի հետևողական ջատագով ու քարոզիչ, մեծապես գնահատել Ռուսաստանի խաղացած դրական դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Նա նույն անփոփոխ տեսակետը պահպանում էր նույնիսկ ստոլիպինյան հետադիմության դաժան օրերին, երբ ինքը նույնպես իր վրա զգում էր հայերի դեմ սանձազերծած հարվածները: Անգամ այդ պայմաններում Թումանյանի հոդվածը հեղինակավոր մի դաս էր բանտարկյալների անկոչ պաշտպաններին, որոնք էժանագին ժողովրդականություն ձեռք բերելու համար ռուսական իշխանությունների դեմ սկսած արշավով վտանգում էին ռուսահայերի առանց այն էլ ոչ հանգիստ կացությունը:

Ողջունելով Հովհ. Թումանյանի՝ «Հորիզոնում» լույս տեսած հոդվածը, «Սուրհանդակը» գրում էր.

«Պ-րն Յովհաննէս Թումանեանը, մինը ռուսահայ զաւակներից, մինը [Լոժինեան] թիւրիմացութեան զոհերից, այսօր բողոքում է Ռուսիայի դէմ եղած բողոքի դէմ, եւ մենք ուրախ ենք, որ արդէն հասունանում է մերոնց միտքը, երբ գործերը գնահատւում են ոչ թէ ամբոխային տրամադրութեամբ, այլ՝ սեփական առողջ դատողութեամբ»[2]:

Դաշնակցության նկատմամբ սանձազերծած հալածանքները նաև միջազգային լայն արձագանք էին ստացել:

1910 թ. օգոստոսին Կոպենհագենում տեղի ունեցավ II Ինտերնացիոնալի հերթական համագումարը, որի աշխատանքներին պաշտոնական մասնակցություն ունեցավ Դաշնակցությունը՝ իր չորս անդամներով (Նիկոլ Դուման, Միքայել Վարանդյան, Մարտիրոս Հարությունյան (Շիրակնի) և Արմենակ Բար-

---

[1] **Վարդգէս Ահարոնեան,** Յովհաննէս Թումանեան: Մարդը եւ բանաստեղծը, էջ 143:

[2] **«Սուրհանդակ»,** № 91, 9 ապրիլի 1910 թ.:

սեղյան): Իր կուսակցության անունից համագումարում ճառով հանդես եկավ Նիկոլ Դումանը: Հայ պատվիրակները համագումարին մասնավորապես տեղյակ էին պահում այն մասին, թե իրենց կուսակցությունն ինչպիսի անմարդկային հալածանքների է ենթարկվում ցարական իշխանությունների կողմից:

Ռուսահայությունը միանշանակ չընդունեց համագումարում Դաշնակցության ներկայացուցիչների հակառուսական պահվածքը. շատերը Կոպենհագենում նրանց գործունեությունը, հատկապես Նիկոլ Դումանի ելույթը, համարում էին միանգամայն անընդունելի, քանի որ դրանով իսկ Ստոլիպինի կառավարությանը տալիս էին նոր առիթներ արդարացնելու և ուժեղացնելու իր հակահայկական քաղաքականությունը:

Արտասահմանում իր հասցեին հնչած քննադատությունները Պետերբուրգը հաշվի չէր առնում, թեև արտերկրում գտնվող դաշնակցական նշանավոր գործիչները՝ Սիմոն Զավարյանը, Նիկոլ Դումանը, Հովհաննես Քաջազնունին, Միքայել Վարանդյանը և ուրիշներ շարունակում էին ջանքեր թափել եվրոպական մտավորական ու քաղաքական շրջաններում հայանպաստ կարծիք ստեղծելու և նրանց միջոցով բանտարկյալների վիճակը թեթևացնելու համար:

Շատերի համար այնպես էլ մութ մնաց Դաշնակցությունը բացառիկ դաժանությամբ պատժելու նպատակը: Տարօրինակ էր մանավանդ այն, որ հետապնդվում էր միայն այդ կուսակցությունը, որը համենայնդեպս միակ հեղափոխական կուսակցությունը չէր Անդրկովկասում: Վրացական սոցիալ-դեմոկրատական կամ մյուս հեղափոխական կազմակերպությունները, որոնք նույնպես խոշոր մասնակցություն էին ունեցել 1905-1907 թթ. շարժումներին, ազատ էին մնացել տեղի ունեցող զանգվածային հալածանքներից: Դա տարօրինակ էր մանավանդ այն պատճառով, որ թվում էր թե Վորոնցով-Դաշկովի փոխարքայությունը վերջ է դրել Կովկասում միայն հայերին հալածանքի ենթարկելու գոլիցինյան քաղաքականությանը:

Բայց բոլորի համար պարզ էր, որ Դաշնակցության դեմ ուղղված աննախընթաց հալածանքները, ինչպես և հայ մտավորականության զանգվածային ձերբակալությունները կա-

տարվում էին Ստոլիպինի անձնական միջամտության ու պնդումների հետևանքով:

Չնայած հայ մարդկանց ձերբակալման «դաղար» էր հայտարարված, բայց ռուսական հետադիմական մամուլի օրգանները չարունակում էին իրենց հակահայկական գործունեությունը: Այդ տեսակետից առաջնությունը նախկինի պես պատկանում էր մեծահարուստ և ծերունի Ս. Ս. Սուվորինի սեփականությունը կազմող "Новое Время" թերթին: Նրանից աչխատում էին հետ չմնալ Մոսկվայում 1909 թ. վերջերից հրատարակվող "Русская Земля", նույն ժամանակից լույս տեսնող "Земщина", ապա՝ "Колоколь" պարբերականները, նաև Կարամզինի թոռ իչխան Մեչչերյակովի խմբագրությամբ տպագրվող "Гражданин" թերթը: Այդ և ուրիչ հետադիմական պարբերականներ իրենց էջերը հաճույքով էին տրամադրում հակահայ պետական ու հասարակական գործիչների, զինվորականների, մտավորականության տարբեր ներկայացուցիչների: Օրինակ՝ "Новое Время"-ի չուրջն էին համախմբվել սևհարյուրյակայինների սյունները՝ իչխան Բոբրինսկին, կոմս Դորերին, բանաստեղծ իչխան Ծերթելևին, գեներալ Ստրուկովը, Զեմադուրովը, Գուրկոյը և ուրիչներ:

Ռուս հետադիմական հակահայ գործիչներին աղնիվ ու անկաչառ մղումներով հակադրվում էին ռուսական մչակույթի ու գիտության բազմաթիվ ներկայացուցիչներ: Նրանցից էին Պավել Միլյուկովը, Մաքսիմ Մաքսիմովիչ Կովալևսկին, Վլադիմիր Իվանովիչ Նեմիրովիչ-Դանչենկոն և ուրիչներ:

Հայասեր ռուս գործիչների համաստեղության մեջ իր ուրույն ու պատվավոր տեղն ուներ հայտնի զինվորական գրող, գեներալ-լեյտենանտ Վասիլի Ալեքսանդրովիչ Պոտտոն*:

---

* Վ. Ա. Պոտտոն ծնվել է Տուլայի նահանգում, բայց իր զինվորական ծառայությունն ամբողջովին կատարել է Կովկասում: Նա սիրեց այդ երկրամասը՝ անաչառ և բարյացակամ վերաբերմունք ցույց տալով տեղացիների նկատմամբ: Գեներալ Պոտտոն բեղմնավոր ու բարեխիղճ գրող էր: Զինվորական պատմագրության մեջ նա առաջնակարգ տեղերից մեկն է գրավում: Նա մասնակցել էր ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմին կովկասյան ռազ-

Այն ժամանակ, երբ ցարական իշխանությունները չարունակում էին բռնարարքները ռուսահայության լավագույն ներկայացուցիչների դեմ, Վասիլի Պոտտոն պարբերական մամուլում հաճախ հանդես էր գալիս հայության և նրա մտավորականության եռանդուն պաշտպանությամբ, ռուս հասարակայնության լայն շերտերին ծանոթացնում էր հայ ժողովրդի փառավոր անցյալին, Ռուսաստանին մատուցած նրա անուրանալի ծառայություններին, մշտապես շեշտելով, որ անցյալի դասերը հայ և ռուս ժողովուրդներին ավանդել են համատեղ ընթանալ պատմության քառուղիներով:

Ռուս հայամետ գործիչներին և ընդհանրապես ռուս առաջադեմ հասարակայնությանը մեծ աջակցություն էր 1910 թ. սեպտեմբերին Կովկասի փոխարքա կոմս Իլարիոն Վորոնցով-

---

մաճակատում, ուստի նրա պատմագիտական աշխատություններում մեծ տեղ են բռնում այդ ճակատում ռազմական գործողությունների նկարագրությունները: Բազմաթիվ են այն հատորները, որոնք նրա գրչի արդյունքն են կամ լույս են տեսել նրա խմբագրությամբ: Դրանցում եղած շատ նյութեր անմիջականորեն առնչվում են հայ ժողովրդի պատմությանը: Հիշատակության արժանի է մանավանդ նրա չորս հատորից բաղկացած "Кавказская война" («Կովկասյան պատերազմ») աշխատությունը: Դա արժեքավոր աշխատություն է՝ գրված գեղարվեստական գրավիչ ոճով: Այստեղ հեղինակը պատմական հայացք է գցել Հայաստանի անցյալին: Որքան սեր կա այդ աշխատության մեջ Կովկասի ու նրա բազմազգ ժողովուրդների, նրանց հերոսների ու պատմական ավանդույթների, հայերի ու նրանց հայրենիքի հանդեպ: Վասիլի Պոտտոն հայոց պատմությունը սիրել է ամենահայրենասեր հայի նման: Ամենևին չունենալով որևէ նախապաշարում, առաջնորդվելով լոկ պատմական ճշմարտությունն ընթերցողին անաչառ ներկայացնելու ձգտումով, նա մեծ ծառայություն է մատուցել հայությանը՝ ռուս հասարակայնությանը ներկայացնելով հայ ժողովրդի անցյալի պատկերները՝ գրավիչ ու գեղեցիկ ոճով: Այնքան մեծ էր գեներալի սերը Հայաստանի նկատմամբ, որ հայտնի չարախոս Վելիչկոն իր հայակերական կատաղի արշավանքի ընթացքում Պոտտոյին անվանում էր «Հայ պատմաբան»: Պոտտոն աշխատություն է գրել նաև հայազգի հայտնի հերոս գեներալ Հովհաննես Լազարյանի (Իվան Լազարև) մասին: Նա գրել է նաև Արցախի նշանավոր գործիչներից մեկի՝ Ջրաբերդի Մելիք-Վանի Աթաբեկյանի կենսագրությունը: Վասիլի Պոտտոն վախճանվել է 1911 թ. նոյեմբերի 20-ին Թիֆլիսում, 76 տարեկանում (տե՛ս ***«Ղարաբաղ»*** *[Շուշի], № 7, 1911 թ.):*

Դաշկովի ժամանումը Պետերբուրգ, ուր նա մի քանի պաշտոնական հանդիպումների ժամանակ մի անգամ ևս դրական էր արտահայտվել ընդհանրապես կովկասահայության, մասնավորապես երկրամասի տնտեսության մեջ նրա ունեցած առաջատար դերի մասին: Կովկասահայության մասին Վորոնցով-Դաշկովը պատմել էր նաև արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Պետրովիչ Իզվոլսկուն՝ նրա հետ ունեցած հանդիպման ժամանակ:*

1910 թ. հոկտեմբերի 4-ին Կովկասի փոխարքան Պետերբուրգից վերադարձել էր Թիֆլիս:

Մայրաքաղաքում գտնված ժամանակ փոխարքան վերջնական տեսքի բերեց իր հնգամյա գործունեության և Կովկասի դրության մասին գրած իր զեկուցագիրը և ներկայացրեց Նիկոլայ II կայսրին:

Կովկասի կառավարման երկրորդ տարում 1907 թ. փոխարքան կայսրին էր ներկայացրել իր առաջին զեկուցում-հաշվետվությունը, որի առիթով ռուսական բոլոր խոշոր թերթերը արտահայտել էին իրենց տարատեսակ կարծիքները: Եվ ահա՛ նա երկրորդ զեկուցագիրն էր ներկայացնում ցարին:

Ինչպես նշվել է վերը, Վորոնցով-Դաշկովը, արդարև, խելացի, հմուտ և նուրբ քաղաքագետ-կառավարիչ էր, որը կարողացավ ոչ միայն զգալի չափով վերահաստատել կարգն ու խաղաղությունը կովկասյան երկրամասում, այլև նրա բազմազգ բնակչության մեջ ներշնչել սիրո ու համակրության զգացմունքներ Ռուսաստանի և ռուս ժողովրդի հանդեպ: Եվ որ գլխավորն է՝ փոխարքան այդ նպատակին հասավ ոչ թե բացառիկ խստություններով, ինչպես քարոզում ու պահանջում էին ռուս «հայրենասերները», այլ բոլորովին ուրիշ քաղաքականություն գործադրելով:

Զեկուցագրի մեջ ասվում էր, որ հեղափոխական փոթորկից հետո Կովկասը գտնվում է հաստատուն խաղաղեցման նախօր-

---

* *Այդ հանդիպումից մի քանի օր հետո՝ 1910 թ. սեպտեմբերի 25-ին, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի պաշտոնը 4.5 տարի զբաղեցրած Իզվոլսկին հրաժարական տվեց:*

յակին: Ներկայումս Կովկասի ամբողջ տարածության վրա հեղափոխական որևէ նշանավոր կազմակերպություն չկա, այդ թվում՝ երկիրն անիշխանական դրության հասցրածները: Ճիշտ է, գրում էր փոխարքան, ժամանակ առ ժամանակ Կովկասի զանազան տեղերում պատահում են հանդուգն ավազակությունների և կողոպուտի առանձին դեպքեր, որոնց մեջ պետք է տեսնել հեղափոխական խռովության արձագանքը, բայց այդ դեպքերն այժմ չատ հազվադեպ են և դրանց չպետք է չփոթել հեղափոխական խռովության հետ:

Եթե հեղափոխական առճակատումների առաջն առնելու և դրանք արմատախիլ անելու համար գործադրված խիստ միջոցները ժամանակին հույս էին տալիս, որ դրանք շուտով կճնշվեն, նշում էր փոխարքան, ապա համեմատաբար հանգիստ պայմաններում հիշյալ միջոցների գործադրումն անարդյունավետ է, ուստի անհրաժեշտ են այնպիսի ձեռնարկումներ, որոնք հիմնականում կարողանան քաղաքակրթապես ազդել ամենևին էլ հեղափոխականորեն չտրամադրված և գլխավորապես կովկասյան ավազակներ տվող մուսուլման ազգաբնակչության բուն կենցաղավարության վրա: Իսկ դա պահանջում է որոշակի ժամանակ՝ նպատակի բարդության պատճառով:

Կովկասում հանգստությունը վերականգնելու ապացույց է նաև այն, գրում էր փոխարքան, որ երկրի քաղաքները եռանդով սկսել են զարգացնել իրենց բարեկեցությունը: Գյուղում նույնպես առաջընթաց է նկատվում:

Փոխարքան առաջարկում էր եռանդուն միջոցներ ձեռք առնել կովկասյան գյուղում ամրացնելու հողի սեփականության իրավունքը, վերացնելու կալվածատերերից գյուղացիների կախման հարաբերությունները՝ նրանց իրենց հողի իսկական սեփականատերեր դարձնելով: Կառավարությունը պետք է հնարավորինս օգնության ձեռք մեկնի գյուղացիներին: Փոխարքայի կարծիքով՝ վերջիններս պետք է կալվածատերերից հողերը հետ գնեն, ինչին պետք է օժանդակի պետական գանձարանը՝ գյուղացիներին ցածր տոկոսով փոխատվություն տալով:

Աշխատության նախորդ էջերում անդրադարձել ենք միհրանական շարժման առաջացման պատճառներին, նրա նպատակներին, շարժման ղեկավար Միհրանի անձին, նրա հակադաշնակցական գործունեությանը:

ՀՅ դաշնակցության նախկին անդամը դուրս գալով կուսակցությունից՝ դարձել էր նրա երդվյալ թշնամին: Դաշնակցության ահաբեկիչները կենտրոնի հանձնարարությամբ տեռորի երեք փորձ էին արել, բայց Միհրանը ողջ էր մնացել:

Միհրանի եղբայրները տեղեկացված էին, որ Դաշնակցության ղեկավարության որոշումով են կատարվում այդ ահաբեկչական փորձերը, ուստի պատրաստ էին վրեժխնդրական գործողությունների դիմելու: Եվ առաջին ահաբեկչության վայր ընտրվեց Հայաստանի բուն կենտրոն Կարինը (Էրզրում):

*«Յառաջ» թերթը, որ ՀՅ դաշնակցության օրգանն էր, տպագրվում էր Թիֆլիսում՝ խմբագիր ունենալով հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ, Դաշնակցության ականավոր տեսաբան ու փայլուն հրապարակախոս Եղիշե Թոփչյանին: Նրա խմբագրած թերթը թերևս ամենամեծ ու վճռական դերն էր կատարել ՀՅ դաշնակցությանը դեպի սոցիալիստական գործունեություն մղելու, Վիեննայի ժողովում կուսակցության կողմից **միջին գիծ** որդեգրելու տեսակետից: Գրչով ու խոսքով նա եռանդուն պայքար էր տարել թե՛ միհրանական շարժման և թե՛ անջատողական հոսանքի դեմ՝ պառակտումից ու քայքայումից կուսակցությունը փրկելու համար[1]:*

Լրժինյան բռնություններից խուսափած և Թիֆլիսից փախած մի խումբ դաշնակցական մտավորականներ հաստատվել էին Կարինում և այնտեղ ծավալել եռանդուն գործունեություն: Նրանք իրենց ձեռքն էին առել Կարինի և շրջակա գյուղերի դպրոցական գործը, կազմակերպում էին թատերական ներկա-

---

[1] *Տե՛ս* ***Սիմոն Վրացեան,*** *Կեանքի ուղիներով, դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատ. Բ, էջ 121:*

յացումներ և այլն: Քաղաքը հայկական մշակութային կենտրոնի նշանակություն էր ստանում[1]:

Բանտարկությունից խուսափելու համար Թիֆլիսից հեռացել, սահմանն անցել և Կարինում հաստատվել էր նաև Եղիշե Թոփչյանը: Նա այստեղ շարունակում էր հրատարակել Թիֆլիսում դադարեցված «Յառաջը»:

Ինչպես իր տեղում նշել ենք, Միհրանի եղբայր, նախկինում նշանավոր հայդուկ եղած Հաբեթը, իմանալով, որ ՀՅԴ Հինգերորդ ընդհանուր ժողովից (1909 թ. սեպտեմբեր, Վառնա) Կ. Պոլիս եկած Եղիշե Թոփչյանը շուտով Տրապիզոնի վրայով մեկնելու է Կարին, դարանամուտ է լինում Բաբերդ քաղաքի մոտ գտնվող Խաթրատ գյուղում, և երբ Թոփչյանն անցնում է գյուղի մոտով, ատրճանակի կրակոցով սպանում է նրան:*

Դա 1909 թ. հոկտեմբերի 10-ին էր: Նշանավոր մտավորականը գտնվում էր իր բեղմնավոր կյանքի ծաղկուն ու կատարելապես հասուն շրջանում[2]:

---

[1] ***Լեո,*** *Անցյալից, էջ 227:*

* *Պետերբուրգի դաշնակցական ուսանողությունը որոշել էր «Պսակ» անունով մի ժողովածու հրատարակել՝ նվիրված Եղիշե Թոփչյանի հիշատակին: Ժողովածուն տպագրվեց 1910 թ. սկզբներին Մոսկվայում, բայց տպարանից դեռ դուրս չհանված՝ գրաքննության կողմից առնվեց արգելքի տակ և ամբողջ տպաքանակը այրվեց՝ որպես հակապետական բովանդակություն ունեցող հրատարակություն: Դաշնակցական նշանավոր գործիչներից Համբարձում Տերտերյանը վերհիշել է. «Այդ ժամանակ Ս. Վրացեանի հետ Պետերբուրգում ապրում էինք միեւնոյն սենեակում: «Պսակ» ժողովածուից մի օրինակ, որպէս նմոյշ, գտնւում էր Ս. Վրացեանի մօտ, որը խոստանում էր հրատարակութեան տալ Ամերիկայում: Հետագային առիթ չունեցայ նրանից հետաքրքրուելու, թէ ի՞նչ եղաւ ժողովածուի փրկուած այդ մի օրինակը: «Պսակի» մէջ յօդուածներ ունէին ընկերներ Աւետիս Ահարոնեանը, Սիմ. Վրացեանը, Խաչ. Կարճիկեանը, Համբ. Տէրտէրեանը, Միչա Արզումանեանը, Հ. Թորոսեանը եւ ուրիշներ» (**«Հայրենիք»**, № 8 (354), օգոստոս, 1955, էջ 84):*

[2] *Եղիշե Թոփչյանի սպանության մանրամասները տե՛ս* ***«Մշակ»****, № 252, 13 նոյեմբերի 1909 թ.,* ***«Յառաջ»*** *(Կարին), № 9, 2 փետրվարի 1910 թ.,* ***«Ժայռ»*** *(Ալեքսանդրապոլ), № 77, 10 հոկտեմբերի 1910 թ.,* ***«Հայրենիք»****, № 1 (395), հունվար, 1959, էջ 16-17:*

Թուրքական ոստիկանությունը ձերբակալում է Հաբեթին: Նա տեղափոխվում է Կ. Պոլիս և այնտեղ կախաղան հանվում 1910 թ. սկզբին[1]:

Միհրանը շարունակում էր թաքնված մնալ Դոնի Ռոստովից մի քանի ժամվա հեռավորությամբ գտնվող մի ռուսական գյուղում: 1910 թ. սեպտեմբերի 3-ին դուրս գալով գյուղից՝ նստում է Ռոստով գնացող գնացքը և տեղ է հասնում հաջորդ օրը: Քաղաքում նա մնում է երկու օր և սեպտեմբերի 6-ի ուշ երեկոյան մարդատար գնացք է նստում՝ վերադառնալու գյուղ: Նույն վագոնում տեղ էր զբաղեցրել Դաշնակցության ահաբեկիչը՝ գիմնազիստի տարազով: Գնացքի մեկնումից 15 րոպե անց, չսպասելով առաջին կայարան հասնելուն, ահաբեկիչն ատրճանակի կրակոցներով սպանում է Միհրանին: Օգտվելով վագոնում բարձրացած չփոթությունից ու սարսափից՝ նա իջնում է գնացքից և անհայտանում մթության մեջ[2]:

Միհրանի երկրորդ եղբայրը՝ Արշակը, նրա սպանության լուրն առնելով, 1910 թ. սեպտեմբերի 27 թվակիր նամակ է ուղարկում «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարին, որն իր թերթի էջերում ժամանակին դատապարտել էր Միհրանին սպանելու փորձերը*: Նամակում կային նաև այս խոսքերը. «Տասնապատիկ վրէժ պիտի կրեն դաշնակցականները: Միհրանի ազգականներից դեռ չատ Միհրաններ ողջ են Տաճկաստանում, գուցէ ականատես կ'ըլլաք եղբայրասպան կռիւներուն»[3]:

Բայց իր երկու նշանավոր եղբայրներին կորցրած Արշակն այլևս անուժ էր վրեժխնդրական գործողությունների դիմելու: Նրա երկու եղբայրների սպանությամբ դադարում են փոխադարձ հետապնդումներն ու մահափորձերը:

---

[1] **«Ցառաջ»**, № 9, 2 փետրվարի 1910 թ.:

[2] Տե՛ս **«Հայրենիք»**, № 43, 18 հոկտեմբերի 1910 թ., **«Ժայռ»**, № 80, 20 հոկտեմբերի 1910 թ., **«Հայրենիք»**, № 1 (395), հունվար, 1959, էջ 17:

* Ոչ միայն «Մշակում», այլև ժամանակի հակադաշնակցական մամուլի ուրիշ օրգաններում դատապարտվել են Միհրանի և նրա եղբայրների սպանության փորձերը և Միհրանի ահաբեկումը:

[3] **«Հայրենիք»**, № 1 (395), հունվար, 1959, էջ 17:

Էջմիածին ոտք դնելու առաջին իսկ օրից ընտրյալ կաթողիկոս Մատթեոս արք. Իզմիրլյանը հանդիպեց սինոդի անդամների, միաբանների և մյուս հոգևորականների ամենասառն ընդունելությանը, ավելին՝ նրանց անթաքույց արհամարհանքին ու հակակրությանը: Փարիզ՝ Արշակ Զոպանյանին ս. Էջմիածնից հղած նամակում նկարագրելով վանքի մթնոլորտը, Կոմիտաս վարդապետը գրում էր. «Լաւ կարդա՛ այժմ այն, ինչ քեզ պիտի գրեմ, մէկ օր քեզ պիտի յիշեցնեմ այս խոսքերս: Այստեղ Իզմիրլեանին պիտի վարկաբեկեն հէնց այն անձինք, որոնք երեսանց, իբր թէ, նորա ջերմ պաշտպաններն էին: Այս լաւ յիշէ՛»[1]:

Երկար ճանապարհորդությունից հոգնած կաթողիկոսը վեհարանում չգտավ նույնիսկ մի անկողին՝ հանգիստ ունենալու համար: Եվ երբ ներկաներից մեկը հանդիմանել էր վանքի՝ այդ մասին հոգալու պարտականություն ունեցող ծառայողներին, նրանցից մեկը տվել էր այսպիսի պատասխան. «Կարծում էինք, թէ հայրապետը Պետերբուրգից կը վերադառնայ Պոլիս»[2]:

Էջմիածին գալուց երկու շաբաթ հետո Իզմիրլյանը, չկարողանալով դիմանալ ամառվա տոթին, գնում է Բյուրական՝ հանգստանալու վանքի ամառանոցում: Այնտեղ գտնվելու ամբողջ ընթացքում Էջմիածնի 40-ից ավելի արքեպիսկոպոս, եպիսկոպոս և վարդապետ միաբաններից կամ սինոդի անդամներից որևէ մեկը չգնաց կաթողիկոսին տեսության: Լքված ու միայնակ, նա ծանր հիվանդացավ՝ խնամքի կարոտ ու կիսաքաղց: Նույնիսկ այդ ժամանակ եպիսկոպոսներից կամ արքեպիսկոպոսներից որևէ մեկը նրան չայցելեց:

Էջմիածնի կղերի անմարդկային վերաբերմունքը խորապես ազդել էր լիովին անուշադրության մատնված Հայրապետի վրա:

Գրիգորիս վրդ. Պալաքյանը, որը Իզմիրլյանին համակրող և նրան պաշտպան կանգնած երկու-երեք հոգևորականներից

---

[1] ***Կոմիտաս վարդապետ***, *Նամականի, էջ 160:*

[2] ***«Մշակ»***, *№ 3, 9 հունվարի 1911 թ.:*

մեկն էր, այցելելով անօգնական հիվանդին, նրանից լսել էր այս տրտունջը էջմիածնի միաբանների նկատմամբ. «Զաւա՛կս, ասոնք իմ մահուանս կը սպասեն, երանի՜ թէ մեռնէի, իրե՛նք ալ ազատուէին, ես ալ...»[1]:

Երբ կաթողիկոսը քիչ թե չատ կազդուրվելուց հետո Բյուրականից վերադարձավ էջմիածին, նա վանքում չարունակում էր մենավորի կյանք վարել՝ թշնամական հայացքների տակ:

Ոչ միայն էջմիածնի միաբաններն անխտիր, այլև ճեմարանի աշակերտները, կղերի դրդմամբ առիթներ փնտրելով, վշտացնում էին կաթողիկոսին: Մի օր նրանք գնացել էին վեհարան, ինքնագլուխ մտել հայոց հայրապետի սենյակը և անպատկառությամբ պահանջել անառարկելիորեն կատարել իրենց ուզածը: Իր երկարատև կրոնական ծառայության ընթացքում նման բան չտեսած կաթողիկոսը հուզված ասել էր. «Մինչեւ հիմա եպիսկոպոսները ու վարդապետները երեսիս կը պոռային, այժմ ճեմարանի աշակերտներն ալ սկսան պոռալ»[2]:

Կաթողիկոսն այդ ամենը չատ ցավագին էր ընդունում:

Մինչև Իզմիրլյանի էջմիածին գալն այնտեղ ստեղծված անտանելի մթնոլորտի մասին պարբերաբար տագնապ էր բարձրացնում հայ հասարակությունը: Լեոն գրել է. «Գաղափարներ, աշխարհայեցողութիւն, գաղափարական մրցութիւն էջմիածնի միաբանների մէջ չկան: Այնտեղ կայ միմիայն անձնական շահերի, ձգտումների մրցութիւն: Դուք կը տեսնէք որ եթէ էջմիածնում եւ նրանից դուրս կան մրցութիւններ, բայց ոչ թէ յանուն գաղափարի, այլ միայն այս կամ այն պաշտօնը, այս կամ այն դիրքը գրաւելու համար»[3]:

Էջմիածնի կղերականներն Իզմիրլյանի դեմ պայքարում վարպետորեն գործածում էին էջմիածնի հոգևորականության ներքին հակասություններից նրա անտեղյակությունը, որի հետևանքով ոմանց հաջողվում էր նրան տրամադրել առանձին արժանավոր բարձրաստիճան եկեղեցականների դեմ և, ընդհա-

---

[1] **«Մշակ»**, № 3, 9 հունվարի 1911 թ.:

[2] **«Ժամանակ»** (Կ. Պոլիս), 21 դեկտեմբերի 1910 թ.:

[3] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 221, վավ. 94:

կառակը, պաշտպանության տակ առնել անարժաններից ոմանց:

Իզմիրլյանի Էջմիածին ժամանման օրերին դեռևս ծայրագույն վարդապետ Կարապետ Տեր-Մկրտչյանը համարում էր, որ Վեհից եղած դժգոհության պատճառներից մեկը Եփրեմ վրդ. Սուքիասյանին եպիսկոպոս օծելն էր՝ առանց ժողովրդական պահանջի և առանց հաշվի առնելու, որ նա ապրում է հոգևորականին անվայել կյանքով[1]: Մյուս կողմից, նույն Կարապետ ծ. վրդ.ը, որն ստացել էր եվրոպական համալսարանական կրթություն, մեծ ապագա ունեցող հայագետ էր և նվիրյալ եկեղեցական, ենթարկվել էր կաթողիկոսի չպատճառաբանված նախատինքին, որի պատճառով լարվել էին նրանց հարաբերությունները: Բայց այդ եզակի սայթաքումները չէին կարող ստվերել Իզմիրլյանի անձը, որովհետև դրանք ընդամենն անցանկալի բացառություններ էին նրա անցած մեծ ճանապարհին:

«Ոստան» (Կ. Պոլիս) թերթը վկայում էր, որ Իզմիրլյանն «ունէր լաւագոյնս վարելու յատկութիւններ Էջմիածնի կաթողիկոսութիւնը»: Բայց, ցավոք, նա հիվանդ էր: «Տառապած եւ մարմնապէս քայքայուած մարդէ մը հոգեկան արիութիւն պահանջելը ասպետութիւն չէ: Մարմինի ցաւերը հոգեկան տխուր տրամադրութիւններու աղբիւր են: Իզմիրլեան այդ վիճակին մէջ էր երբ մեկնեցաւ Էջմիածին, ու այդ հիւանդագին վիճակին վրայ աւելցուցէ՛ք Էջմիածնայ դաժան կլիմային ազդեցութիւնը, ու մանաւանդ յար պառակտած, ռուս կառավարութենէն երես ելած միաբաններու էնթրիկները (խարդաւանքները:- Հ. Ս.): Իզմիրլեան ինչպէ՞ս կրնար գործել»[2]:

Չնայած դրան, Մատթեոս Բ-ն այնուամենայնիվ կարողացավ 1909 թ. աշնանը բարենորոգչական որոշ գործեր կատարել: Հայրապետական կոնդակով նա պատվիրեց այսուհետև սինոդի, կաթողիկոսական դիվանի, կոնսիստորիաների, հոգևոր ատյանների և թեմական դպրոցների վարչությունների միջև բոլոր գրությունները կատարել ժողովրդին հասկանալի աշխարհաբա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1713, թ. 2:

[2] **«Ոստան»** (Կ. Պոլիս), № 1, 1 հունվարի 1911 թ.:

րով: Հերթի էր դրած մյուս հուզող խնդիրը՝ հայերի ձեռքը տալ աշխարհաբար Ավետարանը[1]: Կարևոր նշանակություն տալով ս. Էջմիածնի վանքի գործերի կարգավորմանը, կաթողիկոսը կազմեց հինգ հոգուց բաղկացած հանձնախումբ, որը սկսեց մշակել վանական կանոնադրություն: Դպրոցական գործը կանոնավորելու համար, «Положение»-ի 1178-րդ հոդվածի, 1874 թ. Բարձրագույն հաստատված օրենքի և Կովկասի փոխարքայի հրատարակած ժամանակավոր կանոնների հիման վրա Իզմիրլյանն ստեղծեց հանձնախումբ, որը պատրաստեց և հրատարակեց ուսումնական գործը կարգավորող «Ժամանակավոր հրահանգ»: Նա ձևավորեց ուսումնական հանձնաժողով՝ դպրոցների ծրագրեր մշակելու և ընդհանրապես դպրոցական գործերը ղեկավարելու համար: Կաթողիկոսն իր անձնական մի քանի հազար ռուբլով հիմք դրեց հայոց կրթական գործին զարկ տալու կոչված դպրոցական ֆոնդին: Իզմիրլյանը հրահանգ տվեց «Ժամանակավոր ուղեցույց» կազմել թեմական խորհուրդների համար և այլն[2]: Այդ ամենով միայն սկզբնավորվում էին գալիք տարիներին կատարվելիք մեծ գործերը:

Էջմիածինը նույնիսկ կաթողիկոսական մի հարմար գահանիստ չուներ: Այդ էր պատճառը, որ Իզմիրլյանը ձեռնարկեց վայելուչ մի վեհարան կառուցելու գործին: Ալեքսանդր Շիրվանզադեն նամակով նրան խորհուրդ է տալիս օգտվել պատեհությունից և անմիջապես կապ հաստատել մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանի հետ[3]: Բարերարն անմիջապես ցանկություն է հայտնում իրականացնել կաթողիկոսի իղձը:

Վեհափառ հայրապետը Մանթաշյանին ուղղում է հետևյալ օրհնության հեռագիրը.

---

[1] ***«Մշակ»**, № 289, 29 դեկտեմբերի 1909 թ.:*

[2] *Տե՛ս **«Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան»**, գիրք Ը, Մատթէոս Բ Իզմիրլեան կաթողիկոս Ամենայն հայոց, էջ 892, **«Արարատ»**, № 12, դեկտեմբեր, 1912, էջ ԺԷ:*

[3] *Ալ. Շիրվանզադեի նամակն Իզմիրլյանին, վերջինիս պատասխանը և կաթողիկոսի՝ Մանթաշյանին ուղարկած նամակը տե՛ս Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթ. 14, վավ. 519:*

«Փարիզ, Աղէքսանդր Մանթաչեանին.

Այսօր* հանդիսաւորապէս օրհնեցինք նոր Վեհարանի հիմքը նահանգապետի ներկայութեամբ: Օրհնում ենք եւ Ձեր թանկագին կեանքը ու Ձեր գաւակներին:

Մատթէոս Բ. Կաթուղիկոս Ամենայն Հայոց»[1]

Մանթաչյանից ստացվեց հետևյալ պատասխանը.

«Էջմիածին, Նորին Սրբութիւն Կաթուղիկոսին.

Խորապէս զգացուած Ձեր հեռագրից, երկար եւ փառաւոր կեանք եմ մաղթում ի սրտէ Ձերդ Վեհափառութեան՝ ի պայծառութիւն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ:

7 յունիսի 1910 թ., Փարիզ:

Մանթաչեան»[2]

«Արարատ» հանդեսը վկայում էր, որ «Մի եւ կէս տարուայ ընթացքում Վեհափառ Տէր Մատթէոս Կաթուղիկոսը Ս. Էջմիածնում ճանաչուեց իբրեւ մի մարդ՝ վերին աստիճանի օրինապահ եւ կարգապահ, զգուշաւոր, ճիշտ, զգայուն հասարակաց ձայնին, որ արտայայտւում էր պարբերական մամուլում, մաքուր՝ դրամական հաշիւներում, երկիւղած դէպի եկեղեցական կարգերն ու կանոնները: Նա որքան ճիշդ եւ խիստ էր դէպի ինքն եւ իւր համակրողները՝ այնքան զիջող եւ ներող [էր] դէպի իւր հակառակորդները»[3]:

Այդ ամենով հանդերձ անհնար էր հաղթահարել կղերի խարդավանքներն ու դիմադրությունը: Միաբանությունը կաթողիկոսի առջև ստեղծել էր ամեն հնարավոր խոչընդոտները, որպեսզի նա չկարողանա դրական գործունեություն ծավալել: Այդ պայմաններում հեշտ էր խափանել նրա մտահղացումներն ու ծրագրերը:

---

* 1910 թ. հունիսի 6-ին:

[1] **«Արարատ»**, № 6, հունիս, 1910, էջ 506:

[2] Նույն տեղում, էջ 506-507:

[3] **«Արարատ»**, № 12, դեկտեմբեր, 1912, էջ ԺԸ:

Կաթողիկոսին հալածելու լուրը թափանցել էր Էջմիածնի պատերից դուրս և հայտնի դարձել հանրությանը:

Վկայակոչելով Իզմիրլյանի համար ստեղծված անտանելի վիճակը, «Մշակը» գրում էր. «Այն մարդը, որի ահաւոր ձայնից թնդաց Ելդրզ-Քեոչքը, որի լոկ տեսիլը սոսկումներ էր տարածում Ելդրզի ճիւաղի վրայ, այժմ չքացաւ մեր միջից՝ զոհ գնալով ստորաքարշ թզուկների, հասարակական գործը մանրավաճառ դարձրած գործիչների դաւերին»[1]:

Թիֆլիսի «Սուրհանդակ» թերթի թղթակիցը գալով Վաղարշապատ՝ զրույցներ էր ունեցել տեղի բնակիչների հետ: Նրանցից մեկը ցույց տալով վանքը՝ ասել էր. «Մեղք է Վեհափառը սրանց ձեռքին. նա մենակ է, գործակից չունի»[2]:

Հայոց հայրապետի անմխիթար վիճակը հայտնի էր դարձել նույնիսկ Մոսկվայում ու Պետերբուրգում: Մոսկվայում հրատարակվող "Раннее Утро" («Ռանյեյե ուտրո») թերթը դատապարտում էր Իզմիրլյան կաթողիկոսի նկատմամբ Էջմիածնի միաբանության անմարդկային վերաբերմունքը[3]: Նշվում էր, որ երբ Իզմիրլյանը Կ. Պոլսում հայոց պատրիարք էր, հայերը նրան հռչակել էին «երկաթյա պատրիարք», բայց հիմա, երբ Էջմիածնում կաթողիկոս էր, այդ «երկաթյայից» բան չէր մնացել:

Որո՞նք էին Մատթեոս Բ Իզմիրլյանի նկատմամբ տմարդի վերաբերմունքի պատճառները:

Նախ նկատենք, որ Էջմիածնի միաբանությունը բաժանված էր երկու խմբակցության, որոնք խուլ պայքար էին մղում միմյանց դեմ, բայց երկուսը միասին հավասարապես դառնացնում էին Իզմիրլյանի կյանքը:

Առաջին խումբը բաղկացած էր Գևորգյան ճեմարանի շրջանավարտ վարդապետերից, որոնք կաթողիկոսական նախընտրական շրջանում աշխատել էին, որպեսզի կաթողիկոս ընտրվի Օրմանյանը (Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան, Գարեգին

---

[1] **«Մշակ»**, № 3, 9 հունվարի 1911 թ.:

[2] **«Սուրհանդակ»**, № 22, 21 սեպտեմբերի 1909 թ.:

[3] Տե՛ս **"Раннее Утро"** (Москва), № 7317, 19 января 1911 г.

Հովսեփյանց, Երվանդ Տեր-Մինասյան, Հուսիկ Զոհրաբյան և Բենիկ վարդապետներ): Երկրորդ խմբի մեջ դրսեցի կամ ոչ-ճեմարանական վարդապետներ էին, որոնք թեև Իզմիրլյանի ընտրության ժամանակ աշխատել էին նրա օգտին, և դա ոչ թե նրան անկեղծորեն նվիրված լինելու համար, այլ ապագային պաշտոններ ու աստիճաններ ստանալու ակնկալությամբ, բայց տեսնելով, որ ստեղծված անտանելի պայմաններում բացառված է միաբանության մեջ փոփոխություններ կատարելը, անցել էին մյուս խմբակցության կողմը:

Անդրադառնալով էջմիածնում տիրող «հավիտենական անմիաբանություն» երևույթին, Հովհաննես Թումանյանը «էջմիածնի ցավը» վերտառությամբ հոդվածում գրում էր.

«Պատմությունն ասում է, իրականությունը ցույց է տալիս, որ էջմիածնի մթնոլորտում ամեն գործերի մեջ ամենաուժեղ դրդապատճառը եղել է և է անձնականը: Այդ մթնոլորտում միշտ էլ անպակաս են եղել մարդիկ, որ առաջնորդել ու առաջնորդվել են միմիայն անձնականով, սակայն միշտ էլ, «հայ ժողովրդի օգտի ու Հայոց առաքելական եկեղեցու փառքի» անունով: Եվ չափ ու սահման չեն ճանաչել այդ մարդիկ երբեք, երբեք, երբեք:

... Մի չքանչանի, մի պատվի, մի պաշտոնի համար կմոռանան և՛ ժողովուրդ, և՛ եկեղեցի, և՛ Քրիստոս, և՛ Աստված...

Անձնականը. դա էջմիածնի այն հին հիվանդությունն է, այն սոսկալի ախտը, որ այնտեղ վարակում ու ճարակում է անվերջ: Դա հորինում է մի խելակորույս կռիվ, որի մեջ սպառվում ու չեզոքանում են ամենքի ուժերը, դա ստեղծում է մի խեղդուկ մթնոլորտ ուր մեռնում են ամեն եռանդ ու ոգևորություն, թունավոր[վ]ում են ամեն բարի ցանկություններ, խեղդվում են ամեն առաքինություններ: Եվ դա կմաշի ու կսպանի ամեն մարդու, թեկուզ նա լինի Երկաթե»[1]:

---

[1] ***Հովհաննես Թումանյան,*** *Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հատ. 6, Քննադատություն և հրապարակախոսություն, 1887-1912, Երևան, 1994, էջ 267:*

Այնուհետև, Իզմիրլյան կաթողիկոսի դեմ իսկական արշավ էր սկսել Դաշնակցության մամուլը թե՛ Կովկասում և թե՛ արտասահմանում: Նրան բզկտում էր հատկապես Կ. Պոլսի «Ազատամարտը»: Եվ դա այն պատճառով, որ նա հատուկ կոնդակով արգելել էր հայոց եկեղեցիներում կազմակերպել հանրահավաքներ, որոնք սովորաբար ուղեկցվում էին քաղաքական բնույթի ճառերով: Եկեղեցիների քաղաքականացումը թուրքական և ռուսական կառավարություններին առիթներ էր տալիս դիմելու պատժամիջոցների ոչ միայն ազգային-հեղափոխական կազմակերպությունների, այլև Հայ եկեղեցու դեմ:

Արհամարհելով կաթողիկոսի կոնդակը՝ հնչակյաններն ու դաշնակցականները եկեղեցիներում, հատկապես Կ. Պոլսում, շարունակում էին աղմկալից հավաքները. ճառախոսները խստիվ քննադատում էին Իզմիրլյանին, նրան մեղադրում սիմոնականության և նույնիսկ կաշառված լինելու մեջ: Անարդարացի մեղադրանքներն անցնում էին դաշնակցական և հնչակյան մամուլի էջերը: «Մաքուր անուն մը ունէի, ան ալ կ'աշխատին աղտոտել»[1],- ասել էր կաթողիկոսը:

Այդ ամենով հանդերձ կաթողիկոսն ավելորդ էր համարում գոնե մի թթու խոսք ասել իր անձն այպանել ձգտող լրագրողների ու գործիչների հասցեին՝ չակնկալելով մամուլի ուրիշ օրգանների պաշտպանությունը:

«Գովասանքներ, փառաբանութիւններ չեն հարկաւոր ինձ,- ասում էր Վեհափառը:- Ծանր, դժնդակ պայմաններ, քայքայուած աթոռ, տնտեսական ամենավատթար վիճակ, ըմբոստ եւ սանձարձակ հոգեւորականութիւն ամէն տեղ: Այս կացութեան մէջ ես փափագում եմ առողջ եւ անաչառ քննադատութեան: Ես ամենից առաջ մամուլի ազատութեան կողմնակից եմ: Բայց միմիայն մի ցանկութիւն ունիմ – որ մամուլը արձանագրէր ճշմարտութիւնը, փաստերը հաղորդելով այնպէս, ինչպէս որ նրանք տեղի են ունենում: Այդպիսի բան ես չեմ տեսնում հայ թերթերի մէջ: Եւ ցաւում եմ, ոչ թէ անձնական պատճառով: Կայ

---

[1] **«Ժամանակ»**, 21 դեկտեմբերի 1910 թ.:

աւելի մեծ ցաւ: Այդ այն է, որ մեր ժողովուրդն է մոլորութեան մէջ ընկնում: Հայրապետական աթոռը դեռ շատ հարկաւոր է մեր ժողովրդին: Ցաւում եմ, որ լրագրողների անձնական նկատումները վիհ են բաց անում ժողովրդի եւ Հայրապետական աթոռի մէջ (միջև:- Հ. Ս.): Այս մեր դժբախտութիւններից մէկն է»[1]:

«Որքան հեռու են մեր բարքերը քաղաքակիրթ ազգերի բարքերից»[2],- վշտացած ասում էր նա:

Կարծես քիչ էին այդ հուզումնալից միջադեպերը, Պոլսից ու Երուսաղեմից Էջմիածնի միաբանության և անձամբ, կաթողիկոսի հասցեներով գալիս էին նշված քաղաքներում տարածված թռուցիկներ: Գրիգորիս վրդ. Պալաքյանն աշխատել էր, որպեսզի այդ թռուցիկների մասին չիմանա Իզմիրլյանը, բայց, այնուամենայնիվ, դրանցից մի քանիսն ընկել էին նրա ձեռքը և անչափ վշտացրել ծերունազարդ հայրապետին:

Կաթողիկոսը չարիքի առաջն առնելու որևէ միջոց չուներ...

Երբ օրերից մի օր միաբանները հերթական անմարդկային արարքն էին արել Իզմիրլյանի նկատմամբ, Պալաքյան վարդապետը նրան խորհուրդ էր տվել խստություններ կիրառել և առաջին հերթին մաքրագործել վանքի միաբանությունը, որտեղից էլ գալիս էին կաթողիկոսի հանդեպ բոլոր սադրանքներն ու նյութվող դավերը:

Ի պատասխան այդ առաջարկի, հայոց հայրապետն ասել էր. «Զաւա՛կս, ասոնց հետ գլուխ չը պիտի կրնամ ելլել, ասոնց մէջ ո՛չ եպիսկոպոս կայ, ո՛չ վարդապետ՝ ամէնքն ալ մէկ-մէկ կաթողիկոսներ են»: Ապա վախ էր հայտնել, թե սև ուժերն ունակ են դիմելու ամեն տեսակ սարսափելի քայլերի: «Մակար կաթողիկոսին համար կասկածներ եւ զրոյց կայ եղեր թէ խեղդամահ եղած է,- ասել էր նա:- Ասոնց հետ ինչպէ՞ս գլուխ ելլեմ. ասոնք մարդ կը լմընցնեն»[3]:

---

[1] **«Հորիզոն»**, № 279, 15 դեկտեմբերի 1910 թ.:

[2] Նույն տեղում:

[3] **«Ժամանակ»**, 21 դեկտեմբերի 1910 թ.:

Նշենք, որ այդ ամենը տեղի էր ունենում, երբ Իզմիրլյանը կաթողիկոս դեռ չէր օծվել:

Մեն-մենակ մնացած հայրապետը տվայտում էր անորոշության ու ունայնության մեջ: Ծայր էր առել տառապանքը:

Օծումից (1909 թ. սեպտեմբերի 13) հինգ օր առաջ Իզմիրլյանը, որևէ ելք չտեսնելով ստեղծված անելանելի վիճակից, գրում է Նիկոլայ II կայսեր ուղղված հեռագիր, և իր մոտ կանչելով դիվանապետ Բարկեն վարդապետ Աղավելյանին, նրան պատվիրում է շարադրանքը թարգմանել ռուսերենի ու բերել իրեն ստորագրելու: Դա կայսեր հղվելիք հրաժարականի թուղթ էր:

Ահա՛ հեռագրի տեքստի շարադրանքը, որի բնագիր-ձեռագիրը պահպանվում է Մատենադարանում.

«Նորին Մեծութիւն ամենաբարեպաշտ թագաւոր կայսեր ամենայն ռուսաց Նիքոլա Բ Ալեքսանդրովիչի խոնարհ հպատակութեամբ աղերս կամ յայտարարութիւն.-

Աստուծոյ ողորմածութեան վստահուած եւ ամբողջ հայոց ազգին կատարած ընտրութիւնը Ձեր Մեծութեան ամենաողորմածաբար հոգատարութիւնէն քաջալերուած՝ Ամենայն Հայոց ծայրագոյն պատրիարք-կաթողիկոսի առ Աստուած, առ Ձերդ Մեծութեան եւ առ համօրէն ազգն հայոց այնքան ծանր պաշտօնն ընդունեցի, սակայն երկամսեայ փորձառական ժամանակամիջոցի մէջ տեսնելով թէ Ամենայն Հայոց Հայրապետութիւնը գործունէութեան այնպիսի դրութեան եւ հանգամանաց հանդէպ կը գտնուի, որ գրեթէ անհնարին պիտի ըլլայ լիովին կատարել այն պարտականութիւնները, զոր ունիմ առ պետութիւնն, առ Հայաստանեայց Եկեղեցին եւ առ ժողովուրդն Հայոց:

Հպատակային երդումն ընելէ եւ Հայրապետական ուխտը կատարելէ եւ օծումն ընդունելէ առաջ պարտք եւ պէտք համարեցի իրաց այս վիճակն ամենախոնարհաբար Ձերդ Կայսերական Մեծութեան արքայական բարձր ուշադրութեան մատուցանել [...] համար ապագայի մէջ իմ պատասխանատուութեան չափը եւ աստիճանը:*

---

* *Մէկ բառ չի կարդացվում:*

Աստուծոյ ամենակալ Աջոյն պահպանութեան յանձնելով Ձեր Մեծութիւնն, Ձեր ամուսին թագուհի Կայսրն, թագաժառանգ իշխանն և Ձեր Մեծութեան ամբողջ կայսերական գերդաստանը, մնամ ընդ միշտ ջերմագին աղօթարար՝

Մատթէոս Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց

7 սեպտեմբեր 1909 ի Ս. Էջմիածին»[1]*:*

Շնորհիվ Պալաքյան վարդապետի և մի քանի միաբանների հորդորների ու աղաչանքների, Իզմիրլյանը հրաժարականի այս հեռագիրը չի ուղարկում ու համաձայնում է ընդունել օծումը:

Ինչպես երևում է արխիվային փաստաթղթերից, Իզմիրլյանը երկու անգամ էր հրաժարական գրել: Երկրորդում ասված էր.

«Ամենաողորմած կայսր Նիկոլա Բ.

Շրջապատուած արտաքին եւ մանաւանդ ներքին ծանր դժուարութիւններէ, անկարելի կը գտնեմ իմ պաշտօնավարութիւնս ներկայ չփոթ եւ անտանելի կացութեան մէջ. հետեւապէս կը խնդրեմ ամենաողորմածաբար հաճիք ընդունիլ տառապեալիս հրաժարականը հայրապետական Մայր Աթոռէն, քանի դեռ օծուած չեմ եւ կ'աղաչեմ որ անմիջապէս նոր ընտրութեան հրաման տաք»[2]*:*

Հազիվ էր կաթողիկոսն ընդունել օծումը[**]*, երբ ավելի ուժգին «ծայր տուին ժամ առաջ եպիսկոպոս ձեռնադրուելու համար ազդեցիկ վարդապետներու խաղերը: Պայքարը բուռն էր, զի իւրաքանչիւր կուսակցութիւն իր խումբէն կ'ուզէր ձեռնադրել տալ եպիսկոպոս, որպէսզի իր ազդեցութիւնը զօրանայ*

---

[1] *Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթ. 14, վավ. 544, թ. 14:*

[2] ***«Ժամանակ»**, 21 դեկտեմբերի 1910 թ.:*

[**] *Իզմիրլյան կաթողիկոսի օծման մասին մանրամասն տե՛ս **«Հորիզոն»**, № 36 և № 37, 1909 թ.:*

Մայր Աթոռէն ներս ու դուրս»[1]:

Ահա՛ այս ամեն գարշանքի մասին է, որ Գրիգորիս վրդ. Պալաքյանը «Բոլորովին նոր եւ քստմնասարսուռ յայտնութիւններ» վերնագրով հոդված տպագրեց Իզմիրլյանի վախճանումից մի քանի օր անց՝ Կ. Պոլսի «Ժամանակ» թերթի 1910 թ. դեկտեմբերի 21-ի համարում: Հոդվածում կատարված մերկացումները կրկին ու կրկին ցույց էին տալիս թե ինչ գաղջ, անտանելի մթնոլորտ էր տիրում Էջմիածնի միաբանութեան մեջ:

Լքվածությունն ու հոգեկան ծանր տառապանքները Մատթեոս Բ կաթողիկոսին մահվան դուռը հասցրին: Շրջապատից դժգոհ ու սրտնեղած կաթողիկոսն իր վերջին մտածումներից մեկն ուղղել էր հերթական այցելության եկած՝ ս. Էջմիածնի վանքի կառավարիչ Ներսես վրդ. Մելիք-Թանգյանին, ասելով. «Այս վանքը լա՛ւ նայիր, մինչեւ որ Աստուած մի նոր արժանաւոր յաջորդ յարուցանէ այս Տան համար: Եթէ 15 ամսուայ կաթողիկոս պիտի ըլլայի, չըլլայի ալ աւելի լաւ էր»[2]:

Հոգեկան տառապանքները քայքայեցին կաթողիկոսի ջղերը:

1910 թ. նոյեմբերի 24-ին Իզմիրլյանը սրտի տագնապ է ունենում: Դրանից հետո նա գտնվում էր բժիշկների հսկողության տակ: Հետագա օրերին առողջական վիճակը մեկ մի քիչ լավանում էր, մեկ նորից ուժեղանում էին կրծքի ցավերը: Մարդկանց սկսել էր անհանգստացնել կաթողիկոսի գնալով վատթարացող վիճակը:

Կովկասի փոխարքան նոյեմբերի 30-ին հեռագրում է Էջմիածին. «Նորին Սրբութեան առողջութեան մասին անհանգիստ եմ, հաղորդեցէ՛ք՝ ինչպէ՞ս է զգում իրեն կաթողիկոսը»[3]: Իսկ Վորոնցով-Դաշկովի տիկինը՝ կոմսուհի Ելիզավետա Վորոնցո-

---

[1] *Տե՛ս **«Ժամանակ»**, 21 դեկտեմբերի 1910 թ.:*

[2] ***«Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան»**, գիրք Ը, Մատթեոս Բ Իզմիրլեան կաթողիկոս Ամենայն Հայոց, էջ 8:*

[3] ***«Արարատ»**, № 12, դեկտեմբեր, 1912, էջ ԻԱ:*

վա-Դաշկովան, նույնպիսի խնդրանքով էջմիածին է հեռագրում դեկտեմբերի 1-ին[1]:

1910 թ. դեկտեմբերի 10-լույս 11-ի գիշերը կաթողիկոսը սրտի նոր կաթված է ստանում և լուսադեմին ավանդում է հոգին[*]: Նա 65 տարեկան էր (1845-1910) և օծվելուց հետո հայրապետական պաշտոնը վարել էր ընդամենը 15 ամիս (1909 թ. սեպտեմբերի 13-1910 թ. դեկտեմբերի 11):

Դեկտեմբերի 11-ի առավոտյան իսկ սինոդի անդամները, պրոկուրորի պաշտոնակատարը և գործավարներն սկսեցին կատարել օրենքով և սովորությամբ սահմանված գործողությունները, այն է՝ Ա) Արձանագրություն կազմեցին հայրապետի վախճանման մասին "Положение"-ի XI հատորի I մասի 1148-րդ հոդվածի համաձայն (ըստ որի՝ կաթողիկոսի՝ ս. էջմիածնից բացակայության կամ հիվանդության դեպքում նրա պաշտոնը վարում է սինոդի անդամներից ավագագույն արքեպիսկոպոսը կամ եպիսկոպոսը): Կաթողիկոսական տեղապահի պաշտոնը հանձնարարվեց սինոդի ավագ անդամ Գևորգ արք. Սուրենյանցին, որը տեղապահության պաշտոնը վարել էր նաև Մկրտիչ Խրիմյան հայրապետի վախճանումից հետո, Բ) Նորանշանակ տեղապահը Մատթեոս Բ-ի մահվան մասին անմիջապես հեռագրով հաղորդեց Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, ներքին գործերի նախարարին, Երևանի նահանգապետին, Կիլիկիո կաթողիկոսին, Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքներին, Ռուսաստանի ու արտասահմանի թեմերի առաջնորդներին, Գ) Հետագա

---

[1] *Տե՛ս **«Արարատ»**, № 12, դեկտեմբեր, 1912, էջ ԻԱ:*

[*] *Ոմանք Իզմիրլյանի մահը բացատրում էին նրանով, որ նա ընկճված լինելով աքսորականի կյանքի դառնությունների ծանր բեռան տակ, անկարող եղավ տանելու կաթողիկոսական նոր, ոչ պակաս ծանր բեռը: Բայց մամուլի օրգանների մեծ մասն իրավացիորեն գտնում էր, որ կաթողիկոսի վախճանման պատճառը էջմիածնի միաբանների խարդավանքներն էին: Դաշնակցության «Հայրենիք» թերթը արդարացիորեն գրում էր, որ փաստերը «կը մերկացնեն դաւը, որուն չկրցաւ դիմանալ նոյն իսկ Երկաթէ Պատրիարքը» (**«Հայրենիք»**, № 5, 24 հունվարի 1911 թ.):*

ժամերին տեղեկություն տրվեց թեմական առաջնորդներին և վերջիններին պատվիրվեց հրավիրել քաղաքների ու գյուղերի հոգևորական և հավատացյալ աշխարհիկ դասին ու եկեղեցիներում հոգեհանգիստ կատարել, պատարագ մատուցել, աղոթքներում և այլ քարոզներում հիշատակել Նորին Սրբության անունը մինչև նոր ընտրելի կաթողիկոսի հաստատումը. Դ) Կաթողիկոսի թաղումը նշանակվեց դեկտեմբերի 19-ին, կիրակի օրը[1]:

Դեկտեմբերի 19-ին տեղի ունեցած հուղարկավորման և թաղման արարողությանը նախագահում էր կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցը, մասնակցում էին Էջմիածնի ողջ հոգևորականությունը, Հայ եկեղեցու ռուսաստանյան բոլոր 6 թեմերի ներկայացուցիչները, բազմաթիվ պատվիրակություններ: Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին ներկայացնում էին փոխարքայի օգնական սենատոր Է. Վատացին և գեներալ-մայոր Ա. Լազարևը, Վրաստանի էկզարխ Իննովկենտիոս արքեպիսկոպոսին՝ Գրիգորի եպիսկոպոսը և Պիմեն ու Անտոնի վարդապետները, ներկա էին Թիֆլիսի ազնվականության ներկայացուցիչները: Այնտեղ էին Երևանի նահանգապետ կոմս Վ. Տիզենհաուզենը, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ Լենեակը, Ա. Պետրովը, քաղաքագլուխներ, զանազան հաստատությունների, դպրոցների, բարեգործական ընկերությունների ներկայացուցիչներ և ժողովրդի մեծ բազմություն:

Սգո արարողությունների ժամանակ եղան ելույթներ՝ ափսոսանքի և ցավի զգացումներով: Փոխարքայի ներկայացուցիչ Է. Վատացին խոսեց Հայ և Ռուս եկեղեցիների դարավոր բարեկամության մասին, իսկ վրաց էկզարխի ներկայացուցիչ Գրիգորի եպիսկոպոսը չեշտեց, որ Վրաց և Հայ եկեղեցիների միջև սկզբունքային տարաձայնություններ չկան, որովհետև վրաց «Օրթոդոքս պրաւոսլաւ եկեղեցին իւր քոյր Հայ եկեղեցու հետ մի է հաւատով ի Քրիստոս»[2]:

---

[1] Տե՛ս **«Արարատ»**, № 12, դեկտեմբեր, 1912, էջ Ե, Զ, Է:

[2] Նույն տեղում, էջ ԾԲ:

Կաթողիկոսի մարմինը ամփոփվեց ս. Էջմիածնի տաճարի զանգակատան մոտ պատրաստված դամբարանում:

Իզմիրլյանի հիվանդությունը, վախճանումը և թաղումը լայն արձագանք ունեցան հայկական հասարակության բոլոր խավերում: Ամենուրեք մարդիկ արտաբերում էին ցավի ու ափսոսանքի խոր զգացմունքներ:

Մամուլը լայնորեն ու մանրամասնորեն անդրադառնում էր Մատթեոս Բ-ի կյանքին ու գործունեությանը, հատկապես նրա կարճատև պաշտոնավարմանը ս. Էջմիածնում, այպանում էր այնտեղի բարքերը, որոնք մեծապես արագացրել էին Հայոց Հայրապետի մահը:

Մի շարք հրապարակումներ եղան «Հորիզոն» թերթում: Իզմիրլյանի վախճանից խորապես հուզված Հովհաննես Թումանյանը թերթի 1910 թ. դեկտեմբերի 15-ի համարում (№ 279) տպագրեց «Զպաշտպանեցինք» վերտառությամբ հոդվածը, ուր սրտի ցավով վերհիշում էր, որ նրան «հրավիրեցինք Ամենայն Հայոց Հայրապետության» և նա երկարատև աքսորից նոր ազատված, չմերժեց ազգի խնդրանքը: «Նա եկավ օվսաննաներով ու կեցցեներով: Եկավ մաքուր, չիտակ բնավորությամբ, ազնիվ ցանկություններով, մեղմ ու բարի, լիքը իր ժողովրդին ծառայելու ամենաանկեղծ զգացմունքներով: Եկավ մեր երկրին, մեր գործերին, մեր մարդկանց անծանոթ, մեր մեջը պանդուխտ ու մենակ: Մենք ամենքս գտանք, որ Լուսավորչի գահի վրա այնքան վայելուչ էր նա ու արժանավոր: Բայց Ի՞նչ. հանդեսները վերջացան, հանդիսականները ցրվեցին իրենց տեղերը ու նա մնաց մենակ ծանր հոգսերի հետ, դավադիրների դավերի մեջ, անզուսպ ու անպատկառ մարդկանց անընդհատ տեղացող քարերի տակ, մարդկանց, որ երբեք չքաշվեցին ոչ նրա անձի մաքրությունից ու կոչումի վեհությունից, ոչ էլ այն հանգամանքից, որ այդ քարերը գնում էին միաժամանակ նրան ընտրող մի ամբողջ ժողովրդի դեմ:

Տեսավ ամբողջ ժողովուրդը, բայց քանի՞ մարդ ձայն հանեց:

Մարդ նոր է հասկանում նրա ազնիվ աղաղակը, որ աղա-

ղակում էր ամեն պատեհ դեպքում, թե մենակ եմ, մենակ եմ, մենակ եմ...»[1]:

Բանաստեղծի նուրբ սիրտը ճչում էր, թե ինչո՞ւ բազմամբոխ հայ հոգևորականներից միայն եղակի անձինք էին սատար կանգնել Իզմիրլյանին: «Այո՛, մի փոքրիկ խմբակ նրան մնացել է հավատարիմ ու ծառայել է միամտությամբ: Բայց դա ի՞նչ կարող էր անել ցավերի այն տարափի, թշնամիների այն հանդգնության և ժողովրդի ու ինտելիգենցիայի համատարած անտարբերության ու լռության հանդեպ:

Ոչինչ: Եվ ամեն բան գնաց իր կարգով»[2]:

Թումանյանը նախատում էր հայ մտավորականությանը, որ հետամուտ չեղավ իմանալու, թե ինչո՞ւ էին հակառակորդները տանջում Իզմիրլյանին և, դրանով իսկ, ըստ էության, սատար չկանգնեց նրան: «Մենք տեսանք այդ ամենը, լսեցինք նրա աղաղակը ու չպաշտպանեցինք,- ցավով արձանագրում էր Թումանյանը:- Չհարցրինք, թե ինչո՞ւ էին հարձակվում նրա վրա, ինչո՞ւ էին հայհոյում, ինչո՞ւ էին խոցոտում: Մի՞թե նա փոխվեց: Ո՛չ: Միշտ մնաց նույն մաքուր անձնավորությունը ամեն գործի մեջ, և նույն ազնիվ ու բարի մարդը նույնիսկ իր թշնամիների համար: Մի բան, որ այսօր խոստովանում են հենց երեկվան հայհոյողները: Սակայն ես հասկանում եմ հայհոյողներին ու քարկոծողներին, նրանք ունեին իրենց հաշիվը՝ անձնական թե ինչ՝ վերջապես իրենց հաշիվը, նրա համար էին հարձակվում և այսօր կարող են մինչև անգամ ուրախանալ, որ մեռավ, և հրապարակավ ուրախանալ, թիֆլիսեցի էն քահանայի նման, որի մասին պատմեց Եփրեմ եպիսկոպոսը առաջնորդարանում, հավաքված բազմությանը, որ բացականչել է թե ինն ամիս առաջ պետք է մեռած լիներ:

Այո՛, սրանք և սրանց նմանները կարող էին հարձակվել ու ասել ամեն բան, բայց այդ ամեն բանի առջև ինչո՞ւ էին լռում այն մարդիկ, որ Իզմիրլյանին գիտեին միշտ մաքուր ու ազնիվ,

---

[1] ***Հովհաննես Թումանյան***, *ԵԼԺ, հատ. 6, էջ 270:*

[2] *Նույն տեղում:*

նվիրված ու սրտացավ: Ինչո՞ւ էին լռում այդ մարդիկ, ես այդ չեմ հասկանում:

Եվ այս գիտակցությունն այսօր ծանրանում է շատ շատերիս խղճմտանքի վրա:

Մենք չպաշտպանեցինք նրան, ինչպես չենք պաշտպանում մեր լավ գործիչներից, մեր ազնիվ մարդկանցից ոչ մեկին»[1]*:*

Անդրադառնալով Իզմիրլյանի կերպարին, որպես ազնվության և պարկեշտության չափանիշի, Հովհ. Թումանյանը «Ազնիվ մարդը» վերնագրով հոդվածում գրում էր, թե «այս տեսակետից նա արժանի է առանձին հիացմունքի», որ «Ինչպես ամեն ժողովրդի մեջ, այնպես էլ մեր ժողովրդի մեջ հազվագյուտ են այսպիսի ազնիվ դեմքեր: Այո՛, հայ ժողովուրդը տվել է և կտա շատ խելոք մարդիկ, քաջ մարդիկ, տաղանդավոր մարդիկ, բայց անպայման ազնիվ մարդիկ դժար են երևում: Եվ այսօր գերեզման դնելով Իզմիրլյանին, մենք գերեզման ենք դնում այդպիսի մի հազվագյուտ ազնիվ դեմք»[2]*:*

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Հովհ. Թումանյանի՝ «Հորիզոն» թերթում տպագրված մի ուրիշ հոդվածը՝ «Խրիմյան եւ Իզմիրլյան» վերտառությամբ, որտեղ նա վերլուծում էր իրենց ժողովրդի տառապանքով ապրած այս երկու խոշոր անհատների բնավորության գծերը, կատարում հետաքրքիր համեմատություններ ու եզրահանգումներ: Հոդվածը վերջանում է հետևյալ հաստատումով. «Իզմիրլյանը սրտալի ու չիտակ գործիչ էր, Խրիմյանը՝ խորամիտ փիլիսոփա: Իզմիրլյանը անկասկած մաքուր էր, Խրիմյանը՝ անպայման մեծ»[3]*:*

Չնայած կարճ տևեց Հայոց եկեղեցու պետի աթոռին Իզմիրլյանի պաշտոնավարությունը, չնայած անհաղթահարելի արգելքներ էին կանգնել կաթողիկոսի ճանապարհին, այդուհանդերձ, նրա ֆիզիկական ներկայությունն իսկ բարոյականության դաս էր, որին անհաղորդ էին միայն էջմիածնի կղերը,-

---

[1] ***Հովհաննես Թումանյան***, *ԵԼԺ, հատ. 6, էջ 270:*

[2] *Նույն տեղում, էջ 272:*

[3] *Նույն տեղում, էջ 269:*

այս էր հայկական մամուլի ընդհանուր եզրահանգումը:

Իզմիրլյանին և նրա վախճանման հանգամանքներին լայնորեն անդրադարձավ նաև ռուսական մամուլը: Բազմաթիվ թղթակցություններ ու հոդվածներ երևացին "Кавказский Телеграф", "Кавказ", "Тифлисский Листок", "Русские Вѣедомости", "Рѣчь" և այլ թերթերում, որոնցով ընթերցողին էին ներկայացվում հանգուցյալ կաթողիկոսի առինքնող կերպարը, նրա մարդկային նկարագիրը, այն մեծ հարգանքը, որ նա վայելում էր հայկական հասարակության խելամիտ տարրերի մոտ:

Թերևս բացառություն էր ռուսական մի թերթ՝ հայությունն ավանդաբար մրոտող և զրպարտող "Новое Время"-ն՝ հանձին նրա խմբագիր Լեոնիդ Մենշիկովի: Սրա արհամարհանքն ու զայրույթն էր առաջ բերել ռուս ուղղափառ մարդկանց և Վրաց ուղղափառ եկեղեցու պատվիրակության մասնակցությունը հայոց կաթողիկոսի թաղմանը, նրանց ունեցած ելույթները արարողությունների ժամանակ:

Թերթի № 12492-ում Մենշիկովը գրում էր. «Ինչին հայ ժողովուրդը դավանում է ինչ-որ պիղծ հերձված, իսկ չգիտես ինչո՞ւ վրաց էկզարխի հանձնարարականով մի ամբողջ պատվիրակություն է գնացել Էջմիածին՝ հարգանքի տուրք մատուցելու այն անձին, որ ներկայացնում էր ուղղափառությանը հակառակ մի կրոնական ուղղություն: Շատ ցավալի է, որ Էջմիածին են գնացել նաև Ռուս ուղղափառ եկեղեցուն պատկանող անձինք: Ոչ միայն ռուս եկեղեցականներին, այլ նույնիսկ ուղղափառ աշխարհականներին պատիվ չի բերում աղոթել հայերի հետ և նրանց հետ գերեզմանատուն գնալ»[1]:

Բայց Մենշիկովի ցափոտուքները ռուսական լրագրության լայնածավալ դաշտում եզակի երևույթ էին և մնում էին որպես «ձայն բարբառոյ յանապատի»:

Իզմիրլյան կաթողիկոսի հիշատակը վառ պահելու համար Էջմիածնի միաբանությունը իրականացրեց տարբեր միջոցա-

---

[1] **"Новое Время"**, 21 декабря 1910 г.

ռումներ, որոնց թվում հատկապես կարևոր էր «Իզմիրլյան մրցանակի»* ստեղծումը: Նախատեսվեց առայժմ հնարավորինս չուտ հավաքել 5000 ռուբլուց ոչ պակաս գումար և հիմնադրել «Իզմիրլյան ֆոնդ», որի միջոցներով հրատարակվելու էին հին ժամանակաշրջանին վերաբերող հայագիտական ուսումնասիրություններ, ինչպես նաև «Իզմիրլյան մրցանակներ» էին չնորհվելու արժեքավոր աշխատությունների հեղինակներին:

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԲԱՆՏԱՑԻՆ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ԱԼԻՔ

Ռուսաստանի բազմազգ բնակչությունը ստոլիպինյան ռեակցիայի հետևանքով մատնված էր կատարյալ անտարբերության: Խամրել էր հասարակական բնազդը, հետին գիծ էր մղվել անհողդողդ կամքի անհատական ուժը, այլևս եզակի էին գաղափարների համար զոհվող աննահանջ զինվորները, հմայք ու հրապույր չկար ճահճացած իրականության մեջ:

1911 թ. մինչև Առաջին համաշխարհային պատերազմը ռուսահայության համար տաղտկալի ու անբովանդակ կյանքի մի ժամանակաշրջան էր՝ առօրյա անշարժ ու անգույն երևույթներով, նաև լի բռնություններով ու անօրենություններով:

1911 թ. սկզբից պարզ դարձավ, որ հայերին տանջելու ստոլիպինյան «դաղարը» հասել է իր ավարտին: Ոստիկանությունը և ժանդարմերիան ուժեղացրին Դաշնակցության ու նրա տեղական կազմակերպությունների վրա հսկողությունը, մեծացավ մատնությունների թիվը, կասկածելիների վրա կազմվում էին նորանոր գործեր: Եվ այդ ամենն այս անգամ հատկապես Երևանյան նահանգում[1]:

Ահա՛ արխիվային փաստաթղթերից մեկը՝ Թիֆլիսի նահան-

---

* «Իզմիրլյան մրցանակը» չշփոթել ղզլարցի Աղա Հովսեփ Իզմիրյանցի կտակի համաձայն 1908 թ. հիմնադրված մրցանակի հետ:

[1] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 73, թթ. 1–12, 14–26, 28–35:

գային ժանդարմական վարչության պետ գնդապետ Պաստրյուլինի 1911 թ. ապրիլի 28-ի «Հույժ գաղտնի» գրությունը Երևանի նահանգային ժանդարմական վարչությանը.

«Շրջանի գործակալային տեղեկությունների համաձայն՝ ընթացիկ տարվա ամռանը ենթադրվում է հրավիրել Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության անդրկովկասյան կազմակերպության ներկայացուցիչների համագումար: Ներկայումս այդ հարցին սերտ առնչություն ունեն Թիֆլիս քաղաքում բնակվող Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը և Խարկովի համալսարանի նախկին ուսանող Գևորգ Ալեքսանդրի Մինասյանը:

Շարադրվածի մասին գրում եմ Ձերդ բարեծնությանը՝ պատշաճ քննություն մշակելու համար: Հետագա ընթացքի մասին խնդրում եմ տեղեկացնել:

Գնդապետ Պաստրյուլին»[1]*:*

Ավետիք Իսահակյանի մասին կարդում ենք նաև գործակալային մի ուրիշ փաստաթղթում՝ Ալեքսանդրապոլի գավառային ժանդարմական վարչությունից Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետին 1911 թ. մայիսի 5-ին գրած հաղորդման մեջ: Ահա՛ այն.

«Հայտնում եմ. Ավետիք Սահակի Իսահակյանցը, 37 տարեկան, ծագումով Ալեքսանդրապոլ քաղաքից, այս քաղաքում հարազատներ ունի: Ինձ վստահված գրասենյակի գործերում նշված է որպես դաշնակցություն կուսակցության անդամ:

1895 թ. նոյեմբերին որպես մեղադրյալ ենթարկվել է հետաքննության «գաղտնի հայկական ընկերության» գործով, որը ներկայացվել է Ձեզ 1896 թ. հուլիսի 8-ին՝ 231 համարանիշով:

Ռոտմիստր՝ /ստորագրություն/»[2]*:*

---

[1] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 99, թ. 4:

[2] Նույն տեղում, թ. 5:

Ժանդարմական այս փաստաթղթերը ցույց են տալիս, որ Հով. Թումանյանը, Ավ. Իսահակյանը և նրանց հետ նաև ուրիշ մտավորականներ շարունակում էին գտնվել իշխանությունների սևեռուն ուշադրության կենտրոնում:

1911 թ. գարնան վերջերին Թիֆլիսում լուր տարածվեց, թե «Դաշնակցության գործով» նոր ձերբակալություններ են սկսվելու: Լուրը չուտով հաստատվեց:

Պետական անվտանգության կովկասյան մարմինները կենտրոնին նյութեր էին մատակարարել, թե Անդրկովկասում գրեթե ամեն մի հայ երիտասարդի բնակարանն ըստ էության զենքի և թռուցիկների չտեմարան է:

Հենվելով այդ ստացված սուտ հաղորդումների վրա՝ պետական անվտանգության բարձրագույն մարմնից կարգադրություն իջեցվեց զանգվածային նոր խուզարկություններ սկսել, համոզված, որ հայտնաբերվելու և առգրավվելու են հազարավոր հրացաններ, հարյուր հազարավոր փամփուշտներ, ռումբերի ու դինամիտի պահեստներ, գաղտնի տպարաններ, անջատական ծրագրեր[1]:

Թեև խուզարկուների հույսերը չարդարացան, բայց դա չխանգարեց, որ հունիսի սկզբներից նոր ձերբակալություններ կատարվեն:

Ձերբակալություններն սկսվեցին ամենից առաջ Երևանի նահանգում և Հյուսիսային Կովկասի քաղաքներում՝ Արմավիրում, Վլադիկավկազում ու Նոր Նախիջևանում:

Այդ նույն ժամանակ ավելի վաղ ձերբակալվածները շարունակում էին տվայտել բանտային դաժան պայմաններում՝ ամեն տեսակի ստորացումների ենթակա:

Անտանելի էին բանտային պայմանները: Վեց-յոթ հոգու համար նախատեսված բանտախցի մեջ խցկում էին 25-30 հոգու: Օրինակ՝ Նովոչերկասկի բանտը նախատեսված էր 270 մարդու համար, բայց այնտեղ բանտարկյալների թիվը հասնում

---

[1] *Տե՛ս* ***Է. Ակնունի,*** *Բողոքի ձայն, էջ 44:*

էր 850-ի[1]: Բանտախցերում չկային մահճակալներ ու տեղաչորեր, բանտարկյալները պառկում էին գետնին, խսիրի վրա և մարմինը «ծածկում» հնոտիներով: Նրանց օրական տրվում էր մի կտոր հաց ու ջուր: Կարդալն ու գրելը արգելված էին: Խցերը ցուրտ էին, գարշահոտ: Բանտարկյալների նկատմամբ առողջապահական որևէ հոգածություն չկար:

Նովոչերկասկի բանտում բռնկված տիֆի համաճարակի զոհ դարձան նաև հայ կալանավորներ: Մարտի 24-ին հայ բանտարկյալների ծնողներն ու ազգականները մի ընդարձակ հեռագիր ուղարկեցին Պետերբուրգ՝ արդարադատության նախարարին: Նրանք նկարագրում էին բանտի անտանելի պայմանները, միաժամանակ խնդրում մինչև դատավարությունն սկսելը իրենց անմեղ հարազատներին երաշխավորությամբ ազատել բանտից: Նրանց դիմումն անպատասխան մնաց:

Նովոռոսիյսկի բանտի և այստեղ տանջվող հայերի անտանելի դրության մասին "Речь" թերթը տպագրել էր մի հոդված, որում ասված էր. «Բանտարկյալների վիճակը ուղղակի սոսկալի է», նրանք երկարատև բանտարկության հետևանքով հիվանդ են և հյուծված: Բանտախցերում նույնիսկ «ցերեկն այնքան մութ է, որ իրար ճանաչելու համար» նրանք ստիպված են լինում լուցկի վառել: «Եվ այս դեռ պատիժը չէ, այլ միայն «նախնական բանտարկությունը», որ պիտի տևի մինչև դատավարություն»: «Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ մահափորձ այն մարդկանց դեմ, որոնց հանցանքը տակավին հաստատված չէ: Սա «նախնական» միջոց չէ, այլ՝ ամենասոսկալի տանջանք, նույն մահապատիժը, բայց ավելի դանդաղ, ուստի և ավելի վատթար է»:

Հովհաննես Թումանյանի հետ ձերբակալված Ավետիս Ահարոնյանը բանտերում մնացել էր չուրջ երեք տարի: Թիֆլիսի Մետեխի բանտից նրան տարել էին Ռոստովի սարսափազդու բանտը, ապա հարցաքննության նպատակով տեղափոխել Նովոչերկասկի բանտ: Այստեղի է՛լ ավելի դաժան պայմաններն ավերեցին գրողի առողջությունը. նա ծանր հիվանդացավ հյուծախ-

---

[1] Տե՛ս **Է. Ակնունի**, Բողոքի ձայն, էջ 38:

տով, գրեթե ամեն օր արյուն էր թքում[1]: Բանտարկյալ ընկերները տագնապած էին, իսկ բանտի ղեկավարությունը որևէ միջոց չէր ձեռնարկում հիվանդի դրությունը բարելավելու համար:

Այդ մասին քաջատեղյակ էին Կովկասում, որտեղի հայկական թերթերը շարունակում էին ահազանգ հնչեցնել: Բողոքում էին նաև Կ. Պոլսի հայ մտավորականները, զայրույթի խոսքեր էին հնչում հայկական տարբեր գաղութներից:

Այդ ժամանակ Ակնունին (Խաչատուր Մալումյան) գտնվում էր ԱՄՆ-ում, ուր հանդես էր գալիս բանախոսություններով ու հոդվածներով, անողոք քննադատության ենթարկում ռուսական իշխանություններին՝ հայ մտավորականների դեմ շարունակվող բռնությունների համար: Իր գրություններն ու ելույթների շարադրանքները նա ամփոփեց «Բողոքի ձայն» վերտառությամբ հատորում, որը "Political Persecution" («Քաղաքական հալածանք») անունով թարգմանվեց անգլերենի և տարածվեց հայասեր ամերիկացիների շրջանում[2]: Հայ բանտարկյալների խնդրով Ակնունին տեսակցություն ունեցավ ԱՄՆ-ի կոնգրեսի անդամների, արտաքին գործերը վարող պաշտոնյաների հետ:

Այդ օրերին Կալիֆորնիայի նահանգի օրենսդիր ժողովը և ծերակույտը քննել էին ռուսահայ բանտարկյալների նկատմամբ շարունակվող հալածանքների հարցը և, միաձայն ընդունելով որոշումներ, դրանք ուղարկել էին երկրի կենտրոնական կառավարություն: Օրենսդիր ժողովի որոշման մեջ ասված էր. «Հասել է ժամը, երբ ամէն մի քաղաքակիրթ ազգ պէտք է բողոքի ուրիշ որեւէ ազգի այդօրինակ արարքների դէմ, եւ մենք սրանով արտայայտում ենք մեր զզուանքը ընդդէմ այն վարմունքի, որին ենթարկուած են Հայաստանի զաւակները՝ իրենց քաղաքական համոզմունքների համար: Ժամանակը հասել է, որ իրենք իրենց քաղաքակրթուած ու լուսաւորուած կարծող բոլոր ազգերի մէջ գոյութիւն ունենայ ներդաշնակ գործունէութիւն, կարողանան ստիպել որեւէ երկրի, որպէսզի իր քաղաքացիների նկատմամբ

---

[1] Տե՛ս **«Ասպարէզ»**, № 145, 19 մայիսի 1911 թ.:

[2] Տե՛ս **«Հայրենիք»**, № 7, մայիս, 1923, էջ 14:

անպայման գործի դնի մարդկութեան եւ տարրական արդարութեան օրէնքները»[1]: Ընդ որում՝ Կալիֆորնիայի օրենսդրական ժողովը ոչ միայն բողոք էր հայտնել բանտարկյալներին ի նպաստ, այլև նահանգի բոլոր քաղաքների բնակիչներին կոչ էր արել բողոքել կատարվող հալածանքների դեմ: Արձագանքելով այդ կոչին՝ Նյու Յորքում, Ֆիլադելֆիայում, Չիկագոյում, Բրեդֆորտում, Սան Ֆրանցիսկոյում, Բոստոնում, Պրովիդենսում, Լոս Անջելեսում, Թվով 15 քաղաքներում կազմակերպվեցին բազմամարդ ժողովներ, որոնցում միակամ խարազանիչ որոշումներ ու բանաձևեր քվեարկվեցին և ուղարկվեցին ԱՄՆ-ի նախագահին, պետական քարտուղարին (արտաքին գործերի նախարարին), կոնգրեսի անդամներին, Ռուսաստանի և ուրիշ երկրների դեսպաններին: Ռուսաստանի դեսպանությանն ուղարկած բողոքներն ու դիմումները մնում էին երեսն ի վար. դեսպանությունն ամեն անգամ պատասխանում էր, որ դրանք նպատակ ունեն վարկաբեկել Ռուսաստանի կառավարությանը, ուստի անհետևանք կմնան: Ժողովներում ու հավաքներում ընդունված բողոքագրերը ուղարկվում էին նաև տեղական թերթերին, որոնց ուշադրությունը հրավիրվում էր հայերի նկատմամբ ցարական իշխանությունների գործադրած անարդար հալածանքների ու բռնությունների վրա[2]:

1911 թ. ապրիլի 24-ին ԱՄՆ-ի նախագահ Վիլյամ Հովարդ Տաֆտն իր նստավայրում ընդունեց Ակնունուն: Վերջինիս ուղեկցում էր Կալիֆորնիայից ընտրված կոնգրեսական Նիտհեմը: Ակնունին նախագահին երախտագիտություն հայտնեց այն համակրանքի համար, որ ամերիկյան հասարակական կարծիքը ցույց է տալիս կովկասահայ բանտարկյալների նկատմամբ: Այնուհետև Նիտհեմը կարճ զեկույցով ուրվագծեց Միացյալ Նահանգներում սկսված բողոքի շարժման էությունը: Նախագահը սիրալիր վերաբերմունքով նշեց, թե ինքը հետաքրքրված է ոչ միայն կովկասահայ բանտարկյալների, այլև թուրքահայերի կա-

---

[1] **Է. Ակնունի**, *Բողոքի ձայն, էջ 97-98:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 98:*

ցությամբ: Նա ասաց նաև, որ, ինչպես իրեն տեղեկացրել են, կոնգրեսի մի քանի անդամներ առիթի են սպասում, որպեսզի երկրի բարձագույն ժողովում բարձրացնեն կովկասահայ բանտարկյալների հարցը՝ համաձայն իրենց քաղաքներից եկած բողոքների[1]:

Բայց ռուսական իշխանությունները չարունակում էին լուռ մնալ ամեն տեսակ բողոքների հանդեպ, իսկ բանտերում չարունակվում էին ստորացումներն ու բռնությունները:

Ռուսական բռնակալության դեմ բողոքի հավաքներ ու ժողովներ տեղի ունեցան նաև Կանադայի քաղաքներում, որտեղ ընդունված որոշումներով երկրի կառավարությունից պահանջում էին պաշտոնապես հանդես գալ Պետերբուրգի կառավարության առջև: Հայերի նկատմամբ կիրառվող սանձարձակ բռնությունների դեմ առաջիններից մեկը բողոքի ձայն բարձրացրեց Ավստրիայի սոցիալիստական կուսակցությունը: Բողոքի ժողովներ եղան Փարիզում, ցասման բազմաթիվ բողոքներ հնչեցին Պոլսից[2]:

Երբ հայ ժողովրդի ֆրանսիացի ազնիվ բարեկամներ Անատոլ Ֆրանսը, Ֆրանսիս դը Պրեսանսեն, Էռնեստ Լավիսը, Վիկտոր Բերարը Ահարոնյանի առողջական վիճակի մասին իմացան, համատեղ դիմում հղեցին Պետերբուրգ՝ իշխանություններից խնդրելով բանտից արձակել գրողին[3]:

Բայց հիվանդությունը գնալով վտանգավոր կերպարանք էր առնում, ուստի նրա որդին՝ Վարդգես Ահարոնյանը, ահազանգ հնչեցրեց: Բարեբախտաբար, Թիֆլիսի մի քանի ազդեցիկ մարդկանց ջանքերով ռուսական կառավարությունը համաձայնում է Ա. Ահարոնյանին ժամանակավորապես, մինչև դատավարության սկիզբը, 20 հազար ոսկի ռուբլի գրավականով ազատել բանտից:

Վարդգեսը կարողանում է 10.000 ռուբլի ժողովել Թիֆլի-

---

[1] **Է. Ակնունի**, *Բողոքի ձայն, էջ 98:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Տե՛ս* **Միքայել Վարանդեան**, *Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 131:*

սում և Բաքվում: Մնացած 10.000-ը նա ստանում է Մոսկվայում բնակվող տիկ. Վարվառե Քանանյանից, որը Ա. Ահարոնյանի տաղանդի ջերմ երկրպագուներից էր: Այդ տիկինը, որ միլիոնատեր Հովհան Հովնանյանի դուստրն էր ու Մոսկվայի Լազարյան ճեմարանի վերատեսուչ և ուսուցչապետ Գևորգ Քանանյանի կինը, իր միջոցներով հրատարակել էր Ա. Ահարոնյանի «Փչուր մը խաց», «Պուտ մը կաթ», «Ռաչիդ» և այլ պատմվածքները, հոգացել էր նաև Վարդգեսի համալսարանական կրթության ամբողջ ծախքը: Եվ ահա՛ այժմ Ահարոնյանների ընտանիքին նա հերթական անգամ փրկության ձեռք էր մեկնում[1]:

Ավետիս Ահարոնյանը, կարիքի մեջ, հիվանդ ու հյուծված, բայց նաև ճնշված էր տիկ. Քանանյանի նոր առատաձեռն վերաբերմունքից: Նա նույնիսկ տատանվում էր՝ ընդունե՞լ հերթական իշխանական առատաձեռն օգնությունը, թե՞ ոչ: Ի վերջո ընդունում է:

1911 թ. սկզբին Ա. Ահարոնյանը նշված գումարով երաշխավորությամբ ժամանակավորապես ազատվում է բանտից:

Այդ նույն ժամանակ երաշխավորությամբ բանտից ազատվեցին նաև Գևորգյան ճեմարանի դասախոս Սիրական Տիգրանյանը և ուրիշներ[2]:

Բանտարգելությունից գրավականով ազատված Ավետիս Ահարոնյանը, Ավետիք Իսահակյանը և Գարեգին Խաժակը, ցարական հետապնդումներից խուսափելու համար, 1911 թ. հունիսի 20-ին, Ղազարոս Աղայանի թաղման օրը, Թիֆլիսից ուղևորվում են Կարս, ապա Իգդիրի մոտ անցնում ռուս-թուրքական սահմանը և Բայազետ-Էրզրում-Տրապիզոն գծով հասնում Կ. Պոլիս:

Ռուս փաստաբաններից Ն. Սոկոլովն ասել էր, որ եթե հաջողվեր ձերբակալել Իսահակյանին, ապա նրան կդատապարտեին տաժանակիր աշխատանքի կամ ամենաքիչը՝ սիբիրյան աքսորի[3]:

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 12, դեկտեմբեր, 1965, էջ 2-3:

[2] Տե՛ս նույն տեղում, № 9, սեպտեմբեր, 1966, էջ 43:

[3] Տե՛ս նույն տեղում, № 4 (279), ապրիլ, 1949, էջ 41:

Ահարոնյանը և Իսահակյանը Թումանյանին համոզել էին, որ նա փախչի իրենց հետ, բայց վերջինս հրաժարվել էր: Սակայն նրանց օրինակին հետևել էին դաշնակցական ուրիշ մտավորականներ և գործիչներ: Օրինակ՝ նույն ճանապարհով Կ. Պոլիս էր փախել ՀՅԴ նշանավոր գործիչներից Հովհաննես Յուսուֆյանը (կուսակցական ծածկանունը՝ Մելիք), որը հետագայում անցել էր Ամերիկա՝ Վահանյան անվան տակ[1]:

Ահարոնյանը Կ. Պոլսում երկար չմնաց: Նա բարերարների ֆինանսական օգնությամբ անցավ Եվրոպա: Ավ. Իսահակյանը համեմատաբար երկար մնաց այնտեղ:

Կովկասի ռուսական իշխանությունները եռանդագին հետամուտ էին բացահայտելու և պարզելու, թե ովքե՞ր են աջակցել երեք նշանավոր դաշնակցականների փախուստին: Ոստիկանությունը քննության ենթարկեց մի քանի հոգու, նույնիսկ եղան անհիմն ձերբակալություններ: Ավ. Իսահակյանը 1911 թ. հոկտեմբերի 24-ին Կ. Պոլսից Լոզանում (Շվեյցարիա) հիմնավորված Ավետիս Ահարոնյանին գրում էր, թե «...մեզ երեքիս պատճառով ձերբակալել են Սիմէօն Զաւարեանի քոյրերին, փեսաներին եւ եղբօրը, հարցնելով, թէ ձեր հարսը Թիւրքիայից անցագիր է բերել եւ դուք նրանց (մեզ երեքիս) անցկացրել էք սահմանը... Թշուառականները Սիմէօնենց սահմանագլուխ երթալը կապել են մեր փախչելու հետ»[2]:

Իսահակյանը Կովկասից նաև ուրիշ լուրեր էր ստացել: «[Դաշնակցութեան] գործի ելքի մասին դեռ ոչ մի լաւ յոյս. Կուկունեանի* և Նազարբեկի կնոջ** դատապարտութիւնը լաւ նշան

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 4 (279), ապրիլ, 1949, էջ 41:

[2] Տե՛ս նույն տեղում, № 1 (276), հունվար, 1949, էջ 22:

* Խոսքը Սարգիս Կուկունյանի մասին է, ով Կովկասից Թուրքահայաստան անցնելու փորձ կատարած առաջին մարտական խմբի առաջնորդն էր, որ ռուսական կառավարության կողմից տաժանակիր աշխատանքի դատապարտվելուց և 15 տարի Սախալին կղզու տաժանակրության բանտերում անցկացնելուց հետո, 1905-ի ներման հրովարտակով ազատվեց և հայրենի գյուղ վերադարձավ, բայց իր համագյուղացիների դրպարտությամբ կրկին ձերբակալվեց:

** Նկատի ուներ հնչակյան կուսակցության ղեկավար Ավետիս Նազարբեկի առաջին կնոջը՝ Մարո Վարդանյան-Նազարբեկին:

չէ»[1]: Այս լուրերը հաղորդելով Ահարոնյանին, Իսահակյանը դրանով իսկ նրան էր փոխանցում իր կարծիքը, թե ռուսական կառավարությունը երբևիցե իրենց ներում չի չնորհի՝ արդարադատությունից խուսափելու համար:

Նյութական մեծ դժվարությունների մեջ էր հատկապես Ավ. Իսահակյանը: 1911 թ. նոյեմբերի 24-ի թվով Ահարոնյանին հղած նամակով տեղեկացնելով իր տնտեսական ծանր դրության մասին՝ նշում էր. «Ես այժմ ապրում եմ հին ծախսուած գրքերիս հաշուին: Յետոյ չգիտեմ, թէ ի՞նչ է լինելու: Դժուարն այն է ամառ քցեմ ինձ, յետոյ մի կողմ կ'անցնեմ՝ ուսուցչութեան, այս եւ այն»[2]: Իր վիճակի առավել ցայտուն բնորոշիչը նրա հետևյալ խոսքերն էին. «Այսօրուայ օրը մենք փոր հացի գերի ենք»*: Ահարոնյանին գրած մի ուրիշ նամակում (24 հոկտեմբերի 1911 թ.) նա տրտնջում էր. «... Ահ այդ անիծած ստամոքսը. ես երբեք դրա թագաւորութեան բռնակալ ոյժը այնպէս չէի հասկացել, ինչպէս հիմա. թէեւ դեռ կուշտ եմ»[3]:

Իր հերթին նամակներից մեկում Ահարոնյանը դեռ Կ. Պոլսում գտնվող Իսահակյանին փոխանցում էր իր ծանր մտորումները՝ կապված գրավականի հետ: Նրա խղճի վրա ծանրացել էր, որ իր փախուստով տիկ. Վարվառե Քանանյանի և մյուսների տված 20.000 ռուբլին անցել է պետական գանձարան և բարերարները զրկվել են իրենց գումարներից: 1911 թ. նոյեմբերի 24-ի պատասխան նամակով Իսահակյանը Ահարոնյանին գրում էր.

---

[1] **«Հայրենիք»**, № 1 (276), հունվար, 1949, էջ 22-23:

[2] Նույն տեղում, № 4 (279), ապրիլ, 1949, էջ 41:

* Ավ. Իսահակյանի գոյության պայմաններին անդրադառնալով՝ Ավետիս Ահարոնյանի որդի Վարդգես Ահարոնյանը նկատել է. նա «մէկն է մեր այն հազուագիւտ գրողներից, որոնք իրենց կեանքի ընթացքում գրականութիւնից դուրս ուրիշ բանով չեն զբաղուել եւ գրական վաստակից դուրս ուրիշ վաստակ չեն ունեցել: Իսկ յայտնի է որ Աւ. Իսահակեանի սերունդի գրողները չէին կարող ապրել միայն իրենց գրական վաստակով: Աւ. Իսահակեանը իր գրական համեստ վաստակից դուրս ստիպուած էր ընդունել իր հարազատների – եղբայրների եւ բարեկամների նիւթական օժանդակութիւնը: Այդպէս է ապրել Աւ. Իսահակեանն իր ամբողջ կեանքը, մինչեւ 1937-ին վերջնականապէս Հայաստան վերադառնալը» (**«Հայրենիք»**, № 1 (276), հունվար, 1949, էջ 14):

[3] **«Հայրենիք»**, № 1 (276), հունվար, 1949, էջ 14:

«Երկար ու բարակ մի՛ մտածիր գրաւականի մասին: Մի՞թէ դու չարժէիր մի 20.000 ռուբլի. հերերն անիծած, թո՛ղ տան. մենք 15 տարի է մտածել ենք ու տանջուել այդ ազգի մասին, թո՛ղ մի օր էլ նրանք մեր մասին մտածեն: ... Հաւատացնում եմ, այդ բոլորը կանցնի, այդ բոլոր մարդիկ կանցնեն, մեր մրոտած մի քանի դժգոյն էջերը կմնան՝ հէնց այդ անհետացած մարդկանց երեսը պարզելու»[1]:

Երկու մեծերի միջև սկսված նամակագրությունը հետաքրքիր մանրամասներ է պարունակում գրողի ու բանաստեղծի այդ շրջանի կյանքի դառնությունների մասին:*

Գրավականով ազատվածների փախուստը զանգվածային նոր բանտարկությունների առիթ դարձավ: Փախուստները կանխելու համար իշխանությունները նորից բանտերը նետեցին ժամանակավորապես ազատվածներին և ոչ միայն նրանց: Հովհ. Թումանյանը դարձյալ ձերբակալվեց և բռնափակվեց Մետեխի բանտում: Դա 1911 թ. նոյեմբերի 7-ին էր[2]:

---

[1] ***«Հայրենիք»**, № 4 (279), ապրիլ, 1949, էջ 42:*

* *Ընդհանրապես հայ հեղափոխական շարժման, ինչպես նաև մշակութային և կրթական գործիչների նամակները կարևոր նշանակություն ունեն ժամանակաշրջանի իրողությունները ճիշտ լուսաբանելու համար: Նամակներ հաճախ են գրել Ավ. Իսահակյանը, Ավ. Ահարոնյանը, Ս. Վրացյանը, Համբ. Առաքելյանը, Ա. Զոպանյանը և այլք: Ուրիշները չեն օգտվել կամ համարյա չեն օգտվել կապի այդ միջոցից: Դրանց թվում առանձնանում էր Հովհ. Թումանյանը, որը մեզ թողել է մի քանի նամակ միայն: Ավ. Ահարոնյանի հետ երկար ժամանակ կապ չպահպանելը արդարացնելու համար 1914 թ. մարտին Լոզան նրան ուղարկած նամակում Թումանյանը գրում էր. «Եթէ իմ բնաւորութիւնը գիտես, գիտես որ էս չորս թէ հինգ տարի է Մուշեղը (իր ավագ որդին:- Հ. Ս.) Պետերբուրգ է, ու մի նամակ եմ գրել մինչեւ հիմա – չես նեղանալ» (**«Հայրենիք»**, № 1 (276), հունվար, 1949, էջ 14-15):*

Հայ գործիչների նամակների միայն մի մասն է հանգրվանած Հայաստանի արխիվներում: Հայկական սփյուռքում՝ անհատական և կուսակցական արխիվներում, անտարակույս, պահպանվում են մեծ թվով նամակներ, որոնց բնագրերի տպագրումը մեծ օգտակարություն կունենար հետազոտողների համար: Սովորաբար դրանցում արտահայտված են լինում նաև նամակագիրների օրերի տրամադրությունն ու հոգսերը, նույնիսկ նրանց բնավորության գծերի և մարդկային որակների առանձնահատկությունները:

[2] ***Նվարդ Թումանյան**, Հուշեր և զրույցներ, էջ 94:*

Սկսվեցին նոր հարցաքննություններ, որոնք տևեցին մինչև 1911 թ. դեկտեմբեր ամիսը: Գլխավոր քննիչ Լրժինը նորից իր տարերքի մեջ էր:

Այսպիսով, «Դաշնակցության գործով» ձերբակալվածների հարցաքննությունները տևեցին ավելի քան երեք տարի: Այդ ժամանակաշրջանում ցարական քննիչները կազմեցին մեղադրյալների 1000-ից ավելի գործ: Դժվար չէ պատկերացնել բարոյական և նյութական վիճակը այն հայ ընտանիքների, որոնց կերակրողները տարիներ չարունակ բանտերում էին...

Գոյությունը մի կերպ պահելով հայրենիքից հեռու՝ Իսահակյանն ու Ահարոնյանը մշտապես մտահոգ էին բանտերում տառապող հայ կալանավորների վիճակով: Նրանք չէին կարողանում ըմբռնել, թե ինչո՞ւ հարյուրավոր մարդիկ՝ բժիշկ ու փաստաբան, գրող ու ուսուցիչ, պաշտոնյա թե երկրագործ, բազում զրկանքներ են կրում զնդաններում՝ չիմանալով, թե ո՞րն է իրենց մեղքը:

«Հանցագործների» քննությունն ամեն կերպ քաշքշվում էր, հետաձգվում, չնայած բանտարկյալների ընդվզումներին և հայկական հասարակության չդադարող բողոքներին: Դատը չէր սկսվում Լրժինի և նրա աջակիցների՝ «Գործը» դատարան չհանձնելու պատճառով: Սրանք լավ գիտեին, որ դատարանը պահանջելու է ապացուցված որոշակի փաստեր և օրենքի տրամադրությանը դիմացող բացատրություններ: Բայց դրանք առկա չէին 100 հատորանոց քննական նյութերում: Այդ էր պատճառը, որ իշխանությունների, անձամբ Ստոլիպինի ցուցումներով քննիչները ձգձգում էին գործի հանձնումը դատարան:

Դեռևս 1906 թ. օգոստոսի 25-ին Պետերբուրգում էսէռների մարտական խումբը Ստոլիպինին սպանելու անհաջող փորձ էր արել: Զոհվել էին կողմնակի անձինք, իսկ նախարար-նախագահը կենդանի էր մնացել;

1911 թ. սեպտեմբերի 1-ին Կիևի թատրոնում, ուր ներկայացվում էր «Սալթան թագավորը» օպերան, երկրորդ միջնարարի ժամանակ Ստոլիպինի կյանքի դեմ մահափորձ կատարվեց: Սեպտեմբերի 5-ին նա մահացավ:

Ահաբեկչությունից հետո կառավարության ղեկը հանձնվեց

Ստոլիպինի կառավարության մեջ ֆինանսների նախարարի պաշտոնը վարած Կոկովցևին:

Ստոլիպինի մահվան լուրը հայերի մեջ հույս էր արթնացրել, որ քաղաքական թատերաբեմից նրա հեռանալուց հետո վայրենի ռեակցիան աստիճանաբար կզիջի իր դիրքերը, վերջապես կդադարեն ձերբակալությունները և որոշակիություն կմտցվի բանտարկյալների ճակատագրում:

Ենթադրությունները ճիշտ էին: Արդեն 1911 թ. հոկտեմբերից ռուս նշանավոր մտավորականներից շատերը հանդես էին գալիս մամուլում և պահանջում «Դաշնակցության գործը» վերջապես ենթարկել դատական քննության: Իշխանություններն այլևս չէին կարող արհամարհել հասարակական կարծիքը, մանավանդ որ «Գործի» նկատմամբ հետաքրքրությունը դուրս էր եկել Ռուսաստանի սահմաններից և միջազգային հնչեղություն ձեռք բերել:

ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՈՐԾՈՂ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Որքան էլ դաժան էր ստոլիպինյան ռեակցիան, բայց ցարիզմն ի վիճակի չեղավ արմատախիլ անել հեղափոխական ուժերին, ինչպես ծրագրել էր:

Արդեն 1910 թ. բոլշևիկների առաջնորդ Լենինը գրում էր. «Սևհարյուրյակային ռեակցիայի լիակատար տիրապետության շրջանը վերջացավ: Սկսվում է նոր վերելքի շրջանը»[1]:

Առաջինը կրկին պայքարի ասպարեզ իջավ բանվորությունը: 1910–1911 թվականներին բանվորական գործադուլներ տեղի ունեցան Ռուսաստանի արդյունաբերական մի շարք կենտրոններում՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Դոնեցկում, Կիևում, Իվանովոյում և այլուր: 1911 թ. Ռուսաստանում գործադուլա-

---

[1] **Վլադիմիր Լենին**, ԵԼԺ, հատ. 20, Երևան, 1979, էջ 90:

վորների թիվը հասավ 100.000-ի[1]:

Գնալով ուժեղանում էր ագրարային շարժումը, պայքարի մեջ աստիճանաբար ընդգրկվում էին գյուղացիական նորանոր զանգվածներ:

Արդեն 1911 թ. սկզբներից Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում ծայր առան ուսանողական լուրջ դժգոհություններ երկրում ստեղծված քաղաքական հեղձուցիչ մթնոլորտի դեմ: Առաջինը շարժվեցին կենտրոնական քաղաքների մի քանի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները:

1911 թ. գարնանը ուսանողական բողոքների ալիքը տարածվեց Պետերբուրգում ու Մոսկվայում: Ի պատասխան այդ ելույթների՝ լուսավորության նախարար Կասոյի հրամանով Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտի բոլոր 1270 ուսանողուհիները հեռացվեցին: Ջտեսնված ու չլսված այդ գործողությունն իրականացվեց, երբ ինստիտուտում պարապմունքներ չկային և ուսանողների մեծ մասը բացակայում էր մայրաքաղաքից: Այդ անիմաստ խստությունները արվում էին այն ժամանակ, երբ բովանդակ Ռուսաստանը կրթված կանանց մեծ կարիք ուներ:

Դրան նախորդած Մոսկվայի համալսարանի ուսանողների դասադուլը նույնպես դաժան պատիժների առիթ էր տվել: Ավելին, նույն Կասոյի 1911 թ. փետրվարին տված հրամանով՝ համալսարանի դռները անորոշ ժամանակով փակվել էին:

*Նման դատաստաններով լուսավորության նախարարը փորձում էր «կարգ ու կանոն» հաստատել Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ առանց «հանցանքների» պատճառների մեջ խորանալու: Այդ առիթով «Սուրհանդակ» թերթը գրում էր. «Մինիստր Կասսոյի այս վերջին կարգադրութիւնն էլ **յօնք չինելու տեղ աչքն էլ է հանում**, եւ մի անգամ էլ հաստատւում է այն կարծիքը, որ դրա օրով մեր լուսոյ կաճառները աւելի վատթար դրութեան մէջ են ընկնում, բարձր*

---

[1] ***Տե՛ս П. Кабанов, Ф. Ермак, Н. Кузнецов**, Очерки истории российского пролетариата, Москва, 1963, с. 265.*

դպրոցներում անհաճոյ խառնակութիւնները աւելի ստէպ-ստէպ են պատահում, քան թէ այդ կար առաջ՝ նոյնիսկ Դելիանովի, գեներալ Վանովսկու եւ Բոգոլեպովի օրերով»[1]:

Ինչպես ամբողջ երկրում, Անդրկովկասում նոյնպես հող էր ստեղծված քաղաքական պայքարի նոր վերելքի համար:

Թեև Ռուսահայաստանը շարունակում էր ագրարային երկիր մնալ, բայց և այնպես այնտեղ առկա էին սոցիալ-տնտեսական ու քաղաքական անհրաժեշտ պայմաններ դասակարգային նոր առճակատումներ առաջ բերելու համար: Դրա վկայությունը բանվորական և գյուղացիական ընդվզումներն էին:

1910 թ. հուլիսին գործադուլ հայտարարեցին Ալավերդու պղնձարդյունաբերական շրջանի Սիսիմադանի գործարանի 200 բանվորները, որոնք պահանջում էին բարձրացնել աշխատավարձը և բարելավել աշխատանքային պայմանները: Դրան հետևեց Երևանի երկաթուղային կայարանի բանվորների ելույթը՝ նույն պահանջներով: 1911 թ. փետրվարին գործադուլ բռնկվեց Կողբի հանքերում:

Որպես բողոք Լենայի ոսկու հանքերում ցարիզմի կատարած ոճրագործության դեմ՝ 1912 թ. ցույցեր ու հանրահավաքներ տեղի ունեցան Ալեքսանդրապոլում, Կարսում, Ղափանում, Ալավերդիում և այլուր[2]:

Բանվորների օրինակով շարժվեց Հայաստանի գյուղացիությունը: Ագրարային շարժումն ընդգրկեց մի շարք գավառներ: Գյուղացիները հրաժարվում էին հարկեր վճարել, պարհակներ կատարել, ինքնակամ անտառահատումներ էին անում, հողերի վերաբաժանում էին պահանջում: 1910 թ. գյուղացիական լուրջ հուզումներ եղան Վաղարշապատի գավառի Ագարակ, Նազիրվան, Հախս և ուրիշ գյուղերում: Հաջորդ տարի զինված ընդհարումներ եղան Նոր Բայազետի գավառի Զոդ գյուղի կալվածատիրոջ մարդկանց և գյուղացիների միջև:

---

[1] **«Սուրհանդակ»**, 21 հուլիսի 1911 թ.:

[2] Տե՛ս **«Հայ ժողովրդի պատմություն»**, հատ. VI, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, էջ 453:

Բանվորական և գյուղացիական ելույթները չէին կարող արձագանք չգտնել Հայաստանում տեղակայված զինվորական մասերում: 1910 թ. հակացարական խմորումներ եղան Ալեքսանդրապոլի և Կարսի զինվորականների շրջանում: 1912-1913 թթ. հուզումներ բռնկվեցին Կաղզվանի, Սարիղամիշի և Օլթիի զինվորական մասերում:

Հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացումն իր արտահայտությունն էր գտնում նաև Հայաստանի ուսումնական հաստատություններում, այդ թվում Երևանի ժանդարմական վարչության աշակերտի հսկողության տակ գտնվող Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

Հեղափոխության նոր վերելքի տարիներին Անդրկովկասում, այդ թվում Հայաստանում ծավալվող հակացարական պայքարից տարբեր պատճառներով փաստորեն դուրս էին մնացել հայկական ազգային-հեղափոխական երկու կուսակցությունները՝ Դաշնակցությունն ու Հնչակը:

Դաշնակցության նկատմամբ ցարական կառավարության իրականացրած հալածանքները, Անդրկովկասում նրա տեղական բազմաթիվ կազմակերպությունների ջախջախումը, «Դաշնակցության գործով» սպասվող դատավարությունը կուսակցության ռուսաստանյան հատվածին խիստ զգուշավորության և զգոնության էին մղել:

Ինչ վերաբերում է Հնչակի ռուսաստանյան հատվածին, ապա այդ շրջանում նրա հույժ կրավորականությունը հիմնականում բացատրվում էր ներքին կյանքի անկայունությամբ: Կուսակցության ներսում չարունակվում էին հատվածական հակամարտությունները, որոնք նախկինից ավելի ուժեղ էին քրքրում նրա մարմինը: Այդ կուսակցությունը նույնպես նախորդ տարիներին ռեակցիայի հարվածների տակ հյուծվել էր ու նվաղել, ուստի խուսափում էր հակացարական հեղափոխական գործուն պայքարին մասնակցելուց:

Հրապարակում ըստ էության մնացել էր ինքնակալության ամենաոխերիմ թշնամին՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը (ՌՍԴԲԿ), հատկապես նրա ծայրահեղ հեղափոխական թևը՝ բոլշևիզմը:

Ռուսաստանի քաղաքական կուսակցությունների թվում ամենամեծ կորուստները ռեակցիայի տարիներին կրել էին հենց բոլշևիկները: Բայց, չնայած դրան, նրանք իրենց մեջ ուժ գտան առաջինը գլխավորելու հակացարական ժողովրդական շարժումը հեղափոխական նոր վերելքի պայմաններում:

Արտակարգ եռանդ էին դրսևորում հատկապես հայ բոլշևիկները: Նրանցից ոմանք կանգնած էին այդ շարժման ամենաառաջավոր դիրքերում: Ստեփան Շահումյանն ու Սուրեն Սպանդարյանը շարունակում էին մնալ բոլշևիկյան կուսակցության ղեկավարության մեջ: Ապագայի նկատմամբ մեծ հավատով և անսպառ եռանդով գործում էին նաև նշանավոր բոլշևիկներ Սարգիս Կասյանը, Վլադիսլավ Կասպարովը, Ալեքսանդր Բեկզադյանը, Արշավիր Մելիքյանը, Բագրատ Բորյանը և ուրիշներ:

Բոլոր հայ մարքսիստների թվում իր հեղափոխական փորձով, որդեգրած գաղափարներին նվիրվածությամբ, կազմակերպչական փայլուն ունակություններով և տեսական պատրաստվածությամբ առանձնանում էր Ստեփան Շահումյանը: Փաստորեն լինելով բոլշևիկյան ամենախոշոր գործիչն Անդրկովկասում, նա միաժամանակ համակուսակցական մասշտաբի մարքսիստական տեսաբան էր, որի մեծարժեք աշխատությունները ընդմիշտ իրենց պատվավոր տեղն են գրավել համաշխարհային սոցիալիստական մտքի գանձարանում:

Աշխատավոր զանգվածներին հեղափոխության նոր վերելքի մեջ գրավելու, նրանց գալիք մարտերին նախապատրաստելու համար Անդրկովկասի բոլշևիկները հսկայական նշանակություն էին տալիս մամուլին:

Բոլշևիկյան համառուսաստանյան մամուլի օրգանների համար ուղեցույց էր հանդիսանում "Правда" թերթը, որը լայնորեն լուսաբանում էր նաև Անդրկովկասի կյանքը: Այդ թերթին հայ բոլշևիկներից աշխատակցում էին Ստեփան Շահումյանը, Ա. Հովսեփյանը, Ասքանազ Մռավյանը, Արտաշես Կարինյանը, Բագրատ Բորյանը և ուրիշներ[1]: Նրանց հոդվածները հաճախ էին

---

[1] ***Տե՛ս "Известия АН Арм. ССР",*** *общ. науки (Ереван), № 12, 1956, с. 10-11.*

հայտնվում նաև սոցիալ-դեմոկրատական համառուսաստանյան մամուլի ուրիշ օրգաններում:

Հենվելով Անդրկովկասի հեղափոխական մամուլի հարուստ ավանդույթների վրա, երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունները հեղափոխական նոր վերելքի տարիներին լույս էին ընծայում նորանոր պարբերականներ:

Այսպես, դեռ 1909 թ. Ստ. Շահումյանի խմբագրությամբ Բաքվում սկսում է հրատարակվել "Волна" հանդեսը, բայց երկու համար լույս տեսնելուց հետո արգելվում է: 1911 թ. մարտին Շահումյանը Բաքվում հիմնադրում է "Современная Жизнь" շաբաթաթերթը, որի փակվելուց հետո նույն թվականի հոկտեմբերին նախաձեռնում և լույս է ընծայում «Նոր խոսք» հայերեն մարքսիստական երկշաբաթաթերթը նույն քաղաքում[1]:

Իր իսկ ստեղծած մամուլի օրգաններում և բոլշևիկյան ուրիշ պարբերականներում Ստեփան Շահումյանը հրատարակեց բազմաթիվ հոդվածներ, որոնք հարստացնում էին Անդրկովկասի բոլշևիկների տեսական զինանոցը:

Մոսկվայի մենշևիկ-լիկվիդատորների "Возрождение" («Վոզրոժդենիե») հանդեսում մենշևիկների առաջնորդներից Լ. Մարտովը (Յուրի Յեղերբաում) տպագրել էր «Բուրժուազիայի «ձախանալը»» վերնագրով հոդվածը, ուր պաշտպանել էր տարածված այն տեսակետը, թե առաջիկայում Ռուսաստանում տեղի ունենալիք հասարակական շարժումն իր բնույթով, այսինքն՝ սոցիալ-տնտեսական բովանդակությամբ, լինելու է բուրժուական, հետևապես պետք է ղեկավարվի բուրժուազիայի կողմից[2]: Նա գտնում էր, որ բուրժուազիայի ղեկավարության ապահովումը բոլոր բուրժուական հեղափոխությունների հաղթանակի հիմնական պայմանն է, և որպես օրինակ մատնանշում էր 18-րդ դարի վերջի Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Մարտովի կարծիքով՝ ռուսաստանյան 1905-1907 թթ. հեղափոխության

---

[1] Տե՛ս **Վարդան Ավետիսյան**, Ստեփան Շահումյան. կենսագրական ակնարկ, Հայպետհրատ, Երևան, 1953, էջ 81-83:

[2] Տե՛ս **Ստեփան Շահումյան**, ԵԼԺ, հատ. Բ, Երևան, 1976, էջ 120-121:

պարտության պատճառը հենց այն էր, որ նրա ղեկավարը բուրժուազիան չի եղել[1]:

"Волна" թերթի 1909 թ. մարտի 2-ի համարում (№ 2) Ստ. Շահումյանը հանդես է գալիս Մարտովի հոդվածի դեմ: Նա ցույց է տալիս, որ մենշևիկ ղեկավարը հարցին մոտենում է չաբլոնային ու վերացական մեթոդներով: Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ, գրում էր Շահումյանը, բուրժուազիան, իրոք, առաջադիմական դասակարգ էր, որն իր առջև նպատակ էր դրել հաղթահարել միջնադարյան ավատապետական կարգերը և նրանցից բխող հասարակական իրավական նորմերը: Բայց Մարտովը հաշվի չի առնում, որ Ռուսաստանի հեղափոխությունը տեղի է ունենում ֆրանսիականից ավելի քան մեկ դար հետո, հետևապես չի կարող նույն կերպ կրկնվել, քանի որ այստեղ բուրժուազիան ոչ միայն հեղափոխական չէ, այլև իր էությամբ հակահեղափոխական է և չի կարող գլխավորել առաջադիմության համար պայքարը[2]: Հեղափոխությունն անպայման տեղի կունենա Ռուսաստանում և կհաղթանակի, բայց հաղթություն կտանի առանց բուրժուազիայի ղեկավարության և ընդդեմ նրա ցանկությունների[3] – խոր հավատով գրում էր Շահումյանը:

"Современная Жизнь"-ում և «Նոր խոսք»-ում Ստ. Շահումյանը լույս ընծայեց քաղաքական-տեսական և գրականագիտական մի չարք մեծարժեք հոդվածներ՝ կատարելով ժամանակաշրջանի գրական գործընթացների խոր վերլուծություն՝ դրանք դիտարկելով պրոլետարիատի գաղափարախոսության և նրա առաջ կանգնած խնդիրների հետ սերտ առնչությամբ:

Իր գրվածքներում Շահումյանը խոր, բազմակողմանի վերլուծության էր ենթարկում պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկու ստեղծագործությունը, նրա ամբողջ գրական գործունեությունը: "Современная Жизнь" թերթի 1911 թ. մարտի 26-ի համարում (№ 1) լույս ընծայած «Գորկու մասին» հոդվածում

---

[1] **Ստեփան Շահումյան**, ԵԼԺ, հատ. Բ, էջ 112:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 122:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 126:

նա ցույց էր տալիս, որ Գորկու ամեն մի գրվածքում հնչում է աշխատավոր մարդու անմիջական ձայնը, որի համար նա սիրելի ու պաշտելի է կյանքից մերժված ու նրա հատակում գտնվող բազմամիլիոն զանգվածների համար: Վերջիններս նրան հասկանում են առաջին իսկ խոսքից: Դա պատահական չէ, քանի որ գրողն ինքը «դուրս գալով ժողովրդական «ներքնախավերից»», ինքնակրթությամբ իր մեջ զարգացրել է գեղարվեստական մեծ տաղանդ, «ապա հասնելով գրական փառքի բարձունքներին», դարձել է «ընթերցող հասարակության կուռքը». նա «իր բնական զարգացման ընթացքով եկավ բանվորների մոտ, որոնց նա բերեց իր գեղարվեստական տաղանդը, կանգնեց նրանց հետ մի դրոշակի տակ, դարձավ նրանց երգիչն ու կենցաղագիրը»[1]:

Շահումյանը Գորկուն հետևողականորեն պաշտպանում էր բուրժուական-քաղքենիական հարձակումներից: «Ներկայումս,- գրում էր նա,- դուք չեք գտնի ոչ մի, այսպես կոչված, «առաջադիմական» թերթ, մայրաքաղաքի կամ գավառական, որ ժամանակ առ ժամանակ, այս կամ այն ձևով, գիտակցաբար կամ անգիտակցորեն վրիժառու չլիներ Գորկուց, նրա համար, որ նա երես է դարձրել «հասարակությունից» և գնացել բանվորների մոտ: Եվ միջոցների մեջ առհասարակ խտրություն չդնող բուրժուական մամուլը Գորկու հանդեպ կանգ չի առնում հաճախ ամենաանթույլատրելի հնարքների առաջ, որպեսզի վրեժխնդիր լինի» նրանից[2]:

Մաքսիմ Գորկուն համարելով աշխատավոր մարդու խոհերի ու իղձերի ազնիվ արտահայտիչ, Շահումյանն այսպես է բնութագրում նրա բարոյական կերպարը. «Ռուս, համենայնդեպս ժամանակակից, գրականության մեջ մենք չգիտենք մի այլ գրողի այդ աստիճան բարոյապես նրբազգաց ու մաքուր, ինչպիսին Գորկին է: Հարկավ, մենք այդ ասում ենք... նկատի ունենալով նրա բոլոր գրվածքները, նրա ամբողջ գրական գործունեությունը»[3]: Շահումյանը գրողին բնութագրում էր որպես պրոլետա-

---

[1] ***Ստեփան Շահումյան***, *ԵԼԺ, հատ. Բ, էջ 155:*

[2] *Նույն տեղում, էջ 155-156:*

[3] *Նույն տեղում, էջ 160:*

բական գրականության զարդ ու պարծանք[1], ուստի «բանվորները հպարտությամբ կարող են հայտարարել. «Այո՛, Գորկին մերն է. նա մեր արվեստագետն է, մեր բարեկամն ու զինակիցը՝ աշխատանքի ազատագրության վեհ պայքարի մեջ»»[2]:

Դեռ Լև Տոլստոյի կենդանության օրոք նրա վիթխարի գրական ժառանգությանն անդրադառնում էին ոչ միայն ռուս և օտարերկրացի գրականագետներն ու գրաքննադատները, այլև Ռուսաստանում գործող քաղաքական կազմակերպությունների նշանավոր չատ ներկայացուցիչներ: Բացառություն չէին բոլշևիկները, որոնց առաջնորդ Լենինն իր գաղափարական-քաղաքական դիրքերից տվել է հանճարեղ գրողի ստեղծագործական ժառանգության ճշգրիտ գնահատականը, ցույց տվել նրա գրական վաստակի համաշխարհային-պատմական նշանակությունը:

Բոլշևիկյան կուսակցության խոշոր տեսաբան, Լև Տոլստոյի գրական վաստակի խորագիտակ Ստ. Շահումյանը նույնպես անդրադարձել է գրողի ստեղծագործական վիթխարի ժառանգությանը, ցույց տվել նրա պատմական նշանակությունը, ինչպես նաև միջնորդավորված ազդեցությունը Ռուսաստանում ծավալվող ազատագրական շարժման վրա:

Այդ տեսակետից մեծարժեք է Շահումյանի «Մի քանի խոսք Լ. Ն. Տոլստոյի կրոնի մասին» հոդվածը, որը լույս է տեսել "Современная Жизнь" թերթի 1911 թ. ապրիլի 8-ի համարում (№ 2):

Իր հոդվածում հեղինակը հատկապես անդրադառնում էր լիբերալ-բուրժուական մամուլի այն տեսակետին, թե Տոլստոյի ողջ ստեղծագործությունը հագեցած է կրոնա-փիլիսոփայական գաղափարներով, որ նա ըստ էության ցարական ինքնակալության ջերմ ու հետևողական պաշտպան է և որ հենց դա է պատճառը, որ գրողի ողջ ստեղծագործության միջով անցնում է այն գաղափարը, թե չարին չպետք է չարությամբ պատասխանել: Դրանից էլ իբր բխում է Տոլստոյի այն սկզբունքը, որ մարդկության բարոյական վերածննդի հույսը պետք է կապել ոչ թե ար-

---

[1] Տե՛ս **Ստեփան Շահումյան**, ԵԼԺ, հատ. Բ, էջ 160:

[2] Նույն տեղում:

յունալի հեղափոխությունների, այլ՝ անհատի ներքին կատարելագործման հետ:

Շահումյանն ի հայտ է բերում տոլստոյագիտության փայլուն իմացություն, վկայակոչում է ոչ միայն գրողի գրվածքների համապատասխան տեղերը, այլև տոլստոյագետների աշխատությունները, վերլուծում դրանք և մարքսիզմի դիրքերից ընդհանրացումներ կատարում: Նա գրում է, որ Տոլստոյը, իհարկե, քարոզում էր «Զարին բռնությամբ մի՛ ընդդիմացեք», «Հրաժարվեցե՛ք այն սուտ համոզմունքի՛ց, թե ***պայքարով*** *դուք կարող եք ձեր կյանքը բարելավել» գաղափարները, բայց վարձու ստրկությունը կրող բանվորները և մյուս չահագործվողները այդ կոչերին չեն հետևում, որովհետև լավ գիտեն, որ միայն պայքարով կարող են ազատագրվել կապիտալի կապանքներից: Բուրժուական ազատականները և պահպանողականները, նշում էր Շահումյանը, մշտապես չեչտադրում են Տոլստոյի գաղափարների միայն այս կողմը, նրա ճակատագրականությունն (ֆատալիզմն) ու խորհրդապաշտությունը (միստիցիզմը), բնավ չանդրադառնալով նրա ստեղծագործության բուն էությանը*[1]*: Հոդվածագիրը բացահայտում էր մեծ գրողի գրվածքների հենց այդ կողմը, գրելով.*

«Տոլստոյը տեսնում էր ժողովրդական մասսաների աղքատությունը, վիշտն ու տանջանքը: Անկեղծորեն ու խորապես ցավում էր նրանց համար, ամբողջ սրտով զգում էր նրանց վշտի ու տառապանքների սարսափը, բայց իր առաջ ոչ մի ելք չտեսնելով, ... ժողովրդի համար «իրական» երջանկություն ստեղծելու հնարավորությանը չհավատալով, նա որոշեց նրա համար ստեղծել «խաբուսիկ» երջանկություն»[2]*:*

Տոլստոյը մի կողմից տեսնում էր, որ մարդկանց մեծ մասի դժբախտության պատճառը աղքատությունն ու սովն են, բայց մյուս կողմից այդ նույն մարդկանց հավատացնում էր, թե աղքատությունն ամենևին դժբախտություն չէ: Ավելին, նա գրում

---

[1] ***Ստեփան Շահումյան****, ԵԼԺ, հատ. Բ, էջ 182:*

[2] *Նույն տեղում:*

էր. «Մենք դժբախտություն-աղքատություն արտահայտող բառով անվանել ենք այն, որ երջանկություն է»: Այնուհետև՝ «Հարուստը երջանիկ լինել չի կարող»: «Լինել աղքատ, լինել մուրացկան, լինել չրջմոլիկ, դա հենց այն է, ինչ որ սովորեցնում էր Քրիստոսը. հենց այն, առանց որի չի կարելի մտնել Աստուծո արքայությունը, առանց որի այստեղ երկրի վրա երջանիկ լինել չի կարելի»[1]:

Շահումյանը գրում էր. «Տոլստոյի նույնիսկ կրոնական գրվածքներում կան բազմաթիվ փայլուն մերկացնող էջեր ուղղված բուրժուազիայի և իշխանությունների դեմ»: Հենց այստեղ էլ վերջանում է անարդարության դեմ տոլստոյական ընդվզումն ու սկսում է նրա հանձնվելը կրոնի ողորմածությանը: Տիրող կարգերին տոլստոյական երկչոտ դիմակայությունը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան փոխարինում էր մարտական դիմակայությամբ, դա ուղղորդում հասարակության վերափոխման արմատական ծրագրով, պրոլետարիատին և աշխատավոր գյուղացիությանը պայքարի առաջնորդում հանուն երջանիկ ապագայի[2]:

* * *

Ստոլիպինյան ռեակցիայի հարվածների տակ ընկավ նաև սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը (ՍԴԲՀԿ, Սպեցիֆիկներ):

Հալածանքներ սկսվեցին հատկապես ՍԴԲՀԿ ղեկավար կազմի նկատմամբ: Կազմակերպության ղեկավար առաջին դեմքը, միաժամանակ նրա տպագիր օրգան «Կեանք» չաբաթաթերթի հիմնադիր-խմբագիրը Բախչի Իշխանյանն էր, որն ազատվել էր բանտից:

ՍԴԲՀԿ-ն գտնվում էր իշխանությունների խիստ հսկողության տակ: Այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ նրա ղեկավարությունը ձգտում է արմատական փոփոխություններ կա-

---

[1] **Ստեփան Շահումյան**, ԵԼԺ, հատ. Բ, էջ 181:

[2] Նույն տեղում, էջ 183:

տարել ՍԴԲՀԿ ծրագրում և կանոնադրության մեջ ու նպատակ ունի, ի վերջո, միավորվել ՌՍԴԲԿ-ի հետ, ոստիկանությունը կազմակերպությունը ջախջախելու հրահանգ ստացավ:

1910 թ. աշնանը նախատեսված էր Բաքվում հույժ գաղտնի պայմաններում հրավիրել ՍԴԲՀԿ համագումար, բայց իշխանությունները կարողացան դա խափանել և պատգամավորներից շատերին ձերբակալել: Բանտարկվեց կազմակերպության ղեկավար գործիչների մի մասը, իսկ ոմանց հաջողվեց անցնել արտասահման: Դրա հետևանքով թուլացավ, առանձին դեպքերում նույնիսկ կտրվեց տեղական կոմիտեների ու խմբերի կապը կենտրոնի հետ, իսկ որոշ վայրերում դրանք ընդհանրապես դադարեցրին իրենց գործունեությունը:

1910 թ. վերջերից սկսած աշխուժացման նշաններ էր ցույց տալիս ՍԴԲՀԿ-ն: Շատ չանցած նա կարողացավ քիչ թե շատ վերականգնել իր կազմակերպական կառույցը:

Հասկանալի պատճառներով, անցած երեք-չորս տարիներին լուրջ տեղաշարժեր էին կատարվել ՍԴԲՀԿ-ի ներսում: Ճիշտ է, կազմակերպությունն իր կառուցվածքով մնացել էր անփոփոխ, բայց նրա գաղափարական ու պրակտիկ գործերում չկային սոցիալիզմի հաղթանակի, հեղափոխական ճանապարհով պրոլետարիատի իշխանության հաստատման նախկին մարտակոչային թափն ու նշանախոսքերը: Մյուս կողմից, եթե նախկինում կազմակերպության ծրագրում չկար ազգային-ազատագրական շարժման կամ Հայաստանի ինքնորոշման մասին որևէ ակնարկ անգամ, ապա այս շրջանում առանձին գործիչների, հատկապես ղեկավարների հրատարակած աշխատություններում այդ հարցերը որոշակիորեն իրենց արտահայտությունն էին գտնում: Եթե անցյալում սպեցիֆիկները մշտապես չեշտում էին, թե իրենց ծրագիրն ու մարտավարությունը, բացի ներքին ինքնավարության պահանջից, որևէ բանով չեն տարբերվում բոլշևիկների ծրագրից ու մարտավարությունից, ապա այժմ կազմակերպությունը շեշտված հակադիր, նույնիսկ թշնամական դիրք էր բռնել ոչ միայն Կովկասի հայ բոլշևիկների, այլև ամբողջությամբ վերցրած՝ ՌՍԴԲԿ-ի հանդեպ:

Նման էվոլյուցիան բացատրվում է մի շարք հանգամանքնե-

րով: Նախ, Ռուսական առաջին հեղափոխության և նրան հաջորդած ռեակցիայի տարիներին կազմակերպությունից հեռացել էին բազմաթիվ երիտասարդ գործիչներ և մտել ՌՍԴԲԿ-ի մեջ: Նրանցից էին Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյան), Աշոտ Հովհաննիսյանը, Արտաշես Կարինյանը, Սարգիս Բաղդադյանը և ուրիշներ: 1913 թ. նրանց միացան ՍԴԲՀԿ հնագույն անդամ և տեսաբան Ալեքսանդր Ռուբենին (Ծատուրյան) և ուրիշներ: Սրանց մի մասը ավելի արմատական պահանջներ էր ներկայացնում և գտնում էր, որ ՍԴԲՀԿ-ն, ի վերջո, պետք է մտնի ՌՍԴԲԿ-ի մեջ և գործի միայն նրա շրջանակներում: Մյուս կողմից, Թուրքահայաստանի ողբերգական ճակատագիրը և Անդրկովկասում հայ բնակչության տագնապալի վիճակը ՍԴԲՀԿ-ին ստիպում էին առայժմ մի կողմ դնել պրոլետարական հեղափոխության հաղթանակի ուղղությամբ տարվելիք աշխատանքները: Ավելին, «սպեցիֆիկ» հեղափոխականները սկսել էին նույնիսկ զուգահեռներ անցկացնել բոլշևիզմի և ցարական բյուրոկրատիայի միջև, հանգելով այն եզրակացության, որ դրանք նույնանման երևույթներ են: Ինչպես որ ռուսական բյուրոկրատիան չի ցանկանում հայ ժողովրդի քաղաքական վերածնունդը, տնտեսական վերելքը և մշակութային առաջադիմությունը, նույնպես և բոլշևիկները չեն ցանկանում, որ հայ ժողովուրդն ունենա իր ազգային պետականությունը՝ իր գործերն ինքնուրույն տնօրինելու համար: Երկուսն էլ առաջնորդվում են իրենց շահերով՝ քաղաքական թե պետական, հաշվի չնստելով հայ ժողովրդի իրավունքների ու շահերի հետ: Ինչպես էլ զարգանում են իրադարձությունները, միևնույնն է, մեղավորները հայերն են համարվում, որովհետև նրանք թույլ են, չունեն իրենց ազգային պետությունը:

ՍԴԲՀԿ ղեկավարներից Դավիթ Անանունը (Տեր-Դանիելյան), խոսելով հայերի շրջանում տարվող կրթական-մշակութային աշխատանքներին ցարական իշխանությունների մշտապես հարուցած խոչընդոտների մասին, գրում էր, որ կառավարությունը միշտ արհամարհանքով է վերաբերվել այդ ուղղությամբ այլազգիների ցուցաբերած ճիգերի նկատմամբ: Ավելին, նա հաճախ բռնի ուժով խաթարել է լուսավորության և ուսման

հանդեպ նրանց ձգտումը: Որպես դրա ցայտուն ապացույց նա մատնանշում էր գոլիցինյան ռեժիմի օրոք հայկական դպրոցների փակումը: Ցարական բռնակալության կողմից «Հայ դպրոցին եղած հալածանքն ընդհանրապես հայ լեզվի և ինքնության դեմ մղված պատերազմի ճակատներից մեկն է և գլխավորը»[1],- գրում էր Դ. Անանունը:

Ընդամենը երեք-չորս տարում ռուս-հայկական հարաբերությունների վերաբերյալ տրամագծորեն հակառակ կարծիքներ հայտնելը թելադրված էր նաև այն հանգամանքով, որ այդ տարիներին ՍԴԲՀԿ-ն չէր կարողանում գտնել իր տեղը հայկական քաղաքական կազմակերպությունների և հոսանքների համապատկերի մեջ: Դրան նպաստում էր ՍԴԲՀԿ-ի գործունեության՝ հայ բոլշևիկների չդադարող քննադատությունը, վերջիններիս գործադրած մեծ ջանքերը բանվորական շարժումից այդ կազմակերպությունը մեկուսացնելու համար:

1913 թ. սկսած նշված կազմակերպության ղեկավար կազմում փաստորեն մնացել էին երկու անձինք՝ Բախչի Իշխանյանը և Դավիթ Անանունը: Ընդ որում կազմակերպության փաստացի ղեկավար Բ. Իշխանյանը գտնվում էր բանտում և ՍԴԲՀԿ ղեկավարությունն իրականացնում էր Դ. Անանունը:

Թիֆլիսում լույս տեսնող «Նոր հոսանք» դաշնակցական հանդեսում Դ. Անանունը տպագրել էր «Ազգային հարցը եւ դեմոկրատիան» հոդվածաշարը, ուր խիստ քննադատության էր ենթարկել բոլշևիկների ազգային ծրագիրը, հատկապես կանգ առնելով Ստ. Շահումյանի 1906 թ. գրած «Ազգային հարցը եւ սոցիալ-դեմոկրատիան» աշխատության վրա:

Ազգային հարցի մասին իր տեսակետը Անանունը խարսխել էր հրեական Բունդի մշակութային-ազգային ինքնավարության (կուլտուր-ազգային ավտոնոմիա) սկզբունքի վրա: Այդ ծրագիրը ելնում էր նրանից, որ աշխարհով մեկ սփռված հրեաներն իրենց համայնքային կյանքը պետք է կառուցեն հենց այդ սկզբունքով,

---

[1] **Դավիթ Անանուն**, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատ. Բ, Էջմիածին, 1922, էջ 162:

այսինքն՝ ապրելով տարբեր երկրներում, հեռու մնալ տեղացիների մշակույթից, նրանցից մեկուսացած լինել, ապրել սեփական մշակութային մթնոլորտում, «ավտոնոմ կյանքով»: Միայն այդ կերպ հրեաները կարող են պահպանել իրենց ցեղային ինքնությունը:

Ելակետ ունենալով հրեական այդ տեսությունը, Դ. Անանունը գտնում էր, որ հայությունը նույնպես ցրված լինելով տարբեր երկրներում, իր ազգային ինքնությունը չկորցնելու համար պետք է հետևի Բունդի ուղեգծին: «Մենք՝ բաժանելով հրեայ մարքսիստների տեսակէտը,- գրում էր Անանունը,- նոյն բովանդակութիւնն ենք դնում ազգային հարցի մէջ եւ նոյն եղանակով էլ լուծում այն»[1]: Այսինքն՝ ամեն տեղ հայերը պետք է պահանջեն ինքնավարություն՝ անկախ տարածքից և այդ ինքնավարությանը վերապահել տնօրինելու ազգի մշակութային գործերը:

Դ. Անանունն ասում էր, որ ինքը և իր տեսակետի կողմնակիցները մտահոգված են ազգի ու նրա միասնության պահպանումով ձգտում են այնպես անել, որ հայ բանվորն ու հայ բուրժուան չխզվեն իրարից, որ նրանք դասակարգային պայքարի փոխարեն զբաղվեն ազգային, համազգային գործերով: Դ. Անանունը հարց էր տալիս և պատասխանում. «Ուրեմն ի՞նչ անել, որ մնալով ազգութեան գործուն անդամ՝ չզրկուենք միւս բարիքներից: Ինչպէ՞ս անել, որ չսահմանափակուի հայի բնակութեան վայրը եւ միեւնոյն ժամանակ էլ ***չխզուի նրա ազգային կապը****: Այս նպատակներին հասնելու համար ազգային միութեան համար հիմք պէտք է ընդունել ոչ թէ տերիտորիայի սկզբունքը, այլ՝ ազգային պատկանելիութեան գիտակցութիւնը»[2]:*

Ի պատասխան Դ. Անանունի գրվածքի, Ստ. Շահումյանը գրեց և 1914 թ. Թիֆլիսում առանձին գրքույկով հայերեն հրատարակեց «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» աշխատությունը, ուր սուր քննադատության ենթարկեց ազգա-

---

[1] ***«Նոր հոսանք»*** *(Թիֆլիս), № 2, 1913, էջ 372:*

[2] *Նույն տեղում, էջ 365:*

յին հարցի վերաբերյալ Դ. Անանունի և մյուս «սպեցիֆիկների» տեսակետները:

Շահումյանը ցույց էր տալիս, որ «սպեցիֆիկները» ձգտում են իրենց սկզբունքները տարածել սոցիալ-դեմոկրատական կուսակցության, արհմիությունների, բանվորական զանազան միությունների վրա՝ դրանք ըստ ազգային պատկանելիության բաժան-բաժան անելու համար: Այդ նպատակով նրանք քարոզում էին, թե հայ պրոլետարիատն ունի իր յուրահատուկ (սպեցիֆիկ) շահերը և նա կարող է դրանք իրականացնել՝ միավորվելով իր առանձին ազգային կազմակերպությունների մեջ: Դա նշանակում էր, որ յուրաքանչյուր գործարանում, որտեղ աշխատում են մի քանի ազգի բանվորներ, բոլորն էլ պետք է ունենային իրենց առանձին-առանձին կուսակցական և արհմիութենական կազմակերպությունները: Ահա թե ինչո՛ւ Շահումյանը գրում էր. «Պարզ է, որ այդ մի անհեթեթություն է»[1]:

Իր աշխատության մեջ Ստ. Շահումյանը համակողմանի քննության է ենթարկել նաև «սպեցիֆիկների» հայացքները ազգային պետության, ազգային լեզվի զարգացման, դպրոցական կրթության արմատական վերափոխման, ազգային պատմության առանցքային իրադարձությունների վերաքննման հարցերում:

Այդ բոլոր հարցերի նկատմամբ ՍԴԲՀԿ ղեկավարներն ունեին բոլշևիկների տեսակետներից շատ տարբերվող հայացքներ: Պատահական չէ, որ Շահումյանն իր աշխատության մեջ քանիցս չեշտում էր, որ չնայած նրանք հասարակությանը ներկայանում են որպես «իսկական մարքսիստներ», բայց իրենց «սպեցիֆիկ» հայացքներով նրանք իրականում դեռ շատ հեռու են մարքսիզմից:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ՍԴԲՀ կազմակերպությունը համարյա քայքայված էր:

---

[1] ***Ստեփան Շահումյան**, ԵԼԺ, հատ. Բ, էջ 397:*

Ըստ Հայ եկեղեցու "Положение"-ի՝ Մատթեոս Բ կաթողիկոսի վախճանումից հետո նոր կաթողիկոսի ընտրությունը պետք է տեղի ունենար ուղիղ մեկ տարի անց՝ 1911 թ. դեկտեմբերի 11-ին[1]:

1911 թ. հունվարի 11-ին № 3085 թղթով Էջմիածնի սինոդը դիմում է Կովկասի փոխարքային և խնդրում միջնորդել կայսեր առաջ, արտոնելու, որ հայոց հայրապետի ընտրությունը կատարվի ավելի վաղ, այն է՝ 1911 թ. սեպտեմբերի 1-ին: Դա հիմնականում պատճառաբանվում էր նրանով, որ դեկտեմբերի 11-ը լինելով ձմեռային ժամանակ, որոշ դժվարություններ կհարուցի Թուրքիայի և Պարսկաստանի պատգամավորների ճանապարհորդության ու Մայր աթոռում նրանց տեղավորման տեսակետից[2]:

Բայց կայսերական կառավարությունը չցանկացավ չեղում կատարել "Положение"-ի համապատասխան հոդվածից: Սինոդի դիմումին փոխարքա Իլարիոն Վորոնցով-Դաշկովը 1911 թ. փետրվարի 4-ի գրությամբ պատասխանում է, որ նկատի ունենալով կաթողիկոսի ընտրության համար օրենքով սահմանված ժամանակամիջոցը, Էջմիածնի առաջ բերած պատճառաբանությունները հիմնավորված չի համարում, այդ իսկ պատճառով տվյալ հարցով չի կարող միջնորդել կայսեր առաջ[3]:

Միջնորդությունը մերժվելուց հետո, 1911 թ. փետրվարի 16 (29)-ին Էջմիածնի սինոդը որոշում կայացրեց կաթողիկոսական ընտրությունը կատարել 1911 թ. դեկտեմբերի 11-ին, Մատթեոս Բ-ի վախճանումից ուղիղ մեկ տարի անց[4], առաջնորդվելով «Կանոնք ի հրահանգութիւն յընտրութեան Ծայրագոյն Պատրիարքի եւ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց» կանոնակարգով[5]:

---

[1] Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 5757:

[2] Տե՛ս **«Արարատ»** հանդեսի 1911 թ. № 1, հունվարի հավելվածը, էջ 6:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 7:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ա, վավ. 322, թթ. 1-18:

Այդ առթիվ «Արօրը» գրում էր. «Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը անյետաձգելի պահանջ է մանաւանդ այն նիւթական եւ բարոյական վանդալական աւերումներից յետոյ, որ գործեց Խրիմեան կաթողիկոսը Հայոց եկեղեցու մէջ: Միայն ազգային-եկեղեցական ժողովը կարող է լուծել հասունացած խնդիրները եւ բարեկարգել եկեղեցին, որոշելով ըէֆօրմի գլխաւոր եւ էական կէտերը»[1]:

Թերթը չէր մեղադրում Խրիմյանին, քանի որ նա պարզապես երբեք սեր չէր տածել առօրյա ծանր ու տանջալից աշխատանքի նկատմամբ: Նա եղել էր միայն գրական և հեղափոխական խառնվածքի մարդ: Նույնը հաստատում էր նաև Կ. Պոլսում հրատարակվող դաշնակցական ուղղության «Ոստան» թերթը, գրելով. «Ազգը երբ Հայրիկը կաթողիկոս դարձուց, մեծ յոյսեր ունէր, յետոյ յուսավրէպ եղաւ. իրաւունք ունէ՞ր: Խրիմեան կրնա՞ր ինքզինքին հակասել, կրնա՞ր պաշտօնական մարդ դառնալ, դիւանագէտի հովեր առնել, դէմք չինել՝ չուրջինները իրմէ պատկառ կեցնելու համար: Ե՞րբ Հայրիկ ատով երեւցած էր ժողովուրդին»[2]:

Ուրեմն պետք էր կտրականապես հրաժարվել խրիմյանական աշխատատեղից և մտնել ծանր պարտականության տակ:

Բայց խոր հակասությունների մեջ գտնվող հայ հասարակական կյանքում դժվար էր կաթողիկոսի ճիշտ ընտրություն կատարել: Այդ հանգամանքը նկատի ունենալով, Հովհ. Թումանյանը «Մեծերից հետո» վերնագրով հոդվածում չեշտում էր, որ մինչև վերջերս «մենք մի շարք խոշոր եկեղեցականներ ունեինք, որոնց մեծ մասը ավելի շատ ազգային-ժողովրդական հերոսների հմայք ու հռչակ ունեին, քան սոսկ հոգևորականի: Նրանց անունները գիտեր հայ ժողովուրդը աշխարհի մի ծայրից մինչև մյուսը, նրանց պատկերները ամենալավ զարդարանքն էին ամեն հայի տան, նրանցից ոմանց վրա երգեր էին հորինում ու երգում: Այդպիսի մարդիկ էին Ներսես Վարժապետյան, Խրիմյան Հայրիկ, Մելքիսեդեկ Մուրադյան, Մատթեոս Իզմիրլյան: Եվ նրանց կեն-

---

[1] ***«Արօր»**, № 2, փետրվար, 1912, էջ 86:*

[2] ***«Ոստան»**, № 1, 1 հունվարի 1911 թ.:*

դանության օրով, երբ կաթողիկոսական ընտրության խոսք էր լինում՝ արդեն պատրաստ ընտրված կային կաթուղիկոսացուները, ընտրված ու սիրված ամբողջ ազգից: Վեճը միայն նրա վրա կարող էր լինել, թե այդ ընտրյալներից ո՞րն է արժանա-[վորա]գույնը:

Ճշմարիտ է, նրանք էլ են ունեցել իրենց հակառակ ձայները, բայց այդ հակառակ ձայները շատ չնչին ու տկար են եղել ժողովրդական այն համատարած կեցցեների մեջ, որ առաջնորդում էին նրանց դեպի հայոց հայրապետության գահը»[1]:

Իհարկե, գահ բարձրանալուց հետո նրանք էլ ունեցել են թերություններ, որոնց համար քննադատվում էին, բայց դրանք չուտով մոռացվում ու ներվում էին, որովհետև «նրանց հետ էր ազգի սիրտն ու սերը»:

Ապա, ցավով չեչտելով, որ Իզմիրլյանի մահով սպառվեց մեծ եկեղեցականների շարքը, Թումանյանն ափսոսանքով արձանագրում էր. «Այլևս չկա պատրաստի, ամենքից վկայված ընտրյալ և դրա հետ միասին այլևս չկա[ն] ժողովրդի ճնշումն ու կեցցեն: Այժմ, այն մեծերից հետո, մեջտեղը կանգնած են սովորական մահկանացուներ, համեստ գործիչներ և նրանց միջից պետք է ընտրել Ամենայն Հայոց կաթողիկոս: Այս ընտրությանը ժողովուրդը ձեռնպահ է, պատրաստ ընտրյալ չունի: Այս ընտրությունը պետք է կատարեն հոգևորականությունը, ինտելիգենցիան, մամուլը, պատգամավորները:*

Այժմ պետք է փնտրել ու ընտրել, և այս ընտրության պատասխանատվությունն էլ արդեն ընկնելու է հոգևորականության, ինտելիգենցիայի, մամուլի, պատգամավորների վրա»[2]:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ: Արդեն 1911 թ. հունվարից սկսած՝ մի քանի ամիս չարունակ թուրքահայ և ռուսահայ հասարակական միտքը զբաղված էր կաթողիկոսական ընտրության խնդրով: «Ազատամարտում», «Հորիզոնում», «Մշակում», «Արա-

---

[1] ***Հովհաննես Թումանյան**, ԵԼԺ, հատ. 6, էջ 273:*

[*] *Թերևս բացառություն էր Մաղաքիա Օրմանյանը:*

[2] ***Հովհաննես Թումանյան**, ԵԼԺ, հատ. 6, էջ 273:*

բատում», «Բիւզանդիոնում», «Արեւելքում» և թուրքահայ ու ռուսահայ ուրիշ թերթերում ու հանդեսներում լույս էին տեսնում հոդվածներ, նյութեր, առաջարկություններ, որոնց հեղինակները քննարկում էին ընտրության հետ կապված բազմազան հարցեր, իրենց կարծիքը հայտնում կաթողիկոսական թեկնածուների վերաբերյալ:

Կաթողիկոսական նախընտրական շրջանն սկսվեց և ընթացավ բուռն պայքարով: Կարելի է ասել, որ նախկիններում Հայ առաքելական եկեղեցում կաթողիկոսական որևէ ընտրություն այնպիսի խոր երկպառակություն չէր սերմանել ու անջատման ակոսներ չէր փորել հայության երկու մեծ հատվածների միջև, ինչպես 1911 թ. ընտրությունը: Այնինչ, մինչ այդ թուրքահայ և ռուսահայ հատվածները կաթողիկոսական ընտրությունների խնդրում միշտ եղել էին համերաշխ և իրենցից որևէ մեկի գերակայության առիթ չէին տվել: Թուրքահայերի և ռուսահայերի պատվիրակները հանդիսանում էին ընդհանուր համազգային ժողովի լիազոր մասնակիցներ: Եվ հիմա հայ առաքելական համայնքը կանգնել էր պառակտման վտանգի առջև: Եվ դրա պատճառը կաթողիկոսական ընտրության նախապատրաստական շրջանում տեղի ունեցած լայնածավալ խախտումներն էին:

Առաջին և ամենամեծ խախտումը վերաբերում էր Կ. Պոլսի նախկին պատրիարք Մաղաքիա արք. Օրմանյանի թեկնածության դեմ ծավալված անօրինական գործողություններին:

Մամուլում աշխույժ ու սուր վիճաբանություններ էին տեղի ունենում կաթողիկոսական թեկնածուների շուրջ: Բոլոր թեկնածուների մեջ արժանավորագույնը Մաղաքիա արք. Օրմանյանն էր: Սույն աշխատության մեջ բազմիցս նշվել է, որ սա ամենախոշոր ու քանքարավոր դեմքն էր հայ հոգևորականության մեջ՝ օժտված բացարձակ հեղինակությամբ: Նա էր, որ իր վարչական ընդունակություններով, փորձառությամբ, հմտությամբ, ձեռնհասությամբ, գիտությամբ ու եվրոպական կրթությամբ բավարարում էր այն պահանջները, որ ներկայացնում էր ժամանակը: Այդ նշանավոր եկեղեցականն ուներ վարչական ու դիվանագիտական ակնհայտ տաղանդ, որը լիովին դրսևորվել էր նրա երկար տարիների տեսչական, առաջնորդական ու պատ-

րիարքական գործունեության ընթացքում Արմաչի դպրեվանքում, Կարինում և Կ. Պոլսում:

Օրմանյանը տաղանդավոր քարոզիչ էր ու լեզվագետ, եկեղեցական մատենագրության մեջ անուն հանած հեղինակ: Նա, իբրև մանկավարժ, պատրաստել էր մի խումբ երիտասարդ կրթված հոգևորականներ, որոնք Թուրքիայում վարում էին առաջնորդական և քարոզչական պաշտոններ, գործում բանասիրական և կրթական ասպարեզներում:

Այդ ամենի մասին գիտեին բոլորը՝ սրբազանի թե՛ բարեկամները և թե՛ հակառակորդները: Պատահական չէ, որ զանազան հոսանքներ, իբրև կաթողիկոսական ընտրելիների, ամենից առաջ խոսում էին նախկին պատրիարք Օրմանյանի, ապա Գևորգ արք. Սուրենյանցի և Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի մասին: Ամեն ինչից երևում էր, որ Օրմանյանը նորից հրապարակ է իջնում:

Կաթողիկոսական թեկնածուների հարցում չահագրգիռ հետաքրքրություն էր ցուցաբերում նաև ռուսական մամուլը, որի հրապարակումներում հաճախ ներկա էր Օրմանյան արքեպիսկոպոսի անձը:

«Կաթողիկոսական թեկնածուներ» վերնագրով լույս ընծայած հոդվածում "Голос Москвы" լրագիրը 1911 թ. հունվարի 11-ին գրում էր, որ Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելու ամենից շատ հավանականություն ունի Կ. Պոլսի նախկին պատրիարք Մաղաքիա արք. Օրմանյանը: Հոդվածագիրը նշում էր.

«Օրմանյան արքեպիսկոպոսը Հռոմում և Փարիզում ստացել է փայլուն համալսարանական կրթություն, ազատորեն խոսում է եվրոպական բոլոր գլխավոր լեզուներով, որոնց թվում նաև ռուսերենով: Հայոց եկեղեցու մասին նա ունի մի չարք գնահատելի երկասիրություններ՝ ֆրանսերեն, իտալերեն և հայերեն: Օրմանյանը հռչակված է որպես տաղանդավոր վարչագետ: Նա այժմ 67 տարեկան է, բայց դեռ կայտառ է և նախանձելի առողջություն ունի (բանջարեղենակեր է)»[1]:

---

[1] ***"Голос Москвы"*** *(Москва), № 14, 19 января 1911 г.*

Ռուսահայերը Օրմանյանին գիտեին բավական մոտիկից: 1887 թ. Մակար Ա Թեղուտցի Տեր-Պետրոսյան կաթողիկոսի (1885-1891) հրավերով նա երկու տարի կրոնագիտություն էր դասավանդել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Աստվածաբանական խոր հմտություններով, գիտելիքների հսկա պաշարով հագեցած իր դասախոսություններով մեծ հետաքրքրություն էր առաջացրել ճեմարանում և նրանից դուրս: Էջմիածնում նրա փայլուն դասախոսությունների մասին դեռ չէին մոռացել: Գիտական-եկեղեցականի թողած հմայքն այնքան խորն էր միաբանության մեջ, որ նույնիսկ ավելի քան 20 տարի անց մարդիկ ուզում էին նրան տեսնել կաթողիկոսական աթոռի վրա[1]:

Բայց Կ. Պոլսի Ազգային ժողովն ամեն ինչ արեց ընտրական գործընթացի վրա Օրմանյանի ազդեցությունը չեզոքացնելու համար: Որպեսզի Օրմանյանն իրավունք չունենար կաթողիկոսի համար առաջադրելու իր թեկնածությունը, Ազգային ժողովը գրեթե չորս տարի իր մոտ էր պահում սրբազանի դիմումը, որով նա պահանջում էր վերաքննել իր դեմ հարուցված ամբաստանության գործը: Ազգային ժողովը և հատկապես նրա Կրոնական ժողովը չէին ուզում Օրմանյանի վրայից վերցնել չինծու մեղադրանքները, որպեսզի նա բարոյական իրավունք չունենար իր թեկնածությունը ներկայացնելու Ամենայն հայոց կաթողիկոսի պաշտոնի համար:*

Հակառակ թուրքահայոց Ազգային ժողովի, նույն "Голос Москвы" լրագիրը նշում էր, որ Թուրքիայի պետական հեղաշրջման օրերին նրան ներկայացրել էին մեղադրանքներ, որ նա, իբր, հասարակական գումարներ է յուրացրել, եղել է նախկին սուլթան Աբդուլ Համիդի ջատագովը և այլն: «Այդ մեղադրանքներն իրականությանը չեն համապատասխանել, ուստի ներկայումս դրանցից բան չի մնացել»[2]:

---

[1] *Տե՛ս **Համբարձում Երամեան**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա, Աղեքսանդրիա, 1929, էջ 468-469:*

* *Օրմանյանի անարդարացի ամբաստանության մասին մանրաման տե՛ս սույն աշխատության III գրքում:*

[2] ***"Голос Москвы"**, № 14, 19 января 1911 г.*

Իզմիրլյան կաթողիկոսի վախճանումից հետո 1911 թ. գարնանը ռուսահայության ներկայացուցիչների մի խումբ դիմել էր Կ. Պոլսի Ազգային ժողովին և խնդրել արագացնել Օրմանյանի գործի վերջնական վճիռը: Խումբը չէր թաքցնում, որ իր անդամները լի են վճռականությամբ առաջիկա կաթողիկոսական ընտրություններում առաջ քաշելու նախկին պատրիարքի թեկնածությունը:

Վերջապես, երբ Ազգային ժողովը 1911 թ. հոկտեմբերի 14-ի նիստում անդրադարձել էր կաթողիկոսական թեկնածու առաջադրելու հարցին, բնականաբար բարձրացել էր նաև Օրմանյանի թեկնածության հարցը: Այդ նիստին ներկա 73 երեսփոխանների մեծ մասը միակամ էր տապալելու սրբազանի թեկնածությունը: Ավելին, ժողովի անդամ դաշնակցական երեսփոխաններ Միհրդատ Հայկազնը, Վռամյանը և Էսմերյանը նիստի քննարկմանն էին ներկայացրել բանաձևի մի նախագիծ, որով Էջմիածին գնացող թուրքահայ բոլոր պատգամավորներին հանձնարարվում էր հանդես գալ Օրմանյանի թեկնածության դեմ, եթե փորձ արվի նրան մտցնել քառանուն ցուցակի մեջ: Բանաձևի նախագծի քննարկումից հետո ընդունվեց հետևյալ որոշումը.

«Ազգ. ժողովը, յետ երկար եւ հասուն խորհրդակցութեանց, կ'որոշէ ազատ թողուլ իր պատգամաւորը յառաջիկայ կաթողիկոսական ընտրութեան մէջ: Սակայն միւս կողմէ Ազգ. Ժողովը բարոյական պարտականութեան տակ կը դնէ ինչպէս իր պատգամաւորը, նոյնպէս բոլոր թիւրքահայ պատգամաւորները՝ բացարձակապէս քուէ չտալ այն եկեղեցականներուն, որոնք կա՛մ ամբաստանութեան տակ են եւ կա՛մ ընդհանուր համակրանք գրաւած չեն ազգի մէջ»[1]:

Բանաձևն ընդունվել էր իբրև Ազգային ժողովի կողմից թուրքահայ պատգամավորներին տրված հանձնարարություն: Կրօնական ժողովն այդ մասին 1911 թ. նոյեմբերի 17-ի գրությամբ (№ 328) հայտնել էր Էջմիածնի կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցին[2]:

---

[1] Տե՛ս **«Արօր»**, № 110-111, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1911, էջ 120:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 276, 15 դեկտեմբերի 1911 թ.:

Այդ գործընթացը գլխավորում էր Օրմանյանի հակառակորդ, Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ Վահրամ արք. Մանկունին:

Կ. Պոլսի Ազգային ժողովի որոշման ընդունումն առաջին **կոպիտ խախտումն** էր Հայ եկեղեցու չգրված օրենքների, որոնք կաթողիկոսի կամ պատրիարքի ընտրության նախապատրաստական շրջանում զուտ կուսակցական շահերի հետապնդմանը հավանություն չէին տալիս:

Օրմանյանի խնդիրը անձնավորության խնդիր չէր: Լինելով նշանավոր հասարակական դեմք, նա թուրքահայ հասարակության երկու ուղղություն-հոսանքներից մեկի փայլուն առաջնորդն էր: Այս հոսանքում հեղափոխական գործունեությունը դատապարտողներն էին, որոնք պաշտպանում էին ազգային-եկեղեցական խաղաղ վերածնության գաղափարը: Հակառակ հոսանքում հեղափոխական գործելակերպին հարող մարդիկ էին, որոնք բոլոր ուժերը լարել էին նսեմացնելու Օրմանյանի անձնավորությունը, չեզոքացնելու նրա թեկնածությունը կաթողիկոսական ընտրություններում: «Ով ուզում է թող ընտրվի կաթողիկոս, միայն ո՛չ Օրմանյանը»,- ասում էին հնչակյան և դաշնակցական ղեկավար գործիչները: Նրա թեկնածությունը կտրականապես մերժում էր հատկապես Դաշնակցությունը, որի հետ համերաշխվում էր թուրքահայ գործիչների մեծ մասը: Վերջիններիս թվում էին թե՛ պահպանողականներ և թե՛ ազատականներ: Սրանց հարում էին սահմանադրական ռամկավարների որոշ մասը և հնչակյանները: Վերջիններս նույնիսկ նրան բացահայտ հաշվեհարդարի սպառնալիքներ էին անում*, միաժամանակ խոստանալով, որ նա երբեք չի նստի կաթողիկոսական աթոռին[1]:

Ի դեպ, Կ. Պոլսի Ազգային ժողովի և հայկական ազգային

---

* Երբ Մաղաքիա արք. Օրմանյանը Կ. Պոլսի հայոց պատրիարք էր, հնչակյան «Երիտասարդ Հայաստան» թերթն իր 1908 թ. № 39-ում տպագրած հոդվածով նրան մահ էր խոստանում, եթե Խրիմյան Հայրիկի վախճանումից հետո համարձակվի Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվել:

[1] Տե՛ս **«Հովիտ»**, № 38, 30 սեպտեմբերի 1912 թ.:

հեղափոխական կուսակցությունների այդ արարքը հակասում էր Հայ եկեղեցու կառավարման մասին 1836 թ. "Положение"-ի և Ամենայն հայոց կաթողիկոսների ընտրության մասին Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի Զուխաջյան կաթողիկոսի (1858-1865) պատրաստած «Կարգ ու կանոն Հայաստանեայց եկեղեցւոյ կաթուղիկոսութեան» ծրագրին[1]: Կանոնագրի 16-րդ հոդվածը հիմք էր վերցնում այն ընտրական սկզբունքը, որով «իւրաքանչիւր ոք ի ժողովականաց տայ զկարծիս իւր ... ազատօրէն, ըստ ուղիղ հասկացողութեան իւրում, ըստ մաքուր խղճի մտաց, առանց իրիք երկիւղի եւ ոչ հայելով յառաջարկութիւն ինչ կողմնակի կամ ի գրութիւն մասնաւոր, թէեւ իցէ այն պատուաւորագոյն անձանց յազգէն հայոց»:

Գալով ընդհանրապես կաթողիկոսական հարցի վերաբերյալ թուրքահայերի տրամադրությանը և հասարակական կարծիքին, հարկ է նշել, որ նրանք այս անգամ ընդհանրապես բավական անտարբեր էին կաթողիկոսական ընտրության նկատմամբ: Հայրապետական պաշտոնի համար բացի Օրմանյանից իրենց մեջ չունենալով արժանավոր մի ուրիշ անձ, մյուս կողմից, վերը նշված պատճառներով անհնարին տեսնելով նրա կաթողիկոսացումը, թուրքահայերը եկել էին այն եզրակացության, թե այս անգամ ռուսահայերին պետք է թողնել իրենց եկեղեցականներից որևէ մեկին կաթողիկոս ընտրելու պատեհությունը: Ընդ որում՝ ոմանք նրբանկատորեն ասում էին, թե չնայած ռուսական կառավարությունը երբեք չի ընդդիմացել, իսկ ռուսահայերի մտքով անգամ չի անցել, բայց Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսից հետո, սկսած 1858 թ. մայիսից, Էջմիածնի կաթողիկոսական գահի վրա բազմած հինգ կաթողիկոսներից չորսը եղել են թուրքահայեր՝ Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի Զուխաջյանը (1858-1865), Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեջյանը (1866-1882), Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյանը (1892-1907) և Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի Իզմիրլյանը (1908-1910): Հիշեցվում էր նաև, որ Էջմիածինը գտնվում է Ռուսական

---

[1] **«Հայ եկեղեցու հանրագիտարան»**, պրակ Ա, Ամենայն հայոց կաթողիկոսներ, Մայր աթոռ ս. Էջմիածին, 2008, էջ 159:

կայսրության կազմում, բայց նշված կաթողիկոսներից որևէ մեկը չգիտեր ռուսերեն, առանց թարգմանիչների չէր կարողանում շփվել ռուս մեծ ու փոքր պաշտոնյաների հետ, թեև վերջիններս այդ անհարմարության պատճառով տրտունջներ չեն արտահայտել:

Ինչ խոսք, այս պատճառաբանությունները, որպես փաստեր ճիշտ լինելով, հեռու էին անկեղծ մտահոգություններից և նպատակ ունեին խանգարել Օրմանյանի կաթողիկոսական գահ բարձրացմանը:

Կ. Պոլսի հակաօրմանյանականներին եռանդագին ձայնակցում էին Կովկասի հայ հեղափոխականները:

Օրմանյանի հետևողական հակառակորդներից էր հնչակյան Ղազարոս Աղայանը: «Հորիզոնի» 1911 թ. № 115-ում նա տպագրեց «Օրմանյանի պաշտպաններին» վերնագրով հոդվածը, ուր տեղ էին գտել այսպիսի տողեր. «Եւ դուք կարծում էք, թէ հայոց ազգը՝ Հնդկաստանից սկսած մինչեւ Ամերիկա Արդարի արիւնը չի՞ պահանջելու ձեզանից, ձեր տէրերից եւ նրանց վարձկան արբանեակներից... Աւելի դիւրին է ուղտին ասեղի ծակովն անցնել, քան թէ Օրմանեանին [հնարաւորութիւն տալ] Տրդատի դռնով մտնել եւ բազմել Լուսաւորչի գահի վրայ»:

Ի պատասխան այդ հոդվածի, «Հովիտ» չաբաթաթերթը, 1911 թ. № 22-ում «Օ. Վարդանեան» ստորագրությամբ տպագրեց «Վիպասանի անլուր պարծանքը» հոդվածը, որտեղ չեշտված էր, թե նա ըստ էության կոչ է անում տեռորի ենթարկել Օրմանյանին: Այդ արարքի համար Օ. Վարդանյանը Աղայանին մարդասպան էր անվանում:

Հակառակ Կ. Պոլսի Ազգային ժողովի, թուրքահայ կղերի, Էջմիածնի միաբանների մի մասի և հայ հեղափոխականների, ռուսահայությունը, հատկապես պահպանողական ու ազատական շրջանները ջերմորեն պաշտպանում էին Մաղաքիա արք. Օրմանյանի թեկնածությունը: Ռուսահայ նշանավոր մտավորական գործիչներից շատերը նրա նրա ջերմ ջատագովներն էին: Վերջիններից էր, օրինակ, խոշոր պատմաբան Նիկողայոս Ադոնցը, որը «Մշակում» տպագրած հոդվածներով հիմնավորում էր, որ Էջմիածնի ամենաարժանավոր գահակալը կարող է լինել

միայն ու միայն Թուրքահայոց նախկին պատրիարքը: Օրմանյանի կաթողիկոսացման կողմնակից լինելու համար նրան խիստ քննադատության ենթարկեցին հակառակ տեսակետ ունեցող գործիչները և մամուլի օրգանները: Այդ գործիչներից Առաքել Բաբախանյանը (Լեո) «Պատասխան պրն. Ադոնցին» վերնագրով մի ամբողջ հոդվածաշար տպագրեց (տե՛ս «Հորիզոն», №№ 79, 80, 81, 1912 թ.), որում նրան մեղադրում էր կղերամոլության մեջ:

Տեղին է նշել, որ կովկասահայ մամուլի օրգաններից երկուերեքը Օրմանյանի օգտին ծայրահեղ քարոզներով փաստորեն վնասում էին նրա նախընտրական գործերին, քան օգնում: Այդ տեսակետից առաջնության դափնին պատկանում էր հիշատակված «Հովիտին», որի հոդվածներն ընթերցողի մոտ տպավորություն էին ստեղծում, թե Օրմանյանը կղերակենտրոն և հակաժողովրդապետական ձգտումներով օժտված անձ է: Բայց այդ պարբերականի արջի ծառայությունը կիսով չափ հաջողվեց հաղթահարել չնորհիվ «Մշակի» և մյուս ազատական թերթերի, որոնք նույնպես Օրմանյանի ջերմ պաշտպաններ էին, բայց իրենց դերը կատարում էին ավելի նուրբ, լուրջ ու հիմնավորված: Այդ ոգով մամուլում հրատարակված ողջմիտ հոդվածներից բացի տպագրվում էին նաև գրքույկներ և այլ նյութեր, որոնք պարունակում էին ոչ միայն ջատագովական, այլև քննադատական-պարսավողական հրապարակումներ թե՛ Օրմանյանի և թե՛ կաթողիկոսական մյուս թեկնածուների մասին:

Կարծիքների այդ բազմազանության չնորհիվ էր, որ պարզվում էր ճշմարտությունը: Մանավանդ կարևոր էր, որ զանազան անձինք այցելեցին Կ. Պոլիս, զրույցներ ունեցան տեղի հասարակական-քաղաքական գործիչների, եկեղեցական այրերի հետ և համոզվեցին, որ 1) Ներկայումս հայ իրականության մեջ կաթողիկոսական պաշտոնի համար Օրմանյանից բացի չկա ավելի արժանավորը, 2) Միայն Օրմանյանը կարող է բարձրացնել էջմիածնի աթոռի ընկած հեղինակությունը, ամուր կարգապահություն հաստատել, չինարարական լայնածավալ աշխատանքներ ձեռնարկել, 3) մեծ եկեղեցականի դեմ ուղղված թշնամական գործողությունները, ամբաստանություններն ու զրպարտու-

թյունները արհեստական են, որոնց ուղղություն են տալիս որոշակի քաղաքական ուժեր: «Եւ երբ այդ ամենը պարզուեց,- գրում էր «Արօրը»,- ռուսահայերի՝ թէ՛ ժողովրդի եւ թէ՛ ինտելիգենցիայի մեծամասնութեան համակրութիւնը եւ տրամադրութիւնը դարձան դէպի Օրմանեան, նա դարձաւ Ռուսաստանի հայութեան առաջին ցանկալի ընտրելին»:

Երկրորդ կոպիտ խախտումը տեղի ունեցավ 1911 թ. աշնանը՝ Էջմիածնի համազգային ժողովի պատգամավորների ընտրության կարգի մեջ:

Կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցը Էջմիածնից Կ. Պոլիս՝ պատրիարքական տեղապահ Վահրամ արք. Մանկունուն ուղարկել էր ռուսահայ գործիչների անուններով մի ցուցակ և խնդրել այդ «համբավավոր ու անկուսակցական» անձանց Էջմիածնի առաջիկա համազգային եկեղեցական ժողովի պատգամավոր ընտրել թուրքահայերի կողմից: Ցուցակում էին ծանոթ անուններ՝ Հովհաննես Թումանյանը, Լեոն, Ղազարոս Աղայանը, Վրթանես Փափազյանը, Ալեքսանդր Խատիսյանը: Բայց մյուսների մասին թուրքահայերը գաղափար չունեին: Օրինակ՝ նրանք անգամ չէին լսել ցուցակում տեղ գտած Թադևոս Խզմալյանի, Գևորգ Խատիսյանի, Տիգրան Ռաչմաճյանի, Ն. Կաճկաճյանցի, Տիգրան Բեկզադյանի, Գևորգ Ամիրյանի, Աբրահամ Դաստակյանի և մյուսների մասին: Զնայած դրան, Թ. Խզմալյանը պատգամավոր էր «ընտրվել» Աղթամարի կաթողիկոսական վիճակում, որտեղ նա երբեք չէր եղել: Գևորգ Ամիրյանը ներկայացնում էր Վառնայի հայ բնակչությունը, բայց վերջինս նրան ոչ տեսել էր, ոչ էլ անգամ լսել նրա մասին: Աբրահամ Դաստակյանը, որը հազիվ թե իմանար Խարբերդի տեղը, ընտրված էր համարվում այդտեղից*: Կովկասի հայ բարեգործական ընկերության նախագահ Սամսոն Հարությունյանը ներկայացնում էր Երուսաղեմի, իսկ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիս-

* Նշենք, որ նախկինում կաթողիկոսական ընտրությունների ժամանակ նույնպես ռուսահայ գործիչներ պատգամավորներ էին ընտրվում թուրքահայ թեմերից, իսկ ռուսահայ թեմերից՝ թուրքահայ գործիչներ, բայց ընտրվում էին այնպիսի անձինք, որոնց քաջ ծանոթ էին լինում ընտրողները:

յանը՝ Ռոդոսթոյի (Թեքիրդաղի) հայությանը, թեև նրանք երբեք չէին եղել նշված վայրերում: Սղերդում «ընտրվել էր» Տիգրան Բեկզադյանը, Բուրսայում՝ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը, Լիմ և Կտուց անապատներից՝ Համբարձում Առաքելյանը[1]:

Բացի թուրքահայ մի քանի թեմերից (Կ. Պոլիս, Զմյուռնիա, Տիգրանակերտ, Գաղատիա, Կարին, Տրապիզոն, Եգիպտոս, Բաղդադ, Հին Բայազետ, Լիմ և Կտուց, Քղի), մյուս բոլոր թեմերում «ընտրությունները» կատարվել էին Վահրամ արք. Մանկունու կամայական ցուցումներով, տեղական թաղական կամ կրոնական ժողովների կողմից՝ առանց թեմի ժողովրդի մասնակցության կամ առանց այդ հարցով գավառական ազգային ժողովների հրավիրման: Ավելին, Մանկունին իր ապօրինի հրամանով Զմշկածագի և Արաբկիրի պատգամավոր էր նշանակել Միհրդատ Հայկազնին:

Կարծես դա քիչ էր, Մանկունին թեմական առաջնորդներից ոմանց հրամայել էր պատգամավորներ ընտրել տեղի երկրորդական անձնավորությունների (Հմայակ վարդապետ, Ռուբեն աբեղա, Գրիգորիս վարդապետ, Արշակ քահանա, Ալիխանյան քահանա և ուրիշներ), որոնք նույնպես միանգամայն անծանոթ էին թուրքահայերին:

Ինչպես տեսնում ենք, թուրքահայությանը ներկայացնող պատգամավորների զգալի մասին դժվար էր համարել այդ ժողովրդի տրամադրությունների և իղձերի արտահայտիչներ, որովհետև նրանք ոչ թե թուրքահայեր էին, այլ ռուսահայեր, որոնց մեծ մասն ընդհանրապես չէր եղել Թուրքիայում:

Էջմիածնի սինոդը և պրոկուրորը ոչ միայն որևէ դիտողություն չէին արել այդ անօրինական գործողությունների դեմ, այլև բավականացել էին պատրիարքական տեղապահ Մանկունու պաշտոնական գրությամբ՝ պատճառաբանելով, թե իրենք մի օտար պետության ընտրական ներքին կանոններին միջամտելու իրավունք չունեն: Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի վկայագիրը նրանք միանգամայն բավարար էին գտել օրինական

---

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 291:*

համարելու Թուրքահայ թեմերում «ընտրված» պատգամավորների մանդատները:

Էջմիածինը վավերացրել էր Կ. Պոլսի Ազգային ժողովի և հատկապես նրա Կրոնական ժողովի անօրինությունը և իր հերթին կատարել նոր անօրինություններ:

Կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցը 1911 թ. նոյեմբերի սկզբներին Նիկոմեդիայի թեմական առաջնորդ Ստեփանոս արք. Հովակիմյանին ցուցում էր տվել, թե Էջմիածնի առաջիկա կաթողիկոսական ժողովի պատգամավորում պետք է ընտրել: Նոյեմբերի 17-ին նա Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ Վահրամ արք. Մանկունուց հեռագրով խնդրել էր արդեն պատգամավորական թեկնածուներ նախատեսված Երվանդ քհն. Նալբանդյանի, Խորեն քհն. Խուցյանի, Լևոն Ալեքսանյանի և այլոց փոխարեն ընտրել Էջմիածնի միաբանության անդամներ Բագրատ Վարդազարյան, Մատթեոս Տեր-Մատթեոսյան և Բաբկեն Աղավելյան վարդապետներին[1]:

Այդ փաստերը չատերին հիմք էին տալիս մտածելու, թե Էջմիածնից Կ. Պոլիս է ուղարկված հատուկ անվանացանկ ռուսահպատակ հայերի, որոնք պիտի փոխարինեին Թուրքահայ թեմերում նախատեսված պատգամավորներին: Իսկ քանի որ պահպանողականներն ու ազատականները Գևորգ արք. Սուրենյանցին դիտում էին որպես դաշնակցականամետ հոգևորական, ուստի նշված գործողությունը նրանք ՀՅԴ անմիջական հրահանգ էին համարում:

Կաթողիկոսական տեղապահի և Թուրքահայ հոգևոր բարձր իշխանության այս գործողությունները ցույց էին տալիս, որ Թուրքահայ պատգամավորների ընտրությունները կատարվում են Էջմիածնի սինոդի ցուցումներով[2], մի բան, որ խախտում էր Հայ եկեղեցուց ներս գործող օրենքներով վավերացված ընտրողական սկզբունքը:

Այդ գործընթացի կապակցությամբ Ռուսաստանի ներքին գործերի նախարարությունը Էջմիածնի սինոդի պրոկուրորին

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 276, 15 դեկտեմբերի 1911 թ.:

[2] Տե՛ս **«Արօր»**, № 10-11, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1911, էջ 114:

ուղարկեց 7 կետից բաղկացած մի բացատրական գրություն, ուր ասված էր, որ արգելվում է պատգամավոր ընտրել տվյալ թեմին չպատկանող անձանց, այսինքն նրանց, որոնք թեմի ծխական չեն: Նախարարության այդ կարգադրությունը թեև ինչ-որ չափով Հայոց եկեղեցու ընտրական իրավունքի սահմանափակում էր, բայց իրականում որևէ վնաս չէր հասցնում եկեղեցուն: Նա ոչ թե թեմի ժողովրդին զրկում էր իր եկեղեցու պետի ընտրությանը մասնակցելու իրավունքից, այլ հորդորում էր, որ ժողովուրդը կաթողիկոսի ընտրությանը անմիջականորեն մասնակցի սեփական, տեղաբնակ ներկայացուցչի միջոցով:

Պետերբուրգից եկած գրությունը զայրույթ պատճառեց Վահրամ արք. Մանկունուն և նրա կողմնակիցներին: Դաշնակցական մամուլը, հատկապես Կ. Պոլսի «Ազատամարտը» Ռուսաստանի ներքին գործերի նախարարությանը մեղադրում էին ազգայնամոլության հերթական դրսևորման և «հայկական ինքնությունը» ճզմելու փորձերի համար: Բայց իրողությունն այն էր, որ Պետերբուրգից ստացված գրությունը հետևանք էր բացառապես Էջմիածնի սինոդի պրոկուրորի հարուցած հարցման: Սինոդի անդամների գիտությամբ և նրանց հետ խորհրդակցելուց հետո սինոդի պրոկուրորը դեռ 1911 թ. հունիսի 14-ին նամակ էր հղել ներքին գործերի նախարարին և խնդրել բացատրել, թե 1) արդյո՞ք օրինական է, երբ պատգամավոր է ընտրվում մեկը, որը տվյալ թեմի անդամ չէ, 2) արդյո՞ք մի պատգամավոր կարող է երկու կամ ավելի ձայն ունենալ: Հոկտեմբերի 7-ին պատասխանելով պրոկուրորի նամակին, նախարարությունը տվել էր համապատասխան բացատրություններ[1]:

Հաշվի չառնելով իր հասցեին արված անարդարացի քննադատությունները, բայց չցանկանալով ավելորդ բարդություններ ստեղծել Հայ եկեղեցուց ներս, ներքին գործերի նախարարությունը փոխում է իր նախնական կարգադրությունը և գործերի ընթացքը Էջմիածնի սինոդի իրավասությանը թողնում[2]:

Երբ եկեղեցական թեմերում վերջացան համազգային ժողո-

---

[1] Տե՛ս **«Արօր»**, № 10-11, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1911, էջ 118:

[2] Տե՛ս նույն տեղում:

վի պատգամավորների ընտրությունները, նոր ուժով ծայր տվեց նախընտրական պայքարն այս անգամ պատգամավորների միջև:

Հակաօրմանյանական պատգամավորները չունեին մի որոշակի թեկնածու և բաժանվում էին մի քանի հոսանքների, որոնք համերաշխվում և միաբանվում էին միայն մի բանում՝ տապալել Օրմանյանի թեկնածությունը:

Թուրքահայերի մի մասը, որի եռանդուն արտահայտիչը Թորգոմ եպս. Գուչակյանն էր, կաթողիկոսի պաշտոնի համար առաջ էր քաշում Եղիշե արք. Դուրյանի թեկնածությունը, իսկ իբրև երկրորդ ընտրելի Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանին: Թուրքահայերի մի ուրիշ խումբ նույնպես առաջ քաշելով Դուրյանի թեկնածությունը, իբրև երկրորդ ընտրելի առաջարկում էր կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցին: Երրորդ խումբը, որի արտահայտիչը Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ Մանկունու ներկայացուցիչ Հակոբ-Աչոտ եպս. Փափազյանն էր, առաջ էր քաշում Գևորգ արք. Սուրենյանցին իբրև առաջին, իսկ Դուրյան սրբազանին՝ իբրև երկրորդ ընտրելի:

Ինչպես տեսնում ենք, թուրքահայ հոգևորականների այս երեք խմբերից որևէ մեկի հաշվում Օրմանյան սրբազանը չկար[1]:

Էջմիածնի միաբանությունը նույնպես բաժանված էր երեք հոսանքի. մի մասն Օրմանյանի կողմնակիցներն էին, որոնք հարաբերական մեծամասնություն էին կազմում, երկրորդ մասը պաշտպանում էր Գևորգ արքեպիսկոպոսին, երրորդ խումբը՝ Մեսրոպ եպիսկոպոսին: Վերջին երկու խմբերը ևս, իբրև երկրորդ ընտրելի ընդունում էին Դուրյան սրբազանին:

Հայոց կաթողիկոսական ընտրությունները հետաքրքրություն էին առաջացրել Թուրքիայի արևելյան շրջանի քրիստոնյաների, ինչպես նաև եզդիների մոտ: Վերջիններիս հետաքրքրությունը պայմանավորված էր Հայ առաքելական եկեղեցու վարդապետությունն ընդունելու նրանց որոշակի շրջաններում առաջացած տրամադրություններով:

Դրանից երկու տարի առաջ եզդիների առաջնորդի որդին

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 284, 27 դեկտեմբերի 1911 թ.:*

մեկնել էր Կ. Պոլիս, հանդիպումներ ունեցել տեղի հայ գործիչներից ոմանց հետ, ապա ուղևորվել էր Կովկաս, այնտեղ պտույտ կատարել, եղել էր նաև Էջմիածնում: Վերադառնալով իր հարազատ վայրերը, այդ երիտասարդը գնացել էր Մուսուլ և Տիգրանակերտ (Դիարբեքիր), ուր բնակվում էին զգալի թվով ազգակիցներ: Նա մասնավորապես Տիգրանակերտում բնակվող եզդիներին ներշնչել էր Հայ առաքելական եկեղեցին ընդունելու նպատակահարմարությունը, մշտապես չեշտելով նրա պարզությունն ու ազատ ոգին: Քաղաքի եզդիական համայնքը հավանություն էր տվել հայոց հավատքն ընդունելու առաջարկին և դիմել էր Հայ եկեղեցու Տիգրանակերտի առաջնորդարանին՝ Էջմիածնադարձ անելու իրենց ազգակիցներին և եզդիներից մի ներկայացուցիչ ուղարկել Էջմիածնի եկեղեցական ժողով: Առաջնորդարանն առայժմ նշանակել էր երկու քահանաների՝ քաղաքի եզդիներին կրոնական կրթություն տալու համար: Սրանք սկսել էին իրենց գործունեությունը, բայց այդ մասին տեղեկանալով և դրանում վտանգ տեսնելով, Տիգրանակերտի թուրքական իշխանությունը խստիվ արգելել էր հայ քահանաների հոգևոր-լուսավորչական աշխատանքը եզդիների շրջանում:

Դրանից հետո էլ Տիգրանակերտի հայոց առաջնորդ Զավեն ծայրագույն վարդապետ Տեր-Եղիայանը հարցը բարձրացրեց Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի առջև, չեշտելով եզդիների ցանկությանն ընդառաջելու հույժ կարևորությունը: Նա Հայ եկեղեցու և ազգի ուշադրությունը հրավիրում էր եզդիների մեջ ուսման տենչ ու գիտակցություն արթնացնելու և նրանց հայ տարրին միացնելու անհրաժեշտության վրա:

Անդրադառնալով այդ հարցին, Մայր աթոռի օրգան «Արարատ» հանդեսը գրում էր.

«Եզիտիներու հակումը դէպի Հայ Եկեղեցին շատ որոշ նշաններով սկսած է երեւան գալ հիմա Տիգրանակերտի մէջ, եւ տարակոյս չկայ, որ երբ տեղւոյն հայութիւնը շրջապատուած է զանազան տարրերէ, եզիտիներու ստուար թիւին հայոց հետ համերաշխութիւնը ապահովել՝ շատ կարեւոր խնդիր մ'է մասնաւորապէս Տիգրանակերտի հայութեան համար»[1]:

---

[1] **«Արարատ»**, № 6, Հունիս, 1910, էջ 513-514:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԵՐԻ ՀԱՐՑԻ ՎԵՐԱՐԾԱՐԾՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆ ՏՐՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏՎԵՐՆԵՐԸ: Կաթողիկոսական նախընտրական շրջանում հայ հասարակության հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչները հայոց հայրապետի բուն ընտրությանը նախապատրաստվելուն զուգընթաց առաջ էին քաշում առաջարկներ, որոնցում արտացոլված էին Հայ եկեղեցին բարեկարգելու մասին իրենց պատկերացումները: Այդ առաջարկություններն ըստ էության հայ հասարակության պատգամն էին Էջմիածնի ապագա գահակալին:

Այն ընդհանուր կարծիքը կար, որ նախորդ երկու կաթողիկոսների անհաջող գործունեությունից հետո Ամենայն հայոց հայրապետի պատասխանատու պաշտոնին պետք է կարգվի մեկը, որն ամենից առաջ վարչական աշխատանքի կարողություն ունենա, բնությունից օժտված լինի ամուր կամքով, միաժամանակ լինի բարձր ուսման տեր, կրթված ու կիրթ, գիտակ ռուսերենին ու եվրոպական մյուս լեզուներին:

Տվյալ ժամանակաշրջանում բոլորին մտահոգող առաջին խնդիրը Էջմիածինը ծանր վիճակից դուրս բերելն էր: Հասարակությունն ականատես էր, որ Իզմիրլյանի կաթողիկոս ընտրվելուց հետո էլ Էջմիածնում բան չէր բարեփոխվել: Նրա տված խոստումներից որևէ մեկը չէր կատարվել: Քայքայված վիճակը շարունակվում էր վարչական, կալվածական և դպրոցական բոլոր գործերում: Աչքի էր ընկնում գործունյա և աղնիվ թեմական առաջնորդների պակասը: Բազմարժեք եկեղեցական-վանքապատկան կալվածները կառավարվում էին այնպիսի անտարբերությամբ, որ առանձին մասնավոր անձանց համար դառնում էին շահագործման ու հարստության աղբյուր և, վերջիվերջո, թեմերն ընկնում էին մեծ պարտքերի տակ, իսկ հողերը ենթարկվում էին աճուրդով ծախվելու վտանգի*: Տեր լինելով ահագին

* Օրինակ՝ Արցախի թեմի կալվածքները, որոնց կառավարիչները, նշանակված լինելով թեմական առաջնորդների կամ Էջմիածնի սինոդի կողմից, իրենց կառավարման ենթակա ավելի քան 60.000 դեսյատին հողերի ու կալվածքների արդյունքից ժամանակին չէին վճարել տարեկան ամենաչատը 1500 ռուբլի կազմած պետական տուրքերը, որոնք, տուգանքներով ուռճացած, 1910 թ. հասել էին 50.000 ռուբլի ահագին գումարի, որը վճարելու համար կալվածքները ստիպված դրվել էին գրավի ներքո՝ աճուրդով վաճառելու համար:

հողերի ու բազմաթիվ գյուղերի, էջմիածինը չէր կարողացել ստեղծել այնպիսի մի տնտեսություն, որն ունակ լիներ լիովին ապահովել իր նյութական վիճակը և մուրացկանի պես ձեռք չմեկներ ժողովրդին: Այդ տխուր իրողության ցայտուն ապացույցը կաթողիկոսության բյուջեն էր, որը միշտ մնում էր նույնը՝ միշտ կարիք ուներ դրամի, իսկ զեղծարար և հափշտակիչ եկեղեցականները մնում էին անպատիժ, անարժան թեմական առաջնորդները շարունակում էին իրենց պաշտոնավարումը: Ծխական թե թեմական դպրոցները չունեին մշակված ու հաստատված ծրագիր ու ներքին կանոնադրություն, չէին պարզված ու որոշված հոգաբարձական և ուսուցչական մարմինների փոխադարձ հարաբերությունները, իրավունքներն ու պարտականությունները, դպրոցներում արմատացած էր կուսակցականության նեղ ոգին[1]:

Հայ մտավորականները, հատկապես Ռուսաստանի ու Եվրոպայի համալսարաններում բարձրագույն կրթություն ստացածները, խոր ցավ էին ապրում ի տես Գևորգյան ճեմարանի տխուր վիճակի: Կրթական այդ նշանավոր հաստատությունը ամբողջովին անձեռնհաս անձանց ձեռքն էր ընկել: Ներքին խարդավանքների պատճառով ճեմարանից դուրս էին մղվել նշանավոր մանկավարժներ ու գիտնականներ, այդ թվում՝ Մեծն Կոմիտասը: Անթույլատրելի էր, որ ունենալով թանկագին ու հազվագյուտ ձեռագրերի մեծ հավաքածու, էջմիածինը, սակայն, չկարողացավ ստեղծել մի կաճառ, որը բացահայտեր ու գիտականորեն արժևորեր այդ հսկա հոգևոր հարստությունը: Ուստի մտավորական մարդիկ պահանջում էին էջմիածինը գիտական լուրջ կենտրոնի վերածել: Նրանք գտնում էին, որ կաթողիկոսի տնօրինության տակ պահպանվող հայերեն հին ձեռագրերի խոշոր հավաքածուն կարող է գիտական հետազոտությունների անսպառ աղբյուր լինել: Առաջինը հենց կաթողիկոսը պետք է լինի գիտական այդ հարստության ուսումնասիրողը: Նա ոչ միայն պետք է լինի բարձր կրթության և բազմակողմանի գիտելիքների տեր, այլև գիտության մշակ: Գիտության մեջ խորա-

---

[1] Տե՛ս **«Արօր»**, № 2-3, փետրվար-մարտ, 1911, էջ 181:

նալու իր անձնական օրինակով նա կարող է Էջմիածնի հոգևոր հանրության՝ գիտության նկատմամբ հետաքրքրություն չունեցող կղերին ինչ-որ կերպ մղել ուսումնասիրությունների ոլորտ: Մտավորականների շրջանում այն կարծիքը կար, որ մանավանդ հայ եկեղեցական մատենագիրների երկասիրությունների մատենագիտությունը կարող է ունենալ հույժ գործնական նշանակություն այն իմաստով, որ ժամանակաշրջանը պահանջում է վերաքննել եկեղեցական շատ դոգմաներ՝ դրանք հարմարեցնելով հանրության հոգևոր նոր կարիքներին, վերակենդանացնել և կյանքի առօրյա խնդիրներին մոտեցնել եկեղեցու կանոններն ու ավանդույթները:

Բայց դա էլ բավական չէր: Ազգային պետություն չունեցող հայության համար կաթողիկոսը միայն հոգևոր առաջնորդ չէր: Նրա անմիջական իշխանության տակ էին նյութական, ֆինանսական և այլ կարգի բազմապիսի միջոցներ, նա էր ուղղություն տալիս Էջմիածնի բոլոր հաստատությունների ու վանական միաբանությունների գործունեությանը: Նրա բարձր հոգատարության ներքո էին որբանոցները, թեմական դպրոցները, Էջմիածնի նշանավոր Գևորգյան ճեմարանը: Իրենց արած գործերի մասին կաթողիկոսին ուղղակի հաշվետու էին ռուսահայոց թեմակալ առաջնորդները: Կաթողիկոսն էր եկեղեցական բարձր պաշտոններում հաստատում արժանավոր հոգևորականներին: Այդ ամենը վկայում էին, որ Ամենայն հայոց հայրապետի աթոռին պետք է լիներ բարձր պատասխանատվությամբ օժտված անձնավորություն:

Ազգային-կրոնական կարևորագույն խնդիրների մասին Ամենայն հայոց կաթողիկոսը երբեմն խորհրդակցում էր Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքների և Կիլիկիո կաթողիկոսի հետ, նրանց տալիս որոշ հրահանգներ: Էջմիածնի կաթողիկոսի գործունեության կարևորագույն ուղղությունը հանդիսանում էր Կովկասի փոխարքայության պաշտոնյաների, առաջին հերթին փոխարքայի, ինչպես նաև կենտրոնական կառավարության համապատասխան ստորաբաժանումների բարձրաստիճան պաշտոնյաների հետ ամենատարբեր, հատկապես եկեղեցական-վարչական և դպրոցական հարցերի շուրջ բանակցությունները:

Այս վերջին ընագավառում անփարատելի սխալներ գործելն անթույլատրելի էր, մանավանդ եթե նկատի ենք առնում անցյալում Էջմիածնի ու Կ. Պոլսի հոգևոր իշխանությունների թույլ տված բազմաթիվ սխալները, որոնց մի զգալի մասը Էջմիածնի կաթողիկոսների խորհրդականների անհեռատես ներշնչումների արդյունքն էր եղել: Ուստի հոգևոր գործերից մտահոգ անձինք գտնում էին, որ Ամենայն հայոց հայրապետը պետք է լինի նաև նուրբ դիվանագետ, որպեսզի կարողանա Էջմիածնի չուրջ եղած բարդ հարաբերություններից գլուխ հանել:

Կաթողիկոսական խնդիրը, տվյալ պահին չարունակելով մնալ որպես օրվա գլխավոր խնդիր, նաև բազմազան տեսական հարցադրումներ էր առաջ բերում: Օրինակ՝ մարդկանց կրկին հետաքրքրում էր, թե կարո՞ղ են արդյոք քահանան, վարդապետը, աշխարհականը կաթողիկոսական ընտրելի համարվել, թե՞ ոչ: Թիֆլիսի «Սուրհանդակ» և «Հովիտ» թերթերն անընդունելի էին համարում նույնիսկ նման հարցադրումը և գտնում էին, որ ընտրելի կարող են լինել միայն վարդապետից բարձր աստիճան ունեցող եկեղեցականները: Ազատականներն, ընդհակառակը, անվերապահորեն դրականորեն էին պատասխանում հարցին: Իրավաբան Հակոբ Մեղավորյանի, Մեսրոպ ավագ քահանա Մելյանի և այլոց՝ «Մշակում» լույս տեսած հոդվածներում ցույց էր տրվում, որ Հայոց եկեղեցու կանոններով ու պատմական ավանդույթներով ոչ միայն վարդապետն ու քահանան, այլև աշխարհականը եպիսկոպոսի հետ հավասարապես ընտրելի են կաթողիկոսական աստիճանի համար[1]:

Էջմիածնի կաթողիկոսության կողմից բարեփոխման ենթակա հրատապ խնդիրներից մեկը հասարակայնությունը համարում էր ըստ էության Հայ եկեղեցու ողնաշարը հանդիսացող քահանայական դասի դերի բարձրացումը:

Մինչև 19-րդ դարի 70-80-ական թվականները հայ հոգևորականությունն առանձնաշնորհյալ դիրք ուներ հայ ժողովրդի կյանքում, իսկ քահանան անառարկելի հեղինակություն էր իր

---

[1] Տե՛ս **«Արօր»**, № 2-3, փետրվար-մարտ, 1909, էջ 12-13:

հոտի համար: Եվ թեև հոգևորականությունն այն ժամանակ, առանձին բացառություններով, լուսավորյալ չէր, անպատրաստ էր հոգևոր որակյալ ծառայության համար, այդուհանդերձ, հատկապես գյուղի ժողովուրդը կամա թե ակամա քահանային էր դիմում՝ պատասխաններ ստանալու իրեն չահագրգռող հարցերի մասին: Այդ ամենը հայոց անցյալի արդյունք էր: Զուր չէ, որ հասարակության բավական ստվար մասն առանձին նշանակություն էր տալիս բոլոր աստիճանի հոգևորականներին, այդ թվում հատկապես քահանայությանը, և հավատացած էր, որ պատրաստված հոգևորականների միջոցով կարելի է խոշոր փոփոխություններ կատարել ժողովրդական խավերում:

Անցան ժամանակներ: Հոգևորականներն անտարբեր մնացին նոր իրողությունների նկատմամբ, չչտապեցին քայլել ժամանակին համընթաց և լուրջ պատրաստություններ տեսնել իրենց կոչման համապատասխան գործ կազմակերպելու և նախկին բացառիկ առանձնաշնորհումները պահպանելու համար: Բայց նրանք ոչ միայն չկարողացան այդ խնդիրը կատարել, այլև ի վիճակի չեղան պահպանելու իրենց ունեցած դիրքերը և առհասարակ կորցրին ազդեցիկ դերը հայության հասարակական կյանքում:

Եթե մի ժամանակ քահանան միակ «բանիմացն» էր գյուղում, այժմ սկսեցին գյուղական համայնքում հանդես գալ հանրային գործերում փոքր ի չատե ձեռնհաս նոր անհատներ: Մի տեղ երևան էր գալիս գյուղական ուսուցիչն իր կրթական մակարդակով, մյուս տեղ՝ գյուղական գրագիրը, երրորդում՝ գյուղական տանուտերը և դատավորը, չորրորդում՝ ֆելդշերը կամ գյուղում հայտնի դարձած գրագետը, հինգերորդում՝ պանդխտությունից վերադարձած, աշխարհ տեսած գյուղացին և այլն:

Այդ բոլորի դիմաց հայ քահանան այժմ հանդես էր գալիս որպես մի խեղճ ու կրակ անհատ, որն ավելի սահմանափակ տեղեկություններ ուներ աշխարհի անցուդարձից, քան վերը հիշատակվածներից որևէ մեկը:

Եվ գյուղն իր ժողովրդով այլևս պահանջ չէր զգում կենցաղային խնդիրներով դիմելու իր քահանային և նրանից ցուցումներ ստանալու:

Ահա թե ինչո՛ւ քահանայական նոր սերնդի պատրաստումը կարևորագույն նշանակություն էր ձեռք բերում: Մարդիկ գրտնում էին, որ հայ քահանան պետք է ունենա նվազագույնը միջնակարգ կրթություն, կարողանա բավարարել իր հոտի ոչ միայն հոգևոր պահանջները, այլև գիտության, տեխնիկայի, գրականության ու արվեստի բնագավառներից ունենա որոշակի գիտելիքներ, որպեսզի ի վիճակի լինի քիչ թե շատ գոհացնելու իրեն դիմողներին:

Քանի որ մոռացության էր մատնվել քահանայից ամենամյա ավանդական հավաքը էջմիածնում, ուր լսվում էին դասախոսություններ, ուր նրանք չփվում էին իրար հետ, փոխադարձ կապեր հաստատում, մտքեր փոխանակում, նորություններ իմանում, ուստի առաջարկություններ էին արվում վերականգնելու այդ հավաքները, ավելին՝ դրանք կազմակերպելու տարեկան երկու անգամ՝ լրջորեն մշակված ծրագրերով:

Հասարակական լայն քննարկման էին ենթարկվում Հայ եկեղեցու կյանքին առնչվող ուրիշ խնդիրներ ևս:

Շատ եկեղեցականներ գտնում էին, որ «Գրիգորյան» և «Լուսավորչական» անունները Հայ եկեղեցուն տվել է *"Положение"*-ն, որը չի համապատասխանում պատմական ճշմարտությանը: Հայոց եկեղեցին, ասում էին նրանք, հիմնվել է առաքյալների քարոզչության արդյունքում, նրանց ջանքերի շնորհիվ, հետևաբար նա պիտի կոչվի «Հայոց առաքելական եկեղեցի» և ոչ թե «Գրիգորյան» կամ «Լուսավորչական»:

Ավելորդ էին համարվում Հայ եկեղեցու համար ռուսական միապետության ստեղծած հիմնարկությունները՝ էջմիածնի սինոդը, կոնսիստորիաները, հոգևոր կառավարման՝ *"Положение"*-ով նախատեսված մյուս ձևերը: Դրանց փոխարեն առաջարկվում էր վերստեղծել հայ հոգևորականության և ժողովրդի ընտրությամբ կազմված գերագույն կենտրոնական, թեմական և գավառական խորհուրդները՝ իրենց դիվաններով:

Պահանջներից մեկն այն էր, որ կուսակրոնությունը չպետք է պարտադիր լինի: Ճիշտ էր համարվում, որ հոգևորականը բոլոր աստիճաններում, սկսած աշխարհական վիճակից մինչև կա-

թողիկոս լինելը, իրավունք ունենա ամուսնանալու, իսկ եթե ամուսնանալ չի ուզում՝ ազատ է իր որոշման մեջ: Հոգևորականը կարող է ամուսնանալ այնքան անգամ, որքան եկեղեցին թույլ է տալիս աշխարհականին:

Առաջարկվում էր բարեփոխել հոգևորականի ապրուստի հայթայթման եղանակը. իր սրբազնագործ պաշտոնը նա պիտի կատարի ձրի, բայց որպես պաշտոնյա, իր դիրքի, աստիճանի և ընտանեկան վիճակի համեմատ, եկեղեցուց ու համայնքից պետք է ստանա ապրուստի ապահովություն: Մարդիկ գտնում էին, որ հոգևորականին պետք է տալ քաղաքացիական բոլոր իրավունքները նրա կոչմանը համապատասխան սահմաններում: Որպես քաղաքացի նա ազատ է պաշտոնավարությունից դուրս հասարակությանը երևալու քաղաքացիական արժանավայել տարազով:

Հաճախ էր այն կարծիքը հայտնվում, որ եկեղեցու՝ ժամանակակից ոգով բարեկարգությունը պահանջում է հիմնական փոփոխություն մտցնել ծիսակատարության և աստվածապաշտության կարգի մեջ: Եվ որպեսզի եկեղեցին սիրելի և գրավիչ լինի թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ. պետք է նրան վերադարձնել այն պարզությունը, որ նա ուներ օտար ազդեցություններից առաջ՝ ուժ տալով եկեղեցական երաժշտությանը, երգեցողությանը և ավետարանական կենդանի խոսքին:

Վերջապես բարձրաձայնվում էր, թե 16 դարի պատկառելի հնություն ունեցող Հայոց եկեղեցին, որքան էլ անհավատալի է, մինչև այժմ չունի որոշակի համակարգի մի ամփոփ լիակատար օրենսգիրք (codex), որն ընդգրկեր ազգային-հոգևոր-եկեղեցական-կրթական ամբողջ կյանքը: Նա չուներ նաև իր պաշտոնյաների, հիմնարկությունների և համայնքի գործունեության, դրանց գործավարության և փոխհարաբերությունների մանրակրկիտ սահմանումը: Ուստի առաջարկվում էր ձեռնհաս աշխարհական և հոգևորական անձերից կազմել մի հանձնախումբ, որը ձեռնարկեր պատրաստելու համապատասխան բաժիններով և ստորաբաժանումներով (վարչական, դատաստանական, տնտեսական, իրավական, կալվածական, հողային, ամուսնական, ապահարզանի, ծիսական-ընտրողական, կրթական, կա-

նոնական, վանական և այլն) մի օրենսգիրք*:

Հասարակության մեջ, ինչպես և օտար մամուլի առանձին օրգաններում տրտունջներ էին հայտնվում, թե հայկական մամուլն ինչո՞ւ այդքան շատ է զբաղվում ընտրությունների հարցով, այն դեպքում, երբ ժողովրդական զանգվածները կարևորություն չեն տալիս կաթողիկոսի անձի հարցին:

Պահպանողական և ազատական մամուլի օրգանները կտրականապես մերժում էին այդ տեսակետը և ցույց տալիս, որ հայ զանգվածի համար շատ կարևոր է իր եկեղեցու պետի անձի հարցը: Զէ՞ որ հայոց կյանքում եկեղեցին առանձնահատուկ դեր ունի, գրում էր «Արօրը»: Նա ոչ միայն գլխավորում է եկեղեցու տնտեսական ու մշակութային կյանքը, այլև բազմաթիվ բարեգործական կտակներ է տնօրինում: Աշխարհի զանազան տեղերում սփռված հայության հատվածների, հայկական գաղութների միջև ազգային կապը պահպանվել և պահպանվում է ոչ միայն լեզվի, գրականության, մամուլի, այլև գլխավորապես եկեղեցու միջոցով: Ուստի Հայ եկեղեցու բարեկարգումը օրախնդիր է, որպեսզի նա կարողանա առավել հաջողությամբ կատարել իր առաքելությունը: Այդ նկատումով՝ կաթողիկոսից, իբրև հայոց ժողովրդական խոչորագույն հաստատության պետից, շատ բան է կախված:

---

* Նշենք, որ Հայ եկեղեցու բարեփոխմանն ուղղված այս (և ուրիշ) առաջարկները պարբերաբար բարձրացվում էին նաև հետագա, նույնիսկ Առաջին աշխարհամարտի, տարիներին: 1917 թ. Փետրվարյան ռուսական հեղափոխությունից հետո, երբ տապալված էր միապետությունը, Ժամանակավոր կառավարությունը խոստանում էր երկրի բազմացեղ և բազմալեզու ազգերի կյանքը կառուցել ժողովրդավարական ազատ հիմունքներով, որպեսզի նրանք հնարավորություն ունենան կազմակերպելու իրենց ներքին կյանքը: Այս պայմաններում վերացվեց Արևելյան Հայաստանի ազատագրումից հետո ռուսական կառավարության՝ 1836 թ. Մայր Աթոռ ս. Էջմիածնին տված կանոնադրությունը (“Положение”), որով կրճատվել էին Հայ առաքելական եկեղեցու դարավոր իրավունքները և օտար ոգի էր մտցվել նրա նվիրապետության մեջ: Ավելին, այդ կանոնադրության համաձայն Ամենայն Հայոց կաթողիկոսը պարտավոր էր հավատարիմ հպատակության երդում տալ ռուսաց կայսրին, մի բան, որ միանգամայն հակասում էր կաթողիկոսի «Ամենայն Հայոց» տիտղոսի իմաստին և գաղափարին (Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 99, թթ. 12-13):

Ինչպես տեսնում ենք, Հայ եկեղեցուց ներս ստեղծված անմխիթար վիճակը աստիճանաբար չտկելու և Ամենայն Հայոց Հայրապետի ու Մայր աթոռի հեղինակությունը բարձրացնելու համար գերմարդկային ճիգեր էին անհրաժեշտ: Միայն վարչակազմակերպչական անուրանալի հատկանիշներով օժտված, մտավոր լուրջ կարողություններ, բազմակողմանի գիտելիքներ, ղեկավար աշխատանքի հարուստ փորձ ունեցող, ծանրակշիռ ու խոհուն բարձրաստիճան հոգևորականը կարող էր ստանձնել Ամենայն Հայոց Հայրապետի պաշտոնը՝ Էջմիածնի համար այդ դժվարին ժամանակում:

Հայ եկեղեցու սպասավորների թվում այդ բոլոր պահանջներին համապատասխանում էր միայն մի հոգևորական՝ Մաղաքիա արք. Օրմանյանը: Նա ռուսահայոց ճնշող մեծամասնության առաջին թեկնածուն էր, ով կարող էր Հայաստանյայց եկեղեցու արժանավորագույն հովվապետը լինել:

Բայց այդպես չեղավ:

ԳԵՎՈՐԳ ԱՐՔ. ՍՈՒՐԵՆՅԱՆՑԸ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍ: ՊԱՌԱԿՏՈՒՄ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ

1911 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության բուն գործընթացը:

Պատգամավորական ժողովի աշխատանքներին հետևելու համար մամուլն Էջմիածին էր ուղարկել հետևյալ ներկայացուցիչներին՝ Թ. Տոչյան և Գ. Ալթունյան («Հորիզոն» և «Ղարաբաղ»), Վահան քհն. Աղազադյան և Հարությունն Գասպարյան («Մշակ»), Երվանդ Տեր-Մինասյան («Արօր» և «Ախուրեան»), Ռ. Աբրահամյան ("Биржевые Ведомости"), Ստեփան Կանայան («Արմենիա»), Միսակ Խոստիկյան («Սուրհանդակ»), Թ. Սարուխանյան ("Эриванский Вестник"): Սանկտ Պետերբուրգից եկել էին Յուրի Կոբիյակովը ("Русское Слово") և Պ. Սոտնիկյանը ("Речь")[1]:

---

[1] Տե՛ս **«Արարատ»** հանդեսի 1911 թ. № 1, հունվարի հավելվածը, էջ 3:

Դեկտեմբերի 9-ին 80 հոգևորական ու աշխարհական պատգամավորների մասնակցությամբ (89 ձայնի իրավունքով) կայացավ պատգամավորների նախնական խորհրդակցություն: Որոշ վիճաբանություններից հետո խորհրդակցության մասնակիցները համազգային ժողովի պատվավոր նախագահի համար երաշխավորեցին Հակոբ-Աչոտ եպս. Փափազյանի, իսկ գործող նախագահի համար՝ Սամսոն Հարությունյանի թեկնածությունները, որոնք ընտրվեցին գաղտնի քվեարկությամբ և ձայների գերակշիռ մեծամասնությամբ: Ընտրվեց նաև երկու փոխնախագահ և երկու քարտուղար:

Ստեղծվում է 10 պատգամավորից (յուրաքանչյուր հոսանքից 5-ական հոգի) կազմված հանձնախումբ, որի խնդիրն էր ջոկել կաթողիկոսական չորս թեկնածու՝ համազգային ժողովին առաջադրելու համար:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 10-ին, տեղի ունեցավ համազգային ժողովի առաջին պաշտոնական նախապատրաստական նիստը՝ պատգամավորների լիազորություններն ստուգելու նպատակով:

Դեկտեմբերի 11-ի առավոտյան կայացավ 124 ձայնով 114 պատգամավորների հանդիսավոր երթը դեպի մայր տաճար՝ կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցի և Երևանի նահանգապետ կոմս Վ. Տիզենհաուզենի առաջնորդությամբ:

Դրանից հետո տաճարում երդում տվեցին 54 աշխարհական պատգամավորները:

Վերջապես, 1911 թ. դեկտեմբերի 11-ի օրվա երկրորդ կեսին բացվեց ազգային-եկեղեցական ժողովը:

Հենց սկզբից ընտրական պայքարը սուր կերպարանք ստացավ ժողովում: Պատգամավորները բաժանվեցին երկու մասի՝ օրմանյանականների (փոքրամասնություն) և հակաօրմանյանականների (մեծամասնություն):

Մեծամասնական պատգամավորների թվում առաջատար դեր էին խաղում երդվյալ հավատարմատար Սամսոն Հարությունյանը, ուսուցիչ Վրթանես Փափազյանը, Բարդուղիմեոս եպս. Զամիչյանը և ուրիշներ:

Փոքրամասնական պատգամավորների թվում էին ս. Էջ-

միածնի միաբանության անդամ Սուքիաս Պարզյանց, Անանիա և Հովհաննես Շիրակունի արքեպիսկոպոսները, Ղևոնդ եպս. Մարդուկեսյանը, Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը, Բեսարաբիայի, Բուրսայի, Բաբերդի, Բալուի, Տիգրանակերտի, Զնգուշի, Բագրևանդի, Վրաստանի և Իմերեթի, Արցախի, Բաղեշի, Շամախու, Սեբաստիայի, Լիմ և Կտուց անապատների վիճակների, Բաղդադի, Բայազետի, Դերջանի պատգամավորները: Փոքրամասնական աշխարհիկ պատգամավորներից իր սուր հարցադրումներով ու լուրջ ելույթներով հատկապես աչքի էր ընկնում Թիֆլիսի թեմի պատգամավոր Հովհաննես Սպենդիար[յան]ը:

Նիստի առաջին գործն եղավ կաթողիկոսական թեկնածուների քառանուն ցանկի կազմումը:

Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովի Քաղաքական ու Կրոնական ժողովները որոշել էին բոլոր միջոցներով հասնել քառանուն ցանկից Օրմանյանի թեկնածության բացառման: Այդ հնարավորությունը նրանք ունեին, որովհետև բուն Թուրքիայից եկել էր 20 աշխարհական և 16 եկեղեցական պատգամավոր, ընդամենը 36 հոգի, որոնց մեջ կային միայն մի քանի ինքնուրույն, անկախ պատգամավորներ՝ Օննիկ Զիֆթե-Սարաֆը, Վահան Թեքեյանը, Հայկ Անտոնյանը, Հ. Գարամանյանը, Տիգրան Գույումջյանը, Բարկեն եպս. Գյուլեսերյանը, Սմբատ եպս. Սաաղեթյանը, Հրանտ և Տիրայր վարդապետները, Ներսես քահանան:

Դաշնակցության, մասնավորապես «Ազատամարտ» և «Հորիզոն» թերթերի շրջանակների ընտրելիներն էին Եղիշե Դուրյան, Գևորգ Սուրենյանց, Մեսրոպ Տեր-Մովսիսյան և Խորեն Մուրադբեգյան սրբազանները: Սահմանադրական ռամկավարները և «Մշակը» հետևողականորեն պաշտպանում էին Օրմանյանի թեկնածությունը, որին ձայն էին տվել Ռուսաստանի 6 հայ թեմերից 4-ը, այն է՝ Արցախի, Շամախու, Վրաստան-Իմերեթի և Բեսարաբիայի թեմերը[1]:

Ստեղծվել էր տարօրինակ վիճակ. Թուրքահայ պատգամա-

---

[1] Տե՛ս **«Արօր»**, № 10-11, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1911 թ., էջ 112:

վորների մեծ մասը (նրանք, ովքեր Թուրքահայեր էին) Էջմիածնի գահին ուզում էին տեսնել ռուսահայ հոգևորականի, ռուսահայ պատգամավորները, այդ թվում նրանք, ովքեր ներկայացնում էին Թուրքահայ թեմերի մի մասը, գերազանցապես ցանկանում էին Ամենայն հայոց կաթողիկոսի պաշտոնում տեսնել Թուրքահայ հոգևորականի:

Կտրականապես մերժելով Օրմանյանին ընտրելու վերաբերյալ ռուսահայության մեծամասնության պահանջը՝ Թուրքահայ պատգամավորների գերակշիռ մասը դրանով իսկ զգալի հարված էր հասցնում հայության երկու հատվածների միջև հաստատված եղբայրական զգացմունքներին:

Անշեղորեն ղեկավարվելով Պոլսից տրվող հրահանգներով՝ Թուրքահայ պատգամավորների մեծ մասը խուսափում էր մասնակցել նախընտրական որևէ խորհրդակցության, որին ներկա պիտի լինեին նաև օրմանյանական ռուսահայ պատգամավորներ, չէր ուզում լսել անգամ վերջիններիս առաջարկությունները, դրանով իսկ մերժում էր հարգել ռուսահայ թեմերի կարծիքն այս կամ այն հարցի վերաբերյալ:

Մեծամասնական կազմից առանձնանալով՝ գերազանցապես բուն Թուրքահայեր և Թուրքահայ թեմերից ընտրված ռուսահայ վստահելի պատգամավորներ, ընդամենը 64 հոգի, հավաքվեցին խորհրդակցության, և Սամսոն Հարությունյանի նախագահությամբ գաղտնի քվեարկությամբ վճռեցին մերժել փոքրամասնության՝ քառանուն ցանկի մեջ Մաղաքիա արք. Օրմանյանին մտցնելու առաջարկությունը: Նրանք երկյուղում էին, որ եթե սրբազանի անունը հայտնվի քառանուն ցանկում, ապա հենց նա էլ կշահի ամենաշատ ձայները: Այդ երկյուղն իզուր չէր: Օրմանյանականները գտնում էին, որ իրենց ընտրելին կունենա 49 ձայն ռուսահայ պատգամավորներից: Մնացած 84 ձայները, ըստ նրանց, ընկնում էին Սուրենյանց, Դուրյան և Մեսրոպ սրբազաններին: Օրմանյանականները նաև ասում էին, որ Թուրքահայ պատգամավորներից 20-22 հոգի գաղտնի քվեարկության ժամանակ անպայման ձայն են տալու Մաղաքիա Օրմանյանին: Այնպես որ, նրանք համոզված էին թե վերջնական գաղտնի ընտրության ժամանակ Օրմանյանը հավաքելու է 60-

62 ձայն և դառնալու է առաջին ընտրելի[1]:

Հակաօրմանյանականներն, իրենց հերթին, հայտարարում էին, որ օրմանյանականների այդ հաշվարկները ցանկատեսության արդյունք են և որևէ հիմք չունեն:

Ելնելով իրենց հաշվարկներից՝ օրմանյանականները հակաօրմանյանականներին առաջարկեցին Օրմանյանի անունը մտցնել քառանուն ցանկի մեջ, բայց ուժգին դիմադրության հանդիպեցին:

Համոզվելով, որ Օրմանյանի անունը որևէ կերպ չի անցնելու քառանուն ցուցակի մեջ, փոքրամասնությունը բողոքեց ու սպառնաց հեռանալ խորհրդակցությունից:

Պատգամավորներից ոմանք, այդ թվում Ալեքսանդր Խատիսյանն ու Նիկողայոս Սաթունյանը, փորձեցին հարթել տարաձայնությունները և այդ նպատակով մեծամասնականներին հորդորեցին քառանուն ցանկի մեջ մտցնել նաև Օրմանյանի անունը, բայց Վրթանես Փափազյանի, Միհրդատ Հայկազնի և Երվանդ Տեր-Անդրեասյանի ջանքերով այդ հորդորն անհաջողության մատնվեց[2]: Քառանուն ցանկում մեծամասնականները մտցրին Գևորգ արք. Սուրենյանցի (86 ձայնով), Եղիշե արք. Դուրյանի (84 ձայնով), Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանի (78 ձայնով) և Ստեփանոս եպս. Հովակիմյանի (63 ձայնով) անունները[3]:

Ինչպես տեսնում ենք, կաթողիկոսական երկու ամենահավանական թեկնածուները՝ Մաղաքիա արք. Օրմանյանը և օրմանյանական Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը, չանցան քառանուն ցանկի մեջ:

Կարապետ եպիսկոպոսի թեկնածությունը հետևողականորեն պաշտպանում էին մամուլի պահպանողական օրգանները («Արօր», «Հովիտ» և այլն): «Հովիտը» գրում էր, որ «այժմ մեզ համար ամէնից աւելի ձեռնհաս, օգտակար կաթողիկոսական թեկնածուն Ատրպատականի ներկայ առաջնորդ Կարապետ եպիսկոպոսն է»[4]: Եվ թերթը թվարկում էր նրա արժանիքները՝

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 284, 27 դեկտեմբերի 1911 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 278, 17 դեկտեմբերի 1911 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 275, 14 դեկտեմբերի 1911 թ.:

[4] **«Հովիտ»**, № 15, 17 ապրիլի 1911 թ.:

ինքնուրույն մտածող է, տոգորված է եկեղեցու և ժողովրդի շահերով, խոհուն մտքի տեր լրջմիտ գիտնական է, աստվածաբան-պատմաբան, գրականագետ, փիլիսոփա, որի գրչի տակից դուրս են եկել բազմաթիվ արժեքավոր աշխատություններ, ունի վարչական լուրջ հմտություններ և փորձառություն, ազնիվ է, անկաշառ, ատում է փողապաշտներին, հազիվ է կարողանում հոգալ իր անհրաժեշտ պետքերը, կյանքի մեծ մասը ապրած ու գործած լինելով ռուսական պետության մեջ, տևականորեն եղել է նաև Թուրքահայաստանում և հանգամանորեն ծանոթացել այնտեղի կյանքին, իսկ 1907-ից Ատրպատականի թեմի առաջնորդը լինելով շրջագայել է այդ նահանգի բոլոր հայաբնակ վայրերում և քաջ գիտի նաև պարսկահայոց կյանքը, կարողացել է ապահովել Ատրպատականի հայության անվտանգությունը Պարսկաստանի 1907-1910 թթ. փոթորկոտ իրադարձությունների տարիներին, ռուսական մշակույթի ջատագով է, տիրապետում է ռուսաց լեզվին, խորապես ուսումնասիրել է պետական օրենքները: Հետևապես կաթողիկոսական թեկնածուներից որևէ մեկն այնպես չգիտե ամբողջական Հայաստանը, նրա ժողովրդին, ինչպես Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը[1]*:*

«Սուրհանդակ» թերթը տպագրել էր նամակը Կոստանդին Մելիք-Շահնազարյանցի, որը գրում էր. «... Մայր Աթոռի Հայրապետական Գահին միակ արժանաւոր ընտրելին բարձր պաշտօնեաների մէջ Ատրպատականի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսն է, որին ամենայն վստահութեամբ եւ առանց խղճի խայթի կարելի է քւէ տալ»[2]*: Նույն թերթի նույն համարում «Ռուբէն» ստորագրությամբ նամակի հեղինակը նշում էր, որ կաթողիկոսական թեկնածուն առնվազն մի քանի տարի պետք է թեմակալ առաջնորդ աշխատած լինի: «Ո՛չ, պարոննե՛ր,- գրում էր նա,- կաթողիկոսական հարցի մէջ լրջութիւն ցոյց տուէ՛ք. մի կողմ դրէ՛ք ձեր անձնական շահը եւ միայն ազգի օգուտը ի նկատի ունենալով՝ ձեր անկաշառ ձայնը տուէ՛ք ժամանակիս արժանաւոր, գիտնական-մանկավարժական ու վար-*

---

[1] *Տե՛ս* ***«Հովիտ»****, № 15, 17 ապրիլի 1911 թ.:*

[2] ***«Սուրհանդակ»****, № 392, 20 սեպտեմբերի 1911 թ.:*

չական ընդունակութիւններով օժտուած, երիտասարդ ու եռանդով լի Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեանին»[1]:

Շատերն էին կարծում, որ տվյալ պահին Օրմանյանից հետո կաթողիկոսի ամենաարժանավոր թեկնածուն կլիներ Ատրպատականի թեմի առաջնորդի պաշտոնում իրեն գերազանց դրսևորած Կարապետ սրբազանը:

1910 թ. նոյեմբերին Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը Ատրպատականի թեմի առաջնորդի պաշտոնից հրաժարվելու դիմում էր ներկայացրել Իզմիրլյան կաթողիկոսին՝ վերջինիս իրեն անձնական վիրավորանք հասցնելու համար[2]: Դիմումին ընթացք չէր տրվել, բայց Կարապետ եպիսկոպոսը շարունակել էր պնդել հրաժարականի վրա: Դա համընկել էր Իզմիրլյանի կյանքի վերջին շաբաթներին: Կաթողիկոսի վախճանումից հետո նրա հակառակորդները, այսինքն՝ Օրմանյանի կողմնակիցները, որպես կաթողիկոսական երկրորդ թեկնածու, առաջ քաշեցին Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանին: Ռուսական իշխանությունները գոհ լինելով Ատրպատականում եպիսկոպոսի կատարած աշխատանքից, պաշտպանում էին նրա՝ որպես էջմիածնի դահակալի երկրորդ թեկածուի, առաջադրումը: Եպիսկոպոսին պաշտպանում էր նաև ռուսական մամուլը: "Голос Москвы" թերթը գրում էր. «Օրմանյանի աշակերտ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանցը ստացել է բարձր կրթություն Բեռլինի և Լայպցիգի համալսարաններում**: Երկար ժամանակ նա եղել է էջմիածնի ճեմարանի ռեկտոր, իսկ այժմ Ատրպատականի թեմի առաջնորդն է: Ունի մի քանի լուրջ ուսումնասիրություններ գերմաներեն և հայերեն: Նա 46 տարեկան է»[3]:*

---

[1] ***«Սուրհանդակ»**, № 392, 20 սեպտեմբերի 1911 թ.:*

[2] *Տե՛ս **«Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան»**, գիրք ԺԶ, Կարապետ եպս. Տէր-Մկրտչեան (1866-1915), էջ 183-186:*

**Դա երևում է թեկուզ Ալեքսանդր Միլերի՝ 1910 թ. դեկտեմբերին Ատրպատականում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս նշանակվելուց շատ չանցած Կարապետ եպիսկոպոսին ուղարկած նամակից (Մատենադարան, Կարապետ Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 100, վավ. 63):*

*** Կարապետ Տեր-Մկրտչյանը սովորել է նաև Հալլեի համալսարանում:*

[3] *"Голос Москвы", № 14, 19 января 1911 г.*

Կարապետ եպիսկոպոսի առաջադրման կողմնակիցները հիմնականում մտավորական շրջաններից էին: Այսպես, 1910 թ. դեկտեմբերի 21-ին Մինաս Բերբերյանը Նովոռոսիյսկից Կարապետ եպիսկոպոսին տեղեկացնելով, որ ինքը Էջմիածնի ապագա գահակալի արժանավոր թեկնածու է համարում Օրմանյանին, այնուհետև շեշտում էր, որ նրանից հետո նույնքան արժանավորը ինքն է՝ Կարապետ Տեր-Մկրտչյանը: «Գիտեմ, որ Ձեզ երկուսիդ էլ պիտի աշխատեն տապալել,- գրում էր նա: Մի՛ լինէք նախ եւ մի՛ հաւատաք ո՛չ Տեղակալին*, ո՛չ «Հորիզոնի» տղերանց**: Նրանք կկախուեն, եթէ դուք կաթողիկոս լինէք: Դուք գնացէ՛ք Ձեր ճանապարհով: Ձեզ համար աշխատելու ենք մենք՝ Ձեր համակիրները: Մենք կառաջարկենք Օրմանեանին, թող նրանք առաջարկեն Դուրեանին, Սուրէնեանին եւ այլն: Կընտրենք միջին ճանապարհը, կոմպրոմիսը, եւ Ձեզ կաշխատենք երկրորդ թեկնածու անուանել: "Плохой солдат, который не надеется быть генералом"*** և Դուք իրաւունք ունիք եւ պարտաւոր էք իսկ ցանկալ, որ Դուք ընտրելիների թւում լինէք: Մի՛ վչտանաք, մի՛ տաքնաք, մի՛ խաբուէք, մնացեալը կանէ ժամանակը...»[1]:

Մաղաքիա արք. Օրմանյանն ու Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը քառանուն ցանկում չընդգրկելը բուռն դժգոհություններ առաջ բերեց: 32 ձայն ունեցող 28 հոգևոր և աշխարհական պատգամավորներ ստորագրեցին պատճառաբանված մի բողոքագիր: Ստորագրողների թվում էին 6 արքեպիսկոպոս ու եպիսկոպոս, այդ թվում սինոդի և Էջմիածնի միաբանության անդամներ, 9 վարդապետ ու ավագ քահանա, իսկ մնացածները աշխարհական պատգամավորներ էին՝ ընտրված Թիֆլիսի, Արցախի, Շամախու, Բեսարաբիայի թեմերից, որոնք արտահայտում էին ռուսահայ ժողովրդի ճնշող մեծամասնության և թուրքահայ թեմերի մի մասի տեսակետները:

---

* Նկատի ունի կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցին:

** Խոսքը դաշնակցականների մասին է:

*** «Վատ է այն զինվորը, որ հույս չի տածում գեներալ լինել»:

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1713, թթ. 1-2 և 2-ի շրջ.:

Վախենալով հոգևոր իշխանությունների հալածանքներից՝ փոքրամասնության թվից բողոքագիրը ստորագրելուց ձեռնպահ էին մնացել 10 հոգևոր անձինք, հիմնականում ռուսահայ եկեղեցականներ:

32 ձայն ունեցող պատգամավորները փոքրամասնական բողոքագրում արտահայտել էին իրենց անհողդողդ կարծիքը. 1) Կաթողիկոսական թեկնածուների ցանկից Մաղաքիա Օրմանյանի անունը հանելն անօրինական է և հակասում է ընտրությունների կանոնադրությանը, 2) Թուրքահայ պատգամավորների ընտրության գործում հոգևոր իշխանությունը լուրջ իրավախախտումներ է թույլ տվել:

Այս հիմնական և ուրիշ երկրորդական փաստերից ելնելով՝ բողոքագիրը ստորագրողներն այնուհետև գրում էին. «Յայտնելով բողոք վերոյիշեալ աղաղակող ապօրինութիւնների եւ մի շարք զեղծումների դէմ, որ թոյլ են տրուել Թուրքիայի պատգամաւորների ընտրութեան գործում որոշ ցուցակներով եւ ցուցմունքներով հայ հոգեւոր բարձր իշխանութեան ներկայացուցիչների կողմից թէ՛ Ռուսաստանում եւ թէ՛ Թուրքիայում, զեղծումների, որոնք ընտրութիւնների գործը դարձրել են նշանակութիւն չունեցող եւ ապօրինի, գտնում ենք, որ ներկայ ընտրութիւնները կատարւում են այնպիսի պայմաններում, որ ժխտում են ամէն օրինականութիւն եւ Հայաստանեայց եկեղեցու սրբագործուած նախնաւանդ սովորութիւնները, ուստի ստիպուած հրաժարւում ենք այդ ընտրութիւններին մասնակցելուց:

Մեր այս բողոքը խնդրում ենք բառ առ բառ մտցնել ընտրական ժողովի արձանագրութեան մէջ՝ նրան օրինական ընթացք տալու համար»[1]:

Համազգային ժողովի երկրորդ օրվա՝ դեկտեմբերի 11-ի աշխատանքների սկզբից Գևորգ արք. Սուրենյանցը բարձր կառավարական իշխանության ներկայացուցիչ կոմս Տիզենհաուզենի, սինոդի պրոկուրորի և ատենադպիրի ներկայությամբ պատգամավորների առջև հանդես եկավ ճառով, չեշտելով, թե բոլորը

---

[1] ***«Մշակ»,*** *№ 274, 13 դեկտեմբերի 1911 թ.:*

պարտավոր են իրենց ընտրությունը կատարել խղճի մտոք և ներքին համոզմամբ:

Այդ միջոցին խոսք խնդրեց միաբանության ավագագույն անդամ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցը՝ ասելով, որ եկեղեցական և աշխարհական պատգամավորներից 32 ձայնի իրավունքով 28 անձինք իր վրա պարտավորություն են դրել բողոքել կաթողիկոսական ներկա ընտրության գործում կատարված մի շարք օրինազանցությունների ու անկանոնությունների դեմ, որոնք անհնարին են դարձրել ընտրությունն ըստ մաքուր խղճի և ներքին համոզման՝ ինչպես թելադրում են օրենքը և պատգամավորների տված երդումը: Նա հայտարարեց, որ ժողովի կազմն ընտրված է անօրինական կերպով, ուստի չցանկանալով իրենց վրա վերցնել Հայ եկեղեցու գլխավոր պետի ընտրության պատասխանատվությունը, բողոքագիրը ստորագրած պատգամավորները հեռանում են ժողովից:

Սուքիաս արքեպիսկոպոսի այս հայտարարությունից հետո տաճարը թողեցին ու հեռացան բողոքը ստորագրած բոլոր 28 անձերը՝ 32 ձայնով, որոնք ներկայացնում էին Ռուսաստանի և Թուրքիայի ամբողջ հայ ազգաբնակչության չուրջ կեսը:

Ժողովականների քվեարկության արդյունքում երկրորդ փուլ անցնելու համար երկանուն ցանկում ընտրվել էին Սուրենյանցը՝ 57 ձայնով, և Դուրյանը՝ 56 ձայնով[1]:

Դեկտեմբերի 13-ին կաթողիկոսական երկու թեկնածուներին քվեարկության դնելուց առաջ կարդացվեց անցյալ նիստից հեռացածների հայտարարությունը:

Քառանուն ցանկի ընտրությանը մասնակցած 91 պատգամավորից վերջնական քվեարկությանը ձայնի իրավունքով մասնակցում էր 89 պատգամավոր (քառանուն ցանկում ընտրված Գևորգ արք. Սուրենյանցն ու Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանն «ըստ օրինի» զրկվում էին քվեարկությանը մասնակցելու իրավունքից)[2]:

Ընտրության արդյունքում առաջին ընտրելի Սուրենյանց

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 275, 14 դեկտեմբերի 1911 թ.:

[2] **«Բիւզանդիոն»**, № 4613, 14 (27) դեկտեմբերի 1911 թ.:

արքեպիսկոպոսն ստացավ 58 թեր, 30 դեմ և 1 ձեռնպահ, երկրորդ ընտրելի Դուրյան արքեպիսկոպոսը՝ 57 թեր և 32 դեմ ձայներ[1]:

Այդպիսով, Գևորգ Սուրենյանցը Եղիշե Դուրյանին հաղթեց ընդամենը մեկ ձայնի առավելությամբ:

Եթե նկատի ունենանք, որ համազգային ընտրողական ժողովը բաղկացած էր 114 պատգամավորից, որոնք ունեին 124 ձայնի իրավունք, իսկ Սուրենյանց արքեպիսկոպոսն ստացել էր միայն 58 ձայն, ապա նա հայությունը ներկայացնող 124 ձայնի նույնիսկ կեսը չէր ստացել: Իսկ եթե ընդունենք միայն ընտրությանը մասնակցած պատգամավորների 92 ձայնը, ապա այդ դեպքում էլ Սուրենյանցը չէր ստացել նույնիսկ երկու երրորդը:

Ինչպես ասվեց, բողոքած և հեռացածների թվում էին Ռուսաստանի 4 թեմերի՝ Վրաստան-Իմերեթի, Բեսարաբիայի, Արցախի և Շամախու պատգամավորները: Բացի այդ, անմիջականորեն ընտրությանը չէր մասնակցել նաև Աստրախանի թեմը, որովհետև այդ թեմի պատգամավոր Նիկողայոս Սաթունյանցը մինչ այդ սինոդի որոշմամբ հեռացվել էր իր պաշտոնից: Հետևապես Ռուսաստանի բոլոր 6 թեմերից 5-ը չէիր մասնակցել ընտրությանը*, մասնակցել էր միայն մեկ թեմ՝ Արարատյան հայրապետական (Երևանի) թեմը կամ Ռուսաստանի կայսրության հայության միայն 1/3 մասը:

Անթույլատրելի ճնշումների ներքո ընթացած էջմիածնի ժողովը վարկաբեկել էր ժողովրդի նվիրական ավանդույթներից մեկը՝ նրա ընտրական իրավունքի գաղափարը: Ընտրական իրավունքը վաղուց ի վեր եղել էր միակ մխիթարությունը ազգի թշվառ իրականության մեջ: Չնայած բոլոր արհավիրքներին, ժամանակի խռովքի մեջ նա կարողացել էր ժողովրդական

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 276, 15 դեկտեմբերի 1911 թ., **«Արօր»**, № 12, դեկտեմբեր, 1911, էջ 69, **«Բիւզանդիոն»**, № 4613, 14 (27) դեկտեմբերի 1911 թ.: Գ. Սուրենյանց և Ե. Դուրյան արքեպիսկոպոսների կենսագրականները տե՛ս **«Ղարաբաղ»**, № 11, 1911 թ.:

* Իսկ դա այն դեպքում, երբ Սուրենյանցը առաջնորդական պաշտոն էր վարել Աստրախանի, ապա՝ Վրաստան-Իմերեթի թեմերում:

ներկայացուցչության հետաքրքիր ու արժեքավոր ավանդույթը 20-րդ դար հասցնել: Հայերն ամենայն իրավունքով կարող են հպարտանալ, որ այսօր, երբ խոսք է լինում ժողովրդավարական արժեքների, մասնավորապես արդարացի ընտրություններ կատարելու մասին, քչերը գիտեն, որ ժողովրդավարական ընտրությունները խոր արմատներ և ամուր ավանդույթներ են ունեցել հայ իրականության մեջ՝ հանձինս Հայ եկեղեցում դարեր շարունակ կիրառված, ժողովրդի ներկայացուցիչների լայն մասնակցությամբ արդար ընտրությունների:

Կաթողիկոսական ընտրության ընթացքը միաժամանակ ցույց տվեց, թե ամբողջության մեջ որքան անկատար են Հայ եկեղեցում գոյություն ունեցող ընտրական կանոնները: Դրանք հնացած էին և ժամանակի պահանջներին չէին համապատասխանում: Ակնհայտ էր, որ այդ կանոններն առաջիկայում էլ պատգամավորներին հնարավորություն չեն տալու պաշտպանելու իրենց իրավունքները և ազատորեն արտահայտելու ժողովրդի՝ իրենց փոխանցած տրամադրությունները: Ուստի անհրաժեշտ էր նոր կանոններ որդեգրել:

Նախ կարիք կար ընտրական ցուցակը կազմելիս վերացնել բաց քվեարկությունը և մտցնել գաղտնի քվեարկության սկզբունքը: Իսկ եթե բաց քվեարկության սկզբունքը թողնվելու էր ընտրելիների ցուցակը կազմելիս, ապա այդ ցուցակը պետք է լիներ ոչ թե քառանուն, այլ՝ անորոշ, այսինքն՝ որքան կլինեին քվեարկվել ցանկացողները:

Անընդունելի էր նաև այն, որ էջմիածնական ընտրությունների ժամանակ թեկնածուները չէին քվեարկվում միանգամից, այլ՝ մեկը մյուսի հետևից: Փոխանակ չորս քվեատուփ դնելու և միանգամից քվեարկելու, քվեարկվում էր նախ մեկը, ապա՝ մյուսը, երրորդը, չորրորդը: Այսինքն՝ առաջին քվեատուփը բացելուց և քվեաթերթիկները հաշվելուց հետո միայն սկսվում էր հաջորդ թեկնածուի ընտրությունը: Նման կարգով քվեարկելն ազդում էր ընտրողների տրամադրության վրա. առաջին քվեատուփի արդյունքը փոխում էր ընտրողների հաշիվները, և նրանք ծրագրում էին թեկնածուների նոր դասավորություններ, հետևապես՝ նոր կողմնորոշումներ:

Կաթողիկոսական ընտրությունը բողոքի լայն ալիք առաջ բերեց ռուսահայության մեջ և հատկապես Շուշիում, Ախալցխայում ու Նախիջևանում: Առավել եռանդուն բողոքում էին Սուքիաս և Կարապետ սրբազանները, ուրիշ շատ հոգևորականներ, մամուլի հրապարակագիրներ Ալեքսանդր Քալանթարը, Համբարձում Առաքելյանը, Սամսոն Զերքեզյանը, իրավաբաններ Հովհաննես Սպենդիարյանը, Գևորգ Զուբարը և այլոք: Նրանք ստանում էին բազմաթիվ նամակներ, որոնց հեղինակները գրում էին, թե հաղթողը փոքրամասնություն կազմած պատգամավորներն են, որոնք չեն արատավորել իրենց կոչումը: Ռուսահայ գործիչների մեծ մասը սատարում էր Օրմանյանի կողմնակից պատգամավորներին, խոստանում էր ամուր կանգնել նրանց թիկունքում, պաշտպանել հակառակորդների հետագա հալածանքներից: Մամուլի էջերը լիքն էին Ամենայն հայոց կաթողիկոսական գահին Օրմանյանին չընտրելու ափսոսանքի խոսքերով: Ահա՛ այդ իրողությունը հաստատող օրինակներից մեկը:

Երբ համազգային ժողովը վերջանալուց հետո թուրքահայ պատգամավորների մի մասը Էջմիածնից Թիֆլիսի վրայով մեկնում էր Կ. Պոլիս, Թիֆլիսում նրանց գտնվելը համընկավ Կովկասի հայ բարեգործական ընկերության 30-ամյա հոբելյանի հանդեսին: Միջոցառման պաշտոնական փակումից առաջ ընթերցվեցին ստացված շնորհավորական հեռագրերը, որոնց թվում նաև Օրմանյանից ստացվածը: Երբ վերջացավ հեռագրի ընթերցումը, հետևեցին ամբողջ դահլիճի որոտընդոստ ծափերը և «Կեցցե՜ Օրմանյանը» բացականչությունները, որոնք հինգ րոպեից ավելի տևեցին: Ցույցն այնքան տպավորիչ էր, որ նույնիսկ թուրքահայ հակաօրմանյանական պատգամավորներից ոմանք, անակնկալի գալով, իրենք էլ ստիպված սկսեցին ծափահարել:

1911 թ. դեկտեմբերյան կաթողիկոսական ընտրությունը շատերը համարում էին «համազգային խայտառակություն»[1]: Դրանց հետևանքով անհամերաշխության և բաժանման վիհ փորվեց հայության տարբեր հատվածների միջև, որը լցնելու համար տարիների ջանքեր էին հարկավոր:

---

[1] Մատենադարան, Կարապետ Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 100, վավ. 118, թ. 1:

Դեռ 1911 թ. սեպտեմբերից Թիֆլիսում լուրեր էին պտըտվում, թե կառավարությունը մտադիր է «Դաշնակցության գործը» քննել ոչ թե Թիֆլիսի կամ Նովոչերկասկի դատաստանական պալատում, ուր կենտրոնացված էին «Գործի» հետ առնչվող բոլոր փաստաթղթերը, մեղադրյալների վերաբերյալ հսկայական նյութեր, այլ Պետերբուրգում, սենատի հատուկ ատյանում, որ կազմվում էր բարձրագույն հրամանով՝ բացառիկ կարևորություն ունեցող պետական հանցանքների գործերը քննելու համար:

Տարվա վերջին ամսում որոշակի հայտնի դարձավ, որ դատավարությունը մայրաքաղաքում սկսվելու է 1912 թ. հունվարի երկրորդ կեսին:

Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխական շարժումների դեմ ցարիզմի ձեռնարկած բազմազան միջոցառումների շարքում առանձնակի տեղ էին բռնել քաղաքական դատավարությունները: Վերհիշենք 19-րդ դարի հեղափոխական դեպքերի հետևանքով կազմակերպված դատավարությունները, որոնք սկսվելով դեկաբրիստների հաշվեհարդարից, շարունակվեցին մինչև դարավերջ: 70-ական թվականներին դրանք նարոդնիկների դատավարություններն են, որոնք հայտնի են «50-ի», «193-ի», «Կովալևսկու», «Զասուլիչի», «Օսինսկու» անուններով: Հաջորդ տասնամյակում տեղի են ունենում մի շարք ուրիշ դատավարություններ, որոնք պատմության մեջ մտան որպես «16-ի», «Ժելյաբովի», «Պերովսկայայի», «Կիբալչիչի», «Միխայլովի» դատավարություններ: Դրանց հաջորդեց 90-ականների դատավարությունների շարքը՝ «14-ի» (Ֆիգներ, Ռոգաչև և ուրիշներ), «17-ի» (Բոգդանովիչ, Գրաչևսկի և ուրիշներ), «21-ի» (Լոպատին և ուրիշներ):

Այդ դատավարությունների ընթացքը և կայացած դատավճիռները ցույց էին տալիս, որ բռնապետական Ռուսաստանում սկսվել է անկախ դատական համակարգի ստեղծման գործընթացը:

Հայկական հեղափոխական շարժման 30-ամյա պատմու-

թյան ընթացքում տեղի էին ունեցել երկու խմբական դատավարություններ: Առաջինը վերաբերում է 19-րդ դարի 80-ական թվականների սկզբին: 1880-1881 թթ. Կարինում ստեղծվել էր «Պաշտպան հայրենեաց» հեղափոխական գաղտնի կազմակերպությունը, որի գոյությունը թուրքական իշխանությունները բացահայտեցին 1882 թ.: Թուրքական դատարանի առաջ կանգնեց կազմակերպության անդամներից 56 հոգի, որոնցից 40-ը դատապարտվեց 5-15 տարվա ազատազրկման: Երկրորդ և ավելի խոշոր խմբային դատավարությունը կապված էր Սարգիս Կուկունյանի արշավախմբի հետ: 1890 թ. սեպտեմբերի 24-ին արշավախումբն անհաջող փորձ է անում անցնելու ռուս-թուրքական սահմանը և օգնության գնալու օսմանյան լծի տակ տառապող հայերին: Ձեռնարկը ձախողվում է հենց սահմանում. զինված խմբի անդամների մեծ մասը զինաթափվում է ու ձերբակալվում: Ավելի քան երկու և կես տարի բանտային ծանր պայմաններում տառապելուց հետո 1893 թ. ապրիլ-մայիսին Երևանի նահանգային դատարանը Կարսում կատարում է նրանց գործի քննությունը և արշավախմբի 27 մասնակիցների տարբեր ժամկետներով դատապարտում աքսորի և տաժանակրության:

Նշված երկու դատավարությունները հասարակական լայն արձագանք չունեցան: Զխոսելով Թուրքիայում արդարադատության լիակատար բացակայության մասին՝ նկատենք, որ ցարական կառավարությունը Կովկասը և Անդրկովկասը դիտում էր որպես գաղութային ծայրամաս՝ իր ոչ-քաղաքակիրթ բնիկ ժողովրդով, որին խորթ են օրենքն ու օրենսդրությունը: Հայ հեղափոխականը չէր դատվում, այլ պատիժ էր ստանում տեղնուտեղը՝ նետվելով բանտ, հրացանագարկ լինելով կամ կյանքը ավարտելով կախաղանի վրա:

20-րդ դարի սկզբին ռուսահայության կյանքի կարևոր առանձնահատկությունն այն էր, որ ցարական իշխանությունների՝ 19-րդ դարի 90-ական թվականներից որդեգրած հակահայկական քաղաքականությունը գործնական մարմնավորում ստացավ հայության դեմ բացահայտ պայքարի միջոցով: Ընդամենը մեկ տասնամյակում այդ պայքարը ներառեց երեք փուլ. 1) Կովկասի փոխարքա իշխան Գոլիցինի դրդումով՝ բռնապետության

հատուկ օրենքներով Հայ եկեղեցու կալվածքների գրավումը, 2) Անդրկովկասում Թուրք-հայկական ընդհարումների օրերին վարչակազմի, ոստիկանության և զորքի կողմից թուրքերի պաշտպանությունը և նրանց բացահայտ աջակցությունը, 3) Դաշնակցության աննախադեպ հետապնդումն ու հալածանքը:

Եվ ահա՛ հայկական հեղափոխության պատմության մեջ սկսվում էր առաջին խմբական ամենամեծ դատական գործը՝ ՀՅ դաշնակցության դատավարությունը:

Դաշնակցության դեմ սարքված հսկայական գործը թե՛ իշխանության ներկայացուցիչների գերակշիռ մասին և թե՛ ռուսական հասարակության որոշ խավերին առիթ տվեց կարծիք կազմելու, թե հայ ժողովուրդը տոգորված է հեղափոխական ու անջատողական ձգտումներով և որ նա իր ծոցում հակապետական գաղափարներ է սնուցում:

*Դաշնակցությանը դատի քաշելուն կտրականապես դեմ էր Կովկասի փոխարքա կոմս Իլարիոն Վորոնցով-Դաշկովը: Ներքին գործերի և արդարադատության նախարարներին հղած նամակներում նա թյուրիմացություն էր համարում այդ նախարարությունների չինովնիկների մոտ ստեղծված այն կարծիքը, թե Կովկասում ամենահեղափոխական տարրը հայ ժողովուրդն է**, *իսկ երկրամասի հեղափոխական ցնցումների գլխավոր մեղավորը՝ Դաշնակցությունը: Ելնելով դրանից՝ նա պահանջում էր դադարեցնել այդ կուսակցության անդամների, հասարակական գործիչների, ձեռնարկատերերի, փաստաբանների և ուրիշ մասնագիտության անձանց ձերբակալություններն ու բանտերում կատարվող կտտանքները:*

---

* *Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ փոխարքան, բնութագրելով հայ ժողովրդին, ասել էր, թե վերջինս սիրում է երեք բան՝ դպրոց, եկեղեցի և դրամ: Այսպիսի մի ժողովուրդ չի կարող հեղափոխական լինել, մանավանդ, որ երկրի աշխարհագրական դիրքը նպաստավոր չէ այդ տեսակետից: «Ինձ մեղադրում են, որ ես հայասէր եմ,- շարունակել էր փոխարքան,- որ ես կսիրեմ հայ ժողովուրդը, որպէս այդպիսին: Բայց ես հայերին գնահատում եմ որպէս ռուս ազդեցութեան տարածող լաւագոյն տարրի, եւ դրա մէջ է, որ պէտք է փնտրել հայերի ռուսասիրութեան աղբիւրը» (տե՛ս* ***«Հայրենիք»****, № 8 (116), Հունիս, 1932, էջ 126):*

Ալեքսանդր Խատիսյանը վկայում էր, որ փոխարքա Վորոնցով-Դաշկովը դատավարություն իրականացնելու դեմ բողոքել էր նաև ցարին, առարկելով, որ Դաշնակցությունը ռուսական շահերի դեմ չէ, որ պայքարելով Թուրքիայի դեմ՝ նա օգուտ է բերում Ռուսաստանին, և որ ռուս պաշտոնյաների դեմ կատարած ահաբեկումները մասնակի բնույթ ունեն[1]:

Բայց փոխարքայի նախազգուշացումները հաշվի չառնվեցին: Երբ մայրաքաղաքում վերջնական որոշում ընդունվեց կազմակերպել Դաշնակցության մեծ դատը, փոխարքան պաշտոնական գրություններով շարունակում էր կենտրոնին հորդորել հետ կանգնել այդ քայլից, որովհետև դա կարող էր ապակենտրոնացման նոր պատճառ դառնալ կովկասահայության մեջ:

Իսկ ինչո՞ւ ամենալայն լիազորություններով օժտված Վորոնցով-Դաշկովն ի վիճակի չեղավ առաջ տանելու սեփական կամքը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ խնդիրն անմիջականորեն վերաբերում էր իր բարձր պաշտոնին:

Ալ. Խատիսյանի վկայությամբ, «համայն Ռուսաստանի մէջ փոխարքան առաջինն էր, որ կվայելէր թագաւորի բացարձակ վստահութիւնը»[2]: Օրենսդրության 11-րդ հոդվածի համաձայն, փոխարքան կարող էր չկատարել կենտրոնական կառավարության որևէ որոշում, եթե դա չէր համապատասխանում կովկասյան իրողություններին, պայմանով, որ այդ մասին հայտներ ցարին, միաժամանակ տեղեկացներ նրան մերժման գլխավոր շարժառիթների մասին:

Այդ ամենի հետ միասին, սակայն, փոխարքայի իրավասության սահմաններից դուրս էին դատական իշխանությունները, որոնք, ըստ օրենքի, անկախ էին իրենց գործունեության մեջ: Նա չէր կարող խառնվել քննչի գործերին, փոխել դատարանի որոշումը և այլն: Նա կարող էր հանդես գալ միայն խնդրողի դերում[3]:

Դաշնակցության դեմ մեծ դատ կազմակերպելով՝ կառա-

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 8 (116), Հունիս, 1932, էջ 125-126:*

[2] *Նույն տեղում, էջ 125:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

վարությունը նպատակ ուներ հանրության աչքում վարկաբեկել նրան և իրավական հիմքեր ստեղծել կազմակերպությանը նոր հարվածներ հասցնելու համար:

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ. – Կովկասահայ մտավորականության մի զգալի մասը մոտ երեք տարի բանտում տանջվելուց հետո, վերջապես, կանգնեց դատարանի առջև:

1911 թ. դեկտեմբերի կեսերից սկսած՝ Ռուսական կայսրության տարբեր քաղաքների բանտերից վագոնները խումբ առ խումբ Պետերբուրգ էին բերում մեղադրյալներին, ըստ որում տանում էին նախազգուշական ամենախիստ միջոցների կիրառմամբ, իբրև հույժ վտանգավոր հանցագործների[1]: «Հորիզոնը» իր մի հաղորդման մեջ նկարագրում էր, թե Պետերբուրգում ինչպես էին դիմավորում նրանց: «Ամսոյս 13-ին,- նշում էր թերթը,- Կովկասից Պետերբուրգ բերուեցին առանձին կալանաւորական վագոնում «Դաշնակցութիւն» կուսակցութեան անդամները: Գնացքը գալու միջոցին կայարանում գտնուում էին նախնական կալանաւորման տան գլխաւորի օգնականը, Նիկոլաեւսկեան երկաթուղում ժանդարմական բաժանմունքի գլխաւորը, պահնորդական բաժանմունքի գլխաւորը, պահնորդական կամանդայի ուժեղացրած կազմը: Գնացքը գալուց յետոյ «Դաշնակցութիւն» կուսակցութեան անդամների վագոնը տարուեց մի այլ հրապարակ: Այստեղ եկան երկու բանտային աւտոմոբիլներ, եւ կալանաւորները վագոնից փոխադրուեցին աւտոմոբիլները: Զիաւոր ժանդարմների ուղեկցութեամբ աւտոմոբիլները գնացին նախնական կալանաւորման տուն»[2]:

Հովհաննես Թումանյանը նույնպես, երկրորդ անգամ ձերբակալվելուց և չորջ 40 օր Մետեխի բանտում մնալուց հետո, 1911 թ. դեկտեմբերի 19-ին մի խումբ կալանավորների հետ այնտեղից դուրս է բերվում և ուղարկվում Պետերբուրգ: Այդ օրվա գիշերը վերհիշում է Նվարդ Թումանյանը: Հայտնի էր դարձել, որ «Դաշնակցության գործով» մեղադրվող բանտարկյալներին

---

[1] *Տե՛ս "Русское Слово", 13 января 1912 г.,* ***«Ախուրեան»****, № 8, 2 փետրվարի 1912 թ.,* ***«Աշխատանք»*** *(Վան), № 21-68, 7 ապրիլի 1912 թ.:*

[2] ***«Հորիզոն»****, № 280, 18 դեկտեմբերի 1911 թ.:*

բանտից հանելով՝ տանելու են երկաթուղային կայարան և այն-տեղից ապրանքատար վագոնով ուղարկելու են Պետերբուրգ: «Մենք բոլորս,- գրել է նա,- մայրիկն ու երեխաները, ինչպես մյուս բանտարկյալների հարազատները, առավոտից մինչև երեկո Մետեխի բանտի մոտի փողոցներում ու նրբանցքներում անցկացրինք: Անհամբեր սպասում էինք բանտարկյալների դուրս բերելուն:

Օրը մթնում էր արդեն, երբ բանտի դռները ճռնչալով բացվեցին:

Մեզ վրա շատ ծանր ազդեց բանտարկյալների ոտքերի չղթաների զընգզընգոցը. գնում էին չարքերով՝ շրջապատված հրացանավոր ոստիկաններով: Հայրիկը և մի երկու հոգի առանց չղթաների էին: Ասում էին, որպես ազնվական ծագում ունեցողների, ազատել էին չղթաներից»[1]:

Թումանյանի տեսարանը դիտող հարազատներն ու ընկերները հետագա օրերին էլ հոգեկան տվայտանքների մեջ էին: Բայց ժամանակը կատարում էր իր գործը՝ օրերի թավալքի հետ նրանք ստիպված էին հաշտվելու եղելության հետ: «Հիշում եմ,- գրել է Նվարդը,- երբ հայրիկին Պետերբուրգ էին տարել դատավարության, մայրիկը կատակով ասում էր. «Է, ինքը հնարավորություն չունեցավ իր միջոցներով գնալու, գոնե էսպես աշխարհ կտեսնի»[2]: Իրոք, «Թումանեանը մինչ այդ ոտքը դուրս չէր դրել Կովկասից»[3], թեպետև շատ էր ցանկացել լինել հատկապես Պետերբուրգում:

Դրանից ընդամենը մի քանի ամիս առաջ, 1911 թ. ամռանը, ամուսնացել էին Հովհ. Թումանյանի դուստր Աշխենը և Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսյանի կրտսեր եղբայր, իրավաբան Գևորգ Խատիսյանը: Վերջինս ցանկություն հայտնեց լինելու իր աներոջ՝ Հովհ. Թումանյանի պաշտպանը: Խնդրանքը հարգվեց, և նա պաշտոնապես պաշտպան նշանակվեց: Դեկ-

---

[1] **Նվարդ Թումանյան**, Հուշեր և գրույցներ, էջ 94-95:

[2] Նույն տեղում, էջ 95:

[3] **Վարդգէս Ահարոնեան,** Յովհաննէս Թումանեան: Մարդը եւ բանաստեղծը, էջ 145:

տեմբերի 26-ին նորապսակները մեկնեցին Պետերբուրգ:

Բայց մինչ այդ, այնտեղ՝ Պետերբուրգում, լուրջ աշխատանք էր տարվում դատավարական գործի մեջ ներգրավելու առավել փորձված փաստաբանների: ՀՅ դաշնակցության ղեկավարությունը, զորահավաքի ենթարկելով բոլոր հնարավորությունները, ամեն ինչ անում էր դատապարտյալների պաշտպանությունն արդյունավետ կազմակերպելու համար: Կուսակցության ղեկավար մարմինների կոչերով տարբեր երկրների հայերը հանգանակություն էին կատարում և հավաքված գումարները տրամադրում տառապյալ իրենց եղբայրների պաշտպանությանը: Օրինակ՝ Թեհրանի հայերը խոշոր գումար (30 հազար դոլար) հայթայթեցին: Կարելի է ասել, որ այդտեղ հանգանակված գումարն իր չափով գիջում էր միայն ԱՄՆ-ում հանգանակվածին[1]: Միքայել Վարանդյանը գրում էր. «Բողոքի խուլ մրմունջը դուրս կը սողար բանտի պարիսպներէն, կը սլանար դէպի հայ աշխարհի բոլոր ծայրերը եւ ամենուրեք հայ ժողովուրդը կ'որդեգրէր բանտարկեալներու դատը, կը բերէր անոնց իր եղբայրական օգնութիւնը... Կու գար օգնութիւնը Պալքաններէն, ամերիկահայ գաղութէն, Պարսկաստանէն եւ Թուրքաց Հայաստանէն: Անգամ մը եւս կը ջնջուէին արհեստական սահմանները եւ կը չեչտուէր ազգային համերաշխութիւնը մէկ, ընդհանուր ու նուիրական դատի շուրջ... Երիտասարդ ու մտավորական ուժեր բանտի հաստ պատերուն ետեւէն լռիկ մեզ կը դիտեն... յուսալով թէ իրենց գաղափարակից ընկերներու զոհողութիւններու գնովն է, որ պիտի ազատին իրենք՝ կեանքի եւ մահու այդ ծանր տագնապէն... Եւ նրանց յոյսերը ի դերեւ չելան...»[2]:

Դատի էր կանչված 159 հոգի, այդ իսկ պատճառով Ռուսաստանի իրավունքի պատմության մեջ Դաշնակցության դատավարությունը հայտնի է նաև որպես «159-ի դատավարություն»: Ինչպես արդեն նշել ենք, ամբաստանյալների մեջ կային ամենատարբեր մասնագիտությունների մարդիկ: "Голос Москвы"

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 3 (335), մարտ, 1953, էջ 68:

[2] **Միքայէլ Վարանդեան**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 123:

(«Գոլոս Մոսկվի») լրագիրը հաղորդում էր, որ մեղադրվողներից բժիշկներ և փաստաբաններ են 10 հոգի, քաղաքացիական ինժեներ՝ 1, քահանա՝ 2, ազնվական՝ 12, վաճառական՝ 8, ուսանող՝ 6, մեչչան՝ 40, գյուղացի՝ 67 և թուրքահպատակներ ու պարսկահպատակներ՝ 13[1]:

Դաշնակցության մամուլը լայնորեն քարոզում էր այն միտքը, թե Ստոլիպինը հրահրել է հայության մեջ գործող ամենաուժեղ կուսակցության դեմ կազմակերպել մի մեծ դատաստանական գործ, որպեսզի սպիտակ տեռորը տարածի ամբողջ հայ ժողովրդի վրա: Դատապարտելով ու պատժելով Դաշնակցությանը, դրանով իսկ դատապարտվում ու պատժվում է ամբողջ հայությունը: Եվ որպես դրա գլխավոր ապացույց մատնանշվում էր ամբաստանյալների սոցիալական կազմը, այսինքն այն իրողությունը, որ նրանց թվում կան հայ ժողովրդի բոլոր խավերի ներկայացուցիչներ: Դրանով իսկ Դաշնակցությունը փորձում էր ողջ հայ ժողովրդին նույնացնել իր հետ:

Հայկական պահպանողական և ազատական մամուլի օրգանները կտրականապես հանդես էին գալիս ցարական կառավարության կազմակերպած դատը որպես ողջ հայության դեմ ուղղված բիրտ հալածանք ներկայացնելու փորձերի դեմ: Այդ տեսակետից անդիջում էր հատկապես պահպանողական «Արօրը» (Թիֆլիս): Թերթը գրում էր, թե իրեն նույնացնելով հայ ազգի հետ, «Դաշնակցութիւնը յանձին իր եւրոպական, ամերիկական եւ թիւրքական բիւրօների – ամեն կերպ աշխատում էր չահագործել իր օգտին այդ պրոցէսը, նիւթական նոր զոհողութիւններ կորզելով հայ ժողովրդից յանուն ռուս կառավարութիւնից հալածուած հայ ժողովրդի. եւ գտնուեցին եւս միամիտ հայկական գաղութներ, օրինակ Ամերիկայում, որոնք հաւատացին դաշնակցական դրամաշորթ քարոզիչներին եւ դատարկեցին իրանց գրպանները յօգուտ եւ ի փառս այդ քարոզիչների: Անշուշտ՝ թէ՛ եւրոպական եւ թէ՛ ռուսական հասարակական կարծիքները, հաւասարապէս անգիտակ եւ անտեղեակ հայկական

[1] Տե՛ս «Մշակ», № 15, 24 հունվարի 1912 թ.:

իրականութեան պայմաններին, այն դիրքին, որ ներկայումս գրաւում է Դաշնակցութիւնը հայ ժողովրդի աչքում, հալած իւղի տեղ կարող էին ընդունել թէ՛ դաշնակցականների ողբը եւ կոծը՝ հայութեան դէմ յարուցուած հալածանքի մասին եւ թէ՛ հայ ժողովրդի ամբողջովին յեղափոխական լինելը»[1]:

159 մեղադրյալներից սենատի հատուկ ատյանի դատին էին բերվել 149 հոգի, քանի որ 10 մեղադրյալներ՝ Ավետիս Ահարոնյանը, Ավետիք Իսահակյանը, ուսուցիչ Գարեգին Խաժակը, ճարտարապետ Հովհաննես Քաջազնունին, Ավետիք Մնացականյանը, Արամայիս Ազնավուրյանը, Գ. Գեորգյանը, Գ. Մուսյանը, Պ. Վահանյանը և Կ. Հովսեփյանը հետապնդումներից թաքնվել էին կամ կարողացել էին փախչել արտասահման, հետևապես չէին ներկայանալու դատարան[2]: Դրանց վերաբերյալ գործերը առանձնացվել և քննարկումից հանվել էին ժամանակավորապես, այսինքն՝ նրանք կդատվեին այն ժամանակ, երբ կբռնվեին կամ իրենք կգային ու կհանձնվեին արդարադատության ձեռքը: Երաշխավորությամբ և գրավով ազատ արձակված, բայց դատավարությունից խույս տված մի քանի անձինք կրկին էին ձերբակալվել: Ամբաստանյալների ցուցակում կային և այնպիսիք, որոնք չէին գտնվել, այսինքն՝ որոնք անհետացել էին դեռ նախնական քննություններն սկսելուց առաջ, ինչպես՝ բժ. Մ. Մուրադյանը, Սարիբեկ Հարությունյանը և այլոք[3]: Ավելորդ չէ նշել, որ ժամանակավորապես ազատության մեջ գտնված մեղադրյալների համար իբրև գրավական մուծվել էր 611000 ռուբլի, որից դատից խուսափած մեղադրյալների ժամանակավոր ազատման համար մուծած գումարը կազմում էր 281 հազար[4]: Գրավ դրված ընդհանուր գումարն անհամեմատ շատ ավելին էր, քան դատավարության կազմակերպման և անցկացման համար կառավարության կատարած ծախսերն էին[5]:

---

[1] Տե՛ս **«Արօր»**, № 2, փետրվար, 1912, էջ 87:

[2] Տե՛ս **«Հորիզոն»**, № 63, 23 մարտի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 32, 14 փետրվարի 1912 թ.:

[4] Տե՛ս **«Հորիզոն»**, № 39, 24 փետրվարի 1912 թ.:

[5] Տե՛ս "Русское Слово", 20 марта 1912 г., **«Հորիզոն»**, № 63, 23 մարտի 1912 թ., № 69, 5 ապրիլի 1912 թ.:

Ամբաստանյալների նստարանների վրա էին Դավիթ Զավրիյանը, Հովհաննես Թումանյանը, Ավետիք Սահակյանը, Համո Օհանջանյանը, Հովսեփ Արղությանը, Լևոն Աթաբեկյանը, Նիկողայոս Սաթունյանը, նախկին վարդապետ Կորյուն Սահակյանը, Համազասպ Սրվանձտյանցը, Լևոն Մուշեղյանը, Սերգեյ Եղիգարյանը և այլոք:

Դատվողներից մի քանիսը խոշոր կապիտալիստներ էին, ինչպես օրինակ՝ ռոստովցի վաճառական Խլեբնիկովը, Թիֆլիսի միլիոնատերերից Ալեքսանդր Մելիք-Ազարյանը, մեծահարուստներ Շահնազարովը, Շապոշնիկյանը և Գենջ-Օղլուևը[1]: Նրանց կողքին էր II պետական դումայի անդամ Ստեփան Տեր-Ավետիքյանը:

Ամբաստանյալների մեջ էին ահաբեկիչներ Դովլաթյանը, Բատունյանցը, Հոմելյանցը, Սայամովը[2]...

149 մեղադրյալներից 49-ը գրավականով ազատության մեջ էր, բայց նրանց արգելված էր հեռանալ մայրաքաղաքից և թույլ հսկողության տակ էին: Մնացած 100 հոգին, այդ թվում նաև Հովհ. Թումանյանը, դատավարության ամբողջ ժամանակաշրջանում պահպանվում էին նախնական կալանքի տակ:

Դատական ատյանի նախագահ էր նշանակվել ժամանակի խոշոր իրավաբաններից մեկը՝ խելացի ու բարեկիրթ սենատոր Ա. Ն. Կրավցովը: Ատյանի անդամներ էին սենատորներ, դատախազներ, այլ կարգի իրավաբաններ, նաև՝ պետական դեմքեր: Դրանք էին՝ սենատորներ Մարկևիչը, Գարինը, Բախտիարովը, Պետերբուրգի քաղաքագլուխ Զվայյանսկին, որն այդ օրերին վախճանվեց և նրան փոխարինեց նոր քաղաքագլուխ Ի. Գլազունովը: Իբրև դասային ներկայացուցիչներ սրանց լրացնում էին ազնվականների պարագլուխ Երոպկինը, Ռիգայի քաղաքագլուխ Արմշտեդը, Տուլայի նահանգապետը, Պետերբուրգի նահանգից մի տանուտեր[3]:

---

[1] Տե՛ս *"Русское Слово"*, 13 января 1912 г., **«Հորիզոն»**, № 12, 31 հունվարի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Հորիզոն»**, № 12, 31 հունվարի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 15, 24 հունվարի 1912 թ.:

Պետական մեղադրողներն էին սենատի ավագ դատախազի օգնական Սերգեևը և Նովոչերկասկի դատաստանական պալատի դատախազ Ակսակովը[1]:

Դատավարության մեջ ներգրավվել էր այն ժամանակվա Ռուսաստանում լայնորեն ճանաչված, Պետերբուրգի և Մոսկվայի ազատախոհ փաստաբանների մի մեծ ու փայլուն համաստեղություն՝ Ալեքսանդր Կերենսկի, Ալեքսանդր Զարուդնի, Օսկար Գրուզենբերգ, Սկարնյակով, Սոկոլով, Լավրենտև, Բերնշտամ, Սկարյատին, Բարը, Կազարինով, Վոլկենշտեյն, Ումանսկի, Պոլնով, Կուրաբչևսկի, Պերևերզև, Գոլդշտեյն, Յաբլոնսկի, Զիարով, Զերքեզով, Բրկով, Անդրոնիկով, Մարգուլիես, Խոմենտովսկի, Նիոդնիչանսկի, իշխան Սիդամանով-Էրիսթով, Անդրեևսկի, պետական դումայի անդամներ Վասիլ Ալեքսեևիչ Մակլակով և Նիկոլայ Վասիլևիչ Տեսլենկո[2]: Համբավավոր փաստաբաններից շատերը կամովին էին հանձն առել ամբաստանյալների պաշտպանությունը: Մեծ անուն ուներ հատկապես Գրուզենբերգը՝ որպես կարող ու անվախ փաստաբան: Շատերի հույսը նրա փրկարար պաշտպանության վրա էր:

Անվանի փաստաբաններին լրացնում էին երիտասարդ հայ փաստաբաններ՝ Թիֆլիսցի երդվյալ հավատարմատարներ՝ Գրիգորի Զալխուչյանի որդին, Բուդաղյանը, Գևորգ Խատիսյանը, Սմբատ Խաչատրյանը, Քալանթարյանը, Կարճիկյանը, որոնք աչքի ընկնող ուժեր չէին, բայց մեծ նվիրվածությամբ էին գործի անցել[3]: Նրանք դատավարությունից առաջ և ընթացքում ուսումնասիրում էին հարյուրավոր ամբաստանյալների թղթերը, դրանք կարգի բերում ու ներկայացնում ատյանին:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 11, 19 հունվարի 1912 թ., **«Հայրենիք»**, № 6 (352), հունիս, 1955, էջ 14:

[2] Տե՛ս "Народный Лист" (СПб), 13 января 1912 г., **«Հորիզոն»**, № 63, 29 մարտի 1912 թ.: Մամուլում (օրինակ՝ "Утро России" (СПб), 18 января 1912 г.), սխալ հիշատակում կա, թե փաստաբանների թվում եղել են նաև պետական դումայի անդամներ Պավել Նիկոլաևիչ Միլյուկովը, Մովսես Աճեմյանը և մոսկվացի հայտնի հայ փաստաբան Յակուլովը:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 19, 28 հունվարի 1912 թ., **«Հորիզոն»**, № 15, 24 հունվարի 1912 թ.:

Ինչպես տեսնում ենք, ի թիվս այլոց, փաստաբանների թվում էր նաև տաղանդավոր իրավաբան, հետագայում Ռուսաստանի ժամանակավոր կառավարության վարչապետ Ալեքսանդր Ֆեոդորովիչ Կերենսկին, որը դատավարության ընթացքում մեծ ջանքեր գործադրեց մեղադրյալներին արդարացնելու համար*:

Ընդհանուր առմամբ մեղադրյալների գործի պաշտպանությանը ներգրավվել էր 32 փաստաբան, իսկ իրենց օգնականներով հանդերձ նրանց թիվը հասնում էր չուրջ 60-ի[1]:

Փաստաբանները հանգամանորեն ուսումնասիրել էին բազմածավալ «Գործը» և պաշտպանության աշխատանքը բաժանել իրենց միջև: Նրանցից միայն մի քանիսն էին, որ ստանձնել էին մեկական մեղադրյալի պաշտպանությունը, ինչպես օրինակ, Լավրենտևը, Բրկովը, Կազարինովը, իշխան Սիդամանով-Էրիսթովը, Կուրաբչևսկին[2]: Օրինակ՝ առանձին փաստաբան ուներ միլիոնատեր Ալ. Մելիք-Ազարյանը, որն իր պաշտպան Կազարինովին վճարել էր 10000 ռուբլի: Համարյա նույնքան գումար էր իր փաստաբան Կուրաբչևսկուն վճարել մեծահարուստ Ֆ. Գենջ-Օղլուևը: Փաստաբանների մեծ մասը պաշտպանում էր մեկից

---

* Փակագծերում նշենք, որ դատավարության ժամանակ Ալեքսանդր Կերենսկու և մեղադրյալների միջև ստեղծված կապերը պահպանվեցին նաև դատից հետո: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կովկաս եկած Կերենսկին Թիֆլիսում հաճախ է այցելել Հովհ. Թումանյանին և Պետերբուրգի դատավարության ժամանակ իր հետ մտերմացած ուրիշ հայ գործիչների: 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո անցնելով արտասահման՝ Ալեքսանդր Կերենսկին տարագրության տարիներին բազմիցս դրական արտահայտություններ է արել հայ ժողովրդի, ՀՅ դաշնակցության մասին, կապեր է պահպանել հայ գործիչների հետ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո ԱՄՆ-ում բնակվող Կերենսկին մտադրվել էր այնտեղ հրատարակել "Крестьянская Россия" («Կրեստյանսկայա Ռոսսիա») անունով թերթ և այդ նպատակով օգնության խնդրանքով դիմել էր «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբեն Դարբինյանին: Վերջինս Բոստոնի դաշնակցականների շրջանում կազմակերպած դրամահավաքի ընթացքում գոյացած ոչ մեծ գումարը տրամադրել էր Կերենսկուն:

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 43, 29 փետրվարի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

ավելի մեղադրյալների: Օրինակ՝ Վոլկենշտեյնը պաշտպանում էր 3 հոգու (այդ թվում՝ Աբրահամ Գյուլխանդանյանին), Պերևերզևը՝ 5 (այդ թվում՝ Համո Օհանջանյանին), Բարրը՝ 8, Գրուզենբերգը՝ 11 (այդ թվում՝ Հովհաննես Թումանյանին), Կերենսկին՝ 14 հոգու, Սկարյատինը բոլորից շատ՝ 23 հոգու[1]: 10 և ավելի մեղադրյալների պաշտպանները նրանցից յուրաքանչյուրից ստանում էր 500-ական ռուբլի: Պաշտպանների վարձատրության ընդհանուր գումարը կազմել էր 70-80 հազար ռուբլի:

Երեք մեղադրյալներ՝ Ա. Տիգրանյանը, Կ. Ղազարյանը և Կ. Էլմասյանը հրաժարվեցին փաստաբանական ծառայությունից[2]:

«Դաշնակցության գործով» վկաները 1098 հոգի էին[3], որոնք բաժանված էին երկու կարգի. մի խմբում սենատի կողմից հրավիրվածներն էին (400 հոգի), մյուս խմբում՝ մեղադրյալների պահանջով Պետերբուրգ եկողները (300 հոգի): Մնացած 398 վկաներին նպատակահարմար չէին համարել Պետերբուրգ կանչել: Նախատեսված 700 վկաների փոխարեն մայրաքաղաք էր եկել 160 վկա[4], որոնց դատարանը բաժանեց 5 խմբի: Կովկասից եկած վկաների թվում էին Երևանի նահանգապետ կոմս Տիզենհաուզենը, Գանձակի նահանգապետ Կովալևը, Բաքվի քաղաքապետի օգնական Պոդգուրսկին, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանը, Նախիջևանի քաղաքագլուխ Բալաբանովը, բժ. Կ. Ստեփանյանը, Գարեգին վրդ. Հովսեփյանցը, Աշոտ եպս. Շախյանը, Մուշեղ վարդապետը, Ներսես վրդ. Մելիք-Թանգյանը, Սամսոն Հարությունյանը, երդվյալ-հավատարմատար Ալ. Ասրիբեկյանը և այլոք: Սրանց միացել էին գեն. Գավրիլովը, գեն. Սաքոնովը, պետական դումայի անդամ Պ. Ղուկասյանը և ուրիշներ: Վկաներին տրվել էր գնացքի 3-րդ կարգի տոմսակի գին և օրական 25 կոպեկ «ծախսի փող»: Այսպես, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանը Պետերբուրգ գնալ-գալու և դատա-

---

[1] Դատապաշտպանների և նրանց պաշտպանյալների ամբողջական ցուցակը տե՛ս **«Հորիզոն»**, № 63, 29 մարտի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Հորիզոն»**, № 43, 29 փետրվարի 1912 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 12, 20 հունվարի 1912 թ.:

[4] Տե՛ս **«Մշակ»**, № 19, 28 հունվարի 1912 թ.:

վարության օրերին այնտեղ մնալու համար ստացել էր 47 ռուբլի[1]:

Դատարանում ավագ թարգմանչի պաշտոնը հանձնարարվել էր ներքին գործոց նախարարության պաշտոնյա Զարիխովին, որն ուներ օգնական թարգմանիչներ[*]:

Դատավարության ընթացքի ամենօրյա հսկողությունն իրականացնելու էր Նովոչերկասկի դատաստանական պալատի նախկին դատախազ, իսկ այդ ժամանակ ներքին գործերի նախարարի տեղապահ և ոստիկանության պետ Ի. Ս. Զոլոտարևը[2]: Դատավարության ընթացքի մասին նա մշտապես զեկուցում էր ներքին գործերի նախարար Մակարովին, որը նոր էր այդ պաշտոնին նշանակվել:

Որոշվեց, որ դատական նիստերը տեղի են ունենալու ամեն օր՝ ժամը 12–15-ը և 18–19-ը ու լինելու են դռնփակ: Դա նշանակում էր, որ դատավարության ընթացքում անհնարին էր լինելու որևէ ստույգ բան իմանալ կամ ճիշտ լուսաբանություն կատարել մամուլի էջերում:

"Новое Время"-ի խմբագիր, մոլի հայատյաց Լեոնիդ Մենշիկովը թերթում գրում էր. «Ինձ հայտնի է, որ դատավարությունը ներկա դեպքում կատարվում է դռնփակ ոչ թե նրա համար, որ կառավարությունը կարիք է զգում ծածկել իրեն համար վարկաբեկիչ որևէ բան, այլ որպեսզի խուսափի հայկական (ինչպես նաև հրեական) ամբոխի միջամտությունից, որոնք կարող են գրավել դատարանում հասարակությանը հատկացված բոլոր տեղերը և փորձել աղմուկով, իրարանցումով ազդել դատավորների վրա: Վերջիններս, ի դիմաց քննիչ և մեղադրող իշխանու-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 19, 28 հունվարի 1912 թ.:

[*] Դատավարությունը կատարվում էր ռուսերեն, և անգրագետ թարգմանները հաճախ ավելի էին բարդացնում գործը, որի պատճառով ոչ միայն առաջ էին գալիս լեզվական բարդություններ, այլև հաճախ այլաբանվում էր գործի էությունն իսկ ու հերոսական գործը վերածվում էր ոճրագործության և, ընդհակառակը, պարզ ոճրագործությունը նկատվում էր որպես հերոսական արարք:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 9, 17 հունվարի 1912 թ.:

թյունների, հայերից անչուշտ, ստացել էին անհաշիվ սպառնալիքներ...»[1]:

«Գործի» հսկայական լինելը սենատին հարկադրել էր նախապատրաստական միջոցների մի ամբողջ շարք:

Որոշվել էր, որ դատավարությունը տեղի է ունենալու Պետերբուրգի նահանգային դատարանի շինության մեջ: Շենքի «Սպիտակ» կոչվող դահլիճը չէր կարող տեղավորել մեծ թվով մեղադրյալներին, փաստաբաններին, ատենակալներին և պաշտոնյաներին: Այդ իսկ պատճառով շենքը նախապես կարևոր փոփոխությունների ենթարկվեց և քաղաքական գործերի քննության համար պատշաճ տեսք ստացավ: Վերակառուցման հետևանքով ավելացան նստատեղերը, ընդարձակվեց նաև դահլիճի վերնամասում եղած 40 տեղանոց բաժինը, որը հատկացվելու էր ամբաստանյալների ամենամերձավոր հարազատներին՝ ծնողներին, կնոջը և զավակներին: Քանի որ «Սպիտակ դահլիճն» անմիջական հաղորդակցություն ուներ նախնական կալանավորման տան հետ և, բացի այդ, առանձին սանդուղք ուներ դեպի փողոց, ուստի գլխավոր միջանցքի մեջտեղում դրվեց արգելափակոց, և դահլիճն ամբողջովին մեկուսացվեց[2]: Առանձին տեղ էր հատկացված մամուլի ներկայացուցիչներին[3]: Քանի որ դատավարությունը լինելու էր դռնփակ, ապա շենքի դրսում և ներսում կարգվեցին ուժեղ պահակախմբեր[4]:

Այս բացառիկ միջոցները, ինչպես և դատավարությունը Կովկասից Պետերբուրգ փոխադրելը բացատրվում էր նաև այդ շրջանում ցարական միապետության սատրապների վրա ՀՅ դաշնակցության տարածած սարսափով:

«Դաշնակցության գործի» դատավարությունը սենատի հատուկ ատյանում սկսվեց 1912 թ. հունվարի 17-ին, երեքշաբթի օրը:

---

[1] *"Новое Время"*, 19 января 1912 г.

[2] Տե՛ս **«Հորիզոն»**, № 15, 24 հունվարի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Ախուրեան»**, № 1, 3 հունվարի 1912 թ.:

[4] Տե՛ս *"Русское Слово"*, 12 января 1912 г.

Դատական գործընթացն ամենքի համար պետք է պարզեր հետևյալ կարևոր հարցերը. 1) Արդյո՞ք Դաշնակցությունը ներկայացնում է ամբողջ հայ ժողովուրդը, թե՞ դա մի մասնավոր հեղափոխական կուսակցություն է, որպիսիք կան ուրիշ ազգերի մեջ, 2) Ի՞նչ է Դաշնակցությունը. արդյոք գաղափարական մարդկանց և գործիչների մի համախմբո՞ւմ է, թե՞ լոկ մի ահաբեկչական կազմակերպություն, մի հակաժողովրդական մարմին, որի դեմ ամեն ողջամիտ մարդ, ամեն օրինապահ քաղաքացի պետք է կռիվ մղի, 3) Ներկա դատը և հալածանքը հարուցված են հայ մտավորականությա՞ն, մի քաղաքական կազմակերպությա՞ն, թե՞ լոկ դրամաշորթների և առհասարակ քրեական ոճրագործների դեմ՝ նկատի առնելով նրանց կատարած քաղաքական և քրեական սպանությունները, բռնագրավումները (էքսպրոպրիացիա) և այլն, 4) Արդյոք այժմ նույնպես Դաշնակցությունը վայելո՞ւմ է հայ ժողովրդի համակրությունը, թե՞ այդ ժողովուրդն այլևս որևէ ընդհանուր բարոյական կապ չունի նրա հետ և դատապարտում է նրա գործունեությունը, 5) Ամբաստանվածներն իրո՞ք հանդիսանում են Դաշնակցության անդամներ, մասնակի՞ց են նրա գործողություններին, թե՞ անարդար կերպով, սխալմամբ ամբաստանված են:

Այս գլխավոր հարցերի լուսաբանությունը էական նշանակություն պիտի ունենար հենց հայ ժողովրդի, ինչպես նաև պատմության համար, նկատի ունենալով, որ «Գործի» քննությունը տևել էր 3–4 տարի և որ ահագին նյութեր էին հավաքվել ու կուտակվել:

Դահլիճի վերին մասում նստած էր դատաստանական ատյանը՝ նախագահ սենատոր Ա. Ն. Կրավցովի գլխավորությամբ[1]: Աջ կողմում փորձագետներն էին, ձախում՝ բոլոր մեղադրյալները: Նրանց առջև տեղավորված էին դատապաշտպանները, իսկ դիմացը՝ մեղադրողները[2]:

Դատական ատյանի հենց առաջին նիստում փաստաբաններից մեկն անսպասելի առաջարկ արեց: Նա ասաց՝ քանի որ

---

[1] Տե՛ս **«Արօր»**, № 2, փետրվար, 1912, էջ 86:

[2] Տե՛ս **«Հորիզոն»**, № 15, 24 հունվարի 1912 թ.:

չորս և կես տարվա ընթացքում հարցաքննված չուրջ հազար վկաներից Պետերբուրգ է եկել ընդամենը մի փոքր մասը, ուստի նպատակահարմար է դատավարությունը տեղափոխել Թիֆլիս: Խորհրդակցելուց հետո ատյանի անդամները որոշեցին մերժել այդ առաջարկը[1]:

Անդրադառնալով այդ հանգամանքին "Русское Слово" թերթը նշում էր. այն, որ Դաշնակցության գործը քննվում էր ոչ թե Թիֆլիսում կամ Նովոչերկասկում, այլ մայրաքաղաքում, սենատի հատուկ ատյանում, նշանակում է, որ դա արվում էր բարձրագույն հրամանով և վկայում է դատական գործընթացի բացառիկ կարևորության մասին[2]:

Դատական ատյանի առաջին նիստում մի ուրիշ խնդիր ևս ծագեց: Դատապաշտպանները բողոքեցին, որ սենատոր Կրավցովը դատարանում նախագահելու իրավունք չունի, քանի որ նրա թոռը՝ ներքին գործերի նախարարի օգնական Ի. Ս. Զոլոտարևը, եղել է Նովոչերկասկի դատական պալատի նախագահ, որի հսկողության տակ է կատարվել «Դաշնակցության գործով» ձերբակալվածների հարցաքննությունը, բացի այդ՝ նա մասնակից է եղել «Գործի» մեղադրական ակտը կազմելուն, մի բան, որ կարող է նախագահին չեղել անկողմնակալ ընթացքից[3]:

Դատական նիստերը դեռ նոր էին սկսվել, երբ ոստիկանությունը փաստաբաններին ահաբեկելու փորձ արեց: Սրանք հունվարի 18-ին պետք է խորհրդակցության հավաքվեին դատարանի շենքի իրենց հատկացված տարածքում: Բայց կառույցի պահակապետը նրանց արգելեց մտնել մուտքից ներս: Մայրաքաղաքի թերթերը գրում էին, որ նա իր ստորադրյալներին ցուցադրաբար հրամայել էր ջարդել նրանց «դունչն ու պռունգը»: Փաստաբանները միահամուռ բողոք էին ներկայացրել ներքին գործերի նախարար Մակարովին: Դրանից հետո այլևս նման արտակարգ դեպք տեղի չունեցավ փաստաբանների հետ, որոնք այլևս գործում էին անկաշկանդ ու վստահ[4]:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 14, 22 հունվարի 1912 թ.:

[2] Տե՛ս **"Русское Слово"**, 12 января 1912 г.

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] **«Ախուրեան»**, № 5, 20 հունվարի 1912 թ.:

Ինչևէ, ինչպես գրում էր "Биржевые Ведомости" երեկոյան թերթը, սկսվեց մի վիթխարի դատական գործընթաց, որի նմանը Ռուսաստանը վաղուց չէր տեսել[1]:

Ամենքին հայտնի էր, որ Ռուսաստանում եթե կար իշխանության միջամտությունից փոքր ի չատե ազատ մի հիմնարկություն, դա Ֆեմիդայի տաճարն էր՝ արդարադատությունը: Այդ հիմնարկությունը, լավ թե վատ, Ռուսաստանում դրված էր ամուր հիմքերի վրա: Ռուսական արդարադատության գլխավոր արժանիքը նրա՝ բյուրոկրատական-կառավարչական ազդեցություններից հիմնականում ազատ լինելն էր:

Դատաստանական ատյանի առաջ դիզված էին Դաշնակցության մի շարք տարիների գործունեությանը վերաբերող հաղորդագրություններ, վկայաթղթեր, ցուցմունքներ, գրագրություններ: Հայերենից ռուսերեն էին թարգմանվել բազմաթիվ հոդվածներ Դաշնակցության մամուլի օրգաններից (հատկապես «Դրօշակից»), թռուցիկներ, նյութեր կուսակցության ռազմավարության, նրա ծրագրային նպատակների, Կովկասում, Թուրքահայաստանում և Պարսկաստանում նրա կազմակերպական ցանցի, զինական պատրաստությունների, կատարած ահաբեկումների մասին և այլն[2]: Նրա տրամադրության տակ էին նաև «Դաշնակցության գործի» նախաքննության տպագիր նյութերը, որոնք ամփոփված էին յոթ մեծադիր հատորներից բաղկացած "Дело об Армянской революционной партии Дашнакцутюн" ընդհանուր վերնագրով ժողովածուի մեջ: Ավելի քան 5000 տպագիր էջից բաղկացած այդ ժողովածուի տպագրությունը իրականացվել էր հարցաքննություններին զուգընթաց: Դա ներառել էր քննիչների կազմած 134 հատորները*: Ժողովածուն տպա-

---

[1] Թերթի հոդվածի թարգմանությունը տե՛ս **«Մշակ»**, № 12, 20 հունվարի 1912 թ.:

[2] Տե՛ս **Անդրէ Ամուրեան**, Հայ Դատ: Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, Թեհրան, 1977, էջ 75:

* Նկատենք, որ "Дело об Армянской революционной партии Дашнакцутюн" փաստաթղթերի և նախաքննության արձանագրությունների ժողովածուի մեջ տեղ են գտել նյութեր նաև նշանավոր դաշնակցական գործիչների մասին, որոնք ձերբակալվել էին ոչ խնդրո առարկա գործով կամ գտնվում էին ազատության մեջ: Օրինակ՝ Նժդեհի մասին տե՛ս հ. XXIII, էջ 553-555 (հ. VI, էջ 214-216):

գրվել էր Նովոչերկասկում, հատուկ տպարանում, որովհետև արդարադատության նախարարությունը «Գործի» վերաբերյալ ձեռագիր նյութերը չէր վստահել մասնավոր տպարաններին[1]:

Բոլոր ամբաստանյալներին մեղադրանք էր առաջադրված քրեական օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասով և պատժական օրենսգրքի 1453-րդ հոդվածով[2]: Կուսակցությունը մեղադրվում էր նաև քաղաքական սպանություններ իրականացնելու համար: Դատական գործում մանրամասն բերված էին Քութայիսի նահանգապետ գեներալ Ալիխանով-Ավարսկու, Բաքվի նահանգապետ Նակաշիձեի, Բաքվի ոստիկանապետի օգնական Ժղենտիի, Գանձակի փոխնահանգապետ Անդրեևի և ուրիշների ահաբեկման հանգամանքները[3]:

Իրերի այդպիսի վիճակում ամենքն անհամբեր սպասում էին, թե սենատի առանձին ատյանը, որին հանձնված էր գործի քննությունը և դատումը, իր հեղինակավոր դատավճռով ի՞նչ լուսաբանություն կտա այդ խնդրին, և դրանով մինչև ո՞ր աստիճան կարդարանան կամ կհերքվեն տիրող կարծիքները:

ՀՅ դաշնակցության դեմ հարուցած հիմնական մեղադրանքները հետևյալներն էին. կազմակերպությունը՝ 1) Իր առջև նպատակ է դրել՝ ապստամբության միջոցով տապալել ռուսաց օրինական կառավարությունը, կործանել Ռուսաստանում գոյություն ունեցող հասարակարգը և դա փոխարինել դաշնային դեմոկրատական հանրապետությամբ, որի կազմում Կովկասը պիտի մտներ իբրև ինքնավար դաշնակից պետություն[4], 2) Նշված նպատակի համար ձեռք է բերել մեծաքանակ զենք ու զինամթերք, Թիֆլիսում և կայսրության ուրիշ քաղաքներում ստեղծել է պահեստներ, որոնցում կուտակել է հրազենի, սառը զենքի, վառոդի մեծ պաշարներ, 3) Իր տրամադրության տակ ունի զինված ուժեր, այդ թվում՝ հատուկ ջոկատներ, որոնց անդամ-

---

[1] Տե՛ս "Русское Слово", 13 января 1912 г., **«Մշակ»,** № 10, 18 հունվարի 1912 թ., **«Ախուրեան»**, № 8, 2 փետրվարի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 11, 19 հունվարի, № 15, 24 հունվարի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Հորիզոն»,** № 11, 19 հունվարի 1912 թ.:

[4] Տե՛ս **«Ախուրեան»,** № 8, 2 փետրվարի 1912 թ.:

ների միջոցով իրականացվում են ինչպես կառավարական ներկայացուցիչների, այնպես էլ դավաճան համարված սովորական քաղաքացիների սպանություններ, 4) Ստեղծել է զինված մարմին, որը տեղացի հայ բնակիչներից հանցավոր նպատակներով հարկեր է գանձել փողի տեսքով և մահվան սպառնալիքով ավելի խոշոր գումարներ կորզել հարուստներից, իսկ հրաժարվելու դեպքում՝ սպանել նրանց, 5) Կուսակցությունն ինքնագլուխ իրեն է վերապահել դատական իշխանությունը, արձակել է հակաօրինական վճիռներ, 6) Հիմնել է բազմաթիվ տպարաններ, որոնցում տպագրվել են զինված ապստամբության կոչող հակակառավարական թերթեր ու ամսագրեր[1]:

Պաշտպան փաստաբանները որոշել էին, որ մեղադրյալներից միայն մի քանիսը պետք է խոստովանեին իրենց դաշնակցական լինելը, իսկ մյուսները պետք է հրաժարվեին: Ամբաստանյալներն այդպես էլ վարվեցին:

«Գործի» նախնական քննության արդյունքների մասին զեկուցեց սենատոր Բախտիարովը. մոտ 600 էջ կազմող[2] մեղադրական ակտի ընթերցումը երեք օր տևեց[3]:

Հունվարի 21-ին ավարտվեց ամբաստանագրերի ընթերցումը, որից հետո սենատի մասնավոր ատյանը սկսեց քննել նյութական ապացույցները:

Նույն օրվա նիստում երդվեցին Պետերբուրգ եկած բոլոր վկաները[4]:

Դատական քննությունը կատարվում էր ամբաստանագրի բաժանումների համեմատ և, այդպիսով, այդ մեծ դատը վերածվում էր մի քանի համեմատաբար փոքր գործերի: Ամբաստանյալների հարցաքննությունը կատարվում էր խմբովին:

Դատավարության չներկայացած վկաների ցուցմունքները

---

[1] ՀԱԱ, ֆ. 32/95, ց. 1, գ. 1, թ. 435, տե՛ս նաև "Дело об Армянской революционной партии Дашнакцутюн", т. CXXXIV (т. VI, с. 3), նաև՝ **«Ասպարէզ»**, № 199, 31 մայիսի 1912 թ.:

[2] Տե՛ս "Русское Слово", 13 января 1912 г., **«Ախուրեան»**, № 8, 2 փետրվարի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 14, 22 հունվարի 1912 թ.:

[4] Տե՛ս "Русское Слово", 22 января 1912 г.

և նրանց վկայակոչած վավերագրերը ներկայացվում էին ոչ թե իսկական բնագրերով, այլ պատճեններով, որի դեմ փաստաբանները բողոք էին ներկայացրել:

Մեղադրյալները նախապես բաժանվել էին 32 խմբի՝ յուրաքանչյուրում միջինը 10–15 հոգի[1], բայց կային մի քանի խմբեր, որոնցում հաշվվում էին 30 և ավելի անձեր: Բացառություն էին առաջին և երկրորդ խմբերը: Առաջին խմբում ընդամենը երկու մեղադրյալ էր, որոնցից մեկը դատվում էր սույն գրքի նախորդ էջերում հիշատակված հայտնի հայդուկապետ Միհրան Քեչիչյանին սպանած լինելու համար: Խմբերի բաժանումը կատարվել էր ոչ թե ըստ մեղադրանքի ծանր կամ թեթև լինելուն, այլ ըստ տեղագրական շրջանների: Հարցաքննությունները դատարանում կատարվում էին խումբ առ խումբ: Ամեն մի խմբի կցված էին որոշակի թվով վկաներ, որոնց ատյանը հարցաքննում էր, երբ լսվում էր տվյալ խմբի գործը: Բոլոր ամբաստանյալները դատվում էին միևնույն կարգով: Նույն կարգով հարցափորձերի էին ենթարկվում վկաները: Ինչպես մեղադրյալները, այնպես էլ վկաները հարցաքննվում էին ըստ խմբերի, այնպես որ, այն վկաները, որոնք եկել էին ավելի շուտ, քան քննվելու էր այն խմբի գործը, որի մեջ մտնող որևէ մեկի համար էին իրենք եկել, ստիպված էին չարաթներով սպասել իրենց հերթին: Նկատենք, որ թե՛ փաստաբանները և թե՛ ամբաստանյալներն իրավունք ունեին հարցեր տալ նաև այն վկաներին, որոնք չէին պատկանում իրենց խմբին կամ կանչված չէին իրենց կողմից:

Դատավարության ողջ ընթացքում իշխանությունները բացառիկ խստությամբ էին կիրառում ապահովության միջոցները: Օրինակ՝ դատարանի շենքին կից բանտում կալանքի տակ գտնվող բանտարկյալները (100 հոգի) դահլիճ էին բերվում երկու շենքերը միացնող գետնահարկի անցուղիով՝ խիստ հսկողության տակ: Ժանդարմները բոլոր մեղադրյալներին ամեն օր բերում էին դատարան, եթե նույնիսկ նրանցից շատերի գործերն արդեն քննված էին: Սրանք իրենց հագուստով էին՝ չքեղ սյուր-

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 32, 14 փետրվարի 1912 թ.:

տուկից մինչև կարկատաններով ծածկված գյուղական մաշված չուխաներ: Բացառություն էին կազմում մի քանիսը, որոնք երկրորդ անգամ էին դատվում, ինչպես նախկին վարդապետ Կորյունը, որին դատարան էին բերում բռնավորի հագուստով[1]:

Բռնավորներին դատարանի դահլիճ բերելն այսպես էր նկարագրում ականատեսը. «Վերջապես ներքևում դուռը բացվեց և ներս մտավ մի ժանդարմ՝ մերկ սուրը բարձր բռնած, նրա ետևից մի մեղադրյալ, հետո նորից մի ժանդարմ՝ մերկ սրով, նորից մեղադրյալ և այսպես՝ որքան մեղադրյալ, այնքան էլ սուրը ձեռքին ժանդարմ: Բոլոր մեղադրյալներն իրենց չորերով էին, առանց գլխարկի...»[2]:

Ընդհանուր մթնոլորտը, ինչպես ամեն մի մեծ գործընթացում, լարված էր: Քանի որ նիստերը դռնփակ էին, ուստի որոշված կարգի համաձայն, դահլիճ կարող էին մուտք գործել մեղադրյալի միայն կինը, զավակները և ծնողները: Այնպես որ դատարանի դահլիճում ներկա էին միայն դատվողների հարազատները, թվով 30-35 հոգի, որոնց տեղ էր հատկացված դահլիճի վերնահարկում (վերին օթյակում):

Ինչպես ասվեց, Հովհ. Թումանյանը մեղադրյալների այն խմբում էր, որին պաշտպան էր նշանակված Օսկար Գրուզենբերգը: 32 դատապաշտպաններից ամեն օր դատական նիստերին ներկա էին լինում 20-25-ը: Ինչպես երևում է դատական ատյանի արձանագրություններից, Թումանյանի դատապաշտպանը ներկա է եղել համարյա բոլոր նիստերին:

Վերը նշվեց, որ Թումանյանը մեղադրվել էր հակապետական գործունեության համար, որն, իբր, արտահայտվել էր այն բանով, որ նա 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Ղազախի թաթարներին կոչ է արել միանալ հայերին և համատեղ ուժերով տապալել ռուսական տիրապետությունը: «Դաշնակցության գործի» 134-րդ հատորից իմանում ենք, որ Թումանյանի հարցաքննության և նրա ցուցմունքների հիման վրա կազմված արձանագրությունը զետեղված է եղել

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 43, 29 փետրվարի 1912 թ.:

[2] **«ԹԺՀ»**, էջ 637:

սենատի ատյան ներկայացրած դատական գործի 21-րդ հատորում (Лд. 7455):

Դատարանի պահանջով Պետերբուրգ էին եկել Թումանյանի համարյա բոլոր վկաները: Դրանք էին՝ Լոռու նախկին գավառապետ Ռյազանովը, Բորչալուի գավառապետ Զոլոտարյովը, Ղազախից՝ Վեքիլովը, Լոռուց՝ Շահբաղ Շահվերդյանը: Հիմնականում Թումանյանի օգտին վկայություն տալու համար Թիֆլիսից եկել էր քաղաքագլուխ Ա. Խատիսյանը:

Դատի ժամանակ Թումանյանն իրեն պահում էր բարձր արժանապատվությամբ: Դատական համարյա բոլոր նիստերին ներկա էին բանաստեղծի երեց դուստրը՝ Աշխենը և որդիներից Մուշեղը, որն այդ ժամանակ սովորում էր Պետերբուրգի համալսարանի բնագիտական ֆակուլտետի 2-րդ կուրսում: Նրանք դահլիճի վերին օթյակում տեղ էին զբաղեցրել և հետևում էին դատավարության ընթացքին: Աշխենն այսպես էր հորը տեսել դատարան բերելիս. «Անհամբեր սպասում էինք մեղադրյալներին. հայրիկը՝ ներս մտավ ձախ ձեռքը գրպանում, իսկույն նայեց վերև, մեզ գլխով արավ, ժպտաց: Մենք պատասխանեցինք: Արտաքուստ հայրիկի տեսքը վատ չէր, իրեն հանգիստ էր պահում և չէր ջղայնանում»[1]:

Հովհ. Թումանյանի գործի բոլոր վկաները, բացի Շահվերդյանից, դատարանում հրաժարվեցին նախաքննության ժամանակ իրենց տված կեղծ ցուցմունքներից, ասելով, որ իրենք այդ ցուցմունքները տվել են ստիպողաբար, քննիչների հարկադրանքի և սպառնալիքների տակ:

Դատարանում չեշտվեց, որ հայ-թաթարական ընդհարումների ժամանակ երկու կողմերը խաղաղեցնելու նպատակով բանաստեղծը Լոռի էր գնացել Թիֆլիսի նահանգապետի պաշտոնական հանձնարարությամբ: Վկաները նշեցին, որ Թումանյանը Ղազախում չրջում էր խաղաղասիրական նպատակներով, իր վարմունքով մեծապես նպաստում ազգամիջյան հաշտության գործին, և որ նա հակապետական որևէ ելույթ չի ունեցել: Ազ-

[1] «ԹԺՀ», էջ 637:

գամիջյան ընդհարումների ժամանակ Թումանյանի գործունեությունը Լոռի-Ղազախում բարձր գնահատեցին նաև Ռյազանովն ու Զոլոտարյովը: Դատարանում փայլուն ճառ արտասանեց Ալ. Խատիսյանը՝ Թումանյանին ներկայացնելով իբրև մեծ մարդասերի և մեծ քաղաքացու:

Ոմանց վկայությամբ՝ հիացմունք էին առաջացնում բանտարկյալների արի կեցվածքը, նրանց համարձակ պատասխանները[*]*: Վկաների թվում էր նշանավոր հոգևոր գործիչ Ներսես վրդ. Մելիք-Թանգյանը: Իր հուշերում Համո Օհանջանյանը հետևյալն է գրել. «Երկրորդ անգամ նրան հանդիպեցի Պետերբուրգի բարձրագույն դատարանում, երբ կատարում էր Լիժինեան գործի դատավարությունը – ես՝ դատապարտեալների աթոռի վրա, նա՝ վկաների մեջ: Բազմաթիւ էին վկաները, բարձրաստիճան հոգեւորականներ, եպիսկոպոսներ, բայց ամենից շատ հետաքրքրութիւն եւ կարեւորութիւն ունեցան Ներսէս վրդ. Մելիք Թանգեանի – այն ատեն Տաթեւի պատմական վանքի վանահայր*[**] *– ցուցմունքները տրուած մաքուր ռուսերէն լեզուով: Այնքան ջախջախիչ էին ռուսական* **ռէակցիայի** *համար նրա*

---

[*] *Տրամագծորեն հակառակ կարծիք էին հայտնել մամուլի մի շարք պահպանողական օրգաններ (տե՛ս օրինակ՝* ***«Արօր»,*** *№ 2, փետրվար, 1912, էջ 87): «Արօրի» կարծիքին լիովին համամիտ լինելով, Լեոն (Առաքել Բաբախանյան) գրել է թե ամբաստանյալներից «ոչ ոք, բացի մի երկուսից, քաջութիւն չունեցաւ խոստովանելու, թե ինքն, այո՛, Դաշնակցութիւնն է պատկանում: Եվ այս խայտառակ իրողությունը մեծ չփոթություն էր պատճառել Պետերբուրգի այն փաստաբաններին, որոնք հանձն էին առել լինել Դաշնակցության գործում իբրև պաշտպաններ» (* ***Լեո,*** *Անցյալից, էջ 234-235): Նույնը հաստատում էր նաև պահպանողական «Արօրը». «Ամբողջ դատի ընթացքում չգտնուեց մինը, որ քաջութիւն ունենար ելնել ու համարձակ յայտարարել, թէ, այո՛, ինքը պատկանում է Դաշնակցութիւն կոչուած կուսակցութեան, թէ որո՞նք են այդ կուսակցութեան սկզբունքները, հաւատամքը, թէ ինքը գործել է համոզմունքով, հաւատով, որ գաղափարական գործ է կատարում եւ այլն, մի խօսքով՝ ոչ մինը ցոյց չտուեց այն վեհ պատկերը, որ մենք սովոր ենք նկատել օտարազգի յեղափոխական գործիչների մէջ» (* ***«Արօր»,*** *№ 5-6, մայիս-հունիս, 1912, էջ 167):*

[**] *Ներսես վրդ. Մելիք-Թանգյանը Տաթևի վանքի վանահայր է եղել 1901-1905 թթ.:*

ցուցմունքները, որ նախագահողը սարսափահար ընդհատեց նրա հարցաքննությունը»[1]: Դատարանում գտնվողների վրա մեծ տպավորություն էին թողել հատկապես Համո Օհանջանյանի, Սարգիս Մանասյանի և Շարաֆյանի խիզախ ելույթները: Վերջին երկուսը հայտարարել էին, թե իրենք եղել են, կան և կմնան հեղափոխական գործի մարտիկներ, որ առաջին իսկ պատեհությամբ իրենց բովանդակ ուժերով նորից պայքարի մեջ կմտնեն հայ ժողովրդի թշնամիների դեմ: Մանավանդ տպավորիչ ու անմոռանալի էին Համո Օհանջանյանի խոսքերը: Նա ոչ միայն չժխտեց իր մասին եղած մեղադրանքը որպես Դաշնակցության բարձր մարմնի անդամ, այլև մեղադրանք ներկայացրեց ռուսական բյուրոկրատական կառավարությանը, որ չի ուզում հասկանալ հայ մարդու թափած ճիգն ու ջանքը՝ թեթևացնելու համար թուրքական լծի տակ գտնվող իր հայ եղբայրների կրած անարդար ու անմարդկային տառապանքը: Դա գլխավոր պատճառներից մեկն է, ասում էր նա, որ այդ կառավարությունը սարքել է Դաշնակցության տմարդի դատը՝ հարյուրավոր ընտանիքների դժբախտացնելով[2]:

Բարձրակարգ փաստաբանների գերլարված աշխատանքը, նրանց փայլուն ճառերն ուղղված էին ոչ թե Դաշնակցության մերկապարանոց պաշտպանությանը, այլ ճշմարտության բացահայտմանը՝ հիմք ընդունելով փաստացի տվյալները: Կերենսկու, Գրուզենբերգի, Զարուդնիի, Անդրեևսկու և մյուսների փաստաբանական ճառերում ընդգծվում էր, որ դատարանում մեղադրվող կուսակցության տարբեր ժամանակաշրջանների գործունեությանը պետք է տալ համարժեք գնահատականներ, այլ ո՛չ թե միանշանակ, հախուռն որակումներով հնարավորություն չտալ պարզելու ճշմարտությունը:

Դատարանում փաստաբանների ճառերի գլխավոր նպատակն էր. ցույց տալ, որ 1) Դաշնակցությունն իր բնույթով ու

---

[1] ***«Ցուշամատեան Տէր Ներսէս արքեպիսկոպոս Մելիք-Թանգեանի ծննդեան 102 եւ մահուան 20-ամեակի առթիւ»**, Թեհրան, 1968, էջ 290:*

[2] *Տե՛ս **«Հայրենիք»**, № 9, սեպտեմբեր, 1966, էջ 45:*

գործողություններով հակառուսական կազմակերպություն չի եղել և չէ, 2) Անարդար է Դաշնակցության դեմ հարուցված մեղադրանքները տարածել ողջ հայության վրա, քանի որ այդ կազմակերպությունն արդեն մի քանի տարի է, որ հայ ժողովրդի վստահությանը չի արժանանում:

Ելնելով դրանից, նշանավոր մեղադրյալների պաշտպանությունն ստանձնած փաստաբանները ստիպված էին նաև պաշտպանել Դաշնակցությանը, որպեսզի դատարանում իրենց գործունեության համար բարենպաստ մթնոլորտ ստեղծվի:

Մեկնաբանելով Դաշնակցության անցած ուղին, փաստաբանները չեշտում էին, որ այդ կազմակերպությունն իր գոյության և զարգացման մեջ անցել է երեք շրջափուլերով:

***Առաջին շրջանում** Դաշնակցությունը կազմակերպվեց իբրև քաղաքական մի ուժ՝ ուղղված ոչ թե ռուսական իշխանությունների դեմ, այլ Աբդուլ Համիդի գաղանային ռեժիմի ներքո հեծող թուրքահայության ազատագրությանը և իր ողջ ջանքերն ուղղեց այդ նպատակին: Այդ շրջանում ոչ միայն հայ մտավորականությունը, հայկական մամուլը, այլև կարելի է ասել՝ ամբողջ ռուսահայ ժողովուրդը, անգամ ռուսական մամուլի օրգանների մի զգալի մասը համակրում էր Դաշնակցությանը և բարոյական աջակցություն ցույց տալիս նրան, քանի որ նրա գործունեության մեջ Ռուսաստանի իշխանությունների դեմ ուղղված որևէ արարք չէր նկատվում: Այդ պատճառով ռուսաց կառավարությունը հաշտ աչքով էր նայում Դաշնակցությանը: Եվ հայ ժողովրդի մեծ համակրության պայմաններում, նրա նյութական ու հատկապես բարոյական աջակցությամբ, կուսակցությունը դարձավ թուրքահայերի ազատագրական պայքարի հիմնական ղեկավար ուժը:*

*Ամբաստանվող կուսակցության կենսագրության **երկրորդ շրջանի** սկիզբը փաստաբանները համարում էին Անդրկովկասում հայ-թուրքական (թաթարական) ընդհարումները, երբ հայությունը համոզվել էր, որ ռուսական իշխանության տեղական մարմինները կտրուկ միջոցներ չեն ձեռնարկում արյունահեղությունը դադարեցնելու և հայերի վրա զինավառ թուրքերի գրոհներին վերջ տալու համար: Այս պայմաններում Կովկասի հայ*

ժողովուրդն ստիպված էր միայնակ պաշտպանելու ինքն իրեն: Եվ քանի որ այդ ժամանակ հայության մեջ ամենակազմակերպված և մարտունակ ուժը, ժողովրդի մեծ համակրանքը վայելող կազմակերպությունը Դաշնակցությունն էր, ուստի ժողովրդի խնդրանքով էլ նա կանգնեց ինքնապաշտպանական գործի գլուխ՝ ստանալով հայ մարդկանց բարոյական և նյութական լայն աջակցությունը: Կուսակցության գոյության այդ փուլում նրա գործողություններում հակապետական, հակաօրինական քայլեր չէին նկատվում:

Փաստաբանները հատկապես մեծ ջանքեր էին գործադրում, երբ անդրադառնում էին Դաշնակցության գործունեության **երրորդ շրջանին**: Նրանք չեշտում էին, որ Կովկասում հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, կուսակցության ղեկավարության կամքին հակառակ, նրա մեջ մտան հասարակության տականքներ, մեծ թվով խուլիգանական տարրեր: Եվ երբ վերջացան այդ ընդհարումներն ու կյանքը մտավ նորմալ հունի մեջ, տականքներն ու խուլիգանական տարրերը անգործ մնացին՝ միաժամանակ հրաժարվելով իրենց զենքերը հանձնել կուսակցությանը: Սփռվելով գյուղերում, գավառներում, խուլ անկյուններում, նրանք սկսեցին կեղեքել ազգակիցներին, կատարել դրամաշորթություններ ու կողոպուտներ՝ այդ ամենը ներկայացնելով իբր «հանուն Դաշնակցության»: Մի խոսքով՝ քրեական տարրերն այժմ իրենց զենքերը դարձրին հայ ժողովրդի դեմ՝ հարստահարելով նրան: Ցավոք, ասում էին դատապաշտպանները, տեսնելով այդ ամենը, Դաշնակցության ղեկավարությունն ի վիճակի չեղավ լիովին զսպելու հասարակության այդ տականքներին, ինչի հետևանքով հայ ժողովուրդը դառնացավ ու երես դարձրեց այն կուսակցությունից, որին ոչ չատ առաջ օրհնում ու պաշտում էր:

Փաստաբաններն իրենց ելույթներում ընդգծում էին, որ իր չարքերը թափանցած քրեական տարրերի դեմ կռիվ մղելով, Դաշնակցությունն այդ նույն ժամանակ ստիպված էր դիմակայել «մի ուրիշ արհավիրքի»: Կուսակցության մեջ առաջացել էր «Անջատական» անունով խումբը, որը փորձում էր առաջ բերել տեսաբանական հեղաշրջում կազմակերպության չարքե-

րում: Այդ խումբը կուսակցության համար մշակեց նոր ծրագիր՝ նրան առաջարկելով ազգային-հեղափոխական ճանապարհից թեքվել դեպի սոցիալիստական ուղի և ձուլվել դասակարգային պայքար քարոզող ծայրահեղական հոսանքների մեջ:

Բայց «անջատականները», ամբողջությամբ առած, հաջողություն չունեցան. հայ մտավորականությունը, ավելի լայն առումով՝ նաև հայ հասարակությունը հանդես եկան կուսակցության մեջ գնալով թափ առնող սոցիալիստական այդ ծայրահեղ ուղղության դեմ: Մտավորականության մեծ մասը գտնում էր, որ փոքր ու ճնշված ազգությունների մեջ (որպիսին նաև հայ ազգն է՝ ցիրուցան եղած ի սփյուռս աշխարհի), ծայրահեղ գաղափարախոսություններն ու հոսանքները և դրանց կիրառումը չեն կարող որևէ օգուտ բերել: Հաշվի չառնելով այդ հանգամանքը, Դաշնակցությունն իր Չորրորդ ընդհանուր ժողովում (1907 թ.), այնուամենայնիվ, ընդունեց նոր ծրագիր, որով հարեց ռուսական սոցիալիստ-հեղափոխական (էս-էռ) կուսակցությանը և պաշտոնապես ընդօրինակեց նրա ծրագրային մի շարք պահանջները՝ ահաբեկչական գործողությունների ձեռնարկում, «հակազգային» դրամատերերի սեփականազրկում և այլն: Ինչպես որ սպասելի էր, կուսակցության քաղաքականության նոր ուղղությունը, նրա որդեգրած նոր ծրագիրը մերժվեց հայ ժողովրդի կողմից, որը, ինչպես հաճախ չեշտում էին փաստաբանները, բնականից խաղաղասեր է, միշտ հակված նպաստելու հասարակական առաջընթացին, հետևապես՝ վճռականապես դեմ է ամեն տեսակի քանդիչ ու ավերիչ գործողությունների:

Այլևս աջակցություն չստանալով հայ ժողովրդից, ասում էին փաստաբանները, Դաշնակցությունն արդեն կորցրել է իր հեղինակությունը և իր նոսրացած շարքերի լրացման համար ընդունել է ամեն տեսակի գաղափարազուրկ տարրերի, կասկածելի բարոյականության տեր անձանց:

Դատարանին հանգեցնելով այս եզրակացությանը, փաստաբանները նրան համոզում էին, որ Դաշնակցություն - հայ ժողովուրդ կապը վերջնականապես խզված է և Դաշնակցության մեղքերը ողջ հայ ժողովրդին բարդելու Լրժինի ու նրա խմբի գործադրած ջանքերն անընդունելի են:

Ինչպես տեսնում ենք, փաստաբաններն ամեն ինչ անում էին ապացուցելու, որ մինչև 1907 թ. Դաշնակցության պայքարն ուղղված է եղել բացառապես Թուրքիայի դեմ, և թեև այդ թվականից սկսած թեքվել էր ծայրահեղ սոցիալիստական հոսանքների կողմը, բայց դարձյալ ռուսական պետության համար որևէ վտանգ չի ներկայացնում, քանի որ այլևս բոլորովին ուժասպառ է:

Դատարանից փաստաբանների պահանջն այն էր, որ ամբաստանյալների նկատմամբ ցուցաբերվի մարդասիրական վերաբերմունք, որպեսզի նրանք բոլորը հայտարարվեն անպարտ ու ազատ արձակվեն կամ պատիժ կրեն միայն ինչ-որ հանցանքներ կատարած մեղադրյալները:

Սպասելի էր, որ դատախազի՝ ամբաստանյալների դեմ ուղղված մեղադրական ճառում լինելու են նաև քննադատական նոտաներ՝ ուղղված փաստաբաններին՝ Դաշնակցությանը պաշտպանության տակ վերցնելու համար: Այդպես էլ եղավ:

«Մշակ», «Հորիզոն» և հայկական այլ թերթերի խմբագրություններ Պետերբուրգ էին ուղարկել իրենց թղթակիցներին, որոնք պարբերաբար հաղորդումներ էին անում դատավարության ընթացքի մասին: «Մշակի» հրատարակիչներից Համբարձում Առաքելյանը հունվարի 28-ին իբրև վկա Ալ. Խատիսյանի հետ մեկնած լինելով մայրաքաղաք, այնտեղից իր թերթին տեղեկություններ էր հաղորդում դատավարության մասին այն չափով, ինչ չափով թույլատրելի էր, որովհետև գործի քննությունը դռնփակ էր: Արդարադատության նախարարը հնարավոր չէր համարել Ռուսաստանի և արտասահմանի թերթերի թղթակիցներին թույլ տալ ներկա լինելու դատավարությանը[1], այսինքն՝ օրենքով թույլատրված չէր խոսել և գրել դատավարության գործընթացի մասին ըստ էության: Չնայած դրան, դատավարության ամբողջ ընթացքում սենատի հատուկ ատյանի շենքի առջև և հարակից փողոցներում խմբվում էին բազմություններ, որոնք հետևում և չահագրգիռ հետաքրքրությամբ քննարկում

---

[1] *Տե՛ս **«Մշակ»**, № 9, 17 հունվարի 1912 թ.:*

էին դատարանի դահլիճում տեղի ունեցող անցուդարձերը: Նմանատիպ քննարկումներ էին տեղի ունենում նաև մայրաքաղաքի հայոց եկեղեցու բակում՝ մանավանդ կիրակի օրերին[1]: Այս տարերային հասարակական քննարկումները, որոնց նյութը դատի ընթացքի մասին լսած տեղեկություններն էին, լրագրողների համար հանդիսանում էին լուրեր հավաքելու հիմնական աղբյուրը: Այդ հնարքով էր իր թղթակցությունները կազմում Համբարձում Առաքելյանը, որոնք «Մշակում» լույս էին տեսնում «Նամակներ Պետերբուրգից» ընդհանուր խորագրի տակ: Մյուս թերթերի թղթակիցները նույնպես տեղեկությունները քաղում էին նույն երկու աղբյուրից և հաղորդում իրենց պարբերականներին: Եվ երբ "Баку" թերթը մեղադրական ակտից չգիտես ինչ կերպ ձեռք բերած առանձին հատվածներ տպագրեց՝ խիստ պատասխանատվության ենթարկվեց[2]:

Մամուլի հայկական օրգաններին ահաբեկելու և զսպելու նպատակով իշխանությունները որոշեցին մի «նախազգուշական պատժիչ միջոցառում» անցկացնել: 1912 թ. հունվարի 29-ի լույս 30-ի գիշերը ոստիկանությունը Թիֆլիսում կատարեց լայնածավալ խուզարկություն. ձերբակալվեցին մի քանի հայտնի մտավորականներ՝ հնչակյան նշանավոր գործիչ Ռուբեն Խանազատյանը (Խանազատ), «Սուրհանդակ» թերթի խմբագիր Ասատուր Երեցյանը, լրագրող Հարություն Գասպարյանը, դեռ տարիներ առաջ փակված «Մուրճ» ամսագրի խմբագիր, հանրաճանաչ մտավորական Ավետիք Արասխանյանը և ուրիշներ: Բայց, չատ չանցած, Թիֆլիսի նահանգապետի կարգադրությամբ բոլորն էլ ազատ արձակվեցին:

Դաշնակցության համեստ խավերի ներկայացուցիչներից ամենահանդուգն պատասխաններ տվել էր կարսեցի արհեստավոր Համբարձում Ղարիբյանը[3]:

Դատավարությունն սկզբում առանձնապես չէր շարժում հասարակայնության հետաքրքրությունը: Բայց գնալով վիճակը

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 9, սեպտեմբեր, 1966, էջ 46:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 32, 14 փետրվարի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Հայրենիք»**, № 6 (210), ապրիլ, 1940, էջ 130:

փոխվեց, և դատավարությունը մեծ հետաքրքրություն առաջ բերեց ամենուր: «Երբեք,- գրում էր Միք. Վարանդյանը,- անգամ ռուս յեղափոխական շարժումներու ալեծուփ տարեգրութեանց մէջ, չէր տեսնուած այդքան ժխոր ու դղրդոց ազատական դատի մը շուրջ»[1]: «Քաղաքական մեծ գործերից հետո,- գրում էր "Кавказ" թերթը,- դատարանի նկատմամբ չի եղել այսպիսի կենդանի հետաքրքրութիւն»[2]:

Ինչպես նշեցինք, դատին մեծ ուշադրությամբ հետևում էր ողջ հայ ժողովուրդը:

Պետերբուրգը բազմաթիվ բողոքի ու խնդրանքի դիմումներ էր ստանում թուրքահայերից ու գաղութահայերից[3]: Դատավարությունն սկսվելուց անմիջապես հետո Թուրքիայի հայոց պատրիարք Հովհաննես արք. Արշարունին այցի է գնում Կ. Պոլսում ռուսաց դեսպան Ն. Վ. Զարիկովին և նրան խնդրում իր կառավարության առջև միջնորդել բանտարկյալների նկատմամբ մարդասիրական վերաբերմունք ցուցաբերելու համար[4]:

Կ. Պոլսի Ազգային ժողովի 1912 թ. հունվարի 20-ին կայացած նիստը ողջունեց պատրիարքի քայլը: «Հորիզոն» թերթում լույս տեսած հաղորդումից իմանում ենք, որ ժողովում կարդացվել է Գրիգոր Զոհրապի մի գրությունը, որով նա դրվատում էր

---

[1] ***Միքայէլ Վարանդեան,*** *Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 127:*

[2] ***«Հորիզոն»****, № 12, 20 փետրվարի 1912 թ.: Արխիվային որոշ նյութեր և հայկական առանձին պարբերականներ հակառակն էին վկայում, թե Դաշնակցության դատավարության նկատմամբ ռուս և արտասահմանյան հասարակությունը առանձին հետաքրքրություն հանդես չէին բերում: «Դաշնակցութեան դատը» վերնագրով հոդվածում Կ. Պոլսի «Ռահվիրա» թերթը մեջ բերել էր Պետերբուրգից ստացած հետևյալ հաղորդումը. «Մայրաքաղաքի մամուլն անտարբեր է դէպի այդ դատը, եթէ հաշուի չառնենք այն մէկ քանի պատահական յօդուածները, որոնց հեղինակները կ'երեւայ թէ բոլորովին անծանօթ են շարժման ու աղաւաղուած տեղեկութիւններ կու տան: Մամուլին անտարբերութիւնը կարելի է բացատրել գլխաւորապէս անով որ ներկայ գործը ռուսական հասարակական կեանքին համար հետաքրքրութիւն չի ներկայացներ» (****«Ռահվիրա»****, № 4, 9 (22) փետրվարի 1912 թ.):*

[3] *ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 39, թ. 1:*

[4] ***«Մշակ»****, № 43, 29 փետրվարի 1912 թ.:*

կովկասահայ բանտարկյալներին ազատ արձակելու համար ռուս դեսպանի մոտ պատրիարքի բարեխոսությունը և առաջարկում ընդունել հետևյալ բանաձևը.

«Թուրքիոյ Հայոց Երեսփոխանական Ժողովը ընդհանուր հայութեան զգացմանց թարգման ըլլալուն ապահով է.

ա) Կ'ակնկալէ, որ ռուսական կառավարութիւնը ոչ միայն լայն արդարութիւն մը ապահովէ, այլ ի հարկէ իր վեհանձնութիւնն ալ չզլանայ կովկասահայ ամբաստանեալներուն, ինչ որ ապաքէն վայելուչն է 20-րդ դարու բարձր քաղաքակրթութեան:

բ) Շնորհակալութիւն կը յայտնէ Ս. Պատրիարքին՝ իր կատարած ամենապատեհ դիմումին համար եւ Ռուսիոյ վսեմ դեսպան պ. Զարիքոֆին՝ թէ՛ ինքնաբերաբար զայն կանխած ըլլալուն եւ թէ՛ այդ դիմումին վրայ իր ջանքերը կրկնապատկած ըլլալուն համար»[1]:

Գ. Զոհրապի առաջարկած բանաձևը Ազգային ժողովն ընդունեց առանց վիճաբանության և միաձայնությամբ[2]:

Դաշնակցության դատը լայն արձագանք գտավ Ռուսաստանի սահմաններից դուրս, եվրոպական զանազան երկրներում: Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի և այլ երկրների մամուլի օրգանները տպագրում էին Պետերբուրգից ուղարկած թղթակցություններ, որոնք հաճախ ուղեկցվում էին լայնածավալ մեկնաբանություններով:

Բեռլինում լույս տեսնող "Vossische Zeitung" («Վոսսիչե ցայտունգ») թերթը 1912 թ. № 83-ում տպագրել էր Պետերբուրգի իր մշտական թղթակցի հոդվածը: Դժգոհելով, որ դատավարությունը տեղի է ունենում դռնփակ, հեղինակը միաժամանակ նշում էր, թե «մեղադրյալների ազգանուններն ու հասարակական դիրքը բավական են ցույց տալու համար, որ ամբողջ հայ հասարակությունն է նստած մեղադրյալների նստարանի վրա», ինչն անթույլատրելի է: Գերմանական թերթի հոդվածագիրը նշում էր, որ «առանձին մեղադրյալների դեմ հարուցված մեղադրական կետերը ուշադրությամբ աչքի անցկացնելով այն

---

[1] **«Հորիզոն»**, № 26, 8 փետրվարի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

տպավորությունն է ստացվում, որ նրանցից շատերն անպայման ազատ են արձակվելու... Համեմատաբար քչերն են մեղադրվելու ահաբեկչական ձեռնարկներին գործուն մասնակցություն ունենալու համար»[1]:

Դատավարությանը ուշի ուշով հետևում էր նաև Թուրքիայի իթթահադական կառավարությունը: Ռուսական կառավարության ձեռքով դաշնակցություն կուսակցության գլխատումը մեծ նվեր կլիներ Թուրքերին:

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ.— Դաշնակցության դատավարությունը լայն արձագանք ստացավ ռուսական հասարակության մեջ, հատկապես ռուսական մամուլում:

Ռուսաստանի հեռագրական գործակալությունը միջոցներ էր ձեռնարկել, որպեսզի դաշնակցականների դատական գործի մասին հնարավորինս շատ նյութ տա մամուլին[2]:

Դատավարության առաջին իսկ օրից ռուսական մամուլի էջերում թեժ բանավեճ բռնկվեց: Թերթերն ու հանդեսները լի էին դատավարության ընթացքը պարզաբանող տարաբնույթ հոդվածներով, որոնցում տրամագծորեն հակառակ կարծիքներ էին արտահայտվում: «Գործի» շուրջ հոդվածներով հանդես էին գալիս նշանավոր լրագրողներ, իրավաբաններ, պետական, քաղաքական և հասարակական գործիչներ:

Կառավարության մոտ հարգ ունեցող աջակողմյան և սևհարյուրյակային մամուլը դատափետում էր Դաշնակցությանը և հայ ժողովրդին, նրանց նկատմամբ մեղադրանքների հեղեղ տեղում, չնչտելով, որ նրանք բոլոր հեղափոխությունների սկզբնապատճառն ու չար ոգին են ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Թուրքիայում և Պարսկաստանում: Ուժեղացնելով իրենց հակահայկական ջանքերը՝ հետադիմական մամուլի օրգանները նպատակ ունեին ռուսական հասարակության մեջ հայության շուրջ առաջ բերել թշնամական մթնոլորտ և դրա համար չէին խորշում ամեն տեսակ առասպելներ մոգոնելուց:

Ազատական մամուլը դատավարության սկզբում շատ

---

[1] ***"Vossische Zeitung"*** *(Berlin), am 15 Februar 1912 j.*

[2] ***Տե՛ս «Մշակ»****, № 9, 17 Հունվարի 1912 թ.:*

զգույշ էր իր գնահատականներում: Ավելին, այդ շրջանի նրա հրապարակումներում նույնիսկ ընդգծված համակրանք կար հայության և Դաշնակցության նկատմամբ: Դատավարության ընթացքում այդ համակրանքը գնալով վերածվեց նրանց բացահայտ պաշտպանության:

Հայության և նրա քաղաքական կազմակերպության դեմ իրենց հարձակումներով աչքի էին ընկնում "Новое Время"-ի խմբագիր Մենշիկովը, "Земщина" թերթի աշխատակից Օկսանին, "Россия", "Голос Москвы", "Руль" և այլ թերթերի լրագրողները: Օր-օրի վրա նրանք ավելի սանձարձակ էին դառնում, ավելի սաստկացնում զրպարտանքները՝ «ռուս հայրենասերի» իրենց համբավը է՛լ ավելի լայն տարածելու համար: Նրանց վառ, բայց հիվանդոտ երևակայությունն ամեն օր նորանոր խելագար մտքեր էր ծնում: Հայկական մամուլը նրանց միանգամայն արդարացիորեն մկրտել էր «հայակեր զրպարտիչներ» անունով:

Դատավարությունն սկսվելու հաջորդ օրն իսկ "Руль" թերթը Ռուսական կայսրության համար իսկական չարիք համարեց Դաշնակցությանը, որի կործանումը կողջունի ռուս ժողովուրդը և կօրհնեն բոլոր կովկասցիները[1]:

Այդ զրպարտիչներից "Новое Время"-ի խմբագիր Լեոնիդ Մենշիկովը դատավարությունն սկսվելուց երկու օր հետո՝ 1912 թ. հունվարի 19-ին, իր թերթում ստորագրել էր «Հայերի դատավարությունը» վերնագրով հերթական պասկվիլը Դաշնակցության և հայության մասին: Հոդվածագրի ակնհայտ նպատակն էր ճնշում գործադրել առաջիկա դատավարության ընթացքի վրա:

«Սկսվել է հայ հեղափոխականների հսկայական դատավարությունը,- գրում էր Մենշիկովը:- Պետք է նկատել, որ շատ դժվար է հետամուտ լինել չափազանց գաղտնի հեղափոխական կուսակցությանը, որն ասպատակում է կովկասյան խորունկները ու քարանձավներում: Կովկասի արդարադատությունը դրա վրա տարիների անդուլ լարված ջանքեր է սպառել: Եվ ահա՛ այժմ, երբ ո՛չ միայն նետված է հսկայական ուռկանը հայկական չարժման օրրանը, այլև դուրս է քաշված հարուստ որսով – տեղի

---

[1] Տե՛ս "Руль" (СПб), 18 января 1912 г.

են ունենում և՛ գաղտնի, և՛ հայտնի սադայելական ճիգեր, որ-պեսզի դարձյալ բաց թողնվի իշխանության այդ առատ որսը»[1]:*

Տալով Դաշնակցության ընդհանուր բնութագիրը՝ Մենշի-կովը նախ նրան համեմատում էր ֆիննական Վոյմի, հրեական Բունդի ու վրացական, թաթարական և այդօրինակ կազմակեր-պությունների հետ, որոնց նպատակն էր զենքի միջոցով վերա-կանգնել նախնիների օրով կորցրած ազգային ամենաթանկագին իրավունքը՝ պետական անկախությունը: «Արդեն հենց այդ ոճ-րագործների ստվարությունը Ռուսաստանում՝ նրանց ազգային-հեղափոխական կազմակերպությունների իմաստով,- գրում էր հոդվածագիրը,- հաստատում է երկու բան՝ նախ, որ Ռուսաս-տանը մի ժամանակ եղել է հզոր և նվաճել է շատ մանր ազգեր, ապա, որ նա այժմ թուլացել է և հպատակ ժողովուրդները նորից նրա դեմ պատերազմ են սկսում»[2]:

*Ռուսաստանում գործող նշված ազգային-հեղափոխական կազմակերպությունների հետ համեմատելով՝ Լեոնիդ Մենշիկո-վը Դաշնակցությանը համարում էր ամենավտանգավորը, որով-հետև նա, փաստորեն, խլրդային պատերազմ է հայտարարել երեք կայսրությունների՝ Ռուսաստանի**, Թուրքիայի*** և Պարս-*

---

* *Հավանաբար նկատի ուներ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի «հայամետ» կեցվածքը և ռուսական առաջադիմական մամուլի հրապարա-կումները:*

[1] ***"Новое Время"**, 19 января 1912 г.*

[2] *Նույն տեղում:*

** *Գաղտնիք չէր, որ Դաշնակցությունը, իրոք, պայքարում էր ցարիզմի դեմ, հետևապես դեմ էր կառավարող կարգերին: Բայց կուսակցությունն իր բնույթով հակառուսական չէր, ինչպես ներկայացնում էին նրան: Դաշնակցու-թյունը (նրա ռուսական հատվածը) պայքարում էր ազատ, ժողովրդավարա-կան, դաշնային հիմունքներով ստեղծվելիք Ռուսաստանի համար, որի անբա-ժան մասը պետք է կազմեր Անդրկովկասը: Բայց այդ իրողությունը քիչ էր հե-տաքրքրում իշխանություններին: Ցարական պաշտոնյաների աչքին դաշնակ-ցական էին բոլոր նրանք, ովքեր որևէ, նույնիսկ աննշան, դեր էին խաղացել ժողովրդական ինքնապաշտպանության կռիվների մեջ կամ ռուսական հեղա-փոխության ընթացքում (տե՛ս **Միքայէլ Վարանդեան**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 119):*

*** *Աշխատության մեջ բազմիցս առիթ է եղել շեշտելու, որ Օսմանյան կայսրությունում հայկական ազգային-ազատագրական շարժումը ուղղված չի եղել Օսմանյան կայսրության անդամահատմանը:*

կաստանի դեմ, որոնք բաժանել են իրենց միջև Հայկյան ժողովրդի պատմական հայրենիքը: Այդ երեք կայսրությունները, որոնք մի ժամանակ այնքան հզոր ու զարհուրելի էին, որ չէր կարող ըմբոստության գաղափարի ստվեր անգամ հայտնվել, այժմ բավականաչափ թուլացել են, և բոլոր երեք կայսրություններում ընդհանուր անիշխանության ամենից վտանգավոր բացիկներից մեկը հայերն են հանդիսանում[1]:*

Եվ ահա՛ այժմ, գրում էր Մենշիկովը, Ռուսաստանին է վիճակվել խրպչտել հայկական ապուրը և մեջտեղից վերացնել կեղտոտ պնակը, այսինքն՝ Դաշնակցությանը: Թեև հայերը քրիստոնյա հրեաներ են, չարունակում էր նա, և համարվում են Իսրայելի անհետացած տոհմաճյուղի սերունդը, բայց Թուրքիայի դեմ պատերազմների ժամանակ «պատվով ծառայել են Ռուսաստանին»: Այդ ծառայության դիմաց նրանք կարծում են, թե Ռուսաստանը գոյություն ունի միայն իրենց պաշտպանության ու ապահովության համար: Իսկ երբ այդ օգնությունը չի լինում՝ հայերը Ռուսաստանին հայտարարում են անհավատարիմ ու դավաճան, իր պարտավորությունը դրժող երկիր: Բայց դա անհեթեթ է, գրում էր Մենշիկովը, որովհետև Ռուսաստանը երբեք դաշնագիր չի ունեցել հայերի հետ այն պարզ պատճառով, որ սրանք դարեր շարունակ պետականություն չեն ունեցել, հետևապես Պետերբուրգի համար իրավաբանական սուբյեկտ չեն եղել: Ահա՛ հենց այդ պատճառով ռուսական կառավարությունը նրանց պաշտպանելու որևէ պարտավորություն չի ունեցել և չունի[2]:

Ինչպես տեսնում ենք, "Новое Время"-ի խմբագիրը առանց աչք թարթելու գլխիվար չուռ էր տալիս տարրական ճշմարտությունները, զանց էր առնում Պետրոս Մեծի և նրան հաջորդած ցարերի (Եկատերինա II, Պավել, Նիկոլայ I, Ալեքսանդր II) հայերին չնորհած արտոնությունները և տված անհաշիվ խոստում-

---

* *Ընթերցողին քաջ հայտնի է, որ հայկական հեղափոխական շարժումը երբեք ուղղված չի եղել Պարսկաստանի հողային ամբողջականության դեմ:*

[1] ***"Новое Время"**, 19 января 1912 г.*

[2] *Նույն տեղում:*

ները, միաժամանակ անտեսում էր ռուսական միապետության՝ կովկասահայերի դեմ չղթայազերծած քաղաքական-մշակութային անթիվ հալածանքները, որոնք եղել էին վերջին երկու տասնամյակներին ռուսական կառավարության նկատմամբ նրանց ունեցած ատելության պատճառը: Իսկ ո՞ւմ հայտնի չէր, որ Պետերբուրգը հաճախ խուլ էր մնում Թուրքիայում տառապող հայության տանջանքների հանդեպ*: Թերևս բացառություն էին Սան Ստեֆանոյի օրերին ռուսական դիվանագիտության երկնած ռուս-թուրքական նախնական պայմանագիրը և Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Ռուսաստանի կառավարության՝ Հայաստանի բարենորոգումների հարցը բարձրացնելն ու առաջ տանելը:

Մենշիկովը գտնում էր, որ հայերի ազգային բաղձանքը անկախության նման մի բան է, որը կարող է ձեռնտու լինել նաև Ռուսաստանին: Դա կարող էր լինել ոչ մեծ մի քրիստոնեական պետություն, որը Ռուսաստանը կբաժաներ իր թշնամի Թուրքիայից: Բացի այդ, հնարավորություն կստեղծվեր, որպեսզի Ռուսաստանից այն կողմ քշվեր բովանդակ Կովկասը քայքայող հայ անհանգիստ տարրը: Նման մի չնչին պետության ստեղծումը խորթ չէր լինի Ռուսական կայսրության համար նաև այն պարզ պատճառով, որ նա հանդուրժում է Բուխարայի ինքնավարությունը, «Պետերբուրգի քթից կախված» Ֆինլանդիան, իսկ դա նշանակում է, որ անբնական չէր լինի, եթե մեծ Ռուսաստանը չրջապատող ուղեկիցների խմբի մեջ ավելանար ևս

* Ռուս-թուրքական պատերազմների ընթացքում ռուսական կառավարությունը հաճախ գրգռում էր հայերի թշնամությունը թուրքերի դեմ, իսկ երբ դրանք ավարտվում էին և Պետերբուրգը հաշտվում էր Կ. Պոլսի հետ, սկսվում էր հայերի հալածանքը՝ նույնիսկ թուրքատյացության մեղադրանքով: Այլ խոսքով, ցարական կառավարությունը մի օր հայերին ներկայանում էր որպես բարեկամ, մյուս օրը՝ որպես թշնամի: Եվ պատահական չէ, որ հայկական հասարակության որոշակի շերտերում միշտ առկա են եղել կասկածն ու անվստահությունը ռուսական կառավարության նկատմամբ: Ավելին, շատերը գտնում էին, որ նա իր էությամբ միշտ հակված է դավաճանելու այլազգի անկեղծ ու նվիրյալ բարեկամներին:

մի փոքրիկ թագավորություն: Այսպիսով, նշում էր նա, «թերևս ոչ միայն մեզ, այլև Թուրքիայի ու Պարսկաստանի համար Հայկական հարցի ամենանպաստավոր լուծումը կլիներ գտնել և կղզիացնել օտար ու կենսունակ այդ ժողովուրդը, որ այժմ անբուժելի ցեց է նրան բաժան-բաժան արած երկրների համար»[1]:

Շարունակելով իր դատողությունները՝ Մենշիկովը գրում էր, թե 1894-1895 թթ. հայերի դաժան կոտորածի ժամանակ Անգլիան Ռուսաստանին առաջարկել էր գրավել Թուրքիայի հայկական գավառները և այնտեղ կենտրոնացնել այդ խռովարար ազգը, բայց «ցավոք, մեր կառավարությունը գնաց այլ ճանապարհով, այն է՝ նախամեծար համարեց բացել մեր սահմանները Թուրքիայի խռովարարների առաջ, այսինքն՝ հարևան հրդեհից ձեռք բերինք հրահրվող ածուխներ սեփական տան համար: Հետևանքը եղավ ... պետական խաղաղության կորուստը այդ առանց այն էլ անհանգիստ ծայրագավառում: Թուրքիայից փախած խռովարարներն իրենց ազգայնամոլական կրքերով վարակեցին մինչ այդ խաղաղ ռուսահայությանը»[2]:

Հոդվածագիրը չեշտում էր, որ երբ իշխան Գրիգորի Գոլիցինը դիմումներով Պետերբուրգին նախազգուշացնում էր, թե թուրքահայերին չպետք է թույլ տալ ռուսական սահմաններից ներս մտնել, ապազգային տարրերը, սակայն, խափանեցին նրա դիմումներին ընթացք տալը: Եվ դա հիմնականում հնարավոր եղավ Կովկասի փոխարքա, Դաշնակցության ազդեցության տակ ընկած Վորոնցով-Դաշկովի միջամտություններով:

Լեոնիդ Մենշիկովը Ռուսաստան անցած թուրքահայերին էր համարում 1905-1906 թթ. տեղի ունեցած արյունալի ընդհարումների պատճառ Անդրկովկասի թաթարների հետ, որոնք «նույն թուրքերն են արյամբ ու լեզվով»: Այդ պատերազմը ծագեց, որովհետև կրակի բովով անցած և զենքի չատ վարժ թուրքահայ մարտիկները ռուսական թուրքերին փոխանցեցին այն բովանդակ ատելությունը, որ նրանք տածում էին օսմանյան թուրքերի հանդեպ:

---

[1] *"Новое Время", 19 января 1912 г.*

[2] Նույն տեղում:

Այնուհետև Մենշիկովը այն էլ որերորդ անգամ կրկնում էր ռուս հայատյացների այն զառանցանքները, թե կովկասահայերը Գերմանիայից ու եվրոպական այլ երկրներից զենք են ձեռք բերում Էջմիածնի փողերով և Անդրկովկաս փոխադրում մեծահարուստ Մանթաշյանի ծախսերով, ինչպես նաև այն անհեթեթ առասպելը, թե Դաշնակցությունն ունի թնդանոթներով զինված 100000-անոց գաղտնի բանակ, որ այդ կուսակցության հետ համագործակցության մեջ են Հյուսիսային Կովկասի լեռնականները, որոնք համատեղ ապստամբություն են պատրաստում ռուսական պետության դեմ:

Հայերի և Դաշնակցության մասին Մենշիկովի հայտնած կարծիքները և տված գնահատականները ռուս ամենախավարամոլ գործիչների տրամադրությունների արտահայտություններն էին: Հայերի մասին իրենց «գիտելիքները» նրանք առաջին հերթին քաղում էին Կովկասի հակահայկական ճամբարներից: Հայ էսէռականության նշանավոր դեմքերից Վահան Մինախորյանը համոզված էր, որ «Մենշիկովը իր տեղեկութիւնները ստացել է հայերին «նախապատուութիւն» տուող վորոնցովեան ռեժիմից դժգոհ վրացի ազնուականներից, որոնց համար հայ յեղափոխականների գործունէութիւնը Կովկասում ոչ նուազ վտանգաւոր էր, քան միապետութեան»[1]:

Դաշնակցության դատավարության առաջին օրերից սկսած՝ նույնքան թունալից հոդվածներ էր տպագրում "Русское Знамя" թերթը, որին չէին բավարարում նույնիսկ Մենշիկովի հայատյաց գնահատականները:

1912 թ. հունվարի 22-ի համարում տպագրված «Հայերի դատավարության առթիվ» հոդվածում "Русское Знамя"-ն գրում էր.

«Ներկայումս սենատում տեղի է ունենում ստույգ հանցապարտներից բաղկացած ոճրագործ հայերի մի փոքր խմբի դատավարությունը: Բայց կասկած չկա, որ սենատի դռներից ներս, մեղադրյալների աթոռի վրա նստած պետք է լինեին առնվազն երեք հազար հոգի: Մենք այստեղ չենք տեսնում գլխավոր հան-

---

[1] ***«Հայրենիք»**, № 1 (217), նոյեմբեր, 1940, էջ 87:*

ցապարտներին՝ հայ եպիսկոպոսներին ու արքեպիսկոպոսներին, հայ բժիշկներին, պրոֆեսորներին, քաղաքագլուխներին, հայ գյուղատնտեսներին, հայ պետական պաշտոնյաներին, հայ սպաներին, հայ զինվորներին»[1]:

Կովկասյան իշխանություններին մեղադրելով Պետերբուրգում դատավարության կազմակերպմանը ամեն կերպ արգելքներ հարուցելու համար, հոդվածագիրը ցավալի էր համարում, որ դա կատարվում է դռնփակ: «Բովանդակ ռուս ժողովուրդը պետք է իրազեկ լինի այն ամենին, ինչ վերաբերում է այդ դատավարությանը, և հարկ չկա նրանից մանրամասները թաքցնել»,- նշում էր սաղրիչ հրապարակագիրը և ավելացնում. «Ռուս ժողովուրդը պետք է իմանա, թե ի՞նչ են իրենցից ներկայացնում հայերը, և որո՞նց հետ գործ ունենք մենք: Դա անհրաժեշտ է մանավանդ նրա համար, որ նոր է սկսվել դատավարությունը, և արդեն մամուլն սկսել է երգել այնպիսի եղանակներ, որոնք ի վիճակի են չփոթելու հասարակական կարծիքը»[2]:

Թերթը խիստ քննադատության էր ենթարկում Մենշիկովին "Новое Время"-ում հունվարի 19-ին ստորագրած «Հայերի դատավարությունը» հոդվածի համար - դա անհանդուրժելի խաբեբայություն, իսկ հեղինակին՝ անատամ ու անսկզբունք համարելով: Հոդվածագրին հունից հանել էր հատկապես Մենշիկովի արտահայտած ափսոսանքի խոսքերը, թե Ռուսաստանը ժամանակին պետք է նպաստեր Թուրքիայի հայկական գավառներում մի փոքր թագավորության ստեղծմանը, որը, ցավոք, չի արել: Ի պատասխան այդ հարցում Պետերբուրգի արտաքին քաղաքականության մենշիկովյան «քննադատությանը», "Русское Знамя"-ն գրում էր.

«Կառավարությունն այստեղ ի՞նչ մեղք ունի: Մի՞թե նա պարտավոր է իր զորքերը նետել Թուրքիա՝ ապստամբ հայերի՝ Մերձավոր Արևելքի այդ ամենաայլանդակ ու այլասերված ժողովրդի պաշտպանության ու ազատագրության համար: Մի՞թե ռուս ժողովուրդը պետք է պատերազմ ձեռնարկի Թուրքիայի

---

[1] **"Русское Знамя"** (СПб), 22 января 1912 г.

[2] Նույն տեղում:

դեմ և իր թանկագին արյունը թափի ինչ-որ ասիական տականքների սիրույն»[1]: Շարունակելով լուտանքներ թափել Հայության գլխին՝ "Русское Знамя"-ն Մենչիկովին մեղադրում էր նաև այն բանի համար, որ նա կասկած է հայտնել, թե Անդրկովկասում թուրք-հայկական ընդհարումների ժամանակ մեղավոր են եղել երկու կողմերն էլ: «Ասում են,- գրում էր թերթը,- որ կարելի է հանդիպել սպիտակ փղերի և կանաչ օձերի, իսկ հարգելի հրապարակագիրն այդ խոսքերով ամենավրդովեցուցիչ անհեթեթությունների է հասել: Հայերը վերջին 40 տարիներին մեզ բավականաչափ լավ պարզեցին իրենց դեմքը, իրենց հոգին, իրենց խիղճը, իրենց սիրտը, իրենց մտավոր և բարոյական կերպարանքը: Դա մի ժողովուրդ է, որ ամենից այլասերվածն է, ամենից խաբեբան, ամենից քինախնդիրը, ամենից ոճրապարտը...»[2]:

Ապա անդրադառնալով ՀՅ դաշնակցության սկսված դատավարությանը՝ հակահայկական մոլուցքով գլուխը կորցրած ազգայնամոլը շարունակում էր. «Ներկայումս դատարան քշված հայերի մեջ անմեղներ չկան, այլ կան միայն ծանր ոճրագործներ, և նրանց մեջ եղած տարբերությունն այն է միայն, որ ոմանք արժանի են հավիտենական տաժանակիր աշխատանքների, իսկ ոմանք՝ ուղղակի կախաղանի:

Տարակույս չկա, որ հայերը լարել են իրենց բոլոր ուժերը և տրամադրել խոշոր դրամագլուխներ, որպեսզի ի չիք դարձնեն Դաշնակցության ներկա դատավարությունը: Թույլ տանք մեզ հուսալու, որ ներկա դեպքում նրանց ջանքերն ապարդյուն կանցնեն:

Սակայն, ո՞վ գիտե: Շատ բարձր են աղաղակում թերթերը նրանց պաշտպանության մասին...»[3]:

Սա հոդվածի վերջավորությունն է, այնտեղ եղած միակ ճիշտ հաստատումը:

Այդ օրերին "Русское Знамя"-ից հետ չէր մնում Թիֆլիսի ռուս հայրենասերների օրգան "Голос Кавказа"-ն («Գոլոս Կավ-

---

[1] **"Русское Знамя"**, 22 января 1912 г.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

կազա»): Վերջինս կուրծք ծեծելով փորձում էր ռուս հասարակայնությանը համոզել, թե հայերն ամեն տեղ, բոլոր երկրներում, ուր արմատ են նետում, հեղափոխություն են սարքում, և այդ տեսակետից նրանք «հրեաների հետ նույն ջրհորից են»[1]:

Դաշնակցության «Հորիզոն» թերթը «Խելագարության նշաններ» հոդվածում գրում էր.

«Դարձեալ խօսեցին նրանք՝ Ռուսաստանի այլացեղ ազգութիւնների թշնամիները: Տարիներ են անցնում, իսկ նրանք չեն յոգնում: Այսօր՝ լեհացին, վաղը՝ հայը, վրացին, թուրքը, միշտ՝ հրեան – նիւթը անսպառ է, զրպարտելու կարողութիւնը՝ անմեռ, թունաւորելու արհեստը՝ արդիւնաւէտ: Եւ նրանք, այդ տխուր ասպետները, շատ գոհ են, որ աշխարհի երեսին գոյութիւն ունեն ազգերի տարբերութիւններ, եւ իրենք կարող են անվերջ շահագործել օտարակերութիւնը»[2]:

Թերթը չեշտում էր, որ այս անպատիվ երևույթը կայսրության այլազգիները վաղուց են տեսնում ռուսական մամուլի մեջ: Երկար ժամանակի փորձը ոչ-ռուս ազգություններին համոզել է, որ սևհարյուրյակային «հերոսները» տանել չեն կարող ազգերի խաղաղ համերաշխությունը, որ նրանք «կը խեղդուեն, եթէ մի օր չը ստեն, չը զրպարտեն, խռովութեան սերմեր չը տարածեն»: Ուստի «գիտակցական սուտը մնում է այդ ոհմակի սեփականութիւնը»[3]: Սուտ է, թե հայ ժողովուրդը մի վիթխարի բանակ ունի: Երբեք «հայ ժողովուրդը հարիւր հազար զինուած մարդ չի ունեցել, այլ ունեցել է հարիւրներ, եւ դեռ չի տեսնուած, որ այդ հարիւրները ռուսական զէնքի դէմ դուրս եկած լինեն: Տեսնուել է – եւ այս ոչ թէ մէկ կամ երկու անգամ – որ ամէնքը, զինուած թէ անզէն, ռուսական զէնքի առջեւից են գնացել, նրա աչխատակիցն են հանդիսացել, որքան կարողացել են»[4]: «Հորիզոնն» ընդգծում էր, որ Կովկասի ժողովուրդները «չատ լաւ գիտեն, որ միայն մի ընդհանուր, մեծ հայրենիք ունեն, եւ դա Ռուսաստանն

---

[1] *Տե՛ս* ***«Հորիզոն»****, № 3, 6 հունվարի 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում, № 2, 4 հունվարի 1912 թ.:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

[4] *Տե՛ս նույն տեղում:*

է, որի ուրախութիւններն ու վշտերը իրենցն են, որի կուլտուրական-քաղաքակրթական առաջադիմութեան մէջ նրանք էլ պարտաւոր են իրենց բաժին աշխատանքը կատարել»:

Մեծ մխիթարություն էր, որ ռուս գիտակից հասարակության մեծ մասը հայակեր մամուլի տեսակետները չէր բաժանում: Ռուսական ազգայնամոլության և հայատյացության ձայնափողերի դեմ էին ուղղված առաջադիմական մամուլի հրապարակումները: Այդ մամուլը, որ երկրի դեմոկրատիայի ձայնն էր, Դաշնակցության դատավարությունը լուսաբանում էր բարոյականության մղումներով և խղճի մտոք:

Ռուսական առաջադիմական թերթերն ու հանդեսները դատարանից պահանջում էին արդար լինել, չխաղալ հայ ժողովրդի ազգային արժանապատվության հետ: Հայ ամբաստանյալների բացահայտ կամ զգույշ պաշտպանությամբ հանդես էին գալիս "Русское Слово", "Речь", "Голос Земли", "Биржевые Ведомости" և այլ թերթեր ու հանդեսներ:

Դատավարությունն սկսվելու օրը՝ 1912 թ. հունվարի 17-ին, մայրաքաղաքում լույս տեսնող "Речь" լրագիրը տպագրել էր «Դաշնակցության գործի չուրջ» վերնագրով հոդվածը, ուր ասված էր. «Այսօր սենատի հատուկ ատյանում սկսվող դատը ուշադրություն է գրավում ոչ միայն Կովկասի ամենատարբեր շերտերին պատկանող մեղադրյալների թվով, ոչ միայն իր բացառիկ բնույթով, որի պատճառով դատի վարումը հանձնվել է սենատի քննությանը, այլև իր քաղաքական նշանակությամբ: Նրա մեջ արտացոլված է (ռուսական պետության:- Հ. Ս.) քաղաքականությունը ծայրամասերից մեկի՝ Կովկասի նկատմամբ՝ սկսած իշխան Գոլիցինից մինչև մեր օրերը»[1]: Թերթը Դաշնակցության հակացարական գործողությունների գլխավոր դրդիչը համարում էր Գոլիցինի ստեղծած անհեռատես, անտանելի ռեժիմը երկրամասում, չնայած այդ անիծյալ ժամանակներից արդեն անցել էր 6-7 տարի: Այնուհետև "Речь"-ը կոչ էր անում այդ քաղաքական գործը քննել ամենայն լրջությամբ: «Պետք է հաս-

---

[1] ***"Рѣчь"**, 17 января 1912 г.*

կանալ,- չեչտում էր հոդվածագիրը,- թե որքան բարդ է լինելու դատավարության գործընթացը, որքան շատ քաղաքական դանդաղ չերտավորումներ կան գործի մեջ, որոնք ամենախոհուն վերաբերմունք են պահանջում»: Թերթի կարծիքով՝ սենատի ատյանում քննվում են «Դաշնակցության գործի» ոչ թե 135 հատորները, այլ Լրժինի կազմած ամփոփագիրը (էքստրակտը): Նոր հանգամանքներ բացահայտվելու պատճառով սենատը պետք է ցույց տա առավելագույն ներողամտություն, բայց այդ օրինակ գիջումը հասարակական խիղճը չի բավարարի և դատավճռի հեղինակություն չի կարող ունենալ: Զափազանց կարևոր է անջատել նրա հիրավի քրեական տարրը քաղաքականից: Շատ անհրաժեշտ է ամենայն ուշադրությամբ քննել այն նյութերը, որոնք ձեռք են բերել պահնորդական բաժինը և քաղաքական խուզարկությունը[1]: "Речь"-ը ցավով էր նշում, որ որոշվել է դատը դռնփակ անել, այնինչ «գործընթացի բնույթը պահանջում է ամենից առաջ հրապարակայնություն, հրապարակային քննություն այն բարդ կծիկի, որ պիտի բացվի դատարանում»[2]:

"Голос Земли" թերթում լույս տեսած հոդվածում Վ. Օպոչինինը գրում էր, թե կասկած չի կարող լինել, որ կեղծիքները Լրժինի ձեռքի գործն են, ուստի «ներկայ գործում անհրաժեշտ է դատաստանական ատեանի առանձին զգուշութիւն եւ հեռատեսութիւն, որպէսզի ծանր պատժի չենթարկուեն անմեղ մարդիկ ... «Դաշնակցութիւն» խօսքը դեռ չի նշանակում «յանցաւոր»,- չեչտում էր հոդվածագիրը:- Այդ կուսակցութիւնը սերուել է ժողովրդից եւ նրա պաշտպանն է: Ուստի Դաշնակցութեան առանձին անդամների դէմ յարուցած մեղադրանքները անթոյլատրելի է տարածել ողջ ժողովրդի վրայ»[3]:

ԼՐԺԻՆԻ ԿԵՂԾԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ. – Զնայած «Դաշնակցության գործի» նկատմամբ իշխանությունների և դատական մարմինների նախապես ընդգծված հույժ բացասական

---

[1] ***"Речь"**, 17 января 1912 г.*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Նշված թերթի հոդվածի թարգմանությունը տե՛ս **«Հորիզոն»**, № 32, 16 փետրվարի 1912 թ.:*

տրամադրվածությանը, դատավարությունը, սակայն, հենց սկզբից գնաց մեղադրյալների համար բարենպաստ հունով: Հիմնական պատճառը վկաների ճիշտ ցուցմունքներն էին և փաստաբանների փայլուն ելույթները:

Դրան հակառակ, քննիչներն ամեն ինչ անում էին նախաքննության ընթացքում իրենց կազմած նյութերը հաստատելու համար: Դատին ներկայացված համարյա բոլոր գործերի մեջ կեղծիքներ կատարած այդ մարդիկ իրենց մեքենայությունները շարունակում էին նաև դատարանում:

Անդրադառնալով այդ փաստերին՝ Աշխեն Թումանյանն իր հուշերում գրել է. «Փաստաբանները շարունակ կեղծիքներ էին հայտնաբերում գործի մեջ՝ ստորագրությունների փոփոխություն, գրածի վրա դիտավորյալ թանաք թափել, այն էլ ուրիշ գույնի թանաք, տարեթվերի նենգափոխում և այլն, և այլն»[1]:

Քննչական խմբի ղեկավար Լրժինը կեղծիքներ էր կատարում նույնիսկ դատավարության ընթացքում: Նովոչերկասկում կատարած կեղծիքների համար նրան ոչ միայն պատժի չէին ենթարկել, այլև խրախուսել և ավելի բարձր պաշտոնի՝ Վիլնոյի դատաստանական պալատի անդամ էին նշանակել: Այստեղից էլ Լրժինը հրավիրվել էր մասնակցելու Պետերբուրգի դատավարությանը՝ «Դաշնակցության գործով» ստեղծված փաստաթղթերի հսկայական կույտը «դասավորելու» և «կարգի բերելու» համար: Բայց այստեղ էլ նա իր սև գործը տեսավ՝ իրեն հատուկ խարդախություններով ու մեքենայություններով:

Դատարանում լիովին բացահայտվեցին Լրժինի կողմից վավերագրերի զանգվածային կեղծումները և հատկապես վկաների տված ցուցմունքների խախտումները:

Կատարված կեղծիքների վրա ուշադրությունը սրվեց հատկապես այն բանից հետո, երբ պարզվեց, որ մեղադրյալների գործերից չքացել են մի շարք կարևոր ապացույցներ՝ փաստաթղթեր ու վավերագրեր[2]:

---

[1] **«ԹԺՀ»**, էջ 640:

[2] Այդ մասին մանրամասն տե՛ս **"Закавказская Речь"** (Тифлис), №№ 23, 42, 44, 57, 68, 1912 г., **«Մշակ»**, №№ 34, 36, 37, 1912 թ., **«Հորիզոն»**, №№ 30, 32, 33–37, 39, 44, 48, 51, 1912 թ.:

«Մշակն» իր ընթերցողներին տեղեկացնում էր, որ դատապաշտպանները դատարանում հայտարարել են, որ այդ նյութերն անհետացել են Լրժինի կողմնակիցների ձեռքով այն պատճառով, որ նրանք վախ են ունեցել, թե հանկարծ կարող են բացահայտվել այն էական միջամտությունները, որ կատարել են փաստաթղթերի սկզբնական բովանդակության մեջ՝ նպատակ ունենալով որքան հնարավոր է ծանրացնել մեղադրյալների մեղքերը[1]:

Դաշնակցության դատի պաշտպաններից երդվյալ հավատարմատարներ Զարուդնին, Սոկոլովը, Սկարյատինը, Պերևերզևը և Բարրը 1912 թ. մարտի 3-ին մանրամասն պատճառաբանված գանգատ ներկայացրին սենատի առաջին և վճռաբեկ դեպարտամենտների միացյալ ատյանին՝ քննիչ Լրժինին մեղադրելով մի շարք զեղծումների համար, որոնք նա և նրա ենթակաները կատարել էին «Դաշնակցության գործի» նախնական քննության ժամանակ: Թվարկելով զեղծումների բնույթը – վկաների ստորագրությունների և թվական տվյալների կեղծում, զանազան չեղած պատմությունների մոգոնում, փաստաթղթերում և արձանագրություններում քերծվածքներ ու ջնջումներ, զանազան շարադրանքների խարդախում և այլն – երդվյալ հավատարմատարները սենատին խնդրում էին պատժական օրենսգրքի 362-րդ հոդվածով դատի տալ Լրժինին[2]:

Դատարանի նախագահը, որի համբերությունն արդեն հատել էր Լրժինի մասին բազմաթիվ բողոքներ ու գանգատներ լսելուց, կարգադրեց վճռաբեկ դատարանի միացյալ նիստում քննարկել նրա վարքագծի հարցը[3]: Նիստում բացահայտվեցին Լրժինի «սխրանքները» և առաջարկ արվեց նրան դատի տալ՝ մեղադրելով պատժական օրենսգրքի 362-րդ հոդվածով[4]:

Դատաստանական պալատի դատախազը արդարադատության նախարար Շչեգլովիտովին առաջարկություն ներկայաց-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 33, 16 փետրվարի 1912 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Հորիզոն»****, № 51, 9 մարտի 1912 թ., նաև՝* ***«Կռան»*** *(Երևան), № 11 (18), 11 մարտի 1912 թ.:*

[3] *Տե՛ս* ***«Ախուրեան»****, № 10, 14 փետրվարի 1912 թ.:*

[4] *Տե՛ս* ***«Հորիզոն»****, №№ 49, 51, 7 և 9 մարտի 1912 թ.:*

րեց դատ բացելու զեղծարարների դեմ՝ պատժական օրենսգրքի 303-րդ հոդվածի (փաստաթղթերի գողության) և 362-րդ հոդվածի (պաշտոնավարական կեղծումներ) հիման վրա: Հենց նույն օրը կեղծիքների բացահայտումը նախարարը հանձնարարեց Պետերբուրգի նահանգային դատարանի կարևորագույն գործերի քննիչ Պ. Ա. Ալեքսանդրովին[1]: Շչեգլովիտովի կարգադրությամբ՝ բոլոր քննչական նյութերը և փաստաթղթերը նրա տնօրինությանը հանձնվեցին, որպեսզի սա կարողանար նախնական քննություն կատարել և բացահայտել կարևոր գոնե մի քանի փաստաթղթերի անհետացման առեղծվածը[2]:

Բայց սենատն ավելի հեռուն գնաց՝ կարգադրելով փորձաքննության ենթարկել նախաքննական արձանագրությունների քերված ու փոփոխված տողերը: Գործի մեջ ներգրավվեց 6 փորձագետ՝ 3-ը Պետերբուրգից, 3-ը Կովկասից (հայեր):

Իհարկե, փորձագետներն ի վիճակի չէին ստուգելու նախաքննական արձանագրությունների հսկայածավալ նյութերը, ուստի իրենց ուշադրությունը պիտի կենտրոնացնեին մի քանի կարևոր արձանագրությունների վրա միայն:

Ձեռնարկելով կեղծիքների բացահայտումը՝ փորձագետների խումբը դատաստանական պալատի դատախազ Կորսակի անձնական հսկողությամբ մանրամասն հարցաքննության ենթարկեց մի շարք անձնավորությունների, որոնք առնչվում էին փաստաթղթերի կեղծման կամ անհետացման գործին: Հարցաքննվել էին Լրժինը, նրա թարգման Նաղիրաձեն, փորձաքննիչներ Զախարինը, սենատի օբեր-քարտուղար Վիչնևսկին և նրա օգնականը:

Նախաքննության ստուգած փաստերի բոլոր խարդախումներն արված էին այն աստիճան կոպիտ, որ փորձագետների համար դժվար չէր եղել ոչ միայն հաստատել կեղծիքների փաստը, այլև շատ դեպքերում կարդալ փաստաթղթի առաջվա բնագիրը:

Փորձագետների քննության ընթացքում երևան եկան 33

---

[1] *Տե՛ս* ***«Հորիզոն»****, № 64, 30 մարտի 1912 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 34, 17 փետրվարի 1912 թ.:*

մեծ կեղծիքներ և 20-ից ավելի ուղղումներ ու քերվածքներ[1]: Անձամբ Լրժինի կատարած զեղծումների և քերվածքների թիվն անցնում էր 30-ից[2]:

Օրինակ՝ մի վկայի ժամանակին տված ցուցմունքի մեջ գրված "Он не давал оружие" արտահայտության մեջ "не"-ն դարձվել էր "же" և ստացվել էր "Он же давал оружие"[3]: Մի ուրիշ վկայի ցուցմունքում ասված էր. "Перечисленных лиц я не видел": Այդ նախադասությունը կեղծվել էր և փոփոխվել էր "Я же видел"-ով: "Теоретическая работа"-ն դարձվել էր "Террористическая"[4]:

Փաստաթղթերից մեկում «արևելյան» բառը քերվել և դարձվել էր «Առաքելյան»: Քննիչի արձանագրած չարադրանքում «Արևելյան» բառը Դաշնակցության «Արևելյան բյուրո» բառակապակցության մասին էր: «Արևելյան» բառը դարձնելով «Առաքելյան», Լրժինը դատի էր ենթարկել Գևորգ Առաքելյան անունով մեկին[5]: Անդրադառնալով այդ խարդախման փաստին՝ "Речь" թերթը առաջնորդողում գրում էր. «Անմեղ մարդը, որը պատահաբար ընկել է Լրժինի ձեռքը, այժմ նստած է մեղադրյալների նստարանին և անձկությամբ սպասում է իր վիճակի որոշմանը: Ճիշտ կլիներ նրանց տեղերը փոխել»[6]:

Փոխված էր ոմն Դավիդյանի նամակի թվականը, որ շատ կարևոր էր մի քանի մեղադրյալների այլուրեքությունը (ալիբին) ապացուցելու համար: Թվականի տեղ թանաքի մի բիծ էր, իսկ բծի վրա գրված էր 7: Լուսանկարչական փորձաքննությունը ցույց տվեց, որ բիծն առաջացել է ոչ թե թանաքի կաթիլից, այլ սկզբում գրած 14 թիվը խազխզելուց: Արձանագրության մեջ այդ տեղը քերված էր և քերվածքի վրա գրված էր 7 թիվը[7]:

---

[1] Տե՛ս **"Раннее Утро"**, 11 февраля 1912 г.

[2] Տե՛ս **«Հորիզոն»**, № 33, 17 փետրվարի 1912 թ., **«Ախուրեան»**, № 14, 4 փետրվարի 1912 թ.:

[3] **«ԹԺՀ»**, էջ 640:

[4] Տե՛ս **«Հորիզոն»**, № 33, 17 փետրվարի 1912 թ.:

[5] Տե՛ս **«Մշակ»**, № 37, 21 փետրվարի 1912 թ.:

[6] **"Речь"**, 14 февраля 1912 г.

[7] Տե՛ս **«Հորիզոն»**, № 33, 17 փետրվարի 1912 թ.:

Երդվյալ հավատարմատար Զավրիևի ծոցատետրում մի գրություն էր գտնված Արևմտահայաստանի Մուշ քաղաք 5 հազար ռուբլի ուղարկելու մասին, որտեղ նրա եղբայրը հիվանդանոց էր հիմնել: Իհարկե, այդ փաստը քրեական տեսակետից ինքնըստինքյան նշանակություն չուներ, բայց որովհետև Զավրիևի դեմ հարկավոր էր փաստեր ստեղծել՝ նրան մեղադրելու համար, "Мушь - 5000 р."-ն, փոխվել էր "Эривань – Мушегян – 5000 р."-ի: Այդ ազգանունով մարդը ձերբակալվեց և բանտում չորս տարի փակվեց[1]: Առանձին ատյանը փորձաքննության ենթարկեց փաստաթուղթը և գտավ, որ "Мушь" բառը գրված է Զավրիևի ձեռքով, իսկ "Эривань" բառը և "егян" ածանցը՝ ուրիշ ձեռքով և ուրիշ թանաքով[2]:

Հարցաքննություններից մեկի ժամանակ խոսք էր եղել կուսակցության ձեռք բերած 200 հրացանի մասին, բայց քննիչն իր կազմած արձանագրության մեջ ավելացրել էր մեկ զրո և ստացել 2000 հրացան:

Նախաքննության մի արձանագրությունից անհետացած փաստաթղթում, որը պետք է ծառայեր հօգուտ մեղադրյալների, «Ամասիա» բառը քերվել էր և տեղը գրվել «Հեմիզիա»: Փաստաբանները սենատից խնդրել էին այդ փաստաթուղթը փորձագետների միջոցով ենթարկել հանգամանալից քննության, քանի որ համոզված էին, որ կեղծիքն անձամբ կատարել է Լրժինը[3]:

Փաստաբանների խնդրանքով մի ուրիշ փաստաթղթի լուսանկարչական, միկրոսկոպիկ և քիմիական փորձաքննությունը ցույց էր տվել, որ «Դոլգորի» բառը քերվելով դարձել էր «Դոլգոջիև» (ամբաստանյալներից մեկի ազգանունը)[4]:

Վկա պրիստավ Բագրաձեն սենատին հայտնել էր, որ նախնական քննության ժամանակ իր տված ցուցմունքները սխալ են արձանագրվել, իսկ իր ստորագրությունը փաստաթղթում կեղծված է[5]:

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 33, 17 փետրվարի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 52, 10 մարտի 1912 թ.:

[3] Տե՛ս **"Рѣчь"**, 14 февраля 1912 г.

[4] Նույն տեղում:

[5] Տե՛ս **«Մշակ»**, № 31, 21 փետրվարի 1912 թ.:

Մի ուրիշ փաստաթղթի վրայի թանաքի բիծը քննելիս երևաց, որ դա արված է անտրացենյան թանաքով, իսկ ամբողջ բնագիրը և բծով ծածկված թիվը գրված են բոլորովին այլ թանաքով: Հետագայում ամսաթիվը նույնպես փոխված էր անտրացենյան թանաքով[1]:

Բացի փաստաթղթերի կեղծումներից ու ջնջումներից՝ դրանց մի մասն ուղղակի անհետացել էր անհասկանալի կերպով: Օրինակ՝ հաստատվել էր, որ մեղադրյալ Խաչատուր Գևորգյանից բռնագրավված հուշատետրից պոկված է քննիչների համար ոչ-ձեռնտու 5 թերթիկ: Զավրիևից բռնագրավված ծոցատետրի 4-րդ էջն անհետանալու պատճառով նրա բովանդակությունից շատ բան փոխվել էր[2]:

Նախնական քննության արձանագրությունները, որոնք զետեղված էին 135 հատորներում, ըստ երևույթին մեղադրյալներից ու պաշտպաններից որևէ մեկը չէր կարդացել: Մեղադրյալները գործին ծանոթացել էին միայն իրենց բաժանված համառոտագրած տպագիր պատճենների միջոցով[3]:

Փորձագետները շատ ժամանակ խլող մանրակրկիտ աշխատանք կատարեցին: Նրանք պարզեցին, որ ամբաստանյալներից առնվազն 52 հոգու դատարան էին բերել միայն կեղծիքների ու մատնությունների օգնությամբ[4]: Պետք է ասել, սակայն, որ նրանց աշխատանքը միշտ չէ, որ անցնում էր հարթ ու առանց բանավեճի. ծագում էին որոշակի բարդություններ: Օրինակ՝ մեղադրյալ Հրանտ Մելյանին դատի ենթարկելը հիմնված էր այն բանի վրա, որ նրա ստորագրությունը եղել է կուսակցության գործիչներից մեկին ուղղված նամակի տակ: Չնայած այն բանին, որ նախնական փորձաքննությունը որևէ նմանություն չէր գտել ստորագրության և Մելյանի ձեռագրի միջև, այնուամենայնիվ, նա նստեց մեղադրյալների նստարանին: Դատարանը գեղագիր-փորձագետների միջոցով նոր փորձաքննության ենթարկեց

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 35, 19 փետրվարի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **«Դրօշակ»**, № 3 (221), մարտ, 1912, էջ 49:

գործի այդ մասը: Մինչ հայ փորձագետները գտնում էին, որ նմանություն չկա ստորագրության և Հրանտի ձեռագրի միջև, ռուս փորձագետներն այդ նմանությունը գտնում էին: Բայց ընդ-ոչը, այնուամենայնիվ, փորձագետների անկողմնակալ աշխատանքն էր: Ինչպես հայ, այնպես էլ ռուս փորձագետները բացասաբար վերաբերվեցին, օրինակ, մեղադրյալ Արղության-Երկայնաբազուկին վերագրած նամակների ձեռագրերի իսկությանը[1]:

Փորձագետների կողմից նորանոր կեղծիքների բացահայտումը լայն արձագանք գտավ ռուսական մամուլում:

Հայերի և Դաշնակցության նկատմամբ բացահայտ համակրանք էր արտահայտում "Русское Слово"-ն: Անդրադառնալով դատավարությանը՝ թերթի աշխատակից Սերգեյ Յաբլոնովսկին ընթերցողների ուշադրությունը հրավիրում էր Լրժինի կատարած կեղծիքների բացահայտման հանգամանքների վրա: Նա գրում էր. «Միանգամից ու անսպասելիորեն պարզվել է, որ այս քննիչը մեղադրյալներից չատ ավելի հանցավոր է: Եթե մեղադրյալի աթոռին նստածները սխալներ են գործել, ապա գործել են՝ ելնելով իրենց համոզմունքներից: Իսկ Լրժինը դատական քննիչ լինելով՝ նախաքննությունը գիտակցաբար տարել է կեղծումներով: Իրավաբան լինելով՝ նա կոչված է օգնելու արդարադատությանը՝ վեր հանելու ճշմարտությունը, մանավանդ որ ապրում է լիուլի կյանքով, որևէ բանի կարիք չունենալով: Բայց արի ու տես, որ նա իր առաջխաղացումն (կարիերան) ստեղծում է ուրիշների դժբախտության գնով»[2]: Ելնելով դրանից՝ հոդվածագիրը տեղի ունեցածը համարում էր ծանր նախատինք թե՛ դատարանին և թե՛ երկրի ողջ արդարադատությանը: Իսկ ի՞նչ է եղել կեղծարարի հետ, նա հեռացա՞ծ է արդյոք դատական գործընթացից: «Ո՛չ,- ցավով նշում էր Յաբլոնովսկին:- Պարոն Լրժինն այժմ էլ բազմած է՝ իբր գործին լավատեղյակ անձ և չատ էլ, ըստ երևույթին, անհանգիստ չէ երևան հանված փաստերից»[3]:

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 49, 7 մարտի 1912 թ.:

[2] **"Русское Слово"**, 6 марта 1912 г.

[3] Նույն տեղում:

Վերջում հոդվածագիրը անկողմնակալ լինելու կոչ էր անում դատարանին՝ հիշեցնելով, որ «դատավարությանը հետևում են ինչպես հայ ազգաբնակչության բոլոր շերտերը, այնպես էլ ողջ Կովկասը»[1]:

Զայրույթով էր արտահայտվում նույնիսկ իր հակահայկականությամբ հայտնի "Новое Время"-ն: Թերթը Դաշնակցության դատավարությունը համարում էր ռուսական արդարադատության պատմության մեջ եզակի՝ նախաքննական գործի անորակ լինելու տեսակետից[2]: Ավելին, նույն հետադիմական "Новое Время" թերթի "Вечерное Время" երեկոյան հավելվածում խնդրի վերաբերյալ հոդվածի հեղինակը գրում էր. «Այդպիսի պայմաններում դատավարության չարունակումն անմտություն է»[3]:

Եվ իրոք, արդարադատության նախարարությունում մտադրություն կար դատավարության գործը կանգնեցնել մինչև քննության ավարտը: Բայց դատարանում սենատորները վճռականորեն պնդեցին, որ նախարարի հրամանով քննություն նշանակելը չի կարող ազդել օրենքով հաստատված կարգի վրա, ուստի գործը պետք է չարունակվի:

Սենատի վճռաբեկ քրեական դեպարտամենտի ավագ դատախազ Կեմպեն, որին հանձնարարված էր հսկել Լրժինի և նրա ենթակաների կեղծումները բացահայտող փորձաքննիչների աշխատանքին, համոզվել էր, որ դրանք զանգվածային բնույթ են կրում և Լրժինից գրավոր բացատրություն էր պահանջել: Բայց դրա փոխարեն Լրժինը արդարադատության նախարարին ներկայացրել էր մի զեկուցագիր, ուր ասված էր, որ «Դաշնակցության գործին» գիտակցաբար տրվել է քաղաքական բնույթ, այնինչ դա հասարակ քրեական հափշտակիչների և ավազակախմբերի գործ է: Նա նշում էր, որ Պետերբուրգի դատավարության ժամանակ պարզ երևաց, որ դատարանը խնդիր ուներ որքան կարելի է չուտ ավարտել գործը և մեղմ պատիժներ տալ մեղադրյալներին: Եվ դա այն դեպքում, երբ ինքը և իր ենթակա-

---

[1] **"Русское Слово"**, 6 марта 1912 г.

[2] Տե՛ս **"Новое Время"**, 12 февраля 1912 г.

[3] **"Вечернее Время"** (СПб), 13 февраля 1912 г.

ները տարիներ չարունակ տքնել են աշխատանքի ծանրության տակ, և այդպիսի պայմաններում կարող էին սպրդել սխալներ, իսկ կեղծիքներ չեն կատարվել, երբ գործն իր ձեռքին է եղել: Լրժինն անհաջող փորձ էր արել ապացուցելու, որ փաստաթղթերում կարող էին կեղծիքներ կատարվել առանց իր գիտության: «Ես,- գրել էր նա,- գործն ամբողջովին հանձնել եմ դատախազի օգնական Ակսակովին, որը և կազմել է մեղադրական ակտը: Եթե քննչական գործի մեջ կեղծումներ լինեին, Ակսակովը չէր կարող չնկատել, իսկ եթե եղել են, ապա պատասխանատու է նաև նա»[1]:

Զեկուցագրում Լրժինը քանիցս նշում էր, որ հայերն իրեն կաշառելու բազմաթիվ փորձեր են արել և մի դեպքում նույնիսկ առաջարկել են 180 000 ռուբլի: Եղել են նաև թարգմանիչներին և մյուս պաշտոնյաներին կաշառելու փորձեր:

Անկախ այն բանից, որ Լրժինը զեկուցագրով դիմել էր արդարադատության հայատյաց նախարարին և ըստ էության հայցել էր նրա աջակցությունը, ավագ դատախազ Կեմպեն անհրաժեշտ էր համարում Լրժինին դատի հանձնել որպես կեղծումների գլխավոր մեղավորի, նրա հետ դատել գործի քննության բոլոր մասնակիցներին, որոնք զանգվածային կեղծումներ են կատարել ի վնաս մեղադրյալների[2]:

Հենվելով դատախազ Կեմպեի կարծիքի վրա՝ նախագահ Կրավցովը փետրվարի սկզբներին Լրժինին հեռացրեց «Դաշնակցության գործի...» փաստաթղթերը տնօրինողի պարտականությունից[3], որից հետո նրա դեմ գործ հարուցվեց քրեական օրենսգրքի 303-րդ հոդվածի հիման վրա: Նա կարգադրեց քերծվածքներ և ուղղումներ ունեցող բոլոր փաստաթղթերը դուրս գցել գործից՝ իբրև կասկածելի, և որոնք կարող էին սխալների տեղիք տալ դատավճիռն ընդունելիս: Նախագահ Կրավցովը միաժամանակ հրաման գրեց, որով պատվիրում էր ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ապագայում բացառելու փաստաթղթերի

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 88, 27 ապրիլի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **«Հորիզոն»**, № 33, 17 փետրվարի 1912 թ.:

անհետացման և փչացման դեպքերը: Դրանից հետո ատյանի նիստը վերջանալուն պես կնքվում էր այն սենյակը, ուր գտնվում էին փաստաթղթերը, ուժեղացվել էր այդ սենյակի պահպանությունը, խստիվ արգելվել էր սենյակ մուտքը նույնիսկ ատյանի ամենապատասխանատու պաշտոնյաների համար, և եթե որևէ փաստաթղթի անհետաձգելի կարիք էր զգացվում, ապա դա դատարանին ներկայացնելու համար սենյակ պետք է մտնեին երկու կամ ավելի պատասխանատու պաշտոնյաներ, որպեսզի հնարավոր լիներ մեկը մյուսի նկատմամբ հսկողություն կիրառել: Փաստաթղթերը քննելու ժամանակ ուժեղ հսկողություն էր իրականացվում նաև մեղադրյալների և նրանց պաշտպանների վրա[1]:

Երևան հանված զեղծումների առթիվ քննություն կատարելիս Ալեքսանդրովը ամենից առաջ հարցաքննեց Լրժինին, ինչպես նաև նրա հետ գործակցած թարգմանիչ Նադիրաձեին, դատարանի գլխավոր քարտուղարին և նրա օգնականին: Այդ հարցաքննությունով հետաքրքրվեց արդարադատության նախարար Ի. Գ. Շչեգլովիտովը, որը երկու անգամ իր մոտ էր կանչել Լրժինին:

Առաջին զրույցի ընթացքում Լրժինը նախարարին ծանոթացրել էր քննության մանրամասներին: Միաժամանակ կողմնակի ցուցումներ էր արել «Գործի» նախաքննությանը մասնակցած մի քանի անձնավորությունների վրա: Շչեգլովիտովը մերժեց գրավոր ներկայացրած նրա հրաժարականը, որովհետև հակառակ դեպքում «Գործի» չուրջ կստեղծվեին զանազան ենթադրություններ, ինչը չէր կարող նախարարությանը ձեռնտու լինել: Վերջում նախարարը Լրժինին ասաց, որ Վիլնոյի դատաստանական պալատում նրա պաշտոնավարումն այսուհետ հարմար չէ:

Նախարարի հետ առաջին հանդիպումից հետո Լրժինը չտապ մեկնեց Վիլնո՝ անձնական գործերը կարգավորելու համար, որտեղից վերադարձավ՝ սպասելով իր չուրջը ծավալվող

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 35, 19 փետրվարի 1912 թ.:

իրաղարձությունների հետագա զարգացմանը:

Վիլնոյից վերադառնալուց անմիջապես հետո՝ մարտի 14-ին, արդարադատության նախարարի մոտ հավաքվեցին Լրժինի ակնարկած անձինք, որոնք բոլորը երես առ երես ենթարկվեցին հարցուփորձի, որից հետո նրանցից 6 զեղծարարների, այդ թվում Լրժինի երեք մերձավոր աշխատակիցներին՝ դատաստանական քննիչներ Պլատոնովին ու Նադիրաձեին, ինչպես և դատախազի օգնական, մեղադրական ակտը կազմած Ակակովին[1] մեղադրանք ներկայացվեց անհոգի վերաբերմունքի համար, ինչի պատճառով հնարավոր էին դարձել փաստաթղթերի զեղծումներն ու քերվածքները: Նրանք բոլորը նստեցին մեղադրյալների աթոռին:

Դրանից հետո «Դաշնակցության գործը» խեղաթյուրելու իր «սխրանքների» համար Լրժինը հրաժարական ներկայացրեց «Գործի» գլխավոր քննչի պաշտոնից, և նրա պարտականությունների վարումը հանձնարարվեց սենատի ավագ քարտուղարներ Անդրեևսկուն և Մոլովին: Լրժինը նաև ազատվեց Վիլնոյի դատաստանական պալատի անդամի պաշտոնից[2]: Որպես քավության նոխազ, զեղծարարը կանգնեց դատի ենթարկվելու հեռանկարի առաջ և իր իսկ գործընկերների կողմից հայտարարվեց հոգեկան հիվանդ:

«Այդ բոլորից հետո,- եզրակացնում էր "Речь"-ը,- հնարավոր է, որ տեղի ունենա դատական գործընթացի հետաձգում»[3]:

Լրժինի դատական գործի քննությունը պետք է կատարվեր «Դաշնակցության գործը» վերջանալուց հետո՝ դարձյալ սենատի հատուկ ատյանում: Բայց նրա գործը ձգձգվեց և ի վերջո դադարեցվեց՝ չնայած մարդիկ անկողմնակալ դատ էին պահանջում: Անկախ դրանից՝ Լրժինը մտավ պատմության մեջ: «159-ի գործն» սկսեց զավեշտով անվանվել նաև «Լրժինի գործ»[4]:

---

[1] *Տե՛ս **«Հորիզոն»**, № 71, 7 ապրիլի 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում, № 64, 30 մարտի 1912 թ.:*

[3] ***"Речь"**, 10 февраля 1912 г.*

[4] ***Лев Троцкий**, Сочинения, т. VI, Москва-Ленинград, 1926, с. 485.*

Հարցը հասավ պետական դումա, որտեղ հարցապնդում արվեց կատարված կեղծիքների մասին: Հարցապնդմանը պատասխանելու համար դումա կանչվեց արդարադատության նախարարի տեղակալ Վերյովկինը: Պատգամավորներից ոմանք իրենց ելույթներում առաջարկեցին խստագույն պատժի ենթարկել Լրժինին և նրա գործակիցներին, որոնք իրենց գործողություններով արատավորել են երկրի դատական համակարգը:

Հանդես գալով պատգամավորների առաջարկի դեմ՝ Վերյովկինը պաշտպանության տակ առավ Լրժինին և դումայի ամբիոնից հայտարարեց.

«Դատական քննիչ Լրժինը ... արժանի է ո՛չ թէ իր բարի անուան անպատութեան, ո՛չ թէ դատապարտութեան իր գործունէութեան համար, այլ, ընդհակառակը, ամեն տեսակի բարոյական աջակցութեան: Նա արժանի է բարձր կոչման իր բարձր պաշտօնական արժանիքների, անընկճելի եռանդի, իր տոկունութեան, իր քաղաքացիական արիութեան համար»[1]:

Պարզ դարձավ, որ իշխանությունները արգելափակելու են Լրժինին պատասխանատվության ենթարկելու բոլոր փորձերը: Դա երևաց նաև դումայի 1912 թ. մայիսի 2-ի նիստում արդարադատության նախարարի ունեցած ելույթից: Քննության էր դրված արդարադատության նախարարության ելևմտական տեղեկագիրը, և այդ կապակցությամբ պատգամավոր Մակլակովը հանդես եկավ մի խիստ ճառով ու թվարկեց, թե երկրի արդարադատության գործերում ինչպիսի՜ ահավոր զեղծումներ են տեղի ունենում՝ հիշատակելով Լրժինին և Դաշնակցության դատավարության գործերում հայտնաբերված կեղծիքները: Պատասխանելով Մակլակովին՝ արդարադատության նախարար Շչեգլովիտովը, ի միջի այլոց, անդրադառնում է Լրժինի կեղծիքներին և արդարացնում նրան: Նա ասում է. «... Այդ քննութիւնը մահացու հարուած հասցրեց յեղափոխականների մի դիմակաւորուած ու ճիւղաւորուած ընկերութեան, որ կազմուել էր հայ ազգաբնակչութեան մէջ»[2]:

---

[1] **«Ղարաբաղ»** (Շուշի), № 28, 19 ապրիլի 1912 թ.:

[2] Նույն տեղում, № 34, 10 մայիսի 1912 թ.:

Դատախազի օգնական Ակսակովի ճառով դատարանում վերջացան մեղադրական ճառերը:

1912 թ. մարտի սկզբին ավարտվեց բոլոր մեղադրյալների հարցաքննությունը: Մարտի 8-ին մեղադրական խոսքով հանդես եկավ դատախազ Սերգեևը, որի ճառը տևեց ամբողջ երեք օր, մինչև մարտի 10-ի երեկո: Բուռն ու կատաղի էր դատախազի երկարաչունչ ճառը: Հույժ չափազանցելով գույները՝ նա Դաշնակցությանը ներկայացնում էր իբրև մի հրեշային կազմակերպություն:

Երբ պաշտոնական մեղադրող Սերգեևը ամբիոն բարձրացավ, դահլիճում ամենքը լարված ուշադրությամբ ու անհամբերությամբ սպասում էին, թե նա ի՞նչ պետք է ասեր: Ճառի սկիզբը համեմված էր բազմաթիվ քնարական դարձվածքներով, հաճախ կրոնական մարգանքներով՝ քրիստոնեական պատգամների ցուցադրությամբ: Երբեմն էլ նա փիլիսոփայական կնճիռների լաբիրինթոս էր նետվում, երբ կամենում էր մահու և կյանքի առեղծվածը լուծել[1]...:

Այստեղ մեջբերում ենք այդ ճառից մի քանի հատվածներ, որոնք քաղված են «Դրօշակի» 1912 թ. մարտյան համարից (էջ 51-53):

Դատախազը նախ հարցադրեց և ինքն էլ պատասխանեց, թե ի՞նչ է իրենից ներկայացնում Դաշնակցությունը: Նա իր անհամաձայնությունը հայտնեց փաստաբաններին, որոնք դատավարության ընթացքում իրենց պաշտպանության տակ էին առել այդ կուսակցությանը՝ ամեն կերպ արդարացնելով նրա անցյալն ու ներկան:

Անցնելով բուն խնդրին, դատախազն ասում էր, որ Դաշնակցությունը Ռուսաստանում միշտ եղել է հեղափոխական և հակապետական կուսակցություն, այլ ոչ թե այդպիսին է եղել միայն որոշ շրջանում: Ակնարկելով փաստաբանների «չինծու տեսակետին», նա չեշտում էր, որ այդ կուսակցությունն իր գոյության բոլոր հանգրվաններում իրեն դրսևորել է որպես «չատ

---

[1] ***«Դրօշակ»,*** *№ 3, մարտ, 1912, էջ 52:*

աւելի վտանգաւոր, շատ աւելի անհանդուրժելի, քան որեւէ այլ կուսակցութիւն»: «Ես չգիտեմ ոչ միայն մեր պատմութեան, այլ եւ ընդհանուր համամարդկային պատմութեան մէջ մի կազմակերպութիւն, որը իր մէջ պարունակէր այն աստիճան հակապետական ոյժ եւ այնպիսի թափով ու կատաղութեամբ կռիւ մղէր պետութեան դէմ, ինչպէս սա»[1]: Ավելի պատկերավոր դարձնելու համար իր խոսքը, դատախազը շարունակում էր. «Պարոնե՛ր, երբ մահմեդականները ուխտի են գնում Մեքքա, վերադարձին մենք նրանց չենք ընդունում, եթէ նրանք ժանտախտի վայրերից են գալիս: Եւ սակայն մեզ ասում են, որ այդ յեղափոխական ժանտախտը մեզ մօտ բերողները վտանգաւոր չեն: Ես կասեմ, որ դա շատ աւելի վտանգաւոր է, քան իսկական ժանտախտը»[2]:

Դատախազը փորձում էր վճռականապես հերքել դատի ժամանակ փաստաբանների հիմնավորած այն կարծիքը, որ Կովկասում հայ-թուրքական ընդհարումների ժամանակ տեղի հատկապես զինվորական իշխանությունները, աջակցել են մահմեդականներին և սադրանքներով բորբոքել երկու ժողովուրդների միջև հակամարտության կրակը: «Ծայրահեղ դէպքում,- ասում էր նա,- ես կարող եմ թոյլ տալ, որ եղել է իշխանութեան անգործութիւն, կրաւորականութիւն, բայց պրովոկացիա՝ երբե՛ք: Ենթադրութիւնները վտանգաւոր են. չէ՞ որ ես նոյն իրաւունքով կարող եմ պնդել, որ պատճառներից մէկն էլ Դաշնակցութեան յեղափոխական գործունէութիւնն էր, որ գրգռում էր մահմեդականներին: Եւ շատ նշանակալից է այն հանգամանքը, որ նոյնիսկ Տաճկաստանում, ուր կան շատ քրիստոնեաներ, կոտորածի ենթարկւում են միայն հայերը, չէ՞ որ այդ մի բան նշանակում է...»[3]:

Դատախազն այնուհետ կանգ է առնում Դաշնակցության սոցիալիստ-հեղափոխական գործունեության վրա, դա որակելով որպես Ռուսաստանի պետական կարգը տապալելուն ուղղ-

---

[1] ***«Դրօշակ»,*** *№ 3, մարտ, 1912, էջ 52:*

[2] *Նույն տեղում, էջ 53:*

[3] *Նույն տեղում, էջ 52:*

ված ծրագրային պահանջ: Նա իր վճռական անհամաձայնութիւնն էր հայտնում փաստաբանների այն պնդմանը, թէ սոցիալիզմը Դաշնակցութեան մոտ գոյութիւն ունի որպէս տեսութիւն: «Դա թիւրիմացութիւն է»,- զայրացած չեչտում էր դատախազը[1]:

«Սակայն ամենից զարհուրելին, ամենից անըմբռնելին մեզ համար, որի առաջ դողում է իմ ձայնը, ոչ թէ իբրեւ մեղադրողի, այլ իբրեւ մարդու,- ասում էր դատախազը,- դա Դաշնակցութեան տերրօրական գործունէութիւնն է: Իմ ոյժերից վեր է նորէն կրկնել այդ զոհերի չարանների անունները: Ես կը խնայեմ ձեր լսողութիւնը: Սակայն, չեմ կարող մատնանիշ չանել այն գազանաբարոյ վերաբերմունքը, որ ցոյց էր տրւում դէպի չինովնիկները: Ով որ կը համարձակւէր դիպչել Դաշնակցութեան, ով խուզարկութիւն կատարէր, ձերբակալէր՝ նա դատապարտւած էր անխուսափելի մահւան եւ ինչպիսի՞ մահւան: Այնպիսի տանջանքների, որոնց առջեւ կը սարսափի միջնադարեան ինկվիզիցիան: Կարդացէ՛ք այն թռուցիկը, որ կոչւում է "Приказ русским чиновникам" (Հրաման ռուս պաշտօնեաներին) եւ ձեզ համար ամեն ինչ պարզ կը լինի: Ո՜հ, Աստուած իմ, ի՞նչ սարսափելի կուսակցութիւն եւ ո՞րպիսի չարանիւթ ոյժ ունէր կուտակւած իր մէջ: Լսեցէ՛ք նրա նշանաբանը. «Մա՛հ կամ Ազատութի՛ւն»... Աշխատեցէ՛ք խորասուզւել նրա մտքի մէջ, ըմբռնել նրա իմաստը եւ կը հասկանաք, որ այդ կուսակցութիւնը միջին ճանապարհ չունէր, նա ազատութիւնը հասկանում էր միայն մահի միջոցով... Պէ՛տք է սպանել, պէ՛տք է ոչնչացնել, որպէս զի ինքդ ազատ զգաս քեզ... Եւ նա այդ անում էր: Եթէ ես լինէի արձանագործ, Դաշնակցութիւնը կը պատկերացնէի մի արձանով, որի պատւանդանի վրայ կը փորագրէի այդ արեան բաղանիքի մէջ գալարւող բոլոր զոհերին, աջ կողմը կը կանգնեցնէի Համազասպ Օհանջանեանին, ձախ կողմը՝ Խաժակին, իսկ վերեւը, գագաթին՝ Ահարոնեանին Արծւի ձեւով, որ ծծում է անվերջ հոսող արիւնը (այստեղ դատախազը բերում է Ահարոնեանից մի հատւած)»[2]:

---

[1] ***«Դրօշակ»,*** *№ 3, մարտ, 1912, էջ 53:*

[2] *Նույն տեղում, էջ 53:*

Դատի ընթացքին ամենից առաջ, հասկանալի պատճառներով, հեհհև հետևում էր ողջ գիտակից հայությունը: Ծայր առած հալածանքները մեծ դժգոհություն առաջ բերեցին հայ հասարակության մեջ: Կովկասի հայկական մամուլը բացահայտ զայրույթ էր արտահայտում կատարվող անօրինականությունների դեմ:

Դատախազի հնչեցրած ջղաձիգ մեղադրական խոսքերն ըստ էության կրկնությունը և ուշացած արձագանքն էին ստոլիպինյան ժամանակաշրջանի քաղաքական մթնոլորտի, որը, սակայն, արդեն վարկաբեկվել էր ու դատավարության ընթացքում ժամանակավրեպ դարձել: Լրժինյան անհամար կեղծիքները, որոնց մասին խոսում էր ողջ Ռուսաստանը, չափազանց իջեցրել էին մեղադրական ճառի ազդեցությունը[*]:*

Դատախազը, այնուամենայնիվ, առաջարկեց 15 հոգու անպարտ ճանաչել, իսկ մնացածների հանցանքը հաստատված էր համարում: Նրա անպարտ ճանաչածների թվում էր նաև Հովհ. Թումանյանը:

Դատախազի մեղադրական դաժան խոսքից հետո՝ մարտի 11-ից սկսած, հանդես եկան դատապաշտպանները: Նրանց ճառերն ուղղակի փայլուն էին: Պաշտպանական ճառերը մի ամբողջ շաբաթ տևեցին:

Ամբողջ դատավարության ընթացքում դատապաշտպանների համար չափազանց դժվար էր եղել դրական ավարտի հասցնել իրենց սկսած գործը: Եվ դա հասկանալի է: Դատավարությունը ռուս փաստաբաններին ցույց էր տվել, որ քիչ չեն եղել այն դաշնակցականները, որոնք հափշտակված ռուս սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) ծրագրերով, դոնքիշո-

---

[*] *Դաշնակցական պատմաբաններից Անդրե Ամուրյանը ճիշտ է նկատել, որ դատախազը խուսափում էր գոնե թռուցիկ կերպով արծարծել հայոց եկեղեցական կալվածքների բռնագրավման փաստը, Կովկասում հայ-թաթարական ընդհարումներում ցարական վարչակարգի խաղացած դերը, որովհետև այդ խնդիրների ծալքերը բանալիս ակնհայտ կդառնար ցարիզմի հակաժողովրդական էությունը (**Անդրէ Ամուրեան**, Հայ Դատ: Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, էջ 76):*

տական կռիվ էին հայտարարել ռուսական հզորագույն պետությունի դեմ: Նրանց համար հեշտ չէր եղել պաշտպան կանգնել մի քաղաքական կազմակերպության, որը շատ տարիներ, սկսած անցած դարի 90-ական թվականների կեսերից, պաշտոնապես կռիվ էր հայտարարել իրենց երկրի կառավարությանը: Նմանօրինակ կռիվների պատմությունը ցույց է տալիս, որ այդպիսի տարօրինակ պայքարը ոչ միայն ապարդյուն է, այլև բացարձակ վնասակար: Ակամայից կրկին համոզվում ես, որ գոյության պայքար մղող (հատկապես փոքր) ժողովուրդը կարող է միայն ինքնապաշտպանական կուսակցություններ ունենալ: Այլ ձգտումներով ստեղծված որևէ կուսակցություն ազգի համար ավելորդ չռայլություն է, ուժերի վատնում:

ԴԱՏԱՎՃԻՌԸ: – Վերջապես վրա հասավ դատական գործընթացի վերջին օրը՝ մարտի 20-ը:

Առավոտից դատարանի կողասրահները արտասովոր տեսք էին ընդունել. այնտեղ էին մեծ թվով ոստիկաններ, ժանդարմներ, հետաքրքրվողների խմբեր, ուսանողներ: Նիստերի դահլիճը նույնպես արտակարգ տեսարան էր ներկայացնում: Ներքևում՝ հանդիսականների համար նախատեսված բոլոր տեղերը, բռնել էին 146 մեղադրյալները – հարավային տիպի զանազան հագուստներով մազմզոտ թխահերներ: Դահլիճի առաջամասում տեղավորվել էին 40 դատապաշտպանները, վերնահարկը բռնել էին մեղադրյալների ազգականները: Հասարակությունից չենք էին ներս մտել մուտքի տոմսակ ունեցող շատ սահմանափակ թվով մարդիկ:

Դատավոր Կրավցովը դատարանի վերջին նիստը դռնբաց հայտարարեց: Դահլիճում բոլորը համակ ուշադրություն էին դարձել: Նա հրապարակեց դատավճիռը, որն սկսվում էր հետևյալ խոսքերով. «Ա) Ներքոհիշյալ ամբաստանյալներին մեղավոր ճանաչել այն բանում, որ նրանք 1905-1909 թթ. մասնակցել են «Հայ հեղափոխական դաշնակցություն» անվանումը կրող խմբակցությանը, որի, ինչպես նրանց նախապես հայտնի է եղել, գործունեության նպատակն է եղել՝ բռնի ոտնձգությամբ փոխել Ռուսաստանում հիմնական օրենքներով հաստատված վարչաձևը և դա փոխարինել դաշնային դեմոկրատական հանրապե-

տությամբ, որի մեջ Կովկասը պետք է մտներ որպես այդ հանրապետության մի մաս՝ ինքնուրույն կառավարությամբ...»[1]:

Դատավոր Կրավցովն առաջարկեց դատի բերված 159 մեղադրյալներից անմեղ ճանաչել ոչ թե 15 հոգու, ինչպես հարմար էր գտել դատախազը, այլ 94 ամբաստանյալի, և նրանց բոլորին ազատ արձակել, քանի որ նրանց պատժելու համար որևէ փաստ, որևէ նյութական ապացույց չկար: Բացի այդ, հաշվի էր առնվել նախքան դատը ամբաստանյալների՝ բանտում նստած ժամանակը:*

Առաջինն արդարացվեց «Մշակ» թերթի նախկին աշխատակից Հովհաննես Մեղնիկյանը, որը կրած կտտանքներից խելագարվել էր բանտում:

Արդարացված 94 հոգու մեջ էին կովկասցի երկու միլիոնատերեր՝ Ալեքսանդր Մելիք-Ազարյանը և Գենջ-Օղլուևը, իշխան Հովսեփ Արղությանը, բժիշկ Լևոն Աթաբեկյանը, Մինաս Բերբերյանը, Սիրական Տիգրանյանը, փաստաբան Նիկողայոս Սաթունյանը, նախկին վարդապետ Կորյուն Սահակյանը, Լևոն Աղամալյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Լևոն Թադևոսյանը, Թադևոս Ամիրյանը, Գերասիմ Բալայանը, լուսանկարիչ Իսահակ Մելիքյանը և այլք՝ ուսուցիչներ, վաճառականներ, արհեստավորներ[2]: Նրանք համարյա ամբողջ ռուսահայ մտավորականության և առևտրա-արդյունաբերական կյանքի զարկերակն էին, որոնք 3-4 տարի տառապել էին բանտերի չորս պատերից ներս, տվայտել նախաքննության ճիրաններում՝ բոլորովին անմեղ ու անտեղի:

Արդարացվածներից մի քանիսը, ինչպես օրինակ՝ միանգամայն թյուրիմացաբար ձերբակալված Դոլգոջիևը նախնական բանտարկության մեջ մնացել էր 4 տարի[1]: Դատավճռին կցված

---

[1] *"Дело об Армянской революционной партии Дашнакцутюн"*, т. CXXXIV, с. 3.

* *Մի այլ աղբյուրում՝ 95 ամբաստանյալի (տե՛ս* ***«Ախուրեան»****, № 19, 24 մարտի 1912 թ.):*

[2] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 62, 22 մարտի 1912 թ.,* ***«Ասպարէզ»****, № 119, 31 մայիսի 1912 թ.,* ***«Արագած»*** *(Ալեքսանդրապոլ), № 23, 25 մարտի 1912 թ.:*

159 մեղադրյալների ընդհանուր ցուցակի № 76-ի տակ նշված էր բանաստեղծի անունը՝ «Հովհաննես Տեր-Թադևոսյանց»[2], որը նույնպես անպարտ էր ճանաչվում:

Արդարացված 94 հոգուց բացի, 12 հոգի ևս բանտից արձակվեց՝ նախնական բանտարգելությունը հաշվի առնելու պատճառով:

Մեղավոր ճանաչվեց 52 հոգի, որից երկուսը՝ Սարբաղ Խեչոն և Զինչինյանը, մահացել էին՝ չդիմանալով բանտի անմարդկային պայմաններին:

Չորս հոգի՝ բժիշկ Համազասպ Օհանջանյանը, ուսուցիչ Սարգիս Մանասյանը, պարսկահպատակ Հովհաննես Ղազարյանը և Արշակ Մուրադովը, հանցավոր ճանաչվեցին Ռուսական կայսրության քրեական օրենսգրքի 102-րդ հոդվածի հիման վրա: Դատարանը նրանց զրկեց սեփականության բոլոր իրավունքներից և դատապարտեց սիբիրյան տաժանակիր աշխատանքի՝ Ս. Մանասյանին՝ 6, մյուս երեքին՝ 4-ական տարով[3]: Դա դատարանի տված ամենախիստ պատիժն էր*:

Սիբիր և այլուր աքսորի դատապարտվեց 25 հոգի: Դրանց

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 64, 29 մարտի 1912 թ.:

[2] Տե՛ս "Дело об Армянской революционной партии Дашнакцутюн", т. CXXXIV, с. 3.

[3] Տե՛ս **«Հորիզոն»**, № 61, 22 մարտի 1912 թ.:

* Ռուսաստանի օրենսդրությամբ՝ տաժանակիր աշխատանքի դատապարտվածները զրկվում էին բոլոր իրավունքներից. նրանց հագցնում էին կոշտ գործվածքից կարված հատուկ զգեստներ, ոտքերն արկանում ծանր շղթաներով: Կառավարության աչքում նրանք կորցնում էին «մարդ» կոչվելու իրավունքը, պաշտոնյաները պարտավոր էին նրանց դիմել «դու»-ով, այլ ոչ թե «դուք»-ով: Դատապարտվածի ոտքերին շղթաները մնում էին որոշված պատժի ժամկետի մոտ կեսի ընթացքում, իհարկե, եթե նա իրեն «լավ» էր դրսևորել: Տաժանակիր աշխատանքով դատապարտվածների բանտերը գտնվում էին Սիբիրում, որոնցից հատկապես տխուր հռչակ էին ձեռք բերել Ալեքսանդրովսկի, Ակտյուբինսկի, Ներչինսկի և Նիկոլաևսկի տանջարան-բանտերը: Տաժանակիրների բանտերում (նաև սովորական բանտերից շատերում) պայմաններն անտանելի էին: Զնչին պատճառներով՝ տաժանակիրներին ծեծում էին մտրակներով, մեկ-երկու շաբաթով նստեցնում **կարցերում** (չափա-

թվում էին Աղասի Դավթյանը, Արշակ Մեհրաբյանը, Բագրատ Մատինյանը, Համազասպ Սրվանձտյանցը, Մակիչ Խոջայանը, Ալեքսանդր Մաչուրյանը, Աչոտ քհն. Տեր-Իսրայելյանը, Անդրեաս Ծատուրյանը, Կամսարական Տեր-Մարտիրոսյանը և այլոք[1]:

Մնացած մեղավոր ճանաչվածները բանտարկության դատապարտվեցին երեք ամսից մինչև երկու տարի ժամկետով: Դրանց մեջ էին Մնացական Նալբանդյանը, Պողոս Զուբարը, Դավիթ Զավրիյանը և ուրիշներ[2]: Սրանց մի մասը դատապարտվեց «գաղտնի ընկերության պատկանելու» և «ահաբեկչական ակտեր կատարելու», մյուսները՝ «պարտակելու ու չհաղորդելու» մեղադրանքներով: Դրանց թվում էր միլիոնատեր Շապոչնիկյանը, որը Մելիք-Ազարյանի և Գենջ-Օղլուևի հետ միասին մեղադրվել էր Դաշնակցությանը դրամով օգնելու համար[3]:

Վերջում դատավոր Կրավցովը հայտարարեց, որ դատավճի-

դանց փոքր, խոնավ ու մութ սենյակ, ուր անգամ մարմնի երկարությամբ պառկելու հնարավորություն չկա), տալիս միայն սև հաց ու ջուր: Տաժանակիրն իրավունք ուներ հարազատներին նամակ գրել (կամ ստանալ) ամիսը միայն մեկ անգամ և այն էլ՝ սովորական փոստային բացիկի չափից ոչ ավելի: Շղթաները հանելուց հետո տաժանակրության դատապարտվածին աշխատեցնում էին գլխավորապես ածխահանքերում, նաև ճանապարհների վրա: Դատարանով ցմահ աքսորի դատապարտվածը սովորաբար իր պատիժը կրում էր 10 տարի, որից հետո կարող էր ստանալ «գյուղացի» անվանում և որոշ իրավունքներ: Սրանք աքսորվում էին Սիբիրի, Իրկուտսկի, Յակուտսկի և Ենիսեյի նահանգներ, ուր ձմեռը տևում էր 7-8 ամիս, պարտավոր էին հագնել միայն բանտարկյալի զգեստ, ապրում էին տունգուսների և յակուտների՝ իրարից 300-500 կմ հեռու գտնվող գյուղերում, զբաղվում որսորդությամբ ու ձկնորսությամբ: Այդ վայրեր փոստը ստացվում էր տարեկան 1-2 անգամ միայն:

[1] Տե՛ս **«Ախուրեան»**, № 19, 24 մարտի 1912 թ.: Աքսորվածների լրիվ ցուցակը տե՛ս **«Հորիզոն»**, № 61, 22 մարտի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ախուրեան»**, № 19, 24 մարտի 1912 թ.: Բանտարգելության դատապարտվածների ամբողջական ցուցակը տե՛ս **«Հորիզոն»**, № 61, 22 մարտի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Հորիզոն»**, № 65, 29 մարտի 1912 թ. (դատապարտված անձերի լրիվ ցուցակը տե՛ս **«Ախուրեան»**, № 19, 24 մարտի 1912 թ.):

որը վերջնական ձևակերպումներով հայտարարվելու է ապրիլի 10-ին:

Նույն օրն ևեթ դատավճռի պատճենը չտապ ուղարկվեց արդարադատության նախարարին:

Դատավճիռը կարդալուց հետո բոլոր արդարացվածները ազատ արձակվեցին հենց դատարանի դահլիճից[1]:

Երբ արդարացվածները դուրս էին գալիս դատարանի շենքից, ուսանողների մի խումբ, մոտ 200 հոգի, Շպալերնայա փողոցի կողմից մուտքի մոտ հանդիսավոր հանդիպում կատարեց նրանց:

Դրսում հավաքվածներից մեկը՝ Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտի վերջին կուրսի ուսանող, դաշնակցական նշանավոր գործիչ Եփրեմ Սարգսյանը, որը նույնպես բազմության մեջ սպասում էր դատավճռի արդյունքին, հետագայում վերհիշել է.

«Վերջապէս, ձգտուած դրութիւնը պարզւում է: Յանկարծ դատարանի փակ դուռը բացուած է. դուրս է ընկնում մի երկարահասակ, ճերմակ մօրուքով մարդ, մեր Հիւսիսային Կովկասի ընկերներից, որը երեխայի նման ցատկոտելով՝ վազում է մեզ մօտ եւ բացականչում թեւերը թափահարելով.

«Աչքերդ լոյս, աչքերդ լոյս, ընկերնե՛ր, ամենից ծանր պատիժը 6 տարի աքսոր է, շատ քչերն են պատժուած ու աւելի թեթեւ»:

Լուրը որքան չափազանց ուրախալի ու ցանկալի էր, բայց այնքան անսպասելի էր միաժամանակ, որ առաջին անգամին չհաւատացինք եւ ապշած միմեանց դէմքին էինք նայում, մինչեւ որ դուրս եկան ուրիշները եւ նոյնը կրկնեցին: Անխառն ցնծութեան եւ ուրախութեան հովը փչեց անցաւ բոլորիս վրայ: Երանի՜ թէ այս լուրը հէնց այս րոպէին հասնէր ամբողջ հայ ժողովրդին, որ տարիներ շարունակ տուայտում է ռուս բռնակալութեան ստեղծած դժոխային պայմաններում»[2]:

---

[1] *Արդարացված անձերի լիակատար ցուցակը տե՛ս* ***«Հորիզոն»****, № 61, 22 մարտի 1912 թ.:*

[2] ***«Հայրենիք»****, № 9, սեպտեմբեր, 1966, էջ 44-45:*

Դատական գործընթացի ավարտի հաջորդ օրը՝ մարտի 21-ին, երեկոյան, Պետերբուրգի հայտնի Դոնոնի հյուրանոցի ռեստորանում արդարացված մեղադրյալների հարազատները հանդիսավոր ճաշկերույթ կազմակերպեցին, որին ներկա էին արդարացվածների մեծ մասը իրենց կանանց ու երեխաների հետ և դատապաշտպաններից 35 հոգի: Ճաշին ներկա էին նաև փորձագետներ Զախարինը, Պոպովիցկին և Տեր-Ներսեսովը, որոնց վիճակվել էր այնքան մեծ դեր կատարել դատական փաստաթղթերում եղած կեղծիքներն ու խեղաթյուրումները բացահայտելու գործում, և որոնց սրահը դիմավորեց բուռն ծափերով: Ճառեր ասացին երդվյալ հավատարմատարներ Սոկոլովը, Կարյակինը, Գրուզենբերգը և Վոլկենշտեյնը: Մեծ ճառ արտասանեց II պետական դումայի անդամ եղած Սիրական Տիգրանյանը, որը դատապաշտպաններին շնորհակալություն հայտնեց, ասելով, որ նրանք ներկայացնում են առաջավոր, մարդասիրական Ռուսաստանը: Հովհաննես Թումանյանը հայերեն կարդաց Օսկար Գրուզենբերգին նվիրված «Երկու հոգի» վերնագրով՝ բանտում գրած բանաստեղծությունը, որը երախտիքի խոսք էր իր տաղանդաշատ դատապաշտպանին: Հենց այդտեղ՝ ստեղծագործությունը թարգմանեց հայկական թերթի դատված և արդարացված խմբագիր Մինաս Բերբերյանը[1]:

Դատական գործընթացը վերջանալու օրը՝ 1912 թ. մարտի 20-ի ուշ երեկոյան, Թումանյանների ընտանիքը Թիֆլիսում հեռագիր ստացավ. «Հայրիկին արդարացրել են և ազատ է արդեն»[2]:

Դատավարությունը վերջանալուց հետո Թումանյանը երկու և կես շաբաթ մնաց Պետերբուրգում: Նա այցելեց բարեկամների ու ծանոթների, հանդիպումներ ունեցավ Նիկողայոս Մառի, Վարդգես Սուրենյանցի, գրող Կորոլենկոյի և ուրիշների հետ, հաստատեց նոր ծանոթություններ, որի համար շատ գոհ էր: Հաճախ էր լինում հնագրավաճառների (բուկինիստների) խա-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 62, 22 մարտի 1912 թ., **«Հորիզոն»**, № 63, 29 մարտի 1912 թ.:

[2] **Նվարդ Թումանյան,** Հուշեր և գրույցներ, էջ 96:

նութներում, ձեռք բերում իրեն հետաքրքրող գրականություն:

1912 թ. ապրիլի 5-ին Պետերբուրգից Թիֆլիս, մորը՝ Օլգային, գրած նամակում Մուշեղը, նշելով, որ ազատության մեջ «հայրիկը... չատ է ոգևորվել», միաժամանակ հաղորդում էր, որ ինքը, Աշխենը և Գևորգը «ամեն օր մի տեղ են լինում՝ թատրոն, ցուցահանդես, գրական-մանկական հանդես, կոնցերտներ, այցելություններ և այլն: Ամբողջ կոլոնիայի (տեղի հայկական գաղութի:- Հ. Ս.) հետ բարեկամացավ, որոնց բոլորի հետ դոստացավ: Անցյալ օրը մի ընթրիք էին սարքել հայկական ակումբում հայրիկի պատվին՝ մեծ քեֆ, ու տուն է եկել համարյա թե ծեգին, իսկ մյուս օրը հրավիրված էր Էստեղի հայոց դպրոցի մանկական հանդեսին...»[1]:

Ապրիլի 8-ին (կամ 9-ին) Հովհ. Թումանյանը դստեր՝ Աշխենի և փեսայի՝ Գևորգ Խատիսյանի հետ միասին Պետերբուրգից ուղևորվեց Մոսկվա, որտեղ մնացին մի քանի օր: Այստեղ նույնպես ջերմ հանդիպումներ եղան: Նրան շրջապատել էին Ալեքսանդր Ծատուրյանը, Վահան Տերյանը, Պողոս Մակինցյանը և ուրիշներ:

Հրաժեշտ տալով Մոսկվային՝ Թումանյանը Աշխենի ու Գևորգի հետ մեկնեց Կովկաս: 1912 թ. ապրիլի 19-ին նրանք Թիֆլիսում էին:

Սիրելի բանաստեղծին դիմավորելու համար հսկայական բազմություն էր հավաքվել Թիֆլիսի երկաթուղային կայարանում: Թումանյանը նորից հարազատների ու բարեկամների գրկում էր:

Արտաքուստ թվում էր, թե ամեն ինչ բարեհաջող ընթացք է ունեցել: Բայց բանտարկություններն ու պետերբուրգյան դատավարությունը չատ բացասաբար էին անդրադարձել Թումանյանի առողջական վիճակի և հոգեկան ներաշխարհի վրա: Կովկաս վերադառնալուց հետո նա դառնացած սրտով գրում էր. «Վերջապէս, էն էլ պէտք է ասեմ, որ թէեւ դուրսը չըրթփըրթում եմ, բայց վաղուց է, որ ներսից չատ է սիրտս կոտրած, չատ եմ

---

[1] **Նվարդ Թումանյան,** Հուշեր և գրույցներ, էջ 96:

յոգնած, ու չատ եմ զզուած մեր կեանքից ու մեր աշխարհքից»[1]:

Գրավի միջոցով մինչև դատավարությունն ազատ արձակվածների, այդ թվում Թումանյանի ուսերին էր ընկած գումարները վերադարձնելու մեծ հոգսը:

1913 թ. մարտին Հովհ. Թումանյանը Լոզան՝ Ավետիս Ահարոնյանին գրում էր.*

«Աւետիս ջան, պէտք է իմանաս, որ դատից վերադարձայ թէ չէ, բարեւի հետ առաջս դրին մի քանի հազարի պարտամուրհակ, որ նախորդների հետ միացած – մինչեւ օրս սաստիկ ճնչում են ինձ: Զէ՞ որ միայն իմ վկաներն էին ամբողջ գործում, որ իմ հաշւով եկան ու ամսով մնացին Պ-բուրգ: Էստեղ էլ այժմ տրամադրութիւններն էնքան են փոխուել, որ դժ[ու]ար, գրեթէ անկարելի եղաւ անել, ինչ որ սիրտս կ'ուզէր, ու մնացի ձեռնթափ, սրտակրտոր...

*Էլ էն չեմ ասում, թէ ինքս ինչ եմ քաշել, եւ հէնց էս բոպէին ինչ կայ, ինչ չրկայ. ի հարկէ չեմ ասել, եւ չեմ էլ ասելու, եւ ամէնքն էլ էն կարծիքին են, թէ ես ապահով ու երջանիկ մարդ եմ**: Եւ թող էդպես էլ կարծեն ու հէնց էդպէս եմ գոնէ սրտով»[2]:*

Պետք է պատկերացնել, թե որքան ծանր էր չրջապատի

---

[1] ***«Հայրենիք»**, № 1 (276), Հունվար, 1949, էջ 14:*

* *Հովհ. Թումանյանի՝ Ավ. Ահարոնյանի արխիվում պահպանվող այս նամակի վրա տարեթիվ և ամսաթիվ չկան, բայց ծրարի վրայի փոստային կնիքները ցույց են տալիս, որ նամակը փոստին է հանձնված 1914 թ. մարտի 31-ին և Լոզան է հասել ապրիլի 20-ին:*

** *Վարդգես Ահարոնյանը Թումանյանի ընտանիքի նյութական պայմանների մասին գրել է. «Թէեւ նիւթական համեստ միջոցների տէր էր Յովհ. Թումանեանը [բայց ցույց էր տալիս, թէ] ապրում է հարուստ իշխանի նման: Առատաձեռն եւ անչափ հիւրասէր մարդ էր նա, որի դուռն ու սեղանը միշտ բաց էին իր անթիւ ընկերների եւ բարեկամների առջեւ: Եւ դրսում այն տպաւորութիւնը կարող էր ստացուել, որ նա հարուստ կամ գէթ բարեկեցիկ վիճակ ունեցող մէկն է: Մինչդեռ միայն ինքը՝ Յովհ. Թումանեանը եւ թերեւս սակաւաթիւ մտերիմները գիտէին, թէ ինչ դժուարութիւններով էր պահում նա իր բազմանդամ ընտանիքը – 12 չունչ – եւ հիւրասէր, առատ սեղանը» (**«Հայրենիք»**, № 1 (276), Հունվար, 1949, էջ 14):*

[2] ***«Հայրենիք»**, № 1 (276), Հունվար, 1949, էջ 19:*

մթնոլորտը, որպեսզի Թումանյանի նման կենսասեր ու լավատես մարդը այդպիսի տողեր գրեր:

Թումանյանի այդ օրերի ֆիզիկական ու հոգեկան վիճակն այսպես է ներկայացրել Նվարդ Թումանյանը: «Հայրիկը քառասուներեք տարեկան էր, բայց դեմքի արտահայտությունը և գույնը փոխված էր արդեն: Առաջվա զվարթ խաղը, մաշկի վարդագույն առողջ գույնը չկար այլևս: Քայլվածքն էլ փոխվել էր, մեջքը՝ կռացել: Այդ բոլորը երևի բանտում երկար ամիսներ նստելու և ապա դատավարության հետ կապված ապրումների ու հուզումների հետևանքն էր»[1]:

Առջևում Հովհաննես Թումանյանի կյանքի բուռն իրադարձություններով լի տարիներն էին՝ ստեղծագործական երկունքի նոր պոռթկումներով, ժողովրդանպաստ բազում գործերով, նաև՝ ազգային մեծագույն դժբախտությունների ականատեսը լինելով:

Ինչպես վերը նշվեց, իր եզրափակիչ նիստում դատական ատյանը որոշել էր «Դաշնակցության գործի» վերաբերյալ դատավճիռը վերջնական ձևակերպումներով հայտարարել ապրիլի 10-ին:

Ի կատարումն այդ որոշման, 1912 թ. ապրիլի 10-ի ցերեկվա ժամը 2-ին դատարանի շենքում հայտարարվեց դատավճռի վերջնական շարադրանքը:

Դատավճիռը լսելու համար դահլիճ էին բերվել կալանավորման մեջ գտնվող դատապարտյալներին, եկել էին արդարացված ամբաստանյալներից շատերը, ներկա էին համարյա բոլոր դատապաշտպանները:

Տպագրական 50 երեսից կազմած դատավճիռը մանրամասն հիմնավորում էր յուրաքանչյուր դատապարտյալի հանցանքը: Սենատը, ելնելով բացառապես վկաների ցուցմունքներից, իր վճիռը հիմնավորել էր դատական քննության այս կամ այն հանգամանքներից բխած տրամաբանական եզրակացություններով: Դատավճռի շարադրանքում աննշան էին փաստաթղթերի վկայակոչումները, իսկ այն փաստաթղթերը, որոնք կեղծված էին եղել, հիմնավորումներում բոլորովին չէին հիշատակվում: Բոլոր

---

[1] **Նվարդ Թումանյան**, Հուշեր և գրություններ, էջ 14:

դատապարտյալների գործերում տեղ էին գտել հանցանքը մեղմացնող հանգամանքներ:

Սենատոր Պոլլանի կողմից դատավճռի ընթերցումը տևեց մեկ ու կես ժամ: Վերջում սենատորը մանրամասնեց վճռաբեկ գանգատ տալու կարգը, բացատրելով, որ գանգատարկել կարելի է միայն այն դեպքում, եթե դատապարտյալի մեղավորությունը որոշելիս և պատիժ նշանակելիս նկատվել են օրենքի խախտումներ: Նա դատապարտյալների ուշադրությունը առանձնապես հրավիրեց այն բանի վրա, որ բացի վճռաբեկ գանգատից, նրանք իրավունք ունեն ներում ստանալու խնդրանքով դիմելու նաև ցարին:

Նիստը փակվելու միջոցին երդվյալ հավատարմատար Ն. Սոկոլովը բոլոր դատապարտյալների անունից խնդրեց արձանագրության մեջ մտցնել կետ, որով պաշտպաններին կհանձնարարվեր, թե դատապարտյալներն ինչպես պետք է գանգատներ ներկայացնեն իրենց գործերը վերաքննելու համար՝ նկատի ունենալով երևան եկած նոր հանգամանքները[1]:

«Դաշնակցության գործի» դատավճիռը վերջնական ձևակերպումներով հայտարարվելուց հետո, համաձայն կարգի, վճռաբեկ գանգատ ներկայացրին դատապարտյալներից 12 հոգի: Նրանցից մեկը՝ Անդրեաս Ծատուրյանը, իր գանգատը հետ էր վերցրել՝ Նիկոլայ II ցարի անունով ներման խնդրագիր տալու պատճառով: Նրա փոխարեն գանգատներին միացան դատապարտվածներից դարձյալ 5 հոգի և գանգատավորների թիվը հասավ 16-ի: Դրանք էին՝ Անիսոնյանը, Կորյուն Սահակյանը, Այվազյանը, Տեր-Ավետիքյանը, Շարոյանցը, միլիոնատեր Շապոչնիկյանը, Զավրիյանը, Օհանջանյանը, Եղիգարյանը, Նալբանդյանը, Մատինյանը, Մեհրաբյանը, Ղազարյանը, Մանասյանը, Մուրադյանը և Սրվանձտյանցը[2]:

Վճռաբեկ դեպարտամենտի ատյանի նիստը տեղի ունեցավ 1912 թ. մայիսի 21-ին: Նախագահում էր սենատոր Ժելիխովսկին: Գործի մասին զեկուցեց սենատոր Ջերիչևը, եզրակացու-

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 79, 18 ապրիլի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 108, 23 մայիսի 1912 թ.:

թյուն էր տալիս ավագ դատախազ Ռեյնկեն: Գանգատողներին պաշտպանում էին երդվյալ հավատարմատարներ Վոլկենշտեյնը, Գոլդշտեյնը, Կուլիշերը, Զարուդնին, Սոկոլովը, Պերևերզևը և Բուդաղյանը[1]:

Դատապարտյալներն իրենց բողոքի դիմումները հիմնավորել էին գլխավորապես այն բանով, որ չի կարելի դատապարտել մեկին, եթե նախնական քննության ժամանակ քննիչները կատարել են փաստաթղթերի կեղծումներ, որի մեջ համոզվել է ոչ միայն դատարանը, այլև մեղադրող կողմը: Ելնելով դրանից՝ նրանք պահանջում էին կասեցնել իրենց դատավճիռները:

Առաջին գիլդիայի վաճառական Եղիգարյանը, «Յառաջ» թերթի նախկին խմբագիր Ավետիք Սահակյանը և ուրիշներ գանգատվում էին, որ դատարանը բավականաչափ ուշադրություն չի դարձրել մի շատ կարևոր հանգամանքի վրա, այն է՝ թե Դաշնակցության շարքերում գտնված ժամանակ այս կամ այն դատապարտյալին ներկայացրած մեղադրանքը այդ կուսակցության գործունեության ո՛ր շրջանին է վերաբերում: Մինչև 1907 թ., ասում էին նրանք, Դաշնակցությունը գործում էր միայն Թուրքիայում և Ռուսաստանում գոյություն ունեցող կարգերը տապալելու խնդիր չէր ունեցել, ինչպես Լրժինը և նրան ենթակա քննիչները փորձել էին ապացուցել նախաքննության ժամանակ: Դատապարտյալները ցավ էին հայտնում, որ դատարանը չի պարզել, թե Դաշնակցության մոտ հայտնաբերված զենքը նախատեսված էր ռուսական կառավարության դեմ ապստամբություն բարձրացնելո՞ւ, թե՞ Թուրքահայաստան ուղարկելու համար կամ անդրկովկասյան թուրքերի դեմ գործածելու, այսինքն՝ ինքնապաշտպանության համար[2]:

Վճռաբեկ ատյանին գանգատելը սպասված արդյունքը չտվեց: Սենատի գլխավոր դատախազը պահանջեց գանգատներն անհետևանք թողնել, բայց սենատը, խորհրդակցելով երկու ժամ, արդարացրեց պետական դումայի նախկին անդամ Ստեփան Տեր-Ավետիքյանին, իսկ Այվազյանի երեք տարվա

---

[1] Տե՛ս, **«Հորիզոն»**, № 112, 29 մայիսի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

բանտարկությունը փոխարինեց երկու ամսվա բանտարկությամբ: Մնացած գանգատները թողնվեցին առանց հետևանքի, այսինքն՝ պատիժները մնացին ուժի մեջ[1]:

Իսկ դատավճիռն ինչպե՞ս ընդունեցին ցարական պատժից խուսափած և արտասահման անցած հայ մտավորականները, որոնց օտար ափերում վիճակված էր ամեն տեսակի զրկանքներ կրել: Նրանց մեծ մասը տառապում էր հայրենիքի կարոտից, չէր կորցնում մի օր հարազատ եզերք վերադառնալու հույսը: Միաժամանակ նրանք լավ գիտեին, որ դա առայժմ անհնարին է, քանի որ դատարանը հատուկ հոդվածով չէր անդրադարձել դատավարությունից փախած անձանց խնդրին, այլ նրանց գործերն առանձնացրել էր հատուկ քննության համար: Իսկ դա նշանակում էր, որ նրանցից չէր հանվել մեղադրանքը, ուստի բացառված չէր, որ ռուսական սահմանից ներս հայտնվելու դեպքում ենթարկվելու էին դատական պատասխանատվության:

1912 թ. մարտին Ավետիք Իսահակյանը Փարիզում գտնվող Ավետիս Ահարոնյանին Կ. Պոլսից գրում էր.

«Առաջին երկու օրը չափազանց ուրախ էի, բայց այսօր զարթնեցի չա՜ռ տխրած: Պարզ տեսնում եմ, որ զրո՛ւր, զրո՛ւր տեղը փախանք. մենք բոլորս կա՛մ ազատուած կլինէինք, կա՛մ չա՜ռ չնչին պատիժներով՝ նոյնպէս ազատուած... Եւ խկապէս հիմա ամենախիստ պատիժը փախչողներիս վիճակուեց: Վերջացաւ, կարելի է ասել մեր ընկերների պատիժը եւ սկսում է մերը»[2]: Իսահակյանը հույս էր փայփայում, թե միգուցե ցարական կառավարությունը ընդհանուր ներման ազդարարություն անի: «Յոյսերս մնացին 1913 թուի վրայ,- շարունակում էր նա,- բայց չեմ յուսար, թէ այնպիսի մեծ, ընդարձակ ներումն լինի, որ փոուի ե՛ւ մեզ վրայ, իսկ այդպիսին [եթէ] չեղաւ, ուղղակի անասելի յիմար կացութեան մէջ ընկանք մենք. ապրել Թուրքիայում համազօր է Սիբիրի աքսորական լինելու հետ: Վերջապէս չեմ ուզում այդ մասին խօսել»[3]:

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 108, 23 մայիսի 1912 թ.:

[2] **«Հայրենիք»**, № 4 (279), ապրիլ, 1949, էջ 43:

[3] Նույն տեղում:

Նույն մտահոգություններով Իսահակյանը, արդեն Ժնևից, 1913 թ. հունվարի 30-ին Ա.Հարոնյանին գրում էր.

«Ի՞նչ յոյսեր ունիք առաջիկայ ամնիստիայի վերաբերմամբ: Հաւատալ[ս] չի գալիս, ինչ որ ասում են. «Ռեչ»-ի* մէջ կար մի պրոէկտ, բայց նրանից ես այն հասկացայ, որ մեզ վրայ չի տարածուելու: Կովկասից գրում են, որ շատ մեծ ամնիստիա է լինելու: Ես յոյսեր չեմ կապում, որ յետոյ դառնապէս չհիասթափուեմ. կը լինի՝ աւելի լաւ. արդէն հաշտուել եմ վիճակիս հետ»[1]:

1913 թ. ապրիլի 23-ին Ժնևից այս անգամ Սիմոն Վրացյանին գրած նամակում Ավ. Իսահակյանը հայտնում էր իր տնտեսական ծանր դրության մասին: «Ես չգիտեմ ինչ պիտի անեմ, ուր գնամ, ուր մնամ: ... Տարիներս անցնում են անպէտք, անօգուտ: ... Ե՛կ ու մի՛ նզովիր այսպիսի կեանքը... Դե՛հ, քար եղի՛ր, որ դիմանաս...»[2]:

Ցյուրիխից Վրացյանին ուղարկած մի ուրիշ նամակով (1913 թ. հոկտեմբերի 19) Իսահակյանը կրկին բողոքում էր իր դժվարին կյանքից: «Կաչիս քարչ կտամ»[3],- դառնացած տեղեկացնում էր նա:

Արտասահմանում գտնվող մեղադրյալների ներման հավանականության մասին տեղյակ էր նաև Վառնայում հիմնավորված Անդրանիկը, որի անունը բազմիցս չոչափվել էր Պետերբուրգի դատավարության ընթացքում:

1913 թ. սեպտեմբերի 21-ին Անդրանիկը Վառնայից Լոզան՝ Ավ. Ա.Հարոնյանին գրում էր.

«Ի՞նչ խորհուրդ կուտաս ինձ, ես մտադիր եմ ոտքս բուժուելէն վերջ Կովկաս երթալ, եթէ խորհուրդ տաս: Արդեօք կառավարութիւն[ն] ինձ կը ձերբակալէ՞. ես պիտի գնամ իմ անձնականիս համար, բայց եթէ դուն բարոյական աջակցութիւն չզլանաս»[4]:

---

* Ռուսական կարևոր թերթերից մեկը:

[1] **«Հայրենիք»,** № 4 (279), ապրիլ, 1949, էջ 45:

[2] **Սիմոն Վրացեան**, Հին թղթեր նոր պատմութեան համար, Պէյրութ, 1962, էջ 341-342:

[3] Նույն տեղում:

[4] **«Հայրենիք»,** № 1 (276), հունվար, 1949, էջ 19:

Ինչպես տեսանք, Դաշնակցության դատական գործը սպասածից հաջող ելք ունեցավ: Պատիժներն այնպես խիստ չէին, ինչպես սպասվում էր, դրանք բնավ համեմատելի չէին Լըժինի լեռնակուտակ ամբաստանագրերի և դատախազի ճառերի կոպտության հետ:

Ավ. Իսահակյանի ընորոշմամբ՝ «Դատը անսպասելի, անբեւակայելի կերպով վերջացաւ. ուղղակի անամպ երկնքից կայծակ. տարիների մէջ հաւաքուած, խտացրած ստութիւնները, սարսափները, պրովոկացիաները վիժեցին, սարը մուկ ծնեց»[1]:

Իր հերթին, Միքայել Վարանդյանն իրեն հատուկ ճոճռանսնապարծական ոճով գրում էր. «Վարագոյրն իջաւ Գողգոթայի այդ յուզումնալից դրուագին վրայ...: Ոչինչ չչահեցաւ Պետերբուրգի կամարիլլան (պալատական խմբակը:- Հ. Ս.): Լոկ ամօթանք ու նուաստացում: Հայ ժողովուրդի արդար դատը չմարեցաւ: Ընդհակառակը, նոր փայլ ու հմայք ստացաւ: Հ. Յ. Դաշնակցութիւնը չքայքայուեցաւ, չթուլացաւ: Ընդհակառակն, այդ ամբողջ դատավարութիւնը երկու ամիս շարունակ, աշխարհին մեծ բեմին վրայ, իր արտակարգ հանդիսութեամբ նոր, թարմ սնունդ բերաւ Հայ Մարտական կազմակերպութեան անունին ու հռչակին: Հայութեան թշնամիները ուզեցին մի անգամ ընդ միշտ խորտակել անոր դիմադրական կորովը, բայց հայ երիտասարդ, գաղափարական տարրերը այնուհետեւ աւելի ամուր փարեցան կուսակցութեան դրօշին եւ քալեցին դէպի նոր պայքարներ ու Գողգոթաներ՝ իրենց հալածական ժողովուրդի սրբազան իրաւունքներուն համար»[2]:

Հայկական հասարակությունը դատավճիռը միատեսակ չընդունեց:

Գերակշիռ տեսակետն այն էր, որ դատավարության չնորհիվ 1) Բազմաթիվ հարգելի և անմեղ անձինք, որոնք զուր տեղը ընկել էին ամբաստանության տակ և տարիներ շարունակ տա-

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 4 (279), ապրիլ, 1949, էջ 43:*

[2] ***Միքայէլ Վարանդեան****, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 132:*

ռապում էին տերության անխիղճ պաշտոնյաների երեսից, վերջապես գտան իրենց ազատությունն ու անդորրությունը, 2) Կառավարչական և դատաստանական բարձր շրջանները համոզվեցին, թե որքան անիրավացի, անարդար և անտրամաբանական էր ռուս սևհարյուրյակային հակահայկական ուժերի ձգտումը՝ ամբողջ հայ ժողովրդին վերագրել այն բոլոր մեղքերը, ինչ նախօրոք ներկայացվել էին որոշակի քաղաքական կազմակերպության:

Պահպանողականները նույնպես համարում էին, որ Դաշնակցության դատավճիռը չատ մեղմ է, բայց դա համարում էին ոչ թե հաջողություն հայության համար, այլ՝ այդ կուսակցության կատարելիք «նոր ոճրագործությունների» սկիզբ: «Արօր» պարբերականը դատապարտված և պատժից ազատված դաշնակցական գործիչներին համեմատում էր «սովորական, հասարակ քրէական յանցաւորների» հետ և սխալ էր համարում դատարանի մեղմ վճիռները[1]:

Պետերբուրգում «Դաշնակցության գործի» քննությունից հետո եկած ամիսներին Թիֆլիսում և Անդրկովկասի տարբեր վայրերում ևս տեղի ունեցան դաշնակցականների դատավարություններ[2]: Այսպես՝ 1912 թ. դեկտեմբերի 6-ին Թիֆլիսի դատաստանական պալատի հատուկ ատյանը քննության առավ Գանձակի նահանգի Փիպ գյուղից 22 հոգու գործը: Որպես փաստաբաններ դատարանում հանդես եկան Պետերբուրգից հրավիրված Ալեքսանդր Զարուդնին, Թիֆլիսից՝ Գևորգ Խատիսյանը և Տիգրան Հովհաննիսյանը, Գանձակից՝ Ֆրոդրովը: Դռնփակ կատարվող քննությունը տևեց երեք օր: Սեպտեմբերի 10-ին հայտարարված դատավճռով երկու հոգի դատապարտվեցին տաժանակիր աշխատանքի չորս տարի ժամկետով, որոնցից

---

[1] *Տե՛ս **«Արօր»**, № 5-6, մայիս-հունիս, 1912, էջ 166-168:*

[2] *Այդ մասին մանրամասն տե՛ս Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազի տեղակալ Ե. Լեբեդինսկու ստորագրությամբ չուրջ 100 էջանոց զեկուցագիրը, որը պահպանվում է Հայաստանի Ազգային արխիվում (ֆ. 69, ց. 1, գ. 299):*

մեկը նշված գյուղի դաշնակցական կազմակերպության ղեկավար Սարգիս Մանվելյանն էր: 12 հոգի, որոնց թվում Հովհաննես քհն. Խոջայանը, դատապարտվեցին մշտական աքսորի Սիբիրում՝ զրկվելով քաղաքացիական բոլոր իրավունքներից: Մնացած 8 ամբաստանյալներն արդարացվեցին:

Վճիռը ծանր տպավորություն էր թողել: Զարուղնին և Խատիսյանը վճռաբեկ բողոք ներկայացրին սենատ: Մոտ մեկ ու կես տարի հետո բոլոր բանտարկյալներն ազատ արձակվեցին:

Փիպ գյուղի դաշնակցականների դատավարությունը վերջինն էր իր ծավալով ու պատժաչափերով: Դրանից հետո դաշնակցականների հետապնդումները դադարեցին[1]:

Հ. Յ. դաշնակցության դատավարության հաջող վերջ ունենալու պատճառները տարբեր էին:

Բայց գլխավոր պատճառը, այնուամենայնիվ, ոչ թե իրավական հարթության վրա էր, այլ՝ քաղաքական: Արդեն հինգերորդ տարին էր, որ դեմ-հանդիման կանգնած էին երկու խոշոր ռազմաքաղաքական բլոկներ, որոնք վաղ թե ուշ ընդհարվելու էին: Ռուսական արտաքին քաղաքականության գլխավոր նպատակներից մեկը շարունակում էր մնալ Օսմանյան կայսրության որոշ տարածքների, այդ թվում նաև Արևմտահայաստանի գրավումը: Նման պայմաններում, երբ ապագա մեծ պատերազմն արդեն անխուսափելի էր թվում, բնականաբար, ռուսական կառավարությունը չէր ուզում իր հարաբերությունները բարդացնել հայ ժողովրդի հետ, որը նրան չատ էր պետք գալու թուրքերի հետ ռազմական ընդհարման դեպքում:

Պատահական չէր, որ արդեն 1913 թ. վերջերից, կառավարության հրահանգով և արդարադատության նախարարության որոշումով, տաժանակիր աշխատանքի դատապարտված դաշնակցականներն իրենց ընտանիքների հետ նամակագրական կապի մեջ մտնելու և հարազատներից ծանրոցներ ստանալու իրավունք ստացան: Դա բացառիկ զիջում էր, բացառիկ դեպք:

Միաժամանակ արդարադատության նախարարությունը

---

[1] Տե՛ս **«Առաջամարտ»** (Կ. Պոլիս), № 1092, 21 դեկտեմբերի 1912 թ.:

հակվել էր դատավարությունից փախած և արտասահմանում գտնվող անձանց դեմ հարուցած մեղադրանքները վերցնելուն և իրենց բնակության վայրեր վերադառնալ թույլ տալուն:

Առաջ անցնելով ասենք, որ 1914 թ. ապրիլի 23-ին Ավ. Խաչակյանը ԱՄՆ-ում գտնվող Ս. Վրացյանին Բեռլինից գրում էր. «[Կովկասի] փոխարքան եւ իր կինը խոստացել են բոլոր փախստականների համար ներում ձեռք բերել. իսկ Շչեգլովիտովը յայտնել է դումայի անդամ Պապաջանեանին, որ խնդիր տուողներին կը միջնորդէ ներում ձեռք բերելու: Իսկ Ահարոնեանի համար, յատկապէս խոստացել է, եւ արդէն 3 ամիս է, որ Պապաջանեանը ուղարկել է ինձ նոյնիսկ տրուելիք խնդրի պատճէնը, որ ստորագրէի եւ ուղարկէի իրան. յոյս ունէր, որ Զատկին ներուած կլինէի, բայց ես մինչեւ այսօր դեռ չեմ որոշել խնդիրը տալ. ուղղակի չուարած եմ՝ տա՞լ, թէ՞ չտալ. Կովկաս չատ եմ ուզում գնալ. տնտեսական հալս հալ չէ, բայց եւ այնպէս ձեռքս չի գնում ստորագրեմ, հասկանալի է, լիովին:

Սպասենք մի առ ժամանակ. բոլորը կախուած է Հայկական հարցի ընթացքից. վերջ ի վերջոյ բոլորս էր ներուելու ենք»[1]*:*

1916 թ. մայիսին արդարադատության նախարարությունը մեկը մյուսի հետևից բանտերից ազատ արձակեց «Դաշնակցության գործով» դատապարտվածներին կամ մեղմեց նրանց պատիժները: Այդ բանը երևում է նաև արդարադատության նախարարության առաջին դեպարտամենտի երրորդ բաժնի համապատասխան գրություններից, որոնց մի մասի պատճենները գտնվում են Երևանում[2]*:*

Ամփոփելով թեման՝ նշենք, որ դատավարությունից հետո էլ Դաշնակցության մասին մարդկանց ունեցած համոզմունքներն ու կարծիքները տարբեր էին: Բայց մի բան այլևս պարզ էր. դատավճռով վերացավ հայկական մթնոլորտի վրա ծանրացած մղձավանջը: Այսպես թե այնպես, հայ հասարակական-հեղափոխական և մտավոր կյանքը փրկվեց չատ ծանր հարվածից

---

[1] ***Սիմոն Վրացեան***, *Հին թղթեր նոր պատմութեան համար, էջ 346-347:*

[2] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 99, թթ. 1-6:*

և հարյուրավոր մարդիկ ազատվեցին տարիներ չարունակ բանտերանոց տեղափոխվելուց: Դատավարության ելքը Դաշնակցության և հայության համար բարոյական հաղթանակ էր:

ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆՅԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ ԵՎ ՄԱՀԸ

Դաշնակցության դատավարության օրերին կրկին ձերբակալվեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ռահվիրա Սարգիս Մովսեսի Կուկունյանը:

Ռուսաստանում համալսարանական ուսանող Կուկունյանը, վառված թուրքահայ ժողովրդի ազատագրության տենչով, մի խումբ իր նման վառվռուն երիտասարդների հետ 1890 թ. սեպտեմբերի 24-ին կամեցել էր անցնել սահմանը և արշավել Թուրքիա: Արդեն խոսք է եղել այն մասին, որ ռուս-թուրքական սահմանագլխին արշավախումբը կալանավորվել էր, տեղի էր ունեցել դատավարություն, որի հետևանքով մարտիկների մի մեծ խումբ սիբիրյան և հեռավորարևելյան տաժանակիր աշխատանքի էր դատապարտվել: Արշավախմբի ղեկավար Սարգիս Կուկունյանը դատապարտվել էր 20 տարվա տաժանակրության, որից 7 տարին՝ չղթայակապ: Երկար ժամանակ Սախալինում մնալով աքսորում, ռուս-ճապոնական պատերազմի տարիներին նա, իբրև կամավոր, մասնակցում է ռուսական զորքի արշավանքին: 1905 թ. հոկտեմբերի 17-ի Բարձրագույն հրովարտակի համաձայն, ավելի քան 15 տարի բանտում կրած տառապանքներից հետո Կուկունյանը ներում է ստանում և վերադառնում Կովկաս:

Թիֆլիսում մեկ տարի մնալուց հետո Կուկունյանը մեկնում է հայրենի ոստան՝ Նուխիի գավառի Նիժ գյուղը: Այստեղ ականատես լինելով կալվածատերերի և վաչխառուների կողմից դաժանորեն չահագործվող իր համագյուղացիների տնտեսական ծանր վիճակին՝ պայքար է սկսում կեղեքիչների դեմ: Վերջիններիս սադրանքներով Կուկունյանը մեղադրվում է Դաշնակցությանը պատկանելու մեջ և նորից ձերբակալվում: Ելիզավետպո-

լի նահանգապետը 1910 թ. հուլիսի 23-ին Կովկասի փոխարքայի օգնականին գրում էր, որ Նուխիի գավառի «հասարակական կարգի պահպանման և այնտեղ հանգստություն ստեղծելու շահերից ելնելով անհրաժեշտ է Կուկունյանցին և Խեչոյանցին, որպես հայկական հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Բաքվի կենտրոնական կոմիտեի անդամների, Կովկասի երկրամասի սահմաններից աքսորել կայսրության ներքին նահանգներից մեկը՝ ոստիկանական խիստ հսկողության տակ»[1]:*

1910 թ. օգոստոսի 19-ին դատարանը քննում է Սարգիս Կուկունյանի գործը և նրան դատապարտում աքսորի՝ Կովկասի սահմաններից հեռու[2]: Նախքան աքսոր ուղարկելը նա բռնափակվում է Գանձակի բանտում: Չկարողանալով տանել բանտային կյանքը՝ բանտարկյալը, 1912 թ. փետրվարի 4-ին, օրը ցերեկով, փախչում է այնտեղից: Այդ մասին առաջինը հաղորդել էր Գանձակում լույս տեսնող "Южный Кавказ" թերթը[3]:

Անցնելով Թարթառի անտառներով՝ Կուկունյանն իր երկու ընկերների հետ ոտք է դնում Նոր Բայազետի գավառ: Մի քանի օր նրանք գիշերում են տեղի հայկական և թուրքական գյուղերում (Բասարգեչար, Զոդ, Զաղալու), իսկ որոշ ժամանակ անց Սևանա լճի վրայով նավակով անցնում են Նորադուզ գյուղը, ուր գիշերում են Պավլե Խեչոյան-Քաչոյանի տանը, որը նրանց ուղեկցել էր Զաղալուից: Որևէ մեկի ծանոթություն չտալով և չհայտնելով իրենց ինքնությունը՝ Պավլեի հյուրերն ընթրելով, պառկում են քնելու: Հավանաբար տանտերը տեղեկացրել էր ոստիկանությանը: Փետրվարի 21-ի լույս 22-ի գիշերը բազմա-

---

* *Ճիշտ չէր նահանգապետի հաղորդումը, թե Ս. Կուկունյանը եղել է Դաշնակցության Բաքվի կենտրոնական կոմիտեի անդամ:*

[1] *ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 609, թ. 1 և շրջ.:*

[2] *Նույն տեղում, թ. 25:*

[3] *Սարգիս Կուկունյանի փախուստի մասին տե՛ս նաև* ***«Հորիզոն»****, № 31, 14 փետրվարի 1912 թ.:*

թիվ պահակներ չրջապատում են գյուղը, իսկ ոստիկանները չղթայում են Պավլեի տունը: Կուկունյանն ու իր ընկերները կալանավորվում են և առաջնորդվում Նոր Բայազետի բանտը: «Ախուրեան» թերթը հաղորդում էր. «Հաստատուեցին այն տեղեկութիւնները, որ Սարգիս Կուկունեանը Գանձակի բանտից աջողութեամբ փախչելուց յետոյ ձերբակալուել է Նոր Բայազէտի գաւառի Նորաղուզ գիւղում եւ ներկայումս բանտարկուած է նորից: Նրա վրայ նշանակուած է ուժեղ հսկողութիւն»[1]: Մի չաբաթ Նոր Բայազետի բանտում պահելուց հետո նրան չղթայակապ, պահակախմբի ուղեկցութեամբ, կառքով տանում են Երևան: Այստեղից Կուկունյանի մասին «Մշակին» գրել էին. «Լսողները պատմում էին, որ նա խօսում է մաքուր ռուսերէն եւ մինչեւ անգամ ֆրանսերէն, ունի ալեխառն փառահեղ մօրուք, յաղթանդամ է, թխադէմ եւ սևաչեայ տեսքով»[2]:

Երևանից Սարգիս Կուկունյանն ուղարկվում է նոր աքսորավայր՝ Օրյոլ քաղաք: «Դրօշակը» գրում էր, որ հայ ժողովուրդը երբեք չի մոռանա «հպարտ նահատակին՝ Կուկունյանին, որ 5 տարուայ սիբիրեան տառապանքից հետոյ, այսօր նորէն 15 տարով նետուում է դժնդակ ցերբերների (իշխանությունների կատաղի պահապանների:- Հ. Ս.) ձեռքով անդառնալի կորուստեան գնդանները, միացնելով իր անունը համաշխարհային մեծագոյն յեղափոխական նահատակների ցանկին...»[3]:

Այստեղ էլ, օրյոլյան աքսորավայրում, Սարգիս Կուկունյանը վախճանվում է 1913 թ. դեկտեմբերի վերջերին[4]:

---

[1] **«Ախուրեան»**, № 14, 4 մարտի 1912 թ.:
[2] **«Մշակ»**, № 50, 7 մարտի 1912 թ.
[3] **«Դրօշակ»**, № 3, մարտ, 1912, էջ 50:
[4] Տե՛ս **«Մշակ»**, № 292, 31 դեկտեմբերի 1913 թ.:

ԳԵՎՈՐԳ ԱՐՔ. ՍՈՒՐԵՆՅԱՆՑ ԸՆՏՐՅԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Դաշնակցության դատավարությունից երեք ամիս առաջ Էջմիածնում տեղի ունեցած ընտրություններում Ամենայն հայոց կաթողիկոս ընտրված Գևորգ Ե Սուրենյանցը սպասում էր Պետերբուրգի հրավերին՝ ցարի կողմից իր պաշտոնում հաստատվելու համար: Բայց ամիսներն անցնում էին, իսկ մայրաքաղաքից այդպես էլ հրավեր չէր ստացվում: Այլընդայլոց լուրերը գալիս էին սաստկացնելու անձկությունը, և Էջմիածինը ակնկառոյց սպասում էր կաթողիկոսի հաստատման ավետաբեր լուրին: Եթե նկատի ունենանք, որ նրան նախորդած Իզմիրլյան կաթողիկոսը Պետերբուրգից հրավեր էր ստացել իր ընտրվելուց անմիջապես հետո, ապա հասկանալի կդառնա այն անհանգստությունը, որ կար Էջմիածնում և Դաշնակցության ղեկավարության մոտ:

Պետերբուրգը չէր շտապում և սպասում էր «Դաշնակցության գործի» դատավարության ավարտին: Անշուշտ, նկատի էր առնվում, որ նոր կաթողիկոսի թեկնածությունն առաջադրել էր Դաշնակցությունը: Ակնհայտ էր, որ եթե դատավարությունն ընթանար այնպես, ինչպես ցանկանում էին ռուս հակահայ տարրերը, ապա բացառված չէր, որ Էջմիածնի կաթողիկոսական ընտրության արդյունքը չեղյալ հայտարարվեր:

Այդ մտավախությունն էր պատճառը, որ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը պաշտոնական խողովակով դիմումներ էր հղում ներքին գործերի նախարարին և վարչապետին՝ խնդրելով արագացնել հայոց նոր կաթողիկոսին մայրաքաղաք հրավիրումն ու պաշտոնում նրա հաստատումը:

Դաշնակցության դատավարության հաջող ավարտը նշանակում էր, որ Ռուսաստանի հետադիմական ուժերը ձախողվել են Դաշնակցությանը հակառուս ահաբեկչական կազմակերպություն, իսկ հայությանը խռովարար ազգ ներկայացնելու իրենց ջանքերում: Դրա վկայություններից մեկն այն էր, որ ցարը, կառավարությունը և նույնիսկ հետադիմական մամուլի օրգանների զգալի մասն սկսեցին դրական վերաբերմունք ցուցաբերել Էջմիածնի և ընդհանրապես Հայ եկեղեցու նկատմամբ:

Միաժամանակ, կարծես տեղի պիտի ունենար ռուսական քաղաքականության շրջադարձը դեպի Հայկական հարցը:

Վերջապես եկավ հրավերը: 1912 թ. մարտի 13-ին Նիկոլայ II ցարը ստորագրեց Գևորգ Սուրենյանցին հայոց հայրապետ հաստատելու հրովարտակը: Այդ օրվանից Գևորգ արքեպիսկոպոսը դառնում էր Գևորգ Ե ընտրյալ ու ցարից հաստատյալ կաթողիկոս Ամենայն հայոց:

Մայիսի 28-ին Գևորգ Սուրենյանց ընտրյալ կաթողիկոսը Էջմիածնից գնացքով մեկնեց Պետերբուրգ: Նրա շքախմբի մեջ էին սինոդի անդամ Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանը (Մագիստրոս), Երևանի փոխ-թեմակալ Խորեն եպս. Մուրադբեգյանը, Գևորգյան ճեմարանի տեսուչ և հայրապետական դիվանի պետ Բագրատ վրդ. Վարդազարյանը և սինոդի անդամ Մատթեոս վրդ. Տեր-Մատթեոսյանը:

1912 թ. հունիսի 8-ին ընտրյալ կաթողիկոսն իր ուղեկիցների հետ այցելեց Ցարսկոյե-Սելո, ներկայացավ պալատ և ընդունվեց Նիկոլայ II կայսեր կողմից: Հունիսի 10-ին նա այցելեց կայսերական տան դամբարանը, աղոթեց Ալեքսանդր III-ի չիրիմի առաջ, դիտեց Պետրոպավլովսկի տաճարը[1]: Հունիսի 11-ին Վեհին ընդունելություն տվեց կայսրուհին: Իրենց հերթին՝ նրան հունիսի 12-ին այցելեցին Ռուսաստանի նախարարների խորհրդի նախագահ Կոկովցևը և ներքին գործերի նախարար Մակարովը: Ավագ արարողապետը կաթողիկոսին հանձնեց պատրիարքական պաշտոնի մասին Բարձրագույն հրովարտակը, աղամանդազարդ խաչը և բարձրագույն շնորհագիրը (բեսկրիպտը):

Գևորգ Սուրենյանցի այցելությունը մայրաքաղաք լայն արձագանք գտավ ռուսական մամուլում: Բոլոր թերթերը, նույնիսկ ավանդաբար հակահայկական ընդգծված ուղղություն ունեցողները, ջերմորեն ողջունեցին հայոց հայրապետի գալուստը, նրան ու հայությանը բազմաթիվ հոդվածներ նվիրեցին:

Բերենք մեկ-երկու օրինակ, ցույց տալու համար այն արմա-

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 124, 12 հունիսի 1912 թ.:

տական չրջադարձը, որ տեղի էր ունենում նույնիսկ իրենց հա-կահայկական տրամադրություններով հայտնի, ծայրահեղ պահ-պանողական մամուլի օրգանների և գործիչների մտածողության մեջ, այն էլ ընդամենը երկու-երեք ամիսների ընթացքում:

Ահա՛ Ամենայն հայոց ընտրյալ կաթողիկոսի այցին նվիրված "Новое Время"-ի առաջին հոդվածը, որը լույս էր տեսել կայսեր հետ նրա հանդիպումից անմիջապես հետո, 1912 թ. հունիսի 9-ին:

Հոդվածի սկզբում տրված են Գևորգ Սուրենյանցի անձը ներկայացնող հետևյալ տողերը. «Բնատուր ընդունակությունը, պետական լեզվի գերազանց իմացությունը, ռուսական օրենք-ներին քաջածանոթ լինելը համոզմունք են առաջացնում, որ Գևորգ Ե կաթողիկոսն իր վրա վերցրած պարտականություն-ները կիրագործի հմտությամբ ու նվիրումով: Կասկած չկա, որ Միապետի՝ իր նկատմամբ ցուցաբերած վստահությունը Վեհա-պետն անպայման կարդարացնի»[1]:

Այնուհետև անդրադառնալով այն քառսային դրությանը և անիշխանական վիճակին, որ տիրում էր Էջմիածնում, թերթը գրում էր. «Պետք է ամեն կերպ աջակցել կաթողիկոսի բոլոր այն բարի ձեռնարկումներին, որոնք ուղղված կլինեն եկեղեցու և նրա հաստատությունների կարիքներին բավարարություն տա-լու համար եկեղեցական վարչության վերանորոգման գործին: ... Գևորգ Ե-ն իր կայսրին է ներկայանում բարեհաջող հանգա-մանքներում: Համոզված ենք, որ բարեկիրթ և օրինապահ քայ-լերով ոչ հեռու ապագայում նա կվերանորոգի Էջմիածնի կյանքը: Ողջունելով Նորին Վեհափառության մուտքը պետության մայ-րաքաղաք, ցանկանում ենք Վեհին կատարյալ հաջողություն իր առաքելության մեջ»[2]:

Տասնամյակներ չարունակ, համենայն դեպս, երկու տասն-ամյակ, հայության մասին դրական ոչ մի խոսք չասած թերթն այսպիսի ջերմությամբ էր արտահայտվում հայոց կաթողիկոսի մասին:

---

[1] ***"Новое Время"**, 9 июня 1912 г.*

[2] *Նույն տեղում:*

"Новое Время"-ի հաջորդ հրապարակումը թերթի թղթակցի զրույցն էր ընտրյալ կաթողիկոսի հետ:

Հարցազրույցին նվիրված նյութը սկսվում էր այն հաստատումով, թե «Նորին Վեհափառությունը հույժ երջանիկ է, որ եկել է Պետերբուրգ, թեև ճանապարհը մի քիչ հոգնեցրել է նրան: ... Կաթողիկոսը փայլուն գիտե ռուսաց լեզուն: Զէ՞ որ նա Թիֆլիսի գիմնազիայի սան է: «... Ես չատ ուրախ եմ ընդունելու "Новое Время"-ի ներկայացուցչին»,- ասում է նա գեղեցիկ ռուսերենով, առանց որևէ օտարոտի չեչտադրության»[1]:

Ապա խոսակցությունը դառնում է այն հարցի չուրջ, թե Կովկասի հայ ազգաբնակչության մի մասը իսկապե՞ս ձգտում է անկախ պետական կյանքի: Ընտրյալ կաթողիկոսը պատասխանում է.

«Ես ընավ չեմ համակրում այդ ձգտմանը, որը որևէ հող չունի ոտքերի տակ: Հայերի մեջ կան ցնորամիտներ, որոնք իրենց ցնորքների մեջ չատ հեռու են գնում, բայց նրանք իրենց ցանկություններն արտահայտում են միայն խոսքերով, ուստի չեն կարող էապես որևէ բան փոխել»: Ապա, արտահայտելով ռուսահայոց վերաբերմունքը Ռուսաստանի հանդեպ, Գևորգ Սուրենյանցը չեչտում է. «Մեր բոլոր մտածմունքները պետք է ուղղված լինեն Ռուսաստանի վրա, ուր մենք, հայերս, գտել ենք հանգստություն, ուր մենք լավ ենք ապրում՝ վայելելով բոլոր իրավունքները և չկրելով զրկանքներ: Մենք ցանկանում ենք հզորություն ու մեծություն Ռուսաստանին, որը մեզ համար միչտ բարի է եղել և ամենևին ոչնչով չի վրդովել մեր խաղաղ կյանքը:... Ես իբրև Հայոց եկեղեցու պետ, միչտ և ամենուրեք իմ տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով կանգնեցնելու եմ Ռուսաստանի դեմ ուղղված որևէ չարժում: Իմ հիմնական նպատակն է խաղաղություն և անդորրություն հաստատել հայ ժողովրդի ներքին կյանքում, և այդ նպատակին հասնելու համար ես կգործադրեմ իմ բոլոր ուժերը»:

Թղթակիցը հարց է տալիս, թե ո՞րն է Ռուսաստանի հայերի

---

[1] ***«Մշակ»**, № 125, 10 հունիսի 1912 թ.:*

մի մասի մոտ նկատվող անջատողական ձգտումների պատճառը: Հետևում է հետևյալ պատասխանը.

«Հայերի շրջանում անջատողական ձգտումները ծագել են հալածանքների հողի վրա»: Ապա չպարզելով, թե ո՛ր հալածանքները նկատի ունի և չեղվելով փափուկ հարցից, կաթողիկոսը շարունակում է. «Հայերը հալածանքներ չեն կրել, ուստի անջատողական որևէ փորձ հենց սկզբից դատապարտված է անհաջողության: Ռուսաց իշխանություններին անհնազանդ լինելու ամեն մի արտահայտություն իմ մեջ հակադարձելու տրամադրություն է առաջ բերում: Ես գտնում եմ, որ այն մարդիկ, որոնք փորձում են հայերին հանել վտանգավոր ճանապարհի վրա, նրանց միայն վնաս են հասցնում: Ուստի ես, իբրև եկեղեցու պետ, պետք է ժողովրդին ամեն կերպ զգուշացնեմ հեռու մնալ անխոհեմ քայլերից»:

Մյուս հարցը Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխական շարժման նկատմամբ հայերի վերաբերմունքին էր վերաբերում: Լինում է հետևյալ պատասխանը.

«Ես դատապարտում եմ այդ շարժումը, որը հակասում է մեր ժողովրդի տրամադրությանը: Հայը ձգտում է խելացի աշխատանքի և իր նյութական վիճակի բարվոքման: Բոլոր ավերիչ գաղափարները արձագանք չեն գտնում մեր ժողովրդի լայն զանգվածներում: Հայերի գոնե 90%-ը հողագործ է, և ես կարծում եմ, որ հեղափոխական ամեն մի ալիք վտանգավոր է նրա համար, քանզի նրա բարեկեցությանը կարող է ծանր հարված հասցնել: ... Այդ ըմբռնումով է, որ այժմ հայության մեջ հեղափոխական տատանումները վերջ են գտած և ամեն բան ընկած է կանոնավոր հունի մեջ»:

Թղթակցի հարցին, թե արդյոք հեղափոխական շարժումից հրաժարվե՞լ է նաև Դաշնակցությունը, ընտրյալ կաթողիկոսը, թաքցնելով մտքերը, պատասխանում է. «Որքան ես գիտեմ, Դաշնակցությունը դադարեցրել է իր գոյությունը: Նրա մասին այլևս ոչինչ չի լսվում»:

Վերջին հարցին, որը վերաբերում էր հայերի դրությանը Թուրքիայում, Վեհափառը պատասխանում էր, որ թուրքական սահմանադրությունը որևէ բան չի տվել նրանց. քաղաքներում

տեղի են ունենում մասնակի կոտորածներ, իսկ գավառներում պատկերն անմխիթարական է[1]:

Հայոց կաթողիկոսի պետերբուրգյան ուղևորությունը, նրա ելույթներն ու հանդիպումները և այդ ամենին մայրաքաղաքի թերթերի արձագանքներն աննկատ չմնացին Թուրքիայում:

Երիտթուրքական կուսակցության «Հակկ» թերթը 1912 թ. հունիսի 11-ին տպագրել էր խմբագրապետ Սուլեյման Նազիֆ բեյի հեղինակած առաջնորդողը՝ հիմք ընդունելով "Новое Время"-ի աշխատակցի հարցազրույցը Ամենայն հայոց ընտրյալ հայրապետի հետ[*]:

Նազիֆ բեյը գրում էր, որ ամեն անգամ, երբ ռուսական նշված թերթը մուտք է գործում Թուրքիա, իր հետ ոխակալություն է բերում: Այս անգամն էլ դրա վկայությունն է՝ ի դեմս հայոց ընտրյալ կաթողիկոսի և Պետերբուրգում նրա արած հայտարարությունների: Իզուր չէ, որ ռուսական կառավարությունը կաթողիկոսական թափուր աթոռին հենց նրան է կարգել:

Խմբագրապետն ափսոսանք էր հայտնում, որ կաթողիկոսը հարցազրույցի ժամանակ հայտարարել էր, թե Ռուսաստանը հայության միակ հույսն է: Մեջբերելով նրա այն խոսքերը, թե հայերը միշտ աղոթում են, որպեսզի Ռուսաստանը լինի հզոր ու անպարտելի, քանի որ նա միշտ գթառատ է եղել իրենց նկատմամբ, Նազիֆ բեյը նշում էր, որ հայերը հիմքեր չունեն այդպես մտածելու: «Ամեն ինչից երևում է, որ նրանք մոռացել են, թե ինչ արհավիրքների են ենթարկվել ռուսական իշխանությունների կողմից հատկապես վերջին մեկ-երկու տասնամյակների ընթացքում»[2]:

Ինչ վերաբերում էր թուրքահայերի անտանելի վիճակի մասին ընտրյալ կաթողիկոսի արտահայտած խոսքերին, երիտթուրքական օրգանը համերաշխվում էր նրա հետ, գրելով, թե

---

[1] ***«Մշակ»**, № 125, 10 հունիսի 1912 թ.:*

[*] *Սուլեյման Նազիֆի նշված առաջնորդողը թարգմանաբար լույս էր տեսել Կ. Պոլսի «Բիւզանդիոն» օրաթերթում, որից էլ մեջբերումներ են կատարել Թիֆլիսի հայկական թերթերը՝ արևելահայ տառադարձությամբ:*

[2] ***«Մշակ»**, № 134, 22 հունիսի 1912 թ.:*

«բացարձակ ճշմարտություն է, որ Արևելյան Անադոլուի նահանգներում բնակվող հայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը ծայրահեղ խղճալի է: Իրավ է, որ այդ խոովյալ նահանգներում կատարյալ բարեկեցիկ ցեղ կամ տարր գոյություն չունի, բայց հայերն ավելի մեծ չափերով են ենթակա բռնաբարումների ու հարստահարությունների: Ցավոք, օսմանյան կառավարությունը անցած չորս տարիներին արդյունավետ որևէ բան չի արել այդ վայրերի համար, ... չնայած մենք նախկինում, հայոց կաթողիկոսից չատ առաջ, կառավարության ուշադրությունը քանիցս հրավիրել ենք այս ամենի վրա»[1]:

Ընտրյալ կաթողիկոս Գևորգ արք. Սուրենյանցի Պետերբուրգ կատարած այցելության մասին համառոտ տեղեկություններ էին երևացել նաև եվրոպական մամուլում:

1912 թ. հունիսի 12-ի երեկոյան Վեհափառ հայրապետը Պետերբուրգից ճանապարհվեց Մոսկվա և տեղ հասավ հունիսի 14-ին: Ապա նա Մոսկվայից ուղևորվեց Էջմիածին[2]: Տեղ հասնելուց հետո կատարվեց կաթողիկոսական օծման արարողությունը 1912 թ. հուլիսի 1-ին: Իր օծման առթիվ, Գևորգ Ե-ը թագավոր-կայսր Նիկոլայ II-ին ուղարկեց հետևյալ հեռագիրը.

«Նորին Կայսերական Մեծութեան թագաւոր կայսեր.

Ամենաբարեպաշտ թագաւոր, յայսմ նշանաւոր աւուր Ս. Օծման իմոյ բաղդաւոր համարեմ զիս արկանել առ ոտս Ձերոյն Կայսերական Մեծութեան զգացմունս հաւատարիմ հպատակութեանս եւ ժողովեալ ի Ս. Էջմիածին ներկայացուցչաց հօտին իմոյ՝ վերառաքելով առաջի Միածնաէջ Սեղանոյ ջերմագին աղօթս վասն պարգեւելոյ Ձերդ Կայսերական Մեծութեան, Թագուհեաց Կայսրուհեաց եւ Ժառանգին եւ համայն Օգոստափառ Տան բազում ամս ի փառս եւ յերջանկութիւն Մեծին Ռուսիոյ:

Գէորգ Կաթողիկոս Ամենայն Հայոց»[3]:

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 124, 12 հունիսի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 130, 20 հունիսի 1912 թ.:

[3] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 231ա, վավ. 39, թ. 1:

Հուլիսի 2-ին Նիկոլայ II-ը պատասխանում է այս հեռագրով.

«Նորին Վեհափառութեան Գէորգ Կաթողիկոսի Ամենայն Հայոց, յէջմիածին.

Ի սրտէ շնորհակալ եմ ի Ձէնջ եւ յանձնարարեմ հաղորդել ժողովեալ ներկայացուցչաց հօտին ձերոյ զիմ շնորհակալիս յաղագս աղօթից եւ բարեմաղթութեանց վասն իմ եւ ամբողջ Ընտանեացս: Առաքեմ առ Ձեզ զսրտագին ցանկութիւնս վասն երկարատեւ եւ փառաւոր ծառայութեան Ձերոյ ի բարօրութիւն համայն ազգին հայոց:

Նիկոլայ»[1]:

Հայոց կաթողիկոսի՝ Պետերբուրգում տված խոստումները, որ ինքն ամեն ինչ անելու է ռուս-հայկական բարեկամությունը ամրապնդելու համար՝ լոկ բառեր չէին: Նրա քարոզների, ելույթների ու զրույցների անբաժան թեմաներից մեկը դարձավ Ռուսական կայսրության հետագա հզորացման ու ամրապնդման, Ռոմանովների գահի հանդեպ ռուսահայ ժողովրդի հավատարմության գաղափարը, ինչը չէր կարող աննկատ մնալ Պետերբուրգում: Այստեղ կառավարության մեջ և արքունական շրջաններում գնալով բարձրանում էր հայոց հայրապետի հեղինակությունը, մամուլն ավելի ու ավելի հաճախ էր անդրադառնում էջմիածինը բարեկարգելու ուղղությամբ նրա ձեռնարկած միջոցառումներին:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում հայոց կաթողիկոսի նկատմամբ Նիկոլայ II-ի մոտ գնալով խորացող համակրանքի փաստը: Դրա նորանոր արտահայտություններից էր մեկ տարի անց անձամբ ցարի կողմից էջմիածնի կաթողիկոսին ս. Ալեքսանդր Նևսկիի առաջին աստիճանի ադամանդազարդ շքանշան ուղարկելը, որը մի սովորական պարգև չէր և ո՛չ էլ պատահական մի ակտ: Դա ծառայության մեծ գնահատական էր, նաև, ինչ խոսք, նախօրոք տված շնորհ՝ գալիք հավատարմության ու նվիրվածության ակնկալիքով:

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 231ա, վավ. 39, թ. 2:

1912 թ. հայ կյանքի նկատելի երևույթներից մեկը ռուսահայ մամուլի առաջապահ «Մշակ» թերթի 40-ամյա հոբելյանի (1872-1912) նշումն էր:

Ռուսահայոց մեջ պարբերական մամուլը սկզբնավորվել է 19-րդ դարի 40-ական թվականներին՝ Կովկասի վարչական ու մտավոր կենտրոն հայաշատ Թիֆլիսում: Այստեղ 1847 թ. գրաբարով սկսում է լույս տեսնել ռուսահայ առաջին պարբերականը՝ Հ. Կարենյանի «Կովկաս» շաբաթաթերթը, որն իր գոյությունը պահպանում է երկու տարուց պակաս: Դրան 1850 թ. հաջորդում է Գաբրիել քհն. Պատկանյանի կիսաշխարհիկ «Արարատ» անունով շաբաթաթերթը, որը գոյատևում է ընդամենը մեկ տարի: 1858 թվականից Մոսկվայում սկսում է լույս տեսնել Ստեփանոս Նազարյանցի «Հիւսիսափայլ» ամսագիրը (1858-1864)՝ Միքայել Նալբանդյանի և ուրիշ մտավորականների աշխատակցությամբ: Այս նշանավոր պարբերականը ռուսահայ իրականության մեջ սկզբնավորում է մարտնչող-լուսավորական, առաջադիմական ազգային-համամարդկային աշխարհայացք դավանող միանգամայն նոր ուղղություն: Այդ հանդեսը ռուսահայ նոր գրականության մեջ հիմք դրեց աշխարհաբար լեզվի գործածությանը, առաջադեմ մտքերի թարմ հոսանք ներմուծեց հայկական կյանքից ներս: 1858 թ. Ստեփանոս քհն. Մանդինյանի խմբագրությամբ Թիֆլիսում սկսում է լույս տեսնել «Մեղու Հայաստանի» պահպանողական թերթը, որին 1859 թվականից սկսած հաջորդում են մի շարք ուրիշ պարբերականներ՝ Մսեր Մսերյանցի «Ճռաքաղը», Մարկոս Աղաբեկյանի «Կռունկը» և ուրիշներ: Հրապարակ են գալիս Գաբրիել վրդ. Այվազովսկու «Մասեաց աղաւնի» (Թեոդոսիա), «Արարատ» (Էջմիածին) և այլ պարբերականներ: Այդ ամենի թվում միայն երկուսը՝ Պետրոս Սիմոնյանցի «Մեղու Հայաստանի» (պահպանողական) և Խորեն եպս. Ստեփանեի «Հայկական աշխարհ» («Հիւսիսափայլին» հետևող) պարբերականները համեմատաբար երկար պահպանեցին իրենց գոյությունը:

Վերջապես Գրիգոր Արծրունու ջանքերով 1872 թ. հունվարի 1-ին հրապարակ իջավ կովկասահայ մամուլի ամենանշանավոր

իրաղարձությունը՝ «Մշակը»: Նա «Հիւսիսափայլի» ավանդներին հավատարիմ մշակութային խոշորագույն երևույթ էր հայ իրականության մեջ:

Ստեղծման օրից հայ մեծ հրապարակախոս Գրիգոր Արծրունու (1845–1892) «Մշակը» փառավոր ուղի էր անցել: Իր շուրջը համախմբելով ժամանակի հայ մտավորականության մի ընտրանու, թերթը ստիպված էր եղել հանուն ազատական գաղափարների դժվարին պայքարի մեջ մտնել հայկական հասարակության հետամնաց բարքերի դեմ:*

Գրիգոր Արծրունու և նրա «Մշակի» առաքելությունը անդիջում կոիվն էր մտավոր խավարի ու բարոյական անկման, հոգևոր ապականության ու անարդարության, հարստահարումների ու կեղեքումների դեմ:

Հայ հասարակական կյանքի մի շարք հրատապ արմատական խնդիրներ «Մշակը» լուսաբանում էր հետևողական ջանադրությամբ, որը և տալիս էր ակնառու դրական արդյունքներ: Թերթի էջերում մասնագիտական խոր քննության էին ենթարկվում հայ գրականության ու գեղարվեստի հարցերը: Պատահական չէր, որ այստեղ են իրենց ստեղծագործական մկրտությունն ստացել կամ գրական վարպետությունը հղկել Րաֆֆուց սկսած մի ամբողջ շարք հայ գրողներ: Հիրավի, շատ տարիներ բազմաթիվ գրողների և արվեստագետների համար «Մշակը» եղել է հարազատ տուն, որի անչեջ քուրայում թրծվում, առնա-

---

* *«Մշակի» հիմնադիր Գրիգոր Արծրունու կենդանության օրոք թերթի աշխատակիցներից են եղել. Անդրեաս Արծրունին, Համբարձում Առաքելյանը, Արփիար Արփիարյանը, Ղազարոս Աղայանը, Ալեքսանդր Արարատյանը, տիկ. Մարիամ Աղամալյանը, Առաքել Բաբախանյանը (Լեո), Գաբրիել Բահաթրյանը, Բագրատ վրդ. Թավաքալյանը, պրոֆ. Գրիգոր Խալաթյանը, Սիմեոն Հախումյանը, տիկ. Գայանե Մատակյանը, Ալեքսանդր Մելիք-Փաշայանը, Խաչատուր Մալումյանը (Ակնունի), Քրիստափոր Միքայելյանը, Սմբատ Շահազիզը, Ղևոնդ եպս. Շիշմանյանը (Գերուկ), Ռափայել Պատկանյանը, Պերճ Պռոշյանը, Ստեփան Պալասանյանը, Րաֆֆին, Ալեքսանդր Քալանթարը և ուրիշներ:*

կանանում էին նրանց ստեղծագործական ավյունն ու բնավորությունը:

Անգնահատելի էին «Մշակի» թափած ջանքերը հայության երեք կրոնական մեծ հատվածների միջև մերձեցում առաջ բերելու, անհանդուրժողականությունը վերացնելու, անկեղծ վստահություն և եղբայրական համերաշխություն ստեղծելու ուղղությամբ: Իր էջերում պարբերաբար տպագրվող հոդվածներով թերթը այլադավան եղբայրներին՝ կաթոլիկ ու բողոքական հայերին, հորդորում էր չխորթանալ էջմիածնից, միաժամանակ վերջինիս խստորեն քննադատում էր նրանց նկատմամբ խտրականության և անհանդուրժողականության դրսևորումների համար:

Իսկ որքա՜ն շատ բան էր արել թերթը ռուսահայերին թուրքահայերի կյանքին հաղորդակից անելու համար: Գր. Արծրունու գրչի տակից տարիներ շարունակ դուրս էին գալիս թուրքահայ եղբայրների ու քույրերի հանդեպ ջերմ զգացմունքներով ներծծված քնարական տեսություններ: Իր հրապարակախոսական տաղանդի հմայքով նա ամեն ինչ անում էր հայ ժողովրդի երկու մեծ հատվածների միջև հոգեկան կապ ստեղծելու համար: Աներկբա կարելի է ասել, որ երկար տարիներ թուրքահայերի համար չկար ռուսահայ ավելի սիրելի ու հարգելի անուն, ինչպես Գր. Արծրունունն էր: Նրա մահից հետո իր հաջորդները նույնպիսի ջանադրությամբ ու նվիրումով շարունակում էին սրբորեն կատարել իրենց մեծ ուսուցչի պատգամը՝ հարազատ ժողովրդի երկու հատվածների մերձեցումը և, ի վերջո, միավորումն ու միասնականացումը համարելով գերագույն գաղափար:

Մյուս կարևոր ծառայությունը, որ լույս տեսնելու օրվանից «Մշակը» մատուցեց հայ հասարակությանը, հնապաշտության կապանքներից և նրան ստորացնող անցյալի բազում հոռի սովորույթներից հայ կնոջ ազատագրությունն էր: Քանի որ հայ հասարակության մեջ դեռ չափազանց զորեղ էր կնոջ ազատագրության դեմ հանդես եկող ավանդական չրջանների դիմադրությունը, ուստի թերթը չորս տասնամյակների ընթացքում բազմաթիվ ազդու առաջնորդողներով, խմաստալից հոդվածներով ու բանասիրականներով առաջինը հայ կնոջ մեջ արթնաց-

րեց ինքնաճանաչության գաղափարը և լայնացրեց նրա աչխարհայացքը: Նա հայ կնոջը դուրս հանեց ընտանեկան նեղ շրջանից՝ նրան հասարակական գործունեության լայն ասպարեզ հրավիրելով: Այդ ամենի շնորհիվ «Մշակի» ծավալած ֆեմինիստական գործունեությունը վեր էր ամեն տեսակ գովասանքից[1]:

«Մշակը» լայն գործունեություն էր ծավալել քաղաքաբնակ հայերին գավառի հայության կյանքով հետաքրքրելու նպատակով: Դա հույժ կարևոր նախաձեռնություն էր, քանզի հայ գյուղը իր ծանր հոգսերով ապրում էր կղզիացած ու անօգնական, իսկ քաղաքի հայ մտավորականությունը շարունակում էր անտարբեր մնալ նրա հանդեպ: Թերթը բազմաթիվ խմբագրականներով մտավորականությանը կոչ էր անում ամուր կապ հաստատել հայ գյուղացու հետ, ապրել նրա հոգսերով, աջակից լինել նրան, գյուղում լուսավորություն և քաղաքակրթություն տարածել: Մեծ կարևորություն տալով գավառի կյանքի լուսաբանմանը, «Մշակը» ստեղծեց գավառի թղթակիցների մի բազմաքանակ լեգեոն, որոնց թղթակցություններում հայելու նման, արտացոլվում էր հայ գյուղն իր դրական, հատկապես բացասական կողմերով, քաղաքաբնակ հային ծանոթացնում էր չինականի կյանքին, կենցաղին, սովորույթներին:

«Մշակը» վճռական պայքար էր ծավալել ազգի ներսում եղած հակահասարակական, քրեական երևույթների դեմ, մտրակում էր չահամոլությունն ու գոփողականությունը, մարդկանց կոչ էր անում ժողովրդական աղետների ժամանակ զորահավաքի ենթարկել ազգային առողջ ուժերը, աջակից լինել աղետյալներին ու արկածյալներին:

Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության ջերմ ջատագով «Մշակը» իր էջերում ցույց էր տալիս այն մեծ առաջադիմությունը, որ ռուսահայությունը ձեռք էր բերել պարսկական տիրապետությունից ազատագրվելուն հաջորդած պատմական կարճ ժամանակահատվածում: Նա սկզբունքային տարբերու-

---

[1] *Տե՛ս **«Մշակի» քառասնամեակ (1872–1912)**, Թիֆլիս, 1912, էջ 8:*

թյուն էր դնում ռուս ժողովրդի և նրա ազգայնամոլական, հակահայկական ուժերի միջև, գտնելով, որ վերջիններիս գործունեությունը հակադիր է Ռուսաստանի ազգային շահերին: Թերթը պարբերաբար ընթերցողին էր ներկայացնում պետական և ռազմական այն նշանավոր հայ գործիչներին, որոնք մեծ ծառայություններ էին մատուցել ռուսական պետությանը՝ դրանով իսկ նպաստելով երկու ժողովուրդների հարաբերությունների սերտացմանը:

Այդ ամենի շնորհիվ «Մշակը» վայելում էր հայ հասարակության անառարկելի վստահությունը: Թերթի և առաջին հերթին նրա հիմնադրի ջանքերի շնորհիվ էր, որ հայ հասարակական կյանքում ձևավորվեց միանգամայն նոր քաղաքական հոսանք՝ «մշակական» ազատական հոսանքը կամ «մշակականությունը»:

Իր մահից առաջ Գր. Արծրունին անխախտ համոզում ուներ և վստահ էր, թե իր փառավոր գործն անվարան առաջ են տանելու «Մշակի» ազատական գաղափարներով տոգորված լրագրողների հետագա սերունդները:

Բայց ամեն ինչ չէ, որ ընթացավ ըստ նախանշված ցանկության: 90-ական թվականներին հայկական քաղաքական կյանքում տեղի ունեցող վերիվայրումները փոխեցին թերթի քաղաքական գործունեության ուղղությունը: Թուրքական բռնակալության դեմ հայկական ազատագրական կռիվը հրապարակ բերեց լավ կազմակերպված նոր հակառակորդներ այս անգամ ձախից: Դրանք Հնչակը և ՀՅ դաշնակցությունն էին, որոնք ժողովրդի վրա իրենց ուժգին ազդեցությամբ համեմատության որևէ եղր չունեին հայ ազատականների և պահպանողականության հետ:

Այդ երկու քաղաքական նոր կազմակերպություններից ավելի ուժեղը՝ Դաշնակցությունը, անզիջում պայքար սկսեց «Մշակի» դեմ՝ նրան տապալելու և հայ կյանքից դուրս մղելու համար:

Անողոք էր կռիվը, որի ազդեցության տակ թերթից անջատվեցին նրա շատ աշխատակիցներ, այդ թվում խմբագրակազմի անդամներ, խմբագրությունից ոռճիկ ստացող թղթա-

կիցներ*: «Մշակից» հեռացածների մի մասը հարեց պահպանողականներին (Լևոն Խոջայան և ուրիշներ), մյուսները մտան Դաշնակցության կամ Հնչակի շարքերը: Հնչակին էին անդամագրվել Ղազարոս Աղայանը և այլոք, Դաշնակցության շարքերն էին անցել Խաչատուր Մալումյանը (Ակնունի) և ուրիշներ: «Մշակը» լքածների զգալի մասը ներգրավվել էր մայր թերթի դեմ գործուն պայքարի մեջ: Թիֆլիսում, Բաքվում, Շուշիում, գավառներում այդ երկու կուսակցությունները, հատկապես Դաշնակցությունը, բուռն ագիտացիայով «Մշակից» խլում էին նրա բաժանորդներին՝ հօգուտ իրենց թերթերի:

Բայց «Մշակի» համար աղետալի օրերը բարեբախտաբար անցան և 19-րդ դարի վերջերից նա իսկական վերածնություն ապրեց: Աչխատակիցների մեծ մասից զրկված թերթը կարողացավ հավատարիմ մնալ որդեգրած ուղեգծին, ուշքի եկավ, և շարունակեց իր ժողովրդանվեր գործունեությունը՝ մնալով որպես հայ մամուլի առաջատար: Այդ վերածննդի գործում մեծ եղավ Գր. Արծրունու մահից հետո խմբագրի պաշտոնն ստանձնած Ալեքսանդր Քալանթարի և տաղանդաշատ լրագրող Համբարձում Առաքելյանի խաղացած դերը: Սրանց շուրջը համախմբվեցին հայ մտավորականության աչքի ընկնող նոր ուժեր, որոնք եղան թերթի ավանդապահները, միաժամանակ իրենց գործունեության մեջ մարմնավորեցին նոր ժամանակների շունչն ու ոգին:

Այդ նոր ժամանակներում նույնպես շարունակվում էր «Մշակի» (մշակական ազատականների) և Դաշնակցության անդիջում պայքարը, որն աննախադեպ բորբոքվել էր ստոլիպինյան ռեակցիայի տարիներին: Մշակականներին գլխավորում էր Համբարձում Առաքելյանը, իսկ Դաշնակցության կողմից պայքարին տոն էր տալիս «Հորիզոն» թերթը: Հակասությունները թշնամական կերպարանք առան հատկապես 1911 թ. կաթո-

---

* Նշենք, որ «Մշակի» թղթակիցների հիմնական մասը ստանում էր հաստատագրված աշխատավարձ, իսկ մյուս մասը՝ «պատվոգին» (հոնարար)՝ խմբագրություն ուղարկած հոդվածների և նյութերի համար:

դիկոսական ընտրության ընթացքում և դրանից հետո՝ խորացնելով տարաձայնությունները հայ հասարակական թե քաղաքական մարզերում:

Բանն այնտեղ էր հասել, որ մամուլի դաշնակցական ու հնչակյան օրգանները չկամություն էին հանդես բերում անդրադառնալու «Մշակի» հոբելյանին, ավելին, փորձում էին խանգարել դրա նշումը: Գործին եռանդագին լծվել էին նաև «Մշակի» նախկին աշխատակիցներից ոմանք, որոնք, ազատական թերթից հեռանալով, մտել էին հեղափոխական կուսակցությունների շարքերը: Այդ անշնորհակալ խնդրով հատկապես զբաղվում էր «Հորիզոնը», որի էջերում Լեոն այն տեսակետն էր զարգացնում, թե քանի որ չուտով լայնորեն պիտի տոնվի հայ տպագրության 400-ամյակը, ուստի հարմար չէ այդ՝ ավելի կարևոր հոբելյանից առաջ ժողովրդի ուշադրությունը բևեռել մի մասնավոր պարբերականի վրա:

«Մշակն» անշուշտ, հակառակ չէր, որ լայնորեն նշվի հայոց տպագրության մեծ տոնը, բայց դա մասնակի մի խմբի ձեռքն անցնելուն հակառակ էր[1]: Թերթն այդ ոգով տպագրեց բազմաթիվ հոդվածներ, նույնիսկ առաջնորդող-խմբագրական, առաջ քաշելով այն տեսակետը, որ մի այդպիսի հոբելյանի գլուխ պետք է կանգնի Էջմիածինը՝ ի դեմս Ամենայն հայոց կաթողիկոսի, մանավանդ որ տպագրության 400-ամյակը զուգադիպում է տառերի գյուտի 1500-ամյակին, իսկ տառերն ստեղծող Մեսրոպ Մաշտոցի սրբազան դամբարանը գտնվում է Էջմիածնից ոչ հեռու՝ նշանավոր Օշականում, ուր ամփոփված սուրբ նշխարներին հոբելյանական օրերին պետք է այցի գնան ողջ հայության ներկայացուցիչները:

*Ինչ վերաբերում էր «Մշակի» **մասնավոր** հոբելյանին, ապա դա հայկական տառերի գյուտի և հայ գրքի տպագրության **համազգային** մեծ տոնի կազմակերպմանն ու անցկացմանը չէր կարող որևէ վնաս պատճառել:*

Ռուսահայոց ավագագույն լրագրի 40-ամյա հոբելյանը ար-

---

[1] *Տե՛ս **«Միտք»** (Թաւրիզ), № 21, 21 հուլիսի 1912 թ.:*

ժանավայել նշելու փափագը հայտնել էր Թիֆլիսի հայ հասարակությունը: «Մշակի» բազմաթիվ բարեկամների ու համակիրների առաջարկներով ստեղծվեց Հոբելյանական հանձնախումբ՝ բաղկացած 45 նշանավոր ու երևելի ազգայիններից՝ արդյունաբերողներ, առևտրականներ, իրավաբաններ, խմբագիրներ, ինժեներներ, բժիշկներ և այլք: Նախագահ ընտրվեց Գաբրիել Սունդուկյանը, քարտուղար՝ Ստեփան Մալխասյանցը: Հանդիսության կազմակերպման հիմնական ծանրությունն ընկած էր վերջինիս վրա[1]:

Տոնախմբության գործն ստանձնելուց հետո հանձնախումբը իրեն աջակից լինելու կոչ ուղղեց հայ հասարակությանը: Կոչը լայն արձագանք գտավ հայության զանազան խավերում թե՛ Կովկասում և թե՛ այլուր, ուր կային հայեր և հատկապես «Մշակի» ընթերցողներ:

Զորացած այդ աջակցությամբ, հանձնախումբը որոշեց. թերթի ապագա գոյությունը ապահովելու համար մի հատուկ ֆոնդ ստեղծել: Վերջինս կազմվեց շատ կարճ ժամկետում՝ հայ հասարակության զանազան անհատների և կազմակերպությունների ջանքերով:

Բազմաթիվ միջոցառումներից հետո (հանդիպումներ ընթերցողների հետ, թերթի անցած ուղու պատմությանը նվիրված գրքի ստեղծում և այլն) և չնայած բոլոր դժվարություններին, Ստեփան Մալխասյանցի գլխավորած հոբելյանական հանձնախումբը կարողացավ պատշաճ կազմակերպել և անցկացնել (թեև շատ համեստ) հայկական մամուլի պատմության մեջ իր ուրույն ու արժանավոր տեղն զբաղեցրած «Մշակի» 40-ամյակը, որի հիմնական ու եզրափակիչ միջոցառումն եղավ հոբելյանական հանդիսավոր նիստը՝ հրավիրված 1912 թ. մայիսի 26-ին:

«Մշակի» հոբելյանն առիթ էր հանդիսացել, որպեսզի հայկական ներքաղաքական կյանքի վիճակով մտահոգ հայ քաղաքական ու մշակութային առանձին գործիչներ եռանդագին ջանքեր գործադրեն վերջ դնելու «Մշակի» և Դաշնակցության միջև

---

[1] Տե՛ս **«Մշակի քառասնամեակ (1872-1912)»**, էջ 5-6:

չղաղարող պայքարին: Նրանցից մեկը նշանավոր դիվանագետ, Շեքսպիրի բազմաթիվ ողբերգություններ հայերենի թարգմանած Հովհաննես Մասեհյանն էր:

Բեռլինից Մասեհյանը 1912 թ. դեկտեմբերի 25-ին Ավետիս Ահարոնյանին տեղեկացնում է, որ ինքը նամակ է գրել Թիֆլիս՝ Համբարձում Առաքելյանին և նրան հաղորդել իր տեսակետը Դաշնակցության նկատմամբ նրա վերաբերմունքի մասին: Պատասխանելով Մասեհյանին, Առաքելյանը խոստովանել էր, որ պայքարի ընթացքում երկուստեք չափազանցությունների մեջ են ընկել և ընդունել էր ցավալի հակասություններն ու անմիտ բանակռիվը վերջ տալու առաջարկը: «Համոզուած լինելով որ Դուք էլ աջակից կը լինէք ինձ հետ այդ իմ ձեռնարկի մէջ,- գրում էր Մասեհյանը Ահարոնյանին,- խնդրում եմ ընդունել պարոն Առաքելեանին նախկին մտերմութեամբ, բացատրուել որչափ կարելի է եւ մի անգամից մի սպունգ քաշել բոլոր անցածների վրայ, եւ միասին մշակել մի համերաշխ գործունէութեան ծրագիր: Ես ինձ չատ երջանիկ կը համարեմ, եթէ կարողանամ նպաստած լինել այդ համերաշխութեան»[1]:

«Մշակն» առաջվա պես շարունակում էր ի մի բերել ու համախմբել գրական-հասարակական ասպարեզի ազատական գործիչներին և ազատական հայ մտավորականությանը: Նա հայկական հասարակական կյանքի անբաժան մասն էր: Ազատամտության և առաջադիմության գաղափարները նոր ուժով էին արծարծվում նրա էջերում՝ թափանցելով ազգի երկու մեծ հատվածների՝ ռուսահայության և թուրքահայության հասարակական կյանքի ոլորտները: Ուստի պատահական չէ, որ ոչ միայն ռուսահայերը, այլև թուրքահայերը մեծ խանդավառությամբ տոնեցին «Մշակի» 40-ամյակի հոբելյանը: Կ. Պոլսում հրատարակվող «Վերածնունդ» պարբերականը Թուրքիայի հայ ազատական ուժերի անունից գրում էր.

«Եւ մենք հոս՝ Վոսփորի հեռաւոր ափերուն վրայ՝ մեր սրտէն բղխած համակրանքի անկեղծ զգացումները միացնելով

---

[1] ***«Հայրենիք»**, № 1 (276), Հունվար, 1949, էջ 23-24:*

մեր ռուսահայ պատուական եղբայրներուն, կը գոչենք՝ **Յարգանք քառասնամեայ ծերունի Մշակին...»**[1]:

ԶՈՐՐՈՐԴ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կովկասահայության կյանքի 1912 թ. ժամանակահատվածի քիչ թե շատ նկատելի իրադարձություններից մեկը IV պետական դումայի ընտրություններն էին և հայկական քաղաքական ուժերի մասնակցությունը այդ ընտրություններին:

Ավարտվում էր III պետական դումայի լիազորությունների ժամկետը և մարդիկ անդրադառնում էին նրա հնգամյա գործունեության արդյունքներին: Մամուլը լի էր տարաբնույթ գնահատականներով: Առաջավոր Ռուսաստանը, նրա հասարակության լուսամիտ մասը շատ դժգոհ էին դումայի գործունեությունից, որը չափազանց քիչ բան էր արձանագրել իր գործունեության մեջ, իրական կյանքի թելադրած որևէ էական պահանջի բավարարություն չէր տվել:

Այլ կերպ չէր կարող լինել. III պետական դումայի աշխատանքներին տոն էին տալիս երկրի ծայրահեղ աջ ուժերը և, առաջին հերթին, «17 հոկտեմբերի միությունը»՝ հոկտեմբերյանականները (октябристы)՝ հետապնդելով իրենց նեղ դասակարգային շահերը: Նրանք այդ բանն անում էին նոր ձևի մեջ վերականգնելու և ամրացնելու համար հինը՝ իր տարբեր դրսևորումներով:

1912 թ. օգոստոսին լույս տեսավ III պետական դուման արձակելու և IV պետական դումա գումարելու մասին կառավարական հրամանագիրը: Ըստ այդ հրամանագրի՝ Կովկասում դումայի պատգամավորների ընտրությունն զգալիորեն տարբերվում էր Կենտրոնական Ռուսաստանում անցկացվելիք ընտրություններից:

Անդրկովկասի պատգամավորների մի մասն ընտրվում էր

---

[1] **«Վերածնունդ»**, № 2, հունիս, 1912, էջ 27:

ըստ ազգության: Օրինակ՝ Անդրկովկասում ապրող ռուս բնակչությունը ընտրում էր իր պատգամավորին, Երևանի, Գանձակի և Բաքվի նահանգների հայ և մահմեդական ազգաբնակչությունն առանձին-առանձին ընտրում էր մեկական պատգամավոր: Կովկասի փոխարքայության մյուս նահանգների ազգությունների վերաբերյալ ընտրական օրենքը թույլատրում էր ազատորեն պատգամավոր ընտրել նրան, ում կցանկանար ինքը՝ բնակչությունը:

Այսպիսով, ըստ պետական դումայի ընտրական օրենքի, հայերին փաստորեն հատկացված էր պատգամավորական մեկ տեղ միայն:

Ջանադան խմբակցություններ իբրև IV պետական դումայի հայ պատգամավորի թեկնածու առաջադրել էին Ալեքսանդր Քալանթարին, Կոստանտին Խատիսյանին, Միքայել Պապաջանյանին, Ալեքսանդր Խատիսյանին, Սամսոն Հարությունյանին և Տիգրան Բեկզադյանին[1]:

Իր հերթին մամուլը, որպես հավանական թեկնածուների, առաջադրեց նաև «Մշակի» խմբագիրներից Համբարձում Առաքելյանին, հասարակական գործիչ Պողոս Կարա-Մուրզային, Երևանի քաղաքագլուխ Հ. Մելիք-Աղամալյանին, Ալեքսանդրապոլի նախկին քաղաքագլուխ Հ. Տիգրանյանին և իրավաբան Պ. Դոլուխանյանին[2]:

Նախորդ երկու դումաների պատգամավոր Հովհաննես Սաղաթելյանին որևէ խմբակցություն չէր առաջադրել, բայց քանի որ նա վերընտրվելու բուռն ցանկություն ուներ, ուստի, ի վերջո, նրան նույնպես ընդգրկեցին պատգամավորական թեկնածուների ընդհանուր ցուցակի մեջ[3]:

1912 թ. հոկտեմբերի 20-ին Ելիզավետպոլ (Գանձակ) քաղաքում տեղի ունեցավ Անդրկովկասի երեք՝ Բաքվի, Երևանի և Գանձակի նահանգական ժողովներում ընտրված 30 պատվի-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 209, 22 ապրիլի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Հայ ժողովրդի պատմություն»**, հատ. VI, էջ 451:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 208, 21 ապրիլի 1912 թ.:

բակների հավաք, որն իր հերթին պետք է ընտրեր դումայի հայ պատգամավորին: Պատվիրակներից չէին ներկայացել երեքը: Դումայի հայ պատգամավորի թեկնածուների ցուցակում ի վերջո մնացել էին Մ. Պապաջանյանը, Հ. Սաղաթելյանը և Տ. Բեկզադյանը: Վերջին երկուսի թեկնածությունը առաջադրել էր Դաշնակցությունը: Միքայել Պապաջանյանը հիվանդության պատճառով Բաքվից չէր կարողացել ժամանել Գանձակ, բայց պատվիրակների ժողովը դումայի պատգամավոր ընտրեց հենց նրան: Նա քաղաքական հայացքներով ազատական էր, մշակական:

IV պետական դումայում երկրորդ հայ պատգամավորն ընտրվել էր Աստրախանից, այդ նահանգի կալվածատերերի ժողովի առաջադրմամբ: Նա Աստրախանի քաղաքային վարչության անդամ Սարգիս Հովհաննեսի Ֆրանգուլյանն էր, որը հարում էր կադետներին:

Նոր դումայի բացումը տեղի ունեցավ 1912 թ. նոյեմբերի 15-ին:

Պետական դումայի նախկին գումարումների հայ պատգամավորների համեմատությամբ ամենահաջողը եղավ Միքայել Պապաջանյանը՝ իր բանիմացությամբ ու լրջախոհությամբ: Դումայի ամբիոնից նրա բազմաթիվ ելույթները Անդրկովկասի գյուղատնտեսության, արդյունավետությունը բարձրացնելու, բնակչության սոցիալապես անպաշտպան խավերին պետական աջակցություն ցույց տալու, ճանապարհաշինության և բազմազան այլ խնդիրների են վերաբերվել: Պատգամավորը դումայի և Ռուսաստանի հասարակայնության ուշադրությունը բևեռում էր Օսմանյան կայսրության հայաբնակ տարածքներում հայ ժողովրդի անտանելի կացության վրա, պահանջում էր, որպեսզի Ռուսաստանի կառավարությունն է՛լ ավելի եռանդով առաջ տանի Հայաստանի բարենորոգումների հարցը:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ԱԼԵԲԱԽՈՒՄՆԵՐԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ

Ընդունված է ասել, որ հեղափոխության հաղթանակը ոչինչ է, եթե նոր իշխանությունը չի կարողանում իրեն պաշտպանել:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԻՈՎ

Երեք տարի տևած սահմանադրական շարժումից հետո տապալվեց իրանյան դարավոր բացարձակ միապետությունը: Երկիրն անցավ հեղափոխականների ձեռքը:

Հեղափոխությունը կատարեց իր առջև դրված գլխավոր խնդիրը՝ միապետության փոխարինումը սահմանադրական կարգերով:

Մահմեդ Ալի շահի տապալումից հետո թվում էր, թե Պարսկաստանում սահմանադրական ռեժիմի ամրապնդման առաջ այլևս խոչընդոտ չկա: Վերահաստատվեց մեջլիսը, ձևավորվեց պատասխանատու կառավարություն, երկրի ղեկավարումն անցավ մեջլիսի ձեռքը: Բայց տարած հաղթանակը բավական չէր, որպեսզի Պարսկաստանն անմիջապես մտներ կանոնավոր պետական զարգացման ուղի:

«Սուրհանդակ» (Թիֆլիս) թերթը գրում էր. «Այն երկարամեայ տեւողական պայքարը, որ կատարւում էր այնպիսի յամառութեամբ Պարսկաստանում ժողովրդի եւ Շահի միջեւ, վերջապէս պսակւեց առաջինի փառաւոր յաղթանակով: Բայց սրանով Պարսկաստանի ժողովրդական շարժումը տակաւին վերջացած չի կարող համարւել»: Տեղի ունեցավ պարսկաց հե-

դափոխության միայն առաջին էտապներից մեկը, այն է՝ սահմանադրական կազմի ազատումն ռեակցիայի ճանկերից: Թեև կարծես արդեն իր ազատութեամբ և իր մեջլիսով ժողովուրդն էր իրերի դրության տերը, բայց և այնպես դժվար չէր գուշակել, թե տակավին ինչ նորանոր դեպքերի ու անակնկալների վկա կարող էր լինել նա: «Զէ՞ որ խաւար ոյժերը, ռէակցիոն տարրերը,- շարունակում էր Թերթը,- ներկայումս տապալւած ու ընկճւած, չեն ցանկանայ այնպէս դիւրին կերպով չքանալ իսպառ Պարսկաստանի պատմական ասպարէզից: Պարսկաստանի ազատագրութիւնը, նրա ազգայնական (ազգային:- Հ. Ս.) վերածնութիւնը, վերջապէս նրա քաղաքական-պետական գոյութիւնը դեռեւս շատ գործ ունեն կատարելու. այժմ պէտք է հանդէս գան նրա ստեղծագործող հասարակական ոյժերը եւ աւարտեն այն շէնքի կառուցումն, որի հիմքը գցեցին վերջին տարիների մարտիրոսական կուի անձնազոհ քաջերը»[1]:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Նոր իշխանությունը ժառանգություն ստացավ տնտեսապես քայքայված, մշակութապես հետամնաց, քաղաքականապես անուժ, ջլատված ու կիսով չափ վասալացած պետություն: Կառավարությունը չէր կարող մոգական գավազանի մի հարվածով միանգամից վերացնել այն ամենը, ինչ բխում էր հին կարգերից, հանդիսանում լուրջ խոչընդոտ Նոր Պարսկաստանի տնտեսական և հասարակական զարգացման ճանապարհին:

Արդարև, բազմաթիվ և լուրջ էին սահմանադրական Պարսկաստանի կարիքները, որոնց լուծումը նրա առաջավոր և գիտակից տարրերից տոկուն ու եռանդուն աշխատանք էր պահանջում: Այդ կարիքներից մի քանիսի դարմանումը անհետաձգելի էր, այլապես Պարսկաստանն ընդմիշտ կմնար արևելյան առումով մեջլիսի և կանուն-էսասիի (սահմանադրության, հիմնական օրենքի) երկիր և ոչ թե կդառնար խորհրդարանական

---

[1] ***«Սուրհանդակ»**, № 2, 9 հուլիսի 1909 թ.:*

մի երկիր՝ բառիս սահմանադրական իմաստով:

Առաջին խնդիրը երկրի կառավարման ձևի որոշումն էր:

Տեսնելով, որ Մահմեդ Ալիի համար այլևս անհնարին է փրկել Պարսկաստանի գահը, ռուսաց կայսրն ստիպված համակերպվեց նրան գահընկեց անելու մտքի հետ: Բայց անկախ դրանից, հեղափոխականների համար դա վաղուց վճռված հարց էր:

Հրացանաձգությունը դեռ չարունակվում էր, երբ 1909 թ. հուլիսի 3 (16)-ին մեջլիսի նստավայրում՝ Բահարստանի պալատում, չտապ կազմվեց «Գերագույն խորհուրդ»* («Մեջլիս-ի աալի») անունով ժամանակավոր արտակարգ մարմինը, որը փոխարինեց տապալված պարսկական առաջին մեջլիսին՝ մինչև նրա վերականգնումը: Գերագույն խորհրդի կազմը բաղկացած էր ավատապետական և բախտիարական զինված ջոկատների ներկայացուցիչներից, նախկին նախարարներից, մուջահեդներից և առաջին մեջլիսի պատգամավորներից: Այդ մարմնում, որպես անդամ, ընտրվել էր մի հայ ներկայացուցիչ: Թեև Եփրեմը չէր ընդգրկվել Գերագույն խորհրդի կազմում, բայց նա և ուրիշ երկու զինվորական գործիչներ՝ Մոիզ Սոլթանը (նույն ինքը՝ Սարդար Մուխի, իսկական անունը՝ Աբդոլ Հասան խան) և Միրզա Ալի Մահմեդ խանը նիստերին մասնակցելու, ելույթներ ունենալու և քվեարկելու իրավունք էին ստացել[1]:

Հուլիսի 4-ին և 5-ին Գերագույն խորհուրդը տվեց մի շարք անմիջական կարգադրություններ և որոշումներ:

Ամենից առաջ հայտարարվեց Մահմեդ Ալի շահի տապալման մասին: Նրա փոխարեն Գերագույն խորհուրդը սահմանադրության 36-րդ և 37-րդ հոդվածների հիման վրա** Պարսկաս-

---

* Գրականության մեջ օգտագործված են նաև «Բարձրագույն խորհուրդ» և «Ազգային արտակարգ խորհուրդ» բառակապակցությունները:

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (31), մայիս, 1925, էջ 36:

** Սահմանադրության 36-րդ հոդվածում ասված էր, որ թագավորությունը պիտի փոխանցվի Նորին Վեհափառություն շահնշահ Մահմեդ Ալի Ղաջարի զավակներին՝ սերնդից-սերունդ: 37-րդ հոդվածով նախատեսվում էր. «Երբ թագավորի զավակները բազմաթիվ են, թագաժառանգությունը հաս-

տանի միապետ հայտարարեց տապալված շահի ավագ որդուն՝ 1896 թ. Թավրիզում ծնված 13-ամյա Սոլթան Ահմեդ Հասան Միրզային[1]: Անչափահաս շահի խնամակալ (ռեգենտ) նշանակվեց արքայատոհմի ավագագույն իշխան Ազադ օլ Մոլքը[2] (իսկական անունով՝ Ալի Ռեզա խան), որը մի տկար, թույլ, եռանդից, կամքից ու հեղինակությունից զուրկ բարի ծերունի էր, որ գիտեր միայն լաց լինել ու ողբալ դաջարական արքայատոհմի կործանման համար[3]:

Իրեն գահակալ ընտրելու առթիվ մանկահասակ Ահմեդ Միրզան հուլիսի 31-ին հրապարակեց հատուկ հրովարտակ, որով դիմելով խնամակալին ու ժողովրդին, չնորհակալություն էր հայտնում իր նկատմամբ վստահություն տածելու համար: «Զնայած ես անգետ երեխա եմ,- գրում էր նա,- բայց լավ եմ հասկանում, որ ազատությունը քաղցր բան է: Երբ ինձ բացատրեցին սահմանադրության նշանակության մասին, ես, իսկապես, սիրեցի այն և «սահմանադրություն» բառը ինձ համար կորցրեց նախկին դժոխային նշանակությունը: Հիմա իմ բոլոր ուժերը ես ուղղելու եմ նրան, որ պարսից ժողովուրդը, վերջապես, ապրի մարդավայել»[4]:

Այնուհետև Գերագույն խորհուրդը ազդարարեց սահմա-

նում է անդրանիկ որդուն, որի մայրը պիտի լինի բուն իրանցի և արքայական տոհմից, իսկ թագավորը արու զավակ չունենալու դեպքում թագաժառանգության աստիճանին է հասնում թագավորական ընտանիքի մերձավորագույն անդամը ...» (տե՛ս «Հ. Յ. Դաշնակցութիւն, Եփրեմ, պարսկական սահմանադրութիւն», հատ. Բ, ուսումնասիրեց եւ խմբագրեց Անդրէ Ամուրեան, Թեհրան, 1979 թ., էջ 57-58): Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ գահաժառանգը պետության գործերի վարումը ստանձնում էր 18 տարին լրանալու պահից (տե՛ս նույն տեղում):

*[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 13, թ. 11 և չրջ., **«Կոհակ»**, № 10, 1 օգոստոսի 1909 թ.:*

*[2] Տե՛ս **М. Павлович, С. Иранский**, Персия в борьбе за независимость, с. 57.*

*[3] Տե՛ս **«Ախուրեան»**, № 55, 2 օգոստոսի 1909 թ.:*

*[4] **«Ախուրեան»**, № 56, 6 օգոստոսի 1909 թ., տե՛ս նաև՝ **«Հորիզոն»**, № 2, 4 օգոստոսի 1909 թ.:*

նաղրության վերականգնման և երկրորդ մեջլիսի գումարման մասին: Առաջին մեջլիսը հայտարարվեց ժամանակավոր:

Հաջորդ խնդիրը նախարարների խորհուրդ կազմելն էր:

Նախարարական պաշտոն ձեռք բերելու հավակնություն ունեցան բազմաթիվ կալվածատերեր, նախկին բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ նահանգապետներ, որոնք Մահմեդ Ալի շահի հետ անձնական հաշիվներ ունենալով, մի օրից մյուսը դարձել էին «հեղափոխականներ»:

Ո՞րն էր նախարարական պաշտոնին տիրելու բուռն պահանջ ունեցող «հեղափոխականների» մեծաթիվ լինելու պատճառը:

Նախ նշենք, որ Պարսկաստանը թե՛ նախասահմանադրական շրջանում և թե՛ նրանից հետո չէր ունեցել պետական գործիչներ՝ բառիս իսկական իմաստով: Հայրենասիրություն, երկրի շահ, զոհողություն հօգուտ ընդհանրության, ընդունակությունների անձնվեր գործադրություն և նման բարձր գաղափարներ անըմբռնելի հասկացություններ էին նրանց համար: Պարսիկ գործիչների և ղեկավարների առաջին և գերադաս մտահոգությունը անձնական շահն ու անհատական բարօրությունն էր:

Փաստերի մի երկար շարան կարելի է թվել, որը ցույց է տալիս, թե երկրի ամենանվիրական սրբություններն ու իրավունքները ծախու էին հանվում հօգուտ այս կամ այն նախարարի կամ այլ բարձրաստիճան մարդու անձնական գրպանի: Այնպես որ նախարարական պաշտոնը՝ իբրև ամենաբարձրն ու ամենապատասխանատուն՝ ամենաշահավետ դիրք էր պարսիկ պետական գործիչների շահատակությունների համար:

«Ով քիչ շատ հետաքրքրել է պարսից կառավարչական ձեւերով,- գրում էր «Նոր հոսանք» (Թիֆլիս) հանդեսը,- անչուշտ իմանալիս կը լինի, որ նախասահմանադրական շրջանում նահանգապետների պաշտօնը պարզապէս աճուրդի էր դրւում եւ շատ վճարողին [էր] յանձնւում այս կամ այն երկրամասի կառավարչութիւնը՝ քմահաճոյքի անսահման իրաւունքներով: Հասկանալի է, ի հարկէ, որ այդտեղ երբէք ի նկատի չէր առնւում թեկնածուի ընդունակութիւններն ու անցեալ գործունէութիւնը: Մի խոհարարի աչակերտ, մի ձիապան, հասարակ մի ֆարրաշ

ժամանակի ընթացքում իրենց ճարպիկութեան եւ փողի ոյժով ամենաբարձր պաշտօններ են ձեռք բերել եւ լիուլի շահագործել»[1]:

Ինչևիցե, Գերագույն խորհուրդն ստեղծեց ազատական ավատապետներից, բախտիար խաներից և նախկին նախարարներից կազմված ժամանակավոր կառավարություն՝ բաղկացած 52 հոգուց[2]: **Սիփահդարը** (իսկական անունը՝ **Ֆաթհոլլահ խան Ռեշտի**) նշանակվեց ռազմական նախարար:

Աշխատության նախորդ գլուխներից մեկում սեղմ նշվել է նրա ով լինելը: Ավելացնենք, որ նա անկեղծորեն ցանկանում էր Պարսկաստանը տեսնել բարվոք վիճակում, միաժամանակ որևէ բան չէր անում Թյունեքապունի իր կալվածքներում աշխատող տասնյակ հազարավոր հպատակների վիճակը մի փոքր իսկ թեթևացնելու համար: Նա դեպի հեղափոխություն էր եկել Մահմեդ Ալի շահից չնորհազրկության ենթարկվելու պատճառով[3]: Կառավարությունը որոշ ժամանակ, մինչև երկրորդ մեջլիսի հրավիրումը, չէր ունենալու վարչապետ*, ուստի նրա պարտականությունները դրվեցին Սիփահդարի վրա:

Ներքին գործերի նախարար նշանակված **Սարդար Ասադի** (իսկական անունով՝ **Ալի-դուլի խան**) մասին ընթերցողն արդեն բավական տեղեկություններ ունի: Միայն կրկնենք, որ նա պատերազմասեր, անվեհեր ու քաջ բախտիար ցեղի առաջնորդն էր[4]:

Արտաքին գործերի նախարար նշանակվեց **Մուշիր Սալթանեն**, որը նախկինում քանիցս կատարել էր արտգործնախարարի պաշտոնը և հպատակությամբ ծառայել շահնշահերին: Նա այդ պաշտոնը ստանձնում էր ժամանակավորապես, որովհետև դա

---

[1] Տե՛ս **«Նոր հոսանք»**, Ա տարի, № 1, մարտ, 1913, էջ 213:

[2] Տե՛ս **Բ. Տրսա,** Кавказские социал-демократы в Персидской революции, с. 115.

[3] Տե՛ս **«Կոհակ»**, № 10, 1 օգոստոսի 1909 թ.:

* Միայն 1909 թ. հոկտեմբերի սկզբին նշանակվեց սահմանադրական կառավարության առաջին վարչապետը, որը եղավ նույն Սիփահդարը:

[4] Տե՛ս **«Կոհակ»**, № 10, 1 օգոստոսի 1909 թ.:

նախատեսված էր արտասահմանում գտնվող Նասր օլ Մոլքի համար, որը նաև զբաղեցնելու էր վարչապետի պաշտոնը:

*Փոստ-հեռագրական նախարար **Սարդար Մանսուրը** նախկին կառավարության մեջ եղել էր մաքսային գործերի նախարար, որի ընթացքում տեր էր դարձել հարյուրավոր գյուղերի և միլիոնների կարողության: Շահին մի մեծ գումար չվճարելու պատճառով ենթարկվել էր հալածանքի և ապաստանել ռուսական դեսպանատանը:*

*Պարսկական կազակային բրիգադի հրամանատար **Լյախովը**, որը եղել էր շահի աջ ձեռքը, ռմբակոծել էր մեջլիսը և սպառնացել ոչնչացնել Թեհրանը, նշանակվեց մայրաքաղաքի զինվորական կառավարիչ[1]:*

*Թեհրանի ոստիկանության գլխավորի (բեյլերբեյի) պաշտոնը տրվեց **Եփրեմ**ին:*

Ինչպես տեսնում ենք, Պարսկաստանի նոր կազմված կառավարության մեջ, չնչին բացառությամբ, ընդգրկված էին երկիրը չահագործող դասակարգերի ներկայացուցիչներ: Նկատենք, որ նոր կառավարության բոլոր անդամներն անխտիր թեև ունեին տարիների փորձառություն, բայց չէին ստացել կանոնավոր կրթություն և դաստիարակություն: Այստեղ էլ չեչտենք, որ պարսիկ իշխանական տներում յուրաքանչյուր իշխանազուն ստանում էր ուրույն կրթություն և դաստիարակություն: Նրա ուսուցիչները ծխատեր հետամնաց մոլլաներն էին կամ տգետ դայակները: Ուսուցման իմաստն այն էր, որ աշակերտը սովորեր, թե ինչպիսի խորամանկություններ պետք է գործադրի, որպեսզի ապագայում կարողանա բարձր պաշտոններ ձեռք գցել: Պարսիկ պաշտոնյաներին պետք չէին ո՛չ վարչական ունակությունների ձեռքբերում և ո՛չ էլ ընդհանրապես հիմնարար դաստիարակություն: Դա էր գլխավոր պատճառներից մեկը, որ Սաթթար կամ Բաղր խաների նմանները կարողանում էին մեծապես ազդել ժողովրդի ճակատագրի վրա:

Մինչև նոր մեջլիսի հրավիրումը՝ նոր կառավարության նա-

---

[1] *Տե՛ս **«Նոր հոսանք»**, Բ տարի, № 6, հունիս, 1914, էջ 1014:*

խարարների գործունեությունը վերահսկելու համար 25 նշանավոր սահմանադրականներից կազմվեց հատուկ կոմիտե[1]:

Թեև ժամանակավոր վարչապետը Գիլանի խոշոր կալվածատեր Սիփահդարն էր, բայց կառավարությունը փաստորեն գտնվում էր բախտիարների ձեռքին, քանի որ այդ թափառական ցեղը իր մեծամասնությամբ ստանձնած էր եղել սահմանադրության պաշտպանի դերը, որը բնավ պայմանավորված չէր եղել քաղաքական համոզմունքներով, այլ, ինչպես նշել ենք, այն թշնամությամբ, որ բախտիար ցեղապետները տածում էին ընդհանրապես դաջարյան տոհմի և մասնավորապես Մահմեդ Ալիի նկատմամբ: Ավելին, բախտիարներն ունեին դաջարյան տոհմն իրենց տոհմով փոխարինելու գաղտնի ձգտում, նրա հիմնադրողը համարելով բախտիար անվանի ցեղապետ Սարդար Ասադին:

Անգլիական և ռուսական կառավարությունները Թեհրանի իրենց դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով հայտնեցին, որ ճանաչում են կատարված պետական հեղաշրջումը՝ ժառանգության օրենքի համաձայն Մահմեդ Ալիի անչափահաս գահաժառանգի բարձրացումը գահի վրա, ինչպես և նորաստեղծ կառավարությունը[2]:

Հեղափոխության ալիքների վրա պաշտոնների հասած գործիչներից հայ ընթերցողին, բնականաբար, հատկապես կհետաքրքրի Եփրեմի անձը:

Եփրեմին մայրաքաղաքի ոստիկանապետ նշանակելը շատերը համարեցին նոր կառավարության առաջին կոպիտ սխալը, քանզի դա, ինչպես և սպասելի էր, առաջ բերեց Պետերբուրգի տարակուսանքը և դժգոհությունը, որն ամեն ինչ անում էր պարսից նոր կառավարության մեջ տեսնելու իր մարդկանց կամ գոնե համակիրների ու չեզոքների:

Եփրեմն իր անբասիր վարքով շատ էր տարբերվում իշխանության հասած մյուս ղեկավարներից: Նա վերջիններիս պես

---

[1] *Տե՛ս "История Ирана", с. 284.*

[2] *Տե՛ս* ***Հայրապետ Պանիրեան,*** *Յեղափոխական շարժումները Պարսկաստանում, էջ 47:*

հետամուտ չէր մեծամեծ պատիվների. թերևս միակ բացառությունը եղավ, որ անձնական որևէ բան չփնտրեց իր պաշտոնի մեջ, չմտածեց գրպանը մեծացնելու մասին[1]:

Ոստիկանապետի պաշտոնի ստանձնումը հակառակ էր Եփրեմի, որպես հեղափոխականի, հավատամքին, բայց նրան ստիպեցին հանձն առնել պաշտոնը, պատճառաբանելով, թե խաղաղությունն ապահովելու համար անհրաժեշտ է ուժեղ մի ձեռքի ներկայությունը:

Եփրեմին նախարարի պաշտոն չտալը պայմանավորված էր նրա քրիստոնյա լինելով: Պարսկաստանի սահմանադրության 58-րդ հոդվածում ասված էր. «Ոչ ոք չի կարող նախարարության պաշտոնի հասնել, բացի բուն իրանցի մուսուլմանից և պարսկահպատակից»[2]:

Նման պաշտոնների կարող էին հասնել թուրքերը, թաթերը, ֆարսերը, լորերը, քրդերը և մյուս բոլոր մուսուլմանները, բայց ոչ երբեք քրիստոնյաները, հրեաները, կյաբռները (կրակապաշտներ): Վերջիններս օտարներ էին համարվում, որոնք և, իբր, չէին կարող հավատարիմ լինել սահմանադրությանը[3]:

Իր վրա վերցնելով Թեհրանի ոստիկանապետի պարտականությունները՝ Եփրեմը նպատակ ուներ դրանք կատարել ժամանակավորապես, երևի, ինչպես ինքն էր ենթադրում, մինչև որ երկրում վերահաստատվեին ու ամրապնդվեին սահմանադրական կարգերը:

Եփրեմի՝ Թեհրանի ոստիկանապետի պաշտոնի ստանձնումը ՀՅ դաշնակցության ղեկավարությունը դժգոհությամբ ընդունեց: Դաշնակցական ընկերները տեսականորեն անհարիր էին համարում այդ պաշտոնը հեղափոխականի համար: 1909 թ. հուլիսի 26-ի թվով Եփրեմին ուղարկած նամակով Ռոստոմը գրում էր. «Բոլոր այստեղի ընկերների կողմից սրտանց չնորհաւորում

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 100, 13 մայիսի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Պարսկաստանի սահմանադրութեան օրէնքները»**, Թաւրիզ, 1907, հոդվ. 58:

[3] Տե՛ս **«Լրաբեր»**, № 8, 16 հունիսի 1908 թ.:

ենք քո յաջողութիւնները: Միայն թէ անյարմար պաշտօն է քեզ վիճակուել: Լաւ կը լինի, եթէ յեղափոխական խառը դրութիւնը անցնելու լինի եւ քիչ թէ շատ խաղաղ կեանք ստեղծուելու լինի, հրաժարական տաս ոստիկանապետի պաշտօնից»[1]:

Երբ Թեհրանը գրավվեց, Կովկասից եկած կամավորներին նույնպես առաջարկեցին ընդունել մի քանի պաշտոն, բայց դաշնակցականներից բացի, նրանք բոլորը մերժեցին առաջարկը: Դաշնակցության անդամներից մի քանիսը, տեղացի թե եկվոր, ծառայության անցան ակցիզային վարչությունում և պետական ուրիշ մարմիններում[2]: Եփրեմի անմիջական օգնականն էր պարսկական ժանդարմերիայի նախկին պետ, քաջ զինվորական Զոհրաբ խանը, նրա մերձավոր գործակիցներն էին դաշնակցական գործիչներ Հովսեփ Միրզայանցը, Ասլան Ստեփանյանը (խմբապետ Ասլան, Ասլան խան), Թումանյանցի առևտրական տան նախկին ծառայող Ալեքսան խան Թունյանցը և ուրիշ հայեր:

Պաշտոնավարման առաջին իսկ օրից Եփրեմը եռանդուն կերպով գործի անցավ: Նա նախ կալանքից ազատեց բոլոր նրանց, որոնք բանտերում էին հայտնվել ոչ-ծանր մեղքերի համար: Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի փաստաթղթերից մեկում կարդում ենք. «Ոստիկանությունը և քաղաքը հանձնարարված են կովկասցի Եփրեմին, բանտերում տառապողները այժմ ազատության մեջ են: Ծանր չղթաներն այժմ ի տես բոլորի ոչնչացված են»[3]: Հենց այս առաջին քայլերի համար նա հանդիպեց կառավարության ազդեցիկ մի քանի անդամների լուրջ դիմադրությանը: Նոր կացությունն անկայուն էր, մտքերում՝ ծայրահեղ չփոթ, անպակաս էին դավերը, անձնական նախանձն ու փոքրոգությունը: Նա մեծ տակտով ու խելամտությամբ կարճ ժամանակում արմատապես վերակառուցեց ոստիկանությունը, ստեղծեց ժանդարմերիա՝ իր համապատասխան լիազորություններով: Ուժեղացվեց կարգի պահպանումը

---

[1] **«Ռոստոմ»**, էջ 169:

[2] **Տե՛ս В. Триа**, *Кавказские социал-демократы в Персидской революции, с. 115.*

[3] *Архив внешней политики России (АБПР), ф. Персидский стол, д. 924, л. 167.*

մայրաքաղաքում, որտեղ ամեն բոպե կարող էին հուզումներ և բռնկումներ տեղի ունենալ: Շատ չանցած՝ Թեհրանում հաստատվեց կարգ ու կանոն, մայրաքաղաքի կյանքն աստիճանաբար մտավ բնականոն հունի մեջ[1]: Այս բոլոր գործերում Եփրեմին աջակցում էին Կովկասից եկած հայ կամավորները՝ իրենց կարողության չափով:

Նախարարների խորհուրդն անհրաժեշտ էր համարել Եփրեմի ներկայությունն իր բոլոր նիստերին, բայց բազմազբաղ լինելով և տեսնելով, որ դրանք անարդյունավետ են, նա այդ մասնակցությունը ժամանակի կորուստ էր համարում:

Պետերբուրգը չափազանց դժգոհ էր պարսից նոր կառավարությունից, քանի որ սա չարունակում էր սերտ հարաբերություններ պահպանել Կովկասից եկած հեղափոխականների հետ, իսկ Եփրեմին Թեհրանի ոստիկանապետ նշանակելու առթիվ ռուսական կառավարությունը խիստ բողոք էր ներկայացրել[2]:

Երկու տերությունների ներկայացուցիչների միջամտության շնորհիվ մի կարճ ժամանակ անց վերջ դրվեց պատերազմական գործողություններին և ընդհանուր խաղաղություն ազդարարվեց: Լյախովը, որ շահի կազակների գլուխն անցած կռվել էր հեղափոխականների դեմ, ապա վար էր դրել զենքերը, հիմա պարտավորվեց ծառայել նոր վարչակարգին: Որպես բրիգադի հրամանատար*, նա ուղղակիորեն ենթարկվում էր զինվորական նախարարին[3]: Կարճ ժամանակում՝ բրիգադի զինվորների թիվն ու զինվածությունը մեծացան[4]: Մեկ-երկու ամիս հետո, այդ զորամասը, որը չարունակեց մնալ Պարսկաստանի միակ կանոնավոր

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 100, 13 մայիսի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Սուրհանդակ»**, № 12, 21 հուլիսի 1909 թ.:

* Գնդապետ Լյախովը պարսկական կազակային բրիգադը գլխավորեց մինչև 1909 թ. վերջը, երբ նրան փոխարինեց ռուսական բանակի գլխավոր շտաբի գնդապետ, իշխան Ն. Պ. Վատրոլսկին (տե՛ս **М. Павлович, С. Иранский,** Персия в борьбе за независимость, с. 88-89):

[3] Տե՛ս **«Լրաբեր»**, № 28, 12 հուլիսի 1909 թ.:

[4] Տե՛ս **М. Павлович, С. Иранский,** Персия в борьбе за независимость, с. 87.

ռազմական միավորը, իր կազմում արդեն ուներ ավելի քան 1500 հոգի[1]:

Ընդհանրապես անհրաժեշտ էր արմատապես կարգի բերել զինվորական ուժերը ռազմական տեխնիկայի և կարգապահության ժամանակի պահանջներին համեմատ և որ շատ կարևոր էր՝ վերակառուցել դեմոկրատական հիմունքներով:

Այս առնչությամբ կառավարության առջև կանգնած կարևոր խնդիրներից էր ֆիդայության ընդգրկումը վերակազմավորվելիք բանակի մեջ:

Եվրոպական արդյունաբերության Պարսկաստան մտնելուց հետո արագորեն քայքայվել էին մանր տնտեսությունները և ստեղծվել էր լումպենպրոլետարների բավականին ստվար բազմություն, որը հեղափոխության օրերին կազմում էր սահմանադրական խմբերի բավական խոշոր մասը: Անգործ մնացած և կամ ոչ-երկարատև աշխատանքով ապրող լումպենների համար գոյության միջոց էր ֆիդայությունը, որը մի ժամանակ այնքան հրապուրիչ դարձավ, որ նույնիսկ աղքատ արհեստավորները թողնում էին իրենց խանութները և ուսն առնում հրացանը: Ընդ որում, Պարսկաստանի բազմազգ ֆիդայությունը շատ տարբերվում էր Թուրքահայ ֆիդայիներից: Վերջիններիս նպատակը ոչ թե հրացանի միջոցով իրենց ընտանիքները ***կերակրելն*** *էր, ինչպես Պարսկաստանի դեպքում, այլ նրանց պատիվն ու կյանքը* ***պաշտպանելը:***

Պարսկական հեղափոխական շարժման ղեկավարներն ըմբռնում էին, որ բնակչության լումպենացված մասը չի կարող հեղափոխության համար վստահելի և կայուն դաշնակից լինել, որ իրադարձությունների աննպաստ զարգացման դեպքում նա կարող է անցնել հետադիմության կողմը և դառնալ դրա գործուն աջակիցը: Ահա թե ինչո՛ւ չափազանց կարևոր նշանակություն էր ստանում ֆիդայական զինված խմբերը կազմակերպված բանակի մեջ որքան հնարավոր է արագ ձուլումը:

Բայց այդ խնդիրը թերի կատարվեց. նախ՝ ոչ բոլոր ֆիդա-

---

[1] *Տե՛ս* ***"История Ирана"****, с. 287.*

յական խմբերին հաջողվեց ներառել բանակաշինության ոլորտը, երկրորդ՝ բանակի մեջ մտնող այդ խմբերը պահպանում էին իրենց «ինքնավար» վիճակը և կազմվածքը:

Բանակաշինության գործում կառավարությունը գնաց նաև հեռուն գնացող ծայրագույն քայլերի: 1909 թ. սեպտեմբերին իշխանությունները փորձ արեցին զինաթափել Թեհրանում գտնվող ֆիդայիներին, առաջին հերթին՝ Կովկասից եկած կամավորներին և նրանց դուրս հանել երկրից: Այդ հողի վրա առաջ եկան տարաձայնություններ Եփրեմի և կառավարության նախագահի միջև, որոնք, սակայն, հարաբերությունների խզման չհասցրին:

Ստանալով Եփրեմի բարոյական աջակցությունը, ֆիդայիները չընկրկեցին կառավարության սպառնալիքների առջև: Նրանք հայտարարեցին, որ նախքան Թեհրան գալը իրենց տված խոստումներից որևէ մեկը չի կատարվել, սահմանադրությունն ըստ էության չի վերականգնվել, մեջլիսը չի գործում: Ֆիդայիների վճռական պահվածքն ուշքի բերեց կառավարությանը և նա ստիպված նահանջեց[1]:

Նոր կառավարությունը մի քանի տարտամ քայլերի դիմեց ազատվելու իր համար անվստահելի ու վտանգավոր պաշտոնյաներից և նրանց փոխարեն նշանակեց նորերին: Օրինակ՝ Ատրպատականի նահանգապետ նշանակվեց և Թավրիզ հասավ նախկին նահանգապետ Մոխբեր Սալթանեն (իսկական անունը՝ Հիդայաթ խան): 1908 թ. ամռանը, երբ միապետական կառավարության զորքերը շրջապատել էին Թավրիզը, նա անցել էր Եվրոպա և այժմ, դեպքերի նոր զարգացման շնորհիվ, երկիր էր վերադարձել[2]:

Իր գործունեության առաջին օրերից ժամանակավոր կառավարությունը ցույց տվեց, որ ինքը չի գնալու արմատական բարեփոխումների ուղիով: Դա պատահական չէր, քանզի իշխանության էին եկել ոչ թե բնակչության դեմոկրատական շերտերի

---

[1] *Տե՛ս "История Ирана", с. 285.*

[2] *Տե՛ս «Հայրենիք», № 11 (322), նոյեմբեր, 1952, էջ 48:*

ներկայացուցիչները, այլ՝ ազատական (լիբերալ) կալվածատերերն ու բախտիար խաները: Իշխանության մեջ թերևս բացառություն էր կազմում խոնարհ խավերից սերած Եփրեմ Դավթյանը:

Ծածանելով սահմանադրությունը վերականգնելու համար պայքարի դրոշը, բախտիար խաներն ըստ էության նպատակ էին դրել ամրապնդել իրենց ազդեցությունը ինչպես Բախտիարիայում, այնպես էլ ողջ երկրում: Նրանք բարձր՝ հիմնականում նահանգապետների և գեներալ-նահանգապետների, պաշտոններ ստացան ոչ միայն մայրաքաղաքում, այլև նահանգներում, մարզերում ու գավառներում[1]:

Կալվածատերերի և ավատապետական ազնվականության ազդեցությունը կառավարությունում գնալով ավելի ու ավելի մեծանում էր և նրանք ավելի ու ավելի էին գնում դեպի աջ: Օգտագործելով շահի նկատմամբ ժողովրդի տարած հաղթանակը, ազատական-կալվածատիրական ու բուրժուական շրջանները ձգտում էին արգելակել հեղափոխության խորացումը: Ավելին, Մահմեդ Ալի շահի գահընկեցությունից հետո կառավարությունը կանգնեց հետադիմության հետ մերձենալու և դեմոկրատական շարժումը ճնշելու հողի վրա: Մահապատժի ենթարկվեցին մի քանի երկրորդական հակահեղափոխականներ, իսկ հետադիմության սյուներն առաջվա պես իրենց ձեռքում էին պահում երկրի տնտեսական ու քաղաքական լծակները: Անձեռնմխելի մնացին միապետական կարգերը և դաջարական արքայատոհմը, օտարերկրյա կոնցեսիաներն ու ձեռնարկությունները, ինչպես նաև կազակական բրիգադը: Կառավարությունը նույնիսկ փորձ չարեց նախկին շահին պատասխանատվության կանչելու 1908 թ. հունիսի 10 (23)-ի արյունալի հեղաշրջման, մեջլիսը ջախջախելու համար: Ավելին, կառավարությունը իրանական հետադիմության պարագլուխ գահընկեց շահին նշանակեց տարեկան 100 հազար թուման թոշակ՝ ցմահ[2]:

---

[1] **Տե՛ս Михаил Сергеевич Иванов,** *Очерки истории Ирана, с. 238.*

[2] **Տե՛ս *"История Ирана"***, *с. 284*

Հեղափոխության հաղթանակից քիչ ժամանակ անց, շահի ջախջախած առաջին մեջլիսը կանոնավորապես սկսեց հավաքվել նիստերի և շարունակել օրենսդրական գործունեությունը: Թեհրանում և նրա շուրջն ստեղծվեց հարաբերական խաղաղություն: Կասպից ծովի եզերքից մինչև մայրաքաղաք ընկած տարածության վրա ազատորեն ու անարգել գործում էին անջումենները, վերականգնված էր սահմանադրական կարգը:

Բայց ընդամենն ամիսներ անց մեջլիսը, որ ժամանակին ինքն էր երկրում ազդարարել ազատության, հավասարության և եղբայրության բարձր ու վսեմ գաղափարներն ու սկզբունքները, վերասերված էր և չէր կամենում կամ ընդունակ չէր հետամուտ լինելու իր առաքելությանը:

Երկու ապացույցներ թերևս առավել ցայտուն էին արտահայտում մեջլիսի անկման աստիճանը: **Առաջին՝** հատուկ որոշումով նա Մոզաֆֆերէդդին շահի ստորագրած ու վավերացրած՝ Պարսկաստանի պետության սահմանադրության (հիմնական օրենք) մեջ փոփոխել կամ ավելացրել էր 107 հոդված, այդ թվում 58-րդ հոդվածը, որով, ինչպես վերը նշվեց, ոչ-մուսուլմաններին արգելվում էր նախարարի պաշտոն զբաղեցնել: Այդ որոշումով մեջլիսը եկավ սրբագործելու սովորության ուժով նախկինում գոյություն ունեցած կարգը՝ դա ձևակերպելով որպես հիմնական օրենք: Հռչակելով խտրականության նոր սկզբունք, նա նվիրագործեց տիրողի և ենթակայի գաղափարը, ինչը հակառակ էր սահմանադրության մեջ ամրագրված սկզբունքներին: **Երկրորդ՝** բացահայտորեն բռնաբարելով հայերի իրավունքը, մեջլիսը որոշում էր ընդունել, որի համաձայն՝ պարսկահայերը կարող էին այնտեղ ունենալ միայն մի պատգամավոր՝ անկախ երկրում ունեցած իրենց թվից[1]: Եվ դա արվում էր այն ժողովրդի նկատմամբ, որն իր եռանդուն գործունեությամբ նշանավոր ազդակ էր եղել Պարսկաստանում պառլամենտական սկզբունքը ոգի ու մարմին դարձնելու համար:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 180, 20 օգոստոսի 1911 թ.:

Նշված ամեն բացասականի կողքին, շատ իշխանավորների ցանկությունից անկախ, երևակվում էին դրականի ծիլերը:

Պարսկական հեղափոխության ամենամեծ բարիքն եղավ սահմանադրական կառավարության հռչակած խոսքի, մամուլի, ժողովների, միությունների ազատությունը, անձի և բնակարանի անձեռնմխելիությունը:

Արդեն հրապարակ էին եկել մի քանի պարսկական կուսակցություններ՝ **չափավորականների** (էթիդալներ), որի անդամները մեծ մասամբ կալվածատերեր և նախկին պետական պաշտոնյաներ էին, **դեմոկրատների**, որի մեջ ընդգրկված էին վաճառականներ, պետական միջին պաշտոնատարներ և մտավորականներ: Բախտիարներն ունեին իրենց կուսակցությունը՝ **Իթիֆաղ-Թերաղղը**-ն, իսկ մանր բուրժուաների կուսակցությունը **Էթեհադ-ուն** էր:

Այս վերջին երկու կուսակցությունները գտնվում էին ՀՅ դաշնակցության գաղափարական ուժեղ ազդեցության տակ: Բանն այնտեղ էր հասել, որ նրանք իրենց ծրագրերում մտցրել էին Ուրմիայում և Սալմաստում հայկական ինքնավարություններ ստեղծելու գաղափարը[1]:

Առաջին երկու կուսակցությունները հավասար չափով ուժեղ էին և իշխանությունը խլում էին միմյանց ձեռքից: Նրանք մեկ բարեկամանում էին հնչակյանների, մեկ դաշնակցականների հետ, ինչը վերջիններիս միջև նոր բախումների պատճառ էր դառնում:

Ոչ միայն համերաշխություն ու համատեղ գործելու ցանկություն չկային հայկական երկու կուսակցությունների միջև, այլև նրանցից յուրաքանչյուրը պարսկական կուսակցությունների նկատմամբ ընդգծված կայուն վերաբերմունք չուներ: Օրինակ՝ Թեհրանում հնչակյանները դեմոկրատների հետ էին, իսկ Ռեշ-

---

[1] Տե՛ս **«Ցուշարձան նուիրուած Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան քառասնամեակին»**, Փարիզ, 1930, էջ 192:

տում՝ էթիդալների, դաշնակցականները պաշտոնապես օգնում էին կառավարությունում մեծ կշիռ ունեցող էթիդալ կուսակցությանը, իսկ Ռեշտում կռվում էին այդ նույն կուսակցության անդամների դեմ[1]:

1909 թ. աշնանը պարսկական մեջլիսում սկսեցին ձևավորվել պատգամավորական խմբակցություններ, որոնց թվում իրենց նշանակությամբ և քաղաքական կշռով մեծագույնները երկուսն էին՝ դեմոկրատների և չափավորականների (էթիդալներ) կուսակցությունների խմբակցությունները:

Հայկական երկու կուսակցությունները՝ Հնչակը և Դաշնակցությունը հարում էին քաղաքական նշված ուղղություններից մեկին: Հնչակյանները, ի դեմս իրենց պարսկական կազմակերպության, մեջլիսում և դրանից դուրս համագործակցում էին դեմոկրատական կուսակցության հետ, որը համեմատաբար ավելի արմատական էր, քիչ թե շատ պաշտպանում էր երկրի ներքնախավերի շահերը (համենայնդեպս՝ իր ծրագրում արված հայտարարությունից դատելով), հանդես էր գալիս վերջնականապես երկրի գաղութացմանը ձգտող ցարական Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի իմպերիալիստական զավթողական քաղաքականության դեմ: Դաշնակցականներն սկզբում նույնպես հարում էին դեմոկրատներին, բայց 1911 թ. կեսերից սկսեցին համագործակցել չափավորականների հետ, իսկ մի տարի հետո՝ 1912 թ. հեռացան նրանցից:

Քաղաքական կյանքի աշխուժացումը նպաստում էր սահմանադրության իրական կերպարանք ստանալուն: Ընդ որում, դա տեղի էր ունենում նաև հեղափոխական ճամբարի ներսում ընթացող առճակատումների, համառ ու անդիջում պայքարի պայմաններում:

Այսպես՝ դեմոկրատական կուսակցության օրգան «Շարք» թերթը 1909 թ. սեպտեմբերին քննադատական խիստ հոդվածով հանդես էր եկել ներքին գործերի նախարար Սարդար Ասադի

---

[1] Տե՛ս **«Ցուշարձան նուիրուած Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան քառասնամեակին»**, էջ 192:

դեմ: Ստանալով վարչապետ Սիփահդարի համաձայնությունն ու խրախուսանքը, Սարդար Ասադը կարգադրություն էր արել փակել թերթը և ձերբակալել նրա հրատարակչին, միաժամանակ իր հրամանի կատարման պատասխանատվությունը դրել Եփրեմի վրա: Բայց վերջինս ընդվզել էր և հրաժարվել կատարել հրամանը: Նրա այդ քայլը լայն արձագանք էր գտել դեմոկրատական շրջաններում, մայրաքաղաքում առաջ էր եկել բողոքի ալիք, որի ճնշման տակ Սարդար Ասադը չեղյալ էր հայտարարել իր որոշումը:

Պարսկաստանի հյուսիսի հասարակական կյանքում, իհարկե ժամանակավորապես, որոշակի դեր էին կատարում Կովկասից եկած սոցիալ-դեմոկրատ բոլշևիկները[1]:

Եթե 1908 թ. երկրորդ կեսին Թավրիզի պաշտպանության պայքարում կարևոր ներդրում էին ունեցել սոցիալ-դեմոկրատ վրաց մենշևիկները, ապա 1909 թ. ամռանից սկսած այս անգամ նկատելի գործունեություն էին ծավալել բոլշևիկ կամավորները՝ հատկապես Գիլանում:

Բոլշևիկների կուսակցությունը նույնպես ճշտել էր իր վերաբերմունքը պարսկական հեղափոխության նկատմամբ: Նրա առաջնորդ Վլադիմիր Լենինը, չսահմանափակվելով այդ հեղափոխության առջև կանգնած խնդիրների տեսական վերլուծությամբ, նշել էր նաև կուսակցության՝ պարսկական ազատագրական շարժմանը աջակցություն ցույց տալու միջոցներն ու սահմանները. հատուկ թերթիկներ լույս ընծայելու, օրինական և ապօրինի կուսակցական մամուլում հոդվածներ տպագրելու, խորհրդարանական ամբիոնն օգտագործելու միջոցով հեղափոխականների հաջողությանը նպաստելու, ավելին՝ անմիջական մասնակցություն ունենալու նրանց պայքարին[2]:

---

[1] Անդրկովկասյան բոլշևիկների՝ պարսկական հեղափոխությանը ցուցաբերած բազմակողմանի աջակցության մասին տե՛ս "Красный архив"-ի հատոր 2 (105)-ում (1941 թ.) զետեղված նյութը (էջ 33-70)՝ Ե. Բոր-Ռամենսկու նեբածական հոդվածով:

[2] Տե՛ս **Վլադիմիր Լենին,** ԵԼԺ, հատ. 17, Երևան, 1978, էջ 223, 276:

Լենինն ասում էր, թե բոլշևիկներն ամենուր պետք է բացահայտեն պարսկական հեղափոխությունը խեղդելու գործում ռուսական ցարիզմի թափած ջանքերի բուն նպատակը, դատապարտեն «նրա միջամտությունն ուրիշի գործերին, նրա կողմից դեմոկրատիայի հիմնական սկզբունքի՝ ազգերի ինքնորոշման իրավունքի խախտումը»: Նա գրում էր. «Կորչի՛ ամեն մի գաղութային քաղաքականություն, կորչի՛ միջամտությունը ուրիշի հողին, օտար բնակչության կյանքին, կորչի՛ նոր արտոնությունների, նոր չուկաների, նեղուցների և այլնի համար կապիտալիստական քաղաքականությունը»[1]:

Այս դրույթներն իրենց հետագա զարգացումն ստացան ՌՍԴԲԿ համառուսաստանյան IV (Պրագայի) կոնֆերանսի համար Լենինի նախապատրաստած փաստաթղթերում: «Արդի մոմենտի և կուսակցության խնդիրների մասին» բանաձևում մերկացվում էին ցարիզմը, սևհարյուրյակային ազնվականությունը և ամրապնդվող արդյունաբերական բուրժուազիան, որոնք փորձում էին իրենց գիշատչական շահերը բավարարել «ազատության համար հեղափոխական պայքար մղող Ասիայի ժողովուրդների (Պարսկաստան, Չինաստան) դեմ ուղղված գաղութային զավթումների միջոցով»[2]:

Դումայի ընտրություններից շատ չանցած՝ «Բանվորական դեպուտատների մի քանի ելույթների հարցի շուրջը» թեզիսներում, որոնք հիմք ծառայեցին IV պետական դումայի սոցիալ-դեմոկրատական խմբակցության հայտարարության համար, Լենինը նորից ընդգծեց բանվորական դեպուտատների ելույթների կարևորությունը «Ռուսական կառավարության արտաքին քաղաքականության դեմ ընդհանրապես, հատկապես հիշատակելով ... Պարսկաստանը գրավելու «տենչանքները» (և սկսված գրավումները)»[3]:

Այս դրույթները դրվեցին բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության հիմքում: 1908 թ. նոյեմբերի վերջին, III

---

[1] Տե՛ս **Վլադիմիր Լենին**, ԵԼԺ, հատ. 17, էջ 278-279:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 223, 276:

[3] Տե՛ս նույն տեղում, հատ. 22, Երևան, 1979, էջ 239:

պետական դումայի սոցիալ-դեմոկրատական խմբակցությունը ռազմական նախարարին հղած հարցման մեջ բողոքում էր գնդապետ Լյախովի գործողությունների դեմ: 1909 թ. ապրիլին բոլշևիկներին հարած պատգամավոր Ի. Պ. Պոկրովսկին բողոքում էր այն բանի դեմ, որ սոցիալ-դեմոկրատական խմբակցության նշված հարցումը դուման քննության չէր առել: «Մենք,- հայտարարել է նա,- բողոքում ենք ժանդարմի այն դերի դեմ, որ ռուսական կառավարությունն իր վրա է վերցրել պարսկական կառավարության նկատմամբ»[1]:

Այդ գիծը շարունակեցին IV պետական դումայի բոլշևիկ պատգամավորները: 1912 թ. նոյեմբերին հրապարակված «Սոցիալ-դեմոկրատական խմբակցության հայտարարության» մեջ մատնանշվում էր, որ աշխատավոր դասակարգերը Ռուսաստանում չունեն այնպիսի շահեր, որոնք արդարացնեին զինված ընդհարումը»[2]: Հայտարարությունը հրապարակելուց առաջ բոլշևիկների ներկայացուցիչը հայտարարել էր, թե «Պարսկաստանում չկան այնպիսի շահեր, որոնք ստիպեին կառավարությանը դառնալու ... ժանդարմ»[3]:

Պարսկական հեղափոխության պաշտպանության գործում մեծ դեր խաղաց բոլշևիկյան մամուլը: *"Пролетар", "Рабочая Газета", "Социал-Демократ", "Звезда", "Правда"* տեղական կուսակցական հրատարակությունները եռանդուն կերպով հանդես էին գալիս Պարսկաստանում և Արևելքի մյուս երկրներում հեղափոխական շարժումների պաշտպանությամբ: Լենինից բացի, այդ հարցերի մասին գրում էին կուսակցական աչքի ընկնող հրապարակախոսները (Վ. Վ. Վորովսկի, Վլադիմիր Դմիտրևիչ Բոնչ-Բրուևիչ և ուրիշներ):

Բոլշևիկները զգալի աշխատանք տարան պարսից հեղափոխականներին օգնություն ցույց տալու գործը կազմակերպելու

---

[1] ***"Государственная дума. Третий созыв. Стенографические отчеты",*** *часть IV, СПб, стлб. 3122-3123.*

[2] ***"Государственная дума. Четвертый созыв. Стенографические отчеты. 1912-1913".*** *Сессия первая, часть I, СПб, 1913, стлб. 322.*

[3] *Там же, стлб. 320.*

համար*: Մի քանի քաղաքներում ստեղծվել էին «Իրանի հեղափոխությանն աջակցող հատուկ կոմիտեներ», որոնք Պարսկաստան էին ուղարկում զենք, ռազմամթերք, գրականություն, տպագրական պիտույք, փող: Զենքը Պարսկաստան էր ուղարկվում ոչ միայն Անդրկովկասից, այլև Ռոստովից, Պետերբուրգից, Մոսկվայից և Տուլայից: Հեղափոխական աշխատանք էր տարվում այն զորամասերում, որոնք նախատեսված էին ուղարկել Պարսկաստան[1]:

«Հատուկ կոմիտեները» նաև անցկացնում էին կամավորների ցուցակագրում ու զինում: Այդ աշխատանքներում հայ բոլշևիկներից եռանդուն ընդգրկված էին Սերգո Մարտիկյանը, Արտեմ Աղամալյանը, Ասատուր Կախոյանը և ուրիշներ: Կամավորները ծովային և ցամաքային ճանապարհներով ուղարկվում էին Հյուսիսային Պարսկաստան[2], որտեղ նրանք ձուլվում էին տեղի հեղափոխական ջոկատների մեջ, այլ ոչ թե գործում էին ազգային սկզբունքով, ինչպես դաշնակցական կամավորների պարագայում: Թիֆլիսում կամավորներ ուղարկելու գործը ղեկավարում էր բոլշևիկ Գ. Մաթիաշվիլին (Գիգո): Հեղափոխության տարիներին երկու անգամ Պարսկաստան է այցելել Մեշադի Ազիզբեկովը:

Պարսկաստան գնացող բոլշևիկ մարտիկների շարքերում զգալի թիվ էին կազմում Անդրկովկասի հայկական գավառներից մեկնածները: Հին բոլշևիկ Ասատուր Կախոյանը (Բանվոր Խեչո) վկայել է, որ իրենց «ընդհատակյա աշխատանքներից մեկն էլ

---

* Պարսկական հեղափոխության մեջ անդրկովկասյան բոլշևիկների գործունեությունը հանգամանորեն լուսաբանված է Գեորգի Հարությունյանի *"Иранская революция 1905-1911 гг. и большевики Закавказья" (Ереван, 1956)* մենագրությունում:

[1] **А. М. Матвеев,** *Из истории иранских революционных организаций в Средней Азии в начале XX в. (К вопросу о превращении России в центр мирового революционного движения). – "Взаимоотношения России и сопредельных стран Востока в XVIII - начале XX вв.", Ташкент, 1963, с. 151-152.*

[2] **Տե՛ս Георгий С. Арутюнян,** *Иранская революция 1905-1911 гг. и большевики Закавказья, с. 124.*

այն էր, որ Պարսկաստանի հեղափոխականներին օգնելու համար Ախթալայի կայարանի դիմաց մի գինեվաճառի խանութի գլխի սենյակում ռումբեր էինք պատրաստում: Արդեն մի քանի տասնյակ պատրաստել էինք ու հետզհետե փոխադրել Թիֆլիս, Առաքել Օկոյաշվիլու մոտ»[1]:

ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի որոշմամբ, բոլշևիկյան մի զինված ջոկատի գլուխ անցած, 1909 թ. ամռան վերջերին ծովով Պարսկաստան է ուղևորվում նշանավոր բոլշևիկ Գրիգորի Կ. Օրջոնիկիձեն (Սերգո): Ջոկատի կազմում 140 մարտիկներ էին՝ վրացիներ, հայեր, կովկասյան թուրք-թաթարներ[2]: Օրջոնիկիձեն Գիլանում մնաց մոտ մեկ տարի, մինչև 1910 թ. աշունը՝ իր աշխատանքները հիմնականում կենտրոնացնելով Գիլանի նահանգի կենտրոն Ռեշտում և Էնզելիում[3]:

Ռեշտ ժամանելուց անմիջապես հետո Օրջոնիկիձեն կապ հաստատեց իրանցի հայտնի հեղափոխական Սարդար Մուխիի (նույն ինքը՝ Մոիզ Սոլթան, իսկական անունը՝ Աբդոլ Հասան խան) հետ, որն ազատ արձակելով իր գյուղացիներին, զինված մի բազմամարդ ջոկատ էր ստեղծել:

Օրջոնիկիձեն և նրա հետ եկած բոլշևիկներն ամեն կերպ աջակցում էին Սարդար Մուխիին, մասնակցում հեղափոխական զինված նոր խմբերի կազմակերպմանը, անցկացնում էին զինավարժություններ, հիմնադրում ռումբերի ու նռնակների պատ-

---

[1] **Աստուր Կախոյան** (Բանվոր Խեչո), Հոդվածներ և հուշեր, «Հայպետհրատ», Երևան, 1963, էջ 72–73:

[2] Տե՛ս **Георгий С. Арутюнян**, Иранская революция 1905-1911 гг. и большевики Закавказья, с. 137.

[3] Տե՛ս **Михаил Сергеевич Иванов**, Очерки истории Ирана, с. 235-236, նաև՝ **А. Келенджеридзе**, Серго Орджонокидзе – журналист, с. 12: Զարմանք են պատճառում վերջին գրքույկի հեղինակի կողմնակալությունն ու բացահայտ հակահայկական կեցվածքը: Այնտեղ բանն այնպես է ներկայացված, որ, իբր, պարսկական հեղափոխությանը մասնակցած երկու-երեք տասնյակ վրաց սոցիալ-դեմոկրատներն են եղել կենտրոնական դեմքերը Գիլանում, նրանք են եղել գիլանյան արշավանքների շարժիչ ուժը: Միաժամանակ հայ մարտիկների թափած ջանքերը հավասարեցված են զրոյի, իսկ Եփրեմ խանը ներկայացված է միայն ու միայն հույժ բացասական որակումներով՝ անձնական թե հասարակական:

բաստման արհեստանոցներ, մասնակցություն էին ունենում Գիլանի միապետական զորքերի և խանական ավազակախմբերի դեմ մղվող մարտերին[1]: Բոլշևիկներն առանձնապես ազդեցիկ դեր խաղացին Թավրիզի և Ռեշտի հեղափոխական իրադարձություններում: Նրանց ջանքերով Ռեշտում ժողովրդական միլիցիա ստեղծվեց:

Պարսկական հեղափոխության ընթացքը լայնորեն լուսաբանվում էր բոլշևիկյան մամուլի էջերում՝ «Նոր խոսք» և «Կայծ» (Թիֆլիս), "Бакинский рабочий" և "Гудок" (Բաքու) թերթերում, «Թիֆլիս» հանդեսում և այլ պարբերականներում[2]:

Սերգոն Պարսկաստանից մշտական կապի մեջ էր արտասահմանյան բոլշևիկյան կենտրոնների հետ, պարբերաբար նամակներ էր գրում այդ ժամանակ Ֆրանսիայում գտնվող Լենինին[3]:

ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ (ՌԵՍՏԱՎՐԱՑԻԱՅԻ) ՎՏԱՆԳԻ ԴԵՄ

Ինչպես համարյա բոլոր քաղաքական կուսակցությունները, այնպես էլ մեջլիսը և ընդհանուր առմամբ իշխանությունները քաջ գիտակցում էին, որ սահմանադրական կարգերի գլխավոր թշնամին մնում էր Մահմեդ Ալին՝ թեև գահազուրկ: Կառավարության կամքից անկախ ձգձգվում ու անորոշության էր մատնված երկրից նրա հեռանալու հարցը: Նախկին շահի ռոճիկի խնդիրը, նրա հսկայական պարտքերը, ռուսաց արշավախմբերի ծախսերը և այդ ամենի հետ չաղկապված ուրիշ այլևայլ խնդիրներ կառավարությանը դրել էին ծայր աստիճան խճճված և անելանելի դրության մեջ:

Մինչդեռ հետադիմության սյուները զանազան պետությունների Թեհրանի դեսպանատներում բեստ նստած ղեկավա-

---

[1] **Տե՛ս "История Ирана",** *с. 282.*

[2] **Георгий С. Арутюнян,** *Иранская революция 1905-1911 гг. и большевики Закавказья, с. 108-121.*

[3] **Տե՛ս նույն տեղում, էջ 139:**

ում և ուղղություն էին տալիս սահմանադրության թշնամիներին, որոնց գործողություններին կառավարությունը մնում էր ակամա ականատես և անուժ էր խեղդելու նրանց ձգտումները[1]:

Քաղաքական տրամադրությունները հատկապես անորոշ էին Թեհրանում: Մի բան միայն չատ հստակ էր՝ դժգոհների թիվը մեծ էր և անգամ նոր կառավարության մեջ նկատելի էին այնպիսի տարաձայնություններ, որոնք ունակ էին վերջնականապես տապալելու նրան: «Եւ եթէ իշխանութեան մէջ հանդէս չգան իրենց պարտականութիւնները քաջ գիտակցող մարդիկ,- գրում էր «Ախուրեանը»,- ոչինչ լաւ բան սպասել չի կարելի: Նոյնիսկ մեջլիսը չէ կարող երկրին տալ ցանկալի հանգստութիւնը եւ բարեկեցութիւնը»[2]:

Նկատի ունենալով երկրի վտանգավոր կացությունը, սահմանադրական կառավարությունը դիմել էր Թեհրանում ռուսաց դեսպանությանը և առաջարկել չտապեցնել նախկին շահի մեկնումը Պարսկաստանից, ինչպես նաև պահանջել էր հանձնել մայրաքաղաքի օտարերկրյա դեսպանատներում բեստ նստած միապետականներին: Ռուսաց դեսպանության պատասխանը չէր գոհացրել կառավարությանը: Վերջինս տեղեկացվել էր, որ մինչև չպարզվեն ու չլուծվեն նախկին շահի հետ կապված դրամական բոլոր խնդիրները, նա մնալու է երկրում: Դեսպանատան պատասխանում նաև չեշտված էր, որ ռուսական զորքերը Պարսկաստանում կմնան այնքան ժամանակ, քանի դեռ չեն դադարել ներքին խռովությունները: Այդ ամենի հետ միասին ռուսաց դեսպանությունը նաև պահանջել էր բոլոր բեստ նստողներին ներում չնորհել և կյանքի անվտանգությունն ապահովել:

Կառավարությունն ստիպված էր եղել անել առաջին զիջողական քայլը՝ ներում չնորհել բոլոր բեստ նստածներին: Դժվար չէ պատկերացնել, թե ազատություն ստանալուց հետո նրանք ինչպիսի դիրք էին բռնելու սահմանադրական կառավարության նկատմամբ[3]:

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 20, 26 օգոստոսի 1909 թ.:

[2] **«Ախուրեան»**, № 66, 13 սեպտեմբերի 1909 թ.:

[3] Տե՛ս **«Հորիզոն»**, № 20, 26 օգոստոսի 1909 թ.:

Մահմեդ Ալիի գահընկեցությունից շատ չանցած, 1909 թ. հուլիսի սկզբներին Թեհրանից դուրս՝ Քերեջում տեղի ունեցավ առաջին լուրջ ընդհարումը սահմանադրական ազգայնականների և միապետականների միջև[1]: Զգալի կորուստներ տալով՝ վերջիններս ցրվեցին տարբեր ուղղություններով, վրեժխնդրությամբ տոգորված, խոստանալով չարունակել կռիվը, իսկ սահմանադրական ուժերը վերադարձան Թեհրան և նախապատրաստվեցին կանխել միապետականների նոր ոտնձգությունները: Սահմանադրականների առաջին հաջողությունը ցույց տվեց, որ իրենք ընդունակ են առանց օտարների միջամտության կարգ ու կանոն հաստատելու երկրում, իրավունք և քիչ թե շատ արդարություն մտցնել հասարակության մեջ, որից դարեր չարունակ զուրկ է եղել պարսիկ ժողովուրդը[2]:

Բայց տվյալ պահին կառավարության գերխնդիրը մնում էր հին կարգերի վերականգնման վտանգի չեզոքացումը: Երկրից նախկին շահի հեռանալը դառնում էր օրախնդիր:

Սահմանադրական կառավարությունը Մահմեդ Ալիին առաջարկում է տարեկան 45000 ռուբլի ցմահ կենսաթոշակ, որը գահընկեց շահը գտնում է «շատ չնչին եւ պահանջում է աւելացնել»[3]: Իր հերթին, Գերագույն խորհուրդը մի պատվիրակություն է ուղարկում Մահմեդ Ալիի մոտ և նրանից պահանջում չուտափույթ հեռացում երկրից և պետական գանձարան վերադարձնել պալատից տարած բոլոր ակնեղենը: Նախկին շահը համաձայնում է վերադարձնել ակնեղենը, բայց սակարկում է կենսաթոշակի չափի հարցում[4]:

Գահից զրկվելուց հետո Մահմեդ Ալին դեռ չորս ամիս մնաց Պարսկաստանում: 1909 թ. օգոստոսի սկզբներին նա իր մոտ է հրավիրում չորս արքայազնի և նրանցից խնդրում իր անունից միջնորդել նոր կառավարության առաջ, որպեսզի սա ներում չնորհի իրեն և թույլ տա խաղաղ ապրելու երկրի՝ իշխա-

---

[1] Տե՛ս **«Ախուրեան»**, № 51, 19 հուլիսի 1909 թ.:

[2] Տե՛ս **«Սուրհանդակ»**, № 2, 9 հուլիսի 1909 թ.:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 150, 14 հուլիսի 1909 թ.:

[4] Տե՛ս **«Ախուրեան»**, № 51, 19 հուլիսի 1909 թ.:

նությունների նպատակահարմար գտած մասում: Բայց մեջլիսը մերժում է այդ խնդրանքը և պահանջում հեռանալ Պարսկաստանից: Մեջլիսը նաև տեղեկացնում է, որ եթե այլ երկիր հեռանալուց հետո շահը փորձի Պարսկաստան վերադառնալ, նա կզրկվի իրեն նշանակած թոշակից[1]:

Դիվանագիտական շրջաններին շատ էր զբաղեցնում Մահմեդ Ալիի բնակության վայրի հարցը: Ռուսասեր նախկին շահը հենց սկզբից ցանկություն էր հայտնել ընտանիքով մեկնել Ռուսաստան՝ մշտական բնակության: Պետերբուրգն ու Լոնդոնը տալիս են իրենց համաձայնությունը: Ռուսական կառավարությունը նրան առաջարկում է ապրել Կալուգա քաղաքում՝ Ղրիմի վերջին խան Ղրիմ-Գիրեյի համար Եկատերինա II կայսրուհու ժամանակ կառուցված պալատում, ուր վերջին անգամ ապրել էր գերված Իմամ Շամիլն իր ընտանիքով[2]: Բայց շահը ցանկություն էր հայտնել բնակվելու Ղրիմում կամ դրա շրջակայքում որևէ հարմար տեղ[3]:

Նշենք, որ Պարսկաստանից գահընկեց շահի հեռանալու լուրը շուտով առաջ բերեց մեծ անախորժություններ նրա ընտանիքում: Մահմեդ Ալին պահանջում էր, որ իր տիկնանց տիկին Մելիքե Ջեհանն անպատճառ հետևի իրեն, ինչին կտրականապես դեմ էր որդին՝ դեռատի շահ Ահմեդը: Գնալով հոր մոտ, սա աղաչանք-պաղատանքով խնդրում է մորը թողնել իր մոտ, որովհետև առանց նրա ապրել չի կարող: Մահմեդ Ալին վճռականորեն մերժում է որդու խնդրանքը[4]:

Հետևյալ առավոտ մանկահասակ շահը իր մոտ է կանչում Սիփահդարին ու Սարդար Ասադին և լացակումած նրանց դիմում է ասելով, որ հորը պետք է թողնել Էնզելիում, նրա սեփականություն ձևակերպել այնտեղի նախկին շահական պալատը, իսկ ինքը մեջլիսի որոշմամբ իրեն հասանելիք ռոճիկով թեհրանից Էնզելի երկաթուղի կկառուցի, որպեսզի հաճախակի մեկնի

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (31), մայիս, 1925, էջ 36-37:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **«Սուրհանդակ»**, № 6, 14 հուլիսի 1909 թ.:

[4] Տե՛ս **«Ախուրեան»**, № 50, 17 հուլիս1909 թ.:

այնտեղ՝ մորը տեսնելու համար: Մանկամիտ շահի առաջարկի մասին անմիջապես հայտնում են Մահմեդ Ալիին, որը կտրականապես մերժում է որդու պահանջը, ասելով. «Ես անպայման պէտք է գնամ: Պարսկաստանում ոչ ոքի ես չեմ հաւատում եւ չեմ մնայ, նրանք (սահմանադրականները:- Հ. Ս.) ինձ կսպանեն»[1]:

Զհաշտվելով շուտով մորից բաժանվելու մտքի հետ, մանկահասակ շահը, լքելով գահը, մայրաքաղաքից փախչելու և ծնողներին միանալու փորձ է անում: Երբ այդ մտադրությունը բացահայտվում է և ուժեղացվում է շահական պալատի հսկողությունը, նա նույնիսկ փորձում է անձնասպան լինել: Այդ դեպքից հետո կառավարական շրջաններում մտածում են գահի վրա նոր շահ կարգելու մասին[2]: Առաջարկվում էր գահաժառանգ նշանակել Ահմեդ շահի տասնամյա եղբորը՝ Մահմեդ Հասան Միրզային[3]: Օգոստոսի 26-ին Թեհրանի ռուսաց դեսպանությունում տեղի էր ունեցել խորհրդակցություն, որին մասնակցել էր նաև հայտնի սահմանադրական Սեյիդ Հասան Թաղիզադեն: Իմանալով այդ մասին, Մահմեդ Ալին նրան հրավիրել էր իր մոտ և խնդրել աջակցել իրեն մնալու հայրենիքում: «Ես չեմ կարող եւ չեմ կամենում ապրել Ռուսաստանում,- ասել էր նա:- Ես սխալուել եմ իմ ռուս բարեկամների վերաբերեալ: Թոյլ տուէ՛ք հեռանալ Մեշհեդ, Մեքքա կամ Խորասան»: Թաղիզադեն այդ մասին հաղորդում է մեջլիսին, որը հրաժարվում է նույնիսկ քննարկել այդ հարցը[4]:

Մահմեդ Ալի շահի մեկնելու արձանագրությունը օգոստոսի 27-ին ստորագրում են ռուսաց ու բրիտանական դեսպանատների ներկայացուցիչները և Պարսկաստանի կառավարության անդամները: Օրվա երկրորդ կեսին, ժամը 4-ին, նախկին շահը ընտանիքի ու չքախմբի հետ Միրաբաղից ճանապարհ է ընկնում

---

[1] Տե՛ս **«Ախուրեան»**, № 50, 17 հուլիսի 1909 թ.:

[2] Տե՛ս **«Հորիզոն»**, № 1, 2 օգոստոսի 1909 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 24, 30 օգոստոսի 1909 թ.:

[4] Տե՛ս նույն տեղում:

Ռուսաստան[1]: Նրան ուղեկցում էին ռուսական և անգլիական պահակախմբեր: Թեհրանից մինչև Էնզելի ճանապարհը նախատեսված էր, որ կտևի 12 օր[2]:

Մահմեդ Ալին դեպի Կասպից ծով էր գնում ոչ թե հեղափոխական Թավրիզի, այլ Ղազվինի վրայով, ուր տեղակայված էր Պարսկաստանում ռուսական զինված ուժերի հրամանատարական կենտրոնը: Սեպտեմբերի 7-ին հասնելով Ղազվին, նա այստեղ ոտքի է հանում մի քանի թափառական ցեղերի, որոնք նրա ներշնչմամբ հրաժարվում են ճանաչել նոր կառավարությանը[3]:

Հասնելով Էնզելի, Մահմեդ Ալին իր տիկնանց տիկին Մելիքե Ջեհանի և արքայադուստր Զեբա խանումի, իր հարեմի ու չքախմբի հետ թողնում է երկիրը և «Սկոբելև» նավով, որին ուղեկցում էր «Գյոք-Թեփե» ռազմանավը, մեկնում է Ռուսաստան[4]:

1909 թ. սեպտեմբերի 19-ին նախկին շահը ափ է իջնում Պետրովսկում: Ռուսական իշխանությունները Կովկասի փոխարքային ժամանակավորապես փոխարինող իշխան Դեղեչկելյանիի գլխավորությամբ ամեն ինչ արել էին ապահովելու համար նախկին շահի անվտանգությունը: Սեպտեմբերի 20-ին վերջինս գնացքով մեկնում է բնակության նշանակված վայրը՝ Օդեսա: Նրա հետ էր 32 հոգի, հաշված կանանց ու երեխաներին: Սեպտեմբերի 23-ին Մահմեդ Ալին տեղ է հասնում[5]: Նիկոլայ II կայսրը հրաման է արձակում Մահմեդ Ալիին Ռուսաստանում պատվել «Նորին Մեծություն» և «Շահ» տիտղոսներով[6]:

Նախկին շահն իր ընտանիքով, հարեմով ու չքախմբով արտասահմանում պետք է ապրեր մեջլիսի՝ իրեն նշանակած տարեկան 500.000 թուման (2.500.000 ֆրանկ) նպաստով:

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 23, 29 օգոստոսի 1909 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 24, 30 օգոստոսի 1909 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 32, 10 սեպտեմբերի 1909 թ.:

[4] Տե՛ս "Сборник дипломатических документов ...", вып. III, СПб, 1912, с. 147.

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 153-155:

[6] Տե՛ս **«Սուրհանդակ»**, № 42, 13 դեկտեմբերի 1909 թ.:

Թեհրանից գահընկեց չահի մեկնելուց հետո, հոկտեմբերի 8-ին, Թավրիզից հայրենիք վերադարձավ գեներալ Մնարսկին: Քաղաքում մնացած ռուսական զորամասի հրամանատարությունն ստանձնեց գնդապետ Զապլինը:

ՄԵՋԼԻՍՈՒՄ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՐՑԸ

Երկրի կայունության ապահովման համար կարևորագույն նշանակություն էին ստանում նոր մեջլիսի ընտրությունների ժամանակին անցկացումը և նրա աշխատանքի կանոնավոր ընթացքին նպաստելը:

Պարսկական առաջին մեջլիսը, որն իր գոյության երկրորդ տարին դեռ չլրացած ցրվել էր, կազմված էր եղել, համարյա ամբողջովին, նշանակովի անդամներից:

Արդեն 1909 թ. հուլիսի վերջերին հրատարակվեցին ընտրությունների կանոնները, որոնց համաձայն՝ ընտրվելու իրավունք էին ստանում նվազագույնը 250 թուման արժողությամբ անշարժ կալվածքներ ունեցողները, որոնք տարեկան ստանում էին 50 թումանից ոչ պակաս եկամուտ և վճարում էին 10 թումանից ոչ պակաս հարկ: Ընտրելու իրավունքից նույնպես օգտվում էին կրթված անձինք: Մեջլիսի պատգամավորը պետք է լիներ հավատացյալ մուսուլման, իմանար պարսից լեզուն, լիներ 30 տարեկանից ոչ պակաս և 70-ից ոչ ավելի: Պատգամավոր չէին կարող լինել արքայազունները, պետական և զինվորական ծառայության մեջ գտնվողները և օտարականները[1]:

1909 թ. օգոստոսի սկզբին Ահմեդ չահի ստորագրությամբ հրատարակվեց հայտարարություն, որի համաձայն՝ Պարսկաստանի մեջլիսի նոր ընտրությունները տեղի էին ունենալու նույն տարվա սեպտեմբերին, իսկ բացումը կատարվելու էր նոյեմբերի սկզբներին[2]:

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 1, 2 օգոստոսի 1909 թ.:

[2] Տե՛ս **«Զանգակ»**, № 49, 3 սեպտեմբերի 1909 թ.:

Առաջին մեջլիսում պարսկահայերը պատգամավոր չունեին[*], *բայց հիմա, երկրորդ մեջլիսի նախընտրական շրջանում, նրանք առաջ քաշեցին համայնքից սեփական պատգամավոր ունենալու հարցը: Ավելին, նրանք երկու տեղ պահանջեցին:*

Պարսկական մեջլիսում մեկից ավելի հայ պատգամավոր ունենալու մասին ձեռնարկված միջոցառումներին էր նվիրված Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ ծ. վարդապետի՝ ընտրված կաթողիկոս Մատթեոս արք. Իզմիրլյանին հղած 1909 թ. հուլիսի 16 թվակիր նամակը[1]*:*

Հնդկաստան կատարած հովվական այցելությունից հետո Թեհրան վերադարձած Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդ Սահակ արքեպիսկոպոս Այվատյանը նույնպես դիմեց մեջլիսին՝ այնտեղ մեկից ավելի հայ պատգամավոր ունենալու հարցով: Այդ մասին Սահակ սրբազանը 1909 թ. հոկտեմբերի 28 թվակիր նամակով հայտնում էր Իզմիրլյանին[2]*:*

Եվ դա այն դեպքում, երբ չիա մուսուլման հոգևորականությունը վճռականորեն հանդես էր գալիս մեջլիսում ընդհանրապես հայերի ներկայության դեմ[3]*:*

Այս աննպաստ պայմաններում հայերի ախորժակն առանձին տեղերում ավելի էր բացվել: «Հորիզոն» թերթը հաղորդում էր, որ լսելով, թե մեջլիսում պարսկահայությանը տրամադիր են տալու միայն մեկ տեղ, Ռեշտի հայերը դուրս են եկել բողոքի և մեկի փոխարեն երեք պատգամավորական տեղ են պահանջում: Մերժում ստանալով, նրանք «բոյկոտ են արել մեջլիսի ընտրությունները»[4]*:*

«Հորիզոնը» նշում էր, որ Թեհրանում նույնպես հայերը պնդել են առնվազն երկու պատգամավոր ունենալու պահանջի

---

[*] *Մեջլիսի առաջին նստաշրջանում հայությունը ներկայացրել է աղայէ Բեհբըհանին (Սեյիդ Աբդուլլահ), տե՛ս Նորայր Մամյանի ուսումնասիրությունը, «Ռաֆֆի» տարեգիրք, Ա տարի, Թեհրան, 1969, էջ 400 (էջատակ):*

[1] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 13, թ. 4:*

[2] *Նույն տեղում, թ. 11:*

[3] ***«Հորիզոն»,** № 20, 26 օգոստոսի 1909 թ.:*

[4] *Տե՛ս նույն տեղում, № 287, 24 դեկտեմբերի 1909 թ.:*

վրայ, մեկը՝ Ատրպատականից, մյուսը՝ ներքին Պարսկաստանից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պատասխանել էր, որ այդպիսի իրավունք տալն իր իրավասությունից վեր է համարում և առաջարկում է այդ խնդիրը հարուցել նոր կազմվելիք երկրորդ մեջլիսում: Թերթը ողջունում էր, որ Թեհրանի հայերը նույնպես տրամադիր են չմասնակցել երկրորդ մեջլիսի ընտրություններին, մինչև որ երկու պատգամավորի տեղը չապահովվի: «Ցանկալի է,- իր հաղորդումն ամփոփում էր «Հորիզոնը»,- որ Թաւրիզի հայերը ... որոշէին իրենց դիրքը – մասնակցել [մեջլիսին] մէկ պատգ[ամաւորի] իրաւունքո՞վ, թէ՞ Ռաշտի եւ Թէհրանի նման վարուել»[1]:

Մեջլիսում մեկից ավելի պատգամավորական տեղեր ունենալու հայերի բուռն ցանկությունն ավելի շատ իրենց ազգային արժանապատվությանը հագուրդ տալու ձգտում էր:

Ի տարբերություն դաշնակցության օրգան «Հորիզոնի», Թիֆլիսի «Սուրհանդակ» թերթը «Զմտածած պահանջ» վերնագրով հոդվածում գրում էր. «Մերոնք (պարսկահայերը:- Հ. Ս.) մտածում են մի եղանակով, որ բոլորովին չի համապատասխանում [տվյալ երկրի հասարակական հոսանքների ներկայացուցչության] սկզբունքին: Նրանց տեսակէտն ընտրական խնդրում զուտ ազգայնական հովերով է թելադրուած: ... Ենթադրենք թէ երկու հայի տեղ նոյն իսկ չորս հայ ընտրուեց: Եւ ի՞նչ: Կարո՞ղ են դրանք ունենալ այս կամ այն ազդեցութիւնը...: Ընդհանուր պատգամաւորների թիւը Պարսկաստանում ենթադրւում է հասցնել 120-ի. այժմ հարց է առաջ գալիս, թէ այս 120-ի մէջ երկու հայ պատգամաւորը, իբրեւ հայ, ի՞նչ պիտի անէ»[2]:

Հոդվածագիրը չեշտում էր, որ «անպայման կարեւոր է, որ [մեջլիսի] ընտրութիւնները լինեն ոչ թէ ազգայնական, այլ՝ ընդհանուր կուրիաներում»: Բայց, ցավոք, «հայերի մտածող մասը գիտակցաբար, թէ անգիտակցաբար ոյժ է տալիս ըէակ-*

---

[1] ***«Հորիզոն»**, № 20, 26 օգոստոսի 1909 թ.:*

[2] ***«Սուրհանդակ»**, № 17, 17 օգոստոսի 1909 թ.:*

* *Նկատի ունի ազգային:*

ցիօն սկզբունքի: ... Մտցնել ընտրութեան մէջ ազգայնական սկզբունք, նշանակում է դարձնել մեջլիսը դատարկ կեղեւ եւ թուլացնել նրա ոյժը յետադիմութեան գրոհի առաջ: Պէտք է այնպէս անել, որ ազգային ոգին չկորչի բոլորովին, բայց տեղի տայ դասակարգայինին»[1]:

Ի վերջո համաձայնություն ձեռք բերվեց, որ երկրի երկու քրիստոնյա համայնքները՝ հայերն ու ասորիները միասին մեջլիսում ունենալու են մեկ պատգամավոր: Միայն 1910 թ. մարտին՝ երկրորդ մեջլիսի հրավիրումից չորս ամիս անց, այդ մեկ տեղի համար հայ պատգամավորի ընտրությամբ զբաղվող պատվիրակների ժողովը ձայների մեծամասնությամբ ընտրեց հմուտ պարսկագետ Հովսեփ Միրզայանին[2]:

Առաջին անգամ ժողովրդական քվեներով ընտրված «Մեջլիսի միլլին»՝ Ազգային ժողովը, բացվեց 1909 թ. նոյեմբերի 17-ին և աշխատեց երկրի սահմանադրությունից բխող ընտրական կանոններով սահմանված ողջ ժամանակաշրջանում[*]:*

Պարսկաստանի երկրորդ մեջլիսն ուներ բավականին ուժեղ ձախ դեմոկրատական ընդդիմություն, որի ղեկավարը Սուլեյման Միրզան էր, բայց, ամբողջությամբ առած, երկրորդ մեջլիսն առաջինից նվազ դեմոկրատական էր[3]:

Երկրորդ մեջլիսը կառավարության նախագահ նշանակեց

---

[1] ***«Սուրհանդակ»**, № 17, 17 օգոստոսի 1909 թ.:*

[2] ***Տե՛ս «Հայրենիք»**, № 11 (322), նոյեմբեր, 1952, էջ 48: Մինչեւ դաջարական արքայատոհմի իշխանության ավարտը 1925 թ., Պարսկաստանի մեջլիսի 2-րդ, 3-րդ և 4-րդ նստաշրջաններում երկրի հայությունը ներկայացված էր մեկ պատգամավորով՝ հանձինս Հովսեփ Միրզայանի: Սկսած 5-րդ նստաշրջանից (1925-1927) առ այսօր՝ իրանահայությունը երկրի օրենսդիր մարմնում ներկայացվում է երկու պատգամավորով: Ընդ որում՝ Հյուսիսային Իրանից ընտրվող պատգամավորը պաշտոնապես ներկայացուցիչն է ոչ թե հայերի, այլ՝ բոլոր քրիստոնյաների, հատկապես՝ հայերի ու ասորիների:*

[*] *Սահմանադրության տրամադրության համաձայն՝ Պարսկաստանի մեջլիսի գումարումները տևում էին երկու տարի:*

[3] ***Տե՛ս Георгий С. Арутюнян,** Иранская революция 1905-1911 гг. и большевики Закавказья, с. 135 (տողատակը):*

Սիփահդարին: Նոր մեջլիսում նա չթագադրված պատանի Ահմեդ շահի անունից կարդաց գահակալական ճառ, ապա հակիրճ կերպով ներկայացրեց կառավարության առաջիկա անելիքների ծրագիրը:

Կարևորագույն նշանակություն էր ձեռք բերում այն հարցը, թե որո՞նք են Պարսկաստանի կարիքները և թե այսուհետև մեջլիսն ու կառավարությունն ի՞նչ պարտականություններ ունեն Պարսկաստանի ժողովրդի հանդեպ:

Կառավարությունը նաև ձեռնարկեց տեղական անջումենների կազմի փոփոխմանը և համալրմանը: Հայերն իշխանությունների առջև խնդիր հարուցեցին համեմատական թվով անդամներ ունենալու նաև հայաբնակ գավառների ու նահանգների անջումեններում, ինչպես նաև քաղաքային և գավառային ինքնավարություններում: Մեջլիսը բավարարեց այդ խնդրանքը և հայերը ներկայացուցիչներ ուղարկեցին Թավրիզի քաղաքային, ինչպես նաև Սալմաստի, Ուրմիայի և Խոյի գավառների գավառային խորհուրդներ[1]:

ԵՓՐԵՄԻ ՀԱՂԹԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԴԵՄ

Մահմեդ Ալի շահի տապալումից հետո թվում էր, թե այլևս լուրջ խոչընդոտ չկա, որպեսզի սահմանադրական ռեժիմն ամուր հաստատվի Պարսկաստանում: Կրկին կյանքի էր կոչվել խորհրդարանը, ձևավորվել էր պատասխանատու կառավարություն՝ իր նախարարություններով, բանակի և ոստիկանության ղեկն իշխանությունների ձեռքում էր:

Բայց, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այդ ամենը բավական չէին պետականության նոր շենքը կառուցելու համար:

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 11 (322), նոյեմբեր, 1952, էջ 49:

Իշխանությունից հեռացված նախկին պետական պաշտոնյաները, միապետական խաները և հակահեղափոխական այն բոլոր ուժերը, որոնք երազում էին գահին Մահմեդ Ալի շահի վերադարձը, հենց սկզբից թշնամական դիրք բռնեցին նոր իշխանությունների նկատմամբ և կանգնեցին նրանց դեմ բացահայտ կռվի ճանապարհին: Բանը նրան էր հասել, որ զինված հակասահմանադրականները ցուցադրաբար տեղաբաշխվել էին մայրաքաղաքի մատույցներում և անպատկառորեն հայտարարում էին, որ երբեք չեն ենթարկվելու նոր կառավարության կարգադրություններին[1]:

Մեջլիսի ստեղծած Գերագույն խորհուրդը 1909 թ. հուլիսի վերջերին կյանքի էր կոչել մի գործադիր մարմին («մեջլիսը ֆովրիատե»), որի անմիջական խնդիրն էր ցրել մայրաքաղաքի շրջակայքում տակավին անկարգություններ անող միապետական սիլախոր, բախտիար, մամաղան և ցիզ ցեղերի զինյալներին: Չնայած բոլոր ջանքերին, առաջադրանքը կատարել չհաջողվեց:

Պարսկաստանն ընկղմվել էր անիշխանության մեջ. երկրում կային ամբողջ նահանգներ, որոնք փաստորեն անկախ էին կենտրոնական իշխանությունից: Դրանցից էր, օրինակ՝ անգլիական ազդեցության գոտու Բելուջիստան նահանգը: Գտնվելով մի կողմից Հնդկական օվկիանոսի և Պարսից ծոցի նավահանգիստների հարևանությամբ և մյուս կողմից կազմելով սրանց և Աֆղանստանի ու Թուրքեստանի գլխավոր երթևեկության ուղին, Բելուջիստանը չատ վաղուց հյուրընկալում էր բազ-

---

* *Վանդեա – նահանգ Ֆրանսիայում, որտեղ 18-րդ դարավերջի Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ տեղի էր ունեցել հոգևորականության և ազնվականության կողմից խարված գյուղացիների հակահեղափոխական ելույթը: Քաղաքացիական կռիվների ժամանակ Վանդեան խորհրդանշում ու բնորոշում է այնպիսի տարածքներ, որտեղ հեղափոխական ուժերի դեմ ծագած ապստամբություններն ու խլրտումները գլխավորում են ծայրահեղ հետադիմական ուժերը:*

[1] *Այդ մասին մանրամասն տե՛ս* ***«Հորիզոն»****, № 20, 26 օգոստոսի 1909 թ.:*

մաթիվ ավազակախմբերի և խռովարար ցեղերի: Օգտվելով բնական հարմարություններից ու տեղական պայմաններից, նրանք մեծ մասամբ զբաղվում էին մաքսանենգությամբ, և շատ լավ զինված լինելով, կենտրոնական կառավարությունից համարյա անկախ էին: Ժամանակին Նասրէդդին շահը շատ էր աշխատել նրանց նույնպես մյուս ցեղերի պես ենթարկել իր տիրապետությանը, բայց վերջնականապես չէր կարողացել ընկճել: Բելուջներն անվանապես ընդունել էին նրա վեհապետական իրավունքները, բայց ոչ միայն հարկ չէին վճարում, այլև համարյա ամեն տարի խռովություններ էին հարուցում, երբեմն ուղղակի ապստամբում էին, արշավանքներ կազմակերպում, գրավում գյուղեր ու քաղաքներ[1]:

Համարյա նույն պատկերն էր Լորիստան նահանգում, որը նույնպես գտնվում էր անգլիական գոտում՝ մի կողմից Թուրքպարսկական սահմանակից Ղասրե Շիրին – Քերմանշահ – Համադան և մյուս կողմից Սոլթանաբադ – Բրուջերդ – Դիզֆուլ – Խորեմաբադ քարավանային ճանապարհների միջև:

Կարելի է պատկերացնել, թե լորերի անհաշիվ ավազակախմբերի համար քարավաններ կողոպտելու ինչպիսի նպաստավոր պայմաններ կային: Այդ ավազակախմբերը նաև չարիք էին խաղաղ ու անպաշտպան բնակչության համար:

Ինչպես Բելուջիստանը, այնպես էլ Լորիստանը Մահմեդ Ալի շահի գահընկեցությունից հետո փաստորեն անկախ էին Թեհրանից: Նրանք նոր կառավարությանը ո՛չ հարկ էին տալիս և ո՛չ էլ զինվոր[2]:

Չնայած դրան, կառավարությունն առայժմ տրամադիր չէր պատժամիջոցներ կիրառելու անգլիական գոտու անհնազանդ նահանգների նկատմամբ: Պատճառն այն էր, որ նախ՝ կենտրոնական կառավարությունը չուներ անհրաժեշտ զինվորական ուժեր, և որ կարևոր էր՝ այդ նահանգները տրամադիր չէին նոր իշխանությունների դեմ լայնածավալ զինված պայքարի մեջ մտնելու, ինչը հետևողականորեն անում էին երկրի հյուսիսային

---

[1] Տե՛ս **«Նոր հոսանք»**, Բ տարի, № 6, հունիս, 1914, էջ 1019:

[2] Տե՛ս նույն տեղում:

և հյուսիսարևելյան նահանգների հակահեղափոխական ուժերը՝ գահընկեց շահի եղբայրներ Սալար Դովլեի (իսկական անունը՝ Աբոլֆաթհ Միրզա) և Շոաա Սալթանեի գլխավորությամբ:

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է Հյուսիսային Պարսկաստանը, որտեղ ծավալվող իրադարձությունների աչխույժ մասնակիցներ էին հայերը:

Սահմանադրական կառավարության՝ թեկուզ տարտամ ու անվճռական որոշ բարեփոխումների փորձերը ծայրահեղ թշնամանքով ընդունեցին Հյուսիսային Պարսկաստանի հակահեղափոխական ուժերը:

Ատրպատականի սահմանամերձ շրջաններում ապրող քոչվոր, զինված և ավազակություններով ապրող խավերը չպիտի հաչտվեին սահմանադրական կարգերի հետ: Նրանց ղեկավարները՝ Ռահիմ խան Զելեբիանլուն (նույն ինքը՝ Սարդար Նուսրեթը), Սամսամ խանը, Զարղամ խանը, Մոլլա Ղորբան Ալին և այլոք սկսեցին մոլեգնաբար մարտնչել նոր կառավարության դեմ:

1909 թ. ամռանը հակահեղափոխականների ձեռքում էին գտնվում Հյուսիսային Ատրպատականի ընդարձակ շրջաններ: Հակասահմանադրական ուժերը գլուխ էին բարձրացրել ու զենք էին ճոճում նաև Ռեչտում, Ղազվինում և Հյուսիսային Պարսկաստանի ուրիշ մասերում: Ցեղապետերի հրամանի տակ կային մեծ թվով հեծյալներ, որոնք «լուծում էին» հետևյալ գլխավոր խնդիրը՝ հարձակվել գյուղերի վրա, ցեղապետի համար լայնածավալ կողոպուտ կատարել և ձեռք բերած հարստությունը հսկել:

Ուժգին հարվածներից ուչքի եկած միապետականների չարժման մեջ չահերի զուգորդությամբ միացել էին բոլոր հարստահարիչ տարրերը՝ ազնվականությունը, ցեղապետները, նախկին պալատականները: Զէին դադարում նաև չիա հոգևորականության խարդավանքները: Մուջտեհիդներն ու սեյիդները, նորից ձեռք բերելով իրենց նախկին ահագին ազդեցությունը ժողովրդի վրա, վառ էին պահում կրոնական մոլեռանդությունը մի կողմից, մյուս կողմից՝ ներքին եղբայրասպան կռիվներ սարքում:

Հյուսիսային Պարսկաստանում մաքուր հեղափոխական, զուտ և անկեղծ սահմանադրական ուժերի թիվը փոքր էր, որ-

պեսզի կարողանային դիմակայել հետադիմականների խոչընդոտներին, ոտնձգություններին ու դավերին:

Եվ այդ թոհուբոհի մեջ ահռելիորեն տուժում էր խեղճ պարսիկ ժողովուրդը, թշվառ գյուղացիությունը, որ առաջվա պես կեղեքվում, հարստահարվում էր իրար հետ կռվող խանների, արկածախնդիր ավազակների ձեռքին:

Կենտրոնական իշխանության թուլության և անկարողության պատճառով դրությունն է՛լ ավելի էր վատթարացել Ատրպատականի հայության համար: Կացությունը հայերի համար անտանելի էր դարձել հատկապես գավառներում, առանձնապես՝ Ղարադաղում[1]: Ռահիմ խանի Ռուսաստան փախչելուց հետո այստեղ իշխանությունն ամբողջովին անցել էր Քերիմ խանի և նրա համախոհների ձեռքը: Այս խանը նույնքան հայատյաց էր, որքան իր նախորդը: Հայ գյուղացիների նկատմամբ չահատակությունները վերջ չունեին: Քերիմն իսկական պատուհաս էր հայերի գլխին, նրան չկար դատ ու դատաստան: Հայոց ազգային-թեմական իշխանությունն անդուլ-անդադար բողոքներ էր հղում գեներալ-նահանգապետ Մոխբեր Սալթանեին՝ պահանջելով մի ճար, մի դարման անել: Վերջինս հրամաններ էր տալիս, հեռագրեր հղում, բայց բորենիների այդ երկրում ո՞վ պետք է կատարեր նրա հրամանները:

Թեպետ ցեղապետներն իրենց հարձակումները հիմնականում կատարում էին կողոպուտի նպատակով, թեև նրանց գործողությունները չէին կարող փոխել իրերի դրությունը, բայց այդ հորդաների գոյությունն իսկ արհավիրք էր բնակչության համար: Նրանց գործողություններն, ի վերջո, կարող էին հուսահատության մեջ ձգել գյուղացիությանն ու վաճառականությանը և նրանց դուրս բերել կառավարության դեմ: Անդորրության բացակայությունն ու երկրի անորոշ հեռանկարը կարող էին հույժ բացասական ազդեցություն գործել ընդհանրապես պարսկական բուրժուազիայի վրա, առաջ բերել նրա անվստահությունը նոր կառավարության նկատմամբ, ինչի անմիջական

---

[1] *Տե՛ս* ***«Հորիզոն»****, № 12, 15 օգոստոսի 1909 թ.:*

հետևանքը կարող էր լինել պետությանը տնտեսական աջակցություն ցույց տալուց նրա հրաժարումը:

Բացի այդ, երկիրը դնելով խառնակ դրության մեջ, հորդաների գործողությունները տևական էին դարձնում օտար պետությունների միջամտությունը երկրի ներքին գործերին:

Մի խոսքով, Պարսկաստանը նման էր մրրկածուփ ալիքներին հանձնված նավի: Կհասնե՞ր երկիրը խաղաղ նավահանգիստ, թե՞ կուլ կգնար կատաղի ալիքներին – դեռ հայտնի չէր:

Բայց հաստատ հայտնի էր մի բան. անհրաժեշտ էր սահմանադրական Պարսկաստանը չուտափույթ մաքրել կողոպտիչներից ու ավերիչներից:

Այդ պահանջը հատկապես անհետաձգելի դարձավ այն բանից հետո, երբ Ռահիմ խանը, կիսավայրենի ցեղերի գլուխ անցած, 1909 թ. հուլիս-հոկտեմբերին ներխուժեց Հյուսիսային Պարսկաստանի անպաշտպան քաղաքներն ու գյուղերը՝ կողոպտելով բնակավայրերը, սպանելով խաղաղ բնակիչների[1]: Ավելին, չահսևան և դարադաղցի ցեղերը հարձակվել ու գրավել էին Արդաբիլ քաղաքը, այնտեղից փախուստի մատնել Թավրիզի ըմբոստության հերոս Սաթթար խանին, որին սահմանադրական նոր կառավարությունը նշանակել էր Արդաբիլի գավառապետ և նա Թավրիզից տեղափոխվել էր իր այդ աշխատավայրը[2]:

Դրությունը տագնապալից էր: Կառավարության նախագահը գտնում էր, որ այդ պահին օդի և ջրի պես անհրաժեշտ է միապետական ուժերի նկատմամբ տանել մի խոշոր հաղթանակ ևս՝ զսպելու համար հակահեղափոխության եռանդը և վերականգնելու օրվա իշխանության հեղինակությունը:

Հակահեղափոխական խռովությունը ճնշելու համար պետք էր մարտունակ արշավախումբ ստեղծել: Այդ նպատակով կառավարությունը դիմում է զանազան նշանավոր խաների ու սարդարների, բայց սրանք առաջադրում են աներևակայելի պայմաններ՝ մի քանի հազարանոց զորք և խոշոր դրամական

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 2, 4 օգոստոսի 1909 թ., նույն տեղում, № 20, 26 օգոստոսի 1909 թ., նույն տեղում, № 38, 6 դեկտեմբերի 1909 թ.:

[2] Տե՛ս **«Հայրենիք»**, № 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 70:

միջոցներ: Օրինակ՝ նրանցից մեկը՝ Մոնթասեր Դովլեն 10.000-անոց զորք և 100.000 թուման էր պահանջել[1]:

Պարզ էր, որ այդպիսի պահանջների կատարումը վեր էր կառավարության ուժերից, իսկ առաջարկ ստացածներն այդ միջոցով ուզում էին պատասխանատվության ծանր բեռը թոթափել իրենցից:

Հարցի հետագա քննարկման ժամանակ բոլոր նախարարները միակարծիք եղան, որ հույժ պատասխանատու այդ խնդիրը կարող է կատարել միայն Եփրեմը՝ գործակիցներ ունենալով բախտիարների հրամանատար Սարդար Բահադուրին (Սարդար Ասադի որդին), Ռեշիդ օլ Մոլքին (իսկական անունը՝ Նաղի խան) և Մեջդ օլ Մոլքին (իսկական անունը՝ Միրզա Մոհամմեդ խան Սենեկի): Նրանք իրենց հայ և բախտիար կամավորներով կարող էին մեկնել Զենջանի, Արդաբիլի և Թավրիզի շրջանները՝ վերջ դնելու անհնազանդ շահսևանների և ղարադաղցիների ավազակություններին ու նրանց ենթարկելու կենտրոնին[2]:

1909 թ. օգոստոսի 13-ին Եփրեմը մեջլիսին առաջարկեց ժամանակավորապես իր տրամադրության տակ դնել 200 կազակ, 250 ֆիդայի և 200 բախտիար ձիավոր[3]:

Ի վերջո կազմավորվում է արշավախումբ՝ բաղկացած չուրջ 700 զինյալներից: Աբրահամ խան Բախտիարիի (Հովակիմյան) և Ավետիս Վարդանյանի երկու խմբերում ընդգրկված էր մոտ 100 հայ կամավոր, իսկ Սարդար Բահադուրի ենթակայության տակ՝ 300 բախտիարցի հեծյալ: Վերջում արշավախմբին միացավ Խալիլ խան Միրփանջը՝ 100 պարսիկ կազակներով: Սրանց գնդացրորդը մազանդարանցի Ռեզա անունով երիտասարդն էր, որը տարիներ անց Իրանի շահն էր դառնալու (շահ Ռեզա Փահլավի)[4]:

Միապետականների դեմ գնալու Եփրեմի ձեռնարկած նա-

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 2 (26), դեկտեմբեր, 1924, էջ 68:

[2] Տե՛ս **«Հորիզոն»**, № 12, 15 օգոստոսի 1909 թ.:

[3] Տե՛ս **«Հայրենիք»**, № 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 70, **«Հորիզոն»**, № 12, 15 օգոստոսի 1909 թ.:

[4] Տե՛ս **«Հայրենիք»**, № 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 70:

խապատրաստությունները համահունչ էին իր կուսակցության՝ ՀՅ դաշնակցության որդեգրած քաղաքականությանը:

Ինչպես ընթերցողին հայտնի է, Դաշնակցության Չորրորդ ընդհանուր ժողովը (Վիեննա) 1907 թ. գարնանն ընդունել էր Պարսկաստանի սահմանադրական շարժմանը կուսակցության գործուն մասնակցության առաջադրանքը: Եվ ահա՛ այժմ, երկու տարի չորս ամիս հետո, 1909 թ. սեպտեմբերին, Վառնայում (Բուլղարիա) տեղի ունեցող ՀՅԴ հերթական՝ Հինգերորդ ընդհանուր ժողովը ևս հանգամանորեն քննության առավ Պարսկաստանի հեղափոխության խնդիրը և գտավ, որ նախորդ ժողովի այդ երկրի իրադարձությունների վերլուծությունը միանգամայն ճիշտ է եղել և որ կուսակցության որդեգրած ընթացքը պետք է շարունակել:

Լսելով Պարսկաստանի հեղափոխական շարժման ընթացքի մասին զեկուցումներ, ՀՅԴ Հինգերորդ ընդհանուր ժողովն ընդունել էր հետևյալ որոշումը.

«ՀՅԴ Հինգերորդ Ընդհ. Ժողովը հաւանութիւն տալով մեր գործունէութեանը Պարսկաստանի մէջ, գտնելով, որ այդ քայլերը եղած են Չորրորդ Ընդհ. Ժողովի որոշումներու կիրառումը՝ ժամանակի ու տեղի պայմաններու համաձայն, լսելով զեկուցումներ ապագայ մեր ընելիքներու մասին ու նկատելով՝ ա) Որ պարսկական շարժումները, ուղղուած աւատական դրութեան դէմ, սոցիալական յեղաշրջման բնոյթ ունին, բ) Որ Պարսկաստանի վերածնութիւնը իր մեծ օգուտը ունի Թիւրքիոյ, Կովկասի եւ Մօտաւոր (Մերձավոր:- Հ. Ս.) Արեւելքի վերածնութեան համար, գ) Որ Պարսկաստանի ներկայ շարժման յաջողութեանը մէջ է կայանալու ե՛ւ պարսկահայ ժողով[ու]րդի ազգային, կուլտուրական, ե՛ւ տնտեսական շահերու բարգաւաճումը, դ) Որ Դաշնակցութիւնը իր ակտիւ մասնակցութեամբ Պարսկաստանի շարժումներուն մէջ ապահովեց այն հասարակական-կուլտուրական կապը մեր եւ մահմետական ժողովուրդներու միջեւ, որ դարերէ ի վեր խզուեր է, ե) Որ մեր յարաբերութիւններու այդ նոր շրջանը իր անվիճելի օգուտն ունի մեր եւ մահմետական ժողովուրդներու մերձեցման տեսակէտէ՝ Կովկաս, ինչպէս նաեւ Թիւրքիա,

Որոշեց՝

Արտօնել Պարսկաստանի դաշնակցական իրաւասու մարմինները – որոնք մինչեւ այժմ պաշտօնապէս նկատուած են իբր օժանդակ Թիւրքիոյ եւ Կովկասի հանդէպ – հրապարակ գալ իբր յեղափոխական գործօն մարմիններ:

Նաեւ ատոր հետ, Ընդհանուր Ժողովը կը հրահանգէ. սերտ կապ պահպանել պարսիկ ժողով[ու]րդի դեմոկրատիկ տարրերուն հետ, կատարելով ընելիք բոլոր քայլերը գործակցութեամբ անոնց հետ»[1]:

Դաշնակցությունը երիտթուրքերի հեղափոխությունից հետո Թուրքիայում կորցրել էր մարտական ոգին, Ռուսաստանում այլևս մարտական գործողություններ չէր իրականացնում, բայց Պարսկաստանում նախկին Դաշնակցությունն էր՝ ամեն բոպե վտանգների մեջ նետվելու պատրաստակամությամբ ու ցանկությամբ:

ՂԱՐԱԴԱՂՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Եփրեմի կազմած արշավախումբը Թեհրանից մեկնում է 1909 թ. նոյեմբերի վերջերին և ուղղություն վերցնում դեպի Զենջանի շրջան:

Զենջան քաղաքը գրաված, այնտեղի սահմանադրական խումբն ամբողջովին կոտորած և շրջանում մեծ ազդեցություն ձեռք բերած Մոլլա Ղորբան Ալին միջոցներ էր ձեռք առել միանալու Խամսայի Ջհանշահ խանի և Ատրպատականի մի շարք ապստամբ ցեղերի հետ[2]: Տեղ հասնելով, Եփրեմի արշավախումբն անմիջապես ձեռնարկում է Ղորբան Ալիի հակահեղափոխական ուժերի զսպմանը: Լսելով կառավարական զորքի մոտենալու մասին, վերջինս զորահավաքի է ենթարկում իր ուժերը և պատրաստվում դիմադրության: Բայց արշավախմբի առաջին իսկ գրոհից հետո նա տեղի է տալիս և փախչում Քաղաս՝ նչա-

---

[1] ***«Հայրենիք»**, № 3 (409), մարտ, 1960, էջ 86-87:*

[2] *Տե՛ս նույն տեղում, № 2 (313), փետրվար, 1952, էջ 94:*

նավոր ցեղապետ Ամիր Աչրաֆի նստավայրը[1]: Ցեղապետի կալվածքներ են ուղարկվում մի խումբ մարտիկներ, որոնք գտնում ու կալանավորում են մոլլային: Եփրեմի կարգադրությամբ՝ ձերբակալվածը Թեհրան է ուղարկվում[2]:

Շուրջ 20 օր մնալով Զենջանում, Եփրեմն այդտեղ վերահաստատում է սահմանադրական կարգը: Նրա հրամանով՝ պատժվում են ժողովրդի վրա բռնություններ գործադրած մի քանի անձինք, գավառի կառավարչության մեջ աշխատանքի են նշանակվում իրենց անունը սև գործերով չարատավորած և բնակչության կողմից ընդունելի անձնավորություններ:

Այդ ամենից հետո միայն արշավախումբը շարժվում է դեպի Արդաբիլ և Ղարադաղ: Այս շրջանի՝ գահընկեց շահին նվիրված կիսանկախ, խռովարար ու ավազակաբարո ցեղերը բաղկացած էին մոտ 30 ճյուղավորումներից, որոնցից յուրաքանչյուրը միջին հաշվով 500 ձիավոր ուներ[3]:

Հակակառավարական ուժերի դեմ սկսվում են տևական կռիվներ, որոնք գնալով կատաղի կերպարանք են ստանում:

Դեռևս Թեհրանից արշավախմբի մեկնելուց առաջ Ատրպատականի ըմբոստ ցեղերին զսպելու նպատակով կառավարությունը Թավրիզից այդ շրջան էր ուղարկել Բաղր խանին՝ 4000 հոգով[4] և Ատրպատականի նահանգապետ Շուջաա Դովլեին (իսկական անունը՝ Սամադ խան), որոնք երկուսը միասին ավելի քան 5000 զինյալ ունեին: Բայց նրանք, տեղ հասնելով, Ռահիմ խանի ուժերի հանդեպ ունեցած վախից ռազմական գործողություն չէին ձեռնարկել: Ավելին, ապստամբների հետ եկել էին փոխադարձ համաձայնության՝ նախահարձակ չլինել և երկու կողմերի միջև չեզոք գոտի էր հայտարարվել Բուրավուջ գյուղն իր տարածքներով: Ըստ որում, Ռահիմ խանի, նրա որդի Բեոյյուք խանի և մյուս ցեղապետների պատկառելի ուժերը ռազմական տեսակետից ամուր դիրքեր էին գրավել «չեզոք

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 70:

[2] Տե՛ս նույն տեղում, № 2 (26), դեկտեմբեր, 1924, էջ 68:

[3] Տե՛ս նույն տեղում, № 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 71:

[4] Տե՛ս նույն տեղում:

գոտուց» վերևի գյուղերում և չրջակա անառիկ բարձունքների վրա[1]:

Գալով և Ալան-Բրագուչում հանդիպելով Բաղր խանին ու Շուջաա Դովլեին, Եփրեմը խստորեն դատապարտում է նրանց երկչոտությունը, և չնայած վերջինների զգուշության կոչերին, թե հակառակորդն ունի 15.000 ձիավոր[2], հաջորդ օրն իսկ նա, իր հետ վերցնելով հայ կամավորներից 15 հոգու, գնում է ուսումնասիրելու հակառակորդի առաջավոր դիրքերը: Հանդիպելով Ռահիմ խանի 60 հոգանոց ջոկատին, կամավորները կրակ են բացում: Մի քանի զոհ տալով, հակառակորդի ջոկատը լքում է կռվի դաշտը, իսկ հայ կամավորներն, առանց կորուստներ ունենալու, մտնում են Բուրավուջ և գրավում: Այդ գործողությունից հետո գալով Բուրավուջ, Շուջաա Դովլեն Եփրեմից ահաբեկված ու լացակումած խնդրում է չտապ հեռանալ «չեզոք գոտուց», այլապես Ռահիմ խանի հետ իրենց պայմանավորվածության խախտումը կարող է ճակատագրական լինել սահմանադրական ուժերի համար:

Եփրեմն ատում էր այդ վախկոտ ու նենգ մարդուն*: Նա լավ գիտեր, որ Շուջաա Դովլեն ժամանակին եղել է կատաղի միապետական, Թավրիզի ապստամբության ժամանակ եռանդով կռվել է սահմանադրականների դեմ: Ռուսական զորքը Թավրիզ ներխուժելուց հետո նրան Ատրպատականի նահանգապետ էին նշանակել: Պարզ էր, որ նման անցյալ ունեցող մեկը, թեկուզ այժմ կանգնած սահմանադրական զորքի գլուխ, անկեղծորեն չէր ցանկանա պարտված տեսնել Ռահիմ խանին: Ըստ նրա՝ վտանգավոր էր ճակատագրական ընդհարման գնալ բազմաքանակ և լավ զինված հակառակորդի հետ: Եփրեմը կտրականապես մերժում է նրա առաջարկը և հրահանգում անմիջապես վերադառնալ իր զորքի մոտ՝ Ալան-Բրագուչ և այնտեղ մնալ: Այդ զորքը, Եփրեմի կարգադրությամբ, պետք է կատարեր լոկ հետ-

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 71:

[2] Տե՛ս նույն տեղում, № 2 (313), փետրվար, 1952, էջ 94:

* Ի դեպ, «Շուջաա Դովլե» տիտղոսը նշանակում է «Պետության քաջը»...

նապահ զորամասի պարտականություն[1], պահեր արշավախմբի թիկունքը՝ արգելելու համար չահսևանների ենթադրյալ շարժումներն ու Ռահիմ խանին օգնության գալը: Պայմանավորվածության համաձայն, երբ Եփրեմի գումարտակը մտներ կռվի մեջ և դժվարություններ ունենար, Ալան-Բրագուչում մնացած զորքը պետք է չարժվեր և գար նրան օգնության: Նույն այդ նպատակով, Բաղր խանի գլխավորած զորամասը բանակել էր Ալան-Բրագուչից հեռու՝ Սերաբում:

Գիշերը տեղի է ունենում արշավախմբի ղեկավարների խորհրդակցություն, որի ընթացքում բախտիար և պարսիկ խմբապետները, Շուջաա Դովլեի և Բաղր խանի պես, դեմ են արտահայտվում Ռահիմ խանի վրա նախահարձակ լինելուն: Ուստի Եփրեմը որոշում է կռվի գնալ միայն հայ մարտիկներով՝ այդ մասին նույնիսկ չտեղեկացնելով նրանց:

Հաջորդ օրվա՝ 1909 թ. դեկտեմբերի 12-ի առավոտյան, ռազմախաղի դուրս գալու պատրվակով Եփրեմը 200 հայ մարտիկներով ուղղություն է վերցնում դեպի Ռահիմ խանի հորդաների կենտրոնատեղի՝ Ջամալաբադ[2]:

Մոտենալով հակառակորդի դիրքերին, գումարտակը հարձակման է անցնում: Հանկարծակիի եկած միապետական զորքը կորուստներ տալով նահանջում է: Նրան հետապնդելով, սահմանադրական զորամասը մտնում է Հարս գյուղը: Հակառակորդից գերի է ընկնում մոտ 100 հոգի, որոնց Եփրեմը զինաթափում է, ապա ազատ արձակում՝ պատվիրելով վերադառնալ իրենց գյուղերը և զբաղվել խաղաղ աշխատանքով: Կարճատև դադարից հետո Աբրահամ խանը և Ավետիսն իրենց հայ մարտիկներով չարժվում են դեպի այն լեռնանցքը, ուր Ռահիմ խանի ուժերը կտրել էին Ղարադաղի կենտրոն Ահար գյուղաքաղաք տանող ճանապարհը: Հայ կամավորներին միացել էին նաև բախտիար 300 հեծյալներ՝ Ջհանգիր խանի հրամանատարությամբ և պարսիկ կամավորների խումբը՝ Յար Մոհամմեդ խանի գլխավորությամբ:

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 71:

[2] Տե՛ս նույն տեղում, № 2 (313), փետրվար, 1953, էջ 94:

Զնայած Ռահիմ խանն ամուր պաշտպանական գիծ էր ստեղծել և ուժգին դիմադրություն ցույց տվեց հարձակվող սահմանադրական խմբերին, բայց վերջիններս համարձակ գրոհով կարողացան հակառակորդին դուրս մղել դիրքերից և հեռու չպրտել: Եփրեմն իր զորամասով արագորեն թափանցեց միապետականների անառիկ համարված վայրերը, ուր մինչ այդ պետական որևէ ուժ չէր կարողացել հասնել:

Իր 600 հոգանոց գումարտակի հետագա կռիվների մասին ՀՅԴ Արևելյան բյուրոյին ուղարկած հերթական նամակ-հաշվետվության մեջ Եփրեմը գրում էր*.

«Առաջին կռիւը տեղի ունեցաւ Մեհրաբանի եւ Ջամալաբադի շուրջը, որտեղ Ռահիմ խանի տղան բանակ էր դրել մի քանի հազար բաշիբոզուկներով: Ես ունէի երկու հարիւր հոգի եւ երկու գնդացիր: Կռիւը սկսեցինք երեք կողմից՝ յարձակւողը մենք էինք: Մի ուժեղ կրակից յետոյ զօրամասը շարժւեց: Դաշտերն ու սարերը սեւացել էին. գնդացիրները գործում էին անդադար: Կէս ժամից յետոյ շարժւել սկսեց Թշնամու բանակը. այդ հեղեղը կէս ժամ յետոյ բաժանւեց չորս մասի. այդ ապուշների փախուստը մեզ զարմացրել էր:

Թշնամուն 50 վերստ քշելով, հետեւում թողնելով Ղարադաղի լեռները, գրաւեցինք նրա բնակեցրած գիւղերը: Մի օր հանգստանալուց յետոյ շարժւեցինք դէպի Ահար: Ահար հասնելուն մնացել էր երկու աղաջ, երբ պարզեցինք, որ լեռնաշղթայի վրայ, երեք կողմից մօտ 600 հոգի ուժեղ դիրքեր են գրաւել՝ բոլորովին աննկատելի: Մեր առաջապահի վրայ նրանք ուժգին կրակ բացեցին երեք կողմից: Գրեթէ մեր բոլոր ձիերը խփւեցին (30-ի չափ), վիրաւորւեցին մեր զինւորներից չորս հոգի՝ երկու հայ եւ երկու բախտիարցի: Մի քանի ժամ յետոյ վիրաւորներից մի հայ՝ Ասլան անունով եւ մի բախտիարցի մահացան: Հրացանների ձայնի վրայ հասնում ենք ու սկսում երեք կողմի վրա կռիւը:

Մեր գնդացիրները հակառակորդի մարդկանց թափում են լեռներից, որոնք նոյնպէս բռնում են փախուստի ճանապարհը:

---

* Իր ռազմական գործողությունների մասին Եփրեմը պարբերաբար հաշվետվություններ էր ուղարկում Թիֆլիս՝ ՀՅԴ Արևելյան բյուրոյին:

Մեր զինուորներն այնքան արագ են հալածում նրանց, որ չեն թողնում ոչ գիւղ եւ ոչ քաղաք մտնել: Երկու ժամից յետոյ Ահարի դաշտավայրը մաքրւած էր եւ քաղաքը վերցւած էր: Գրաւեցինք մէկ դաշտային եւ մէկ լեռնային թնդանօթ՝ ռազմամթերքով:

Առաջին կռւում մեր կորուստը 4 ձի էր առանց մարդկային զոհերի, իսկ նրանցը՝ հարիւրից աւելի սպանւած եւ վիրաւոր, ձիերի հաշիւը չգիտեմ: Երկրորդ կռւում նրանց կորուստը 20 է, մերը՝ 2 սպանւած, 2 վիրաւոր եւ մօտ 30 ձի՝ սպանւած եւ վիրաւոր:

Հակառակորդները քաշւեցին Մուղան, ինչպէս պատմում են՝ ցրւել են, բաժանւելով հարիւրաւոր մասերի:

Եփրեմ»[1]*:*

Ահարի համար կռվում Եփրեմը վիրավորվել էր, բայց դա ուշադրության չարժեցող բան էր համարում, ուստի այդ մասին հիշատակություն չէր արել նամակում:

Եփրեմի ռազմագիտական անթերի տաղանդի շնորհիվ նրա գլխավորած արշավախումբն ընդամենը երկու շաբաթվա ընթացքում շահսևան և դարադաղցի 30 ցեղապետներին ստիպեց անձնատուր լինել: Ձերբակալվեցին նրանց ղեկավարներից 120 հոգի, որոնցից Ռահիմ խանին առավել մերձավոր զինակիցներից 59 հոգու Եփրեմը չղթայակապ դրեց զորքի տրամադրության տակ՝ Թեհրան տանելու և այնտեղ դատելու համար:

*Եփրեմի՝ փոքրաթիվ զորամասով տարած փայլուն հաղթանակների մասին տեղյակ էր ողջ Պարսկաստանը: Զրույցները գնալով ծավալվում էին, և նրա կերպարը պարսիկ ժողովրդի մոտ առասպելական երանգներ էր ձեռք բերում: Զավեշտական էր, որ պարսիկ ամբոխի մեջ ամեն օր համառորեն լուրեր էին տարածվում, թե Եփրեմը շուտով գնալու է Մեշհեդ կամ Քերբալա** *և այնտեղ փոխելու է իր կրոնը:*

---

[1] ***«Հորիզոն»***, *№ 56, 29 դեկտեմբերի 1909 թ.: Ահարի կռվի մանրամասների մասին տե՛ս նաև* ***"Сборник дипломатических документов ..."****, вып. IV, СПб, 1912, с. 8:*

* *Շիաների սրբազան քաղաքներից, որտեղ թաղված են նրանց սուրբ համարված իմամներից համապատասխանաբար Ռեզան եւ Հոսեյնը:*

Ահարը գրավելուց երկու օր անց գյուղաքաղաքն անսպասելիորեն շրջապատվեց շահսևանների մեծաքանակ ավազակախմբերով, որոնց դիմաց Եփրեմի ընդամենը 200 մարտիկներն էին: Ռահիմ խանը նույնիսկ բանակցություն սկսելու փորձ արեց Եփրեմի անձնատուր լինելու մասին, բայց կտրուկ մերժում ստացավ: Դրանից հետո խանի ուժերն Այփողանի բարձր լեռան կողմից գրոհի անցան: Միաժամանակ, լեռնականների մի հոծ ավազակախումբ հարձակվեց քաղաքից դուրս դիրքավորված ապագա շահ Ռեզա խան Միրփանջի գնդացրային մասի վրա, որը թեև ամեն ինչ արեց թշնամուն հետ մղելու համար, բայց երկար չէր կարող դիմադրել: Այդ ծանր պահին Աբրահամ խան Բախտիարին իր խմբով օգնության է հասնում Ռեզայի գնդացրային անձնակազմին և անմիջապես մտնում կռվի մեջ*: Գոտեմարտը շարունակվում է մինչև մութն ընկնելը: Գյուղաքաղաքի մյուս հատվածներում նույնպես հրացանաձգությունը դադարում է**:

Հաջորդ օրվա լույսը բացվելուն պես վերսկսվում է կռիվը: Ուժերը հույժ անհավասար էին՝ մեկի դիմաց 15–20 ռահիմական: Ընդհարումը բոպե առ բոպե կատաղի և արյունահեղ էր դառնում: Եփրեմը, թեև վիրավոր, շարունակում էր վարել գումարտակի կռիվը, մշտապես դիրքերում էր և իր օրինակով ոգեշնչում էր ենթականերին: Հակառակորդն այնքան էր մոտեցել Ահարի մատույցներին, որ նույնիսկ հնարավորություն էր ունեցել գերել

---

* Ռեզա խանը ծառայության մեջ է եղել գնդապետ Լյախովի գլխավորած պարսկական կազակային զորամասում՝ որպես գնդացրորդ: Շահ Մահմեդ Ալիի գահընկեցությունից հետո, երբ կազակային զորամասը անցել էր սահմանադրական կառավարության կողմը, Ռեզան նշանակվել էր գնդացրային ջոկատի հրամանատար: Ինչպես վերը նշվեց, Եփրեմի արշավախումբը կազմելիս նրա մեջ էր մտել նաև Խալիլ խան Միրփանջի գլխավորած կազակների 100 հոգանոց խումբը, որի կազմում եղել էր նաև Ռեզա խանի գնդացրային ջոկատը: Համաձայն մի վկայության, Եփրեմի տիկնոջ հետ ունեցած տեսակցության ժամանակ Ռեզա խանն ասել էր, թե ինքը կռիվներ ղեկավարելը սովորել է Եփրեմից և նրա գործելակերպին միշտ հետևելու է բոլոր ասպարեզներում (տե՛ս **«Հայրենիք»**, № 2 (313), փետրվար, 1952, էջ 94–95, էջատակը):

** Նշենք, որ Պարսկաստանում ընդհանրապես ընդունված չէր կռվել մութն ընկնելուց հետո:

գնդապետ Այուբ խանի կազակների խմբին[1]: Բարեբախտաբար, վրա հասած Ավետիսի խմբի մարտիկներն ուժգին կրակով հակառակորդին ստիպում են նահանջել:

Այդ ծանր պահին, 1910 թ. հունվարի 3-ին, Եփրեմին օգնության է հասնում նահանգապետ Շուջաա Դովլեն՝ 850 հոգուց բաղկացած զորամասով և թնդանոթներով: Զորամասի կազմում ընդգրկված էր Կովկասից հենց նոր եկած փիդայական մի ջոկատ: Հաջորդ օրը Եփրեմի գումարտակին իր զորքով օգնության է գալիս նաև Բաղր խանը: Կարճատև դիմադրությունից հետո Ռահիմ խանը խոհեմություն է հանդես բերում և իր հրոսակախմբերը հետ է քաշում:

Ահարի համար կատաղի կռվում հայ մարտիկները համեմատաբար քիչ կորուստներ էին տվել: Զոհվել էր կռվկասցի կամավորներից մեկը՝ Սալդատ մականունով: Բայց շատերը ծանր վերքեր էին ստացել: Վիրավորվել էին Դաշնակցական Խեչոն (ծնոտից), Աբրահամ խան Բախտիարին (աջ ձեռքից), արևմտահայ Վարդանը, սուրմալվեցի Միսակը, պարսկահայեր Սարգիսը, Հարությունը և Մուրադ խանը: Սարգիս անունով մի ուրիշ կամավոր գերի էր ընկել, բայց օրեր անց նրան հաջողվեց ազատել[2]: Այդ հայ մարտիկի գերվելը բացառիկ դեպքերից մեկն էր, քանզի Պարսկաստանում բոլորը գիտեին, որ ընդհանրապես, հայ կամավորները կռիվների ընթացքում մարտնչում էին մինչև վերջին փամփուշտը և նահատակվելը գերադասում էին հակառակորդին հանձնվելուց:

Ռահիմ խանն Ահարից հետ է քաշում մարդկային մեծ կորուստներ կրած իր զորքը: Շատ չանցած, իր զինակիցների հետ նա կարողանում է կարճ ժամանակում լրացնել կորուստները և պատրաստվել նոր հարձակման: Բայց Եփրեմը որոշում է կանխել նրան և հարձակման նախաձեռնությունը վերցնել:

1910 թ. հունվարի 11-ին տեղի ունեցած զինվորական խորհրդի նիստում Եփրեմը միանում է Սարդար Բահադուրի

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 73:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 74:

ներկայացրած ծրագրին, որը նախատեսում էր գրավել այդ պահին հակառակորդի ամենակարևոր դիրքը՝ Այփողան լեռը և դա հենարան դարձնել Ռահիմ խանի ավազակախմբերին նոր հարվածներ հասցնելու համար: Այդ ծրագրի կատարումն իրենց վրա են վերցնում բախտիարները, որոնք, չնայած սոսկալի ցրտին, Մոին Հոմայունի գլխավորությամբ հունվարի 13-ին հարձակվում են հակառակորդի դիրքերի վրա, նրան այնտեղից դուրս մղում և գրավում կարևոր նշանակություն ունեցող Այփողանը:

Հունվարի 14-ի առավոտյան Եփրեմն իր զորամասով դուրս է գալիս Ահարից և քաղաքից երկու մղոն հեռավորության վրա ընդհարվում է Ռահիմ խանի բազմանդամ հրոսակախմբերից մեկի հետ: Կռիվը տևում է 14 ժամ: Տալով 5 սպանված և 4 վիրավոր, Եփրեմը ջարդում է հակառակորդին: Դրանից հետո գումարտակը ստիպված է լինում վերադառնալ Ահար, որովհետև ղարադաղյան ավազակախմբերը կողոպտել էին բոլոր չրջակա գյուղերը և այդ պատճառով դրանցում ուտեստ ձեռք բերելու հնար չկար: Բայց վիճակը համարյա նույնն էր Ահարում, ուր պարենամթերքի սուր կարիքին ավելացել էին անտանելի ցրտերը և զորամասի զինամթերքի պակասը: Դրությունը բարդացել էր նաև նրանով, որ իր խնդիրը կատարած համարելով, Շուջաա Դովլեն իր զորամասով հեռացել էր Սերաբ:

Ծանր պարտություն կրած Ռահիմ խանը չէր ընկրկել: Հավաքելով ղարադաղյան նոր ավազակախմբեր, նա նորից հարձակման անցավ Ահարի վրա: Բայց խանին հեշտ չէր հաղթանակ տանել, թեև Ղարադաղում այդ օրերին ընթացող ռազմական գործողությունները նպաստավոր չէին Եփրեմի և իր զինակիցների համար:

Հավանաբար կենտրոնական կառավարության հորդորներով իր զորամասով հունվարի 18-ին Սերաբից Ահար վերադարձավ Շուջաա Դովլեն: Միաժամանակ իր կռվողներին մարտական բարձր վիճակի բերեց Բաղր խանը:

1910 թ. հունվարի 20-ի կողմը Ռահիմ խանի մոտ մնացել էին միայն նրա որդիներն ու թիկնապահները: Կառավարական զորքերի ճնշման տակ նա Ինաբա գյուղում թողնելով 2 թնդանոթ, 70 գրաստաբեռ արկ ու փամփուշտ, փախչում է ռուսական

սահմանի ուղղությամբ[1]: Հաջորդ օրը՝ հունվարի 21-ին կառավարական միացյալ ուժերը հակահարձակման անցան Ահարից 4-5 վերստ հեռավորության վրա դիրքավորված Ռահիմ խանի հեծելազորի դեմ: Կարճատև դիմադրությունից հետո սրանք խուճապի մատնվեցին, ցիր ու ցան եղան և փախուստի դիմեցին՝ կռվի դաշտում մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ թողնելով:

Հետապնդելով հրոսակախմբերին, կառավարական զորքերը հունվարի 23-ին գրավեցին լավ պաշտպանված Քալաքբար մեծ գյուղը: Ռահիմ խանն ապաստանեց իր սեփական Շաքարլու գյուղում: Տեղեկանալով, որ սահմանադրականները պատրաստվում են շարժվել գյուղի վրա, նա այդտեղից հունվարի 24-ին հեռագիր հղեց Թիֆլիս՝ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, խնդրելով իրեն և իր 200 հոգանոց ընտանիքին թույլ տալ ապրել Ռուսաստանում: Իմանալով այդ հեռագրի մասին, Թեհրանում Ռուսաստանի դեսպանության թարգման Պոկլևսկի-Կոզելը նույն օրը Կովկասի փոխարքային տված հեռագրում գրում էր. «... Ինձ թվում է, որ ռուսական սահմանը Ռահիմ խանի անցնելուց հետո մենք պետք է ոչ միայն նրան հեռացնենք Ռուսաստանի խորքերը, այլև պահենք խիստ հսկողության տակ»[2]:

Ստանալով Ռահիմ խանի և Պոկլևսկի-Կոզելի հեռագրերը, փոխարքան հետևյալ հեռագիրն է ուղարկում Ելիզավետպոլի նահանգապետին. «Թույլատրում եմ բաց թողնել սահմանն անցնելու միայն Ռահիմ խանին, նրա ընտանիքին և սահմանափակ թվով մերձավորների՝ վերջիններից հավաքելով զենքերը: Մնացած ձիավորներին թույլ չտալ անցնելու [մեր] սահմանը: Խնդրում եմ կտրուկ միջոցներ չձեռնարկել նրան վռնդելու [պարսից] սահմանից այն կողմ: Պարզե՛ք սահմանն անցածների թիվը և նրանց փոխադարձ հարաբերությունները: [Սահմանի] նոր անցումներ թույլ մի՛ տվեք»[3]:

Այլ ելք չունենալով, ժողովրդից «Ատրպատականի ավերիչ

---

[1] Տե՛ս "Сборник дипломатических документов ...", вып. IV, с. 27.

[2] Նույն տեղում, էջ 26:

[3] Նույն տեղում, էջ 27:

բորենի» մականունն ստացած Ռահիմ խանը Խուդափերինի կամրջով անցնում է ռուսական կողմը՝ Ջերրայիլ, ապա Կարյագինոյի մոտ զենքերը հանձնում ռուս սահմանապահ զորամասին[1]: Այստեղ էլ փախստական խանին հայտնում են, որ նրան և ընտանիքին թույլատրված է ապրել Եկատերինոդար քաղաքում:

Թեհրանի «Իրան-նոու» լրագիրը այդ առթիվ ռուսական կառավարության դեմ ուղղված մի հոդված էր տպագրել, որով Եվրոպային կոչ էր անում բողոքելու նրա գործողությունների դեմ, միաժամանակ պարսիկներին հորդորում էր չբարեկամանալ այդ երկրի հետ, որն ապաստան է տվել իրենց ոխերիմ թշնամիներից մեկին, ինչպես նաև ուրիշ շատ վնասներ է պատճառել Պարսկաստանին[2]:

Մահմեդ Ալի շահի անկումից հետո Ռահիմ խանի անկումը հակասահմանադրականներին հասցրած երկրորդ խոշոր հարվածն էր:

Իմանալով Ռահիմ խանին Ռուսաստանում ապաստան տալու մասին, Պարսկաստանի մեջլիսը պահանջեց նրան վերադարձնել երկիր: Ռուսական կողմը կտրականապես մերժեց: «Իրան-նոու» թերթը նշում էր, որ մերժման պատճառը մեկն է. խանին վերադարձնելու դեպքում նա դատարանի առաջ բացահայտումներ կանի, կասի, թե ո՞վ է իրեն նեցուկ եղել և դիմադրության հրահրել սահմանադրական կառավարության դեմ[3]:

Դրանից հետո ռուսական կառավարության և գահընկեց շահի անունով սահմանադրական ուժերին պատերազմ է հայտարարում Դարաբ Միրզան, որը որպես սպա ծառայում էր ռուսական բանակում: Սահմանադրական զորքը Զարկար գյուղի մոտ վրա է հասնում Դարաբ Միրզայի ջոկատին և ձեռնարկում նրա ջախջախմանը: Տեղի է ունենում կատաղի կռիվ, որի ընթացքում ռուս կազակական մի զորամաս օգնության է գալիս

---

[1] Տե՛ս **М. Павлович, С. Иранский,** *Персия в борьбе за независимость, с. 57, նաև* ***«Ախուրեան»****, № 7, 28 հունվարի 1910 թ.:*

[2] Հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս ***«Ախուրեան»****, № 9, 4 փետրվարի 1910 թ.:*

[3] Տե՛ս ***"Сборник дипломатических документов ..."****, вып. IV, с. 62.*

միապետականներին, բայց վերջիններս չեն խուսափում պարտությունից: Ձախողության է մատնվում Պարսկաստանի սահմանադրական կառավարության դեմ ապստամբություն բարձրացնելու այս փորձը նույնպես. Դարաբ Միրզան հարկադրված փախչում է Կովկաս:

1910 թ. հունվարի վերջին ամբողջ Ղարադաղն արդեն Եփրեմի ու նրա զինակիցների ձեռքում էր: Սահմանադրականների ոգևորությունը չափ չուներ: Մարդիկ հույս ունեին, որ, վերջապես, ամբողջ Փայտակարանը ընդմիշտ կմաքրվի կեղեքիչ խաների ճիրաններից և, այդպիսով, վերջ կտրվի Ատրպատականի ալեծուփ դրությանը: Այդ հույսն ավելի խորացավ, երբ պարսից կառավարությունը ռուսական կողմից պահանջեց վերադարձնել Ռահիմ խանին, որպես պատերազմական հանցագործի:

Ռահիմ խանի փախուստից հետո Բաղր խանը իր զորամասով վերադարձավ Թավրիզ, իսկ Եփրեմը և Բահադուրը մի քանի օր մնալով Քալաքբարում, ձեռնարկում են Ղարադաղը զինաթափելու գործին:

Նրանց հրամանով, Ղարադաղի մյուս ցեղապետները, լինեին նրանք Ռահիմ խանի եռանդուն կողմնակիցներ, թե ընդհարումների ժամանակ չեզոք մնացած անձինք, գալիս են Քալաքբար և հպատակություն հայտնում:

Ժամանակին Ղարադաղում ուսուցչություն արած Եփրեմը լավ գիտեր տեղի հայերի կացությունն ու հոգսերը: Նա իր թիկնապահ Գրիչ Դանիելյանին և մի քանի ուրիշ տղաների ուղարկում է գավառի հայկական գյուղերը՝ բարձրացնելու բնակիչների բարոյական ոգին, ուսումնասիրելու հուզող խնդիրները, պատժելու գյուղացիներին ատելի ներքին (հայազգի) ցեցերին:

Ղարադաղի զինաթափումը պահանջեց լարված աշխատանք, ուստի որոշ ժամանակով հետաձգվեց Եփրեմի և Բահադուրի՝ Թավրիզ մեկնելը, որը նախատեսված էր մարտական ծրագրով:

Մինչ սրանք զբաղված էին Ղարադաղի խնդիրներով, մայրաքաղաք Թեհրանում մեջլիսը 1910 թ. փետրվարի 1-ին հրավիրեց հատուկ նիստ՝ նվիրված ժողովրդական ազատագրության հերոսներ Սաթթար և Բաղր խաներին: Բազմաթիվ պատգամա-

վորներ նրանց բացակայությամբ փառաբանական ելույթներ ունեցան: Նիստի վերջում մեջլիսը միաձայն որոշեց՝ «Հյուսիսային Իրանում տարած տպավորիչ հաղթանակների համար» Սաթթար խանին շնորհել սարդարի աստիճան և նշանակել ցմահ թոշակ՝ տարեկան 6000 ռուբլի, իսկ Բաղր խանին՝ տարեկան 4000 ռուբլի[1]:

Երբ Սաթթարն ու Բաղրը Թեհրանում հեռակա կարգով մեջլիսի պատիվներին էին արժանանում, Ատրպատականի նահանգապետը հայտնեց իր անհամաձայնությունը մեջլիսի ընդունած որոշումներին և վճռեց զինաթափել նրանց: Թեհրան ուղարկած հեռագրով այդ մասին հայտնում էր Թավրիզում ռուսաց հյուպատոս Միլլերը, ավելացնելով, որ քաղաքի բնակչության մեծ մասը հավանություն է տալիս նահանգապետի այդ մտադրությանը[2]:

Բայց նահանգապետին խորհուրդ տվեցին չգնալ այդ վտանգավոր քայլին և նա հրաժարվեց իր անիմաստ հղացումից: Ավելին, նահանգապետը Սաթթար և Բաղր խաների հետ սկսեց Ղարադաղից վերադարձող Եփրեմին, Բահադուրին և կովկասցի կամավորների խմբին արժանավայել դիմավորելու պատրաստություններ տեսնել:

1910 թ. փետրվարի 1-ին մեկնելով Ղարադաղից, Եփրեմը փետրվարի 10-ին հասավ Թավրիզ՝ իր հետ ունենալով բախտիարների զորամասը՝ Սարդար Բահադուրի հրամանատարությամբ և պարսիկ կազակների մի հարյուրյակ՝ ընդամենը 600 զինյալ: Նրանք իրենց հետ վերցրել էին Ղարադաղում ձերբակալված ցեղապետներին: Այդ օրը հազարավոր մարդիկ դուրս էին եկել փողոցներ՝ ողջունելու հերոսներին: Զէ՞ որ առաջին անգամ էր, որ պետական բանակը կարողացել էր մուտք գործել Ղարադաղի անառիկ համարված չրջանները, ընկճել ըմբոստ խռովարարներին, անպարտելի հռչակված Ռահիմ խանին փախուստի մատնել և նրան հավատարիմ մի չարք ցեղապետների ձերբակալել: Բոլորի չուրթերին Եփրեմի անունն էր: Երեկոյան

---

[1] *Տե՛ս **«Մշակ»**, № 23, 2 փետրվարի 1910 թ.:*

[2] *Տե՛ս **"Сборник дипломатических документов ..."**, вып. IV, с. 48.*

Սաթթար և Բաղր խաները Եփրեմի պատվին կազմակերպեցին մեծ տոնախմբություն: Ավելի բուռն էր հայ համայնքի խանդավառությունը, որ արտահայտվում էր ընդհանրապես արշավախմբի և մասնավորապես նրա զույգ ղեկավարների ու հայ մարտիկների հանդեպ: Թավրիզից Թեհրան փետրվարի 11-ին ուղարկած հեռագրով Միլլերը հաղորդում էր. «Եփրեմն իր ջոկատով այստեղ է եկել երեկ: Հանդիսավոր ընդունելություն եղավ: Տեղի հայերը նրան պատիվներ են տալիս իբրև ազգային հերոսի»[1]: Նրանք հպարտ էին, որ հայ զինվորը ամենուր խիզախ է ու անվեհեր և այդ մասին գիտեն ամբողջ երկրում:

Հիրավի, հենց այդ ժամանակ ռուսական մի հրատարակությունում տպագրված հոդվածի հեղինակ Կ. Սմիրնովը, որը քաջատեղյակ էր Պարսկաստանի իրադարձություններին, գրում էր, որ ռուսական շրջաններում մինչև այժմ էլ շրջանառվող «Դու վախկոտ ես, նշանակում է՝ հայ ես» պուշկինյան արտահայտությունը դոյզն իսկ չի համապատասխանում իրականությանը: Հեղինակը դա համարում էր անմտություն և ամբողջովին հերքում որոշակի փաստերով: Նա նկարագրում էր, թե ինչպես հայ ֆիդայիները Պարսկաստանի վրայով սակավաթիվ խմբերով Թուրքիա են անցնում անվախ ու համարձակ՝ կուրծք տալով համիդիեների և թուրքերի բազմություններին: Ճիշտ նման քաջություն հայերը ցուցաբերում են պարսկական իրադարձություններում, գրում էր հոդվածագիրը, և ավելացնում, որ այս երկրում հայությունն «անընդհատ տվել է և շարունակում է տալ հերոսների մի երկար շարք»[2]:

Թավրիզում Եփրեմի ջոկատին միացավ Քեռու ջոկատը, որն ապստամբ քաղաքում կռվում էր 1908 թ. հոկտեմբերից:

Ատրպատականի նահանգապետը և Թավրիզի անջումենը փետրվարի 14-ին Եփրեմին առաջարկեցին իր զորամասով գնալ նահանգի սահմանածայրերը՝ Սուջ-Բուլաղ և Ուրմիա՝ քրդերի և այլ հրոսակ ցեղերի ավարառությունից ազատելու հիշյալ վայրերը: Եփրեմը մտադիր չէր կատարել այդ գործողությունը,

---

[1] ***"Сборник дипломатических документов ..."***, *вып. IV, с. 58.*

[2] ***"Известия штаба Кавказского округа"***, *т. 28, Тифлис, 1910, с. 42.*

քանի որ չատ հոգնած իր մարտիկները գոնե կարճատև հանգստի կարիք ունեին:

Ներքին ու արտաքին լուրջ վտանգների առջև կանգնած կառավարության ղեկավար Սիփահդարը Թավրիզում գտնվող Եփրեմին փետրվարի 22-ին առաջարկեց չտապ վերադառնալ Թեհրան:

Թեպետ այդ առաջարկությունը համապատասխանում էր հերոսի ցանկությանը, բայց նա մերժեց, պատասխանելով, որ հակահեղափոխական ոչ բոլոր օջախներն են մարված, ուստի այդ պատճառով հետաձգում է իր վերադարձը մայրաքաղաք:

ԱՐԴԱԲԻԼԻ ԳՐԱՎՈՒՄԸ

1910 թ. մարտին ծայրահեղ ծանր դրություն էր ստեղծվել Արդաբիլ քաղաքում և նրա հարակից գավառներում:

Խաների գլխավորած չահսևան ցեղերն այս շրջանում վաղ ժամանակներից ըստ էության կիսաանկախ վիճակում էին, պարբերաբար հարձակումներ էին գործում խաղաղ գյուղերի վրա, կողոպտում բնակչությանը, միշտ վտանգի տակ պահում Արդաբիլ-Միանե և Արդաբիլ-Աստարա ճանապարհներն ու դրանց երկու կողմերում ընկած տարածքները: Կենտրոնական կառավարությունը թե՛ չահերի և թե՛ սահմանադրականների օրոք ձեռնարկել էր բազմաթիվ միջոցներ քանդելու համար չահսևանների բները, հնազանդեցնելու իշխանությանը չենթարկվող խաներին, բայց բոլոր փորձերն անհաջողությամբ էին վերջացել:

Միապետականների հիմնական ուժը կազմող թուրք չահսևանները մարտ ամսի վերջերին հաջողեցին ապստամբություն բարձրացնել Արդաբիլում, այնտեղից փախցնել շրջանի նոր գավառապետ նշանակված Սաթթար խանին և դրության տերը դառնալ:

Թավրիզում գտնվող Եփրեմը չահսևան ցեղապետներին գրավոր առաջարկ արեց՝ ենթարկվել կենտրոնական կառավարությանը և վճարել պետական հարկերը, բայց սրանք հանդգնաբար մերժեցին պահանջը կատարել: Եփրեմն այդ մասին տե-

ղեկացրեց Թեհրանին, որտեղից հրաման եկավ՝ արշավել չահսևան ցեղերի վրա, պատժել կառավարությանը չենթարկվողներին, ձերբակալել առավել սանձարձակ ցեղապետներին:

Կատարելով կառավարության կարգադրությունը, Եփրեմն ու Սարդար Բահադուրը պատրաստվեցին գնալու Արդաբիլի վրա: Նրանց միացյալ ջոկատն ուներ 500 բախտիար, 170 ֆիդայի և Թեհրանյան կազակային բրիգադի 100 կազակ, «Շնայդեր» տիպի երկու թնդանոթ՝ Եփրեմի անմիջական տրամադրության տակ և երկու գնդացիր՝ գերմանացի հրահանգիչ Գազեի հրամանի տակ: Կա մի վարկած, ըստ որի, բոլշևիկ Գրիգորի Օրջոնիկիձեի (Սերգո) գլխավորած ջոկատը նույնպես մասնակցել է Արդաբիլի դեմ արշավանքին[1]:

Եփրեմի հրամանի տակ գտնվող միացյալ ջոկատը մարտի 29-ին դուրս գալով Թավրիզից, ուղղություն վերցրեց դեպի Արդաբիլ: Ապրիլի 3-ին զորամասը հասավ Սերաբ: Ենթադրվում էր, որ ջոկատն այստեղ կմնա այնքան ժամանակ, մինչև որ արդաբիլյան կիսաքոչվոր բոլոր ցեղերի խաները կգան ու կհայտնեն իրենց հնազանդությունը կառավարությանը[2]:

Տեղյակ լինելով, որ չահսևան ցեղապետներից հատկապես անհնազանդ է յուրչին ցեղի ղեկավար (աշիրեթների պետ) Էմիր Էշաիր Նասրոլլահ խան Յուրչինսկին, Եփրեմը Սերաբից նրան առաջարկեց գալ և կամովին հանձնվել, բայց նա ոչ միայն հրաժարվեց հանձնվել, այլև սպառնաց, որ եթե կառավարական զորքերն անցնեն իր հողերով, հարձակման կենթարկվեն:

Սերաբում սպասելն այլևս անիմաստ էր, և Եփրեմը ապրիլի 5-ին ջոկատն առաջ տարավ: Ճանապարհին նա տեղեկացավ, որ իր և Բահադուրի հետ բանակցելու համար առջևում գտնվող Նիր գյուղում հավաքվել են չահսևանների մի խումբ ներկայացուցիչներ: Նրանք այդ քայլին էին դիմել, որովհետև կառավարությանը հարկեր վճարելու հարցի շուրջ չահսևան ցեղերի

---

[1] Տե՛ս, օրինակ, *"История Ирана"*, с. 282. Հայկական աղբյուրներն այդ մասին որևէ բան չեն հաղորդում: Հավանաբար, բոլշևիկյան ջոկատը Արդաբիլ է գնացել Եփրեմի զորքի հետքերով:

[2] Տե՛ս *"Сборник дипломатических документов ..."*, вып. IV, с. 215.

միջև ծագել էին սուր հակասություններ ու երկպառակություններ, որոնք կարող էին դյուրացնել պարսիկ կառավարության՝ անհանգիստ թափառաշրջիկներին խաղաղեցնելու գործը:

Նիրում Եփրեմն ու Բահադուրը հանդիպեցին չահսևանների ներկայացուցիչներին: Բանակցությունների ընթացքում Եփրեմը նորից պահանջեց չահսևան բոլոր ցեղերի զինաթափումը և ենթարկումը կենտրոնական կառավարությանը: Համաձայնություն ձեռք չբերվեց և ցեղապետները հեռացան՝ զենքով լուծելու իրենց խնդիրները կառավարության հետ:

Հաջորդ օրը ջոկատը մեկնեց Նիրից: Ճանապարհին Ահչայ գյուղի մոտ նա հանդիպեց չահսևան ցեղերի միացյալ ուժերին, որոնք փակել էին ճանապարհը և պատրաստվել դիմադրության: Հակառակորդի զորքի առավել մարտունակ ուժը փոլաթլի ցեղի 500 հեծյալներից բաղկացած խումբն էր:

Եփրեմն իր ուժերը բաժանեց երեք մասի: Քեռու ջոկատը գրավեց աջ թևը, բախտիարները՝ Մոին Հոմայունի գլխավորությամբ՝ ձախը, իսկ Եփրեմն իր ջոկատով ու մեկ թնդանոթով տեղավորվեց կենտրոնում:

Ապրիլի 8-ին մոտենալով հակառակորդի դիրքերին, Եփրեմը ճակատային գրոհի հրաման տվեց զորքին: Մարտն սկսվեց կենտրոնական մասում՝ թնդանոթի ազդանշանով, որից հետո զորքի բոլոր մասերը առաջ նետվեցին: Հակառակորդը այդպիսի խելահեղ քայլի դիմակայելու պատրաստ չէր: Շահսևանների առաջին շարքերն երերացին անսպասելի հարվածներից: Կես ժամ անց հակառակորդի դասավորությունում առաջ եկավ խառնաշփոթություն, որին հետևեց ավազակախմբերի խուճապային փախուստը: Չնայած չահսևանների հրամանատար Ռեզա-ղուլի խանը ջանքեր գործադրեց կանգնեցնելու իր ենթականերին, բայց չհաջողեց: Հակառակորդը նախ մտավ Ահչայ գյուղը, իսկ այնտեղից ցրվեց տարբեր կողմերի վրա: Ընդհարման ժամանակ միապետականները մարտի դաշտում թողել էին 60 սպանված և երեք անգամ ավելի վիրավոր: Սպանվածների թվում էր նաև ինքը՝ Ռեզա-ղուլի խանը:

Ապրիլի 9-ին Եփրեմի և Սարդար Բահադուրի մոտ եկավ Արդաբիլի նահանգապետ, հայտնի հետադիմական Ռեչիդ օլ

Մոլքը (Նաղի խան) և ասաց, որ մի քանի խան հանձնվելու ցանկություն են հայտնել: Եփրեմը նրան առաջարկեց այդ խաներին կարգադրել որ նրանք փակվեն իրենց տներում և սպասեն իր ժամանմանը՝ հանձնվելու համար[1]:

Շահսևան ցեղերի միացյալ ուժերին ջարդ տալուց հետո Եփրեմն իր զորքով առաջացավ դեպի Խալխալ, որից ոչ շատ հեռու խալխալցի շահսևան ցեղի բազմաքանակ հրոսակախումբն էր: Զհամարձակվելով կռվի մեջ մտնել Եփրեմի զորքի հետ, ցեղի էմիրը կամավոր անձնատուր եղավ Արդաբիլի նահանգապետին: Մի ուրիշ շահսևան հրոսակախումբ վերը հիշատակված Նասրոլլահ խան Յուրչինսկու գլխավորությամբ, խուսափելով Եփրեմի հետ հանդիպելուց, փախավ սարերը՝ խոջաբեկլուցիների քոչատեղը[2]:

Ճանապարհն ամբողջովին բաց էր: Անարգել չարժվելով առաջ, կառավարական զորքը գերի վերցրեց փոլաթլի ցեղի առաջնորդ Հոսեյն Ալի խանին և ուրիշ խաների, խոջաբեկլուցիների քոչատեղից եկավ և հանձնվեց Նասրոլլահ խանը, Եփրեմին հանձնվեց նաև հայտնի ավերիչ էմիր ուլ Շահիրին[3]:

1910 թ. ապրիլի 12-ին Եփրեմի և Սարդար Բահադուրի գլխավորած կառավարական զորքը հաղթականորեն մտավ Արդաբիլ[4]: Կողոպուտներից ու անօրինականություններից տանջված բնակչությունը նրան դիմավորեց իբրև ազատարարի: Հաջորդ օրն իսկ, այն բոլոր շահսևան խաները, որոնք դեռ հպատակություն չէին հայտնել սահմանադրական կառավարությանը, ներկայացան Եփրեմին ու Բահադուրին և հնազանդության երդումներ տվեցին:

Ապրիլի 13-ին Արդաբիլ լուր հասավ, թե Ուրմիայում միապետականները զինված ելույթի են պատրաստվում: Հաջորդ օրը Եփրեմն այնտեղ ուղարկեց 100 զինվոր՝ կանխելու խռովությու-

---

[1] Արդաբիլի կռիվների և քաղաքի գրավման մասին տե՛ս **«Հորիզոն»**, № 2, 4 օգոստոսի 1909 թ.:

[2] Տե՛ս **"Сборник дипломатических документов ..."**, вып. IV, с. 154.

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս **"Баку"** (Баку), 13 мая 1910 г.

նը: Սահմանադրական կառավարության դեմ կռվի պատրաստված խռովարարներն այժմ Եփրեմին երդում-հավատ էին անում, թե իրենք կռվի դաշտ կնետվեն նախկին շահի կողմնակիցներին ջարդ տալու համար:

Պարսկական հեղափոխության ընթացքում Պարսկաստանի միլիոնավոր բնակիչների մոտ լիովին բացակայում էին նպատակի ըմբռնումը և գաղափարի հաղթանակի համար անհրաժեշտ կամքի դրսևորումը: Անդրադառնալով այդ երևույթին, «Դրօշակը» գրում էր.

«[Պարսկաստանի] ժողովուրդը, մասսան գրեթէ անտարբեր է, նա սովորել է անմռունչ ճնշւել ու կեղեքւել երկու ռէժիմի տակ էլ, նրա համար միեւնոյն է՝ սահմանադրութի՞ւնն է յաղթելու, թէ՞ էքս-Շահը, նա սովորել է վիզը ծռել ոյժի առջեւ եւ գրկաբաց ընդունել նրան: Էքս-Շահի եւ Սալար Դօվլէի յառաջխաղացումը արդէն ցոյց է տւել այդ տխուր իրողութիւնը»[1]:

Արդաբիլը գրավելուց հետո Եփրեմն ու Բահադուրը իրենց զորքով մոտ մեկ ամիս մնացին հյուսիսարևմտյան Պարսկաստանում, քանի որ անհրաժեշտություն էր առաջացել զինաթափել այնտեղի բնակավայրերում գտնվող բազմաթիվ ավազակախմբերին: Վերջիններս թեև հայտարարել էին, թե ընդունում են սահմանադրությունը, բայց գաղտնի պատրաստություններ էին տեսնում հակակառավարական նոր շարժումներ սկսելու համար:

ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ՀՆԱԶԱՆԴԵՑՈՒՄԸ

Իրենց մի քանի նշանավոր խաների հանձնվելը Եփրեմին՝ մեծ դժգոհություն էր առաջ բերել շահսևան մնացած ցեղերի մոտ: Նրանց ղեկավարների մի մասը հայտարարեց, թե պետք է սրբազան պատերազմ հայտարարել «անհավատ հային», բայց չէր դիմում որոշակի գործողությունների, գտնելով, որ Եփրեմին այժմ հաղթելն անհնար է: Ահա՛ այդ ժամանակ ասպարեզում

[1] **«Դրօշակ»**, № 2 (220), փետրվար, 1912, էջ 25:

հայտնվեց Թաղի Ջաբար օղլի անունով մեկը, որը կարողացավ գլուխ-գլխի բերել քոչվորների ղեկավարներին, որոնք միաձայն որոշեցին զորահավաքի ենթարկել իրենց բոլոր միջոցները և մինչև արյան վերջին կաթիլը կռվել կառավարական զորքերի դեմ[1]:

1910 թ. ապրիլի 20-ին Սարդար Բահադուրի և Եփրեմի ջոկատը, համալրված նահանգապետի հավաքագրած ձիավորներով, Արդաբիլից շարժվում է դեպի Հյուսիս և մտնում Թուրքմենական քոչվոր ցեղերի տարածքները[2]:

Առանց մարտի մեջ մտնելու, Եփրեմի ջոկատը շարժվում է դեպի Լանգյան, որը գտնվում էր Թուրքմեն Մահմեդ-ղուլի խան Ալարսկու նստավայրի դիմաց[3]:

Մի քանի բեկեր ներկայանալով, հայտնում են իրենց հպատակությունը: Խոջաբեկլուցիները և ալարցիները, որոնք պատրաստվել էին քոչելու դեպի հարավ, ստիպված նահանջում են Հյուսիս[4]:

Հետապնդելով այդ ցեղերի հրոսակախմբերին, ջոկատը ուղղություն վերցրեց դեպի Մուղան: Ճանապարհին կառավարական զորքին հնազանդություն հայտնեցին Ամրան խանը և նշանավոր Հազրեթ-ղուլի խան Խոջաբեկլինսկու որդին՝ իր բազմաքանակ ձիավորներով: Ապա հնազանդության երդումներով հանդես եկավ նշանավոր ցեղապետ Մահմեդ-ղուլի խանը: Վերջինս հայտնի էր իր խիզախությամբ և բազմիցս հաղթել էր կռիվներում: Հանձնվելով Եփրեմին, նա ամեն տեսակ ծառայություն խոստացավ, բայց խոստումը չուտով դրժեց:

Ապրիլի 22-ին կառավարական ջոկատը շարժվեց դեպի Դիզա գյուղը, բայց դեռ տեղ չհասած, ապրիլի 25-ին հանդիպեց խոջաբեկլուցիների խաներից՝ Խեզար խանի բազմամարդ հրոսակախմբին: Ընդամենը մեկ ժամ տևած կռվում ջոկատը ջարդեց անկանոն զինյալներին. հեծելազորքը ցիր ու ցան եղավ, կռվի

---

[1] *Տե՛ս **"Баку"**, 13 мая 1910 г.*

[2] *Տե՛ս **"Сборник дипломатических документов ..."**, вып. IV, с. 154.*

[3] *Տե՛ս **«Հայրենիք»**, № 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 76:*

[4] *Տե՛ս **"Сборник дипломатических документов ..."**, вып. IV, с. 163.*

դաշտում մնացին բազմաթիվ սպանվածներ, այդ թվում՝ Խեզար խանը[1]:

Երբ Եփրեմը մտավ Դիզա, հաշտության խնդրանքով այնտեղ եկավ խոջաբեկլուցիների առաջնորդներից Բահրամ խանը: Նույն ցեղի մյուս գլխավորը՝ Սարդար խանը փախավ դեպի Հյուսիս՝ ռուսական սահմանն անցնելու համար[2]:

Հաջորդ օրը՝ ապրիլի 26-ին ջոկատը Խորուզլու գյուղաքաղաքի մոտ հարձակման ենթարկվեց, բայց առանց կորուստներ կրելու ջախջախեց հակառակորդին: Սպանվեցին նաև մի քանի խաներ ու բեկեր, ուրիշները գերի հանձնվեցին[3]:

Մուղան անցած շահսևան զինված ցեղերից մի քանիսը խույս տալով, ապաստան էին գտել Հազար և Ուլդուզ թուրքմեն ցեղապետների մոտ: Հետապնդելով նրանց, Եփրեմի արշավախումբը մոտենում է նշված ցեղերի քոչատեղերին: Շահսևան և թուրքմեն ցեղապետների միացյալ հրոսակախմբերը ցույց են տալիս կատաղի դիմադրություն, բայց պարտություն կրելով ցրվում են Մուղանով մեկ:

Հասնելով Մեշկին, Եփրեմն այլևս չի ցանկանում առաջ շարժվել, որովհետև վարչապետ Սիփահդարը մինչ այդ քանիցս նրան խնդրել էր վերադառնալ Թեհրան:

Առաջ չգնալով, Եփրեմը, սակայն, սպառնալից դիմումներ է հղում Մուղանով մեկ ցրված ցեղապետներին և պահանջում գալ Մեշկին ու հանձնվել: Բայց օրերն անցնում էին և պատասխանը ձգձգվում էր: Վերջապես, մեկնելուց առաջ, Մեշկին է գալիս հակահեղափոխական խաների ու բեկերի մի մեծ խումբ, հանձնվում և իր հավատարմությունը հայտնում կառավարությանը:

Ղարադաղի և շահսևան խաների ավատապետական տիրապետությանը հասցված հուժկու հարվածները հսկայական նշանակություն ունեցան Պարսկաստանի հետագա զարգացման համար: Դրանով փաստորեն ընաջնջվեց հակահեղափոխության գլխավոր կենտրոններից մեկը:

---

[1] Տե՛ս *"Сборник дипломатических документов ..."*, вып. IV, с. 167.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 168:

[3] Տե՛ս *"Баку"*, 13 мая 1910 г.

1910 թ. մայիսի 18 (31)-ի առավոտյան Եփրեմն ու Սարդար Բահադուրն արշավախմբի մի մասով, իրենց հետ վերցրած առավել նշանավոր 59 գերի խաներով ու բեկերով, հրետանիով, գնդացիրներով ու բեռներով Աստարայից «Թուրքմեն» չոգենավով ուղևորվում են Էնզելի: Զորքի հիմնական մասը Աստարայից դեպի Էնզելի էր շարժվում ցամաքային ճանապարհով[1]: Արշավախմբի երկու մասերը Էնզելիում միավորվեցին և ուղղություն վերցրին դեպի Թեհրան: Եփրեմն իր հետ Թեհրան էր տանում նաև Քեռուն՝ որպես իր տեղակալի:

Եփրեմը միաժամանակ մտավախություն ուներ, որ երկրի հյուսիսային շրջաններից իր հեռանալը կարող է ոգեշնչման առիթ դառնալ տեղի հակահեղափոխական հրոսակախմբերի համար և նրանց նոր հարձակումների մղել սահմանադրական ուժերի, հատկապես իրենց աչքի փուշը հանդիսացող Թավրիզի պաշտպանների դեմ:

Զորքի երկու մասերը Էնզելիում միավորվելուց հետո, այստեղ Եփրեմին հանդիպում և նրա հետ զրույց է ունենում բոլշևիկ Սերգո Օրջոնիկիձեն:

Վերը նշվել է, որ 1909 թ. աշնանը այն ժամանակվա ներքին գործերի նախարար Սարդար Ասադը ոստիկանապետ Եփրեմին կարգադրել էր՝ իրեն քննադատելու համար փակել դեմոկրատական կուսակցության օրգան «Շարք» թերթը, բայց Եփրեմը չէր կատարել խոսքի ազատությունը ճնշելուն ուղղված այդ հակասահմանադրական կարգադրությունը: Դրանից մոտավորապես մեկ տարի հետո, 1910 թ. ամռանը, կրկնվել էր նույն իրադրությունը, այս անգամ կապված վարչապետ Սիփահդարի անվան հետ: Այդ շրջանում դաշնակցականները դեռ շարունակում էին միավորված մնալ դեմոկրատական կուսակցության հետ, որը Սիփահդարի կառավարության դեմ պայքար էր մղում և՛ մեջլիսում, և՛ նրանից դուրս: Կալվածատերերի կառավարության դեմ երկու ժամանակավոր դաշնակիցների համատեղ գործողություններն արտահայտություն էին գտնում նաև դեմոկրատների

---

[1] *Տե՛ս "Сборник дипломатических документов...", вып. IV, с. 193,* ***«Հայրենիք»,*** *№ 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 76:*

«Իրան-նոու», «Շարք», «Էսֆահան» և մյուս թերթերի էջերում, որտեղ տպագրվում էին չափավորների կուսակցության, նրա կառավարության և անձամբ Սիփահդարի դեմ ուղղված բազմաթիվ մերկացնող հոդվածներ:

Հարյուրավոր գյուղեր ունեցող Սիփահդարը, որ հիմա վարչապետ էր, մնացել էր խեղճ ու կրակ գյուղացիների նույն բռնակալը: Նա կյանքում իր հասցեին երբեք չէր լսել ներքևից եկող ամենաթույլ քննադատություն անգամ: Սիփահդարն այժմ չէր կարողանում հաշտվել այն բանի հետ, որ երկրում հռչակված է խոսքի ազատություն և պարտադիր չէ, որ մամուլի բոլոր օրգաններն իր գովքն անեն: Նրա առաջարկով կառավարությունը որոշում է փակել դեմոկրատների մամուլի օրգանները: Նախարարների խորհուրդը որոշման կատարումը հանձնարարում է ոստիկանապետ Եփրեմին, որն այդ ժամանակ հաղթական ավարտին էր հասցնում Հյուսիսային Պարսկաստանի միապետական ուժերի դեմ ծավալված ռազմական գործողությունները:

Երբ «Շարքը» և «Իրան-նոուն» փակելու որոշման լուրը հասել էր Ռեշտ, այստեղ գտնվող բոլշևիկ ներկայացուցիչների նախաձեռնությամբ հրավիրվել էր ժողով, որի որոշմամբ կազմվել էր հանձնախումբ՝ բողոքի հանրահավաքներ անցկացնելու համար: Հանձնախումբն անմիջապես հեռագիր էր հղել Արդաբիլում գտնվող Եփրեմին ու Սարդար Բահադուրին՝ պահանջելով բողոք ներկայացնել կառավարությանը՝ սահմանադրությամբ ամրագրված խոսքի ազատությունը ճնշելու համար: Եփրեմը պատասխան հեռագրով հայտնել էր, որ չի կարող խառնվել պետական գործերին և կառավարության կամքին հակառակ գործողությունների դիմել, քանի որ երկար ժամանակ բացակա է մայրաքաղաքից, տեղյակ չէ նշված թերթերի շուրջ ստեղծված պատմությանը և որ ինքն այդ նույն կառավարության ղեկավարության տակ պետական ծառայության մեջ է:

Այդ նույն պատճառաբանությունները Եփրեմը բերել էր բոլշևիկ Սերգո Օրջոնիկիձեի հետ հանդիպման ժամանակ: Օրջոնիկիձեն մի քանի հարց է ուղղում Եփրեմին: Այն հարցին, թե Պարսկաստանի, իբրև պետության, գոյության համար վտանգավո՞ր է այժմ երկրում ստեղծված ճգնաժամը, Եփրեմը պա-

տասխանել է. «Պարսկաստանը չատ դժվարությունների է դիմացել, կդիմանա նաև սրան»: Օրջոնիկիձեի մյուս հարցին, թե ինչպե՞ս է եղել, որ Եփրեմը հեռագրով մերժել է «Շարքի» գործին միջամտելու Ռեշտի հեղափոխականների խնդրանքը և հրաժարվել է հանդես գալ խոսքի ազատությունը ճնշող կառավարության անօրինական գործողությունների դեմ, վերջինս կրկին պատճառաբանում է, թե ինքը մեկ տարի է ինչ գտնվում է սաներում և հնարավորություն չի ունեցել հետևելու ոչ միայն պարսկական, այլև հայկական մամուլին, որպեսզի պարզի իսկությունը[1]*:*

Մի քանի օր հետո Ս. Օրջոնիկիձեն «Ո՞վ է Եփրեմը՝ հեղափոխակա՞ն, թե՞ պետական պաշտոնյա» վերնագրով հոդված է տպագրում հնչակյանների իրանական կազմակերպության օրգան «Զանգ» թերթում: Հոդվածում նա տալիս է Եփրեմի ընութագրությունը, կասկածի տակ առնելով նրա հեղափոխական լինելը:

Կարդալով «Զանգում» տպագրված Օրջոնիկիձեի հոդվածը, Եփրեմը սաստիկ վիրավորվել էր:

Հոդվածը գուցե և խորհել էր տվել նրան:

Օրջոնիկիձեն Պարսկաստանից Վ. Լենինին գրած իր նամակներից մեկում անդրադարձել է Եփրեմի քաղաքական դիմանկարին: Նամակից երևում է, որ Լենինը մինչ այդ լավ տեղեկացված էր Եփրեմի մասին: Օրջոնիկիձեն հաղորդում է իր անհամաձայնությունը ՌՍԴԲԿ (մենշևիկյան) օրգան ''Голос Социал-Демократов'' («Գոլոս սոցիալ-դեմոկրատով») թերթում լույս տեսած հոդվածին, ուր Եփրեմը ներկայացվել էր որպես սոցիալ-դեմոկրատական գաղափարների համախոհ: Հայտնելով իր անհամաձայնությունը հոդվածի հեղինակ մենշևիկ Վոլի՝ Եփրեմին տված գնահատականին, Օրջոնիկիձեն գրում էր.

«Ձեզ համար բավական հետաքրքիր կլինի, երբ ինչ-որ բան հաղորդեմ «ընկեր Եփրեմից», որի մասին գրել է ընկեր Վոլը "Голос"-ում: Ես չգիտեմ, թե որտեղի՞ց է Վոլը վերցրել տեղեկու-

---

[1] *Տե՛ս* ***«Զանգ»*** *(Թաւրիզ), 12 հունիսի 1910 թ.:*

թյունը, որ Եփրեմը «ընկեր» է: Նա ներկայումս տիպիկ չինովնիկ է և ուրիշ ոչինչ: Այդ մասին նա ինքն է բարձրաձայն հայտարարում: Ինչպես ամենայն հավանականությամբ հայտնի է Ձեզ, Սեպեխդարը (Սիփահդարը:- Հ. Ս.) փակել է թերթը: Բոլոր կողմերից բողոքներ եղան: Ես նույնպես առաջարկեցի Եփրեմին, որպեսզի նա նույնպես բողոքի, որին նա դժբախտաբար, պատասխանեց, թե «Ես կառավարական ծառայության մեջ եմ և խառնվել չեմ կարող: Սեպեխդարը իրավունք ուներ և այլն»: Ահա՜ թե ինչ, ընկեր Վոլ»[1]:

Սերգոն Պարսկաստանից մի քանի հոդվածներ ուղարկեց Թիֆլիս, որոնք «Նամակներ Ռեշտից», «Նամակներ Պարսկաստանից» խորագրերի տակ լույս տեսան այն ժամանակվա սոցիալ-դեմոկրատական ուղղության «Մոմավալի» («Ապագա»), «Ձվենի գազետի» («Մեր թերթը»), «Ախալի ազրի» («Նոր միտք») և այլ թերթերում:

Օրջոնիկիձեն չուտով Ռեշտից անցնում է Թեհրան և այնտեղից մեկնում Շվեյցարիա:

Դա այն պահն էր, երբ Հյուսիսային Պարսկաստանում աշխուժորեն գործում էին բոլշևիկյան մարտական ուժերը: Թեև նրանք չէին համագործակցում ո՛չ սահմանադրական կառավարության և ո՛չ հայկական ազգային կազմակերպությունների հետ, այլ գործում էին ինքնուրույն, բայց միապետական ուժերի դեմ կռիվ մղելով, նպաստում էին հեղափոխության խորացմանը:

Օրջոնիկիձեի՝ հնչակյան «Զանգ» թերթում հայտնված հոդվածը պատահական չէր: Հյուսիսային Պարսկաստանում գործող բոլշևիկները խուսափում էին դաշնակցականների հետ շփումներ ունենալուց, բայց հնչակյանների հետ գործում էին համերաշխաբար:

Հնչակյան մասնաճյուղերը Պարսկաստանի տարբեր քաղաքներում եռանդուն կերպով ներգրավված էին հեղափոխա-

---

[1] Մեջբերված է **Գեորգի Ս. Հարությունյանի** «1905-1911 թթ. Իրանական հեղափոխությունը և Անդրկովկասի բոլշևիկները» ռուսերեն գրքից, էջ 153:

կան չարժմանը և գաղափարական զգալի աշխատանք էին տանում պարսիկ և թուրք բնակչության շրջանում: Թավրիզից հետո հնչակյաններն զգալի ներկայություն ունեին հատկապես Էնզելիում, ուր պարբերաբար հավաքվում էին Բալասան Մկրտչյանի խանութում, քննարկում անելիքները, ծրագրեր կազմում: Մկրտչյանի միջոցով էլ կապ էր պահպանվում Բաքվի հնչակյան կազմակերպության հետ[1]:

Էնզելիում հնչակյանները կազմակերպում էին տեղի պարսիկ երիտասարդների հավաքույթներ, որոնցում զրույցներ էին ունենում Սիմոն Սիմոնյանը, Բալասան Մկրտչյանը, Իսահակ Տեր-Հովհաննիսյանը, Գևորգ Աստղունին: Ավելին, սրանց ջանքերով կյանքի էր կոչվել ս.-դ. հնչակյան կուսակցության Էնզելիի մասնաճյուղի պարսկական խումբը՝ Ղոլամ Հոսեյն խան Մոթամեդի գլխավորությամբ[2]: Կարճ ժամանակում խմբին արձանագրվել էր շուրջ 100 նավաստի ու ձկնորս:

Հնչակյաններն զգալի ներկայություն ունեին Ռեշտում: Այստեղ աշխատանք էին տանում Սարգիս Մարտիրոսյանը, Ստեփան Սիմոնյանը, Հարություն Հարությունյանը, Իսահակ Հովույանը և ուրիշներ:

Աշխույժ էր գործում Ղազվինի հնչակյան մասնաճյուղը, որի կազմում էին Աբգար Տեր-Հովհաննիսյանը, Բաքվից եկած Գուրգեն Ռշտունին և ուրիշներ:

Հնչակյանները լավ կազմակերպված մասնաճյուղ ունեին Թեհրանում, որը ոչ պաշտոնական, բայց սերտ հարաբերությունների մեջ էր պարսից դեմոկրատական կուսակցության հետ: Թեհրանի հնչակյան մասնաճյուղի ղեկավարն էր ընիկ սեբաստացի Մանվել Մոզյանը, որը հեղափոխական գործունեության համար բանտարկվել էր Աբդուլ Համիդի օրոք, բայց կարողացել էր փախչել ու անցնել Կովկաս, տարիներ անց տեղափոխվել էր Պարսկաստան, ուր ապրեց մինչև կյանքի վերջը: Թեհրանի հնչակյան մասնաճյուղում էին գործում նաև Գևորգ

---

[1] *Տե՛ս* ***«Ցուշարձան նուիրուած Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան քառասնամեակին»****, էջ 192:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 192-193:*

Զիլինգարյանը, Միքայել Փափազյանը, Գևորգ Ռչտունին, տիկ. Սրբուհի Դավիթխանյանը, Տիգրան Գազանջյանը, Կոստանդ Դավիթխանյանը և ուրիշներ[1]:

Հնչակյաններն ամուր դիրքեր ունեին նաև Ատրպատականի մի շարք վայրերում, հատկապես Թավրիզում և Սալմաստում: Այս գավառի Փայաջուկ գյուղն ավանդաբար հնչակյան էր:

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1910 թ. բոլշևիկները Պարսկաստանի հյուսիսում ծավալել էին եռանդուն գործունեություն: Նրանք գործուն մասնակցություն ունեցան միապետական ուժերի դեմ կռիվներին և տվեցին զգալի զոհեր*, ծավալեցին աշխույժ քաղաքական, կազմակերպչական և մշակութային գործունեություն:

Այդ շրջանում բոլշևիկների առջև դրված խնդիրներից մեկը իրանցիների շրջանում մարքսիստական քարոզչությունն էր: Երկրում այդ ժամանակ սկսել էին պարսկերեն թարգմանել «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և այդ գործում բոլշևիկ կամավորները անհրաժեշտ օգնություն էին ցույց տալիս: Բոլշևիկների հրավիրած հանրահավաքներում մերկացվում էին ռուսական և անգլիական կառավարությունների մեքենայությունները և բացահայտվում նրանց քաղաքականության վնասները Պարսկաստանի համար:

Այդ ամենի հետ բոլշևիկ կամավորները ձեռնամուխ եղան մշակութային-լուսավորչական աշխատանքների՝ բացեցին քաղաքական ակումբներ, նպաստեցին տարբեր լուսավորական հիմնարկությունների և ընկերությունների հիմնադրմանը[2]:

---

[1] Տե՛ս **«Ցուշարձան նուիրուած Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան քառասնամեակին»**, էջ 195:

* Բոլշևիկ ինտերնացիոնալիստները պարսկական կռիվներում տվեցին ավելի քան 50 զոհ (տե՛ս "Века неравной борьбы", с. 419-421):

[2] Տե՛ս **"Красный архив"**, т. 2 (105), с. 39.

Հարկ է նշել, որ բոլշևիկ հայ գործիչները կարևոր նշանակություն էին տալիս պարսկական հեղափոխությանը հայերի մասնակցությանը, միաժամանակ քննադատում էին հայ ազատականների և եկեղեցու պահպանողականությունն այդ հարցում:

Այսպես, բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչ Սուրեն Սպանդարյանը ողջունում էր այն հայերին, որոնք զենքը ձեռքին աջակցում էին իրանցի հեղափոխականներին: Նա դատապարտում էր նրանց (Սպանդար Սպանդարյան, Լեո, Ալեքսանդր Քալանթար, Համբարձում Առաքելյան, Երվանդ Տեր-Մինասյան և ուրիշներ), ովքեր դեմ էին Պարսկաստան հայ զինյալներ ուղարկելուն, դրանով իսկ սահմանափակում էին հարևան երկրի հետ հայերի շփումները, խանգարում երկու ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդմանը՝ այս անգամ կռվի դաշտում:

Թիֆլիսում լույս տեսնող ազգային-կղերական ուղղության «Հովիւ» շաբաթաթերթի 1910 թ. № 1-ում տպագրվել էր իրավաբան, պահպանողական հրապարակախոս Գարեգին Ենգիբարյանի հոդվածը, որում նա, հենվելով ասեկոսների վրա, գրել էր, թե Եփրեմը մեկնել է Թուրքիա: Հոդվածի հեղինակը պարսկական հեղափոխական շարժման այդ խոշոր գործչին բնութագրել էր «բարոյական սկզբունքներից հեռու» բնորոշումով:

"Новая Речь" (Թիֆլիս) թերթում Սուրեն Սպանդարյանը տպագրում է «Ուրվագծեր հայկական կյանքից» հոդվածաշարը, որի երրորդ մասը (տե՛ս թերթի 1910 թ. ապրիլի 22 – մայիսի 5-ի համարը) նվիրված էր Գ. Ենգիբարյանի հոդվածի քննադատությանը:

Ս. Սպանդարյանը գրում էր, որ «հայ գրականության մեջ դժվար թե կարելի է պ. Ենգիբարովի հոդվածի նման մի ուրիշ նմուշ գտնել: «Փախստական կատորժնիկ» ածականը չարունակ կցվում է Եփրեմի անվան, սահմանադրությունն ու նրա գործիչները Պարսկաստանում արհամարհվում են ամենաանթույլատրելի կերպով, իսկ ինքը՝ մեզ հարևան երկիրը, որտեղ բավական թվով հայեր են ապրում, անվանվում է «մեչադիական Իրան» և նրա համար գուշակվում է «մոտալուտ և անխուսափելի կործա-

նում»[1]: Սպանդարյանն աններելի էր համարում, որ Ենգիբարյանն իր հրապարակային ելույթներով հայության մեջ ըստ էության ներարկում է հեզախոհություն և նրան ներշնչում, թե ինքը քրիստոնեական ժողովուրդ է, հետևապես նրան վայել չէ խառնվել քաղաքականությանը, «որ իրենց այդ բնական հատկությանը չդավաճանելով՝ հայերը միայն և միայն պետք է հավատարիմ մնան իրենց պատմական պալլադիում-էջմիածնին: Իսկ այն ամենը, ինչ դրանից ավել է և դրանից անկախ – ի չարն է»[2]:

Սպանդարյանի հոդվածը բուռն զայրույթ էր առաջացրել «Հովիտ» պարբերականի* խմբագրությունում, որն անվայելուչ բառերով նշավակել էր բոլշևիկ գործչին: Սպանդարյանը "Новая Речь"-ի 1910 թ. № 102-ում (մայիսի 8 (21)-ում) հարկադրված տպագրում է «Իմ պատասխանը «Հովիտ» հանդեսի խմբագրությանը» հոդվածը՝ նպատակ ունենալով, իր խոսքերով ասած, ջրի երես հանել չաբաթաթերթի պինկերտոնյան** հերոսներին: Հոդվածագիրը նշում էր, որ «Հովիտ»-ում իր դեմ հանդես եկած հեղինակը խուզարկություն կատարելով հայտնաբերել է, որ «ես եղել եմ» աքսորական, ուստի և "Новая Речь"-ում Գ. Ենգիբարյանի դեմ գրած հոդվածում պաշտպանել եմ «աքսորական Եփրեմին»: Շարունակելով, Սպանդարյանը գրում էր. «Թող «Հովիտ»-ի խմբագրությունն ապացուցի, որ ես մոլորության մեջ եմ գցել "Новая Речь"-ի խմբագրությանը, որ ես ճիշտ չեմ հաղորդել Ենգիբարյանի հոդվածի բովանդակությունը – մի հոդվածի, որ պատիվ կարող էր բերել պ. Դուբրովինի "Русское Знамя"-ին»***:

---

[1] **Սուրեն Սպանդարյան**, Երկեր, հատ. Ա, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 239:

[2] Նույն տեղում:

* 1910 թ. առաջին 12 համարները «Հովիտ» անունով լույս տեսնելուց հետո չաբաթաթերթը անվանափոխվել էր «Հովիտ»:

** Պինկերտոնյան – խուզարկողական, լրտեսական: Ծագել է ամերիկյան չտեյկբրեխերական, խուզարկողական գործակալության պարագլուխ Նաթ Պինկերտոնի անունից:

*** ''Русское Знамя'' – Սև հարյուրյակային օրաթերթ: Լույս է տեսել Պետերբուրգում 1905-1907 թթ. Ա. Ի. Դուբրովինի խմբագրությամբ: Թերթը ջարդարարական քարոզչություն էր մղում հրեաների, հայերի, լեհերի և այլ ազգությունների դեմ:

Ապա Ս. Սպանդարյանը գրում է. «Ես կարող եմ հանգստացնել պարբերականի հոդվածագրին. ես «եփրեմական» չեմ: Դեռ ավելին. երբ «հոդվածագիրը» և յուրայինները և հենց ամբողջ հայ հասարակությունը ձգվում էին «եփրեմականների» առջև և ստրկական ժպիտը չէր իջնում նրանց դեմքերից, ես և իմ սակավաթիվ համախոհները հայկական իրականության մեջ բացեիբաց հանդես էինք գալիս «եփրեմականների» դեմ՝ նրանց փառքի և ուժի գագաթնակետի օրերին**: Այժմ դուք դուրս եք սողացել ձեր որջերից և մարդոյորություն (դիակապտություն:- Հ. Ս.) եք անում: Էլ ինչպե՞ս ապա, սրանից հետո, չհամեմատեինք ձեզ «քացի տվող ավանակի» հետ: Բայց «հոդվածագիրը» տակտիկաբար մթագնում է հարցը, փորձելով ամբողջ իմ հոդվածը հանգեցնել Եփրեմի պաշտպանության, թեպետ Եփրեմի մասին ես այնտեղ ունեմ սոսկ մի ֆրազ միայն»[1]:*

Անկասկած, Սուրեն Սպանդարյանն իր հոդվածներով պաշտպանում էր ոչ թե անձամբ Եփրեմին, այլ հայերի մասնակցությունը պարսկական հեղափոխությանը, գտնում էր, որ նրանք պետք է աջակցեն Պարսկաստանի ժողովրդին՝ ավատատիրական կարգերի և իմպերիալիստական ճնշման դեմ նրա մղած պայքարում: Տվյալ պահին Պարսկաստանում քաղաքական իշխանության համար հեղափոխության և հակահեղափոխության միջև մղվող պայքարում կովկասցի բոլշևիկները, ի դեմս Սուրեն Սպանդարյանի, հանդես էին գալիս բոլոր հեղափոխական ուժերի միասնության ու համախմբման օգտին, որպեսզի համատեղ ուժերով հնարավոր լինի վճռական հակահարված տալ բացարձակ բռնապետությունը վերականգնելու Պարսկաստանի հետադիմության փորձերին:

---

* *Նկատի ունի հայ բոլշևիկներին:*

** *Ինչպես երևում է Սպանդարյանի այս խոսքերից («... ես և իմ սակավաթիվ համախոհները հայկական իրականության մեջ բացեիբաց հանդես էինք գալիս «եփրեմականների» դեմ»), Պարսկաստանի հեղափոխական շարժման առաջին շրջանում Կովկասի բոլշևիկները դեմ էին եղել այդ շարժմանը հայերի մասնակցությանը:*

[1] ***Սուրեն Սպանդարյան,*** *Երկեր, հատ. Ա, էջ 244:*

Նկատենք, որ Պարսկաստանի հեղափոխական շարժմանը հայերի մասնակցության մասին Հնչակի և Դաշնակցության տեսակետները բավական մոտ էին բոլշևիկների տեսակետին:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԶՈՐՔԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԹԵՀՐԱՆ

Կառավարական զորքն էնզելիից գալով Ռեշտ, կարճատև հանգստից հետո բռնեց Թեհրանի ճանապարհը:

Դեպի Թեհրան ուղին անցնում էր Գիլանի վրայով: Եփրեմը որոշել էր, որ եթե նահանգով անցնելիս միապետականները հարձակում կատարեն իր զորամասի վրա կամ փորձեն խանգարել նրա երթը, այդ դեպքում ինքը հրաման կտա պատժիչ լայն գործողություններ սկսել ամբողջ Գիլանով մեկ: Բայց այդպիսի փորձ չեղավ:

1910 թ. մայիսի 28-ին հաղթական զորքը Եփրեմի և Սարդար Բահադուրի գլխավորությամբ, Ռեշիդ օլ Մոլքի և Մեջդ օլ Մոլքի հետ մոտենում է Թեհրանից երեք վերստի վրա գտնվող Մեհրաբադ այգուն և կանգ առնում՝ շարքերը կարգի բերելու համար: Շատ չանցած այդտեղ են գալիս իշխանության ներկայացուցիչները՝ նախարարներ, մեջլիսի պատգամավորներ, հավաքվում է ժողովրդի հսկայական բազմություն: Բոլորը ցնծությամբ ողջունում են հերոսներին՝ հաջող վերադարձի համար[1]:

Նույն օրվա կեսօրին, ժամը երեքին, հեղափոխական զորքը դուրս եկավ Մեհրաբադից: Եփրեմն ու Սարդար Բահադուրը գնում էին առջևից՝ պալատական վեցաձի կառքով: Մայրաքաղաքը մի քանի օր պատրաստվել էր տոնախմբության: Քաղաքի արվարձաններին դեռ չհասած, հերոսներին ընդառաջ եկավ դիմավորողների մի ուրիշ բազմություն, որը վրաններ էր խփել ճանապարհի երկու կողմերում և սպասում էր զորքի մոտենալուն:

Ցնծագին ողջույններ ընդունելուց հետո զորքն ավելի առաջ

---

[1] *Տե՛ս* ***«Յառաջ»****, № 37, 18 (31) մայիսի 1910 թ.:*

գնաց: Այս անգամ նրան դիմավորեցին Թեհրանի ժանդարմները՝ ռազմախաղեր կատարելով ի պատիվ Եփրեմի ու Սարդար Բահադուրի բանակի[1]: Այնուհետև սարքված 14 հաղթակամարների տակով զորքը մտավ քաղաք[2], որի տների մեծ մասը զարդարված էր գորգերով ու դրոշակներով[3]:

Մամուլը մեծ գովեստների էր արժանացնում Եփրեմին ու Սարդար Բահադուրին: Մանրամասն նկարագրվում էին նրանց տարած հաղթանակները և փառահեղ վերադարձը մայրաքաղաք: Մոլլա Ղորբան Ալիի ազդեցության քանդումը Զենջանում, հողի երեսից Ռահիմ խանի հզորության ջնջումը, Արդաբիլի սպառնալիքի վերացումը, շահսևանների սանձահարումը, թուրքմենական ցեղերի հպատակեցումը – այդ ամենն օրեր չարունակ չէին իջնում թերթերի էջերից: Զուր չէ, որ Թեհրանում ռուսական դեսպանության պատրաստած փաստաթղթերից մեկում չեշտվում էր, որ Պարսկաստանի նախկին «բոլոր հզոր հասարակարգերի ժամանակ որևէ շահ չի տարել այդպիսի փայլուն հաղթանակ շահսևանների նկատմամբ, իր մարտակառքերով քարշ չի տվել այդքան գերի խաների»[4]:

Մայրաքաղաք մտնելու հաջորդ օրն իսկ, նախքան կառավարություն ներկայանալը, Եփրեմը Թեհրանի ոստիկանատուն գնաց: Ամիսներ չարունակ գտնվելով ռազմերթի մեջ, նա չէր կարողացել կատարել մայրաքաղաքի ոստիկանապետի իր պարտականությունները և ուզում էր տեսնել, թե ինչպե՞ս է իրականացվել ոստիկանության բարեփոխումների իր սկսած գործը: Ոստիկանությունում կուտակվել էին բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը ենթադրում էր նախ և առաջ կառավարական մարմինների բազմակողմանի աջակցությունը, որը, սակայն, բացակայել էր:

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 12 (454), դեկտեմբեր, 1963, էջ 51:

[2] Տե՛ս նույն տեղում, № 12 (66), հոկտեմբեր, 1930, էջ 157:

[3] Տե՛ս **"Сборник дипломатических документов..."**, вып. IV, с. 243, **«Հայրենիք»**, № 12 (66), հոկտեմբեր, 1930, էջ 157:

[4] Տե՛ս **"Сборник дипломатических документов ..."**, вып. IV, с. 243.

ՆՈՐ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՆԱԿԱՆ ՍԱՐԱՀԱՐԹՈՒՄ

Առջևում ամբողջ երկու տարի դեռ չաչելու էին հեղափոխականների ու հակահեղափոխականների զենքերը, դեռ հերոսական չատ էջեր էին գրվելու պարսկական հեղափոխության պատմության մեջ, բայց արդեն ի հայտ էին գալիս նշաններ, որոնք հուչում էին, որ գնալով պակասում է ավյունն այն բազուկների, որոնք կերտել էին Թավրիզի հերոսական պաչտպանությունը, գիլանյան արչավախմբի անօրինակ ոստյունը Ռեչտից Թեհրան, երկրի հյուսիսի միապետական ուժերի ջախջախումը:

ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ԱԼԻՔ ԵՐԿՐՈՒՄ: ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ: ՍԻՓԱՀԴԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեև Եփրեմ Դավթյանի ու Սարդար Բահադուրի գլխավորած արչավախումբը հետադիմականներին ծանր հարվածներ էր հասցրել երկրի հյուսիսում, բայց նրա Թեհրան վերադառնալուց չատ չանցած սահմանադրական կարգերի հակառակորդները այնտեղ սկսել էին համախմբել իրենց ուժերը:

Պարսկաստանի ուրիչ նահանգներում ևս, հատկապես ծայրամասերում, դրությունը չէր կայունանում: Այս ու այնտեղ ծագող խլրտումները ոչ միայն չէին դադարում, այլև օրըստօրե բազմապատկվում էին: Երկրի քաղաքական կացությունը չարունակում էր տարտամ և անորոչ մնալ: Անիչխանության հրդեհը լափում էր ամեն կենսունակություն: Գլուխ էին բարձրացրել նաև վաղեմի կեղեքիչները՝ հայտնի հարստահարիչ գյուղապետներն ու ավատապետները: Իսկ գլուխները կորցրած անզոր կառավարությունը և մեջլիսը չէին կարողանում գործերն այնպես առաջ տանել, որպեսզի երկիրն ընկներ բնականոն ընթացքի մեջ: Կառավարական պաչտոնյաներից չատերը նույն հարստահարիչներն էին, իսկ տանջված ու թչվառ ժողովրդի կյանքը թե-

թևացնելուն կոչված մեջլիսը տնտեսական, սոցիալական, քաղաքացիական և մշակութային կյանքում արմատական որևէ բարենորոգում չէր մտցրել ու հակված չէր մտցնելու: Դրա փոխարեն բովանդակ ժողովրդի անունից մեջլիսում բազմած և փաստորեն Պարսկաստանի բախտը որոշող պատգամավորները քաղաքացիական արիություն չէին դրսևորում և Պիղատոսի պես լուռ հանդիսատես էին երկրում ահավոր չափերի հասած կաշառակերության և այլանուն չարաշահումների, զանազան անազնիվ գործիչների անօրեն գործողությունների հանդեպ: Իրենց անձնական օգուտից ելնելով՝ նրանք չատ հեշտությամբ մի կուսակցությունից անցնում էին մյուսը, խորհրդարանական մի խմբակցությունից մյուսը: Պարսկաստանում ծառայող ռուս դիվանագետներից մեկը մի առիթով պատկերավոր ասել էր, թե պարսիկ իշխանավորներն ավելի հաճախ են փոխում իրենց քաղաքական հայացքները, քան՝ կանանց:

Ժողովրդական զանգվածները տառապում էին սոցիալական ծանր վիճակից: Իսկ ովքե՞ր են մտածում նրանց մասին, հարցնում էր «Հորիզոնը», «հաստափոր վաճառականներից կազմված մեջլի՞սը, կաշառակեր «ազատամիտ» պաշտօնեանե՞րը, թէ՞ ֆանատիկոս մուշտեիդներն ու սէիդները, ձրիակեր մոլլաներն ու ախունդները»[1]:

Սահմանադրության հրապարակումից ի վեր կարգը երկրում վերացել էր:

«Ամենամեծ եւ ամենաառաջին ցաւն այն է,- գրում էր Թերթը,- որ ժողովրդական լայն մասսաները մութ կերպով են պատկերացնում իրենց իրերի ներկայ դրութիւնը եւ կատարուած քաղաքական յեղաշրջման նշանակութիւնը: Հին աւանդական ֆանատիկոսական նախապաշարումները դեռ եւս շարունակւում են մնալ իրենց զօրութեան մէջ: «Նոր» օրէնքները միանգամայն սահմանադրութեան սկզբունքների դէմ են»[2]:

Ամեն տեղ իշխում էին անիշխանությունն ու հետադիմական

---

[1] **«Հորիզոն»**, № 120, 4 Հունիսի 1910 թ.:

[2] Նույն տեղում:

գաղափարները: «Հորիզոնը» վկայում էր, որ Թեհրանի մամուլը փաստական տվյալների հիման վրա հարցնում է. «Բայց որտեղ է սահմանադրությունը, ո՞վ տեց այդ, ինչո՞ւմն է երեւում ազատությունը»: Երբ մի առիթով այդ հարցը տվել էին Բաղր խանին, նա բուռն կերպով պատասխանել էր. «Սահմանադրությունը Աստա՛ծ է տել...»[1]:

Եփրեմը մայրաքաղաք եկավ այն ժամանակ, երբ սրվել էին հակասություններն իշխանական բոլոր թեւերի միջև:

Մեջլիսի հետ կառավարության հարաբերությունները սրվել էին այն պատճառով, որ վերջինս մտադիր էր բարձր տոկոսներով արտաքին փոխառություն կնքել, իսկ մեջլիսը կտրականապես մերժել էր և դիմել լայն հասարակայնությանը՝ միանալու իր բռնած դիրքին:

Նոր Պարսկաստանը հնից ժառանգել էր քայքայված մի պետություն: Երկիրը փոքր ի չատե կարգի բերելու համար հարկավոր էին թե՛ ժամանակ, թե՛ խոհական գործունեություն և թե՛, մանավանդ, փող: Առանց բարելավելու երկրի ֆինանսական դրությունը, չէր կարելի շարունակել պետական շինարարության գործը:

Բայց ինչպե՞ս և որտեղի՞ց փող ճարել: Մնում էր միայն դիմել արտաքին փոխառության:

Փոխառությունը վտանգավոր չէ, եթե երկրի կառավարությունը փոխառած գումարներն ամենից առաջ գործածում է տնտեսությունը զարգացնելու միջոցով ժողովրդի սոցիալական դրությունը բարելավելու և լուսավորություն տարածելու վրա: Թե այդ գումարները պարսից նոր կառավարությունն ինչպե՞ս կգործադրեր՝ այս էր խնդիրը:

Պարսկաստանը կամենում էր երկրի գործերով չահագրգռված եվրոպական մեծ պետություններից հինգ միլիոն ռուբլու փոխառություն ձեռք բերել: Մեծ Բրիտանիան և Ռուսաստանն ամենայն պատրաստակամությամբ տալիս էին այդ գումարը, բայց դնում էին իրենց պայմանները, այն է՝ իրենք են վե-

---

[1] ***«Հորիզոն»**, № 120, 4 Հունիսի 1910 թ.:*

բահսկելու իրենց տված գումարները, իսկ ռուսաց կառավարությունը նույնիսկ պահանջում էր, որ պարսից ժանդարմերիայի բոլոր հրահանգիչները ռուսներ լինեն[1]: Այդ պահանջների հետ Պարսկաստանի կառավարությունը դժվարանում էր հաշտվել:

Բայց իրերի դրությունն ուրիշ հնարավորություն չէր տալիս: Որքան էլ եվրոպական վերահսկողությունը ցանկալի չլիներ, բայց եթե կառավարությունը խոհուն քաղաքականություն վարեր, ստացած գումարները տեղին ու խնայողաբար օգտագործեր, ապա երկրի տնտեսական դրությունը շուտով կարող էր բարելավվել:

Իմպերիալիստական պետություններից փոխառությունը Պարսկաստանի հեղափոխական ու դեմոկրատական տարրերն ընկալեցին որպես երկրի վերջնական գաղութացմանն ուղղված հերթական դավադրություն:

Թեհրանում, Իսֆահանում, Թավրիզում, Ղազվինում և այլուր կազմակերպվում էին բողոքի հանրահավաքներ կառավարության մտադրության դեմ, որի անխուսափելի հետևանքն էր լինելու իմպերիալիստական տերություններից երկրի կախվածության ուժեղացումը:

Փոխառության դեմ լայն շարժում էր սկսվել մայրաքաղաքի կանանց շրջանում, որոնց մեջ իր աշխուժությամբ աչքի էր ընկնում Եփրեմի կինը՝ Անահիտը: Նա Թեհրանի մեդրեսեներում գումարում էր կանանց հանրահավաքներ, որոնցում արտաքին փոխառության դեմ բողոքի բանաձևեր էին ընդունվում: Ավելին, կանայք Թեհրանում և ուրիշ քաղաքներում հանդես էին գալիս ի նպաստ ներքին փոխառության, միայն թե չխորացվեր երկրի գերիշխանության (սուվերենության) ոտնահարումը: Հայրենասիրական տրամադրություններն այնքան էին ուժեղացել, որ մի քանի հարյուր պարսիկ, թուրք և հայ առևտրականներ մեջլիսին էին ներկայացրել արտասահմանյան փոխառության դեմ բողոք, որում հայտարարել էին, թե դրա փոխարեն իրենք պատրաստ են պետությանը վճարել ոչ միայն անուղղակի հարկեր, այլև կատարել միանվագ մուծումներ:

---

[1] *Տե՛ս* ***«Սուրհանդակ»****, № 39, 10 դեկտեմբերի 1909 թ.:*

Այդ պայմաններում կառավարությունը դեռևս 1910 թ. փետրվարի 8-ին հայտարարել էր, թե ինքը մտադիր է հրաժարական տալ, եթե մեջլիսը մերժի փոխառություն վերցնելը: Մեջլիսն ամուր կանգնել էր իր տեսակետին: Փետրվարի 15-ին Սիփահդարը կառավարության հրաժարականի խնդրագիր էր հանձնել Ահմեդ շահին, որը դա մերժել էր և առաջարկել էր մեջլիսի հետ լեզու գտնել: Ի վերջո հնարավոր էր դարձել ճգնաժամը հաղթահարել՝ կառավարության կողմից փոխառության կնքումը ժամանակավորապես հետաձգելու շնորհիվ: Նախարարները մնացել էին իրենց պաշտոններում:

Բայց ահա՛ մի քանի շաբաթ անց կառավարությունը հակվել էր նորից բարձրացնելու փոխառության հարցը, որը նոր բողոքների տեղիք էր տալիս:

Փոխըմբռնում չկար բուն կառավարության մեջ: Այստեղ տարաձայնությունները սուր կերպարանք էին առել հատկապես երկրում Ռուսաստանի խաղացած դերի գնահատման հարցի շուրջ, որից էլ պետք է բխեին կառավարության հետագա անելիքները:

Նախարարներից ոմանք կարծիք էին հայտնում, որ միևնույնն է, ռուսները ձեռք չեն քաշելու իրենց սպառնալիքներից և վաղ թե ուշ մտնելու են Թեհրան, ուստի պետք է լեզու գտնել նրանց հետ՝ քաղաքական ճգնաժամից պակաս կորուստներով դուրս գալու համար: Ուրիշներն այն կարծիքին էին, որ Թեհրան զորք մտցնելու ռուսների մտադրությունը պետք է խափանել զենքով: Այդ քաղաքական գծի կողմնակիցների գլուխը կանգնեց Եփրեմը, գտնելով, որ ճգնաժամը հաղթահարելու համար պետք է համախմբել սահմանադրականների բոլոր ուժերը, կոչով հայտարարել պարտվողական տրամադրություններին և ամեն գնով պաշտպանել մայրաքաղաքը հնարավոր ներխուժման ոտնձգություններից: Բայց ոչ բոլորն էին համոզված, որ կառավարությունն ի վիճակի է որդեգրելու Եփրեմի տեսակետը, որն, ըստ էության, ՀՅ դաշնակցության պաշտոնական տեսակետն էր:

Եփրեմն ու նրա կողմնակիցները նաև պահանջում էին չարունակել և ուժեղացնել ռուսական ապրանքների՝ դեռևս 1909 թ. աշնանն սկսած բոյկոտը:

Կառավարության մեջ հակառուսական տրամադրությունների բորբոքումը չէր կարող աննկատ մնալ Պետերբուրգի աչքից:

Ստոլիպինի կառավարությունը մեղադրում էր Սիփահդարին այն բանի համար, որ նա ոչ միայն որևէ միջոց չի ձեռնարկում կանգնեցնելու այդ ընթացքը, այլև խրախուսում է Ռուսաստանի դեմ ուղղված ձեռնարկները:

Բայց Պետերբուրգի կառավարության մտքում ուրիշ բան էր: Այդ պահին նրա հիմնական նպատակն էր կառավարությանը, մեջլիսին ու անջումեններին մեղադրելով անճարակության համար, նրանց դեմ հանել ժամանակին սահմանադրական չարժմանն աջակցած, բայց այժմ նոր իշխանություններից հիասթափված հասարակական խավերին, երկրում դրությունն է՛լ ավելի անկայուն դարձնել և պայմաններ ստեղծել հեղափոխական ուժերի դեմ լայնածավալ ռազմական գործողություններ սկսելու համար:

Դեռևս 1910 թ. փետրվարի 4-ին Թեհրանում ռուսաց դեսպանն իր կառավարության անունից պարսից կառավարությանը տեղեկացրեց, որ Ղազվինում գտնվող ռուսական զորքերի մի մասը տեղափոխվում է Թեհրան: Պատճառաբանությունն այն էր, որ, իբր, ռուսաց դեսպանատան մոտերքում հայտնաբերվել են սպառնական թռուցիկներ, որոնցով կոչ է արված՝ Պարսկաստանից ռուսական զորքերը դուրս չբերելու դեպքում պայթեցնել դեսպանության շենքը:

Եվ ահա՛ այժմ, Պետերբուրգը կրկնում էր իր սպառնալիքը՝ կառավարությունից պահանջելով միջոցներ ձեռնարկել դաղարեցնելու իր անդամների մի մասի հակառուսական հարձակումներն ու գործողությունները և ընդհանրապես մշակել ու իրականացնել երկիրը կայունացնելու որոշակի ծրագիր:

Կառավարության նախագահ Սիփահդարն այդ օրերին առիթը բաց չէր թողնում հայտարարելու, թե Պարսկաստանում վերջին երկու տարիներին քաղաքական դրությունն այնքան կայուն չի եղել, ինչպես վերջին չաբաթներին և հույս ունի, որ իր գլխավորած կառավարությունն ի վիճակի կլինի առաջիկա ամիսներին ավելի կայունացնելու դրությունը: Իր կառավարու-

թյան հաջողություններից մեկը նա համարում էր այն, որ պարսից սահմանագլխային քաղաքներում գտնվող օսմանյան զորքերը փետրվարի 10-ից սկսել էին հեռանալ երկրի սահմաններից:

Բայց կառավարության վարկը չարունակում էր իջնել: Սիփահդարին անձնապես մեղադրում էին, թե նա ավելի հակահեղափոխական է, քան հեղափոխական, որովհետև գնալով իր չուրջն է համախմբում ժողովրդի համար ատելի մարդկանց, որոնք երեկ Մահմեդ Ալի շահի երկրպագուներն էին և այդպես էլ մնացել են:

Իր դեմ հնչած մեղադրանքները չեզոքացնելու միջոցներից մեկը Սիփահդարը համարեց Սաթթար և Բաղր խաներին Թավրիզից մայրաքաղաք կանչելը և նրանց հատուկ պատիվներ տալը: Վերջիններս ժամանեցին Թեհրան: Կառավարությունը հսկա ընդունելություն սարքեց՝ վրաններ խփելով ճանապարհին և հաղթական կամարներ պատրաստելով: Իսկ քաղաքում նախապատրաստվեցին ու անցկացվեցին բազմաթիվ հանդիսություններ:

Այդ ձեռնարկը նույնպես ի վիճակի չեղավ բարձրացնելու կառավարության ղեկավարի ընկած վարկը: Սիփահդարը հանգեց այն մտքին, որ իր դիրքերը կարող են ամրապնդվել, եթե հնարավոր լիներ մի կարևոր հաղթանակ տանել կռվի դաշտում:

1910 թ. հունիսի առաջին տասնօրյակում միապետականներն ապստամբություն էին բարձրացրել Համադանում: Եփրեմը Համադանի վրա գնալու և ապստամբությունը ճնշելու հրաման ստացավ: Մոտենալով քաղաքին, Եփրեմի զորամասն անմիջապես անցավ գրոհի: Հակակառավարական ուժերը լուրջ դիմադրություն ցույց չտվեցին, որովհետև դրանց հրամանատարությունը սարսափով էր տեղեկացել Արդաբիլում չահսևանների կրած ջարդի մանրամասներին: Գրավելով Համադանը, կառավարական զորքը զինաթափեց միապետական ջոկատներին և հաղթականորեն վերադարձավ Թեհրան: Այդ հաղթանակը նույնպես չփրկեց Սիփահդարին: Նա չկարողացավ չեզոքացնել իրեն ուղղված մեղադրանքները և, ի վերջո, հունիսի 25-ին հրաժարական ներկայացրեց:

Ռուսական դեսպանության դիվանագետ Ս. Ս. Պոկլևսկի-Կոզելը Թեհրանից հունիսի 26-ին հեռագրով հաղորդում էր Թիֆլիս. «Հաշվի առնելով իր նկատմամբ թշնամական վերաբերմունքը, Սիփահդարը երեկ հրաժարական է տվել, որը շահի խնամակալը (ռեգենտը) հավանաբար կընդունի»: Նշելով այն հավանական թեկնածուներին, որոնք կմտնեն նոր կառավարության մեջ, նա շարունակում էր. «Նկատի առնելով այստեղ ձևավորված համոզմունքը, որ Եփրեմը ներկա րոպեին հանդիսանում է երկրում կարգը վերականգնելու համար ամենահարմար մարդը, ենթադրվում է, որ նա կնշանակվի ոստիկանության նախարար և նրան կենթարկվեն նահանգային ոստիկանական բոլոր հիմնարկները»[1]:

1910 թ. հունիսի 28-ին շահի նոր խնամակալ Նասր օլ Մոլքն ընդունեց Սիփահդարի և Սարդար Ասադի հրաժարականը: Նոր կառավարություն կազմելը հանձնարարվեց արքունի նախարար Մոստոուֆի օլ Մեմալիքին[2] (իսկական անունը՝ Միրզա Էհսան խան):

Այդ գործողությունից հետո շահի խնամակալը մեկնեց Եվրոպա:

ՍԱԴՐԱԶԱՄ ԱԹԱԲԵԿԻ ԱՆՎԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ԴԵՊՔԸ

Երկրում գոյություն ունեցող բազմաթիվ ոչ-պետական ռազմական կազմավորումներից չատերն իրենց համարում էին ինքնիշխան, թույլ էին տալիս անընդունելի գործողություններ՝ սահմանադրությունն օգտագործելով որպես ցուցանակ, բնակչության շրջանում կատարում էին բռնություններ և հակաօրինական ուրիշ արարքներ: Շատ զինված ջոկատներ հիմնականում կազմված էին լյումպենացված ներքնախավերի ներկայացուցիչներից, որոնք կողոպուտներ կատարելու առիթը բաց չէին

---

[1] Տե՛ս "Сборник дипломатических документов ...", вып. IV, с. 239-240.

[2] Նույն տեղում, էջ 248:

թողնում: Այդ տեսակետից հատկապես դատապարտելի դեր էին կատարում Սարդար Մուխիի և Զարդամ Սոլթանի տխրահռչակ զինված կազմավորումները:

Ելնելով դրանից, կենտրոնական կառավարությունը 1910 թ. հունիսի 23-ին հրաման արձակեց, որի համաձայն՝ հեղափոխական բոլոր ռազմական խմբավորումներն ու ջոկատները պարտավոր էին մտնել կանոնավոր բանակի մեջ, իսկ ովքեր չէին փափագում մտնել զորանոց, պետք է զինաթափ լինեին, զենքերը հանձնեին և քաղաքացիական աշխատանքների անցնեին: Կառավարության հրամանի կատարման պատասխանատվությունը դրվեց Եփրեմի վրա:

Անցնում էր ժամանակը, բայց զինաթափման գործն առաջ չէր գնում: Զինաթափվել էր միայն երկու ջոկատ՝ հայերից կազմված Եփրեմի ջոկատը և Հայդար խան Ամու օղլու բախտիարական ջոկատը: Մյուս զինված խմբերը և խմբավորումները սպասողական դրության մեջ էին:

Իր հերթին, Պետերբուրգը նույնպես պահանջում էր զինաթափել ոչ միայն կառավարական բանակի մեջ չմտնող զինված ջոկատները, այլև իր ազդեցության գոտու ողջ բնակչությանը: Թեհրան ուղարկված իշխան Վատբոլսկին պարսից կառավարության հետ պետք է քննարկեր զինաթափման հարցերը:

1910 թ. հուլիսի 22-ին Ս. Ս. Պոկլևսկի-Կոզելը հեռագրում է Թիֆլիս, տեղեկացնելով, որ Մոստոուֆի օլ Մեմալիքի կառավարությունը կողմ է իր նկատմամբ թշնամաբար տրամադրված առավել խոշոր ջոկատների (բախտիարներ, ֆիդայիներ) և ժանդարմերիայի ու ոստիկանության մի մասի զինաթափմանը: Հեռագրում նշված էր, որ կառավարության դեմ հանդես եկողների թվում են «Սաթթար ու Բաղր խաները և Մոիզ Սոլթանը՝ 400-500 հոգով, որոնց հարում է կառավարությանն ընդդիմադիր բնակչության մի մասը: Զինաթափումը հավանաբար կհանդիպի ուժգին դիմադրության»[1]:

Ռուսական դիվանագիտական փաստաթղթերից երևում է,

---

[1] **"Сборник дипломатических документов ..."**, вып. V, СПб, 1912, с. 22.

որ կառավարությանը չենթարկվելու Սաթթարի և Բաղրի բռնած դիրքը ջերմ արձագանք էր գտել Հյուսիսային Պարսկաստանի միապետական ուժերի մոտ: Թավրիզից հուլիսի 22-ին Թեհրան ուղարկած հեռագրով Թավրիզի ռուսական հյուպատոսության գլխավոր քարտուղար Միլլերն այդ մասին նշում էր, որ չուտով «այստեղ են գալու Թաղիզադեն, Սաթթար և Բաղր խաները» և որ այդ լուրը քաղաքում հակակառավարական խմորումներ է առաջ բերել[1]:

Հուլիսի 22-ին կառավարությունը տարածեց մի թռուցիկ, որով բնակչությանը կոչ էր անում 48 ժամվա ընթացքում ամբողջովին զինաթափվել: Ազդարարվում էր, որ իրանյան նոր հրացան կամ «Մաուզեր» հանձնելու դիմաց վճարվելու է 45-ական թուման, իսկ ովքեր կարձանագրվեն ծառայելու կանոնավոր բանակում, իրավունք կունենան պահպանելու իրենց զենքը: Դա վերաբերում էր նաև կառավարությանը կողմնակից բոլոր ֆիդայիներին: Երկու օրը լրանալուց հետո զենքը վերցվելու էր ուժով, իսկ դիմադրություն ցույց տվողներին սպառնում էր գնդակահարություն: Թռուցիկում նաև նշված էր. «Հրետակոծության կենթարկվեն այն տները, որտեղից դիմադրություն ցույց կտրվի: Զինաթափման գործողությունների ղեկավարումը կհանձնարարվի Եփրեմին ...»[2]:

Հուլիսի 24-ին երեկոյան լրացել էր զինաթափման ժամկետը, բայց որևէ մեկը զենք չէր հանձնել[3]:

Մի քանի նախազգուշացումներից հետո կառավարության որոշումը չէին կատարում նաև Սաթթար և Բաղր խանները: Թավրիզեցի ու կովկասցի հեղափոխականների հետ նրանք բնակվում էին Թեհրանի Սաղրազամ Աթաբեկի անվան զբոսայգում և իրենց ամսականները կանոնավորապես ստանում էին կառավարությունից: Զնայած դրան, ինչպես իր հուշերում նշել է խմբապետ Ավետիս Վարդանյանը, Սաթթարը և Բաղրը դժգոհ էին: Դժգոհ էր մանավանդ առաջինը, որը, Վարդանյանի վկա-

---

[1] *"Сборник дипломатических документов ..."*, вып. V, с. 22.

[2] Նույն տեղում, էջ 31-32:

[3] Տե՛ս նույն տեղում:

յությամբ, ձգտում էր զինվորական նախարար դառնալ:

Օգտվելով Սաթթարի և Բաղրի թողտվությունից, նրանց ենթակաները նույնպես իրենց սանձարձակ էին պահում՝ նեղելով բնակչությանը:

Հարցը մտավ փակուղի, և կառավարությունը նիստ գումարեց ելք գտնելու համար: Որոշում ընդունվեց Սաթթար և Բաղր խաներին 24 ժամ ժամանակ տալ՝ կառավարությանն օրինավոր պատասխան տալու համար[1]: Այդ ընթացքում Եփրեմն ու Քեռին մի քանի անգամ գնում ու հանդիպում են նրանց հետ, փորձում համոզել, որ ենթարկվեն կառավարության հրահանգին, բայց՝ ապարդյուն: Ավելին, կոչտ ու կոպիտ պատասխաններ են ստանում:

Եփրեմն իր բնակարանում խորհրդակցություն է հրավիրում քննելու, թե ինչպե՞ս պետք է դուրս գալ ստեղծված վիճակից: Մասնակիցները տեսակետ հայտնեցին, որ զինաթափումը պետք է կատարեն ոչ թե հայերը, այլ Սարդար Ասադի բախտիարները:

Մոստոուֆի օլ Մեմալիքի կառավարությունն ստիպված դիմեց կտրուկ միջոցների՝ Եփրեմին և Սարդար Բահադուրին հրամայելով ուժ գործադրել և զինաթափումն իրականացնել:

Նույնիսկ դրանից հետո Եփրեմը ևս մեկ անգամ փորձեց ֆիդայական ջոկատների հրամանատարներին համոզել ենթարկվել կառավարության պահանջին՝ առանց բարդություններ ստեղծելու: Դրանով իսկ նա ձգձգում էր հրամանի կատարումը, իսկ կառավարությունից չտապեցնում էին: Եփրեմը պահանջեց գրավոր հրաման, որը և անմիջապես ստացավ:

Եփրեմին այլ ելք չէր մնում: Նա չէր ուզում ըմբոստ խռովարար լինել և հանդես գալ այն իշխանության դեմ, որի ստեղծման համար հենց ինքն էր պայքարել:

Հայազգի ոստիկանապետին ֆիդայիների դեմ հանելու նախարարների խորհրդի որոշումը մաքիավելական մի ծրագիր էր՝ ապագայում իրենց օձիքը պատասխանատվությունից ազատելու համար: Խայծը նետված էր, և Եփրեմն իր դաշնակցական ըն-

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 12 (454), դեկտեմբեր, 1963, էջ 51:*

կերներով ընկավ լարված ծուղակի մեջ՝ իր անցանկալի հետևանքներով:

1910 թ. հուլիսի 25-ի երեկոյան Եփրեմը հայ և բախտիար մարտիկներով ու երկու թնդանոթով շրջապատեց Աթաբեկի զբոսայգին և անմիջապես ինքն սկսեց կրակել թնդանոթից:

Սաթթարի և Բաղրի հրամանի տակ զբոսայգում գտնվող զինյալների թիվը 300 էր[1]: Սկզբում հայերի 20 հոգանոց խումբը չէր միջամտում, մտածելով, որ Սարդար Բահադուրի բախտիարներն արագորեն պարտության կմատնեն խռովարարներին: Բայց վերջիններս ուժգին դիմադրություն էին ցույց տալիս[2]:

Վերջապես, Եփրեմը հայ մարտիկներին հրամայում է մտնել կռվի մեջ: Ռմբային հարվածներով նրանք դիրքերից դուրս են մղում Սաթթար խանի ուժերին, որոնք փախչում են զանազան ուղղությունների վրա կամ հրացանները նետելով հանձնվում են:

Աթաբեկի այգու կռվում Սաթթար և Բաղր խաների զինվորներից սպանվել էր 16 և վիրավորվել 6 հոգի, իսկ Եփրեմի ու Սարդար Բահադուրի կողմից սպանվել էր 4 հոգի՝ 2 բախտիար և 2 ժանդարմ[3]:

Հայկական ջոկատը և բախտիարները մտնում են այն չինությունից ներս, ուր գտնվում էին Սաթթարն ու Բաղրը: Վերջինս անձնատուր է լինում և հայտնում, որ Սաթթար խանը չկա, բայց շուտով վերջինիս գտնում են վերին հարկում՝ ուշագնաց: Նա ծանր վիրավորվել էր ծնկից[4]: Վիրավորված Սաթթար խանին և դաժանորեն ծեծված Բաղր խանին բախտիարները տեղափոխում են Սարդար Ասադի եղբոր՝ Սամսամ Սալթանեի (իսկական անունը՝ Նաջաֆ-զուլի խան Բախտիարի) տունը[5]:

Դեպքին մասնակից Ավետիս Վարդանյանի վկայության համաձայն՝ հետևյալ օրը Եփրեմը գնացել էր վիրավոր Սաթթա-

---

[1] Տե՛ս *"Сборник дипломатических документов ..."*, вып. V, с. 48-49.

[2] Տե՛ս **«Հայրենիք»**, № 12 (454), դեկտեմբեր, 1963, էջ 52:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 54:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] *"Сборник дипломатических документов ..."*, вып. V, с. 52.

ին տեսության: Վերջինս ասել էր, թե իրենք սխալվել ու մեծ հանցանք են գործել՝ կռվելով կառավարության դեմ և պատճառ դարձել բազմաթիվ զոհերի[1]:

Սաթթար խանը, որը Բաղր խանի և Սարդար Մուխիի հետ երդվել էր մինչև մահ կռվել և չհանձնվել կառավարական ուժերին, պարտություն կրելուց հետո փորձել էր անմիտ դիմադրության համար մեղքը բարդել միայն Սարդար Մուխիի վրա: Իրադարձությունների իր բացատրությունն այսպես էր ներկայացրել Սաթթար խանը "Русское Слово" թերթի թղթակցին տված հարցազրույցում. «Հաղթական կառավարությունը,- ասել էր նա,- որ թափեց իր եղբայրների արյունը, լուրեր է տարածում, թե ամեն ինչում ես եմ մեղավոր, թե նա սպառել էր հակամարտության խաղաղ լուծման բոլոր միջոցները: Դա ճիշտ չէ ... Իմ ընկեր Բաղր խանը, իմ ջոկատի մարդիկ՝ մենք բոլորս, որոշեցինք զենքը հանձնել կառավարությանը, և միայն հոգալ փիդայիների նյութական օգնության մասին ... Այդ ոգով՝ ներքին գործերի նախարարի հետ հեռախոսով բանակցություններն արդեն մոտենում էին ավարտին, երբ հանկարծ ինչ-որ մեկը կրակեց: Կառավարությունը պնդում է, թե այդ փոխհրաձգությունն սկսել է իմ ջոկատը, որը գտնվում էր զբոսայգում: Դա նույնպես ճիշտ չէ, քանի որ առաջին զոհը իմ ազգականն էր, որն այգու պատի հետևում էր ... Բախտիարների և կառավարական զորքերի դեմ կռվում էին միայն Մոիզ Սոլթանի մարդիկ, որը խայտառակ կերպով փախավ թուրքական հյուպատոսություն»[2]:

Պոկլևսկի-Կոզելը հուլիսի 29-ին Թեհրանից հեռագրում էր Թիֆլիս.

«Կառավարության վերջին գործողությունները մեծ դժգոհություն են առաջ բերել բնակչության շրջանում: Աճում է նաև

---

[1] *Տե՛ս **«Հայրենիք»**, № 12 (454), դեկտեմբեր, 1963, էջ 54 (նշենք, որ Աթաբեկի զբոսայգու կռվից հետո Սաթթար խանի առողջական վիճակն այնպես էլ չբարվոքվեց: Նա վախճանվեց 1914 թ. Թեհրանում):*

[2] *"Русское Слово"-ի հարցազրույցի արտատիպը տե՛ս "Баку" թերթի 1910 թ. օգոստոսի 8-ի համարում:*

թշնամանքը հայերի նկատմամբ, որ բորբոքվել է Աթաբեկի այգին գրավելու ժամանակ Եփրեմի և նրա հայրենակիցների խաղացած գլխավոր դերով: Չնայած ոստիկանության ձեռնարկած խիստ միջոցներին, մի խումբ վաճառականներ բեստ են նստել Շահ Աբդոլ Ազիզ մզկիթում: Ոստիկանության փնտրած Մոիզ Սոլթանը 20 ֆիդայիներով անցել է Զերգենդի տարածք և բեստ նստել թուրքական դեսպանությունում»[1]:

Ֆիդայիների զինաթափման գործում Եփրեմի և նրա ջոկատի մասնակցությունը գրգռեց հետադիմական տարրերին ու նրանց արտասահմանյան պաշտպաններին: Այդ սադրիչ գործողություններին չզլացան գաղտնի խառնվել նաև Թուրքիայի ներկայացուցիչները: "Баку" թերթի Թեհրանի թղթակցի վկայությամբ՝ «... երրորդ օրը մի քանի փողոցներում հայտնվեցին թռուցիկներ՝ ուղղված հայերի, ակնհայտորեն Եփրեմի դեմ: Ուշադրության է արժանի այն, որ առաջին անգամ դրանցում ակնարկվում է հայերի կոտորածին Թուրքիայում ... (Հավանաբար խոսքը եղել էր կիլիկիահայության 1909 թ. ապրիլին տեղի ունեցած կոտորածների մասին:- Հ. Ս.): Այդ թռուցիկների մեծ մասը գտնվեց թուրքական դեսպանատան մոտերքում, որտեղ ապաստան էին գտել սադրիչ Մոիզ Սոլթանը և նրա «քաջերը»: Համառորեն ասում են, որ այդ գրգռությունները սարքված են թուրքական դեսպանության պատերի ներսում, որն այս պատմության ամբողջ ընթացքում անվայելուչ ու տգեղ դեր է խաղացել»[2]:

Աթաբեկի այգու իրադարձությունների համար Եփրեմին դատապարտեցին ոչ միայն կառավարության ներքին հակառակորդները, թուրք դիվանագետները, այլև Դաշնակցության ղեկավարները: Վերջիններս Եփրեմին մեղադրում էին տվյալ պահին պարսկահայության ազգային շահերը չըմբռնելու համար:

«Մշակը» գրում էր, որ «Եփրեմի սխալ քայլը Սաթթար խանի եւ պարսիկ ֆիդայիների նկատմամբ տեղի գրգռուած ժողո-

---

[1] **"Сборник дипломатических документов ..."**, вып. V, с. 41.

[2] **"Баку"**, № 186, 16 октября 1910 г.

վուրդը կարող է վերագրել ամբողջ հայութեանը: Անկարգութիւնները սաստկանալու դէպքում ֆանատիկոս պարսիկները, անշուշտ, չեն զլանայ իրենց վրէժխնդրութիւնը թափել խեղճ ու կրակ սակաւաթիւ հայութեան գլխին»[1]:

Իր հերթին, «Արօրը» գրում էր. «Ներկայ բոպէին հայը չարժել է ե՛ւ պարսիկ ամբոխի զայրոյթը եւ ֆանատիկոսութեան բռնկումը Եփրեմի մի անխոհեմ քայլի՝ Սաթթար խանին եւ նրա ֆէդայիներին զինաթափ անելու գործի պատճառով: Որքան էլ Սաթթար խանը եւ նրա զինակիցները՝ Բաղր խան եւ այլք՝ արկածախնդիր մարդիկ են, ինչպէս արկածախնդիր է եղել եւ ինքն Եփրեմը, բայց պարսիկ ժողովրդի աչքում նրանք ազատագրութեան հերոսներն են եւ յեղափոխութեան ղեկավարները: Եւ ահա՛ այդ հերոսներին զինաթափ են անում. եւ որովհետեւ զինաթափ անողները՝ հայեր են, ուստի պարսիկ ամբոխը իր զայրոյթը, վրիժառութիւնը ուղղում է հայի գլխին, որին նա, իբրեւ ֆանատիկոս մահմեդական, ատում է սրտի խորքում: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ մահմեդական ամբոխը անարգ եւ պիղծ է համարում քրիստոնեային; Արդ՝ ո՞վ կարող է երաշխաւորել, որ երբ խռովութիւնները սաստկանան Պարսկաստանում, 7 միլիօն պարսիկ ամբոխի մէջ ցիր ու ցան եղած 70.000 հայերը կարող են ազատուել մահմեդականների մոլեռանդ կատաղութիւնից»[2]:

Սաթթար խանի և նրա ֆիդայիների դեմ իրականացրած ռազմական գործողությունը խորհրդային պատմագրության մեջ միանշանակ ներկայացված է որպես դավաճանություն հեղափոխության գործին[3]: Դեպքին չափազանց կողմնակալ մոտեցման բազմաթիվ օրինակներից հիշատակենք թեկուզ Մ. Ս. Իվանովի «Իրանի պատմության ուրվագծեր» գիրքը: Այնտեղ կարդում ենք.

«1909 թ. սկզբին դաշնակ[ցականների] մասնակցություն ունեցան շահական իշխանության դեմ ուղղված հեղափոխական

---

[1] **«Մշակ»**, № 226, 13 հոկտեմբերի 1910 թ.:

[2] **«Արօր»**, № 8, 9, 10, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, 1910, էջ 199:

[3] АВПР, ф. Персидский стол, д. 3837, л. 258.

ելույթներին: Բայց հետագայում նրանք ծառայության անցան Իրանի շահի և իրանական խաների մոտ (?:- Հ. Ս.) և օգտագործ-վեցին հեղափոխական տարրերի դեմ, ֆիդայական ջոկատների զինաթափման համար (?:- Հ. Ս.)» [1] *և այլն: Հետագա շարադ-րանքում ավելի հեռու գնալով, Իվանովը գրում է. «1910 թ. օգոստոսին կառավարության հրամանով Թեհրանի ոստիկանու-թյունը դաշնակ[ցական] Եփրեմի հրամանատարությամբ և բախտիարների ջոկատը կազակական բրիգադի օժանդակու-թյամբ զինաթափեցին Սաթթարի և Բաղրի գլխավորած հեղա-փոխական ֆիդայիների ջոկատները:*

... Ֆիդայական ջոկատների զինաթափման հետևանքով իրանական հեղափոխությունը զրկվեց իր առավել տոկուն զին-ված ուժից: Հեղափոխական ֆիդայական ջոկատների զինաթա-փումը դաշնակ[ցական] Եփրեմի ղեկավար մասնակցությամբ կրկին ցույց էր տալիս այն հակահեղափոխական դերը, որ խա-ղում էին դաշնակ[ցականները] իրանական հեղափոխության մեջ»[2]*:*

Պատմության բացահայտ խեղաթյուրման ցայտուն օրինակ է Ն. Մ. Լավրովի աշխատությունը: Հեղինակը գտնում է, որ Եփ-րեմն ընդհանրապես դավաճանական դեր է խաղացել պարսկա-կան հեղափոխության մեջ: «Երբ 1910 թ. ապրիլին Թեհրան ժա-մանեցին Թավրիզցի ֆիդայիները՝ Սաթթար խանի գլխավորու-թյամբ,- գրում է նա,- Եփրեմը, լինելով ժանդարմերիայի պետ, բախտիարների հետ կազմակերպեց հեղափոխական ֆիդայի-ների կոտորած: Դա ուժգին հարված էր հեղափոխությանը»[3]*: Ավելին, նա պնդում է, որ Եփրեմի «դավաճանությունն» է իբր եղել պարսկական հեղափոխության պարտության գլխավոր պատճառը: «Մեջլիսի անգործությունը և իրանյան բուրժուա-կալվածատիրական ազատական առաջնորդների դավաճանու-թյունը թուլացրին իրանյան ժողովրդական զանգվածների հե-ղափոխական ճնշումը»*[4]*: Այդ ամենի հետևանքով 1911 թ. դեկ-*

---

[1] ***Михаил Сергеевич Иванов,*** *Очерки истории Ирана, с. 234.*

[2] *Նույն տեղում, էջ 239:*

[3] ***Николай Матвеевич Лавров****, Турция и Иран в 1870-1918 годах, с. 44.*

[4] *Նույն տեղում:*

տեմբերին «անգլիական գործակալ Սարդար Ասադը և դավաճան Եփրեմը ցրեցին մեջլիսը»: Հենց այդ պատճառով «հեղափոխությունը պարտություն կրեց»[1]:

Խորհրդային հեղինակների՝ պարսկական հեղափոխության պատմության խեղաթյուրումներն ու ավերումները ծուռ հայելու մեջ են ներկայացնում տեղի ունեցած իրական գործընթացները:*

Պարսկական հեղափոխական շարժմանը հայերի ունեցած մասնակցությանը այդ պատմաբանների՝ թշնամանքի հասնող գնահատականներ տալու հիմնական պատճառը շարժման ակնավոր դեմքի՝ Եփրեմ Դավթյանի դաշնակցական լինելն էր: Ինչ վերաբերում է նրան «դավաճան» համարելուն, ապա դա արտառոց սուտ էր, մանավանդ երբ խոսքը վերաբերում է Աթաբեկի զբոսայգու դեպքերին: Չէ՞ որ թե՛ Եփրեմը, թե՛ Սաթթարը կռվել ու արյուն են թափել նույն նպատակի՝ պարսկական սահմանադրությունը պաշտպանելու համար: Նրանց համատեղ հաղթական պայքարի արդյունքում էր տապալվել Մահմեդ Ալի շահը և ստեղծվել նոր իշխանություն, որը հենց սկզբից ստիպված եղավ կենաց ու մահի կռվի մեջ մտնել սահմանադրության թշնամի ներքին ու արտաքին ուժերի դեմ: Եփրեմը մինչև իր կյանքի վերջը ***անդավաճան*** *կանգնած էր նոր կարգերի պաշտպանության դիրքերում, իսկ Սաթթարը կռվի դուրս եկավ այդ կարգերը խորհրդանշող կառավարության դեմ: Այլ խոսքով, տվյալ պարագայում դավաճանը (եթե կարելի է այդպես որակավորել) Սաթթարն էր, այլ ոչ թե Եփրեմը: Տվյալ ժամանակահատվածում իշխանությունների արածն առավելագույնն էր, ինչը հնարավոր էր անել Արևելքի առավել հետամնաց երկրներից մեկում՝ Պարսկաստանում: Որքան էլ հերոսական լինեին Եփրեմն ու Սաթթարը, միևնույնն է, նրանք չէին կարող իրենց առջև դնել այնպիսի խնդիրներ, որոնց լուծման ուղիների մասին*

---

[1] ***Николай Матвеевич Лавров***, *Турция и Иран в 1870-1918 годах, с. 44.*

* *Թերևս միակ բացառությունը* ***Գ. Վ. Շիտովի*** *"Персия под властью последних Каджаров" գիրքն է: Շիտովի գիրքը լույս էր տեսել այն ժամանակ (1933 թ.), երբ խորհրդային պատմագրության մեջ դեռ կային բազմակարծության անցյալի ավանդույթների մնացորդները:*

գաղափար իսկ չունեին: Իսկ խորհրդային պատմաբանների՝ Սաթթարին տված գնահատականներից հետևում է, թե նա իբր ունակ էր նույնիսկ պայքար մղելու հարստահարված դասակարգերի ազատագրության և երկրում սոցիալիստական կարգերի նման մի բան ստեղծելու համար: Հենց այդ զառանցանքն է նրանց մղել մի կողմից՝ գերագնահատելու ու երկինք բարձրացնելու Սաթթարին, մյուս կողմից՝ ստորադասելու և մրոտելու Եփրեմին:

ՇԻԱ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՆԱՀԱՆՋԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՑ

Ինչպես և սպասելի էր, Աթաբեկի զբոսայգում տեղի ունեցած անցանկալի դեպքը չափազանց բացասական ազդեցություն ունեցավ երկրի պահպանողական շերտերի, մուսուլման հոգևորականության և նրա քարոզների ազդեցության տակ գտնվող զանգվածների վրա: Թուրք Սաթթար խանի դեմ ձեռնարկած գործողությունը զայրույթի ալիք բարձրացրեց հատկապես Ատրպատականի և այլ նահանգների թուրք բնակչության մեջ:

Բարձրաստիճան հոգևորականությունը պարսից շահերի իշխանության հզորացման ժամանակներում, հատկապես Նասրէդդին շահի օրոք, կորցրել էր իր նախկին հեղինակությունն ու դիրքերը և դրանք վերականգնելու համար մտել էր սահմանադրական շարժման մեջ՝ նպատակ հետապնդելով երկրում նոր կարգեր հաստատվելու պայմաններում բացարձակ տիրապետողի դիրքեր ձեռք բերել:

Կյանքն ապացուցեց, որ եթե սահմանադրական շարժման առաջին երկու-երեք տարիներին հոգևորականությունը հակառակ էր միապետական իշխանությանը (համենայն դեպս՝ այդպես էր ներկայանում), նպաստում էր շահական իշխանության տապալմանը, դա բխում էր ոչ թե սահմանադրական ազատությունների նկատմամբ նրա համակրությունից, այլ՝ Ղաջարների միապետության տեղը բռնելու ձգտումից: Ստեղծել աստվածա-

պետական (թեոկրատական) հանրապետություն և նրա կյանքը կարգավորող հիմնական օրենք (սահմանադրություն) հայտարարել շարիաթը,– ա՛յս էր շիա բարձրաստիճան հոգևորականության նպատակը: Իսկ դա նշանակում էր հերքել սահմանադրության գաղափարն իսկ:

Սահմանադրական շարժման տարիներին մուսուլման կղերն առանց արյուն թափելու պատկառելի տնտեսական ուժ էր դարձել: Նրա առավել ազդեցիկ ներկայացուցիչները դարձել էին մեծահարուստ կալվածատերեր, թշվառ գյուղացիության արյունը ծծող ձրիակերներ: Մյուս կողմից, մեջլիսի պատգամավորների արմատական մի շարք պահանջները հեղափոխության մեջ մտած վերին դասերին և մանավանդ բարձրաստիճան հոգևորականությանը հիասթափություն էին պատճառել:

Մի քանի տարի առաջ իրենց սահմանադրական բարեփոխումների ջերմ կողմնակից համարող մուսուլման կղերականներն այժմ բոլորովին ուրիշ ձգտումներ էին դրսևորում՝ հեղափոխության նկատմամբ բացահայտ ոտնձգություններ կատարելով: Ավանդական ավատապետների պես նրանք նույնպես դարձել էին Մահմեդ Ալի նախկին շահի հավանական աջակիցը՝ նոր կարգերը ջնջելու նրա պայքարում:

Արդեն 1910 թ. կեսերից մզկիթներում սահմանադրական կարգը տապալելու բացահայտ կոչեր էին արվում: Այաթոլլաները, մուջտեհիդները, նշանավոր մոլլաներն ու սեյիդները սկսել էին քարոզել, թե երկրի օրենքները պետք է հիմնված լինեն ոչ թե սահմանադրության, այլ՝ շարիաթի վրա:

Մի խոսքով, հոգևոր դասն սկսել էր սեղմել իր շարքերը և, կազմակերպվելով, ձգտում էր տիրապետող դեր ստանձնել երկրի կառավարման գործում:

Հատկապես վտանգավոր էր, որ հոգևորականության այդ ձգտումները համակրությամբ ողջունում էր ժողովրդի հսկայական մեծամասնությունը: Դա, իհարկե, պատահական չէր: Չէ՞ որ ավելի լավ էր ունենալ մի օրենք, թեկուզև անարդար ու վատ, քան ամենևին չունենալ: Շարիաթն իր ոգով որքան էլ հնացած ու անհամապատասխան էր արդի քաղաքակրթության պահանջներին, այնուամենայնիվ, դա որոշակի մի օրենսդրություն

էր, որով Պարսկաստանը կառավարվել էր հարյուրավոր տարի-ներից ի վեր: Իսկ հռչակված սահմանադրական կարգը դեռ չէր կարողացել ստեղծել և երկրին տալ գոնե մեկ օրենք: Այլ խոս-քով՝ Պարսկաստանում օրենքը կատարելապես բացակա էր, ավելի ճիշտ՝ օրենքի տեղը բռնել էր իշխանության եկած մի խումբ մարդկանց կամայականությունը: Հինը՝ շարիաթը, հետին գիծ էր մղվել, իսկ նորը՝ սահմանադրությունը, դեռ չէր կատա-րում իրեն հատկացրած դերը: Երկիրը վերահաս վտանգներից ազատ պահելու միակ միջոցը նրան որոշակի ու հաստատուն քաղաքացիական օրենքներ տալն էր, որոնց ուժով միայն կվե-րացվեին կամայականությունները և ժողովուրդը հավատով կլցվեր դեպի նոր կարգը: Բայց, ցավոք, այդպես չեղավ: Պատա-հական չէր, որ այս պայմաններում մուսուլման ժողովուրդը թեքվում էր դեպի նախկին կրոնական օրենսդրությունը՝ շա-րիաթը, որին ինքը սովոր էր:

Եթե ամբոխն այդքան հեշտությամբ էր ընկնում հոգևորա-կանների սարդոստայնի մեջ, դա ցույց էր տալիս, որ հետամնաց պարսիկն ու թուրքը իրաղարձությունների բերումով անբնա-կանորեն շատ շուտ են արթնացել դարավոր նիրհից: Խավարի մութ խորշերից նայելով հանկարծ հայտնված պայծառ լույսին, նրանք այլայլվել էին, մնացել չչմած, քանի որ նրանց աչքերի համար անսովոր էր քաղաքակրթության լույսը: Հենց դա հոգևորականությանը հնարավորություն էր տալիս ամբոխին գործածել իր նպատակների համար: Այդ հոգևորականությունը սահմանադրական շարժման սկզբից ինքն էր հանդես եկել հա-կամիապետական նշանախոսքերով, ինքն էր եղել շարժման գլխավոր ջահակիրներից մեկը: Բայց ահա՛ այժմ, երբ միապե-տականները ցույց էին տալիս իրենց ուժը, այդ նույն հոգևորա-կանությունը հետ էր քաշվում՝ աչքերը բացած խեղճ ժողովրդին թողնելով կրակների մեջ: Մարդիկ չէին կարողանում կողմնո-րոշվել ի՞նչ անել, ո՞ւր գնալ՝ առաջ, թե՞ հետ: Ամեն դեպքում, նրանք, միապետական թե հեղափոխական, դառը պտուղներ էին քաղում:

Շիա հոգևորականության մեջ սկսված նոր շարժումն ուղղ-վեց հատկապես քրիստոնյաների և առավելապես հայերի դեմ:

Նա սկսել էր նույնիսկ մզկիթներում, թաքիաներում և հրապարակներում քարոզել, թե «ֆրանգացածները» («ֆրանգի մուաբ»), այսինքն՝ եվրոպականացված մուսուլմանները բանադրանքի արժանի են[1]: Սահմանադրության մուծումը երկրի բարձրագիրք հոգևորականներն այժմ ծանրագույն մեղք էին համարում: Դրա պատասխանատուներն, ասում էին նրանք, քրիստոնյաներն են, որոնք չարիաթը փոխարինելով սահմանադրությամբ, ճանապարհ են հարթել երկրում անիշխանության հաստատման, նրա պառակտման ու բաժանման համար:

Սահմանադրության դեմ իր պայքարին օրինական բնույթ հաղորդելու համար մուսուլման կղերը հենվում էր այդ նույն սահմանադրության, հատկապես նրա 1-ին և 2-րդ հոդվածների վրա: 1-ին հոդվածում ասված էր. «Իրանի պաշտօնական կրօնը իսլամութիւնը եւ ջաֆարական ճշմարիտ դաւանութիւնն է (իսնա աշարիէ)»*: Եվ Իրանի Փադիշահը պարտավոր է ունենալ և տարածել այդ կրոնը[2]: 2-րդ հոդվածն ազդարարում էր. «Իմամ Իսնա Աշրիի** խնամքով եւ օգնութեամբ Ն. Վեհ. Իսլամ Շահնշահի շնորհիւ եւ Իսլամական կրօնապետների եւ ընդհանուր պարսից ազգի հոգածութեամբ հիմնուած Ազգային Ժողովի օրէնքները երբեք եւ ոչ մի ժամանակ չպիտի հակասեն Իսլամական սուրբ կանոններին եւ Մարգարէից հաստատուած օրէնքներին»[3]:

Ահավասիկ երկու հոդվածներ, որոնք կարելի էր հիմնական կանոնների ամենահիմնականը համարել: Այլ խոսքով, սահմանադրության հիմնաքարը Ղուրանն էր, որից դուրս չիք էր սահմանադրությունը:

---

[1] Տե՛ս **«Սուրհանդակ»**, № 17, 17 օգոստոսի 1909 թ., **«Մշակ»**, № 14, 22 հունվարի 1910 թ.:

* Շիա դավանության այն ուղղությունը, որը դավանում է տասներկու (արաբ.՝ իսնա աշար) իմամների օրինական հաջորդականությունը:

[2] «Հ. Յ. Դաշնակցութիւն, Եփրեմ, պարսկական սահմանադրութիւն», հատ. Բ, էջ 49:

** Իմամ Իսնա Աշրին 12-րդ իմամն է՝ Մեհդին, որն իբր անհայտացել է և որի երկրորդ գալստյանն սպասում է աշխարհի չիաների մեծամասնությունը:

[3] «Հ. Յ. Դաշնակցութիւն, Եփրեմ, պարսկական սահմանադրութիւն», հատ. Բ, էջ 49:

Պարսկաստանում հաճությամբ էին օգտվում հայերի ծառայություններից տնտեսության մեջ և ռազմական գործում: Այդ երկրում հայությունը, չարիաթի համաձայն, նկատվում էր ոչ թե ազգություն, այլ՝ կրոնական համայնք: Ուստի երբ խնդիրը հասնում էր մուսուլմանների հետ նրանց իրավունքների հավասարեցմանը, այդ դեպքում, չհաշված բացառությունները, թե՛ պարսիկները և թե՛ առավելապես թուրքերը ղեկավարվում էին մոլեռանդ հոգևորականության պատվիրաններով:

Հայերի նկատմամբ չիա մուսուլման վերնախավի տրամադրության կտրուկ փոփոխության առաջին լուրջ դրսևորումներից մեկը տեղի ունեցավ դեռևս 1909 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին՝ պարսկական երկրորդ մեջլիսի պատգամավորների առաջադրման ժամանակ: Ինչպես նշել ենք, նախընտրական շրջանում կրկին առաջ քաշվեց մեջլիսում երկու հայ պատգամավոր ունենալու պահանջը, որը, սակայն, չբավարարվեց: Դրան դեմ դուրս եկավ հատկապես մուսուլման հոգևորականությունը, պատճառաբանելով, թե ի հաշիվ մուսուլմանների՝ պետության կառավարական մարմիններում չափազանց մեծացել են հայերի դիրքերը և մեջլիսում նրանց հետագա ուժեղացումն անթույլատրելի է:

Երկրորդ մեջլիսի աշխատանքներն սկսվելուց հետո պարսիկ հոգևորականությունն ավելի պահպանողական դարձավ:

Իսկ ահա՛ այժմ, Աթաբեկի զբոսայգու դեպքից հետո, չիա հոգևորականությունն ուղղակի ատելություն էր բորբոքում հայերի նկատմամբ, որոնք, իբր, զավթելով կառավարական բարձր և ցածր պաշտոնները, կողոպտում ու կեղեքում են Պարսկաստանի ժողովրդին[1]:

Բարձրագույն հոգևորականությունը հատկապես չէր կարողանում մարսել, որ երկրի ողջ նազմիեն (ոստիկանությունը) հանձնված է քրիստոնյա հային՝ Եփրեմին, որ նրա շնորհիվ ոստիկանությունում պաշտոններ են ստացել ոչ քիչ թվով հայեր[*],

---

[1] **Տե՛ս Բ. Ցրա**, *Кавказские социал-демократы в Персидской революции, с. 115.*

[*] *Օրինակ՝ երկրի ոստիկանության ղեկավար Եփրեմի տեղակալն էր Գրիչ խան Դանիելյանը. տե՛ս* ***Ժանեթ Տ. Լազարյան****, «Հանրագիտարան իրանահայոց (պարսկերեն), Թեհրան, 2003, էջ 174:*

բնավ հաշվի չառնելով, որ նրանք հիմնականում զբաղված էին այդ բնագավառի խաղաղ բարեկարգությամբ:

Շիա քարոզիչների՝ Եփրեմի դեմ ուղղված լուրջ մեղադրանքներից մեկն այն էր, թե «այդ հայը» մուսուլմաններին իբր հանել է իրար դեմ և նրանք անխնա կոտորում են միմյանց:

1910 թ. հուլիսի 3-ին իր տանը սպանվել էր մուջտեհիդ Սեյիդ Աբդուլլան[1]: «Իստիկլալի Իրան» («Անկախ Իրան») թերթն այդ դեպքի կապակցությամբ տպագրեց հոդված, պնդելով, որ դա ռուսների ձեռքի գործն է, որի նպատակն է մայրաքաղաքում անկարգություններ հրահրել և, օգտվելով դրանից, Թեհրան զորք մտցնել[2]:

Անմիջապես փոթորկվեց հոգևորականությունը: Մայրաքաղաքի Մերվ մզկիթում և դուրսը բեստ նստեցին հավատացյալների բազմամարդ խմբեր, իսկ քաղաքում անկարգություններ սկսվեցին: Ռուսական կողմը կառավարությունից պահանջեց պատժել սադրիչներին, այլապես սպառնաց լայնածավալ ռազմական գործողություններ սկսել: Կառավարությունը, հույժ անհանգստացած, Եփրեմին հանձնարարեց նշված մզկիթում բեստ նստածներին համոզել ցրվել: Երբ Եփրեմը մոտեցավ մզկիթին և փորձեց ներս մտնել, նրա առջևը կտրեցին, ասելով. «Մինչև այժմ որևէ հայի թույլ չի տրվել մտնել մայրաքաղաքի մզկիթները» և փակեցին նրա ճանապարհը[3]:

Նկատի առնելով Պարսկաստանի իրադարձություններում Եփրեմի դերի աճման պատճառով հայերի նկատմամբ հետադիմականների և ամեն տեսակ մոլեռանդների մեջ թշնամության առաջացումը, Պոկլևսկի-Կոզելը 1910 թ. հուլիսի 29-31-ին իր զեկուցագրում հաղորդում էր. «... Ամենուրեք նկատելի է թշնամության ուժեղացումը հայերի նկատմամբ՝ կապված այն աչքի ընկնող դերի հետ, որ բաժին էր ընկել Եփրեմին և նրա համախոհներին պարսկական հեղափոխության սկզբից»[4]:

---

[1] *"Сборник дипломатических документов ..."*, вып. V, с. 6.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 11:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 41, նույն միտքը տե՛ս նաև էջ 58-ում:

Անդրադառնալով Եփրեմի համար ստեղծված շատ փափուկ խնդրին, Թիֆլիսի "Кавказ" թերթի Թավրիզի թղթակիցը տեղեկացնում էր, որ Եփրեմը հաշվի է առնում միջավայրի վերաբերմունքը հայերի նկատմամբ և իր պահվածքով ձգտում է հայության անվտանգ գոյությանը վնասող քայլեր չկատարել*: «Եփրեմը, որպէս հայ, ստիպուած է շատ զգոյշ լինել մահմեդականների հանդէպ,- գրում էր թղթակիցը:- Երբ նա Թաւրիզ էր եկել, հայերը նրա պատուին հիւրասիրութիւն էին սարքել, իրենց ժողովարանում կազմակերպել էին տօնախմբութիւններ ու ներկայացումներ: Այդպիսի միջոցառումներից մէկին Եփրեմը ներկայացել էր բախտիարներից կազմուած իր զինուած թիկնազօրով: Նա տեսքով 45 տարեկան մարդ է, սովորաբար իրեն պահում է շատ համեստ ու հանգիստ, այնինչ նրա թիկնազօրը այդ միջոցառմանն, ինչպէս պատմում են ականատեսները, անհամեստօրէն առաջ էր ընկել եւ տեղ գրաւել առաջին շարքում, ուղիղ բեմի մօտ: Իսկ այդ նոյն ժամանակ հայերը Եփրեմին պաշարել էին զանազան խնդիրներով, բողոքում էին տեղացիների ճնշումներից: Բայց նա շատ զգոյշ էր, միշտ խուսափում էր որեւէ միջամտութիւնից ի նպաստ հայերի: Եթէ իսկապէս դա այդպէս է, ապա նա շատ խելացի մարդ է»[1]:

Նույնքան և ավելի զգույշ ու խոհուն կեցվածք էին ընդունել Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոս** Տեր-Մկրտչյանը և թեմական խորհուրդն ամբողջությամբ: Սրբազանը մշտապես զգուշության էր հորդորում հայ քաղա-

---

* Նման կարծիքի էր նաև 1910 թ. դեկտեմբերին Թավրիզի գլխավոր հյուպատոս նշանակված Ալեքսանդր Միլլերը (տե՛ս Մատենադարան, Կարապետ Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 100, վավ. 63):

[1] Հոդվածի թարգմանությունը տե՛ս **«Մշակ»**, № 79, 13 ապրիլի 1910 թ.:

** Ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրլյանը 1909 թ. հոկտեմբերի 26-ին Կարապետ ծ. վարդապետ Տեր-Մկրտչյանին ձեռնադրել էր եպիսկոպոս (տե՛ս **«Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան»**, գիրք ԺԶ, Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան (1866-1915), էջ 8)՝ Մուշի առաջնորդ Ներսես Խարախանյան, Աստրախանի առաջնորդ Մխիթար Տեր-Մկրտչյան և սինոդի անդամ Մեսրոպ Տեր-Մովսիսյան ծայրագույն վարդապետների հետ միասին: Աշխատության հետագա շարադրանքում նրան հիշատակելիս օգտագործված է այդ հերթական եկեղեցական աստիճանը:

քական գործիչներին, նրանց խորհուրդ էր տալիս հրապարակային վիճաբանությունների մեջ չմտնել մահմեդական հոգևորականության և պարսից քաղաքական գործիչների հետ:

ԵՓՐԵՄԻ ԿՐԿՆԱԿԻ ԿԱՄԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Եփրեմը լայն գործունեություն էր ծավալել Թեհրանի ոստիկանության և ժանդարմերիայի արմատական բարեփոխման ուղղությամբ: Բայց նրա գործունեությունը խոչընդոտների էր հանդիպում: Նրան քննադատում էին թե՛ աջից (կառավարությունը) և թե՛ ձախից (սոցիալիստները և մյուս բոլոր ձախերը), առաջինները՝ «Շարք» թերթի և դեմոկրատական կուսակցության մամուլի ուրիշ օրգանների փակմանն ընդդիմանալու, երկրորդները՝ հեղափոխական ջոկատները զինաթափելու համար:

Սաթթար խանի և ապստամբության մյուս անհնազանդ ջոկատների զինաթափման մասին Եփրեմը զեկուցեց կառավարությանը՝ արժանանալով բարձր գնահատականի: Փոխարենը՝ նրա հասցեին քննադատությունները չէին դադարում կառավարական պալատից դուրս՝ ձախերի կողմից: Միաժամանակ նույն ձախերը Եփրեմին համակրական գնահատականներ էին տալիս այն բանի համար, որ Թեհրան վերադառնալուց հետո նա, հավանաբար, երկար խորհելու արդյունքում, վճռականապես կանգնել էր երկրում խոսքի ազատության պաշտպանության դիրքերում և հրաժարվում էր կատարել դեմոկրատական կուսակցության մամուլի օրգանները փակելու՝ կառավարության հանձնարարականը, պատճառաբանելով, որ թերթեր փակելն անօրինական է, քանզի հակասում է սահմանադրության սկզբունքներին: Ներկայանալով նախարարների խորհրդի նիստին, նա այնտեղ մոտավորապես հետևյալն էր հայտարարել.

«Ես ոստիկանապետի պարտականություններն ստանձնել եմ՝ բացառապես կարգուկանոն հաստատելու և հիմնավոր օրենքներ սահմանելու նպատակով: Ուստի շատ սխալ կլիներ ենթադրել, թե ես համոզմունքներով բյուրոկրատ եմ: Ես և իմ համախոհները պայքարել ենք երկրում հաստատելու համար

բացառապես հավասարություն, խոսքի ազատություն, անձի անձեռնմխելիություն և ընդհանրապես այն բոլոր սկզբունքները, որոնց վրա պետք է խարսխվի ազատ սահմանադրական պետությունը: Ազատ երկրի հիմնական պայմաններից մեկը տպագիր խոսքի ազատությունն է: Այդ պատճառով ես գտնում եմ, որ «Շարք»-ը փակելու որոշումը չի համապատասխանում հենց այդ սկզբունքին ... Հաշվի առնելով այս ամենը՝ խնդրում եմ փոխել չարաբաստիկ որոշումը, այլապես վար կդնեմ իմ լիազորությունները ...»[1]:

Բայց հրաժարականի հիմնական պատճառն, այնուամենայնիվ, այն էր, որ երկրի հետադիմական խավերը «անհավատ հային» մեղադրում էին մուսուլմանների «արյունը թափելու» համար: Այդ մեղադրանքը նաև տարածվում էր ողջ պարսկահայության վրա: Եփրեմը մտածում էր, թե իր հեռանալով կմեղմվի հայերի նկատմամբ մուսուլմանների աճող ատելությունը[2]:

Եվ Եփրեմը կամավոր հրաժարական տվեց Թեհրանի ոստիկանապետի պաշտոնից: Կառավարությունը դեմ էր դրան, բայց նա անդրդվելի մնաց և հայտարարեց, որ իր վճիռը վերջնական է: Նախարարների խորհուրդն ստիպված էր Եփրեմին ընդառաջ գնալ: Թեհրանի ոստիկանությունը 1910 թ. օգոստոսի ընթացքում ղեկավար չուներ:

Եփրեմի հրաժարականից հետո կառավարությունը երկուերեք չարաթ Թեհրանի ոստիկանապետի պաշտոնի համար նոր թեկնածու էր փնտրում, բայց՝ անարդյունք: Զկար մեկը, որն իր նվիրվածությամբ, համարձակությամբ ու արդարամտությամբ համեմատվեր Եփրեմի հետ: Ուստի դեռ ամիսը չլրացած, կառավարության նախագահ Մոստոուֆի օլ Մեմալիքը դիմեց Եփրեմին՝ խնդրելով վերադառնալ իր պաշտոնին: Բայց վերջինս անմիջական համաձայնություն չտվեց և ներկայացրեց իր պահանջները, որոնք դուրս էին Թեհրանի ոստիկանապետի լիազորություններից: Կառավարությունն ընդունեց Եփրեմի բոլոր

---

[1] **“Баку”**, *5 августа 1910 г.*

[2] **Տե՛ս “Сборник дипломатических документов ...”,** *вып. V, с. 83.*

պայմանները, այն է՝ այսուհետև նրան ենթարկվելու են ոչ միայն Թեհրանի ոստիկանությունը, այլև ժանդարմերիան ու ամենիե հեծելազորայինները (ճանապարհների անվտանգությունը վերահսկող զինական ծառայությունը): Ավելին՝ կառավարությունը նպատակահարմար գտավ Եփրեմին նշանակել ամբողջ Պարսկաստանի ոստիկանության պետ և նրան հատկացվեցին որոշակի դրամական աղբյուրներ՝ տեղական օղու և գինու ակցիզներից ստացված եկամուտները, օփիումի հարկը և այլն, որոնք պետք է բացառապես ծախսվեին ոստիկանությունը պահելու, նրա պահանջները բավարարելու, մասնավորապես ոլորտի աշխատողների աշխատավարձը բարձրացնելու համար:

Մոստոուֆի օլ Մեմալիքի կառավարության քաղաքականությունը քիչ բանով էր տարբերվում Սիփահդարի կառավարության քաղաքականությունից: Ներքին քաղաքականության բնագավառում նա ձգտում էր ֆինանսական ճգնաժամից դուրս գալ հարկերի ավելացման և արտաքին փոխառությունների ձեռքբերման միջոցով: Արտաքին քաղաքականության բնագավառում այդ կառավարությունը բան չէր անում իմպերիալիստական տերությունների ճնշումից երկիրն ազատելու համար: Այդ ամենի պատճառով կառավարության դիրքերն արագորեն թուլանում էին:

Այդ և այլ պատճառներով առաջ եկան լուրջ հակասություններ կառավարության և Եփրեմի փոխհարաբերություններում: Դրան մեծապես նպաստեց նախկին վարչակարգի գործիչներին բարձր պաշտոնների նշանակումը հատկապես գավառներում:

Այսպես, Եփրեմին տեղակալ նշանակելու զուր փնտրտուքներից հետո կառավարությունը նրան առաջարկել էր Թեհրանի ոստիկանապետ ընդունել դեռևս Նասրէդդին շահի ժամանակ նույն պաշտոնն զբաղեցրած զառամյալ կոմս Մոնտեֆորտեին: Զգալով Եփրեմի բացասական վերաբերմունքը, կոմսն ինքն էր հրաժարվել կառավարության առաջարկից[1]:

Բայց առանձնապես վրդովեցուցիչ էր եղել ծայրահեղ հե-

---

[1] Տե՛ս *“Сборник дипломатических документов ...”*, вып. V, с. 181-182.

տաղիմական, միապետական զորքերի նախկին գլխավոր հրամանատար, Ատրպատականի նախկին նահանգապետ, ապստամբած Թավրիզը պաշարած, հետո Ֆարսի նահանգապետ կարգված, գահընկեց արված Մահմեդ Ալի շահի փեսա Էյն Դովլեին (Սոլթան Աբդոլ Մեջիդ Միրզա) ներքին գործերի նախարարի պաշտոնում նշանակելը[1]:

Ի նշան կառավարության կաղրային քաղաքականության դեմ բողոքի՝ Եփրեմը կրկին հրաժարական տվեց:

Մամուլը ափսոսանք էր հայտնում իր պաշտոնից Եփրեմի հեռանալուն[2]:

«Հորիզոնը» հաղորդում էր. «Լսում ենք, որ Եփրեմը դարձեալ հրաժարական է տուել, իսկ թէ մէջլիսը ընդունե՞լ է, թէ՞ ոչ, առայժմ անյայտ է, գուցէ ընդունի, որովհետեւ ներկայ մինիստրական կազմի մէջ էլ է թագաւորում նոյն ֆանատիկոսութիւնն ու թայֆայականութիւնը: Եփրեմի հրաժարելով, կարելի է ասել, որ Պարսկաստանը կը զրկի իր ներկայ մօմենտում անհրաժեշտ մի գործչից, իսկ թէ դրանից յետոյ ի՞նչ չարագուշակ փոթորիկներ կը սահեն Պարսկաստանի գլխով, դա ապագան ցոյց կը տայ»[3]:

Թեհրանի 1910 թ. հոկտեմբերի 22-31-ի իրադարձությունների տեսության մեջ նշված է. «Եփրեմը՝ «ազատության սարդարը» հրաժարական տվեց. նա չի ցանկանում, որ իրեն կասկածեն հետադիմականներին ծառայելու մեջ, նա չի ուզում, որ Պարսկաստանում ազատության հաստատման համար իր ծառայությունները մթագնվեն ներքին գործերի այնպիսի հետադիմական նախարարի գործունեությամբ, ինչպիսին Էյն Դովլեն է»[4]:

Եփրեմի հրաժարականից հետո նրա պաշտոնում հաստատվեց ատրպատականցի Թուրք Մեչադի Սաղեղ Հարեմը: Նոր ոստիկանապետի կոպիտ վարմունքի հետևանքով աշխատակից-

---

[1] Տե՛ս "Сборник дипломатических документов ...", вып. V, с. 181.

[2] Նույն տեղում, էջ 182:

[3] «Հորիզոն», № 285, 22 դեկտեմբերի 1910 թ.:

[4] Տե՛ս"Сборник дипломатических документов ...", вып. VI, СПб, 1913, с. 181.

ներից շատերը հեռացան իրենց պաշտոններից, իսկ նրանց փոխարեն նշանակվեցին անտեղյակ մարդիկ, որոնք գործից գլուխ չհանելով, խառնաշփոթ վիճակ էին ստեղծել ոստիկանական և ժանդարմական գործերում[1]:

1910 թ. նոյեմբերին Թեհրանում լուր էր պտտվում, թե Պետերբուրգի աջակցությամբ Մահմեդ Ալին նախապատրաստվում է ռուսական մեծաթիվ զորքերով մտնել Պարսկաստան: Լուրը տարածելուն նպաստել էր այն, որ նոյեմբերի 10-ին գնդապետ Նիկիտինի հրամանատարությամբ Ռեշտում ափ էր իջել 450 հետևակայիններից և 108 կազակներից կազմված ռուսական մի զորամաս՝ Ղազվինում տեղակայված ռուսական զորքը համալրելու համար[2]:

Պոկլևսկի-Կոզելը 1910 թ. նոյեմբերի 19-ին Թեհրանից Պետերբուրգ ուղարկած հեռագրով հայտնում էր, որ ստացված տեղեկությունների համաձայն, Օդեսայում գտնվող Մահմեդ Ալին Պարսկաստանից գործով այդտեղ եկած մի քանի թուրքմենների հանձնարարել է տուն վերադառնալուց հետո իրենց ցեղակիցներին հայտնել, որ ինքը չուտով ժամանելու է Պարսկաստան՝ ափ իջնելով Կասպից ծովի հարավում[3]: Միաժամանակ, օգտվելով Թեհրանի կառավարության ներսում և պարսից կուսակցությունների միջև գոյություն ունեցող երկպառակությունից, գահընկեց շահի եղբայրներից Սալար Դովլեն (Աբոլֆաթհ Միրզա) Թուրքիայի կողմից մտնում է Պարսկաստան և ապաստան գտնում Քերմանշահում՝ իր աներոջ՝ քելհոր ցեղի առաջնորդներից մեկի մոտ:

Ապագա դժվարությունների առաջն առնելու համար մեջլիսի ղեկավարությունը որոշեց 100.000 թուման տալ այն մարդուն կամ կազմակերպությանը, որը հանձն կառներ սպանել նախկին շահ Մահմեդ Ալիին և 25.000-ական թուման նրանց, ովքեր կսպանեին Սալար Դովլեին և գահընկեց շահի մյուս եղբայր Շոաա Սալթանեին:

---

[1] Տե՛ս "Сборник дипломатических документов ...", вып. VI, с. 40.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 200:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 209:

Մեջլիսի ղեկավարության նեղ շրջանակի որոշումից հետո պարսիկ դեմոկրատական կուսակցության ղեկավարությունը, հանձին Միրզա խան Սոլեյմանի, Թեհրանի հնչակյան մասնաճյուղին առաջարկում է կազմակերպել և Օդեսայում իրականացնել նախկին շահի սպանությունը, իսկ Քերմանշահում ահաբեկել Սալար Դովլեին: Հնչակյանները պատասխանում են. «Մեր կուսակցութիւնը աւազակների ու ոճրագործների մի խումբ չէ, որ դրամի համար մարդ սպանի»: Մահմեդ Ալիին ահաբեկելու մտադրությունը մնում է անկատար[1]:

Ձախողվում է նաև հնչակյաններ Տիգրան Գաղանջյանի և Մանվել Մոզյանի՝ Սալար Դովլեին ահաբեկելու փորձը: Նրանք ձերբակալվում են և կախաղան հանվում[2]:

Գահընկեց շահը դեռ պատրաստ չլինելով Պարսկաստան վերադառնալու, որոշեց մեկնել Արևմտյան Եվրոպա՝ չաքարախտը բուժելու:

Եթե Մահմեդ Ալին դեռ հապաղում էր, ապա Ռուսաստանում ապաստանած Ռահիմ խան Զելեբիանլուն անհամբերությամբ ձգտում էր դեպի Պարսկաստան:

Անհանգստացած այդ տեղեկություններով, Թեհրանի կառավարությունը ռուսական դեսպանության միջոցով նոյեմբերի 22-ին դիմում է Կովկասի փոխարքային և խնդրում այնտեղ գտնվող Ռահիմ խանին արգելել վերադառնալ երկիր: Փոխարքան հարցում է անում Պետերբուրգ, որտեղից նույն օրն ստացվում է արտգործնախարար Սերգեյ Սազոնովի պատասխանը: Նախարարի հեռագրում ասված էր, որ եթե Ռահիմ խանը ցանկանում է վերադառնալ իր երկիր, ապա ռուսական իշխանությունները չեն կարող դրան արգելք լինել: Միաժամանակ, Սազոնովը Վորոնցով-Դաշկովից խնդրում է տեղեկացնել խանին, որ եթե երկիր վերադառնալուց հետո նա գործուն կերպով հանդես գա կառավարության դեմ, ապա այլևս Ռուսաստանի սահմանները փակ կմնան նրա առջև: «Մենք չենք կարող թույլ տալ,

---

[1] Տե՛ս **«Ցուշարձան նուիրուած Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան քառասնամեակին»**, էջ 196:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 197:

որ նա ռուսական տարածքն օգտագործի որպես անվտանգ խարիսխ՝ հարևան երկրում [ավազակային] գործողություններ իրականացնելու համար»[1],- եզրափակում էր Սազոնովը:

Եկատերինոդարում ապրող Ռահիմ խանը նոյեմբերի 20-ին իր ծառայի հետ զբոսնելու էր դուրս եկել քաղաք, բայց ժամեր անց անհետացել և գաղտնի մեկնել էր պարսկական սահման[2]:

Թավրիզում ռուսական հյուպատոսության ավագ խորհրդական Միլլերը 1910 թ. դեկտեմբերի 7-ին Թեհրանի դեսպանությունն և Կովկասի փոխարքային ուղարկած հեռագրերով հայտնում էր, որ հինգ օր առաջ Ռահիմ խանը Խուդափերինի կամրջով հասել է Ղարադաղի Հասրետան գյուղ, ուր նրան ներկայացել են գավառի համարյա բոլոր խաները, հավատարմության երդում տվել և նրա կողմը անցել[3]:

Եկատերինոդարից Ռահիմ խանի փախուստի և երկիր վերադառնալու կապակցությամբ «Իրան-նոու» թերթը 1910 թ. № 60-ում հիշեցնում էր, որ խանին վերցնելով իր հովանավորության տակ, ռուսական իշխանությունները միաժամանակ խոստացել էին, որ նրան թույլ չեն տա Պարսկաստան վերադառնալ, բայց հիմա նա այստեղ է: «Ռուսներն, իրոք, դեմ էին Ռահիմ խանի վերադարձին, քանի որ այստեղ նրան դիտում են որպես «ռուսների մարդ», բայց իրականում իր կողոպուտներով ու մարդասպանություններով խանը վարկաբեկում է ռուսական քաղաքականությունն Իրանում»[4]:

Ղարադաղում որոշ ժամանակ մնալուց հետո Ռահիմ խանը մեկնում է Թավրիզ[5]:

Ռահիմ խանի վերադարձն անհանգստություն էր առաջացրել Թեհրանում: Մարդիկ դա դիտում էին որպես գալիք նոր դժբախտությունների նախագուշակ, քանի որ թե՛ մեջլիսը և թե՛ կառավարությունը չէին տիրապետում իրադրությանը երկրում: «Մեջլիսը չարունակում է ցուցաբերել ծայրահեղ անգործու-

---

[1] *"Сборник дипломатических документов ...", вып. V, с. 218-219.*

[2] *Նույն տեղում, էջ 246:*

[3] *Նույն տեղում, էջ 229, 239:*

[4] *Նույն տեղում, էջ 32:*

[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 251:*

թյուն,- ասված էր դեկտեմբերի 18-ի թվով Պետերբուրգ ուղարկված մի հեռագրում:- Բավական է ասել, որ անցած ամբողջ չաբաթվա ընթացքում քննարկվել և ընդունվել է ընդամենը մեկ օրինագիծ»[1]:

Ավելի անմխիթար էին նախարարների խորհրդի գործերը: Ռուսաստանի դեսպանության դրագոման Ս. Ս. Պոկլևսկի-Կոզելը 1910 թ. դեկտեմբերի 25-ի թվով հեռագրում էր. «Մոստոուֆի օլ Մեմալիքի դահլիճի վիճակը ծայրահեղորեն անկայուն է: Մեջլիսի դեկտեմբերի 23-ի նիստում նրան ներկայացվել են մի ամբողջ չարք մեղադրանքներ անգործունեության և սահմանադրության սկզբունքները չպաշտպանելու համար: Բայց մի քանի պատգամավորների պնդմամբ՝ հարցը չի քննարկվել, նկատի առնելով, որ [Փարիզից] խնամակալի գալուց հետո ամբողջ նախարարական կազմը ներկայացնելու է հրաժարականի դիմում»[2]:

Այդ վերջին բոլոր իրադարձությունների ժամանակ Ատրպատականի թեմական առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը գտնվում էր Էջմիածնում: Նա այնտեղ էր մեկնել դեռևս 1910 թ. նոյեմբերին՝ իր թեմի համար անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու համար: Մայր Աթոռում եղած ժամանակ, նոյեմբերի 19-ին, նրա և Իզմիրլյան կաթողիկոսի միջև տեղի է ունենում ցավալի միջադեպ, որը եպիսկոպոսին ստիպում է հաջորդ իսկ օրը, նոյեմբերի 20-ին, առաջնորդական պաշտոնից հրաժարականի դիմում ներկայացնել, միաժամանակ խնդրելով իբրև միաբան մնալ Մայր Աթոռում և զբաղվել գիտական աշխատանքով[3]:

Լսելով այդ մասին, Ատրպատականի թեմի Պատգամավորական ժողովը, որին առաջնորդը նույնպես ներկայացրել էր իր հրաժարականը, անընդունելի էր համարել դա և որոշել էր խնդրել կաթողիկոսին՝ մերժել հրաժարականը և հրամայել Կարապետ եպիսկոպոսին վերադառնալ իր թեմը, ուր նա հսկա-

---

[1] *"Сборник дипломатических документов ..."*, вып. V, с. 242.

[2] Նույն տեղում, էջ 248:

[3] **«Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան»**, գիրք ԺԶ, Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան (1866-1915), էջ 183-186:

յական հեղինակություն ու հարգանք էր վայելում: Զբավարարվելով դրանով, Պատգամավորական ժողովն իր մի քանի անդամների ուղարկեց Էջմիածին՝ արագացնելու թեմական առաջնորդի վերադարձը: Բայց Էջմիածին գալով նրանք Իզմիրլյանին վախճանած գտան, ուստի նույն խնդրանքով դիմեցին կաթողիկոսական տեղապահ ընտրված Գևորգ արք. Սուրենյանցին, չեչտելով, որ Ատրպատականի հայության դժվարագույն օրերին հրաժարական տալը և թեմից հեռանալն ուղղակի հանցանք է[1]:

Հարգելով Պատգամավորական ժողովի միջնորդությունը, կաթողիկոսական տեղապահը հրաման ստորագրեց Կարապետ եպիսկոպոսին իր թեմը վերադառնալու մասին[2]: Նրա առաջնորդական նվիրյալ գործունեության շարունակումը բարեբախտություն էր Ատրպատականի հայության համար, քանզի Պարսկաստանը 1911 թվական էր թևակոխում ապագայի անորոշությամբ և տագնապներով լի:

ԽՆԱՄԱԿԱԼ ՆԱՍՐ ՕԼ ՄՈԼՔԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԹԵՀՐԱՆ: ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Թեհրանի և ամբողջ Պարսկաստանի ոստիկանապետի պաշտոնից Եփրեմի հեռանալուց հետո մայրաքաղաքում և երկրի այլ քաղաքներում գլուխ բարձրացրին հակահեղափոխական ուժերը, հաճախակի դարձան ահաբեկչական գործողությունները:

1911 թ. հունվարին սպանվեցին մեծ ու փոքր մի շարք պաշտոնյաներ: Դրանց թվում էին Իսֆահանի գեներալ-նահանգապետը, Ատրպատականի գեներալ-նահանգապետի որդին, ֆինանսների նախարար Սանի Դովլեն (Մորթազա-ղուլի խան): Ահաբեկիչները եղել էին ռուսահպատակներ, ընդ որում՝ ֆինանսների նախարարին սպանել էին երկու վրացիներ՝ Իլարիոն Կվավաձեն և Իվանե Բերբերաշվիլին[3]: Բազմաթիվ ոճրագործու-

---

[1] ***«Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան»,*** *գիրք ԺԶ, Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան (1866-1915), էջ 135:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Տե՛ս* ***"Сборник дипломатических документов ..."****, вып. VI, с. 29.*

թյուններից մեկը կատարել էին աֆղան ահաբեկիչները, որոնց գնդակներին զոհ էր գնացել ռուսահպատակ Սաֆարալիևների ողջ ընտանիքը[1]:

Հայտնաբերվեցին կուտակված զենքի թաքստոցներ: Պարզ դարձավ, որ հետադիմականներն իրենց հերթին նոր դավադրություններ են նյութում կառավարության դեմ՝ հին ռեժիմը վերականգնելու համար: Մամուլն ահազանգ էր հնչեցնում, միաժամանակ թերթերը սովորականի պես քննարկում էին ռուսական քաղաքականությունը: Նրանք գրում էին, որ մի կողմից «ռուսական կառավարությունը ապաստան է տալիս Ռահիմ խանին, Դարաբ Միրզային, Հաջի խանին, հովանավորում է Քամրան Միրզային (նույն ինքը՝ Ազիզ օլ Մոլք, Նաիբ Սալթանե), Շեյխ Մահմուդ Վերամինսկուն, մյուս կողմից ռուսական հպատակների ձեռքով սպանվում են նախարարներ ու նահանգապետներ: Եվ այդ պայմաններում Ռուսաստանը Պարսկաստանից հանգստություն և կարգ է պահանջում[2]:

Այդ ամենը զուգորդվում էր կառավարության անգործունեությանը: Վարչապետ Մոստոուֆի օլ Մեմալիքը տևականորեն հիվանդ լինելով, չատ թե քիչ նշանակալի մասնակցություն չէր ունենում երկրի ղեկավարմանը[3], նույնիսկ չէր ներկայանում նախարարների խորհրդի նիստերին[4]:

Ուստի անհրաժեշտ էր իրականացնել մի շարք արմատական վերափոխումներ: Դա էր պահանջում հեղափոխության գործը: Այդ ուղղությամբ առաջին քայլը եղավ այն, որ մեջլիսի դեմոկրատ անդամներն անվստահության քվե տվեցին էյն Դովլեին, որն ստիպված, հունվարի 9 (22)-ին հրաժարական տվեց ներքին գործերի նախարարի պաշտոնից[5]:

Երկրի այդ քաոսային դրության ժամանակ մեռնում է անչափահաս շահի խնամակալ Ազադ օլ Մոլքը: Մեջլիսը ձայների

---

[1] Տե՛ս *“Сборник дипломатических документов ...”*, вып. VI, с. 41.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 34:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 13:

[4] Տե՛ս նույն տեղում, вып. V, с. 254.

[5] Տե՛ս նույն տեղում, вып. VI, с. 13.

մեծամասնությամբ խնամակալի պաշտոնին է կոչում Եվրոպա ապաստանած Նասր օլ Մոլքին: Նա էր հանդիսանալու պետության գլուխ մինչև Ահմեդ շահի չափահաս դառնալը: Թե՛ մեջլիսում և թե՛ կառավարությունում, եվրոպական լուրջ կրթություն ստացած այդ անձի վերադարձի հետ էին կապում ավելի կարևոր փոփոխությունները երկրում[1]: Փարիզից ուղևորվելով 1910 թ. դեկտեմբերի 1-ին, Նասր օլ Մոլքը Լոզան-Վիեննա-Վոլոչինա-Բաքու գծով վերադառնում է Պարսկաստան՝ 1911 թ. հունվարի 11-ին ափ իջնելով Էնզելիում[2]:

Օգտվելով առիթից, նրան է այցելում Ռեշտի սոցիալ-դեմոկրատներից կազմված մի խումբ՝ Պարսկաստանի հնչակյան կազմակերպությունից լիազորված Եղիկյանի գլխավորությամբ: Այդ հանդիպման մանրամասները տրված են «Баку» թերթում: Պարզվում է, որ Ահմեդ շահի խնամակալը Եղիկյանին խընդրել է մանրամասն շարադրել իր տեսակետը Պարսկաստանի ներքին ու արտաքին դրության և նրա փրկության համար անհրաժեշտ բարենորոգումներ կատարելու ուղիների մասին: Հնչակյան գործիչն ընդառաջում է խնամակալի խնդրանքին և բարձրացնում մի շարք սկզբունքային հարցեր. անջումեններում և մեջլիսում ներգրավել ժողովրդական տարրեր, պայմաններ ապահովել, որպեսզի երկրում քաղաքական կուսակցությունները ստեղծվեն գաղափարական հիմքի վրա, վերացնել գավառներում ինքնագլուխ տնօրինելու ավատապետների իրավունքները, ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և այլն[3]:

Հանդիպման ժամանակ ելույթ են ունենում նաև ուրիշ սոցիալ-դեմոկրատներ, որոնք առաջ են քաշում երկրում լուսավորության ու գիտության զարգացման համար բարձրորակ կադրեր պատրաստելու հարցը, և որպես առաջին քայլ առաջարկում են կառավարության հաշվին քաղաքներում կազմակերպել քաղաքական գիտելիքների, տնտեսագիտության, սահմանադրա-

---

[1] Տե՛ս **«Արօր»**, № 1, 1 հունվարի 1911 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, նաև՝ **"Сборник дипломатических документов ..."**, вып. V, с. 225:

[3] Տե՛ս **"Баку"**, 2 февраля 1911 г.

կան և պետական իրավունքի, ֆինանսների, պատմության և այլնի ուսուցման դասընթացներ[1]:

Նասր օլ Մոլքի հետ զրույցի ընթացքում չոչափվեցին նաև աշխատավորների սոցիալական վիճակի բարելավման, երկրում կայունություն ստեղծելու հարցերը: Անհրաժեշտ համարվեց բանվորներին, գյուղացիներին ու արհեստավորներին ազատել անուղղակի հարկերից և երկրում աստիճանաբար մտցնել աճող եկամտահարկի համակարգ: Պաշտպանություն գտավ արտասահմանից փոխառություն ստանալու գաղափարը, պայմանով, որ դա ծախսվի երկրի բնական հարստությունների մշակման, երկաթգծերի շինարարության, ժողովրդական բանկի հիմնադրման վրա: Առաջ քաշվեցին կալվածատերերից հողի հետգնման և գյուղացիներին տալու, ազգային կանոնավոր բանակ ստեղծելու, ուսումնական նոր հաստատություններ բացելու և այլ հարցեր: Խոր մտահոգություն հայտնվեց, որ երկրի դատաստանական համակարգը մնացել է միջնադարյան մակարդակի վրա, ուստի առաջարկվեց իրականացնել քրեական ու քաղաքացիական դատավարություն, մտցնել երդվյալ ատենակալների համակարգ, ստեղծել հաշտարար միջնորդների ինստիտուտ և այլն[2]:

Նասր օլ Մոլքը հետաքրքրությամբ լսում էր հնչակյան Եղիկյանի և մյուս սոցիալ-դեմոկրատների ելույթները, գրառումներ կատարում, իսկ վերջում հանդես գալով, խոստացավ ամենայն պատասխանատվությամբ խորհել բարձրացված հարցերի շուրջ:

Երկու շաբաթ հետո, 1911 թ. հունվարի 26-ին, շահի խնամակալը ժամանում է Թեհրան[3]: Մեկօրյա հանգստից հետո, հունվարի 27-ի առավոտյան նա գալիս է պալատ և նույն օրն ընդունում է վարչապետ Մոստոուֆի օլ Մեմալիքին, որի կառավարությունն ստեղծվել էր 1910 թ. հուլիսի վերջերին և երկրի առջև կանգնած որևէ խնդիր վճռելու անընդունակ էր գտնվել:

---

[1] Տե՛ս *“Баку”, 2 февраля 1911 г.*

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս *“Сборник дипломатических документов ...”, вып. VI, с. 33.*

Վարչապետը ներկայացնում է հրաժարականի դիմում[1]: Մեջլիսը ձայների մեծամասնությամբ վարչապետի թեկնածու առաջադրեց Սիփահդարին, որը չարունակելու էր 1910 թ. հուլիսից ընդհատված իր նախկին քաղաքականությունը: Դա Նասր օլ Մոլքի սրտովն էր և նա անմիջապես ընդունեց առաջարկը[2]:

Հանձին Սիփահդարի՝ իշխանության էր եկել չափավորների կուսակցությունը:

Կազմելով նոր կառավարություն՝ Սիփահդարը Եփրեմին չտապ հետ կանչեց և նրան վերականգնեց Պարսկաստանի ողջ ոստիկանության պետի պաշտոնում:

Իր հերթին, խնամակալն իր մոտ ծառայության կանչեց մի քանի հայերի: Նրանցից մեկը Բեռլինում պարսից դեսպանի օգնական Հովհաննես խան Մասեհյանն էր, որին Նասր օլ Մոլքը իր հետ Եվրոպայից Թեհրան բերելով, իր խորհրդական նշանակեց[3]:

ՍԻՓԱՀԴԱՐԻ ՉԱՓԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սիփահդարի երկրորդ կառավարությունը դեռ նոր էր ձևավորվել, երբ միապետական ուժերը երկրի մի շարք վայրերում արյունահեղություն սարքեցին: Ջերծ չմնացին նաև հայկական բնակավայրերը: 1911 թ. փետրվարի սկզբին տեղի ունեցավ Ղարադաղի Ղուլուտի հայկական գյուղի բնակիչների կոտորածը:

Ղուլուտիի վրա իրենց հրոսակներով եկան Իսկանդեր, Ռուսաստանից վերադարձած Ռահիմ և Հիդայաթ խաները: Շրջապատելով գյուղը, նրանք պահանջեցին 400 թուման (800 ռուբլի) տուգանք: Գյուղացիները չափազանց անհանգստացել էին, նկատելով, որ եկվորների մտադրությունն ավելի չար է, սակայն խաները փարատելով նրանց մտահոգությունը, ասել էին, թե նշված գումարով ամեն ինչ վերջանում է: Բայց կեսգիշերին, երբ

---

[1] Տե՛ս *"История Ирана"*, с. 287.

[2] Տե՛ս *"Сборник дипломатических документов ..."*, вып. VI, с. 33.

[3] Տե՛ս **«Արօր»**, № 1, 1 հունվարի 1911 թ.:

ամբողջ գյուղը քնած էր, այնտեղ են թափվում խաների հրոսակները և սկսում կողոպուտ ու կոտորած: Գյուղից փախածների մի մասը, այդ թվում երեխաներ, ազատվելով սրի երախից, զոհ են գնում ձմռան սոսկալի ցրտին: Փոքր թվով ղուլուտիցիներ փախչում են դեպի հայաբնակ Խանագյահ գյուղը, բայց ճանապարհին ցուրտը ահագին կյանքեր է խլում: Հետևելով փախչողներին, հրոսակները մտնում են Խանագյահ, կողոպտում, տանում նաև տավարը:

Դերեբեգիները գլուխ էին բարձրացրել ողջ Ղարադաղում և սպառնում էին կոտորել մյուս հայկական գյուղերի բնակիչներին ևս:

Տարբեր նահանգներում հակասահմանադրական ուժերի սանձազերծած արյունալի խժդժությունները կառավարությանը ստիպեցին լրացուցիչ միջոցներ ձեռնարկել: Եփրեմի պահանջով կառավարությունը որոշեց ավելացնել ոստիկանական և ժանդարմական հաստիքները առավել խոցելի նահանգներում՝ Ատրպատականում, Գիլանում և Քուրդիստանում:

Նորից լուրեր էին ծայր առել, որ ռուսական կառավարությունը նախապատրաստվում է նախկին շահին զինու ուժով վերադարձնել գահին: Թերթերը նորանոր փաստեր էին տպագրում Մահմեդ Ալիի նախապատրաստությունների մասին, որոնք երկրում անհանգստություն և զայրույթ էին առաջ բերում:

Պարսկաստանի ներքին գործերին ռուսական կառավարության կոպիտ միջամտության դեմ զայրալից բողոք էր բարձրացել ոչ միայն երկրում:

Կ. Պոլսում գտնվող պարսիկ ուսանողներն ընդարձակ մի կոչ էին ուղղել օսմանյան համալսարանի ուսանողությանը՝ բողոքելով ռուսական զորքի Պարսկաստան ներխուժելու դեմ: Կոչում ասված էր.

«Վերջին օրերս Ռուսաստանի կառավարութեան միջամըտութիւնները յաճախակի են դարձել: Բոլոր սահմանադրական ազգերը մարդկայնօրէն պարտաւոր են միմեանց աջակցել, ուստի սպասում ենք, որ ազատ ապրող բոլոր ազգերը ձայնակցեն սոյն կոչին եւ բողոք յայտնեն մեր երկրի սահմանադրութեան

դէմ հանդէս եկող ոյժերին»[1]:

Ժնևում սովորող պարսկահայ ուսանողները նույնպես հրատարակել էին կոչ, որով պարսկահայությանը հորդորում էին հետևողական կռիվ մղել Պարսկաստանի սահմանադրության թշնամիների դեմ: «Այդ ժամանակ միայն մենք իրաւունք կունենանք լինելու ազատագրուած Պարսկաստանի մեր պարսիկ եղբայրների հետ իրաւահաւասար քաղաքացիներ»[2],- ասված էր կոչում:

Տպագրելով Ժնևի պարսկահայ ուսանողների կոչը, Կ. Պոլսի ս.-դ. հնչակյան ուսանողների միության «Կայծ» ամսաթերթը միության վարչության անունից ողջունում էր դա, գրելով.

«Մենք կը ստորագրենք այս տողերը եւ կը գովենք մեր պարսկահայ ուսանողներու սոյն նախանձախնդրութիւնը, որով կը ժխտեն վերջերս պարսկահայերուն ստրկութեան հրաւէր կարդացող յորդորները, մեր կողմէ աւելցնելով միաժամանակ, որ ո՛չ միայն ժողովրդական ազատութեան հուրն է որ պիտի բորբոքէ ճնշուած ժողովուրդները իրենց ազատութիւնը դարբնող կռիւը մղելու, այլ մանաւանդ պրոլետարիան, աշխատաւոր դասակարգը, իր շահերու առաւել չափով ազատ պաշտպանութիւնը կարող է ընել սահմանադրական երկիրներու մէջ, ազատ լինելով բռնապետներու սանձարձակ կամայականութենէն»[3]:

Լինելով միապետության երդվյալ հավատավոր, Նասր օլ Մոլքը միաժամանակ մեծ ջանքեր էր գործադրում իշխանության երկու թևերի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար: Թեհրանում նա իրեն պահում էր որպես եվրոպական մասշտաբի սահմանադրական գործիչ, պատճենել էր անգլիական խորհրդարանի կարգերը, այն է՝ առանց առարկության ենթարկվել մեջլիսի ընդունած բանաձևերին և չփորձել արգելք դնել կառավարության որոշումների վրա:

Չնայած շահի խնամակալի բոլոր ջանքերին, սակայն, հնարավոր չեղավ կարգի բերել երկրի ներքին գործերը: Արագորեն

---

[1] **«Կայծ»** (Կ. Պոլիս), № 1, 16 (29) ապրիլի 1911 թ., էջ 30:

[2] Նույն տեղում, էջ 31:

[3] Նույն տեղում:

չարունակում էր ընկնել Սիփահղարի կառավարության վարկը, քանի որ չէր կարողանում Պարսկաստանը դուրս բերել տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամից: Նրա գործունեության քաղաքական ուղղվածությունը և առօրյա աշխատառճը մնացին նույնը, ինչպիսիք կային Մոստոուֆի օլ Մեմալիքի օրոք: Ավելին, շուտով պարզ դարձավ, որ Սիփահղարի կառավարությունը երկիրը տանում է հետադիմության ուղիով, և եթե այդպես շարունակվեր, նա նույնիսկ դեմոկրատական շարժումները ճնշելու փորձ կաներ:

Մեջլիսը նույնպես չէր ձեռնարկում գործուն միջոցներ երկրի վիճակը կարգավորելու ուղղությամբ, քանի որ պատգամավորների բացարձակ մեծամասնությունն առաջվա նման զբաղված էր իր անձնական գործերն առաջ մղելով:

Տեսնելով, որ իշխանության մարմինները շարունակում են իրենց տեղապտույտը, երկրի ապագայով մտահոգ առաջադեմ հասարակայնությունը եռանդուն հետևողականությամբ առաջ էր քաշում սահմանադրական վարչակարգի ամրապնդմանն ուղղված արմատական բարեփոխումների հարցը: Այդ ուղղությամբ եռանդուն աշխատանք են տանում նաև հնչակյաններն ու դաշնակցականները:

Բայց թափած ջանքերը սպասած արդյունքները չէին տալիս: Ղարադաղում հայերի գլխին դարձյալ սև ամպեր էին կուտակվում, իսկ ասպատակիչներին դատ ու դատաստան չկար:

Ղարադաղի հայ համայնքի անդամների դատերը նախկինում վարում էր սարփարաստ Ջհանգիր բեկ Մելիք-Ջհանյանը, որին Քերիմ խանը մեկուսացրել էր և հայերի դատական գործերի վարումը հանձնել տեղի թուրքերից մեկին: Հայ գյուղացիների խմբային բողոքների հիման վրա Ատրպատականի առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը Թեմական խորհրդի անունից պաշտոնագրով դիմել էր նահանգի նորանշանակ քարգուզարին**, բացատրելով, որ Ջհանգիր բեկ Մելիք-Ջհանյանը պահ-*

---

* *Վերակացու, հսկիչ, ընդհանուր խնամակալ:*

** *Գործադիր իշխանության պետ:*

պանում է սարփարաստության իրավունքը և խնդրել էր նրան վերականգնել իր նախկին պաշտոնում: Միաժամանակ, Թեմական խորհուրդը ձեռնարկել էր տեղացիներից կազմելու հոգեբարձություն՝ հայ սարփարաստին աջակցելու համար: Բայց Քերիմ խանի բողոքների ճնշման տակ քարգուզարը դրական ընթացք չէր տվել Կարապետ սրբազանի դիմումին: Դրանից հետո էլ, 1911 թ. մարտի սկզբին, Քեյվանի շրջանի 9 հայկական գյուղերից հայերը թափվել էին առաջնորդարանի և քարգուզարխանայի դռները՝ Քերիմ խանից բողոքելով և մի դարման հայցելով, բայց այդպես էլ չկարողացան որևէ դրական արդյունքի հասնել:

Ի պատասխան հայերի բողոքի, Ղարադաղի խաները նոր պատիժների ենթարկեցին նրանց: Ռահիմ խանի ազգական Ռեշիդ Դովլեն հունիսի սկզբին հրդեհի մատնեց Ղարադաղի՝ ռուսական սահմանին մոտ գտնվող Նոյվան կոչված վիճակի հայկական 6 գյուղերը[1]: Մոտավորապես նույն ժամանակ տակնուվրա եղան նաև Ղարադաղի մի ուրիշ հայկական գյուղախմբի 5 գյուղերը: Ղարադաղից «Մշակին» հաղորդում էին. «Հայ գիւղերը՝ Սօտգին, Սիւրուն, Ասրան, Կասըմքենտ, Բերդ՝ թալանեցին Քերիմ խանի ձեռքով: Դիմադրող սիւրունցիներից ծանրապէս վիրաւորուել են 8 հոգի, սպանուել է մի հոգի: Բռնաբարուած է մի կին: Թալանուած ընտանիքները պատսպարուել են Ավայսին եւ Եաս թիւրք գիւղերում, որոնք պատկանում են Աբդիւլ-Սամէդ խանին: Թշուառների դրութիւնը կրիտիքական է: Ղարադաղի մնացած հայերին եւ քրիստոնեաներին եւս սպառնում է վտանգ»[2]: Հունիսի 20-ի կողմերը ղարադաղյան ցեղախմբերը հարձակվեցին ռուսահպատակ Թումանյանցին պատկանող Մեզդյար հայկական գյուղի վրա, կողոպտեցին ու հրդեհեցին, եղան սպանվածներ և վիրավորներ: Ասպատակիչները նախապատրաստվում էին հարձակում կատարել Թումանյանցին

---

[1] *Տե՛ս "Сборник дипломатических документов ...", вып. VI, с. 178, տե՛ս նաև* ***«Ախուրեան»****, № 34, 17 Հունիսի 1911 թ.:*

[2] ***«Ախուրեան»****, № 34, 17 Հունիսի 1911 թ.:*

պատկանող մյուս գյուղերի վրա[1]:

Տեղի ունեցածի կապակցությամբ Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցը 1911 թ. հուլիսի 2-ին հետևյալ հեռագիրը հղեց պարսից շահի խնամակալ Նասր օլ Մոլքին.

«Նորին Բարձրութեան պարսից կայսերական խնամակալին.

Խնդրում ենք յարգանօք պաշտպանել Ղարադաղի հայերին եւ Մակուայ Կարավանքը (ս. Թադեոս առաքյալի վանքը:- Հ. Ս.), որոնք ենթարկուած են խաների աւերածութեան»[2]:

Հուլիսի 6-ին Գևորգ արքեպիսկոպոսը պարսից շահի խնամակալից ստացավ հետևյալ պատասխանը.

«Ամենայն հայոց կաթողիկոսական տեղապահ Գէորգ արքեպիսկոպոսին.

Ղարադաղի եւ Մակուի հայ ժողովրդեան ապահովութիւնը շատ մօտ է իմ սրտին: Հրաման է արձակուած նշուած բնակավայրերում վերականգնել խաղաղութիւնը եւ պատժել յանցաւորներին: Հաւաստի եղէ՛ք իմ սրտանց բարեկամութեան»[3]:

Այդ դժվարին պայմաններում խնամակալ Նասր օլ Մոլքը գոնե կարողացավ ձեռք բերել Լոնդոնի և Պետերբուրգի վստահությունը: Մասնավորապես Ռուսաստանն իր վստահությունն ու աջակցությունը Նասր օլ Մուլքին արտահայտեց նրանով, որ ընդունեց ռուսական զորքերի մի մասը Պարսկաստանից հանելու նրա խնդրանքը, նաև խոստացավ մնացած մասը դուրս հանել, երբ Ատրպատականում, ինչպես Ղազվինի և Թեհրանի շրջակայքում, ևս վերականգնվեն խաղաղությունն ու կարգը:

Զափավորների իշխանության գալուց շատ չանցած Եփրեմը գժտվեց նրանց փաստացի առաջնորդ դարձած վարչապետ Սիփահդարի հետ: Նա վարչապետին լավ էր ճանաչում որպես վախկոտ ու անվճռական մարդու՝ անընդունակ լուծելու քիչ թե

---

[1] *Տե՛ս* ***«Ախուրեան»,*** *№ 34, 17 հունիսի 1911 թ.:*

[2] ***«Ժայռ»****, № 48, 7 օգոստոսի 1911 թ.:*

[3] *Նույն տեղում:*

չատ բարդ ու տարողունակ խնդիրներ: Եփրեմի մեջ նորից հարություն էին առել անցած տարիների կասկածները Սիփահդարի նկատմամբ: Նա գնալով համոզվում էր, որ Սիփահդարը ոչ միայն չահագրգռված չէ երկրում սահմանադրական կարգերի ամրապնդմամբ, այլև, փաստորեն, կանգնել է դրանք վերացնելու ճանապարհին:

Չնայած Սիփահդարը չարունակում էր խորամանկորեն թաքնվել սահմանադրության քողի տակ, բայց նույն սահմանադրության դեմ նրա գործած գաղտնի քայլերի մասին կասկածները հաստատվեցին. Եփրեմը ոստիկանական հսկողություն էր սահմանել վարչապետի վրա և կարողացել էր ձեռք գցել փաստաթղթեր, որոնք բացահայտում էին նրա գաղտնի կապերը գահընկեց չահի հետ:

1911 թ. հուլիսի 9 (22)-ին Սիփահդարը կառավարության և չահի իրավունքների ընդլայնման անհրաժեշտության մասին սահմանադրական փոփոխությունների օրինագիծ է ներկայացնում պատգամավորներից կազմված այն հատուկ հանձնաժողովին, որը կոչված էր մչտական կապ պահպանելու մեջլիսի և ամառանոցում ապրող խնամակալ Նասր օլ Մոլքի միջև: Հանձնաժողովը գտավ, որ վարչապետի առաջարկը, փաստորեն, սահմանադրական վարչակարգը թուլացնելու փորձ է, ուստի մերժեց այն[1]: Մյուս կողմից, հարցի մասին մեջլիսում զեկուցելու ժամանակ պատգամավորների մեծ մասը համառորեն առաջ էր քաչում կառավարության հրաժարականի պահանջը: Դրան ի պատասխան, Սիփահդարը, հույժ վիրավորված, թողեց Թեհրանը և մեկնեց Ռեչտ[2], իսկ նրա դահլիճը հրաժարական տվեց:*

1911 թ. հուլիսի 10 (23)-ին կազմավորվեց նոր կառավարություն՝ բախտիար Սամսամ Սալթանեի (Նաջաֆ-ղուլի խան Բախտիարի) գլխավորությամբ: Թեև այս կառավարությունը

---

* *Մեջլիսի նշված հանձնաժողովը բաղկացած էր 9 պատգամավորից, որոնցից մեկը Հովսեփ Միրզայանն էր:*

[1] *Տե՛ս "Сборник дипломатических документов ...", вып. VII, СПб, 1913, с. 33.*

[2] *Տե՛ս նույն տեղում, նաև՝ вып. VI, с. 169-170:*

նույնպես ծրագրել էր գնալ դեմոկրատական իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու ուղիով, բայց առայժմ ստիպված եղավ իր մտադրությունների իրագործումը որոշ ժամանակով հետաձգել, քանի որ երկրում բարձրանում էր ժողովրդական շարժման նոր ալիք՝ գահընկեց Մահմեդ Ալիի կողմնակիցների աչխուժացման պատճառով:

Սամսամ Սալթանեի գլխավորած նոր կառավարությունը նույնպես հիմնականում կազմված էր ավատապետ հողատերերի ներկայացուցիչներից: Սա ևս վարում էր կիսատ-պռատ, անվճռական ներքին ու արտաքին քաղաքականություն: Վախենալով հեղափոխության հետագա խորացումից, այդ կառավարությունը վճռական միջոցներ չէր ձեռնարկում հետադիմական ուժերի դեմ, բայց հնարավորինս սահմանափակում էր առաջադիմական ուժերի գործողությունները, շարունակում էր իմպերիալիստական տերությունների հետ գործարքների մեջ մտնելու քաղաքականությունը:

ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԸ

Պարսկաստանում արդեն սովորական բան էր դարձել իշխանություններին չհպատակվելը: Եթե որևէ ամիր կամ սարդար կարողանում էր իր գլխին հավաքել մի քանի տասնյակ ձիավոր, ապա անմիջապես իրեն հայտարարում էր ապստամբ: Ամբողջ երկրում քաոս էր:

Թեև նախորդ ամիսներին կառավարական զորքերը տարել էին մի չարք տպավորիչ հաղթանակներ, բայց պարտվածները, հատկապես չահսևանները երկու-երեք ամսում կարողացել էին ուշքի գալ և նոր ավազակախմբեր կազմել: Արդեն մայիս-հունիսին չահսևաններն ապստամբել էին հյուսիս-արևմուտքում, թուրքմեններն ու մազանդարանցիները՝ հյուսիսում, բախտիարների մի մասը, լորերը, բելուջները և կաշկայները՝ հարավում: Բախտիարները տանել չէին կարողանում կաշկայներին և մշտապես զինված ընդհարումների մեջ էին նրանց հետ:

Մինչև 1911 թ. ամռան սկիզբը երկրի մի չարք նահանգնե-

րում տեղի ունեցած հակահեղափոխական ելույթները միայն նախերգանքն էին այն լայնածավալ կռիվների, որոնք չուտով սանձազերծվելու էին սահմանադրական կառավարության դեմ:

Պարսկաստանում հետադիմական ուժերի աչխուժացմանն ամենից առաջ նպաստում էր անկայուն վիճակը, որի պատճառը սահմանադրական կարգի ամրապնդման, երկրի ժողովրդավարացման ուղղությամբ արմատական բարենորոգումներ մտցնելու գործում կառավարության անվճռականությունն էր:

Այդ իմաստով սահմանադրական կառավարության իչխանությունը չատ թույլ էր հատկապես ծայրագավառներում, ուր սկսել էին նորից ամբողջ ծավալով տերուտնօրինություն անել ավատապետ խաները: Մայրաքաղաքից հեռու գավառներում իչխում էին բռնությունը, կամայականությունն ու սանձարձակությունը:

Պարսկաստանի աչխատավոր ժողովուրդը 1909 թ. մեծ գոհունակությամբ էր ընդունել Մահմեդ Ալի չահի գահընկեցությունը, համոզված, որ սահմանադրական վարչակարգն իրեն և իր հայրենիքին կտա բարօրություն, տնտեսական բարգավաճում, անհատական ազատություն, կյանքի, գույքի, պատվի ապահովություն, անձի անձեռնմխելիություն, տուրքերի և հարկերի թեթևացում, առևտրի ու արդյունաբերության զարգացում:

Եվ եթե նոր կառավարության գլուխ անցած անձինք անցած երկու տարիներին կարողանային գեթ չնչին չափով իրագործել այն բարիքները, որ ժողովուրդն սպասում էր իրենցից, եթե այդ կառավարությունը կարողանար գեթ չնչին հավատ ու հույս ներչնչել նրան, ապա տարակույս չկա, որ Մահմեդ Ալի չահի վերադարձի համար հող չէր պատրաստվի և նա չէր հանդգնի երկնել արչավանքի միտքը:

Բայց բանն այն է, որ նոր կառավարությունը ոչ միայն չկարողացավ հավատ և հույս ներչնչել ժողովրդին, այլև այնպես հոռի կերպով վարեց երկրի ղեկավարումը, որ բովանդակ պետության մեջ տիրեց կատարյալ անիչխանություն, առաջ եկավ տնտեսական և առևտրական քայքայում, չատացան ավազակություններն ու կողոպուտները, ժողովրդից պահանջվեցին նորանոր ծանր հարկեր ու տուրքեր, հարկեր դրվեցին նույնիսկ

այնպիսի կենսական նյութերի վրա, որոնց չէր կարելի տուրքի ենթարկել ըստ շարիաթի, ասենք՝ աղը:

Հայերը նույնպես մեծ ակնկալիքներ ունեին սահմանադրական իշխանություններից, բայց նոր կարգերի օրոք նրանց վիճակը ոչ միայն չբարելավվեց, այլև գնալով վատթարացավ: Նոր իշխանությունը նույնիսկ զլացավ հայերին մեջլիսում տալ երկու ներկայացուցիչ, ակնհայտորեն տրամադրություն ցույց տվեց սահմանափակելու այն իրավունքները, որոնք հայերը վայելում էին շահերի ժամանակ, հատկապես՝ ազգային-եկեղեցական գործերում: Եվ, վերջապես, սահմանադրական կառավարության օրով էր, որ սկսվեցին Ղարադաղի հայաբնակ գյուղերի քանդումն ու ավերումը, իսկ մեջլիսն ու համապատասխան նախարարությունները չկարողացան որևէ կերպ պաշտպան կանգնել Ղարադաղի հայերին: Այս պայմաններում նրանց մոտ տրամադրություն առաջացավ օգնության դիմելու օտար պետություններին:

Այդ ամենը պատճառ դարձան, որ Պարսկաստանի ժողովրդի զգալի մասը գար այն համոզման, որ բռնապետական հին ռեժիմի օրով իր դրությունն ավելի լավ էր, քան սահմանադրական կառավարության ժամանակ, երբ մի բռնակալ շահի փոխարեն բռնակալ հարյուրավոր փոքր շահեր են հաստատվել երկրի զանազան անկյուններում:

Սահմանադրական նոր կարգը չկարողացավ իր միջից ի հայտ բերել փոքր ի չատե նշանավոր ուժեր, որոնք ունենային վերանորոգչական ձիրք և ընդունակություն, կարողանային հետամուտ լինել սահմանադրական սկզբունքների հաստատմանը երկրում: Ընդհակառակը, նոր իշխանությունն սկսեց ավելի հաճախ դիմել հին վարչակարգի գործիչների օգնությանն ու աջակցությանը:

Դժգոհությունը գնալով սաստկացավ և արագորեն ստվարացավ թիվը հին կարգերին վերադառնալու կողմնակիցների, որոնք, ի վերջո, միտք հղացան հետ կանչել գահընկեց Մահմեդ Ալի շահին:

Մահմեդ Ալին Պարսկաստանում իր գործակալների միջոցով քաջատեղյակ էր երկրում կատարվող ամեն ինչին:

Ինչպես նշել ենք, նախկին շահը հակահեղափոխական հեղաշրջման էր սկսել պատրաստվել դեռևս 1910 թ. վերջերից: Իր ընտանիքով Օդեսայում բնակվող Մահմեդ Ալին նույն թվականի վերջերին իր շքախմբով մեկնել էր Վիեննա[1], հետո ժամանել Նիցցա, այնտեղից ուղևորվել Փարիզ[2], ապա Ֆյոլնի վրայով անցել Բեռլին[3], վերջապես հանգրվանել Ավստրիայի Բադենում[4], իսկ 1911 թ. փետրվարին «աննկատ» վերադարձել Օդեսա[5]:

Սահմանադրական ուժերի դեմ պայքարում ներառված էին բոլոր հայտնի միջոցները: Մահմեդ Ալիի գործակալներն ու համախոհները նրա օգտին քարոզում էին երկրի տարբեր, հատկապես հյուսիսային և արևմտյան (Օսմանյան կայսրությանը հարակից)՝ հիմնականում թուրքաբնակ գավառներում: Երկրի մայրաքաղաքում գաղտնի գործում էր «Իսլամիե» անջումենը, որի անդամները նախկին շահի վերադարձը փափագող հայտնի գործիչներ էին: Մահմեդ Ալիի հետևողական կողմնակիցները միշտ եղել էին և շարունակում էին լինել թուրքմեն ու շահսևան խաները: Նրան հարեցին իրենց հետադիմությամբ հայտնի՝ նախկին շահի երկրպագու Շուջաա Դովլեն (նույն ինքը՝ Սամադ խան)՝ Ատրպատականում, Իսմայիլ խան Սավադկուհին՝ Մազանդարանում, ոտքի էին կանգնել նաև Խորասանի խաներից Ռեշիդ Սոլթանը և կաշկայների ցեղապետներից Սովլաթ Դովլեն:

Մահմեդ Ալի Միրզայի գլխավոր հույսն, այնուամենայնիվ,*

---

[1] *"Сборник дипломатических документов ...", вып. V, с. 222.*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

[4] *Տե՛ս **«Աշխատանք»**, № 26, 31 հուլիսի 1911 թ.:*

[5] *Տե՛ս **«Սուրհանդակ»**, № 346, 15 հուլիսի 1911 թ.:*

* *Պարսկաստանի արքայական տան բոլոր արու անդամները ինքնաբերաբար կրում էին «Միրզա» տիտղոսը, որը դրվում էր անվան աջ կողմում: Նշենք նաև, որ «Միրզա» տիտղոսը անվան սկզբում հիշատակելու դեպքում նշանակում էր, որ տվյալ անձն արքունիքի քարտուղար է կամ հասարակության մեջ շատ հարգելի անձնավորություն:*

իր եղբայր Սալար Դովլեն էր: Նա օժտված էր ակնառու ռազմական տաղանդով, խելոք էր ու դաժան: Միքայել Վարանդյանը նրա մասին գրել է. «Սալար Դովլէն յայտնուեցաւ միապետական բանակի ամէնէն յամառ եւ յանդուգն հրամանատարը: Ետ կը նահանջէր, բայց միշտ անվհատ ու վճռական, կը վերակազմէր շարքերը եւ կը վերադառնար կռուի դաշտ: Նա տարբեր էր եւ քանի մը յաղթանակներէ ետք Սամէդ (Սամադ:- Հ. Ս.) խանի դէմ, գրաւեր էր Քերմանշահը, ճամբուն վրայ գաղտնաբար կոտորելով իր պարտուած հակառակորդները եւ անգամ գերիները»[1]:

Եփրեմի և Սարդար Բահադուրի տարած խոշոր հաղթանակներից հետո Սալար Դովլեն մի պահ մոլորված ու հուսալքված էր: 1910 թ. հոկտեմբերից գտնվելով Եվրոպայում, նա 1911 թ. հունվարին փորձեց Ռուսաստանի վրայով թափանցել Պարսկաստան, որպեսզի գլխավորի երկրի հակահեղափոխական ուժերին: Եվ չնայած ռուսական կառավարության արգելքին և ձեռնարկած միջոցներին, նա հաջողեց ափ իջնել Էնզելիում: Այստեղ Սալար Դովլեն ձերբակալվեց, տարվեց Թեհրան և ապա ազատ արձակվեց՝ երկրի սահմանները լքելու պայմանով: Թեհրանի կառավարությունը ճանապարհածախսի համար նրան նույնիսկ 500 թուման տվեց, և նա վերադարձավ Բաքու: Վեց ամիս անցնելուց հետո, 1911 թ. գարնան վերջին, այս անգամ թափանցելով Թուրքիայից, Սալար Դովլեն հանկարծակի հայտնվեց Իրանական Քուրդիստանում:

1911 թ. ապրիլի 19-ին ռուսաց Թավրիզի հյուպատոս Ալեքսանդր Միլլերը հեռագրում էր Թեհրան. «Նախկին շահի եղբայր Սալար Դովլեն, այստեղ եղած տվյալներով, փոխելով հագուստը, թուրք ձիավորների ուղեկցությամբ Մուսուլից Ռևանդուզով եկել է Սուլդուզ: Այնուհետև եղել է Սոուջ-Բուլաղում: Մի ամբողջ շաբաթ շրջել է քրդական գյուղերով»[2]:

Նույն Միլլերն ապրիլի 26-ին դարձյալ Թեհրան հղած հեռա-

---

[1] ***Միքայել Վարանդեան,*** *Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 299:*

[2] ***"Сборник дипломатических документов ..."****, вып. VI, с. 114.*

գրով հայտնում էր. «Այստեղ եղած տվյալներով Սալար Դովլեն այժմ գտնվում է Սուլդուզում, որտեղից տեղեկացրել է Սոուջ-Բուլաղի մոկրի ցեղի քրդերին, որ մտադիր է պարսկական և թուրքական քրդերի գլուխն անցած գնալ Թեհրանի վրա: Նրա անները՝ Հոսեյն-ղուլի խանը և պարսկական ու թուրքական ուրիշ մի քանի ցեղերի ազդեցիկ խաներ անցել են Սալար Դովլեի կողմը»[1]:

Իր չդադարող սադրանքներով Պետերբուրգը Պարսկաստանի ներքին դավադիր ուժերի համար ոգեշնչման մշտական աղբյուր էր: Երբ սպառել էին Մահմեդ Ալի շահին գահի վրա վերականգնելու «օրինական» բոլոր միջոցները, Ստոլիպինի կառավարությունը որոշեց մի կողմ նետել բոլոր պայմանավորվածություններն ու ձևականությունները և դիմել Պարսկաստանի ներքին կյանքին ամենաբիրտ միջամտության: Թեև Ատրպատականում Ռուսաստանը բավական ստվար թվով զորք ուներ, բայց դա բավական չէր հեղափոխությանը ջախջախիչ հարված հասցնելու և իր հովանավորյալ պարսիկ միապետին նորից իրական իշխանությամբ օժտելու համար[2]:

Պետական հեղաշրջման նպատակով ամեն բան նախապատրաստած համարելով, գահազուրկ շահը ռուսական իշխանությունների աջակցությամբ անցավ որոշակի գործողությունների[3]:

Լոնդոնի լավատեղյակ աղբյուրները հաղորդում էին, որ նախկին շահը պատրաստվել է Ռուսաստանից Պարսկաստան անցնել կեղծ մորուքով և Խալիֆ Բաղդադ անունով թուրքական անցագրով[4]:

1911 թ. հուլիսի 5 (18)-ին Մահմեդ Ալին ռուսական «Խրիս-

---

[1] **"Сборник дипломатических документов ..."**, вып. VI, с. 127.

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 22, թ. 10:

[3] **"Сборник дипломатических документов ..."**, вып. VII, с. 30. **М. Павлович, С. Иранский**, Персия в борьбе за независимость, с. 69. Հետագա դեպքերի մասին մանրամասն տե՛ս նաև **«Սուրհանդակ»** թերթի №№ 347-354 և հաջորդող համարներում:

[4] Տե՛ս **«Ախուրեան»**, № 39, 15 հուլիսի 1911 թ.:

տոֆոս» չոգենավով ափ է իջնում Կասպից ծովի հարավի Գում-բաթը-Ղաբուս նավահանգստում, որտեղից հուլիսի 8-ին տեղա-փոխվում է Գյումուշ-Թեփե: Նրա հետ էին իր փեսա, քաջ և հմուտ զորահրամանատար Արշադ Դովլեն (նույն ինքը՝ Սար-դար Արշադ, իսկական անունը՝ Ալի խան), նախկին զինվորա-կան նախարար Էմիր Բահադուր Ջենգը, իր եղբայր Շոաա Սալ-թանեն և ուրիշ ուղեկիցներ, որոնց թվում՝ ապագա նախարար-ներ: Գյումուշ-Թեփեում նրա շուրջն են համախմբվում հեղափո-խության դեմ թշնամաբար տրամադրված, պարբերաբար ավա-րառությամբ զբաղվող թուրքմենական ցեղերի առաջնորդները*: Բաքվում լույս տեսնող «Նոր խօսք» թերթը գրում էր, որ անար-գել կողոպուտի և հարուստ ավարի խոստումը ոտքի է հանել թուրքմեն ցեղերը, որոնք լցված տիրական հավատարմությամբ դեպի վեհափառ շահը, որոշել են ինչ գնով էլ լինի, Մահմեդ Ալիին կրկին բազմեցնել պարսից գահի վրա[1]: Այդ ցեղերի թվում իր ելուզակային վայրենի բարքերով հատկապես աչքի էր ընկնում ջաֆարբայ ցեղը: Միչտ Մահմեդ Ալիին նվիրված այդ ցեղն ստացավ հաղթանակի դեպքում բնակչությանն անպատիժ կողոպտելու թույլտվություն[2]: Նախկին շահը, հոգալով իր անձի պաշտպանության մասին, իր հետ եկած Ռահիմ խանին հանձ-նարարեց թիկնազոր ստեղծել: Վերջինս կարճ ժամանակում կազմավորեց բացառապես թուրքալեզու ցեղերից, հատկապես շահսևան հեծյալներից կազմված բազմաքանակ թիկնապահ զորք:

1911 թ. հուլիսի 9-ին նախկին շահը հասնում է Աստրաբադ[3]: Այստեղ նույնպես տարբեր կողմերից հավաքվում են միապե-տական կազմակերպված ուժեր և կիսավայրենի ցեղախմբեր: Աստրաբադից Մահմեդ Ալին հուլիսի 21-ին գալիս է Սուրի[4]:

---

* Նշենք, որ Ղաջար թագավորական տոհմը ծագումով թուրքմենական էր, ուստի Մահմեդ Ալին ափ իջնելով, հայտնվել էր հարազատ միջավայրում:

[1] Տե՛ս **«Նոր խօսք»** (Բաքու), № 1-2, 2 նոյեմբերի 1911 թ.:

[2] Տե՛ս **М. Павлович, С. Иранский,** Персия в борьбе за независимость, с. 72, **«Աշխատանք»**, № 26, 31 հուլիսի 1911 թ.:

[3] **"Сборник дипломатических документов ..."**, вып. VII, с. 21.

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 74:.

Մինչ այդ, Թեհրանի ռուսական դեսպանությունը հրահանգ էր ստացել չմիջամտել ծավալվելիք ներքին կռիվներին, մնալ չեզոք և բոլոր միջոցներով պաշտպանել ռուսական հպատակների կյանքն ու գույքը[1]:

1911 թ. հուլիսի 11-ին կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցին Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը գրում էր.

«Պարտք եմ համարում աւելացնել խոնարհաբար, որ հեռագիր է ստացուել այստեղ, թէ նախկին շահը Պարսկաստան է մտել արդէն, նորա եղբայրը միւս կողմից յառաջանում է դէպի Համադան: Ըստ երեւոյթին գտնւում ենք քաղաքական մեծ անակընկալների նախօրեակում եւ գուցէ Պարսկաստանի ամբողջ հայութեանը լուրջ վտանգներ են սպասւում: Խոնարհաբար խնդրում եմ այս կանխանկատութեամբ հոգալ եւ տնօրինել՝ ինչ որ յարմար կը համարէք»[2]:

Ափ իջնելուց հետո գահընկեց շահի և նրա ուղեկիցների առաջին գործն եղավ ռազմական հզոր ուժի ստեղծումը: Մահմեդ Ալին Ավստրիայում գնած մեծ քանակի զենք ու զինամթերք էր բերել իր հետ: Առանց ժամանակ կորցնելու, նրանք շատ արագորեն թուրքմենական ավազակային ցեղերի 2000 ձիավորներից կազմեցին մի բանակ, որի գլուխ կանգնեց Արչադ Դովլեն: Երեք-չորս շաբաթում Մահմեդ Ալին հաջողվեց Կասպից ծովի հարավային շրջաններում զենքի տակ բերել ևս 1000 հոգու: Այդ հսկայաթիվ ուժն էր, որ նա ուղղում էր Թեհրանի վրա[3]:

Պատրաստվելով շարժվել դեպի մայրաքաղաք, Մահմեդ Ալին շահ հռչակված իր որդուն գրեց հետևյալ բովանդակությամբ նամակը.

«Որդեա՛կ իմ, դու պէտք է գիտենաս, որ ներկայումս երկիրը կառավարում ես ոչ թէ դու, այլ կառավարում են մեր տոհմի թշնամիները: Եթէ դու երկիրը պէտք է կառավարես միայն չափահաս դառնալուց յետոյ, ապա ինչո՞ւ մինչեւ այդ ժամանակ

---

[1] Տե՛ս *“Сборник дипломатических документов ...”*, вып. VII, с. 8.

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 22, թ. 29:

[3] Տե՛ս **«Մամուլ»** (Թիֆլիս), № 8, 19 դեկտեմբերի 1911 թ.:

ես չպէտք է իրաւունք ունենամ կառավարելու իմ ժողովուրդը: Վերջապէս պէտք է իմանաս, որ դու ես իմ միակ ժառանգը: Ի նկատի ունենալով այս բոլորը, ես՝ քո հայրը, առաջարկում եմ քեզ, որ իմ Թէհրան մտնելու օրը, դու յայտարարես քեզ շրջապատողներին, որ հրաժարւում ես գահից եւ առաջարկում ես հօրդ կառավարելու երկիրը:

Հակառակ դէպքում դու եւս, իմ միւս թշնամիների նման խիստ պատժի կենթարկւես: Ես շատ հեռու չեմ գտնւում Թէհրանից եւ շրջապատւած եմ ինձ հաւատարիմ թուրքմէններով:

Քո հայր՝

Իրանի շահ Մահմէդ Ալի»[1]*:*

Ստանալով հոր նամակը, պատանի Ահմեդ շահը դա հանձնեց վարչապետ Սամսամ Սալթանեին[2]*:*

Նախկին շահը նաև հեռագիր ուղարկեց խնամակալ Նասր օլ Մոլքին, որով հանձնարարում էր նրան մինչև իր Թեհրան գալը խիստ կարգապահություն հաստատել շահական պալատում և դա նախկին տեսքին բերել: Խնամակալը հեռագրով պատասխանել էր, որ շահը բարի գործ կատարած կլիներ, եթե հնարավորինս չուտ հեռանար Պարսկաստանից[3]*:*

Ինչպես այդ օրերին հաղորդում էր "Русское Слово" թերթը, Մահմեդ Ալին Շահրուդից հեռագրել էր Եփրեմին, պահանջելով, որ նա չխառնվի պարսիկների միջև տեղի ունեցող քաղաքացիական կռվին՝ նկատի առնելով, որ ինքը օտարերկրացի է: Նախկին շահի այդ հեռագրին Եփրեմը պատասխանել էր. «Ինչպէս անցեալում, այսուհետեւ նոյնպէս մասնակցելու եմ քո դէմ ուղղուած կռիւներին»[4]*:*

Իր եղբոր՝ գահընկեց շահի արշավանքի հաջողությանը նպաստելու համար Սալար Դովլեն այս անգամ տենդագին գոր-

---

[1] *Տե՛ս* ***«Ախուրեան»****, № 45, 21 օգոստոսի 1911 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Տե՛ս նույն տեղում, № 40, 17 հուլիսի 1911 թ.:*

[4] *"Русское Слово" թերթի այդ հաղորդագրության թարգմանությունը տե՛ս* ***«Ախուրեան»****, № 42, 31 հուլիսի 1911 թ.:*

ծունեություն ծավալեց երկրի արևմտյան տարածքներում: Օժտված լինելով կազմակերպական արտակարգ ընդունակություններով, այդ արքայազնը կարողացավ շատ արագ իր շուրջը հավաքել Քերմանշահի շրջանի ցեղերին և նրանց մարդկային ուժով 1200 հոգանոց առաջնակարգ զորք ստեղծել:

Այն օրերին, երբ Մահմեդ Ալին հիմնականում թուրքմեններից կազմված իր զորքով գտնվում էր Թեհրանից 100 կմ հեռավորության վրա, Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովը մեկնել էր Եվրոպա՝ նպատակ ունենալով վերականգնել նախկին շահի վարկը և նրան գահին վերադարձնելու համար ստանալ Փարիզի և Լոնդոնի համաձայնությունը: Բայց վերջիններս կտրականապես մերժել էին այդ մտադրությունը և փոխարենը ռուս նախարարին խորհուրդ էին տվել որքան հնարավոր է ռուսական զորքերը շուտ դուրս բերել Պարսկաստանից:

Կովկասահայ մամուլի շարքերը նոր համալրած «Մամուլ» թերթը, որն սկսել էր լույս տեսնել Թիֆլիսում՝ հնչակյան նշանավոր գործիչ Ռուբեն Խանազատյանի (Խանազատ) խմբագրությամբ, նկատում էր, որ դեպի Եվրոպա Սազոնովի ճանապարհորդությունն անօգուտ չէր անցել: Եթե Փարիզ ժամանելուց հետո նա կտրականապես հայտարարել էր, թե «Պարսկաստանում, յամենայն դէպս, մենք պէտք է բաւարարութիւն ստանանք», ապա Պետերբուրգ վերադառնալուց հետո ասել էր, որ եթե «Մահմէդ Ալի շահը Թէհրանի անիշխանութիւնից ու թուլութիւնից օգտուելով գահընկէց անի օրինաւոր շահին եւ նրա տեղը բռնի, այդ դէպքում Պետերբուրգն ստիպուած պիտի լինի մերժել նրան շահ ճանաչելը. մենք չենք վերադարձնի Մահմէդ Ալի շահին իր գահը մեր սինների ոյժով: Այդ ուղղութեամբ արդէն հրաման է տուած Պարսկաստանում գտնուող ռուսաց զօրքերի զօրապետ գեներալ Գաբաեւին»[1]:

Սալար Դովլեի օրինակով երկրի տարբեր մասերում համախմբվում էին հակահեղափոխական բոլոր ուժերը: Արդաբիլի շրջանում շահսևանների հրոսակային խմբերն իրենց շարքերը

---

[1] ***«Մամուլ»**, № 7, 12 դեկտեմբերի 1911 թ.:*

համալրել էին հազարավոր տարրերով: Թեհրանից հյուսիս ապստամբություն էր բարձրացրել Լեհիջանի նախկին նահանգապետ, մազանդարանցի խոշոր կալվածատեր Էմիր Մուկերհեմը, որ իր սեփական գործերի պատճառով անձնական հաշիվներ ուներ կառավարության հետ: Նա ժողովել էր մոտ 1000 մարդ և մայրաքաղաքից 50 վերստ հեռավորության վրա, մի անմատչելի տեղում՝ Դեմավենդի լանջի մոտերքում, բանակ դրել: Այստեղ նրանց միացան Սավադկուհից եկած Իսմայիլ խանը և Վերամից եկած Ռեչիդ Սոլթանը՝ իրենց զինյալներով: Էմիր Մուկերհեմի խմբերը փաստորեն տիրություն էին անում մայրաքաղաքի շրջակա գյուղերում: Նրա որդին, իր հերթին, ապստամբություն էր բարձրացրել Մազանդարանում և պատրաստվում էր գրավել Բարֆրուշ քաղաքը:

Ողջունելով գահին վերադառնալու Մահմեդ Ալի շահի երկրորդ փորձը, Պետերբուրգի "Новое Время"-ն գրում էր, որ սպասվում է մահու և կենաց կռիվ «կառավարական իշխանության հեղափոխական զավթիչների դեմ, որոնք որևէ ընդհանուր բան չունեն ազնիվ ու խոնարհ, դիմացկուն ու լռակյաց պարսիկ ժողովրդի հետ»[1]:

Մահմեդ Ալիի Պարսկաստան վերադարձը խանդավառեց բոլոր մոսթաբիդներին*, իշխանազուններին, խաներին, մուջտեհիդներին և ամեն տեսակի հետադիմականներին, նրանց մղելով է՛լ ավելի եռանդուն պայքարի կառավարության դեմ:

1911 թ. հուլիսի 12-ի դրությամբ Հյուսիսային Պարսկաստանի 6 քաղաքներ արդեն հնազանդություն էին հայտնել նախկին շահին[2]: Շուտով հակասահմանադրական շարժումը տարածվել սկսեց նաև երկրի հարավային նահանգներում: Անգլիական թերթերը հաղորդում էին, որ Շիրազի մոտ Մահմեդ Ալիի կողմնակիցների և կառավարական զորքերի միջև տեղի ունեցած ճակատամարտում վերջիններս ջախջախիչ պարտություն են կրել և կռվի դաշտից փախել են՝ տալով մեծ կորուստներ[3]:

---

[1] **"Новое Время"**, 29 июня 1911 г.

* Բռնապետեր:

[2] Տե՛ս **«Աշխատանք»**, № 41, 24 հուլիսի 1911 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում:

Հակահեղափոխական ուժերը հուլիսի կեսերին գլուխ բարձրացրին արդեն մայրաքաղաքում: Մահմեդ Ալիի կողմնակիցների մի մեծ խումբ, դուրս գալով ընդհատակից, հուլիսի 17-ին հարձակում գործեց մեջլիսի վրա: Բռնկվեց կատաղի հրացանաձգություն, եղան տասնյակ զոհեր ու վիրավորներ, բայց Եփրեմի զինյալները, ի վերջո, հետ մղեցին սահմանադրության հակառակորդների գրոհը: Զայրացած միապետականները չարժվեցին Եփրեմի տան վրա և փորձեցին հրդեհել: Միապետականների մի ուրիշ խումբ, որում հաշվվում էր 1000 հոգուց ավելի, հարձակում կատարեց Թեհրանի գլխավոր զինապահեստի վրա: Կազակները հարկադրված կրակ բացեցին, որի հետևանքով եղան բազմաթիվ սպանվածներ[1]: Զնայած դրան, մայրաքաղաքը չէր հանդարտվում: Սահմանադրական կառավարության չատ և չատ պաշտոնյաներ, լքելով իրենց գործերը, հեռանում էին մայրաքաղաքից: Օրինակ՝ անգամ առանց տեղեկացնելու ղեկավարությանը, իր ընտանիքով Եվրոպա էր մեկնել հեռագրի և փոստի նախարարը: Փախուստը մայրաքաղաքից օրավուր աճում էր[2]:

«Ինչպէս միշտ պատմութեան մէջ,- գրում էր Թիֆլիսի «Մամուլ» թերթը,- նոյնպէս էլ մեր աչքի առաջ, այսօր, տեղի է ունենում մի երեւոյթ. այն անձինք, որոնք իրենց համարում են նախախնամութիւնից նշանակուած մի երկիր կառավարելու եւ պաշտպանելու, հէնց նրանք են, որ իրենց նեղ աշխարհայեացքով եւ շահամոլ ձգտումներով միայն ներշնչում, դէպի անդունդն են գլորում իրենց «հայրենիքը»»[3]:

Մահմեդ Ալիի առաջին լուրջ հաջողություններից ոգեշնչված, Բաղենում գտնվող նրա տիկնանց տիկինը՝ Մելիքե Ջեհանը հեռագրել էր ամուսնուն, որ չուտով իր զավակների հետ մեկնելու է Օդեսա և գահին վերատիրանալուց անմիջապես հետո ժամանելու է Թեհրան[4]:

Վանի «Աշխատանք» թերթը նկատում էր, որ եթե միապե-

---

[1] Տե՛ս **«Ախուրեան»**, № 41, 24 հուլիսի 1911 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] **«Մամուլ»**, № 8, 19 դեկտեմբերի 1911 թ.:

[4] Տե՛ս նույն տեղում:

տությունը հաղթանակ տանի, ապա Պարսկաստանն ընկնելու է անելանելի վիճակի մեջ[1]:

«Բան չմնաց որ չկատարուէր այդ երկրին մէջ՝ անոր անկումը եւ նուաճումը փութացնելու համար»[2],- ցավով նշում էր Կ. Պոլսի «Լուսարձակը»: Արդեն երրորդ տարին էր, որ Պարսկաստանի հեղափոխական և հակահեղափոխական ուժերի միջև մղվում էին փոխադարձ սուր, արյունահեղ ընդհարումներ, բայց այդ երկրի ապագայի հեռանկարները դարձյալ մնում էին մութ ու անորոշ, մշուշապատ քողով ծածկված[3]:

Մյուս կողմից Մահմեդ Ալիի՝ Պարսկաստանի տարածքում հայտնվելու և Թեհրանի ուղղությամբ լուրջ հարձակման պատրաստվելու լուրը երկրում առաջ բերեց ժողովրդական զայրույթի հզոր ալիք: Նախկին շահի մուտքը Պարսկաստանի սահմաններից ներս, հակապետական ուժերի լայնածավալ խլրտումները երկրում կենդանացրին հակամիապետական ուժերին, նրանց դրդեցին ոտքի կանգնելու և պաշտպանելու սահմանադրական կարգը:

Տեղի էին ունենում բազմահազարանոց հանրահավաքներ ու ցույցեր, որոնց մասնակիցները կառավարությունից պահանջում էին անհապաղ ձեռք առնել վճռական միջոցներ՝ Մահմեդ Ալիի և Սալար Դովլեի հակահեղափոխական ուժերին ջախջախելու համար: Նորից սկսվեցին կազմակերպվել ֆիդայիների հեղափոխական ջոկատներ: Ժամանակավորապես ընդհատվեց պայքարը դեմոկրատների և չափավորականների միջև: Դա արտահայտվում էր ինչպես մամուլի էջերում, այնպես էլ հատկապես մեջլիսում: Պատգամավորների ատելությունն այնքան ուժեղ էր նախկին շահի հանդեպ, որ մեջլիսը նույնիսկ դիմեց հերթական ոչ օրինական քայլին, հայտարարելով, թե Մահմեդ Ալիին սպանողը 100.000 թուման պարգև կստանա[4]: Մի քանի օր

---

[1] Տե՛ս **«Աշխատանք»**, № 26, 31 հուլիսի 1911 թ.:

[2] **«Լուսարձակ»** (Կ. Պոլիս), № 36, 24 դեկտեմբերի 1911 թ.:

[3] Տե՛ս **«Աշխատանք»**, № 24, 17 հուլիսի 1911 թ.:

[4] Տե՛ս **«Մշակ»**, 170, 7 օգոստոսի 1911 թ.: Շատ չանցած՝ հեռագրերը հայտնեցին, որ յոթ հոգի թափանցել են միապետական բանակ, որպեսզի սպանեն շահին, բայց բռնվել և գլխատվել են: Հետո պարզվեց, որ բոլոր յոթն էլ հայեր են եղել: Այդպիսով, մեջլիսի կոչին արձագանքել էին միայն հայեր և ոչ մի պարսիկ (տե՛ս նույն տեղում):

անց մեջլիսը 25.000-ական թման վարձատրություն նշանակեց Սալար Դովլեի և Շոսա Սալթանեի գլուխների համար[1]:

Հակահեղափոխական ուժերի դեմ այս անգամ կառավարությունը նույնպես դրսևորեց վճռականություն և կամք:

Ինչ վերաբերում էր խաղաղ աշխատանքով զբաղված հայերին, միապետական ուժերի արագ համախմբումը մեծ անհանգստություն էր առաջացրել նրանց շրջանում: Հայության գլխին գալիք լուրջ աղետների հավանականության մասին Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը դեռևս 1911 թ. հունիսին գրում էր Ամենայն հայոց հայրապետի տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցին[2]: Նա տեղեկացնում էր, որ հակահայկական ուժեղացող քարոզների ազդեցության տակ ռահիմականներն ու քուրդ ավազակախմբերն այս էլ որերորդ անգամ Ղարադաղի և Մակուի շրջաններում հայերի սպանություններ ու կողոպուտներ են կատարել: Այդ ցավալի անցքերի մասին ստացված նամակների հեղինակներն ամենամռայլ գույներով են նկարագրում հայերի վիճակը, նշում էր նա: Քեյվանի հայկական գյուղերն ավերողներից թեմական առաջնորդը հատկապես առանձնացնում էր Ռեշիդ Դովլեին: «Կողոպտված գիւղերի հայերը մնացել են թուրք գիւղերում ողորմելի դրութեան մէջ, իսկ դեռ չկողոպտված գիւղերում նստել են խաները եւ հարստահարում են գիւղացիներին»: Նա տեղապահին տեղեկացնում էր, որ այդ բոլորի մասին ինքը հեռագրել է Թեհրան, մեջլիսի հայ պատգամավորին (Հովսեփ Միրզայան), որը սակայն, չի կարողացել որևէ գործնական բան անել[3]:

Հայերը ոչ առանց հիմքի երկյուղում էին, որ եթե հետադիմությունը վերադառնա, ապա իրենք պարսկական հեղափոխության և շահի գահընկեցության քավության նոխազ կդառնան: Այդ վտանգը հատկապես իրական կարող էր լինել Թավրիզահայության համար, քանի որ նա էր առավել մեծ աշխուժություն դրսևորել հեղափոխական պայքարում:

---

[1] Տե՛ս **«Ախուրեան»**, № 41, 24 հուլիսի 1911 թ.:

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 22, թ. 14:

[3] Նույն տեղում:

«Արօր» թերթը գրում էր, որ հայ ժողովրդի վիճակն ավելի աղետալի է այսօր, քան Մամադ-Ալի շահի ժամանակ, որովհետև այսօր թեև Պարսկաստանը հռչակված է սահմանադրական երկիր, ունի պառլամենտ, բայց նրա մեջ բացակայում է որևէ կարգ, օրենք, և, երկիրը մատնված լինելով կատարյալ անարխիայի, չունենալով ղեկավարող ձեռք և ուժ, բնականաբար, ամեն մի անկյունում առաջ է եկել մի փոքր բռնապետ: Պարսկաստանի կառավարությունը բաղկացած է այսօր փոքրիկ բռնապետներից, որոնք ամենից առաջ հագեցնում են իրանց ընչաքաղցության և կողոպուտի ավազակային ծարավը[1]:

Ատրպատականի թեմի առաջնորդի՝ Գևորգ արք. Սուրենյանցին հղած 1911 թ. հուլիսի 11-ի նամակում արտահայտած տագնապը, թե «ըստ երևույթին գտնւում ենք քաղաքական մեծ անակնկալների նախօրեակում», իրեն երկար սպասել չտվեց: Ղարադաղի թուրք խաների ուժերը հարձակում գործեցին Քեյվանի շրջանի հայկական գյուղախմբի վրա, կողոպտեցին գյուղացիներին, քշեցին-տարան նախիրը, ընթացքում սպանելով անմեղ մարդկանց[2]: «Արօրը» նշում էր, որ Ղարադաղի թուրք խաների կատաղության հիմնական պատճառն այն է, որ հայ հեղափոխականները միամիտ հայ գյուղացիներին քարոզել էին չվճարել կալվածական տուրքերը, ինչի հետևանքը նրանց կյանքի քանդումը եղավ: Երբ թուրք խաները հայերին սպանում էին Ղարադաղում, այդ նույն ժամանակ քրդական ավարառու խմբերը խուժեցին ս. Թադեի վանք և կողոպտեցին ամեն ինչ: «Արօրը» համոզված էր, որ եթե եվրոպական մեծ պետությունների – գլխավորապես Ռուսաստանի և Անգլիայի – կողմից կտրուկ միջոցներ ձեռք չառնվեն, ապա հայերի ապրելը Ատրպատականի նահանգում միանգամայն անհնարին կդառնա[3]:

Այդ դեպքերի կապակցությամբ թեմական Կարապետ սրբազանը տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցին տեղեկացնում էր.

---

[1] Տե՛ս **«Արօր»**, № 5-6, մայիս-հունիս, 1911, էջ 166 :

[2] Տե՛ս **«Աշխատանք»**, № 26, 31 հուլիսի 1911 թ.:

[3] Տե՛ս **«Արօր»**, № 5-6, մայիս-հունիս, 1911, էջ 166-167:

«Երէկ իսկ տեսնուեցայ փոխ-կուսակալի հետ, որ խիստ սիրալիր պատրաստակամութիւն էր ցոյց տալիս իմ բոլոր դիմումներին գոհացում տալու. խոստանում էր՝ հեռագրով կարգադրել Ահարից զինուորական ուժ ուղարկի Քեյվանի եւ միւս վիճակներում հայերին ապահովելու, առանձին պաշտօնեաների ուղարկել, որ Խոյում քննութիւն կատարեն Ս. Թադէոս առաքելոյ վանքում տեղի ունեցած դէպքերի մասին, ապա Ղարադաղ անցնելով հայերի վնասները ցուցակագրեն, եւ խստիւ հատուցում պահանջի. սակայն դարձեալ հարց է դժբախտաբար, թէ ի՞նչ չափով կը կատարուեն այս խոստումները»[1]: Սրբազանը կասկած էր հայտնում, թե հայերին պաշտպանելու համար պարսից կառավարութիւնը կդիմի վճռական քայլերի, ուստի Թեմական խորհրդի անունից նա Սուրենյանցից խնդրում էր միջնորդել Նորին Մեծութիւն Կովկասի փոխարքայի առաջ, որ ռուսական իշխանութեան կողմից հնար եղած պաշտպանութիւնը ցոյց տրվի վերահաս վտանգի ներքո եղող Ղարադաղի հայերին: «Դորանով ամենեւին չենք մտածել իհարկէ արտաքին միջամտութիւն առաջ բերել. եթէ երկու տարի եւ կէսից ի վեր ռուսաց զօրքի Թաւրիզում նստած լինելը միջամտութիւն չէ, չգիտենք ինչո՞ւ միջամտութիւն կը լինէր նոյն զօրքից կամ հին եղածից մի քանի կոզակ Ղարադաղ ուղարկելը: Մինչդեռ ռուսաց կառավարութիւնը խիստ պաշտպանութիւն ցոյց է տուել հայերին նաեւ այնպիսի ժամանակներում, երբ Պարսկաստանում զօրք չի ունեցել»[2]:

Նույն վիճակն էր Ատրպատականի մյուս շրջաններում: Երկու-երեք տարի առաջ սահմանադրական զինուժի հնացած զենքերից Խոյի հայերին էին բաժանվել մի քանի տասնյակ հրացաններ՝ ինքնապաշտպանվելու համար: Օրինակ՝ Սեյդավար գյուղին տրվել էր 25 հրացան՝ 2500 փամփուշտով, Շորավ գյուղին՝ 20 հրացան՝ 2000 փամփուշտով: Բայց ժամանակավոր հաջողության հասած միապետականների ուղարկած զինված ձիավորները գալով նշված գյուղերը՝ գյուղացիներից ծեծ ու ջարդով

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 22, թ. 27-ի շրջ.:

[2] Նույն տեղում, թ. 28:

խլել էին բոլոր հրացաններն ու փամփուշտները: Օրեցօր վատթարանում էր Միանդոաբի շրջանի հայերի դրությունը: Այստեղ ծեծն ու տուգանքները սովորական բաներ էին դարձել: Նույն վիճակն էր ստեղծվել Թաղիաբադի հայերի համար[1]:

Սալմաստի Սավրա գյուղի հայ գյուղացիներն իրենց խղճալի դրության մասին առաջնորդարանի միջոցով աղերսագիր էին ուղարկել Թավրիզի ռուսաց հյուպատոսին՝ նկարագրելով գյուղատեր Հաջի Մամադ Թաղիի գործած «սխրագործությունները», որը ծեծի ու բանտարկությունների միջոցով գյուղացիներից գանձում էր իբր թե «հինգ տարիներից ի վեր չվճարած տուրքերը»[2]:

Առաջվա պես հայ կամավորների հիմնական ուժերը կենտրոնացված էին Թավրիզում: Եփրեմի հետ Թավրիզից Քեռու Թեհրան մեկնելուց հետո թուլացել էր քաղաքի հայկական մարտական ջոկատների ղեկավարումը, կամավորների շրջանում ընկել էր զինվորական կարգապահությունը:

Թավրիզի պաշտպանության կարևորագույն գործն այդ դժվարին պահին առաջ տանելու համար հարկավոր էր Քեռուն արժանի փոխարինող գտնել: Եվ փոխարինողը եղավ հայ ժողովրդի ազատագրական պայքարի նշանավոր գործիչ ***Նիկոլ Դումանը:***

Ընթերցողն արդեն գիտի, որ 1908 թ. Դումանը մերժել էր Պարսկաստան գնալու ՀՅԴ Արևելյան բյուրոյի առաջարկությունը, համարելով, որ այդ երկրի հեղափոխական շարժումներին հայերի մասնակցությունը միայն անդառնալի կորուստներ կպատճառի նրանց: Եվ ահա այժմ Դաշնակցության ղեկավարությունը, այս անգամ Եփրեմի միջոցով, նրան կրկին առաջարկում էր մեկնել Պարսկաստան: Դումանը չի կարողանում մերժել, որպեսզի տպավորություն չստեղծի, թե չի ենթարկվում կուսակցական կարգապահությանը[3]: 1911 թ. գարնան վերջերին նա

---

[1] *Տե՛ս* ***«Միտք»****, № 21, 21 հուլիսի 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Տե՛ս* ***Յովսէփ Յովհաննիսեան****, Յուշեր, էջ 229:*

Կ. Պոլսից հասնում է Պարսկաստան՝ խնդիր ունենալով աջակցություն ցույց տալ ՀՅԴ Ատրպատականի կազմակերպություններին: Կարճ ժամանակ Սալմաստում մնալուց հետո, Եփրեմի առաջարկությամբ, ՀՅԴ Արևելյան բյուրոն Դումանին հանձնարարում է մեկնել Թավրիզ:

Այդ ժամանակ Դումանը ռևմատիզմի սրացման պատճառով գամված էր անկողնուն և նույնիսկ չարժվելու անկարող էր: Բայց զսպելով ցավերը, 1911 թ. աշնան սկզբին հասնում է Թավրիզ: Նա փոխարինում է Քեռուն՝ ստանձնելով քաղաքի հիմնական պաշտպանական ուժի՝ հայկական զինված խմբերի հրամանատարությունը:

Բայց Պարսկաստանում գտնվելը այս անգամ էլ Դումանի՝ 1897 թ. նույն երկրի Խանասորի դաշտում մաղրիկ քրդական ցեղի դեմ իրականացրած վրեժխնդրական գործողության գլխավոր դեմքերից մեկի, սրտովը չէր:

Հակառակ պարսկական հեղափոխական շարժման նկատմամբ ՀՅԴ ղեկավար մարմինների խանդավառությանը և պարսկահայության ապագայի հանդեպ նրանց ունեցած լավատեսությանը, ինչպես նշել ենք, կային դաշնակցական գործիչներ, որոնք այդ շարժմանն իրենց կուսակցության մասնակցությանը դեմ էին: Վերջիններիս տրամադրության առավել ցայտուն արտահայտիչներից էր Նիկոլ Դումանը: Նա գտնում էր, որ Պարսկաստանում սկսված հեղափոխական շարժումը որևէ լավ բան չի խոստանում ո՛չ պարսիկներին և ո՛չ էլ Հյուսիսային Պարսկաստանի Թուրքերին, քանի որ երկիրը պատրաստ չէ ունենալու եվրոպական տիպի կառավարման համակարգ, իսկ ժողովուրդը հասունացած չէ օգտվելու դրա բարիքներից (Նիկոլ Դումանի այս դատողությունը եզակի չէր, այսպես էին մտածում պարսկահայերից շատերը): «Պարսկական յեղափոխութիւնը կը վիժէ,- ասում էր նա,- որովհետեւ ժողովուրդն անպատրաստ է, իսկ հարեւան մեծ պետութիւնը՝ Ռուսաստանը դէմ է սահմանադրական կարգերին եւ անշուշտ զէնքի ոյժով կը միջամտէ յօգուտ միապետութեան»[1]:

---

[1] **«Հայրենիք»**, № 12 (66), հոկտեմբեր, 1930, էջ 160:

Դումանի այս տեսակետը համարյա չէր տարբերվում Պարսկաստանում միապետության պահպանման կողմնակիցների տեսակետից՝ առաջ բերելով սրանց հակառակորդների վրդովմունքը: Բայց Դումանը հաշվի չէր առնում դա, քանի որ միշտ եղել էր որոշակի գործի մարդ, երևույթները գնահատում էր տվյալ պահին հայ ժողովրդի շահերի տեսանկյունից՝ երբեք հաշվի չնստելով վերացական դատողությունների ու բարձրագոչ հայտարարությունների հետ:

Անցնելով պարսկահայության համար հեղափոխական շարժման նշանակության հարցին, Դումանը գտնում էր, որ հայը ներկայումս չպետք է նպաստի թուրքերի և պարսիկների աչքաբաց դառնալուն, որ Պարսկաստանում սահմանադրական կարգերի հաստատումը ազգային ու մշակութային-տնտեսական շահերի տեսակետից հույժ վնասակար է հայության համար: Նա չեչտում էր, որ հայը միապետական կարգերի պայմաններում օժտված է արտոնյալ իրավունքներով, որոնք անպայման կջնջվեն, եթե երկիրը կառավարվի սահմանադրական օրենքներով, երբ պարսկահայությունը մեջլիսում ներկայացված կլինի առավելագույնը 2-3 ներկայացուցիչներով, որոնց ձայնը որևէ էական նշանակություն չի ունենա նրա կյանքում:

Նիկոլ Դումանը բազմիցս է կրկնել, թե «Այս կռիվը մեր կռիվը չէ»: Պատահական չէր, որ կռիվներից առաջ և ընթացքում հայ մարտիկներին նա մշտապես զգուշացնում էր չվտանգել սեփական կյանքը:

Հովակ Ստեփանյանը «Նիկոլ Դուման» աշխատության մեջ գրել է.

«Դումանը միշտ կուռ եւ հետեւողական կերպով տրամաբանել է, աստիճանաբար զարգացնելով եւ հիմնաւորելով իր դատողութիւնները: Դումանը նոյնիսկ ուշադրութիւն չէր դարձնում Եփրեմի եւ Թաւրիզի ընկերների տրտունջներին: Նա չարունակում էր իր անարիւն եւ չափած կռիւը, եւ ոչ ոք չկարողացաւ մազաչափ անգամ թեքել այդ կամակոր մարդուն: Նա չենթարկուեց միջավայրին, իսկ Եփրեմի սխրագործութիւնները, յորդորներն ու խնդիրները նրան չխանդավառեցին: Նա միշտ մնաց մտածող եւ խորհող Դումանը: Դիրքեր չտուաւ ձեռքից, իր մար-

տիկներին լաւ վարժեցրեց, բայց բնաւ չուզեց էժանագին յաղթութիւններ տանել, որ կարող էր հեշտութեամբ անել, բայց չարաւ, որովհետեւ գտնում էր աննպատակ, իսկ ինքը ծարաւ չէր փառքի ու յաղթանակների...»[1]*:*

Թավրիզի պաշտպանութեան պատմութեան ուսումնասիրողները նկատել են, որ Դումանն իր հայ մարտիկներին պատվիրում էր չհետապնդել նահանջող հակառակորդին, գտնելով, որ Պարսկաստանում հայերը պետք է զգույշ լինեն, քանի որ մի օր միապետականները կարող են հաղթանակել և վրեժ լուծել նրանցից[2]*:*

Խորաթափանց Դումանը սթափ հայացքով էր գնահատում Պարսկաստանում ծավալվող իրադարձությունները[*]*:*

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 12 (66), հոկտեմբեր, 1930, էջ 158:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[*] *Նիկոլ Դումանի հայացքներին համահունչ էին «Հովիւ» թերթի հոդվածագրի հետևյալ դիտարկումները. «Եթէ Պարսկաստանը նոյնիսկ մի քաղաքակրթուած երկիր լինէր, դարձեալ դժուար էր սպասել, որ այդ երկրի կառավարութիւնը մի բուռն ժողովրդի վերաբերմամբ բարեկամական ընթացք բռնէր, երբ այդ բուռն ժողովրդի ազգակիցները մասնակցում են երկրի ապստամբութեան մէջ: Իսկ երբ այդ երկիրը Պարսկաստանի պէս մի յետ մնացած, տգէտ եւ կիսավայրենիների երկիր է, այդպիսի դէպքում մէկ կամ մի քանի օտարազգիների թշնամական վարմունքը միշտ զայրոյթ է առաջ բերել դէպի ամբողջ նրանց ազգակիցները: Դրա ամենափայլուն ապացոյցը մենք լի ու լի վայելել ենք Թիւրքիայում վերջին երկար տարիների ընթացքում... Սաթթար խանի նոյնիսկ յաջողութեան օրերում հայաբնակ Մուժամբար գիւղը կործանուեց Շահի հաւատարիմ հրոսակախմբերից, իսկ անյաջողութեան օրերում, որ չատ հաւանական է, ամբողջ Ատրպատականի հայութիւնը կը ջնջուի: Եթէ անկարելին ենթադրենք, այսինքն Սաթթար խանի ձեռնարկութիւնը պսակուի յաջողութեամբ, ի՞նչ օգուտ մեզ հայերիս: Ատրպատականի հայերը կը մնան նոյն մի բուռն հայութիւնը կղզիացած մահմեդականների մէջ, իսկ աւելի հեռուն՝ արևելեան Պարսկաստանում, Նոր Ջուղա և այլ տեղեր, անչուշտ Սաթթար խանի ազդեցութիւնից չատ հեռու, բուն պարսիկները իրանց մէջ ապրող հայերից պիտի լուծեն պարսիկ կառավարութեան՝ Սաթթար խանից և նրա հայ օգնականներից կրած պարտութեան վրէժը:*

Եթէ է՛լ առաջ գնանք յաջողութեան երազների մէջ, եթէ հաւատանք թէ պարսից Շահը յաջողութիւն չի ունենալու ազատագրական շարժման դէմ, եւ

Հավանություն չտալով ՀՅԴ ղեկավարության պարսկական քաղաքականությանը, Դումանը, սակայն, որպես հավատավոր դաշնակցական, անթերի կերպով կատարում էր կուսակցության վերին մարմինների առաջադրանքները: Նա անմիջապես միջոցներ ձեռնարկեց բարձրացնելու իրեն ենթակա կամավորական խմբերի մարտական ոգին: Միաժամանակ կազմակերպում էր սահմանադրական նոր զինական խմբեր և վարժեցնում մարտիկներին: Նա վերջիններիս խստորեն նախազգուշացնում էր, որ եթե իրենց կամքով որոշել են մտնել հեղափոխական պայքարի մեջ, ապա պետք է կռվեն անձնուրացությամբ ու նվիրումով, իսկ պայքարից փախչելը համարում էր փոքրոգություն, որից սկսվում է դավաճանությունը:

Իսկ դասալքության դեպքեր, այնուամենայնիվ, կային, թեև հազվադեպ: Օրինակ՝ Թեհրանի հայկական դպրոցի դաշնակցական երկու ուսուցիչներ դպրոցի սրահ էին հրավիրել Եփրեմի մարտիկներից մի խմբի և սկսել դասալքություն քարոզել: Նրանք ասել էին, թե Եփրեմի բանակը գործիք է դարձել կառավարության ձեռքին, ուստի առաջարկել էին հրաժարվել ազգի շահերին խորթ ու աննպատակ կռիվներին մասնակցելուց, զուր տեղը կյանքը վտանգի չենթարկել, վերադառնալ խաղաղ աշխատանքի[1] և այլն: Այդպիսի ամեն մի դեպքի Դումանն արձագանքում էր ցավագին և անմիջապես կանխում դրա զարգացումը:

Նիկոլ Դումանն իր օգնականների հետ մշակեց Թավրիզը պաշտպանելու նոր ծրագիր և ձեռնամուխ եղավ դրա իրականացմանը:

---

*չարունակ ընկճուելու է եւ վարկաբեկ լինելու իր ընդդիմադրութիւնների ջանքերի մէջ, դարձեալ այդ մեզ համար մի խրախուսող պատճառ չէ...» (**«Հովիւ»**, № 44, 22 նոյեմբերի 1909 թ.):*

*[1] Տե՛ս **Ց. Էլմար**, Եփրեմ, էջ 569:*

ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՌԱԶՄԱՐՇԱՎԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՎՐԱ

Միապետական ուժերի ռազմական գործողություններն սկսվեցին հյուսիսից:

Իր հետ վերցնելով նորաստեղծ բանակի առավել վստահելի հեծելազորային մի քանի հարյուրյակ, Մահմեդ Ալին շարժվեց դեպի Սավադկուհ լեռնանցքը, իսկ գերազանցապես թուրքմեններից կազմված բանակի հիմնական մասը, Սարդար Արշադի (նույն ինքը՝ Արշադ Դովլե, իսկական անունը՝ Ալի խան) գլխավորությամբ առաջ շարժվեց և գրավեց Դամգան, Սեմնան և Շահրուդ քաղաքները:

Մահմեդ Ալիի առաջխաղացման հետ միաժամանակ՝ Քուրդիստանից դուրս եկավ Սալար Դովլեն: Չկարողանալով դիմանալ արքայազն իշխանի զորքի գրոհներին, սահմանադրական ուժերը մեկը մյուսի հետևից նրան հանձնեցին նորանոր քաղաքներ ու ամբողջ նահանգներ: Հաջորդաբար գրավելով Քերմանշահը, Համադանը, Սոլթանաբադը, Գարուսը, Փոչտը, Քուհը, Սալար Դովլեի զորքը հասավ Թեհրանից 200 կմ հեռավորության վրա գտնվող Ասիաբադ:

Հյուսիսային մասի Արդաբիլի շրջանում շահսևանների հրոսակախմբերը գրոհ տալով ջարդուփշուր արեցին կառավարական զորքը և փախուստի մատնեցին նահանգապետին: Եթե Արդաբիլ քաղաքում ռուսական զորքեր չլինեին, ապա դա անպայման կգրավվեր ու կթալանվեր:

Այդպիսով, կարճ ժամանակահատվածում նախկին շահի և նրա եղբոր ձեռքն անցան թուրքմենական տափաստանը, Մազանդարանը, Խորասանի մի մասը, Ատրպատականի մի մասը, Քուրդիստանը և Լուրիստանը: Թեհրանը հայտնվել էր շրջապատման օղակի մեջ:

Միապետականների ամենամեծ ուժը Արշադ Դովլեի հրամանատարությամբ արագորեն առաջ շարժվելով Թեհրանի ուղղությամբ, պարտության մատնեց սահմանադրական ուժերին, անարգել տիրեց իր ճանապարհին գտնվող մի շարք քաղաքների, և այդ հաղթանակների շնորհիվ ավելի ստվարացած, երկու ուղ-

դությունների՝ չարժվեց մայրաքաղաքի վրա: Նրան դիմադրություն ցույց տվեցին բախտիարների փոքրաթիվ խմբերը, որոնք, չկարողանալով դիմանալ, անողոք կոտորածի ենթարկվեցին: Հետագա առաջխաղացման ճանապարհին չհանդիպելով լուրջ դիմադրության, միապետական բանակը հասավ Վերամին, այսինքն՝ Թեհրանի հյուսիսային դռներին[1]:

Այդ գործողության հետևանքով նույն տարածքի վրա, Թեհրանի շուրջը, միավորվեցին հակահեղափոխության երկու գլխավոր ուժերը. առաջինը՝ հյուսիսից եկած բանակը՝ Սարդար Արշադի ու նախկին շահի առաջնորդությամբ, երկրորդը՝ հիմնականում քրդերից կազմված բանակը՝ Սալար Դովլեի գլխավորությամբ: Հերթի դրվեց Թեհրանի գրավումը[2]:

Մայրաքաղաքին Արշադ Դովլեի արագորեն մոտենալը և Սալար Դովլեի հետ միավորվելը խռովահույզ և չփոթ վիճակ էին ստեղծել թե՛ կառավարության մեջ և թե՛ ընդհանրապես սահմանադրական շրջաններում: Սրանց մեծ մասը, երկյուղով բռնված, հույս չուներ, թե կարելի կլինի Թեհրանի մատույցներից վանել հզոր Ռուսաստանի աջակցությունը վայելող գահընկեց շահի մեծաքանակ զորքերին: Պատահական չէ, որ սահմանադրական ղեկավարներից շատերը մտածում էին փախուստի միջոցով իրենց անձը փրկելու մասին: Նրանց թվում էր նաև Սիփահդարը, որն այդ ճակատագրական պահին հեռացել էր Գիլան՝ Թյունեքապունի իր կալվածքները: Իսկ երկրի ողջ միապետական տարրերը պատրաստություն էին տեսնում ժամ առաջ արժանավայել կերպով ընդունելու «իրենց շահին»[3]:

Մայրաքաղաքի գրավման ռազմական ծրագրին համապատասխան՝ Սալար Դովլեն շրջանցեց մայրաքաղաքը հարավից: Կաշկայ ցեղապետ Սովլաթ Դովլեն գնաց դեպի Իսֆահան՝ բախտիար սահմանադրական ուժերին դեպի հարավ չեղելու նպատակով: Շուջաա Դովլեին հանձնարարվեց գնալ Զենջան,

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 2 (313), փետրվար, 1952, էջ 96:

[2] Տե՛ս **«Աշխատանք»**, № 28, 13 օգոստոսի 1911 թ.:

[3] Տե՛ս **«Հայրենիք»**, № 2 (313), փետրվար, 1952, էջ 96:

որպեսզի կտրի արևմուտքից Թեհրան եկող ճանապարհները՝ բացառելու համար այդ կողմերից կառավարական ուժերին հասցվելիք օգնության հնարավորությունը:

Ինչպես նշված է Պոկլևսկի-Կոզելի զեկուցագրում, մայրաքաղաքը գրավելու համար մնացել էր միայն ջախջախել կառավարական ջոկատը, որը միապետականների ապստամբության սկզբում ուներ մինչև 1500 մարդ, իսկ վերջին երկու շաբաթվա ընթացքում աճել էր մինչև 3000 հոգու[1]: Այդ ջոկատի նկատմամբ հաղթանակ տանելով կլուծվեր կռվի ելքը: Սահմանադրականների մյուս ուժերն էին սարբազները, ոստիկաններն ու ժանդարմները, որոնք կազմում էին Թեհրանի ու մի քանի ծայրամասային քաղաքների կայազորները և որոնք ռազմական տեսակետից հազիվ թե արժանի լինեին լուրջ ուշադրության:

Ըստ Պոկլևսկի-Կոզելի նույն հաղորդման, Սալար Դովլեի, Սարդար Արշադի, Շուջաա Դովլեի և Իսմայիլ խան Սավադկուհիի զորքերի թիվը հասնում էր 30.000 մարդու: Բացի այդ, միապետականներն ունեին 20 հրանոթ[2]: Դա նշանակում էր, որ Մահմեդ Ալիի բանակների անձնակազմերն իրենց թվաքանակով տասն անգամ գերազանցում էին կառավարական զորքերին:

Չնայած դրան, Արշադ Դովլեին վիճակված չէր մայրաքաղաք խուժել: Շատերը կառավարության մեջ և ամենուր համոզված էին, որ երկրի համար այդ ծանրագույն պահին դրությունը կարող է փրկել միայն Եփրեմը՝ իր զինվորական տաղանդով ու վճռականությամբ: Խոովքի մատնված կառավարության ղեկավար, բախտիար ցեղապետ Սամսամ Սալթանեն այս անգամ էլ դիմեց Եփրեմին:

Եվ Եփրեմը գործի անցավ՝ նախարարների խորհրդի նիստում խոստանալով 24 ժամում փակել խնդիրը[3]:

Թեհրանի ռուսական դեսպանության՝ Պետերբուրգ հղած զեկուցագրում նշվում էր. «Թեհրան են գալիս առայժմ աննշան

---

[1] *Տե՛ս **"Международные отношения в эпоху империализма"**, серия II, т. XVIII, Москва, 1939, ч. 2, № 529.*

[2] *Նույն տեղում:*

[3] *Տե՛ս **«Հայրենիք»**, № 2 (313), փետրվար, 1952, էջ 96:*

հեծյալ խմբեր և բախտիար հետևակներ: Եփրեմը կազմում է հայ ֆիդայիների և կամավորների ջոկատ*, պատրաստվում է ուժգին հակահարվածի Մահմեդ Ալի շահին»[1]:

Սահմանադրական կառավարությունը Եփրեմին հեղափոխական զորքերի ընդհանուր հրամանատար նշանակեց: Նա նաև Սամսամ Սալթանեի գլխավորած նոր կառավարության կազմում ստեղծված՝ Հասարակության փրկության կոմիտեի և 12 հոգուց բաղկացած Ռազմական ղեկավար կոմիտեի անդամ էր[2]:

Կառավարությունը նրան հանձնարարեց մշակել թշնամուն ջախջախելու ծրագիրը: Եփրեմի ծրագրի հիմքում ընկած էր հետևյալ սկզբունքը. թեև թշնամին բազմաքանակ է, բայց Թեհրանի մատույցներում արդեն զրկված է ապահով խարիսխներից և ամուր թիկունքից, հետևապես պետք է ավելի խորացնել զորքերի ու թիկունքի միջև խզումը: Եփրեմը չէր շտապում հակահարձակման անցնել և սպասում էր, որ գահընկեց շահի բանակը որքան հնարավոր է ավելի հեռանա Կասպից ծովի ափերից, այսինքն՝ թուրքմենական տափաստանում ունեցած իր հենակետներից:

Եփրեմի ռազմական ծրագրի իրականացումը հանդիպեց որոշ խոչընդոտների, որոնցից առավել անցանկալին բախտիար սահմանադրականներից շատերի անհասկանալի պահվածքն էր, նրանց անորոշ դիրքորոշումը[3]: Նրանք Մահմեդ Ալիի ճամբար

---

* Եփրեմը Նոր Ջուղա՝ Հովհաննես խան Ղարախանյանին 1911 թ. հուլիսի 14-ին հղած հեռագրով նրանից խնդրում էր Իսֆահանի մերձակա Զարմահալի և Փերիայի գավառների հայկական գյուղերից հավաքագրել «հայ անպսակ երիտասարդներից» երկու հարյուր հոգի և նրանցով հեծելազորք կազմել՝ նրանց Թեհրանի պաշտպանության նպատակով օգտագործելու համար, խոստանալով ճանապարհածախս, «հրացան, ձի եւ բաւարար ռոճիկ»: Փերիայի գյուղերից ընդառաջում է 30 հայ երիտասարդ, որոնցից 17 հոգին՝ միայն Խոյգան գյուղից. տե՛ս **Լեւոն Գ. Մինասեան**, «Պատմութիւն Փերիայի հայերի (1606-1956)», Անթիլիաս, 1971, էջ 149-150: Կամավորների ըստ գյուղերի անվանական ցանկը տե՛ս նույն տեղում, էջ 150-151:

[1] **"Сборник дипломатических документов..."**, вып. VII , с. 85.

[2] Տե՛ս **«Սուրհանդակ»**, 14 հուլիսի 1911 թ.:

[3] Տե՛ս **"Сборник дипломатических документов..."**, вып. V, с. 100-101.

անցնելու սահմանին էին[1]: Զուր չէր, որ Թեհրանում Ռուսաստանի դեսպանորդ Ներատովի պաշտոնական գրության մեջ ասվում էր. «Այժմյան ճգնաժամում հատկապես հանելուկային դեր են խաղում բախտիարները ...»[2]:

Ռազմական ծրագիրը կազմելու և դրա կենսագործման համար կռվի ընթացքում Կ. Պոլսում տեղի ունեցավ ՀՅԴ Վեցերորդ ընդհանուր ժողովը (1911 թ. օգոստոսի 17 – սեպտեմբերի 17): Ժողովի ընդունած բանաձևում Դաշնակցության պարսկական կազմակերպությունների գործունեության մասին ընդունվել էին մի շարք կետեր, որոնք նրանց նպատակամղում էին չարունակելու կուսակցության նախորդ երկու համագումարների նշած քաղաքական գիծը: Ժողովը որոշել էր.

«1. Յանձնարարել Կովկասի ու Թուրքիոյ դաշնակցական մարմիններուն մարտական եւ զինական աւելի մեծ համեմատութեամբ մասնակցիլ Իրանի ազատագրական գործին:

2. Տալ Կենտ[րոնական]. Կոմիտէի իրաւասութիւններ Թեհրանի Կոմիտէին, զօրեղացնել զայն նոր անդամներով եւ յանձնարարել պարսկական երկու Կենտրոնական Կոմիտէներուն փոխադարձ համաձայնութեամբ վարել սահմանադրական ազատութիւններու համար կռիւը:

3. Շարունակել սերտ յարաբերութիւն պահել ռամկավար տարրերու հետ՝ գործակցելով անոնց այն բոլոր պարագաներուն մէջ, երբ անհրաժեշտ կը ներկայանայ պաշտպանելու ու ամրապնդելու սահմանադրական կարգերը:

Աչխատիլ անոնց հետ՝

ա. Ապահովել տալու հիմնական օրէնքներով՝ մեր ազգային-մշակութային ինքնավարութիւնը եւ պարտադիր տուրք գանձելու իրաւունքը պարսկահայոց ազգային ժողովին համար:

բ. Ջնջել տալու «Կանոն էսասի»-էն սահմանադրական ոգիին հակասող բոլոր սահմանափակումները, որոնք հիմնուած են ազգային կամ կրօնական խտրութիւններու վրայ (այսպէս, ոչ մուսուլմաններուն դէմ դրուած արգելքը պետական բարձր

---

[1] Տե՛ս *“Сборник дипломатических документов...”*, вып. VII, с. 34.

[2] *“Международные отношения в эпоху империализма”*, серия II, т. XVIII, ч. 2, № 529.

պաշտօններ վարելու եւ զինուորագրութեան մասնակցելու մէջ եւ այլն):

գ. Առաջարկել Իրանի սահմանադրական կառավարութեան՝ յարքունիս գրաւել սահմանադրութեան դաւաճանողներուն կալուածներն ու յանձնել զանոնք գիւղական համայնքներուն»[1]:

Ջսպասելով միապետականների վճռական հարձակմանը Թեհրանի վրա, սահմանադրական կառավարությունը 1911 թ. հուլիսի երկրորդ կեսին Մահմեդ Ալիի զորքերի դեմ ուղարկեց 1000 հոգանոց մի ջոկատ՝ Սարդար Մուխիի հրամանատարությամբ: Ջոկատին միացան բախտիարների 300 հեծյալներ՝ Մոին Հոմայունի գլխավորությամբ: Այդ միացյալ զորամասը Ֆիրուզկուհի մոտ գրոհեց թշնամու վրա և նրան զգալի կորուստներ պատճառեց: Գրեթե նույն ժամանակ, կառավարական զորքերի մի ուրիշ ջոկատ, որի մեջ էին նաև հայ մարտիկների խմբերը Քեռու, Խեչոյի և Գրիգորի հրամանատարությամբ, Մազանդարանում, Բալաղահի մոտ կատարյալ պարտության մատնեց հակառակորդին:

Բայց Մեշհեդից Թեհրան եկող ճանապարհի ստորին հատվածներում Սարդար Արշադի բանակը հաջողություն ձեռք բերեց: Նրա դեմ ուղարկված բախտիար Զարղամ Սոլթանի ջոկատը ջախջախվեց Աբաղանի մոտ և նահանջեց: Վերջինիս օգնության չտապող Ամիր Մոզաֆֆար Բախտիարիի գլխավորած ջոկատը օգոստոսի 20-ին նույնպես պարտություն կրեց և թշնամու գերազանցող ուժերի ճնշման տակ սկսեց նահանջել:

Լուր առնելով, որ Զարղամ Սոլթանը և Ամիր Մոզաֆֆարն անհաջողություն կրելով նահանջում են, Եփրեմը Սարդար Բահադուրի և Սարդար Մոհթալիոնի հետ ընդառաջ գնաց հակառակորդին: Սահմանադրական զորքը բաղկացած էր 300 հայ մարտիկներից և 300 բախտիարներից: Եփրեմի օգնականը Քեռին էր, իսկ նրանց հիմնական աջակիցը՝ Դաշնակցական Խեչոն (Աչոտ խան):

Դուրս գալով կռվի՝ Եփրեմը հրատարակում է պարսկահա-

---

[1] *Տե՛ս* ***Յովսէփ Յովհաննիսեան****, Յուշեր, էջ 169:*

յերին ուղղված հետևյալ կոչը. «Մահն անխուսափելի է. այսպէս թէ այնպէս մէկ օր մեռնելու ենք: Ուրեմն էլ ինչո՞ւ վախենանք մեր հարազատ Իրանի փառաւոր սահմանադրութեան հոչակած ազատութեան կարմիր դրօշի տակ մեռնելուց: Զինուեցէ՛ք եւ կռուի դաշտ դուրս եկէ՛ք, ազնուօրէն կատարէ՛ք ձեր քաղաքացիական պարտքը»[1]:

Նախապատրաստելով իր արկածախնդրությունը՝ Մահմեդ Ալին, նրա եղբայրը և մերձավորները չէին կարող նկատի չունենալ Եփրեմի գործոնը, հաշվի չառնել կովկասցի կամավորների և մասնավորապես հայերի մարտական ուժը: Ահա թե ինչո՛ւ վերջիններիս չեզոքացնելու նպատակով Սալար Դովլեն հեռագիր հղեց Ատրպատականի հայոց թեմին, հիշեցնելով, որ Պարսկաստանի հայ բնակչությունը մշտապես օգտվել է երկրի կառավարության ընձեռած արտոնություններից՝ ապրելով ազատ, ինչպես կապրեր իր հայրենիքում: Ուստի, գրում էր նա, մենք՝ Մահմեդ Ալի շահի բոլոր կողմնակիցներս, համոզված ենք, որ հայերն այս անգամ հանդես չեն գա օրինական իշխանության վերականգնման դեմ[2]: Միաժամանակ, Սալար Դովլեն հեռագրեր ուղարկեց Թեհրանում արտասահմանյան դեսպաններին: Այդ հեռագրերի բովանդակությունը հանգում էր հետևյալին. եթե հայերն այս անգամ նույնպես խառնվեն իրանցիների ներքին կռիվներին, ապա հետագայում շահի կառավարությունը իրեն պատասխանատու չի զգալու նրանց բաժին ընկնելիք գործողությունների համար[3]:

Նախկին շահը և նրան շրջապատողները ձեռնարկեցին ուրիշ քայլեր ևս: Դրանցից մեկը 1911 թ. հուլիսին նրանց կողմից Արշակ խան Գորոյանի ուղևորության կազմակերպումն էր դեպի Եվրոպա, ուր նա հավանաբար հատուկ առաքելություն պետք է ունենար՝ Շվեյցարիայում հանդիպեր ՀՅԴ ղեկավարության հետ և նրան խորհուրդ տար հեռու կանգնել Պարսկաստանի հեղափոխական շարժումից՝ ամենից առաջ մտահոգ լինելով պարսկահայության ֆիզիկական անվտանգության հարցերով:

---

[1] *Տե՛ս «Ժայռ», № 54, 28 օգոստոսի 1911 թ.:*

[2] *Տե՛ս "Баку", 29 июля 1911 г.*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

ԳԵՆԵՐԱԼ-ԱԴՅՈՒՏԱՆՏ ԱՐՇԱԿ ԽԱՆ ԳՈՐՈՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՊԱՐՍԿԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

Նախկին շահ Մահմեդ Ալիի՝ Եվրոպայից Ռուսաստանի վրայով Պարսկաստան մուտք գործելը վտանգավոր նոր կացություն ստեղծեց նաև պարսկահայության համար: Բոլորը նորից սկսեցին աշխուժորեն և վախով լի քննարկել, թե ի՞նչ է սպասվում իրենց, եթե հաղթեն միապետականները և գահը կրկին անցնի տապալված շահին: Չէ՞ որ բոլորին էր հայտնի, որ պարսկահայությունը սահմանադրության ջերմ կողմնակից է, հետևապես՝ վերադարձող շահի ակամա հակառակորդ: Պարսկահայոց համար ստեղծվել էր արդարև ճգնաժամային անելանելի կացություն:

Այս պայմաններում պարսկահայ գործիչներից շատերը, մտահոգ իրենց ազգակիցների ճակատագրով, նրանց հրապարակայնորեն կոչեր էին անում՝ հետ կանգնել հեղափոխությունից, չեզոք դիրք բռնել՝ հանդես չգալ ո՛չ սահմանադրականների և ո՛չ էլ միապետականների կողմում, այլ մտածել միայն խառնակ օրերում իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու մասին:

Այդ տեսակետի ամենահետևողական և ազդեցիկ դեմքերից մեկը Պարսկաստանի վերջին երեք շահերի նախկին գեներալ-ադյուտանտ Արշակ խան Գորոյանն էր:

Պարսկաստանում ստեղծված անկարգությունների և խառնակ վիճակի պատճառն Արշակ խանը համարում էր սահմանադրությունը և մեջլիսը: Նա գտնում էր, որ իր տնտեսական և մշակութային զարգացման ցածր մակարդակի պատճառով երկիրը պատրաստ չէ ունենալու եվրոպական իմաստով սահմանադրություն և խորհրդարան: Այդ երկու քաղաքական երևույթները, որոնք Պարսկաստան են ներմուծվել տասնամյակներ շարունակ երկիրը կողոպտող օտար պետություններից, միանգամայն խորթ են պարսիկ ժողովրդի ոգուն, նրա ազգային ավանդույթներին: Մարդիկ խաբվեցին ու գնացին երկիրը հե-*

---

* *Ինչպես ընթերցողը նկատում է, այս հարցում ինչ-որ տեղ համընկնում էին քաղաքական միանգամայն տարբեր հայացքներ դավանող Արշակ խան Գորոյանի և Նիկոլ Դումանի տեսակետները:*

տամնացությունից դուրս բերելու գաղափարներին իրենց նվիրյալ ներկայացնող, իրականում սուտ քարոզիչների հետևից: Սահմանադրությունն ու մեջլիսը եվրոպական պարտադրանքի արդյունքներ են: Ժողովուրդը գնաց սահմանադրություն քարոզողների հետևից, նույնիսկ չիմանալով, թե ինչ բան է դա: Պարսկաստանի աղքատ ու հետամնաց զանգվածներն անգամ կարծում էին, թե սահմանադրական կարգերի ժամանակ վերանալու է հարկ վճարելը[1]:

Արշակ խանը հատկապես մերժողաբար էր արտահայտվում մեջլիսի մասին: Նա գտնում էր, որ իր գոյության առաջին օրերից մեջլիսը երկրի համար որևէ դրական բան չի արել, բայց փոխարենը եղել է քանդիչ ու ավերիչ: Մեջլիսն իր գործունեությունն սկսեց նրանով, որ մենաշնորհ դարձրեց կառավարություն կազմելը, իսկ շահին լոկ հատկացրեց իր արդեն ընդունած որոշումների ստորագրումը: Դա քիչ համարելով, մեջլիսն այնուհետև լիովին դիմադրկեց կառավարությանը՝ նրանից խլելով գործադիր մարմնի իրավունքները: Այդ անօրինական գործողությունները կառավարության և մեջլիսի միջև խոր հակասությունների սկզբնավորման պատճառ դարձան: Ստեղծված անիշխանական մթնոլորտում անդամալուծվեց պետական մեքենան և երկիրը փաստորեն մնաց առանց քաղաքական ղեկի:

Բացի կառավարության և մեջլիսի միջև մշտական ընդհարումներից, վեճերն ու տարաձայնություններն անպակաս եղան հենց մեջլիսի ներսում: Հիմնական պատճառը պատգամավորների պաշտոնատենչությունն էր և շահամոլությունը: Մեջլիսի յուրաքանչյուր անդամ իր պարտքն էր համարում անձնական շահերն առաջ մղելու նպատակով պայքարել մի որևէ նախարարական աթոռ ձեռք գցելու համար:

Արշակ խանը գտնում էր, որ զանգվածներն ընդօրինակել են սահմանադրական իշխանությունների նման պահվածքը, որի պատճառով անբարոյականացել է ամբողջ երկիրը: Բնականաբար, այս պայմաններում ժողովուրդն սկսեց դժգոհել և ընդվզել

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 165, 2 օգոստոսի 1911 թ.:*

իշխանությունների դեմ, որի հետևանքով երկրում է՛լ ավելի խորացավ անիշխանությունը: Հենց դրանից օգտվելով, ամեն տեսակի խաներ սանձարձակ դարձան և, իրենց շուրջը հավաքելով ավազակախմբեր, սկսեցին արշավանքների դուրս գալ, հարձակումներ գործել խաղաղ բնակավայրերի վրա, կողոպտել ու սպանել անմեղ մարդկանց: Իսկ իշխանությունը փաստորեն մնաց կողքից դիտողի դերում, քանի որ անզոր գտնվեց կտրուկ միջոցների դիմելու և երկիրը խաղաղացնելու:

Լինելով միապետության ջերմ կողմնակից, Արշակ խանը ողջունում էր գահընկեց Մահմեդ Ալիի վերադարձը երկիր: Նա մերժում էր տարածված այն կարծիքը, թե շահի վերադարձով ամենից ավելի շահագրգռված է Ռուսաստանը, քանի որ նա միապետականներին ցույց է տալիս ամեն տեսակի աջակցություն: Մահմեդ Ալիի վերադարձին որևէ երկիր մասնակցություն չունի, համոզված էր Արշակ խանը, ուղղակի իր շահին երկրում տեսնել է ուզում բնակչության բացարձակ մեծամասնությունը, որը հոգնել է իշխանության կազմալուծման անկասելի ընթացքից, անիշխանության՝ գնալով է՛լ ավելի լայն ծավալումից, ընդհանուր հուզումից և չդադարող խառնակություններից: Պարսկաստանի սոցիալ-քաղաքական այս անմխիթար վիճակն է, որ նախկին շահին քաջություն ու եռանդ է հաղորդել վերադառնալու երկիր՝ հետ գրավելու կորցրած գահը: Գահի համար պայքարում Մահմեդ Ալիի գործը հեշտանում է, քանի որ ամեն տեղ, որտեղ ոտք է դնում, բնակչությունը նրան դիմավորում է բերկրանքով, մտածելով, որ լավ է ունենալ մի շահ, քան մեջլիսի բազմաթիվ շահ-պատգամավորներ ու կառավարության նույնքան շահ-նախարարներ, այսինքն՝ չունենալ որևէ իշխանություն: «Ես համոզուած եմ,- ասում էր Արշակ խան Գորոյանը,- որ Մահմեդ Ալին անպայման կհասնի իր նպատակին եւ, որպէս ուժեղ իշխանութեան ջատագով, կհանգստացնի երկիրը»[1]*:*

Անդրադառնալով ստեղծված իրադրության մեջ պարսկահայոց խնդրին, Արշակ խանը նշում էր, որ, ցավոք, Մահմեդ Ալիի գահընկեցության մեջ հայերը, հատկապես Եփրեմ Դավթյանը,

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»,*** *№ 165, 2 օգոստոսի 1911 թ.:*

մեծ դեր են խաղացել: Դա պատճառ է դարձել, որ հայությունը հայտնվի գահընկեց շահի և նրա համախոհների ցասման կենտրոնում: Եվ եթե այն ժամանակ, 1909 թ., միապետական իշխանությունը հաղթանակ տաներ, ապա հայերը ջարդերից ու լայնածավալ կոտորածից դժվար թե կարողանային խուսափել: Թեև դա տեղի չունեցավ, բայց օգտվելով պարսկահայության թույլ տված սխալներից, հայության թշնամիները Պարսկաստանում տեղի ունեցած և շարունակվող քաղաքական բոլոր ցնցումների պատճառը համարում են հայերին:

Բարեբախտաբար՝ առաջին չարիքն անցավ, նշում էր Արշակ խանը, որովհետև Մահմեդ Ալին հեռանալով գահից, անցավ արտասահման և դրանով իսկ հայերն առժամանակ փրկվեցին վտանգից: Բայց հայերի համար այդ վտանգը դեռ չի անցել, ավելին՝ մեծապես հավանական է դարձել: Եթե վաղը նախկին շահը ժողովրդի աջակցությամբ հաղթականորեն նստի գահին, այն ժամանակ հայերի դրությունն իրոք կլինի ողբերգական: Եվ բոլորովին անմեղ ժողովուրդը, որ 300 տարի* խաղաղորեն ու բարեկամաբար ապրել է Պարսկաստանում, քավության նոխազ կդառնա:

Շարունակելով իր խոսքը Եփրեմի մասին, Արշակ խանը չեշտում էր, որ Եփրեմը հիմա էլ տարօրինակ առաքելություն է ստանձնել՝ Պարսկաստանն ազատել Մահմեդ Ալիի արշավանքից: Այդ է պատճառը, որ բոլորը՝ թե՛ միապետության կողմնակիցները և թե՛ հակառակորդները նախկին շահի գահակալության ճանապարհի հիմնական խոչընդոտը համարում են Եփրեմին և ընդհանրապես նրա ազգակիցներին, ուստի եթե վերականգնվի հին իշխանությունը, կասկած չկա, որ պարսկահայությունը կբնաջնջվի:

Հայերից ոմանք ասում էին, թե միապետականները լավ գիտեն, որ ոստիկանապետ Եփրեմը և շահի դեմ հանդես եկող մի խումբ հայերը Պարսկաստանի ողջ հայությանը չեն ներկայաց-

---

* Այդպես է ուղերձում: Երևի նկատի ունի Շահ Աբբաս I-ի՝ XVII դարի սկզբին իրականացրած հայոց բռնագաղթը հայրենիքից դեպի Պարսկաստան:

նում, որ Եփրեմն իրեն հայության ներկայացուցիչ համարելու բարոյական ու իրավական որևէ իրավունք չունի, հետևաբար պարսկահայությունն ամենևին չի կարող պատասխանատու համարվել մի առանձին անհատի կամ անհատների մի խմբի գործողությունների համար: Վերջապես, կային հայեր, որոնք ասում էին, թե Եփրեմի վրա ներկա դեպքում պետք է նայել իբրև մի կառավարչական պաշտոնյայի, որը ոռճիկ է ստանում և պարտավոր է հնազանդվել իր կառավարության հրամաններին:

Իհարկե, այդ ամենը ճիշտ էր, բայց մոռացվում էր մի կարևոր հանգամանք. Պարսկաստանը եվրոպական երկիր չէր, թեև համարվում էր եվրոպական իմաստով պետություն: «Մշակի» քաղաքական վերլուծաբան և խմբագիր Համբարձում Առաքելյանը գրում էր, թե պարսիկ ժողովուրդը եվրոպական ժողովուրդ չէ: Այդ երկիրը և ժողովուրդը դեռ գտնվում են զարգացման այն շրջանում, երբ գերակշիռ դեր կատարողը «ցեղ» և «կրոն» հասկացություններն են: Եթե մի հայ, մի ասորի, մի հրեա, մի փոքրիկ գյուղի բնակիչ կատարում է մի հանցանք՝ գողություն, մարդասպանություն, ավազակություն, ապա թե՛ կառավարության և թե՛ ժողովրդի աչքին մեղավոր է համարվում ոչ թե (ոչ միայն:- Հ. Ս.) տվյալ հանցավոր անհատը, այլ ամբողջ գյուղը, որի բնակիչն է նա, ամբողջ ցեղը, որին պատկանում է նա[1]:

Հոդվածագիրը օրինակ էր բերում Ղարադաղի գավառում մի հայ անհատի կատարած հանցանքը՝ հարկ չէր վճարել և հայհոյել էր խանին: Դրա համար պատասխանատու էր համարվել ամբողջ գյուղը և մեծ տուգանքներով քավել էր համայնքի հանցավոր անդամի մեղքը[2]:

Զուգահեռ անցկացնելով Եփրեմի հետ, Համբարձում Առաքելյանը շարունակում էր. «Թէ՛ Մահմեդ Ալի շահը, ուրեմն նաեւ ամբողջ դաջարեան ցեղը, թէ՛ ամբողջ պարսիկ ժողովուրդը յանձինս Եփրեմի եւ նրա հայ ընկերների տեսնելու են ոչ թէ անհատներ, պաշտօնեաներ, կառավարութիւնից ոռճիկ ստացող ծառայողներ, այլ միեւնոյն ժամանակ՝ նաեւ հայեր, որոնց

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 167, 4 օգոստոսի 1911 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

արարքի համար պատասխանատու են բոլոր նրանց ցեղակից եւ դաւանակից հայերը: Մահմեդ Ալի շահի դէմ մղած կռուի մէջ Եփրեմն իր խմբով յաղթակա՞ն դուրս գայ, թէ՞ պարտուած, ամբողջ հայ ժողովուրդն է կոչուելու պատասխանատուութեան՝ շահի կամ ժողովրդի կողմից»[1]:

Պարսկաստանին համակած քաղաքական ճգնաժամի պայմաններում, երբ տեղի էին ունենում պատմական խոշոր իրադարձութիւններ, ի՞նչ դիրք պետք է բռնեին պարսկահայերը, երբ երկու տարբեր ուժեր և հոսանքներ – առաջադիմական և հետադիմական – ոգի ի բռին առճակատում էին իրար տապալելու նպատակով, երբ ներքին եղբայրասպան լայնածավալ կռիվ էր ծագել, որը կարող էր երկիրը տանել ծայրահեղ թշվառութեան, քայքայման ու ավերմունքի և նոյնիսկ քաղաքական անկախութեան կորստի:

Արդյո՞ք հայերն այդ բախտորոշ օրերին Պարսկաստանում պետք է չեզոք ու ձեռնպահ մնային, թե՞, ընդհակառակը, պետք է ներգործուն մասնակցութիւն բերեին բորբոքված կռվին:

Արշակ խան Գորոյանի պատասխանը միանշանակ բացասական էր: Նա նշում էր, թե հայերի ի՞նչ բանն է խառնվել Պարսկաստանի ներքին քաղաքական գործերին: Նրանք պետք է չեզոք մնան և չմասնակցեն միևնոյն իսլամին պատկանող երկու կողմերի միջև տիրող կռվին: Հարկավոր չէ Պարսկաստանում էլ հայկական հարց ստեղծել այնպես, ինչպես գոյութիւն ունի Թուրքիայում: Խնամակալը և մեջլիսը չպետք է հանձնարարեին Եփրեմին մի այդպիսի դեր. նրանք հայերին չպետք է մղեին պատերազմելու պարսիկների դեմ: Բայց եթե նրանք այդ բանն արել են, մենք ամեն կերպ պետք է աշխատենք գոնե հիմա հեռու պահել Եփրեմին և իր ընկերներին որևէ միջամտութիւն գործելուց: «Մենք պէտք է բոլոր ոյժերով աշխատենք առաջն առնելու այն կորստի եւ կոտորածի, որը պատրաստւում է Պարսկաստանի հայերի համար: Համարեա ամբողջ մեջլիսը կատաղի պաշտպան է սահմանադրութեան՝ ունենալով իր

---

[1] **«Մշակ»**, № 165, 2 օգոստոսի 1911 թ.:

համախոհները: Թող նրանք էլ պատերազմեն էքս-շահի դէմ»[1]:

Այս մտորումներն ունեցող Արշակ խանը որոշում է Բաքվի վրայով մեկնել Եվրոպա, որպեսզի այդ ուղղությամբ գործի ազատ ու անկաշկանդ:

Նախքան Պարսկաստանից ուղևորվելը նա մի ընդարձակ նամակ է գրում Եփրեմին, որտեղ իբրև բարեկամ և իբրև հայ նրան աղերսում է չեզոք մնալ և հայերի կորստյան պատճառ չդառնալ: Նա չեշտում էր, որ գահակորույս և աքսորյալ շահի հանդուգն արշավանքը Պարսկաստանի այժմյան իշխանության դեմ կատաղի դիմադրության է հանդիպելու կառավարական ուժերի կողմից և վերջանալու է մեկի կամ մյուսի ահեղ կոտորածով: Ավելի հավանական է, որ հաղթությունը տանի Մահմեդ Ալին: «Պէ՞տք է արդեօք պարսկահայի ճակատագիրը ենթարկել վտանգաւոր խաղի: Պէտք չէ: Հայ յեղափոխականների մասնակցութիւնը պարսկական յեղափոխութեանը կատաղութեան է հասցրել շահին եւ նա երդուել է հայերին պատուհասել ու պատժել՝ իր դէմ զէնք վերցնելու համար: Այս պայմաններում ես չեմ կարող անտարբեր լինել եւ լռել. դա կլինէր յանցանք ազգիս հանդէպ արդի ծանրագոյն պարագայում»[2]:

Վտանգը սպառնում էր պարսկահայոց գոյությանը: «Կառավարութիւնը Ձեզ կը յանձնէ գլխաւորապէս պատերազմի բախտը, վստահ լինելով Ձեր եւ ձերինների քաջագործութեան վրայ, որոյ ապացոյցը բազում անգամ տուած էք Դուք, գործի ամբողջ ծանրութիւնը եւ վտանգը ձեր վրայ առնելով»: Եվ այժմ, գրում էր նա, «որ յօժարակամ ստանձնել էք մի վտանգաւոր դեր խաղալ արդի Պարսկաստանի քաղաքականութեան մէջ, արդեօ՞ք խորհել էք դրա հետեւանքների մասին, կշռե՞լ էք Ձեր եւ Ձեր ընկերների բարոյական պատասխանատուութեան չափը»: Ապա՝ «Ես ստիպուած եմ յանուն Պարսկաստանի հայերի եւ ի սէր ազգիս Ձեզ ասել, համոզել ու ջանք առնել ետ կանգնեցնել տալ զՁեզ Ձեր վճռից: ... Մենք օտարակրօն ենք, մենք պարտա-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 165, 2 օգոստոսի 1911 թ.:

[2] Նույն տեղում:

ւոր ենք երկրի օրէնքներին եւ կառավարութեանը հպատակուել՝ ինչպիսին էլ լինի այն»: Նշելով, որ պարսկահայությունը անպայման տուժելու է հայ հեղափոխականների անխոհեմությունից, Արշակ խանը վկայակոչում էր Սալար Դովլեի՝ Սինա քաղաքից Թեհրանի բոլոր օտար դեսպանատների հասցեով ուղարկած հեռագիրը, ուր ասված էր. «Եթէ հայերն այս անգամ էլ խառնուեն այժմեան կռիւների մէջ, ապագայում շահի կառավարութիւնը որեւէ կերպով պատասխանատու չէ հայերին հասանելիք աղէտների համար»[1]:

«Հայ ժողովուրդը,- նամակի վերջում գրում էր Արշակ խանը,- պիտի տուժի եւ այնժամ նա միակ պատասխանատուն Ձեզ կճանաչի, որովհետեւ դուք հայ էք եւ ինչ որ գործէք՝ հայութեան կը պատկանի ... Պատմութիւնը այս ամենը պիտի արձանագրէ եւ դատապարտէ յանցաւորին»[2]:

Թեհրանից ուղևորվելով, Արշակ խանը Էնզելիից հեռագրում է պարսից անչափահաս շահի խնամակալին և նրան մեղադրում անմեղ հայերին ահավոր վտանգների առջև կանգնեցնելու համար: Նա գրում էր. «...Եւ այս անտեղի աղէտի պատճառն Եփրեմ խանի մասնակցութիւնն է երկու իսլամ կուսակցութեան պայքարին մէջ եւ գործում է համաձայն Ձերդ Բարձրութեան հրահանգին եւ հրամանին: ... Ուստի յանուն Պարսկաստանի հայոց գալիս եմ խոնարհաբար աղաչել Ձերդ Բարձրութեանը, որ չնորհ անէք անմիջապէս արգելել Եփրեմ խանը մասնակցելու եւ խառնուելու իսլամ երկու կուսակցութեան մէջ, եւ կամ մի՛ թողէք, որ պատմութիւնը Ձերդ Բարձրութիւնը արձանագրէ որպէս Պարսկաստանի հայոց արու եւ էգի կարմիր ոճրագործը, այն ազգի, որ ամբողջ երեք դար համերաշխ եւ հանգիստ ապրած է Պարսկաստանի իսլամ զանազան ցեղերու հետ»[3]:

Էնզելիից նախարարների խորհրդի նախագահին տված հեռագրով Արշակ խանը նրան ներկայացնում է մոտավորապես նույն բովանդակության խնդրանք և հույս հայտնում, որ կառա-

---

[1] ***«Մշակ»,*** *№ 165, 2 օգոստոսի 1911 թ.:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

վարությունը միջոցներ ձեռք կառնի Եփրեմ խանին հետ պահելու չահի դեմ կռվի գնալուց[1]:

Արչակ խանը էնզելիից նաև հեռագրում է պարսիկ հոգևորականության պարագլուխներ Աղայե Սադր Ուլեմային, Աղայե Իմամ Ջումային, Աղայե Սեյիդ Քեմալոդդինին: Նա գրում էր, թե ինքը վրդովված է այն բանից, որ պարսից խնամակալի հրահանգի և հրամանի համաձայն հայազգի Եփրեմը խառնվում է պարսից երկու հակառակորդ կողմերի գործերին: «Յանուն Պարսկաստանի հայոց գալիս եմ ձերդ պատուելի կրօնապետներիդ աղաչելու, որ մասնաւոր ուշադրութեան առնելով իմ խնդրանքը, կտրուկ միջոցներով այդ չարիքի առաջն առնէք եւ չթողնէք, որ ապագայում պատմութիւնը մրոտէ պարսիկ ազգը: Ձեզ նկատել եմ տալիս, որ խնամակալի հրահանգի համաձայն Եփրեմ խանի այս վերջին օրերի միջամտութիւնն արդէն ահռելի տպաւորութիւն է թողել ժողովրդի վրայ: Դրա անմիջական հետեւանքներից մէկը եղաւ Ինար գիւղաքաղաքում երեք անմեղ հայերի սպանութիւնը»[2]:

Վերջապես, հասնելով Բաքու, Արչակ խանն այդտեղից հեռագրում է էջմիածին, կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցին: Հեռագրում ասված էր. «Պարսկաստանի ներկայ ճգնաժամն ինձ վրայ սրբազան պարտականութիւն է դնում՝ յանուն հայոց Պարսկաստանի դիմել Ձերդ Բարձր Սրբազնութեան եւ աղաչել. կանգնեցրէ՛ք հայազգի Եփրեմ խանի կողմից Պարսկաստանի այժմեան երկու խլամ կուսակցութիւնների պայքարին խառնուելուց, փակեցէ՛ք ապագայ զարհուրելի աղէտների ու չարիքների առաջը: Պէտք է թողնել, որ պարսկահայը պարսիկի հետ ապրի համերաշխ, ինչպէս եղել է դարեր շարունակ»[3]:

Ինչպես տեսնում ենք, Արչակ խանը ձգտում էր հասնել նրան, որ նշված բարձրաստիճան պետական պաշտոնյաներից և կրոնական պետերից յուրաքանչյուրն իր տրամադրության տակ եղած միջոցներով ազդեր Եփրեմի վրա և արգելք հանդիսանար

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 165, 2 օգոստոսի 1911 թ.:

[2] Նույն տեղում: Տե՛ս նաև **“Баку”**, 6 августа 1911 г.

[3] **«Մշակ»**, № 165, 2 օգոստոսի 1911 թ.:

Մահմեդ Ալիի դեմ նրա արշավանքին:

Բաքվում Արշակ խանը հարցազրույց է ունենում "Баку" թերթի թղթակցի հետ: Վերջինիս հարցին, թե ինչո՞ւ պարսկական հեղափոխությանը հայերի մասնակցության մասին իր հայացքները էապես տարբերվում են շատ ազգակիցների հայացքներից, նա պատասխանում է. «Իմ բարոյական պարտքը եւ ազգային զգացմունքը թելադրում են ինձ նուիրուել այդ միսիային՝ իմ ժողովրդին վերահաս վտանգից փրկելու համար»[1]:

Այստեղից Արշակ խանը երկրորդ ընդարձակ նամակն է գրում Եփրեմին՝ նրան խնդրելով «չեզոք մնալ ազգի համար կործանարար իրադարձություններում»[2]:

Պարսկական իրադարձությունների, ինչպես նաև Եփրեմի և ընդհանրապես հայերի դիրքորոշման մասին այդ օրերին "Баку" թերթի թղթակցի հետ զրույց է ունենում նաև Արշակ խանից մեկ շաբաթ հետո Թեհրանից Բաքու եկած՝ Պարսկաստանի փոստի նախկին գլխավոր տեսուչ ֆրանսիացի Շարլ Դևիլը՝ լիովին պաշտպանելով նրա տեսակետները:

"Баку" թերթում հայտնված Արշակ խանի և Շարլ Դևիլի մոտեցումները կովկասյան մի շարք թերթերի համար առիթ դարձան լայնորեն քննարկելու հայերի դերը իրանական իրադարձություններում: Այդ հարցը մեծ արձագանք ստացավ Թիֆլիսի «Սուրհանդակ», «Հորիզոն» և «Մշակ» թերթերում:

Հարկ է նշել, որ նախկինում ևս Անդրկովկասի հայկական թերթերը պարսկական հեղափոխությանը հայերի մասնակցության հարցը արժանացրել էին չթուլացող ուշադրության: Ինչպես այն ժամանակ, այժմ նույնպես հայկական ազատական և եկեղեցական օրգանները վճռականապես հանդես էին գալիս պարսկական իրադարձություններին Եփրեմի ու հայերի մաս-

---

[1] **«Մշակ»**, № 165, 2 օգոստոսի 1911 թ., տե՛ս նաև **"Баку"**, 29 июля 1911 г.: Եթե Արշակ խանին լիովին պաշտպանում էր **"Баку"** թերթի խմբագիր Քրիստափոր Վերմիշյանը (Վերմիշև), ապա **"Каспи"** թերթի 1911 թ. 171-րդ, 174-րդ և 183-րդ համարներում տպագրած հոդվածներով նշանավոր բոլշևիկ Վլադիսլավ Կասպարովը խստորեն դատապարտում էր Արշակ խանի և նրա հետ համախոհ Քր. Վերմիշյանի տեսակետները:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 165, 2 օգոստոսի 1911 թ.:

նակցության դեմ, իսկ դաշնակցական, հնչակյան, սոցիալ-դեմոկրատական, այդ թվում բոլշևիկյան, մամուլի օրգանները նույնքան վճռականորեն քարոզում էին հակառակը:

Որքանո՞վ էր իրավացի Արշակ խան Գորոյանն իր խորհրդածություններում:

*Իրոք, Արշակ խանի տագնապները հիմք ունեին: Թեկուզ կարելի է վկայակոչել Մահմեդ Ալիի՝ 1911 թ. հուլիսի վերջերին գրած նամակը իր որդուն՝ Սոլթան Ահմեդ անչափահաս շահին: Ահա՛ դա. «Իմ որդի՛, չգիտեմ քեզ հայտնի՞ է, որ ես արդեն վերադարձել եմ իմ Իրան և գտնվում եմ քեզանից ոչ շատ հեռու: Թուրքմեններն ամեն տեղ ցնծությամբ և հանդիսավորապես են դիմավորում ինձ՝ հավաքվելով իմ շուրջը: Ինձ լուրեր են հասնում, որ մեր թշնամի սահմանադրականները, չբավականանալով նրանով, որ ուղիղ երկու տարի է, ինչ քեզ բաժանեցին ինձանից և զրկեցին ինձ իմ օրինական գահից, այժմ էլ ամեն ջանք գործ են դնում քեզ հավատացնելու, որ Թեհրանը վերցնելուց հետո իբր թե ես մտադիր եմ սպանել քեզ: Երբեք մի՛ հավատա այդպիսի լուրերին, բայց, համոզված եղի՛ր, **առանց արժանի պատիժ տալու չեմ թողնի մեր թշնամի սահմանադրականներին** (ընդգծումը մերն է:- Հ. Ս.): Ուզում էի նաև հաղորդել քեզ իմ գործողությունների ծրագիրը, բայց երկյուղ եմ կրում, որ այս նամակը կընկնի մեր թշնամիների ձեռքը:*

Հույս ունենալով Թեհրանը վերցնել, մնամ քո հայր՝ Իրանի շահ Մահմեդ Ալի»[1]:

*Բայց Արշակ խանի ոչ բոլոր դատողություններն էին սառն ու ճշմարիտ, ինչը թելադրված էր իր կյանքի նախորդ շրջանի ազդեցությամբ: Լինելով պարսից նախորդ երեք շահերի թիկնազորի պետը, նա, ինչ խոսք, երանությամբ էր հիշում անցյալը՝ ամենօրյա շփումը պետության բարձրագույն անձանց հետ, շրջապատի հարգանքի վայելումը, արժանավայել ու բարեկեցիկ կյանքը: Հիմա, Մահմեդ Ալիի գահընկեցությունից հետո, նա կորցրել էր իր առանձնաշնորհումները: Պատահական չէ, որ շահերի գլխավոր համհարզն **ամեն ինչում** պաշտպանում էր*

---

[1] ***«Մշակ»**, № 165, 2 օգոստոսի 1911 թ.:*

նախկին շահին և ընդհանրապես միապետական կարգերը, իսկ սահմանադրությունն ու մեջլիսը չարիք էր համարում:

Անշուշտ, սխալ էր Արշակ խանի տեսակետը, թե գահին Մահմեդ Ալիի վերատիրանալուն հետևելու է պարսկահայերի գլխովին ոչնչացումը: Նախկին շահը լավ գիտեր պարսկահայությանը, գիտեր, որ նա խաղաղ ու ստեղծագործող մի ժողովրդի հատված է, որը կարևոր ներդրում է ունեցել երկրի տնտեսության, ընդհանրապես Պարսկաստանի առաջադիմության մեջ: Նա լավ գիտեր, որ շահի դեմ գործել են հիմնականում Կովկասից եկած հեղափոխական կամավորները:

*Դժվար է համաձայնել Արշակ խանի նաև այն կարծիքի հետ, թե հայերը պետք է Պարսկաստանում **լիակատար չեզոքություն** պահպանեն, որ նրանք իրավունք չունեն միջամտելու երկրում տեղի ունեցող գործընթացներին: Բայց չէ՞ որ պարսկահայերը Պարսկաստանի քաղաքացիներ էին, իսկ Պարսկահայքը իրենց հայրենիքի մի մասն է: Հայերը, որպես քաղաքակիրթ տարր, չէին կարող վճռականապես դեմ գնալ սահմանադրության ընդունմանն ու երկրում պառլամենտարիզմի հաստատմանն ուղղված առաջադիմական շարժումներին: Այլ բան է, որ նրանց ղեկավար գործիչները հարձակողական կռիվների նախաձեռնողներ ու առաջնորդողներ պետք չէ լինեին:*

*Վերջապես, 1909 թ. հունիսից Պարսկաստանի օրինական կառավարությունը համարվում էր սահմանադրականը, որի դեմ Մահմեդ Ալի շահը կռիվ էր հայտարարել: Այդ պայմաններում տեղի հայերը, իբրև պետության քաղաքացիներ, **ստիպված** ու **պարտավոր** էին պաշտպանել օրվա սահմանադրական կառավարությունը, բայց միայն այն չափով, ինչ չափով սահմանադրությունը պաշտպանում էր երկրի իրական տերը հանդիսացող պարսիկ ժողովուրդը, ավելի ստույգ՝ նրա մեծ մասը:*

Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցին 1911 թ. օգոստոսի 11-ի թվով հղած նամակում անդրադարձել էր նաև Արշակ խանի հայտարարություններին, գրելով.

«Հակառակ այն բանադրութեանց, որ տալել են Կովկասի

թերթերում Արշակ խան Գորոյեանի՝ բարոյապէս խիստ կասկածելի եւ Պարսկաստանում ոչինչ վարկ չունեցող մի անձնաւորութեան կեղծ ազգասիրական կոչերի շուրջ, կարող եմ վստահեցնել Ձերդ Բ. Սրբազնութեան, որ եթէ նախկին շահը յաջողութիւն իսկ ունենայ եւ կրկին գահ բարձրանայ, ինչ որ շատ կասկածելի է եւ օր աւուր աւելի կասկածելի է դառնում, ոչ մի իրաւացի պատճառ չի ունենայ Ատրպատականի հայերից վրէժ լուծելու: Յամենայն դէպս, ոչ մի հնար չունենք առաջն առնելու այնպիսի շարժումների, որ անտեղի կերպով պատճառ են համարում, ինչպէս օրինակ Եփրեմ խանի իւր իշխանութեան հնազանդելը եւ սահմանադրական կառավարութեան զօրքի հետ դրսից եկող թշնամու կամ ապստամբի դէմ կուելը: Մեր պարտքն է, ինչպէս Ձերդ Ամենապատուութիւնը եւս չեչտում էք, հաւատարիմ լինել այն կառավարութեան, որի իշխանութեան ներքոյ այժմ գտնւում ենք եւ եթէ գտնւեն մի խումբ հայեր, որոնք իրենց հաւատարմական զգացումով կամենան զինւորական կամ այլ ծառայութիւն մատուցանել տիրող կառավարութեան, թեմական իշխանութիւնը ոչ հնար կունենայ արգելելու եւ ոչ իրաւունք»[1]:

Կարապետ եպիսկոպոսի տեսակետին համահունչ էր խնդրի վերաբերյալ «Արօր» թերթի մոտեցումը: Վերջինս գրում էր, որ հակառակ տարածված կարծիքի, թե հայերի դերը Պարսկաստանում վերջացած պետք է համարել, իրողությունն այն է, որ պարսկահայ ինտելիգենցիան և հայ առևտրական դասը դեռ ահագին օգուտներ կարող են տալ Իրանին, որ և իրանց հայրենիքն է, և դրանով նաև պարսկահայ ժողովրդինը: Մտավորական և կրթյալ հայերը, իբրև միջնորդներ Պարսկաստանի և Եվրոպայի միջև, կարող են դեր խաղալ պարսկական պարլամենտի և կառավարության կազմում, մանավանդ որ պարսկական նոր կառավարությունը, նոր խնամակալ Նասր-յուլ-Մյուլքի օրով, անչուշտ, ոչ մի խտրություն չի դնելու իր մուսուլման և քրիստոնյա հպատակների միջև և հայրենիքին սպա-

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1901, թ. 27 և շրջ.:

սավորելու է կոչելու կարող և ձեռնհաս ուժեր՝ առանց կրոնի և ցեղի խտրության[1]:

ՆԱԽԿԻՆ ՇԱՀ ՄԱՀՄԵԴ ԱԼԻԻ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՋԱԽՋԱԽՈՒՄԸ

Արչակ խան Գորոյանի հանդիմանություններն ու խոր-հուրդները չկարողացան ազդել ծավալվող իրադարձությունների վրա:

1911 թ. օգոստոսի 24-ին կառավարական զորքը չփման գիծ դուրս եկավ Հյուսիսից Թեհրանի վրա արշավող Մահմեդ Ալիի բանակի հետ: Հակառակորդն ամեն ինչ արեց կանգնեցնելու սահմանադրական զորքերի հարձակումը, բայց չհաջողեց: Եփրեմը կատարեց իր խոստումը. ընդամենը 600 հոգու գլուխն անցած, դիմելով վճռական հակահարձակման, սեպտեմբերի 5-ին Էմամ-չայի մոտ 24 ժամում ջախջախեց ու ցաքուցրիվ արեց գահընկեց շահի՝ թվով հինգ անգամ մեծ բանակը և շրջապատման մեջ առավ նրա մնացորդները: Միապետականները տվել էին մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ: Գերի էին ընկել մի քանի հարյուր զինյալներ, որոնց մեծ մասը՝ ավելի քան 300 հոգի, թուրքմեններ էին: Գերիների մեջ էր կռվում վերքեր ստացած Արչադ Դովլեն, որը զինվորական խորհրդի որոշմամբ և Թեհրանից ստացած հրամանի համաձայն՝ գնդակահարվեց[2]:

Սեպտեմբերի 1-ին հեռագրերը հաղորդեցին, որ կառավարական զորքերը վերջնականապես ջախջախել են նախկին շահի անմիջականորեն գլխավորած զորքերը: Նշվում էր, որ Սարին, Բարֆրուշը, Շահրուդը, Սեմնանը և Դամգանը գտնվում են կառավարության ձեռքում և որ նախկին շահը փախել է[3]:

Արչադ Դովլեի բանակի պարտությունն ու մահապատիժը խոր հուսալքում առաջ բերեց միապետականների շարքերում:

---

[1] **«Արօր»**, № 1, 1 հունվարի 1911 թ.:

[2] **Տե՛ս М. Павлович, С. Иранский,** Персия в борьбе за независимость, с. 72.

[3] **Տե՛ս “Сборник дипломатических документов...”**, вып. VII, с. 128.

Հակահեղափոխական ուժերը ծանր պարտություն կրեցին նաև Թավրիզում և նրա մատույցներում: Նախկին շահի Պարսկաստան գալով քաջալերված Ատրպատականի միապետական տարրերը, հատկապես շահսևանների և ղարադաղցիների հրոսակախմբերը, խմբավորելով իրենց ուժերը, 1911 թ. հուլիսից նոր հարձակումներ էին սկսել Թավրիզի վրա:

Քանի որ Սաթթար և Բաղր խաները 1910 թ. ապրիլից գտնվում էին Թեհրանում, ուստի Թավրիզի հիմնական պաշտպանական ուժը մնացել էր դաշնակցական զինյալների ստվար բազմությունը՝ Նիկոլ Դումանի գլխավորությամբ: Նրան էին ենթարկվում նաև քաղաքի բոլոր թուրք խմբապետները:

Դումանի գլխավորած մարտիկները կարողացել էին Թավրիզը մի քանի ամիս չարունակ պաշտպանել չդադարող հարձակումներից և միապետականների բոլոր գրոհները հետ մղել:

Քաղաքի պաշտպանների շարքերը համալրվել էին Կովկասից և առանձին դեպքերում նաև Թուրքիայից եկած հայ կամավորներով: Նրանք գալիս էին սահմանի անհատական անցումներով: Թերևս բացառություն եղավ 1911 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Վասպուրականի թուրքական զորանոցների դժոխքից փախած հայ զինվորների խումբը: Իրեն համարելով պարսից սահմանադրության պաշտպան, խումբը, սակայն, առանց մասնակցելու մարտական գործողությունների, թողեց և անցավ Կովկաս, որտեղից նրա անդամների մեծ մասը մեկնեց Ամերիկա:

Թավրիզի պաշտպաններին աջակցում էր Թուրքիան՝ հիմնականում մարդկային ուժերով: Թավրիզ էին գալիս զենքին լավ տիրապետած թուրք զինվորներ և սպաներ, թնդանոթաձիգներ և ռազմական գործի ուրիշ մասնագետներ, որոնք հոժարակամ անցնում էին կռվող ջոկատների գլուխ:

Արշադ Դովլեի բանակի ջախջախումից հետո, Թավրիզի պաշտպաններն անցան հակահարձակման: Սեպտեմբերի 12-ի թվով Միլլերը Թավրիզից հեռագրում էր Թիֆլիս. «Թավրիզցի ֆիդայիներին ղեկավարում են հայերն ու կովկասցիները»[1]: Հակահարձակման հետևանքով միապետականները լիակատար

---

[1] ***"Сборник дипломатических документов..."**, вып. VII, с. 150.*

պարտություն կրեցին և հեռացան տարբեր ուղղություններով: Գերի ընկան հակակառավարական զորքերի սպաներ ու զինվորներ, բազմաթիվ ցեղապետներ ու խաներ: Վերջիններիս թվում էր Ռահիմ խան Զելեբիանլուն (նույն ինքը՝ Սարդար Նուսրեթը), որը չկարողանալով դուրս գալ շրջապատումից, գերի վերցվեց: Նրան տարան Թավրիզի բանտ, որտեղ էլ 1911 թ. հոկտեմբերին մահապատժի ենթարկվեց:

Թեհրանի մատույցներում և Թավրիզում շահի զորքերի պարտությունը դեռ չէր նշանակում սահմանադրական իշխանություններին սպառնացող վտանգների վերացում: Դրանք դամոկլյան սրի պես կախված էին լինելու հեղափոխության գլխին, եթե հակահեղափոխության ոգեշնչողը՝ Մահմեդ Ալին չարունակեր մնալ երկրում: Ահա թե ինչո՛ւ նրան գտնելու ու պատժելու խնդիրն ստացավ կարևորագույն նշանակություն, քանի որ ապաստանելով Մազանդարանում, նա այնտեղից թև էր տալիս միապետականներին: Նրան գերելու համար ստեղծվեց մի փոքր արշավախումբ, որը Սալար Ֆաթեհի (իսկական անունը՝ Միրզա Ալի խան Սարթիփ) հրամանատարությամբ շարժվեց դեպի գահընկեց միապետի գտնված վայրը: Հրամանատարի օգնականն էր դաշնակցական խմբապետ Ասլանը, որն արշավախմբի ոգեշնչողն էր և իր հերոսական պահվածքով օրինակ էր հանդիսանում հայ և պարսիկ մարտիկների համար:

Արշավախումբն անցավ Սավադկուհ լեռնանցքը, մտավ Մազանդարան և համարձակ գրոհներով գրավեց Բարֆրուշն ու Սարին, որոնք միապետականների հենակետերն էին, ապա գրավեց ու խաղաղեցրեց ամբողջ շրջանը:

Այս կռիվներում կորուստներ ունեցավ նաև արշավախումբը: Զգալի էր նաև հայ մարտիկների կորուստը՝ սպանված թե վիրավոր: Պարսկական կառավարական զորքերի բարձրաստիճան հրամանատարներից Ռաֆայել խան Ենիկոլոփյանը հոկտեմբերի 10-ին ծանր վիրավորվում է թուրքմենների դեմ կռվում: Տեղում բուժվելու հնարավորություն չլինելու պատճառով նրան տեղափոխում են Բաքու, որտեղ և հաջողվում է փրկել զինվորականի կյանքը:

Մահմեդ Ալիի զորքի ջախջախման չնորհիվ վերացավ հա-

կահեղափոխական գլխավոր վտանգավոր օջախը՝ «Թուրքմենական Վանդեան»:

Մազանդարանից դուրս մղվելուց հետո, գիտակցելով, որ Պարսկաստանի այդ մասում այլևս որևէ ուժ չի կարող իրեն սատար կանգնել, Մահմեդ Ալին հեռացավ դեպի ռուսական սահմանը և թաքնվեց Սավադկուհում:

Հակահեղափոխական օջախի ոչնչացումը Մազանդարանում Թեհրանի կառավարությանը հնարավորություն տվեց ուշադրությունը կենտրոնացնել Սալար Դովլեի ուժերին հակահարված տալու վրա:

Նախկին շահի եղբոր զորքը հավաքված էր զանազան ցեղախմբերի առավել ռազմատենչ անդամներից, որոնց մեծ մասը քրդեր էին: Հավաքագրված «զինվորը» պարտավոր էր զինվել իր հաշվին, հավաքատեղի գալ սեփական ձիով ու հագուստով: Նա իր կերակրամթերքը և ձիու կերը ինքն էր ձեռք բերում մերձճանապարհային գյուղերի բնակիչներին կողոպտելու միջոցով: Այլ խոսքով՝ Սալար Դովլեի բանակը թալանչի խաժամուժների մի հավաքածու էր:

Ահա թե ինչո՛ւ Սալար Դովլեի բանակի բազմամարդ լինելը դեռ չէր նշանակում, թե նա ունակ է դիմանալու կառավարական զորքերի հետագա հարվածներին:

Այդ բանակի դեմ ուղարկվեց բախտիար խան Ամիր Մոֆախխամի (մյուս տիտղոսը՝ Իլխան) ջոկատը, որը 1911 թ. օգոստոսի վերջերին հանդիպելով Սալար Դովլեի ուժերին, պարտություն կրեց և հետ քաշվեց Սոլթանաբադ, ուր Մոֆախխամը միացավ 500 բախտիար հեծյալներ ունեցող իր քեռու՝ Սարդար Զաֆարին (իսկական անունը՝ Խոսրով խան Բախտիարի): Բայց միապետական զորքը հաջողեց պարտության մատնել նաև այս միավորված ջոկատին և սեպտեմբերի սկզբին գրավել Սոլթանաբադը: Բախտիարները հեռացան Կում: Շուտով Սալար Դովլեն գրավեց նաև Մալաիրը՝ դրանով իսկ ապահովելով բանակի թիկունքը, որից հետո, առանց մարտի վերցրեց Համադանը, իսկ նրա գլխավոր ուժերը տեղակայվեցին Զարանդի մոտ՝ Թեհրանից 120 կիլոմետրի վրա և պատրաստվեցին հարձակման:

Հայ կամավորներից և բախտիարներից բաղկացած 1200

հոգանոց կառավարական զորքը Եփրեմի հրամանատարությամբ 1911 թ. սեպտեմբերի 11-ին դուրս գալով Թեհրանից, շարժվեց դեպի Զարանդ: Նրա հետ էին Սարդար Մոհթեշամը և Սարդար Բահադուրը: Բաղեշահ գյուղի մոտ նրանց միացան Սարդար Զաֆարի և Սարդար Ջենգ Բախտիարիի ջոկատները:

Սալար Դովլեն որոշել էր իր բանակի մի մասն ուղարկել Կում՝ այնտեղից Թեհրան արշավելու համար: Այդ մասին իմանալուն պես կառավարությունը հրահանգեց Սարդար Զաֆարին՝ կարգի բերել պարտություն կրած իր զորամասի շարքերը և Սալար Դովլեի դեպի Կում շարժվող բանակի առաջն առնել: Սարդար Զաֆարը թշնամուն հանդիպում է Սավեհում, ջարդում է նրան և սեպտեմբերի 13-ին շարժվում է դեպի Շեմսապատ: Այդ լուրն առնելուն պես՝ Սալար Դովլեն իր զորքը հետ է քաշում Նուբարանից դեպի Շահսևան Սենդի և սկսում է այնտեղ ամրանալ: Մեծ բանակն էլ Եփրեմի հրամանատարությամբ նույն գիշերը ճանապարհվում է դեպի Շեմսապատ՝ Սարդար Զաֆարին միանալու: Վերջինս սեպտեմբերի 14-ին մի նոր ընդհարում է ունենում Սալար Դովլեի բանակի մի մասի հետ և ջարդելով հետ է մղում նրան:

Սեպտեմբերի 14-ին Եփրեմի բանակը հասնում է Խանապատ, հանդիպում Սալար Դովլեի 600 հոգուց բաղկացած առաջապահ գնդին, որն առանց կռվի նահանջում է դեպի Բաղեշահ: Նույն այդ օրը Եփրեմի բանակին միանում է Սարդար Զաֆարի բանակը:

1911 թ. սեպտեմբերի 17-ին տեղի ունեցավ երկրորդ ճակատամարտը կառավարական զորքերի և Սալար Դովլեի հրոսակախմբերի միջև: Սարդար Բահադուրի և Ամիր Մոֆախխամի ջոկատները Եփրեմի ընդհանուր հրամանատարությամբ ջարդեցին Նազար Ալի խանի քրդերին, որոնք կռվի դաշտից փախան 200 սպանված և երկու թնդանոթ թողնելով:

Կառավարական զորքերից անջատվեցին 1000 ձիավորներ և սկսեցին հալածել Սալար Դովլեին:

Սեպտեմբերի 18-ին Եփրեմը մեջլիսին և կառավարությանն ուղարկեց հետևյալ հեռագիրը.

«Յաղթեցի ես նաև Սալար-ուդ-Դովլէին, մեր հինաւուրց

Իրանի սահմանադրութեան ամենաանյաղթելի թշնամուն: Հասել է պարսկական անիշխանութեան վախճանը: Այժմ մեր հայրենիքն ամէն վտանգից դուրս է, բայց այս դեռ բոլորը չէ. պէտք է հաշիւները մաքրել այդ աւանտիւրայի պատճառը եղողի՝ Մահմէդ Ալիի հետ: Ուղարկում եմ ձեզ 120 թուրքմէն եւ չահսեւան գերիներ:

Կռիւն ամենալուրջն ու արիւնահեղն էր եւ տեւեց երեք ժամ, որից յետոյ Սալարի ոյժերը բոլորովին ջարդուեցին: Մանրամասնութիւններն արդէն յայտնի են: Վաղը իմ զօրքերին ես տանում եմ ուղղակի Սալար-ուդ-Դովլէի դէմ եւ յոյս ունեմ, որ ինձ կյաջողուի ընդմիշտ վերջ դնել մեր հաշիւներին նրա հետ:

Եփրեմ»[1]:

Կառավարությունը և մեջլիսը Եփրեմին ուղարկեցին խորին շնորհակալության հեռագիր: Թեհրանը ցնծում էր:

1911 թ. սեպտեմբերի 21-ին Թեհրանից ուղարկած իր ճեպագրում Ս. Ս. Պոկլևսկի-Կոզելը նշում էր. «Մեկ շաբաթ առաջ Սալար Դովլեի հորդաներին Բաղեշահում հասցվել է վճռական պարտություն, որը համարյա զրոյի է հավասարեցրել Մահմեդ Ալի շահի վերադարձը գահին»[2]:

Կառավարական զորքը սեպտեմբերի 26-ին Բատաղեի (Սավ) մոտ վերջնական պարտության մատնեց Սալար Դովլեի գլխավորած 4000-անոց քրդական զորքին, որը կռվի դաշտում թողեց 500 սպանված[3], ունեցավ երեք անգամ չատ վիրավոր: Սահմանադրականների ձեռքն անցան ավելի քան 100 արկղ ռազմամթերք, թնդանոթներ ու գնդացիրներ[4]:

Կառավարական զորքի ջոկատների կողմից հետապնդվող բանակը և նրա ղեկավարները փախան Համադան, ապա՝ Բրուջերդ: Սահմանադրական զորքը մտավ Համադան, ուր նրա մի մասը կազմող բախտիարները, իրենց սովորության համաձայն,

---

[1] **«Մշակ»**, № 204, 20 սեպտեմբերի 1911 թ.:

[2] **"Сборник дипломатических документов..."**, вып. VII, с. 163.

[3] **Տե՛ս М. Павлович, С. Иранский,** Персия в борьбе за независимость, с. 72.

[4] **Տե՛ս «ժայռ»,** № 56, 4 սեպտեմբերի 1911 թ.:

սկսեցին կողոպտել քաղաքի և քաղաքամերձ գյուղերի բնակիչներին:

1911 թ. հոկտեմբերի 4-ին Պոկլևսկի-Կոզելը հեռագրում էր. «Որոշ ժամանակ առաջ Եփրեմը Համադանից հեռագրել է խնամակալին, որ ինքը չի կարող այլևս անտարբեր դիտել բախտիարների կողոպուտը և խնդրել է թույլատրել Թեհրան վերադառնալ: Մայրաքաղաքում համառորեն լուրեր են պտտվում, թե Եփրեմը պատրաստվում է Պարսկաստանից հեռանալ»[1]: Նույն Պոկլևսկի-Կոզելը երկու օր անց Թիֆլիս հղած հեռագրով հայտնում էր, որ Եփրեմի՝ բախտիարներին կողոպուտների և բռնությունների մեջ մեղադրելը նրա դեմ է հանել նախարարապետին և ուժեղացրել է Եփրեմի նկատմամբ բախտիարների ատելությունը[2]:

Ստանալով խնամակալի թույլտվությունը, Եփրեմը հայ կամավորների ջոկատով վերադարձավ Թեհրան՝ իր հետ տանելով գերված թուրքմեններին, իսկ բախտիարների ջոկատները մնացին Համադանում:

Թեհրան վերադարձած Եփրեմը ջերմ ընդունելության է արժանանում: Հոկտեմբերի 13-ին Թեհրանի ռուսական դեսպանությունից հեռագրում էին Պետերբուրգ. «Հոկտեմբերի 9-ին Եփրեմը վերադարձել է Թեհրան: Քաղաքի մատույցներում նրան դիմավորել են խնամակալի, կառավարության և բախտիարների ներկայացուցիչները: Վերջիններս դեռ կարողանում են թաքցնել իրենց հակակրանքը նրա նկատմամբ»[3]: Եփրեմին ընդառաջ գնացած խնամակալ Նասր օլ Մոլքը, գրկելով նրան, ասել էր. «Համբուրում եմ քեզ, աննման հերո՛ս, ժողովրդի ազատության փրկի՛չ»[4]: Հավաքված բազմահազար ամբոխի միջից լսվում էին «Ջենդերադ Եփրեմ»* բացականչություններ[5]: Մեջլիսում և կա-

---

[1] Տե՛ս *“Сборник дипломатических документов...”*, вып. VII, с. 194.

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, с. 188.

[4] Տե՛ս նույն տեղում:

* «Կեցցե՜ Եփրեմը»:

[5] Տե՛ս **«ժայռ»,** № 64, 29 սեպտեմբերի 1911 թ.:

ռավարությունում նրան հատուկ պատիվներ տվեցին: Մահմեդ Ալիի ռազմական ուժերի նկատմամբ տարած փայլուն հաղթանակների համար սահմանադրական կառավարությունը նրան չնորհում է սարդարի կոչում՝ ամենաբարձր ռազմական կոչումը Պարսկաստանում:

1911 թ. նոյեմբերի 6 (19)-ին բախտիարները Բրուջերդի մոտ կռվի մեջ են մտնում Սալար Դովլեի վերջին՝ պահեստային, ուժերի հետ և ոչնչացնում նրանց:

Եփրեմի տարած փառավոր հաղթությունից զարհուրած Սալար Դովլեն փախչում է Թուրքիա:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ՝ ՀՐԱՏԱՊ ՕՐԱԽՆԴԻՐ

Ամիսներ առաջ Պարսկաստանի սահմանադրական կառավարությունը դիմել էր ամերիկյան իշխանություններին՝ խնդրելով երկրի ֆինանսների վերակառուցման համար մասնագիտական մի հանձնախումբ ուղարկել: Ամերիկյան կոնգրեսի որոշմամբ դեռևս 1911 թ. մայիսին Թեհրան էր ժամանել հինգ ֆինանսիստներից կազմված[1] մի խումբ՝ Մորգան Շուստերի ղեկավարությամբ: Վերջինս նշանակվել էր Պարսկաստանի պետական գլխավոր գանձատան պետ և երկրի ֆինանսական համակարգի գլխավոր պատասխանատու: Մեջլիսի որոշմամբ նա ստացել էր նաև երկրի ողջ ֆինանսների, հարկերի ու պետական մյուս եկամուտների վրա հսկելու բացառիկ իրավունք[2]:

Երկրի ֆինանսների արմատական վերակառուցումը հրատապ օրախնդիր էր դարձել: Պարսկաստանն այլևս անկախ մի տերություն չէր: Տնտեսության և ֆինանսների ողբալի վիճակի պատճառով պետությունը չէր կարողանում մարել դիզված արտաքին պարտքերի գոնե տոկոսները, կատարել նվազագույն զինվորական ծախսերը և այլն:

---

[1] **«Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին»**, կազմող՝ Վահան Ա. Բայբուրդյան, Երևան, 1984, էջ 13:

[2] **"Сборник дипломатических документов..."**, вып. VI, с. 178-179, 193-195.

Անգլո-ռուսական տանդեմը թշնամաբար ընդունեց ամերիկյան այդ խմբի ներկայությունը Պարսկաստանում և մեջլիսի՝ նրան տված մեծ լիազորությունները, դրանք դիտելով որպես իրենց շահերի բացահայտ ոտնահարում[1]:

Հենվելով շահի և նրա առավել նվիրյալ կողմնակիցների ունեցվածքը բռնագրավելու մասին մեջլիսի ընդունած օրենքի վրա, 1911 թ. հոկտեմբերին Շուստերը հրաման էր տվել սկսել Մահմեդ Ալիի եղբայրներից՝ Շոաա Սալթանեի՝ Ատրպատականում ունեցած հազարավոր հեկտարներ կազմող հողերի և անհաշիվ կարողության գույքագրում անցկացնելու մասին[2]: Շատ չանցած, միապետական զորքերի ջախջախումից հետո, մեջլիսը, Մորգան Շուստերի խորհրդով, օրենք ընդունեց նախկին շահի և նրա կազմակերպած խռովության գլխավոր մասնակիցների ունեցվածքը բռնագրավելու մասին[3]:

Թեհրանի ռուսական դեսպանությունը մեծ դժգոհություն հայտնեց մեջլիսի ընդունած օրենքի դեմ, իսկ Թավրիզի ռուսական հյուպատոսը խիստ բողոք ներկայացրեց Շոաա Սալթանեի կարողության գույքագրման մասին Մորգան Շուստերի հրամանի կապակցությամբ: Ռուսական կողմին հատկապես զայրացրել էր վերջինիս «ոտնձգությունը» Մահմեդ Ալիի եղբոր ունեցվածքի դեմ, քանի որ դա գրավ էր դրված Թեհրանի ռուսական դրամավարկային հաշվառման բանկում[4]:

Ռուսական կողմի համար այլևս անհանդուրժելի էր Մորգան Շուստերի գործունեությունը և նույնիսկ նրա ներկայությունը Պարսկաստանում:

Ի պատասխան մեջլիսի ընդունած օրենքի և դրա հիման վրա Մորգան Շուստերի ձեռնարկած գործողությունների, ինչպես նաև ստանալով Անգլիայի համաձայնությունն ու աջակցու-

---

[1] **Տե՛ս Михаил Сергеевич Иванов,** *Очерки истории Ирана, с. 240-241.*

[2] **Տե՛ս *"Международные отношения в эпоху империализма"***, *сер. II, том XVIII, часть I, с. 250-251.*

[3] **Տե՛ս Михаил Сергеевич Иванов,** *Иранская революция 1905-1911 гг., с. 488-489,* **տե՛ս նաև Михаил Сергеевич Иванов,** *Очерки истории Ирана, с. 244,* ***«Մամուլ»***, *№ 3, 17 նոյեմբերի 1911 թ.:*

[4] **Տե՛ս Л. Вакс**, *Очерки истории национально-буржуазных революций на Востоке (1905-1914 гг.), Персия, Турция, Китай, ОГИЗ "Московский рабочий", Москва-Ленинград, 1931, с. 32.*

թյունը, ցարական կառավարությունը 1911 թ. հոկտեմբերի 29-ին Պարսկաստանի արտգործնախարարությանը հանձնում է վերջնագիր, իսկ նոյեմբերի 16-ին ներկայացնում երկրորդ վերջնագիրը՝ հետևյալ պահանջներով.

1) Աշխատանքից ազատել Շուստերին ու Լոկոֆրին, 2) Այլևս ծառայության չհրավիրել արտասահմանցիների՝ առանց Թեհրանում ռուսական ու անգլիական դեսպանությունների նախնական համաձայնության, 3) Փոխհատուցել ցարական զորքերը Պարսկաստան ուղարկելու հետ կապված ծախսերը:

Պահանջները չընդունելու դեպքում ցարական կառավարությունը սպառնում էր Էնզելիում ափ իջեցրած զորքը 48 ժամվա ընթացքում շարժել Ղազվինի վրա[1]:

Շուստերի ու նրա խմբի հեռացումով ավելի շատ շահագրգռված էր ռուսական կողմը, իսկ Անգլիան ուղղակի պաշտպանում էր իր «դաշնակցին»: Դա ակնառու երևաց ամիսներ անց: 1912 թ. ապրիլի 13-ին պետական դումայում Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովի արտասանած ճառի՝ Պարսկաստանին վերաբերող հատվածից. «Իհարկէ,- ասել էր նա,- մենք [Անգլիայի հետ] չէինք կարողանայ տանել ստեղծուած դրութիւնը եւ դրա հետեւանքը եղաւ յայտնի վերջնագիրը»[2]:

Ռուսական կառավարությունը Շուստերի և նրա բարձր որակավորում ունեցող խմբի հեռացումը պահանջում էր այն պահին, երբ ինչպես բրիտանական, այնպես էլ ռուսական առևտուրը մեծ չափերով տուժում էր պարսկական ֆինանսների քաոսային վիճակից:

Այդ էր պատճառը, որ դրությունը մեղմելու նպատակով պարսից կառավարությունը ցանկացավ Շուստերի փոխարեն նրա պաշտոնին հրավիրել ամերիկացի Կերնսին: Ի պատասխան այդ մտադրության, Ռուսաստանն ու Անգլիան հայտարարեցին, թե իրենք թույլ չեն տա, որ ֆինանսական խորհրդականի պաշ-

---

[1] Տե՛ս **Михаил Сергеевич Иванов,** *Очерки истории Ирана, с. 244.*

[2] Տե՛ս **«Արշալոյս»** (Թեհրան), № 2, 1 մայիսի 1912 թ.:

տոնը վարի որևէ ամերիկացի, որքան էլ հմուտ լինի իր գործի մեջ[1]:

Ամերիկյան իշխանությունները ուշի ուշով հետևում էին Մորգան Շուստերի և նրա խմբի շուրջ ծավալվող դեպքերին: ԱՄՆ-ի նախագահ Վիլյամ Հովարդ Տաֆթը և պետքարտուղար Ֆիլանդեր Չեյզ Նաքսը, չխառնվելով խնդրի քաղաքական հանգամանքներին, մտահոգություն էին հայտնել իրենց քաղաքացիների անվտանգության առթիվ[2]:

Բայց ամերիկյան կողմի մտահոգությունը չէր անհանգստացնում Պետերբուրգին, որը պահանջում էր Շուստերի և նրա գործակիցների արագ հեռանալը Պարսկաստանից: Անդրադառնալով ռուսաց այդ անզիջում պահանջին, Թիֆլիսի «Մամուլ» պարբերականը գրում էր. «Շուստերը՝ կուածաղիկը, պիտի հեռանայ եւ պարսիկ կառավարութիւնն այլ եւս իրաւունք չունի առանց ռուսաց եւ անգլիացոց կամքի նոր վարիչներ եւ պաշտօնեաներ հրաւիրել: Այլ եւս ոչ մի յոյս օտար, բանիմաց ուժերի չնորհիւ վերականգնել[ու] Իրանը»[3]:

ԵՓՐԵՄԻ ՊԱՅՔԱՐԸ ԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Դեմոկրատներն ու սոցիալիստները շարունակում էին կոչեր անել ժողովրդին անզիջում դիրք բռնելու ռուսական զորքերի և ներքին հակահեղափոխության հանդեպ, նրանց դեմ պայքարի հանել ողջ Պարսկաստանը: Այդ կոչերի դեմ կտրականապես հանդես էին գալիս սահմանադրական աջերը՝ մեջլիսից պահանջելով ընդունել ռուսական վերջնագիրը:

1911 թ. նոյեմբերի 10-ին Եփրեմը կրկին հրաժարական տվեց Պարսկաստանի ոստիկանապետի պաշտոնից: Նոյեմբերի 19-ին իր պաշտոնից հրաժարվեց Թեհրանի նահանգապետը:

---

[1] Տե՛ս «Ախուրեան» № 1, 3 հունվարի 1912 թ.:

[2] Տե՛ս «Պահակ» (Պոսթոն), № 43, 7 դեկտեմբերի 1911 թ.:

[3] «Մամուլ», № 8, 19 նոյեմբերի 1911 թ.:

Այդպիսով մայրաքաղաքում ծայրահեղորեն թուլացավ իշխանությունը, իսկ փողոցային ցույցերն ու հանրահավաքները չարունակվում էին ռուսական վերջնագրային պահանջի դեմ: Մեջլիսի բակում տեղի ունեցած բողոքի բազմամարդ հանրահավաքի մասնակիցները վանկարկում էին՝ «Անկախությո՛ւն կամ մա՛հ»: Կրկին կոչեր էին հնչում բոյկոտելու ռուսական ապրանքները:

Այդ ամենին գումարվել էր գնալով խորացող հակասությունը Եփրեմի և բախտիարների միջև: Բախտիար – Եփրեմ բարդ հարաբերությունները սկիզբ էին առել ամիսներ առաջ, երբ Եփրեմը հաղթական երթով մտել էր Համադան: Այդ և դրան նախորդած շրջանում բախտիար հեղափոխական զինված խմբերը քաղաքում և շրջակա բնակավայրերում կատարում էին խաղաղ բնակչության լայնածավալ կողոպուտներ և թալանածը տուն ուղարկում: Այդ կողոպուտները Եփրեմին վանեցին բախտիարներից: Կողոպուտի հողի վրա բախտիարների և Եփրեմի միջև տեղի ունեցան լուրջ ընդհարումներ, որոնց պատճառով վերջինս խնամակալից պահանջեց մայրաքաղաք վերադառնալու անհապաղ թույլտվություն՝ սպառնալով հակառակ դեպքում հեռանալ գործերից և մեկնել Եվրոպա: Եփրեմի՝ բախտիարներին խաղաղ բնակչության կողոպուտի ու ճնշման համար մեղադրելը նրա դեմ հանեց բախտիար նախարարապետ Սամսամ Սալթանեին (Նաջաֆ-ղուլի խան Բախտիարի) և ուժեղացրեց բախտիարների ղեկավարած դահլիճի անդամների ատելությունը Եփրեմի նկատմամբ[1]: Երեկվա դաշնակիցները հակառակորդ էին դառնում:

Ավելի ու ավելի ակնհայտ ու որոշակի դարձան դավադրության ուրվագծերը՝ ուղղված երկրում իշխանության բռնազավթմանը: Հետադիմական ուժերը ձգտում էին արձակել մեջլիսը, որից հետո Սիփահդարին նշանակել Ատրպատականի նահանգապետ՝ կառավարելու համար ռուսական գոտում, իսկ անգլիական գոտում նշանակել բախտիար խաներից մեկին:

Այդպիսով, երկրում ստեղծվել էր բացառիկ բարդ քաղա-

[1] Տե՛ս *“Сборник дипломатических документов...”*, вып. VII, с. 185, 188.

քական վիճակ. մի կողմից՝ ներկուսակցական պայքար, մյուս կողմից՝ հետադիմության դավադրություն:

Օգտվելով ստեղծված խառնակ վիճակից, առավել ծայրահեղ տրամադրված հեղափոխական-անիշխանական տարրերը, զանգվածների մարտական տրամադրությունը բարձրացնելու և ներքին հետադիմության գործողությունները չեզոքացնելու նպատակով ահաբեկչական գործողությունների դիմեցին:

Վախենալով, որ ահաբեկչությունը լայնածավալ բնույթ կստանա, հետադիմությունը կարողացավ բախտիարներին հանել հեղափոխականների դեմ:

Այդ նպատակով բախտիար Ամիր Մուջահիդը և ուրիշ խաներ, միանալով պարսից կազակներին, իրենց վրա վերցրին հասարակական կարգը պահպանելու պարտականությունները: Թեհրանի ոստիկանապետի պաշտոնը հանձնարարվեց բախտիար Յամին Նիզամին, որը և դարձավ հեղինակը զենք կրելու արգելքի մասին հրամանի, որն ակնհայտորեն ուղղված էր հեղափոխական ուժերի դեմ: Ոստիկանության շատ ծառայողներ և ոստիկանների մի մասը (որոնք նոր ոստիկանապետի այդ գործողությունները համարում էին ըստ էության միապետական), հրաժարական տվեցին կամ ազատվեցին աշխատանքից: Դա հենց բխում էր բախտիարների շահերից:

Հեռանալով պաշտոնից, Եփրեմը մի կողմ էր քաշվել գործերից: Բայց հեռու էր քաշվել ընդամենը մի պահ: Խիղճը նրան տանջում էր կատարած քայլի համար, հատկապես այն բանից հետո, երբ նոր նշանակված ոստիկանապետը, զգալով, որ անկարող է գործունեություն ծավալել ռուսական ռազմակալման պայմաններում, պաշտոնապես հրաժարական էր տվել: Այդ պայմաններում, կառավարությունը դիմեց Եփրեմին՝ խնդրելով կրկին ստանձնել նախկին պաշտոնը:

Եփրեմն այս անգամ էլ ստիպված ընդունեց կառավարության առաջարկը՝ զոհելով հեղափոխականի իր վարկը: Նա չէր ուզում փախչել պատասխանատվությունից, ընդհակառակը՝ շարունակելով իր ծառայությունը երկրին, փորձում էր փրկել սահմանադրության վերջին մնացորդները:

Բախտիարների սանձարձակ պահվածքին և ծայրահեղ ձա-

խերի ահաբեկչություններին Եփրեմը կոչտ հակազդեցություն հակադրեց: Նա հրավիրեց ֆիդայիների ղեկավարներին և նրանց առաջարկեց չատ արագ գրավել մայրաքաղաքի գլխավոր կետերը և դրանից դուրս ռազմավարական նշանակություն ունեցող դիրքերը: Նրա հրամանով սկսվեցին ահաբեկիչների և ծայրահեղ ձախերի ձերբակալություններ: Հետագա մանրամասները մենք իմանում ենք "Русское Слово" թերթի հաղորդումներից: 1911 թ. նոյեմբերի 23-ի համարում պարբերականը հաղորդում էր, որ «Երեկ (պետք է լիներ՝ երկու օր առաջ:- Հ. Ս.) հազիվ հնարավոր եղավ կանխել արյունալի բախումը բախտիարների ու բնակչության միջև»[1]: Թեհրանում իշխանությունը փաստորեն գտնվում էր բախտիարների ձեռքում: Նրանք ձգտում էին, որ մեջլիսը քաղաքի պաշտպանությունը հանձնի բախտիար պարսկական կազակներին: Քանի որ մեջլիսը չէր համաձայնում դրան, ապա բախտիարներն սկսեցին սպառնալ ուժով: Եփրեմն իր մարդկանց անմիջապես ուղարկեց մեջլիսի հրապարակ, որպեսզի հետ մղի բախտիարներին: Իրավիճակը գնալով լրջանում էր: Բայց չնորհիվ գործերից լրիվ հրաժարած Սաթթար խանի միջամտության, բախումը կանխվեց և երկու կողմերն էլ մտան բանակցությունների մեջ:

Պետք է նշել, որ բախտիարների՝ նահանջելու որոշման հիմնական պատճառը ֆիդայիների վճռական գործողություններն էին: Մնալով միայնակ, բախտիարներն ստիպված եղան բանակցությունների նստել Եփրեմի հետ: Այդ մասին լրացուցիչ տեղեկություններ կան Թեհրանում ռուսական դեսպանության՝ 1911 թ. նոյեմբերի 17-23-ին տեղի ունեցած իրադարձությունների տեսության մեջ: Այնտեղ կարդում ենք. «Նոյեմբերի 21-ին, վաղ առավոտյան, հրաժարվելով ենթարկվել բախտիարներին, ֆիդայիները, վերցնելով ժանդարմերիային պատկանող զենքն ու զինամթերքը, չարժվեցին քաղաքից դուրս և այնտեղ սկսեցին ամրանալ ... Իրավիճակը տագնապալի դարձավ: Ամեն րոպե կարող էր զինված ընդհարում բռնկվել ֆիդայիների և բախտիար-

[1] **"Русское Слово"**, 23 ноября 1911 г.

ների միջև, որոնց սկսեցին կասկածել ինչ-որ մտադրության մեջ: Խնամակալի խորհրդով և Սաթթար խանի մասնակցությամբ՝ բախումը կանխելու համար տեղի ունեցավ հաշտություն բախտիար խաների և Եփրեմի միջև, որը նորից նշանակված էր Թեհրանի ոստիկանապետ: Դրանից հետո մայրաքաղաքից առավոտյան դուրս եկած ֆիդայիները վերադարձան քաղաք ... Նոյեմբերի 23-ին ... փողոցներում քիչ էին զինվածները և, ընդհանրապես, Եփրեմի նշանակումով ավելի շատ նկատելի էր կարգուկանոնը...»[1]:

Իսկ այդ գործում վճռական էր մեջլիսի դերը, որը սակայն, չէր կարողանում քաղաքական հստակ գիծ վարել: Նրա պատգամավորները աղմկալից նիստերում հանդես էին գալիս տրամագծորեն հակառակ դիրքերից, չէին կարողանում միասնական տեսակետ մշակել ռուսական զորքերի և ներքին հակահեղափոխության դեմ պայքարի հարցում: Եփրեմը կողմնակից էր, որ երկրի համար այդ բախտորոշ պահին իշխանությունը կենտրոնացվի գործադիր մարմնում՝ կառավարության մեջ և նրան ժամանակավորապես արտակարգ լիազորություններ տալ: Նրա այդ առարկումները ձախ ուժերն ընկալեցին որպես սահմանադրությունը ոտնահարելու, ձեռք բերած ժողովրդական ազատությունները ոչնչացնելու ակնհայտ փորձ: Ավելին, նրանք Եփրեմին մեղադրում էին նաև մեջլիսը զենքի ուժով ցրելու մտադրության համար և դա այն պատճառով, որ վերջինս չարունակում էր մնալ երկրից ռուսական զորքերը ռազմական ուժով վտարելու տեսակետի վրա:

Բայց այդ մեղադրանքները չինծու էին և ունեին հստակ նպատակ՝ ժողովրդի աչքում վարկաբեկել Եփրեմին:

Իրանի պատմության այդ դրամատիկ շրջանում Եփրեմ Դավթյանի հավատամքը արտացոլված է նրա հետևյալ խորհրդածության մեջ: «Ես չեմ պահանջում, որ մեջլիսը դադարեցնի աշխատանքը: Ես միայն նշել եմ, որ անհրաժեշտ է կազմել վստահելի դահլիճ, որն ի վիճակի լինի վերացնելու ճգնաժամը:

---

[1] ***"Сборник дипломатических документов..."**, вып. VII, с. 289.*

Այդ դահլիճը պետք է լուծի նաև ներկայիս մեջլիսի գոյության հարցը»: Թե ինչպե՞ս պետք է վերաբերվել ռուսական վերջնագրին, Եփրեմն ասել է, որ իր կարծիքով՝ պետք է զիջումների գնալ, քանի որ ուժի առաջ չես դիմանա: «Շուստերը պետք է հեռանա, չնայած նա շատ է աշխատել Պարսկաստանի համար և մի ուրիշով նրան փոխարինելը դժվար է»[1]: Այնուհետև, իր համոզմունքն ավելի ամրապնդելով, Եփրեմը շարունակել էր. «Ես քաղաքականությունից քիչ եմ հասկանում, ինձ հասկանալի են միայն մոտակա անելիքները, հանուն որոնց ես միշտ պայքարելու եմ: Հիմա ես տեսնում եմ, որ Ռուսաստանն ու Անգլիան վիրավորել են Պարսկաստանին, բայց մի՞թե հնարավոր է [միաժամանակ] կռվել այդ երկու երկրների դեմ»[2]:

Եփրեմի ու նրա պես մտածողների դիրքորոշումն ըստ էության միակ ելքն էր ստեղծված դրությունից, բայց չուտով այդ դիրքորոշումը դեմոկրատները գնահատեցին որպես դավաճանություն հեղափոխության գործին, նրա նվաճումներին:

Եփրեմին դատապարտում էր նաև դեմոկրատներին միացած դաշնակցականների մի մասը, հատկապես նրանց ղեկավարները: Անդրադառնալով Եփրեմի բռնած դիրքին և նրա նկատմամբ Դաշնակցության ցուցաբերած կոշտ դիրքորոշմանը, *“Новое Время”* թերթը գրում էր, որ երբ Պարսկաստան ռուսական զորքեր էին մտցվում, նա «անցավ կարգուկանոնի կողմը և իրեն հատուկ եռանդով սկսեց հետապնդել իր քաղաքական համախոհներին ... Այդ պատճառով վերջին ժամանակներս Դաշնակցությունը հեռացրեց նրան իր գրկից, իսկ դեմոկրատական կուսակցությունը վերջնականապես երես դարձրեց նրանից՝ որպես անգլո-ռուսական դիվանագիտությանը ծախված դավաճանի»[3]:

Պարսկաստանի ծանր օրերին՝ Մահմեդ Ալիի և Սալար Դովլեի երրորդ արշավանքի շրջանում ՀՅԴ Թեհրանի կենտրոնական

---

[1] ***“Сборник дипломатических документов...”***, *вып. VII, с. 323-324.*

[2] ***Տե՛ս նույն տեղում:***

[3] ***“Новое Время”***, *24 мая 1912 г.*

կոմիտեն մերժեց օգնել Եփրեմին՝ արգելելով դաշնակցական ֆիդայիներին հանդես գալ նրա հետ, պատճառաբանելով, թե նա հետադիմության հենարան է դարձել: Անդրադառնալով այդ փաստերին, "Русское Слово" թերթն այդ օրերին գրում էր. «Երկար ժամանակ թաքցրած տարաձայնությունները Եփրեմի ու «Դաշնակցություն» կուսակցության միջև վերջին ժամանակներում սրվել էին և լայն հրապարակայնություն ստացան: Եփրեմի մասնակցությունը դեմոկրատների պատիժներին, ձերբակալումներին ու արտաքսումներին բողոք առաջացրեց (ՀՅԴ թեհրանի:- Հ. Ս.) կոմիտեում ..., որը հայտարարեց, թե Եփրեմը, լինելով պարսկական կառավարության հետադիմական քաղաքականության մասնակիցը, գործում է դավաճանի պես: Կոմիտեի հրամանով՝ «կամավոր-դաշնակցականների» մի մասը վերջերս արդեն լքել է Եփրեմի ջոկատը և ընդհատել նրա հետ ամեն տեսակ կապերը: Այժմ, երբ Սալար Դովլեի դեմ գործելու համար, նկատի ունենալով կառավարական զորքերի ծանր վիճակը, մնացել է միայն Եփրեմի ջոկատը, որը կազմված է գրեթե բացառապես հայ-դաշնակցականներից, կոմիտեն պարսկական կառավարությանը պաշտոնապես հայտարարում է, որ եթե նա բռնությունները չդադարեցնի և մեջլիսի ընտրություններ չձեռնարկի, ապա հայերից որևէ մեկը չի մնա կառավարական զորքերում»[1]:

Ինչ վերաբերում է ռուսական իշխանություններին Եփրեմի իբր ծախված լինելուն, ապա դա հերքվում է բազմաթիվ փաստերով: Դրանք ցույց են տալիս, որ նա, իբրև ռազմական ու քաղաքական գործիչ, միշտ արժանացել է Պարսկաստանը ազդեցության շրջանների բաժանած ռուս և բրիտանացի գաղութարարների ատելությանը:

Պարզապես՝ Եփրեմը 1911 թ. կեսերից զգալի չափով հեռացել էր ռազմական, քաղաքական ու դիվանագիտական այն մակերեսային սխեմաներից, որոնց չարունակում էին կառչած մնալ ոչ միայն իր քաղաքական հակառակորդները, քաղաքական դաշտում պարտություն կրած դեմոկրատ քաղաքագետնե-

---

[1] ***"Русское Слово"**, 29 апреля 1912 г.*

ը, այլև Պարսկաստանում գործող հնչակյան և դաշնակցական գործիչները:

Պարսկական հեղափոխության այդ խոշորագույն դեմքն արդեն դարձել էր ողբերգական անհատ, որի նկատմամբ մի կողմից խոր ատելություն էին տածում սահմանադրության բաղում թշնամիները երկրի ներսում և դրսում, մյուս կողմից՝ նա իր իսկ կուսակցության իրանյան կազմակերպությունների ղեկավարների նախկին աջակցությունը չէր գտնում այլևս:

Եփրեմի դիրքերի թուլացումը ուժգին հարված էր պարսկական հեղափոխությանը: Բախտիար խաները վճռական գործողությունների անցան: Նրանք նախ ձեռնարկեցին քայլեր, որոնք պետք է հնարավորինս խորացնեին առանց այն էլ ծայրահեղորեն լարված մեջլիս-կառավարություն հարաբերությունները՝ իշխանության երկու թևերը թուլացնելու համար: Նրանց խարդավանքներին առաջինը զոհ գնաց կառավարությունը:

Նախարարների խորհուրդը համաձայն էր կատարելու ռուսական վերջնագրի պահանջները, բայց մեջլիսը չարունակում էր դրանք կտրականապես մերժել: Սա նշանակում էր, որ վերջինս անվստահություն է հայտնում կառավարությանը, որը և հրաժարական տվեց: Անմիջապես, առանց մեջլիսի համաձայնությունն ստանալու, նախարարական աթոռները գրավեցին բախտիարները և ծայրահեղ աջ սահմանադրականները:

Ռուսական իշխանությունները հենց սրանց հետ էին կապում հեղափոխությունն աստիճանաբար, առանց ռազմական նոր միջամտության դեպի անկում տանելու մշակված ծրագիրը:

*Կառավարությունն իրենց ազդեցության տակ դնելուց հետո, նույն ուժերը հերթի դրեցին ռուսական ծրագրի մյուս արգելքի հաղթահարման խնդիրը. 1911 թ. դեկտեմբերին Թեհրանում իրագործվեց հակահեղափոխական հեղաշրջում՝ բռնի ուժով գրավվեց և ցրվեց մեջլիսը**, *լուծարվեց նաև անջումեննե-*

---

* *Խորհրդային պատմաբանները պարսից խորհրդարանի տապալման գլխավոր պատասխանատուներից մեկը համարում էին Եփրեմին: Փաստերը բացահայտորեն խեղաթյուրելով՝ նրանք ժողովրդի այդ նվիրյալին, ոչ ավել ոչ պակաս, համարում էին «հեղափոխության դավաճան», և սա այն մարդուն,*

րի մեծ մասը[1]: Միաժամանակ հայտարարվեց, որ հրավիրվելու է երրորդ գումարման մեջլիս՝ չնչելով ժամկետը[*]:

Փաստորեն՝ ջնջվեց պարսկական սահմանադրությունը[2]:

Հեղաշրջումը կատարեցին երեկ իրենց սահմանադրական-ներ և նույնիսկ հեղափոխականներ համարող, բայց հեղափոխության իդեալներին դավաճանած ուժերը: Հեղաշրջում կատարելուց ամենից առաջ օգտվեց դաջարական տոհմապետությունը: Վերջինիս գլխավորությամբ Պարսկաստանում նորից իշխանության եկավ հետադիմական ավատատիրական ազնվականությունը: Անիշխանության ու կամայականության վրա վերականգնված կարգը երբևէ կարելի՞ է բնորոշել իբրև «սահմանադրական»:

Նոր կառավարությունն ընդունեց անգլո-ռուսական վերջնագիրը: Երկրում լույս տեսնող թերթերի մեծ մասը փակվեց:

---

*որն իր կյանքը դրել էր այդ հեղափոխության զոհասեղանին: Բազմաթիվ օրինակներից բերենք միայն մեկը. «Անգլիական գործակալ Սարդար Ասադը և դավաճան Եփրեմը ցրեցին մեջլիսը»,- կարդում ենք Նիկոլայ Լավրովի գրքում (**Николай Матвеевич Лавров,** Турция и Иран в 1870-1918 годах, с. 44):*

Ընդհանրապես ո՞րն էր պարսկական հեղափոխության հերոս Եփրեմի նկատմամբ խորհրդային պատմաբանների ատելության պատճառը: Գլխավոր պատճառը նրա դաշնակցական լինելն էր: Կարելի է պատկերացնել, թե նրանք ինչպիսի՜ ներբողներ կձոնեին Եփրեմին և ինչպիսի՜ գովեստներ կչռայլեին նրա գործին, եթե բոլշևիկ լիներ: Խորհրդային գաղափարական մարդու պատկերացմամբ ու համոզմունքով՝ դաշնակցականը դավաճան էր, թշնամի՝ թեկուզ լիներ ժողովրդի ազատագրական կռվի այնպիսի պանծալի դյուցազն, ինչպիսին Եփրեմ Դավթյանն էր:

*[1] Տե՛ս **«Հնչակ»** (Լոնդոն), № 1, հունվար, 1913, էջ 8:*

[*] Պարսկական երրորդ գումարման մեջլիսի ընտրությունները տեղի ունեցան միայն 1914 թ.:

*[2] Այդ մասին հանգամանորեն տե՛ս **«Նոր հոսանք»**, Բ տարի, № 6, 1914, հունիս, էջ 1016:*

ԵՓՐԵՄԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՒՍԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

Մահմեդ Ալի շահի տապալումից և երկրում սահմանադրական իշխանության հաստատումից ի վեր Եփրեմն ունեցել է տարաձայնություններ Պարսկաստանի դաշնակցական գործիչների մի մասի հետ:

Հարաբերությունները հատկապես լարված էին Եփրեմի և ՀՅ դաշնակցության Շահաստանի (Թեհրանի) կենտրոնական կոմիտեի միջև: Կոմիտեի անդամների մի մասը (Հարություն Ստեփանյան, Նիկոլ Աղբալյան, Ա. Սևիկյան (Աբրահամ Գյուլխանդանյան), Տիգրան Մնացականյան, Միքայել Ստեփանյան, Հովհաննես Մասեհյան) դժգոհում էր, թե Եփրեմը բարձր պաշտոն ստանալով մեծամտացել է, կտրվել իր երեկվա ընկերներից և վերևից է նայում նրանց, թե նա նույնիսկ նեղացրել է Քեռուն, մերժել է կատարել Դաշնակցական Խեչոյի (Խաչատուր Ամիրյան) համեստ պահանջը և այլն:

Եփրեմից կուսակից ընկերների ստացած այդ տպավորությունների հիմնական պատճառն այն էր, որ լինելով պետական բարձր պաշտոնյա, Եփրեմն ստիպված էր հաճախ մերժել այս կամ այն կարևոր հարցի վերաբերյալ իր կուսակիցների անընդունելի առաջարկությունները: Դա առիթ էր դառնում, որպեսզի վերջիններս զայրույթով արտահայտվեն, թե «տեսե՛ք, որքան է նա մեծամտացել»: Ամբարիշտ կեցվածքով նրանք նաև ասում էին, թե Եփրեմը, հպարտացած իր ունեցած դիրք ու պաշտոնով, անտեսելով ընկերներին, բուրժուական հոգեբանությամբ առաջնորդվելով, իր ամբողջ ժամանակն անցկացնում է խաների ու մեծամեծների հետ:

Եփրեմին փառասեր ներկայացնելն անարդար էր ու անիրավ: Նրան մոտ կանգնած մարդկանցից մեկը՝ Հովսեփ Հովհաննիսյանը պատմում է, որ Եփրեմը բացարձակապես հեռու էր փառամոլությունից, նրան խորթ էին ամեն տեսակի պաշտոնական ձևականությունները: Լինելով ամբողջ Պարսկաստանի ոստիկանության պետ, Եփրեմը ռազմական համազգեստը երբեք

չհագավ, տարբերանշաններ չկրեց, իր կենցաղում հասարակ ու մատչելի մնաց[1]:

*Եփրեմի նկատմամբ բացասաբար արտահայտվողները չէին ուզում ըմբռնել, որ հռչակավոր **Եփրեմ խանը** երեկվա չարքային դաշնակցական «**ընկեր Եփրեմը**» չէ, որ հիմա նախկինի պես նա հնարավորություն չունի մշտապես շփվելու իրենց հետ, ամբողջական ծավալով պահպանելու առաջվա ընկերական հարաբերությունները:*

Թեհրանի դաշնակցականներից Խ. Մինասյանն իր «Հուշերում» նկատել է. «Զգում ես, որ հրամանատար է, որ ունի պարտականութիւն, որ բոլորի ճակատագիրը – կեանքի, մահուան կշռաքարերը – իր անհատականութեան նժարին է դրուած ...

*Եւ ահա՛, աստիճանաբար մեր մէջ լայնանում է մի տարածութիւն, որին կարելի է կամուրջ նետել միայն **պատշաճութեան, ամէն ոք իր տեղը ճանաչելու** չոր համաձայնութեամբ միայն:*

Այլ կերպ լինել չէր կարող:

Այլ կերպ էլ իրաւունք չունէր լինել»[2]:

Խ. Մինասյանի այս մտքերին անդրադառնալով՝ Յ. Էլմարը դիպուկ գրել է. «Որքա՜ն առողջ տրամաբանութիւն և որքա՜ն ճիշտ բնորոշում, բայց ափսոս, որ այդ զգաստութիւնը դեռ շատ հեռու է մնացել համարեա բոլոր հայկական շրջանակներից»[3]: «Նա կուզէր,- շարունակում է Էլմարը,- որ երբ ընկերները այցելում էին իրեն, անցեալի պէս թողնէր ամէն գործ եւ զբաղուէր նրանց հետ ..., ներկայ լինէր նրանց հաւաքոյթներին, հանդէսներին»[4]:

Ինչ խոսք, Եփրեմը նախկինի պես կուզեր շատ հաճախ լինել ընկերների հետ, «բայց նա իր ամբողջ էութեամբ տարուած ռազմական եւ պետական գործերով, մոռացել էր անձնական բնոյթ ունեցող ամէն ինչ: Ոչ միայն մոռացել էր մտածել իր հանգստութեան, այլեւ իր հիւանդութեան մասին: Նա ստամոքսի բաց խոց

---

[1] *Տե՛ս **Յովսէփ Յովհաննիսեան**, Յուշեր, էջ 265:*

[2] *Մեջբերված է **Յ. Էլմարի** (**Յովսէփ Յովհաննիսեան**) «Եփրեմ» գրքից, Թեհրան, 1964, էջ 556:*

[3] ***Յ. Էլմար**, Եփրեմ, էջ 557:*

[4] *Նույն տեղում:*

ունէր, որն արդէն խիստ բարդացել էր, բայց ժամանակ չունէր հոգալու բուժելու մասին: «Հիւանդութիւնս լուրջ է,- գրել էր նա իր մտերմական նամակներից մէկում,- բայց ի՞նչ անեմ: Եթէ թողնեմ՝ ամէն ինչ կորչում է...»»[1]:

Ինչպես իր տեղում նշել ենք, 1910 թ. վերջերին Քեռին (Արշակ Գաֆաֆյան) Եփրեմի հետ Թավրիզից տեղափոխվել էր Թեհրան և նրա մարտական գործունեության մեջ սկսվել էր մի նոր շրջան, որը տևեց մոտավորապես մեկուկես տարի, մինչև 1912 թ. կեսերը:

Ի տարբերություն Ռոստոմի հետ Քեռու ունեցած սերտ համագործակցության, Թեհրանում Քեռու և Եփրեմի միջև չկար ցանկալի փոխըմբռնում, քանզի շատ տարբեր էին նրանց խառնվածքները: Քեռին՝ Սասունի հերոսը, միշտ եղել էր համեստ, շրջապատում երբեք չէր ընդգծում իր անձը, չէր ցուցադրում իր փառահեղ կենսագրությունը, այն դեպքում, երբ Եփրեմը գործի գերակայության բերումով հաճախ երևան էր բերում ինքնիշխան գործելու հակումներ:

Նույն Հովսեփ Հովհաննիսյանը վկայում է, որ Եփրեմը, իսկապես, մերժել էր Դաշնակցական Խեչոյի խնդրանքը՝ իրեն Թավրիզից մեկնելու թույլտվություն տալ, այն է՝ ուղևորվել Բուշեհր (անգլիական գոտի) և այնտեղից ծովով հեռանալ մի ուրիշ երկիր: Նեղանալով, Խեչոն ընկերների մոտ հույժ դժգոհել էր Եփրեմից: Բայց հետո պարզվել էր, որ վերջինս նրան թույլ չի տվել ուղևորվել դեպի հարավ՝ մտահոգված լինելով նրա ապահովության հարցով. ճանապարհները բռնված էին թշնամիներով, հատկապես Սալար Դովլեի մարդկանցով: Վերջինիս՝ Թեհրանի վրա հարձակվող բանակի ջախջախումից հետո միայն Եփրեմը Խեչոյին թույլատրեց հեռանալ Պարսկաստանից[2]:

Նախանձի ու չկամության հողի վրա ծագած դժգոհություններն ու տարաձայնությունները ժամանակի ընթացքում փոխակերպվեցին լուրջ հակասությունների:

Պարսկահայ նշանավոր գործիչներից Հայրապետ Պանիր-

---

[1] ***Ց. Էլմար**, Եփրեմ, էջ 557-558:*

[2] *Տե՛ս **Յովսէփ Յովհաննիսեան**, Յուշեր, էջ 257:*

յանը, որը Եփրեմի հետ անձնական բարդ հարաբերությունների մեջ էր, գրել է.

«Եփրեմը բաւականին չփացել էր իր յաջողութիւններից եւ չէր ենթարկւում [ՀՅԴ] Թեհրանի կ[ենտրոնական] կոմիտէի կարգադրութիւններին: Կ[ենտրոնական] կոմիտէն համարում էր նրան իր շրջանի գործիչը եւ պահանջում, որ նա չգործէ ինքնակամ, այլ իր բոլոր ձեռնարկների եւ քայլերի մէջ [գործի] կ[ենտրոնական] կոմիտէի հետ խորհրդակցաբար եւ նրա հաւանութեամբ: Նա կատարել էր այնպիսի քայլեր, որոնք կ[ենտրոնական] կոմիտէի վրդովմունքն էին յարուցել»[1]:

Առաջին լուրջ թնջուկը ծագել էր այն ժամանակ, երբ կառավարության հրահանգով Եփրեմը ոմբակոծել էր Թեհրանի Աթաբեկի անվան զբոսայգում տեղակայված Սաթթար և Բաղր խաների հրամանատարության տակ գտնվող ջոկատների դիրքերը և զինաթափել նրանց, հաշվի չառնելով, որ Թավրիզի հերոսական պաշտպանության այդ զույգ ղեկավարները ջերմ հարաբերություններ ունեին ՀՅ դաշնակցության հետ:

1911 թ. օգոստոսի 14-ից 20-ն ընդգրկող ժամանակահատվածում Թեհրանում տեղի ունեցած դեպքերի մասին ռուսական դեսպանության՝ Պետերբուրգ ուղարկած զեկուցագրում ասված էր. «Ակնհայտ է Դաշնակցության դժգոհությունը Եփրեմի գործունեությունից, թե այդ գործունեությունը չի համապատասխանում հայերի հետապնդած նպատակներին»[2]:

Երկրորդ պատճառը Եփրեմի գժտվելն էր բախտիարների հետ, որոնց բազմաթիվ ղեկավարներ սերտ փոխհարաբերությունների մեջ էին դաշնակցականների հետ, բարձր էին գնահատում դաշնակցական մարտիկների բարոյական ու մարտական ոգին, շատ բան էին սովորում նրանց վարվելակերպից ու մարդկային փոխհարաբերություններից:

Եվ ահա՛ 1911 թ. երկրորդ կեսին այդ երկու պատճառներին ավելացել էին նորերը: Այս անգամ Եփրեմին հարուցվում էին ծանր մեղադրանքներ, որոնք նրա համար բախտորոշ էին:

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 3 (325), մարտ, 1953, էջ 63-64:*

[2] ***"Сборник дипломатических документов..."****, вып. V, с. 83.*

Դրանք էին. 1) Չի ընդդիմացել ռուսական կառավարության 1911 թ. հոկտեմբերի 29-ի և նոյեմբերի 16-ի վերջնագրերին, ավելին՝ հարցը կառավարությունում քննարկելիս եռանդուն մասնակցություն է ունեցել ռուսների ներկայացրած այդ վերջնագրերի ընդունմանը, 2) Գործուն մասնակցություն է ունեցել պարսկական երկրորդ մեջլիսի ցրմանը, 3) Հակառակ Դաշնակցության պաշտոնական տեսակետի, փոխել է իր վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ, չի քննադատում նրա իմպերիալիստական քաղաքականությունը, Հայ դատի նկատմամբ թշնամական վերաբերմունքը:

Այս բոլոր մեղադրանքներին զուգահեռ Եփրեմը նաև ամբաստանվում էր, թե ա) դաշնակցական զինվորական կարևոր դեմքեր, այդ թվում Դաշնակցական Խեչոն ու Քեռին, տևականորեն հետապնդումների և սպառնալիքների են ենթարկվել, բ) իր հայկական զորամասը մեկուսացրել է Դաշնակցության հսկողությունից, որի հետևանքով ՀՅԴ Շահաստանի (Թեհրանի) կենտրոնական կոմիտեն այլևս ի զորու չէ նրան պահելու իր բարոյական ու կազմակերպական հսկողության ներքո:

Հարուցված մեղադրանքների մի մասը հետագայում, Եփրեմի մահից հետո, ժխտեցին հենց դաշնակցական մի քանի հուշագրողներ, իսկ մյուս մասը, որոնք քաղաքական բնույթի էին, իսկապես ցույց էին տալիս, որ այդ սկզբունքային հարցերում Եփրեմի և Դաշնակցության պարսկական կազմակերպությունների տեսակետները ոչ միշտ են համընկել:

1911 թ. աշնան վերջերից Եփրեմի աստղը թեքվել էր: Պարսիկ ամբոխը մի կողմից նրան համարում էր առասպելական դյուցազն, մյուս կողմից նրան վատաբանում՝ անհավատալի արատներ վերագրելով: Մասնավորապես սկսել էին խոսել, որ նա, իբր, իր կնոջ հետ արտասահման է ուղարկել թանկագին քարեր ու ոսկյա իրեր և որ Էջմիածնից բանադրանք է ստացել, քանի որ նա, ի վնաս հայության, մխրճվել է ուրիշ երկրի գործերի մեջ: «Մշակը» գրում էր. «Այդպէս է առհասարակ ամբոխի, մասնաւորապէս պարսիկ ամբոխի հոգեբանութիւնը. բարձրացնել մէկին, վերագրել նրան անհասանելի բարեմասնութիւններ, ներկայացնել նրան իբրեւ մի կատարելութիւն: Բայց եւ յանկարծ

վար ձգել, բոլոր միջոցներով վարկաբեկել եւ մինչեւ իսկ ոտնատակ տալ դեռ միայն երէկ իր կողմից մինչեւ երկինք հասցրած մարդուն, ու կոխկրտել, ցեխի մէջ թաւալգլոր անել նրան: Ճիշտ այդպէս պատահեց նաեւ Եփրեմի հետ»[1]:

Թեւ Եփրեմը արտաքնապես անտարբեր էր և չէր արձագանքում ամբոխավարական զրպարտություններին, բայց չէր կարող թաքնված ապրումներ չունենալ: Այդ զազրախոսություններին գումարվում էր այն, որ նրա նկատմամբ հույժ բացասական դիրք էր բռնել Պարսկաստանի դեմոկրատական կուսակցությունը, որը սերտ դաշինքի մեջ էր ՀՅ դաշնակցության հետ: Այդ երկու կուսակցությունները Պարսկաստանում մղում էին ուժգին հակառուսական քարոզչություն՝ բայց տարբեր պատճառներով: Դեմոկրատական կուսակցությունը մեջլիսում առճակատում էր Պետերբուրգի համակրությանն արժանացած պահպանողականների կուսակցության հետ, ինչն առաջ էր բերում Ռուսաստանի նկատմամբ դեմոկրատների ցավագին հակազդեցությունը: Իսկ Դաշնակցության Պարսկաստանի երկու (Վրեժի և Շահաստանի՝ Թավրիզի և Թեհրանի) կենտրոնական կոմիտեներն իրականացնում էին հակառուսական քաղաքականություն ոչ միայն այն պատճառով, որ Պետերբուրգը Մահմեդ Ալի շահին հետևողականորեն պաշտպանում էր նաև նրա գահընկեցությունից հետո, այլև գլխավորապես այն պատճառով, որ կազմակերպության հարյուրավոր անդամները «Դաշնակցության գործով» տառապել կամ դեռևս տառապում էին ցարական բանտերում ու աքսորավայրերում:

Դաշնակցության հակառուսական քաղաքականությունն ընդհանրապես, Պարսկաստանում այդ նույն քաղաքականության կիրառումը մասնավորապես, հայկական հասարակության պահպանողական և ազատական ճամբարներում, նրանց մամուլի օրգաններում ենթարկվում էին քննադատության:

Թավրիզում լույս տեսնող «Միտք» հնչակյանամետ թերթը գրում էր. «Մենք ասիական ժողովուրդ ենք: Իսկ Ասիայի հրա-

---

[1] **«Մշակ»**, № 106, 19 մայիսի 1912 թ.:

*մանատարութիւնն արդէն հզօր Ռուսիոյ ձեռքումն է: Ուստի թէ՛ Ռուսաստանում եւ թէ՛ Ռուսաստանի սահմաններից դուրս, ո՛ր երկրի **հաւատարիմ** եւ **ազնիւ** քաղաքացիներն էլ լինենք, մենք պէտք է հանդիսանանք Ասիայի գերիշխանի կամ հրամանատարի լաւագոյն բարեկամները: Մենք ... բոլոր ազգերի ու հայրենիքների անկախութեան կուսակից ենք: Իսկ եթէ եւրոպական **կօնցերտը** դրա հակառակն անել կամենայ ու վճռի, ապա հայերիս կմնայ ապահովել մեր ապագան՝ լի **վստահութեամբ** նայելով դէպի **հիւսիս** եւ հեռու լինել քամի սերմանելուց, որպէս զի փոթորիկ չհնձենք» (ընդգծումները թերթինն են:- Հ. Ս.)*[1]:

Անդրադառնալով Պարսկաստանում գլորվող իրադարձութիւններին, Կ. Պոլսի «Բիւզանդիոնը» պարսկահայերին խորհուրդ էր տալիս հանդես չգալ Ռուսաստանի դեմ: «Գէշ մարդ չըլլաք Ռուսիոյ հետ» վերնագրով հոդվածում թերթը գրում էր, որ միևնույն է, ռուսները Պարսկաստանում մնալու են երկար, ուստի շատ լավ կլինի եթե նրանք իրենց ճանապարհին հայեր չգտնեն, նամանավանդ կովկասցի հայեր: «Պարսիկներուն սեւ աչքերուն սիրոյն համար մենք ի՞նչ պետք ունինք գէշ մարդ ըլլալու ռուս կառավարութեան հետ: Եթե Ռուսաստանը մտադրվել է գրավել Պարսկաստանը, ո՞վ կարող է հանդես գալ նրա դեմ. պարսից բանա՞կը, որ գոյություն ունի միայն թղթի վրա»: «Հայերուն Պարսկաստանի մէջ Ռուսիոյ դէմ ելլելն ի՞նչ արդիւնք պիտի տար. պարսկաց համակրանքի՞ն թէ՞ Ռուսիոյ հակակրանքին ենթարկել հայերը: Բայց ո՞վ չի հասկնար, թէ պարսկաց համակրանքէն հայ ազգը մեծ բան մը չունի շահելու, ... մինչ Ռուսիոյ հակակրանքը շատ սուղի կրնայ նստիլ հայերուն»: Թող պարսիկներն ու ռուսերն իրենց վեճը իրենց մեջ լուծեն, հայերին ի՞նչ փույթ, որ իզուր թշնամություններ բերենք «մեր խեղճ եւ անպաշտպան ազգի վրայ»:

Գալով Դաշնակցության վարած հակառուսական քաղաքականության վնասներին, թերթն. ընդգծում էր, որ դաշնակցականներն, իբրև ընկերվարական հեղափոխականներ՝ տար-

---

[1] ***«Միտք»**, № 21, 21 հուլիսի 1912 թ.:*

բեր կարծիքներ ունին ընդհանրապես Ռուսաստանի ներքին կացության, մասնավորապես՝ ցարիզմի մասին և շատ նեղված են դաշնակցականների դեմ բացված դատից:

Բայց միթե այդ դատավարության հաշիվը պետք է Պարսկաստանում լուծել:

Ռուսաստանը 150 միլիոն բնակչություն ունեցող պետություն է, որի տարածքում հայերը կազմում են ընդամենը մեկուկես միլիոն: Միթե խելքի մոտ բան է, որ այս մեկուկես միլիոն հայերը, իրենց ազգային խղճալի վիճակը մի կողմ թողած, իրենց զոհեն Պարսկաստանի փրկության կամ Ռուսաստանում ազատ կյանք ստեղծելու համար: Ռուսաստանն իր ներսից պիտի չտկվի, պիտի բարեկարգվի ու զարգանա չնորհիվ ժամանակի ոգու ընկալման և քաղաքակրթության անդիմադրելի հոսանքի՝ իր բազմամիլիոն ազգաբնակչությանը տանելով նոր ճակատագրին ընդառաջ՝ հանգրվան առ հանգրվան: Միևնույն է, այդ մեծ հոսանքն իր գործը տեսնելու է վաղ թե ուշ: Հետևապես չարժե, որ փոքրաթիվ հայ ազգի մնացորդացը հիմա էլ զրկվի իր բնակության վայրերից դեպքերի ընթացքը անխոհեմաբար արագացնելու իր մտադրություններով: Ռուսաստանը վայելում է Արևմուտքի ամենազգամետ երեք ազգերի՝ ֆրանսիացիների, անգլիացիների ու ամերիկացիների սերտ բարեկամությունը, որոնք այդ երկրի ներքին վիճակը բոլորովին արգելք չեն համարում նրա հետ անենալու ամենասերտ հարաբերություններ և նույնիսկ նրա հետ մտնելու բարեկամական դաշինքի մեջ: «Այսպիսի տէութեան մը հետ գէշ մարդ ըլլալ ի՞նչ խելք է,- հարց էր տալիս «Բիւզանդիոնը»: Ռուսիոյ մէջ կը պատահին բաներ, որոնցմէ գոհ չենք անչուշտ. բայց միթէ ասիկա պատճառ է, որ յայտնի հակառակութիւն ցուցունենք կամ պայքար մղենք ռուս տէրութեան դէմ: Ռուսիա կոչուած է մեծ դեր մը կատարելու Արեւելքի մէջ, եւ եթէ չենք կրնար սիրաշահիլ զինք, գէթ մեզի դէմ չունենանք զինքը»[1]:

1911 թ. սեպտեմբեր-հոկտեմբերից Եփրեմը բացահայտորեն

---

[1] «Բիւզանդիոնի» սույն հոդվածը արտատպված է **«Մշակում»** (№ 287, 28 դեկտեմբերի 1911 թ.):

խոսում էր այն մասին, որ հակառուսական քաղաքականությունը Պարսկաստանի ազատագրական շարժմանը միայն վնաս է բերում: Վերլուծելով իրադարձությունների ընթացքը, նա եկել էր այն եզրակացության, որ Ատրպատականում և ընդհանրապես Պարսկաստանի հյուսիսային մասի Թուրքալեզու տարածքներում Ռուսաստանի դիրքերի թուլացումն իր հետևից անխուսափելիորեն բերելու է դիրքերի ուժեղացում Օսմանյան կայսրության, որը վաղուց երազում է տեր դառնալ այդ տարածքներին: Ռուսների դեմ հանդես գալով, հեղափոխական ուժերը դրանով իսկ նպաստում են Պարսկաստանում Թուրքիայի նվաճողական քաղաքականության իրականացմանը: Ուրմիայի և Սալմաստի շրջաններից հեռացած օսմանյան զորքերը 1911 թ. աշնան կեսերին կրկին վերադարձել էին: Այդ գավառներում իրենց արդեն տեր ու տիրական զգալով, նրանք ամրացնում էին իրենց զորանոցները, լրացնում զինամթերքը և պատրաստվում հետագա առաջխաղացման դեպի Ատրպատականի խորքերը[1]: Եփրեմը 1911 թ. վերջին երկու ամիսներին վերջնականապես համոզվել էր, որ Պարսկաստանի ազգային շահերը պահանջում են կասեցնել հատկապես Թուրքական զորքերի ներխուժումը Ատրպատական, որում մեծապես շահագրգռված է նաև Ռուսաստանը: Նա նաև համոզվել էր, որ հակառակ Դաշնակցության և Հնչակի բացահայտ հակառուսական քաղաքականության, պարսկահայության բացարձակ մեծամասնությունն առաջվա պես բարեկամական զգացմունքներ է տածում Ռուսաստանի նկատմամբ և նրա ներկայությունը Պարսկաստանում համապատասխանում է պարսկահայերի կենսական շահերին:

Պարսկաստան այցելած Պետերբուրգի հեռագրական գործակալության թղթակից Գ. Յանչևեցկին հանդիպումներ էր ունեցել մի քանի հայ գործիչների, այդ թվում Եփրեմի հետ, և վերադառնալով գործուղումից, հանդես էր եկել դասախոսություններով ու հատուկ չեչտել, որ իրեն հաճելի զարմանք է պատճառել այն ջերմ վերաբերմունքը, որ պարսկահայերը տածում են Ռուսաստանի և ռուսահայերի նկատմամբ[2]:

---

[1] *Տե՛ս* ***«Ղարաբաղ»****, Ա տարի, № 13, 29 դեկտեմբերի 1911 թ.:*

[2] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 1:*

Պետերբուրգի նկատմամբ Եփրեմի որդեգրած նոր դիրքորոշումը կառավարության ու մեջլիսի անդամներին առիթ էր տվել կարծելու, որ, իբր, նա կապերը խզում է իր կուսակցության՝ ՀՅ դաշնակցության ղեկավարության հետ: Նման կարծիքի տարածմանը նպաստել էր նաև այն, որ Եփրեմի կարգադրությամբ Թեհրանում ձերբակալվել էին դեմոկրատական կուսակցության մի շարք գործիչներ, որոնք հանդես էին գալիս Սիփահդարի կառավարությունը բռնի ուժով տապալելու կոչերով: ՀՅԴ Վրեժի և Շահաստանի կենտրոնական կոմիտեները, միացած դեմոկրատներին, բողոք էին ներկայացրել չահի խնամակալ Նասր օլ Մոլքին՝ պահանջելով վերջ դնել բռնարարքներին և հետաքննություն սկսել, այլապես սպառնալով, որ հայ և պարսիկ ֆիդայիները կհրաժարվեն կռվի գնալ Սալար Դովլեի դեմ[1]: Խնամակալը խոստացել էր կատարել դաշնակցականների և դեմոկրատների ներկայացրած պահանջը:

Եփրեմն արդեն ծանր էր տանում ինչպես ամբոխի զրպարտությունները, այնպես էլ դեմոկրատական կուսակցությանը բռնությունների ենթարկելու վերաբերյալ իրեն ներկայացրած մեղադրանքները: Նույնիսկ եկավ մի պահ, որ նրա մոտ Պարսկաստանը թողնելու և Կովկաս հեռանալու ցանկություն առաջացավ: Հեռանալ, այլ ոչ թե լքել: Հեռանալ Պարսկաստանում նվազագույն կարգ ու կանոն հաստատվելուց հետո: Բայց ո՞ւր հեռանալ: Նա նույնիսկ հարց էր տալիս, թե կառավարության համաձայնության դեպքում ո՞ր ճանապարհով կարող է հեռանալ սահմանից, երբ ամեն կողմում էլ թշնամիներ ուներ: Նա ավելացնում էր, թե Ռուսաստանով չի կարող անցնել, որովհետև որպես նախկին ռուսահպատակ և Սիբիրից փախստական՝ անմիջապես կձերբակալեին, հարավի գծով ևս չէր կարող անցնել, որովհետև ճանապարհի ամբողջ երկարությամբ կլինեն հայտնի և անհայտ միապետական խաներ ու ցեղապետներ, որոնք արյան թշնամությամբ են լցված իր դեմ՝ իրենց ստացած ռազմական կամ այլ տեսակ հարվածների համար:

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 104, 17 մայիսի 1912 թ.:*

Եփրեմը մտածում էր, որ Սալար Դովլեի նկատմամբ վերջնական հաղթանակի և նրան երկրից դուրս քշելու դեպքում միայն կարող է հրաժարական ներկայացնել կառավարությանը: Դրանից հետո նա, այնուամենայնիվ, մտադիր էր անցնել թուրք-պարսկական սահմանը, գնալ Կ. Պոլիս և իրեն դնել ՀՅԴ Արևմտյան բյուրոյի տրամադրության տակ:

Եփրեմի մտադրության մասին տեղեկացել էին հայկական շրջաններում: Պարսկաստանից Եփրեմի հեռանալը ճիշտ համարելով, «Բիւզանդիոնը» Դաշնակցությանը միաժամանակ խորհուրդ էր տալիս ոչ միայն որքան հնարավոր է շուտ դադարեցնել հակառուսական գործունեությունը, այլև ձեռնարկել Պարսկաստանից իր մարտիկներին շուտափույթ դուրս բերելու գործին: Թերթը գրում էր. «Այս է, կարծէք, ամէնէն ողջամիտ հայու հայեացքն օրուան խնդրոյն վրայ, որ կենսական նշանակութիւն ունի հայ ազգի համար, եւ Եփրեմ խանին Պարսկաստանէն մեկնելու որոշումն առհաւատչեայ մը կը սեպենք, թէ Դաշնակցութեան պետերն ալ, որոնք հարկաւ չարիք չեն կամենար ազգին, կը զգան, թէ տեղ չկայ աւելի յառաջ երթալու, եւ «գործն անուշի կապելու» միջոց մը կ'որոնեն»[1]:

Ատրպատականի հայության համար բացառիկ բարդ պայմաններում Թավրիզի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի շուրջ նույնպես ստեղծվել էր անցանկալի մթնոլորտ: Սրբազանը Մաղաքիա արք. Օրմանյանի քաղաքական հայացքների ջերմ կողմնակիցներից մեկն էր, որը և առաջ էր բերել դաշնակցական ու հնչակյան մամուլի համապատասխան բացասական վերաբերմունքը:

---

[1] *«Բիւզանդիոնի» սույն հոդվածը արտատպված է* ***«Մշակում»*** *(№ 287, 28 դեկտեմբերի 1911 թ.):*

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԱՆԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ: ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԵՏՆԱՊԱՀԱՅԻՆ ՄԱՐՏԵՐԸ ԵՎ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսական կառավարությունն օրեցօր սպասում էր, թե պարսկական մեջլիսը երբ չեղյալ կհայտարարի գահազուրկ շահին առավել նվիրված կողմնակիցների ունեցվածքը բռնագրավելու մասին իր իսկ ընդունած օրենքը, ինչպես նաև շահի եղբայր Շոաա Սալթանեի ունեցվածքը գույքագրելու մասին Մորգան Շուստերի տված հրամանը: Օրերն անցնում էին, բայց չէր կատարվում ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը, իսկ պարսից կառավարությունը չէր պատասխանում ռուսական կառավարության 1911 թ. նոյեմբերի 16-ի վերջնագրին: Միաժամանակ, երկրով մեկ չէր դադարում պարսից պետության ինքնիշխանության բացահայտ ոտնահարման դեմ ուղղված ժողովրդական բողոքի ու զայրույթի փոթորիկը: Տեղի էին ունենում զանգվածային հանրահավաքներ ու ցույցեր՝ «Մա՛հ կամ ազատությո՛ւն» և նմանատիպ նշանախոսքերով: Ռուսական և ուրիշ արտասահմանյան ապրանքների բոյկոտ սկսվեց:

Մյուս կողմից՝ մի խումբ սահմանադրական ծայրահեղականներ, այդ թվում դաշնակցականներ ու հնչակյաններ, հակառուսական գրավոր ու բանավոր ուժգին քարոզչություն մղելով, հանրահավաքներում ունեցած ելույթների ժամանակ Նիկոլայ II ցարին որակում էին Պարսկաստանի ժողովրդի դահիճ, վիրավորական արտահայտություններով այպանում Ռոմանովների ար-

քայատոհմը, դրանով իսկ ռուսական կառավարությանը մղում վճռական գործողությունների:

ՌՈՒՍԱԿԱՆ ՆՈՐ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ

Տեսնելով, որ հետադիմությունն անընդունակ է սեփական ուժերով հաչվեհարդարի ենթարկելու երկրում չարունակվող հեղափոխությունը, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կառավարությունները որոշեցին իրենց զինված ուժերով ուղղակի ռազմակալել երկիրը:

Հակառուսական լարված մթնոլորտում քննելով հարցը, մեջլիսը կտրականապես մերժեց ռուսական վերջնագրի պահանջները:

Հենց դրան էլ սպասում էին 1907 թ. օգոստոսի 18 (31)-ի պայմանագրով Պարսկաստանն ազդեցության գոտիների բաժանած Ռուսաստանը և Մեծ Բրիտանիան: Պատրվակ բռնելով իրենց վերջնագրի մեջլիսի մերժումը, Պետերբուրգն ու Լոնդոնը որոշեցին համատեղ ռազմական արչավանք սկսել և վերջնականապես խեղդել պարսկական հեղափոխությունը:

Դեռևս 1911 թ. հոկտեմբերին Պարսկաստանի հարավում, Բուչեհրում, ափ էին իջել անգլիական զինված ուժերի նոր ստորաբաժանումներ, որոնք ուղևորվել էին Շիրազ քաղաք և «իրենց» ազդեցության գոտու բոլոր վտանգավոր տարածքներ: Դաժան դատաստան սկսվեց երկրից օտարերկրյա զորքերը դուրս բերելու պահանջով հանդես եկող բոլորի դեմ: Տեղի ունեցան զանգվածային գնդակահարություններ, փակվեցին սահմանադրական ուղղության թերթերը, խստորեն արգելվեցին ժողովները, հանրահավաքները և ցույցերը[1]:

Քանի որ ինչպես 1908 թ. հունիս – 1911 թ. սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում, այնպես էլ 1911 թ. երկրորդ կեսին և 1912 թ. Պարսկաստանում ռազմա-քաղաքական հիմնական

---

[1] *Տե՛ս “История Ирана”, с. 288.*

իրադարձությունները տեղի են ունեցել նրա հյուսիսային նահանգներում, ուստի համառոտ կլուսաբանենք միայն ռուսական զորքերի Պարսկաստան ներխուժման հանգամանքներն ու ստեղծված քաղաքական նոր ճգնաժամը, որը և հանգեցրեց պարսկական հեղափոխության պարտությանը:

Տևական նախապատրաստություններից հետո ռուսական կառավարությունն անցավ վճռական գործողությունների: Պետերբուրգում կասկած չունեին, որ այս անգամ կայսերական բանակի ուժգին ներխուժումով, առանց լուրջ դիմադրության, վերջ կտրվի պարսկական հեղափոխական շարժմանը, թեև Թեհրանի ռուսական դեսպանությունը կանխատեսում էր, որ, այնուամենայնիվ, սպասվում է ուժգին դիմադրություն ինչպես Թավրիզում, այնպես էլ մայրաքաղաք Թեհրանում:

Նոյեմբերի 23-ին Պոկլևսկի-Կոզելը Պետերբուրգ հղած հեռագրով հայտնում էր, որ ռուսական զորքը Թեհրանի վրա շարժվելու դեպքում մայրաքաղաքի պաշտպանության գլուխ է կանգնելու Եփրեմը, որին վերագրում են այն խոսքերը, թե լավ է Պարսկաստանը միանգամից կործանվի, քան երկարատև մրցապայքարի ենթարկվի[1]*:*

Թեհրանից ստացված այդ և նման հաղորդումները թափանցում էին ռուսական մամուլի էջերը՝ համապատասխան մեկնաբանություններով: Ռուսական հետադիմական մամուլը կառավարությանը հիշեցնում էր, որ Պարսկաստան նոր զորքեր մտցնելու դեպքում նրանց հրամանատարները պետք է հաշվի առնեն տեղի հայկական զինված խմբերի հնարավոր լուրջ դիմադրությունը: Իսկ "Новое Время" թերթի հակահայ խմբագիր Լեոնիդ Մենշիկովն ուղղակի գրում էր. «Ռուսական զորքին կորուստներ պատճառողները լինելու են պարսկական խառնաշփոթի կազմակերպիչ հայերը՝ ի՛նչ անվան տակ էլ նրանք թաքնված լինեն»[2]*:*

Գոհացնող պատասխան չստանալով Թեհրանից, Պետերբուրգի կայսերական կառավարությունը 1911 թ. նոյեմբերին

---

[1] ***Տե՛ս "Сборник дипломатических документов..."**, вып. VII, с. 281-282.*

[2] ***"Новое Время"**, 19 января 1912 г.*

սահմանն անցնելու հրաման տվեց ռուսաց 12 հազարանոց զորքերին, որոնք ուղղություն վերցրին դեպի Ատրպատական, Գիլան և Խորասան[1]:

Այս անգամ ցարիզմը հավանաբար լուրջ մտադրություն ուներ չբավարարվել Հյուսիսային Պարսկաստանի վրա ունեցած տնտեսական ու քաղաքական խոր ազդեցությունով և ուղղակի գաղութացնել «իրեն պատկանող» գոտին: Պահը հարմար էր այդ մտադրությունն իրագործելու համար, քանի որ երկիրը պառակտված էր և նետված խակական քաոսի մեջ: Հենց նման մի քաոսի և ներքին բարդությունների տևական պահպանման պայմաններում էր, որ նախորդ ժամանակներում Ռուսաստանը հաջողել էր քայլ առ քայլ իրար հետևից տիրել Դերբենտին, Քուռ գետի ստորին ավազաններին, Թալիշին, Արցախին, Գանձակի, Շեքիի, Շիրվանի խանություններին:

1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում ռուսական բանակների տարած փայլուն հաղթանակների շնորհիվ 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայ գյուղում կնքվել էր հաշտության պայմանագիր երկու երկրների միջև, որով Ռուսաստանին էին անցել նաև Երևանի ու Նախիջևանի խանությունները: Պայմանագրի 3-րդ հոդվածով այսպես էր օրինականացվել պատերազմի հիմնական արդյունքը.

«Նորին Մեծություն Պարսկական Շահը իր անունից և իր թագաժառանգների և ժառանգորդների անունից Ռուսական Կայսրությանն է զիջում որպես նրա կատարյալ սեփականությունը Երևանի խանությունը՝ Արաքսի այս և այն կողմերում և Նախիջևանի խանությունը: Այս զիջման հետևանքով Նորին Մեծություն Շահը խոստանում է սույն պայմանագրի ստորագրման օրից հաշված վեց ամիս ոչ ավելի ժամանակամիջոցում ռուսական իշխանություններին հանձնել այն դիվաններն ու հրապարակված վավերագրերը, որոնք վերաբերում են վերոհիշյալ երկու խանությունների կառավարմանը»[2]:

---

[1] ***Տե՛ս Г. В. Шитов***, *Персия под властью последних Каджаров, с. 155.*

[2] ***«Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում»***, *«Հայաստան» հրատ., Երևան, 1972, էջ 66:*

Պայմանագրի 12-րդ հոդվածով կանոնավորվում էր պարտված կողմին պատկանող անձանց սեփականատիրության իրավունքի խնդիրը: Այնտեղ արձանագրված էր.

«Հօգուտ երկու տերությունների հպատակների՝ պայմանավորվող բարձր կողմերը որոշում են՝ նրանց ընդհանուր համաձայնությամբ Արաքսի երկու կողմերում անշարժ գույք ունեցողներին տալ եռամյա պայմանաժամ, որի ընթացքում նրանք կարող են ազատ վաճառել կամ փոխանակել իրենց անշարժ գույքը. բայց Նորին Մեծություն Ամենայն ռուսաց Կայսրը, որչափ վերաբերում է իրեն, սույն ներողամիտ կարգադրությունից հանում է Հոսեյն խանին՝ Երևանի նախկին սարդարին, նրա եղբորը՝ Հասան խանին և Նախիջևանի նախկին կառավարիչ Քերիմ խանին»[1]:

Այսինքն՝ հիշատակված այդ երեք խաները Երևանի ու Նախիջևանի խանություններում պահպանում էին անշարժ գույքի նկատմամբ իրենց ունեցած սեփականատիրական իրավունքները:

1829 թ. սեպտեմբերին Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև Ադրիանապոլսում կնքված պայմանագրի 4-րդ հոդվածով Թուրքերը ճանաչում էին Թուրքմենչայի պայմանագրով Երևանի ու Նախիջևանի խանությունների միացումը Ռուսաստանին: Հոդվածում ասված էր.

«Վրաստանը, Իմերեթիան, Մինգրելիան, Գուրիան և Անդրկովկասի շատ այլ մարզեր արդեն վաղուցվանից առհավետ միացված են Ռուսական կայսրությանը. 1828 թվականի փետրվարի 10-ին Պարսկաստանի հետ կնքված պայմանագրով սույն Տերությանն են զիջված նաև Երևանի և Նախիջևանի խանությունները: Ուստի երկու Բարձր պայմանավորվող կողմերը անհրաժեշտ համարեցին երկու կողմերի տիրույթների միջև, հիշյալ գծի ամբողջ երկայնքով, հաստատել ճշտորոշ սահմանագիծ, որն ընդունակ լինի ապագայում կանխելու ամեն տեսակ թյուրիմացություններ: Նույն կերպով նրանք նկատի առան այն մի-

---

[1] ***«Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում»**, էջ 70:*

ջոցները, որոնք կարող են անհաղթահարելի խոչընդոտ դառնալ սահմանակից ցեղերի ասպատակումների և ավարառությունների դեմ, որոնք ցայսօր այնքան հաճախ խախտում են երկու կայսրությունների բարեկամական և բարիդրացիական կապերը...»[1]*:*

Թուրքմենչայի պայմանագիրը թելադրված էր ռուսական կողմի կամքով: Եվ դա բնական էր, քանի որ խնդիրը մինչ այդ արդեն լուծված էր պատերազմի դաշտում, մի պատերազմ, որի գործուն մասնակիցներն էին ռուսական զորքերի կազմում, ռուս զինվորների հետ կողք-կողքի կռված հայկական կամավորական խմբերը: Համատեղ պայքարում ձեռք բերած հաղթանակը և դրա պսակը հանդիսացող Թուրքմենչայի պայմանագիրը բախտորոշ նշանակություն ունեցան հայ ժողովրդի համար: Նրա մի մեծ հատվածը ազատագրվեց պարսկական միջնադարյան բռնակալությունից, մեկընդմիշտ փրկվեց արևելյան բռնատիրության վայրագ հալածանքներից, գտավ ռուսաց հզոր պետության պաշտպանությունը և նրա հովանու տակ ընդգրկվեց վիթխարածավալ կայսրության տնտեսական կյանքի ոլորտի մեջ, հաղորդակից եղավ բարձր քաղաքակրթական արժեքների, անմիջականորեն կրեց ռուսական մեծ մշակույթի և լուսավորության բարերար ազդեցությունը, աստիճանաբար ներգրավվեց ռուս ժողովրդի առաջադիմական շարժումների մեջ: Հիմք դրվեց Ռուսահայաստանին, որը դառնալու էր հայ ժողովրդի քաղաքական ձգտումների հնոցը գալիք տասնամյակներին:

Եվ ահա՛ այժմ, 1911 թ. աշնանը, հերթի էր դրվել Պարսկաստանի Հյուսիս-Կասպիական մարզի (Գիլան, Մազանդարան), Ատրպատականի և նույնիսկ «Թեհրանի նահանգի» մի մասի գրավումը: Ինչ խոսք, այդ տարածքների անցումը Ռուսաստանին կնպաստեր դրանց տնտեսության արագ զարգացմանը: Համառուսաստանյան տնտեսական կյանքի և ռուսական առաջավոր մշակույթի ոլորտների մեջ կընդգրկվեր նաև երբեմնի Պարսկահայքը՝ Ուրմիա, Սալմաստ, Մակու, Ղարադաղ գավառ-

---

[1] ***«Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում»****, էջ 75:*

ները՝ հայերի համար բարենպաստ հեռանկարով:

Բայց եթե այդպես չեղավ, դա պարսկահայության համար ողբերգություն չէր: Պարսկաստանը Տաճկաստան չէր, ուր հայությունը տոչորվում էր Թուրքերի անտանելի լծի տակ: Պարսկաստանը հայերի համար շարունակում էր մնալ այն երկիրը, ուր հայը պաշտպանված էր երկու ժողովուրդների ավանդական անկեղծ բարեկամության ուժով:

Գրավելով Ռեշտը և Էնզելին, ռուսական զորքերն այնտեղից առաջանալով Ղազվին, սպառնացին մայրաքաղաքին: Երկրի անկախությանը սպառնացող վտանգի այդ պահին Պարսկաստանն ի վիճակի չէր ուժգին դիմադրություն ցույց տալու ռուսական զորքերին, քանի որ շարունակվող ներքին երկարատև կռիվները ջլատել էին տնտեսությունը, ժողովուրդը գտնվում էր չքավորության և թշվառության մեջ: Կենտրոնական կառավարությունը կաթվածահար էր. կառավարություն փաստորեն գոյություն չուներ, խնամակալը շարունակում էր պնդել իր հրաժարականի վրա, մեջլիսը առաջվա պես քննադատելու վարպետ էր, իսկ շահը՝ պատանի: Դրան ավելացնենք, որ նախկին շահի կողմնակիցների դեմ կանգնած էին ջլատված զինվորական ուժերը: Ո՞վ պետք է դիմագրավեր երկրի վրա կախված վտանգը:

Ասպարեզում փաստորեն մնացել էր Եփրեմն իր փոքրաթիվ և հավատարիմ մնացած բախտիար ղեկավար ընկերներով[1]:

1911 թ. նոյեմբերի 16-ի երեկոյան ռուսական կողմը պահանջեց մեջլիսի հաստատմանը ներկայացնել կառավարության նոր կազմ: Մեջլիսը գործող կառավարության կազմում փոփոխություն կատարեց, իսկ դեկտեմբերի 9-ին վերջնականապես ձևավորեց նոր կառավարություն՝ Սամսամ Սալթանեի վարչապետությամբ[2]:

Ոգեշնչված Հյուսիսային Պարսկաստան ռուսական ներխուժման փաստով, ելնելով երկրում հաստատված ներքաղաքական արտակարգ ծանր իրավիճակից և գնալով խորացող միջկուսակցական պայքարից, չնկատելով, որ լարվածությունը

---

[1] Տե՛ս **«Դրօշակ»**, № 4 (222), ապրիլ, 1912, էջ 86:

[2] Տե՛ս *"Сборник дипломатических документов..."*, вып. VII, с. 264.

սահմանադրական կառավարության և մեջլիսի միջև սուր բնույթ է կրում և հայտնի չէ, թե այն երբ կարող է թուլանալ, համոզված, որ Ղազվինում կենտրոնացած ռուս զինվորներն ու կազակները վաղ թե ուշ կշարժվեն Թեհրանի վրա – հաշվի առնելով այդ ամենը, Սավադկուհում թուրքմենական ցեղերից մեկի մոտ թաքնված նախկին շահը, իրավիճակը հարմար համարելով, դուրս եկավ ապաստարանից և կրկին նետվեց հրապարակ՝ գահին վերատիրելու ևս մի փորձ անելու համար:

Հարկ է նշել, որ Մահմեդ Ալիի այս նոր արկածախնդրությանը Պետերբուրգը հավանություն չէր տվել: Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովն այդ առիթով ասել էր. «Մահմեդ Ալին Պարսկաստան է վերադարձել ոչ միայն առանց մեր գիտության, այլև հակառակ մեր խորհրդի»[1]:

Մահմեդ Ալիի շուրջը կրկին հավաքվեցին նրա անձը պաշտող թուրքմեն ցեղապետներն՝ իրենց հրոսակախմբերով: Նրանք առաջ շարժվելով գրավեցին Շահրուդը: Եթե նախկին շահի ճանապարհը ժամանակին չփակվեր, նա կարող էր առաջանալ Թեհրանի ուղղությամբ: Բայց Եփրեմը թուրքմեններին ժամանակ չտվեց՝ նրանց դեմ ուղարկեց 150 հոգանոց ջոկատ՝ Մոնթասեր Դովլեի գլխավորությամբ, որի առջև խնդիր դրվեց հասնել Դամգան և փակել հակառակորդի առաջխաղացման ճանապարհը: Բայց ավելի արագ չարժվելով, թուրքմենական զորքն արդեն գրավել էր Դամգանը: Մոնթասեր Դովլեն ստիպված եղավ իր ջոկատը տեղակայել Սեմնանում՝ համալրման սպասելով: Շուտով ջոկատին միացավ 340 մարդուց բաղկացած օգնական զորամաս, որի կազմում էր նաև 40 հոգանոց հայ կամավորների ջոկատը՝ Գրիգորի գլխավորությամբ: Նոյեմբերի վերջին կառավարական զորքերի միավորված ջոկատն ազատեց Դամգանը, ապա, հետապնդելով թշնամուն, պաշարեց ու գրավեց Մովլաթ-խան ամրոցը: Դամգանի գրավման մասին կարդում ենք. «Սեմնանում կենտրոնացած 600 հոգանոց ֆիդայիների ջոկատը, Գրիգորի ընդհանուր ղեկավարությամբ, հաջորդա-

[1] **«Արշալույս»**, № 2, 1 մայիսի 1912 թ.:

բար երկու ընդհարում ունեցավ Դամգանը գրաված Մոհամմեդ Ալի շահի համախոհների հետ. առաջին անգամ ֆիդայիները պարտվեցին կորուստներով, Գրիգորը թեթև վիրավորվեց դեմքից: Երկրորդ անգամ ֆիդայիներին հաջողվեց թշնամուն դուրս մղել Դամգանից և գրավել քաղաքը»[1]:

Նոյեմբերի վերջերին Եփրեմը Դամգան ուղարկեց օգնական նոր զորամաս, որի կազմում էր նաև հայ կամավորների 100 հոգանոց ջոկատը՝ Սիմոնի գլխավորությամբ: Կառավարական զորքերը չուտով վերագրավեցին Շահրուդը: Մահմեդ Ալիի զորքը նահանջեց Աստրաբադ:

Հեղափոխական ուժերի այդ գործողությունների արդյունքում նորից ձախողվեց Թեհրանը գրավելու Մահմեդ Ալիի ծրագիրը:

Աստրաբադից Մահմեդ Ալին Թեհրանի կառավարությանը դիմեց հետևյալ սպառնալից հեռագրով. «Խղճացէ՛ք իմ ժողովրդին եւ վե՛րջ տուէք ինձ հետ կուում ձեր յամառութեանը: Նկատի ունեցէ՛ք, որ գահի վրայ իմ իրաւունքները վերականգնելու համար ձեր դէմ կուելու եմ մինչեւ արեանս վերջին կաթիլը: Ես շրջապատուած եմ հաւատարիմ թուրքմէններով, որոնց թիւը 15 հազարից աւելի է, բոլորն էլ լաւ զինուած եւ նիւթապէս ապահով: Հէնց նրանց հետ եմ գալիս ձեր դէմ: Իմ եղբօր հրամանատարութեան տակ նոյնպէս 15 հազարանոց զօրք կայ՝ կազմուած քրդերից եւ այլ ցեղերից: ... Այսուհետեւ դուք էք պատասխանատու ապագայ արիւնահեղութեան համար, եթէ կամաւոր չհեռանաք իշխանութիւնից»[2]:

Եվ իսկապես, Թուրքիայի սահմանակից տարածքներ փախած Սալար Դովլեն նույն ժամանակ նորից հայտնվեց Իրանական Քուրդիստանում: Քրդական գյուղերում կրկին զորք հավաքելով, նա սկսեց սպառնալ Քերմանշահին:

Սալար Դովլեի նոր հայտնությունը չղթայական ցնցումների նոր ալիք առաջ բերեց: Միջցեղային արյունալի ընդհարումները, ավեր-կողոպուտները թեև չէին կարող սպառնալ պետության

---

[1] **Տե՛ս Михаил Сергеевич Иванов,** *Иранская революция 1905-1911 гг., с. 488-489.*

[2] **«Հորիզոն»**, № 15, 24 հունվարի 1912 թ.:

գոյությանը, բայց անկայուն վիճակ էին ստեղծում ամենուրեք: Արաբներն ու աֆղանները շարունակում էին ասպատակել Քերմանը և շրջակա գավառները, Քերմանշահի մոտերքում արյունալի ընդհարումների մեջ էին սանջաբիներն ու քալհորները: Շիրազում կաշկայները, ցեղապետ Սովլաթ Դովլեի և նրա եղբոր գլխավորությամբ, երկու թշնամական մասերի բաժանված, կատաղի կռիվներ էին մղում միմյանց դեմ և այլն: Ի լրումն այդ ամենի, զանազան թափառական ցեղեր ու ավազակախմբեր, օգտվելով ընդհանուր չփոթությունից, կողոպտում էին խաղաղ բնակչության ունեցվածքը[1]:

Չնայած դրան, Սալար Դովլեն առաջվա պես շարունակում էր մնալ ամենամեծ ու ամենավտանգավոր խռովարարը, և հենց այդ պատճառով կառավարությունն իր զինված ուժերը միայն նրա դեմ կռվի հանեց:

Եփրեմը Սալար Դովլեի զորքի դեմ ուղարկեց մի ջոկատ Յար Մոհամմեդ խան Քերմանշահիի հրամանատարությամբ, որը հաջողեց առանց դժվարության Քերմանշահ մտնել և այնտեղ բանակել: Հաշվի առնելով, որ Յար Մոհամմեդի ջոկատը չի կարող դիմանալ Սալար Դովլեի զորքի սպասվող գրոհին, Եփրեմը որոշեց կտրել հակառակորդի զորքի թիկունքային ճանապարհները և շրջապատման սպառնալիքի տակ նրան ստիպել նահանջել: Այդ նպատակով նա Կում-Սոլթանաբադ ուղղությամբ ուղարկեց 500 հոգանոց զորամաս, որի կազմում էր նաև Քեռու ջոկատը: Միաժամանակ, Թեհրանի կառավարությունը Քերմանշահի նահանգապետ նշանակեց արքայազն Ֆարման Ֆարմային (իսկական անունը՝ Աբդոլ Հոսեյն Միրզա)՝ նրա տրամադրության տակ կազակներից ու հեծյալներից կազմված ջոկատ դնելով:

Դուրս գալով Համադանից, Ֆարման Ֆարմայի ջոկատը գնաց Ալբուլաղի ուղղությամբ և հանդիպեց առաջացող Սալար Դովլեի մի զորամասի՝ Մահմեդ Ալիի երկրպագուներից մեկի հրամանատարությամբ: Հանկարծակիի եկած սահմանադրական

---

[1] Տե՛ս **«Արշալույս»**, № 1, 15 ապրիլի 1912 թ.:

ջոկատը մարտի մեջ մտավ, բայց, զգալի կորուստներ կրելով, հակառակորդի ճնշման տակ նահանջեց Համադանի մերձակայքում գտնվող Բահար գյուղը: Կումից Համադան եկող Քեռու գլխավորած հայկական ջոկատը չուտով կանգ առավ Բահարում: Քեռին ցավով ականատես եղավ Ֆարման Ֆարմայի՝ ներքին հակասություններից բզկտվող ջոկատի աննախանձելի վիճակին: Նրան այլ բան չէր մնում, քան հեռախոսով կապվել Եփրեմի հետ և խնդրել, որ նա գա Համադան՝ հարթելու համար ծագած հակասությունները նշված ջոկատում և Համադանի շրջանում գտնվող ուրիշ կառավարական զորամասերում:

Եփրեմը Համադան գնալու ժամանակ չունեցավ, որովհետև նույն ժամանակ Թեհրանում վիճակը նորից բարդացել էր մի կողմից սահմանադրականների շրջանում ծագած անհամաձայնությունների և հակասությունների սրման, մյուս կողմից՝ երկրում անկայունության և խռովության նոր օջախներ առաջ գալու պատճառով:

Երկարատև կռիվներից ու ծայր աստիճան լարված դրությունից հոգնած ու թուլացած ժողովուրդը բոլորովին անտարբեր էր դարձել և դատապարտվել անգործության, դադարեցրել ամեն աշխատանք: Թվում էր, թե նա այլևս կորցրել է իր բովանդակ հավատը և, մանավանդ, դժբախտ հայրենիքի վերածնության մասին այնքան փայփայած հույսերը:

Վերլուծելով երկրում ստեղծված ծանրագույն վիճակը, 1912 թ. ապրիլի 15-ից Թեհրանում լույս տեսնող «Արշալույս» թերթն իր առաջին համարում գրում էր.

«Ընդհանուր ու բացարձակ սնանկութիւն ամեն ասպարիզում, անօրինակ այլասերումն, անլուր հակահասարակական նկարագիր, համատարած խաւար ու անկարութիւն: Ահա՛ մեր իրականութեան ստեղծագործած յեղափոխական շրջանը: Ահա՛ ինչ տուեց մեր ժողովուրդին նրա շարժումը. դա մեր ներկայ կեանքի եւ նրա պայմանների անխուսափելի հետեւանքն է»[1]:

Պետական դումայի 1912 թ. ապրիլի 13-ի նիստում Ռուսաս-

---

[1] **«Արշալույս»**, № 1, 15 ապրիլի 1912 թ.:

տանի արտաքին գործոց նախարար Սազոնովը խոսելով կառավարության արտաքին քաղաքականության մասին, Պարսկաստանի վերաբերյալ հատվածում ասել էր. «Պարսկաստանի ներքին հուզումները դեռ չեն վերջացել. երկիրը դեռ գտնւում է մշտական տագնապների եւ անկարգութիւնների մէջ: Նոր կառավարութիւնը դեռ չի ամրապնդւել, որպէս զի կարողանայ ցանկալի կարգ ու հանգստութիւն մտցնել»[1]:

Սազոնովի ելույթից պարզ երևում էր, որ դեռ 1911 թ. նոյեմբերից ռուսաց կառավարությունն արդեն ձեռք էր քաշել նախկին շահից, քանի որ նա էր եղել Պարսկաստանում տեղի ունեցած երկարատև անկայունության հիմնական պատճառը: Ռուսական այդ նոր քաղաքականության հետ համերաշխ էր Լոնդոնը: Երկու կառավարություններն այժմ շատ էին շահագրգռված երկրի ներքին կռիվների դադարեցմամբ և կայունության հաստատմամբ: Հենց այդ պատճառով նրանք նախկին շահին համոզում էին հեռանալ Պարսկաստանից և, միաժամանակ, Թեհրանի կառավարությանը պատրաստակամություն էին հայտնում անհրաժեշտ օգնություն ցույց տալ՝ ամրապնդելու իր իշխանությունը երկրում[2]:

Տեղեկանալով, որ տվյալ ժամանակում Պարսկաստանի իսկական տերերը՝ Ռուսաստանն ու Անգլիան այլևս մտադիր չեն առաջվա պես սատար կանգնելու իրեն, նաև համոզվելով, որ այլևս չի կարողանալու զենքի ուժով վերատիրանալ գահին, Մահմեդ Ալին, օգտվելով թանձր մառախուղից, իր մի քանի ուղեկիցների հետ փախչում է Սարի, իսկ այնտեղից նավակով անցնում է Գյումուշ-Թեփե՝ նպատակ ունենալով նավարկել դեպի ռուսական մերձակա տարածք կամ ռուսական նավերից մեկը, ինչն առայժմ նրան չի հաջողվում: Բայց նա չէր կորցնում իր հույսը, որ ուր որ է Սալար Դովլեն իրեն օգնության է գալու: Եվ, իսկապես, վերջինս Աստրաբադի նահանգի կառավարական ուժերի հետ ընդհարվելուց հետո, ձգելով իր հրոսակները Շահ-

---

[1] **«Արշալույս»**, № 2, 1 մայիսի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

րուդում, 60 ձիավորով գալիս է Խոջանեֆես, որտեղ աշխատում է ապստամբություն բարձրացնել Մահմեդ Ալիի օգտին, Թուրքմեններին հավատացնելով, որ նա շուտով գալու է այդտեղ: Թուրքմեններն ապստամբություն չեն բարձրացնում, բայց պատրաստվում են նախկին շահին հանդիսավոր ընդունելություն ցույց տալ՝ մնալով թշնամական դիրքում ռուսական զորքերի նկատմամբ: Իրենց թշնամանքը ռուսների հանդեպ չէին թաքցնում նաև Էնզելիի շրջանի Թուրքմենները, որոնք նույնպես պատրաստ էին իրենց մոտ ապաստան տալ նախկին շահին և ապահովել նրա անվտանգությունը[1]: Ելնելով ստեղծված վիճակից, Կասպից ծովի ռուսական նավատորմի հրամանատարի կարգադրությամբ՝ «Արդահան» մարտանավը Բաքվից մեկնում է պաշարելու պարսից ափերը Էնզելիի մոտ և կանխելու Թուրքմենների ապստամբական նկրտումները[2]:

Այս պայմաններում բացառված չէր, որ «Արդահանը» ռմբակոծեր Գյումուշ-Թեփեն: Նախկին շահն այնտեղ մնալը վտանգավոր համարելով, այնտեղից մեկնում և թաքնվում է Թուրքմենական ցեղերից մեկի մոտ՝ փորձելով հետքը կորցնել: Որոշ ժամանակ նրա մասին որևէ ստույգ տեղեկություն չկար Թեհրանում[3]:

Պարսկական կառավարությունը հայցադիմում ներկայացրեց Թեհրանի ռուսական դեսպանությանը՝ խնդրելով Մահմեդ Ալիին թույլ չտալ մտնել ռուսական սահմաններից ներս և ապաստան չտալ կայսրության որևէ վայրում[4]:

Ստեղծված իրադրության մեջ Մահմեդ Ալիին մնում էր միայն մի ելք՝ կրկին փախչել Ռուսաստան:

Ռուսական դիվանագիտության համար ծանր վիճակ էր ստեղծվել: Ցարական արքունիքը համաձայն էր, որ Մահմեդ Ալին չարունակի ապրել Օդեսայում, բայց արտաքին գործերի նախարարությունը դեմ էր և գտնում էր, որ նախկին շահին կա-

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»** (Թիֆլիս), № 16, 15 նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս *"Сборник дипломатических документов..."*, вып. VII, с. 130.

[4] Տե՛ս նույն տեղում:

ելի է ներս ընդունել, նշանակել ցմահ թոշակ, միաժամանակ առաջարկել մշտական բնակության մեկնել արտասահմանյան որևէ երկիր: Մահմեդ Ալին ընդունեց այդ պայմանները և խոստացավ մեկընդմիշտ հրաժարվել գահի համար կռիվ մղելուց: Դրանից հետո 1911 թ. դեկտեմբերի սկզբին նա անցավ ռուսական սահմանը: Բաքվից «Ախուրեան» թերթին հաղորդում էին. «Նախկին շահին տանող շոգենավն անցաւ՝ առանց կանգ առնելու Բաքւում»[1]:

ԹԱՎՐԻԶԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ

Չնայած Մահմեդ Ալին հեռացել էր Պարսկաստանից, բայց միապետական ուժերը հույսը դեռ չէին կորցրել և շարունակում էին վերջին կռիվները սահմանադրական ուժերի դեմ: Ռուսական հրամանատարության համակրանքի պայմաններում նրանք շատ տեղերում ռազմական հաջողություններ էին ունենում:

Բացառություն եղավ Թավրիզը, որտեղ ռազմական գործողությունները համառ բնույթ ընդունեցին և շարունակվեցին մինչև 1912 թ. հունվարի առաջին օրերը:

Թավրիզի դեմ միապետական ուժերի կռիվն այս անգամ փաստորեն վարում էր անվերապահորեն ռուսական հրամանատարության աջակցությունը վայելող հայտնի մտավորական, Մարաղայի գավառապետ Շուջաա Դովլեն (Սամադ խան), որն իր զորամասով եկել էր «պատժելու անիշխանականներին»:

Նախկին շահի և Սալար Դովլեի ռազմերթերի ծրագրերով՝ Շուջաա Դովլեի վրա խնդիր էր դրված՝ Զենջանը և Ղազվինը գրավելու միջոցով փակել դեպի մայրաքաղաքի արևմտյան մատույցներ տանող ճանապարհները: Բայց դեպի Զենջան և Ղազվին չարժվելու փոխարեն նա որոշեց գնալ Թավրիզի վրա՝ դեպի իր բազմամյա փափագի նպատակը:

Թավրիզյան զինված ապստամբության ժամանակ Շուջաա

---

[1] ***«Ախուրեան»,*** *№ 14, 4 մարտի 1912 թ.:*

Դովլեն քաղաք մտնելու անհաջող ճիգեր էր արել, իսկ հիմա, տեսնելով, որ Թավրիզն անպաշտպան է, որոշել էր օգտվել ընձեռված հնարավորությունից ու գրավել այն: Իր այդ որոշումով նա օբյեկտիվորեն թուլացրեց հետադիմական ուժերի նախապատրաստած գրոհը Թեհրանի վրա և, դրանով իսկ հակահեղափոխության դեմ պայքարի նոր օջախ ստեղծեց Թավրիզում:

Թավրիզի հեղափոխականները դեմոկրատական նոր շարժում ստեղծեցին: Քաղաքը վաղեմի թշնամուց պաշտպանելու համար Թավրիզի անջումենը կարողացավ նորից ստանձնել առաջնորդի դերը և զինել տեղի ֆիդայիներին: Այդ նպատակի համար կրկին օգտագործվեցին Արքում պահվող հրացաններն ու փամփուշտները: Միևնույն ժամանակ, երկու-երեք տարի առաջվա նման, Թավրիզցի հեղափոխականներին օգնության չտապեցին Ատրպատականի տարբեր շրջաններից ու մարզերից, ինչպես նաև Կովկասից եկած զինյալներ: Քանի որ Թավրիզում ավելացել էին կառավարական ուժերը, Սալմաստից այնտեղ ժամանեցին Դաշնակցության և Սալմաստի գավառում հեղափոխության ժամանակ կարևոր դեր խաղացած հայտնի Հաջի Փեշնամազի ջոկատները: Մի բազմամարդ ջոկատ էլ Թավրիզ էր եկել Ուրմիայից:

Հասնելով Թավրիզի մատույցները, Շուջաա Դովլեն գրավեց Վասպինջը (Վասմինջ) և, ինչպես երևում է Թավրիզում ռուսաց գլխավոր հյուպատոս Ալեքսանդր Միլլերի հեռագրից, որոշեց քաղաքը գլխատել ղեկավարներից՝ պահանջելով հանձնել անջումենի ղեկավարներին: Բանակցությունները Շուջաա Դովլեի հետ հաջողություն չունեցան, գրում էր Միլլերը: Շուջաա Դովլեն պահանջել էր մինչև այդ օրվա կեսօրը հանձնել անջումենի ծայրահեղական անդամներին՝ սպառնալով մտնել Թավրիզ: Պահանջը չկատարվեց: 1000-ից ավելի ֆիդայի եռանդագին դիմադրության էր պատրաստվում. քաղաքից դուրս փորվեցին խրամատներ: Հայերը, վրացիները և կովկասյան թաթարները կատարում էին գլխավոր դերը: Թավրիզի պաշտպանության կազմակերպումը Թեհրանից ղեկավարում էր Եփրեմը: Թեհրանի սահմանադրական կառավարության տրամադրած փողերի շնորհիվ արագորեն հավաքված զորքից միայն 400 հոգին հա-

մաձայնեց կռվի մեջ մտնել քաղաքից դուրս գտնվող բլուրների վրա կառուցված ամրությունները պաշտպանող միապետական ուժերի դեմ: Տեղացի և Ռուսաստանից ու Թուրքիայից եկած հայերը այդ 400 հոգու մեջ էին: Հայ մարտիկները հեռագրով աշխուժորեն կապվում էին Եփրեմի հետ և նրանից հրահանգներ ստանում:

Դեռևս 1911 թ. սեպտեմբերին Շուջաա Դովլեն Թավրիզը գրավելու մի քանի լուրջ փորձեր էր արել: Նա հաջողել էր ժամանակավորապես վերցնել քաղաքի Ղարամելիք, ապա՝ Ահունի ու Շամգազան արվարձանները, բայց հեղափոխական ջոկատների բուռն գրոհներով դրանք հետ էին խլվել: Շուջաա Դովլեի ավազակախմբերի գրոհները չարունակվել էին նաև հոկտեմբերին, բայց նորից հաջողություն չէին ունեցել:

Եվ ահա՛ հիմա, ռուսական ներխուժման պայմաններում՝ Շուջաա Դովլեի համար ստեղծվել էր իր «կյանքի նպատակին» հասնելու ամենաբարենպաստ վիճակը:

Թավրիզը գրավելու համար կատաղի մարտեր սկսվեցին: Քաղաքի պաշտպանների հիմնական մարտունակ ուժը մնացել էին հայկական ջոկատները, որոնցից առավել խոշորը գտնվում էր Արտաշես Սուջյանի հրամանի տակ: Այս հարյուրյակի մեջ 40 հոգին Սալմաստից էին, մյուսները՝ Կովկասից: Դա այն պահն էր, երբ Նիկոլ Դումանը (Կարա Փափախ) ոչ միայն Թավրիզի հայկական ջոկատների, այլև քաղաքի բոլոր զինված ուժերի ընդհանուր հրամանատարն էր:

Թավրիզի պաշտպանությանը հայերի գործուն մասնակցությունը հույժ անհանգստացրել էր Ռուսաստանի հյուպատոս Միլլերին: Նա Թեհրանի ռուսաց դեսպանությանը հայտնում էր, որ տեղացի հայերը Մահմեդ Ալիի դեմ լայն քարոզչություն են տանում, միաժամանակ թույլտվություն էր խնդրում՝ հայերից և մյուս հեղափոխականներից հրացանները հետ խլելու համար: Մերժում ստանալով՝ հյուպատոսը Պոկլևսկի-Կոզելին խորհուրդ տվեց պարսկական կառավարությունից պահանջել, որպեսզի Թավրիզում եղած զենքը հանձնվի պարսկական կազակներին: Նա նաև տեղյակ էր պահում, որ իբր, հայերը և տեղացի ֆիդայիները պատրաստվում են հարձակվել Թավրիզում գտնվող ռուս

կազակների ջոկատի վրա և զինաթափել:

Զինաթափման պահանջը Թավրիզում զայրույթի փոթորիկ առաջ բերեց: Իրադրությունը ծայրահեղ չիկացավ, երբ 1911 թ. դեկտեմբերի սկզբից տեղի ռուսական ջոկատին աջակցելու համար Կովկասից օժանդակ ուժեր սկսեցին Թավրիզ ժամանել:

Այդ վճռական պահին, չգիտես ինչու, ՀՅ դաշնակցության Թեհրանի կենտրոնական կոմիտեն հրատարակեց մի թռուցիկ, որով հայտնվում էր, թե կուսակցությունը մերժում է չարունակել զենքով և բարոյապես պաշտպանել ներկա կառավարությանը, որովհետև նա չի կատարել սահմանադրությունը վերահաստատելու իր հանձնառությունը[1]:

1911 թ. դեկտեմբերի 8-ից ռուսական զորքը և Շուջաա Դովլեի միապետական ուժերը համատեղ վճռական հարձակում գործեցին Թավրիզի վրա: Քաղաքի պաշտպանների դիմադրությունն ընկճելու համար ցարական զինվորական հրամանատարությունն ստիպված էր թնդանոթային հաշվարկներ ունեցող նոր անձնակազմներ ուղարկել կռվի[2]: Մի քանի օր տևած հրետակոծությունը ջլատեց սահմանադրական ջոկատների ուժերը և բնակիչների շրջանում խուճապ առաջ բերեց: Սրանք հոգնել էին դեռևս 1908 թ. ամռանը սկիզբ առած երկարատև կռիվներից և այլևս չէին ուզում դիմադրել: Համատեղ հարձակողական գործողություններով համարյա անարգել մտնելով Թավրիզ, հակահեղափոխական ուժերը տեր դարձան քաղաքին:

Զինված ընդհարումները վերջացել էին, բայց Թավրիզը դեռ չէր մտել խաղաղ դրության մեջ:

1911 թ. դեկտեմբերի 14-ին Թավրիզ է հասնում գեներալ Մնարսկու հրամանատարությամբ ռուսական պատժիչ արշավախումբը: Մոտենալով Թավրիզին, զորքը, բնակչությանը

---

[1] *Տե՛ս* ***«Առաջամարտ»****, № 1075, 14 դեկտեմբերի 1911 թ.: «Առաջամարտը» անմիջապես հաջորդել էր ՀՅԴ Կ. Պոլսի օրգան, պետական գրաքննության պատճառով խափանված «Ազատամարտին» (տե՛ս* ***Արտաշէս Տէր Խաչատուրեան****, Հ. Յ. Դաշնակցութեան 100ամեայ մամուլը 1890-1990, Պէյրութ, 1990, էջ 43, 44, 48):*

[2] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 12, 20 հունվարի 1912 թ.:*

ահաբեկելու նպատակով, սկսում է անընդհատ համազարկեր տալ, որոնք չեն դադարում նաև քաղաքի ներսում:

Գրավված Թավրիզը չունչը պահած սպասում էր քաղաքի ռուսաց զորքի հրամանատար նշանակված զորավար Վորոբանովի հետագա գործողություններին[1]:

Սկզբում քաղաքում հարաբերական հանգիստ էր, բայց մեկ շաբաթ հետո լայնածավալ բռնարարքներ սկսվեցին: Մեծ ծավալներ ընդունեցին ձերբակալությունները, գործում էին ռազմաղաչտային դատարանները, կախաղանների վրա ճոճվում էին նորանոր զոհեր: Միայն մեկ օրում Մաշղի մեյդանում կախաղան հանվեց 10 հոգի[2]: Կախաղան հանվածների թիվը միայն Թավրիզի անկումից հետո եկած տասը օրում հասավ 30-ի[3]: Նրանցից 3-4-ը կախվել էին Շուջաա Դովլեի, մնացածները՝ ռուսական զինվորական հրամանատարության կարգադրությամբ: Կախաղան հանված մի շարք նշանավոր հեղափոխական գործիչներից էին Մուջտեհիդ Սղաթը Իսլամը, Հաջի Ալի Դավաֆրուշը, Շեյխ Սելիմն իր եղբոր հետ, Զիա օլ Ուլեմա-ն և նրա ազգական Մահմեդ-ղուլի խանը (որը նաև Սաթթար խանի ազգականն էր), «Շաֆագ» պարսկերեն թերթի խմբագիր Մահմեդ օղլին և այլոք, որոնց բոլորի տները հիմնահատակ քանդվեցին: Զինվորական նահանգապետ Ամանոլլահ Միրզան (նույն ինքը՝ Զիա Դովլե) ապաստանեց անգլիական հյուպատոս Շիրլինի մոտ, ապա ինքնասպանություն գործեց: Մի քանի մեղադրյալներ կարողացան միայն փախուստով փրկվել: Օրինակ՝ Թավրիզի ոստիկանապետ Մուրադ Սոլթանը դաշնակցականների պաշտպանության տակ և նրանց աջակցությամբ ապահով հեռացավ քաղաքից: Այդտեղից կարողացավ ճողոպրել նաև Ամիր Հեշմաթը:

Գեներալ Մնարսկու արշավախմբի դաժանություններին զումարվում էին Շուջաա Դովլեի և նրա զորքի վայրագություն-

---

[1] Տե՛ս **«Լուսարձակ»**, № 34, 22 դեկտեմբերի 1911 թ. (4 հունվարի 1912 թ.):

[2] Տե՛ս **Յովսէփ Յովհաննիսեան,** Յուշեր, էջ 134:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 12, 20 հունվարի 1912 թ.:

ները: Սա առիթը բաց չէր թողնում իր անգթությունները գործադրելու սահմանադրականների կամ նրանց համակրողների նկատմամբ:

Հաշվի առնելով Շուջաա Դովլեի նվիրվածությունը և «անձնազոհ ծառայությունը», ռուսական հրամանատարությունը նրան Ատրպատականի նահանգապետ նշանակեց և Թեհրանի հաստատմանը ներկայացրեց, բայց կառավարությունը մերժեց այդ նշանակումը[1]:

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ ռուսական կողմի դաժանությունների հիմնական պատճառն այն ոճրագործություններն էին, որոնք կատարվում էին ռուս զինվորների ու կազակների նկատմամբ: Համարյա ամեն օր գտնվում էին ռուս զինվորների խոշտանգված ու այլանդակված դիակներ: Այսպես, 1913 թ. հունվարի 2-ին Թավրիզում մի պարսիկի տան բակում թաղված գտել էին ռուս 8 զինվորի դիակ: Դրան ի պատասխան տանտերը կախաղան բարձրացվեց, իսկ տունը հիմնահատակ արվեց: Մեկ տասնյակից ավելի անհետացած ռուս զինվորների դիակները փնտրում էին, բայց չէին գտնում:

Ատրպատականում իրերի վիճակը շատ անորոշ էր: Նահանգապետ նշանակված Շուջաա Դովլեի պաշտոնը Թեհրանը տակավին չէր հաստատել, ուստի հյուպատոսները նրան դեռ չէին շնորհավորում: Խոսվում էր, թե Ատրպատականի նահանգապետ է նշանակվել Սիփահդարը, բայց դա էլ շուտով ժխտվեց:

Թավրիզի քաղաքային վարչությունը և անջումենը չէին գործում: Միապետականներն ամենուրեք երևան էին եկել աներկյուղ, իրենց զգում էին դրության տերը և նախկին շահի վերադարձն էին պահանջում:

Ռուսական զորքերի՝ Պարսկաստան ներխուժելու առաջին օրից Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի ու եվրոպական այլ երկրների կառավարությունները լարված ուշադրությամբ հետևում էին իրադարձությունների զարգացմանը: Եվրոպական ողջ մամուլը (սոցիալիստական, ազատական, պահպանողական) տարբեր դիրքերից դատապարտում էր Պե-

---

[1] Տե՛ս *“Сборник дипломатических документов...”*, вып. VII, с. 306.

տերբուրգի վարած քաղաքականությունը Պարսկաստանի ռուսական գոտում, իսկ գերմանական կառավարությունը ռուսների հետ գործարքի մեջ էր մեղադրում ոչ միայն Պարսկաստանի միապետական պարագլուխներին, այլև սահմանադրական կառավարությանը: Ավելին, Գերմանիան նույնիսկ հույս ուներ, որ ռուսական զորքերը Պարսկաստանում հանդիպելու են կառավարական զորամասերի ուժգին դիմադրությանը, որի հետևանքով թուլանալու են Ռուսաստանի դիրքերն այդ երկրում:

Պարսկաստանի համար այդ ճգնաժամային պահին Բեռլինում մի ձեռնհաս և կարող ներկայացուցիչ ունենալու անհրաժեշտություն էր առաջացել: Շահի խնամակալ Նասր օլ Մոլքի ընտրությունն ընկել էր Հովհաննես խան Մասեհյանի (նույն ինքը՝ Մոսայեդ Սալթանե) վրա, որն, արդարև, ամենահարմար, արժանավոր ու բանիմաց անձն էր այդ բարձր և պատասխանատու պաշտոնի համար: Բեռլին գնալու ճանապարհին կանգ առնելով Բաքվում, Մասեհյանը հանդիպումներ է ունենում տեղի հայության ներկայացուցիչների հետ, մանրամասն բացատրում Պարսկաստանի ընթացիկ վիճակը, անդրադառնում հայերի բռնած դիրքի փոփոխման անհրաժեշտության հարցին:

Իսկ ինչպիսի՞ն էր հայերի բռնած դիրքը ռուսական ներխուժման նկատմամբ:

Թավրիզի համար կռվի երկրորդ օրը քաղաքում ռուսաց հյուպատոս Ալեքսանդր Միլլերը իր մոտ հրավիրելով հայոց թեմական առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանին, նրան զգուշացրել էր, որ եթե հայերը մասնակցություն ունենան ռուսների դեմ կռվին, ապա դա աղետալի հետևանքներ կունենա նրանց համար*: Առաջնորդը խոստանում է հարցն անմիջապես դնել Թեմական խորհրդի քննարկմանը և պաշտոնական պատասխան տալ:

Ռուսական պահանջը Թեմական խորհրդում քննարկելուց

---

* «20րդ դարի սկզբին Ատրպատականի հայութեան թիւը չուրջ 35 հազար էր, որից 5 հազարը՝ Թաւրիզում». տե՛ս Նորայր Մամյանի «Ատրպատականի հայոց թեմը» ուսումնասիրություն-հոդվածը «Բաֆֆի» տարեգիրք, Ա տարի, 1969, էջ 349:

հետո առաջնորդը ներկայացել էր հյուպատոսին և հավաստիացրել, թե Ատրպատականի հայությունը որևէ մասնակցություն չի ունենալու ռուս-պարսկական հակամարտությանը, համայնքը մնալու է չեզոք և փորձելու է երկու կողմերի հետ տանելի հարաբերություններ ունենալ:

Միլլերը գոհունակություն էր հայտնել և խնդրել իր ողջույնները հաղորդել համայնքին[1]:

Իմանալով այդ մասին, Թավրիզի Թուրք ղեկավարությունը հայոց առաջնորդարանից պահանջել էր հետ վերցնել Միլլերին տված խոստումը, հրաժարվել չեզոք պահվածքից և գործուն կռվի մեջ մտնել «ռուս զավթիչների» դեմ:

Երբ թեմական առաջնորդը կրկին հաստատել էր որդեգրած քաղաքականության անփոփոխ լինելը, քաղաքում Թուրքերից կազմվել էր սադրիչ մի խումբ, որը հայերի դեմ դարաններ էր լարում. կազմակերպվում էին ոչ-հայ խաղաղ քաղաքացիների ծեծ ու ջարդ, նույնիսկ սպանություններ՝ փորձելով արյուն քսել անմեղ հայերի վրա:

Ընդհարումների օրերին, այդ սադրիչ խմբի անդամներից մեկը անցք փորելով իր տան պատի մեջ, այնտեղից գնդակներ էր արձակել Ռուսաստանի հյուպատոսարանի վրա, իսկ խմբի ուրիշ անդամներ քաղաքում լուր էին տարածել, թե կրակողները հայերն են եղել: Բարեբախտաբար, մի ռուս ինժեներ տեսել էր, թե հրացանային կրակը որտեղից է տրվում: Նրա հաղորդման վրա՝ հյուպատոսարանում փարատվել էին հայերի նկատմամբ կասկածները[2]:

Բայց սպասումի ծանր ժամանակներ ապրող Թավրիզի մի բուռ հայությունը ենթակա էր նորանոր վտանգների: 1912 թ. հունվարի սկզբին նա կրկին տագնապի մատնվեց: Թուրքերի դրդմամբ՝ ռուս զինվորները ձերբակալում են հնչակյան գործիչ, մուժամբարցի Պետրոս խան Մելիք-Անդրեասյանին: Նա 1909 թ. մասնակցել էր Եփրեմի գլխավորած արշավախմբին Ռեշտից

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 12, 20 հունվարի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

մինչև Թեհրան[1]: Զբաղեցնելով ամբողջ Ատրպատականի ակցիզային վարչության կառավարչի պաշտոնը, Պետրոս խանը, միաժամանակ, Թեմական խորհրդի անդամ էր, Լիլավայի դպրոցի հոգաբարձու[2]: Նա մեղադրվում էր տեղի Թուրքերի մեջ ռուսների դեմ քարոզչություն անելու, Թավրիզի պաշտպանության օրերին քաղաքի միջնաբերդի ամրացման գործին մասնակցելու, Թավրիզի ոստիկանապետ, հակառուսական լայն գործունեություն ծավալած Մուրադ Սոլթանին թաքցնելու, ռուսների դեմ վերջին կռվին գործուն մասնակցություն ունենալու համար[3]: Գործը հանձնվում է ռազմաղաշտային դատարան: Քաղաքի հայերը բողոքի ժողովներ են գումարում, առաջնորդական փոխանորդը հեռագրեր է ուղարկում Պետերբուրգ՝ ռուսաց կայսրին, կայսրուհուն, արտաքին գործերի նախարարին, Կովկասի փոխարքա կոմս Իլարիոն Վորոնցով-Դաշկովին, կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցին և թախանձագին աղերսում միջամտել ու անմեղ մարդուն ազատել սպասվող դաժան պատժից:

Բայց 1912 թ. հունվարի 7-ին, չորսժամյա նիստից հետո, առանց վկաներին հարցաքննելու, դատարանը վճիռ է կայացնում Պետրոս խան Մելիք-Անդրեասյանին ենթարկել մահապատժի՝ կախաղան բարձրացնելու միջոցով: Նույն օրը իրականացվում է վճիռը: "Баку" թերթը մանրամասն նկարագրել էր դատական գործընթացը և մահապատիժը[4]:

Զբավարարվելով դրանով, թուրքերը նյութում էին հերթական ոճիրները: Նրանց ազդեցությամբ՝ հայոց առաջնորդարանում ստացվել էր ռուսաց հյուպատոս Միլլերի պաշտոնական գրությունը: Միլլերը տեղեկացնում էր, որ ռուսական բանակի գնդապետ Զապլինը կասկածներ է հայտնել, թե հայերի մեջ կան չարամիտ անձինք, որոնք մտածում են ռուսների նկատմամբ ահաբեկչություններ կատարել: Գրության վերջում հյուպատոսը

---

[1] Տե՛ս **Յովսէփ Յովհաննիսեան**, Յուշեր, էջ 238, 243:

[2] Տե՛ս **"Баку"**, 8 января 1912 г.

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում:

նախազգուշացրել էր, որ այդ դեպքում հեղափոխության եռանդուն մասնակից բազմաթիվ հայեր զոհ կգնան ռուսական վրեժխնդրությանը:

Միլլերից ստացված գրությունը շատ անհանգստացնող էր: Ահա թե ինչո՛ւ թեմական առաջնորդ Կարապետ սրբազանն անմիջապես ժողովրդին հրավիրում է Ղալա թաղի ս. Աստվածածին եկեղեցի, ուր հավաքված խուռն բազմության առջև հանդես է գալիս ազդու քարոզով: Նա հավաքվածներին հայտնի է դարձնում ռուսաց հյուպատոսի գրությանը, ապա բացատրում ռուսների ներկայության դրական նշանակությունը հայերի համար: Սրբազանը հիշեցնում է, թե ինչպես ռուսները նախորդ տարիներին սովից ու վերահաս պատուհասներից փրկեցին Թավրիզն ու ողջ Ատրպատականը, ապա համառոտ պատմական ակնարկ է անում ցույց տալու համար, թե անցյալում ռուսները որքան շատ բան են արել Արևելքի քրիստոնյաներին պաշտպանելու համար: Շեշտելով, որ Թավրիզաբնակ հայ հասարակությունը վերջին ընդհարումների ժամանակ որևէ անընդունելի արարք չի կատարել ռուսների և քաղաքում նրանց հաստատած կարգ ու կանոնի նկատմամբ, սրբազանն այնուհետև ասում է. «Մենք ոչ թէ երկիւղից դրդուած, այլ բարոյական պարտականութեան խոր գիտակցութեամբ ոչ մի սխալ քայլ չպէտք է անենք ռուսների հանդէպ»[1]:

Այդ ժողովրդական հավաքից հետո թեմի առաջնորդը նամակ է ուղարկում Միլլերին և հավաստիացնում, որ հայերը երբեք զենք չեն բարձրացնի ռուսների դեմ:

Կարապետ եպիսկոպոսի նամակում արծարծված մտքերը պատահական չէին: Նամակը միայն դիվանագիտական քայլ չէր և ոչ էլ պահի ազդեցությամբ կատարած զեղում, այլ՝ խոր համոզմունքի արդյունք:

Ամենայն հայոց նորընտիր կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին հղած նամակներից մեկում թեմական առաջնորդը գրել էր, որ Ղարադաղի և ընդհանրապես Ատրպատականի մյուս գա-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 12, 20 հունվարի 1912 թ.:

վառների բազմատանջ հայության համար տևական ապահովություն և հանգստություն կարելի կլինի ձեռք բերել միայն այն դեպքում, երբ նրանց վրա տարածվի մի զորեղ հովանավորություն: Իսկ այդպիսի հովանավորություն կարելի է սպասել միայն ռուսաց կառավարությունից: Նա ողջունում էր, որ այդ կառավարությունն իր ազդեցությունը Ատրպատականում և ընդհանրապես Հյուսիսային Պարսկաստանում է՛լ ավելի տարածելու համար փոխհյուպատոսություններ է ստեղծել նաև Ուրմիայում, Արդաբիլում, Խոյում և գործակալություններ Մարաղայում ու Սալմաստում: Նա նշում էր, որ այդ ամենը լրացուցիչ ապահովություն է տեղի քրիստոնյա հայ բնակչության համար: Կարապետ սրբազանը գոհունակություն էր հայտնում հայերի նկատմամբ Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Ալեքսանդր Միլլերի վերաբերմունքից: «Երեք տարուայ պաշտօնավարութեան միջոցին Ատրպատականում իր բազմահմուտ, խոհեմական եւ արդարագործ վարչականութեամբ [նա] շատ բարիք է արել այս երկրին եւ ի մասնաւորի հայ ժողովրդեան, շատ ուշադիր վերաբերմունք ցոյց տուել դէպի իմ բոլոր խնդիրներն ու դիմումները, եւ արժէր, որ Ձերդ Սրբութի՛ւն, առիթ գտնէիք առանձին գոհունակութիւն ցոյց տալու դէպի նա»[1]:

Թեմական առաջնորդի դատողությունները հիմնազուրկ չէին: Դրանք հետևանք էին այն դրական փոփոխությունների, որոնք տեղի էին ունենում ռուսական պաշտոնական քաղաքականության մեջ՝ հայության նկատմամբ: Անցել էին գոլիցինյան ժամանակները և Թուրք-հայկական ընդհարումների հետևանքով Պետերբուրգում կովկասահայության հանդեպ առաջացած բացասական նստվածքները: Նույն Պետերբուրգում տեղի ունեցած «Դաշնակցության գործի» դատական քննության արդյունքում ՀՅ դաշնակցության վրայից վերցվել էին անհիմն ու չինծու մեղադրանքները, նկատվում էին ազգային-հեղափոխական երկու կուսակցությունների՝ Հնչակի ու Դաշնակցության՝ դեպի ռուսամետության դաշտ վերադառնալու առաջին միտումները:

---

[1] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 201, թ. 10:*

Այդ բոլորը չուտով իրենց ցայտուն արտահայտությունն էին գտնելու Հայկական հարցի վերաբացման գործում ռուսական դիվանագիտության հայամետ ջանքերի մեջ:

Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի՝ Միլլերին ուղարկած պատասխանից չափազանց դժգոհ մնացին տեղի Թուրքերը, դեմոկրատական կուսակցությունը և դաշնակցականների մի մասը:

Մահմեդ Ալիի՝ Պարսկաստանում կրկին հայտնվելը ժամանակավորապես ընդհատել էր դեմոկրատների և չափավորների միջև պայքարը, բայց նախկին շահի անկումից հետո դա նորից բորբոքվեց: Բախտիար Սամսամ Սալթանեի կառավարությունն սկսեց գործնականում իրականացնել ժողովրդի սահմանադրական իրավունքների ու ազատությունների սահմանափակմանն ուղղված իր ծրագիրը: Դեմոկրատներն իրենց հերթին ձգտում էին մեջլիսում անցկացնել իրենց թեկնածուներին: Ուստի այդ պայքարում նրանք կարիք ունեին նաև սոցիալ-դեմոկրատական և ազգային-սոցիալիստական կուսակցությունների, այդ թվում ՀՅ դաշնակցության աջակցությանը: Ձնայած վերջիններից ստացած աջակցությանը, դեմոկրատական կուսակցությունը չէր կարողանում նույնիսկ պահպանել ունեցած դիրքերը: Դրա հիմնական պատճառն այն էր, որ կուսակցությունը չէր մասնակցում ռազմական գործողություններին, զբաղվում էր զուտ քաղաքական և հատկապես խորհրդարանական գործունեությամբ: Հեռու մնալով ռազմական գործողություններից, դեմոկրատները հայերին կոչ անելով կռվի մեջ մտնել ռուսների դեմ, ցանկանում էին կրակից չագանակներ հանել ուրիշների ձեռքով:

Ինչ վերաբերում է ռուսական ռազմակալման նկատմամբ դաշնակցականների մի մասի անհանդուրժողական վերաբերմունքին, ապա դա օրեցօր փոխվում էր: Քանի որ հայ համայնքն, ամբողջությամբ վերցրած, անդրդվելի մնաց և չչեղվեց որդեգրած ուղուց, ՀՅԴ Վրեժի (Թավրիզի) կենտրոնական կոմիտեն սկսեց վարանել բռնած դիրքի ճշմարտացիության մեջ:

Հայոց առաջնորդի նամակից ընդամենը երկու օր հետո Թավրիզում ցրվեց հյուպատոս Միլլերի՝ Թուրք և հայ հասարակություններին ուղղված նոր հայտարարությունը, որով ազդարարվում էր, թե քաղաքում տեղի ունեցող ամեն մի չարամիտ

գործողությանը խստագույն պատիժ է հետևելու: Միաժամանակ, հյուպատոսը տներում զենք ունեցողներից պահանջում էր դրանք անմիջապես հանձնել ռուսական զինվորական հրամանատարությանը՝ սպառնալով խուզարկությունների ժամանակ զենք հայտնաբերելու դեպքում դրանց տերերին խստագույն պատիժների ենթարկել:

Հայերն առաջվա պես երկյուղում էին Թուրք բազմաքանակ բնակչության վրեժխնդրությունից, որը չէր կարողանում ներել ռուսների դեմ նախապատրաստված կռիվներին մասնակցելու հայերի մերժումը: Բացառված չէր, որ Թուրքերի նոր սադրանքների հետևանքով հայերը կարող էին ենթարկվել ռուսական զորքերի պատժիչ գործողություններին:

Այս պայմաններում թեմական առաջնորդը պահանջեց Թավրիզում դեռ մնացած հայ գործիչներից – որոնք թեև անմասն էին եղել վերջին դեպքերին, բայց նախորդ շրջանում գործուն մասնակցություն էին ունեցել կռիվներին – հեռանալ քաղաքից, որպեսզի տեղի հայերի համար նոր բարդություններ չստեղծվեն:

Կատարվեց այն, ինչը տարիներ առաջ կանխատեսել էր բնությունից խելոք ու հեռատես Նիկոլ Դումանը, երբ ասում էր, թե պարսկական հեղափոխությունը որևէ հեռանկար չունի, դա անխուսափելիորեն վիժելու է, իսկ դրանում հայերի մասնակցությունը համարում էր անմտություն, քանի որ միապետական հզոր Ռուսաստանը չի հանդուրժելու իր շահերի դեմ հանդես եկող հեղափոխական ուժերին:

Եթե Ատրպատականի հայոց առաջնորդը պարսկահայերին քարոզներով էր կոչ անում որևէ դիմադրություն ցույց չտալ ռուսներին, ապա Դումանը Թավրիզում նույնն անում էր հայ մարտիկներին հրամաններ արձակելով: «Ոչ մի ռուս զինվորի արյուն չպետք է թափվի հայի ձեռքով»,- ասում էր նա: Այդ դիրքորոշումն սկզբում առաջ բերեց Եփրեմի խոր դժգոհությունը, բայց հետո Թեհրանից հեռագրով Թավրիզի պաշտպաններին կարգադրություն ինջեցրեց չդիմադրել ցարական զորքերին:

Թավրիզից մի չարք դաշնակցական գործիչների հեռանալուց հետո Նիկոլ Դումանը գտավ, որ այնտեղ և առհասարակ Պարսկաստանում իր մնալն այլևս անիմաստ է: Նա կարողացավ

անփորձանք դուրս գալ քաղաքից. նախ գնաց Մուժամբար, ապա Սալմաստի վրայով անցավ Վան: Նրա հետ էին Ստեփան Թադևոսյանը (Սամսոն խան) և որոշ մարտական ընկերներ:*

ԴՅՈՒՅԱԶՆԱՊԱՏՈՒՄԻ ՎԵՐՋԻՆ ԱՐԱՐԸ: ԵՓՐԵՄԻ ՄԱՀԸ ԵՎ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերը մենք կանգ առանք այն տեղում, երբ խոսք էր լինում Սալար Դովլեի բանակի զորամասերից մեկի հետ սահմանադրական զորահրամանատար Ֆարման Ֆարմայի գլխավորած ջոկատի ընդհարման ժամանակ վերջինիս կրած պարտության մասին: Նահանջելով դեպի Համադան, Ֆարման Ֆարմայի ջոկատն այնտեղից ոչ հեռու հանդիպեց Քեռու ջոկատին:

1912 թ. հունվար-փետրվարին Հյուսիսային Պարսկաստանում երկու կողմերը պատրաստվում էին վճռական գործողությունների, որոնք վերսկսվեցին գարնան բացվելուն պես:

Նախկինի նման, Սալար Դովլեն իր բազմաքանակ հրոսակախմբերով պտտվում էր ողջ Հյուսիսային Պարսկաստանով մեկ: Նա ավելի համարձակ էր դարձել, քանի որ Թեհրանի կառավարությունում ուներ գաղտնի համակիրներ, իսկ ռուսական զրավման իշխանությունները նրա առջև որևէ արգելք չէին հարուցում:

Ահա՛ այս համարյա անհուսալի վիճակում Եփրեմը լարում էր ուժերը հակահեղափոխության հիմնական ուժը՝ Սալար Դովլեի զորքը ջախջախելու համար:

Ապրիլի 25-ին Եփրեմը Քեռու հետ Թեհրանից ռազմաղաչտ դուրս եկավ: Մեկնելուց առաջ ողջերթի հավաքված մի խումբ ընկերների ներկայությամբ նա իր հեծյալ մարտիկներին դիմեց հետևյալ խոսքերով.

---

* *Սիմոն Վրացյանը սխալմամբ գրել է, թե Նիկոլ Դումանը Պարսկաստանից հեռացել է 1910 թվին (տե՛ս* ***Սիմոն Վրացեան,*** *Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատ. Բ, էջ 184):*

«– Տղե՛րք, դուք լաւ պիտի իմանաք եւ խորապէս պիտի գիտակցէք, որ այդպէս պատրաստ, զէն ու զրահով մահւան դէմ ենք գնում:

Յայտնի չէ ռազմի դաշտից մեզնից ո՛վ կարող է վերադառնալ եւ ո՛վ այնտեղ մնալ:

Ուստի, պարզ ասում եմ ձեզ, ով վախենում է մահից, ով չի ցանկանում «ներկայ պայմաններում աւելորդ տեղը մեռնել», վերջապէս ով ձանձրացել է հայդուկի կեանքից, թող, հէնց այստեղ, կուի դաշտ մեկնելուց առաջ, առանց քաշւելու, զէնքերը ցած դնի եւ գնայ, իր համար հանգիստ ապրի:

Ոչ ոք նրա առաջը չի առնի:

Բայց հակառակ դէպքում – կուի շրջանում ով թիկունք ցոյց տայ, անմիջապէս, տեղն ու տեղը գնդակի զոհ կը դառնայ ...»[1]:

Ողջերթի մասնակիցներից մեկը հետագայում վերհիշել է.

«Մարտիկները սկսեցին քրթմնջալ, ապա բացարձակ իրենց դժգոհութիւնը յայտնեցին նրա այդ արտայայտութեան համար:

Այդտեղ՝ աւելի եւս համոզւած, որ դասալքութեան քարոզը ոչ մի ազդեցութիւն իսկ չի գործել իր տղաների վրայ, ձին առաջ քշեց: Եւ տղաները «ուռայով» հետեւեցին նրան:

Գնաց եւ այլեւս չվերադարձաւ ...»[2]:

Սալար Դովլեի զորքի հետ առաջին խոշոր ընդհարումը տեղի ունեցաւ Լարիջանում: Գահընկեց շահի եղբայրն ամրացված դիրքերում կուտակել էր հիմնականում քրդերից բաղկացած իր ամենամարտունակ ուժերին: Մոտենալով Սալար Դովլեի դիրքերին, Եփրեմը, առանց իրավիճակը հանգամանորեն ուսումնասիրելու, ապրիլի 27-ի լույսը դեռ չբացված, իր մարտիկներին տարաւ գրոհի: Անսպասելի հարվածից առաջին պահին չչմած քրդերը կարողացան ուշքի գալ և կատաղի դիմադրություն ցույց տալ, բայց, ի վերջո, ընկրկեցին և, ռազմադաշտում թողնելով մեծաթիվ սպանվածներ ու վիրավորներ, ցրվեցին տարբեր ուղղությունների վրա: Եփրեմի ձեռքն ընկավ մեծաքանակ ռազմա-

---

[1] **Յ. Էլմար,** Եփրեմ, էջ 570-571:

[2] Նույն տեղում, էջ 571:

վար, այդ թվում Ֆարման Ֆարմայի կառավարական զորքերից խլված թնդանոթները:

Սալար Դովլեի դեմ Լարիջանում տարած մեծ հաղթանակից հետո Եփրեմի զորքը չարունակում էր կռիվը՝ ջախջախելու համար նրա առաջապահի հրամանատար Մոջալլալ Սոլթանի զորամասը: Բուռն ընդհարումը տեղի ունեցավ Համադանից 15-20 կմ հեռավորության վրա գտնվող Բահար գյուղի մոտերքում՝ Սուրիջե գյուղի տարածքում:

Մայիսի 6-ի առավոտյան ժամը 5-ին Եփրեմն իր ֆիդայիների հետ դուրս է գալիս Բահար քաղաքամերձ գյուղից և առավոտյան ժամը 10-ին մոտենում է լեռների ստորոտին: Այստեղ նա հանդիպում է հակառակորդի առաջապահ ջոկատներին, որոնք կարճ դիմադրությունից հետո փախչում են դեպի Սուրիջե գյուղը: Կեսօրին մոտ Եփրեմին մոտեցավ 80 պարսիկ կազակ, իսկ կեսօրից հետո, ժամը երեքն անց կեսին՝ 500 բախտիար և Եփրեմի ֆիդայիների հետ չարժվեցին Սուրիջեի վրա: Այդ գյուղը բնական ամրությունների վրա էր, «վտանգաւոր դիրք ունէր ... եւ բոլոր ծակ ու ծուկերէն անընդհատ կը կրակէին մեր վրայ»[1],- պատմել է Եփրեմի կառապան Գրիչը, որն այդ պահին հրամանատարի կողքին էր: Մոտ 300 քրդեր մտնելով գյուղում գտնվող հին դալայի (բերդ) մեջ, որոշել էին մինչև վերջ դիմադրել: Արհամարհելով կարկուտի նման տեղացող գնդակները, Եփրեմն իր մի քանի ընկերներով դիմում է դեպի բերդի աշտարակներից մեկը, ուր ամրացել էին հակառակորդի զինյալներից 25-30 հոգի և անդադար կրակում էին[2]: Եփրեմի կողքին սպանվում է մասնագիտությամբ բժիշկ, հեղափոխության գործին անմնացորդ նվիրված պարսիկ Զոհրաբ խանը[3]: Նիկոլ անունով խմբապետը փորձում է վերցնել մարտական ընկերոջ դին, բայց ինքն էլ սպանվում է: Եփրեմի կողքին մնացել էր վերը նշված Գրիչը, որը հրա-

---

[1] ***Միքայէլ Վարանդեան***, *Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 299:*

[2] *Տե՛ս* ***«Հորիզոն»***, *№ 103, 17 մայիսի 1912 թ.:*

[3] ***Միքայէլ Վարանդեան***, *Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 300:*

մանատարին խնդրում է, ասելով. «Հայրի՛կ*, մի՛ գնա այնտեղ, վտանգաւոր է»[1]: Բայց Եփրեմն ուշադրություն չի դարձնում և նետվում է դեպի մարտական ընկերոջ՝ Զոհրաբի դիակը: Իսկ բերդի աշտարակից շարունակվում էր անդադար կրակը: Դեռ դիակին չհասած, Թշնամու գնդակներից մեկը խոցում է հերոսի ճակատը: Մահը վայրկյանական էր:

Դա 1912 թ. մայիսի 6 (19)-ի երեկոյան էր, ժամը 4-ն անց 20 րոպեին:

Վերջ գտավ հայ ժողովրդի քաջակորով զավակներից մեկի ալեկոծ կյանքը՝ նրա արտասովոր բեղուն գործունեության գագաթնակետին, նրա կորովի ամբողջական փթթումի շրջանում:

Եփրեմի մոտ գտնվող մարտիկներն անմիջապես վերցնում են դին և հետ տանում: Հերոսի անչնչացած մարմնի շուրջ հավաքվում են մարտական ընկերները և ուխտում վրեժխնդիր լինել:

Քեռին մի խումբ կտրիճներով մրրկարշավ խոյանում է դեպի աշտարակ: Կատաղի գրոհով նրանք խուժում են ներս, կոտորում քրդերի մեծ մասին, իսկ զենքերը վար դրած մի քանիսին դուրս են բերում աշտարակից և հրացանագարկ անում: Աշտարակի գրավման գործողության ընթացքում զոհվել էր հեղափոխական վեց մարտիկ՝ չորս հայ և երկու պարսիկ:

Երբ բերդն ու գյուղն ամբողջովին գրավված էին, Եփրեմի դիակի շուրջն է խմբվում ամբողջ զորքը: Մարտիկները ողբում են անդառնալի կորուստը: Զոհված հրամանատարի պարսիկ զինվորները նրա դիակի մոտ Ղուրանի վրա երդվում են, որ Թշնամուց վրեժ լուծելու համար կռվելու են մինչև արյան վերջին կաթիլը: Նրանք իրենց զայրույթն ամենից առաջ թափում են 300-ից ավելի գերիների վրա՝ կոտորելով բոլորին[2]: Դա քաղաքացիական պատերազմներին հատուկ սովորական դժխեմ պատկերներից մեկն էր:

---

* Եփրեմին այդպես էին դիմում նրա բոլոր զինվորները՝ հայ թե պարսիկ:

[1] **«Հորիզոն»**, № 103, 17 մայիսի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

Նահատակի դին տանելու համար կառավարությունը ավտոմոբիլ է ուղարկում Համադան: Սգո թափորը, շրջապատված զինվորներով, ուղղություն է վերցնում դեպի Թեհրան:

Եփրեմի մահից անմիջապես հետո կառավարությունը նրա փոխարեն զորքերի հրամանատար է նշանակում Քեռուն:

Հերոսի դին դեռ Թեհրանի ճանապարհին էր, երբ լուր հասավ, թե Մոջալլալ Սոլթանի 3000 հոգուց կազմված հակահեղափոխական զորքը գալիս է իր հրամանատարից զրկված սահմանադրական զորամասի վրա: Շուտով թշնամին հայտնվում է և զորամասը մտնում է մարտի մեջ: Մայիսի 8-ին հեղափոխական մարտիկները Քեռու գլխավորությամբ ջլատում են հակառակորդին, իսկ հաջորդ երկու օրերին ջարդում նրա գլխավոր ուժերը Ղորվայում և Դիզայում: Կովի դաշտից հազիվ ճողոպրելով, Մոջալլալ Սոլթանն ազատվում է գերվելուց[1]: Այնուհետև Քեռու զորքը գրավում է Սալար Դովլեի որջը համարվող Քանքավարը, իսկ հակառակորդի զորքի մնացորդները ցրվում են զանազան կողմերի վրա[2]: Փախուստ տալով, հակահեղափոխականները կովի դաշտում թողնում են 300 սպանված և 150 վիրավոր, գերի է ընկնում 200 հոգի, հաղթողների ձեռքն է անցնում 400 ձի և մեծաքանակ ռազմամթերք: Զգալի կորուստներ է ունենում նաև հեղափոխական զորքը. զոհվել և վիրավորվել էին 300 մարտիկներ[3]:

Թեև ոչ քիչ կորուստների գնով, այնուամենայնիվ կառավարական զորքը կատարել էր Եփրեմի դիակի վրա տված իր խոստումը:

Ֆարման Ֆարմայի կառավարական զորքը օգնության հասավ այն ժամանակ, երբ կռիվն արդեն հասել էր վախճանին[4]:

Սալար Դովլեն, որ ընդամենը երկու չաբաթ առաջ փայլուն հաղթանակ էր տարել սահմանադրական Ֆարման Ֆարմայի նկատմամբ և այլևս ապահով էր համարել իր անարգել մուտքը

---

[1] Մանրամասն տե՛ս АВПР, ф. Персидский стол, д. 3836, л. 7.

[2] Տե՛ս «Արշալույս», № 1, 15 ապրիլի 1912 թ.:

[3] Տե՛ս «Հորիզոն», № 103, 17 մայիսի 1912 թ.:

[4] Տե՛ս «Մշակ», № 98, 10 մայիսի, № 104, 17 մայիսի 1912 թ.:

Թեհրան, այժմ ստիպված էր նահանջել: Իսկ դա նշանակում էր, որ ջուրն է ընկնում Մահմեդ Ալիին վերստին գահ բարձրացնելու ծրագիրը:

Եփրեմի դիակը մայիսի 9-ին հասնում է Թեհրան: Իրենց ընկերոջ կորուստը ծանր էին տանում Սարդար Ասադը (Ալի-ղուլի խան Բախտիարի), Սիփահդարը (Ֆաթհոլլահ խան), Նասր օլ Մոլքը և նահատակի բոլոր զինակիցները: Չէ՞ որ 1909 թ. սկզբներից մինչև իր վախճանը նա եղել էր պարսկական սահմանադրության ոգին, նրա նվիրյալ պաշտպանը, երկրում ծավալված քաղաքական և ռազմական գործողություններին տոն տվողը: Թաղմանը մասնակցելու համար երկրի տարբեր ծայրերից Թեհրան էին գալիս զինվորական ու հասարակական բազմաթիվ գործիչներ: Գալիս էին նաև արտասահմանից: Եփրեմի ամենահարազատ ընկերներից մեկը՝ բախտիարների ցեղապետ Սարդար Բահադուրը (Սարդար Ասադի որդին), որը գտնվում էր երկրից դուրս, ստանալով հերոսի մահվան լուրը, չտապ վերադառնում է Պարսկաստան:

Եփրեմի՝ Բեռլինում գտնվող կինը՝ Անահիտը, անմիջապես ուղևորվում է Թեհրան՝ նախօրոք խնդրելով ամուսնու դին չհանձնել հողին՝ մինչև իր ժամանումը[1]:

Կառավարությունը հանդես եկավ հայտարարությամբ, ուր ասված էր, որ Եփրեմի մահը մեծ հարված է երկրի սահմանադրական կարգերին:

Միաժամանակ՝ սուգ հայտարարվեց: Համաձայն հրահանգի՝ փակվել էին մայրաքաղաքի պետական թե եվրոպական բոլոր հաստատությունները, դադարեցված էր ձիաքարշի և կառքերի երթևեկությունը, փակվել էին խանութները, դպրոցներն արձակվել էին երկու օրով: Փողոցներ դուրս եկած բազմահազար մարդիկ դառնորեն ողբում էին հերոսի վախճանը:

Եփրեմի կորուստն անդարմանելի էր պարսկական հեղափոխության համար: Չէ՞ որ նա երկրում հաստատվող սահմանադրական իրավակարգի անսասան պահակն էր՝ հանդուգն ու

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 103, 17 մայիսի 1912 թ.:

ինքնամոռաց: Այդ իրավակարգի հաղթանակի հանդեպ ունեցած մշտավառ հավատով, նույնիսկ ամենատագնապալի ու ամենաանհուսալի պահերին, իր հսկայական հմայքով նա ոգի էր ներշնչում շրջապատին, մարդկանց իր հետևից պայքարի տանում: Պատահական չէ, որ մեջլիսի ակնառու անդամ, քննադատ-պատմագիր և մոլեռանդ մուսուլման Սեյիդ Հասան Թաղիզադեն գրել էր. «Իմ կարծիքով՝ Եփրեմը մի անձնաւորութիւն էր, որի նմանը չկար ամբողջ Պարսկաստանում: Այս արտայայտութիւնը, հաւանաբար, իմ մուսուլման հայրենակիցներին կարող է դիւրեկան չլինել. այնուհանդերձ պիտի ասեմ, որ Եփրեմին չի կարելի համեմատել ոչ ոքի հետ...»[1]:

Բնական է, որ Եփրեմի մահը ուրախությամբ ընդունեցին Պարսկաստանի հակահեղափոխական ուժերը, այդ թվում հեղափոխության հնոցներից մեկում՝ Թավրիզում: Այստեղի հարուստ մուսուլմանները, որոնք առավել տուժել էին հեղափոխությունից, հանդիսավոր հավաքներ էին գումարում, մեկ-մեկու աչքալուսանք տալիս[2]:

Եփրեմի հարազատների ցանկության համաձայն՝ նրա աճյունը պետք է ամփոփվեր հայոց Հայկազյան-Թամարյան դպրոցի բակում:

Հերոսի հուղարկավորությունը տեղի ունեցավ 1912 թ. մայիսի 10-ին, հետմիջօրեի ժամը 4-ից սկսած:

«Հորիզոն» թերթի Թեհրանի թղթակիցն այսպես է ներկայացրել թաղման ծեսը: Թափորը կազմված էր հետևյալ կարգով. առջևից երեք խմբերով գնում էին զինվորները, ոստիկաններն ու ժանդարմները: Նրանք բոլորը սև թևկապերով էին, իսկ հրացանների փողերին ծաղկեփնջեր էին ամրացրել: Հետևում էր ռազմիկի՝ դափնեպսակով երիզված մեծադիր նկարը, որին հաջորդում էին երկչար պսակները, ապա՝ ամբողջովին սևեր հագած կանանց խմբերը: Եփրեմի զենքերը կրող նրա ձիու հետևից տանում էին ծաղիկներով պարուրված դագաղը՝ դրված կառա-

---

[1] *Մեջբերված է՝* ***Բարգէն եւ Սեդա Բալեան Տէր-Յակոբեան,*** *Պատմութիւն իրանահայերի, էջ 73:*

[2] *Տե՛ս* ***«Մշակ»,*** *№ 99, 11 մայիսի 1912 թ.:*

վարության ուղարկած վեց ձիեր լծած թնդանոթ-ձիակառքի վրա: Արձակելով ձիերին, զինված հայ մարտիկներն իրենք էին լծվել դիակառքին և քաշում էին ծանր քայլերով: Ձիակառքից հետո գալիս էին թաղման կազմակերպիչ հանձնախմբի անդամները՝ կրծքերին խփած կարմիր-սև երիզներով, ապա և՝ հասարակությունը: Ամենից վերջում բախտիար ձիավորների խումբն էր՝ Սարդար Ասադի որդիներից Մահմեդ խանի առաջնորդությամբ[1]:

Թափորը նախ թեքվում է դեպի նշանավոր Լալազար պողոտան, որի մեջտեղում սպասող պարսիկ կազակների գնդի սպաները դիակառքին պատիվ տալուց հետո միանում են սգակիր բազմությանը: Հետևյալ կանգառը եղավ Թոփխանեում՝ նազմիեի (ոստիկանության) շինության առջև, ուր թնդանոթի երեք կրակոցից հետո ոստիկանության անունից ելույթ ունեցավ Միրզա Հասան խանը: Այնուհետև թափորն անցնում է Ալաա Դովլե պողոտայով և ժամը 6-ին հասնում ամբողջովին սևերով ծածկված հայկական դպրոցը: Առաջ է գալիս եկեղեցական դասը և դագաղն առաջնորդում է դեպի դպրոցի բակում պատրաստված դամբարանը: Այդ ամբողջ ճանապարհին տների լուսամուտները, պատշգամբները, հարթ կտուրները լցված էին հոծ բազմությամբ:

Հուղարկավորությանը ներկա էր ամբողջ նախարարական կազմը, ինչպես նաև Մոմթազ Սոլթանը (շահի խնամակալ Նասր օլ Մոլքի կողմից), Սիփահդարը, նրա որդին և եղբորորդիները, Սահաբը Իխթիարը, Մոսթեշար Դովլեն, Սարդար Ասադի որդի Մահմեդ խանը, մեջլիսի նախագահ Մոըթամըն օլ Մոլքը (իսկական անունը՝ Միրզա Հոսեյն խան), Մուշիր Դովլեն, Նավվաբը (իսկական անունը՝ Հոսեյն-ղուլի խան), բազմաթիվ հին ու նոր պալատականներ ու երևելիներ: Այդտեղ էին օտարերկրյա բոլոր դեսպանները, դիվանագետներ, խորհրդականներ, կառավարիչներ, միսիոներներ, հայկական, ռուսական, եվրոպական թերթերի բազմաթիվ աշխատակիցներ:

Պարսիկների կողմից դամբանական է ասում Վայեզին՝ ցույց տալով Եփրեմի ամբողջ մեծությունը, նրա մահը ներկայացնելով

---

[1] *Տե՛ս* ***«Հորիզոն»****, № 114, 31 մայիսի 1912 թ.:*

որպես ծանրագույն կորուստ Պարսկաստանի ազատագրական շարժման համար, մեծ հարված սահմանադրությանը, որի ջերմ ու հետևողական պաշտպանն էր հանգուցյալը: Ապա նա ներկաներին հիշեցնում է ողջ Իրանի համար հերոսի կատարած անմոռանալի գործերից մի քանիսը: 1) Եփրեմի, նաև Սիփահդարի առաջապահ գնդի ջանքերի շնորհիվ, կարելի եղավ (1909 թ. հուլիսի առաջին օրերին) գահազուրկ անել Մահմեդ Ալի շահին և Պարսկաստանում վերականգնել սահմանադրական կարգը, 2) Հերոսը մեծ դաս տվեց Մահմեդ Ալիի ձեռքին գործիք դարձած շահսևաններին, որոնք փորձում էին վերականգնել հին կարգերը երկրում, 3) Նա փառավոր հաղթանակ տարավ Սարդար Արշադի մեծաթիվ բանակի դեմ, որի շնորհիվ կարելի եղավ պահպանել երկրի դեմոկրատական կառավարությունը, 4) Խիզախ հայորդին ծանր դաս տվեց Սալար Դովլեին, որը խույս տալով փախավ ու ապաստանեց Լուրիստանի լեռներում, որտեղ, սակայն, կարողացավ զորք հավաքել և «պետության մեջ կարգուկանոն վերականգնելու համար» պատրաստվում էր արշավել Թեհրանի վրա, բայց Եփրեմի հարվածներից այս անգամ էլ, ամոթապարտ եղավ, թեև այդ հաղթանակը շատ թանկ նստեց դյուցազնի վրա, 5) Եփրեմը կանոնավորեց անկազմակերպ վիճակի մեջ գտնվող պարսից ոստիկանությունն ու ժանդարմերիան, ամուր կարգուկանոն մտցրեց մայրաքաղաք Թեհրանում, 6) Կյանքի վերջին ամիսներին հերոսը փոխել էր իր վերաբերմունքը ռուսների նկատմամբ, դա դարձնելով ավելի համբերատար, ավելի բարեկամական, միաժամանակ ազդում էր կառավարության և մեջլիսի, ինչպես նաև ՀՅ դաշնակցության հետ դաշինք ստեղծած դեմոկրատական կուսակցության վրա՝ հրաժարելու հակառուսականությունից, մի բան, որ բխում էր ողջ Պարսկաստանի շահերից: Վայեղին իր խոսքը վերջացնում է չեչտելով, որ Եփրեմի արյան ամեն կաթիլից ծնունդ են առնելու անձնազոհ նոր մարտիկներ, որ Պարսկաստանի բոլոր ժողովուրդները, առանց ազգի խտրության, իրենց հիշողության մեջ պահելու են նրա թանկագին հիշատակը[1]:

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 114, 31 մայիսի 1912 թ.:

Ապա հրաժեշտի խոսքով հանդես են գալիս հայ գործիչներ Ա. Գրիգորյանը, Հաջիյանը, Ն. Աղբալյանը, որոնք տարբեր կողմերից վեր են հանում մեծ հայորդու արժանիքները: Աղբալյանն ասում էր, որ հանձին Եփրեմի՝ պարսկական հեղափոխությունն ունեցավ մի խոշոր անհատականություն, մի մեծ հերոս, որն առաջ մղեց այդ հեղափոխությունը: Նա բարձրացավ բացառապես իր անհատական ձիրքերի շնորհիվ՝ դառնալով պարսիկ ժողովրդի ազգային հերոս: Համադանի հայ հասարակության կողմից խոր վիշտ է փոխանցում մեջլիսի հայ պատգամավոր Հովսեփ Միրզայանը, ՀՅԴ Վրեժի (Թավրիզի) և Շահաստանի (Թեհրանի) կենտրոնական կոմիտեների անունից հանդես է գալիս Ստեփան Ստեփանյանը (Բալաջան) և Եփրեմին բնութագրում որպես անձնազոհ հեղափոխականի, որը միշտ պատրաստ է եղել կյանքը զոհաբերել ազատության գաղափարների հաղթանակի համար: Եփրեմը դարձել է պարծանքը պարսկահայերի, որոնք խոր սուգ են ապրում նրա մահվան առթիվ:

Բոլորի խոսքերի իմաստը մեկն էր՝ Եփրեմը հասարակ մահկանացուի ծագումից, ազատության ու արդարության համար պայքարի պարզ զինվորից բարձրացավ դեպի ժողովրդական հերոսացում: Գաղափարի նվիրյալ՝ ահա՛ հեղափոխականի գիտակցական ողջ կյանքի խորհուրդը առաջին օրվանից մինչև իր ցավալի նահատակությունը:

Տարաժամ լինելու պատճառով դադարեցվում են ելույթները: Ժամը 7-ին, համազարկերի ուղեկցությամբ, դագաղն իջեցվում է գերեզման:

Եփրեմի թաղումից հետո էլ մի քանի օր չարունակ հուղարկավորության կարգադրիչ հանձնախումբը Պարսկաստանի տարբեր տեղերից և արտասահմանյան երկրներից ցավակցական հեռագրեր ու նամակներ էր ստանում:

Թեհրանի գերմանական դեսպանատան ցավակցական նամակում ասված էր. «Այն ցաւալի կորուստը, որ Պարսկաստանն ունենում է յանձին Սարդար Եփրեմ խանի, իրաւամբ ամենամեծ սուգ է պատճառել: ... Այն հաւատարիմ ծառայութիւնը, որ հանգուցեալն արել է կառավարութեանն ու երկրին՝ Պարսկաստանի ապահովութեան եւ անդորրութեան տեսակէտից, արդէն Պարս-

կաստանի պատմութեան էջերին են պատկանում: Եւ անձնուիրութեան այն անմոռանալի օրինակը, որ յանուն հայրենիքի եղած իր հերոսական մահով տուել է իր հայրենակիցներին, աշխարհի վրայ ամէն մարդու եւ զինուորների համակրանքն է գրաւել: Թող այդ ընդհանուր համակրութիւնը, որպէս մի մխիթարանք, ամոքի վիշտը հանգուցեալի այրու եւ ընտանիքի, որոնք այսպէս յանկարծօրէն եւ անգութ կերպով խոր սգի մէջ ընկան:

Ի դիմաց գերմանական կայսերական դեսպանատան շարժէ-դ'աֆերի եւ պաշտոնյաների՝ առաջին թարգման (ստորագրութիւն)»[1]:*

Հուղարկաւորության հանձնախմբի անդամներն ստանում էին նաև շատ ուրիշ նամակներ՝ վշտակցության զեղուն արտահայտություններով և մխիթարանքի զգայուն շեշտերով: Դրանցից մեկում մի ամերիկացու հետևյալ տողերը դիպուկ էին ընորոշում մեծ հայորդու գործունեության իմաստը. «Եւ մենք ցաւում ենք, որ հայ ազգը, այսպիսով, զոհում է նորից մի քաջ եւ ոչ եսասէր կեանք համաշխարհային ազատութեան դատին ...»[2]:

1912 թ. վերջերին ՀՅ դաշնակցության հրատարակությամբ Կ. Պոլսում լույս տեսավ «Սգապսակ Եփրեմին» հոդվածների ժողովածուն՝ նվիրված հերոսի հիշատակին: Այնտեղ ցավի ու ափսոսանքի խոր զգացումով հանդես էին եկել մի շարք նշանավոր հայեր: Ահա՛ նրանցից երեքի խոսքից պատառիկներ. «Սուգ մը չէ այս մահը. աւելի մեծ բան մը որ անուն չունի – ծերունի եւ դողդոջուն Արեւելքի վերջին մարող լոյսը»[3],- գրում էր Գրիգոր Զոհրապը: «Հերոսը» վերնագրով հոդվածում Ավետիք Իսահակյանը գրում էր. «Նրա ծննդավայրը Արցախ-Սիւնեաց աշխարհն է, քաջերի այդ օրրանը, որ միշտ բարձրագլուխ է եղել համատարած ստրկութեան մէջ, այդ անմատո՛յց լեռներն ու դժար կապանները, ուր թափառում է Դաւիթ բէկի ոգին:

... Աւա՜ղ, ոչ մի թռչուն չի մնում իր թռիչքի բարձրութեան

---

* *Գործերի հավատարմատար:*

[1] *Տե՛ս* ***«Հորիզոն»****, № 114, 31 մայիսի 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] ***«Սգապսակ Եփրեմին»****, էջ 11:*

վրայ, եւ ընկաւ Եփրեմը, հերոսների հերոսը, ընկաւ ազատութեան բարձունքին վրայ, ընկաւ ազատութեան Աստծու ձեռքերի վրայ...

Փառաւո՜ր կեանք, փառաւո՜ր վախճան ...»[1]:

Ահա՛ և Սիամանթոյի հոդվածից նրա մի քանի խոսքերը. «Հպարտութեամբ հաստատենք յոյն փիլիսոփային այն խօսքը, թէ՝ «Մարդը ամէն բանի չափն է»: Եւ յաղթականօրէն Եփրեմը՝ հայութեան այսօրուայ հոգիին չափանիշն եղաւ»[2]:

Ամիսներ շարունակ հայկական թերթերը տպագրում էին հոդվածներ և հուշեր հերոսի մասին, ընթերցողին ներկայացնում նրա կյանքի ու գործունեության դրվագները: «Հորիզոնը», «Մշակը», «Ազատամարտը», «Ասպարէզը» գնահատում էին նրա բացառիկ ծառայությունը պարսկական հեղափոխությանը և հայ անունին:

Դեռևս Եփրեմի կենդանության օրոք «Ասպարէզը» նրան համարում էր ողջ հայ ազգի պարծանք[3], տալիս էր նրա կյանքի մանրամասն վերլուծությունը[4]: «Մշակը» գրում էր. «Անտարակոյս Եփրեմի սպանուելը չատ ցաւալի է բոլորի համար: Առանց կուսակցական հանգամանքի վերագրելու, պիտի խոստովանել, որ նա իր գործելակերպով Պարսկաստանին լաւապէս ծառայեց եւ միշտ պատիւ կարող է բերել հայերին»[5]:

Հերոսի մահվանն անդրադառնում և նրա կատարած գործերն արժեքավորում էին նաև օտար մամուլի օրգանները, քաղաքական ու հասարակական գործիչներ: Նրանք բոլորը միակամ ու միակարծիք էին. ազատության պայքարի զորավարը մի անհատականություն էր, որ ներառել էր մի ամբողջ չարք բարձրագույն հատկանիշներ ու արժանիքներ՝ քաջություն, հարցասիրություն, փորձառություն, օրինավորություն, բարեսրտություն...

---

[1] ***«Սգապսակ Եփրեմին»***, *էջ 12:*

[2] *Նույն տեղում, էջ 20:*

[3] *Տե՛ս* ***«Ասպարէզ»***, *№ 201, 14 հունվարի 1912 թ.:*

[4] *Տե՛ս նույն տեղում, № 203, 204, 205, 206, 1912 թ.:*

[5] ***«Մշակ»***, *№ 104, 17 մայիսի 1912 թ.:*

Վերը հիշատակած ամերիկացի տնտեսագետ Մորգան Շուստերը, որը հրավիրվել էր Պարսկաստան՝ երկրի ելևմուտը հավասարակշռելու և ամուր հիմքերի վրա դնելու համար, ԱՄՆ վերադառնալուց հետո այնտեղ հրատարակած «Պարսկաստանի խեղդամահությունը» գրքում Եփրեմին տվել է հետևյալ բնորոշումը.

«Նա ընդունակ էր գրաւելու մարդկանց եւ վաստակելու նրանց հաւատարմութիւնը: Կրթութիւնը սահմանափակ էր, բայց տաղանդաւոր էր, ունէր արտակարգ զինուորական հմտութիւն եւ անվհատ քաջ էր: Նրա ձեռքում էր գտնւում [Պարսկաստանի] սահմանադրական կառավարութեան փրկութիւնը»[1]: Սարդար Արշադի և Սալար Դովլեի դեմ տարած հաղթանակները նկարագրելիս Մորգան Շուստերը նկատում էր, որ դրա համար «սահմանադրական կառավարութիւնը պարտական է միայն Եփրեմի հմտութեանը, կորովին եւ արիութեանը: Երբ նա Թեհրան վերադարձաւ, պառլամենտը նրան նուիրեց գոհարազարդ մի սուր եւ նշանակեց բանակի հրամանատար»[2]:

Հակահայ հակումով *"Новое Время"* թերթն ընդգծում էր, որ Եփրեմն անջնջելի հետք է թողել Պարսկաստանի 1905-1912 թթ. հեղափոխության պատմության մեջ: Եփրեմի մահախոսականում թերթը տալիս էր հերոսի անհատականության և գործունեության հետևյալ բնութագիրը. «Եփրեմին մոտիկից ճանաչող մարդկանց կարծիքով՝ նրա կրթությունն այնքան էլ բավարար չէր, բայց նա ուներ արտակարգ բնածին խելք, բնածին տակտ, անընկճելի կամք ու անձնուրաց քաջություն: Նա նաև շատ արագ հասկանում էր մարդկանց և ունակ էր նրանց ուղղորդելու կենդանի գործի: Եփրեմը բնածին քաղաքագետ էր, դիվանագետ ու ռազմագետ: Նա վաստակեց զարմանալի կարիերա. երեք տարվա ընթացքում հասավ մինչև ռազմական ամենաբարձր՝ սարդարի կոչման ու ոստիկանապետի՝ գրեթե նախարարի դերին ու գործառույթներին: Դա բացատրվում է ոչ միայն Պարսկաստանում նրան ուղեկցած հաջողությամբ, այլև բնածին

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 2 (313), փետրվար, 1952, էջ 98:

[2] Տե՛ս նույն տեղում:

տվյալներով, որոնք նրան վերջին թագավորության ամենանշանավոր դեմքերից մեկը դարձրին»[1]:

Ռուսական մի ուրիշ թերթ՝ "Русское Слово"-ն, «Եփրեմի հավատամքը» վերնագրով հոդվածում նրան բնութագրում էր «խորհրդավոր», «առեղծվածային» բառերով[2]: «Եփրեմին գիտէին ամէնքը,- գրում էր թերթը,- եւ ոչ միայն Պարսկաստանում: Նրա անունը կապուած է այդ երկրի վերջին տարիների պատմութեան հետ այնպէս, ինչպէս կապուած են ֆրանսիական յեղափոխութեան պատմութեան հետ Միրաբօի եւ Ռոբեսպիերի, Մարատի եւ Դանտոնի անունները: Եփրեմի մահուան լուրը շատ զօրեղ ազդեցութիւն գործեց Պարսկաստանի վրայ: Յանձին Եփրեմի Պարսկաստանը կորցնում է միակ մարդուն, որ կարողանում էր ջախջախել կեղեքիչ եւ աւազակ խաներին, այլ եւ հալածել Պարսկաստանի գահը ձեռք բերել կամեցողներին»[3]:

Պարսկական հեղափոխության մեջ Եփրեմի անգնահատելի դերի անկեղծ գնահատականը նույնիսկ հնչել է դեռատի շահի ռուս դաստիարակ, միապետության ջերմ կողմնակից Կ. Սմիրնովի շուրթերից: Նա գրում էր, որ պարսկական շարժման ամենախոշոր դեմքը Եփրեմն էր, որ նա նաև «ամբողջ գործի հոգին էր»[4]:

Եփրեմի ջատագովների հոգիները երկար ժամանակ ալեկոծվում էին այն մտքից, որ նա կռվի դաշտում ոչ թե սպանվել է թշնամու պատահական գնդակից, այլ ծրագրված քաղաքական խարդավանքների զոհ է գնացել:

Շատերը չէին կասկածում, որ եթե նա սպանված չլիներ, ապա միևնույնն է, երկու (ռուսական ու անգլիական) կառավարությունների ներկայացուցիչները նրա կործանման այլ միջոցներ կստեղծեին: Նրանք տանել չէին կարողանում Եփրեմի կենդանի գոյությունը և մինչև վերջ գործի գլուխ կանգնած լինելը:

---

[1] **"Новое Время"**, 11 мая 1912 г.

[2] Տե՛ս **«Դրօշակ»**, № 5 (223), մայիս, 1912, էջ 129:

[3] Հոդվածի թարգմանությունը տե՛ս **«Մարտ»** (Մոսկուա), № 10, 15 մայիսի 1912 թ.:

[4] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237, վավ. 320:

Եփրեմի հետ ամբողջ մեկ տարի առճակատման մեջ եղած նույն դեմոկրատները, հերոսի մահից անմիջապես հետո հրապարակեցին հայտարարություն, ուր ասված էր, թե նա սպանվել է հանելուկային հանգամանքներում, դավաճանաբար[1]:

Այսօր էլ, Եփրեմի ողբերգական մահից չուրջ մեկ դար անց, թեև քիչ հավանական, բայց գոյության իրավունք ունի այդ վարկածը, եթե նկատի ունենանք կյանքի վերջին ամիսներին հերոսի ունեցած բարդ հարաբերությունները բախտիարների և նրանց ղեկավար անձանցից կազմված կառավարության հետ:

Եփրեմի նահատակությունից հետո ռազմական նախարարության կողմից զորամասի ժամանակավոր հրամանատար կարգված Քեռին իր խմբով չարունակեց պաշտպանել երկրի սահմանադրական կարգը:

ԾԱՅՐԱՀԵՂ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԶԻՆԱԹԱՓՈՒՄԸ ԵՎ ԵՐԿՐԻՑ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ

Խորհրդային պատմագրության մեջ ռուսական զորքերի ներկայությունը Հյուսիսային Պարսկաստանում և հատկապես Ատրպատականում միանշանակ դիտվում էր որպես իմպերիալիստական, զավթողական ոտնձգություն այդ երկրի և նրա ժողովրդի նկատմամբ: Պարսկաստանում ռուսական զորքերի այդ ներկայությունը միայն բացասական որակելն անընդունելի է, քանզի Ատրպատականում և Հյուսիսային Պարսկաստանի ողջ տարածքում իշխում էին խաների ու բեկերի կամայականությունները, երբ խաղաղ բնակչության, հատկապես քրիստոնյա հայերի կյանքն ու գույքը գտնվում էին զանազան, հիմնականում թուրքալեզու, ցեղերի մշտական սպառնալիքի տակ: Այդ պայմաններում ռուսական զորքերն ամեն ինչ անում էին զսպելու ավազակախմբերին, թույլ չտալու նրանց ասպատակություն-

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 104, 17 մայիսի 1912 թ.:

ները խաղաղ բնակավայրերի վրա, այդպիսով հանդիսանալով այդ տարածաշրջանում կայունության երաշխավորներ:

Հյուսիսային Պարսկաստանում ռուսական զինվորական իշխանությունների հաստատումն ունեցավ մի ուրիշ կարևոր հանգամանք ևս: Ատրպատականի և Իրանյան Քուրդիստանի «վիճելի» տարածքներից 12 հազ. քառ. մղոն զավթած[1] և դա Վանի վիլայեթի մաս հայտարարած[2] երիտթուրքական կառավարությունը, լավ հասկանալով, որ այդ տարածաշրջաններում ռուսների գնալով ուժեղացող ներկայությունն անխուսափելիորեն առաջ է բերելու երկու երկրների միջև միջպետական հարաբերությունների կտրուկ սրացում (ինչին ինքն այդ պահին պատրաստ չէ), սկսեց իր զորքերը Ատրպատականից հետ քաշել: Իհարկե, դրան նպաստեցին նաև այդ ժամանակ Լիբիայում և Բալկանյան առաջին պատերազմում օսմանյան բանակների կրած դառը պարտությունները:

Ատրպատականում Թուրքերից ազատված տարածքներում անմիջապես մտցվում էր պարսկական ոստիկանությունը:

1912 թ. վերջերին երկրում ստեղծվել էր տարօրինակ իրավիճակ: Պարսկաստանի հյուսիսը ռազմակալած ռուսական զինվորական իշխանությունները չատերի համար անհասկանալի վարքագիծ էին դրսևորում: Հակառակ սպասածի, ռուսական զինվորական իշխանությունները պարտված հեղափոխության մասնակիցների նկատմամբ խիստ միջոցներ չէին կիրառում:

Բանն այն է, որ ինչպես Մեծ Բրիտանիան, այնպես էլ հատկապես Ռուսաստանը պայքարում էին, որպեսզի Պարսկաստանում պահպանվի միապետությունը, բայց առանց նախկին շահի և ծայրահեղ աջերի: Նրանք լավ էին հասկանում, որ դա անհնարին կլինի, եթե շարունակվեն բռնություններն ու հալածանքները երկրի հեղափոխական ուժերի դեմ, որոնք, չնայած հեղափոխության աստիճանական անկմանը, պահպանում էին իրենց չատ ծանրակշիռ ազդեցությունը երկրի ժողովրդական լայն զանգվածների վրա:

---

[1] Տե՛ս **«Բանբեր Հայաստանի արխիվների»**, № 1, 1974, էջ 121:

[2] Տե՛ս **Скиф**, Персидский вопрос, Англо-русское соглашение, его основные принципы, цели и пятилетние итоги, Москва, 1912, с. 27.

Պարսկաստանի քաղաքական կայունությամբ Ռուսաստանի մեծ շահագրգռվածությունը բացատրվում էր նրանով, որ միայն այդ պայմաններում նա կարող էր հասնել երկրի հյուսիսի նկատմամբ հեռուն գնացող իր ծրագրերի իրականացմանը, այն է՝ հիմնականում տնտեսական ծավալման միջոցով աստիճանաբար պայմաններ ստեղծել Պարսկաստանի այդ մասը և առաջին հերթին Ատրպատականը ներառելու կայսրության սահմանների մեջ:

Ռուսական զինվորական իշխանություններն իրենց մտադրություններն ու անելիքներն աշխատում էին իրականացնել պարսից կառավարության միջոցով: Վերջինս, որն ինչպես նշել ենք, իր կազմով թեքված էր աջ, ինքն էր նախաձեռնում երկրի պարտված հեղափոխական շարժումը խաղաղ միջոցներով վերջնականապես մարելու գործողություններ և իր այդ ջանքերում ստանում էր ռուսական զինվորական իշխանությունների լիակատար աջակցությունը:

Պարսկաստանի հյուսիսում ռազմական մեծ ուժեր ունենալով հանդերձ, ռուսական իշխանությունները տվյալ պահին փոխհամաձայնության կողմնակից էին: Նրանք հետամուտ էին, որպեսզի «բարեփոխված կառավարությունը» իր քաղաքական հակառակորդների հետ լեզու գտնելու մարտավարություն վարի և «երես չտա» մինչև վերջ վարկաբեկված Ղաջար դրածո տիրակալներին: Նման քաղաքականության վկայություններից մեկը ռուսական գրավման իշխանությունների վերաբերմունքն էր երկրում միջնադարյան կարգերի վերականգնումը երազող մուսուլման մոլեռանդ բարձրաստիճան հոգևորականության և բնակչության լայն խավերի ատելությանը արժանացած նախկին տիրապետող դասակարգերի առավել խորշելի ներկայացուցիչների նկատմամբ:

Կ. Պոլսի «Ժամանակ» թերթում տպագրված՝ Թավրիզից ստացված թղթակցության մեջ նշվում էր, որ քաղաքի բարձրաստիճան հոգևորականները դիմել են պարսից կառավարությանը, ինչպես նաև Թեհրանում Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի դեսպաններին՝ պահանջելով պաշտոնանկ անել շահի խնամակալին, ինչպես նաև կառավարությունից հեռացնել

բախտիար անդամներին և իշխանությունը հանձնել Սալար Դովլեին: Դիմումի հեղինակները նաև հայտարարել էին, որ «եթէ երբեք գոհացում չտրուի իրենց պահանջներուն, այն ատեն Ատրպատական[ը] Պարսկաստանէն զատուելով անկախութիւն պիտի հռչակէ»[1]:

Նույն «Ժամանակը» երկու օր առաջ տպագրել էր Պետերբուրգի հեռագրական գործակալության Թավրիզի թղթակցի հաղորդած հետևյալ տեղեկությունը. «Այստեղ ժողովի մը մէջ որուն մասնակցեցան մեծ թիւով անձեր, որոշուեցաւ Դահլիճէն խնդրել երկրին կառավարութիւնը Սալար էտ Դովլէի յանձնել: Մերժումի պարագային, պախթիարներու կառավարութեան հրամաններուն չպիտի հնազանդին»[2]:

Թավրիզում հետադիմականների հակակառավարական աճող տրամադրությունները փոխանցվում էին Ատրպատականի գավառների խավար ուժերին, որոնց առջևում քուրդ բեկերն ու աղալարներն էին: Թավրիզի վաճառականները դադարեցրել էին ապրանքների առաքումը նահանգի քրդաբնակ վայրեր, որտեղ սանձարձակ կողոպուտներ էին լինում: Դրան գումարվում էր այն, որ Սոուջ-Բուլաղում և շրջակա քրդական գյուղերում ու թափառաշրջիկ քրդական ցեղերի շրջանում օսմանյան քարոզիչները ճառեր էին ասում բալկանյան պետությունների դեմ երիտթուրքերի հայտարարած սրբազան պատերազմի օգտին: Հակաքրիստոնեական քարոզչության հիմնական կազմակերպիչը հայտնի ավազակապետ Ղազի Ալին էր, որը նաև ղեկավարում էր մոլեռանդ հոգևորականության գործողությունները:

Ատրպատականի հետադիմականները համոզված էին, որ ռուսական իշխանություններն առաջվա պես անվերապահորեն աջակից են լինելու իրենց, չենթադրելով, որ Պետերբուրգը նկատելիորեն փոխել է իր վերաբերմունքը Պարսկաստանում ընթացող իրադարձությունների նկատմամբ: Ավելին, ռուսական ռազմական իշխանությունները, անչուշտ Պետերբուրգի թելադրանքով, աչք էին փակում Մահմեդ Ալիի զինված ուժերի դեմ հեղափոխական ջոկատների մղած վերջին կռիվների վրա: Ինչ վերա-

---

[1] **«Ժամանակ»**, № 1310, 17 (30) դեկտեմբերի 1912 թ.:

[2] Նույն տեղում, № 1308, 15 (28) դեկտեմբերի 1912 թ.:

բերում է նախկին շահի կողմնակիցների նկատմամբ նոր կառավարության վերաբերմունքին, ապա դա գործնական էր: Իշխանության եկած բախտիար խմբավորումը Ղաջար թագավորական տոհմի հետ վաղուց հաշիվներ ուներ և չահագրգռված էր նրա վերջնական տապալմամբ: Հետևապես, այդ տոհմի դեմ հեղափոխական զորաջոկատների դեռ չարունակվող կռիվը նրա սրտովն էր:

Ռուսները բացահայտ հանդուրժողականություն էին ցուցաբերում հատկապես հայերի և նրանց զինական խմբերի նկատմամբ: Բացառությամբ մեկ-երկու դեպքի, հայերը ռուսական զենքից կորուստներ չունեցան: Հավանաբար դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ զորքի կազմում ընդգրկված էր Երևանյան գունդը, որի չարքերում պատկառելի թիվ էին կազմում հայ զինվորներն ու սպաները: Վերջիններիս թիվը քիչ չէր նաև ռուսական զորքի մյուս ստորաբաժանումներում: Այսպես, կազակական հեծյալ զորամասի հրամանատարն էր ատաման Բիչերախովը, որը վաղուց ռուսացած հայ ընտանիքի զավակ էր: Նա իր զորամասի պաշտպանության տակ առավ Խոյի, Սալմաստի և Ուրմիայի խաղաղ բնակիչներին, այդ թվում՝ հայկական գյուղերը: Այս գյուղերից մեկը քուրդ ավազակախմբերից պաշտպանելու ժամանակ Բիչերախովը ծանր վիրավորվեց ու բուժման համար տեղափոխվեց Թիֆլիս[1]:

Կովկասյան հրաձգային գնդի մենգրելյան կոչվող և երկրորդ վաշտերից կազմված հարվածող խմբի հրամանատարն էր արմատներով հայ գնդապետ Նեմիրովիչ-Դանչենկոն[2], որը հնարավորինս օգտակար էր լինում ազգակիցներին*:

---

[1] Տե՛ս "Сборник дипломатических документов...", вып. VII, с. 239, 246-249 և այլն:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 246, 416, 417 և այլն:

* Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Նեմիրովիչ-Դանչենկոն մեծ ջանքեր է գործադրել ռուսական նահանջող զորքերի հետ հայ փախստականներին Անդրկովկաս տեղափոխելու համար, ինչպես նաև ռուսական մամուլում բազմիցս հանդես է եկել ցեղասպանությունից փրկված հայերին Ռուսաստանում ապաստան տալու և կյանքի պայմաններ ստեղծելու առաջարկություններով:

Կառավարությունն սկսեց ոչ-պետական ջոկատների խաղաղ զինաթափումը: Միապետական չատ գործիչներ, որոնք իրենց արտաքոց պահվածքով ժողովրդի մոտ տխուր համբավ էին ձեռք բերել, ընդհանրապես հեռացան պետական գործերից կամ թողեցին երկրի սահմանները: Արտասահման անցան նաև Մահմեդ Ալին և Սալար Դովլեն:

1912 թ. վերջերին Պետերբուրգը լրացուցիչ զորամասեր մտցրեց Պարսկաստան, իսկ 1913 թ. սկզբներին Հյուսիսային Պարսկաստանում տեղակայված ռուսական զինվորական իշխանությունները կենտրոնական կառավարությունից պահանջեցին առանց ավելորդ խստություններ գործադրելու երկրից հեռացնել ***դրսից եկած*** *բոլոր հեղափոխականներին, որոնք կռվել էին և իրաղրությունը փոխվելու դեպքում կչարունակեին կռվել միապետականների դեմ:*

«Դրսից եկած հեղափոխականներ» ասելով ռուսական կողմը նկատի ուներ առավելաբար հայ ռազմիկներին: Նա չատ լավ տեղյակ էր, որ առանց հայերի աջակցության՝ պարսից սահմանադրականները չէին կարող ծնկի բերել Մահմեդ Ալիին:

Դրսից եկած ռազմիկներին երկրից հեռացնելիս ռուսական իշխանությունները հատկապես մեղմ վերաբերմունք էին ցուցաբերում հայերի հանդեպ: Դա պատահական չէր: 1912 թ. Պետերբուրգում տեղի ունեցած դատավարության ժամանակ՝ «Դաշնակցության գործով» ձերբակալված հայերնին արդարացնելուց հետո ռուսական հասարակական կարծիքում տեղի էին ունենում դրական լուրջ փոփոխություններ ընդհանրապես հայության նկատմամբ: Բայց որ առավել կարևոր էր, միջազգային հարաբերությունների բարդացման պայմաններում Ռուսաստանը հայության գործուն աջակցության կարիքն ուներ:

1912 թ. վերջերին տիրող համոզումն այն էր, որ Պարսկաստանը նորից արյունալի դեպքերի նախօրյակին է, քանի որ գնալով սրվում էին Ռուսաստանի և Գերմանիայի հարաբերությունները[1]: Նրանց միջև պատերազմի դեպքում օսմանյան Թուրքերը

---

[1] *Տե՛ս* ***«Առաջամարտ»****, № 1070, 25 նոյեմբերի (8 դեկտեմբերի) 1912 թ.:*

Գերմանիայի օգնությամբ կփորձեին վերջնականապես զավթել Ատրպատականը, որն այս անգամ առաջ կբերեր ինչպես ռուսների ու հայերի, այնպես էլ պարսիկ հեղափոխականների և նրանց հակառակորդ պարսիկ միապետական ուժերի համատեղ գործողությունները երկիր ներխուժած թշնամու դեմ:

ՀԵՏԱԳԱ ԴԵՊՔԵՐԸ

1913 թ. օգոստոսի 17-ից 23-ը Կարինում գումարված ՀՅԴ Յոթերորդ ընդհանուր ժողովը, քննելով նաև Դաշնակցության քաղաքականությունը Պարսկաստանում, ընդունում է հատուկ բանաձև, ուր նաև ասված էր.

«Ընդհանուր Ժողովը լսելով Պարսկաստանի կացութեան մասին ներկայացուած տեղեկագիրն ու զեկուցումները, ինչպէս նաեւ պատգամաւոր ընկերներու հաղորդած տեղեկութիւնները,

Նկատելով, որ անգլեւռուս համաձայնութեան եւ գործակցութեան հետեւանքով, Պարսկաստանի մէջ ստեղծուած քաղաքական կացութեան հետ հաշտուած լինել կը թուին պարսիկ ռամկավար եւ առաջդիմասէր տարրերը,

Նշելով սակայն, թէ այդ կացութիւնը ինքնին անհաշտելի է Դաշնակցութեան կողմէ ռազմական աջակցութեան մը արդի ռէժիմին,

Ընդհ. ժողովը կ'որոշէ.

1. Վաւերացնել Թէհրանի եւ Ատրպատականի Կեդր. Կոմիտէներու բոլոր այն տնօրինութիւնները, որոնք կը վերաբերին դաշնակցական զօրախումբերու ցրումին Պարսկաստանի մէջ»[1]:

Ի կատարումն Դաշնակցության գերագույն մարմնի որոշման, և նկատի ունենալով, որ ռուսական պահանջին չհետևելը կարող է ծանր հետևանքներ ունենալ, որ նոր պայմաններում այլևս անելիք չի մնացել Պարսկաստանում, Քեռին նախընտրեց լուծարել իր գլխավորած հայկական խումբը և քաշվել Կովկաս:

---

[1] Տե՛ս **«Դրօշակ»**, № 9-10 (235), սեպտեմբեր-հոկտեմբեր, 1913, էջ 149:

Մոտ երկու տարի անց սկսվում է Քեռու կյանքի ու գործունեության ամենակարևոր շրջանը՝ նրա հերոսական մասնակցությունը Առաջին համաշխարհային պատերազմին: Կովկաս անցած մարտիկների մեծ մասը պատերազմն սկսվելուն պես նույնպես մտավ հայկական կամավորական խմբերի մեջ:

1912 թ. հուլիսի սկզբին նորընտիր Գևորգ արք. Սուրենյանցին կաթողիկոս օծելու հանդիսությանը մասնակցելու համար Թավրիզից էջմիածին եկած Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը օգոստոսի 22-ին ներկայացնում է Ատրպատականի հայոց թեմական առաջնորդի պաշտոնից իր հրաժարականի դիմումը[1], որն ընդունվում է օգոստոսի 26-ին[2]:

Արագ փոփոխվող իրավիճակը պահանջում էր Պարսկաստանի հյուսիսում ունենալ դիվանագիտական բնածին շնորհքով օժտված ղեկավար անձ, որը մասնակից չէր եղել այնտեղ 1909-1912 թթ. ծավալված քաղաքական իրադարձություններին և որն ի զորու կլիներ լեզու գտնել պարսից նոր կառավարության հետ ու մեղմացնել պարսկահայությանը հասցվելիք հնարավոր հարվածները: Ուստի, Գևորգ Ե Սուրենյանցը Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ է նշանակում նույնքան արժանավոր մի մարդու՝ Հայ եկեղեցու նվիրյալ, բազմաշնորհ հոգևորական Ներսես վարդապետ Մելիք-Թանգյանին[3]: 1912 թ. սեպտեմբերի սկզբին նա էջմիածնից հասնում է Թավրիզ, իսկ սեպտեմբերի 7-ին թեմական Պատգամավորական ժողովը նրան ընտրում է Ատրպատականի թեմի առաջնորդ[4]:

Հեղափոխական շարժման անկումից հետո Հյուսիսային Իրանում աննախադեպ ուժեղացան Ռուսաստանի դիրքերը: Պե-

---

[1] Տե՛ս **«Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան»**, գիրք ԺԶ, Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան (1866-1915), էջ 293-294:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 10:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 295:

[4] Տե՛ս **«Մշակ»**, № 203, 14 սեպտեմբերի 1912 թ.: Ավելացնենք, որ 1914 թ. եպիսկոպոս օծված ու 1917-ին արքության պատվին արժանացած Ներսես Մելիք-Թանգյանը Ատրպատականի թեմական առաջնորդի պաշտոնում մնաց 36 տարի՝ մինչև 1948 թ. սեպտեմբերի 26-ին իր վախճանումը՝ մեծ հարգանքի արժանանալով երկրի հայ և օտարազգի հանրության շրջաններում:

տերբուրգում համոզված էին, որ հեռու չէ այն օրը, երբ Ռուսաստանի կայսրությունն առաջին հերթին իրեն կմիավորի Ատրպատականի հարուստ նահանգը, իսկ հետագայում հերթի կդրվեն երկրի հյուսիսային մյուս նահանգները՝ Կասպից ծովը վերածելով Ռուսաստանի ներքին ջրային ավազանի:

Այդ ամենը խոր անհանգստություն և զայրույթ էր առաջ բերում Բեռլինում և Գերմանիայի դաշնակիցների մոտ:

Վիեննայում լույս տեսնող "Österreichische Rundschau" թերթը 1913 թ. մարտին տպագրել էր ավստրիական բանակի գեներալ Գերստների հոդվածը, որտեղ նա տագնապ էր հայտնում Պարսկաստանում ռուսական արագ աճող ազդեցության համար: Նա հատկապես անհանգստացած էր այն կապակցությամբ, որ շուտով սկսվելու է Ջուլֆայից Թավրիզ ձգվելիք երկաթգծի շինարարությունը: Գեներալը նշում էր, որ ռուս ձեռնարկատերերն արդեն ձեռք են բերել Ուրմիայի լճի վրա նավագնացության իրավունք և այնտեղ այժմ առևտրական ընույթի մարդատար երեք շոգենավ ունեն:

Այդ երկաթուղին պետք է ունենար երկու ճյուղ. մեկը Թավրիզից դեպի Ուրմիայի լիճ, մյուսը՝ Թավրիզից Ղազվին[1]:

1912–1914 թվականները Պարսկաստանում ռուսական ազդեցության աննախընթաց ուժեղացման տարիներ էին: Դա ձեռնտու էր նաև պարսկահայերին, որոնք հիմնականում լինելով առևտրականներ, արհեստավորներ ու հողագործներ, մեծապես շահագրգռված էին երկրի կայունությամբ: Նկատենք, որ պարսից նոր իշխանությունները հայտարարություններ էին ուղարկել Թեհրանի հայոց առաջնորդարանին և հավաստիացրել, որ իրենք ամեն ինչ անելու են երկրի հայերի տագնապները փարատելու համար:

1914 թ. հուլիսին 18 տարեկան դարձավ նախկին շահ Մահմեդ Ալիի ավագ որդին՝ Սոլթան Ահմեդը, որը 1909 թ. հուլիսի սկզբին հայտարարվել էր շահ, սակայն մինչև չափահաս դառնալը գործերը վարել էր խնամակալը: Այդ տարիներին նա իր

---

[1] *Հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս* ***«Մշակ»****, № 81, 18 ապրիլի 1913 թ.:*

կրթությունը շարունակել էր ստանալ Թեհրանում, գիտեր մի քանի օտար լեզուներ, կատարելապես տիրապետում էր ֆրանսերենին: Եվ ահա այժմ, երկրի սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն, Սոլթան Ահմեդն իրավունք էր ստանում թագադրվելու և անձամբ վարելու երկրի գործերը՝ որպես դաջարական ցեղի 7-րդ շահ*: Սոլթան Ահմեդը սահմանադրական ձգտումներ ուներ և համոզված էր, որ միայն սահմանադրական իշխանությունը կարող է գոհացում տալ ժողովրդին[1]:

1914 թ. հուլիսի 8-ին Պարսկաստանի մայրաքաղաք Թեհրանում մեծ շուքով կատարվեց Սոլթան Ահմեդ շահի թագադրությունը: Աշխարհի տարբեր ծայրերից ստացվում էին շնորհավորական բազում հեռագրեր ու նամակներ: Ամենայն Հայոց Վեհափառ հայրապետը շահի թագադրության առթիվ նրան հղեց հետևյալ շնորհավորական հեռագիրը.

«Նորին Մեծութեան
Սոլթան Ահմէդ
Արքայից Արքային Իրանայ

Շնորհաւորում ենք Ձերդ Մեծութեան թագադրութիւնը: Օրհնում ենք Ձեզ եւ մաղթում երկար եւ փառաւոր կեանք թագաւորելու Ձեր նախնեաց վեհապանծ գահի վրայ: Ձերդ Մեծութեան խնամոցն ենք յանձնում Մեր հօտի այն հատուածը, որ բաղդ ունի Ձեր հպատակը լինելու:

Մայրագոյն Պատրիարք եւ
Կաթողիկոս Ամենայն Հայոց Գէորգ Ե»[2]:

---

* Դաջարական տոհմի շահերն են. **Աղա Մոհամմեդ խան** (1784-սպան. 1798), նրա եղբորորդին՝ **Ֆաթհ Ալի** (կամ՝ **Ֆաթալի**, 1798-1834), Ֆաթհ Ալիի Աբբաս Միրզա որդու ավագ որդին՝ **Մահմեդ** (1834-1848), վերջինիս որդին՝ **Նասրէդդին** (1848-սպան. 1898), նրա որդին՝ **Մոզաֆֆերէդդին** (1898 - 8 հունվարի 1907 թ.), նրա որդին՝ **Մահմեդ Ալի** (19 հունվարի 1907 թ. – 1909 թ. հուլիսի սկիզբ), նրա որդին՝ **Սոլթան Ահմեդ** (1909 թ. հուլիս, թագադրված 1914 թ. հուլիսի 8-ին – մեջլիսի որոշումով գահընկեց արված 1925 թ. հոկտեմբերի 31-ին, մահացել է 1930 թ.-ին Նեոյյիում, Ֆրանսիա):

[1] Տե՛ս **«Հեռաձայն»** (Կ. Պոլիս), № 7, 29 հունվարի (11 փետրվարի) 1913 թ.:

[2] Տե՛ս **«Արարատ»**, № 7, հուլիս, 1914, էջ 580:

*Սոլթան Ահմեդ շահի թագադրությունը լայն արձագանք ունեցավ հայության շրջանում: Դա պատահական չէր, քանզի Պարսկաստանի երիտասարդ արքան, հակառակ շատերի կանխատեսումների, թե նա վրեժխնդիր է լինելու պարսկահայերից՝ հակամիապետական հեղափոխական շարժմանը մասնակցելու համար, բարեբախտաբար, իր նախորդների պես հայերի նկատմամբ ցուցաբերում էր ընդգծված բարյացակամ վերաբերմունք՝ նրանց առնելով հատուկ հոգածության տակ: Եվ դա փոխհատուցվում էր հայության ջերմ վերաբերմունքով շահնշահի նկատմամբ: Աշխարհի զանազան ծայրերից հայերը Սոլթան Ահմեդ շահի անունով հարյուրավոր շնորհավորական հեռագրեր էին տեղում Թեհրան, տարբեր երկրներից հայկական պատվիրակություններ էին ժամանում պարսից մայրաքաղաք՝ իրենց հետ թանկագին նվերներ բերելով *:*

Իր հոր նման, նոր շահը ռուսամետ էր, հակված ամեն կերպ ամրապնդելու կապերը Ռուսաստանի հետ, նպաստելու երկրում նրա դիրքերի ամրապնդմանը և նրա աջակցությամբ երկրի հյուսիսը մղելու տեխնիկատնտեսական առաջադիմության ճանապարհով:

---

* *Սահմանափակվենք Կ. Պոլսի «Աւետաբեր» թերթի հոդվածներից մեկի բովանդակությունը վկայակոչելով. «Հնդկաստանի, Պիրմայի եւ Ճավայի հայերը Պարսից Շահին թագադրութեան օրը մատուցուելու համար, մագաղաթի վրայ հայերէն եւ պարսկերէն փառաւոր ուղերձ մը ղրկած են արծաթեայ չքեղ ափսէով մը, որ հնդկական ոսկերչութեան ոճով շինուած է եւ կը հանգչի չորս ոսկեզօծ փիղերու վրայ: Կափարիչն ունի ցնցաքանդակ նկարները Էջմիածնի վանքին, Նոր Ջուղայի վանքին, Կալկաթայի եկեղեցիին, Զիչրայի եկեղեցիին, ամէնն ընդելուզուած գեղեցիկ ծաղկենկարներով ու հնդիկ տեսարաններով: Մէկ կողմը կայ սա արձանագրութիւնը. «Նուիրեալ Ն[որին] Արեգակնափայլ Վեհափառութիւն Ահմէտ Շահ հայասէր արքային Պարսից յաւուր պանծալի թագադրութեան նորին, ի Հայ հասարակութենէ Հնդկաստանի, 8/21 Յուլիսի 1914 ամի Տեառն»: Տուփը պսակուած է ոսկի թագով մը նման անոր, զոր Պարսից թագաւորները կը կրեն թագադրութեան ժամանակ» (**«Աւետաբեր»**, № 31, 1 օգոստոսի 1914 թ.):*

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Պարսկական հեղափոխության համար ոգեշնչման օրինակ է եղել 1905-1907 թթ. ռուսական հեղափոխությունը և բռնկվել է նրա անմիջական ազդեցությամբ: Հակամիապետական պայքարի բոլոր փուլերում դրսևորվեց Պարսկաստանի և Ռուսաստանի հեղափոխականների բացահայտ համերաշխությունը: Նույն ռուսական հեղափոխության պարտությունը պարսկական սահմանադրական շարժման և հակաշահական հեղափոխության պարտության նախերգանքն եղավ:

Իրանյան հեղափոխությունը պարտություն կրեց տարբեր պատճառներով.

1) Պարսկաստանի զարգացման առանձնահատկությունները, որոնք մի կողմից պայմանավորված էին ավատապետական հետամնացությամբ, մյուս կողմից՝ իմպերիալիստական տերությունների կողոպտչական քաղաքականությամբ, կանխորոշեցին պարսկական հեղափոխության սահմանափակությունը՝ մասնավորապես հեղափոխական բանակի կողմից Թեհրանի գրավմանը հետևած ժամանակահատվածում:

2) Հեղափոխության ընթացքում երկրի բնակչության մեծամասնությունը չեզոք դիրք էր բռնել: Բացառությամբ Թավրիզ քաղաքի ու Գիլանի նահանգի, մյուս քաղաքների ու նահանգների բնակիչները միայն դեպքից-դեպք էին արձագանքում միապետականների դեմ զենք վերցնելու սահմանադրականների կոչերին:

3) Պարսկաստանը գերազանցապես գյուղացիական երկիր էր, ուստի բնակչության գյուղացիական հատվածը, որը մեծապես գերակշռում էր քաղաքային բնակչությանը, հաղորդակից չէր հեղափոխությանը կամ ծայրահեղ աղոտ պատկերացում ուներ նրա նպատակների մասին: Դասակարգային տեսակետից շատ անկազմակերպ լինելով՝ նա իր անմիջական հարստահարիչ խաներին ու նրանց մարդկանց միայն պասիվ դիմադրություն էր ցույց տալիս (հրաժարում հարկեր տալուց և այլն):

4) Ընչին էր թիվը հեղափոխության ընթացքում ձևավոր-

ված ղեկավարների, այնպիսի լայնախոհ, կիրթ ու նվիրյալ առաջնորդների, որոնք ունակ լինեին իրենց օրինակով վարակելու մարդկանց, բարձրացնելու նրանց քաղաքական աչխուժությունը և առաջնորդելու դեպի մեծ նպատակներ: Դա առաջին հերթին վերաբերում էր բուրժուազիային, ազատական կալվածատերերին և բարձրաստիճան հոգևորականությանը, որոնք ժողովրդի հեղափոխականորեն տրամադրված հատվածին գործածելով հօգուտ իրենց չահերի, նույն չահերի թելադրանքով, ի վերջո, համաձայնության եկան երկրի ամենահետադիմական ուժերի հետ և նպաստեցին հեղափոխության պարտությանը:

5) Նոր կյանքի, երկրի վերածնության համար պակասում էին անհրաժեչտ հզոր հիմքերը: Մեջլիսը, նոր կյանքի այդ աղբյուրը, լցված էր հին կյանքի ներկայացուցիչներով՝ հոգևորականներով ու ավատապետներով, ուստի, բնականաբար, չէր կարող վճռական քայլերով ընթանալ արմատական բարենորոգումների ճանապարհով, դրանով իսկ սեփական բերանով կարդալով իր մահվան դատավճիռը:

6) Հեղափոխությունն ընթանում էր իմպերիալիստական տերությունների, ամենից առաջ Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի կողմից Պարսկաստանը վասալական պետության վերածելու պայմաններում: Այս երկու մեծ պետությունները Պարսկաստանում ունեին իրենց տնտեսական ու աչխարհաքաղաքական բազմաբնույթ չահերը, որոնց հավատարիմ պաչտպանն անձամբ Մահմեդ Ալի չահն էր, ավելի լայն ընդգրկումով՝ ամբողջ դաջարական արքայատոհմը: Ուստի պատահական չէ, որ այդ տերությունների կառավարություններն ամեն ինչ անում էին միապետական կարգերի դեմ ուղղված ապստամբությունը ճնչելու համար:

7) Թեև 1905–1911 թթ. սահմանադրական չարժումը և հեղափոխությունը պարտություն կրեցին, բայց նրանք մեծագույն ազդեցություն գործեցին Պարսկաստանի պատմական բախտի վրա՝ ուժգին հարված հասցնելով դաջարական արքայատոհմին, իրենց դարն ապրած ավատապետական կարգերին և ընդհանրապես միջնադարյան հետամնացությանը: Միքայել Վարանդյանի խոսքերով ասած՝ «... սառույցը փչրուած էր, ազատութեան

ճամբան՝ հարթուած: Հին Իրանը ետ կը նահանջէր եւ նորը կը քալէր...»[1]:

Չնայած պարսկական հեղափոխության պարտությանը, նա հսկայական նշանակություն ունեցավ ասիական երկրների՝ իմպերիալիստական տերությունների գաղութային լուծը թոթափելուն ձգտող ճնշված ժողովուրդների պայքարի հետագա ընդլայնման տեսակետից, նրանց հեղափոխական տրամադրությունների աննախընթաց վերելքի համար: Բարեփոխումների և սահմանադրության համար պայքար սկսվեց Աֆղանստանում, նկատելի վերելք ապրեց ազգային շարժումը Հնդկաստանում, Չինաստանում և Բիրմայում:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հայ ընթերցողի մոտ, անկասկած, հարց կառաջանա, թե հայերն, ի վերջո, ի՞նչ չահեցին գործուն մասնակցություն ունենալով Պարսկաստանի հեղափոխությանը:

Մեծ հաշվով՝ ոչի՛նչ:

Սկսենք այն հաստատումից, որ Պարսկաստան սահմանադրական կարգեր ներմուծելու համար Դաշնակցությունը և Հնչակը հսկայական ջանքեր գործադրեցին: Հեղափոխությունը հրապարակ բերեց Եփրեմի և Քեռու նման անզուգական հերոսներ: Բայց հակամիապետական հայերի պայքարը պարսկահայության համար որևէ օգուտ չբերեց: Պարսկաստանի պես կազմալուծված երկրում ի վերջո պետք է հաղթանակ տանեին արտաքին հզոր ազդեցությունները, հետևապես ապարդյուն պիտի մնային ազատության համար իրանցի և հայ հեղափոխականների թափած ջանքերի մեծ մասը: Ռուսական հզոր ազդեցության դեմ ի՞նչ կարող էին անել բախտիարները, Եփրեմներն ու

---

[1] *Տե՛ս* ***«Արարատ»****, № 7, հուլիս, 1914, էջ 579:*

Քեռիները: Գոնե լավ է, գրում էր Կ. Պոլսի «Աւետաբերը», որ պարսկական հեղափոխության վերջին փուլում տեղի ունեցած կռիվների ժամանակ Դաշնակցությունը և Հնչակը, թեև մեծ ուշացումով, արդեն համոզվել էին, որ մի քանի հարյուր հայ մարտիկներով տիրապետող պարսկական պահպանողական կառավարության և Ռուսաստանի դեմ միաժամանակյա անհավասար պայքարն ինքնասպանությամբ պիտի վերջանար[1]: Հաշվի առնելով այդ մահացու վտանգը, Դաշնակցությունը որոշեց մի կողմ քաշվել Պարսկաստանում իրենց շահերը հետապնդող արտաքին հզոր ուժերի ազդեցություններից, համոզվելով, որ կան քայքայված երկրներ, որոնց փրկելու համար հրաշագործություններն անգամ անզոր են: Դաշնակցության բռնած ***նոր ընթացքը*** *ողջունելի էր հատկապես ապագայում Պարսկաստանում բռնելիք քաղաքականության իրագործման տեսակետից*: Նա, վերջապես, եկել էր այն ճիշտ համոզման, որ Պարսկաստանի պես երկրներում ներքաղաքական պայքարներն արդարացված չեն, քանի որ նման երկրներում գործող ղեկավար անձինք կամ (կլանները) հիմնականում հետապնդում են անձնական շահախնդրություններ՝ թելադրված փառասիրական տենչանքներից: Իրենց տիրապետությունն ապահովելու համար նրանք կարողանում են շահագործել կրոնական մոլեռանդությունը, իսկ հասարակ ժողովուրդը, մանավանդ տգետ ամբոխը որևէ պատկերացում չի ունենում հասարակական կյանքի փոփոխությու-*

---

[1] ***Միքայէլ Վարանդեան****, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Բ հրատ., հատ. Բ, էջ 308:*

* *Կասկած չունենք, որ եթե Դաշնակցության առաջնորդներից, հայրենյաց համար նահատակված Քրիստափոր Միքայելյանը կենդանի լիներ, կհրաժարվեր տարիներ առաջ արտահայտած իր այն մտքից, թե հայերը պետք է ջնջեն հարևան պետությունների կողմից (Ռուսաստան, Թուրքիա, Պարսկաստան) բաժան-բաժան արված Հայաստանի սահմանները և իրենց հայրենիքը միավորեն մի ամբողջության մեջ: Իսկ դա նշանակում էր զենքով կռիվ սկսել նշված բոլոր երեք տերությունների դեմ (հավանաբար՝ միաժամանակ): Պարսկական հեղափոխության վերջին ամիսների իրադարձությունները մի պահ սթափեցրել էին Դաշնակցության ղեկավարությանը և նրան ստիպել գոնե ժամանակավորապես հակվելու ողջամտության կողմը:*

նից սպասվելիք բարիքների մասին: Ով կարողանում է ճարպկորեն չոյել ամբոխի ստորին բնազդները կամ ով ուժեղ է, այդ ամբոխը նրա կողմն է անցնում: Անձնական քմահաճույքների խաղալիք դարձած պետության մեջ փոքրամասնություն կազմող ազգային հատվածի գոյությունն անհնարին է ապահովել՝ միայն ապավինելով նրա (փոքրամասնության) ներսում գոյություն ունեցող քաղաքական ուժերի հնարավորություններին:

Հայտարարելով, թե այլևս գործնական մասնակցություն չի ունենալու Պարսկաստանի միջկուսակցական պայքարներին, Դաշնակցությունը, սակայն, շարունակում էր պնդել, թե ինքը այդ երկրում միշտ զորավիգ պիտի լինի ամեն մի սահմանադրական կուսակցության, չհաշտվելով այն իրողության հետ, որ Պարսկաստանի պես երկրում եվրոպական իմաստով ճշմարտապես ազատամիտ քաղաքական կուսակցություններ չեն կարող լինել, և եթե պահի թելադրանքով նույնիսկ լինեն, ապա միևնույնն է, նրանց քիչ թե շատ երկարատև գոյությունը բացառված է: Ահա թե ինչո՛ւ պատմական պահը Դաշնակցությանը ի վերջո թելադրեց իր շահերը չնույնացնել պարսից երկրի հեղափոխական կամ ազատական քաղաքական ուժերի շահերի հետ:

Պարսկաստանի հեղափոխությանը հայերի մասնակցության հույժ վնասաբեր լինելը հավելումով հաստատում է այն իրողությունը, որ Պարսկահայքը, հատկապես նրա Ղարադաղ գավառը, մասնավորաբար վերջինիս Քեյվանի շրջանը քարուքանդ եղավ, կործանվեցին բազմաթիվ հայկական գյուղեր, կողոպտվեց գյուղացիների ունեցվածքը, նրանցից շատերը զոհվեցին իրենց գյուղերն ու ընտանիքները պաշտպանելու ժամանակ: Այդ ամենի հետևանքով, հեղափոխության պարտությունից հետո մեծ թվով հայեր Պարսկաստանից գաղթեցին, հիմնականում՝ Ամերիկա և Կովկաս: Պարսկաստանի հայության թիվը նախկիններում էլ տևաբար ելևէջներ է ունեցել: Անվերջ արտագաղթ է եղել դեպի Ռուսաստանի կայսրություն, ուր նրանք հաստատվում էին Բաքվից մինչև Ռոստով, Մոսկվա, Պետերբուրգ... Զկա վիճակագրություն, թե 1912–1914 թթ., այսինքն՝ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը որքան պարս-

կաստանաբնակ հայեր են գաղթել այլ երկրներ: Հավանաբար, այդ երկու տարիներին երկիրը թողել է 15-20 հազար հայ:

Մեծ կորուստներ կրեցին հայ առևտրականները: Ամբողջովին քայքայվեց «Թումանյանց» հայտնի առևտրական ընկերությունը, սնանկացան բազմաթիվ հայ առևտրական տներ, որոնք կապված էին եվրոպական ու հատկապես ռուսական չուկաների հետ, կողոպտվեցին ապրանքներով բեռնավորված և հայերին պատկանող շատ և շատ քարավաններ:

Հայերի նկատմամբ բորբոքվեց չիա հոգևորականության կրոնական մոլեռանդությունը, որը փոխանցվում էր մուսուլման հավատացյալներին:

Պարսկահայերից մեկը վերհիշում էր. «... Երբ մենք թեհրանահայերս Ս. Գէորգի տօնին գնում էինք այդ (Սուրբ Գևորգի:- Հ. Ս.) եկեղեցին ուխտի, եւ պիտի անցնէինք «Խիաբանէ Արամնէ» (հայոց պողոտայ) կոչւած փողոցից, որը գտնւում է քաղաքի հարաւային մասում, եւ այնտեղ միայն յետամնաց ու կրօնամոլ պարսիկներ էին ապրում, յաճախ լսել ենք «բադ-արմանի» (վատ հայ), «նաջէս արմանի» (պիղծ հայ), «սագ-արմանի» (չուն հայ) վայրագ ու վիրաւորիչ արտայայտութիւնները. իսկ այսպէս ասած «ինտելիկենտ» ու «հասկացող» դասակարգի կողմից էլ վերջերս այս ցաւալի պարագան եւս ուշագրաւ էր, որ գողի համար թերթերում գրում էին «Քարափէթը արմանի» (հայ Կարապետը)...»[1]:

Հակահայկական ուժերը, հատկապես Թուրքիայում և կովկասյան Թուրք-թաթարների մոտ, առիթը բաց չթողեցին հայ ժողովրդին ներկայացնելու որպես կովասեր, իսկ նրա երիտասարդությանը՝ արկածախնդիր, որը, թողած իր ազգային հոգսերը, մխրճվել է մի օտար երկրի ներքին պայքարների մեջ[2]:

Կործանվեցին հայ երիտասարդների թանկագին կյանքեր: Նրանք Կովկասից էին՝ գլխավորապես անդրկովկասյան քաղաքներից ու գյուղերից, մի քանիսը եկել էին Արևմտյան Հայաս-

---

[1] *Տե՛ս **«Աւետաբեր»**, № 8, 22 փետրվարի 1913 թ.:*

[2] ***Բարգէն եւ Սեղա Բալեան Տէր-Յակոբեան**, Պատմութիւն իրանահայերի, էջ 87:*

տանից, բայց հիմնական մասը տեղացի հայեր էին՝ Թավրիզից, Ատրպատականի մյուս քաղաքներից ու շրջաններից, Գիլանից, Թեհրանից, Համադանից, Նոր Ջուղա-Իսֆահանից ու հարակից հայաբնակ գավառներից, երկրի այլևայլ տեղերից:

Պատմական հեռավորությունից մերժելի է ՀՅ դաշնակցության և ՍԴ Հնչակյան կուսակցության ղեկավար մարմինների գործելակերպը, որոնք հայ երիտասարդներին մղում էին դեպի Պարսկաստանում ծավալվող ներքին կռիվներ, նրանց նետում ծանր փորձությունների մեջ՝ «Հանուն Պարսկաստանի ժողովրդի ազատագրության»: Ճիշտ է, հայ մարտիկները, ինչպես միշտ, կռվում էին քաջությամբ ու անձնազոհությամբ՝ հիացմունք պատճառելով շրջապատին: Պարսից հեղափոխականների կողքին մաքառող հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նշանավոր ղեկավար գործիչների՝ Ռոստոմի, Քեռու, Նիկոլ Դումանի, Դաշնակցական Խեչոյի անուններին ավելացել էր քաջազուն Եփրեմ Դավթյանի անունը: Բայց իրո՞ք այդ երկրի ավելի քան 10 միլիոնանոց ժողովուրդը չատ կարիք ուներ մի փոքր ժողովրդի զինական աջակցությանը, իր ներքին ազգային գործերին նրա կոպիտ միջամտությանը: Եվ ինչո՞ւ հայ երիտասարդը իր կյանքը պետք է վերջացներ հեռավոր Ղազվինի, Թեհրանի կամ Համադանի կռիվներում, այն դեպքում, երբ Պարսկաստանի նման հսկայածավալ երկրում ապստամբական շրջանները, բացի մեկ-երկու նահանգներից, միայն կղզյակներ էին, իսկ պարսիկ ժողովրդի բացարձակ մեծամասնությունը մի կողմ էր կանգնած ու չէր մասնակցում իր շուրջը ծավալվող քաղաքական և ռազմական գործընթացներին:

Հիրավի, հակաշահական շարժումները հիմնականում տեղի են ունեցել ռուսական ազդեցության գոտում՝ երկրի ծայրագույն հյուսիս-արևմուտքից սկսած դեպի ծայրագույն հյուսիս-արևելք, այսինքն՝ Խոյ քաղաքից մինչև Կելատի Նադիր բնակավայրը: Այդ երկու ծայրամասերի միջև ընկած էին Մարանդը, Թավրիզը, Արդաբիլը, Աստարան, Կերգանրուդը, Միանեն, Զենջանը, Էնզելին, Ռեշտը, Ղազվինը, Բարֆրուշը, Աստրաբադը, Սաբզեվարը, Մեշհեդը, նաև հյուսիսում գտնվող մայրաքաղաք Թեհրանը:

Երկրի կենտրոնական մասում ապստամբել էին միայն Իս-

ֆահանը, Յեզդը և Քերման չահը՝ իրենց տարածաշրջաններով, իսկ Հարավային Պարսկաստանում շարժումներ եղան միայն անգլիական ազդեցության գոտում գտնվող Բենդեր-Աբբասից հյուսիս տարածվող Սարգեվարան (Ջիրոֆտ) - Բամ շրջանում և դրանից հյուսիս-արևելք գտնվող Խամուն լճի մոտերքում:

Թվարկած այս բոլոր քաղաքներն ու վայրերը չէին կազմում Պարսկաստանի տարածքի 1/10-րդ մասն անգամ: Ընդ որում, ապստամբած տարածքների բնակիչները հիմնականում Թուրքալեզու էին՝ Թուրքալեզու ատրպատականցիներ և Թուրքմեններ: Հեղափոխությանը համարյա թե չէին արձագանքել Պարսկաստանի խոշոր տարածաշրջանները՝ Խորասանը, Լուրիստանը, Քուրդիստանը, Խուզիստանը (Արաբստանը), Ֆարսը, Լարիստանը, Արաքը, Աջամին, Քերմանը, Ռուդբարը, Մեկրանը, Նարմաշիրը, Կահինը, Սիստանը, Բելուջիստանը:

Իսկ դաշնակցական, հնչակյան, բոլշևիկ ու մենշևիկ սոցիալ-դեմոկրատ հայերը ուրիշ մի երկրում անձնուրաց նետվել էին կռվի մեջ: Հայկական ոչ-կուսակցական մամուլը վճռականապես մերժում էր հայ մարդկանց անհասկանալի կռիվների մեջ նետելու անմիտ գործելակերպը: Կ. Պոլսի «Ժամանակը» գրում էր. «Յարերու պետութեան բախտն ու ճակատագիրը յեղաշրջելու կ'ելլենք, ասիական երեք բռնաւորները տապալելու համար պայքարի դաշտը կ'իջնենք, Վասպուրականի ծաղիկ կտրիճները Պարսկաստանի ազատագրութեան կը յատկացնենք, առանց մտահոգուելու թէ անոնց բազուկին ու անձնուիրութեան հայրենի երդիքն ու հողը, իրենց անպաշտպան քոյրերն ու եղբայրները կրնային պէտք ունենալ»[1]:

Իր հերթին՝ Թավրիզի «Միտք» թերթը չեշտում էր.

«Աւա՜ղ, մենք շատ վաղ եւ նախաժամանակ վատնեցինք մեր երիտասարդ ոյժերն ու մարտական անփոխարինելի սերունդները»[2]:

---

[1] ***«Ժամանակ»***, *№ 1281, 18 նոյեմբերի 1912 թ.:*

[2] ***«Միտք»***, *№ 21, 21 հուլիսի 1912 թ.:*

Մահմեդ Ալին և յուրայինները որևէ կերպ չէին կարողանում հասկանալ պարսկական հեղափոխությանը հայերի մասնակցության դրդապատճառները: Սահմանադրականները և ընդհանրապես պարսիկ ժողովուրդը նույնպես չէին ըմբռնում հեղափոխությանը հայերի նվիրվածությունը, սահմանադրական գաղափարի համար նրանց կատարած զոհաբերությունները[1], իսկ շատերը, հատկապես չիա հոգևորականությունը, համոզված էին, որ հայերը զուտ ազգայնական շահ ունեն և շահագրգռված են երկրի մասնատմամբ, որպեսզի նրանից մի պատառ էլ իրենք պոկեն:

Նկատենք նաև, որ էթնիկ պարսիկների մեծ մասին տարօրինակ էր թվում, որ Թավրիզի շատ հայեր քաղաքի թուրքերի հետ միասին անձնուրացաբար մարտնչում էին կառավարական զորքերի դեմ, որոնց դեմ կռվում էին նաև երկիր ներխուժած օսմանյան զորքերը՝ Ատրպատականին տիրանալու նպատակով: Երիտթուրքերի կառավարությունը նույնիսկ չքանչաններով մեծարում էր Թավրիզի պաշտպանության թուրք ղեկավարներին՝ Սաթթար և Բաղր խաներին, ապստամբներին ոգեշնչում էր անզիջում կռվի՝ երկիրը թուլացնելու և Իրանից նրա թուրքաբնակ տարածքները զավթելու համար: Երիտթուրքերի այդ հարձակողական քաղաքականության հաջողությանը Ատրպատականի թուրքերի հետ փաստորեն աջակցում էին նաև հայ ազգային-հեղափոխական երկու կուսակցությունները և հայ սոցիալ-դեմոկրատները:

Կարելի է ինչ-որ կերպ հասկանալ Ատրպատականի թուրքերին միացած և Իրանի օրվա կառավարության դեմ կռվի ելած Դաշնակցությանը, քանի որ երիտթուրքերի հետ ունեցած դաշինքի ուժով նա այդ պահին պարտավոր էր աջակից լինել նրան: Բայց հնչակյաններն ինչո՞ւ էին ձեռքերը քչտած նետվել կռվի հրապարակ՝ ակամայից ուժեղացնելով օսմանցի զավթիչների ներկայությունը Պարսկաստանում:

---

[1] ***«Միտք»**, № 21, 21 հուլիսի 1912 թ.:*

Կռիվների ընթացքում հերոսականության բաղում օրինակներ տվող հայ զինյալները չէին կարող, սակայն, վճռորոշ ազդեցություն գործել հեղափոխության ընթացքի վրա, և դա ամենից առաջ այն պատճառով, որ նրանք մեծաթիվ չէին: Բայց սփյուռքահայ պատմական գրականության մեջ, հատկապես պարսկական չարժումների մասնակիցների հուշագրություններում, հույժ չափազանցված է ներկայացված հայ զինյալների դերը Պարսկաստանի միապետական ուժերի դեմ մղված պայքարում: Այդ տեսակետից իրականությունից շատ հեռու է հատկապես Միքայել Վարանդյանի «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն» աշխատության համապատասխան բաժինը (գլուխ XII), որից ընթերցողի մոտ սխալ տպավորություն է ստեղծվում, թե պարսկական հեղափոխության 1908–1911 թթ. ժամանակահատվածի պատերազմական իրադարձությունների հիմնական ծանրությունն ընկած էր հայ մարտիկների, հատկապես Եփրեմ Դավթյանի ուսերին:

Եփրեմն, իրոք, խոշոր դեր է կատարել Պարսկաստանի 20-րդ դարասկզբի քաղաքական կյանքում: Նա քաջ էր, գործունյա և ազնիվ, իր համախոհներով անգնահատելի ծառայություններ է մատուցել սահմանադրությանը: Ընսեմացնելով այդ նշանավոր հայորդու պայծառ կերպարը, նրա ռազմագիտական անուրանալի տաղանդը, որ ժամանակին ընդունում էին նույնիսկ նրա քաղաքական հակառակորդներն ու անձնական թշնամիները, չի կարելի բացարձակապես անթերի ներկայացնել նրա կերպարը, չանդրադառնալ թույլ տված սխալներին: Իսկ սխալվելը, ինչպես հայտնի է, հատուկ է բոլոր մահկանացուներին:

Արդարև, Եփրեմի գործունեության հնարավոր արդյունքը միանգամայն անկանխատեսելի էր պարսկահայերի համար, նրանց լինել-չլինելը կախված էր բախտի բերումից: Դրա պատճառն այն էր, որ նա իր ռազմական ուժերով անմիջական ու գործուն մասնակցություն էր ունենում պարսիկ ժողովրդի երկու մասերի արյունալի կռվին: Դա ծայրահեղորեն անցանկալի ու վտանգներով լի գործունեություն էր Պարսկաստանի հայության համար: Եվ պետք է երախտագետ լինել ճակատագրին, որ

հայության այդ հատվածը փրկվեց գլխովին բնաջնջվելուց*:

Հյուսիսային Պարսկաստանի որոշ տեղերում զինված ընդհարումները դեռ շարունակվում էին, բայց հայկական շրջաննե-

---

* Ինչպես Դաշնակցությունը, այնպես էլ Հնչակը սովորաբար իրենց այս կամ այն, այդ թվում զինյալ, գործողությունները կատարում էին, առանց հաշվարկելու, թե դրանք ինչպիսի հետևանքներ կունենան խաղաղ, անպաշտպան ու գործից անտեղյակ հայ զանգվածների համար: Նրանք առաջնորդվում էին Նապոլեոն Բոնապարտի «Նախ սկսենք, հետո կտեսնենք» չափազանց վտանգավոր սկզբունքով: Բայց եթե այդ սկզբունքը թույլատրելի էր մեծ ու հզոր Ֆրանսիայի և նրա նույնքան հզոր բանակներն առաջնորդող Բոնապարտի համար, ապա կռվի անպատրաստ հայերին՝ ոչ: Վերհիշենք թեկուզ 1890 թ. հուլիսի 15-ին Կ. Պոլսում Հնչակյանների կազմակերպած հակասուլթանական ցույցը (Գում-Գափուի ցույցը), որի պատճառով հարյուրավոր անմեղ հայեր կյանքից զրկվեցին: 1896 թ. օգոստոսի 14-ին Դաշնակցության մարտիկները ռումբերն առած մտան Կ. Պոլսի Օսմանյան բանկ (Բանկ Օտտոման) և սպառնացին դա պայթեցնել՝ իբր եվրոպացիների ուշադրությունը հայկական հարցի վրա հրավիրելու համար: Գործողությունը ոչ միայն ձախողվեց, այլև առիթ դարձավ, որպեսզի զորքը և զինված ու կատաղած թուրք ամբոխը երեք օրում գերեզմանեին ավելի քան 10 հազար անպաշտպան հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների: Կարելի է պատկերացնել, թե նույն Կ. Պոլսում քանի՜ հազարավոր հայեր սրի կքաշվեին, եթե հաջողվեր իրականացնել անձնուրաց հեղափոխական և Մեծ նահատակ Քրիստափոր Միքայելյանի ծրագրած Աբդուլ Համիդի սպանությունը: Առանց բացառության, իրենց բոլոր ձախողված ու սարսափելի հետևանքներ ունեցած գործողությունները հայ հեղափոխական կուսակցությունները ներկայացնում են իբրև «բարոյական հաղթանակներ»: Հենց այդ «ոգեղեն հաղթանակներն» էին գերազանց հմտությամբ օգտագործում թուրքական իշխանությունները՝ հայերի արյան բաղնիքներ սարքելու համար: Հայկական հարցի վերաբացման օրերին (1912 թ.) «Հովիտ» (Թիֆլիս) շաբաթաթերթը գրում էր, որ մեծ տերությունները դժվարանում են Հայաստանին ինքնավարության նույնիսկ ամենացածր աստիճան որոշել, որովհետև այնտեղ հայ ազգաբնակչությունը վերջին երկու-երեք տասնամյակներին աղետալիորեն պակասել է և շատ տեղերում հայտնվել է փոքրամասնության վիճակում: «Այն Հայաստանը, որտեղ ինքնավարութիւն ստանալու հիմք եղող հոծ հայ ազգաբնակություն կար 30 տարի առաջ, այժմ բազմաթիւ գաւառներ անհայաբնակ են դարձել եւ դրանում փոքր չէ հայ յեղափոխական կուսակցութիւնների խաղացած աղէտաբեր դերը» (**«Հովիտ»**, № 38, 30 սեպտեմբերի 1912 թ.): Կովկասահայ հայտնի պահպանողական գործիչ Գարեգին Ենգիբարյանը, անդրադառնալով 1905 թ. փետրվարին Բաքվում

ում արդեն վերլուծվում էին պարսկական կռիվներում հայերի թափած ջանքերի օրինականության և արդյունավետության հարցերը:

Այսպես, Մոսկվայում հայերեն լույս տեսնող «Մարտ» անունով թերթը իր մի քանի հրապարակումներում քննադատում էր հնչակյանների և դաշնակցականների մասնակցությունը պարսկական հեղափոխական շարժմանը՝ դա ազգային ուժերի անտեղի վատնում որակելով:

Հոդվածներից մեկում թերթը նշում էր, որ շատ հին ժամանակներից սկսած հայերն անգնահատելի ծառայություններ են մատուցել հեռու և մոտիկ հարևան ազգերին, իսկ շատ ու շատ հայ հերոսներ իրենց կյանքը զոհել են օտար ափերում, օտարների շահերի համար և «չքացել օտար երկնից տակ»: Հոդվածխմբագրականը հարցնում էր. ո՞ւր են Լեհաստանի, Հունգարիայի, Գալիցիայի հարյուր հազարավոր հայերը, ո՞ւր են նրանցից սերված պետական, ռազմական, մշակույթի խոշոր գործիչների հիշատակները: Պատասխանը միանշանակ է. դրանք չկան կամ համարյա չկան: Զնչին բացառություններով՝ նրանց նվիրված չեն ձեռակերտ արձաններ կամ մետաղակուռ կոթողներ: Պատմագիրներն անգամ ղլանում են հիշատակել նրանց գործերը, անգամ՝ անունները:

Ժամանակին այդ ցավալի երևույթին այսպես էր անդրա-

կովկասյան թուրքերի և հայերի միջև տեղի ունեցած ընդհարումներին, «բարոյական հաղթանակի» երևույթը նկատել էր նաև այդ օրերին: «Ես,- գրում էր նա,- չեմ մոռացել 1905 թուականը, երբ Բագուի հայերի 310 դիակներ ինքս համրեցի Զեմբերիքենդի գերեզմանատանը, բայց կլուբում մի քանի «ազգասէրներ» ինձ հաւաստացնում էին, թէ դարձեալ յաղթութիւնը մեր կողմն է, որովհետեւ թուրքերն են խնդրել դադարեցնել կռիւը, այլ ոչ թէ հայերը: Զեմ մոռացել [նաև] Ս. Էջմիածնի կենդրոնական ժողովի (1906 թ. օգոստոս:- Հ. Ս.) նիստերը, ուր թոկից փախած մի Տաճատ վարդապետ ճառում էր, թէ «զինու զօրութեամբ կը ստիպենք, որ [ռուսական] կառավարութիւնը կատարի ժողովի որոշումները»: Եւ այս բոլորը տպագրւում էր մամուլում» (տե՛ս «Հովիտ»-ի վերը նշած համարը):

Այդ բոլորի նման շատ դեպքեր կրկնվել են Պարսկաստանում:

դարձել Խորեն արք. Նար-Պեյը.

Օտար երկնից տակ նոքա չքացան,
Օտար երկնից տակ հալեցան, ընկան:

Նույն երևույթի վերաբերյալ Թիֆլիսի «Նոր հոսանքը» վկայակոչում էր Ռուսաստանին մեծ ծառայություններ մատուցած հայ գործիչների նկատմամբ եղած վերաբերմունքը: Արղությանների, Բեհբությանների, Լոռիս-Մելիքյանների, Տեր-Ղուկասյանների, Շելկովնիկյանների, Սերեբրյակովների մեծամեծ գործերը ձուլված են ռուսաց պատմության հետ. բայց ո՞վ է հիմա Ռուսաստանում հիշում նրանց: Նույնիսկ որևէ ռուս պատմաբանի որևէ գրվածքում արժանիորեն չեն հիշատակվում նրանց անունն ու գործը, ցավով արձանագրում էր պարբերականը[1]:

Այո՛, օտար երկրում (պետությունում) ուրիշի համար թափած ջանքը զուր բան է: Դա լավ էին հասկանում նույնիսկ քաղաքականությունից շատ հեռու կանգնած, ժողովրդական իմաստություն կրող հայ չարքային մարդիկ: «Մարտը» վկայակոչում էր Բեհբութ Շելկովնիկյանի զառամյալ մոր խոսքերը, որ նա ուղղել էր իր անվանի զորավար որդուն, երբ վերջինս մեծաշուք հանդեսով մտել էր Նուխի և իրենց տան չեմին ընկել մոր գիրկը:

«Բեհբո՛ւդ,- գրկելով որդուն ասել էր մայրը,- դու որ ըդէնց մեծ մարդ ես դառել, բա խի՞ մեր խեղճ ազգի համար մի լաւ բան չես անում»[2]:

Իսկ ինչպե՞ս է արտացոլված պարսկական հեղափոխության մեջ հայերի մասնակցության հարցը ռուս, իրանցի և այլազգի հեղինակների հետագա պատմագիտական ուսումնասիրություններում:

Զբաժանելով «Մարտ» պարբերականի որոշ հարցադրումները և եզրահանգումները, չենք կարող, սակայն, չնչել, որ հետագա տարիներին նույնպես ռուս պատմաբանները պարսկա-

---

[1] Տե՛ս **«Նոր հոսանք»**, Ա տարի, № 1, մարտ, 1913 թ., էջ 214 (տողատակ):

[2] Տե՛ս **«Մարտ»**, № 10, 15 մայիսի 1912 թ.:

կան հեղափոխությանը հայերի մասնակցության հարցին անդրադարձել են հպանցիկ, ընդամենը մի քանի նախադասությամբ, այն էլ հիմնականում բացասական որակավորումներով (թերևս բացառություն են **Գ. Վ. Շիտովը,** *տե՛ս նրա "Персия под властью последних Каджаров", изд. Академии наук СССР, Ленинград, 1933* **և Լ. Վակսը,** *տե՛ս նրա "Очерки истории национально-буржуазных революций на Востоке", ОГИЗ "Московский рабочий", Москва-Ленинград, 1931):*

Ինչ վերաբերում է իրանցի հեղինակներին, ապա նրանք տասնամյակներ չարունակ, ընդհուպ մինչև անցյալ դարի 50-ական թվականները, իրենց հետազոտություններում ընդհանրապես չէին անդրադառնում հեղափոխության ընթացքում հայերի խաղացած դերին կամ բավարարվում էին թռուցիկ հիշատակումներով: Պատահական չէ, որ պարսկահայ գործիչներից ոմանք իրենց գրվածքներում, վիրավորված, բողոք էին հայտնում հեղափոխության պատմությունը չարադրելիս իրանցի հեղինակների ցուցաբերած խտրական վերաբերմունքի, հայերի կատարած գործերի մասին անարդարացի լռության համար:

Պարսկական հեղափոխությանը գործուն մասնակցություն ցուցաբերած հնչակյան գործիչներից մեկը դեռևս անցյալ դարի 20-ական թվականների վերջերին դառնացած գրում էր.

«Դժբախտաբար պարսիկ պատմագիրներն ու օրագրողներն այսօր, յիշեալ օրերից 15-20 տարի յետոյ՝ բոլորովին չեն յիշում հայ կուսակցութիւնների զոհողութիւնները պարսիկ ժողովրդի կիսաբմբոստացման եւ յեղափոխութեան օրերին»[1]: Դրա պատճառներից մեկն այն էր, այնուհետև չեշտում էր նա, որ «այդ պատմական օրերին, երբ հայերը միացած կարող էին շատ բան շահել, կուսակցական ինտրիգների շնորհիւ վարկաբեկ էին լինում, աւելի ճիշդը, իրար վարկաբեկ էին անում, որի պատճառով եւ այսօր պարսիկ հասարակական կարծիքի առաջ կորցրել ենք մեր հին յարգանքը: Հէնց այդ բանի համար է, որ մասամբ հասկանում եմ պարսիկ պատմագիրներին եւ օրագրողնե-

---

[1] *Տե՛ս* ***«Ցուշարձան նուիրուած Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան քառասնամեակին»****, էջ 191:*

ին, որ մեր երկու կուսակցութեանց, այսինքն՝ հայ ժողովրդի յեղափոխութեան մատուցած ծառայութիւնները ամբողջովին մոռացել են»[1]:

Նույնը հաստատում էր պարսկական հեղափոխության աչխույժ մասնակից իրանահայ դաշնակցական գործիչներից մեկը՝ Հովսեփ Հովհաննիսյանը (Յ. Էլմար) անցյալ դարի 50-ական թվականների սկզբին: Նա ցավով նշում էր, որ 1908-1912 թթ. հեղափոխական շարժմանն անդրադառնալիս Իրանում ոչ ոք, նույնիսկ Եփրեմի նախկին պարսիկ և թուրք գործակիցները, անգամ նրանք, ովքեր ժամանակին ստացել են հերոսի մշտական հովանավորությունն ու պաշտպանությունը, նրա անունն անգամ չեն հիշատակում, չխոսելով արդեն Քեռու, Խեչոյի և մյուս հայ ռազմական գործիչների, հեղափոխությանը մասնակցած գոնե մեկ հայի մասին: Նրանք բոլորը մոռացության են տրված մանավանդ մտավորական դասի կողմից, «որն իր նեղմիտ մտայնութեամբ, յամառ մի հետեւողութեամբ, անտես է առնում սահմանադրական իրական գործիչներին»: «Ճիշտ է,- գրել է Էլմարը,- Եփրեմների եւ Քեռիների կուսակցութիւնը, առաջնորդուած իր գաղափարաբանութեան ելակէտից, անվերապահօրէն զոհաբերելով իր թանկագին մարտիկներին պարսիկ ժողովրդի ազատագրութեան պայքարին, մտքովն իսկ չի անցել բարոյական կամ այլ հատուցման մասին: Բայց պարսկական սահմանադրական շարժման մէջ ընկած հերոսների ընկերները խոր վիշտ են զգում հանդէպ այն դատապարտելի վերաբերմունքի, որ ցուցադրում է ազատագրուած ժողովրդի մտաւորական եւ գիտակից դասը՝ խեղաթիւրելով պատմական իրողութիւնները եւ մոռացութեան տալով իրենց «անկեղծ եղբայրների» կատարած բախտորոշ դերը սահմանադրական կարգերը վերականգնելու արիւնոտ պայքարում: Այն կարգերի, որոնցից այժմ այնքան լայն չափերով եւ ամէն կերպ օգտւում են իրենք՝ հանրային կարծիքի ղեկավար ներկայացող այդ մտաւորականները»[2]:

---

[1] *Տե՛ս **«Ցուշարձան նուիրուած Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան քառասնամեակին»**, էջ 191:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 192:*

Հայ մարդիկ անկեղծորեն, առանց որևէ ակնկալության են մասնակցել հեղափոխությանը, չարունակում էր էլմարը, նրանք ոչ մի անգամ չեն մտածել երախտագիտության մասին: Բայց սահմանադրության անձնազոհ պաշտպանների ազգակիցները «խոր ցաւ են զգում, երբ ներկայ լինելով սահմանադրութեան տարեդարձի հանդէսներին՝ ունկնդիր են լինում այն ոգեկոչումներին, որոնք արւում են ի յիշատակ ամենահասարակ «սահմանադրականին», իսկ մի բառով իսկ չեն յարգում սահմանադրական իրական ախոյեան Եփրեմների յիշատակը: Նրանք խոր ցաւ են զգում, երբ տեսնում են, որ սահմանադրական շարժումների մասին եղած հրատարակութիւնները – թերթերի բացառիկ թիւ, պարբերական կամ առանձին երկ – զարդարուած են լինում սահմանադրական շարժումների հետ կապ չունեցողների նկարներով եւ մոռացուած է պատմական մեծ դէմք Եփրեմի նկարը:

Այդ հրատարակութիւնների մէջ ոչ միայն բոլորովին չի յիշւում Եփրեմի եւ նրա մարտական խմբի գործունէութիւնը, այլեւ նրա տարած յաղթանակները վերագրւում են այլ «հերոսների»: Իսկ եթէ յիշւում է Եփրեմի անունը՝ շատ անցողակի կերպով եւ չափազանց աննշան դերով»[1]*:*

Անիրավ ու վիրավորական համարելով պարսկական պատմագրության մեջ Եփրեմի անունը և ընդհանրապես իրանական հեղափոխության ընթացքում հայերի կատարած զոհողությունները մոռացության մատնելը, մի ուրիշ հրատարակության հեղինակները գրում են. «Պատճառը պարզ է. Եփրեմը հայ էր եւ քրիստոնեայ, եւ ահա այստեղ էլ խտրութիւնը հայ ու պարսիկի մէջ նորից ակներեւ ու ակնբախ է՝ ինչպէս անցեալներում»[2]*:*

Բայց դա բոլորը չէր: Հեղափոխության ժամանակ, վկայում էր Հովսեփ Հովհաննիսյանը, «Հ. Յ. Դ. աջակցութեան փոխարէն, պարսիկ ազատական ղեկավարները խոստանում էին հայ համայնքներին, ազգային հողի վրայ, տալ շատ աւելի արտօնութիւններ քան նրանք ունէին միապետութեան շրջանում շահերի ֆերմաններով: Սակայն, խորին ցաւով պէտք է արձանագրեմ,

---

[1] ***«Հայրենիք»**, № 9 (367), սեպտեմբեր, 1956, էջ 67-68 (տողատակ):*

[2] *Նույն տեղում, էջ 68 (տողատակ):*

որ նրանք ոչ միայն չկատարեցին այդ խոստումները, այլեւ սահմանադրական իրաւակարգի հաստատուելուց յետոյ, աստիճանաբար հայերից խլեցին ֆերմաններով տրուած իրաւունքները եւ հալածանքի ենթարկեցին հայ համայնքների ազգային-կրթական հիմնարկութիւնները, լեզուն, գիրը»[1]:

Մի ուրիշ հոդվածում նույն հեղինակը այդ միտքն այսպես է ներկայացրել. հեղափոխությունից հետո պարսկահայությունը զրկվեց այն բոլոր առանձնաշնորհումներից ու արտոնություններից, որ ուներ նախորդ շահերի ժամանակներում: «Տեղեակ լինելով Հ. Յ. Դ. կողմից բազմիցս արտայայտուած այդ տեսութեան՝ պարսիկ որոշ ազգայնամոլ տարրեր մինչեւ այժմ էլ ազգային եւ խմբակցական շահեր են գտնում՝ Իրանի սահմանադրական շարժումների մէջ հայ եւ օտար ոյժերի բերած մասնակցութեան: Զարմանալի չէ, անշուշտ, որ նրանք մոռանում են հայութեան վայելած առանձնաշնորհեալ դիրքը նախասահմանադրական շրջանում: Բայց չափազանց զարմանալի է, որ նրանք անտես են առնում այն իրողութիւնը, որ վերջին քառորդ դարում, սահմանադրութեան կարգերում, հայութեան ազգային-մշակութային իրաւունքներն աստիճանաբար կրճատուել են եւ չափազանց սահմանափակուել: Նրանք մոռանում են, որ ներքին լայն ինքնավարութիւն ունեցող հայութիւնն ի տրիտուր սահմանադրութեան վերականգնման ճանապարհին բերած իր բոլորանուէր զոհաբերութիւններին, ճաշակեց մենատիրութեան օրերի դառնութիւնը, երբ հալածանքի ենթարկուեցին նրա դպրոցն ու լեզուն, գիրն ու տառը, ամբողջ մշակոյթը: Նրանք մոռանում են, որ մինչեւ այժմ էլ դեռ գրաւուած եւ փակ է մնում հայկական դպրոցների մի մասը, իսկ արտօնուածներն էլ, խիստ սեղմուած եւ կաշկանդուած, հազիւ մի քանի պահ կրօնի եւ հայերէնի դասաւանդութեան իրաւունք ունեն: Վերջապէս, նրանք անտեսում են այն պատմական փաստը, որ սահմանադրութեան յաղթանակի օրերին, երբ երկրի բովանդակ գործերի ղեկն ու իրաւունքը գտնուում էր Եփրեմի ձեռքում եւ երկրի մարտական ոյժերի

---

[1] ***Բաբգէն եւ Սեդա Բալեան Տէր-Յակոբեան***, *Պատմութիւն իրանահայերի, էջ 86-87:*

առանցքը հայ կամաւորական խմբերն էին կազմում, հայութիւնը որեւէ կերպով չօգտուեց իրեն համար ստեղծուած բարեպատեհ դրութիւնից եւ չցանկացաւ իւրացնել որեւէ առանձնաշնորհում՝ ինչ որ պէտք է անէր, եթէ սահմանադրական շարժումներին մօտենար ազգային կամ կուսակցական միտումներով»[1]:

Բայց չէ՞ որ Նիկոլ Դումանի խորաթափանց միտքը դա կանխատեսել էր դեռեւս պարսկական հեղափոխական շարժման թեժ օրերին:

Ո՞րն էր այդ անցանկալի երեւոյթի պատճառը:

Պատճառները բազմազան են՝ քաղաքական, կրոնական, բարոյական և այլն: Բայց հիմնական պատճառը Նիկոլ Դումանի՝ հայերի համար պարսկական հեղափոխութեան դիպուկ արժեքավորումն էր՝ «Սա մեր կռիվը չէ»: Նա ցավով նշում էր, թե կարծես բավական չեն Թուրքիայի հայութեան կրած տառապանքները, նրա առատորեն թափված արյունը, կարծես արդեն բուժվել են ներքին ազգային ցավերը, հիմա էլ հայերը կամավոր նետվել են նոր վտանգների մեջ, ուր նրանց արյունը թափվում է չգիտես ինչի համար: Պարսիկների կռվին հայերի մասնակցութեյունը Դումանը համարում էր միանգամայն անտեղի: Ինչպես իր «Նիկոլ Դուման» ուսումնասիրութեան մեջ նշել է դաշնակցական մի ուրիշ նշանավոր գործիչ՝ Հովակ Ստեփանյանը, «պարսկական կռիվներում նա (Դումանը: – Հ. Ս.) աշխատում էր զոհ չտալ, համարելով այդ թափած արիւնն աւելորդ ու ապարդիւն»[2]:

Նիկոլ Դումանի տեսակետին միանգամայն անհարիր են Միքայել Վարանդյանի՝ Սկյուտարում 1911 թ. սեպտեմբերի 11-ին կատարած դասախոսութեան խոսքերը, թե իրանյան կռիվներին

---

[1] ***«Հայրենիք»**, № 1 (312), հունվար, 1952, էջ 44: Ակնարկությունը վերաբերում է Ռեզա շահ Փահլավիի քմահաճ կարգադրությամբ Իրանի հայկական բոլոր դպրոցների փակմանը 1936 թ.: Դրանք վերաբացվեցին նրա որդու՝ Մոհամմեդ Ռեզա շահի գահ բարձրանալուց հետո՝ 1941 թ. դեկտեմբերի 20-ի հրամանով, ընդառաջելով Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Ներսես արք. Մելիք-Թանգյանի խնդրանքին (տե՛ս «Բաֆֆի» տարեգիրք, Ա տարի, 1969, էջ 372, 375):*

[2] ***«Հայրենիք»**, № 1 (312), հունվար, 1952, էջ 39 (տողատակ):*

մասնակցելու չնորհիվ «աշխարհը ճանաչեց մեզ, իբրեւ մի ազգ, որ ընդունակ է **առատօրէն արիւն թափել** իր սրբազան իրաւունքների համար...»[1] (ընդգծումը մերն է:- Հ. Ս.):

Ավելի ուշ գրած իր «Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ պարսից սահմանադրական շարժումը» ուսումնասիրության մեջ հիշատակված էլմարը գովերգում էր հայ մարտիկների մաքառումը և նահատակությունը վերացական «ամէն տեսակ բռնութեան» դեմ: «Վտանգաւոր եւ բախտորոշ այդպիսի պահերին է,- նշում էր նա,- որ դաշնակցական մարտիկները, մոռցած ամէն զգուշութիւն, խիզախ գրոհով խոյացան դէպի թշնամին, կուրծք կրծքի նրանց գնդակներին եւ ապահովեցին ազատականների յաղթանակը (?:- Հ. Ս.): Տարուած համամարդկային գաղափարներով եւ լեցուած խոր ատելութեամբ դէպի ամէն տեսակի բռնութիւն՝ յեղափոխական բարձր այդ հոգիները չտապեցին մասնակցել ժողովրդական ցասման արիւնոտ արտայայտութեան եւ անձնուիրաբար կռուեցին ու զոհուեցին յանուն կաչկանդուած եւ իրենց ազգի բախտակից ժողովրդի ազատութեան»[2]: Ապա հոդվածագիրը հպարտորեն թվարկում էր զոհվածների երկար շարքից մի փոքր հատված. «Արի հայորդիների այդ հոյլը կազմում էին Նիկոլը եւ Արտէմը (ընկած Մուժամբարի կռուում), Մարտիրոսը, Սէթօն, Կարօն (Ալւարի կռուում), Միսակը եւ Գէորգը (Թաւրիզ), Խորէնը (Ուրմի) եւ Հեկտոն (Սալմաստ), Ասլանը (Ղարադաղ), Ռոստոմը (Արտաւիլ), Զարեհը (Զունուս), Զուլումաթը, Շամիլը, Արտէմը, երկու Յարութիւնները, Բաջօղլին, Տիգրանը, Փանոսը, Մամիկոնը, Աբրահամը եւ Արսէնը (Խոյ), Սեւ Գէորգը իր 15 զինակիցներով (Սոֆիան), Արսէնը (Ղազվին-Համատանի գիծ), Խէչոն եւ Մամիկոնը (Ֆիրուզաբադ), Մաղաթը (Շահաբադ), Նատօն, Սմբատը, Ալեքսանը (Թեհրան), Մուկուչը, Ասատուրը, Խանլարը եւ Թադէոսը (Դամղան), Նիկոլը իր երկու զինակիցներով (Սուջէ) եւ այլ անյայտ ու անանուն հերոսներ»[3]:

---

[1] **«Ազատամարտ»** չաբաթաթերթ-յաւելուած (Կ. Պոլիս), Բ տարի, թիվ 10 (62), 18 սեպտեմբերի (1 հոկտեմբերի) 1911 թ., էջ 980:

[2] **«Հայրենիք»**, № 2 (313), փետրվար, 1959, էջ 90-91:

[3] Տե՛ս նույն տեղում:

Նույն միտքը դեռ 1913 թվականին արտահայտել է ՀՅԴ Վասպուրականի օրգան «Աշխատանք» թերթը, գրելով. «Հայը Պարսկաստանի մէջ իր կտրիճ զաւակներուն թափած արիւնովը ցոյց տուաւ աշխարհին որ ինքը օտար ախորժակներու չծառայելէ զատ պատրաստ է թանկագին կեանքեր զոհել իր իսլամ եղբօրը՝ բարձր պահելու նպատակով Ազատութեան եւ Եղբայրութեան դրօշը...»[1]:

Մի՞թե հայի արյունը ջուր էր, որ առատորեն թափվել էր մի կռվում, որն իրենը չէր, այլ՝ կռիվ էր վերացական «ամէն տեսակ բռնութեան» դեմ:

Արխիվում պահպանվող մի փաստաթղթից իմանում ենք, որ պարսից պատանի շահի դաստիարակ Կ. Սմիրնովը երկիր ներխուժած թուրքական զորքերի մի հարյուրապետի հետ հանդիպման ժամանակ նրան հարցրել է, թե «ինչո՞ւ գերի բռնված Կովկասից եկած հայ կամավորներին չեք ստիպում խոստովանություններ անել և գաղտնիքներ կորզել»: Թուրք հարյուրապետը պատասխանել էր. «Միևնույնն է, ոչ մի արդյունքի չենք հասնում. նրանք միայն մի պատասխան ունեն՝ «եկել ենք մեռնելու»»[2]: Բայց ինչո՞ւ մեռնել և հանուն ինչի՞: Հայրենիքը պաշտպանելու, նրան ծառայելու ժամանակ հայորդիների զոհվելն արդարացված է և նրանց հիշատակը ժողովուրդը փայփայում է իր հոգում: Հիրավի, եթե պետք է զոհվել, ապա զոհվել քո վտանգված երկրի, հարազատ ժողովրդի համար: Բայց ինչպե՞ս հասկանալ, երբ առանց այն էլ Թուրքիայում այնքա՜ն առատորեն զոհեր տված (շատ դեպքերում՝ միանգամայն զուր) փոքրաթիվ հայ ժողովրդի զավակները իրենց կյանքը չռայլորեն զոհում են ազգի համար անհասկանալի մի կռվում և չգիտես ինչու:

Մանավանդ փոքր ազգերի կամ այդ ազգերի այս կամ այն հատվածի ղեկավարությունն ստանձնած ուժերը իրավունք չունեն չռայլելու իրենց հետևից գնացողների արյունը. նրանք պարտավոր են դողալ ամեն մի կյանքի վրա: Բայց այդպես չէին հայկական հեղափոխական կուսակցությունները, մանավանդ Դաշ-

---

[1] **«Աշխատանք»**, № 33 (129), 14 հունիսի 1913 թ.:

[2] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237, վավ. 320:

նակցությունը, որը ո՛չ իրեն էր խնայում և ո՛չ էլ իր համակիրներին ու իր հետևից գնացողներին:

Պարսկական հեղափոխության մեջ հայերի ունեցած դերի գնահատման հարցում 1950-ական թվականներից նկատելի տեղաշարժ կատարվեց իրանցի պատմաբանների մոտ: Նրանք սկսեցին ներկայացնել և որոշ չափով գնահատել հայերի թափած ջանքերը: Այդ պատմաբաններից են Ահմեդ Քեսրաուին, Մալեք զադեն, Քերիմ Բեհզադը, Աբբաս Ալի Սալեհը, Էբրահիմ Սաֆա'ին, Էսմայիլ Ռայինը և ուրիշներ[1]: Էբրահիմ Սաֆա'իի՝ 1965 թ. Թեհրանում պարսկերեն լույս տեսած «Սահմանադրության առաջնորդները» գրքում 24 նշանավոր գործիչների թվում 16-ը հայեր են[2]: Ավելին, պատմագիտական որոշ աշխատություններ ամբողջովին նվիրվեցին հայերի: Օրինակ՝ 1968 թ. Թեհրանում պարսկերեն լույս տեսավ Աբբաս Ալի Սալեհի «Հայ գործիչները պարսից իրականության մեջ» ուսումնասիրությունը, 1971 թ. Թեհրանում պարսկերեն տպագրվեց Էսմայիլ Ռայինի «Եփրեմ խան Սարդար» աշխատությունը[3]:

Այս հանգամանքը հիմնականում բացատրվում էր այդ տարիներին թուրք-իրանական բարդ հարաբերություններով և իրանահայերի նկատմամբ Մոհամմեդ Ռեզա Փահլավի շահի արտակարգ դրական վերաբերմունքով ու հովանավորչությամբ*:

Եվս մեկ նկատառում: Տվյալ պատմական և ճգնաժամային

---

[1] Տե՛ս **«Հայ ժողովրդի պատմություն»**, հատ. VI, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, էջ 715:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում (տողատակ):

* Կասկած չկա, որ թուրք-պարսկական հարաբերությունների ամրապնդման դեպքում պարսիկ պատմագրությունը կրկին կդադարի անկողմնակալ լուսաբանել իրանական հեղափոխության մեջ հայերի կատարած գոհողությունները: Դրա տիպիկ օրինակը մենք ունենք հանձինս ռուս-թուրքական հարաբերությունների տարբեր փուլերում (անցյալ դարի 20-50-ական թվականներ) խորհրդային պատմագրության – հանրապետական Թուրքիային տված տրամագծորեն հակառակ գնահատականների՝ Լենին-Աթաթուրք «եղբայրական հարաբերություններից» մինչև «հիտլերյան ֆաշիզմի պատվար» որակումներով:

պահին հայ կամավոր-զինվորները – լինեին նրանք հեղափոխության ազնիվ նվիրյալներ, որոնք կռվում էին Մահմեդ Ալի շահի դեմ՝ պաշտպանելով սահմանադրությունը, թե շահախնդրությունից դրդված արկածախնդիրներ – միևնույնն է, չպետք է մտնեին զուտ ազգային սկզբունքով կազմված կամավորական ջոկատների մեջ և, ներկայանալով որպես հայ ժողովրդի ներկայացուցիչներ, նետվեին մարտի, այլ պարտավոր էին միանալ պարսիկ կամավոր զինվորներին և գործեին խառը խմբերի մեջ: Տպավորություն էր ստեղծվում, թե միապետականների դեմ կռվող իսկական ուժը հայերն են և ոչ թե իրանցի ժողովուրդը, որը հիմնականում անտարբեր էր քաղաքացիական կռվի նկատմամբ, և ինչպես ասվեց, կողքից դիտում էր, թե ինչպես ուրիշ տեղերից եկած մարդիկ զենք են ճոճում իրենց երկրում: Ակնհայտ է, որ եթե որևէ վայրից զինված խմբեր են ներխուժում քո պետության սահմաններից ներս, դա ոչ այլ ինչ է, քան կոպիտ միջամտություն հարազատ երկրի ներքին գործերին: Այդ դեպքում նույնիսկ կարևոր չէ, թե նման խմբերն ովքե՞ր են կազմակերպում, հանդերձավորում և ուղարկում՝ օտար կառավարությունն՞երը, կուսակցությունն՞երը, թե՞ անհատ նախաձեռնողներ: Տեղաբնակների ներքին գործերին կովկասահայ կամավոր-զինվորների նման միջամտությունը հայերի՝ անհանգիստ ու կռվարար ժողովուրդ լինելու մասին կարծիք կազմելու առիթ էր տալիս օտարներին:

Ինչ վերաբերում է տեղաբնակ պարսկահայերին, ապա նրանք ոչ միայն իրավունք ունեին, այլև պարտավոր էին այդ վտանգավոր տարիներին զինված լինել, բայց միայն ու միայն իրենց կյանքն ու ինչքը միապետական ավազակախմբերից ու սահմանադրական քրեական տարրերից ***պաշտպանելու համար****:*

Մեր այս դիտարկումը համահունչ է ժամանակին Հովհաննես Թումանյանի արտահայտած հետևյալ մտահոգությանը: Մեծ գրողն ու քաղաքացին մտրակում ու մերժում էր իր ժողովրդի մեջ գոյություն ունեցող անիշխանական առաքելականությունը (անարխիստական մեսիանիզմը), ըստ որի՝ հայությունը, իբր, ի վերուստ տրված առաքելություն ունի «եվրոպական քաղաքակրթության լույսը տարածել ասիական խավարում»: Այդպես

մտածելով՝ հայը կորցնում է իրականության զգացողությունը, ջնջում է ուժեղի և թույլի միջև գոյություն ունեցող սահմանները: Մեսիանիզմի մտապատրանքին մեծ գրողն ու մտածողը հակադրում էր սթափ հայացքը՝ ուրիշ ժողովուրդների հոգևոր արժեքները գնահատելիս: «Ոտքերդ մեկնի՛ր վերմակիդ չափով»,- խորհուրդ է տալիս հայոց ժողովրդական իմաստությունը: Քաղաքականությամբ զբաղվող հայ անհատներին Թումանյանը հորդորում էր իրենց արարքները բխեցնել միայն ու միայն սեփական հնարավորություններից և դրանց սահմաններում միայն իրականացնել որոշակի գործողություններ: «Մեծ տերությունները,- ասում էր նա,- իրենց ամուր տնտեսությամբ և խելացի դիվանագիտությամբ, ցամաքային ու ծովային հզոր բանակներով առաջ են մղում համաշխարհային պատմությունը՝ չարժելով աշխարհներ և ազգեր: Այս պայմաններում դրոշ դարձրած «մենք կուլտուրական ժողովուրդ ենք» նախապաշարմունքը, հայ քաղքենին, հայ մտավորականության զգալի մասը, հատկապես իրենց ձեռքում մամուլ ունեցողները, որպես կանոն, լեզվակռվի են դուրս գալիս մեծ պետությունների դեմ, քննադատում ու «ջարդուփշուր անում» նրանց քաղաքականությունը, նրանց նույնիսկ սպառնում ու նախազգուշացումներ անում»: «... Եթե մենք պետք է զբաղվենք քաղաքականությամբ,- խրատում էր Թումանյանը,- այդ ամենից առաջ այն է լինելու, որ մի ճշմարիտ հայացք լինեինք ստեղծած, մի պարզ վերաբերմունք լինեինք մշակած դեպի այն պետությունները, որոնց ձեռքի տակ գտնվում ենք: Մի գիտակցական, մտածված վերաբերմունք, որ գոյություն չունի ամենևին և միշտ առաջնորդվում ենք քամու հոսանքներով, նախապաշարմունքներով ու թյուրիմացություններով, ամեն անգամ էլ դառնությամբ հաշվելով մեր կոպիտ սխալներն ու կորուստները, ամեն անգամ էլ ամեն մեկս ետին թվով հանդիսանալով խելոք ու հեռատես, երբ եղածն անցել է անդառնալի: Ճիշտ և ճիշտ Եզոպոսի աստղաբաշխի նման, «որ դիտակն աչքերին, աստղերը դիտելով, առանց իր ոտի տակի ճանապարհը նայելու առաջ է գնում ու գնում է ընկնում ջրհորը»[1]:

---

[1] Տե՛ս **Հովհաննես Թումանյան**, Երկերի ժողովածու, հատ. 6, էջ 150-151:

«Երեկվան պատմությունը և այսօրվան իրականությունը» հոդվածում, ակնարկ նետելով դարավոր սարսափների անցած ճանապարհին և նոր կոտորածների «մռայլ մղձավանջին», Թումանյանը հետևություն է անում, թե «էս ամենը դարերով տեսնող ու տանող ժողովուրդը անչուչտ մի իմաստություն պիտի հաներ ու սովորեր էսքան դառը փորձերից ու փորձանքներից, մի քաղաքականություն պիտի ստեղծեր ու մշակեր իր համար էս դժոխք աշխարհքում»[1]:

Մի փոքր ազգի զավակները, մտնելով Պարսկաստանի լայնածավալ տարածքներ, սուր էին ճոճում ոչ միայն այդ երկրի իշխանական ուժերի, այլև երկու հզոր կայսրությունների՝ Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի դեմ: Զուր չէ, որ ինքնաճանաչումը և սեփական ուժերի ստուգումը Թումանյանը օդի ու ջրի պես անհրաժեշտ էր համարում հայ մարդու համար:

Պարսկաստանի հեղափոխական շարժմանը հայերի մասնակցության աննպատակահարմարության մեր տեսակետը լիովին համապատասխանում է մեծ գրողի և հասարակական գործչի արտահայտած մտքերին:

Թեև Պարսկաստանում հաստատվել էր հարաբերական խաղաղություն, բայց մոտիկ ապագան անորոշ էր՝ լի բազմակերպ անակնկալներով: Ուր որ է՝ տարածվելու էր կործանիչ փոթորիկը: Հակառակ նրան, որ արդեն նշմարվում էին համաշխարհային բուռն վայրիվերումների ակնհայտ ազդանշանները, չատերին, այդ թվում Դաշնակցության ղեկավարության մեծ մասին, թվում էր, թե մարդկությունը գտնվում է բարոյական վերածնության նախօրյակին: Դա խաբուսիկ զգացում էր: Աշխարհի ժողովուրդները դեռ որքան պետք է տառապեին, մինչև ոտք դնեին իրենց իղձերի մարմին առնելու գոնե չեմին:

Իրականում՝ երջանկության ափը չատ հեռու էր: Երանելի ազատությունն ու արդարությունը տենչացող ժողովուրդները դեռ պիտի անցնեին չատ ու չատ տասնամյակների արյունալի չավիղներով...

---

[1] ***Հովհաննես Թումանյան***, *Երկերի ժողովածու, հատ. 6, էջ 204:*

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀԱԿԱՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԹՈՒՐՔԱՀԱՅՈՑ ԿՅԱՆՔՈՒՄ

Թվում էր, թե Ադանայի կոտորածները Թուրքերի մոտ մեղքի ու զղջման զգացմունքներ առաջ կբերեին, բայց միանգամայն հակառակը դուրս եկավ: Ադանան կարծես նոր լիցք էր հաղորդել երիտթուրքական իշխանություններին: Դա պատահական չէր: Կիլիկիայի հայերի կոտորածներին Եվրոպան համարյա չէր արձագանքել, մեղադրանքներ չէին հնչել «Միություն և առաջադիմություն» կոմիտեի, նրա ստեղծած կառավարության հասցեին: Դեռ ավելին, եվրոպական կառավարությունները դրանով իսկ փաստորեն ոգեշնչել էին Թուրք հետադիմական տարրերին, որոնք արդեն հիմքեր ունեին մտածելու, որ հայ ժողովրդի նկատմամբ առաջիկայում իրականացվելիք որևէ ոճիր մեծ տերությունների որևէ արգելքի չի հանդիպելու:

Այդ ամենը գիտակցում էին հայերը, ուստի, բնականաբար, գնալով ուժեղանում էին գժտությունները նրանց և Թուրքաց կառավարության միջև, և դրա գլխավոր պատճառը Ադանայի չարաբաստիկ աղետն էր:

ՎՏԱՆԳՆԵՐ ԵՎ ՊԱՏԵՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԹՈՒՐՔԱՀԱՅ ՏԱԳՆԱՊԻ ՍԱՍՏԿԱՑՈՒՄԸ

1909 թ. ամռանից երիտթուրքերը բացահայտ պայքարի ճակատ բացեցին հայության դեմ: Նրանց հարվածի գլխավոր ուղղություններն առայժմ երկուսն էին՝ հայոց ազգային կրոնական իշխանությունները և Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը:

Աշխատության նախորդ գրքերում անդրադարձել ենք այն ջանքերին, որոնք սուլթան Աբդուլ Համիդ II-ը գործադրում էր նախորդ սուլթանների կողմից հայերեն տված արտոնությունները նրանցից խլելու համար, բայց նա չէր հաջողում այդ բանը գլուխ բերել, թեև կարողացել էր հայոց սահմանադրությունը ժամանակավորապես անգործադրելի դարձնել:

Եվ ահա՛ այժմ օսմանյան նոր, «սահմանադրական» վարչակարգը լի էր վճռականությամբ անելու այն, ինչ չէր կարողացել անել Աբդուլ Համիդը:

«Առանձին արտոնությունների կարիքը չկա» սպառնալից խոսքերի տակ թաքցնելով Թուրք ցեղի գերիշխանության գաղափարը՝ Իթթիհադի վարչակարգը բարձրացրեց հայերին ու հույներին տրված սահմանադրությունների և դրանցից բխող ազգային-կրթական-եկեղեցական ոլորտներում ինքնավարության վերացման խնդիրը: Նա փաստարկում էր, թե ընդհանրապես կրոնական պետերը, այդ թվում հայոց պատրիարքները կարող են խառնվել միայն կրոնական գործերին, որ նրանք պետական մարմիններին քաղաքական հարցերով դիմելու իրավունք չունեն, աշխարհիկ որևէ գործառույթ իրականացնելու իրավասու չեն[1]: Բանը հասել է նրան, ասում էին կառավարությունում, որ հայոց պատրիարքի թույլտվությամբ հայ առաքելական եկեղեցիները, իբր, հակաօսմանյան քարոզչության օջախներ են դարձել:

Իրենց «վերափոխիչ» գործունեությունը երիտթուրքերը պատճառաբանում էին այն բանով, որ ցանկանում են երկիրն արդիականացնել, բոլոր հիմնարկություններն ու հաստատություններն աշխարհականացնել, հասարակությունը կրոնից ու կղերականությունից թոթափել: Թուրքիայում ապրող յուրաքանչյուր մարդ, ասում էին նրանք, օսմանցի է, և դա պատվավոր տիտղոս չէ միայն, այլ մի ամբողջ համակարգի ընորոշիչ: Օսմանցի անվանումն ապացույց է այն բանի, որ պետությունը պատկանում է անխտիր բոլորին: Յուրաքանչյուր օսմանցու կարիքները, անկախ ազգությունից ու կրոնից, պետք է հոգա պե-

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 224, 11 հոկտեմբերի 1909 թ.:

տությունը: Այս պայմաններում, հայերի ունեցած արտոնությունները հակասում են օսմանյան սահմանադրությանը, որի համաձայն՝ օսմանյան բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առջև: Ամեն դեպքում, երբ արդարության հարց ծագի, երբ զրկանքի իրողություն լինի, օսմանցին պիտի հաստատապես իմանա, որ պետությունն իրեն կպաշտպանի ֆիզիկական ողջ ուժով ու դրամական հնարավորություններով:

Այսքանից հետո որևէ անհրաժեշտություն կա՞, հարց էին տալիս երիտթուրքերը, որ այդ իրավատեր, ամեն կողմից պաշտպանված օսմանցու և նրան պատկանող պետության մեջ հանդես գա մի օտար, կողմնակի միջնորդ, մի հոգևորական, որի տեղը կարող է լինել միայն իր եկեղեցին:

Այսպես էին երիտթուրքերը ձգտում իսպառ ոչնչացնել թուրքահայերի սահմանադրությունը, որը մտած էր նույնիսկ օսմանյան օրենսդրության ակտերի ժողովածուի մեջ, ի չիք դարձնել դրա ուժով թուրքահայ պատրիարքին տրված իրավունքները:

Հայերը և հույներն առայժմ մերժում էին ընդառաջ գնալ երիտթուրքերի ոտնձգություններին: Հույներն ավելի վճռական էին: Հունաց պատրիարքն իր եկեղեցու սինոդի հետ սաստիկ դիմադրություն էր ցույց տալիս և որոշել էր այդ հարցում որևէ զիջում չանել: Հայերը, թեև հույների պես ոչ այնպես վճռական, նույնպես բողոքում էին անօրեն քայլերի դեմ: Հայ իրավագետները, ամենից առաջ Գրիգոր Զոհրապը, վկայակոչում էին օսմանյան սուլթանների, սկսած սուլթան Մեհմեդ II Ֆաթիհից մինչև սուլթան Աբդուլ Ազիզը, իրենց հպատակ քրիստոնյա ազգություններին՝ հայերին ու հույներին, ներքին ինքնավարության իրավունքի, ինչպես և մյուս արտոնությունների չնորհումը[1]*:*

Հայերին տրված արտոնություններից բերենք միայն մեկ օրինակ կրթական բնագավառից: Հայ պատրիարքարանն ու Ազգային ժողովի համապատասխան օղակները վավերացնում

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»,*** *№ 224, 11 հոկտեմբերի 1909 թ.:*

էին ազգային ուսումնարանների ծրագրերը, ուսուցիչներ ու տեսուչներ էին հրավիրում իրենց իրավասությանը հանձնված կրթական այդ հաստատությունների համար: Օրինակ՝ Աբդուլ Համիդ II-ի օրով Կարինի Սանասարյան վարժարանում երկար ու ձիգ տարիներ ուսուցչական պաշտոն էին վարում Կովկասից հրավիրված ռուսահպատակ մանկավարժներ, իսկ երիտթուրքերի կառավարությունը 1909/1910 ուսումնական տարվա սկզբին որոշում ընդունեց, որ Թուրքիայի հայոց դպրոցներում ուսուցչական պաշտոն կարող են վարել միայն թուրքահպատակները: Մինչ այդ, դարձյալ աբդուլհամիդյան զուլումի տարիներին, հօգուտ հայ ուսումնարանների կազմակերպվում էին թատերական ներկայացումներ, հանդեսներ, հանգանակություններ և այլն: Իթթիհադական կառավարությունն այժմ կամենում էր ամբողջովին խլել հայերի այդ ոչ մեծ արտոնությունները նույնպես, խանգարել մինչև այժմ տիրող կարգն ու կանոնը: Այդ նպատակով նա նշանակել էր հատուկ քննիչներ՝ քրիստոնյաներին պատկանող դպրոցներում «բարեփոխումներ» անցկացնելու համար:

Կ. Պոլսի միջպատրիարքական հանձնաժողովը խիստ բողոք ներկայացրեց ազգային դպրոցների ներքին գործերին միջամտելու դեմ, բայց հաշվի առնելով, որ միևնույնն է, կառավարությունը հետևողականորեն կատարելու է իր ծրագրածը, առաջարկեց, որպեսզի քննիչների իրավասությունները որոշ չափով սահմանափակվեն, այսինքն՝ գոնե պարտավորված լինեն պատրիարքարաններին անմիջականորեն ենթարկվող ուսումնարաններ այցելելիս՝ նախապես դիմել դրանց հոգածու եկեղեցիների վարչություններին, որպեսզի վերջիններից յուրաքանչյուրն առանձնացներ մի հոգևոր անձի՝ քննիչներին ընկերակցելու համար: Այդ առաջարկն արվում էր, որպեսզի կառավարական քննիչներն ուսումնարաններ իրենց ուզած րոպեին առանձին մտնելու իրավունք չունենան: Իսկ այդպիսի դեպքեր արդեն տեղի էին ունենում մեկ այստեղ, մեկ այնտեղ: Օրինակ՝ մայրաքաղաքի Բերայի Եսայան ուսումնարանի աղջկանց բաժանմունք էին խուժել մի խումբ թուրք երիտասարդներ և ոստիկանական ցածրաստիճան ծառայողներ՝ ներկայանալով որպես հաստա-

տության գործերն ստուգող քննիչներ[1]:

Կառավարությունը մերժեց միջպատրիարքական հանձնաժողովի առաջարկությունը, և քննիչներն սկսեցին ազգային դպրոցների լայնատարած «բարեփոխումները»:

Կառավարությունը գիտակցաբար անտեսում էր մի կարևոր հանգամանք ևս, այն, որ հայոց պատրիարքները դիմում էին կառավարությանը ոչ միայն սոսկ իբրև կրոնական պետեր, այլև որպես Ազգային կեդրոնական վարչության նախագահներ: Ինչպես կայսրության մյուս քրիստոնյա, այնպես էլ հայ պատրիարքները Թուրքական պետության դարավոր այլամերժ քաղաքականության պատճառով ոչ միայն եղել են կրոնական պետեր, այլև այդ նույն պետության կողմից ճանաչվել են իբրև ազգային-մշակութային, նույնիսկ որոշ քաղաքական իրավունքների պահապաններ: Հետևաբար, զանազան ոչ-կրոնական հարցերով կառավարությանը դիմելու հայոց պատրիարքների իրավունքը մերժելով՝ դրանով իսկ ժխտվում էր Թուրքահայ ժողովրդին վերաբերող գործերով կառավարությանը դիմելու Ազգային կեդրոնական վարչության իրավունքը:

Անդրադառնալով Հայ եկեղեցու դեմ երիտթուրքերի գնալով ուժ հավաքող պայքարի արդարացման փորձին՝ թե ընդհանրապես կրոնի բնագավառում իրենց գլխավոր նպատակը պետության աշխարհիկ գործերից նրան չեզոքացնելն է, հայ գործիչներն ու մամուլն անբնական էին համարում, որ իշխանություններն այդ գործն սկսում են ոչ թե մուսուլմանական կրոնից, այլ փոքրամասնությունների քրիստոնեական հավատի ջնջումից: Կարելի՞ է արդյոք այժմ Թուրքիայում խոսել կրոնը պետությունից իսպառ բաժանելու մասին, հարց էին տալիս հայկական թերթերի հոդվածագիրները: Բայց եթե այդպիսի ժամանակը հասել է, ամենից առաջ իսլամական կրոնի՝ պետությունից բաժանման խնդիր պետք է հարուցվի: Նրանք երիտթուրքերին հիշեցնում էին, որ դարեր շարունակ Թուրքիան կառավարվում էր աստվածապետական-բռնապետական սկզբունքներով: Եթե սուլթանի կամքն ամեն օրենսդրության աղբյուրն էր, ապա

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 97, 9 մայիսի 1912 թ.:*

օրենքի մեկնաբանը շեյխ-ուլ-իսլամն էր: Պետությունն ու խալիֆայությունը ամփոփված էին մի մարդու՝ սուլթանի անձի մեջ:

Օսմանյան և ընդհանրապես մուսուլմանական աստվածապետությունները չէին ճանաչում ազգը: Ամեն ազգայինն արևելյան համարյա բոլոր բռնապետական երկրներում հալածվում էր: Նույնիսկ Ռուսաստանի նման համեմատաբար առաջադիմական պետության մեջ պաշտոնապես ճանաչվում էին ոչ թե ազգերը, այլ՝ կրոններն ու դավանանքները: Իսկ կրոններից իսլամն իր շարիաթի օրենքով Օսմանյան պետության քաղաքական կյանքի հիմքն է եղել հենց սկզբից:*

Միդհատյան սահմանադրության վերականգնումից հետո եկած տարիներին, ցավոք, բան չէր փոխվել. նոր իշխանությունները որևէ նոր քայլ չէին անում ամենափոքր չափով իսկ սահմանափակելու խալիֆայությունը, չէին փորձում անգամ հրապարակ բերել վերջինս պետությունից անջատելու սկզբունքը, շեյխ-ուլ- իսլամին չէին զրկել օրենքի մեկնաբանի իրավունքից: Մի խոսքով, աստվածապետական սկզբունքը դեռ անսասան էր մնում երկրում, շեյխ-ուլ-իսլամը դեռ շարունակում էր ճանաչվել որպես դատաստանական բարձրագույն իշխանություն: Հեղափոխությունից հետո էլ նա շարունակում էր աթոռ զբաղեցնել նախարարների դահլիճում, իբրև նախարարներին հավասար, նրանց հետ վճռական ձայն ունեցող անդամ:

---

* *Շարիաթի օրենքը մարդկությունը բաժանում էր երկու մասի՝ ոչ իսլամների և իսլամների: Վերջիններս իրենց հերթին մասնատվում էին մի քանի հիմնական խմբերի՝* ***զարբիների, մուստահմինների և զիմմիների****: **Զարբիներն** խալամական պետություններից դուրս գտնվող ոչ-իսլամ ժողովուրդներն էին: **Մուստահմիներ** էին կոչվում նրանք, ովքեր ապրում էին իսլամական պետություններում, բայց օտարահպատակներ էին, պաշտպանված էին օտար պետությունների կողմից՝ տվյալ իսլամական երկրի հետ ունեցած քաղաքական պայմանագրերի ու դաշնագրերի զորությունների: **Զիմմիներն** այն ժողովուրդներն էին, որոնք ունեին ոչ-իսլամական կրոն, ընկել էին իսլամի իշխանության տակ և հնազանդվել: Մինչ զարբիներն ու մուստահմիներն ազատ էին իսլամական պետության սպառնալիքից, զիմմիներն, ընդհակառակը, ամբողջովին ենթակա էին նրա քմահաճույքին, կատարում էին «ռայայի», «գյավուրի» աննախանձելի դերը:*

Ահա՛ իսլամական կրոնի անձեռնմխելիության այս վիճակում է, որ կառավարությունը ձեռնարկում էր քրիստոնյաների պատրիարքների իրավունքների կտրուկ կրճատումը:

Նման պայմաններում անխուսափելի էր դառնում քրիստոնյաների զանգվածային իսլամացումը[1]: Սահմանադրության վերահաստատումից հետո քրիստոնյաներն, առաջին հերթին հայերը, մեծ հույս ունեին, որ երկրում, վերջապես, կդադարի բռնի իսլամացումը: Դժբախտաբար, կյանքը հակառակը ցույց տվեց, գրում էր «Մշակը»: Բռնի իսլամացման դեպքերը բազմապատկվեցին: Ավելին, կառավարությունը հայոց պատրիարքարանին և առաջնորդներին կտրուկ արգելեց կրոնափոխ լինելու մտադրություն ունեցող հայ քրիստոնյային խրատելու և տարհամոզելու համար հանձնարարություն տալ որևէ հոգևորականի[2]:

Ալեքսանդրապոլում հրատարակվող «Ախուրեան» թերթի խմբագիր Ատրպետը (Սարգիս Մուբահյաջյան), անդրադառնալով այդ խնդրին, վկայակոչել էր նույն հարցի վերաբերյալ Ամենայն հայոց կաթողիկոս ընտրված Մատթեոս արք. Իզմիրլյանի արտահայտած մտքերը "Русское Слово" թերթի թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ. «Քանի դեռ օսմանեան սահմանադրութեան մէջ գոյութիւն ունեցող խտրական կէտերը չեն ջնջւում կամ ուղղւում,- ասել էր Իզմիրյանը,- անհնար է կատարեալ հասարակութիւն ստեղծել [Թուրքիայում], կոտորածների, ջարդերի առաջն առնել, ապահովել հասարակական անդորրութիւն եւ խաղաղութիւն»[3]:

Այս պարագաները հաշվի առնելով՝ ընտրյալ կաթողիկոսը թղթակցին մինչև անգամ տեղեկացրել էր, որ ինքը բանակցում է հովանավորություն խնդրելու ռուսական կառավարությունից՝ ապագա կոտորածների և չարագործությունների առաջն առնելու համար:

Ընտրյալ կաթողիկոսի առաջարկած ուղղումների ամենաէական կետը միդհատյան սահմանադրության երկվության վերացումն էր, այսինքն՝ բազմազգ և բազմակրոն երկրում խալի-

---

[1] Տե՛ս **«Արարատ»**, № 12, դեկտեմբեր, 1909, էջ 934-935:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 97, 9 մայիսի 1912 թ.:

[3] **«Ախուրեան»**, № 37, 24 մայիսի 1909 թ.:

ֆայության և սուլթանության կրկնակի իշխանություններն իրար հետ հաշտեցնելու անհնարինությունը:

Եթե Թուրքիան պիտի կառավարվի խալիֆով, ուրեմն այդ երկիրը զուտ իսլամ ժողովրդի սեփականությունն է, ուր ռայաները տեղ չունեն կամ, լավագույն դեպքում, կարող են ծառայել տիրող մուսուլման տարրին: Եթե կառավարիչը խալիֆ է, ուրեմն նա չի կարող Մուհամմեդի տված շարիաթին հակառակ որևէ քայլ անել: Իսկ քանի որ միդհատյան սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն Թուրքիան խյուլաֆեթ (հաջորդական ժառանգություն) էր կոչվում, նշանակում էր, որ սուլթանը նաև խալիֆ է: Նույն հոդվածում չեշտված էր, թե երկրում պիտի գործի շարիաթը, հետևաբար որևէ վարչություն, որևէ ռեժիմ չի կարող սանձել իսլամ կրոնամոլ ամբոխին, որպեսզի սա չկեղեքի, չշահագործի ռայային:

Միդհատյան շրջանում, 1876 թ., հակառակ Գրիգոր Օտյանի անվերջ պնդումներին, թե չի կարելի բազմակրոն մի երկրի սահմանադրությունը հիմնել խյուլաֆեթի վրա, իսլամ մտավորականությունը ամենամեծ սխալը գործեց՝ այդ և նման ահազանգերը ուշադրության չառնելով: Երեք տարի չանցած, Մեջլիսի մեբուսանի (Պատգամավորական ժողով) փակումից հետո, նույն ինքը՝ իսլամ մտավորականությունը, զգաց թույլ տված սխալի մեծությունը, բայց արդեն ուշ էր: Առավել աղետաբերն այն է, չեշտում էր ընտրյալ կաթողիկոսը, որ «ամբողջ 30 տարուայ դեգերումներից եւ սահմանադրութիւնը վերահաստատելուց յետոյ դարձեալ կրկնուեց միդհատեան սխալը: Դա աւելի քան ոճիր է ներկայ Օսմանեան կայսրութեան ոչ իսլամ ժողովուրդների նկատմամբ: Խիլաֆէթի գոյութիւնը պահպանելով եւ ամրացնելով՝ «Միութիւն եւ առաջադիմութիւն» կոմիտէն դարձեալ նոյն ուղիով է գնում, ինչպէս ընթացել են օսմանեան սուլթանները, վեզիրներն ու ենիչերիներն ամբողջ վեց դար: Նրանք խրախուսում են իսլամի հետեւորդներին, որպէսզի սրանք դարձեալ բարբարոսաբար կեղեքեն, հարստահարեն ու շահագործեն երկրի քրիստոնեայ տարրը»[1]:

---

[1] ***«Ախուրեան»**, № 37, 24 մայիսի 1909 թ.:*

Հայոց Վեհապետի ընդհանուր եզրակացությունն այն էր, որ քանի կանգուն կմնա իսլամ հոգևորականության բարձր դիրքը, այնքան ժամանակ էլ հարկավոր է, որ մնան քրիստոնյա ազգերի առանձին արտոնությունները:

Ալեքսանդրապոլում լույս տեսնող մի ուրիշ թերթ՝ «Ժայռը», գրում էր, որ առանց ազգերի իրավահավասարության մասին իրենց հռչակագիրը կյանքում իրականացնելու, երիտթուրքերը չեն կարող ամուր պետություն ստեղծել: «Որպէսզի թուրք յեղափոխականները կարողանային գրաւել տարբեր ազգերի վստահութիւնը,– նշում էր հոդվածագիրը,– պիտի սեւ քուէ տային պատմական մեծ արդարութեանը՝ իսլամների եւ զիմմիների միջեւ վերացնէին տարբերութիւնները, կրօնի պատճառով ստեղծուած անջրպետները: Օսմանեան կայսրութեան մէջ ապրող բազմաթիւ ցեղերին «օսմանլի» անուան տակ բերելը սնամէջ գաղափար է»[1]: Թուրքիային պետք է այնտեղ ապրող բոլոր ազգերի դաշնությունը, այլ ոչ թե մի ցեղի և մանավանդ մի կրոնի գերիշխանությունը՝ ի հաշիվ մյուս ցեղերի ու կրոնների ստորադասման: «Կրօնը մարդու խղճի գործն է, նրա ներքին աշխարհը, որ միշտ պիտի անձեռնմխելի մնայ քաղաքականութիւնից եւ արտաքին բռնի հարուածներից ու նեցուկներից»[2]: Կրոնական կարգը պետության քաղաքացիական կյանքի հիմքը չպիտի լինի, կրոնական հաստատությունները չպիտի խառնվեն պետության գործերին, որովհետև դրանով մի կրոնական համախմբության անդամներն իրենց համար արտոնյալ դիրք են ստեղծում ի հաշիվ մյուս կրոնների անդամների:

«Ժայռը» նկատում էր, որ, իհարկե, ամեն տեղ կղերը հետադիմական է, ակներև է, որ նրա հովանին մեծ բարիքներ չէր կարող բերել և չի բերել աշխատող ու ստեղծագործող դասակարգերին: Բայց երբ քրիստոնյա եկեղեցու դեմ անողոքաբար կանգնում է մուսուլման կղերի կամ թուրք ազգայնամոլների բռնակալական իշխանությունը, այդ պայմաններում իր ազգային

---

[1] **«Ժայռ»**, № 5, 21 Հունվարի 1910 թ.:

[2] Նույն տեղում:

շրջանակներում քրիստոնյա հոգևորականության սահմանափակ ու անվտանգ իշխանությունն անհամեմատ առաջադիմական է ու տվյալ ազգի համար ցանկալի, որովհետև քիչ թե շատ հանդես է գալիս որպես մի պատնեշ, որի այս կողմը, այսինքն՝ ներքին կյանքում, քրիստոնյա ազգերը կարողանում են ժողովրդանպաստ գործեր անել[1]:

Իթթիհադական իշխանությունները տարբեր ուղղություններով հարձակումներ էին սկսել նաև կայսրության քրիստոնյա մյուս ժողովուրդների և, առաջին հերթին՝ հույների ազգային ու կրոնական հաստատությունների դեմ:

Երիտթուրքական կառավարությունը որոշել էր Կ. Պոլսի հունաց պատրիարքի իրավասությունից դուրս բերել Մակեդոնիայի սերբական և բուլղարական օրթոդոքս (կամ հունական) եկեղեցիների մի մասը և դրանք դնել Բուլղարական եկեղեցու էկզարխի ենթակայության տակ:

Դրանով վտանգվում էր Հունաց եկեղեցու դարավոր իրավունքը, որը տիեզերական պատրիարքը կենսական էր համարում իր եկեղեցու համար[2]:

Այդ ծանրակշիռ խնդիրը քննության առնելու համար Կ. Պոլսի հունաց պատրիարքը և սինոդը ազգային երեսփոխանական ժողով գումարելու որոշում են ընդունում, բայց թուրքական կառավարությունը արգելում է և նույնիսկ ժխտում ընդհանրապես ազգային ժողով գումարելու հույների իրավունքը: Արձագանքելով կառավարության որոշմանը, մթնոլորտը չիկացնում էր նաև թուրքական մամուլը՝ հարձակումներ գործելով հունաց պատրիարքի և ազգային ժողովի դեմ[3]:

Հետևելով թուրքական մամուլին, Կ. Պոլսի հայկական մամուլը ևս պաշտպանեց հույների նկատմամբ կառավարության բռնած դիրքը, համենայնդեպս՝ չբողոքեց նրա անօրեն գործողությունների դեմ: Պատճառն այն էր, որ հայերն այլևս ուժ ու համարձակություն չունեին սեփական կարծիք ունենալու քրիս-

---

[1] ***«Ժայռ»**, № 5, 21 հունվարի 1910 թ.:*

[2] *Տե՛ս **«Մշակ»**, № 216, 1 հոկտեմբերի 1910 թ.:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

տոնյա եղբայրական ժողովրդի նկատմամբ Թուրք կառավարության հերթական հակասահմանադրական գործողությունների մասին:

Այդ ամենը տեղի էր ունենում 1910 Թ. աշնանը: Բնական էր, որ Թուրքիայի հույների շրջանում հայերի նկատմամբ առաջանար խիստ դժգոհություն՝ իրենց ազգային ժողովի գումարման հարցի առթիվ նրանց բռնած դիրքի պատճառով: Արտահայտելով իրենց վիրավորվածությունը հայերից, հույները զարմացած էին, թե ինչո՞ւ նրանք չեն մտածում, որ կառավարությունը վաղը կամ մյուս օրը կարող է նման մի բան անել Հայ եկեղեցու նկատմամբ՝ ժխտելով նրա՝ դարերով վայելած ինքնության իրավունքը, որը պահպանված էր նույնիսկ Աբդուլ Համիդի բռնապետական ռեժիմի օրոք:

Ինչ խոսք, այդ հարցում հայերի նկատմամբ հույների արտահայտած տրտունջը միանգամայն արդարացի էր:

Հայոց ինքնության վրա երիտթուրքերի նոր հարձակումների հաջորդ նշանատեղը Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածն էր, որը երիտթուրքերը նույնպես դիտում էին որպես հայերին տրված անօրինական արտոնություն: Բոլորովին ավելորդ է այդ հոդվածը, ասում էին նրանք, քանի որ Թուրքիայում հաստատված է ընդհանուր սահմանադրություն:

Ելնելով դրանից՝ երիտթուրքական իշխանությունները գիտակցաբար խեղաթյուրում էին 61-րդ հոդվածի բովանդակությունը՝ ասելով, որ իբր, այդ հոդվածի տրամաբանությամբ, ըստ էության, միասնական Օսմանյան պետության մեջ ինքնավարության են ձգտում միայն հայկական կուսակցությունները, որպեսզի Անատոլիայի արևելյան նահանգները իրենց սեփականությունը դարձնեն ապա, անջատվելով կայսրությունից, մյուս ազգություններին այնտեղից դուրս մղեն:

Բայց արդյո՞ք 61-րդ հոդվածն այդպիսի բովանդակություն ուներ: Չէ՞ որ դա չէր պարունակում պարտադիր (իմպերատիվ) որևէ պահանջ, նույնիսկ՝ միտք: Հոդվածը չէր խոսում որևէ ուրույն քաղաքական մարմին կազմելու մասին: Նրա պահանջները ծայրահեղորեն համեստ էին և վերաբերում էին այն մի քանի ոչարմատական բարենորոգումներին, որոնք քիչ թե շատ բարե-

կարգ որևէ երկրում առօրեական, սովորական, նույնիսկ անհնկատելի բաներ էին:

Հետևելով Դաշնակցության քաղաքական նոր գծին՝ ՀՅԴ օրգան «Ժայռը» գրում էր. «Անջատում, պետական առանձին կեանք սկսելը հեռու է եղել հայի մտքից: Հայկական յեղափոխութեան կուսակցութիւնները, որոնք Թուրքիայի վերածնութեան գործին մեծապէս նպաստել են, ... երբեք չեն տարուել անջատական տենդենցներով: Պատմական Հայաստանի աշխարհագրական դիրքը, տնտեսական գործօնները, հայերի թուական փոքրամասնութիւնը անջատական ծրագրեր կազմելու հնարաւորութիւն չեն տուել: Հայը անջատական չի եղել»[1]:

Հայկական մամուլը և հայ գործիչները երիտթուրքերին հիշեցնում էին, որ հայկական կուսակցությունների ծրագրերը միշտ բխել են ոչ թե զուտ ազգային, այլ տարածքային ինքնավարության պահանջից, որի բարիքները հավասարապես պիտի վայելեին ապագա ազատ հայկական նահանգների բոլոր համայնքները՝ առանց ցեղի ու կրոնի խտրության: Նրանք չեչտում էին, որ անկասկած, չատ հեչտ է ջնջել թե՛ 61-րդ հոդվածը և թե՛ Ազգային ժողովի ու պատրիարքարանի իրավունքները, բայց արդյո՞ք այդքան էլ հեչտությամբ կարելի կլինի դրանք վերականգնել, եթե թուրքական փոփոխվող իրականությունը նորից անհրաժեչտություն դարձնի հայոց ազգային հաստատությունների և 61-րդ հոդվածի վերականգնումը:

Հայերն իրենց համար ուզում էին պարզել, թե ինչո՞ւ թուրքական կառավարությունը ոտ ու ձեռ ընկած չտապում է որքան կարելի է չուտ իրականացնել իր մտահղացումները: Նրանք վերհիչում էին, թե ինչպես ամիսներ առաջ արտաքին գործերի նախարար Ռիֆաթ փաչան ճանապարհորդելով Եվրոպայում՝ անցնելով մի երկրից մյուսը, կառավարություններին խնդրում էր, աղաչում էր, ինչպես հավատացնում էր քաղաքական մամուլը, վերացնել Բեռլինի դաշնագրի մի քանի կետեր, դրանց թվում՝ նաև 61-րդ հոդվածը: Երիտթուրք նախարարը եվրոպա-

---

[1] ***«Ժայռ»**, № 5, 21 հունվարի 1910 թ.:*

կան կառավարությունների մոտ փնովում էր հայոց թվացյալ ինքնության ամենափոքր իսկ դրսևորումը՝ դա ներկայացնելով իբրև Օսմանյան կայսրության դեմ ուղղված չարիք: Օրինակ՝ նա մատնացույց էր անում նույնիսկ եվրոպական համալսարաններում սովորող հայ ուսանողների միությունը, որպես հայերի հակաթուրքական պայքարի դրսևորումներից մեկը, այն առումով, որ այդ կազմակերպությունն զբաղվում էր դրսում 61-րդ հոդվածի քարոզչությամբ:*

Եվ հիմա, ամիսներ անց, երիտթուրքերը կրկնում էին Ռիֆաթի պահանջները, բայց ոչ թե մեծ տերություններին խնդրելով, այլ՝ հայությանը սպառնալիքներ ուղղելով:

Հայկական մամուլը հարց էր տալիս. եթե կառավարությունը օսմանյան ընդհանուր սահմանադրության համաձայն մտադիր է արմատական բարենորոգումներ կատարել և իրապես իրագործել նաև 61-րդ հոդվածի առաջադրանքները, ապա ինչո՞ւ համառորեն պնդում է այդ հոդվածի վերացման, միջազգային վկայաթղթերի կապոցից դա հանելու և ջնջելու վրա՝ դրանով իսկ հայերի մեջ առաջ բերելով կասկածներ ու երկյուղներ: Խնդիր է ծագում. «Իսկ ի՞նչ վնաս է տալիս ձեզ 61-րդ հոդվածը, երբ դա այլևս չունի կենսական ուժ՝ լուծված լինելով կայսրությունում իբր անցկացվելիք ընդհանուր բարենորոգումների մասին սին խոստումների մեջ»:

Հայերը գիտակցում էին, որ 61-րդ հոդվածը Թուրքիայի համար ունի մի անախորժ կողմ՝ բարենորոգումների անհրաժեշ-

---

* *Եվրոպայի հայ ուսանողների միությունը կազմակերպվել էր Ռիֆաթի եվրոպական չրջագայությունից ավելի քան տասը տարի առաջ: Անցած տարիներին միությունը ծավալել էր բեղմնավոր գործունեություն՝ գրքերի, քարտեզների, ձեռնարկների հրատարակում, հայ ուսանողությանն ուղղված կոչեր, նամակ-չրջաբերականներ, Հայկական հարցի չուրջ տարբեր քաղաքներում հավաքների կազմակերպում, եվրոպական մամուլի էջերում քարոզչություն և այլն: Ընդամենը միության ներսում դեռ վաղուց առաջ էին եկել հակոտնյա գաղափարներ և դրանց չուրջ պայքար էր ծավալվել, բայց միությունն իր գոյությունը պահպանեց մինչև 1910 թ. սկիզբը, երբ այդ տարվա հունվարի 2-ին Ժնևում տեղի ունեցած նրա վերջին համագումարը լուծարեց կազմակերպությունը:*

տության մասին եվրոպական պետությունների պահանջը: Բայց եթե կառավարությունն անկեղծորեն ու հաստատապես որոշել է բարենորոգումներ մտցնել, այլևս որևէ երկյուղ չէր կարող լինել եվրոպական պետությունների հանդեպ:

Եթե ընդունենք նույնիսկ, մտածում էին հայերը, որ Թուրքերն անկեղծ են և, իրոք, տոգորված են պետական բարեկարգումների գաղափարներով, մի՞թե չեն կարողանում ըմբռնել, որ հայ ժողովուրդը, որը տասնյակ տարիներ ամենասարսափելի հալածանքների տակ է եղել, չի կարող իսկույն հալած յուղի տեղ ընդունել երիտԹուրքական կառավարության ձեռնարկումները՝ մանավանդ այն բանից հետո, երբ սահմանադրության վերահաստատումից ընդամենը ինը ամիս անց ականատես եղավ Ադանայի կոտորածին:

Պարզ է, որ այդքանից հետո հայերը հոգեբանորեն պատրաստ չէին հեչտությամբ զրկվելու 61-րդ հոդվածով իրենց տրված իրավունքներից:

Եթե օսմանյան սահմանադրությունը ժամանակի ընթացքում կարողանար ամրանալ և խոր արմատներ գցել պետության կյանքում, ապահովեր անընդհատ բարենորոգումների ներմուծումը օսմանյան երկրի բոլոր մասերում, եթե ի վիճակի լիներ տալ խոստացած բարիքները՝ առանց ազգի ու կրոնի խտրության, ապա կայսրության առանձին շրջաններն այլևս չարժառիթ ու հիմք չէին ունենա պահանջելու զուտ իրենց համար բարենորոգումներ, հետևապես բնական ճանապարհով ավելորդ կդառնային այս կամ այն ազգի և կրոնական համայնքի ունեցած արտոնությունների, հայերի դեպքում՝ նաև 61-րդ հոդվածի պահպանման անհրաժեչտության մասին խոսակցությունները: Օսմանյան սահմանադրության աստիճանական զարգացումը, խորացումն ու ընդարձակումը, այդ ամենից բխած ամեն մի դրական էական բարենորոգում, որ ունակ կլիներ մարմնավորվելու կյանքում, զուգընթացաբար կվերացներ այն առանձին հմայքը, հրապույրն ու գրավչությունը, որ հայության համար ուներ այդ չարաբաստիկ հոդվածը[1]:

---

[1] *Տե՛ս* ***«Փարոս»*** *(Կ. Պոլիս), № 5-6, հունիս-հուլիս, 1910:*

«Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարը «Օսմանեան սահմանադրութիւնը և 61-րդ յօդուածը» ակնարկում գրում էր. «Թուրքահայերի համար երջանիկ կլինէր այն օրը, երբ 61-րդ յօդուածն առանց վերացուելու միջազգային մատեաններից՝ ինքնըստինքեան կորցրած կլինէր իր բարոյական նշանակութիւնը եւ նրա (օսմանյան սահմանադրության: – Հ. Ս.) թելադրած ռեֆորմները դարձած կլինէին արիւն ու մարմին այն նոր կարգի եւ կեանքի մեջ, որ հաստատուած եւ աճեցրած կլինէր Օսմանեան պետութեան ազատ վարչութիւնը»[1]:

Բայց չէ՞ որ դա դեռ չկար: Օսմանյան սահմանադրությունը դեռ ապացույցներ չէր տվել, թե իսկապես երաշխավոր է Թուրքիայում ժողովրդական ազատությունների համար, և թե որևէ դիպված, որևէ չար հողմ ու փոթորիկ չեն գլորի նրան:

«Երբ մի պետութեան մէջ տիրող տարրը ինքը ոչ մի տրամադրութիւն ցոյց չի տալիս աշխարհականանալու, մտնելու արդիականանալու շաւիղի մէջ, այդ պայմաններում մեծ անարդարութիւն էր նոյնը պահանջել միւս տարրերից»[2],- գրում էր Համբարձում Առաքելյանը «Մշակում»:

Արդարությո՞ւն: Ո՞վ գիտեր, որ արդեն այն ժամանակ երիտթուրք պարագլուխները հայերին է՛լ ավելի դաժան ճակատագրի արժանացնելու ծրագրեր էին մտմտում: Նրանք վճռական էին: Իրենց գործողություններում տատանումներ չէին նկատվում: Զհամարձակվելով աշխարհականացում մտցնել տիրապետող թուրքերի դավանանքի մեջ՝ կառավարությունն արդեն 1910 թ. սկզբներից սկսել էր անհողդողդ «արդիականացնել» հպատակ ազգերի կառավարման սկզբունքները՝ նրանց կյանքից վտարելով ազգային եկեղեցու աշխարհիկ գործառույթները:

Վտանգն իրական էր: Զրկվել ինքնության երկու կարևոր բաղադրիչներից՝ Ազգային սահմանադրությունից (սեփական ազգային կիսաիշխանությունից) և Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից, նշանակում էր ընդմիշտ ձեռք քաշել եվրոպական

---

[1] **«Մշակ»**, № 119, 6 հունիսի 1909 թ.:

[2] Նույն տեղում, № 224, 11 հոկտեմբերի 1909 թ.:

հնարավոր միջամտություններից, մեն-մենակ մնալ երիտթուրքական պետական մեքենայի դեմ-հանդիման, ասել է թե՝ կամավոր երես առ երես կանգնել հայասպանության իրական վտանգի առջև:

Բայց ի՞նչ անել: Պատասխանն անորոշ էր, վիճակն՝ անելանելի, ապագան՝ մշուշապատ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱԴԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԻՑ ՀԵՏՈ

Հայության տագնապի սաստկացումը կարծես տեղի էր ունենում ոչ թե տանջանքի երկրում, այլ մի ուրիշ տեղ, հեռավոր մի երկրում կամ ընդհանրապես տեղի չէր ունենում: Դա վերաբերում էր հայկական հասարակության ամենաազդեցիկ քաղաքական կազմակերպությանը՝ ՀՅ դաշնակցությանը:

Թվում էր, թե գոնե Ադանայի դեպքերից հետո դաշնակցություն կուսակցությունը վերջապես կսթափվի, ուշքի կգա և լիովին կխզի իր կապերը երիտթուրքերի հետ: Դժբախտաբար այդ բանը տեղի չունեցավ, չնայած շարքային շատ դաշնակցականներ իրենց ղեկավարների առջև համառորեն դնում էին իթթիհադական կառավարող կուսակցության հետ կապերը խզելու պահանջը: Զունկնդրելով սթափ ձայներին՝ Դաշնակցության ղեկավարությունը շարունակում էր «բարեկամություն անել» երիտթուրքերի հետ[*]*:*

1909 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում գումարվեց ՀՅԴ Հինգե-

---

[*] *Նույնիսկ Իթթիհադից խզվելուց հետո (կիլիկյան արհավիրքից 3.5 տարի անց)՝ 1912 թ. հոկտեմբերի 28-ին Վանի Այգեստանի ՀՅԴ ենթակոմիտեում ունեցած դասախոսության ժամանակ հանդես գալով «Դաշնակցութեան եւ Իթթիհադի փոխյարաբերութիւնները» թեմայով, Վռամյանն ասել էր. «Իթթիհատը ոեւէ մաս չունի Ատանայի կոտորածներու[ն] մէջ. եթէ հակառակը պնդողները մէկ հատիկ փաստ ունին, թող մեջտեղ դնեն եւ այն ատեն պետական դատարանի առջեւ քաշենք այդպիսի ոճրագործ կազմակերպութիւն մը» («Աշխատանք», № 5 (99), 17 նոյեմբերի 1912 թ.):*

բորդ ընդհանուր ժողովը, որը որոշեց չարունակել ու ամրապնդել Իթթիհադի հետ ունեցած դաշինքը: Հրապարակված 9 կետից կազմված հայտարարագրում ասված է, որ սահմանադրության վերականգնման ուժով արդուլհամիդյան քարուքանդված կայսրության ավերակների վրա բարձրանում է ազատության շենքը: Փաստաթղթում տեղ էին գտել նաև այսպիսի առաջադրանքներ. 1) «Դաշնակցութիւնը իբրեւ կուռող, յեղափոխական կուսակցութիւն, վար կը դնէ դաւադրական այն միջոցները, որոնցով կը պայքարէր հին բռնակալ բեժիմին դէմ...», 2) «Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր սկզբունքին եւ գործելակերպին, պիտի չարունակէ նոյն թափով եւ աւելի լայն ծաւալով համագործակցիլ թիւրք երիտասարդ կուսակցութեան եւ մտաւորականութեան հետ՝ ի պաշտպանութիւն սահմանադրութեան...»[1] և այլն:

Այսպիսով, ՀՅԴ բարձրագույն մարմինը հայ ժողովրդի ավելի քան քսան տարիների ազգային-ազատագրական պայքարը որակում էր «դաւադրական միջոցներով» վարված կռիվ, իսկ երիտթուրքական կուսակցության հետ հետագա համագործակցության խորացումը՝ «իր սկզբունքին եւ գործելակերպին հաւատարիմ» գործընթաց:

Իր այդ դիրքորոշումը Դաշնակցությունը բացատրում էր մի շարք հանգամանքներով.

1) Ընդամենը մեկ տարի առաջ թուրքական պետականության տեսակետից՝ հայությունը մի ժողովուրդ էր, որը կայսրության մյուս բոլոր ոչ-թուրք ազգություններից ավելի էր աշխատում «քանդել» պետության կազմը՝ նպատակ ունենալով առաջացնել օտար միջամտություններ կամ սեփական միջոցներով փորձել օսմանյան երկրից անջատել հայկական նահանգները, 2) Գտնելով, որ թուրքերի մոտ առաջացած նման մտքերը չափազանցված են, դաշնակցական ղեկավարները, սակայն, խնդիրը չէին տեսնում հենց դրանում: Իրողությունն այն է, ասում էին նրանք, որ 1878 թ. ի վեր Թուրքիայի հայությունը գտնվում էր

---

[1] ***«Դրօշակ»**, № 9, սեպտեմբեր, 1909, էջ 113:*

մոլորության մեջ, կարծելով, թե ինքն այժմ անպաշտպան չէ, քանի որ Թուրքահայաստանում ավելի լավ կացություն ստեղծելու իր իրավունքը երաշխավորված է Եվրոպայի միահամուռ համաձայնությամբ: Իսկ թուրքական կառավարությունը հենց այդ նույն թվականից սկսած՝ ամեն ջանք գործ էր դնում խեղդելու նորածագ «Հայկական հարցը», քանի որ դրանում մեծ սպառնալիք էր տեսնում, գտնելով, որ դա նախադեպ կդառնա կայսրության մյուս ոչ-թուրք ազգությունների համար: ՀՅԴ Հինգերորդ ընդհանուր ժողովը փաստեց, որ այս երկու հակառակ ուղղություններից առաջացած կռիվը տևել է ուղիղ 30 տարի: Այդ մեծ կռվի մանրամասները բոլորին հայտնի են: Փոխանակ հարցը լուծվեր դիվանագիտական միջոցներով, դա ցավոք, երկարատև ու համառ հեղափոխական շարժման կերպարանք առավ: Բայց նույնիսկ հեղափոխական շարժումների ժամանակ հայերի պահանջածն ազգային-քաղաքական առանձնացում չէր, այլ՝ բարեկարգված երկիր և կյանքի ապահովությունը երաշխավորող իրավակարգ ունենալը: Շարժման ընթացքում հայության միակ հույսը եվրոպական գործուն միջամտությունն էր: Բայց երկար տարիների արյունոտ դասերը նրան ցույց տվեցին, որ եվրոպական միջամտությունը խոսքից գործի չի անցնում: Վերջապես՝ խոսքն էլ լռեց, և հայերն ամբողջովին լքվեցին եվրոպական տերությունների կողմից ու թողնվեցին իրենց զարհուրելի ճակատագրին: Օսմանյան պետության դեմ սկսված կռիվը հայերին հասցրեց խորտակման ու քայքայման վերջին ծայրին:

Ահա՛ այս ահավոր իրավիճակում վրա հասավ օսմանյան սահմանադրությունը: Հայերն այլևս վերացած համարեցին իրենց 30-ամյա մաքառումները, իրենց «առանձին» հարցը: Բարեկարգված ու ժողովուրդների հավասարությունը ճանաչող մի պետություն – հայերը այս էլ բավական էին համարում: Ուստի նրանք ամենայն անկեղծությամբ փարվեցին նոր վարչակարգին, դարձան թուրքական պետականության անկեղծ կողմնակիցներ: Մի ժամանակ ռումբերով ու հայդուկային խմբերով գործող հայկական քաղաքական կազմակերպություններն այժմ իշխանության գլուխ կանգնած երիտասարդ թուրքերի խաղաղ

աջակիցներն ու դաշնակիցներն են: Նրանք համատեղ փրկութիւն են որոնում միայն սահմանադրական կարգերի հաստատման և ամրացման մեջ:

Իրերի ստեղծված այս նոր դրությունը կարո՞ղ է խախտվել, հայերը կարո՞ղ են վերադառնալ գործողությունների նախկին եղանակին: ՀՅԴ ընդհանուր ժողովը նման հեռանկարը բացառում էր:

Համագումարից չատ չանցած՝ Իթթիհադի և Դաշնակցության ղեկավարները մի փաստաթուղթ ստորագրեցին, որը լույս տեսավ «Դրօշակ» թերթում՝ «Համերաշխութիւն Իթթիհադի եւ Դաշնակցութեան միջեւ» խորագրով: Այդ փաստաթղթի 3-րդ կետում հանդիսավորապես ասված էր. «Օսմանեան նուիրական հայրենիքը անջատումէ եւ բաժանելէ զերծ պահելը՝ երկու կազմակերպութեանց միացած գործունէութեան նպատակակէտը ըլլալով, անոնք (Իթթիհադը և Դաշնակցությունը:- Հ. Ս.) պիտի գործնականապէս ցրեն հանրային կարծիքին մէջ բռնակալ ռեժիմէն ժառանգ մնացած այն սուտ զրոյցները, թէ հայերը անկախութեան կը ձգտին»[1]:

Դաշնակցությունը սերտորեն գործակցում էր Իթթիհադի հետ, նրա պատգամավորները Թուրքական խորհրդարանում պաշտպանում էին կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը[*]:

---

[1] ***«Դրօշակ»**, № 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր, 1909, էջ 152:*

[*] *Այս տեսակետից ուշագրավ է ՀՅԴ անդամ Տիգրան Խալիկյանի անգլերեն գիրքը՝ Dikran Mesrob Kaligian, Armenian Organization and Ideology under Ottoman Rule 1908-1914, Transaction Publishers, New Brunswick (U. S. A.) and London (U. K.), 2009 - («Հայկական կազմակերպությունը եւ գաղափարախոսությունը օսմանյան տիրապետության տակ 1908-1914», «Տրանսաքչըն» հրատարակչություն, Նյու Բրունչվիկ (ԱՄՆ) եւ Լոնդոն, 2009), որը հեղինակի դոկտորական ատենախոսությունն է, գրված Բոստոնում ՀՅԴ կենտրոնական արխիվի նյութերի հարուստ հիմքի վրա: Հեղինակը ներկայացնելով հանդերձ Ադանայի կոտորածից հետո ՀՅԴ ներսում առաջացած տարակարծությունները Իթթիհադի հետ հետագա գործակցության հարցի վերաբերյալ, ըստ էության արդարացնում է այդ գործակցության չարունակությունը հետագա տարիներին:*

Դաշնակցական մամուլը, մտավորական ուժերը, գործիչները լայնորեն քարոզում և լուսաբանում էին իրենց կուսակցության հինգերորդ ընդհանուր ժողով որոշումները, Իթթիհադի հետ համագործակցության մասին Դաշնակցության ղեկավարության ստորագրած փաստաթուղթը: Ահա՛ մի բնորոշ ու արտառոց օրինակ:

1910 թ. Պոլսում լույս տեսավ դաշնակցական հայտնի գործիչներից մեկի՝ Ատոմի (Հարություն Շահրիկյան) «Մեր հաւատամքը» գրքույկը, որտեղ նա հայ ընթերցողներին հրամցնում էր հետևյալ «գոհարները»: «Այսօր,- գրում էր նա,- Թուրքիոյ մէջ օսմանեան սահմանադրութիւնը կը պահպանուի բանակին ոյժով, վաղը անպայման պիտի պահպանուի օսմանեան միութիւնը կազմող աշխատաւոր, սահմանադրական ժողովուրդներու կազմակերպուած ոյժով»[1], «Ազգերու համագործակցութեան ստանձնելիք դերն է, որ պիտի փրկէ ընդհանուր հայրենիքը, պիտի հաստատէ ու ամրապնդէ ռամկավար սահմանադրութիւնը»[2]:

Եվ այս ամենը դաշնակցական գործիչը գրում էր Կիլիկիայի աղետից շատ չանցած: Ավելին, հեղինակը նախատում էր այն հայ գործիչներին, որոնք Ադանայի կոտորածից հետո հայությանը զգուշացնում էին, թե իթթիհադականները նոր աղետներ են նախապատրաստում հայ ժողովրդի համար: Այդպիսիներին նա մեղադրում էր ... ազգադավության մեջ: «Թերահաւատները,- գրում էր նա,- Կիլիկեան աղէտը եւ անոր միջադէպերը չահագործեցին սրտացաւութեան, ազգասիրութեան դիմակի տակ, ամենաճարպիկ ազգադաւութեամբ»[3]: «Հակահարուած» տալով այն «յոռետեսներին», որոնք ասում էին, թե ուր որ է հայ ժողովրդի գլխով մի նոր սև խորչակ է անցնելու, Ատոմը գրում էր. «Կարող ենք ապահով ըլլալ, որ այլեւս ամենածայրահեղ դժբախտութեան պարագային, զէթ միայնակ կոտորուելու չենք: Կոտորելու եկող հորդաներուն դէմ թուրք եւ հայ, իթթիհատա-

---

[1] ***Ատոմ**, Մեր հաւատամքը, Կ. Պոլիս, 1910, էջ 16:*

[2] *Նույն տեղում, էջ 88:*

[3] *Նույն տեղում, էջ 16:*

կան ու դաշնակցական միասին կանգնած միասին պիտի դիմա-գրաւեն վտանգը»[1]:

Այսպես էր Դաշնակցությունը հայ ժողովրդին օրոր ասում երիտթուրքական գազանի բացված երախի առջև:

Թե՛ Թուրքահայության և թե՛ ռուսահայության մեջ գործող քաղաքական մյուս բոլոր ուժերը կտրականապես մերժում էին Դաշնակցության այս խոտոր ու իրականությունից համբարձ-ված տեսակետը և դրա «հիմնավորումները»: Օրինակ՝ «Արօր» պարբերականը ծաղրանքով էր վերաբերվում Դաշնակցության մամուլի օրգանների այն ճիգերին, որոնց նպատակն էր ցույց տալ, թե «Ադանայի սոսկալի ջարդը բռնապետութեան վերջին ջղաձգութիւնն էր և վերջին ողջակէզը, որ հայերը տուին հայրե-նիքի (օսմանեան:- Հ. Ս.) փրկութեան խորանի վրայ»[2]:

1909 թ. հուլիսի 12-ին Կ. Պոլսում սկսած և չորս ամիս տևած Ս. Դ. Հնչակյան կուսակցության 6-րդ ընդհանուր պատգամա-վորական ժողովը կիլիկիահայոց ջարդերի մասին ընդունեց որոշում, ուր ասված էր, թե «Կիլիկիայի սրտաճմլիկ աղաղակը այսօր էլ արձագանգում է՝ քաղաքակիրթ մարդկութեան երեսին չպրտելով Ադանայի հսկայ ոճիրը»: Ժողովը գտնում էր, որ անհնարին է մոռացության տալ հոչոտված, ջարդված, արյան ճապաղիքների և ծխացող մոխրակույտերի մեջ թպրտացող մի նահատակ ժողովրդի կրած անտանելի ցավը[3]:

1909 թ. սեպտեմբերի 16 թվակիր նամակներից մեկում Զապել Եսայանը գրում էր, որ ինքը Կիլիկիա կատարած ճանապար-հորդությունից նոր է վերադարձել Կ. Պոլիս, եղել է նաև Սիսում ու Հաճընում, տեսել, թե ջարդերից փրկված հայերը ինչպիսի զայ-րույթով ու ատելությամբ են խոսում թուրքական կառավարու-թյան մասին, որը կազմակերպել է այդ սոսկալի ոճրագործությու-նը[4]: Տիգրան Եսայանին հղած նամակում Զապել Եսայանը նշում

---

[1] **Ատոմ,** *Մեր հավատամքը ազգային հարցի մասին, էջ 106:*

[2] ***«Արօր»**, № 5-6, մայիս-հունիս, 1912, էջ 173:*

[3] ***«Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան. 1887-1962»**, հատ. Ա, էջ 326:*

[4] *ԳԱԹ, Զապել Եսայանի անձնական ֆոնդ, ց. 1, թղթ. 230, թթ. 1-3:*

էր, որ Կիլիկիայում եղած ժամանակ մեծ տառապանքով է լսել հայերի կրած սոսկումների մասին, որոնց մոռացության տալը հավասարազոր է ոճրագործության: Մտնելով գյուղերը, ասել է, թե գերեզմանատուն ես մտնում, չեչտում էր նա[1]:

Ռամկավար գործիչ Վահան Մալեզյանը տարբեր մարդկանց գրած նամակներում ցավ էր արտահայտում, որ ոմանք փորձում են ընդմիշտ մոռացության գիրկն ուղակել Կիլիկիայի մեծ արհավիրքը: Նա գտնում էր, որ օսմանյան պառլամենտի հայ պատգամավորները պարտավոր են իրենց ելույթներում Եվրոպային մշտապես հիշեցնել կատարված չարագործության ծավալների ու սարսափների մասին[2]: Նույնպիսի տառապանք և չարին պսակազերծելու պահանջ էր արտահայտված Վ. Մալեզյանին գրած ռամկավար գործիչ Հակոբ Հովհաննիսյանի նամակներում[3]:

ՀՅԴ Հինգերորդ ընդհանուր ժողովի որոշումները սկիզբ դրեցին հայության լիակատար զինաթափման ճակատագրական գործընթացին[*]:

---

[1] ԳԱԹ, Զապել Եսայանի անձնական ֆոնդ, ց. 1, թղթ. 245, թթ. 1-3:

[2] ԳԱԹ, Վահան Մալեզյանի անձնական ֆոնդ, ց. 1, թղթ. 283, թթ. 9-50:

[3] Նույն տեղում, թղթ. 325, թթ. 18-40:

[*] Դաշնակցությունն կուսակցությունը երբեք չի ընդունել իր ճակատագրական սխալները՝ դրանք վերագրելով առանձին անհատ դաշնակցականների: Ադանայի կոտորածներից նույնիսկ 100 տարի անց, ՀՅԴ 118-ամյակի առթիվ Բեյրութում կազմակերպված հանդիսության ժամանակ (դեկտեմբեր, 2009 թ.) արտասանած խոսքում դաշնակցական գործիչ, Լիբանանի խորհրդարանի անդամ Հակոբ Բագրատունին ասում էր. «Եթե հարց տանք, թէ 118 տարիներու ընթացքին սխալներ չե՞ն գործուած, թէ տկարացումներ, ընկրկումներ, տատանումներ չե՞ն պատահած: Այո՛, անկասկած ու բնականաբար սխալած են անհատ դաշնակցականներ, բայց չէ սխալած Դաշնակցութիւնը» (Տե՛ս **«Ազդակ»** (Պէյրութ) ամսաթերթ, № 1, հունվար, 2009): Ցավոք, իրենց գործած սխալները երբեք չեն ընդունել նաև Հնչակը, Վերակազմյալ Հնչակը, Սահմանադրական ռամկավար-Ռամկավար ազատական կուսակցությունները: Իսկ սխալների ընդունումը, ինչպես հայտնի է, գրավական է քաղաքական կազմակերպությունների ներքին կյանքի առողջացման և հետագա առաջընթացի ճիշտ ուղիների ընտրության: Կուսակցությունների կողմից սխալների գիտակցումը և մանավանդ ընդունումը նաև բարձրացնում է զանգվածների վստահությունը նրանց նկատմամբ:

Երբ 1909 թ. օգոստոսին Ադանայի զինվորական դատարանը 9 անմեղ հայերի դատապարտել էր կախաղանի, Թուրքահայոց պատրիարք Եղիշե արք. Դուրյանը դիմել էր մեծ վեզիր Հուսեյն Հիլմի փաշային և ներքին գործերի նախարար Թալեաթ բեյին ու նրանցից խնդրել միջոցներ ձեռնարկել անմեղ հայերի մահապատիժը չկատարելու համար: Բայց խնդրանքը մերժվել էր այն պատճառաբանությամբ, թե «օրէնքը հաւասար է ամէնքի համար, որոնց թւում նաեւ կախաղանի դատապարտուած հայերի համար»[1], ուստի եթե հայերին ներում չնորհվի, ապա Թուրքերի մոտ մեծ հուզումներ կառաջանան: Այդ «բացատրությունից» հետո վարչապետը պատրիարքին սպառնալից տոնով ասել էր. «Որպէս հայոց գլխաւոր՝ գնացէ՛ք եւ հանգստացրէ՛ք ձեր հաւատացեալներին»: Պատրիարքը պատասխանել էր. «Ինձմէ վեր՝ ազգին ներկայացուցիչ վարչութիւնը կայ, վարչութենէն վեր՝ ընդհանուր ժողովը, անկէ անդին ալ՝ ժողովուրդը»[2]:

Բարձր Դռնից վերադառնալուց հետո Դուրյան պատրիարքը դիմում է ծայրահեղ միջոցի. գումարում է Ազգային ժողովի արտակարգ նիստ, ուր առաջարկում է քննության դնել ամբողջ կայսրության մեջ հայոց եկեղեցիները փակելու հարցը: Դա հուսահատ բողոք էր իշխանությունների դեմ: Անսպասելի հարցադրումը հանկարծակիի է բերում ժողովականներին, որոնք պահանջում են հարցը հանել քննարկումից:

1909 թ. օգոստոսի 25-ին Դուրյան սրբազանը թագրիրով[*] խնդրում է վարչապետ Հիլմի փաշային՝ իրեն ազատել պատրիարքական պաշտոնից[3]:

Պատրիարքն իր հրաժարականը պայմանավորել էր երկու պատճառով. 1) Ադանայում տեղի ունեցած հայերի կոտորածի

---

[1] **«Մշակ»,** № 18, 27 հունվարի 1910 թ.:

[2] Նույն տեղում:

[*] Հիշատակագիր, պաշտոնագիր:

[3] Տե՛ս **«Արարատ»,** № 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր, 1909, էջ 832:

մեղավորները ոչ միայն հին ռեժիմի ներկայացուցիչներն են, այլև նոր ռեժիմը՝ իր սահմանադրական զորքով, 2) կառավարությունը թաքցնում է իսկական ոճրագործներին և արյունոտ աղետի ամբողջ պատասխանատվությունը բարդում է հայերի վրա:

Հայկական հասարակության հիմնական մասը պաշտպանեց պատրիարքի քայլը, բայց ահա պահպանողական շերտերը դա հերթական կոպիտ սխալ համարեցին:

Հայ պահպանողական մամուլը չեշտում էր, որ հայոց Ազգային սահմանադրության համաձայն, պատրիարքը, հայոց փոխ-կաթողիկոս լինելով հանդերձ, իր հրաժարականը ներկայացնում է միայն իրեն ընտրող ազգին, տվյալ դեպքում՝ ազգը ներկայացնող Թուրքիայի Հայոց Ազգային ժողովին: Նրանք իրենց երբեք չպետք է համարեն թուրքական պաշտոնյա պատրիարքարանում: Պատրիարքին ընտրում է ազգը (Ազգային ժողովը), բայց ընտրությունը հաստատում կամ մերժում է օսմանյան կառավարությունը: Պատրիարքը միայն այդքանով է կախված կառավարությունից, բայց ամբողջովին հաշվետու է միայն ու միայն իրեն ընտրած մարմնին:

Թիֆլիսում լույս տեսնող պահպանողական «Լումայ»-ն գրում էր. «Այն, ինչ մեր պատրիարքները հէնց սկզբից մինչեւ Ս[ըբազան] Դուրեանը հետեւել են սխալ քաղաքականութեան. հայ ժողովուրդը սկզբից մինչեւ մեր օրերը սխալ է հասկացել իրեն ընտրած պատրիարքի յարաբերութեան սահմանը թիւրք կառավարութեան հետ մի կողմից եւ դէպի իրեն ընտրող ժողովուրդը՝ միւս կողմից: Եւ այդ սխալ հասկացողութեան պէտք է վերագրել պատրիարքների հրաժարական մատուցանելը սուլթանի կառավարութեան եւ հայ ժողովուրդի եւ մամուլի հաւանութիւնը այդօրինակ հրաժարականներին»[1]:

Բարձր Դուռը ցանկանում էր հրաժարականն ընդունել և պատրիարքի նոր ընտրություններ նշանակել, բայց հապաղում էր, որովհետև պատրիարքի հրաժարականի առթիվ Կ. Պոլսում առաջացել էին նոր բարդություններ՝ կապված Բեռլինի դաշնա-

---

[1] **«Լումայ»**, № 1, հունվար, 1910, էջ 69:

գրի 61-րդ հոդվածը ջնջելու կառավարության փորձերի հետ: Դրանից ելնելով՝ հրաժարականը մերժվում է և պատրիարքին հանձնարարվում է պաշտոնը չարունակել: Ի պատասխան, Դուրյան սրբազանը դատական նախարարություն է ուղարկում մի թագրիր, ուր ասված էր. «Պաշտօնիս չարունակման մասին ձեր այս հրաւէրին համար շնորհակալութիւն կայտնեմ, բայց ինչ օգուտ, որ ձեր պատասխանագիրն անբաւական նկատելով, դժուարութեան մատնուեցայ ...»[1]:

Ամիսներ չարունակ Դուրյան սրբազանը համառում էր իր հրաժարականի վրա՝ հայտարարելով, որ ինքը չի վերադառնա պաշտոնին, մինչև կառավարությունը բավարարություն չտա իր պահանջներին: Միաժամանակ, հրաժարականի նշված պատճառին նա ավելացնում էր նորերը: Պատրիարքը գտնում էր, որ ինքը դավաճանած կլինի իր ժողովրդի շահերին, եթե զիջումի գնա, երբ՝ 1) Ազգային սահմանադրության գոյությունը սպառնալիքի տակ է, 2) Հայաստանի զանազան անկյուններից պատրիարքարանն ամեն օր սրտակեղեք ու աղերսագին բազմաթիվ բողոքներ է ստանում, 3) երիտթուրքերի քարոզած արդարությունը և հավասարությունը դեռ գործադրվում են միայն մուսուլմանների համար, 4) հայերից խլված հողերը չեն վերադարձվում իրենց օրինավոր տերերին: Որպես հերթական պատճառաբանություն, Եղիշե Դուրյանը մատնացույց էր անում նաև թուրքական բանտերի անմարդկային վիճակը, որոնցում տառապում էին հազարավոր անմեղ հայեր*:

---

[1] Տե՛ս **«Արարատ»**, № 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր, 1909, էջ 832:

* Կարինի «Յառաջ» թերթը գրում էր. «Սահմանադրութիւնից յետոյ սպասելի էր, որ բարձրագոյն իշխանութիւնը հոգ կը տանէր բանտային սիստեմի եւ պայմանների բարեփոխութեան համար եւս: Բայց կարելի է ասել, որ բանտերի այժմեան դրութիւնը գրեթէ ոչնչով չի տարբերւում հնից» («**Յառաջ**», № 28, 13 ապրիլի 1910 թ.):

1909 թ. վերջավորությունը կառավարության մեջ գոյություն ունեցող հակասությունները նոր դրսևորում ունեցան, որի պատճառը, ինչպես նշվեց վերը, հայոց պատրիարք Եղիշե արք. Դուրյանի հրաժարականն էր:

Լայն ժողովրդականություն վայելող պատրիարքի հրաժարականը մեծ դժգոհություն էր առաջ բերել հայոց մեջ, տարաձայնությունների տեղիք տվել քրիստոնյաների և մուսուլմանների միջև:

Փորձելով այդ տարաձայնությունների ընդլայնման հնարավորության առաջն առնել, մեծ վեզիր Հուսեյն Հիլմի փաշայի հրամանով կազմվեց հատուկ հանձնաժողով՝ 9 հայերի և 12 մուսուլմանների մահվան դատավճիռների օրինականությունը քննելու համար: Հանձնաժողովը գտավ, որ հայերին մահապատիժ տալը ճիշտ չէ, և այդ պատճառով վերացրեց ռազմական դաշտային դատարանի վճիռը, իսկ մուսուլմանների նկատմամբ մահվան վճիռը թողնվեց ուժի մեջ: Ինչպես և սպասվում էր, կառավարության կազմած հատուկ հանձնաժողովի այս որոշումը բուռն դժգոհություն առաջ բերեց մուսուլմանների շրջանում:

«Միություն և առաջադիմություն» երիտթուրքական կոմիտեն իր խորհրդարանական խմբակցության միջոցով անբավարարվածություն հայտնեց հանձնաժողովի՝ «թուրքական շահերը ոտնահարել հետապնդող» որոշման դեմ և դրա մեղքը բարդեց մեծ վեզիր Հիլմի փաշայի վրա[1]: Ավելին, մի քանի երիտթուրք պատգամավորներ պատրաստվեցին այդ առթիվ խորհրդարանական հարցապնդում անել կառավարությանը, բայց «Միություն և առաջադիմություն» կոմիտեն հանդես եկավ հարցապնդման դեմ, երկյուղելով, որ դա ավելի կխորացնի երկպառակությունը քրիստոնյաների և մուսուլմանների միջև:

Գիտակցելով, որ պաշտոնում իր մնալը կարող է, այնուամենայնիվ, հարցապնդումի առիթ տալ, Հիլմի փաշան, հիվանդու-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 2, 3 հունվարի 1910 թ.:*

թյունը պատրվակ բռնելով, հրաժարական տվեց և նշանակվեց դեսպան Փարիզում[1]:

1909 թ. դեկտեմբերի 18-ին կազմվեց նոր կառավարություն՝ Հռոմում Թուրքիայի դեսպան Իբրահիմ Հակկը փաշայի գլխավորությամբ: Պաշտոններում մնացին ֆինանսների նախարար Ջավիդ և ներքին գործերի նախարար Թալեաթ բեյերը: Զինվորական նախարարի պաշտոնն առաջարկվեց գեներալիսիմուս Մահմուդ Շևքեթ փաշային: Արտաքին գործերի նախարարությունը Հակկը փաշան առայժմ թողնում էր իրեն:

Նոր դահլիճի անդամներին այցելություն տալու համար 1910 թ. հունվարի 2-ին Հայոց Ազգային ժողովի խառը ժողովը կազմում է պատվիրակություն հետևյալ կազմով՝ պատրիարքական փոխանորդ-տեղապահ Ղևոնդ ծայրագույն վարդապետ Դուրյան, ժողովի վարչության ատենապետ Մանուկ Ազարյան, գործավար Գամեր Շիրինյան և Արամ Հալաճյան էֆենդիներ:

Հունվարի 3-ին պատվիրակությունն այցելեց նորընտիր վարչապետ Իբրահիմ Հակկը փաշային՝ Փանկալթիի իր ապարանքում:

Սիրալիր ընդունելով հայ պատգամավորներին՝ վարչապետը մեղրածորան չողոմանքով նրանց զրույցի է առաջնորդում ընդունելությունների դահլիճ:

Խոսք առնելով՝ Ազարյան էֆենդին շնորհավորեց վարչապետին՝ ստանձնած պաշտոնի համար և հույս հայտնեց, որ հայ ազգին վերաբերող մի շարք հրատապ խնդիրներ շուտով լուծում կստանան:

Հակկը փաշան շնորհակալություն հայտնելով բարեմաղթությունների համար, ասաց հետևյալը. «Առկախ խնդիրներից ամենակարեւորը սուրբ պատրիարք հօր հրաժարականի խնդիրն է: Երբ պաշտօնիս գլուխ անցայ, տեղեկութիւններ պահանջեցի հրաժարականի պատճառների մասին՝ խնդրին շտապ լուծում տալու համար: Այդ տեղեկութիւնները ստանալով՝ եզրակացրի, որ նրա բողոքի մէջ մի արդար չեչտ կայ, եւ պէտքը զգացի բոլոր

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 2, 3 հունվարի 1910 թ.:

խնդիրներում գոհացում տալու պատրիարքին»[1]:

Ազարյան էֆենդին խնդրում է արագացնել պատրիարքի առաջադրած պահանջներին պատասխանելը, որը ձգձգվում է արդեն հինգ ամիս:

Հակկը փաշան պատասխանում է. «Կարող էք հանգիստ լինել, որովհետեւ իմ առաջին գործը պիտի լինի այդ խնդրի լուծումը»[2]:

Այնուհետև խոսակցությունը դառնում է Ադանայի կոտորածների շուրջ: Նկարագրելով դեպքը և այնտեղ տիրող թշվառությունը՝ Ազարյանն ասում է, որ այդ ջարդը խոր ազդեցություն է թողել հայերի վրա և հեշտությամբ չի կարելի նրանց սիրտն առնել:

Հակկը փաշան պատասխանում է. «Ադանայի ջարդը սոսկալի բան էր: Մելեռանդութեան պատճառով տեղի ունեցած այդ աղէտը ո՛չ միայն հայութեան, այլեւ ամբողջ օսմանցիների թիկունքին հասցրած հարուած է: Կարող էք վստահ լինել, որ այլեւս ջարդեր չպիտի պատահեն, որովհետեւ նման չարաչուք աղէտների կրկնութիւնը երկրի քայքայման պատճառ պիտի լինի»[3]:

Այնուհետև խոսք է առնում պատրիարքական փոխանորդ Ղևոնդ հայր սուրբը և վարչապետին ներկայացնում Մուշից ստացած մի հեռագիր, ուր ասված էր, որ Տալվորիկում մի քանի հայ սովից մեռել է: Կարդալով հեռագիրը՝ Հակկը փաշան ասում է. «Արդէն հայ ազգի ընդհանուր վիճակի մասին տեղեկութիւններ պիտի պահանջեմ այս երեկոյ տեղի ունենալիք նախարարական խորհրդի նիստում եւ պիտի աշխատեմ գոհացում տալ Թուրքիոյ զարգացած եւ հայրենասէր ազգերից մէկին»[4]:

Կես ժամ տևած սիրալիր տեսակցությունից հետո պատգամավորությունը մեկնում է զինվորական պաշտոնատուն՝ այցելելու համար նորանշանակ նախարար Մահմուդ Շևքեթ փաշային:

---

[1] ***«Մշակ»,*** *№ 18, 27 հունվարի 1910 թ.:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Նույն տեղում:*

Մեծ սիրալիրությամբ ընդունելով պատգամավորությանը՝ Շևքեթն ասում է. «Համեցէ՛ք, համեցէ՛ք: Հայերն իմ ամենասիրելի բարեկամներն են, եւ ես էլ՝ նրանց անկեղծ բարեկամը»: Պատգամավորները շնորհավորում են նրան նոր պաշտոնի համար և ունկնդրում նրա նորանոր ջերմ խոսքերը: Հանդիպման վերջում Մահմուդ Շևքեթը հետևյալ խոսքերով հրաժեշտ է տալիս նրանց. «Ամեն անգամ, երբ հարկ լինի լուծել իմ իրաւասութեան սահմանի մէջ մտնող որեւէ խնդիր, դիմեցէ՛ք, եւ կվստահեցնեմ ձեզ, որ այդ լուծումը կկատարուի անմիջապէս»[1]:

Շնորհակալություն հայտնելով՝ պատվիրակությունը մեկնում է Բարձր Դուռ և այնտեղ այցելում ներքին գործոց նախարար Թալեաթ բեյին՝ նրան շնորհավորելու պաշտոնում վերահաստատվելու համար:

Խոսակցության առանցքը չարունակ պատրիարքի հրաժարման խնդիրն էր: Թալեաթ բեյը շողոմ խոսքերով ասում է, թե իրենց ամենամեծ փափագն է Դուրյան սրբազանին վերստին տեսնել իր աթոռի վրա և գոհացում տալ նրա պահանջներին: «Դուրեան սրբազանը, երբ իր աթոռը վերադառնայ,- չարունակում է նա,- ամէն ուրբաթ նրան այցելելու փափագ պիտի ունենամ, որովհետեւ նրան շատ ենք սիրում: Իր հրաժարականը փոխանակ իրեն մեզնից հեռացնելու, աւելի առինքնող եղաւ»[2]:

Երբ պատվիրակները ոտքի են ելնում հրաժեշտ տալու Թալեաթին, նա, ամուր բռնելով պատրիարքական փոխանորդ վարդապետի ձեռքը, ասում է. «Պիտի խնդրեմ Ձեր սրբազնութիւնից, որպէսզի ժողովրդին զգացնել չտաք սուրբ պատրիարքի բացակայութիւնը. թող խոհեմաբար չարժուեն եւ չենթարկուեն սխալ թելադրութիւնների: Մխիթարեցէ՛ք եւ խրախուսեցէ՛ք նրանց եւ արէ՛ք ձեր ձեռքից եկածը»[3]:

«Մշակը» գրում էր, որ միամիտ հայերը հերթական անգամ սպասեցին, բայց խոստումները չկատարվեցին[4]:

---

[1] **«Մշակ»,** № 18, 27 հունվարի 1910 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, № 190, 30 օգոստոսի 1909 թ.:

Ընդհանուր կարծիքն այն էր, որ Հակկը փաշայի վարչապետ դառնալով՝ սկիզբ է դրվում երկրում իսկական քաղաքական ճգնաժամի, որը ամենադժվարինը և ամենաերկարատևն է լինելու մինչև այժմ եղածներից:

Թուրքական երիտասարդ սահմանադրությունն իր տեղն արդեն զիջել էր մեծամասնություն կազմող երիտթուրքական բռնակալությանը և խորհրդարանական խմբերի պարագլուխների ինքնակալությանը: Դրան գումարվում էր Հակկը փաշայի բնավորության գծերից ամենացայտունը. նա այն քաղաքական գործիչներից չէր, որ որևէ մեկի կարգադրությանը հեշտությամբ ենթարկվեր:

Ուստի պետք էր սպասել համառ ու երկարատև պայքարի՝ մի կողմից սուլթանի, մեծ վեզիրի և զորքի գլխավոր հրամանատարի, մյուս կողմից՝ քաղաքական-վարչական լիակատար տիրապետության ձգտող երիտթուրքական խորհրդարանական մեծամասնության միջև: Այդ պայքարում, անշուշտ, կսպառվեր մեծ վեզիրի եռանդի զգալի մասը: Դրան գումարվելու էին քաղաքական դրության հետագա բարդացումը Բալկանյան թերակղզում, մասնավորապես Մակեդոնական հարցի հետագա բորբոքումը, հուզումները Եմենում և Միջագետքում, անիշխանությունն Անատոլիայում, Հայկական և Հունական հարցերի սրումը: Այդ ամեն պահանջներին մեծ վեզիրը պետք է գոհացում տար, բայց ակնհայտ էր, որ դրանց լուծման գլխավոր պատասխանատվության ստանձնումը մեկ անձի ուժերից վեր է:

ԵՂԻՇԵ ԴՈՒՐՅԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԱԹՈՌ

Քանի որ պատրիարքը փակված էր տանը, Հայոց Ազգային ժողովի Քաղաքական ժողովի անդամները ցերեկները ստիպված քայլամոլոր դեզերում էին Բարձր Դռան շուրջը, խնդրում ընդառաջ գնալ պատրիարքի գոնե մեկ պահանջին, որպեսզի նա վերադառնա իր աթոռին, իսկ գիշերները սրա-նրա տանը շարունակում էին իրենց նիստերը:

1910 թ. հունվարի 15-ին Քաղաքական ժողովի խորհուրդը

Նիստի հավաքվեց պատրիարքի տանը, ուր կրկին քննության առնվեցին կառավարությանը նրա ներկայացրած հարցերը: Նիստում ձևակերպվեցին հետևյալ կետերը՝ ներկայացնելու համար նորանշանակ վարչապետ Հակկը փաշային. Ա) Կառավարության միջոցներով Ադանայում բացել աշխատանոցներ, որպեսզի այրիները սեփական աշխատանքով կարողանան հոգալ իրենց ապրուստը, Բ) Հայոց պատրիարքարանի տրամադրության տակ դնել որոշ գումար՝ կիլիկեցի որբերի վիճակը քիչ թե շատ թեթևացնելու համար, Գ) Պետական ծախքով վերաշինել Ադանայի և Հալեպի վիլայեթներում թուրքերի ու քրդերի ձեռքով ավերված հայոց եկեղեցիներն ու դպրոցները, Դ) Կիլիկիայի աղետի ժամանակ սպանվածների սեփականությունը փոխանցել նրանց այրիներին, իսկ եթե սրանք էլ զոհ են գնացել՝ մերձավոր ազգականներին, Ե) Վերադարձնել հայերից խլված հողերը:

Ստանալով այս պահանջները՝ վարչապետ Հակկը փաշան նախորդ վարչապետ Հիլմի փաշայի օրինակով խոստացավ գոհացում տալ հայոց Քաղաքական ժողովի պատգամավորներին՝ «ի նպաստ արդարութեան ու գթութեան»:

Բայց ինչպես մյուս բոլոր խոստումները, այս խոստումը ևս մնաց օդից կախված: Պոլսի հայկական թերթերը գրում էին, թե «սահմանադրութիւնն ալ մեզի համար չէ», «Մենք ռայա ենք, եւ զուր ու փուչ են «համերաշխութիւն» եւ «հաւասարութիւն» բառերը»:

Այդ անմխիթարական պայմաններում անգամ Գում-Գափուի պատրիարքական վարչությունը մնում էր իր պահանջների վրա և շարունակում էր համառորեն բողոքել:

Պատրիարքի հրաժարականը ցույց էր տվել, որ Թուրքիայի հայ ազգաբնակչությունը չի ցանկանում որևէ կերպ հաշտվել Ադանայի անլուր սարսափների հետ, որ նա խորապես խոցված է օսմանյան կառավարության՝ ոճրագործների նկատմամբ զանցառու վերաբերմունքից և զոհերի հանդեպ անտարբերությունից: Հայ ազգաբնակչությունն ամենևին համաձայն չէր օսմանյան վարիչների այն պնդումներին, թե Հայոց ազգային ժողովը, իր պատրիարքով հանդերձ, բողոքի իրավունք չունի, ինչպես նաև որևէ դեր չունի կատարելու Թուրքիայում: Բայց ազգա-

բնակչությունը, ի դեմս Ազգային ժողովի, չարունակում էր տեսնել իր ներկայացուցչությունը այն բոլոր խնդիրներում ու գործերում, որոնք վերաբերում էին հայ ազգի ուրույն շահերին:

Հրաժարականը, իր ժամանակին կատարելով որոշ քաղաքական ու հասարակական դեր, չէր կարող անվերջ չարունակվել՝ առանց վնասելու ընթացիկ հերթական գործերին և նորանոր ծագող խնդիրների լուծմանը: Իր բարոյական դերը կատարելուց հետո, դա պետք է տեղի տար ազգային կյանքի մյուս կարիքների ու պահանջների առջև: Եվ Ազգային ժողովը զբաղվեց պատրիարքի վերադարձի հարցով:

Օսմանյան իշխանական մարմիններն զգում էին ստեղծված դրության անհեթեթությունը և չգիտեին ինչ քայլեր անել: Նրանք ստիպված էին մի կարճ ժամանակով հրաժարվել պատրիարքարանի իրավասության մասին իրենց առարկություններից, ինչ-որ չափով խիստ վերաբերմունք ցույց տվին Ադանայի մի քանի ոճրագործների նկատմամբ, հրամաններ արձակեցին, թեև ձևականորեն և անարդյունք, Օսմանյան պետության մյուս հայաբնակ տեղերում հայերի պաշտպանության մասին, քայլեր արեցին բանակցելու պատրիարքի հետ՝ նրան դարձյալ ընդունելով իբրև գործի ու պաշտոնի տեր:

Վերջապես, անսալով Հայոց Ազգային ժողովի խնդրանքին, Եղիշե Դուրյանը, հրաժարականից հինգ ամիս հետո, կառավարությանը տված իր հրաժարականը հետ վերցրեց և 1910 թ. հունվարի 29-ին վերադարձավ Գում-Գափու՝ պատրիարքական աթոռին[1]:

Ըստ կարգի, իր պաշտոնին վերադառնալուց հետո պատրիարքը պարտավոր էր առաջին այցելությունը տալ մեծ վեզիրին, միաժամանակ նրան ներկայացնել թագրիր, ուր նշված պիտի լիներ, թե ինքը ինչ պատճառների հիման վրա է կայացրել իր բողոք-հրաժարականը հետ առնելը:

1910 թ. հունվարի 30-ին պատրիարքը ներկայացավ մեծ վեզիր Հակկը փաշային, ապա և կարևոր նախարարների, ու ամեն

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 30, 10 փետրվարի 1910 թ.:

տեղ սիրալիր ընդունելություն գտավ: Դուրյան սրբազանը նախապես համոզված էր, որ կառավարությունում այդ տեսակցությունը, ինչպես նախորդ բոլոր տեսակցությունները, տեղի է ունենալու «սրտագին» ողջույններով ու քաղցր խոստումներով: Հանդիպման առաջին վայրկյաններին Իբրահիմ Հակկը փաշայի ու պատրիարքի միջև տեղի ունեցավ հետևյալ խոսակցությունը.

Հակկը փաշա. – «Թուրք եւ հայ ցեղերու միութիւնն անհրաժեշտ է. աշխատելու ենք միասնաբար անխզելի պահել այն»:

Դուրյան. – «Ես ազգիս եւ կառավարութեան փափագին եւ Ձեր խոստումներուն համեմատ կը վերադառնամ պաշտօնիս, այն յոյսով, որ Ադանայի աղէտին եւ ազգիս ուրիշ կարգ մը ցաւերուն դարմանը շուտով կը տեսնեմ»:

Հակկը փաշա. – «Խոստումներս անթերի պիտի կատարեմ. եթէ անկարելի լինէին, խօսք էլ չէի տայ»[1]:

Զրույցից հետո Դուրյան սրբազանը վարչապետին ներկայացնում է իր պատրաստած թագրիրը, ուր շեշտված էր, թե ինքը, հնազանդվելով իր ազգի և Ընդհանուր ժողովի հրավերին, խրախուսված այն ջերմ խոստումներով, որ Հակկը փաշան վերջերս արել է Հայոց Ազգային ժողովի Քաղաքական ժողովի ատենապետ Ազարյան էֆենդուն, վերադառնում է պաշտոնին, բայց ոչ թե հետ վերցնելով իր հրաժարականը, այլ անձամբ հետևելու կառավարության խոստումների գործադրությանը: Նաև նշվում էր, որ հրաժարականի ջնջումը, ուրեմն, տեղի կունենա անպայման այն ժամանակ, երբ օսմանյան կառավարությունը հայերի պահանջներին գոհացում կտա արդարությամբ. հակառակ դեպքում՝ ինքը կհրաժարի վերջնականապես:

Պատրիարքին ամենաչքեղ կերպով ընդունելուց հետո, նրան հրաժեշտ տալիս՝ մեծ վեզիրն ասում է, թե ինքը չափազանց գոհ է հանդիպումից: Կրկին խոստանալով, որ հայերին գոհացում է տալու, Հակկը փաշան ավելացնում է, թե իր խոսքին հետևելու

---

[1] *Դուրյան պատրիարքի՝ մեծ վեզիր Հակկը փաշայի այցելության մասին թղթակցությունները տե՛ս* ***«Արեւելք»****, № 7244, 31 հունվարի 1910 թ. և* ***«Բիւզանդիոն»****, № 4047, 1 (14) փետրվարի 1910 թ.:*

է գործը, քանի որ կյանքում երբեք չի խոստացել մի բան, որի գործադրումը հնարավոր չի տեսել:

Նույն օրը պատրիարքը հանդիպում է արտաքին գործոց նախարար Ռիֆաթ փաշային, որը հավաստիացնում է, թե ինքը բացառիկ համակրանք ունի հայ ժողովրդի նկատմամբ և հույս ունի, թե Ադանայի աղետը մոռացության պիտի տրվի բարի գործերով: Պատրիարքը պատասխանում է. «Եղածը մոռնալէ աւելի անհրաժեշտ է եղածը մոռցնել՝ դարմանելու փութացումով»:

Եղիշե սրբազանին է՛լ ավելի ջերմորեն ընդունեց ներքին գործոց նախարար Թալեաթ բեյը, որը չզլացավ ասելու, թե ինքը ամենաջերմ զգացմունքներ է տածում հայ ժողովրդի հանդեպ:

Այնուհետև Եղիշե արք. Դուրյանն այցելություններ է տալիս ռազմական, ֆինանսների և արդարադատության նախարարներին:

Պատրիարքը Գում-Գափու է վերադառնում գոհ, բայց՝ երկյուղը սրտում:

Ի պատասխան Թուրք նախարարներին Դուրյան պատրիարքի այցելության, փետրվարի 5-ին Գում-Գափուի հայոց պատրիարքարան առանձին-առանձին փոխայցելություն տվեցին գեներալիսիմուս Մահմուդ Շևքեթ փաշան, ֆինանսների, արդարադատության և ներքին գործերի նախարարները:

Հատկապես երկար տևեց պատրիարքի հետ ներքին գործոց նախարար Թալեաթ բեյի զրույցը, որից հետո հրաժեշտ տալով՝ նա խոստացավ հաճախակի այցելել հայոց պատրիարքին՝ հայերի ազգային գործերի մասին խորհրդակցելու համար[1]:

Թուրք ղեկավարներն անուշ ու լպրծուն խոսքերով փորձում էին թմրեցնել հայությանը:

Ապագան ահարկու էր: Հայերից բացի, մյուս բոլոր ցեղերն ու ազգությունները զինված էին:

---

[1] *Տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 4052, 6 (19) փետրվարի 1910 թ.:*

ԶՐԱՂԱՆԻ ՊԱԼԱՏԸ՝ ԿՐԱԿԻ ՃԱՐԱԿ

Օսմանյան խորհրդարանը նիստեր էր գումարում Կ. Պոլսի մարմարակերտ Զրաղանի պալատում, որը հայտնի էր նաև Զրաղանի սարայ անունով և մայրաքաղաքի ամենագեղեցիկ շենքն էր համարվում[1]: Պալատը Մեհմեդ V Ռեշադը պատգամավորական ժողովին էր հանձնել նրա նախագահ, «Միություն և առաջադիմություն» կոմիտեի պարագլուխ Ահմեդ Ռիզա բեյի պահանջով, այն բանից հետո, երբ նոր սուլթանը խորհրդարանում երդում էր տվել 1909 թ. մայիսի սկզբին[2]:*

---

* *Զրաղանի հոյակերտ պալատն ամբողջությամբ հայ ձեռքի ու մտքի սքանչելի արգասիք էր, թուրքահայ ճարտարապետության վերջին կոթողը: Դա նշանավոր Պայլան գերդաստանի ճարտարապետների ստեղծագործությունն էր: Կառույցը սուլթան Արդուլ Ազիզի հրամանով Ռենեսանսի ոճով նախագծել էր պալատական գլխավոր ճարտարապետ Նիկողայոս Պայլանը: Շինարարությունն սկսվել էր 1864 թ.՝ նույն տեղում եղած նույնանուն փայտաշեն պալատը հիմնովին քանդելուց հետո: Շինարարությունը իրականացվել էր Սարգիս և Հակոբ Պայլան եղբայրների գլխավորությամբ: Կառույցի գլխավոր արհեստավորը եղել էր մի ուրիշ հայ՝ Պետրոս Նեմցեն, իսկ փայտի հետ կապված գործերը (դռներ, լուսամուտներ և այլն) վստահվել էին Պոլսում ամենահայտնի Բեշիկթաշի «Որդիք Քեմհաճեան» արհեստանոցին: Շինարարությունն ավարտվել էր 1870-71 թթ., սուլթան Արդուլ Ազիզի օրոք՝ նրա գանձարանին արժենալով 5 մլն ոսկի: Արդուլ Համիդը, գալով իշխանության, ատելությամբ լցված հայության հանդեպ, հայ ճարտարապետներին ու արհեստավորներին հեռացրեց արքունական բոլոր շինություններից և նրանց տեղը լրացրեց հույներով ու թուրքերով: 1876-1904 թթ., չուրջ 28 տարի, պալատը որպես ապրելատեղի էր «ծառայել» Արդուլ Համիդի երեց եղբայր, կարճ ժամանակ սուլթանական գահի վրա գտնված Մուրադին: Երբ 1909 թ. մայիսին նոր սուլթան Մեհմեդ V Ռեշադը գահ բարձրացավ, հիշեց, որ Զրաղանի պալատի բոլոր ճարտարապետներն ու կարևոր արհեստավորները հայեր են եղել, ուստի կարգադրեց նրանց անունները նույնպես թվարկել երբ խոսք էր լինում օսմանյան ճարտարապետների մասին: 1910 թ. հրդեհից հետո պալատը նույնությամբ վերականգնվել է ավելի ուշ, 1950-ական թթ.:*

[1] *Տե՛ս* ***«Արեւելք»,*** *№ 7092, 8 մայիսի 1909 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Մշակ»,*** *№ 13, 21 հունվարի 1910 թ.,* ***«Հորիզոն»,*** *№ 5, 10 հունվարի 1910 թ.:*

1910 թ. հունվարի 6-ին պալատում մեծ հրդեհ տեղի ունեցավ և հոյակապ շինությունը ավերակույտի վերածվեց: Կրակի մատնված թանկագին զարդերի հետ բոցերի մեջ ոչնչացան նաև Հովհաննես Այվազովսկու 22 մեծարժեք նկարները: Կորուստը հաշվվում էր 7 միլիոն օսմանյան ոսկի[1]: Մայրաքաղաքի բոլոր թերթերը՝ «Մեծ աղետը», «Անդառնալի կորուստ», «Պոլսի մարգարիտը քարակույտերի մեջ» և այլ խորագրերով երկար սյունակներ էին լրացրել հրդեհված պալատի նկարագրություններով:

Պոլսահայերը մտատանջ էին՝ երկյուղելով, թե սադրիչները, հանրությանը հիշեցնելով նախորդ տարիների հայ հեղափոխականների ահաբեկչական գործողությունները, կարող են հրդեհի մեղքը ձգել հայերի վրա: Բայց այս անգամ նրանց բախտը բերեց. նախ՝ պալատում ծառայողների թվում որևէ հայ (և ընդհանրապես որևէ այլազգի) չկար, բոլորը թուրք էին, այնուհետև՝ մասնագետներից կազմված հանձնախումբը, մանրակրկիտ ստուգումների արդյունքում, բարեբախտաբար, միակարծիք հայտարարել էր, որ պատահած աղետի մեջ դիտավորություն չկա, որ հրդեհի ամենահավանական պատճառը եղել է նիստերի դահլիճում տեղադրված օդաջեռուցիչի էլեկտրալարերի անսարքությունը:

Հայերն ազատ չունչ քաշեցին:

Ստուգող հանձնախմբից միանգամայն տարբեր կարծիք էին հայտնում արդուլհամիդականները, հատկապես սոֆթայական դասը, որոնք աղետը համարում էին նախախնամության պատիժ, իսկ սոֆթաներից շատերը ասում էին, թե հրդեհը կատարյալ կլիներ, եթե կրակի բոցերում մոխրացած լինեին խորհրդարանի բոլոր անդամները:

Մամուլը Ահմեդ Ռիզային ծանրապես մեղադրում էր այն բանի համար, որ նա 60.000 ոսկի է ծախսել պալատի կահավորման վրա[2], բայց գումարներ է խնայել այնտեղ հակահրդե-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 13, 21 հունվարի 1910 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

հային անվտանգության տարրական միջոցներ ստեղծելու համար: Թերթերը պատգամավորական ժողովի նախագահին ամբաստանում էին նաև, որ կարգադրել է Այվազովսկու նկարները Զրաղան փոխադրել Ելդրզից:

Զրաղանի հրդեհից հետո պատգամավորական ժողովն իր աշխատանքները փոխադրեց Կ. Պոլսի արվարձան Կուրու-Զեշմե՝ սուլթան Աբդուլ Ազիզի դստեր պալատը՝ վերջինիս հրավերով:

Զրաղանի պալատի հրդեհի մեղավոր ճանաչվեց 150 հոգի[1]:

Պալատի հրդեհն առիթ եղավ, որ մայրաքաղաքի բոլոր թերթերը բազմիցս հիշատակեն Պոլսում հոյակապ շենքեր կառուցած Պալյան Կարապետին և նրա մեծանուն երեք որդիներին՝ Նիկողայոս, Սարգիս և Հակոբ Պալյաններին, ինչպես նաև Բոսֆորի առափնյա շատ նշանավոր շինությունների հայ ուրիշ ճարտարապետների անուններն ու գործերը:

«ԲԱՅ ՈՒ ԳՈՅԻ» ԽՆԴԻՐԸ

1909 թ. վերջերից մի նոր ճգնաժամ ծավալվեց Թուրքահայոց կյանքում, որի հեղինակները դաշնակցականներն էին:

Առաջնորդվելով տվյալ ժամանակաշրջանում կուսակցության ղեկավարության մարտավարությամբ, ՀՅԴ Կ. Պոլսի կենտրոնական կոմիտեն («Պատասխանատու մարմինը») հանդես եկավ Հայ եկեղեցու դարավոր իրավունքների մի մասը, որը վերաբերվում էր քաղաքականությանը, նրանից օտարելու նախաձեռնությամբ:

Հնչակյաններն ու վերակազմյալ հնչակյանները, որոնք բոլոր հիմնական հարցերում հանդես էին գալիս Դաշնակցության դեմ, այս դեպքում նրա հետ համերաշխ էին և նույնպես հանդես եկան Հայ եկեղեցուն քաղաքական իրավունքներից զրկելու պահանջով: Բայց նախաձեռնողը և խոսքը գործի վերածելու հիմ-

---

[1] Տե՛ս **«Ախուրեան»**, № 4, 17 հունվարի 1910 թ.:

նական հեղինակները դաշնակցականներն էին:

Հայկական հեղափոխական կուսակցությունների, առաջին հերթին Դաշնակցության, ներկայացուցիչներն ասում էին, որ առաջավոր երկրներում եկեղեցին անջատված է պետությունից, նրան թողնված են միայն եկեղեցական-դավանական խնդիրները: Նրանք հիշեցնում էին, որ այդպես է նաև "Положение"-ի օրենքով, որի համաձայն՝ 1836 թ. սկսած Հայ եկեղեցուն թողնված են միայն հոգևոր հարցերը, իսկ քաղաքական պարտականությունները նրանից բաժանված են:

Ելնելով այդ ընդհանուր հարցադրումից, Դաշնակցության կենտրոնական մարմինները գտնում էին, որ Հայ եկեղեցին նույնպես պետք է բարենորոգվի, որպեսզի համապատասխանի 20-րդ դարի զարգացումների միտումներին ու տրամաբանությանը, այսինքն՝ հրաժարվի ազգի քաղաքական խնդիրներով զբաղվելուց՝ դրանք թողնելով կուսակցություններին[1]:

Դաշնակցության ղեկավարությունը պահանջում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքությունից վերցնել թուրքական իշխանությունների հետ հարաբերվելու նրա իրավունքը և դա հանձնել «թուրքահայության շահերն արտահայտող» ամենաուժեղ հայկական կուսակցությանը, որը վճռականապես կհրաժարվի միջնադարյան մտածողությունից սնվող կղերական քաղաքականությունից և եվրոպական չափանիշներին համապատասխանող քաղաքականություն կորդեգրի:

Հակառակ տեսակետ ունեցողները կտրականապես մերժում էին դաշնակցականների բերած փաստարկումները և իրենցն առաջադրում: Նրանք հիշեցնում էին, որ նույնիսկ իսլամ տիրապետողները դարեր շարունակ Հայ եկեղեցուն են թողել նրա քաղաքական իրավունքները, ավելին՝ դրանք զանազան հրովարտակներով ամրապնդել են: Օրինակ՝ արաբ խալիֆ Օմարը (Է դար) և սելջուկ Մելիք-Շահը (ԺԱ դար) հայոց հոգևոր իշխանություններին ճանաչում էին որպես միջնորդ հայ ազգի ու իրենց միջև: Թուրք սուլթան Մեհմեդ II Ֆաթիհը 1461 թ. հաս-

---

[1] *Տե՛ս* ***Համբարձում Երամեան,*** *Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, էջ 163:*

տատելով Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը, հատուկ ֆերմանով նրան ճանաչել էր իբրև կայսրության հայոց կրոնական ու քաղաքական ներկայացուցիչ: Հաջորդ թուրք սուլթանները նույնպես իրենց ֆերմաններով և ուրիշ փաստաթղթերով վերահաստատել էին Հայ եկեղեցու այդ իրավունքը: Դրա ցայտուն վկայությունն է սուլթան Աբդուլ Մեջիդի և սուլթան Աբդուլ Ազիզի հաստատած «Ազգային Սահմանադրութիւն Հայոցը» (համապատասխանաբար՝ 1860 և 1863 թթ.), որը սահմանում էր հայոց կրոնական, ընտանեկան, ժառանգական, կրթական և այլ իրավունքները: Դրանց պահպանման ու գործադրության համար պատրիարքը և գավառներում նրա ներկայացուցիչները (թեմական առաջնորդները) իբրև միջնորդ էին ճանաչվում տերության և հայ ազգի միջև: Նույնիսկ Աբդուլ Համիդը ոտնձգություն չէր կատարել Հայ եկեղեցու այդ իրավունքների ու ազգային առանձնաշնորհումների հանդեպ:

Դաշնակցականները գտնում էին, որ եկեղեցիները կառուցել են հասարակ հայ մարդիկ, իսկ հոգևորականները դարեր շարունակ միայն վայելել են ուրիշների թափած քրտինքի արդյունքը: Դրանից հետևում էր, որ հոգևորականությունը բարոյական իրավունք չունի տեր լինելու եկեղեցիներին, որ դրանք հանրությանն են պատկանում: «Միջնադարեան կարգերը Հայոց եկեղեցիին մէջ պէտք է վերանան, յառաջդիմութեան անիւը ետ չի դառնար», «Մենք կ'աշխարհականացնենք եկեղեցին եւ դուրս կը շպրտենք սեւ վեղարաւորները»[1],- ասում էին նրանք: Այդ հակաեկեղեցական տրամադրությունները խտացած արտահայտված էին, օրինակ, Տիգրանակերտի հայ երիտասարդաց դաշնակցական միության ընդունած որոշման մեջ. «Կը պահանջենք կրօնական իշխանութեան ջնջում, կը պահանջենք աշխարհական պատրիարք»[2]:

---

[1] **«Դաշինք»**, № 204, 3 (16) ապրիլի 1910 թ.:

[2] **Մանուկ Գ. Ճիզմէճեան,** Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրեզնօ, 1930, էջ 176, նաև՝ **«Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1962»,** հատ. Ա., էջ 349:

Համբարձում Երամյանը գրում էր, որ «կանխահաս ու անտեղի էր Հայոց եկեղեցին աշխարհականացնելու պահանջը՝ այն ալ նենգամիտ Իթթիհատի օրով՝ երբ գետինը մեր ոտքերուն տակ աւելի խախուտ կը դառնար եւ օսմանեան սահմանադրութիւնը չատ հեռի էր ազատական հայեացքներէ դէպի հպատակ քրիստոնեայ փոքրամասնութիւնները»[1]:

Այդ «տեսական» պատճառաբանություններն առաջ բերեցին բուռն վեճեր, որոնք իրենց խորացած արտահայտությունը գտան օսմանյան խորհրդարանի դաշնակցական պատգամավոր Վռամյանի և Հովհաննես արք. Արշարունու միջև բացված լրագրական բանակռվում:

Երիտթուրքերը լավ գիտեին, որ թուրքահայ հասարակության մեջ ամենաազդային ավանդական կառույցը մնացել է Հայ եկեղեցին՝ իր հայապահպանության միջոցներով, մասնավորապես դպրոցական-կրթական հնարավորություններով, ուստի առաջին հերթին հենց նրան պետք էր թուլացնել, պատրիարքին զրկել ազգային ներկայացուցչի հանգամանքից, այսինքն՝ եկեղեցին զրկել գործելու հնարավորությունից:

Ժամանակի հակադաշնակցական մամուլն ահազանգում էր, որ Հայ եկեղեցու ազգային դեմքը վերացնելու պատվերը գալիս է Իթթիհադից: Այսպիսի եզրահանգման համար հիմք էր հանդիսացել այն, որ թուրքական պետության կողմից դարեր շարունակ ճանաչված հայոց պատրիարքների ոչ միայն ազգային-մշակութային, այլև քաղաքական իրավունքներն Իթթիհադի կառավարությունը ի չիք էր դարձնում Հայ եկեղեցու դեմ սկսած պայքարով: Եվ ահա այդ նույն ժամանակ Հայ եկեղեցու դեմ կռվի ճակատ էր բացում նաև Դաշնակցությունը: Իթթիհադի՝ Դաշնակցությանն արած թելադրանքի փաստարկն այնքան հիմնավոր էր, որ անգամ վերջինիս մամուլը չէր փորձում հակառակը պնդել:

Հատկապես մեծ վտանգ էին ներկայացնում հայկական

---

[1] ***Համբարձում Երամեան,*** *Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, էջ 164:*

հարցին նվիրված և մեկը մյուսին հաջորդող քաղաքական ժողովները եկեղեցիներում:

Այդ թեմայով դաշնակցական ճառախոսների ելույթները հնչակյանների համեմատ չափավոր էին, քանի որ ՀՅԴ-ն պաշտոնապես հրաժարվել էր Հայկական հարցը վերարծարծելուց: Վերակազմյալ հնչակյանները թեև դաշնակցականների պես հայտարարել էին իրենց հավատարմությունը երիտթուրքերի նկատմամբ, հանդես էին գալիս միասնական օսմանյան հայրենիքի ջատագովությամբ և նույնպես հրաժարվել էին 61-րդ հոդվածից, բայց եկեղեցիներից ներս խոսում էին հնարավորինս ազատ՝ արտահայտելով իրենց մտքերը Թուրքահայաստանի ինքնավարության և այլնի մասին: Բացառություն էին հնչակյանները, որոնք չէին թաքցնում իրենց հակակրանքը կառավարության նկատմամբ և եկեղեցիներում, խուռներամ բազմության առջև, առաջվա պես խստագույնս քննադատում էին երիտթուրքերին, բացահայտում նրանց բռնակալական, հակաժողովրդական էությունը:

Ինչ վերաբերում է սահմանադրական ռամկավարներին, նրանք վճռականապես դատապարտում էին եկեղեցիների չուրջ ստեղծված արհեստական աղմուկը: Նրանց նախաձեռնությամբ էր, որ առաջ բերվեց «հակա-միտինգ» շարժումը[1]:

Կարծիքների բացարձակ ներհակություն էր ռամկավար-դաշնակցական փոխհարաբերություններում ընդհանրապես, իսկ «բաց ու գոցի» դեպքում՝ մասնավորապես: Հրատապ դարձած հարցի վերաբերյալ մի շարք հոդվածներով հանդես եկավ Վահան Թեքեյանը՝ Դաշնակցությանը կոչ անելով որքան հնարավոր է չուտ ձեռք քաշել «այդ զբաղմունքից»[2]: Սուրեն Պարթևյանը (Սիսակ Պարտիզպանյան), որ այդ ժամանակ խմբագրում էր Իզմիրի «Դաշինք» թերթը, գրում էր. «Մենք չենք ուզեր մեր եկեղեցիները թատր դարձած տեսնել մեր քաղաքական կուսակցութեանց խօսքի ու բռունցքի գործունէութեան»[3]:

---

[1] Տե՛ս **«Դաշինք»**, № 294, 24 հունիսի (7 հուլիսի) 1910 թ.:

[2] Տե՛ս **«Աշխատանք»**, № 10, 20 մարտի 1911 թ.:

[3] Տե՛ս **«Դաշինք»**, № 204, 3 (16) ապրիլի 1910 թ.:

Կ. Պոլսի հայկական մամուլը տագնապ էր հնչեցնում և կուսակցություններից պահանջում հրաժարվել եկեղեցիներում Հայկական հարցի քննարկումից, որպեսզի առիթներ չմատուցվեն երիտթուրքական կառավարությանը՝ լայնածավալ հալածանքներ սկսելու եկեղեցականների դեմ: Բայց լսող չկար: Կուսակցությունները կեղծ լուրեր էին տարածում, թե Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրլյանը նույնիսկ ողջունում է հանրահավաքների գումարումը եկեղեցիներում և հարկ չկա ունկնդիր լինելու դրանք արգելելու պահանջով հանդես եկողներին:

«Գիտական հիմնավորումներին» եկեղեցիները բռնագրավելու որոշակի գործողություններ հետևեցին: Եկեղեցաքանդ հիմարությունները այլանդակ կերպարանք առան:

Այդ ամոթալի գործընթացն սկսվեց 1909 թվի աշնանը և տևեց շուրջ մեկ ու կես տարի:

Դաշնակցական և Հնչակյան «տղաները» հատուկ հրահանգներով սկսեցին հոգևոր սպասավորներից խլել եկեղեցիների բանալիները և թույլ չտալ հոգևորականների մուտքն այնտեղ: Եկեղեցիները քաղաքական հավաքներ, զեկուցումներ և զանազան ուրիշ աշխարհիկ միջոցառումներ անցկացնելու վայրեր հայտարարվեցին[1]: Նրանցում անցկացվող ժողովները գնալով անօրենության նորանոր ձևեր էին ընդունում: Զլսված ու չտեսնված սանձարձակություններ էին կատարվում Կ. Պոլսի ս. Աստվածածին Մայր եկեղեցում, Բերայի ս. Երրորդություն եկեղեցում և մայրաքաղաքի հայոց մյուս աղոթատեղիներում, որոնցում կազմակերպվող քաղաքական ընույթի միջոցառումները, որպես կանոն, ուղեկցվում էին հայհոյանքներով, ծեծ ու ջարդով:

Ղալաթիա թաղամասի եկեղեցու դռները փակելով, դաշնակցական երիտասարդները ներսում գտնվող հոծ բազմությանն արգելում են այնտեղից դուրս գալ: Եկեղեցու դռնապաններից մեկը փորձում է արգելք լինել, բայց «տղերքը» և նրանց օգնության եկած Բանդրմայի քարհանքի բանվորները բռունցք-

---

[1] Տե՛ս **«Սուրհանդակ»**, № 91, 9 ապրիլի 1910 թ.:

ների հարվածներով տապալում են նրան: Ապտակներ է ստանում դեպքի վայրում հայտնված Ազգային ժողովի Քաղաքական ժողովի օժանդակ-քարտուղար, Հովհաննես արք. Արշարունի պատրիարքի եղբայր Նաշիդ Արշարունին[1]:

Քարոզների ու աղոթքների փոխարեն եկեղեցիների պատերից ներս բոցաշունչ քաղաքական ճառեր, վեճեր ու փոխադարձ ամբաստանություններ սկսվեցին: Հոգևոր ծառայողներն անընդհատ դիմում էին պատրիարքարան՝ պահանջելով հետ առնել եկեղեցիների բանալիները և «գոց» աղոթատները «բացել» հոգևոր արարողությունների համար: Այդ «բաց ու գոցի» հարցը զբաղեցնում էր հայ հասարակության բոլոր խավերին և, առաջին հերթին, հոգևորականությանը:

Պահպանողական «Արօր» պարբերականը, որը Հայ եկեղեցու դարավոր ավանդույթների ջերմ պաշտպան էր, հիշեցնում էր, որ այդ եկեղեցին, իբրև ժողովրդական հաստատություն, միշտ թույլատրել է ժողովների գումարումը աղոթատներից ներս: Ծխական, քահանայական, պատգամավորական ընտրությունները միշտ կայացել են եկեղեցիներում: Հայոց Ազգային սահմանադրության հաստատումից ի վեր, երկար ժամանակ Ազգային պատգամավորական ժողովների նիստերը տեղի էին ունենում Կ. Պոլսի Մայր եկեղեցում: Հնում ևս ամեն անգամ երբ ժողովրդի և եկեղեցու գոյությանը որևէ վտանգ էր սպառնում, ժողովրդի ներկայացուցիչները հավաքվում էին եկեղեցիներում, խորհրդակցում և որոշումներ կայացնում: Ուրեմն, հայոց եկեղեցիներում ժողովներ գումարելը երբեք չի արգելվել: Բայց այդ ժողովները թույլատրվել և կայացել են այնպիսի հարցերի քննության համար, որոնք անմիջական, սերտ առնչություն են ունեցել այն գործառույթների հետ, որոնց կատարողը հայոց մեջ եղել է եկեղեցին, այն է՝ կրթական, լուսավորական, բարեգործական, մարդասիրական և եկեղեցական վարչական-ազգային ընտրությունների հետ կապված հարցերի քննության համար: Այդ ժողովրդական հավաքները երբեք որևէ անպատեհություն

---

[1] Տե՛ս **«Միտք»**, № 21, 21 հուլիսի 1912 թ.:

չէին ներկայացրել, որովհետև նշված շրջանակներից դուրս չէին գալիս[1]:

Եվ ահա՛ գտնվեցին մի խումբ մարդիկ, շարունակում էր «Արօրը», որոնք փորձում են օգուտ քաղել եկեղեցու ընծայած այդ արտոնությունից՝ իրենց կուսակցական շահերն առաջ տանելու համար: «Եւ նրանք ժողովները վերածեցին միտինգների եւ հէնց առաջին միտինգում ցոյց տուին, թէ որքան քիչ են գնահատում եւ նկատի առնում հայ ազգի շահերը, հանգստութիւնը եւ անդորրութիւնը»[2]:

«Բացի ու գոցի» հուզումներն ու կռիվները Կ. Պոլսից անցան Իզմիր, ապա և Թուրքիայի հայաբնակ քաղաքներն ու գավառները, նաև՝ Թուրքահայաստան:

Դրանք առանձնապես այլանդակ կերպարանք ընդունեցին Իզմիրում: Այստեղ ևս դաշնակցականները բռնությամբ իրենց ձեռքն էին գցել եկեղեցու բանալիները, փակել էին եկեղեցին հավատացյալների առջև և հավաքներ, զեկուցում-դասախոսություններ և քաղաքական այլ միջոցառումներ էին անցկացնում նրա ներսում: Ժողովուրդը հուզվել էր և պահանջում էր բանալիները վերադարձնել եկեղեցու քահանային, բայց ամեն անգամ մերժում էր ստանում: Սկսվեցին իսկական կռիվներ եկեղեցում և նրանից դուրս: Ըմբոստության գլուխ կանգնեց Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության տեղի մասնաճյուղը: Եկեղեցու ներսում ծագած կռիվներից մեկի ժամանակ սպանվեցին երկու ռամկավար գործիչներ՝ Գևորգ Քեչիչյանը և Պետրոս Հալաճյանը[3]: Այդ ոճրագործությունը զայրույթի նոր ալիք բարձրացրեց քաղաքում, հազարավոր հավատացյալներ հավաքվեցին եկեղեցու շուրջ և պահանջեցին խստագույն պատիժների ենթարկել մարդասպաններին: Երկար քաշքշուկներից հետո, ի վերջո, հաջողվեց եկեղեցու բանալիները հետ վերցնել: Դրանից հետո եկեղեցին փակվեց ոչ միայն դաշնակցականների, այլև

---

[1] Տե՛ս **«Արօր»**, № 8, 9, 10, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, 1910, էջ 188:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 190:

մյուս քաղաքական ուժերի առջև[1]:

Նույնպիսի գործընթացներ էին տեղի ունենում նաև Թուրքահայաստանի եկեղեցիներում: Վանում հնչակյանների ու դաշնակցականների կազմակերպած ժողովներում նույնպես բարձրացվում էին փափկանկատ, չափազանց պատասխանատու խնդիրներ: Մեջտեղ էին բերվում դասակարգային պայքարի հարցեր. երկու ազգային հեղափոխական կուսակցությունների ներկայացուցիչները, առանձին-առանձին, հանրահավաքների եկածներին ներկայացնում էին սոցիալիզմի՝ միմյանցից տարբեր իրենց ըմբռնումները, որոնցից գլուխ չէին հանում Թուրք-քրդական հարստահարումներից աչք չբացող հավատացյալները: Եկեղեցին ծանր գայթակղությունների առարկա դարձավ Այնթապում, ուր տեղի ունեցան վեճեր, կռիվ, ծեծ, եղան ծանր վիրավորներ ու բանտարկյալներ: Ոստիկանությունը ստիպված միջամտեց և խնդիրը հասցվեց մինչև Թուրքական դատարան: Շապին-Գարահիսարում եկեղեցի խուժելիս ամբոխը խորտակեց միջնադարը, ավերեց գմբեթը և զանգակատունը: Այդպիսի բաներ պատահեցին նաև Մանազկերտում, Տրապիզոնում և այլուր[2]:

Կարինում, Վանում և այլ տեղերում քարոզվում էր «ազգային ցեցերի» դեմ ըմբոստության անհրաժեշտության գաղափարը, անկարգապահություն ու անօրինապահություն էին սերմանվում: «Արարատ» հանդեսը հաղորդում էր, որ Թուրքահայաստանի «գաւառներէ եղած գանգատները այն են թէ տեղ-տեղ դպրոցական աշակերտք ըմբոստացած են իրենց ծնողաց եւ մեծերուն դէմ եւ տարօրինակ գաղափարներ կը յայտնեն, որ չի համապատասխաներ իրենց տարիքին հետ: Փոխանակ իրենց թանկագին ժամերը ուսման եւ գիտութեան նուիրելու, ազգայնոց վէճերով կը զբաղին եւ հիմակուընէ իրենց 10-20 տարեկան հասակին մէջ կարծես եղած են մէյմէկ Վոլթէր կամ Ռընան»[3]:

---

[1] Տե՛ս **Մանուկ Գ. Ճիզմէճեան,** Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց. 1890-1925, էջ 177:

[2] Տե՛ս **«Արարատ»,** № 11, նոյեմբեր, 1910, էջ 1041-1042:

[3] Նույն տեղում, էջ 1042:

Նույնիսկ բարձրաձայնվում էին ընտանեկան սրբությունների դեմ ուղղված «ազատ սիրո» արտառոց գաղափարներ:

Ուստի զարմանալի չէ, որ հասարակական լայն խավերը վրդովվում և անհանգստանում էին: Ընդ որում՝ հուզումները չէին սահմանափակվում հասարակ բանակռիվներով և վիճաբանություններով, այլ, ինչպես ասվեց, սուր կերպարանք էին ընդունում և տեղ-տեղ արտահայտվում ծեծկռտուքի և նույնիսկ սպանության դեպքերով: Այդ պատճառով հասարակությունը պահանջում էր սահմանափակել այդ ժողովները, եկեղեցիներում արգելել քաղաքական հարցեր շոշափող համախմբումները: Եղբայրաղավ ընդհարումներին վերջ տալու խիստ պահանջ էր առաջադրվում:

Միանգամայն անվայելուչ դիրք էր բռնել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը և անձամբ պատրիարք Եղիշե արք. Դուրյանը: Վերջիններս չէին կողմնորոշվում, թե ստեղծված եկեղեցական ճգնաժամի պայմաններում ի՞նչ պետք էր անել:

Դաշնակցության «Ազատամարտ» պաշտոնաթերթը (Կ. Պոլիս) սխալմամբ հաղորդել էր, թե Եղիշե Դուրյան սրբազանը նույնպես միացել է «պատրիարքարանի յետադէմ կղերին» և հրահանգել է եկեղեցիներում հանրահավաքներ անցկացնելը չթույլատրել:

Թերթի այդ հաղորդումը համարելով թյուրիմացության արդյունք, պատրիարքարանի հանձնարարականով ու նրա անունից Ղևոնդ ծայրագույն վարդապետ Դուրյանի ստորագրությամբ 1909 թ. հոկտեմբերի 22-ին տարածվել էր հետևյալ հայտարարությունը*. «Ի գիտութիւն «Ազատամարտ»-ի խմբագրութեան կը փութանք յայտարարել, թէ պատրիարքարանը երբէք մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներու թաղական խորհուրդներու հրահանգ չէ տուած, որ ասկէ վերջ չթոյլատրեն կուսակցական մարդիկներու միթինկներու սարքումը եկեղեցիներու եւ եկեղեցապատկան հաստատութիւններու մէջ: Կը ցաւինք որ

* Հայտարարությունը չէր ստորագրել Եղիշե Դուրյան սրբազանը, որովհետև 1909 թ. օգոստոսի 25-ին տված հրաժարականից հետո նա պատրիարքարան չէր գալիս և որևէ թուղթ չէր ստորագրում:

խմբագրութիւնդ պաշտօնական չեղած լուրի մը վրայ հիմնուելով եւ առանց կարծեցեալ շրջաբերականը տեսած ըլլալու՝ կարգ մը դիտողութիւններ ըրած էր պատրիարքարանի հասցէին: Կը վստահեցնենք ձեզ, թէ պատրիարքարանը ջերմ փափաքող եւ քաջալերող է ազգօգուտ գործոց մասին եղած բեմասացութեանց, միայն կը զգուշացնէ կրօնի եւ եկեղեցւոյ դէմ խօսողներու ասպարէզ տուողները:

Ձեր հայրենասիրութեան համակրող՝

Ղեւոնդ վարդ. Դուրեան»[1]:

Կուսակցական-ամբոխային ճնշման տակ պատրիարքարանը չէր համարձակվում հետ վերցնել եկեղեցիների բանալիները: Ավելին, որպեսզի ազատական երևար, Դուրյան սրբազանը հայտարարել էր, թե եկեղեցիների սրահները կարող են օգտագործել նույնիսկ բոլոր ոչ-հայերը՝ հույնը, թուրքը, քուրդը և ուրիշներ[2]:

Հայտարարությունը ցույց էր տալիս, որ եթե պատրիարքարանի նշանավոր գործիչները, այդ թվում Դուրյան սրբազանը նույնիսկ թույլատրելի էին համարում եկեղեցիներում հանրահավաքներ անցկացնելը և զանազան վտանգավոր ճառեր արտասանելը, նշանակում է, թե, որքան էլ տարօրինակ է, հստակ պատկերացում չունեին ընդհանրապես աղոթատների դերի մասին:

Տպագրելով սույն հայտարարությունը, «Արարատի» խմբագրությունն իր կողմից ավելացրել էր. «Մեզ մնում է զարմանալ: Եկեղեցին չի կարող «կուսակցական միթինկներու» տեղ լինել»[3]:

Բողոքելով հայոց եկեղեցիները պղծելու պատրիարքարանի անխոհեմ ու անօրեն հայտարարության դեմ, «Հովիւը» գրում էր. «Հայ եկեղեցին եղել է եւ է մի նուիրական համազգային հաստատութիւն, որին կոթնած հայ ժողովուրդը չարունակել է իր ազգային քրիստոնէական-բարոյական կեանքը արկածալից

---

[1] ***«Արարատ»,*** *№ 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր, 1909, էջ 830:*

[2] *Տե՛ս* ***«Հովիւ»****, № 11, 28 մարտի 1910 թ.:*

[3] ***«Արարատ»,*** *№ 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր, 1909, էջ 830:*

դարերի ընթացքում եւ հայաբնակ երկրներին տիրացող ազգերը միշտ էլ առանձին ակնածութեամբ եւ պատկառանքով են վերաբերուել մեր սրբութիւններին»[1]:

Շարունակելով, թերթը նշում էր. «Իսկ այսօր մի խումբ գլուխը կորցրած մարդիկ գիտակցաբար կամ անգիտակցաբար ուզում են չեղել Հայոց Ազգային Եկեղեցին իր դարաւոր ընթացքից»[2]: Եկեղեցիները վերածելով սովորական ժողովատեղերի, նրանք նսեմացնում են Հայ եկեղեցու դերը և նրան վարկաբեկում հարեւան ժողովուրդների աչքում[3]:

Շեշտելով, որ պատմությունն է գծել Հայ ազգային եկեղեցու ուղին և նա պետք է անշեղ հետեւի այդ ուղուն, «Հովիւը» ազդարարում էր. «Հայ եկեղեցին պատրիարքարանի սեփականութիւնը չէ եւ ո՛չ էլ հայութեան մի հատուածի, որ մի բուռն մարդիկ մեր ազգային գոյութիւնը պահող նուիրական վայրերը վերածեն սովորական սրահների՝ խայտառակելով համայն հայութիւնը...»[4]:

«Բիւզանդիոնը» (№ 4191, 24 հուլիսի (6 օգոստոսի) 1910 թ.) մեջբերել էր հայասեր մի անգլիացու կարծիքը հայոց գործերի մասին: Այդ օտար մարդը ցաւ էր հայտնել եկեղեցիներում հանրահավաքներ անցկացնելու և այդ հողի վրա ծագած խռովությունների համար: Նա ասել էր. «Անգլիոյ մէջ ամեն օր միտինգ կ'ըլլայ, բայց ոչ ոք միտքէն կ'անցնէ եկեղեցիները գործածել աշխարհային գումարումներու...: Եւրոպայի մէջ ոչ մէկ դաւանութիւն կը թոյլատրէ, որ իր եկեղեցական սրբավայրերն ուրիշ նպատակներու գործ ածուին: Ասիկա ո՛չ ազատականը կ'ընդունի, ո՛չ պահպանողականը: Անգլիոյ մէջ ամէնէն ծայրայեղ ազատականն անգամ նախանձախնդիր է, որ եկեղեցին իր սրբավայրի նշանակութեան մէջ միայն մնայ ճշդիւ»[5]:

---

[1] **«Հովիւ»**, № 11, 28 մարտի 1910 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] Անգլիացի հայասերի «Բիւզանդիոնում» տպագրված խոսքերը արտատպված են **«Արարատ»** հանդեսի 1910 թ. № 11-ում, նոյեմբեր, էջ 1029-1030:

Դավիթ Անանունը (Դավիթ Տեր-Դանիելյան) նշում էր, որ թե՛ մայրաքաղաքում և թե՛ նրանից դուրս Դաշնակցությունը եկեղեցում հանրահավաքներ էր կազմակերպում, որովհետև «պատրիարքարանն ու Ազգային ժողովը նրա աչքում կորցրել էին իրենց կարեւոր արժէքը»[1]:

«Հովիւը» նկատում էր, որ հայ հավատացյալները դարեր չարունակ եկեղեցի են մտել երկյուղածությամբ, սրտի թրթիռով, իսկ հիմա դրանք ակումբների են վերածվել, սովորական վայրեր են դարձել: «Այդտեղ միտինգներում մարդիկ ծխում են, թքում են, կուում են, կրքեր են առաջ գալիս: Իսկ մի՞թէ այդպիսի արարքների տեղ է եկեղեցին»[2]:

Հոդվածի հեղինակ գրականագետ Գարեգին Ենգիբարյանը զայրույթով գրում էր. «Երկուսից մէկը. կա՛մ Դուրեան սրբազանը եւ այն հոգեւորականները, որոնք իրանց կոչման անարժան մարդիկ են եւ ապրուստի համար են մնում Աստուծոյ տաճարում եւ պիտի Երուանդ վարդապետի* եւ նրանից առաջ նրա բազմաթիւ ընկերների պէս անկեղծօրէն թողնեն հոգեւորական կոչումը եւ կա՛մ մնալու ժամանակ՝ պիտի չստորացնեն այն գաղափարը, որին իբր թէ նրանք ծառայում են: ... Աստուծոյ տաճարը պղծելու իրաւունք չունեն նրանք, որոնք հոգեւորական են դառել Աստուծոյ տաճարին ծառայելու համար»[3]:

Դուրյան սրբազանին և պատրիարքարանին մոտավորապես նույն գնահատականներն էր տալիս նաև Սուրեն Պարթևյանը[4]:

Իսկ ո՞վ պետք է վերջ տար այդ խայտառակությանը: Թուրքական իշխանությունների չահերից չէր բխում նպաստել հայ եկեղեցական կյանքի ճգնաժամի վերացմանը, ավելին՝ նրանք ամեն կերպ խորացնում էին դա: Մնում էին հայ ազգային մար-

---

[1] **Դաւիթ Անանուն**, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատ. Գ (1910-1918), տպ. Ս. Ղազարու, Վենետիկ, 1926, էջ 512:

[2] **«Հովիւ»**, № 11, 28 մարտի 1910 թ.:

* Խոսքը վերաբերում է հոդվածի նախորդող օրերին կարգաթող դարձած, Մայր աթոռի տպարանի տեսուչ, բանասեր Երվանդ վրդ. Տեր-Մինասյանին:

[3] **«Հովիւ»**, № 11, 28 մարտի 1910 թ.:

[4] Տե՛ս **«Դաշինք»**, № 271, 29 մայիսի (10 հունիսի) 1910 թ.:

մինները (Հայոց ազգային ժողովը, նրա Քաղաքական ժողովը, պատրիարքարանը, գավառային ազգային վարչությունները և առաջնորդարանները), ինչպես նաև հայկական մամուլը և հայ մտավորականությունը: Բայց այդ բոլոր ուժերը ապարդյուն սին վեճերի մեջ էին եկեղեցիների չուրջ, դրանով իսկ անգործության դատապարտելով պատրիարքարանը, ազգային գործերը, մտավոր կյանքը: Իր հերթին, հանրահավաքների մասնակիցների առաջ եկեղեցիները «բացե՞լ թե՞ փակելու» ոչ էական, ապիրատ հարցը մամուլում առաջ էր բերել լայնածավալ բանակռիվ՝ գրավելով հրապարակագիրների ուշադրությունը ոչ միայն Կ. Պոլսում, այլև Թիֆլիսում և այլուր, դրանով իսկ խլելով ազգային-վարչական մարմինների հասարակական գործունեության ժամանակը:

Վերը նշված ազգային մարմիններից եկեղեցիներն ակումբների վերածելուն քիչ թե շատ դեմ էր Հայոց ազգային ժողովի ղեկավարությունը, որը, սակայն, որևէ բան անել չէր կարող, քանի որ եկեղեցիներում ժողովների անցկացումն արգելելու լիազորություն չուներ: Դա կարող էր անել միայն Եղիշե Դուրյան պատրիարքը, որը հակված չէր մերժելու հայկական կուսակցություններին: Իսկ վերջիններս՝ Հնչակը, Վերակազմյալ Հնչակը և Դաշնակցությունը շարունակում էին աղմկալից ժողովներ անցկացնել լեփ-լեցուն եկեղեցիներում:

Հասարակայնության ճնշման տակ 1910 թ. մարտի սկզբին Դուրյան պատրիարքի նախագահությամբ* տեղի ունեցավ Ազգային երեսփոխանական (պատգամավորական) ժողովի (Խառը ժողովի) նիստ, որը քննարկեց եկեղեցիներից ներս հանրահավաքներ գումարելու հարցը:

Քաղաքական և Կրոնական ժողովները մինչ այդ եկեղեցիներում հանրահավաքներ գումարելու մասին դրական որոշումներ էին ընդունել, որոնք էլ ընկել էին Ազգային պատգամավորական ժողովի որոշման նախագծի հիմքում, որով չէին արգել-

---

* Ինչպես վերը նշել ենք, Եղիշե Դուրյան պատրիարքը 1909 թ. օգոստոսի 25-ին տված հրաժարականից հինգ ամիս հետո՝ 1910 թ. հունվարի 29-ին վերադարձել էր իր աթոռին:

վում հանրահավաքները, եթե նրանց մասնակիցները կրոնի և եկեղեցու հասցեին չէին ասելու հակառակ բաներ[1]:

Ազգային ժողովի այդ նիստի առիթով «Արարատ» հանդեսը հիշեցնում էր, որ ո՛չ պատրիարքը, ո՛չ Կրոնական ու Քաղաքական ժողովները իրավասություն չունեն այնպիսի որոշումներ ընդունելու, որոնք հակառակ են Հայոց եկեղեցու կանոններին և նվիրական սրբությանը[2]: Իսկ Իզմիրի ռամկավարական «Դաշինքը», դատապարտելով Ազգային ժողովի բռնած դիրքը, որ ենթարկվելով «դրսի խուժանի» ճնշմանը, վճռական կեցվածք չէր ընդունում եկեղեցիներում անցկացվող հանրահավաքների դեմ[3], առաջարկում էր Ազգային ժողովը ցրել և նոր ընտրություններ նշանակել:

Ընդհանուր կարծիքն այն էր, որ Ազգային ժողովի բռնած խոտոր ընթացքը պայմանավորված է Ազգային վարչության թելադրանքներով, որտեղ գերակշռում էին «հեղափոխական թևի» ներկայացուցիչները[4]:

Ազգային ժողովի ընդունած որոշումն է՛լ ավելի բուռն բողոքների պատճառ դարձավ: Ուստի մարտի 5-ին ակնաբույժ Տիգրան Աճեմյան բեյի ատենապետությամբ տեղի ունեցավ Ազգային ժողովի Խառը ժողովի նոր նիստ, որը հարցը քննության առավ բուռն վիճաբանությունների մթնոլորտում:

Պատգամավոր Արիստակես Գասպարյան էֆենդին հենց սկզբից հայտարարեց, թե Խառը ժողովն իրավասու չէր քննելու խնդիրը, որովհետև դա ենթակա է միայն Կրոնական ժողովի իրավասությանը: Վարդգես էֆենդին (Հովհաննես Սերենգյուլյան) բողոքեց և հակառակը պնդեց: Սրան պաշտպանեց Հայրապետյան էֆենդին, որը նաև հայտարարեց, թե Կ. Պոլսում հակակուսակցական շարժում է սկսված, և դրա արտահայտություններից մեկը եկեղեցիներում հանրահավաքներն արգելելու

---

[1] **«Հորիզոն»**, № 73, 2 ապրիլի 1910 թ.:

[2] **«Արարատ»**, № 3, մարտ, 1910, էջ 216:

[3] Տե՛ս **«Դաշինք»**, № 201, 29 փետրվարի (13 մարտի) 1910 թ.:

[4] Ազգային վարչության հանգամանալից քննադատությունը տե՛ս **«Դաշինք»**, № 256, 10 (23) հունիսի 1910 թ.:

կոչերն են: Պատգամավոր Արսենյան էֆենդին հանդես եկավ Հայրապետյանի տեսակետի դեմ և անմտածված համարեց վարչության որոշումը, ըստ որի՝ եկեղեցիներում կարող են հանրահավաքներ լինել, պայմանով, որ կրոնի և եկեղեցու դեմ բան չխոսվի: «Ինչպէ՞ս կրնայ գիտցուիլ,- ասաց նա,- թէ խօսողը կրօնքի եւ Եկեղեցւոյ դէմ պիտի խօսի՞, թէ՞ ոչ եւ եթէ խօսուի, բուռն վէճեր եւ մինչեւ իսկ ծեծ պիտի պատահի»: Արսենյանի դեմ սուր ճոճեց Ավետիս Սուրենյան էֆենդին, ասելով, թե եկեղեցիներում աշխարհականների խոսելու իրավունքը շատ հին է և գալիս է վաղ քրիստոնեական ժամանակներից, որ ծայր առած հակահեղափոխական շարժման նպատակը կուսակցություններին վարկաբեկելն է: Սուրենյանի փաստարկմանը դեմ արտահայտվեց պատրիարքարանի դիվանապետ Գամեր Շիրինյան էֆենդին և առաջարկեց արգելել հանրահավաքների անցկացումը եկեղեցիներում՝ այն հիմնական պատճառաբանությամբ, թե նրանցում ներկաներն իրենց պահում են ծայրահեղորեն արտոնյալ: «Մենք եկեղեցին սրբավայր կը ճանչնանք,- ասում էր նա,- բայց դժբախտաբար անցեալ օր եկեղեցւոյ մը մէջ տեղի ունեցած բանախօսութենէն վերջ, գետնէն սիկառի մնացորդներ եւ նարինջի կեղեւներ գտնուեցան: Այո՛, մեր նախնիք եկեղեցւոյ մէջ ժողովներ կ՚ընէին, սակայն մեր Եկեղեցւոյն եւ Ազգին պահպանութեան վրայ կը խորհէին, ոչ թէ եկեղեցւոյ մէջ Եկեղեցին կ՚անարգէին ու Աւետարանն ոտքի տակ կ՚առնէին եւ աղատ սէր չէին քարոզեր եկեղեցւոյ մէջ»[1]:

Պատգամավորներից և ունկնդիր քաղաքացիներից շատերը Շիրինյանի այս խոսքերն ընդունեցին ծափահարություններով, բայց եղան նաև դժգոհողներ. նույնիսկ սուլոցներ լսվեցին դիտորդ քաղաքացիների շարքերից: Հմայակ քհն. Էքսերջյանը, խոսքն ուղղելով վերջիններիս, գայրացած գոչեց. «Սրիկայութի՛ւն է այս ընթացքը»: Այս բառերի վրա ժխոր ու աղմուկ առաջ եկան: Պատգամավորներից ոմանք պնդեցին ունկնդիրներին դուրս հանել սրահից, ուրիշ պատգամավորներ սպառնացին, թե

[1] **«Արարատ»,** № 3, մարտ, 1910, էջ 216:

այդ դեպքում իրենք կհեռանան ժողովից: Եվ այսպես չարունակ...

Խառը ժողովի այս անլուրջ ու կեսդավեչտ նիստը վերջացավ այնպես, ինչպես սովորաբար լինում էր նիստերի մեծ մասը՝ անպտուղ: Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո բոլոր հայերի աչքերն ուղղվեցին դեպի Ազգային պատգամավորական ժողով, որն անմիջապես գումարվել էր իբրև Թուրքահայության ազգային օրենսդիր գերագույն մարմին և ընկալվել էր որպես տառապած հայության ներքին կազմակերպվածության ու կուլտուրական զարգացման խարիսխ: Բայց շատ չանցած՝ ազգը հիասթափվեց: Անցած գրեթե երկու տարիների ընթացքում նա ոչ մի լուրջ աշխատանք չտարավ, որևէ լուրջ խնդիր տեղ չգրավեց նրա օրակարգում, ամբիոնից չբարձրաձայնվեց ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող որևէ հարց: Հանձինս այդ ժողովի, նշում էր «Բութանիան», «մենք տեսանք միայն ոչնչաբանութիւններ, փքուն վիճաբանութիւններ անարժէք հարցերու շուրջ, բաւական հայհոյանք, անձնական վէճեր ու ատելութիւններ, քիչ մը ծեծ, եւ ընդհանուր առումով բաւական մը հեգնանք ու ծաղր հայ ժողովուրդի ծով-ցաւերուն դէմ, իրենք՝ որ այդ նոյն ժողովուրդի[ն] անունով հաւաքուեր էին հոդ»[1]:

Ջուր չէր Հակոբ Պարոնյանը տարիներ առաջ ծանակել ու մտրակել Հայոց ազգային ժողովը, որը նույնիսկ ժողովրդի համար ճակատագրական օրերին չէր կարողանում գտնվել իր կոչման բարձրության վրա և զբաղված էր ջուր ծեծելով:

Անդրադառնալով այդ տխուր վիճակին, Սիմոն Զավարյանը հավանություն էր տալիս «Ազատամարտ» թերթի այս կարծիքին. «Մեր Ազգային Վարչութիւնը իսկապէս, քառակուսի անիւներով մի կառք է, որ չնորհել է մեզի խորամանկ Ալի փաշան* հայերը բառերով զբաղեցնելու, մի քիչ նման երեխաներին,

---

[1] **«Բութանիա»** (Կ. Պոլիս), № 14, 10 մայիսի 1910 թ.:

* Օսմանյան կայսրության այն մեծ վեզիրը, որ Թուրքահայերին «չնորհեց» Ազգային սահմանադրությունը:

որոնք առաւօտից մինչեւ երեկոյ կը խաղան պուպրիկների հետ, բայց երեւակայութեամբ ու խօսքով մեծերի նման կեանք կը վարեն, կը վիճեն, կը զարնուեն, կ'ուրախանան ու կու լան»[1]:

Հիրավի, տագնապալի իրողությունների հանդեպ ազգային իշխանությունն իր ամբողջությամբ, Ազգային ժողովից սկսած մինչև հետին թաղական խորհուրդը, փոխանակ բոլոր կարելի միջոցները գործադրելու և ամեն բան առավել կենսական խնդիրներին հետաղասելու, ընդհակառակը, անուշադրության էր մատնում դրանք և օրեր շարունակ զբաղվում երկրորդական հարցերի քննությամբ:

Թեև պատրիարքը տարբեր կողմերից ենթարկվում էր խիստ քննադատության, բայց նա չէր համարձակվում Դաշնակցության կամքին դեմ գնալ, իսկ եկեղեցիների հանրահավաքներն ու ճառերը գնալով կռվաշունչ և վտանգավոր էին դառնում:

1910 թ. մարտի կեսերին Կ. Պոլսի Բերայի հայոց ս. Երրորդություն եկեղեցում տեղի ունեցած բազմամարդ բողոքի հանրահավաքը իրարանցումների առիթ էր դարձել, որովհետև ամենասուր արտահայտությունների տարափի տակ վերածվել էր ռուսական իշխանությունների դեմ ուղղված և Նիկոլայ II կայսրի անձն այպանող, ճիչերով հագեցած վտանգավոր վակխանալիայի: Հանրահավաքում դաշնակցականներն իրենց ելույթներում «ոճրագործ Ռուսաստանից» պահանջում էին անհապաղ բանտերից ազատ արձակել իրենց կուսակիցներին, միաժամանակ Թուրքական կառավարությանը կոչ էին անում «խստորեն միջամտել» գործին: «Արօրը» նկատում էր. «Այդ անխոհեմ եւ երեխայամիտ ճառախօսները եւ արկածախնդիր ասպետները չկարողացան ըմբռնել այն պարզ ու տարրական իրողութիւնը, որ Թիւրքաց կառավարութիւնը խելքը չէ կորցրել՝ չհասկանալու համար, որ միջամտել մի օտար պետութեան ներքին գործերին՝ նրան թոյլ չեն տայ. երկրորդ, որ այդպիսի բողոքներով նրանք միայն վնասում են իրանց ընկերներին»[2]:

---

[1] **Սիմոն Զաւարեան,** հատ. Ա, Պէյրութ, 1983, էջ 87:

[2] **«Զէզոք»** (Կ. Պոլիս), № 4, 29 հոկտեմբերի (11 նոյեմբերի) 1910 թ.:

Հակադաշնակցական մամուլի որոշ օրգաններ հակված էին կարծելու, որ հանրահավաքի կազմակերպիչների հիմնական նպատակն այլ էր, այն է՝ ցույց տալ Իթթիհադին, թե իրենք որքա՞ն շատ են նվիրված Թուրքիայի դարավոր թշնամի Ռուսաստանի դեմ պայքարի գաղափարին:

Այդ դեպքը մեծ աղմուկ էր հանել ինչպես Թուրքիայի, այնպես էլ Կովկասի հայկական շրջաններում, անհարմար կացություն ստեղծել թուրքական կառավարության համար և առաջ բերել ռուսական կողմի խիստ դժգոհությունը: Եվ դա այն դեպքում, երբ թուրքական և ռուսական կառավարությունները ջանքեր էին անում բարելավելու իրենց սրված հարաբերությունները:

Կ. Պոլսի հայկական պահպանողական և ազատական թերթերը հարց էին տալիս, թե Դաշնակցությունն իր գործուն և անիմաստ հակառուսական պայքարով ինչո՞ւ է բորբոքում հայերի նկատմամբ Ռուսաստանի մամուլի հակահայ օրգանների և հակահայ գործիչների ատելությունը, մանավանդ որ թուրքահայության վիճակը հեղհեղուկ է, ապագան՝ մշուշոտ: Իսկ եթե նպատակը երիտթուրքերի կառավարության նվիրյալի մրցանակ շահելն է, ապա դա նոր ապացույցների կարիք չունի:

Մամուլը նաև նշում էր, որ եթե եկեղեցիները հանրահավաքների վայրեր դարձնելու մասին որոշումներ կայացնողը լիներ, ասենք, Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովը, ապա նա էլ կլիներ պատասխանատու և հասարակությունը կիմանար, թե ումից հաշիվ պահանջի նրա արած քայլերի համար: Բայց այդպես չէր իրերի դրությունը. որոշումներ կայացնողները քաղաքական կազմակերպություններ էին, նրանց կամքը կատարող մասնավոր անհատներ, իսկ նրանց փոխարեն պատասխանատու էին դառնում Ազգային վարչությունը, եկեղեցու հետ կապված ատյանները, ամբողջ հասարակությունը:

«Ի՞նչ իրաւունք ունին» ընդհանուր վերնագրի և «Ընդվզում Դաշնակցութեան դէմ» ենթավերնագրի տակ զետեղված առաջնորդող-խմբագրականում «Բիւզանդիոնը» դատապարտում էր Թուրքիայի հայությանը հարվածի տակ դնելու Դաշնակցության հերթական քայլը: Հոդվածագիրը հարցնում էր, թե դաշ-

նակցականներն ինչ իրավունքով են հայոց սրբատեղիներից մեկում, ինչպիսինը Բերայի Ս. Երրորդություն եկեղեցին է, հավաքել ժողովրդի բազմություն և նրան հակառուսական թշնամական քարոզներ կարդում, փորձելով տպավորություն ստեղծել, թե հայությունը համամիտ է իրենց հետ: Հոդվածագիրը չեշտում էր, որ «հայ մարդը ոչ միայն կտրականապես մերժում է հակազգային այդ վարքագիծը, այլև զարմանք է ապրում, թե ինչու սրբազան պատրիարքը և Ազգային վարչությունը արտոնել են Ռուսաստանի դեմ ուղղված աննախադեպ հրապարակային մի ցույց, դրանով իսկ, իզուր և անխոհեմաբար Նիկոլայ II ցարին թշնամի դարձնելով հայերին[1]*:*

Ապա առաջ բերելով այն բոլոր առարկությունները, որ դաշնակցականներն անում էին իրենց տեսակետն արդարացնելու համար, թերթը մի առ մի հերքում էր դրանք, որոնց մեջ կար նաև այն պատճառաբանությունը, թե «մե՛նք կործանեցինք [Ապտուլ] Համիտը Թուրքիոյ մէջ եւ Մեհմէտ Ալին՝ Պարսկաստանի մէջ եւ հիմա կ՚ուզենք կռուիլ ցարական բռնակալութեան դէմ»:

Հերքելով այդ սնապարծությունը, «Բյուզանդիոնը» նկատում էր, որ 1) իհարկե, Ռուսաստանը չունի իդեալական կառավարություն, բայց նա, այնուամենայնիվ, իր երկրի բոլոր ժողովուրդների համար ավելի բարեգործ է ու չինարար, քան եղել են Աբդուլ Ազիզի և Աբդուլ Համիդի ռեժիմները, 2) Հայերը վերջին կես դարում կես առ կես պակասել են Թուրքիայում, իսկ դրա հակառակ, նույն ժամանակաշրջանում հայերի թիվը կրկնապատկվել է Ռուսաստանում, 3) Երբ Ֆրանսիան, Անգլիան, Միացյալ Նահանգներն ու Գերմանիան, այսինքն՝ աշխարհի չորս ամենազարգացած մեծ ազգերը ձգտում են դաշնակից լինել Ռուսաստանին, այս իրողության հակառակ հայերին, անթույլատրելի է դոնքիշոտաբար նետվել առաջ և իրենց դիրքը խախտել, իրենց անվտանգությունը վտանգել այդ հզոր կայսրության մեջ, 4) անթույլատրելի է ժողովրդին խաբել, թե Աբդուլ Համիդը մենք տապալեցինք, Մեհմեդ Ալի շահին մենք գահից իջեցրինք:

---

[1] ***«Բիւզանդիոն»,*** *№ 3929, 12 (25) սեպտեմբերի 1909 թ.:*

Այդպիսի հոխորտանքը նախկիններում արդեն շատ թանկ են նստել հայության վրա[1]:

Այս թեզիսներն ավելի լայնորեն զարգացնելով՝ «Բիւզանդիոն» օրաթերթն իբրև եզրակացություն գրում էր. «Վերջացնելով, կը յիշեցնենք մեր ազգային իշխանութեանց՝ Պոլսոյ, որպէս եւ Գաւառի, թէ թոյլ տալու չեն, որ մեր եկեղեցիներուն մէջ քաղաքական ցոյցեր կազմուին Ռուսիոյ դէմ: Մենք կը ցաւինք կարգ մը հայերու բանտարկութեան համար Կովկասի մէջ: Կը հասկնանք քաղաքավարութեան սահմաններուն մէջ կոչում ընել Ռուսիոյ կայսեր արդարասէր զգացումներուն: Բայց Բերայի ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ ըսուածին նման նախատական կոպիտ խօսքեր ո՛չ միայն ռուս[ական] կառավարութեան տրամադրութիւնը չեն բարեփոխեր, այլեւ շատ կը վախնանք, որ հակառակ ազդեցութիւն կը բերեն»: Պարբերականը նաև դաշնակցականներին հիշեցնում էր, որ նրանք «բնաւ իրաւունք չունին Թուրքիոյ հայութիւնն իրենց հետ համերաշխ ցուցնելու այն ընկերվարական-յեղափոխական պայքարին մէջ, զոր կը մղեն Ցարին տէրութեան դէմ»: Ապա՝ թուրքահայերը նրանց չեն ասել, որ գնան ու դաշնակցեն Ռուսաստանի այն միակ կուսակցության հետ, որն ամենից շատ էր դիպչում ցարի ու նրա շրջապատի ջղերին և որին ամենից շատ է հալածում կառավարությունը: Դա սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) կուսակցությունն է: Միթե կուսակցութեան սո՞վ կար Ռուսիոյ մէջ: Միթէ չէի՞ն կրնար դաշնակցիլ ազատական-ժողովրդական, սահմանադրական-ռամկավար կուսակցութեանց հետ, որոնց ծրագիրը ոչ նուազ օգտաւէտ եւ յառաջդիմական է Ռուսիոյ ապագային համար: Ո՞վ ըսաւ իրենց, որ երթան նիհիլիստներուն, ծայրայեղներուն հետ մէկ ըլլան եւ յետոյ ազգին գլուխը պէլայի[**] խոթեն. բնաւ իրաւունք չենք տար իրենց՝ մեր անունովն անպատշաճ եւ ազգավնաս խօսքեր ուղղելու Ռուսիոյ դէմ»:

---

[1] ***«Բիւզանդիոն»,*** *№ 3929, 12 (25) սեպտեմբերի 1909 թ.:*

[*] *Խոսքը սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) մասին է:*

[**] *Փորձանք (արաբերեն, թուրքերեն):*

Ապա «Բիւզանդիոնը» հաստատում էր, որ, այո, Ռուսաստանը դեռ շատ հեռու է արևմտյան տիպի կառավարություն ունենալուց, որ այնտեղ դեռ շատ թերի գործեր կան: «Բայց ատիկա մեր ձեռամբ լմննալիք գործ մը չէ: Եւ մենք մեր մնացեալ ոյժը, խելքը, գործունէութիւնն ամէնէն առաջ մեր ազգին կը պարտինք, մեր ազգին աղէկութեան կը պարտինք, որուն էական պայմանն է լաւ ապրիլ, հաշտ ապրիլ Թուրքին եւ ռուսին հետ հաւասարապէս»[1]:

Հայ նշանավոր մտավորականները Կովկասում և արտասահմանում նույնպես դատապարտում էին Ռուսաստանի դեմ դոնկիխոտյան անիմաստ պայքարի հերթական դրսևորումները, որոնք գրգռելով այդ երկրի վարչակարգը, դրանով իսկ առաջին հերթին հարվածի տակ էին դնում կովկասահայությանը:

Բարիք համարելով, որ հայ ժողովրդի մի հատվածն իր պատմական բախտը կապել է Ռուսաստանի հետ, Արշակ Զոպանյանն «Անահիտում» գրում էր.

«Մեր ցեղին այդ պատառը ... մեծապէս օգտուած է ռուս տիրապետութենէն: ... Ռուսերուն գալուստը փրկութիւն մը եղաւ. հայութիւնը այդ օրէն սկսեալ Կովկասի մէջ՝ գտած է կայուն, տեւական, հաստատուն կացութիւն մը ... Ռուս[ական] տիրապետութեան տակ հայը մարդու պէս ապրած է, ինքզինքը գտնելով միջավայրի մը մէջ, որ տեսլականը չըլլալով հանդերձ, որոշ օրէնքներու, կանոնաւոր կարգուսարքի մը վրայ հիմնուած էր. կրցած է՝ չնորհիւ այդ պայմաններուն՝ տնտեսական մեծ բարօրութեան հասնիլ, օգտուած է՝ վերջապէս՝ ռուս բարձրագոյն քաղաքակրթութեան ազդեցութենէն, ուրեմն եւ զարգացած ու զօրացած է նիւթապէս եւ բարոյապէս»[2]:

Պետք է ասել, որ ինչպես 19-րդ դարի 90-ական թվականներին, այնպես էլ Օսմանյան հեղափոխությունից հետո, այդ թվում «բաց ու գոցի» օրերին Ռուսաստանի հանդեպ անզիջում թշնամական դիրքում էր նաև հին Հնչակը՝ մամուլի իր բոլոր օրգաններով անխտիր:

---

[1] ***«Բիւզանդիոն»**, № 3929, 12 (25) սեպտեմբերի 1909 թ.:*

[2] ***«Անահիտ»**, № 11-12, մարտ-ապրիլ, 1909-1910, էջ 241:*

Օրինակ՝ հնչակյան պարբերականներից մեկը՝ Կ. Պոլսի ուսանողական միության օրգան «Կայծ» ամսաթերթը, հետևյալ անմիտ տեսակետն էր արտահայտում Մերձավոր Արևելքում Ռուսաստանի դերի մասին.

«Ռուսիան գործելով պատմութեան այս կամ այն ժամանակաշրջանին մէջ, միշտ ձգտեր է Մերձաւոր Արեւելքի մէջ դէպի մի նպատակ, այն է՝ Թուրքիան անդամահատել եւ անոր պատառ-պատառ եղած մարմնի բեկորներու[ն] վրայ յաղթապանծօրէն պարզել իր քաղաքական տիրապետութեան դրօշ[ը]: Ինչքան նա իր էական շահերու տեսակէտով ստիպուած լինի պաշտպան կանգնիլ Թուրքիոյ կարգ մը ազգութեանց, այնու ամենայնիւ նա անվիճելիօրէն պատմական թշնամին է Թուրքիոյ վերածնութեան, մասնաւորապէս Հայաստանի վերաբերմամբ»[1]:

1910 թ. մարտի 21-ին Կ. Պոլսի Սկյուտար թաղամասի ս. Կարապետ եկեղեցում կազմակերպած հանրահավաքը, որին մասնակցել էին մեծ թվով հնչակյաններ, վերածվել էր ծեծկրտուքի, առաջ բերելով պարկեշտ ազգայինների զայրույթը: Նրանց լռեցնելու համար հնչակյան և դաշնակցական «տղերքը» դիմել էին անթույլատրելի միջոցների՝ գանակոծության, որը «վայելեցին» «Բիւզանդիոնի» խմբագիր Բյուզանդ Քեչյանը, «Կավոչի» խմբագիր Երվանդ Թոլայանը, Հայոց Ազգային ժողովի Կեդրոնական վարչության ատենապետ բժիշկ Սիմոն Սեղբոսյանը և ուրիշներ[2]:

Դրանից հետո եկեղեցու թաղական խորհուրդը դիմել էր պատրիարքին նշելով, որ ապօրինաբար կազմակերպված հանրահավաքը հուզումնալից չարունակություն է ունեցել և խաղաղվել է միայն ոստիկանության միջամտությամբ: Նկարագրելով տեղի ունեցածը, թաղական խորհուրդը խնդրում էր միջոցներ ձեռնարկել վերջ տալու ապօրինություններին: Բայց պատրիարքը որևէ քայլի չէր դիմում[3]:

---

[1] **«Կայծ»**, № 1, 16 (29) ապրիլի 1911 թ.:

[2] Տե՛ս **Մանուկ Գ. Ճիզմէճեան,** Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, էջ 177:

[3] Տե՛ս **«Արարատ»,** № 4, ապրիլ, 1910, էջ 315:

Եղիշե արք. Դուրյանի բռնած դիրքը պատրիարքի պաշտոնին անհարիր համարելով, նրան իրենց հրաժարականը ներկայացրին Ազգային պատգամավորական Ընդհանուր ժողովի ատենապետ ակնաբույժ Տիգրան բեյ Աճեմյանը և Քաղաքային ժողովի ատենապետ Մանուկ էֆենդի Ազարյանը:

Այդ նույն ժամանակ էր, որ հնչակյանները զգաստացան և հայտարարեցին, թե եկեղեցիներում հավաքույթներ կազմակերպելուց կամ դրանց մասնակցելուց հրաժարվում են: Հնչակյան կուսակցության՝ Կ. Պոլսում տեղի ունեցած 6-րդ պատգամավորական ժողովը քննության առնելով «բաց ու գոցի» խնդիրը, ընդունեց հետևյալ որոշումը.

«Նկատի ունենալով որ՝ ա) Եկեղեցին կրօնական հանգամանք ունի, բ) Կրօնը խղճի գործ է, գ) Եկեղեցին կը պատկանի հաւատացեալներուն, Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը կ'որոշէ՝ չխանգարել հաւատացեալ հասարակութեան հանգիստը եւ դատապարտել «բաց ու գոցի» խնդիր յառաջացնողները»[1]:

Եկեղեցիների բռնագրավումից հնչակյանների հրաժարվելը դաշնակցական մամուլը համարեց «Միջնադարյան խավարամոլության» հետ կնքած դաշինքի արդյունք:

Անպատիվ գործից հնչակյանների ձեռք քաշելը դեռ չէր նշանակում, թե վերջ էր գտնում կատակերգությունը: «Արօրը» գրում էր. ««Բաց ու գոցի» խնդիրը, որ այնքան զբաղեցրեց Թիւրքիայի հայութիւնը, մնաց անլուծելի եւ սպառնում է դեռ շատ բարդութիւններ, երկպառակութիւններ եւ, ով գիտէ, դեռ նոր արիւնահեղութիւններ առաջ բերել»[2]:

Ինչպե՞ս դուրս գալ այս ամոթալի վիճակից, հարց էր տալիս «Հովիւը» և պատասխանում. «Անհրաժեշտ է Վեհափառ Հայրապետի միջամտութիւնը»[3]:

Գտնելով, որ «կուսակցական անհատական հաշիւներով եւ

---

[1] **«Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1962»**, հատ. Ա, էջ 338:

[2] **«Արօր»**, № 8, 9, 10, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, 1910, էջ 189:

[3] **«Հովիւ»**, № 11, 28 մարտի 1910 թ.:

ամբոխային տրամաբանութեամբ ղեկավարուող մի խումբ մարդիկ իրաւունք չունեն վիրաւորել ամբողջ հայութեանը», թերթը շարունակում էր. «Վեհափառ կաթողիկոսի պարտքն է, իբրեւ համազգային Եկեղեցու ընտրեալ պետ, պատրիարքարանի ղեկավարներին զգաստութեան հրաւիրել՝ հրամայելով Հայ Եկեղեցին ծառայեցնել իր 16 դարեայ նպատակին»[1]:

1910 թ. ապրիլի 10-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրլյանը հրապարակեց Եղիշե Դուրյան պատրիարքին ուղղված կոնդակ, ուր նրան հանդիմանում էր թուրքահայոց եկեղեցիներում քաղաքական հանրահավաքներ կազմակերպելու համար: Կոնդակում ասված էր. «Իրազեկ եղաք ի լրագրաց, եթէ արծարծի խնդիր եւ եղեալ է ի հասարակաց դատաստանի վասն թոյլ տալոյ զժողովս քաղաքականս (միթինկս) ի մէջ եկեղեցեաց մերոց, ընդ որ՝ իբրեւ թէ հաւանութիւն տուեալ է Ամենապատուութիւնն Ձեր եւ Ազգային Խառն Ժողովն»[2]:

Այսպիսով, ժխտելով այն սուտ լուրերը, որ իբր, Էջմիածնի կաթողիկոսը դեմ չէ եկեղեցիներում քաղաքական ժողովներ (միտինգներ) հրավիրելուն, կոնդակը այնուհետև ազդարարում էր.

«Գիտեն Ամենապատուութիւն Ձեր եւ պատուարժան անդամք Կրօնական եւ Քաղաքական ժողովոց, եթէ Ս. Եկեղեցին Հայոց չէ՛ ասպարէզ եւ բեմ քաղաքական եւ կուսակցական բանախօսութեանց եւ պայքարի, յորոց ծագին դժգոհութիւնք, տարաձայնութիւնք, ծայրայեղ արտայայտութիւնք յԵկեղեցւոյ, որով եւ նսեմանայ կրօնական վսեմ նշանակութիւն նորա յաչս հաւատացեալ ժողովրդեան մերոյ եւ նոյն իսկ օտարաց: Սրբազան պարտիք են ամենեցուն՝ յարգել զնուիրական զգացմունս հաւատացելոց. ահա ա՛յս է առողջ եւ ուղիղ սկզբունք ազատութեան խղճի»[3]:

Հայկական մամուլի օրգանների մեծ մասը ողջունեց կաթո-

---

[1] ***«Հովիւ»**, № 11, 28 մարտի 1910 թ.:*

[2] ***«Սուրհանդակ»**, № 94, 16 ապրիլի 1910 թ.:*

[3] *Նույն տեղում:*

ղիկոսական կոնդակը: Դրանցից էր Թիֆլիսում լույս տեսնող «Սուրհանդակը», որը գրում էր, թե այժմ հարցը պետք է որ պարզ լինի, մանավանդ այն մարդկանց համար, որոնք, ըստ իրենց վաղեմի սովորության նստելով երկու աթոռի վրայ կրկնում են՝ «ասանկ ալ կ'ըլլայ, անանկ ալ»: Այդ մարդիկ նույնիսկ մամուլի միջոցով աշխատեցին ցույց տալ, թե հայոց եկեղեցիները մի տեսակ բալագանային հիմնարկություններ են, որտեղ կարելի է ամեն ինչ անել, թեև հաստատ համոզված ենք, որ այդ պարոնները իրենց տան մի հետին սենյակն անգամ չէին համաձայնի հարմարեցնել այդպիսի բանի»[1]:

Դաշնակցության Կ. Պոլսի Պատասխանատու մարմնի (կենտրոնական կոմիտեի), և մայրաքաղաքի հնչակյանների ղեկավար մարմինների ներկայացուցիչները հավաքվեցին խորհրդակցության, ուր կաթողիկոսական վճիռը սխալ համարեցին: Ընդունած որոշման մեջ ասված էր, թե Հայ եկեղեցու կանոններում արգելված չեն հանրահավաքները եկեղեցիներում, եթե նույնիսկ դրանք ունեն զուտ քաղաքական, ծայրահեղ սոցիալիստական ուղղվածություն: Ելնելով միաձայն ընդունած այդ որոշումից՝ հիշյալ կազմակերպությունների ղեկավար մարմինները հրահանգներ իջեցրին տեղերի իրենց կազմակերպություններին՝ հանձնարարելով վճռականապես կռիվ տալ եկեղեցիներում հանրահավաքներն արգելող կարգադրությունների ու խոչընդոտների դեմ[2]:

«Միտինգների առիթով» հոդվածով «Արարատ» հանդեսը հիշեցնում էր, որ եկեղեցիներում հանրահավաքներ գումարելու չարաբաստիկ խնդրին վերջ տալու համար Վեհափառ հայրապետը մի կոնդակով Կ. Պոլսի պատրիարքին հանձնարարական է տվել դրանք փակ պահել ծխական համայնքի գործերին չվերաբերող գումարումների առաջ[3]: Կաթողիկոսական կոնդակից

---

[1] **«Սուրհանդակ»**, № 94, 16 ապրիլի 1910 թ.:

[2] Նույն տեղում, № 129, 16 հուլիսի 1910 թ.:

[3] Տե՛ս **«Արարատ»**, № 11, նոյեմբեր, 1910, էջ 1029:

հետո Կ. Պոլսի Ազգային երեսփոխական ժողովը իր վարչությանը հանձնարարել էր դա ի կատար ածել[1]:

Թվում էր, թե հանրահավաքների հարցն ընդմիշտ փակված է, բայց 1910 թ. ամռանը դա կրկին բորբոքվեց և կրքերը կրկին հուզվեցին: Դաշնակցությունը նոր թափով առաջ քաշեց եկեղեցիներն ակումբների վերածելու պահանջը:

Դրան գումարվեց պատրիարքարանի և Ազգային երեսփոխական ժողովի կողմից Աղթամարի վանքի հետ կապված գործն ի չիք դարձնելու փորձերի դեմ ժողովրդական ընդվզումը:

1910 թ. սկզբին Վանից Պոլսում ստացվել էր տեղեկություն, թե մի քանի «հեղափոխականներ» մտել են Աղթամարի վանքը, կողոպտել արժեքավոր զարդերը, անոթները և նույնիսկ գրչագրերը ու այդ ամենն անհայտ անձանց վաճառել: Էրագրերն ահագին աղմուկով իսկական արշավ սկսեցին հեղափոխականների դեմ: Վերջիններս, պաշտպանվելով, այդ տեղեկությունը իրականությանը չհամապատասխանող հայտարարեցին: Կրքերը գնալով բորբոքվում էին: Բանը հասավ այնտեղ, որ գավառներից լուրեր էին գալիս, թե ժողովուրդը մի չարք տեղերում ուզում է հավատափոխ լինել հեղափոխականների երեսից՝ չկարողանալով տանել այն մեծ անարգանքը, որ նրանք հասցնում են Հայոց եկեղեցուն:

Հարցի ծագման սկզբից Կ. Պոլսի Ազգային ժողովը քննություն էր նշանակել, բայց Թուրքահայերի Ազգային կեդրոնական վարչությունն ամիսներ շարունակ չէր կարողանում պաշտոնապես հայտարարել եղելության մասին: Թանաքի ծով թափվեց այդ առիթով, գրգռվեցին կրքերը, խորացող թշնամությունը թունավորում էր ժողովրդի հասարակական կյանքը:

Այդպիսով, եկեղեցու նկատմամբ անօրինականություններին միացել էր Աղթամարի վանքին վերաբերող քրեական գործը, որին ընթացք չէր տրվում: Դա առաջ բերեց, զանգվածների

---

[1] Տե՛ս **«Արարատ»**, № 11, նոյեմբեր, 1910, էջ 1029:

ավելի ուժգին դիմադրությունը: Իր հերթին, էջմիածինը հետևողական գտնվեց: Ոգևորված նրա հստակ դիրքորոշումով, Թուրքիայի հայ հավատացյալները զանգվածային նոր ցույցերի դիմեցին: Շատ տեղերում նրանք վաղ առավոտից շրջապատում էին եկեղեցիները և «պոլիտիկոսներին» արգելում էին մուտք գործել ներս: Թուրքահայ ու կովկասահայ պարբերական մամուլն այս անգամ ավելի ուժգին քննադատության տակ առավ չլսված երևույթը:

Տեսնելով գնալով նոր թափ առնող պայքարը, դաշնակցականները տեղի տվեցին և 1910 թ. ամռան վերջին հրաժարվեցին անմիտ ձեռնարկից: Հոգևորականներն ու հավատացյալները տեր կանգնեցին իրենց եկեղեցիներին և չիկացած կրքերն աստիճանաբար հանդարտվեցին: Բայց դրա համար թուրքահայությունը թանկ վճարեց:

Հանրահավաքների մասնակիցների առաջ եկեղեցու դռները «բացել թե փակելու» չարաբաստիկ հարցի արծարծումը սեփական մատով սեփական աչքը հանելու նման մի բան էր: Ինչո՞ւ փոթորիկ բարձրացվեց մի բաժակ ջրում և ողջ հասարակությունը զբաղեցվեց մի ողորմելի հարցով: Եվ դա այն ժամանակ, երբ ժողովուրդը ձեռքից գնում էր: Այդ ամոթալի պահին հայոց «երևելիները» նման էին հունաց այն վերջին կարճամիտ կայսրին, որը, երբ թուրքերն արդեն շրջապատել էին Կ. Պոլիսը և մի քանի ժամ հետո պիտի գրավեին քաղաքը, իր շուրջը ժողոված հույն հոգևորականների հետ վիճում էր, թե «արդյոք սուրբ հոգին Որդո՞ւց է բխել, թե՞ Հորից»:

«Բաց ու գոցի» հոռի հարցի բուռն քննարկումները մի կողմ էին թողել այդ օրերի համար հույժ կարևոր այնպիսի խնդիրների արծարծումը, ինչպիսիք էին հողային հարցը, քրդական խավերում գաղտնաբար ծավալվող հետադիմական շարժման սպառնալիքին դիմակայելը, ցավատանջ ժողովրդի գլխին մշտապես կախված դավանափոխության օրեցօր աճող վտանգի դեմ միջոցներ փնտրելը և այլն:

Այն ժամանակ, երբ թուրքահայոց բանիբուն մասը զբաղ-

ված էր ներքին կռիվներով և երկպառակությամբ, այդ նույն ժամանակ երիտթուրքական «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցությունն ավարտին էր հասցնում թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանության՝ թուրքիզմի մշակումն ու վերջնական տեսքի բերումը: Ինչպես հետագայում պարզվեց, այդ մարդատյաց գաղափարաբանության գլխավոր նպատակներից մեկը հայ ժողովրդի բնաջնջումն էր և նրա հազարամյակների հայրենիքի հափշտակումը:

ԹՈՒՐՔԻԶՄ

Մինչ հայերը մտածում էին, թե ինչպե՛ս փրկեն իրենց եկեղեցին ու ազգային հաստատությունների փչրանքները, թե ի՞նչ միջոցներով պահպանեն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն ու նրա կառավարությունը հույժ գաղտնի պայմաններում ձեռնարկել էին վճռելու բանից անտեղյակ ժողովրդի ապրելու, թե մեռնելու հարցը:

Դեպքերն արագ էին զարգանում: Երիտթուրքերի առջև ողջ հասակով ցցվել էր կայսրության ապագայի խնդիրը, որը եթե նախկինում նրանց համար զուտ տեսական-գաղափարական նշանակություն ուներ, ապա այժմ հրապարակ էր գալիս որպես օրվա հրատապ անելիք:

Թուրք ազգային բուրժուազիայի գործունեության գլխավոր ելակետը թուրքական կայսրության պահպանման մտահոգությունն էր: Նա քաջ գիտակցում էր, որ բռնակալական հիմքի վրա ստեղծված և գոյությունը չարունակող պետության մեջ սահմանադրություն մտցնելը կատակ չէ, որ դա դանդաղ գործող ական է այդ պետության տակ: Նրանք նաև մտածում էին, որ եթե ազատության դռները բացվեն, ապա այլազգի ժողովուրդները օսմանյան բանտից այս ու այն կողմ կփախչեն: Ուստի գտնում էին, որ կայսրության մեջ նրանց պահելու համար բանտի դռների փոխարեն պետք է մի ուրիշ պատնեշ բարձրաց-

նել, և դա թուրքական ազգայնականությունն էր՝ թուրքիզմը, որը նրանք բարձրացրին օսմանյան դրոշի վրա:*

Մինչև ուղն ու ծուծը ազգայնամոլական ախտով վարակված, ահագին աղմուկով թատերաբեմ իջած երիտթուրքական Իթթիհադ կուսակցությունն իր էությամբ լինելով թուրք ազնվականության ու նոր բարձրացող բուրժուազիայի ծնունդ, օսմանյան հարստության պաշտպան ու երկրի չահագործող դասակարգերի ներկայացուցիչ, իշխանության գալու առաջին իսկ օրերից իրեն հռչակել էր Թուրքիայի վերածնության միակ առաքյալը:

Թեև երիտթուրքերը ներքուստ պառակտված էին և մատնված մեծ տագնապների, բայց հենց որ նրանք հաջողում էին մի պահ ու մի կերպ դարմանել ներքին երկպառակությունները, ապա անմիջապես զենքերը դարձնում էին իրենց երկրի ոչնչացման տարրերի դեմ:

Առանց ուսումնասիրելու Օսմանյան տերության բազմազան ցավերը, առանց հանգամանորեն ծանոթանալու այնտեղ ապրող տարբեր ժողովուրդների ներքին կյանքին, առանց վերլուծելու երկրում գոյություն ունեցող սոցիալական երևույթները և յուրացնելու գիտական ամենատարրական ճշմարտությունները, միաժամանակ կոթնած զինվորականության ուժին, Իթթիհադը կամեցավ մի հարվածով լուծել այն կնճռոտ խնդիրները, որոնք տխուր ժառանգություն էին մնացել հին ռեժիմից և անմիջական լուծում էին պահանջում:

Հպարտորեն պարզած իր հաղթական դրոշը, Իթթիհադն արշավ սկսեց արհամարհելով մնայուն իրողությունները, մոռանալով իշխանության գալուց հետո առաջին օրերին չռայլած խոստումներն ազգերի իրավահավասարության, նրանց լայն ազատություններ տալու մասին: Գոռոզաբար աջ և ձախ սպառ-

---

* *Թուրքիզմի հանգամանալից վերլուծությունը կատարված է մեր «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» (Երևան, 1980) և «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» (Երևան, 1991) մենագրություններում, ուստի այստեղ բավարարվել ենք այդ գաղափարախոսության համառոտ ուրվագիծը ներկայացնելով:*

նալիք կարդալով օսմանցիության անունով, նա գրեթե իր ամբողջ էներգիան գործադրեց արդիականացնելու և մեծացնելու ցամաքային և ծովային զինվորական ուժերը, և հենված բանակի ու նավատորմի վրա, հայրենիքի ամբողջականությունը պաշտպանելու պատրվակով մարտահրավեր նետեց արտաքին ու «ներքին» թշնամիներին: Մի կողմ թողնվեց երկրի բարենորոգման գործն այն պատճառաբանությամբ, թե Օսմանյան կայսրությունը մահացու վտանգի առջև է գտնվում:

Արբած առաջին հաղթանակներով, հենված իրեն հավատարիմ բանակի վրա, իշխող «Միություն և առաջադիմություն» կոմիտեն երկրում հաստատելով կուսակցական դիկտատուրա, Թուրքիայի վերանորոգման համար ընտրել էր ամենադժբախտ ճանապարհը: Նա յուրացրել էր ամենավատթար ազգայնամոլության ամենաարտառոց հավատամքը և ձգտում էր իրականացնել անհնարինը, այն է՝ ձուլել բոլոր այլազան տարրերը օսմանցիության մեջ, ունենալ ոչ միայն միաձույլ մի պետություն, այլև բոլորից ստեղծել մեկ ազգ:

Կայսրության մյուս ազգերին Թուրքերի մեջ բռնի ձուլելու գաղափարը բացահայտորեն հրապարակ էր նետվել Օսմանյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո:

Նոր կարգերի առաջին իսկ օրերից ազգային հարցի լուծման պաշտոնական՝ օսմանիզմի ուսմունքում արդեն երևակված էր Թուրքիզմի գաղափարը:

Այսպես, սահմանադրության վերականգնման տառացիորեն հաջորդ օրն իսկ՝ հուլիսի 12 (25)-ին ելույթ ունենալով Սալոնիկի Ազատության հրապարակում, երիտթուրքերի առաջնորդներից Էնվեր բեյը հրապարակորեն հայտարարել էր, թե «բռնապետական վարչակարգի ոչնչացման հետ միասին Թուրքիայում այլևս գոյություն չունեն բուլղարներ, հույներ, սերբեր, մուսուլմաններ և հրեաներ – նրանք բոլորը օսմանցիներ են»[1]: Եվ, հետևաբար,

---

[1] **Տե՛ս Евгений Викторович Тарле,** *Сочинения, т. V, Москва, 1958, с. 199.* **նաև՝ «Краткие сообщения Института народов Азии»,** *XXX, Иран, Турция, изд-во Восточной литературы, Москва, 1961, с. 161.*

ասում էին երիտթուրքերը, խոսք լինել չի կարող ինչ-որ ազգային հարցի լուծման մասին:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեի 1908 թ. օգոստոսին հրապարակված պաշտոնական քաղաքական ծրագիրը ցրեց ազգային հարցի լուծման մասին ոչ-թուրք ժողովուրդների պատրանքները: Ծրագրի բոլոր հոդվածները նախատեսում էին, որ 1876 թ. սահմանադրության դրույթները տարածվում են միայն «օսմանցիների» վրա, հենց դրանով էլ ժխտում էին այլ ժողովուրդների գոյությունը Օսմանյան կայսրությունում: Պետական լեզու հռչակվեց թուրքերենը. դրանով պետք է վարվեին պաշտոնական գրությունները և ժողովները: Բոլոր «օսմանցիներին» միասնական ծրագրով ուսում տալու նպատակով կրթության ամբողջ համակարգը ենթարկվելու էր պետության տնօրինությանը: Ընդ որում՝ բոլոր դպրոցներում դասավանդումը պետք է կատարվեր միայն թուրքերենով[1]:

Օգոստոսյան ծրագիրը վավերացնում էր երիտթուրքերի վերցրած կուրսը, այն է՝ հաստատել կենտրոնական իշխանություն «թուրքական տիրապետության հիման վրա»[2]:

«*Новое Время*», ռուսական թերթը 1908 թ. օգոստոսին գրում էր, որ «այժմ, երբ իշխանությունը փաստորեն անցել է երիտթուրքերի ձեռքը, նրանք ցույց տվեցին իրենց իսկական դեմքը՝ թունդ ազգայնամոլական... Օսմանյան կայսրության միասնության համար, նրանց կարծիքով, պետք է ոչնչացվի այն ամենը, ինչը կարող է հանգեցնել ազգային անջատողականության: Երիտթուրքական ծրագիրը չի թույլատրում ինքնավարման սկզբունքը, ինչպես նաև չի թույլատրում ուսումնական հաստատություններում դասավանդումը թուրքերենից տարբեր որևէ այլ լեզվով»[3]:

Սեպտեմբերի վերջին երիտթուրքերը հրապարակեցին մանրամասն քաղաքական ծրագիր, որտեղ նորից հաստատեցին

---

[1] *АВПР, ф. Посольство в Константинополе, 1908, д. 2307, лл. 52-55.*

[2] ***"Краткие сообщения института народов Азии"**, XXX, Иран, Турция, с. 165.*

[3] *АВПР, ф. Пресса, 1908, д. 225, л. 59.*

իրենց նվիրվածությունը ոչ-թուրք ժողովուրդների ձուլման քաղաքականությանը[1]: Երիտթուրքական շարժման հայտնի գործիչ Հուսեյն Ջահիդ բեյը 1908 թ. վերջին գրում էր. «Ինչ էլ ուզում է լինի, Թուրքը երկրում գերիշխող ազգն է և կմնա գերիշխող»[2]:

Երիտթուրքերի ազգայնամոլությունն ամբողջովին դրսևորվեց Էնվեր բեյի ու մակեդոնական հեղափոխական կազմակերպության առաջնորդներից մեկի՝ Մարտովի 1908 թ. վերջին տեղի ունեցած զրույցում: Էնվեր բեյը զրույցի ընթացքում հայտարարել էր, որ «չի կարող խոսք անգամ լինել ... ազգային ուսումնական հաստատությունների ինքնուրույն զարգացման մասին: Դպրոցները պետք է լինեն միայն թուրքական և ապագա պետական գործունեության համար պատրաստեն միայն օսմանցիների ... Օսմանյան կայսրության միասնությունը պետք է ոչնչացնի այն ամենը, ինչը կարող է հիշեցնել ազգայինը»[3]:

Էնվերի մտքերին լիովին համամիտ էր Թրքության գաղափարաբաններից Ալի Քեմալը, գրելով. «Իսլամ Թուրքը գաղափարական միացումի գործիքն է, նա կը տրորի կամքերը, վերջ կը դնի ազգութիւններին, նրանց կը չաղախի եւ կը դնի հաւասարութեան մակարդակի վրայ»[4]:

Հեղափոխության հաղթանակից հետո հենց առաջին ամիսներին բացահայտորեն դրսևորվեց նաև իշխան Սաբահէդդինի խմբի ազգայնամոլական էությունը: 1908 թ. սեպտեմբերին ելույթ ունենալով Բերայի թատրոններից մեկի դահլիճում, Սաբահէդդինը հայտարարել էր, թե իր կուսակցության («Ապակենտրոնացման լիգա») ծրագիրը նախատեսում է, որ Օսմանյան կայսրության մեջ կրթությունը պետք է լինի միայն թուրքերեն: Նա պաշտպանում էր «Միություն և առաջադիմություն» կոմիտեի՝ կայսրության ոչ-թուրք ժողովուրդների ձուլման կուրսը: Սաբահէդդինը հռչակեց. «Հետ այսու Օսմանյան կայսրության

---

[1] **"Красный архив"**, т. 1, Москва, 1931, с. 16-17.

[2] **Э. Найт,** Революционный переворот в Турции, Москва, 1914, с. 189-190.

[3] **"Краткие сообщения института народов Азии", XXX,** Иран, Турция, с. 166.

[4] **«Հնչակ»** (Փարիզ), № 1, մայիս, 1914, էջ 9:

բոլոր բնակիչները՝ հույները, ալբանացիները, հայերը, արաբները ... կազմում են միայն մեկ ազգ՝ քսան միլիոնանոց օսմանյան ազգ»[1]:

Նույն միտքն այսպես էր արտահայտում երիտթուրքական շարժման խոշոր գործիչ Նիյազի բեյը. «Մեր քրիստոնյա հայրենակիցները պետք է լինեն օսմանացված քաղաքացիներ»[2]: Երիտթուրքերը «հայրենիքի դավաճան» էին համարում յուրաքանչյուրին, ով խոսում էր մակեդոնական բարենորոգումների, հայկական վիլայեթների, հունական դպրոցների մասին, ով հիշատակում էր արաբների անցյալ փառապանծությունը[3]:

Երիտթուրք պարագլուխների մոտ «օսմանցիությունը» նույնանում էր «թուրքիզմի» հետ: Նրանք չէին թաքցնում, որ «օսմանացում» ասելով իրենք հասկանում են պայքար ոչ-թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման դեմ: 1909 թ. փետրվարի 16-ին հանդես գալով ծրագրային մի ճառով՝ մեծ վեզիր Հուսեյն Հիլմի փաշան հայտարարել էր. «Մենք անողոքաբար կպայքարենք բոլոր նրանց անջատողական միտումների դեմ, ովքեր կձգտեն անկախության»:

1909 թ. մարտի 31-ի արդուլհամիդյան հակահեղափոխական խռովության ճնշումից հետո երիտթուրքերը, չնայած կայսրության ժողովուրդների խոր դժգոհությանն ու ազատագրական պայքարի աճին, չարունակեցին կատաղի ազգայնամոլական քաղաքականություն վարել: Բոլոր ոչ-թուրք ժողովուրդների օսմանացման (թուրքացման) իմաստը ցայտուն բացահայտված էր Թալեաթ բեյի՝ 1909 թ. օգոստոսի 6-ին Սալոնիկում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ արտահայտած մտքերում: Նա ասում էր, որ չնայած սահմանադրության համաձայն սուլթանի բոլոր հպատակները, ինչպես մուսուլմանները, այնպես էլ քրիստոնյաները իրավահավասար են օրենքի առաջ, բայց իրականում «մեր հայրենիքում» որևէ հավասարության մասին

---

[1] АВПР, ф. Полит. архив, д. 1030, лл. 179-180.

[2] **"Краткие сообщения института народов Азии"**, XXX, Иран, Турция, с. 164.

[3] Նույն տեղում:

խոսք անգամ չի կարող լինել մինչև այն օրը, երբ կավարտվի բոլոր այլազգի հպատակների Թուրքացումը: Այդ խնդրի լուծումը, իհարկե, կլինի դժվարին և կպահանջվի երկար ժամանակ, քանի որ հատկապես քրիստոնյաներն ընդդիմանում են և որևէ կերպ չեն ցանկանում Թուրք դառնալ[1]:

Այդ գաղափարը Թալեաթ փաշան Է՛լ ավելի զարգացրեց Սալոնիկում 1910 Թ. օգոստոսին տեղի ունեցած իթթիհադ կոմիտեի տեղի բաժանմունքի նիստերում: «Դուք գիտեք,- ասել էր նա,- որ ըստ սահմանադրության, մուսուլմաններն ու քրիստոնյաններն իրավահավասար են [մեր կայսրության մեջ]», բայց այդ գաղափարն իրական չէ, քանի որ անհավատներն ընդդիմանում են իրենց օսմանացման մեր փորձերին: Շարիաթը, մեր ամբողջ անցյալ պատմությունը, հարյուր հազարավոր մուսուլմանների զգացմունքները, ինչպես նաև քրիստոնյաների դիմադրությունը անհաղթահարելի խոչընդոտ են իսկական հավասարություն հաստատելու ճանապարհին: Մենք փորձեցինք անհավատներին օրինապահ օսմանցիներ դարձնել, բայց իզուր: Այդ ուղղությամբ ապագայում էլ մեր բոլոր ջանքերը կտապալվեն, քանի դեռ վերջ չի դրվել Մակեդոնիայի քրիստոնյաների անջատողական գաղափարների քարոզչությանը: Հետևաբար հավասարության մասին խոսք լինել չի կարող մինչ այն ժամանակ, քանի դեռ մենք Օսմանյան կայսրության քրիստոնյաների օսմանացման գործում հաջողության չենք հասել»[2]:

1910 Թ. փետրվարի կեսերին պատգամավոր Ֆերիդ փաշան խորհրդարան ներկայացրեց մի օրինագիծ, որը նախատեսում էր 1876 Թ. գործող սահմանադրության հետագա փոփոխությունը օսմանիզմի ոգով: Բացատրելով նոր օրինագծի ընդունման անհրաժեշտությունը՝ նա նշում էր, որ սահմանադրությամբ տրված իրավունքները և ընտրությունների գործող համակարգը կարող են հանգեցնել այն բանին, որ «պատգամավորների մեծամասնությունը կազմվի ոչ-Թուրք ազգերից...»: «Բայց չէ՞

---

[1] ***Տե՛ս Джемаль–паша,*** *Записки Джемаль паши (перевод с английского), Тифлис, 1923, с. 80.*

[2] ***"Армянский Вестник",*** *Москва, 1916, № 1, с. 5.*

որ,- չեչտում էր նա,- Թուրքական կայսրության հիմքը միշտ եղել և պետք է մնա Թուրքերի գերիշխանությունը բոլոր այլազգիների վրա»[1]:

Երիտթուրքերի օսմանացման (Թուրքացման) կուրսը բացահայտորեն հռչակվեց նաև 1910 Թ. սկզբին ձևավորված Իբրահիմ Հակկը փաշայի դահլիճի ծրագրում[2]:

Միություն և առաջադիմություն կոմիտեի՝ 1911 Թ. հոկտեմբերի երիտթուրքական կոնգրեսին ներկայացրած զեկուցման մեջ, նշված էր, որ կայսրության բոլոր հպատակների լիակատար օսմանացումը (Թուրքացումը) վաղ Թե ուշ պետք է ավարտել: Այլազգիները պետք է զրկվեն ինքնավարությունից, քանի որ ապակենտրոնացումը և ինքնավարությունը դավաճանություն են Թուրքական կայսրության շահերին...»[3]:

Թուրքական Պատգամավորական ժողովի «խորագիտակ» նախագահը՝ Ահմեդ Ռիզան նրա նիստերում այս կամ այն պատգամավորին քանիցս սաստել էր, Թե «այստեղ չկա հայ, հույն, բուլղար, բոլորն էլ օսմանցի են»:

Ըստ որում ազգերի ձուլման հարցում երիտթուրքերը տարբերություն չէին դնում քրիստոնյա ժողովուրդների և ոչ-Թուրք մահմեդական ժողովուրդների (արաբներ, քրդեր, ալբանացիներ և այլք) միջև:

*Կ. Պոլսի զինվորական վարժարանի Թուրք դասախոսներից մեկը, իր խոսքն ուղղելով պահեստի սպաներին, ասել էր. «Շուտով պետք է միանաք բանակին և պետք է լինեք մեր հերոս զինվորների հրամանատարները: Սովորեցրե՛ք նրանց, որ իրենք Թուրք են... Վստահ եղե՛ք, որ **Թուրք ազգությունը** ավելի լավ է մեզ համար, քան **մահմեդական կրոնը**»[4]:*

Այդ հավաքին ներկա մի արաբ սպա, իբրև օսմանցի և մահմեդական բողոքել էր արտահայտած մտքերի դեմ: Դրան ի պա-

---

[1] ***"The Ottoman Domination"**, London, 1917, p. 15.*

[2] *Նույն տեղում:*

[3] ***A. Gauvain,** L'Europe au jours, vol. II, Paris, 1917, p. 53-54.*

[4] *Տե՛ս **«Կանչ»** (Պէյրութ), Ապրիլեան բացառիկ, № 219, 26 ապրիլի 1975 Թ., էջ 4:*

տասխան Թուրք դասախոսը բրտորեն ընդհատել էր նրան, ասելով. «Բայց դու և ձեր ազգը պետք է լավ հասկանաք, որ բոլորս Թուրք ենք, որ արաբ ազգության և արաբ հայրենիքի պես բաներ գոյություն չունեն»[1]:

Հակառակ կարծիքի էին ոչ-Թուրքերը:

ԱՄՆ-ում լույս տեսնող «Արագած» Թերթի խմբագիր Լևոն Լարենցը (Լևոն Քիրիչճյան) գրում էր.

«Ինչ որ ալ ըսեն օսմանցիականութեան եւ իրերախառնումի ջատագովները, անուրանալի ճշմարտութիւն մը պիտի մնայ սա՝ թէ Օսմ[անեան] Կայսրութիւնը բաղկացնող ազգերը, ունենալով հանդերձ հասարակաց շահեր եւ խնդիրներ, ունին նաեւ մասնաւոր, առանձնայատուկ ազգային գործեր, որոնք չեն կրնար բաւարարութիւն գտնել ընդհանուր օսմանցիական հողի վրայ: Օսմ[անեան] Կայսրութիւնը կը բաղկանայ ավելի քան տասը բնակակից ազգութիւններէ, որոնք մեծ մասամբ ունեցած են փառաւոր անցեալ մը, ունին իրենց սեպհական պատմութիւնը, գրականութիւնը, կրօնքը, բարքերն ու կեանքի պայմանները. իրենց բնակած գաւառներն անգամ կը տարբերին կլիմայով, աշխարհագրական դիրքով, քաղաքակրթական պայմաններով եւ ապահովութեան աստիճաններով»[2]:*

Ստացվում էր առաջին հայացքից հակասական մի պատկեր: Թուրքերը, լինելով տիրապետող ազգություն, ավելի ու ավելի էին հետ մնում իրենց իշխանության տակ եղած ազգային փոքրամասնություններից: Այդ պատճառով էլ Թուրքական տիրապետությունը մյուս ժողովուրդների նկատմամբ գնալով դառնում էր ավելի ու ավելի անտանելի: Իսկ գլխավորը, բուրժուական ազգի կազմավորման համար տնտեսական նախադրյալ-

---

[1] ***«Կանչ»**, Ապրիլեան բացառիկ, № 219, 26 ապրիլի 1975 թ., էջ 4:*

[*] *Օսմանյան կայսրության բնակչությունը չափազանց բազմազգ էր, ամենախայտաբղետներից մեկն աշխարհում: Այդ պետության հպատակներն էին Թուրքեր, արաբներ, քրդեր, հույներ, հայեր, ալբանացիներ, բուլղարներ, սերբեր, կուցո-վալախներ, հրեաներ և ազգային-կրոնական այլ հավաքականություններ (ալավիներ, դրուզներ և այլն):*

[2] ***«Արագած»**, № 12, 10 օգոստոսի 1911 թ.:*

ներն ավելի չուտ ծագում էին ոչ թե Թուրքերի մոտ, այլ Օսմանյան կայսրության բալկանյան ժողովուրդների և հայերի մոտ:

Երիտթուրքական կառավարող կուսակցության պաշտոնական անունը «Միություն և առաջադիմություն» էր: Այդ անվանման երկու բառերից առաջնայինը դարձել էր «Միությունը»: Ահմեդռիզաների ըմբռնած «միությունը» պարզապես ձուլումն էր: Նրանք ուզում էին իրագործել այն, ինչ բարձր քաղաքակրթություն ունեցող որևէ երկրում մեծամասնություն կազմող ազգն ի վիճակի չի եղել իր մեջ ձուլել այլացեղ փոքրամասնություններին: Իսկ ահա Իթթիհադը միանգամայն հնարավոր համարեց (և հենց այդտեղ են քաղաքագիտական տարօրինակությունը և անհեթեթությունը) շատ կարճ ժամանակում Օսմանյան կայսրության այլազան բոլոր ժողովուրդներին ձուլել «տիրապետող Թրքության» մեջ, թեկուզ այդ այլազան էթնիկ հավաքականությունները Թուրքերից շատ բարձր լինեին իրենց մտավոր հավաքական պաշարով ու մշակութային-քաղաքակրթական բազմադարյա ժառանգությամբ:

Զուր էին հայ, հույն, բուլղար և այլ ազգային հատվածներից անդադար աղաղակներ լսվում, թե «միություն» ասվածը ներդաշնակ այլազանության մեջ պետք է լինի, որ Օսմանյան պետությունը կարող է, իրոք, առաջադիմել ու բարգավաճել միայն այն դեպքում, եթե նրա այլևայլ հատվածները գոնե որոշ չափով վայելեն ազգային ինքնուրույնություն և ինքնավարություն, եթե պատշաճ չափով գոհացում տրվի երկրի այլազան ցեղերի ազգային ու քաղաքակրթական պահանջներին, նրանց իրավունք տրվի տնօրինելու ազգային դպրոցների գործերը:

Բայց այդ բոլոր աղաղակները մնում էին «ձայն բարբառոյ յանապատի»: Ամեն օր Իթթիհադը նորանոր խոչեր ու խութեր էր կանգնեցնում այլազգիների առջև:

Լեզու և դպրոց – ահա՛ այն երկու հիմնական թիրախները, որոնց դեմ ուղղված էին Իթթիհադի նետերը:

Ուշագրավ միջադեպ տեղի ունեցավ օսմանյան խորհրդարանի նիստերից մեկում: Վակըֆների նախարար, ազգությամբ արաբ Շամսէդդին բեյը, զեկուցումն ավարտեց արաբերեն աղոթքով: Թուրք պատգամավորներն անմիջապես հանդես

եկան խորհրդարանում արաբերենի օգտագործման դեմ: Ի նչան բողոքի, արաբական չատ կազմակերպություններ պահանջ ներկայացրին՝ արաբական տարածքներում թուրքերենին համահավասար ճանաչել արաբերենը՝ որպես կայսրության պաչտոնական լեզու:

Այլազգիների մայրենի լեզվի ոչնչացման հիմնական ուղին մայրենի դպրոցների ոչնչացումն էր: Ազգային ներհակ ձգտումներն առաջին հերթին պետք է խեղդվեին հենց դպրոցներում: Իթթիհադը քաջ գիտակցում էր, որ ազգային դպրոցը ոչ միայն սրբագործում է մայրենի լեզուն, այլև հզորացնում է որևէ ազգի հոգևոր և նյութական կարողությունները:

Տիգրանակերտից 1910 թ. դեկտեմբերին Թիֆլիսի «Հորիզոն» թերթին հաղորդում էին, որ իչխանություններն ամբողջովին իրենց ձեռքն են առել տեղի այլազգիների, հատկապես հայերի և հույների վարժարանները[1]:

Կրթական նախարարությունն այլևս որևէ ուչադրություն չէր դարձնում հայոց պատրիարքարանի բողոքներին, և հայտարարում էր, թե վերջինս այլևս իրավասություններ չունի հայոց դպրոցների նկատմամբ: Ելնելով դրանից, նախարարությունը վիլայեթների կրթական տեսչություններին հրաման էր տվել, որ ուսումնական հարցերով նրանք դիմեն ոչ թե հայոց առաջնորդարաններին, այլ ուղղակի վարժարանների տնօրեններին կամ նույնիսկ ուսուցիչներից որևէ մեկին[2]: Նաև հրաման էր իջեցված պատժի ենթարկել հայոց դպրոցների այն տնօրեններին, որոնք իրենց գործունեության մասին հաչվետվություն կներկայացնեն ազգային առաջնորդարաններին:

Վանի «Աչխատանք» թերթը ցավով նչում էր. «... Ազգերու գոյութեան ազդակներէն մէկը՝ կրթական հարցը դամոկլեան սուրի պէս կախուած կը մնայ դեռ մեր գլխի վրայ...»[3]: Բայց դա վերաբերում էր ոչ միայն հայերին, այլև կայսրության բոլոր ոչթուրք ազգություններին: «Այնքան տժգոհութիւններն ու բո-

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 281, 17 դեկտեմբերի 1910 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] **«Աչխատանք»**, № 27, 7 օգոստոսի 1911 թ.:

ղոքները կրթական հարցի վերաբերեալ դեռ կը մնան անհետեւանք, եւ այդ պատճառով դէմ-դէմի կանգնած են կառավարութիւնն ու իրաւազրկւած ազգութիւնները»[1]:

Աննախադեպ ճնշում գործադրելով այլազգիների հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտների վրա, երիտթուրքերը մյուս կողմից փորձում էին թուրքերի մտածելակերպն ու ապրելակերպը քարշ տալ դեպի անցյալ: Նյու Յորքի «Արագած» թերթը գրում էր. «Արեւմուտքի քաղաքակրթութիւնը Թուրքիոյ մէջ մտցնելով հանդերձ» նրանք ձգտում են «անաղարտ պահել թուրք ազգի հանրային բարոյականը եւ ազգային ու կրօնական բարքերը»[2]: Իր հերթին, չեյխ-ուլ-իսլամը հրաման էր արձակել, որ թրքուհիները պետք է իրենց ազգային տարազը կրեն: «Ասիկա քար մըն է արձակուած եւրոպական քաղաքակրթութեան երեսն ի վեր»[3],- ամփոփում էր «Արագածը»:

«Անկարող լինելով տալ ազգային հարցին նպատակահարմար և բավարար լուծում,- նշում էր Լեոն,- երիտասարդ թրքությունը մնում էր կաչկանդված այն նախապաշարմունքի մեջ, որ ստեղծվել էր նրանց նախահայրերի նեղմտությունից: Այդ այն էր, որ հավատում էին, թե թուրքիայի դժբախտությունը նրա մեջ ապրող տարբեր ազգություններն են, ոչ միայն այլակրոնական, ուրիշ խոսքով, ոչ-մահմեդական, այլև կրոնակից, բայց այլացեղ (օրինակ՝ քրդերը, արաբները)»: Այս պատճառով կուսակցությունը որոշում էր ամեն ջանք գործ դնել պետությունը միատարր թուրքական դարձնելու համար: «Եվ այս ուղղությունը դարձնում էր երիտասարդ թուրքերի կուսակցությունն ավելի ևս թունդ, անհամբերող նացիոնալիստական»[4]:

1910 թ. հոկտեմբերի 13-ին Սալոնիկում բացվեց Իթթիհադ կուսակցության հերթական համագումարը, որը տևեց 13 օր: Դա այն ժամանակ էր, երբ այլևս «Միություն և առաջադիմություն» կոմիտեն երկրի ճակատագրի լիակատար և միահեծան տերն էր:

---

[1] ***«Աշխատանք»**, № 27, 7 օգոստոսի 1911 թ.:*

[2] ***«Արագած»**, № 2, 1 հունիսի 1911 թ.:*

[3] *Նույն տեղում:*

[4] ***Լեո**, Անցյալից, էջ 239-240:*

Համագումարի օրակարգի հիմնական հարցը Թուրքերի մեջ կայսրության այլազգիներին ձուլելու խնդրի բազմակողմանի քննությունն էր: Ելույթ ունեցողներից ոմանք համոզմունք էին հայտնում, որ երկրի այլազգի ժողովուրդների Թուրքացումն այնքան էլ դժվարին գործ չէ, ինչպես պատկերացնում են շատերը: Նրանք այդ համոզմունքը փորձում էին հիմնավորել՝ դիմելով եվրոպական օրինակների: Ընդ որում՝ նրանց աչքի առջև ուրվագծվում էին ոչ Թե պետության կառուցվածքի ֆրանսիական կամ անգլիական, այլ գերմանական և ավստրիական մոդելները, որոնք խԹանել էին այդ երկրներում բնակվող սլավոնների և այլ ազգությունների ձուլումը գերմանացիների մեջ: Բայց այդպես մտածողները հաշվի չէին առնում, որ այդ ձուլումը կատարվել է երկար տասնամյակների և դարերի Թավալքի մեջ, իսկ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն Թուրքիայում այդ բանն ուզում է անել երկու-երեք տարիների ընԹացքում:

Բայց, իհարկե, համագումարի պատվիրակների մեծ մասը քաջ գիտակցում էր, որ իրենց բռնած գործը մինչև վերջ հասցնելը հեշտ չի լինելու, և դրա համար բոլոր հիմքերն ունեին: Սրանք կասկած չունեին, որ երկրի քրիստոնյա բնակչությունը երազում է փլուզված տեսնել կայսրությունը և ապրել անկախ կյանքով: Զէ՞ որ արդեն 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին տասնամյակում ապստամբությունների, արյունալի բախումների, զանգվածային անհնազանդությունների հետևանքով Թուրքիայից անջատվել էին մի չարք ազգային տարածքներ՝ Հունաստանը, Սերբիան, Ռումինիան, Բուլղարիան, Բոսնիա-Հերցեգովինան: ՀերԹը գալիս էր Մակեդոնիային: Մեծ տերությունները Թուրքերին Եվրոպայից վերջնականապես դուրս քշելու նպատակ էին հետապնդում: ՀերԹի էին կանգնած նաև Ալբանիան, բուն Արաբիան, Սիրիան, Պաղեստինը, Փոքր Ասիան՝ ներառյալ Հայաստանը: ԵԹե դրան ավելացնենք, որ դրուզները և քրդերը նույնպես փաստորեն չէին ճանաչում օսմանյան գերիշխանությունը, ապա պատկերը լիովին պարզ կլինի:

ԵլույԹներում չեշտվում էր, որ կայսրության ոչ-Թուրք ազգերից որևէ մեկը չպիտի երազի անգամ մշակութային պարզ ինքնավարության մասին, քանի որ ինքնավարություն տալ նշա-

նակում է կայսրությունը բաժան-բաժան անել: Այդ հեռանկարը նրանք պայմանավորում էին այն բանով, որ այլազգի մեծ թվով բնակիչներ ունեցող նահանգները գտնվում են եվրոպական այս կամ այն պետության մշակութային ու տնտեսական ազդեցության տակ, և եթե նրանց ազատություն տրվի, ապա չատ արագ ու հեչտ կկտրեն իրենց կապը կենտրոնի հետ[1]:

Ազգային հարցում Իթթիհադ կուսակցության քաղաքական հայեցակարգը «գիտական» բազմակողմանի հիմնավորում ստացավ թուրքիզմի գաղափարախոսների գրվածքներում ու ելույթներում: Դրանք էին՝ Մեհմեդ Զիա բեյը, Յուսուֆ Աքչուրան, Իսմայիլ Հակկը, Ջելալ Նուրին, Ահմեդ Ռեֆիքը, Խալիդե Էդիբը և ուրիշներ:

Թուրքերի համար արդեն ավանդական դարձած հակահայկական քաղաքական քարոզչությանը երիտթուրքական իշխանությունն ավելացրել էր հայության դեմ ուղղված ռասայական-կենցաղային քարոզչությունը, որի նպատակն էր նրան ներկայացնել որպես ոչ-լիարժեք ժողովուրդ: Այդ մղումով, երիտթուրքական խմբագրությունները փնտրում և գտնում էին հայության մասին արտահայտած յուրաքանչյուր բացասական կարծիք և դա պարբերականների էջեր հանում:

Օրինակ՝ նորվեգիացի հայտնի գրող Կնուտ Համսունը մի քանի տարի առաջ ճանապարհորդել էր Կովկասում և իր տպավորությունները հրատարակել «Հեքիաթային երկրում» գրքում: Ապա նա եղել էր Կ. Պոլսում, բավական ժամանակ մնացել այնտեղ և, վերադառնալով Նորվեգիա, լույս էր ընծայել «Կիսալուսնի տակ» գիրքը: Այդ երկու գրքերում հեղինակը անդրադարձել էր նաև հայերին:

«Հեքիաթային երկրում» գրքում Կնուտ Համսունը հայերին չատ թռուցիկ անդրադարձել էր միայն մի տեղում, գրելով. «Նրանք (հայերը:- Հ. Ս.) այստեղ վաճառում են զենքեր և ամբարտավանորեն խաբում են գնորդներին, ինչպես աշխարհում ամեն տեղ մեզ ասում էին, թե հրեան կարող է խաբել տասը

---

[1] **Անդրէ Ամուրեան**, Հայ դատ: Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, էջ 23:

հույնի, իսկ հայը խաբում է և՛ հույներին, և՛ հրեաներին»[1]:

Այս՝ «Կիսալուսնի տակ» գրքում հեղինակն արդարացնում էր Աբդուլ Համիդի բարբարոսությունները քրիստոնյաների նկատմամբ, քանի որ սրանք անկախության էին ձգտում: Նա գրում էր, որ սուլթանը միշտ խնայել է իրեն հավատարիմ քրիստոնյաներին: Մինչև հայկական ապստամբությունը՝ մայրաքաղաքի բարձր պաշտոնյաների 25 տոկոսը հայեր են եղել: Ամենից ազդեցիկ մարդիկ կայսրության մեջ՝ հայերն ու հույներն են: Օսմանյան կայսրությունում հողային կալվածների երեք քառորդ մասը նույնպես պատկանում է քրիստոնյաներին:

«Արեւելքի վաճառականութեան մէջ հայերը հրեաների դերն են կատարում: Սրանք խցկւում են ամէն տեղ, դուք նրանց կհանդիպէք Բալկաններից մինչեւ Չինաստան: Տաճկաստանում նրանք այդ երկրի զաւակներին քշում են ամէն տեղից եւ գրաւում նրանց տեղերը: Նրանք իրենց ձեռքն են ձգում առեւտուրը, վարկային գործարքները եւ փողը: Կատարեալ վամպիրներ: Մինչ արեւմտեան լրագրերն արցունք են թափում հայերի համար, Արեւելքում շատ անգամ կլսէք, որ այդ վիճակին նրանք արժանի են, որ նրանք իրենցից ներկայացնում են իբրեւ սրիկաների լաւ կազմակերպւած մի բանակ»[2],- գրել էր Համսունը:

Այս և նմանօրինակ ուրիշ հրապարակումներ երիտթուրքական թերթերի էջեր էին բարձրանում հատկապես Իթթիհադի 1910 թ. համագումարին նախորդած և հաջորդած ամիսներին:

Կայսրության մեջ ազգային խնդիրների քննարկումից հետո Իթթիհադի համագումարն այնուհետև առանձին և հատուկ անդրադարձավ Հայկական հարցի հանգամանալից քննությանը: Այս մասին հանդես եկավ Իթթիհադի ղեկավարներից բժիշկ Նազիմը:

Նշելով, որ կայսրության «անկումն այնքան է առաջացել», որ «մեր նախկին հպատակ բոլոր քրիստոնեայ ողորմելի ժողովուրդները՝ ռումինները, սերբերը, յոյները, բուլղարները արդէն անջատւած են ... եւ որ մեր սահմանները ցամաքամասի վրայ

---

[1] **«Հորիզոն»** № 262, 12 նոյեմբերի 1910 թ.:

[2] Նույն տեղում:

վերստին ընդարձակելու յոյսերն ամբողջապէս չքացել են», Նազրմն ասում էր. «Պիտի հաշտուենք, ուզենք թէ չուզենք, այդ կացութեան հետ, ընդունելով, որ դրանից յետոյ մեր հայրենիքը միայն ու միայն կարող է լինել Անադոլուն...»[1]: Տալով հայության «խնդրի լուծման» երիտթուրքական տարբերակի տեսական հիմնավորումը, Նազրմն այնուհետև նշում էր. «Այս պահին կարեւորը մեզ համար գաղափարի ոչ թէ տեսական վերլուծումները եւ հիմնաւորումներն են, այլ՝ նրա իրականացման գործնական միջոցների ճշտումը»[2]:

Երիտթուրքերի այդ նշանավոր համաժողովը մշակեց ու վերջնական տեսքի բերեց թուրքիզմի «գործնական» հետևողական գիծը. կայսրության բոլոր հպատակների իսլամացումն ու թուրքացումը պաշտոնապես հռչակվեց իբրև պետական քաղաքականություն:

Այս տեսանկյունով էլ համագումարը մի շարք որոշումներ ընդունեց, որոնցով առաջարկեց ձուլման քաղաքականության միջոցները: Ահավասիկ դրանցից մի քանիսը՝ երկրում խստագույնս արգելել ազատամիտ գաղափարների տարածումը. կայսրության քրիստոնյա ազգաբնակչությանը լիովին զինաթափ անել, իսկ մուսուլմաններին, այնտեղ, որտեղ նրանք փոքրամասնություն են կազմում, գաղտնապես զինել. հասնել այն բանին, որ պետական բոլոր կարևոր պաշտոնները վարեն միայն թուրքերը. Թուրքիայում պետք է խոսել միայն թուրքերեն. Թուրքիան պետք է ունենա լիակատար իսլամական նկարագիր, այդ նպատակով նպաստել իսլամական տարրի գերակշռությանը մինչև իսկ այնտեղ, որտեղ նա մինչև այժմ փոքրամասնություն է կազմել, մյուս բոլոր լեզուներն ու կրոնները պետք է ասպարեզից անհապաղ վերանան. բոլոր միջոցները գործի դնել, որպեսզի քրիստոնյաները չկարողանան անչարժ սեփականություն ձեռք բերել. զորահավաքի ենթարկել բոլոր ուժերը՝ ազգային շարժումներն արագորեն ջախջախելու համար. ապակենտրոնաց-

---

[1] **Անդրէ Ամուրեան**, *Հայ դատ: Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, էջ 24:*

[2] *Նույն տեղում, էջ 25:*

ման գաղափարի արծարծումն անգամ համարել Թուրքական հայրենիքի դեմ դավաճանություն:

Ոչ-Թուրք ժողովուրդներին Թուրք ժողովրդի մեջ որքան հնարավոր է արագ ձուլելու և եթե դա չհաջողվի՝ նրանց ֆիզիկապես ոչնչացնելու մարդատյաց գաղափարը հետագա զարգացում ստացավ մեկ տարի հետո դարձյալ Սալոնիկում տեղի ունեցած համաժողովում:

Ավելի ուշ սկսեցին լուրեր տարածել՝ թե պատրաստվում են նոր հայկական ջարդեր Թուրքիայում: Ջարդեր չեղան, բայց հայտնի է, որ առանց կրակի ծուխ չի լինում: Գերմանական աղբյուրները հաղորդում էին, որ հենց այդ ժամանակ երիտասարդ Թյուրքերի կուսակցական ընդհանուր ժողովը որոշում էր իրագործել «Թյուրքիան Թյուրքերի համար» սկզբունքը, այսինքն՝ Թյուրքացնել, լեզվի միջոցով, Թյուրքիայի ամբողջ խալամ ազգաբնակչությունը: Հայերի և ուրիշ այլակրոն ցեղերի մասին խոսք անգամ չէր կարող լինել, որոնք պիտի ջարդերի միջոցով վերացվեին մեջտեղից[1]:

Թալեաթն ասում էր, որ թեև սահմանադրության համաձայն բոլոր Թուրքահպատակները՝ թե՛ մուսուլման, և թե՛ քրիստոնյա, հավասար են, օրենքի առաջ: Բայց դա գործնականում անիրագործելի է: Այդ գաղափարը նախ և առաջ հակասում է չարիաթին, դրան հակասում էր նաև Թուրքերի անցյալը: Դրա դեմ բողոքում է հարյուր հազարավոր հավատացյալների զգացմունքը: Թուրքիայում հավասարության մասին այն ժամանակ միայն կարելի է խոսել, երբ բոլոր օտար տարրերը կձուլվեն և օսմանցի կդառնան[2]:

Թուրք ազգային բուրժուազիայի կողմից երկրի ներսում Թուրքականության դրոշի բարձրացումը նրա քաղաքական գործունեության յուրատեսակ դրսևորումներից մեկն էր: Իհարկե,

---

[1] *Տե՛ս* ***Լեո,*** *Անցյալից, էջ 241: Նկատել տանք, որ այն ժամանակ, երբ երիտԹուրքերը կարողացել էին իմանալ հայկական կուսակցությունների բոլոր գաղտնիքները, այդ նույն ժամանակ վերջիններս միանգամայն անտեղյակ էին հայությանը ֆիզիկապես ոչնչացնելու Իթթիհադի մարդատյաց ծրագրից:*

[2] ***Մուշեղ եպիսկոպոս [Սերոբեան],*** *Հայկական մղձաւանջը: Քննական վերլուծումներ, Պոսթոն, 1916, էջ 42:*

դա վերջին հաշվով թելադրված էր թուրք ազգի ձևավորման բնապատմական օրինաչափ ընթացքով, որը, ինչպես հայտնի է, ընդհանրական է: Ազգայնականության դրոշով հանդես եկող բոլոր երկրների բուրժուազիային հատուկ է ազգի ձևավորման ընթացքի արագացման, իր «ազգային» տարածքի վրա միասնական ազգային պետություն ստեղծելու գաղափարը էթնիկական միատարրություն ստեղծելու գաղափարի հետ սերտորեն շաղկապելու, այդ երկու գաղափարների իրականացումը միմյանցով պայմանավորելու բուռն ձգտումը: Մինչ այն ժամանակ, երբ բուրժուազիան փորձում է այդ խնդիրը լուծել խաղաղ միջոցներով, կապիտալիստական հարաբերություններին հատուկ տնտեսական-հասարակական կյանքի ինտերնացիոնալացման օրինաչափ ընթացքով ստեղծված նպաստավոր իրավիճակն օգտագործելու ճանապարհով, մինչ այդ ժամանակ բուրժուական ազգայնականությունը (նացիոնալիզմ) իր վրա դրական լիցքեր է կրում: Բայց երբ տիրող ազգի բուրժուազիային չի հաջողվում իր ազգի ձևավորման ընթացքին զուգահեռ, բազմազգ երկրի սահմաններում հասնել էթնիկական միատարրության, ապա առանց վարանելու նա դեն է նետում ազատական գործողությունների զսպանակը և այլազգիների հանդեպ որդեգրում է ձուլման դաժան քաղաքականություն, որը տարբեր երկրներում տարբեր ծավալներ ու ձևեր է ընդունում: Անկախ դրանից, ազգայնականությունը միշտ մնում է իբրև տիրող ազգային բուրժուազիայի հիմնական գաղափարախոսություն՝ ազգայնամոլության վայրենի, բարբարոսական դրսևորումներով հանդերձ, որը թուրքական ռազմաֆեոդալական և ասիական տիպի բուրժուական հարաբերությունների պայմաններում պետք է արյունալի հաշվեհարդարների հանգեցներ:

Այլազգիների նկատմամբ որդեգրելով ձուլման դաժան քաղաքականություն՝ երիտթուրքերն ազգային հարցում չուտով գերազանցելու էին սուլթան Աբդուլ Համիդին:

Թուրքականների համար չուտով պարզ դարձավ, որ թուրք էթնոսը, չնայած ձեռք առած դրակոնական միջոցներին, չի կարող խաղաղ, մշակութային ձուլման ճանապարհով կլանել մուսուլման արաբներին, առավել ևս՝ հպատակ քրիստոնյաներին,

այդ թվում՝ հայերին: «Գտնվելով զարգացման համեմատաբար չատ ցածր աստիճանի վրա,- գրել է Թուրքագետ Ա. Դ. Նովիչևը,- Թուրքերն ի վիճակի չէին ձուլելու բազմաթիվ ժողովուրդների, որոնց իրենք հպատակեցրել էին սրով»[1]: Ակնհայտ էր դառնում նաև, որ այդ նպատակին իրենք չեն կարողանալու հասնել նույնիսկ դաժան, բայց մասնակի հաշվեհարդարներով[2]: Այդ մասին դեռ XIX դարի կեսերին գրել է նաև ֆրանսիացի փիլիսոփա Պիեռ-Ժոզեֆ Պրուդոնը[3]:

Արշակ Չոպանյանը նույնպես գտնում էր, որ ազգերի բռնի ձուլումը անհնարին կլինի, քանի դեռ նրանք չարունակում են կառչած մնալ իրենց հոգևոր արժեքներին ու ավանդույթներին: Նա գրում էր.

«Կարելի՞ է ազգի մը քաղաքական անկախութիւնը ջնջել. կարելի չէ՝ եթէ նոյն իսկ տիեզերքի բոլոր ուժերը միանան՝ ցեղ մը անհետացնել, որքան ատեն որ այդ ցեղը ինքզինքը պահպանելու կամք ունենայ: Այդ կամքը կ'ըլլայ այնքան աւելի զօրեղ եւ խոր, որքան որ ցեղ մը ինքզինքը կը յարգէ եւ կը սիրէ: Մեր ջանքը պէտք է ըլլայ բազմապատկել հայոց մէջ սէրը դէպի իրենց ցեղը եւ անոր քաղաքակրթութիւնը»[4]:

Իսկ Իզմիրի «Դաշինք» թերթի խմբագիր Սուրեն Պարթևյանը համոզված էր, որ այլազգիների ձուլման երիտթուրքական քաղաքականությունը անիրագործելի երազ է մի չարք ցեղագրական և կրոնական պատճառներով, իսկ այն, ինչ անիրականալի է քաղաքական կյանքում, նաև «նովին գործովն վնասակար ալ է»[5]:

Ինչպես հայկական ազգային մյուս կուսակցությունները, Դաշնակցությունը նույնպես հանդես էր գալիս ազգային տեսա-

---

[1] **А. Д. Новичев**, Очерки экономики Турции до мировой войны. Москва-Ленинград, 1937, с. 11.

[2] **Տե՛ս В. А. Гурко-Кряжин**, История революции в Турции, Москва, 1923, с. 46.

[3] **Տե՛ս Прудон Пьер-Жозеф,** Война и мир. Исследование о принципе и содержании международного права, т. 1, изд. Черенца и Ко., Москва, 1864, с. 104.

[4] **«Անահիտ»,** № 11-12, մարտ-ապրիլ, 1909-1910, էջ 245-246:

[5] **«Դաշինք»,** № 208, 8 (21) ապրիլի 1910 թ.:

կետից միատարր պետություն ստեղծելու դեմ, կողմնակից էր բազմատարր պետության, ուստի և դեմ էր օսմանյան ոչ-թուրք ազգերի ձուլմանը:

ՀՅԴ ականավոր գործիչ Ատոմը (Հարություն Շահրիկյան) գրում էր, որ բազմատարրությունն ավելի նախընտրելի է ժողովուրդների ընդհանուր բարգավաճման, բարօրության, երջանկության, մշտարև խաղաղության տեսակետից: Նա գտնում էր, որ «այս ճշմարտութեան վրայ են բոլոր անցեալ ու ներկայ բարգաւաճ քաղաքակրթութեանց մեծութեանց պատմութիւնները: ... Ապագան, ուրեմն, ո՛չ թէ ձուլման՝ այլ միութեան քաղաքականութիւնն է կամ աւելի ճիշդը՝ բազմատարր միութիւններու քաղաքակրթութիւնն է»[1]: Ապա՝ «... Ամեն մէկ երկրի ու պետութեան մեջ, ուր հայկական հատուածը կ'ապրի, Հ. Յ. Դաշնակցութիւնը կը շարունակէ անխախտ ծառայել իր սկզբունքներուն, առանց հակադրուելու ամեն մէկ պետութեան բաղադրիչ միութեանը...»[2]:

Բայց ՀՅԴ կուսակցությունը և նրա մամուլի օրգանները խուսափում էին բացեիբաց քննադատել իթթիհադականների ***գործնական*** *քայլերը՝ նրանց հետ հարաբերությունները չփչացնելու համար:*

Հնչակյան մամուլը մերկացնում էր կայսրության բազմազգ ժողովուրդներին թուրքերի մեջ բռնությամբ ձուլելու երիտթուրքերի ձեռնարկումները, իսկ հնչակյան կուսակցության՝ 1909 թ. Կ. Պոլսում հրավիրված 6-րդ պատգամավորական ժողովը որոշել էր.

«Նկատելով, որ թուրք նացիոնալիստները (ազգայնամոլները) եւ այդ նացիոնալիզմի արտայայտիչ քաղաքական գործիչները (իթթիհատականներ) գիտակցաբար կը ձգտին ապազգայնացնել Թուրքիոյ բաղկացուցիչ ոչ-թուրք տարրերը եւ ձուլել զանոնք թուրք ազգութեան մէջ ***օսմանցի*** *ընդհանուր անուան տակ, Ժողովը ժխտելով կը ժխտէ ազգայնացման այդ գաղափարը եւ կը վճռէ պայքարիլ այդ ուղղութեան դէմ՝ ընդունելով*

---

[1] ***Ատոմ****, Մեր հաւատամքը ազգային հարցի մասին, էջ 81-82:*

[2] *Նույն տեղում:*

ազգերու անկաչկանդ ու ազատ զարգացման եւ ինքնորոշման իրաւունքը»[1]:

Ազգերը, ցեղերը և էթնիկական այլ խմբեր Թուրքիայում իրարից բաժան էին ամենից առաջ աշխարհագրականորեն և տնտեսապես: Նրանք վաճառականական-արդյունաբերական ընդհանուր շահեր չունեին, քանի որ կայսրության ազգային տարբեր տարածքները բաժանված էին ծովերով, նեղուցներով, լեռնաշղթաներով, զանազան նահանգները միացած չէին բարեկարգ ճանապարհներով, իսկ երկաթուղային գծերը նոր էին սկսել ձգվել երկրի տարբեր մասերով: Շատ նահանգներում հաղորդակցությունը, ինչպես նախկինում, հիմնականում կատարվում էր ընության ստեղծած հարմար վայրերով ու գրաստներով: Այդպես էին հաղորդակցվում Սիրիայի, Պաղեստինի, Արաբական թերակղզու, Փոքր Ասիայի և մասամբ, Բալկանների բնակիչները:

Նշված տարածքներում ապրում էին միմյանցից կղզիացած, առանձին-առանձին: Դա էր պատճառը, որ նրանց ժողովուրդները դարեր շարունակ անհաղորդ էին մնում իրար, տեղի չէին ունենում տարբեր էթնոսների մշակութային աշխույժ շփումներ: Լինում էր, որ նույն սարի երկու կողմերում էթնիկական տարբեր տարրեր էին՝ իրենց ուրույն կենցաղով, պահպանված լեզվով, հագուստով, բարքերով, այնպես, ինչպես հազարամյակներ առաջ:

Պետության մեջ իշխող տարրը՝ թրքությունն իր մշակութային զարգացման մակարդակով մեծապես հետ էր մնում հպատակ ազգերից, բացառությամբ քրդերի:

Թուրքերն արաբներից էին վերցրել իրենց կրոնը և սուրբ գիրքը: Թուրքերի լեզուն շատ հետամնաց լինելով՝ ի վիճակի չէր արտահայտելու ամենահասարակ ու ամենաանհրաժեշտ իրավական, կրոնական, տնտեսական հասկացությունները և գաղափարները: Այդ չզարգացած լեզվին օգնության էին եկել հա-

---

[1] **«Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան. 1887-1962»,** *Հատ. Ա, էջ 324:*

ռուստ արաբերենը և պարսկերենը, որոնց չնորհիվ Թուրքերենը կարողանում էր քիչ թե շատ տանելի ձևով հարաբերություններ-ի մեջ մտնել այլ զարգացած լեզուների հետ:

Անգամ գերիշխող ազգի վիճակը բան չէր սովորեցրել Թուրքերին: Թուրքը, լինելով երկրի տերը, շարունակում էր վատ պաշտոնյա մնալ: Վարչական մեքենան Թուրքերը փոխառել էին Բյուզանդիայից, բայց անցած հինգ դարերում ոչ միայն չէին բարելավել ու կատարելագործել այն, այլև շատ կողմերով փչացրել էին և այդ տեսքով հարմարեցրել երկիրը կառավարելու իրենց նահապետական մեթոդներին ու հետամնաց գաղափարներին: Բավական է ասել, որ մինչև 19-րդ դարը դիվանագիտական փաստաթղթերը և ընդհանրապես բոլոր նախարարությունների գործերը պահվում էին խուրջիններում:

Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը գրաված, Եվրոպա ներխուժած և իր ծանր լուծը Բալկանների վրա իջեցրած Թուրք տարրը մնացել էր նույն կոպիտն ու անտաշը, ինչպես դարեր առաջ, և հիմա ևս իրեն կարծես զգում էր պատերազմական վրանի մեջ, պարտված ու զավթված երկրում իբրև բռնագրավող: Քանի որ ենթագիտակցորեն նա ըմբռնում էր, որ դա իր երկիրը չէ, ուստի ներքին կարգը պահպանում էր ամենախիստ միջոցներով՝ մշտապես գործողության մեջ դնելով իր բռունցքը՝ իբրև հիմնական փաստարկ:

Ահա թե ինչո՛ւ «Թուրք» տերմինը կայսրության մյուս ժողովուրդներն ընկալում էին որպես խավարամոլության ու տգիտության, վայրենի բարքերի ու կրքերի հոմանիշ: Ավելին, Թուրքերից շատերը, հատկապես մտավորականության շարքերում, իրենք էին խուսափում արհամարհված «Թուրք» բառի գործածումից և օգտագործում էին «օսմանլը» (օսմանցի) բառը՝ նրա մեջ ներդնելով իրենց կողմից դեռևս լիովին չըմբռնված ինչ-որ ազգայնական հպարտություն:

Կարելի՞ էր արդյոք այդ հետամնաց էթնոսի մեջ Թուրքացման ճանապարհով ստեղծել մի նոր էթնիկ հավաքականություն: Կարելի՞ էր պատկերացնել, թե իրենց զարգացման մակարդակով Թուրքերից շատ բարձր կանգնած այլազգիներին հնարավոր էր «կամավոր» ստիպել հրաժարվել իրենց բարձր մշակույթից և

նետվել թուրքական խավարամոլության գիրկը: «Մշակը» գրում էր.

«Ի՞նչ կպատահէր, ասենք, Ռուսաստանում, եթէ թաթարական տիրապետութիւնը չարունակւած լինէր մինչեւ 20-րդ դարի սկիզբը, եւ օկուպանտները մտադրէին թուրքացնել ռուսներին: Օսմանեան յեղափոխութիւնից յետոյ հէնց նոյնանման դրութեան մէջ են թուրքերը երկրի այլ ազգութիւնների նկատմամբ»[1]:

Իհարկե, թուրքերի (նաև երիտթուրքերի) շարքերում կային առանձին լուսավոր անձինք, բայց նրանք եղանակ չէին ստեղծում:

Գալով Ասիայի հեռուներից և նվաճելով առաջավոր երկրներ՝ թուրքերը, սակայն, դարերի ընթացքում ի վիճակի չեղան յուրացնելու իրենց ստացած վիթխարի քաղաքակրթական ժառանգությունը: Իրենց հերթին, նվաճված ժողովուրդները միշտ ընդդիմադիր ու անհաշտ եղան նվաճողներին: Կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորման ու զարգացման զուգընթաց է՛լ ավելի խորացավ իշխողների և նվաճվածների միջև եղած անջրպետը մշակութային տեսակետից: Թուրքերը ո՛չ արաբների ու հույների փառահեղ անցյալն ունեին և ո՛չ էլ մտավոր տեսակետից հավասար էին հայերին ու մակեդոնացիներին:

Երիտթուրքերի թուրքիզմը, որը ենթադրում էր թուրքերի մեջ ձուլել այլ ժողովուրդների, իրականանալ չէր կարող նաև այն պատճառով, որ կայսրության մեջ թուրքերը մեծամասնություն չէին կազմում:

Թեև Օսմանյան պետության մեջ չկար ազգությունների ճշգրիտ վիճակագրություն, բայց մոտավոր հաշվարկներով դրանցից մի քանիսի՝ հայերի, հույների, քրդերի, ալբանացիների, բուլղարների, սերբերի թվաքանակը գրեթե հավասար էր (երկու-երեք միլիոն), իսկ արաբների թիվը, որոշ տվյալներով, նույնիսկ գերազանցում էր թուրքերի թվին: Դա նշանակում էր,

---

[1] ***«Մշակ»,*** *№ 228, 16 հոկտեմբերի 1909 թ.:*

որ Թուրքիայում ապրող բոլոր ժողովուրդները և ցեղերը, սկսած Թուրքերից, փոքրամասնություններ էին: Արևմտյան շրջաններում մեծամասնություն էին կազմում Թուրքերը, փոքրամասնություն՝ հայերը, քրդերը, հույները և այլն, արևելյան շրջաններում մեծամասնություն էին կազմում հայերը, փոքրամասնություն՝ Թուրքերը, քրդերը և այլ ժողովուրդներ, հարավարևելյան շրջաններում մեծամասնություն էին կազմում քրդերը, փոքրամասնություն՝ Թուրքերը, հայերը և ասորիները:

Մի հեղինակավոր հրատարակության մեջ կարդում ենք.

*«Օսմանյան կայսրությունը չի ունեցել տնտեսական և էթնիկական միասնություն: Թուրք ազգությունն ուրիշ ազգությունների համեմատ կազմավորվում էր շատ ավելի դանդաղ և կայսրության մեջ փոքրամասնություն էր կազմում: Չնայած Թուրք ավատապետների՝ ձուլման դաժան քաղաքականությանը, Թուրք բնակչության քիչ Թե շատ հոծ խմբեր գոյացան միայն Անատոլիայում և Արևելյան Թրակիայի՝ Ստամբուլին հարող մասում: Մնացած շրջաններում Թուրքերն այնպես էլ չկարողացան ձուլել արմատական բնակչության հիմնական զանգվածներին և իրենք էլ չձուլվեցին, մնալով, ըստ էության, **ռազմական զավթիչներ** (ընդգծումը մերն է:- Հ. Ս.)»[1]: Նույնը հաստատում էր Թուրքագետ պրոֆ. Գուրկո-Կրյաժինը՝ գրելով, Թե «Թուրքիայում ազգային փոխհարաբերությունների առավել բնորոշ գիծն այն է, որ բացառությամբ Անատոլիայի, տիրապետող ազգությունը, այսինքն՝ Թուրք օսմանլիները որևէ տեղ բնակչության գերակշռող մասը չէին կազմում: Թե՛ Արաբիայում և Միջագետքում, Թե՛ Քուրդիստանում և Հայաստանում Թուրքերը ներկայացված էին սոսկ պաշտոնյաների և զինվորների խմբերով, որոնք միանգամայն խորթ ու օտար էին այդ երկրների բնակչությանը»[2]:*

Կայսրության այլազգի ժողովուրդներին ձուլելու համար երկրում չկային նաև տնտեսական պայմաններ: Բայց հենց

---

[1] ***Большая Советская Энциклопедия,*** *2-ое издание, т. 43, Москва, 1956, с. 495.*

[2] ***В. А. Гурко-Кряжин****, История революции в Турции, с. 46.*

տնտեսական ամուր կապերը կարող էին հեշտացնել տարբեր ազգերի և կրոնների մերձեցումը, նրանց մոտ ձևավորել միատեսակ ճաշակ, մուծել նույնանման սովորույթներ, կենցաղ ու մտածելակերպ:

Ճիշտ է, Թուրքիան լիովին զուրկ չէր արդյունաբերական արտադրությունից, բայց տնտեսությունը հիմնականում տալիս էր հում նյութեր, որոնք վաճառվում էին Եվրոպային, այլ ոչ թե Եվրոպայում, այսինքն՝ ոչ թե Թուրքիան էր իր հումքը վաճառելու տանում Եվրոպա, այլ վերջինս էր հումքի համար գալիս Թուրքիա: Այդ պատճառով սա, ըստ էության, դարձել էր եվրոպական տնտեսական մարմնի անշարժ, կրավորական մասը: Թերևս բացառություն էին կազմում Փոքր Ասիայի միջերկրածովային ափերը, ուր սկսված տեղական տնտեսական կյանքի աչխուժացումն առաջ էին բերել լևանտները, հույներն ու հայերը՝ առևտրի միջոցով:

Լինելով եվրոպական տնտեսական օրգանիզմի կցորդ՝ թուրքական չուկան ի վիճակի չէր և չէր էլ ցանկանում պաշտպանվել եվրոպական ապրանքների լայնածավալ ներթափանցումից: Պետությունը մաքս էր վերցնում ներմուծվող ապրանքների հայտարարված գնի միայն 8 տոկոսը: Մաքսի այս ցածր նորմը եվրոպական երկրներին հնարավորություն էր տալիս Թուրքիա արտահանել իրենց ամենատարբեր արտադրատեսակները, հատկապես գործվածքեղենը, և ամբողջովին տնօրինել չուկան: Ավստրիան, Գերմանիան, Ֆրանսիան և Անգլիան ունեին Արևելքի համար հատուկ ստեղծած արտադրություններ և առևտրա-արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք սնվում էին բացառապես թուրքական հումքով:

Տպավորություն էր ստեղծվում, թե երկրի տնտեսական զարգացմամբ ինչպես նախկին, այնպես էլ երիտթուրքական իշխանությունները բոլորովին չահագրգռված չեն: Դա էր վկայում նրանց վարած ազգային քաղաքականությունը, որի նպատակներից մեկը կայսրության ոչ-թուրք ժողովուրդների միջև ատելություն ու թշնամություն սերմանելն էր, միջէթնիկական հակասությունների սրումը՝ որքան հնարավոր էր: Գերիշխող տարրին այլազգիները չէին սիրում, նրան ատում էին, բայց այդ

տարրն այնպես էր արել, որ այլազգիները նաև ատում էին միմյանց. բուլղարները տանել չէին կարողանում սերբերին, սրանք՝ նրանց ու հույներին, քրդերն ատում էին հայերին, դրուզները՝ սիրիացի սուննի և մարոնիթ արաբներին, և այդպես շարունակ: Դա թուրք տիրակալների քաղաքականության գլխավոր և փորձված՝ «Բաժանի՛ր, որ տիրես» մեթոդն էր, որը մեծապես արգելակում էր նաև երկրի տնտեսական զարգացումը: Եթե թուրքահպատակ ազգերից որևէ մեկը հասնում էր տնտեսական որոշ հաջողությունների, ապա իշխանությունները նրա դեմ հանում էին այդ ազգի հակառակորդ էթնոսներից որևէ մեկին: Երբ Լիբանանում մարոնիթները տնտեսապես ամուր դիրքեր գրավեցին, թուրքական իշխանությունները այդ քրիստոնյա արաբներին հակադրեցին դրուզներին: Երբ որոշակի տնտեսական հաջողություններ ունեցան հայերը, նրանց գլխին պատուհասեցին քրդությանը. որտեղ զորացան բուլղարները, հովանավորություն ստացան հույները. սերբերին կոտորող ալբանացիները թուրքերի ամենահավատարիմ հպատակներ հայտարարվեցին:

Ոչ-թուրք ժողովուրդներն ամեն բանում տարբեր լինելով, սակայն, մի բանում նույն զգացմունքն ունեին. նրանց միացնում էր թուրք տարրի նկատմամբ ատելությունը: Դա այդպես էր ինչպես սուլթանական բռնապետության, այնպես էլ նոր վարչակարգի օրոք:

Տնտեսության այս վիճակը չէր խթանում մրցակցությունը երկրի ներսում, արգելակում էր նահանգների բազմազգ բնակչության միատեսակ հետաքրքրությունների ու շահերի զարգացումը, հետևապես՝ էթնիկական տարբեր հավաքականությունների մերձեցմանը չէր նպաստում:

Ինչպես տեսնում ենք, Թուրքիայի ժողովուրդները միացած չէին ո՛չ տնտեսապես, ո՛չ պատմական ավանդույթներով, ո՛չ հոգեկան կերտվածքով ու մշակույթով, ո՛չ կենցաղով ու սովորություններով, ո՛չ էլ ընդհանուր իդեալներով ու շահերով: Իսկ առանց դրանց՝ որևէ սահմանադրական պետություն չէր կարող գոյություն ունենալ:

Երիտթուրքերը քաջ գիտակցում էին դա և այդ պատճառով շտապում էին. չէին սպասում երկրի տնտեսության մեջ էվոլյու-

ցիոն զարգացման գործընթացների հետևանքներին և ուզում էին միասնական Թուրք ազգի ստեղծումն սկսել անհետաձգելիորեն՝ «հենց ա՛յժմ», «հենց այսո՛ր»:

Թուրքերենի տարածումը և այլազգիներին Թուրքացնելու գործը հեշտացնելու նպատակով վայրագ հալածանք սկսվեց կայսրության մյուս ժողովուրդների լեզուների դեմ: Առևտրական գրասենյակների, խանութների, հյուրանոցների և հասարակական մյուս հաստատությունների վրայից հանվում էին այլալեզու ցուցանակները: Քաղաքային իշխանությունները մեկ-երկու օրում ջարդեցին Ստամբուլի փողոցների ֆրանսերեն ցուցանակները և դրանք փոխարինեցին Թուրքերեն ցուցանակներով: Ամենուրեք լսվում էր «Թյուրքջե՛ յազմալը»՝ «Թուրքերե՛ն պետք է գրել» սպառնալից պահանջը: Ստամբուլի, Իզմիրի և այլ վայրերի հայ առևտրականները, ահաբեկված այդ սպառնալիքներից, իրենց խանութների ճակատներից հանեցին բոլոր հայատառ ցուցանակները:

Կայսրության մեջ ամենուրեք սարսափի մթնոլորտ էր: Քրիստոնյաները, արաբները և հրեաները ամենօրյա սպառնալիքների տարափի տակ, նվաստացած ու ահաբեկված, Թուրքերի զանգվածային նոր խժդժություններին էին սպասում:

Այլազգիների ձուլման քաղաքականությունը առաջ բերեց ոչ-Թուրք ազգերի բացահայտ դժգոհությունը[1]: Դա զուգադիպեց տարբեր պատճառներով Թուրք հասարակության խավերի մոտ առաջացած դժգոհությանը: Մասնավորապես, Իթթիհադի վարած տնտեսական քաղաքականությունից տրտնջում էին նույնիսկ Թուրք առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի որոշ շրջաններ: Հակաիթթիհադական քաղաքական ընդդիմություն էր աստիճանաբար ձևավորվում: 1909 Թ. կազմակերպվեցին «Ազատականների» («Ահրար») և 1910 Թ. «Ժողովրդական» («Ահրար ֆրոկասի») կուսակցությունները: Ասպարեզ եկան Իթթիհադին ներհակ քաղաքական ուրիշ կազմակերպություններ ևս: Այդ բոլոր ընդդիմադիր ուժերը մի քանի ամիս հե-

---

[1] Տե՛ս **Ատամ**, Օսմանեան կայսրութեան անկման պատմութիւնը. Երիտասարդ Թուրքերու վերանորոգուող դպրոցը, Կ. Պոլիս, 1913, էջ 80:

տո միավորվեցին ու ստեղծեցին «Ազատություն և համաձայնություն» («Հյուրրիեթ վե իթթիլաֆ») կուսակցությունը: Վերջինս հռչակեց մի շարք բուրժուադեմոկրատական սկզբունքներ, այդ թվում նաև կայսրության ոչ-թուրք ժողովուրդներին որոշ ինքնուրույնություն տալու սկզբունքը[1]: Իթթիլաֆը բուռն գործունեություն ծավալեց իշխանությունը գրավելու համար:

Իթթիհադի վարած ազգային քաղաքականության դեմ կայսրության այլազգիների խոր դժգոհությունները մի շարք տեղերում աստիճանաբար վերաճեցին զինված ընդհարումների:

Հասկանալով, որ ոչ-թուրք ժողովուրդները երբեք կամավոր չեն հրաժարվի իրենց ազգային ինքնությունից, երիտթուրքերը ամենազանազան պատժամիջոցների, նույնիսկ զինված ուժի ձեռնարկեցին:

Օտարերկրյա խորհրդատուների մասնակցությամբ մշակված ծրագրով 1908 թ. վերջերին ամբողջ կայսրության տարածքը բաժանվեց ռազմական գոտիների (Սալոնիկի, Իզմիրի, Դամասկոսի, Հալեպի, Երզնկայի [Էրզինջանի], Բեյրութի), որոնք ուղղակի Բարձր Դռանն էին ենթարկվում : Ամեն մի գոտու ղեկավար նշանակվեց Թուրք բարձրաստիճան ռազմական գործիչներից մեկը: Այդպիսով՝ Իթթիհադը կայսրության ոչ-թուրք ժողովուրդների ազատագրական շարժման ռազմական ճնշման կուռ համակարգ ստեղծեց:

Երիտթուրքերը դաժան ճնշման էին ենթարկում **Մակեդոնիան:** Օսմանյան խորհրդարանի 1909 թ. նիստերից մեկում անցկացրին Ռումելիի վիլայեթում «քրիստոնյաների կողմից բռնությունների դադարեցման» մասին օրենքը, որը նախատեսում էր դաժան պատժամիջոցներ մակեդոնացիների ամենափոքր իսկ ըմբոստության դեմ[2]: Երիտթուրքերը միաժամանակ սկսեցին փակել Մակեդոնիայի ազգային կազմակերպությունները, ա-

---

[1] Տե՛ս **Ազատ Ս. Համբարյան,** Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908–1914), Երևան, 1979, էջ 17:

[2] Տե՛ս **В. А. Гурко-Кряжин**, История революции в Турции, с. 67.

կումբները, թերթերը, կանխարգելում էին այնտեղի բազմազգ քրիստոնյա ժողովուրդների ազգային ինքնագիտակցության աճի որևէ հնարավորություն: Ավստրո-Հունգարիայի նվաճած Բոսնիայից ու Հերցեգովինայից ներգաղթած մուսուլմաններին երիտթուրքերը տարաբնակեցնում էին երկրի այն շրջաններում, որտեղ մուսուլմանների թիվը շատ քիչ էր: Պարբերաբար անցկացվում էին Մակեդոնիայի բուն բնակչության զորակոչներ, որոնց նպատակն էր չեզոքացնել «վտանգավոր» ազգային տարրերին՝ թուրքական լծից երկրի ազատագրման կողմնակիցներին: Միաժամանակ քրիստոնյա բնակիչների զինաթափման ամենատարբեր միջոցառումներ էին ձեռնարկվում: Դրանից բացի, երիտթուրքերը համալրում ու զինում էին զուտ թուրքերից կազմված արագ արձագանքման հատուկ ջոկատներ՝ դրանք գործածելով Մակեդոնիայի ժողովրդի ազատագրական շարժման դեմ: Թե այդ երկրի քրիստոնյաների զինաթափման պատրվակով թուրքերն ինչպիսի դաժանություններ էին գործում, այդ մասին վկայում էին օտարերկրացի ականատեսները, որոնք զայրույթով չեչտում էին, որ երիտթուրքական վարչակարգն իր անտանելի բռնություններով գերազանցում է արդուլհամիդյան բռնակալությանը[1]: Ազգային կյանքով ապրելու մակեդոնացիների իրավունքի հարցը Իթթիհադը փաստորեն լուծում էր հետևյալ սկզբունքով. «Չկա ոչ մի «Մակեդոնական հարց», ինչպես և չկա Մակեդոնիա կոչվածը, որը Եվրոպական Թուրքիայի մի վիլայեթն է լոկ[2]:

Երիտթուրքերը քիչ ջանքեր չթափեցին թուրքացման քաղաքականությունն ***Ալբանիայում*** *վարելիս[3]: Նրանք ոչնչացրին հարկերի չափերը սահմանելու մասին սուլթանների՝ ալբանացիներին տված իրավունքները և զորակոչման արտոնությունները,*

---

[1] ***Տե՛ս H. Ch. Woods,*** *The Cradle of the War. The Near East and Pan-Germanism, London, 1918, p. 18.*

[2] ***В. А. Гурко-Кряжин****, Политические группировки в Турции, с. 46-47.*

[3] ***Ալբանիայում երիտթուրքերի քաղաքականության մասին տե՛ս И. Г. Сенкевич****, Освободительное движение албанского народа в 1905-1912 гг., Москва, 1959.*

արգելում էին քաղաքական կազմակերպությունների գործունեությունը, ամենուրեք արմատավորում էին Թուրքերենը: Դաժան հալածանքներն ու սպառնալիքները հանգեցրին ալբանացիների զանգվածային փախուստին Զեռնոգորիա:

Այս ամենը ժողովրդին մղեց հզոր դիմադրության, որը մեծ ծավալ ստացավ հատկապես այն բանից հետո, երբ երիտթուրքական կոմիտեն ալբանացիներին չթույլատրեց գործածել լատինական այբուբենը, ինչպես նաև արգելեց դպրոցներում խոսել ալբաներեն[1]: Երկրում ծայր առավ լայնատարած դժգոհություն, որը գնալով վերածվելու էր հզոր ապստամբության: 1909 թ. ամռանից սկսած Ալբանիան անընդմեջ ընդվզումների բեմահարթակ դարձավ: Այդ ելույթները ճնշելու համար 1910 թ. մարտին Բարձր Դուռն այնտեղ ուղարկեց Ջավիդ փաշայի արշավախումբը[2]: Միաժամանակ, «Իսլամի պաշտպանության համար» երիտթուրքերը զինեցին չորս հազար տեղացի մուսուլմանի: Ապրիլի վերջին Ալբանիայում կար մոտ 50 հազար կառավարական զորք՝ զսպելու համար «օրինազանցներին»:

1910 թ. վերջերին Ալբանիայում ապստամբության նոր ալիք բարձրացավ, որն ստացավ «Մալիսորյան հեղափոխություն» անվանումը (որին կանդրադառնանք գրքի հետագա էջերում): Դա ճնշելու համար ուղարկվեց Թուրգութ փաշայի բազմաքանակ պատժիչ արշավախումբը[3]:

Երիտթուրքերը դաժանորեն հալածում էին նաև Օսմանյան կայսրության **հույն** բնակչությանը՝ պատրվակ բռնելով Կրետեի՝ Հունաստանին միանալու ձգտումը՝ վերջինիս սպառնալով պատերազմով: Աթենքը ստիպված էր հայտարարել, թե ինքը որևէ հետաքրքրություն չունի կղզու նկատմամբ՝ հույս ունենալով մեղմացնել Թուրքերի զայրույթը կայսրության հույների հանդեպ: Չնայած դրան, Թուրքական իշխանությունները ուժեղացնում էին ճնշումները Մակեդոնիայի, Թրակիայի, Եգեական ծովի կղզիների հույն բնակչության նկատմամբ: 1910 թ. մայիսին

---

[1] Տե՛ս **«Պահակ»**, № 43, 7 դեկտեմբերի 1911 թ.:

[2] Տե՛ս **Андрей Николаевич Мандельштам,** *Младотурецкая держава, Москва, 1915, с. 21-23.*

[3] Տե՛ս նույն տեղում:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեն որոշում ընդունեց բոյկոտել հունական ապրանքները. քննարկվում էր նաև Օսմանյան կայսրության տարածքից հույների վտարման հարցը:

*Նոր ռեժիմի հենց առաջին օրերին երիտթուրքերը մի քանի խոստումներ էին տվել **արաբական** ցեղերի առաջնորդներին, բայց իրենց իշխանությունն ամրապնդելուց հետո հրաժարվել էին դրանցից: Արաբների բոլոր հույսերն ի դերև էին ելել, քանի որ իրենց ազգային իղձերի իրականացման ճանապարհին նախկինից ավելի անհաղթահարելի խոչընդոտների էին հանդիպել: Նրանց էլ էր հասել թուրքիզմի արհավիրքը:*

Հպարտ իրենց մշակույթով, լեզվով, հին ու հարուստ գրականությամբ, պատմական անցյալով, կրթված արաբները, հատկապես աչքաբաց երիտասարդները չատ զայրացած էին, որ թուրքերն իրենց լեզուն ու խղճուկ մշակույթը փորձում են փաթաթել արաբ ժողովրդին: Նրանք չէին հաշտվում այն փաստի հետ, որ կառավարությունն իրենց երկրներում մեկը մյուսի հետևից բացում էր ուսուցումը թուրքերենով տանող ուսումնարաններ: Արաբ զանգվածներին գրգռում էր նաև այն հանգամանքը, որ երիտթուրքերը մեծ թե փոքր բոլոր պաշտոնները հանձնում էին զտարյուն թուրքերին, որոնք ո՛չ արաբերեն գիտեին և ո՛չ էլ ծանոթ էին տեղական կացությանը: Այս պայմաններում արաբները հարցը կտրուկ էին դնում. «Նրանք պահանջում էին որ արաբերէնը իրենց երկրի պաշտօնական լեզուն լինի. մինչեւ անգամ յանդգնեցին պահանջել որ պարլամէնտի մէջ արաբ երեսփոխանները արաբերէն ճառեն»[1]:

Հարկերի անշեղ գանձումը, թուրքական բանակի համար զինվորներ պահանջելը և այլ քայլեր վերջապես ոտքի հանեցին արաբ ժողովրդին: Արաբական ցեղերը համոզվեցին, որ նույնիսկ իրենց կիսանկախությանը իրական վտանգ է սպառնում:

Այդ ամեն պատճառներից առաջացած համոզումները գնալով վերածվեցին խռովությունների, որոնք, ի վերջո, բռնեցին արաբական նահանգների մեծ մասը:

---

[1] ***Հրաչեայ Աճառեան**, Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչեւ 1915 թ.), էջ 66:*

1910 թ. վերջերից Թուրքական զորքերը կռիվներ սկսեցին այս կամ այն արաբական ապստամբ ցեղի դեմ: Միջագետքի Բասրայի վիլայեթում բեդուին ցեղերը նույն թվի դեկտեմբերին Թուրքական մի մեծ զորաբաժին ջարդեցին: Բաղդադի Թուրք վալին հաղիվ էր զսպում հուզված ցեղերի ապստամբությունը: Քաջամարտիկ դրուզների ապստամբության ճնշումը հսկայական ջանք ու եռանդ պահանջեց Թուրքերից: Բայց դրուզները դեռ խաղաղեցված չէին և Թուրքերը ստիպված էին 40.000-անոց զորք պահել Լիբանանում: Նույնպիսի զորեղ զորամասի ներկայությունը արաբական ցեղերին չխանգարեց 1910 թ. դեկտեմբերին գրավել և ավերել Կարակ քաղաքը (ներկայի Հորդանանի տարածքում):

1910 թ. դեկտեմբերին մեծ խռովություններ ծագեցին Հիջազում, ուր ապստամբները 150 վերստի վրա քանդեցին Դամասկոս-Հիջազ կառուցվող երկաթուղին:

Վերջապես, շարունակվում էր իմամ Յահիայի 1905 թ. բարձրացրած ապստամբությունը Եմենում: Այստեղ արդեն քանի տարի Թուրքերն արյունահեղ կռիվներ էին մղում տեղական արաբական պատերազմիկ ցեղերի դեմ: 1909 թ. կեսերին ներքին գործերի նախարար նշանակված Թալեաթ փաշան պահանջեց ամենաեռանդուն գործողություններով «հանգստություն հաստատել» Եմենում: Մինչև 1910 թ. նոյեմբեր ամիսը երիտթուրքերն Իզզեթ փաշայի հրամանատարությամբ այնտեղ կենտրոնացրել էին չուրջ 80 հետևակային գումարտակից կազմած արշավախումբ՝ չհաշված հեծելազորն ու հրետանին: Ցանկանալով մեկընդմիշտ վերջ տալ եմենյան ապստամբությանը՝ երիտթուրքերը մարշալ Աբդուլլա փաշայի հրամանատարությամբ այնտեղ ուղարկեցին ևս 34 գումարտակից բաղկացած նոր արշավախումբ՝ համալրելու համար եղած ուժերը: Ամբողջ երկրով մեկ ստեղծվեցին ոստիկանական և ժանդարմական պահակակետեր:

Բայց այդ բոլոր ժողովուրդների թվում երիտթուրքերը հատկապես բացառիկ դաժանություն էին դրսևորում կայսրության հայ բնակչության նկատմամբ: Քանի որ Իթթիհադի համագումարներում արդեն որոշվել էր հայության ճակատագիրը,

այն է արյունալի հաշվեհարդար տեսնել նրա հետ և տեր դառնալ նրա հազարամյակների հայրենիքին, երիտթուրք պարագլուխները դեռ որքան կարողանում գաղտնի էին պահում իրենց մարդատյաց ծրագիրը, միաժամանակ առիթը բաց չէին թողնում քնեցնելու հայ ժողովրդին:

Վահան Փափազյանը վկայում է, որ Թալեաթը հայ գործիչներին ասել էր. «Դուք շատ առաջ գացած էք, ճանը՛մ, քիչ մը պէտք է որ կանգ առնէք, մինչեւ որ Թիւրքերն ալ հասնին ձեզի, այն ատեն միասին կրնանք քայլել, ապա թէ ոչ, մենք պիտի կախուինք ձեր փէշերէն եւ Թոյլ չպիտի տանք, որ աւելի առաջ երթաք...»[1]:

Հայ գործիչը նկատել էր, որ կատակով ասված այդ խոսքերից «խիստ արիւն կը հոտէր...»[2]: Ապա՝ «Ամէնքս կը զգայինք այս խօսքերու[ն] բուն իմաստը: Անոնք (երիտթուրքերը:- Հ. Ս.) եւս կը զգային, որ մենք ալ մեր գլխուն ճարը փնտրելով ենք զբաղած...»[3]:

ՔՐԴԵՐԻ ՆՈՐ ԽԺԴԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քրդությունն առաջվա պես պատուհաս էր Հայաստանի հայ բնակչության գլխին: Նա ջրաղացքարերի պես կախված էր գեթ ֆիզիկական ապահովության ձգտող հայության ոտքերից ու ձեռքերից: Հայ գյուղացիությունը պրծում չուներ նրանից. գնալով է՛լ ավելի էր բորբոքվում հայերի նկատմամբ նրա թշնամանքը, որի գլխավոր պատճառը մնում էր նախկինը. քրդերը երկյուղում էին, որ հանգամանքների բերումով հայերի համար ապագայում կարող է ստեղծվել այնպիսի բարենպաստ վիճակ (Բարձր Դռան վրա եվրոպական տերությունների ճնշում, երիտթուրքական կառավարության տապալում և այլն), երբ դատական կարգով հնարավորություն կունենան բարձրացնելու իրեն-

---

[1] **«Վէմ»,** № 1, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1933, էջ 91:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

ցից զավթած հողերը վերադարձնելու հարցը[1]:

Եթե քրդերը հայերի խորհուրդներին ականջալուր չէին դեռ այն ժամանակ, երբ վերջիններս զենք ունեին, ապա այժմ, երբ հայերը զինաթափ ու անպաշտպան էին, հայերից եկած ամեն խորհուրդ կամ խնդրանք որևէ նշանակություն չուներ նրանց համար:

Արդեն առիթ ենք ունեցել ասելու, որ քրդերի համար ամենամեծ հպարտությունը մարդ սպանելու ընթացքում ցույց տված հանդգնությունն էր: Ավազակությունը քրդի կյանքի կերպն էր: Բացառություն էին կազմում միայն խեղճերը, տկարները և հաշմանդամները:

Ատոմը (Հարություն Շահրիկյան) այսպես էր նկարագրել երևույթը. «Քրդերի մէջ աւազակային դրութիւնը իբրեւ բնական վիճակ կազմուած ըլլալը չա՛տ դիւրաւ կը հասկցուի: Տղայութեան եւ պատանեկութեան հասակին մէջ ոեւէ մտաւոր ու բարոյական կրթութենէ զուրկ մնալու փոխարէն՝ բազմաթիւ վատ օրինակներ տեսնելով առնական տարիքին հասնող երիտասարդներուն համար՝ զէնք ու փամփշտակ[ալ]ներով զարդարուիլը, աւազակութեան ելնելը միակ փառքն ու պատիւն է: Անոնց համար զարդարանքը աւազակային զգեստն է, ամենամեծ յաջողակութիւնը՝ մարդ սպաննելու մէջ ցոյց տուած յանդգնութիւնը. ուստի, քիւրտերը ի հարկին բոլորն ալ աւազակներ են: Հանգիստ մնացողները միայն անոնք են, որոնք **«ով որ խեղճ է՝ թոյլ է»**ի ներկայացուցիչներն են: Քիւրտերը ծուլութեան և անաշխատութեան մէջ անօրինակ են: Զեն աշխատիր եւ աշխատիլ չեն ուզեր»[2]:

Քրդական հրոսակախմբերը նախկինի պես շրջում էին զինավառ, ճանապարհներին թալանում ճամփորդներին, քշումտանում հայերի հոտերն ու նախիրը, մտնելով հայկական գյուղերը՝ անպատիժ կողոպտում էին ամեն ինչ, սպանություններ

---

[1] Տե՛ս **«Հովիտ»**, № 42, 28 հոկտեմբերի 1912 թ.:

[2] **Ատոմ**, Պետական վերանորոգութիւնն ու հողային հարցը, Կ. Պոլիս, 1910, էջ 11:

կատարում[1]: Այդ ամենը սովորական բաներ էին Թուրքահայաստանի բոլոր խուլ, աշխարհից կտրված անկյուններում, ուր հայերն իրենց կյանքը քարշ էին տալիս «ոչխարի համբերութեամբ»[2]:

Միր-Մհեի անունը չէր իջնում հայկական մամուլի էջերից: Շատախի և Նորդուզի այդ պատիժ-պատուհասն իր սանձարձակութիւններով և անզուսպ գազանութիւններով հայտնի էր դեռ հին ռեժիմի օրոք: Իր զինված մարդկանցով նա մի օր հայտնվում էր Պարսկաստանում, մյուս օրը՝ Հայոց Ձորի դաշտերում և Մոկաց լեռներում: Ոչ պակաս ավերներ էին գործում նրա հորեղբայր Շաքիրը, Ռզան, Ռաշիդը, Քոռ Հուսեյնը: Այդ հինգ բեկերը հայերի կյանքը ուղղակի անտանելի էին դարձրել[3]:

Ահա՛ Խիզան, Կարկառ, Սպարկերտ գավառները, որտեղ հայ բնակչությունը տանջվում էր հայտնի բարբարոս չեյխ Սեիդ Ալիի ձեռքին: Հնուց բնակություն հաստատելով Խիզանի դաշտում, նա սրի զորությամբ տիրել էր ընդարձակ հողերի, հայ գյուղացիներից խլել նույնիսկ տնամերձ այգիները: Շեյխը միջնադարյան ավատապետի կատարելատիպ էր, որի բռնության տակ ապրում էր այդ գավառների անլեզու ժողովուրդը՝ իբրև վասալ ու ճորտ: «Հորիզոնը» վկայում էր. «Ինքը՝ շեյխը, ինչ խօսք, ներկայանում է իբրեւ «սուրբ» ու «արդար» եւ երեւի իր այդ բացառիկ շնորհքների համար է, որ [իր ապարանքից] դուրս գալիս բազմած է լինում մարդկանց ուսերի վրայ, իսկ ամբոխը նրան դիմաւորում է ծնկաչոք, համբուրելով նրա քղանցքները: Այդպես էր առաջ, այդպես է եւ այժմ»[4]:

Քրդերի ոճիրները վերջ չունեին Բիթլիսի վիլայեթում: Տեղական իշխանություններն ուղղակի խրախուսում էին ավազակախմբերին: Վալի Թահիր փաշան որևէ փորձ չէր անում սան-

---

[1] *Քրդերի կատարած չթուլացող հարստահարումների, կողոպուտների և սպանությունների մասին տե՛ս* ***«Աշխատանք»*** *(Վան), № 18, 29 մայիսի 1911 թ.:*

[2] *Տե՛ս* ***Հորիզոն»****, № 192, 1 սեպտեմբերի 1910 թ.:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

[4] *Նույն տեղում:*

ձահարելու քուրդ ավատապետ հարստահարիչներին, փոխարենը հալածում էր բողոքի նույնիսկ աննշան ձայն հանող հայերին[1]:

Անօրինակ հալածանքների էր ենթարկվում Մուշի և իր դաշտի հայությունը: Քրդերի զինված ասպատակախմբերն անարգել տիրել էին ասպարեզին և սոսկումներ էին գործում: Մուշից «Հորիզոնին» գրում էին, թե բանն այնտեղ է հասել, որ տեղի հայ հեղափոխականները մի թռուցիկ են տարածել, ուր ասվում է, որ եթե իշխանությունները չարունակեն պաշտպանել քրդական լայնածավալ խժդժությունները, ապա հայերին միայն մի ելք է մնում՝ զենք վերցնել և լեռները բարձրանալ[2]:

Թուրքահայ ժողովրդի անագորույն վիճակը բարեփոխվելու միտում չուներ: Քրդերի ոճրագործությունների մասին ամեն օր Թուրքահայաստանի գավառներից մայրաքաղաք էին հասնում նոր, սարսափելի լուրեր: Հայերն անթիվ հեռագրեր էին ուղարկում կառավարություն՝ աղաչելով արհավիրքի առաջն առնել:

Զգալով, որ իրենց գլխին մեծ փորձանք է կախված, այն է՝ Շատախի և Նորդուզի վերոնշյալ հինգ քուրդ բեկերը նախապատրաստվում են լիովին բնաջնջել իրենց, այդ գավառների հայերը 1910 թ. վերջավորությանը մեկը մյուսի հետևից բազմաթիվ հեռագրեր հղեցին մեծ վեզիրին, սենատի և պատգամավորական ժողովի նախագահներին ու անդամներին՝ խնդրելով այդ բեկերին վարչական կարգով հեռացնել այլ շրջաններ, քանի որ նրանք չուրջ 300 հոգու արդեն սպանել են և նախապատրաստվում են է՛լ ավելի մեծ ոճրագործություններ կատարել: «Իսկ կողոպուտներն անհաչիւ են. մենք կաչխատինք, անոնք կը վայելեն»[3],- գրում էին նրանք:

«Անատոլիայում հայերին ինչո՞ւ են կոտորում, ինչո՞վ կարող էին հայերը թիւրքերի ու քիւրդերի բարկութիւնը չարժել, նամանաւանդ մի այնպիսի ժամանակ, երբ նրանք պէտք է,

---

[1] **«Հորիզոն»,** № 130, 16 հունիսի 1910 թ.:

[2] Նույն տեղում, № 135, 23 հունիսի 1910 թ.:

[3] Նույն տեղում, № 192, 12 սեպտեմբերի 1910 թ.:

աւելի քան երբեւիցէ համերաշխ կեանքով ապրեն»,- միամտորեն հարցնում էր Թիֆլիսում հրապարակվող «Մամուլը»[1], բայց պատասխան չէր գտնում, չնայած դրա պատճառները մակերեսի վրա էին:

Իսկ կառավարությունը մի տարօրինակ դիրք էր բռնել՝ ասելով, թե խժդուժ ցեղի գազանությունները հայերը կարող են ջլատել միայն համբերությամբ ու ներողամտությամբ: Իշխանությունները հայերի արդարացի պահանջներին գոհացում չէին տալիս ու այլևս հույս էլ չկար, թե կտան: Միայն մի անգամ, 1910 թ. հոկտեմբերին Կ. Պոլսի կառավարությունն իր տեղի իշխանությանը հանձնարարեց քննել հոչակավոր ոճրագործ շեյխ Սեիդ Ալիի դեմ ստացված բողոքները: «Քննությունից» հետո շեյխը «պատասխանատվության կանչվեց», բայց մի քանի հարյուր ոսկի կաշառք տալուց հետո ազատ արձակվեց այն պատճառաբանությամբ, թե «բաւարար փաստեր չկան»[2]:

Քրդերին ցույց տված ծայրահեղ մեղմ ու նրբանուշ վերաբերմունքն է՛լ ավելի էր քաջալերում նրանց[3]:

Սահմանադրական ռամկավար նշանավոր գործիչ Լևոն Մկրտիչյանը հարց էր տալիս. «Եթէ քրտաբնակ գաւառներու մէջ կառավարութիւնը կամենար կազմակերպել ոստիկանութիւն՝ արդեօք քիւրտերը պիտի կրնայի՞ն սանձարձակ կերպով հայ գիւղացիները այսքան երկար տարիներէ ի վեր հարստահարել ու կողոպտել»[4]:

Կառավարությանն անդադար դիմումներ էին ներկայացնում նաև Հայոց պատրիարքարանը, Դաշնակցության Կ. Պոլսի Պատասխանատու մարմինը, հայկական մյուս կուսակցությունների ղեկավար մարմինները, անհատ գործիչներ և խնդրում էին կտրուկ միջոցներ ձեռնարկել հայաբնակ նահանգներում քրդերի

---

[1] ***«Մամուլ»,*** *№ 7, 12 դեկտեմբերի 1911 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Հորիզոն»*** *№ 192, 1 սեպտեմբերի 1911 թ.:*

[3] *Տե՛ս* ***Վահան Ա. Բայբուրդյան,*** *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին, Երևան, 1989, էջ 268-269:*

[4] ***«Դաշինք»,*** *№ 262, 17 (30) հունիսի 1910 թ.:*

վրդովեցուցիչ խժդժությունների դեմ: Վահան Փափազյանի վկայությամբ՝ այդ հարցում Դաշնակցությունը սկզբունքային դիրքում էր: «Դիմեցինք այն ատենուան նախարարապետ Ֆէ-րիտ փաշային՝ առաջարկելով քննիչ մարմին մը ղրկել տեղին վրայ ստուգելու բողոքները, հարստահարութիւնները, հողային յափշտակութիւնները եւ այլն: Ֆէրիտ փաշան ընդունելով մեր առաջարկը՝ համապատասխան օրինագիծ մը ղրկած էր խոր-հրդարան: Օրինագիծի վերնագիրն իսկ ահագին աղմուկ յարուց քիւրտ եւ թիւրք մոլեռանդ երեսփոխաններու կողմէ. տեղերնէն ցատկեցին եւ սկսան պոռչտալ, թէ՝ երկրի[ն] մէջ խաղաղութիւն կը տիրէ, թէ՝ ժողովուրդները եղբօր պէս կ'ապրին, թէ՝ չինծու լուրեր են եւ թէ՝ խռովարար տարրերու կողմէ տարածուած «ֆէսատներ» են, թէ՝ քննիչ մարմնի երթալով, պիտի սրուին ազգամիջեան յարաբերութիւնները: Որովհետեւ այդ բոլոր չարիքներու հեղինակները քիւրտ պէկերը իրենք իսկ էին, ի հարկէ պիտի բողոքէին: Ֆէրիտ փաշան ընկրկեց[աւ] եւ անոնց միացած իսլամ երեսփոխաններէ վախնալով՝ ետ առաւ օրինա-գիծը...»[1]:

Իսկ պատգամավորական ժողովի հայ անդամները որևէ բան անելու ի վիճակի չէին, քանի որ նրանց բանի տեղ դնող չկար: Հայկական նահանգներում կատարվող դեպքերն այլևս չէին հետաքրքրում ո՛չ կառավարությանը և ո՛չ էլ խորհրդարա-նին:

Պատգամավոր Վարդգեսը խորհրդարանում ելույթ ունենա-լով ներկայացրել էր Թուրքահայաստանում հայության կրած սարսափները քրդերի և թուրքերի ձեռքից ու այդ առթիվ զայ-րալից բողոք հայտնել: Ի պատասխան այդ ելույթի, մեծ վեզիր Իբրահիմ Հակկը փաշան ասել էր. «Վարդգէս էֆենտի՛, ատոնք սովորական պատահական սպանութիւններ են որոնք Եւրոպայի մէջ ալ կը պատահին»[2]:

«Աշխատանք» թերթն այս մասին գրում էր. «... Զենք

---

[1] ***Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Բ, Պէյրութ, 1952, էջ 154:*

[2] ***«Աշխատանք»**, № 19, 5 հունիսի 1911 թ.:*

հասկնար թէ ինչպէս յայտնի աւազակախմբերու կատարած կամ հողային վէճէն առաջացած սպանութիւնները կարող են համարուիլ պատահական եւ սովորական սպանութիւններ. չենք հասկնար մանաւանդ թէ ինչո՞ւ այլ պատահական եւ սովորական սպանութիւններու ենթարկուողները միշտ պէտք է լինեն հայերը եւ ո՛չ մի անգամ թիւրքերը կամ քիւրտերը»[1]:

Թերթը նշում էր, որ միայն Բարեկենդանի օրերին քրդերը 400 հայ են սպանել[2]:

«Արագած» (Նյու Յորք) թերթի խմբագիր Լեոն Լարենցը ցավով արձանագրում էր, որ կառավարությունը և խորհրդարանը ոչ միայն անտարբեր հանդիսատես են «հայկական գաւառներու մէջ յաւերժացող սպանութեանց, առեւանգմանց եւ յափշտակութեանց», այլև ծաղրում են այդ մասին բարձրաձայնող հայ գործիչներին[3]:

Ավելին, խորհրդարանում թուրք և քուրդ պատգամավորներն այլևս չէին հանդուրժում, երբ հայ պատգամավորներն արտասանում էին «Հայաստան» բառը, «մինչ Քիւրտիսթան, Ալբանիա, Մակեդոնիա, Արաբիա բառերը, այնքան յաճախ կը յեղյեղուին նոյն խորհրդարանի[ն] մէջ»[4]:

Մոսկվայում լույս տեսնող «Раннее Утро» թերթը մի ծավալուն հոդված էր տպագրել Թուրքահայաստանի հարստահարվող հայ բնակչության անտանելի և ծանր վիճակի մասին: Հոդվածագիրը միաժամանակ պախարակում էր ազգակիցների նկատմամբ հայոց ազգային վարչությունների, հայկական կազմակերպությունների գործելակերպը, հայ հարուստների սառն ու անտարբեր վերաբերմունքը և կոչ էր անում համատեղ գործել ստեղծված ծանրագույն վիճակից ազգը դուրս բերելու համար: Պարբերականը հատկապես չեչտը դնում էր այն բանի վրա, որ քրդերի կեղեքումներից ու գաղանություններից հուսահատած հայերը որևէ կողմից պաշտպանություն չգտնելով և տառապե-

---

[1] **«Աշխատանք»**, № 19, 5 Հունիսի 1911 թ.:

[2] Նույն տեղում:

[3] **«Արագած»**, 12, 10 օգոստոսի 1911 թ.:

[4] Նույն տեղում:

լով սովից, դիմում են դավափոխության, և նետվելով կաթոլիկ, ավետարանական կամ օրթոդոքս եկեղեցիների գիրկը՝ փորձում են թուրք-քրդական գաղանություններից պաշտպանություն գտնել օտարների մոտ:

Իր ասածները ռուսական թերթը գլխավորապես հիմնավորում էր Կ. Պոլսի հայկական թերթերի հոդվածներով, որոնցից նա ընդարձակ քաղվածքներ էր կատարում: Ահա՛ դրանցից մի քանիսը. «Բիւզանդիոնից»՝ «Պատրիարքարանին հայտնում են, որ 170 տուն Էնզիլից դիմել է ուր հարկն է՝ կաթոլիկություն ընդունելու», «Արշալոյսից»՝ «Մարզվանից գանգատվում են, որ Կ. Պոլսի պատրիարքարանը իրենց դիմումներին ու խնդրանքներին որևէ ուշադրություն չի դարձնում, մինչդեռ ջիզվիտներն իրենց շատ բան են խոստանում» և այլն:

«Раннее Утро»-ն չեչտում էր, որ շատ է նաև իսլամն ընդունած հայերի թիվը: Այդ ամենի պատճառն այն է, համոզված էր հոդվածագիրը, որ Թուրքիան նորից դարձել է հայերին հերթական կոտորածների ենթարկելու երիտթուրքական քաղաքականության կիրառման ասպարեզ[1]:

Այնտեղ, ուր մահվան ու կյանքի խնդիր կա, այնտեղ ամբոխի մեջ չքանում են ազգության և ազգային եկեղեցու գաղափարները: Ազգությունը և հավատը պաշտպանելուց առաջ նախ պետք է կարողանալ ապրել, պահպանել ֆիզիկական գոյությունը: Բազմատասնյակ տարիներ Թուրքահայը մերթ քաղցած ու հալածված, մերթ անարգված ու զրկված՝ անհամբեր սպասում էր այն նվիրական ժամին, երբ մի փոքր չունչ առնելու հնարավորություն կունենար, բայց այս անգամ էլ նրա սպասելիքները հօդս ցնդեցին, եզրահանգում էր "Раннее Утро"-ն[2]:

---

[1] *Տե՛ս **"Раннее Утро"**, 8 сентября 1910 г.*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

1910 թ. աշնանը պոլսահայ ազգային իշխանությունները կրկին հայտնվեցին ճգնաժամի առաջ: Նախքան պատրիարք դառնալը Եղիշե Դուրյանը պաշտելի անուն էր, բայց պատրիարքական աթոռն զբաղեցնելուց կարճ ժամանակ անց պատվազրկվեց: Անկախ քաղաքականություն վարելու և ինքնուրույն գործելու անկարող լինելով, նա Ազգային ժողովում Դաշնակցության խմբակցության ճնշմանը չկարողացավ դիմակայել: Ավելին, երբ Ազգային ժողովի Քաղաքական ժողովի ատենապետ դոկտ. Սիմոն Սեղբոսյանին դաշնակցականներից մեկը դաժան ծեծի էր ենթարկել, Դուրյան պատրիարքը հրաժարվել էր արդարադատությանը դիմել՝ բռնություն իրականացնողին պատժելու համար: Պատրիարքի հեղինակազրկման պատճառներից մեկն էլ հայկական եկեղեցիները ակումբների վերածելու երևույթի հետ հաշտվելն էր:

Կուսակցական հավակնությունների կործանարար ձգտումները և պատրիարքի թուլությունն ի վերջո հանգեցրին անիշխանության և ազգային գործերում կազմալուծում առաջ բերեցին:

Հրաժարականի խնդիրը լուրջ կերպարանք էր առնում: Ինչպես լինում էր միշտ, հայ հասարակությունը պատրիարքի գործունեությանը թեր և դեմ ծայրահեղ որակումներ էր տալիս: «Բիւզանդիոնը» գտնում էր, որ Դուրյանը չպիտի հեռանա և պետք է դիմադրի հայկական կոմիտեների ճնշմանը: «Արեւելքն» ընդհակառակը, Դուրյանին մեղադրում էր, թե նա հասարակության աչքում ծաղր ու ծանակի առարկա է դարձրել պատրիարքությունը, ուստի ժամ առաջ պետք է թողնի աթոռը[1]:

1910 թ. հոկտեմբերի 15-ին Ազգային պատգամավորական Ընդհանուր ժողովի ատենապետ Գաբրիել էֆ. Նորատունկյանին հրաժարական ներկայացրեց Ազգային կեդրոնական վարչությունը: Հրաժարագրում պատճառաբանված էր, որ ազգային

---

[1] *Տե՛ս* ***«Արեւելք»****, № 7435, 15 հոկտեմբերի 1910 թ.:*

վարչական ժողովների անդամներն իրենց պաշտոնավարման ժամանակ պարբերաբար ենթարկվում են որոշ ուժերի բիրտ հարձակումներին: Վերջիններս նոր սերնդի մեջ սերմանում են անկարգապահության ոգի, ընտրությունների ժամանակ ճնշում են քվեարկության ազատությունը, գավառներում բռնարարքներ են կատարում առաջնորդարանների և տեղական վարչությունների դեմ, որի պատճառով ազգային գավառական պաշտոնյաներն անհնարին են համարում շարունակել իրենց աշխատանքը[1]:

Այնուհետև հրաժարագրում նշվում էր, որ Հայոց Ազգային սահմանադրության համաձայն, Ազգային կեդրոնական վարչության հիմքը արդարության սկզբունքն է, իսկ նրա ուժը կայանում է «ձայնից բազմութեան մէջ», որն «օրինաւորութեան սկզբունքն է»: Բայց քանի որ Ազգային վարչությունում «յարգանքի եւ բազմութեան ձայնին տեղ կը սկսի տիրապետել անհատներու կամքն ու քմահաճոյքը բռնի միջոցներով», ուստի Ազգային վարչությունը «չկարողանալով բնականաբար ստանձնել այսպիսի վիճակի մը պատասխանատուութիւնը..., հարկ կը համարի մատուցանել իր հրաժարականը եւ Պատկառելի Ժողովիդ հեղինակութեան եւ իմաստութեան կը թողու տնօրինել դարմանն այս վիճակին»[2]:

Ազգային կեդրոնական վարչության հրաժարականը չարունակություն ունեցավ:

Խոստովանելով իր անկարողությունը պատրիարքական պաշտոնի վրա, ուր գտնվում էր հազիվ 17 ամիս, Եղիշե արք. Դուրյանը 1910 թ. հոկտեմբերի 22-ին հրաժարական ներկայացրեց Ազգային պատգամավորական Ընդհանուր ժողովի ատենապետին և կառավարությանը: Հրաժարագրում պատրիարքը հաստատում էր, որ իրեն չի հաջողվել «ըստ արժանւոյն» կատարել իր պարտականությունները, ուստի ցավ ի սրտի խոստովանում էր, որ 1) հակառակ գործադրած ճիգերի «կարող չեղայ

---

[1] ***«Արարատ»,*** *№ 11, նոյեմբեր, 1910, էջ 1032-1033:*

[2] *Նույն տեղում, էջ 1033-1034:*

պաշտօնական յարաբերութիւններով բազմակարօտ հայ ժողովրդեան ամենակենսական պէտքերուն ու պահանջումներուն գոհացումն տալ բաղձացուած չափերով, 2) Բացարձակապէս ամէն կուսակցութենէն վեր մնալով հանդերձ, անկարող եղայ մեր ազգային ներքին կեանքը ակնյայտնի փճացնող ընդդիմամարտ ոյժերը հրաւիրել հաշտ ու համերաշխ գործակցութեան», 3) Միամտութիւն եմ ունեցեր, թե ազգային իշխանութիւնը միշտ կը գտնուի իր դիրքի բարձրութեան վրայ: Կ'աղաչեմ ուրեմն, տեարք երեսփոխանք, որ ընդունելով իմ հրաժարականս՝ զերծ կացուցանէք զիս իմ վրայ դրուած այս ծանր լուծէն, ի սէր այն ժողովուրդին՝ որու համար աղօթեր եմ միշտ»[1]:

Միաժամանակ, հրաժարականի թուղթ ներկայացրեց Ազգային պատգամավորական Ընդհանուր ժողովի Քաղաքական ժողովը:

1910 թ. հոկտեմբերի 20-ին Ազգային պատգամավորական Ընդհանուր ժողովի ատենապետ Գաբրիել Նորատունկյանին հրաժարական ներկայացրեց Ազգային կենտրոնական վարչության ատենապետ բժիշկ Սիմոն Ս. Սեղբոսյանը: Նա էր, որ գավազանով դաժան ծեծի էր ենթարկվել եկեղեցին գրավելու մոլեռանդությամբ տարված դերասան Ենովք Շահենի (Ենովք Իբրանոսյան) կողմից և ծանր վիճակում հիվանդանոց տեղափոխվել: Այդ «անորակելի անարգանքը», գրել էր նա իր հրաժարականի դիմումում, «զիս վայրկեան մը տարին մինչեւ մահուան դուռը»:

Այդ ամոթալի դեպքից հետո 1910 թ. հուլիսի 26-ին Ազգային պատգամավորական Ընդհանուր ժողովի 16 անդամներ գրավոր հարցապնդում էին արել Ս. Սեղբոսյանին և պահանջել պատահածի մասին հանգամանորեն գրավոր պատասխանել իրենց: Վերջինս պատգամավորների այդ խմբին ներկայացրել էր «Բացատրական գիր» և բազմաթիվ օրինակներով ցույց տվել, թե ինչպիսի չարիք է «բաց ու գոցի» կատակերգությունը համահայկական իմաստով: Դրա արդյունքն այն է, գրել էր նա, որ

---

[1] ***«Արարատ»,*** *№ 11, նոյեմբեր, 1910, էջ 1031-1032:*

«այժմ չէզոք ազգայինք քիչ մնացած են եւ տաճկահայք երկու գլխաւոր մասերու են բաժնուած»[1]: «Ազգային իշխանութիւնները քանդելու գաղափարը չեմ կրնար ըմբռնել, որոյ համար կը ճգնի փոքրամասնութիւնը»[2]:

Հոկտեմբերի 20-ի հրաժարականի իր դիմումին Սեղբոսյանը կցել էր 16 պատգամավորների հարցապնդմանը տված պատասխանը՝ «Բացատրական գիրը»[3]:

Ազգային պատգամավորական Ընդհանուր ժողովում նշված հրաժարականների քննությունը ձգձգվեց, որովհետև պատգամավորների մեծ մասը երկյուղ ուներ, որ կուսակցականները ցույցեր կանեն և կստիպեն համակերպվել իրենց պահանջներին: Այդ էր պատճառը, որ Ազգային ժողովը հարց հարուցեց կառավարության առաջ՝ իր արտակարգ նիստի ընթացքը հսկողության տակ առնելու համար ոստիկանական մի ջոկատ տրամադրել:

Հոկտեմբերի 30-ին, Գրիգոր Զոհրապի միջնորդությամբ Ազգային ժողովի «ազատական» (կամ դաշնակցական) խմբակցության և կենտրոնի (կամ պահպանողական) խմբակցությունների[*] միջև տեղի ունեցած համաձայնությամբ որոշվել էր ընդունել

---

[1] ***«Արարատ»,*** *№ 11, նոյեմբեր, 1910, էջ 1039:*

[2] *Նույն տեղում, էջ 1044:*

[3] ***«Արարատ»,*** *№ 11, նոյեմբեր, 1910, էջ 1035-1046:*

[*] *Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի բավականին ընդարձակ սրահը բաժանված էր երեք մասի. ամենամեծ մասում երեսփոխաններն էին, մի նեղ մասը, որ առաջինից բաժանված էր վանդակապատով, հատկացված էր հյուրերին և մամուլի ներկայացուցիչներին, իսկ հետնամասը հասարակության համար էր: Ժողովասրահի վերին մասում դրված էր դիվանի սեղանը, որի առաջ նստում էին ատենապետը՝ իր օգնականներով և ատենադպիրը: Նրա դեմ-հանդիման, այսինքն՝ սրահի վերջնամասում պատրիարքի գահն էր, իսկ դիվանի աջ և ձախ կողմերին չարված էին երեսփոխանների աթոռները:* ***«Ազատական»*** *(կամ «դաշնակցական») խմբակցության անդամները փոքրամասնություն էին կազմում և սրահի ձախակողմյան աթոռներն էին գրավում: Այս խմբակցության անդամների մեծ մասը դաշնակցականներ էին (Հարություն Շահրիկյան, Ռուբեն Զարդարյան, Վահան Փափազյան և ուրիշներ): Խմբակցության մեջ կային նաև ոչ-դաշնակցականներ (բժիշկ Վահրամ Թորգոմյան, Ստեփան Գաբրյան, Համբարձում Պոյաճյան (Մեծն Մուրատ) և այլոք): Ազատականներից*

Դուրյան պատրիարքի և Ազգային կենտրոնական վարչության հրաժարականները:

Իբրև պատրիարքական տեղապահի հավանական թեկնածուի շրջանառվում էին Գաղատիայի (Անգորա) առաջնորդ Բարկեն եպս. Գյուլեսերյանի և Հովհաննես եպս. Արշարունու անունները, իսկ իբրև Ազգային կենտրոնական վարչության ատենապետ (վարչապետ)՝ Հարությունն էֆ. Մոստիչյանի և Վռամշապուհ էֆ. Մանուկյանի թեկնածությունները:

1910 թ. նոյեմբերի 5-ին գումարվեց Ազգային ժողովի նիստը: Բայց հենց սկզբից կուսակցականների և նրանց ընդդիմադիր խմբերի միջև տաք վիճաբանություններ տեղի ունեցան: Մեծամասնությունը կողմ էր Դուրյան սրբազանի հրաժարականին, բայց դեմ էին Հուսիկ, Սուքիաս, Աբել քահանաները և Արամ էֆ. Հալաճյանը: Վերջիններս նաև վկայակոչում էին պատրիարքի հրաժարականին դաշնակցական մամուլի հույժ բացասական վերաբերմունքը: Մայրաքաղաքի «Ազատամարտ» թերթը պարբերաբար հոդվածներ էր տպագրում և պատրիարքից պահանջում հրաժարականի թուղթ չգրել: Նույնն անում էին Դաշնակցության գավառային թերթերը (օրինակ՝ Վանի «Աշխատանքը» իր 1910 թ. նոյեմբերի 28-ի և այլ համարներում): Այդ վիճաբանությունները թույլ չտվեցին, որ ժողովն զբաղվի հրաժարականների և պատրիարքական տեղապահի նշանակման խնդիրներով: Ուստի ժողովի հրավիրումը հետաձգվեց մեկ շաբաթով՝ մինչև նոյեմբերի 12-ը:

Եթե Ազգային ժողովը հաջողեր ընտրել նշված թեկնածուներից որևէ մեկին, ապա այդ ակտերով Թուրքիայի հայոց

---

*առաջ **եկեղեցական երեսփոխանների** տեղերն էին: Աջակողմյան նստարանների վրա **կենտրոնի** խմբակցությունն էր (կամ ազատականների կողմից «պահպանողական» անվանված երեսփոխանները): Սրա անդամների գերակշիռ մասը պատկանում էր Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությանը՝ կազմելով Ազգային ժողովի տիրապետող մեծամասնությունը: Կենտրոնի խմբակցության աչքի ընկնող դեմքերն էին Դավիթ Տեր-Մովսեսյանը (որը խմբակցության ղեկավարն էր), Վահան Թեքեյանը, Արշակ Ալպոյաճյանը, Գաբրիել Նորատունկյանը, Մանուկ Ազարյանը, Նազարեթ Տաղավարյանը և ուրիշներ:*

ազգային կյանքում կուսակցությունների գործունեությանը հարված կհասցվեր և խաղաղություն կհաստատվեր: Այդ իսկ պատճառով Դաշնակցության խմբակցությունը բոյկոտի ենթարկեց նոյեմբերի 12-ի նիստը: Ազգային ժողովին մնում էր կրկին հետաձգել նիստը:

*Վերջապես, 1910 թ. նոյեմբերի 26-ին գումարված Ազգային երեսփոխանական ժողովը ձայների մեծամասնությամբ (38 ձայնով 8-ի դեմ) ընդունեց Դուրյան պատրիարքի հրաժարականը**

---

* *Հայկական քաղաքական շրջանները և մամուլը հույժ բացասաբար վերաբերվեցին պատրիարքական աթոռից Դուրյան սրբազանի հրաժարականին, դա որակելով որպես երկչոտություն և անկարողության դրսևորում: Մայր աթոռի «Արարատ» հանդեսը գրում էր. «Մենք չենք հասկանում Հայոց պատրիարքի այդ քայլը: Տաճկաց կառավարությունը վաղուց սովորել է արհամարհել այդ միջոցները: Դա հնացած ու իր իմաստը կորցրած մի զէնք է, որ այժմ ոչ մի ազդեցություն չգործելու վտանգի մէջ է: Պէտք է իր դիրքի վրայ մնալ մինչեւ վերջ, մանաւանդ այն կրիտիքական րոպէին, երբ երկրի [հայ] ազգաբնակութիւնը սրի բերան է տրւում: Պէտք է ծեծել բոլոր դռները, ծեծել եւ ծեծել – անել ամեն քայլ – տեղն եկած ժամանակ դիմել նաեւ դրսի միջոցներին, դիմումներ անել որտեղ կարող ես եւ ինչով կարող ես, եւ թող Տաճկաց պետութիւնն ինքը հրաժարեցնի Հայոց պատրիարքին: Կռուի նոր միջոցներ ու ձեւեր պէտք է որոնել, որովհետեւ այդ զէնքերը, որոնք ուրիշ, բարեկարգ պետութիւնների մէջ ազդու կարող էին լինել, այժմ բթացել են ու կորցրել որ եւ է ազդեցութիւն: Վանի եւ Բաղէշի վիլայէթներում հայերին կոտորող վայրագ քրդերի համար ի՞նչ արժէք կարող են ունենալ այդպիսի հրաժարականները. ճիշտ նոյն արժէքը ունեն դրանք նաեւ Պոլսի իշխանութիւնների համար» (**«Արարատ»**, № 9, սեպտեմբեր, 1912, էջ 796): Իսկ «Վերածնունդ» ամսաթերթը (Կ. Պոլիս) նշում էր. «Ս[րբազան] Պատրիարքը եւ Քաղ[աքական] ժողովը քաշուեցան, յուսահատելով իրենց ապարդիւն դիմումներէն եւ կառավարութեան այն խոստումներէն, որոնք հաւատ չէին ներշնչեր ալ: Ասիկա կրկնումն է Դուրեան Ս[րբազան]ի հրաժարման: Ս. Պատրիարքին հրաժարականը ո՛չ մէկ ազդեցութիւն ունեցաւ Բ. Դրան մէջ եւ ասիկա մտածել կու տայ: Ս. Պատրիարքը լաւ կ՚ընէր չհրաժարելով, եւ քանի որ հրաժարած է՝ պէտք է սպասել իրերու ելքին: Եթէ ուշագրաւ պարագայ մը կայ՝ սա է, թէ նոր պատրիարքի մը ընտրութեան վրայ կը խօսուի: Սահմանադրութենէն (նկատի ունի Օսմանյան սահմանադրության վերականգնումը 1908 թ. հուլիսին:- Հ. Ս.) ի վեր ուրեմն, երեք պատրիարք կը փոխուի, եւ եթէ այսպէս երթայ՝ տարին քանի մը պատրիարք պիտի փոխենք: Մարդիկը կը փոխուին, սակայն իրերը կը մնան նոյնը...» (**«Վերածնունդ»**, № 5, սեպտեմբեր, 1912, էջ 36):*

և պատրիարքական աթոռը թափուր հայտարարեց:

Թեև Ազգային ժողովը վստահության քվե տվեց Քաղաքական ժողովին և նրա ատենապետ բժիշկ Սիմոն Սեղբոսյանին, բայց վերջինս կտրականապես հրաժարվեց իր պաշտոնից, իսկ դա նշանակում էր, որ ոչ միայն Կրոնական ժողովի, այլև Քաղաքական ժողովի նոր վարչությունների ընտրություններ պետք է կատարվեին: Այդ վարչությունների ընտրությունները կատարելուց և դրանց արդյունքների օսմանյան կառավարության վավերացումից հետո միայն Ազգային ժողովը կարող էր ձեռնարկել պատրիարքական տեղապահի ընտրությանը և ապա տեղապահի նախագահությամբ թուրքահայոց նոր պատրիարք ընտրեր:

Ուստի Ազգային ժողովը ձայների մեծամասնությամբ հենց այդ նիստում կատարեց Կրոնական (12 հոգու) և Քաղաքական (14 հոգու) ժողովների անդամների ընտրություն:

1911 թ. փետրվարի 2-ին պատրիարքական տեղապահ ընտրվեց ռուսահայոց քաջ ծանոթ Վահրամ արք. Մանկունին, որը էջմիածնից տեղափոխվելով, երկար ժամանակ ապրում էր Կ. Պոլսում:

Կանգնելով ազգային վարչության գլուխ, Մանկունին հանրային ներքին գործերի և կուսակցությունների փոխհարաբերությունների հարցերում հետևում էր հաշտարար քաղաքականության, իսկ Հայաստանում կատարվող հարստահարումների մասին Բարձր Դռան հետ ունեցած բանակցություններում թեև ցույց էր տալիս միանգամայն բարեկիրթ վերաբերմունք, բայց միաժամանակ ազգային շահերը պաշտպանելիս հանդես էր բերում անհողդողդ կամք և տոկուն գործելակերպ: Բայց հիվանդ լինելու պատճառով Մանկունի սրբազանը չէր կարող ազգային գործերի ղեկը երկար ժամանակ պահել իր ձեռքում:

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄ
ԻՇԽԱՆԱԿԱՆ ԲՈՒՐԳՈՒՄ

Թափ առնող ճգնաժամն ընդգրկել էր նաև երկրի քաղաքական համակարգը:

Բազում մարտահրավերների առջև կանգնած երիտթուրքական կառավարության ներսում տեղի էին ունենում ստեղծված դրությունից դուրս գալու տարբեր ուղիների փնտրտուքներ: Առաջարկվող ուղիների տարբերությունը նպաստում էր միմյանցից տարբեր կողմնորոշումների, գործելու մարտավարական սկզբունքների ձևավորմանը: Այդ հողի վրա առաջ էին գալիս հակասություններ և պայքար բուն կառավարությունում: Դրան նպաստում էին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի մշտական միջամտությունները կառավարության գործերին՝ նպատակ ունենալով իր ձեռքը գցել դահլիճի բոլոր պաշտոնները: Բանը հասել էր նրան, որ Օսմանյան հեղափոխության հերոս, գեներալիսիմուս Մահմուդ Շևքեթը հայտարարել էր, թե ուժով կփակի երիտթուրքերի կոմիտեն, եթե սա չարունակի միջամտել պետության վարչական գործերին:

Համաձայն երիտթուրքական կուսակցության ղեկավարության պահանջի, 1909 թ. օգոստոսի 17-ին հրաժարական ներկայացրեց հասարակական աշխատանքների նախարար Գաբրիել Նորատունկյանը: Պատճառն այն էր, որ վերջինս համառորեն պահանջել էր երկրում բարեփոխումներ անցկացնել ավելի համարձակորեն, իսկ երիտթուրքերին պաշարել էր խոշոր բարեփոխումներ անցկացնելու հնարավոր հետևանքների վտանգը: Հիմնարար բարենորոգումներ կատարելու համար անհրաժեշտ էր ունենալ ահագին ուժ, փող ու զորք: Կառավարությունը չուներ ո՛չ այս, ո՛չ այն: Ֆինանսներն այն աստիճան էին քայքայված, որ եվրոպական երկրները ստիպված դրանց վրա խիստ հսկողություն էին դրել, իսկ զորքն ամբողջովին խառնված էր քաղաքական պայքարի մեջ:

Երիտթուրքերի իշխանության գալուց մեկ-երկու տարի հետո նրա ղեկավարներից շատերը վարկաբեկվել էին, քանի որ

այդ ժամանակամիջոցում հասցրել էին մեծ հարստություններ կուտակել ժողովրդի հարստահարման և անօրինական գործարքների միջոցով: Կաշառակերների ու փչացածների (կոռուպցիոներների) այդ խումբն էր, որ կոչված էր կառավարելու կայսրությունը:

Իթթիհադը չահագործում էր երկիրը՝ եկամտաբեր պաշտոններն իր անդամների միջև բաժանելով: Առանձնապես մեծ հարստություն էին դիզել ազդեցիկ պաշտոնյաները: Այսպես, խոշոր գումարների և չարժական գույքի էր տիրացել հեռագրատան՝ չնչին աշխատավարձով երբեմնի պաշտոնատարը՝ ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը: Երկրի Ֆինանսների նախարար Ջավիդ բեյը նախկինում կարոտ ու ողորմելի մի ուսուցիչ էր եղել, իսկ այժմ ապրում էր ճոխ ու ցոփ կյանքով, արտասահմանում անշարժ գույքի ու կալվածքների տեր էր դարձել, մասնավորապես Դոբրուջայում (Ռումինիա) ընդարձակ հողատարածքներ էր գնել: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամներից Բաբան զադե Իսմայիլ Հակկը բեյը*, որը նախկինում եղել էր Թուրքաց լրագրության երբեմնի խղճուկ գրչակներից մեկը, այժմ կրթության նախարարի աթոռին տիրացած լինելով՝ դա չարաչահել էր ու մեծ գումարների տիրացել: Հուսեյն Ջահիդ բեյը, որն առավել աչքի ընկնող կաշառակերներից էր, նախկինում ծակ գրպանով, ամսական ընդամենը 3-4 հարյուր ղուրուշ ստացող վարժապետ էր եղել տարրական դպրոցում, կյանքը մեծ մասամբ քարշ էր տվել Կ. Պոլսում՝ կես կուշտ, կես անոթի, բայց ահա այժմ օսմանյան խորհրդարանի պատգամավոր էր՝ ընտրված նույն Կ. Պոլսից, միաժամանակ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի օրգան «Թանին» թերթի արտոնատերն էր ու խմբագիրը: Անձնական քսակը պարարտացնելով նա մեծ հարստության տեր էր դարձել:

Իթթիհադական մյուս նախարարները նույնպես, ավելի կամ նվազ, զերծ չէին նախանձ գրգռող գռփումներից:

---

* Ի դեպ, նա Կիլիկիայի 1909 թ. ապրիլյան կոտորածներից հետո Ադանայի վալի նշանակված, ծագումով քուրդ Բաբան զադե Մուստաֆա Զիհնի փաչայի որդին էր:

Երիտթուրքերի մեջ հանդես եկան մի շարք ընդդիմադիրներ, որոնք պահանջում էին պատասխանատվության ենթարկել դիրքը չարաշահած և ժողովրդի հաշվին հարստացած պաշտոնյաներին: Այդ ընդդիմադիրներից էին երիտթուրք հայտնի գործիչներ Հասան Ֆեհմի, Ահմեդ Սամի և Զեքի բեյերը, որոնք, մահն աչքի առաջ ունենալով, մերկացնում ու դիմակազերծում էին կառավարության մի շարք անդամների, մի բան, որ թանկ նստեց նրանց վրա. երեքն էլ կյանքից զրկվեցին մարդասպանների ձեռքով:

Զեքի բեյը, օրինակ, ելևմտից նախարար Ջավիդ բեյի գեղծումների մասին հիմնավոր տեղեկագիր էր կազմել և կառավարության ներկայացրել, որի հետևանքը եղավ նրա սպանությունը խորհրդարանի անդամ Դևրիշ բեյին ենթակա ահաբեկիչների խմբակի կողմից: Այդ պատվիրված սպանությանը հաջորդեցին ուրիշները:

Բայց նման հանդուգն երիտթուրք գործիչների թիվը կարելի էր հաշվել մատերի վրա:

Նշենք նաև, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի դեմ բացահայտ պայքարող թուրք ընդդիմադիրներից շատերն այդ պայքարը մղում էին ոչ թե գաղափարական հողի վրա, ոչ թե հանուն ժողովրդի շահերի, այլ՝ համեղ կարկանդակից բաժին ստանալու ակնկալիքով:

Իր դերի բարձրության վրա չէր օսմանյան խորհրդարանը, որը տվյալ պահին կոչված էր երկրի առջև ծառացած հրատապ խնդիրների լուծմանը նպաստող օրենքներ մշակելու, քննարկելու և ընդունելու:

Առանձին նշանակություն էին ստանում կայսրության տարբեր ազգերին ու կրոններին հուզող հարցերը, որոնց լուծումով միայն հաշտություն կստեղծվեր այլազգիների և թուրքերի միջև, որոնց կենսական ձգտումները չարունակում էին ներհակ մնալ իրենց բազմաբնույթ դրսևորումներով, հակասելով նաև Օսմանյան կայսրության, որպես մի քաղաքական ամբողջության, շահերին:

Պատգամավորական ժողովը, անտարակույս, կարող էր արմատական բարենորոգումների ուղղությամբ գեթ մի քայլ անել,

եթե նրա ձեռնարկումները պաշտպանեին նաև այլազգիները: Բայց ո՛չ նա և ո՛չ էլ կառավարությունը, չնայած սահմանադրության վերահռչակումից բավական ժամանակ էր անցել, այդ ուղղությամբ որևէ քայլ չէին ձեռնարկում: Ավելին, եթե նախկինում այլազգիներն ազգային դպրոցներ ունենալու, իրենց լեզվով ազատորեն խոսելու գոնե իրավունք ունեին, ապա այժմ ամեն ազգայինը վտանգված էր, ինչն առաջ էր բերում ոչ-թուրք ժողովուրդների գնալով ուժեղացող դիմադրությունը:

Այսպես, օրինակ, ամբողջ 1909-1910 թթ. արաբական մամուլը, քրիստոնեական թե իսլամական, բուռն հարձակումներ էր կատարում թուրքերի վրա՝ սրանց ազգայնական անհանդուրժողականության համար: Առիթը տվել էր խորհրդարանի մի արաբ պատգամավոր, որն ամբիոնից ասել էր, թե վատ չէր լինի, եթե Արաբիայում բարձր պաշտոնների նշանակվող թուրքերը գոնե ինչ-որ չափով իմանային արաբերենը: Խորհրդարանի թուրք պատգամավորներն այս խոսքերն ընդունել էին արհամարհական քրքիջներով, իսկ մնացած արաբ պատգամավորները ելույթ ունեցողին չէին համարձակվել պաշտպանել: Արաբական մամուլը, սակայն, տևականորեն չէր դադարում խորհրդարանի թուրք պատգամավորներին քննադատելուց և ազատության ու ազգային արժանապատվության մասին դատողություններ անելուց: Նրա էջերում հանդես էին գալիս ոչ միայն քաղաքականությամբ զբաղվողներ, այլև կրոնավորներ, առևտրականներ, պաշտոնյաներ, շարքային մարդիկ՝ զայրալից դատապարտելով խորհրդարանի արհամարհական վերաբերմունքն արաբ ժողովրդի ազգային զգացմունքների նկատմամբ:

Խորհրդարանի իշխանական թևում վիճակն անհանգիստ էր: Հատկապես 1910 թ. աշնանից «Միություն և առաջադիմություն» կուսակցության խորհրդարանական մեծամասնության մեջ պառակտում էր առաջացել: Երիտթուրք պատգամավորները ձայն էին բարձրացնում կառավարական պաշտոնյաների կաշառակերության ու փչացածության (կոռուպցիայի) դեմ, ինչպես նաև իրենց ելույթներում նույն մեղադրանքով մերկացնում էին միմյանց: Այդ ամենը տագնապ էր առաջ բերում խորհրդարանի երիտթուրքական խմբակցության մեջ, բայց մերկացնող

ելույթներ ունեցող պատգամավորները կառավարության և կուսակցության մեծազոր չեֆերի վրա ազդելու որևէ լծակ չունեին:

Երիտթուրքական կուսակցության շարքերը խայտաբղետ լինելն արտացոլում էր Թուրքական հասարակության ***դասակարգային ուժերի իրական դրությունը:***

Առաջվա նման երկրում բացակայում էին եվրոպական իմաստով ազատական և սոցիալիստամետ (առավել ևս՝ սոցիալիստական) կուսակցությունների ստեղծման պայմանները: Որքան էլ իրար հետ մշտական պայքարի մեջ լինեին նման քաղաքական ուղղություններ ներկայացնող հասարակական ուժերը, հենց այդպիսիները կարող էին լինել նոր կարգերի նեցուկն ու պաշտպանները, այլ ոչ թե նախորդ ռեժիմի սյուները՝ ձրիակեր հոգևորականությունն ու կալվածատերերը: Բայց քանի որ երկրում չկային ո՛չ ազատական և ո՛չ էլ, առավել ևս, սոցիալիստամետ քաղաքական կազմակերպություններ, ուստի երիտթուրքերի սոցիալական հենարանները մնում էին հենց նշված հոգևոր դասը և կալվածատիրությունը: Երկրում բուրժուազիան ներկայացված էր միայն մանրբուրժուական ստվար շերտով, իսկ մանր բուրժուազիան բոլոր երկրներում տատանվող է և անգույն, հետևապես չէր կարելի հույս դնել նրա, իբրև պետության վերանորոգչի, վրա: Զուրկ սեփական դասակարգային աշխարհայացքից՝ նա միշտ հարում է տիրապետող ուժեղ հոսանքին, այսինքն՝ երբ հեղափոխությունը հաղթական է լինում, դրսևորվում է իբրև հեղափոխական, երբ գլուխ է բարձրացնում հետադիմությունը՝ հանդես է գալիս որպես պահպանողական:

Ուրեմն, բացի կղերից ու կալվածատերերից, երիտթուրքերի համար հենարան էր նաև թուրք մանր բուրժուազիան՝ թեև մտքափոխ, անհաստատ ու անհետևողական:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության վիճակը բարդանում էր նաև այն պատճառով, որ նրա վարած հատկապես ներքին քաղաքականության դեմ սկսել էին գլուխ բարձրացնել հենց թուրք բնակչության առանձին խավեր, որոնց տրամադրությունների արտահայտիչներ էին գործող և նոր ձևավորվող հասարակական ու քաղաքական կազմակերպությունները:

Այդ տիպի քաղաքական կազմակերպություններից առավել նշանավորը Փարիզի Թուրք տարագիրների 1909 թ. գարնանը ստեղծած կազմակերպությունն էր՝ գեներալ Շերիֆ փաշայի գլխավորությամբ:

Շերիֆ փաշան, որը եղել էր «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գործուն անդամներից մեկը, երիտթուրքերի իշխանությունը գրավելուց հետո նշանակվել էր Թուրքաց դեսպան Ստոկհոլմում, բայց շատ չանցած՝ հիասթափվել էր երիտթուրք պարագլուխների գործունեությունից, հրաժարվել դիվանագիտական ասպարեզից և ամբողջովին նվիրվել իր գաղափարների քարոզչության:

Ի տարբերություն «երիտասարդ Թուրքերի», Շերիֆ փաշայի կողմնակիցներն իրենց անվանեցին «կրտսեր Թուրքեր»: Ընդդիմադիր կազմակերպություն ստեղծելուն զուգընթաց Փարիզում սկսեց լույս տեսնել նրա տպագիր օրգանը՝ «Մեշրութիեթ» («Սահմանադրություն») անունով թերթը: Կրտսեր Թուրքերն ազդարարում էին, որ իրենք դեմ են բուլղարներին, սիրիացիներին, հույներին, հայերին, սերբերին իրեն ենթարկելու իսլամական ազգայնականության, որին զսպելու համար երկար տարիներ միջամտում էին մեծ տերությունները, որպեսզի օսմանյան կառավարությունն ինքնավարություն չնորհի ոչ-Թուրք ժողովուրդներին:

Այդ հարցադրումների հետ կրտսեր Թուրքերն առաջ էին քաշել քաղաքական ծրագիր, որը մշակվել էր «Մեշրութիեթի» խմբագրությունում: Ծրագրում ձևակերպված նպատակները հետևյալներն էին. 1) Սուլթանը պետք է ազատ լինի քաղաքական կազմակերպությունների խնամակալությունից, անկաշկանդ վայելի այն բոլոր իրավունքները, որ նրան տալիս է սահմանադրությունը, 2) Զինվորականները պետք է ամբողջովին հեռացվեն քաղաքականությունից, 3) Ընդհանուր ներում պետք է չնորհել քաղաքական բանտարկյալներին, վերացնել զինվորական դրությունը երկրում, ազատական ոգով փոխել մամուլի, ժողովների, ընկերությունների մասին օրենքները, 4) Որպես հակապետական կոմիտե՝ արձակել «Միություն և առաջադիմություն» կոմիտեն և նրա դրամագլուխները հանձնել պետական

գանձարանին, 5) Լուծարել 1909-ին ընտրված պատգամավորական ժողովը, անցկացնել խորհրդարանական նոր ընտրություններ՝ ապահովելով ազատ ու արդար քվեարկություն:

Կրտսեր Թուրքերի կոմիտեն իր քարոզչությունն ազատ առաջ էր տանում արտասահմանում և գաղտնի՝ Թուրքիայում: 1910 թ. սկզբներին Օսմանյան կայսրության գլխավոր կենտրոններում արդեն գործում էին կրտսեր Թուրքերի գաղտնի կոմիտեներ, որոնք խիստ քննադատությամբ անվանարկում էին երիտթուրք բռնապետներին, իրենց գործունեությունը համակարգում երկրում գործող ուրիշ ընդդիմադիր գաղտնի կազմակերպությունների հետ:

Կրտսեր Թուրքերի կոմիտեն կայսրության ներսում գաղտնի հրատարակում էր «Սերբեստի» («Ազատություն») անունով թերթը: Այդ պարբերականը նախկինում լույս էր տեսնում Կոստանդնուպոլսում, բայց փակվել էր Մահմուդ Շևքեթ փաշայի հրամանով այն բանից հետո, երբ երիտթուրք վարձկանները 1909 թ. մարտի 24-ին (ապրիլի 7-ին) սպանել էին նրա խմբագիր Հասան Ֆեհմիին*:

Շերիֆ փաշայի գլխավորած կազմակերպությունն իրենով ծածկում էր այն ճեղքը, որ ստեղծվել էր Թուրքիայի քաղաքական դաշտում: Բանն այն է, որ իշխան Սաբահէդդինը, որն իր «Ազատություն և ապակենտրոնացում» կազմակերպությամբ «Միություն և առաջադիմություն» կոմիտեին ընդդիմադիր միակ ուժն էր, 1909 թ. սկզբներից բռնել էր երիտթուրք բռնապետներին մերձենալու, նրանց հետ հաշտվելու և բարեկամանալու ճանապարհը: Եվ ահա կրտսեր Թուրքերի նորելուկ կազմակերպությունը ընդդիմության ճամբարում գալիս էր փոխարինելու «Ազատություն և ապակենտրոնացում» կազմակերպությանը, բարձրացնելու այն դրոշը, որն իր ձեռքից բաց էր թողել իշխան Սաբահէդդինը[1]:

---

* Սպանության բուն թիրախը եղել էր թերթի արտոնատեր Ռիֆաթ Մելան զաղեն, որին մարդասպանը չփոթել էր Հասան Ֆեհմիի հետ՝ արտաքին տեսքի նմանության պատճառով («Բիւզանդիոն», № 3799, 25 մարտի (7 ապրիլի) 1909 թ.):

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 262, 26 նոյեմբերի 1909 թ.:

Ահմեդ Ռիզան, որ Աբդուլ Համիդի հալածանքներից խուսափելով՝ տարիներ առաջ հիմնավորվել էր Փարիզում և հրատարակել «Մեշվերեթ» թերթը[*]*, այժմ, երբ իր ձեռքում էր կենտրոնացրել իշխանությունը Կ. Պոլսում, ինքն էր հալածանքներ սկսել կրտսեր թուրքերի կազմակերպության և նրա ղեկավարի դեմ:*

Աբդուլ Համիդի ժամանակ գաղտնի ոստիկանությունը որսում էր, տանջում ու կալանավորում «Մեշվերեթի» թղթակիցներին, թերթը տարածողներին, ընթերցողներին, ոչնչացնում թերթի՝ Թուրքիա ներթափանցած խմբաքանակները: Այժմ «սահմանադրական» խորհրդարանի նախագահ Ահմեդ Ռիզան էր կատարում Աբդուլ Համիդի դերը. նրա հրամանով ձերբակալվում էին Շերիֆ փաշայի կուսակիցները, առանց դատի ենթարկվում բանտարկության և աքսորի, ոչնչացվում էին «Մեշրութիեթի»՝ Թուրքիա թափանցած օրինակները[1]*:*

Պատմությունը կրկնվում էր...

Շերիֆ փաշայի «Մեշրութիեթ» թերթի աշխատակիցների, թղթակիցների և ընթերցողների մեղքը միայն այն էր, որ նրանք «Մեշվերեթի» նախկին հրատարակիչ Ահմեդ Ռիզայից և թերթի խմբագրության աշխատակիցներից ավելի ձախ էին: Հենց դա էր պատճառը, որ երիտթուրքերը հալածում էին կրտսեր թուրքերին: Եվրոպական մամուլը, որ ժամանակին այնքան ուժգին քննադատում էր արդուլհամիդյան վարչակարգը և այնքան ջերմորեն պաշտպանում տարագրության մեջ գտնվող երիտթուրքերին, այժմ չգիտեր ինչպես պաշտպան կանգնել Ահմեդ Ռիզայի և Շևքեթ փաշայի զոհերին[2]*:*

Եթե մի կողմից ուժեղացել էին հակասությունները բուն երիտթուրքերի միջև, մյուս կողմից դրանք խորացել էին Իթթիհադի կոմիտեի և պատգամավորական ժողովի միջև:

Պառլամենտում իթթիլաֆականները և անկախ պատգա-

---

[*] *Ի դեպ, «Մեշվերեթի» խմբագիրն է եղել հրեա Այլեր Ֆուան (**«Բիւզանդիոն»**, № 3800, 27 մարտի (9 ապրիլի) 1909 թ.:*

[1] *Տե՛ս նույն տեղում:*

[2] *Տե՛ս **«Մշակ»**, № 262, 26 նոյեմբերի 1909 թ.:*

մավորները պահանջում էին, որ կառավարությունը պարբերաբար հաշվետվություն ներկայացնի ընթացիկ գործերի մասին, ինչպես նաև առանց ձգձգումների պատասխանի պատգամավորների հարցապնդումներին:

1910 թ. դեկտեմբերի 14-ին տեղի ունեցած Իթթիհադի կոմիտեի աղմկահարույց նիստում ընդունվեց մի որոշում, որով երիտթուրք պատգամավորներին արգելվում էր պառլամենտում դեմ արտահայտվել կառավարության ընդունած որևէ որոշման, ինչպես նաև միայն առանձին պատգամավորների էր թույլատրվում հարցապնդումներ անել, այն էլ՝ կոմիտեի թույլտվությամբ[1]:

Տեղեկանալով այդ մասին, իթթիլաֆական պատգամավորները պառլամենտում միասնաբար հանդես եկան նշված դրակոնյան որոշման դեմ, ապա պնդեցին նախորդ օրն իրենց կատարած հարցապնդման վրա, այն է՝ բացատրություն տալ, թե այդ տարվա ամռանն ինչու է խախտվել պատգամավոր Ռիզա Նուրիի անձեռնմխելիության իրավունքը և ձերբակալվել: Ավելին, իթթիհադական որոշ պատգամավորներ նույնպես հանդես եկան Ռիզա Նուրիին բանտից ազատելու պահանջով և առաջարկեցին այդ գործով պառլամենտական հատուկ մասնախումբ ստեղծել: Ի պատասխան՝ մեծ վեզիր Իբրահիմ Հակկը փաշան պառլամենտում հայտարարեց, որ այդ դեպքում ինքը հրաժարական կտա:

Քանի որ շարունակվում էր սաստիկ հուզումն ինչպես երիտթուրքական կոմիտեի անդամների, նույնպես և նրա պառլամենտական խմբակցությունում, նախարարներ Թալեաթ բեյը, Ջավիդ բեյը և Պետրոս Հալաճյանը հայտարարեցին, որ իրենք պատրաստ են հրաժարական տալու: Բայց Իթթիհադի կոմիտեն կտրականապես մերժեց այս երեքի մտադրությունը՝ երկյուղ կրելով հետագա բարդություններից:

Իթթիհադը չէր բացառում, որ եթե իթթիլաֆականներն ուժեղացնեն իրենց ճնշումը իթթիհադական խմբակցության վրա, ապա պառլամենտական ճգնաժամից խուսափելու և

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 284, 21 դեկտեմբերի 1910 թ.:

պատգամավորական ժողովի արտահերթ ընտրություններ անցկացնելու վտանգը չրջանցելու համար, ի վերջո, հարկ կլինի ընդունել վերջին երեք նախարարների հրաժարականները և նրանց փոխարեն ներկայացնել հետևյալ երեք գործիչների թեկնածությունները. ներքին գործերի նախարար՝ երիտթուրք կուսակցության պառլամենտական խմբակցության ղեկավար Խալիլ բեյ, ֆինանսների նախարար՝ Նայիլ բեյ, ճանապարհային հաղորդակցության նախարար՝ դաշնակցություն կուսակցության անդամ պատգամավորներից մեկը[1]:

Հատկանշական է, որ պառլամենտի դաշնակցական պատգամավորներն ու «Ազատամարտ» թերթը ամեն ինչ անում էին չեզոքացնելու պառլամենտի հակաիթթիհադական պատգամավորների՝ երիտթուրք ղեկավարության դեմ սկսած քննադատությունները:

Կ. Պոլսում լույս տեսնող «Զէզոք» թերթը նշում էր, որ երիտթուրք նշանավոր գործիչներից մի քանիսը (Ռիզա Թևֆիք, Լութֆի Ֆիքրի, Շերիֆ էլ-Մուայյեդի, Հասան բեյ և ուրիշներ) սկսել են հրապարակով խստորեն քննադատել իրենց կուսակցության ղեկավարությանն այն բանի համար, որ նա ոտնատակ է տվել սահմանադրությունը, որի պատճառով դա փաստորեն այլևս գոյություն չունի: Եվ ահա՛ դաշնակցական պատգամավորները պառլամենտում և «Ազատամարտ» թերթը հարձակումներ էին կատարում Իթթիհադին քննադատող թուրք գործիչների վրա, վճռականորեն մերժում այն հայտարարությունները, թե երկրում փաստորեն սահմանադրություն չկա: Պառլամենտում Վարդգեսը ծաղրանքով ասում էր. «Եթէ Սահմանադրութիւն չըլլար, ո՛չ ես կրնայի խօսիլ հոս, ո՛չ ալ դուք»[2]: Պատասխանելով Վարդգեսին, պառլամենտի հակաիթթիհադական պատգամավորներից մեկն ասում էր. «Վարդգէս հաւատացնել կ՚ուզէ թէ՝ հո՞ն ուր երեսփ[ոխական] ժողով մը կայ, հոն սահմանադրական սկզբունքները կը թագաւորեն անխափան: Վարդգէս չի՛ կրնար խորհիլ որ՝ երեսփ[ոխական] ժողովի մը

---

[1] *Տե՛ս* ***«Հորիզոն»****, № 284, 21 դեկտեմբերի 1910 թ.:*

[2] ***«Զէզոք»****, № 4, 29 հոկտեմբերի (11 նոյեմբերի) 1910 թ.:*

գոյութիւնը վճռական հաւաստիքը չէ Սահմանադրութեան անգոյութեան՝ իր հիմնական ոգիովը: Ռուսիան ունի երեսփ[ոխական] ժողով [Տուման], բայց ո՛չ Սահմանադրութիւն կայ Զարին կառավարութեան մէջ, ո՛չ ալ Ազատութիւն»[1]:

Մի ուրիշ առիթով, երբ դոկտ. Ռիզա Թևֆիքը հայտարարել էր, թե հին ռեժիմի օրով երբ ինքը բանտարկված էր, իրեն գրքեր էին տալիս կարդալու, իսկ ներկայումս բանտարկյալներն այդ մասին երազել անգամ չեն կարող, դրան ի պատասխան Վարդգեսն ասել էր. «Ես ալ հին ռեժիմին օրով բանտարկուած ատեն՝ իմ գլուխը պատռած են»: Հակադարձելով Վարդգեսին՝ «Զէզոք» թերթը գրում էր. «Բայց ան կը մոռնայ թէ՝ սահմանադրական ռեժիմի մէջ մակեդոնացիներուն ո՛չ միայն զանոնք անլուր խոշտանգումներու ենթարկած են, այլ նաեւ անոնցմէ շատերուն եղունգները քաշած են և թեւերնուն տակ տաք հաւկիթներ դնելով տանջած են, ինչպէս կը յայտարարեն երեսփոխաններ»[2]:

Երիտթուրքերի նկատմամբ իր լավատեսությունն ավելի առաջ տանելով, Վարդգեսը նաև այսպիսի հայտարարություն էր արել. «Հայկական գաւառներուն մէջ թէեւ մանր-մունր ոճիրներ կը գործուին, սակայն ատոնք հայութեան դէմ ուղղուած չեն, այլ՝ մասնակի ոճիրներ են»[3]:

Ի պատասխան այդ ապշեցուցիչ հայտարարության, «Զէզոքը» գրում էր. «Կը լսէ՞ք այս խօսքերը: Երբ հայ երեսփոխան մըն է որ ասանկ կ՚ըսէ, ալ կառավարութիւնը ի՞նչ կը խորհի: «Մանր-մունր ոճիրնե՞ր»: Վարդգէս կը յիշէ՞ արդեօք այդ «մանր-մունր, մասնակի ոճիրներուն» հաւաքական հաշիւը: Կամ արդեօք ի՞նչ կ՚ուզէ եղեր՝ որպէսզի անոնք «մանր-մունր» և «մասնակի» չըլլան: Օրական յիսուն-հարիւր հայու սպանուի՞լը: Փոխանակ բողոքի, արդարացո՞ւմ: Ա՞ս է իր մարդասիրութիւնը: Այս ոճրապաշտպան փաստաբանութեա՞ն համար 50.000 օսմանցիներ իրենց ձայնը վստահեցան պրն. Վարդգէսին»[4]:

---

[1] **«Զէզոք»**, № 4, 29 հոկտեմբերի (11 նոյեմբերի) 1910 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

ԵՐԵՔ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԻ ԵԶԱԿԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1911 թ. հուլիսին տեղի ունեցավ Կ. Պոլսի քրիստոնեական երեք համայնքների ղեկավարների եզակի համագործակցության մի գործընթաց, որը բացառիկ էր այդ համայնքների երկարամյա պատմության մեջ:

Կառավարությունը չարունակում էր ճնշումներ գործադրել ոչ միայն հայ, այլև Կ. Պոլսի մյուս երկու՝ հույների և բուլղարների պատրիարքարանների վրա՝ ուրանալով նրանց դարավոր իրավունքները և անուշադրության թողնելով նրանց բողոքները:

Հայ և հույն պատրիարքները, ինչպես նաև բուլղարաց էկզարխը իրենց հերթին մշտապես պնդում էին, թե ինչպես անցյալում, նույնպես և սահմանադրության շրջանում իրենք լոկ հոգևոր պետեր չեն հանդիսանում, այլ նաև իրենց ազգային ինքնավար կազմակերպությունների ղեկավարներ են, որոնք իրենց հավատացյալների շահերը ներկայացնում են կառավարության առջև:

Մասնավորապես հույների և հայոց պատրիարքարանների իրավունքները սահմանված էին կառավարական օրենքներով. Բարձր Դուռը 1861 թ. հաստատել էր հունաց պատրիարքարանի կանոնադրությունը, իսկ 1863-ին վավերացվել էր Հայոց Ազգային սահմանադրությունը:

Հետագա տարիներին, մանավանդ Աբդուլ Համիդի ժամանակներում, հույներին ու հայերին տրված իրավունքները գնալով ավելի ու ավելի հաճախ էին ոտնահարվում:

Հունաց պատրիարքարանի իրավունքների սահմանափակման առաջին լուրջ փորձն արվել էր 1880-ականների վերջերին՝ Սաիդ փաշայի վարչապետության ժամանակ: Բողոքելով կառավարության այդ քայլերի դեմ, հունաց պատրիարքը սպառնացել էր փակել Օսմանյան պետության սահմաններում գտնվող բոլոր հունական եկեղեցիները: Օրթոդոքս պատրիարքի այդ սպառնալիքի առջև կառավարությունը ստիպված տեղի էր տվել՝ Եվրոպայում ավելորդ բարդություններ առաջ չբերելու համար: Վերջապես 1891-ին նույն Սաիդ փաշայի հատուկ շրջաբերակա-

նով վերականգնվել էին հունաց պատրիարքարանի առանձնաշնորհումները և վերաբացվել էին հունական եկեղեցիները:

Ինչպես ցույց ենք տվել աշխատության նախորդ էջերում, թուրքական կառավարությունն անհամեմատ ավելի անպատկառորեն էր միջամտում հայոց եկեղեցական կյանքին և ամեն քայլափոխի ոտնակոխ էր անում հայոց իրավունքները: Ի տարբերություն հույների, հայ կղերը չէր համարձակվում իշխանությունների դեմ կտրուկ բողոքել հայության համար ստեղծված աննախադեպ ճնշումների ու ջարդերի անտանելի մթնոլորտում:

Եվ ահա հիմա, 1911 թվականին, նույնպիսի արիություն ցույց տվեց հույների Իոակիմ III պատրիարքը՝ տեղի չտալով երիտթուրքերի ճնշումների առաջ: Այս անգամ, սակայն, նա իր հոտի եկեղեցիները փակելու սպառնալիքի պետքը չունեցավ և կառավարության դեմ գործեց նուրբ դիվանագիտությամբ:

Հաշվի չառնելով այն հանգամանքը, որ հույները ատելություն են տածում բուլղարների նկատմամբ և ինքն էլ ունի հակաբուլղարական տրամադրություններ, Հովակիմ պատրիարքը դիմեց Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին՝ միջնորդ հանդիսանալու հունաց պատրիարքարանի և բուլղարների էկզարխարանի միջև, նպաստելու դրանց մերձեցմանն ու համերաշխությանը, որպեսզի կարողանան միասնական ուժերով դուրս գալ Բարձր Դռան հերթական արշավի դեմ:

Քննարկելով հույն պատրիարքի դիմումը, թուրքահայոց պատրիարքարանը որոշեց ընդառաջել ներկայացված խնդրանքին:

1911 թ. հուլիսի 20-ին Հովհաննես Արշարունի սրբազանի մասնակցությամբ Կ. Պոլսում տեղի ունեցավ հունաց պատրիարքի և բուլղարաց էկզարխի հանդիպումը: Քննարկելով իրենց ազգամիջյան խնդիրները, վերջիններս որոշեցին ջանքեր գործադրել թուլացնելու հակասությունները երկու հասարակությունների միջև և համատեղ հանդես գալ իշխանությունների՝ իրենց ազգային-եկեղեցական իրավունքների բռնադատման դեմ:

Երկու կրոնական հարանվանությունների համերաշխության այս մթնոլորտը հայ սրբազանին տրամադրեց միանալ ստեղծված համաձայնությանը: Կազմվեց ոչ թե երկու, այլ երեք

ազգերի հոգևոր պետերի միասնական ճակատ Բարձր Դռան դեմ:

Դրանում վտանգ տեսնելով, Բարձր Դուռը որոշեց նահանջել և մեղմել հույների դայրույթը: Նա հայտարարեց, որ այսուհետ լրջորեն հաշվի կառնի երեք պատրիարքարանների դիմումներն ու առաջարկությունները և դրանք քննելու համար կձևավորի հատուկ մասնախումբ, որի մեջ մի շարք նախարարներ կմտնեն: Նշված երեք հարանվանությունների պետերն իրենց առաջարկները մասնախմբին պիտի ներկայացնեին համատեղ՝ ելնելով իրենց որոշակի պահանջներից:

Հուլիսի 27-ին տեղի ունեցավ Հայոց Ազգային ընդհանուր ժողովի նիստ, որն ընտրեց երեք հոգու՝ իբրև հայոց պատրիարքարանի ներկայացուցիչներ: Դրանք էին՝ Հովհաննես Արշարունի սրբազանը, դոկտ. Նազարեթ Տաղավարյանը և Ստեփան Կուրտիկյանը: Ընտրվելուց հետո նույն օրը նշանակված ժամին նրանք մեկնեցին արդարադատության նախարարություն, ուր արդեն գտնվում էին հույների ու բուլղարների ներկայացուցիչները[1]:

Հանդիպումը արդարադատության նախարարի հետ էր, որն իր հետ ուներ կրոնից տեսչին: Երկու ժամ տևած խորհրդակցության ընթացքում քննության առնվեց երկու հարց, որոնք նախապես համաձայնեցվել էին երեք հարանվանությունների ղեկավարների հետ: Դրանք կրթական և զինվորական հարցերն էին:

Նշված հարցերի քննարկման արդյունքում կուսակցության ներկայացուցիչ-նախարարը հայտարարեց, թե ներկայացված պահանջներն ընդհանուր առմամբ ընդունելի են:

Կրթական ընագավառում կառավարությունը մի շարք զիջումներ կատարեց. 1) Վերահաստատվեց հայ, հույն և բուլղար համայնքների հոգևոր պետերի իրավասությունն իրենց պատկանող վարժարանների վրա, 2) Ճանաչվեց համայնքների ներկայացուցիչների՝ դպրոցական ծրագրեր պատրաստելու և վա-

---

[1] ***«Բիւզանդիոն»****, № 4495, 27 հուլիսի (9 օգոստոսի) 1911 թ.:*

վերացնելու իրավունքը. վավերացումից հետո դրանք պետք է ներկայացվեին կրթական նախարարության հաստատմանը, 3) Թույլատրվեց, որ համայնքների ներկայացուցիչներն իրենք որոշեն ազգային դպրոցների ուսուցիչների պաշտոնավարման ժամկետները և նրանց վկայական տալը, 4) Նախքան կրթական նախարարության քննիչները նշված հարանվանությունների դպրոցներ գալը՝ այդ մասին պետք է տեղեկացվեն տեղի հոգևոր իշխանությունները, որպեսզի սրանք հնարավորություն ունենան ստուգումների ժամանակ ուղարկելու իրենց ներկայացուցչին՝ հարկ եղած բացատրությունները տալու համար, 5) Համայնքներին էր վերապահվում իրենց դպրոցներին նպաստներ տալու իրավունքը, այսինքն՝ եթե վարժարաններին հատկացվեր պետական նպաստ, ապա միայն առաջնորդարանները պետք է որոշեին առավել կարիքավոր վարժարանների ցանկը, 6) Դպրոցական խնդիրների վերաբերյալ թյուրիմացություններ և այլևայլ տարաձայնություններ ծագելու դեպքում պաշտոնատար անձինք իրավասություն չունեն խառնվելու դրանց վերացմանը, այլ այդ մասին միայն պետք է տեղեկացնեն նախարարությանը, 7) Օտարահպատակները բարձր վարժարաններում պաշտոնավարելու իրավունք չունեն, բայց որոշ սահմանափակումներով կարող են դասավանդել տարրական դպրոցներում, 8) Վարժարանների լրիվ դասընթացներն ավարտածները կարող են ստանալ ազգային լեզվով գրված վկայականներ, որոնց պարտադիր պետք է կցվեն դրանց թուրքերեն թարգմանված պատճենները, 9) Ազգային դպրոցներն ավարտածները իրավունք են ստանում վարելու պետական և վարչական պաշտոններ[1]:

Քանի որ համաձայնության այս մասը նախատեսվել էր կյանքի կոչել 1913/1914 ուսումնական տարվանից, ուստի վերահաս համաշխարհային պատերազմի պատճառով անիրագործելի մնաց:

Այնուհետև քննության առնվեցին ***զինվորական*** *խնդիրները: Այս հարցում պատրիարքարաններն ավելի շատ բաղձանք էին արտահայտում, քան՝ պահանջ: Այնուամենայնիվ երկու կողմերը*

---

[1] ***«Բիւզանդիոն»****, № 4496, 28 հուլիսի (10 օգոստոսի) 1911 թ.:*

համաձայնության եկան, որ 1) Խաղաղ ժամանակ զինվորական ծառայությունը հիմնականում կատարվելու է երիտասարդի զորակոչման նահանգում, իսկ պատերազմի դեպքում նա ուղարկվելու է հրամանատարության նպատակահարմար գտած որևէ տեղ, 2) Արգելվելու է զինվորական ծառայության մեջ գտնվող ոչ-իսլամների կրոնափոխությունը, 3) Զինվորական վարժարաններ ընդունվողների համար բավարար է համարվելու Թուրքերենի ոչ-գերազանց իմացությունը[1]:

ՕՍՄԱՆ ՓԱՇԱՅԻ «ԶՐՈՒՅՑԸ»

1911 թ. հուլիսի կեսերին օսմանյան 4-րդ զորաբանակի ընդհանուր քննիչ, ազգությամբ թաթար[2] մուշիր Օսման փաշան Թուրքահայաստանի մի շարք վայրեր շրջագայության էր դուրս եկել: Գալով Կարին (Էրզրում), այնտեղից նա մեկնել էր Վան: Տեսնելով, որ այս քաղաքում իր սպասածից ավելի հայեր կան, նա ասել էր. «Ինչպէ՞ս կլինի, որ այս հայերը այնքան կոտորուեցին եւ այնքան մեռան բանտերի խորքերում ու կախաղանների վրայ, բայց դեռ այդքան էլ շատ մնացել են քաղաքում»[3]:

Վանում իր ստուգումներն ավարտելուց հետո մուշիրը մեկնում է Մուշ: Ճանապարհին նրան են միանում քուրդ ավազակապետներ, որոնց ուղեկցությամբ նա մտնում է Մուշի Խասգյուղ: Շուտով հավաքվում են մեծաթիվ քրդեր: Այստեղի հայ երևելիները ներկայանալով Օսման փաշային՝ բարի գալուստի մաղթանքներ են հղում նրան: «Զրույցի» ժամանակ հայերի մաղթանքներին պատասխանելով, նա մի քանի ուշագրավ և անվերապահ հայտարարություններ է անում:

Հայ ժողովրդի հասցեին մի շարք անզուսպ և արյունագրգիռ արտահայտություններ թույլ տալուց հետո Օսման փաշան պարծանքով ու հպարտությամբ ասում է. «Այո՛, կը խոստովա-

---

[1] **«Բիւզանդիոն»**, № 4496, 28 հուլիսի (10 օգոստոսի) 1911 թ.:

[2] **«Աւետաբեր»**, № 38, 21 սեպտեմբերի 1912 թ.:

[3] **«Աշխատանք»**, № 28, 13 օգոստոսի 1911 թ.:

*նինք, թէ այս հողերը ձերն էին ամբողջութեամբ, բայց մենք, օսմանցիներս, քանի մը հարիւր հոգիով եկանք, կռուեցանք եւ գրաւեցինք բոլորը, ու հող բնակող ցեղերը իսլամացնելով, ձեւացուցինք այսօրուան 25-30 միլիոնի չափ թուրք ժողովուրդը: Ուրեմն, դուք, աշխատեցէ՛ք ետ առնելու մեզմէ այդ հողերը, ու եթէ չաշխատիք, **մարդ չէք**»[1] (ընդգծումը թերթինն է:- Հ. Ս.):*

Հետո խոսքն ուղղելով վերջին տասնամյակների ընթացքում հայերի զանգվածային սպանություններին, երիտթուրք մուշիրն ասում է, թե դրա մեղավորներն իրենք՝ հայերն են: «Թող հանգիստ մնայիք, որ չսպանուէիք»,- հատուկ շեշտով «գյավուրներին» խրատում է նա և ավելացնում. «Մենք լաւ գիտենք որ ձեր այնքան թափած ջանքերը, յեղափոխական շարժումները սահմանադրութիւն ձեռք բերելու համար չէին, այլ՝ առանձին պետութիւն մը հիմնելու...»[2]: Ապա՝ «Հայերն ունեն Ամերիկայէն կամ Ռուսաստանէն եկած «չաբդալի» դաշնակցականներ, որոնք մտքերը կը թունաւորեն, երկրի խաղաղութիւնը կը վրդովեն եւ մեր դրամները չորթելով կ'անցնին արտասահման»[3]:

«Զրույցի» ընթացքում Օսման փաշան լիակատար պաշտպանության տակ է առնում ներկա գտնվող քուրդ ավազակապետներին, և դիմելով հայերին ասում է. «Դուք խելացի քաղաքագէտ եւ զարգացած մարդիկ ըլլալով, կրնաք յաջողել ձեր ճարտարախօսութեամբ կամ զօրաւոր գրչով, բայց խեղճ քիւրտ տարրը կիսավայրենի, տգէտ ու քաղաքականութեան անտեղեակ ըլլալով, ունի միայն ոյժ ու զէնք: Քիւրտերը ստիպուած են ատով պաշտպանել իրենց իրաւունքները»[4]:

Անդրադառնալով հողային հարցին, Օսման փաշան այնուհետև ասում է. «Դուք հայերդ սահմանադրութեան այս երեք տարուան ընթացքին մէջ հողային խնդիրը ամրապէս գրկած, ահագին խռովութիւններու տեղիք տուիք՝ քիւրտերը զրկելով իրենց ապրուստէն»[5]: Ազգամիջյան թշնամանքը խորացնելու

---

[1] ***«Արագած»,*** *№ 15, 31 օգոստոսի 1911 թ.:*

[2] *Նույն տեղում:*

[3] ***«Աշխատանք»,*** *№ 28, 13 օգոստոսի 1911 թ.:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Նույն տեղում:*

նպատակով նա հայտարարում է, թե հայերը, իբր, դիմել են իշխանություններին և պահանջում են քրդերին Հայաստանից վտարել[1]:

Լեոն մեջբերում է Թուրք մուշիրի խոսքերը, որ «թեև քրդերը նեղում են հայերին, կողոպտում նրանց, բայց կառավարությունը չի լքի քրդերին և երբեք թույլ չի տա, որ հայերը տիրանան նրանց հողերին»[2]: «Այս մի պրովոկացիա էր,- շարունակում է Լեոն,- որ կատարվում էր կառավարության ներշնչումով և վերացնում էր հայ-քրդական հարաբերությունների լավացման ամեն մի հույս»[3]:

Երիտասարդ Թուրքերը ցույց էին տալիս, որ քուրդ կալվածատերերն իրենց համար նույնքան թանկ են, որքան թանկ էին հին ռեժիմի համար:

Մուշում Օսման փաշայի «զրույցը» մեծ հուզում առաջ բերեց Թուրքահայաստանում:

Հուլիսի 25-ի թվով «Բիւզանդիոն» թերթին 12 ստորագրությամբ Ամասիայից հղած հեռագրում ասված էր, որ «Օսման փաշայի՝ հայութեանը նախատող, Օսմ[անեան] տարրերը զիրար ձգող եւ ոճրագործները քաջալերող եւ ժողովրդական զզուանք ազդող յայտարարությունները հանրային կարծիքի վրայ չատ յոռի տպաւորութիւն գործեցին: Այս առթիւ որոշուեցաւ միթինկ մը գումարել հրապարակաւ Օսման փաշայի խօսքերուն մեր ցասումը յայտնելու համար, սակայն կառավարութեան չափազանց զբաղուած վիճակը եւ մեր արտաքին թշնամիներուն ամեն առիթէ օգտուելու պատրաստ գտնուիլը նկատի առնելով, հայրենիքին օգտին համար միթինկ չգումարելը յարմար դատուեցաւ»[4]:

«Զարմանքէ ու զայրոյթէ աւելի զզուանք ու անհուն ցաւ զգացինք կարդալով Դ. զօրաբանակի քննիչ միւշիր Օսման փաշայի խօսքերը»[5],- գրում էր Վանի «Աշխատանք» շաբաթաթերթը:

---

[1] Տե՛ս **Վահան Ա. Բայբուրդյան**, Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, էջ 198:

[2] **Լեո,** Անցյալից, էջ 241:

[3] Նույն տեղում:

[4] **«Բիւզանդիոն»**, № 4495, 27 հուլիսի (9 օգոստոսի) 1911 թ.:

[5] **«Աշխատանք»,** № 28, 13 օգոստոսի 1911 թ.:

Հոդվածագիր Ա. Մկրտչյանը նկատում էր, որ Մուշը Թուրքիայի այն վայրերից է, ուր ազգային խնդիրները ծայրահեղորեն խճճված են, միմյանց դեմ կանգնած են հայերը, թուրքերը և քրդերը, լարված են ունևորների ու աղքատների փոխհարաբերությունները, ամենուր բողոքներ են լսվում, քանի որ լուծված չէ հողային հարցը, իսկ կրթական գործը ողբալի վիճակում է: Ո՞վ պիտի մտածի այդ հարցերի լուծման մասին: Իթթիհադին և նրա ղեկավարներին, հետևապես նաև Օսման փաշային այդ հարցերը բնավ չեն հուզում: Նրանց նպատակը հայ չտեսնելն է: «Այդ դրութիւնը ստեղծուած է ոչ միայն Մուշի համար, այլ[եւ] հայկական գաւառներու, ամբողջ Տաճկաստանի համար»[1]:

Եվ մի՞թե հասկանալի չէր, որ Օսման փաշայի այդ գրգռիչ խոսքերը ոչ միայն պիտի արդարացնեին բռնություններն ու կեղեքումները, այլև նոր Աղանաներ ստեղծեին:

«Սահմանադրութիւնն անարգուած է Օսման փաշայի բերանով...»,- գրում էր «Աշխատանքը»:- Նոյն անբարտաւան սպառնալիքը, նոյն կոտորածի մղձաւանջը ու նոյն համիդական քաղաքականութիւնը – կասկածի, պրովոկասիոնի, թշնամութեան ու մոլեռանդ ատելութեան:

Թիւրքիոյ ներկայ վարիչներն ալ չը հասկացան, որ բնաւ չի կարելի խաղ ընել ժողովուրդներու ինքնասիրութեան, ազգ[ային] զգացումներու եւ իրաւունքներու հետ»[2]:

Թուրքահայաստանից ստացված բողոքների հիման վրա Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը բողոքով դիմել էր Բարձր Դռան և խնդրել պատասխանատվության ենթարկել Օսման փաշային՝ ազգամիջյան գժտություններ առաջ բերելու համար: Զգձգելով հարցը՝ կառավարությունն ի վերջո պատասխանել էր, թե «Օսման փաշայի այս միջոցին ուր գտնուիլը ճշդել կարելի չէ եղած»[3]:

Այստեղ մեզ հետաքրքրողը Օսման փաշայի անձը չէ, այլ այն մտքերը, որոնք նա արտահայտել էր առավել տառապած մի

---

[1] **«Աշխատանք»**, № 28, 13 օգոստոսի 1911 թ.:

[2] Նույն տեղում, № 27, 7 օգոստոսի 1911 թ., № 28, 13 օգոստոսի 1911 թ.:

[3] **«Բիւզանդիոն»**, № 4495, 27 հուլիսի (9 օգոստոսի) 1911 թ.:

վայրում, մի տանջված ժողովրդի առաջ, հայտնի ավազակապետների ներկայությամբ:

Տվյալ պարագայում անարգելով Դաշնակցությանը («չարդալի դաշնակցականներ»), երիտթուրք մուչիրն անարգում էր ողջ հայությանը: Օսման փաչայի ցինիկ արտահայտություններն արվել էին այն ժամանակ, երբ Դաշնակցությունն Իթթիհադից հեռանալու փորձեր էր անում:

ԾՈՒՂԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԱՆՀԱՋՈՂ ՓՈՐՁԵՐ

Դաշնակցությունը և նրա մամուլը տարիներ չարունակ խուսափում էին Իթթիհադին ու նրա կառավարությանը քննադատելուց: Եվ երբ դաշնակցական ղեկավարներին հարց էին տալիս, թե ինչո՞ւ կուսակցությունը լիովին հրաժարվել է երիտթուրքական կառավարությանը մի թթու խոսք ասելուց, նրանք «Հայրենիք» թերթի բերանով պատասխանում էին, թե նույն կերպ վարվել է Մաղաքիա արք. Օրմանյանը ժամանակի թուրքական կառավարության նկատմամբ[1]: Իսկ այն հարցին, թե այդ դեպքում ինչո՞ւ դաշնակցականները դրա համար դաժանաբար հալածում էին այդ մեծ եկեղեցականին, նրանք պատասխանելու բան չէին ունենում:

Արդեն 1910 թ. սկզբներից Դաշնակցության մամուլի առանձին օրգաններ զգուշավոր քննադատական խոսքեր էին ուղղում Իթթիհադի հասցեին[2]:

Հայության համար իրադարձությունների վատթար զարգացման հետ գնալով ավելի սուր էին դառնում դաշնակցական մամուլի քննադատությունները հատկապես 1911 թ. սկզբներից:

Դաշնակցության այդ օրերի մամուլի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Իթթիհադի վարած քաղաքականության դեմ խիստ քննադատությամբ հանդես էին գալիս ամենից առաջ գավառային թերթերը, քանի որ հենց գավառահայությունն էր

---

[1] Տե՛ս **«Հովիւ»**, № 11, 28 մարտի 1910 թ., էջ 162:

[2] Տե՛ս, օրինակ, **«Բուլթանիա»** թերթի 1910 թ. № 7-ում զետեղված «Համերաշխութիւն» վերտառությամբ հոդվածը:

ամենից չատ ենթակա երիտթուրքական բռնապետության արհավիրքներին:

Դաշնակցությունը բացահայտորեն սկսել էր զղջալ երիտթուրքերի հետ միանալու և զինաթափվելու համար: Վանի դաշնակցական «Աշխատանք» շաբաթաթերթը գրում էր.

*«Մենք, որ սրտի անհուն բերկրանքով ընդառաջ գնացինք Սահմանադրութեանը ու **վար դրինք մեր զէնքերը,** խորապէս կհաւատայինք, որ նոր Թիւրքիան պիտի աշխատէ չտկել անցեալի սխալները, պիտի բուժէ մեր վէրքերը եւ պիտի տեսնէինք իրաւունքի ու արդարութեան յաղթանակը: Բայց դեռ մեր թշուառ երկրի տարաբաղտ հալածուածներն ու զրկուածները կսպասեն ակնդէտ»[1]:*

Թվարկելով այն արհավիրքները, որոնք սահմանադրության չորրորդ տարում կրում էր հայ ժողովուրդը և սպասում, թե ե՞րբ, վերջապես, կառավարությունը որևէ բան կձեռնարկի փոքր ինչ թեթևացնելու նրա վիճակը, պարբերականն արդեն առանց երկբայելու ակնարկում էր. «Կարծէք սակայն զուր կսպասենք...: Բաժակը կլեցուի...»[2]:

ՀՅ դաշնակցության Կ. Պոլսի պատասխանատու մարմինը (կենտրոնական կոմիտե) 1911 թ. ամռանը որոշում էր ընդունել խզել «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հետ ունեցած իր հարաբերությունները, քանզի նրա կառավարությունը հրաժարվում էր պաշտպանել Թուրքիայի հայ բնակչությանը[3]:

Նույն 1911 թ. օգոստոս-սեպտեմբերին Կ. Պոլսում տեղի ունեցած ՀՅԴ Վեցերորդ ընդհանուր ժողովը[*], ի տարբերություն

---

[1] ***«Աշխատանք»**, № 27, 7 օգոստոսի 1911 թ.:*

[1] *Նույն տեղում:*

[3] *Տե՛ս **«Ժայռ»**, № 57, 8 սեպտեմբերի 1911 թ.:*

[*] *Միքայել Վարանդյանը սխալմամբ գրել է, թե ՀՅ դաշնակցության Վեցերորդ ընդհանուր ժողովը տեղի է ունեցել 1909 թ. Վառնայում (տե՛ս **Միքայէլ Վարանդեան,** «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն», հատ. Բ, Բ հրատ., էջ 318): Վառնայում 1909 թ. սեպտեմբերին կայացել էր ՀՅԴ Հինգերորդ ընդհանուր ժողովը: Հնարավոր է, որ Միք. Վարանդյանի գրքի գրաչարը չփոթած լինի 5 և 6 թվանշանների միջև:*

1909 թ. սեպտեմբերին Վառնայում տեղի ունեցած ՀՅԴ Հինգերորդ ընդհանուր ժողովի ընդունած որոշման, նշում էր, որ կառավարությունը, փոխանակ արժանի պատիժ տա Ադանայի ջարդերն իրականացնողներին, ընդհակառակը, նրանց ազատում է բանտերից[1]:

Այնուհետև, երկու կուսակցությունների փոխհարաբերությունները ճշտելու համար ՀՅԴ ընդհանուր ժողովը դիմում էր Իթթիհադին պարզելու համար, որ եթե նա և իր կառավարությունը ***գործով երաշխիքներ*** *չտան, թե մինչ այժմ կրկնած խոստումները հետայսու կիրագործվեն, այդ դեպքում Դաշնակցության Արևմտյան բյուրոն կարտոնվի, որ «դադրեցնէ իր յարաբերութիւնները Իթթիհատին հետ»[2]: Միաժամանակ, ընդհանուր ժողովը հանձնարարեց կուսակցական մարմիններին ու օսմանյան խորհրդարանի իր պատգամավորներին՝ պայքարել կառավարութեան հակահայկական քաղաքականության դեմ՝ «այն բոլոր օրինական միջոցներով, զոր կը թելադրէ կացութիւնը»[3]:*

Բայց ընդհանուր ժողովի ընթացքին և նրա ընդունած որոշումներին տեղեկացված Իթթիհադը ոչ միայն ***գործով*** *երաշխիքներ չտվեց, գրում էր Վահան Փափազյանը, այլև ճիշտ հակառակն արեց:*

Նման իրավիճակում Դաշնակցությունը մի նոր, այս անգամ վերջին, համաձայնագիրը ստորագրեց Իթթիհադի հետ[4]: Եվ դա այն դեպքում, երբ վերջինս արդեն իր վերջնական վճիռն էր հանել հայության մասին՝ նրան ոչնչացնել ազգովին:

1911 թ. Իթթիհադի կոմիտեն հրահանգ իջեցրեց գավառների իր կազմակերպություններին ու ակումբներին՝ աննկատ ու աստիճանական կերպով խոչընդոտել հայերի առաջխաղացումը կյանքի բոլոր ոլորտներում, խիստ վերահսկողություն սահմանել նրանց քաղաքական կազմակերպությունների վրա:

---

[1] ***«Վէմ»***, *№ 1, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1933, էջ 86-87:*

[2] ***Վահան Փափազեան***, *Իմ յուշերը, հատ. Բ, էջ 77-78:*

[3] *Նույն տեղում, էջ 88:*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 88-89:*

Բոլոր բողոքներն անհետևանք էին մնում: Աննախադեպ չափերով շատացան հայերի սպանությունները գավառներում: Իթթիհադի գավառային ակումբները, որոնք հիմնականում կազմված էին ամենագարշելի, գռեհիկ ու կեղեքող տարրերից, իբրև ամենաչահագրգիռ կողմ, օգտվելով վերևից իջեցված հրահանգներից, մեծ եռանդով և ավելի չնական, ավելի բացարձակ կերպով էին գործադրում իրենց հայահալած միջոցները: Շատ վայրերում արդեն լսվում էին համատարած ջարդի սպառնալիքներ:

Այսպիսի մթնոլորտում, ինչպես վկայել է Վահան Փափազյանը, «Դաշնակցութիւնը վտանգաւոր համարեց մէկէն խզել կապը Իթթիհատի հետ եւ ծայրայեղ լարման հասցնել յարաբերութիւնները՝ խորապէս գիտակցելով անոր աղէտաբեր հետեւանքները»[1]:

Ավելին, Իթթիհադը հրապարակ բերեց մի պահանջ, որը որևէ մեկի մտքով չէր անցնում: Նրա կոմիտեն ազգային հարցի «լուծման» եղանակներից մեկը համարեց կայսրության ազգային չրջանակներում քաղաքական կազմակերպությունների վերացումը: Կոմիտեն գտնում էր, որ եթե կա սահմանադրություն, որի կարգերի պայմաններում բոլորն օսմանցիներ են, ապա անհասկանալի է դառնում դեռևս չթուրքացած ազգերի ներսում կուսակցությունների գոյությունը: Այդ էր պատճառը, որ 1911 թ. հուլիսին օսմանյան սահմանադրության եռամյակի կապակցությամբ կառավարության կազմակերպած ընդունելությանը չէին հրավիրվել ազգային կուսակցությունների ներկայացուցիչները: Նախօրյակին Իթթիհադի պարագլուխները հայտարարել էին. «Յանուն օսմանցիութեան՝ քաղաքական կուսակցութիւններ չը պիտի լինեն, եւ եթէ այսօր կերպով մը գոյութիւն ունեն ու պէտք է երեւան, հրապարակ ելնեն ... պէտք է լուռ ու մունջ մնան...»[2]:

ՀՅ դաշնակցության Շամի (Վասպուրականի) կենտրոնական կոմիտեի օրգան «Աշխատանք» թերթը բողոքելով գրում

---

[1] Տե՛ս **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Բ, էջ 88–89:

[2] **«Աշխատանք»**, № 24, 17 հուլիսի 1911 թ.:

էր, որ մերժելով այլազգիների քաղաքական կուսակցություններ-ի հետ տոնել նրանց արյունով ու ջանքերով ձեռք բերած ազա-տությունը, կառավարությունն ու Իթթիհադը գնացին տոնը նշելու աշիրաթապետների ու մյութեդալիբների, աղաների ու բե-կերի հետ; Եվ այդպես վարվողները, դժբախտաբար, մի ամբողջ երկրի ղեկավարներ են; Երիտասարդ համարվող Թուրքերը լավ պիտի հասկանան, որ քաղաքական կուսակցություններն են, որոնք պիտի պատրաստեն քաղաքացիական հասկացողու-թյամբ օժտված ժողովուրդ: Երիտթուրքերը պիտի ընդունեն, որ հալածելով քաղաքական կուսակցությունները, դրանով իսկ հա-լածում են սահմանադրությունը[1]:

Միամտության մի նոր դրսևորում: «Երիտասարդ համար-ված Թիւրքերը» չատ լավ էլ հասկանում էին, չատ լավ էլ գի-տեին, թե ինչ են անում:

ՀԻՇԱՏԱԿԱԳԻՐ ՍԱՀԴ ՓԱՇԱՅԻՆ

Սահմանադրության հռչակումով՝ հայերի սպանությունն-ը համարյա դադարել էին: Այդ երջանիկ ժամանակամիջոցը տևեց ընդամենն ինն ամիս՝ մինչև Ադանայի կոտորածը: Կիլիկ-յան ջարդերից հետո հայերի սպանության դեպքերը, սկզբում հատ-հատ, վերսկսվեցին և գնալով պարբերական դարձան ու սկսեցին աճել: Շաբաթ չէր անցնում, որ լրագրերը Թուրքահա-յաստանում կատարված դեպքեր չարձանագրեին իրենց էջե-րում:

Միայն 1911 թ. առաջին երկու ամիսների ընթացքում միայն Վանի վիլայեթում Թուրքերը և քրդերը սպանել էին 284 հայի, այդ թվում՝ 62 կին և 39 աղջիկ, իսկ 16 կին բռնի իսլամացվել էր*:

---

[1] **«Աշխատանք»**, № 24, 17 հուլիսի 1911 թ.:

* 1910 թ. համեմատությամբ 1911 թ. հայերի բռնի իսլամացումն աննախ-ընթաց չափեր էր ընդունել: Իսլամացումը կատարվում էր ոտնահարելով մարդկային տարրական իրավունքները՝ նախկին կամայական եղանակներով,

Կարծես այդ ամենը քիչ էր, պոլսահայության գլխին մի նոր աղետ տեղաց: 1911 թ. հուլիսի կեսերին, սահմանադրության տարեդարձի օրերին Կ. Պոլսում ծագեց մի սարսափելի հրդեհ, որն ամբողջ թաղեր ճարակեց: Երկնակամարը լուսավորվել էր, բոցերը չառագունել էին տասնյակ մղոններ: Հրդեհի ճարակ դարձավ 10.000 շինություն, զոհվեցին բազմաթիվ մարդիկ, 100.000 բնակիչ մնաց անօթևան: Վնասը մոտ 40 միլիոն ռուբլի էր կազմում:

Տուժել էին բոլոր ազգությունների մարդիկ, բայց ամենից շատ՝ հայերը: Քաղաքի բոլոր թաղերից մեծապես տուժեցին Հայահոծ Սամաթիան, Գում-Գափուն, Մաքրիգյուղը և Ղալաթիան: Հայերի մեծ մասը զրկվեց ինչքից ու գույքից: Ճակատի քրտինքով ձեռք բերածը կորցրած հազարավոր հայեր անոթի ու մերկ էին մնացել: Թեև կառավարությունն սկսել էր նպաստ բաժանել, բայց դա հիմնականում իսլամներին էր հասնում:

Շատ չանցած պարզվեց, որ սոսկալի դրամայի պատճառից անմասն չեն նաև իշխանությունները: Մի փաստաթղթում կարդում ենք. «Ժողովրդի համար ամօթ է, որ նպաստ է ընդունում այնպիսի կառավարութեան պետերից, ղեկավարներից, որոնք թէեւ արտաքուստ արդար, բայց ներքուստ, անկասկած, մասնակից են այդ սոսկալի դրամային... Երբ քանդում են տնտեսութիւններ, այրում մարդիկ, կոտորում, հիւանդանում, խելագարում շատերը, այս պարագայում դեռեւս կան մարդիկ, որոնց հրճուանք է պատճառում: Հրճուանք է պատճառում նրանց, որոնք պատճառ են դարձել կատարելու անօրինակ ոճիրը»[1]:

օրը ցերեկով, Թուրքական իշխանությունների աչքի առաջ: Անչափահասների, մանավանդ աղջիկների կրոնափոխության արարողությունները կատարվում էին այնքան արագ, որ ծնողները որևէ հնարավոր միջոց ձեռք առնելուց զրկված էին լինում: Բռնի իսլամացման երևույթը իսլամության առաջ նվաստացնում էր քրիստոնեությունը, որովհետև իսլամից քրիստոնեություն վերադարձը դատապարտվում էր մահապատժով, իսկ քրիստոնեությունից իսլամության անցնելը քաջալերվում էր:

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 41, վավ. 65[1665]:*

1911 թ. նոյեմբերի 2-ին, խորհրդարանի արձակումից առաջ, նրա հայ պատգամավորները մեծ վեզիր Սաիդ փաշային ներկայացրին 10 կետից բաղկացած մի հիշատակագիր՝ պահանջելով դրանք անհետաձգելիորեն իրագործել կյանքում: Փաստաթղթի տակ ստորագրել էր 10 հոգի՝ Համբարձում Պոյաճյան (Կոզանից պատգամավոր), Գեղամ Տեր-Կարապետյան (Մուշից), Վահան Փափազյան (Վանից), Գրիգոր Զոհրապ և Պետրոս Հալաճյան (Պոլսից), Հակոբ Պոյաճյան (Ռոդոսթոյից), Նազարեթ Տաղավարյան (Սեբաստիայից), Հովհաննես Սերենգյուլյան և Գարեգին Փաստրմաջյան (Կարինից), Հարություն Բոչգեզենյան (Հալեպից):

Հիշատակագրով հայ գործիչները մեծ վեզիր Սաիդ փաշային առաջարկում էին անմիջապես գործադրության մեջ դնել հետևյալ 10 պահանջները. 1) Բաղեշի և Խարբերդի համար կարող կուսակալներ նշանակել, 2) Արտակարգ իրավասություններ տալ Վանի և Բաղեշի կուսակալներին, որպեսզի նրանք կարողանան պաշտոնյաներ հեռացնել առանց կենտրոնի թույլտվության, 3) Այդ երկու նահանգներում ավելացնել ոստիկան զինվորների թիվը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նրանց ճիշտ ընտրությանը, 4) Ջերբակալել սահմանադրության հռչակումից հետո կատարված աղմկալի ոճրագործությունների հեղինակներին և նրանց նկատմամբ գործադրել օրենքի տրամադրությունը, 5) Արևելյան նահանգներում պաշտոն ունեցող ցեղապետներին պաշտոնանկ անել կամ ուրիշ վայրեր փոխադրել, 6) Մի շարք ավազակների ձերբակալման համար իշխանությունների ձեռք առած միջոցները գործադրել նաև արևելյան նահանգների անդորրությանը խանգարող ոճրագործների հանդեպ, 7) Խստիվ հանդիմանել և հրաժարեցնել այն պաշտոնյաներին, որոնք, չունենալով արդարացուցիչ պատճառներ, կառավարության սահմանած պայմանաժամկետին չեն կարողանում ձերբակալել ոճրագործներին, 8) Կտրուկ հրամաններով արգելել ապօրինի տուրքագանձումները և պատժել մեղավորներին, 9) Անմիջապես գործադրել գրավված հողերը վերադարձնելու մասին դատարանների որոշումները, 10) Գործադրել հողային խնդրի վերա-

բերյալ սուլթանի 1911 թ. հուլիսի 25-ին հրատարակած իրադեի տրամադրությունները[1]:

Ստանալով պատգամավորների հիշատակագիրը՝ Սաիդ փաշան խոստացավ անմիջապես միջոցներ ձեռնարկել... Բայց քանի՞ այդպիսի խոստումներ էին տվել աբդուլհամիդյան օրերի և երիտթուրքական վարչակազմի մյուս մեծ վեզիրները: Անտարակույս, այս անգամ էլ լինելու էին նույն խոստումները, քաչքչուկները, հուսախաբությունները:

Այդպես էլ եղավ: Կենտրոնական կառավարությունը մատը մատին չտվեց ձեռնարկելու ներկայացված կետերից գոնե մեկի կատարումը: Բարձր Դուռը ամեն անգամ հայ պատգամավորների հիշեցումներին խուսափողական պատասխաններ էր տալիս, որից հասկացվում էր, որ եթե քրդերը նույնիսկ հարյուրավոր հայ բնակավայրեր ավարի տան, նա չի կարողանալու հանցավորներին պատժել այն երկյուղով, թե քրդերը նույնպես կարող են արաբների նման ապստամբել և մի նոր տագնապ առաջացնել:

Իսկ Դաշնակցությունը դեռ չէր կորցրել չպատճառաբանված լավատեսությունը: ՀՅԴ օրգան «Ասպարէզը» (Ֆրեզնո) գրում էր. «Երիտասարդ Թուրքերու բոլորն ալ ազգայնամոլ ու մոլորեալ չեն: Երկրին ներկայ վտանգաւոր կացութիւնը տեսնողներ եւ անոր փրկութեան համար անկեղծօրէն աշխատողներ կան անոնց մէջ: Ուժովցնել պէտք է զանոնք: Այդ հիման վրայ էր, որ Դաշնակցութիւնը Օսմ[անեան] Քոմիթէին հետ դաշինքի մէջ մտաւ: Ազատական տարրերուն եւ ազատական սկզբունքներուն զօրանալովն է միայն, որ յետադիմութիւնը կը տկարանայ»[2]:

---

[1] **«Մշակ»,** № 22, 1 փետրվարի 1911 թ.:

[2] **«Ասպարէզ»,** № 155, 4 օգոստոսի 1911 թ.:

1911-1913 թվականները Թուրքիան անցկացրեց պատերազմների մեջ: Հայությունը, անկախ իր կամքից, նոր աղետների հորձանուտ ընկավ:

Տնտեսական ու ռազմական տեսակետից բարձրացած ու արդեն 19-րդ դարի վերջերին մեծ տերություն դարձած Իտալիան, սակայն, զուրկ էր գաղութային տիրույթներից: Դա ոչ միայն «արժանապատվության խնդիր» էր, այլև երկրի կառավարությունների հավաստիացումներով, մեծ խոչընդոտ պետության հետագա զարգացման ճանապարհին:

Ավստրիայի գաղութային կալանքներից ազատագրված Իտալիան արդեն 19-րդ դարի վերջերին ինքն էր սկսել մեծապետական քաղաքականություն վարել, ձգտելով իրեն միացնել ոչ միայն Տրենտինոն ու Տրիեստեն, այլև Իստրիան, Դալմացիան, Ալբանիան և այլ հողեր[1]: Նման քաղաքականությունը իտալական կառավարությունը ներկայացնում էր ոչ թե որպես նվաճողական, այլ՝ ազգային ազատագրական պայքարի չարունակություն[2]:

Ծրագրելով հողային մեծ նվաճումներ, իտալական կառավարությունը միաժամանակ մեծ ուշադրություն էր դարձնում երկրի տնտեսական և ռազմական հզորացմանը:

Իտալիայի տնտեսությունն սկսեց բուռն զարգացում ապրել, երբ 1901 թ. վարչապետ դարձավ Ջովանի Ջուլիտինին: Երկրի պատմության 1901-1914 թթ. ժամանակաշրջանը վարչապետի անունով ստացավ «Ջուլիտինյան դարաշրջան» անվանումը, երբ Իտալիան գյուղատնտեսական երկրից վերածվեց արդյունաբերական տերության[3]:

«Ջուլիտինյան դարաշրջանում» հատկապես արագ զարգացավ ծանր արդյունաբերությունը: Եթե 1896-1908 թթ. Իտա-

---

[1] Տե՛ս **"Очерки истории Италии"**, Москва, 1959, с. 325.

[2] Տե՛ս **О. Бауэр,** Национальный вопрос и социал-демократия, СПб., 1909, с. 519.

[3] Տե՛ս **Дж. Конделоро,** История современной Италии, т. 7, Москва, 1979, с. 7-8.

լիայի արդյունաբերական արտադրանքի տարեկան միջին աճը կազմել էր մոտ 7 տոկոս, ապա առավել առաջավոր մետալուրգիական, քիմիական և մեքենաշինական ճյուղերում՝ ավելի քան 20%[1]:

Բայց Իտալիայի ոչ բոլոր մասերն էին առաջադիմում արդյունաբերական տեսակետից: Օրինակ՝ երկրի հարավում գերիշխում էր ավանդական արխայիկ սոցիալ-տնտեսական կացութաձևը, չխոսելով արդեն Սիցիլիայի մասին[2]:

Իտալիայի համար հրապուրիչ էր, հատկապես Աֆրիկայի հյուսիսային մասում, Եգիպտոսի և Թունիսի միջև ընկած տարածությունը՝ հին եգիպտացիների Լիբիան, որը Քրիստոսից առաջ հունական գաղութ էր Կյուրենե կամ Սիրենայիքա անվամբ: Հետագայում հաջորդաբար ենթարկվելով հռոմեացիների, արաբների և օսմանցիների տիրապետությանը, չրջանն անփառունակ վախճանի էր հասել[3]:

Լիբիայի երկու մասերն էին Տրիպոլիտանիան և Կիրենաիկան, որոնց ընդհանուր տարածքը կազմում էր 917 հազ. քառ. կմ., բնակչությունը՝ մեկ միլիոնից քիչ ավելի, այսինքն՝ մեկ քառ. կմ վրա մեկ մարդ: Այդ հսկա տարածքից մշակելի էր ընդամենը 58 հազ. քառ. կմ:*

Քաղաքները գտնվում էին ծովափին: Դրանցից ամենախոշորը Տրիպոլիտանիայի գլխավոր քաղաք Տրիպոլիսն (Թարա-

---

[1] ***Տե՛ս Каролина Франческовна Мизиано,*** *Итальянское рабочее движение на рубеже XIX и XX вв., Москва, 1976, с. 170.*

[2] ***Տե՛ս Юрий Петрович Лисовский,*** *Южный вопрос и социальные конфликты в Италии, "Наука", Москва, 1979, с. 36-40.*

[3] ***Տե՛ս Համբարձում Երամեան,*** *Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, էջ 148:*

* *Բնակչության ազգային կազմը հետևյալ պատկերն ուներ. 15.000 սպինոլ (իսպանական) հրեաներ, որոնց ձեռքին էր երկրի համարյա ողջ առևտուրը, 5.000 քրիստոնյաներ, որոնց մեծ մասը մալթացիներ էին, 50.000 նեգրեր, 50.000 թուրքեր (զինվորներ և աստիճանավորներ), մնացած գլխավոր զանգվածը՝ բերբերներ և արաբներ: Քրիստոնյաների թվում իտալացիները կազմում էին մոտավորապես 1.000 հոգի (տե՛ս* ***«Արօր»,*** *№ 9, սեպտեմբեր, 1911):*

պուլուս) էր* 30 հազ. բնակչությամբ, իսկ Կիրենաիկայի գլխավոր քաղաք Բենգազին ուներ 15 հազ. բնակչություն: Երկրի ներքին շրջանները բնակեցված էին արաբ-քոչվորներով[1]:

Իտալիան աչք ուներ ոչ միայն Թուրքիային պատկանող Լիբիայի, այլև նույն Թուրքիային պատկանող Եգեական ծովի կղզիների՝ այսպես կոչված Դոդեկանեզի վրա: Ե՛վ Տրիպոլիտանիան և՛ Եգեականի կղզիներն ունեին ռազմավարական խոշոր նշանակություն, ուստի եթե դրանք անցնեին Իտալիայի ձեռքը, կմեծանային Մերձավոր Արևելք թափանցելու նրա հնարավորությունները:

Գաղութներ չունեցող Իտալիան չահագրգռված էր Տրիպոլիտանիայով այն հիմնավոր պատճառով, որ այնտեղ նա ուներ տնտեսական ամուր լծակներ՝ արդյունաբերական ու առևտրական բազմաթիվ ձեռնարկություններ:

Գիտակցելով, որ Տրիպոլիտանիայի տնտեսության մեջ գերիշխանություն ունենալը կարող է հեշտացնել հետագայում այնտեղ քաղաքական իշխանություն հաստատելու Իտալիայի գործը, երիտթուրքական կառավարությունն ամեն ինչ անում էր այնտեղից նրան դուրս մղելու դիտավորությամբ:

Բայց այդ նպատակին հասնելու համար Թուրքիան չուներ ո՛չ անհրաժեշտ զինվորական ուժեր և ո՛չ էլ իրավական հիմքեր: Ուստի Իթթիհադի կառավարությունը վաղեմի և ավանդական սովորությամբ սկսեց մանր-մունր խոչընդոտներ ստեղծել իտալացիների առջև՝ Տրիպոլիտանիա նրանց հետագա մուտքն արգելելու համար: Այդ մղումով նա այնտեղ բնակվող իտալացիների դեմ գրգռում էր տեղացի արաբ և թուրք մոլեռանդներին, թշնամանք հարուցում նրանց նկատմամբ: Դրա անխուսափելի

---

* Տրիպոլիսն ուներ ոչ մեծ, բայց լավ նավահանգիստ: Այդ քաղաքը կյանքի էր կոչվել հնագույն էա քաղաքի ավերակների վրա, որը, հռոմեական տիրապետության ժամանակ Մեծ Լեպտիս և Սաբրատ քաղաքների հետ կազմում էր երեք քաղաքների դաշնություն, որից և ծագել էր Տրիպոլիս (երեք քաղաք) անունը:

[1] Տե՛ս **Кира Эммануиловна Кирова,** *Италянская экспансия в Восточном Средиземноморье (в начале XX в.), "Наука", Москва, 1973, с. 70-71.*

հետևանքն էին լինում խուլ անկյուններում իտալացիների կողոպուտն ու սպանությունները, նրանց կանանց ու աղջիկների առևանգումն ու իսլամացումը: Կ. Պոլսի կառավարությունը Տրիպոլիտանիայի տեղական իշխանություններին հրահանգել էր չկատարել իտալական ընկերությունների հետ կնքած պայմանագրերը, բոյկոտել իտալական ապրանքները: Մի խոսքով, հետևողականորեն կենսագործվում էր թուրքական հայտնի գործելակերպը:

Տարիներ շարունակ իտալական կառավարությունը բողոքում էր թուրքերի արարքների դեմ՝ Բարձր Դռան ուշադրությունը հրավիրելով տեղական վալիների ու գայմագամների գեղծումների վրա: Պոլսի կառավարությունը հանցավորներին պատժելու խոստումներ էր տալիս շարունակ, սակայն դրանք անհետևանք էին մնում: Սովոր լինելով հայերին կոտորել հարյուրներով ու հազարներով՝ առանց հանդիպելու որևէ դիմադրության կամ նույնիսկ դիտողության, թուրք պաշտոնյաները սաստիկ զարմանում էին, երբ իտալական կառավարությունը մի որևէ իտալացի հոգևորականի կամ բանվորի սպանությանն արձագանքում էր խիստ սպառնալիքներով: Երիտթուրքերը, հույսը դրած Գերմանիայի վրա, որին իսլամի ու Թուրքիայի պաշտպանն էին համարում, ոչ միայն արհամարհանքով էին վերաբերում Իտալիայի պահանջներին, այլև հաճախ ծաղրում էին ինչպես Տրիպոլիտանիայում բնակվող իտալացիներին, այնպես էլ իտալական կառավարությանը:

Այդ ամենի հետևանքով հասարակական կարծիքն Իտալիայում օրեցօր գրգռվում էր Թուրքիայի դեմ: Եվ երբ Ֆրանսիան ու Գերմանիան բանակցություններ սկսեցին, թե իրենցից որի՞ն պետք է անցնի Մարոկկոն, Իտալիան, իր հերթին, ժամանակը հարմար գտավ առաջադրելու իր պահանջը. քանի որ ինքը Հռոմեական կայսրության օրինական ժառանգորդն է, իսկ Տրիպոլիտանիան դարեր շարունակ եղել է այդ կայսրության մի մասը, հետևապես դա նորից իրեն վերադարձնելը արդարացի գործ կլինի: Դիմելով նշված երկու մեծ պետությունների կառավարություններին, Հռոմը պահանջեց արգելք չհարուցել իր նպատակի ճանապարհին:

Իտալիայի գերիշխանությունը Տրիպոլիտանիայի և Կիրենաիկայի վրա տարածելու ձգտումը Հռոմը պատճառաբանում էր այն բանով, որ իր երկիրը միշտ էլ պաշտպանել է զանազան քաղաքական ազդեցությունների հավասարակշռությունը Միջերկրական ծովում և միշտ ձգտել է բարեկամական հարաբերություններ ունենալ Թուրքիայի հետ: Բայց Թուրքիայի վերաբերմունքը դեպի հյուսիսաֆրիկյան ծովափի իրեն ենթակա երկրները դրդեց Իտալիային իր վրա վերցնել այն քաղաքակրթական առաքելությունը, որ նրա վրա դրել են ոչ միայն պատմությունը, այլև Ապենինյան թերակղզու աշխարհագրական դիրքն ու սոցիալական պայմանները[1]:

Թուրքիան սպառնացող վտանգին դիմակայելու պատրաստ չէր[*]*: Այդ իսկ պատճառով դիվանագիտական աշխույժ գործու-*

---

[1] *Տե՛ս* ***«Հորիզոն»,*** *№ 29, 11 փետրվարի 1912 թ.:*

[*] *Թուրքիան պատրաստ չէր պատերազմի այն առումով, որ 1909 թ. կազմած և նույն տարում գործածության մեջ դրած բանակային բարեկարգման ծրագրով նախատեսված միջոցառումները դեռ չէին ավարտված: Իհարկե, այդ 2,5 տարում երիտթուրքական կառավարությունը քիչ բան չէր արել բանակի սպառազինման, զգեստավորման, պարենավորման, զինվորական կարգապահության ամրապնդման ուղղությամբ: Իթթիհադի կոմիտեի և նրա իշխանության մեծ ուժը և անվտանգության երաշխավորը բանակն էր: Կարելի է ասել, որ նրանք պետական գանձարանը բաց էին արել զինվորականների առաջ: Երկրի ռազմական ծախսերը 1910 թ. կազմել էին պետական բյուջեի 38,8 տոկոսը (տե՛ս* ***Х. З. Габидуллин,*** *Младотурецкая революция. Исторические очерки, Москва, 1936, с. 132), իսկ մի տարի հետո դրանք բյուջեի ավելի քան կեսն էին կազմել (28 միլիոն օսմանյան ոսկի): Հսկայական գումարներ էին ծախսվում մեծ քանակի հատկապես գերմանական արտադրության նորագույն զինատեսակներ ձեռք բերելու համար: Որպեսզի զինվորական անձնակազմն իրենց հուսալի նեցուկը լիներ, երիտթուրքերի պարագլուխները գումարներ չէին խնայում նրա համար: Բանակում ծառայողներն ունեին առատ ռոճիկ և փառավոր զգեստավորված էին, մի բան, որ նախկինում երբեք չէր եղել: Բանակում գործուն դեր ունենալուց հրաժարվող և հանգստի անցնող սպաները նախկին ռոճիկին հավասար կենսաթոշակ էին ստանում: Այդ բոլորով հանդերձ, ինչպես ասվեց, ամեն ինչ չէ, որ արվել էր: Բանակի վերակառուցման ծրագիրն ամբողջությամբ պետք է ավարտվեր 1913 թ. վերջերին (Տե՛ս* ***«Մշակ»,*** *№ 85, 1 ապրիլի 1912 թ.):*

նեությունն ծավալեց Եվրոպայում՝ Իտալիայի մտադրությունը խափանելու համար: Բայց նա չհաջողեց, քանի որ սպասվելիք պատերազմի նպատակներն առանձնապես չէին շոշափում եվրոպական մեծ տերությունների տնտեսական շահերը: Իտալիան ճիշտ էր ընտրել իր ձեռնարկի պահը. Ֆրանսիան զբաղված էր Մարոկկոյի խնդրով, Գերմանիան մտադիր չէր Տրիպոլիտանիայի համար գժտվելու իր դաշնակցի՝ Իտալիայի հետ, Անգլիան ըմբռնումով էր վերաբերվում Իտալիայի մտադրությանը՝ ձգտելով նրան պոկել Եոյակ զինակցությունից (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա)[1]: Ջերմանում էին ռուս-իտալական հարաբերությունները. 1902 թ. Իտալիայի թագավոր Վիկտոր-Էմմանուիլ III-ն այցելել էր Պետերբուրգ, իսկ 1909 թ. Նիկոլայ II-ը փոխադարձ այցելություն էր կատարել Իտալիա[2]: Ուստի Ռուսաստանը նույնպես տրամադիր չէր Տրիպոլիտանիայի խնդրում որևէ արգելք ստեղծելու Իտալիայի համար: 1909 թ. կնքվել էր ռուս-իտալական համաձայնագիր, որով Ռուսաստանը ճանաչել էր Իտալիայի «հատուկ շահերը» Տրիպոլիտանիայում, իսկ Իտալիան պարտավորություն էր ստանձնել ըմբռնումով վերաբերվել նեղուցներում Ռուսաստանի շահերին[3]:

Միաժամանակ Կ. Պոլսում Ռուսաստանի նոր դեսպան նշանակված Ն. Վ. Զարիկովը, որ 1909 թ. ապրիլին փոխարինել իր դեսպան Զինովևին, հանձնարարություն էր ստացել Բարձր Դռանը բացատրել, որ իտալա-թուրքական հարաբերություններում Ռուսաստանը չեզոք դիրք է բռնել համոզված լինելով, որ դա կնպաստի համաեվրոպական խաղաղությանը:

Տերությունների շարքում ամենաանսպասելին Թուրքիայի ավանդական դաշնակից Գերմանիայի դիրքորոշումն էր. նա հրաժարվեց զործին Թուրքիայի օգտին միջամտելուց: Ասում էին, նույնիսկ թե Կ. Պոլսի եվրոպական դեսպաններից մեկը Բարձր

---

[1] ***Տե՛ս A. A. Могилевич, М. Э. Айрапетян,*** *На путях к мировой войне, 1914-1918 гг., ОГИЗ - Госиздат политической литературы, Москва, 1940, с. 91.*

[2] ***Տե՛ս «Россия и Италия»,*** *Москва, 1968, с. 300.*

[3] ***Տե՛ս A. A. Могилевич, М. Э. Айрапетян,*** *На путях к мировой войне, 1914-1918 гг., с. 92.*

Դոանը պատասխանել էր. «Երբ մենք հայկական ահռելի ջարդերի ժամանակ չմիջամտեցինք, ի՞նչ իրավունք ունենք այժմ միջամտելու»: Հիրավի, հայերի 1895–1896 թթ. ջարդերի ժամանակ Թուրքիան բողոքում էր, երբ որևէ պետություն փորձում էր միջամտել և դադարեցնել տալ կոտորածը:

Այսպիսով, տվյալ պահի շահն էր առաջնորդում տերությունների դիվանագիտությանը: Նյու Յորքի «Արագած» շաբաթաթերթը նկատում էր. «Գերագույն շահը կը խօսի այսօր անոնց (եվրոպական երկրների կառավարությունների:- Հ. Ս.) մէջ, ամէնէն աւելի բարձր, ուրիշ ամէն բան ուրանալ տալու չափ ուժգնօրէն»[1]:

Երբ պարզ դարձավ, որ սպառնալիքները չեն ազդում ո՛չ իտալացիների և ո՛չ էլ եվրոպական մյուս պետությունների և Ռուսաստանի վրա, թուրքական կառավարությունն ու մամուլն այս անգամ դիմեցին ծայրահեղ հոխորտանքի՝ մատ թափ տալուն:

Երիտթուրքական թերթերի լեզուն դարձավ փողոցային՝ հիշոցներ ոչ միայն իտալացիների, այլև համարյա բոլոր պետությունների հասցեին: Կառավարությունը իտալական ապրանքների բոյկոտ հայտարարեց, մինչև իսկ իտալացիների հետ բարևի փոխանակումը համարվեց հայրենիքի դավաճանություն:

Կ. Պոլսի թուրքական մամուլը համեմատաբար «չափավոր» էր, իսկ, ասենք, Սալոնիկում և Մանասթիրում լույս տեսնող թերթերը, որպիսիք էին, օրինակ՝ «Սիլահ» («Զենք»), «Սյունդյու» («Սվին»), «Իլերի» («Հառաջ») և այլն, հատկապես զինվորական թերթերը, ոչ-թուրք ընթերցողին զարմացնում էին իրենց լեզվագարությամբ, անպատկառ հայհոյանքներով ու անսանձ հանդգնությամբ:

Ահա՛ «Սիլահի» 1911 թ. սեպտեմբերի 21-ի համարը: Թերթի առաջին էջի ճակատին «Իտալացի չների և օսմանցի առյուծների պատերազմը» խոշոր տառերով վերնագիրն էր: Բերենք մի նմուշ այդ հոդվածից:

---

[1] **«Արագած»**, № 1, 25 մայիսի 1911 թ.:

«Իտալացի չների նավատորմին ենք սպասում: Ինչո՞ւ չեք գալիս: Մեր սվիններին ու սրերին կոթնելով, մեր թնդանոթները գործի գցելով, ապավինելով մեր տղամարդկությանը և քաջությանը՝ վստահ սպասում ենք ձեզ, որպեսզի թոցնենք ձեր գլուխները, բզկտենք ձեր կեղտոտ թոքերը, թքենք ձեր անպատիվ ու խայտառակ երեսներին: Տակավին սպասում, հուզվում, զայրանում ենք, թե ինչո՞ւ չեք գալիս: Ձեզ ենք սպասում, ինչո՞ւ չեք գալիս, ինչո՞ւ չեք շտապում: Ահա՛ քաջերի հրապարակը՝ պատրաստ ձեզ ընդունելու ու անճիտելու, ահա՛ հերոսների կանչերը՝ մի՛ փախչիր, նե՛նգ, մի՛ փախչիր, վախկո՛տ, մի՛ փախչիր այդպես խայտառակ: Մեր քաջ այրերը չեն երկնչում սրի ու սվինի չաչյունից, հրանոթի գոռոցից ու հրացանի ճայթյունից: Նրանք կռվի դաշտ կվազեն հոգի տալու և հոգի առնելու, կգնան փառք վաստակելու, մինչդեռ դո՛ւ, նենգամիտ չո՛ւն, վախկոտի պես շրջում ես բաց ծովերի վրա, գաղտնի տեղերում: Միշտ ստոր ես, թքե՛մ երեսիդ, անպատի՛վ»: «Սիլահի» հոդվածագիրն այսպես էր ավարտում իր պոռոտախոսությունը. «Մոտ օրերս, չնե՛ր, կախաղաններ պիտի սարքենք ձեր փտած նավերի կայմերով և պարաններով, խոշոր խեղդակապեր պիտի պատրաստենք և ձեր դիակներով պիտի ծածկենք Սալոնիկի քարափը: Մի՛ փախչիր այդպես խայտառակ, մի՛ փախչիր, չո՛ւն: Մի՞թե օսմանցիներին քո պես վախկոտ ու խայտառակ ես կարծում: Ո՞ն անդր, նայում ենք, սպասում, ինչո՞ւ չեք գալիս»[1]:

Այդ իրադրության մեջ Թուրքական կառավարությունը մեծ տերություններին հայտարարեց, որ եթե իտալացիները Տրիպոլիտանիայում կամ Եգեական ծովում զինվորական գործողություններ սկսեն, ապա Օսմանյան տերության մեջ գտնվող բոլոր իտալացիները սրի կքաշվեն: Բայց տեսնելով, որ այդ սպառնալիքն ազդեցություն չի գործում, Բարձր Դուռը տերություններին ազդարարեց, թե այդ դեպքում չի կարող երաշխավորել իր երկրի ներքին նահանգների քրիստոնյաների ապահովությունը: Միա-

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 42, վավ. 20, հայերեն թերթի՝ տարեթիվ ու ամսաթիվ չկրող կտրոն:*

ժամանակ, կառավարությունը նահանգական իշխանություններին չրջաբերականով հրաման էր իջեցրել՝ պատրաստ լինել քրիստոնյաների ջարդերին՝ սպասելով ցուցումի[1]:

Պարզից պարզ էր, որ այս անգամ էլ առաջին հերթին ջարդի զոհ էին դառնալու հայերը:

«Սիլահի» խուժանավարի հարձակումներից զերծ չմնաց նաև Ռուսաստանը:

Իր հակահայկական քարոզչությամբ հայտնի «Новое Время» թերթը հոդվածներից մեկում նշել էր, թե առաջիկա իտալա-թուրքական պատերազմում Ռուսաստանի չեզոքությունը միանգամայն տեղին կլինի, և թե Թուրքիան իր ընթացքով արժանի չէ ռուսական դիվանագիտության աջակցությանը: Դրան ի պատասխան, «Սիլահը», խոսքն ուղղելով Ռուսաստանին, գոչում էր.

«Անպատի՛վ ավազակներ, մի՞թե ամեն տեսակի ստորություն ու խայտառակություն ձեր գլխում չի ծագում: Մոսկոֆը ո՞վ է, որ մեզ պիտի օգներ: Մի՞թե առյուծները կընկերակցեն գայլերի հետ: Հյուսիսի սառցապատ անապատներում քարշ եկող, սրածայր ու արյունոտ ճանկերով մարդկության կրծքին ամենախոր վերքեր բացող գազանն ավելի լավ է մեզանից 100.000 փարսախ հեռու մնա: Մենք պետք չունենք Մոսկոֆի չեզոքությանը կամ օժանդակությանը»[2]:

Իրենց հաղթանակի վրա նույնքան վստահ էին իշխանության ներկայացուցիչները, իհարկե՝ ցուցաբերելով պահանջվող բարեկրթությունը:

Անգլիական The Daily Telegraph թերթին Օսմանյան կայսրության պատերազմական նախարար Մահմուդ Շևքեթ փաշայի տված հարցազրույցի ընթացքում տեղի էր ունեցել հետևյալ խոսակցությունը.

«**Հարց.**- Ինչպէ՞ս էք տեսնում պատերազմի ապագան:

---

[1] Տե՛ս **«Մամուլ»**, № 9, 26 դեկտեմբերի 1911 թ.:

[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 42, վավ. 20 (թերթի կտրոն):

Պատասխան.– Թիւրքիան հաստատ կանգնած է եւ անդրդուելիօրէն կկանգնի մինչեւ վերջը: Անցեալ ութամսեայ ժամանակամիջոցում չատ բան գրուեց լրագրերի էջերում պատերազմի առթիւ, բազմադիմի քննադատութիւններ եղան, նպաստաւոր եւ աննպաստ կարծիքներ արտայայտուեցին: Գալով ինձ՝ կասեմ, որ ես դիպլօմատ չեմ, այլ պարզապէս մի զինուոր: Եւ իմ պարտականութիւնն է իմ հայրենիքի հողը ոգի ի բռին պաշտպանել: Այդ ես արեցի, անում եմ եւ վճռապէս որոշած եմ անել մինչեւ վերջը: Մեր բանակի գործն է՝ արգելել թշնամուն Թիւրքիայից մի թզաչափ հող գրաւելու կամ իւրացնելու: Եւ այդ գործը մենք կկատարենք:

Հարց.– Կյուսա՞ք յաջողել:

Պատասխան.– Անկասկած: Ես ոչ միայն մեր դատի արդար լինելուն հաւատում եմ, այլ նաեւ մեծ հաւատ ունեմ մեր վերջնական յաղթութեան վրայ: Ի՞նչպէս կարող կլինէի պաշտպանել մեր երկիրը ընդդէմ օտար եւ անիրաւ ոտնձգութեանց, եթէ ես չունենայի սրտումս մի այդպիսի զօրացուցիչ հաւատ: Շեշտում եմ, ես ունեմ այդ հաւատը ծայրագոյն աստիճանի եւ մեր բանակն յոտից ցգլուխ տոգորուած է նրանով:

Հարց.– Շատ բարի, բայց ի՞նչպէս է վերջանալու այդ պատերազմը: Դա չի կարող ընդ միշտ տեւել, ինչո՞վ կվերջանայ դա:

Պատասխան.– Այդ մի անպատասխանելի հարցում է: Թիւրքիան չէ պատերազմը հրատարակողը, նրա դիրքը պաշտպանողական է յաւէտ եւ այդպէս էլ մնալու է միշտ: Մենք բուռն եւ գերմարդկային ջանք ու ճիգ ենք ի գործ դնում, որ մեր ժողովրդեան մի մասը բռնի կերպով Իտալիոյ հպատակ չդառնայ: Եւ մենք պիտի յաջողենք: Մենք չխանգարեցինք Եւրոպայի խաղաղութիւնը: Մենք միայն մեզ պաշտպանում ենք ընդդէմ մի յարձակման, որը բոլորովին մի պրովոքացիա է անտեղի՝ եւ ոչ այլ ինչ: Հետեւաբար մեզ անկ չէ ասել, թէ ե՞րբ արդեօք կվերջանայ մաքառումը: Այդ հարցը պէտք էր յաւէտ մեր հակառակորդին ուղղել: Ես միայն այսչափը կարող եմ ասել, որ մենք մի թիզ տեղ էլ զիջելու չենք յաւիտեան: Մենք կարող ենք յաջողապէս պաշտպանել մեր երկիրը ընդդէմ մեր ներկայ թշնամուն

եւ վճռել ենք այդպէս էլ շարունակել»[1]:

Բայց Թուրքական սպառնալիքների դիմաց Հռոմն անդրդվելի էր: 1911 թ. կեսերին հիմնականում ավարտվել էին Հյուսիսային Աֆրիկա իտալական արշավախմբի ափհանման նախապատրաստական աշխատանքները: Երկիրը բանակը զինել էր սեփական արտադրության բազմատեսակ զենքերով, բացի այդ՝ ահագին քանակությամբ զենք ու զինամթերք էր ձեռք բերել Գերմանիայից ու Բելգիայից[2]: Երբ ապարդյուն անցան Տրիպոլիտանիայի հարցի նկատմամբ իր վերաբերմունքը փոխելու Կ. Պոլսին համոզելու բոլոր փորձերը, այնժամ, ստանալով Մարոկկոյի համար դեռ բանակովող Գերմանիայի և Ֆրանսիայի համաձայնությունը, Իտալիան դիմեց ծայրահեղ միջոցի՝ 1911 թ. սեպտեմբերի 15 (28)-ին վերջնագիր ներկայացրեց թուրքական կառավարությանը և կտրուկ ու հրամայողաբար պահանջեց 24 ժամվա ընթացքում բավարարություն տալ այնտեղ նշված բոլոր պահանջներին, այլապես սպառնաց պատերազմով:

Քաղաքական շրջաններում սկզբում կարծիք էր հայտնվում, թե ռազմական առաջին իսկ գործողություններից հետո պատերազմը կանգ է առնելու: Ենթադրվում էր, թե Թուրքիան, այլ ելք չունենալով, կընդունի Իտալիայի գերադաս շահերը և քաղաքական հեղինակությունը Տրիպոլիտանիայում: Բայց Իտալիան վստահություն չուներ թուրքական հնարավոր խոստումների վրա և, չցանկանալով ձգձգել վեճը, որոշել էր նախ զորքով հաստատվել մայրաքաղաք Տրիպոլիսում, որից հետո միայն մտածել Կ. Պոլսի կառավարության հետ բանակցությունների մեջ մտնելու մասին:

Ներկայացրած վերջնագրի մերժումն ստանալուց հետո՝ 1911 թ. սեպտեմբերի 16 (29)-ին Իտալիան պատերազմ հայտարարեց Թուրքիային[3]:

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 42, վավ. 20 (թերթի կտրոն):*

[2] ***Տե՛ս Зинаида Павловна Яхимович,*** *Итало-турецкая война 1911-1912 гг., "Наука", Москва, 1967, с. 53.*

[3] ***Տե՛ս Кира Эммануиловна Кирова,*** *Италянская экспансия в Восточном Средиземноморье (в начале XX в.), с. 88.*

Պատերազմը պատմության մեջ մտավ «Տրիպոլիտանական» անունով:

Ո՛չ Հաագայի կոնգրեսի որոշումները, ո՛չ միջազգային խաղաղության մյուս համագումարների կոչերը և ո՛չ էլ խաղաղասեր գործիչների աղաղակներն այս անգամ էլ չկարողացան արյունահեղության առաջն առնել:

Այս անգամ էլ Իտալիան ցույց տվեց, որ կոպիտ ուժը միջպետական հարաբերությունների մեջ ավելի մեծ իրական կշիռ ունի, քան կոնֆերանսների կամ համագումարների որոշումները[1]:

Պատերազմն սկսվելուն պես Կ. Պոլսում և Օսմանյան կայսրության ուրիշ քաղաքներում տարածվեց բողոքի, հավաքների և ցույցերի ալիքը: Գազազած թուրք էթինոսը ափերից դուրս էր եկել, ազգայնամոլական մոլուցքն ընդգրկել էր նրա բոլոր շերտերը: Գրգռված ամբոխը մայրաքաղաքում քարուքանդ արեց իտալական դեսպանատունը: Կառավարության կարգադրությամբ փակվեց Կ. Պոլսի իտալական հիվանդանոցը, չնայած այդտեղ մեծ թվով թուրքեր էին բուժվում: Որոշում ընդունվեց երկրի սահմաններից արտաքսել իտալահպատակներին: Մայրաքաղաքում, Սալոնիկում, Իզմիրում, Բաղդադում և այլուր բոյկոտի էին ենթարկվում իտալական ապրանքները: Իշխանությունների հրահանգով աշխատանքից ազատվեցին Արևելյան երկաթուղու բոլոր իտալացի ծառայողներն ու բանվորները:

Ամենուրեք, այդ թվում Ռուսաստանի թուրքալեզու տարածքներում, հավաքագրվում էին կամավորական խմբեր՝ Տրիպոլիտանիա մեկնելու համար: Եգիպտոսում 30 հազար տեղաբնակ թուրքեր առաջարկել էին իրենց մասնակցությունը պատերազմին: Նույնիսկ Հնդկաստանի թուրքերից շատերը հեռագրել էին Կ. Պոլիս, թե ուզում են իրենց տեսնել Տրիպոլիտանիայի թուրքական զորամասերում:

Իտալական զինուժն ուղղություն վերցրեց դեպի Տրիպոլիտանիա: Արդեն մեկ շաբաթ անց նրա ափերին շրջում էր իտա-

---

[1] Այդ մասին հանգամանորեն տե՛ս **«Նոր կեանք»** (Բաքու), № 1-2, 11 դեկտեմբերի 1911 թ.:

լական երկու նավախումբ՝ բաղկացած 8 զրահապատ հածանավից, բավականաչափ թվով ականակիր նավերից և հակաականային նավակներից: Այդ ամենի թևարկության տակ գտնվում էին բազմաթիվ փոխադրական նավեր, որոնք իրենց վրա կրում էին 30 հազար զինվոր[1]:

Թուրքերը Տրիպոլիտանիայում ունեին 35 հազար զինվոր, ինչպես նաև մի քանի հազար արաբ հեծյալներ: Ժամանակ ունենալու և մեծ ջանքեր գործադրելու դեպքում Թուրքերը կարող էին չուրջ 40 հազար արաբների զենքի տակ բերել:

Ափ դուրս գալով, իտալական արշավախումբը ձեռնարկեց Տրիպոլիտանիայի գրավումը:

Թուրքական զորքի մարտական ոգին բարձրացնելու համար Էնվեր բեյը պատերազմի հենց սկզբին Եգիպտոսի ճանապարհով ծպտյալ մեկնել էր կռվի դաշտ[2]: Նրան հետևել էին իթթիհադական զինվորական ղեկավարներից շատերը՝ Իսմեթը, Խալիլը, Վասըֆը և ուրիշներ[3]: Սակայն շուտով նրանք բոլորը ձեռնունայն վերադարձան, որովհետև նույն ժամանակ Եմենում ապստամբները ջախջախել էին տեղի Թուրքական զորախմբի մի քանի գնդեր, իսկ Ալբանիայում Թուրքերի դեմ կռվող զինված ջոկատները նոր հաջողություններ էին հասել:

Այդ պահը նկարագրելով, Վահան Փափազյանը գրում էր. «Կառավարութիւնը եւ Իթթիհատը գլուխնին կորսնցուցած էին, իրենց ներսն ալ ցեց էր ինկած, իսկ ներքին գաւառները թեւատարած անիշխանութիւն կը տիրէր: Երբեմն միայն չինծու ու պոռոտ «հայրենասիրական» թխածոյ հեռագիրներ կու գային իրենց քլուպներէն. «Ոչ մէկ թիզ հող չենք զիջիր» ... Եւ ի հարկէ ոչ ոք տեղէն կը շարժէր: Պոլսոյ մէջ ալ միթինկներ կը գումարուէին «վաթանըմրզ»-ներով եւ «չոք եաշա»-ներով լեցուն:

Այս ամէնը, թէեւ սնամէջ՝ լաւ բան չէր խոստանար հայութեան: Ամբոխի մոլեռանդութիւնը հրահրուեցաւ ծայրայեղօրէն, որուն հետեւանքները զգալի էին: Խորհրդարանի[ն] մէջ ալ խոր

---

[1] Տե՛ս **«Ախուրեան»**, № 50, 25 սեպտեմբերի 1911 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 54, 20 հոկտեմբերի 1911 թ.:

[3] Տե՛ս **Վահան Փափազեան,** Իմ յուշերը, հատ. Բ, էջ 154-155:

արձագանգ գտան այս ամբոխային տրամադրությունները:

Ակներեւ ատելավառ էին Թուրքերու հայեացքները եւ վերաբերմունքը դէպի քրիստոնեաները, կարծես մենք էինք Թրիփոլիի մէջ իրենց դէմ կռուողները»[1]:

Թեև եվրոպական պետությունները վճռել էին այդ պատերազմում լիակատար չեզոքություն պահպանել, բայց որևէ մեկը չէր կարող երաշխավորել, թե վաղը կամ մյուս օրը նոր բարդություններ չէին ծագելու իրենց միջև: Զէր բացառվում, որ Ալբանիայի, Մակեդոնիայի, Կրետեի, Արաբիայի և Եգիպտոսի ներքին հասարակական-քաղաքական կյանքում առաջ կգային այնպիսի դեպքեր, որոնք այս կամ այն տերության գործուն միջամտությունը կպահանջեին:

Երկյուղ կրելով եվրոպական մեծ պատերազմի սոսկալի աղետից՝ պետություններն ամեն կերպ աշխատում էին տեղայնացնել ծագած հրդեհը, որպեսզի պատերազմը հնարավորինս չուտ վերջանա[2]: Բայց նրանցից յուրաքանչյուրը միաժամանակ մտածում էր քաղաքական հավասարակշռության մասին և կցանկանար, որ իտալական շահերի դիմաց ինքն էլ վարձատրված լիներ՝ օսմանյան ժառանգությունից իր համար մի որևէ պատառ ստանալով:

Այսպիսով, եվրոպական կառավարությունների առաջ կանգնած էր դժվար լուծելի խնդիր՝ մի կողմից՝ պատերազմը սկսվելուց հետո թույլ չտալ, որ դա դուրս գա Տրիպոլիտանիայի սահմաններից, մյուս կողմից՝ կարողանալ պահպանել հավասարակշռությունը քաղաքական ասպարեզում:

Եվրոպայի հասարակայնության համակրությունն Իտալիայի կողմն էր: Բոլոր պետությունները (նույնիսկ Գերմանիան*, որ

---

[1] **Վահան Փափազեան,** Իմ յուշերը, հատ. Բ, էջ 155:

[2] Տե՛ս **Анатолий Филиппович Миллер,** Оттоманская империя (Султанская Турция), Москва, 1946, с. 34-35.

* Դիվանագիտական շրջաններում ոչ-պաշտոնական խոսակցություններ էին լինում, թե Տրիպոլիտանիայի փոխարեն Գերմանիան Թուրքիային առաջարկել է գրավել Հարավային Պարսկաստանը (տե՛ս **«Ախուրեան»,** № 50, 25 սեպտեմբերի 1911 թ.):

Թուրքիայի անկեղծ բարեկամն ու թունդ պաշտպանն էր համարվում) չեզոք դիրք բռնեցին: Միայն իտալացի սոցիալիստները բողոք բարձրացրին: Երկրի խորհրդարանի սոցիալիստական հատվածը մեծապես խռովված էր զարգացող իրադարձություններով: Սոցիալիստ պատգամավորները նախ հեռացան պատգամավորական ժողովի այն նիստից, ուր պատիվ էր տրվում բանակին ու նավատորմին, ապա աղմուկ բարձրացնելով պահանջեցին, որ կառավարությունը հրաժարվի Լիբիան Իտալիային կցելու իր 1911 թ. նոյեմբերի 5-ի հռչակագրից: Խորհրդարանի ստվար մեծամասնությունը դեմ քվեարկեց սոցիալիստների նախաձեռնություններին[1]: Դրանից հետո սոցիալիստական կուսակցությունը փորձեց Հռոմում ընդհանուր գործադուլ կազմակերպել, բայց նրա կոդքին միայն 100-150 հոգի կանգնեց: Բողոքներով հանդես եկան եվրոպական սոցիալիստական կուսակցությունները, բայց նրանց կազմակերպած հանրահավաքները որևէ նշանակություն չունեցան իտալական կառավարության համար:

Պատերազմի առիթով ՀՅ դաշնակցության Կ. Պոլսի Պատասխանատու մարմինը (կենտրոնական կոմիտեն) հանդես եկավ մի հայտարարությամբ, որով դատապարտում էր կառավարությանը, «Միություն և առաջադիմություն» կոմիտեին՝ պատերազմը կանխել չկարողանալու համար: Դա Փարիզի 1907 թ. դեկտեմբերյան համագումարում Իթթիհադ-Դաշնակցություն համագործակցության կայացումից հետո առաջին դեպքն էր, որ Դաշնակցությունն իր կոմիտեներից մեկի միջոցով բացահայտորեն հանդես էր գալիս երիտթուրքերի վարած արտաքին քաղաքականության դեմ: Դաշնակցությունը միաժամանակ ազդարարում էր, որ հանցավորներ որոնելու ժամանակը չէ և բոլոր բարի օսմանցիներին, մանավանդ խորհրդարանի պատգամավորներին կոչ էր անում ամեն ջանք ի գործ դնել պատերազմն անհապաղ դադարեցնելու համար՝ թեկուզ Տրիպոլիսն իտալացիներին զիջելու գնով և, այնուհետև, կենսական պահանջ

---

[1] *Տե՛ս* ***«Ռահվիրա»****, № 14, 21 մարտի (5 ապրիլի) 1912 թ.:*

դարձած բարենորոգումների անցկացմանը ձեռնարկել[1]:

Հայտարարությունից հետո Դաշնակցությունը Կ. Պոլսում կազմակերպեց հանրահավաք՝ Թուրքիայի վրա Իտալիայի հարձակման դեմ: Հանրահավաքին, բացի հայկական կուսակցությունների ներկայացուցիչներից, մասնակցում էին մեծ թվով թուրքեր, կառավարության անդամներ, Իթթիհադի պարագլուխներ: Եղան բազմաթիվ հակաիտալական ելույթներ, Տրիպոլիտանիա մեկնելու և կռվի մեջ մտնելու համար կամավորների գնդեր կազմելու կոչեր արվեցին:

Դաշնակցությունը գտնում էր նաև, որ ժամանակավորապես պետք է դադարեցնել Իթթիհադի դեմ դժգոհություններ հայտնելը և համախմբվել կառավարության շուրջը՝ սկսված աղետից միասնաբար դուրս գալու համար:

Լեոն իր աշխատություններից մեկում մեջբերում է Դաշնակցության հրատարակած մի կոչը, որը գետեղված է եղել վերակազմյալ հնչակյանների «Սայթաքում» խորագրով գրքույկում (Կ. Պոլիս, 1914, էջ 5-6): Կոչում ասված էր.

«Օսմանցի հայրենակիցնե՛ր,

Պատերազմի աղէտին առջեւ կը գտնուի մեր հայրենիքը — այն մեծագոյն աղէտներէն մէկը, զոր բռնական ընազդները ստեղծեցին ու որոնց գոյութիւնը աղբիւրն է բոլոր ժողովուրդներու դժբախտութեան եւ քայքայիչ հակամարտութեան*:

Տագնապի այս պահերը չեն սակայն, որ հաշուեյարդարի առիթ կրնան ծառայել, հակառակ որ մենք, հայերս, բացառիկ տառապանքներու տակ ճզմուեցանք երեսուն տարի անընդհատ եւ հակառակ որ վերջին երեք սահմանադրական տարիները ակնկալուած բարւոքումը չբերելէ զատ իր թշուառ ժողովուրդին՝ աստիճանաբար անիշխանութեան, ապօրինութիւններու եւ ոճիրներու թատր դարձուցին հայաբնակ նահանգները:

Ո՛չ, ընդհանուր հայրենիքին սպառնացող վտանգին առջեւ մենք կը դադրեցնենք մեր բողոքները, այն մեծ վստահութեամբ,

---

[1] Տե՛ս **«Ժայռ»**, № 65, 2 հոկտեմբերի 1911 թ.:

* Պարբերության իմաստային անհարթությունը բնագրային է:

թէ հեռու չէ վերջապէս ողջմտութեան եւ արդարութեան յաղթանակը հին ռեժիմեան աւանդութիւններու վրայ:

Արդի ծանր վայրկեանը չէ հաշուեյարդարի պահը,- կը կրկնենք մենք»[1]:

Դաշնակցության Վանում լույս տեսնող օրգան «Աշխատանք» թերթը տպագրել էր ՀՅԴ Վասպուրականի կենտրոնական կոմիտեի 1911 թ. հոկտեմբերի 17-ի կոչը՝ ուղղված «հայ հասարակութեանը»:

Դատապարտելով Իտալիայի զավթողական քաղաքականությունը, կենտրոնական կոմիտեն հայտարարում էր.

«Եւ մենք միշտ հաւատարիմ մեր անցեալին, հետամուտ մեր նպատակներուն, այսօր երբ պահ մը մոռացած մեր առանձին իրաւունքներու հետապնդումը ու մեր պահանջներուն բաւականութիւն ստանալու իրաւունքէն, կըսենք – միշտ հաւատարիմ մնալով մեր պատմական առաքելութեան. ձեռք պիտի տանք այն պետութեան, որը մերն ի՛սկ է եւ որու ամբողջականութեան մէջ կը փնտռենք մեր ազգային գոյութեան պահպանումը»[2]:

Այնուհետև կոչ էր արվում «մեր ընկերներուն ու գիտակից քաղաքացիներուն, որպէսզի անոնքն ալ մեզ հետ ու մեր կողքին կանգնած՝ միասին գնանք ընդհանուր թշնամիի դէմ, ապացուցանելու մեր աւանդական զոհաբերութիւնն ու կուելու ընդունակութիւնը»[3]:

Կատաղի մարտեր ծավալվեցին Տրիպոլիսի մատույցներում: Սկզբում հեռագրերը Կ. Պոլիս լուրեր էին բերել, թե թուրքական զորքերը մեծ հաղթանակներ են տանում: Դրանք թուրքերի մեջ առաջ էին բերել մեծ ոգևորություն: Բայց այդ սխալ լուրերից բխած խանդավառությունը երկար չտևեց:

Պատերազմի դաշտ հանված մեծ թվով արաբ հեծյալներն անհրաժեշտ զինվորական պատրաստություն չունեին, իսկ ունեցած ռազմական միջոցները պարզունակ էին: Անմխիթար վիճակում էին Տրիպոլիտանիայում (հիմնականում մայրաքաղաք

---

[1] **Լէօ,** Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Բ, էջ 63-64:

[2] **«Աշխատանք»,** № 58, 29 հոկտեմբերի 1911 թ.:

[3] Նույն տեղում:

Տրիպոլիսում) տեղակայված և Փոքր Ասիայից ռազմադաշտ նետված Թուրքական զորքերը: Բարձր Դուռը չէր համարձակվում Կ. Պոլսից և կայսրության եվրոպական վիլայեթներից նավերով լրացուցիչ զորք ուղարկել պատերազմի գոտի՝ երկյուղելով իտալական նավատորմից: Առանց այն էլ ռազմաճակատ զորքեր հասցնելու համար Թուրքերը բավարար թվով նավեր չունեին[1]:

Ծայրահեղորեն ընկած էր զորքերի մարտունակությունը: Զինվորներն իրենց զորամասերում միայն ամենատարրական մարզանք էին ստանում: Բանակի սպաները տգետ, կրթության երես չտեսած մարդիկ էին, եթե նկատի չունենանք այն հազվագյուտ բացառությունը, որ կազմում էին Կ. Պոլսի զինվորական ուսումնարանի շրջանն ավարտած կամ Գերմանիայում ռազմական բարձրագույն ուսում ստացած սպաները:

Թուրքական բանակի մի ուրիշ տկար կողմն այն էր, որ զինվորական սննդի և առողջապահության գործը չատ վատ էր կազմակերպված, պակասում կամ իսպառ բացակայում էր դեղորայքը: Այդ ամենը պատերազմի ժամանակ մեծապես վնասում էին բանակի ռազմական գործողություններին:

Այդ վիճակի հիմնական պատճառը Թուրքական գանձարանի ծայրահեղ սնանկ դրությունն էր: *"Русское Слово"* թերթը 1912 թ. № 147-ում վկայում էր, որ 1911 թ. վերջերին Թուրքական պառլամենտին ներկայացված 260 միլիոն ռուբլի կազմող չնչին բյուջեն 52 միլիոն ռուբլու (կամ չուրջ 20%-ի) պակասորդ (դեֆիցիտ) ունի: «Ֆինանսների նախարարը խոստացել է, որ արտաքին փոխառություն ստանալու իր ջանքերը խորտակվել են: Միակ հույսը, որ ունի Թուրքիան իր դատարկ գանձարանի հատակը միայն ծածկելու համար՝ դա ներմուծվող ապրանքների մաքսի հավելումն է, որը տարեկան կարող է [գանձարանին] տալ 14-15 միլիոն ռուբլի եկամուտ, բայց այդ էլ դեռ հարց է, թե արդյո՞ք օտար պետությունները այդպիսի որոշման կհամաձայնեն»:

---

[1] **Տե՛ս А. А. Могилевич, М. Э. Айрапетян,** *На путях к мировой войне, 1914-1918 гг., с. 92.*

Ֆինանսների ողբալի վիճակի և այլ պատճառներով Տրիպոլիտանիայի հետ կապն իրականացվում էր շատ մեծ դժվարություններով: Բացի այդ, երիտթուրքական կոմիտեն սխալ որոշում էր ընդունել՝ Տրիպոլիտանիայում տեղակայված թուրքական ուժերի մի մասն ուղարկել Եմեն՝ կռվելու տեղի ապստամբների դեմ[1]:

Չնայած այդ ամենին, իտալական զորքը չէր կարողանում արագ հաղթահարել Տրիպոլիսի պաշտպանների դիմադրությունը: Թուրքական զորքի կողքին այստեղ կատաղորեն կռվում էին նաև արաբները[2]:

Լիբիայում թուրքական զորքերի հրամանատար Մունիր փաշան շրջապատված քաղաքից օգնություն էր խնդրում Կ. Պոլսից[3], նույնն անում էր Տրիպոլիսը շրջապատած իտալական զորքերի հրամանատար Կանևան՝ անդադար դիմելով Հռոմ[4]: Իտալական կառավարությունը շտապ արձագանքել էր և բավարարել Կանևայի պահանջները, իսկ Կ. Պոլիսը զրկված էր Մունիր փաշային օգնություն ցույց տալու հնարավորությունից:

Հղում կատարելով ռուսական «Новое Время» թերթին, Ալեքսանդրապոլի «Ախուրեան» թերթը վկայում էր, որ Թուրքիան բանակցություններ էր սկսել Իտալիայի հետ՝ Տրիպոլիսը զիջելու վերաբերյալ, փոխարենը պահանջելով, որ Հռոմը համոզի մեծ տերություններին, որպեսզի նրանք համաձայնություն տան Թուրքիային գրավելու մի քանի սահմանամերձ գավառներ Պարսկաստանում[5]: Խոսքը Ատրպատականի և Հյուսիսային Պարսկաստանի մյուս թուրքալեզու տարածքների մասին էր:

Թուրքական բանակի շարքեր զորակոչված հայ զինվորները նույնպես կռվում և մեռնում էին Տրիպոլիսի մատույցներում և Լիբիայի ավազուտներում՝ պաշտպանելով սահմանները իրենց

---

[1] Տե՛ս **«Պահակ»**, № 42, 30 նոյեմբերի 1911 թ.:

[2] Տե՛ս **«Լուսարձակ»**, 21 նոյեմբերի (3 դեկտեմբերի) 1911 թ.:

[3] Տե՛ս **«Ախուրեան»**, № 52, 11 հոկտեմբերի 1911 թ.:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս նույն տեղում, № 51, 2 հոկտեմբերի 1911 թ.:

ազգի թշնամի բռնակալական պետության: «Նրանք քաջությամբ եւ հաւատարմութեամբ պիտի կռուէին արժանանալով իրենց թուրք հրամանատարներու եւ մասնաւորապէս պատերազմական նախարար Նազըմ փաշայի բարձր գնահատութեան»[1]:

Երկարատև պաշտպանական մարտերից հետո թուրքերն ստիպված էին իտալացիներին հանձնել Տրիպոլիսը[2]: Այնուհետև գրավվեցին Բենգազին և Կիրենաիկայի ամբողջ ծովեզերքը:

Միայն Տրիպոլիսի համար մղած կռիվներում սպանվեց 2000 զինվոր ու սպա և վիրավորվեց 4000-ը[3]: Հատկապես արյունահեղ էին Բենգազի և Դերնա քաղաքները գրավելու համար ծավալված մարտերը: Բենգազին թողնելուց առաջ թուրքերը հրեա առևտրականների կոտորած սարքեցին, իսկ Դերնայում թուրքական զորքը կոտորեց իտալացի և այլ օտարերկրացի միսիոներներին[4]: Իտալական արշավախմբի զորամասերը նախապատրաստվեցին առաջանալ դեպի Սահարայի ավազուտ անապատի խորքերը, «ուր փարաւոններու եւ աքեմէնեան պարսիկներու ու Ալեքսանդրի այնքան բանակները փճացած էին, թաղուելով աւազի մրրկածուփ ալիքներուն տակ»[5]: Թուրքերը փախչում էին դեպի երկրի խորքերը: Անընդհատ գալիս էին արաբ պարագլուխները և հպատակություն հայտնում իտալացիներին[6]:

Տրիպոլիսի անկումը հերթական իրարանցում առաջ բերեց Թուրքիայում: Դա պատահական չէր, քանզի այդ քաղաքը կորցնելով՝ Թուրքիան Աֆրիկայից դուրս էր քշվում*: Այդ է պատճա-

---

[1] **Համբարձում Երամեան,** Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, էջ 153:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 149:

[3] Տե՛ս **«Ախուրեան»,** № 54, 20 հոկտեմբերի 1911 թ.:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] Տե՛ս նույն տեղում, № 53, 16 հոկտեմբերի 1911 թ.:

* Օսմանյան կայսրությանը Եգիպտոսի խդիվական իշխանության ենթակայությունը անվանական էր միայն, մանավանդ 1880-ական թթ. սկզբից, երբ անգլիացիք երկիրը փաստորեն գրավել էին:

որը, որ 1911 թ. դեկտեմբերի սկզբին Սաիդ փաշան հայտարարեց, որ պատերազմը դադարեցնելու համար մտադիր է բանակցություններ սկսել և, եթե իր պաշտոնակիցները կամ Իթթիհադի կոմիտեն ընդդիմանան, ինքը հրաժարական կտա[1]: Բայց այդ հայտարարությունը մնաց իբրև «ձայն բարբառոյ յանապատի»: Ամբողջ Թուրքական կառավարությունը ջղաձգության մեջ էր: Իթթիհադը նորից բազմահազարանոց հանրահավաքներ էր կազմակերպում: Մայրաքաղաքի մզկիթներում մոլլաները երիտթուրքերի կառավարությանը կոչ էին անում սրբազան պատերազմ հայտարարել[2]:

ՀՅԴ Աղաբազարի կոմիտեն քաղաքում մեծ հանրահավաք էր կազմակերպել՝ Թուրքիայի նկատմամբ «իտալական ոտնձգության» դեմ: Դաշնակցության օրգան «Բուլթանիա» շաբաթաթերթն իր երկու համարներում մանրամասն տեղեկություններ էր հաղորդել հանրահավաքի ընթացքի մասին: Հանրահավաքում երկարաշունչ ճառով հանդես էր եկել դաշնակցական գործիչ Զարեհ Գենջյանը և կոչ արել «կրծքով պաշտպանել օսմանեան հայրենիքը»: Ճառախոսը հատկապես «մերկացնում էր» եվրոպական տերությունների «դավաճանական» վարքագիծը Իտալիայի սանձազերծած պատերազմի հանդեպ[3]: Նշելով, որ եվրոպական երկրներն իրենց շահերից ելնելով Իտալա-Թուրքական պատերազմում չեզոքություն են պահպանում, Գենջյանն ասում էր. «Ճշմարիտ բարեկամը դժբաղդութեան մեջ յայտնի կ'ըլլայ, ըսուած է: Այսօր Օսմանեան մեծ հայրենիքը յայտնի դժբախտութեան մը մէջ կը գտնուի... Ամբողջ Եւրոպայի կառավարութիւնները ինքզինքնին բարեկամ ցոյց տուին սահմանադրական Թուրքիայի, բայց երբ Իտալիան ամէնէն աչկարաւաղակութեան ձեռնարկեց՝ լռեցին, չէզոք մնացին եւ ատով մեր թշնամիին պաշտպան հանդիսացած եղան»[4]: Այնուհետև, դիմելով սադրանքի, Գենջյանն ասում էր, թե Թուրքիայում բո-

---

[1] *Տե՛ս **«Պահակ»** № 43, 7 դեկտեմբերի 1911 թ.:*

[2] *Տե՛ս **«Ախուրեան»**, № 52, 11 հոկտեմբերի 1911 թ.:*

[3] ***«Բուլթանիա»**, № 25, 5 նոյեմբերի 1911 թ.:*

[4] *Նույն տեղում:*

լորը չեն, որ ուզում են պարտված տեսնել նախահարձակին: «Մեր մէջ ալ ունինք թշնամիներ, մեր մէջ ալ կան միթէկալի-պէներ, յետադիմականներ, որոնք ամէն ժամ կը խնդան մեր ցաւերուն վրայ: Նոյնիսկ այսպիսի խառնակ ժամանակներ կը փնտրեն, պղտորելու համար պարզամիտներուն միտքերը, գրգռելու համար խեղճ ու տգէտ ժողովուրդը»[1]:*

Ճառախոսն իր ելույթը վերջացրել էր այսպիսի խոսքերով. «Եւ որպէս այս պատուական երկրին ազատութեան ու երջանկութեան համար կռուող՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը, ինչպէս Պարսիկ Սահմանադրութեան պահապանը եղած է իր Եփրեմովը, իր անձնուէր ֆէտայիներովը, նոյնպէս պատրաստ է իր քաջերուն արեան վերջին կաթիլը զոհել[ու] այս երկրին զարգացման ու փրկութեան համար: Դաշնակցութիւնը թշնամի է Օսմանեան հայրենիքի բոլոր արտաքին ու ներքին թշնամիներուն, ու բարեկամութեան ձեռք կ'երկնցնէ իր ազատութիւն եւ արդարութիւն սիրող հայրենակիցներուն, եւ կը գոչէ միասին.

Կեցցէ՛ Օսմանեան մեծ Հայրենիքը, Կեցցէ՛ ճշմարիտ միաբանութիւնն ու եղբայրութիւնը, Կեցցէ՛ ազատամարտիկ ժողովուրդը»[2]:

Զարեհ Գենջյանից հետո հանդես եկածները նույնպես ցասումով դատապարտելով Իտալիային, կառավարությունից պահանջում էին զորացնել ռազմաճակատը: Հանրահավաքի ընդունած բանաձևում ասված էր, որ օսմանյան ռազմածովային նավատորմն ուժեղացնելու համար հանրահավաքի մասնակիցները պահանջում են 20%-ով ավելացնել տուրքերը[3]:

Թուրքական մամուլի տեղեկություններից երևում էր, որ կայսրության մուսուլմանաբնակ շրջաններում ծագել են խոր դժգոհություններ Իթթիհադի կառավարությունից, որ նա անճարակություն է ցուցաբերում՝ ի վիճակի չլինելով ապահովելու կայսրության սահմանների պաշտպանությունը:

---

* *Պարտվողականներ:*

[1] ***«Բութանիա»,*** *№ 25, 5 նոյեմբերի 1911 թ.:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, № 28, 26 նոյեմբերի 1911 թ.:*

Իտալա-թուրքական պատերազմում Թուրքիայի կրած անհաջողությունների պատճառով Իթթիհադի կոմիտեն ներկայացնող մի շարք նախարարներ 1911 թ. աշնանը հեռացվեցին կառավարությունից կամ ուրիշ, ավելի ցածր, պաշտոնների տեղափոխվեցին: Վերջիններից էր Թալեաթ բեյը, որը նշանակվեց փոստ-հեռագրի նախարարի տեղակալ: Այս պաշտոնն իր համար վիրավորական համարելով՝ նա ամիսներ շարունակ պաշտոնատեղի չէր ներկայանում:

Իտալացիների դեմ կռվում օսմանյան զորքերի անհաջողություններն, անշուշտ, սթափեցնում էին պանթուրքական երազներով տարված իթթիհադական թուրքերին՝ սահմանափակելով նրանց հեռավոր տենչերի ձգտումները:

Իտալա-թուրքական պատերազմում սահմանադրական ռամկավարներն ու հնչակյանները չեզոքություն էին պահպանում:

Տրիպոլիսը և Լիբիայի ծովափնյա մյուս քաղաքները գրավելուց հետո իտալական զորքերը ութ ամիս շարունակ չէին կարողանում քիչ թե շատ առաջ շարժվել դեպի երկրի խորքերը: Իտալա-թուրքական պատերազմը ձգձգվում և տևական էր դառնում:

Բենգազին իտալացիների գրավելուց հետո էլ Էնվեր բեյը Կիրենաիկայի հարավային տարածքներում շարունակում էր գլխավորել արաբ բեդուինների դիմադրությունը: Նա հայտարարություններ էր անում, թե ինքը արաբ բեդուիններին այնպես է կազմակերպել, որ նրանք մինչև արյան վերջին կաթիլը դիմադրելու են և երբեք չեն հնազանդվելու թշնամուն: Նա ասում էր նաև, թե արաբները երդվել են, որ եթե օսմանյան զորքի դեռևս մարտունակ մասերը փորձեն հեռանալ Կիրենաիկայից, ապա իրենք կփակեն նրանց ճանապարհը և չեն թողնի լքել իրենց[1]: Կահիրե հասած պատվիրակներն իրենց հետ տարել էին Էնվերի մեկ հայտարարությունը, որով նա Եգիպտոսի իսլամներին կոչ էր անում օգնել իրենց կրոնակից եղբայրներին, որ-

---

[1] *Տե՛ս* ***«Ժամանակ»****, № 1305, 12 (25) դեկտեմբերի 1912 թ.:*

պեսզի իտալացիները չկարողանան Կիրենաիկայի մյուս մասերը գրավել: Ավելին, Էնվերը Պոլիս էր ուղարկել օսմանյան սպայությունից իր հրաժարականը և ձեռնարկել էր Բենգազին իբրև ինքնավար երկիր կազմակերպելու գործին: Այդ նպատակով նա ստեղծել էր վարչական մարմիններ և հաստատել պաշտոնատարներ, որոնք տուրքեր էին գանձում, Բենգազի ներմուծված բոլոր ապրանքների վրա մաքսեր էին դնում[1]:

Բելգրադում ռուսական դեսպանորդ Հարդվիգը 1912 թ. մայիսին գրում էր. «Եթե իտալացիները մինչև վերջին ժամանակներս չեն կարողացել թափանցել երկրի խորքերը, ապա այսուհետ, արևադարձային ամառը վրա հասնելուց հետո, այլևս ի վիճակի չեն լինելու մի քանի քայլ անգամ առաջ գնալու: Այդտեղի տոթը կարողանում են տանել միայն տեղաբնակները»[2]:

Իտալական զորքերի տեղքայլը հույս էր արթնացրել Կ. Պոլսում: Իթթիհադի կոմիտեում նույնիսկ խմորվել էր պատերազմը Եվրոպա տեղափոխելու միտքը՝ հարձակում սկսելով հարավային Իտալիայի վրա[3]: Երիտթուրքերի ուղեղում վերակենդանացել էր ուշ միջնադարում թուրքական ռազմական հզոր նավատորմի պատրանքը, երբ նրա միջոցով թուրքերը սպառնալիքի տակ էին պահում Միջերկրականի ծովահայաց երկրները: Բայց իրենց այդ արկածախնդրական մտադրությունը թուրքերն այժմ չէին կարող իրականացնել սեփական թուլության, ինչպես նաև մեծ տերությունների վճռական արգելքի պատճառով:

Հիասթափված պատերազմական գործողությունների ընթացքից, Հոռոմը որոշեց Թուրքիայի վրա ազդել՝ կռիվը Եգեական ծովի կղզիներ ու ափեր տեղափոխելով:

Կղզիների գրավումը կարող էր շատ նպաստավոր լինել իտալացիներին, եթե նրանք ժամանակին տեղի հույն բնակչությանն իրենց կողմը գրաված լինեին: Բայց այդ բանը մինչև պատերազմը տեղի չէր ունեցել, ուստի և կղզիների հույները հազիվ

---

[1] *Տե՛ս* ***«Ժամանակ»****, № 1292, 29 նոյեմբերի (12 դեկտեմբերի) 1912 թ.:*

[2] ***А. А. Могилевич, М. Э. Айрапетян,*** *На путях к мировой войне, 1914-1918 гг., с. 93.*

[3] *Տե՛ս* ***Анатолий Филиппович Миллер,*** *Оттоманская империя (Султанская Турция), с. 34.*

թե որևէ աջակցություն ցույց տային նոր տիրապետողներին: Նրանք ոչ առանց հիմքի վախ ունեին, որ եթե իրենք համակրություն ցույց տան իտալացիներին, ապա Մակեդոնիայում տեղակայված թուրքական բանակը կչարժվի Հունաստանի վրա և առանց դժվարության կգրավի Աթենքը: Եթե նույնիսկ Իտալիան իր գրաված կղզիները նվիրեր Հունաստանին, վերջինս հազիվ թե ընդուներ այդ թանկագին ընծան, քանի որ թուրքական կառավարությունը, մանավանդ զինվորականությունն, առանց այդ էլ առիթ էր փնտրում պատերազմը տեղափոխելու եվրոպական ցամաքի վրա, ուր զենքի ուժով ձեռք բերած գրավումների դիմաց կկարողանար եվրոպական տերություններից պահանջել՝ ճնշում գործադրել Իտալիայի վրա, որպեսզի սա զիջումների գնա Լիբիայի հարցում[1]:

Հռոմի հետագա գործողությունները խառնեցին ինչպես Թուրքիայի, այնպես էլ եվրոպական մեծ տերությունների հաշիվները: Իտալական նավատորմը ռմբակոծեց Բեյրութը և նախապատրաստվեց պաշարելու և ռմբակոծելու նաև Դարդանելը: Անգլիական, ռուսական և ֆրանսիական կառավարությունները դիմելով Հռոմ՝ առաջարկեցին խուսափել Դարդանելը նավերով պաշարելուց և ռմբակոծելուց[2]: Բայց իտալացիներն ուշադրություն չդարձրին նրանց դիմումին և սոսկալի ռմբակոծության ենթարկեցին նեղուցը և այնտեղ խարիսխ նետած թուրքական նավերը:

Իտալիան նաև ռազմակալեց Եգեական ծովի Դոդեկանեզի կղզիները, իսկ նրա նավատորմը թուրքական նավերին հետապնդեց Աղրիական ծովում: Այդ բոլոր գործողությունների նպատակն էր ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա և նրան ստիպել անձնատուր լինել:

Եվրոպական մամուլն Իտալիայի գրաված կղզիների վերադարձումը անհնարին էր համարում: Իրերի այսպիսի խառնակ դրության մեջ անխուսափելիորեն գլուխ կբարձրացներ նաև Կրետեն: Եվ եթե Թուրքիան զրկվեր հարավի կղզիներից, նրան

---

[1] Տե՛ս **«Մամուլ»**, № 6, 5 դեկտեմբերի 1911 թ.:

[2] Տե՛ս **«Ախուրեան»**, № 51, 2 հոկտեմբերի 1911 թ.:

հովանավորող պետություններն այլևս չէին ճանաչի նրա գերիշխանությունը նաև այդ կղզու վրա:

Միջերկրականի արևելյան մասերում Իտալիայի գործողությունները դժգոհության և զայրույթի նոր փոթորիկ առաջ բերեցին Թուրքիայում: Իթթիհադը կազմակերպում էր բողոքի բազմամարդ հանրահավաքներ, ուր Թուրք պետական ու զինվորական գործիչները, նշանավոր մտավորականները, իսլամական կրոնի բարձրաստիճան սպասավորները կոչ էին անում զորահավաքի ենթարկել բոլոր ուժերը՝ թշնամուն հակահարված տալու համար:

Հանրահավաքներում Իտալիայի և իտալացիների հասցեին լսվում էին անեծքի ու ատելության զայրալից ձայներ. «Դո՛ւրս մեր երկրից, դո՛ւրս, դո՛ւրս», «Իտալացին մեր արյունախում թշնամին է», «Անե՛ծք մակարոնաճիներին», «Գետինն անցնի նրանց լեզուն», «Ով հայրենասեր օսմանցի է, իտալացիների հետ ամեն կապ ու հարաբերություն թող խզի», «Երբեք չգնենք իտալական ապրանքներ, մեր երկիրը իտալական ապրանք չպիտի մտնի», «Ատելի են մեզ համար իտալական գեղարվեստը, թատրոնը, երաժշտությունը» և այլն:

Նախ Կ. Պոլսից, ապա նաև երկրի մյուս քաղաքներից խումբ-խումբ հեռացան իտալացի ձեռնարկատերերը, բանկային և փոստային ծառայությունների աշխատողները, վաճառականները, արվեստագետները: Նրանք բոլորը օսմանյան երկրից դուրս հանվեցին գրեթե բռնի ու խառնիխուռն: Այդ բոլոր արտաքսյալների մեծ մասը ծննդով բնիկ թուրքիացի էր, երբեք չէր տեսել Իտալիան: Նրանք արժանացան իտալական պետության ջերմ վերաբերմունքին, իսկ ժողովուրդն իր ազգակիցներին ընդունեց գրկաբաց՝ ամեն ակնկալությունից գերիվեր հյուրընկալություն ընծայելով: Բոլորը նրանց դիտում էին որպես թուրքական կառավարության կողմից անիրավված ու հալածված հարազատների: Պետությունն ամենուրեք ստեղծեց նպաստամատույց մարմիններ, որոնք ստանձնեցին ակամա վտարյալների հոգատարությունը՝ նրանց ձրի հատկացնելով ուտեստ, հագուստ և նույնիսկ բնակարան[1]:

---

[1] *Տե՛ս* ***«Ժամանակ»,*** *№ 1277, 14 (27) նոյեմբերի 1912 թ.:*

Իթթիհադի՝ երկիրն արյան գնով պաշտպանելու կոչերին արձագանքում էր հայերի մի մասը: ՀՅ դաշնակցության մամուլի օրգանները չանթ ու որոտ էին տեղում իտալացիների գլխին: ՀՅԴ Կ. Պոլսի պատասխանատու մարմինը ցույցեր էր կազմակերպում, որտեղ հռետորները «ամոթի սյունին» էին գամում նախահարձակներին, որոնք «ուզում են անդամահատել օսմանյան հայրենիքը»: Իհարկե, այդ ամենն արվում էր Իթթիհադին դուր գալու համար*:

Հնչակյան և սահմանադրական ռամկավար մամուլի օրգանները նույնպես լայնորեն լուսաբանում էին պատերազմի ամբողջ ընթացքը: Կ. Պոլսի, Իզմիրի և այլ տեղերի նրանց թերթերն ընդհանուր առմամբ զգույշ էին կռվի ընթացքը նկարագրելիս, թեև առանձին դեպքերում չէին կարողանում թաքցնել իրենց հրճվանքն իտալացիների տարած այս կամ այն հաջողության կապակցությամբ: Անզգույշ էին, սակայն, թղթակցությունների այն հեղինակները, որոնք Կ. Պոլսից, Վանից և Թուրքիայի տարբեր տեղերից հոդվածներ ու նյութեր էին ուղարկում կովկասահայ թերթերին: Ի տարբերություն թուրքահայ թերթերի, Կովկասի հայկական մամուլն անթաքույց ուրախությամբ էր ընթերցողներին տեղեկացնում իտալացիների հաղթանակների ու օսմանյան զորքերի անհաջողությունների մասին:

Թուրք-իտալական պատերազմի առիթով եվրոպական մամուլն սկսեց հիշեցնել Բեռլինի կոնգրեսի ընդունած որոշումների մասին: Իսկ իտալական մամուլն ավելի հեռուն գնալով՝ բարձրացնում էր Օսմանյան կայսրության զանազան ազգային տարածքների ազատագրման անհրաժեշտության հարցը: Իտալացիները հատկապես ուժգնաձայնում էին Փոքր Ասիայի արևելյան մասը կազմող Թուրքահայաստանի մասին: Նրանք փորձում էին հայերին քաղաքական շարժման գրգռել Թուրքիայի դեմ: Բայց հայերը չունեին ո՛չ ցանկություն և ո՛չ էլ ուժ: Նրանք ստիպված

---

* Ի տարբերություն հայերի, Թուրքիայում ապրող հույները Իտալիայի դեմ ուղղված բողոքի որևէ ցույց չկատարեցին Դոդեկանեզի վրա հարձակման դեմ, թեև այդ կղզիները բնակեցված էին հույներով: Շատ զուսպ էին իրենց պահում նաև Կ. Պոլսի ու այլ տեղերի հունական թերթերը:

էին կատարել իրենց քաղաքացիական պարտականությունները:

Հնարավոր էր, որ պատերազմի առիթով կրկին հրապարակ բերվեր օսմանյան ժառանգության, այսինքն՝ Թուրքիայի բաժանման հարցը: Ահա թե ինչո՛ւ, երկյուղ կրելով այդ հեռանկարից, Իթթիհադի կառավարությունը 1911 թ. վերջերից սկսել էր միջնորդություններ հարուցել պատերազմին վերջ տալու համար՝ անգամ իտալացիների իրավունքները Տրիպոլիսի վրա մշտապես ընդունելու գնով: Բայց արդյո՞ք հաջող կգնային բանակցություններն իտալական կառավարության հետ և արդյո՞ք տերությունները հարկ չէին ունենա միջամտելու դեպքերին ու բարդացնելու վիճակը, մանավանդ որ, Բեռլինից ձայներ էին լսվում չեզոքությունից դուրս գալու հնարավորության մասին:

Միջերկրականի արևելյան ավազանում իտալացիների ռազմական գործողություններն առաջ բերեցին եվրոպական մեծերի խոր դժգոհությունը, քանի որ դրանք արդեն նրանց կենսական շահերն էին շոշափում: Բեյրութի ռմբակոծումը և Միջերկրական ծովի արևելյան մասում իտալական ուժերի հայտնվելը լուրջ անհանգստության տեղիք տվեցին Փարիզում և Լոնդոնում: Ռազմական գործողությունները Ադրիական ծով տեղափոխելու Իտալիայի փորձերը լարվածության առիթ դարձան ավստրո-իտալական հարաբերություններում: Դարդանելի ռմբակոծումը և որպես դրա հետևանք Թուրքիայի կողմից նեղուցների փակումը Ռուսաստանի խոր դժգոհության պատճառ դարձավ:

Իտալացիների տարած հաղթանակների հետևանքով Թուրքերի հոխորտանքներից հետք անգամ չէր մնացել: Իթթիհադի կառավարությունը ստիպված էր իտալացիների հետ բանակցությունների նստել[1]: Մեկ տարուց ավելի տևած Տրիպոլիտանյան պատերազմը վերջացավ 1912 թ. հոկտեմբերի կեսին:

Հաշտություն կնքելու նախօրյակին տերությունների կառավարությունները դիվանագիտական աշխույժ գործունեություն էին ծավալել Եվրոպայի համար վտանգավոր կնճիռներ չառա-

---

[1] **Владимир Иванович Кисилев.,** *Дипломатическая подготовка Уши-лозанского мира 1912 г., Труды Московского гос. историко-архивного института, Москва, 1958, с. 12.*

ջացնելու և երկու կողմերին հաշտեցնելու նպատակով[1]: Պատերազմը թանկ էր նստել Թուրքիային: Իտալիան գրավել էր նրա աֆրիկյան վերջին տիրույթները՝ Եգիպտոսից դեպի արևմուտք, մինչև Թունիս ընկած տարածությունը, որն ավելի քան երեք անգամ ավել էր չուրջ 38 միլիոն բնակչությամբ Իտալիայի[2] տարածքից: Մյուս կողմից, իտալական նավատորմը գրավել էր Եգեական ծովի՝ Փոքր Ասիայի արևմտյան ափերին մոտիկ մի չարք թուրքապատկան կղզիներ, այդ թվում Հռոդոսը, ինչպես նաև հարավային Սպորադյան խմբից 12 մանր կղզիներ (Դոդեկանեզը)՝ Ստամպոլիան, Սկարպոնտոն, Կազոն, Պիսկորին, Նիզիրոն, Կոլիմնոն, Լիրոն, Պատինոն, Կոսը, Սիթին, Կալիսին և Լիպսոն[3]: Իտալացիների՝ հզորի իրավունքով Դոդեկանեզի գրավումը կատարվեց ի վնաս փոքր և անզոր Հունաստանի, որն այդ հունաբնակ կղզիները իրենն էր համարում:

1912 թ. հունիսին Շվեյցարիայի Ուշի քաղաքում սկսվել էին իտալա-թուրքական բանակցություններ հաշտության պայմանագիր կնքելու համար, որոնք ժամանակավորապես դադարեցվել էին 1912 թ. հուլիսի 23-ին Թուրքիայում կառավարության փոփոխության կապակցությամբ: Օգոստոսի 18-ին վերսկսվեցին բանակցությունները, իսկ հոկտեմբերի 18-ին Լոզանում ստորագրվեց վեց կետերից բաղկացած[4] պայմանագիրը, որով վավերացվեցին իտալական գրավումները: Իտալիային անցած Տրիպոլիտանիան և Կիրենաիկան ստացան «Իտալական Լիբիա» անվանումը («Libia Italiana»)[5]: 1913 թ. փետրվարի 23-ին Իտալիայի Ներկայացուցիչների պալատը հաստատեց Տրիպոլիտա-

---

[1] Տե՛ս **«Լուսարձակ»**, № 30, 18 (31) դեկտեմբերի 1911 թ.: Տե՛ս նաև նույն թերթի № 23, 21 նոյեմբերի (3 դեկտեմբերի) 1911 թ. համարը:

[2] Տե՛ս **Н. Сокольский.,** Очерки современной Турции, Тифлис, 1923, с. 2-3.

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **«Աւետարեր»,** № 43, 1912, հավելվածը (ամսաթիվը չի նշված): Նախնական, գաղտնի պայմանագիրն ստորագրվել էր երեք օր առաջ՝ Շվեյցարիայի Ուշի բնակավայրում, իսկ հրապարակայնորեն ստորագրվեց Լոզանում (տե՛ս **Большая Советская Энциклопедия**, т. 11, Москва, 1973, с. 44):

[5] Տե՛ս **Н. Сокольский,** Очерки современной Турции, с. 9.

նիան Իտալիային միացնելու մասին 1911 թ. նոյեմբերի 5-ին կառավարության հրապարակած հռչակագիրը[1]:

Այդպիսով, Թուրքիան վերջնականապես դուրս մղվեց Աֆրիկայից[2]:

Հայ քաղաքական գործիչները չգիտեին ինչ գնահատական տալ Լոզանի դաշնագրին: Ռուբեն Զարդարյանը 1912 թ. մայիսի 30-ի թվով Կ. Պոլսից գրում էր Լոզանում գտնվող Ավետիս Ահարոնյանին.

«Յարգելի՛ ընկեր,

Վաղուց է որ չեմ գրած Ձեզի, բռնուած ըլլալով այն փոթորկին մէջ*, որ անցաւ այս երկրին վրայէն եւ որ չենք գիտեր թէ ինչ ճակատագիր պիտի սահմանէ մեզի:

Դուք ալ չգրեցիք, թէեւ գիտեմ այն բոլոր մտահոգիչ պայմանները, որոնցմով շրջապատուած էք այդ տեղ»[3]:

Լոզանի պայմանագիրը կնքելուց հետո իտալական կառավարությունը Կ. Պոլսին չտապեցնում էր իր զինաթափված բոլոր զինվորներին դուրս բերել Լիբիայից, բայց Բարձր Դուռը ձգձգում էր Հռոմի պահանջի կատարումը: «Ժամանակ» թերթը 1912 թ. դեկտեմբերի 17 (30)-ին տեղեկացնում էր հետևյալի մասին.

«Իտալական դեսպանատան գործակատարը երէկ Բ. Դուռ գալով տեսակցեցաւ Արտաքին գործոց նախարարութեան փոխխորհրդական Գուլումճեան էֆէնտիի հետ: Կը լսենք թէ տեսակցութեան պահուն իտալական գործակատարը պահանջած է որ Բ. Դուռը ժամ առաջ իր զինուորները ետ քաշէ Տրիպոլիսէն»[4]:

Վերջապես, 1912 թ. վերջերից սկսվեց թուրքական զինաթափ զինվորների դուրսբերումը Լիբիայից:

---

[1] Տե՛ս **Н. Сокольский,** *Очерки современной Турции, с. 9.*

[2] Այդ մասին տե՛ս **Հրաչեայ Աճառեան,** Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչեւ 1915 թ.), էջ 70: Տե՛ս նաև՝ **Հայկ Ասատրեան,** Հայաստան. արիական նախադիրք Առաջաւոր Ասիայում, Սոֆիա, 1942, էջ 81:

* Նկատի ուներ Տրիպոլիտանական պատերազմը:

[3] **«Հայրենիք»,** № 1 (276), հունվար, 1949, էջ 17-18:

[4] **«Ժամանակ»,** № 1310, 17 (30) դեկտեմբերի 1912 թ.:

Եթե պատերազմի ընթացքում մեծ տերությունները չէին միջամտում Թուրքիայի և Իտալիայի արյունահեղ կռիվներին, ապա Ուշի-Լոզանի հաշտության պայմանագրից հետո վիճակն սկսեց աստիճանաբար փոխվել: Հիմա Գերմանիան Թուրքիային ներկայացնում էր որպես անմեղ զոհ, Անգլիան ելքեր էր որոնում ջերմացնելու հարաբերությունները երիտթուրքական կառավարության հետ: Ֆրանսիական գաղութ Թունիսի կողքին հայտնված Libia Italiana գաղութն անհանգստություն էր առաջացրել Փարիզում և լարվածություն՝ Միջերկրական ծովի ավազանում: Ֆրանսիացիների դժգոհությունն իր հերթին պատճառ էր դարձել, որպեսզի Իտալիան նորից մերձենա Գերմանիային և Ավստրո-Հունգարիային[1]:

Եթե Տրիպոլիտանիայի իտալական գրավումը միջազգային իրավունքի տեսակետից անարդարություն էր համարվում և հափշտակություն դիտվում, բայց չէր կարելի հաշվի չառնել, որ երիտթուրքերի վարչակարգը, անտեսելով Իտալիայի շահերը, ինքն էր նրան ստիպել գնալու այդ ծայրահեղ քայլին[2]:

Անդրադառնալով Թուրքիայի ներքաղաքական վիճակին՝ բոլշևիկյան «Правда»-ն թերթը «Թուրքական իրադարձություններ» վերնագրով հոդվածում, 1912 թ. հուլիսի 27-ի համարում նշում էր. «Իտալական պատերազմը է՛լ ավելի բարդացրեց գործը: Այժմ մենք կանգնած ենք հենց անմիջականորեն Օսմանյան կայսրության գոյության հարցի առջև»[3]: Թերթը գրում էր, որ Թուրքիայի պարտությունը պատահական չէր. իրենց վարած ազգայնամոլական քաղաքականության հետևանքով երիտասարդ թուրքերը չկարողացան նվաճել զանգվածների վստահությունը, նրանց տանել իրենց հետևից: Դրա փոխարեն, սակայն, «երիտթուրքերն իրենց առաջին իսկ քայլերով կարծես դիտմամբ սկսեցին իրենցից վանել Օսմանյան կայսրության ժողովուրդ-

---

[1] *Այդ մասին տե՛ս* ***Հայկ Ասատրեան,*** *Հայաստան. արիական նախադիրք Առաջաւոր Ասիայում, էջ 81:*

[2] ***Տե՛ս Валерий Петрович Любин.,*** *Италия накануне вступления в Первую мировую войну (на пути к краху либерального государства), "Наука", Москва, 1982, с. 46.*

[3] ***"Правда"****, 27 июля 1912 г.*

ներին: Նրանք ի հայտ բերեցին ազատական բուրժուազիայի բոլոր արատները և թուլությունները, իսկ մյուս կողմից՝ իշխանության գլուխ անցած զինվորական-սպայական դասակարգի ամբողջ բռնակալությունը: Խոսքով ազատականություն անելով, ցույց տալով, թե այրվում են ժողովրդի համար, իրականում սարսափում էին նրանից, ատում նրան: Բնակչության լայն խավերի ամեն մի ինքնագործունեություն հանդիպում էր նրանց անվստահությանն ու խոչընդոտներին: Խոստացած բարենորոգումները, որոնք գոնե ինչ-որ չափով պետք է թեթևացնեին աղքատացած բնակչության դրությունը, չկատարվեցին, իսկ նոր մարդիկ, կանգնելով կառավարման գլուխ, պատվախնդրության խաղ էին անում և զբաղվում մութ գործերով, որով վերջնականապես իրենց վարկաբեկեցին ժողովրդական զանգվածների մոտ»[1]: "Правда"-ն հատկապես չեչտում էր կայսրության ոչ-թուրք ժողովուրդների նկատմամբ երիտթուրքերի անհանդուրժողական, ազգայնամոլական քաղաքականությունը, նշելով, որ նրանց «ձգտումը՝ թուրքացնել Օսմանյան կայսրությունում բնակվող սլավոններին, հայերին, հրեաներին, հույներին և այլն, ընդունեց ավելի կոպիտ և բռնի բնույթ, քան Աբդուլ Համիդի ժամանակ»[2]:

«ՆՈՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ» ՍՏԵՂԾՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ

Տրիպոլիտանական պատերազմում Թուրքիայի պարտությունը և նրա աֆրիկյան տարածքների կորուստը հեռուն գնացող հետևանքներ ունեցան: Դրանցից մեկը թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսության՝ թուրքիզմի մարդատյաց պատմափիլիսոփայության հետագա առաջմղումն էր, որը երիտթուրքերի քաղաքական զինանոց մտավ որպես գործունեության հիմնական ծրագիր:

Պատերազմում կրած ծանր պարտությունը ոտքի հանեց

---

[1] **"Правда"**, 27 июля 1912 г.

[2] Նույն տեղում:

Թուրքիայի ողջ հետադիմությանը, որը տեղի ունեցածն ընկալում էր որպես ազգային խոր վիրավորանք ու ազգային խայտառակություն: Ոչ միայն Թուրք հասարակության վերնախավերում, այլև ամենացածր շերտերում աստիճանաբար տիրապետող էր դառնում այն տեսակետը, որ եթե ժամանակին իրենց նախորդները Թուրքացրած կամ կոտորած լինեին Բուլղարիայի, Ռումինիայի, Սերբիայի, Զեռնոգորիայի, Ալբանիայի, Մակեդոնիայի և գրաված մյուս երկրների բնակիչներին, ապա այդ տարածքներն այժմ ոչ թե Թուրքիայից անկախ կլինեին, այլ՝ Օսմանյան պետության մարմնի անբաժանելի մասը: Այս գաղափարով գինովցած՝ Թուրքերն սկսեցին ամբաստանել սուլթան-խալիֆներին, իրենց կայսրութեան հիմնադիրներին, որ «ատենին ամենակատարեալ կերպով որդեգրած չէին այս լուծումը, զոր մասնակի կերպով միայն գործադրած էին»[1]: Թուրքերն սկսեցին նաև խստորեն դատապարտել արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ II-ին այն բանի համար, որ չէր կարողացել վերջ դնել կայսրության այլազգիների գոյությանը:

Աբդուլ Համիդին և նրան նախորդած սուլթաններին անխնա քննադատողներից ու դատապարտողներից մեկն էր Թուրք ազգային բուժուազիայի հայտնի գաղափարախոս, եվրոպական հիմնավոր կրթություն ստացած, պատմաբան ու սոցիոլոգ Ջելալ Նուրին: Օսմանյան կայսրության անկման պատճառներին նվիրած իր գրքում նա զարգացրել էր այն միտքը, որ կայսրության դժբախտությունների հիմնական պատճառը պետության հիմքն ու որոշիչ բաղադրամասը կազմող օսմանլիների անկումն է: 1912 թ. լույս ընծայած այդ գիրքը հենց այդպես էլ վերնագրված է՝ «Օսմանյան անկման պատմություն»:

Ջելալ Նուրին Թուրքիայի փրկությունը տեսնում էր կայսրության այլազգի ժողովուրդներին Թուրքերի մեջ ձուլելու միջոցով: Բայց քանի որ ավելի քան կես հազարամյակի ընթացքում, ինչպես ինքն էր խոստովանում, Թուրքերը չէին հաջողել ազգային միատարրություն ստեղծել երկրի ներսում, ապա ազգային

---

[1] ***«Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը»***, *էջ 5:*

միատարրության հասնելու համար նա քրիստոնյա հպատակներին կոտորելու սպառնալիք էր կարդում բացեիբաց[1]:

Երիտթուրք համաթուրքականներն իրենց համար առավելագույն արդյունավետությամբ օգտագործեցին Թուրք բնակչության հոգեկան ալեկոծումները: Քաղաքական հերթական կեղծավորության դիմելով՝ նրանք հրապարակայնորեն հառաչում էին աֆրիկյան տարածքների կորստյան առթիվ, բայց իրականում ներքնապես մեծ ցավ չէին զգում, որ իտալա-թուրքական պատերազմի հետևանքով երկիրը որոշ մարզեր է կորցրել: Լիբիայի կորուստը նրանք դիտում էին իբրև անհրաժեշտ անդամահատություն, մարմնից անպետք մասերի հեռացում, մի բան, որ ավելի է ուժեղացնում և կենսունակ դարձնում օրգանիզմը, փրկում «հիվանդ մարդուն»:

Միաժամանակ, Թուրք բնակչության մեջ հրահրելով ամենավայրենի ազգայնամոլություն և մարդատյացություն՝ Թուրքճիները արագ սթափվելու կոչ էին անում նրան: Ասելով, թե դեռ որոշ բան կարելի է փրկել փլատակներից, նրանք Թուրքերին հուշում էին, որ դեռ կա փրկության մի խարիսխ՝ «մեր ապագայի հույսը»՝ Անատոլիան, որի կազմում, ինչպես ասացինք, նրանք մտցրել էին նաև Արևմտյան Հայաստանը՝ «Արևելյան Անադոլու» անվամբ: Թուրքականները ազգակիցներին կոչ էին անում ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել հենց այդ տարածքի վրա: Ստեղծվում էր մի մտայնություն, որ եթե Թրքությունը ուզում է փրկվել վերահաս կործանումից և գոյատևել, ապա միայն մի ելք ունի՝ «Արևելյան Անադոլուի» լիակատար Թրքացումը: Թուրքական բռնապետության փրկության հույսը կապելով հայ ժողովրդի արևմտյան հատվածի ազգային-ֆիզիկական ոչնչացման հետ՝ նրանք խանդավառ էին, որ ճակատագրական այդ քայլերով Օսմանյան կայսրության աճյուններից կյանք կառնի, կվերածնվի մանուկ նոր Թուրքիա՝ հարազատ Թուրք բնակչությամբ:

Այդ «նոր Թուրքիայի» ստեղծումը Թուրքերի համար այլևս հապաղում չհանդուրժող հրամայական անհրաժեշտություն էր:

---

[1] Տե՛ս **Ատամ**, Օսմանեան կայսրութեան անկման պատմութիւնը, էջ 9-10:

Պետք էր ստեղծել ազգային-էթնիկական միատարրություն՝ ամեն գնով: Եվ հրապարակ նետվեց «Ով չի Թրքանում, պետք է սրի քաշվի» մարդատյաց սպառնալիք-կարգախոսը, որը Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարական ժառանգության և Թուրքական բռնակալության դարավոր պատմության արյունոտ արարի համառոտ բանաձևումն էր:

1911 Թ. սեպտեմբերին Սալոնիկում իր աշխատանքներն էր սկսել ԻԹԹիՀադի հերԹական տարեկան համագումարը, որը ծավալուն ծրագիր-որոշումներ էր ընդունել*: Ծրագրի 34 հոդվածները** զետեղված էին համապատասխան բաժիններում, որոնք էին.

Ա) ԻԹԹիՀադի վերաբերմունքը ոչ-Թուրք ազգությունների նկատմամբ

Այս բաժնի 11-րդ հոդվածում խոսք էր լինում «զանազան հասարակությունների կրոնական առանձնաշնորհումների պահպանման մասին»: Բայց «կրոնական առանձնաշնորհումներ» բառակապակցությունը ծրագրում միանգամայն այլ իմաստ էր ստացել, այն է՝ «Զանազան ազգեր կարող են պահպանել իրենց կրոնը, բայց լեզուն՝ ոչ»: Հոդվածում չէին հիշատակված այլազգիների լեզուների Թուրքացման միջոցները և ուղիները, բայց ծրագրի մի այլ տեղում ասված էր, Թե «ցեղերն օսմանցի (Թուրք:- Հ. Ս.) դարձնելու գլխավոր եղանակներից մեկը Թուրք լեզվի ընդհանրացումն է»: Բացառություն էր արված միայն ալբանացիներին, որոնց մասին հատուկ հոդվածով որոշված էր

---

* Թեև ԻԹԹիՀադի այդ համագումարում ընդունված որոշումները հույժ գաղտնի էին պահվել, բայց եվրոպական դիվանագիտությունը և հետախուզությունը, ինչպես միշտ, այս անգամ ևս, հաջողել էին դրանց մի մասը ձեռք բերել:

** Որոշ ժամանակ անց ծրագրի 34 հոդվածները հայտնվեցին եվրոպական քաղաքական լուրջ Թերթերի էջերում: Թուրքական երկրորդ գումարման խորհրդարանի բացումից հետո, 1912 Թ. ապրիլին, ԻԹԹիՀադը ինքն ստիպված հրատարակեց այդ 34 հոդվածները: Թերթերը կարծիք էին հայտնում, որ այդ հոդվածներից բացի, կան նաև ուրիշները, որոնց մասին հանրությունը տեղյակ չէ:

խոջաներ ուղարկել Ալբանիա, որոնք պետք է նրանց ընդունել տային արաբական տառերի գործածությունը որպես ազգային լեզվի այբուբեն և այդ միջոցով կրթեին նրանց:

Ինչ վերաբերում էր այլազան ազգությունների առանձնաշնորհումներին՝ պատրիարքարաններին և սրանց ստորադաս առաջնորդարաններին ու մետրոպոլիտություններին և այլն, ապա իթթիհադականները որոշել էին այլազգիների հինավուրց բոլոր արտոնությունները ջնջել: Որոշման մի ուրիշ բաժնում նշված էր, որ հարկ է զանազան ազգությունների կազմակերպություններն արգելել: Որպես այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը համարվում էր ոչ-թուրքերի միջև երկպառակություններ առաջ բերելը[1]: Օրինակ՝ Իթթիհադն աշխատելու էր Էպիրոսում ալբանացիներին գրգռել հույների և օրթոդոքսների դեմ, վալախներին բաժանել հույն օրթոդոքսներից և այլն:

Ավելի հստակ բացահայտելով իր ոգին՝ Իթթիհադը նաև հետևյալ որոշումն էր ընդունել. «Վաղ թէ ուշ անհրաժեշտ է ամէն զոհողութիւն անել օսմանցի դարձնելու (թուրքացնելու:- Հ. Ս.) համար բոլոր հպատակ ցեղերին... Այս նպատակին անկարելի է հասնել միմիայն համոզելով, ուստի հարկ եղած դէպքում պէտք է զէնք գործածել»[2]:

Բ) Ոչ-իսլամների մասին

Որոշվել էր երկրի վարչության (կառավարման) ղեկը պահել իսլամների ձեռքում: Սրանք ամենուրեք պետք է պահեն իրենց զենքերը, տեղական կառավարությունները պարտավոր են հարկ եղած դեպքում զենք բաժանել նրանց: Կայսրության պահպանման համար անհրաժեշտ է պահպանել ու ապահովել իսլամների թվական գերակայությունը: «Հարկ է ամեն կերպ նպաստել իսլամական քարոզչութեան, իսկ քրիստոնէական արժէքների քարոզչութիւնը խստիւ արգելել»[3]:

Գ) Մակեդոնիայի նկատմամբ վարվելիք քաղաքականությունը

Համագումարում Մակեդոնիայի հարցը մեծ տեղ էր բռնել:

---

[1] *Տե՛ս **«Մշակ»**, № 84, 22 ապրիլի 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

Հատուկ նշանակություն տրվեց այդ երկրի իսլամ ազգաբնակչության թվի կտրուկ ավելացմանը: Արդեն նախորդ երեք-չորս տարիներին Բոսնիայից այդտեղ էին տեղափոխվել և բնակեցվել 12.000 իսլամներ: Համագումարը որոշում ընդունեց ևս 20.000 մուսուլման Բոսնիայից բերել տալու: Այդ գաղթականներին պիտի տեղավորեին Բուլղարիայի և Հունաստանի սահմանագծային շրջաններում, նրանց պիտի տրվեին տեղի քրիստոնյա ազգաբնակչությունից խլված հողերը: Համագումարում քվեարկվել և ընդունվել էր բոչնագներին (բոսնիացի մուսուլմաններ) տեղափոխելու և բնակեցնելու նպատակով 220.000 օսմանյան ոսկի հատկացնելու բանաձև[1]:

Պատգամավորները հույս ունեին, որ եթե կայսրության այդ մասը լցվի իսլամ գաղթականներով և այնտեղի քրիստոնյաները զինաթափ արվեն, ապա Մակեդոնիայի նկատմամբ Հունաստանի և Բուլղարիայի հավակնությունները կվերանան:

Բնական է, որ Մակեդոնիայի տեղացի բնակչությունը և բոլոր քրիստոնյա էթնիկական խմբերը ծայրաստիճան դժգոհ էին լինելու թուրքական իշխանությունների ապօրինի գործողություններից:

Դ) Հայաստանի մասին

Համագումարը մեծ անհանդուրժողականություն դրսևորեց հատկապես Հայաստանի նկատմամբ:

Լավ գիտենալով, որ Հայաստանի հայերը զենքից համարյա զուրկ են կամ չնչին թվով զենք ունեն, իսկ իսլամ տարրերը մինչև ատամները զինված են, ուստի ծրագրի Հայաստանին վերաբերող մասում իթթիհադականների համագումարը որևէ բան չէր արձանագրել զենքի մասին: Դրա փոխարեն որոշվել էր Կովկասից և Թուրքեստանից իսլամ գաղթականների Հայաստան հրավիրել ու նրանց ձրիաբար հողեր տալ, միաժամանակ հայերին արգելել հող ձեռք բերել նույնիսկ բարձր գներով:

Միամիտ հայերը դեռ կարծում էին, թե քուրդ և թուրք բռնակալների հափշտակած իրենց հողերը հետ պիտի ստանան..., մինչդեռ իթթիհադականները մտածում էին հայերի ձեռ-

[1] **«Մշակ»**, № 84, 22 ապրիլի 1912 թ.:

քին մնացած հողերի մի կարևոր մասը նույնպես խլելու և իսլամ գաղթականներին տրամադրելու մասին, դրանով իսկ «գյավուր-ներին» կատարելապես հողազուրկ ստրուկներ դարձնելու համար[1]:

Բայց դա բոլորը չէր: Իթթիհադի նախորդ՝ 1910 թ. տարեկան համագումարը «Արևելյան Անադոլուն» հայերից «մաքրելու» վճիռ էր կայացրել՝ նրանց գլխովին ոչնչացնելու միջոցով: Եվ ահա 1911 թ. տարեկան համագումարը գործնական հողի վրա դրեց Թուրքահայության ամբողջական կոտորածների հարցը և նույնիսկ մատնանշեց դրա իրականացման մեթոդներն ու ձևերը:

Այնուհետև, նկատի առնելով Թուրքահայությանը, ժողովը որոշեց.

1. Ըստ բնության օրենքների, ստորադաս ցեղերը պետք է կեր դառնան գերադաս ցեղերին:

2. Ջարդերը ազնվականության ցասումն է ավագ ցեղերի դեմ, որոնք նկատված են իբրև վտանգավոր թշնամիներ:

3. Երբ արդեն որոշում է ընդունված, ջարդերի ծրագիրը պետք է գործադրել ամբողջությամբ, առանց որևե մեկից ազդվելու և առանց տարվելու զգացականով: Դա անգթություն չէ, այլ ապացույց է ոգու արիասրտության:

4. Զինվորական անհրաժեշտություն է անարժան ժողովուրդների (առնվազն մեկ բառ պակասում է, հավանաբար՝ բնաջնջումը: – Հ. Ս.) առանց տարիքի ու սեռի խտրության:

5. Թշնամի ցեղի մանուկների ջարդերը ազգային պաշտպանությանն ուղղված կանխարգելիչ միջոց է:

6. Իբրև աստվածամերժ չառավիղներ, այդ մանուկներն արժանի չեն ապրելու նույնիսկ իրենց մայրենի արգանդներում:

7. Օսմանյան կայսրության գոյությունը կախված է Երիտասարդ Թուրք (Ժեոն Թուրք) կուսակցության ուժից և հակամարտ բոլոր գաղափարների զսպումից[2]:

Ե) Երկրի կառավարման մասին

Իթթիհադն ամեն ինչ անում էր երկրի կառավարման ղեկն

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 84, 22 ապրիլի 1912 թ.:*

[2] ***Մուշեղ եպիսկոպոս [Սերոբեան]****, Հայկական մղձաւանջը..., էջ 42:*

իր ձեռքում պահելու համար: Այդ նպատակով նա պայքարում էր օսմանյան խորհրդարանում ազատական կամ ժողովրդական ընդդիմադիր խմբակցություններ կազմակերպելու դեմ: Կուսակցությունն իր կենտրոնական վարչության մեջ չէր հանդուրժում տեսնել ոչ միայն քրիստոնյաների, այլև կրոնով իսլամ, բայց ցեղով արաբ անձերի:

Զ) Վերաբերմունքը օտարների նկատմամբ

Անդրադառնալով օտարների հանդեպ կուսակցության վերաբերմունքի խնդրին՝ համագումարն արձանագրել էր, որ ԻԹԹիհադն արդեն հաջողել է կապիտուլյացիաների առանձնաշնորհումները խլել սերբական, բուլղարական և հունական կառավարություններից, իսկ եվրոպական պետություններից այդ իրավասությունները հետ ստանալու համար անհրաժեշտ է առնվազն մեկ միլիոնի հասնող բանակ ունենալ:

Համագումարը Բուլղարիայի նկատմամբ որոշեց նրա կառավարության հետ բարեկամական հարաբերություններ մշակել և պատերազմ առաջացնող առիթներից խույս տալ, որովհետև Թուրքիան պատերազմի դեռ պատրաստ չէ:

Հույների վերաբերյալ վճիռ ընդունվեց՝ նրանց դեմ չարունակել բոյկոտը այնքան ժամանակ, մինչև որ կկարգավորվի Կրետեի խնդիրը:

Մեծ պետությունների նկատմամբ որոշում ընդունվեց լավ հարաբերություններ պահպանել նրանցից յուրաքանչյուրի հետ, բայց որևէ մեկի հետ չկապվել դաշինքով[1]:

Է) Իսլամի մասին

ԻԹԹիհադականները երազում էին բոլոր իսլամ ժողովուրդներին պահել իրենց ազդեցության ոլորտում: Այդ նպատակով, համագումարը որոշեց ուժեղացնել իսլամական քարոզչությունը Եգիպտոսում, Հնդկաստանում, Թուրքեստանում, սերտացնել հարաբերությունները այդ երկրների իսլամական առաջնորդների հետ, որոնք միևնույն շահերն ունեն հասարակական ընդհանուր թշնամիների՝ քրիստոնյաների դեմ մղվող պայքարում[2]:

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 84, 22 ապրիլի 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

Տասնամյակներ չարունակ Թուրքահայաստանից աշխարհին էին հասնում միայն ջարդվող հայերի աղեկտուր ձայները: Ամենուր խոսում էին անպատիվ «հայկական ջարդերի» մասին: Եվրոպական մամուլը հոգնել էր հայի զազրելի համակերպության պատմություններից, բայց մյուս կողմից որպիսի՜ գոհունակությամբ էր արձանագրում հայերի առնական ընբոստության նշանները, հեղափոխական այլևայլ տեսակի արտահայտությունները, որոնք տեղի ունեցան 90-ական թվականներին: Իսկ Սասունի 1904 թ. հերոսական կռվի օրերին և դրանից հետո պատկերն ամբողջովին փոխվել էր: Ողջ աշխարհի մամուլն արձագանք էր տալիս «հայ-թուրքական կռիվներին»: Հերոսական կռիվ, այլ ոչ թե անպատիվ, խայտառակ ջարդ: Կռիվ և ոչ թե ողբ ու լացի աղաղակներ, կռիվ և ոչ թե աղիողորմ գանգատ և օգնության ճիչեր:

Բայց հիմա՞:

Թուրքիայում հաստատված նոր վարչակարգն իր բոլոր բաղադրիչներով («Միություն և առաջադիմություն» կոմիտե, խորհրդարան, կառավարություն, դատական համակարգ, նույնիսկ մամուլ) հիմնված էր ոչ թե ժողովրդի ազատ կամքի արտահայտության, այլ Իթթիհադի կամքի վրա: Հայտնի է, որ դրա անդամների թիվը մինչև 1908 թ. կեսերը ծայրահեղ սակավ էր, բայց իշխանությունը գրավելուց հետո նրա շարքերը մեծապես ստվարացել էին, և դա ոչ թե գաղափարական հողի վրա, այլ անձնական շահի ու դիրքի պահպանման անկասելի ձգտումով կամ երկյուղից դրդված: Աբդուլհամիդականներից նրանք, ովքեր հաջողացրել էին ժամանակին սողոսկել երիտթուրքերի շարքերը, կարողացել էին իրենց ներկան ու գալիք օրը ապահովել: Այդպիսիք, հակառակ Աբդուլ Համիդին իրենց ունեցած հավատարիմ ծառայության, պաշտպանելով երիտթուրքական կոմիտեին, կարողացել էին մնալ ջրի երեսին, ավելին՝ բարձրաստիճան պաշտոններ ստանձնել: Օսմանյան հեղափոխությունից չորս տարի անց էլ Թուրքիայում տնօրինում էին երբեմնի դավադիր կոմիտեի և նրա զորության առջև խոնարհված չահախնդիր

կամ իրենց հոռի անցյալը մոռացնել տալու ջանադիր անձերի բացարձակ ցանկությունն ու քմահաճույքը:

Կատարելապես ձախողված էր սահմանադրությունը, որը կատակերգության էր վերածվել: «Ազատություն» ասվածը, որ միայն խոսքով էր, մնացել էր օդից կախված: Թուրքական հեղափոխությունը, վիժելով իր ազդարարած նպատակից, թավալվում էր անօրինականության, անպատասխանատվության և բացահայտ ոճրի տիղմերի մեջ:

Հայկական թերթերից մեկը դառնությամբ նշում էր, որ աբդուլհամիդյան ժամանակներին պետք է երանի տալ, երբ տեսնում ենք, թե որպիսի չարիք է երիտթուրքական ռեժիմը, որի գերիշխանության տակ չվարած են մնացել հատկապես կայսրության քրիստոնյաները, որոնք այլևս չգիտեն իրենց անելիքը[1]:

Այդ ամենի պատճառով երկիրը դառը վիճակի էր մատնված: Նոր վարչակարգի հետ ժամանակին մեծ հույսեր կապած բոլորը նրա գոյության երրորդ տարում կատարյալ հուսախաբություն էին ապրում: Եվրոպական դիվանագիտության սյուները, որոնք 1908-ին իրենց ճառերում վստահություն էին հայտնում, թե, վերջապես, Թուրքիան ամուր կանգնելու է քաղաքակրթության ճանապարհին, այժմ, երեք տարվա տխուր փորձառությունից հետո, պապանձվել էին: Ավելին, Եվրոպան այժմ բացահայտորեն ազդարարում էր, թե ինքն այլևս իրավունք չունի միջամտելու թուրքական գործերին, որ Թուրքիան «խորհրդարանական-սահմանադրական» երկիր է, և որպես այդպիսին, նրա գործունեությանը հսկելը, նրա ներքին կյանքին խառնվելը անմիտ զբաղմունք է:

Թուրքիայի խորհրդարանական երկիր լինելու մասին եվրոպացիների հավաստիացումներին ի պատասխան, Կ. Պոլսում հրատարակվող հնչակյան «Կայծ» պարբերականը գրում էր, որ երկրի քաղաքական բարձրագույն հաստատությունը որևէ նմանություն չունի քաղաքակիրթ աշխարհում հայտնի խորհրդարաններին և որևէ առնչություն՝ սահմանադրություն կոչվող

---

[1] *Տե՛ս* ***«Սուրհանդակ»****, № 348, 17 հուլիսի 1911 թ.:*

երևույթի փիլիսոփայության հետ: Օսմանյան խորհրդարանը կարծես կոչված է միայն օրինականացնելու իրենից դուրս մի այլ տեղ նախապես ծեծված, չափված ու ձևված որոշումները: Եվ փույթ չէ, որ այդպես գործելը առաջ է բերում խոշոր հակասություն խորհրդարան կոչվող երևույթի հետ, ասել է թե՝ որևէ նշանակություն չունի, թե ընդդիմադիր որևէ խմբակցություն քննադատում է քննության ներկայացրած որևէ նախագիծ կամ խորհրդարանական որևէ հանձնաժողով նախապես հայտնում է իր անհամաձայնությունը, թեև դրանք լոկ պայմանական ձևականություններ են՝ օրենքներին խորհրդարանական գույն տալու համար: Երկրի արտաքին թե ներքին խնդիրների վերաբերյալ որևէ օրենք չի ընդունվում և որևէ հարց չի լուծվում առանց Իթթիհադի կոմիտեի համաձայնության: Օրենքների նախագծերը նախապես քննարկվում են (երբեմն բուռն կերպով) և «Թուրքիոյ փրկիչ «վսեմափայլ» իշխաններու, փաշաներու, պէյերու եւ էֆենտիներու ախորժակին համապատասխան»: Պատրաստուած հում նիւթերը կ'ուղարկուին «Մէճլիս-ի մէպուսան»՝ օրէնքներ թխել տալու համար...»[1]:

Արխիվային մի փաստաթղթի հեղինակը հեգնանքով գրում էր, որ եվրոպացիների համար Թուրքիայի ներքին գործն է Ադանայի 40.000 հայերի կոտորածը և սրանց հազարավոր որբերին ու այրիներին անխնամ թողնելը: Եվ ներքին գործ է համարվում հայկական նահանգներում հայերից հող խլել ու քրդերին տալը, հայ կանանց առևանգելը, բողոքողներին սրախողխող անելը և եկեղեցիներ պղծելը: Ներքին գործ է համարվում Ալբանիայի անվեհեր ու փոքրաթիվ հերոս ժողովրդի ոչնչացումը: Ներքին և վերջին գործ է համարվում Պոլսի հայկական թաղերը հրկիզելը[2]:

Թուրքահայության կյանքի համար ստեղծված սպառնալից պայմաններում նրա տարբեր խավերում կրկին խմորվում էր տրամադրություն, թե անիմաստ է այլևս Թուրքիայում ազատ ապրելու ու արարելու հույս փայփայել:

---

[1] **«Կայծ»**, № 1, 16 (29) ապրիլի 1911 թ.:

[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 41, վավ. 65[1661]:

Բոլոր հայերի մտքում ուրվագծվում էին գալիքի նոր սարսափները, նորանոր Աղանաներ: Նրանք ելքեր չէին տեսնում, քանի որ դրանք չկային կամ մնացել էր միայն մեկը: Հայի միակ հույսը կրկին զենքն էր, ելքը՝ զինված կռիվը: «Միայն զենքով կա հայոց փրկություն» մտայնությունն նորանոր զանգվածներ էր ընդգրկում:

Այդ մտայնության խորացմանը մեծապես նպաստում էր հայ գրականության երկու չքեղ ու ազնիվ անհատականությունների՝ Սիամանթոյի և Ահարոնյանի ստեղծագործական ընթացքը, որի դրդիչ ուժը շարունակում էր մնալ քաղաքական պայմանների սարսափի տակ տվայտող, կյանքի ու մահվան սահմանագծի վրա անստույգ ճակատագրի նշավակ դարձած անբախտ ժողովրդի Մեծ Ցավը: Մեկը՝ Թուրքահայ, մյուսը՝ ռուսահայ: Մեկը՝ Կ. Պոլսում, մյուսը՝ Կովկասում: Մեկը՝ դժբախտ Հայաստանի ծնունդ, մյուսը՝ Արարատյան աշխարհի: Նրանք տագնապալի ղողանջներ էին հնչեցնում: Հայ գրական կյանքի երկու մեծ տաղանդների վիրավոր սրտերից բխող վշտառատ աղաղակները ոչ միայն բողոք էին իրենց պաշտած ցեղի անագորույն ճակատագրի դեմ, այլև՝ ուռճացած ցասում: Հոգևարք ապրող սգավոր Թուրքահայության համար նրանք հույսի ջահեր էին վառում, նրանց հոգու թրթիռները կարմիր լուրեր էին տանում կյանքի կարոտ զանգվածներին: Բայց դա ամենը չէր. նրանք նաև ահազանգ էին հղում արյունոտ բախտի հարվածներից դալկացած հոգիներին, նրանց դրդում արիասիրտ ընդվզման:

Երկուսն էլ դաշնակցականներ էին, բայց զինվելու հարցում նրանց ստեղծագործությունները չեղված էին կուսակցության պաշտոնական քաղաքականությունից: Իրենց ներշնչանքով նրանք չափազանց նման էին իրար, թեև տարբեր էին մարդկային խառնվածքով:

Հայկական տանջանքների ու մարտիրոսության, հայ մարդու նահատակության ցնցող պատկերները շարունակում էին արձագանքել հայոց տառապանքի ու հեծեծանքի երգիչ Ահարոնյանի հոգում և նոր տաղանդաչատ արարումների ծնունդ տալիս, իսկ Սիամանթոն հավատարիմ էր մնում իր որդեգրած մարտական ոգուն, փառաբանում զենքը, վրեժի ու դյուցազնա-

կան ըմբոստացումների և վճռական կռվի պատրաստվելու կոչեր հնչեցնում:

Բայց ո՞ւր է զենքը և ո՞ւմ դեմ բարձրացնել դա: Զենք այլևս չկար, դա նորից պետք է ձեռք բերվեր, բայց արդեն անասելի դժվարին պայմաններում և երկարատև ջանքերի գնով: Իսկ թե ո՞ւմ դեմ՝ այդ հարցին հայկական քաղաքական շրջաններում երկու տարբեր պատասխան էր տրվում:

Առաջին պատասխանը ելնում էր այն իրողությունից, որ Իթթիհադի վարչակարգը հայության համար ավելի անտանելի է, քան նույնիսկ աբդուլհամիդյան բռնապետությունն էր, հետևապես, եթե ուշ չէ, եթե դեռ բանը բանից անցած չէ, հենց այդ վարչակարգի դեմ պետք է ուղղվի հայության կռիվը:

Այս տեսակետի վրա ամուր կանգնած էին հնչակյան կուսակցությունը և նրա համախոհները: Ընթերցողը լավ է հիշում, թե հնչակյաններն ինչպիսի համառությամբ էին փորձում Դաշնակցությանը համոզել, որ նա ձեռք քաշի երիտթուրքերի հետ դաշինքի մեջ մտնելու մտքից ու քայլերից և հայկական մյուս քաղաքական ուժերի հետ մտնի ազգային դաշինքի մեջ, որպեսզի համատեղ ուժերով հնարավոր լինի դիմակայել նոր փորձություններին ու արհավիրքներին: Դաշնակցությունը կտրականապես մերժել էր այդ առաջարկները:

Օսմանյան սահմանադրության վերականգնումից հետո եկած ողջ ժամանակաշրջանում հնչակյանները հավատարիմ էին մնացել իրենց տեսակետին, այն է՝ Իթթիհադ կոչվող բազմաճանկ հիդրան թուրքական բուրժուազիայի առավել կատաղի, ծայրահեղ ազգայնամոլ քաղաքական ուժն է, հայության առավել ոխերիմ երդվյալ թշնամին, հետևապես նրա հետ «բարեկամական» ամեն մի հարաբերություն միայն մոլորեցնում է հայությանը, թուլացնում նրա զգոնությունը, այդ չարիքի դեմ պայքարի ոգին: Իր ամենաոխերիմ թշնամու դեմ պետք է ուղղվի հայության կռիվը, եթե, իհարկե, այժմ նա ունակ է այդ կռվին:

Հնչակյան կուսակցության դեռևս 1909 թ. Կ. Պոլսում տեղի ունեցած 6-րդ պատգամավորական ժողովը, վերլուծելով Կիլիկիայի հայերի կոտորածներին երիտթուրքական իշխանությունների մասնակցության և գնալով անտանելի դարձող իթթիհա-

դական ռեժիմից պաշտպանվելու հարցերը, ընդունել էր հետեւյալ որոշումը.

«Աչքի առաջ ունենալով Օսմանյան Սահմանադրութեան տակաւին ոչ լրիւ արմատացած վիճակը եւ յետադիմական արտայայտութեանց հաւանականութիւնը՝ Ժողովը պարտք կը դնէ Գործադիր Մարմիններուն վրայ՝ նպատակայարմար հիմունքներով կազմակերպել ինքնապաշտպանութեան գործը»[1]:

Ինչպես որ սպասելի էր՝ որոշումը մնաց թղթի վրա:

Հնչակի Քեոսթենջեի (Կոստանցա, Ռումինիա) պատգամավորական ժողովը պարզ ու որոշակի չեչտել էր, որ Իթթիհադի դեմ կուսակցությունը պետք է անդիջում կռիվ մղի: Ստեփան Սապահ-Գյուլյանն ասում էր. «Պէտք է զինուել, մինչեւ ատամները զինուել, զինուել եւ պատրաստ գտնուել: Այս «Սահմանադրութիւնն» աւելի քան խաբուսիկ է: Թուրք ազգայնականութիւնը կազմակերպւում է ուժեղ կերպով: Պէտք է արթուն լինել եւ Հայ Յեղափոխական սկզբունքներին հաւատարիմ մնալ: Իթթիհադը մեր գերեզմանն է փորում, ժամանակաւոր այս խաղաղութիւնը փոթորիկներ պիտի բերէ: Մենք պատրաստ պէտք է լինենք զէնքով»[2]:

«Մեր (Հայ ժողովրդի:- Հ. Ս.) մասին այլեւս խոսող չկայ»,- ցավով նշում էր Թավրիզի Հնչակյան «Միտք» պարբերականը: Դրա պատճառն այն է, որ ազգը զենք չունի, հետեւապես մեզանից որևէ բան չենք ներկայացնում: «Միայն զէնքն ու արեան ճապաղիքն են կորզում անկախութիւններ»[3],- հաստատում էր «Միտքի» հրապարակագիրը:

Զենքին վերադառնալու տրամադրությունները հատկապես բորբոքվում էին գավառում: Թուրքահայաստանում ամեն օր տեղի ունեցող անիրավությունները, քրդերի գնալով ահագնացող սանձարձակությունները հայ մարդկանց մտածողությունը սևեռում էին դեպի զենքը:

---

[1] **«Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1962»**, հատ. Ա, էջ 324-325:

[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 3, վավ. 6^{36}:

[3] **«Միտք»**, № 21, 21 հուլիսի 1912 թ.:

Ահա՛, ուրեմն օսմանյան կայսրության մեջ գիտակցված միակ քաղաքականությունը ուժի վրա հենված քաղաքականությունն էր: Երիտթուրք կառավարությունն արդարություն և իրավունք պահանջողներին կարծես ասում էր. «Ցույց տվեք ձեր ուժը, որպեսզի տեսնեմ, թե դուք արժա՞նի եք գոյության»: Արաբիան և Ալբանիան, որոնք զենք (հետևապես՝ ուժ) ունեին, արյունալի կռիվներով կարողացան ձեռք բերել այն, ինչ երբեք չէին կարող խաղաղ միջոցներով: Հայկական հարցը արտաքնապես որոշ նմանություն ուներ միայն Մակեդոնական հարցին այն առումով, որ այդ հարցը նույնպես կարծես «փակվել էր» Օսմանյան խաբուսիկ սահմանադրությամբ: Բայց միայն՝ «կարծես»: Իրականում մակեդոնացիները նույնպես արդեն ազգովին փարված էին «ռումբի» գաղափարին:

Այս արմատական մոտեցումը գնալով նոր համախոհներ էր գտնում թուրքահայ հասարակության տարբեր շերտերում: Նույնիսկ Դաշնակցության ներսում երևակվել էր մի որոշ շերտ, որն սկսել էր հակվել հայությունը զինելու գաղափարին:

Սակայն ՀՅ դաշնակցության պաշտոնական քաղաքականությունը հակառակ էր ՍԴ հնչակյան կուսակցության տեսակետին և ընդհանրապես զինվելու գաղափարին: «Երբ ինքնապաշտպանութիւն կ՚ըսենք,- գրում էր ՀՅԴ ԱՄՆ արևմտյան շրջանի օրգան «Ասպարէզ»» թերթը,- ոմանք ատիկա թիւրք կառավարութեան դէմ զէնք վերցնել կը հասկնան: Բայց ատկէ սխալ բան չկայ: Համիտի ատեն խնդիրը տարբեր էր. երբ թիւրք զինուորը, բռնակալին հրամանը կատարելով, կը հարստահարէր ու կը կոտորէր հայը, ինքզինք պաշտպանելու չափ գիտակցութիւն ունեցող հայը արդարեւ զէնք ունէր նաեւ զօրքին դէմ, ռումբ ունէր Համիտին դէմ, եւ հայուն այդ ատենուան այդ գիտակից չարժումը արդարեւ ամէնէն փառապանծ դրուագն է ոչ միայն հայոց, այլեւ ամբողջ Թուրքիոյ ազատագրական չարժումին: Ատոր համար հայերը ոչ թէ նախատինքի, այլ նոյն իսկ գովեստի արժանացան երիտթուրքերու կողմէ»[1]:

---

[1] ***«Ասպարէզ»**, № 156, 4 օգոստոսի 1911 թ.:*

Այժմ խնդիրը բոլորովին տարբեր է, քանի որ «հայ ժողովուրդի քաղաքական ձգտումները ներկայիս արմատապէս փոխուած են»[1],- փորձում էր համոզել «Ասպարէզը»:

Դաշնակցության մյուս պաշտոնաթերթը՝ «Հորիզոնը» (Թիֆլիս), անդրադառնալով նույն խնդրին, գրում էր, որ այժմ չի կարող հայերի քաղաքական անջատում լինել ազգայնական հողի վրա: Դրա ապացույցներից մեկն այն է, նշում էր թերթը, որ ազգային դրոշակի տակ գործած հայկական հեղափոխական կուսակցությունները, հենց որ հրատարակվեց սահմանադրությունը, ոչ միայն մի կողմ ձգեցին ազգային դրոշակը, այլև այնուհետև իրենց հարվածներն ուղղեցին նույն այդ դրոշակի դեմ: Եվ ներկայումս, կարելի է ասել հաստատապես, որ Թուրքիայում չկա մի ուրիշ ազգություն, որ հայերի պես տարված լինի ապազգայնացման, կոսմոպոլիտիզմի գաղափարներով: «Նոյնիսկ Ադանայի ջարդի նման մի ահռելի դրամա չկարողացաւ բորբոքել նախկին ազգայնական իդէալները հայ յեղափոխական կուսակցութիւնների (կուսակցությա՞ն:- Հ. Ս.) մէջ: Եւ Թուրք կառավարութիւնը տեսնում էր, որ մի ժամանակ ռումբերով, հայդուկային խմբերով գործող կազմակերպութիւններն այժմ իր խաղաղ աջակիցներն ու դաշնակիցներն են, որոնք փրկութիւն են որոնում միմիայն սահմանադրական կարգերի հաստատման եւ ամրապնդման մէջ»[2]:

Բայց եթե իրադրությունը փոխվի, հնարավո՞ր է, որ հայերը վերադառնան նախկին գործողությունների եղանակին: Կտրականապես մերժելով այդ հարցադրումը, «Հորիզոնը» գրում էր, թե հաստատ կարելի է ասել, որ չի կարող: Կարելի է ասել, որ եթէ Թուրքիան նոյնիսկ վերադառնա բռնապետական ռեժիմին, դարձյալ հայությունը չի կարող առաջացնել հեղափոխական զինված չարժում իր իրավունքները պաշտպանելու համար:

Տարիներից ի վեր անթիւ առօրեայ փաստեր գալիս էին ապացուցելու, որ սահմանադրութիւնը ոչինչ չի կարողացել ասել

---

[1] ***«Ասպարէզ»**, № 156, 4 օգոստոսի 1911 թ.:*

[2] ***«Հորիզոն»**, № 36, 21 փետրվարի 1912 թ.:*

գաւառի հայութեան ապահովութեան համար: Բայց չնայած դրան, հայերին պաշտպանող հեղափոխական կազմակերպութիւնները հայդուկային կռիվներ չեն մղում, այլ փորձում էին հարցերը լուծել խաղաղ միջոցներով: Այսինքն՝ նրանց գործունեութեան եղանակն այժմ նոյնն էր, ինչպիսին ուներ ... Թուրքահայոց պատրիարքը: «Սա գանգատ էր տալիս, թուղթ էր ուղարկում Բարձր Դուռ, սպառնալով, որ եթե չընդունուի իր բողոքը, ինքը կհրաժարուի, կկողպի բոլոր եկեղեցիները: Հեղափոխական կազմակերպութիւնները նոյնպես բողոքներ ու զեկուցագրեր էին ներկայացնում Բ. Դուռ, բայց միայն այն տարբերութեամբ, որ եկեղեցիներ կողպելու սպառնալիք այլևս չեին կարող կարդալ:

«Հորիզոնը» այնուհետև գրում էր, թե «անհերքելի է, որ Թուրքիայի հայութիւնն իր ճակատագիրը կապել է սահմանադրական պետութեան հետ, նրան աջակցում է, նրա բնական դաշնակիցն է»[1], «Հայը զէնք չունի սահմանադրական Թուրք կառավարութեան դէմ,- «Հորիզոնի» հետ համերաշխում էր «Ասպարէզը»,- հայը զէնք չունի սահմանադրասէր օսմանեան բանակին դէմ»[2]: Ավելին, այժմ Դաշնակցությունը դատապարտում էր կայսրության ներսում ազգային-ազատագրական այն բոլոր շարժումները, որոնք ուղղված էին Թուրքական պետության դեմ: «Հայը երբեք չուզէր հետեւիլ ալպանացիին, մակեդոնացիին, արաբին, տիւրգիին, նոյն իսկ քիւրտին օրինակին: Քանի օսմ[անեան] կառավարութիւնը սահմանադրութեան պաշտպան է, քանի հետեւող է ազատութեան եւ հաւասարութեան սկզբունքին, հայուն աչքին բիրն է ան: Սահմանադրութեան եւ հաւասարութեան կիրարկումէն զատ ուրիշ պահանջ չունի հայը»[3]: Եվ դա այդպես է, հաստատում էր «Հորիզոնը», որովհետև «Թուրքահայերի մէջ անկեղծ բարեացակամ վերաբերմունք կայ դէպի Թուրքիան: Տարիներով անհաւասար կռուի մէջ յօշոտուած ժողո-

---

[1] **«Հորիզոն»,** № 36, 21 փետրվարի 1912 թ.:

[2] **«Ասպարէզ»,** № 156, 4 օգոստոսի 1911 թ.:

[3] Նույն տեղում:

վուրդը յոգնած, իր անօգնականութեան խոր գիտակցութիւնից ջարդուած՝ ուզում է ապրել փոքրիչատէ կանոնաւոր կեանքով, փոքրիչատէ ապահով կեանքի մէջ: Եւ նա, ի հարկէ, գոհ կլինէր, եթէ այդ պայմանները նրան տուողը լինէր հէնց ինքը՝ երիտասարդ Թուրքիան»[1]:

Երիտթուրքերի հետ Դաշնակցության բարեկամությունը չահասիրական, նեղ կուսակցական չէ, այլ ելնում է հայության ֆիզիկական անվտանգության շահերից, ասում էին կուսակցության ղեկավարները: Իթթիհադին չպետք է դիմադրել, որովհետև նա զորեղ, տիրող և իշխող կուսակցություն է, կարող է վնասել հայերին:

Եվ այսպես, Դաշնակցությունը, որ չուրջ երկու տասնամյակ Հայկական հարցը զենքով լուծելու քարոզիչ էր եղել իր մամուլով ու բեմով և «կենդանի գործի» ջատագով՝ հայդուկային խմբերով ու ռմբահար գործողություններով, այժմ իր գործունեությունը կամա թէ ակամա հավասարեցնում էր հայ հոգևորական դասի «քաղաքական» զբաղմունքներին...

Անդրադառնալով այդ խնդրին՝ «Մշակն» իրավացիորեն նկատում էր, որ առանց այն էլ Թուրքահայ հարցը գրեթե մի տխուր բացառություն է կազմել Արևելյան հարցի մյուս բոլոր՝ չլուծված թե առկախ հատվածների մեջ: Իր գոյության հրատապ պահերին անգամ այդ հարցն առաջադրվել է քաղաքական թույլ բովանդակությամբ և պասսիվ որակով, մինչդեռ մյուս ժողովուրդների ազատագրության դատերն՝ իրենց քաղաքական բովանդակությամբ և արտահայտության թափով ուղեկցել ու Եվրոպային դիմավորել են զենքի գոռ չաչյուններով, ապստամբական սարսափեցնող ակտերով: «Մի՞թէ մակեդոնացիները, բուլղարները, արաբները եւ միւսները իրենց դատը հրապարակ են բերել բողոքներով ու լացով»[2],- հարց էր տալիս «Մշակի» հոդվածագիրը: Ո՛չ, իհարկե: Թուրքահայ դատը տասնամյակներ մեծ մասամբ ընթացել է դիմումների, աղերսագրերի, հոդվածա-

---

[1] ***«Հորիզոն»,*** *№ 30, 12 փետրվարի 1912 թ.:*

[2] ***«Մշակ»,*** *№ 250, 9 նոյեմբերի 1912 թ.:*

յին ու բրոշյուրային քարոզչության և հայասիրական հավաքների միջոցներով: Եթե Արևելյան հարցի բալկանյան հատվածները վարել են, այսպես ասած, զենքի գործուն քաղաքականություն և պետություններին հարկադրել են զբաղվել իրենց վիճակով, լուծել իրենց հարցերը, ապա Հայկական հարցի խնամակալները, ընդհակառակը, դիմել են գերազանցապես աղերսագրերի մուրացիկ քաղաքականության՝ խնդրելով դադարեցնել հայկական կոտորածները և ի կատար ածել խոստացած բարենորոգումները[1]:

Դաշնակցության հակառակորդները, որոնք Իթթիհադի նկատմամբ տրամագծորեն հակառակ կարծիք ունեին, իրավացիորեն հարց էին տալիս. նույն դաշնակցականներն այդ դեպքում ինչո՞ւ, ո՞ր խղճմտանքով, ո՞ր արդարությամբ էին պարսավում, նախատում և շարունակում են նախատել Խորեն Աչրգյան և Մաղաքիա Օրմանյան պատրիարքներին, Սիմոն Մագսուտյաններին, որոնք նույնպես նույն նկատառումներով ոչ միայն հանդես չեն եկել սուլթան Աբդուլ Համիդի դեմ, այլև ստիպված նրան գովաբանել են, դիմել ամեն տեսակի չողոքորթությունների, համակերպվել նրա քմահաճ կամայականություններին՝ միայն թե հայերի կոտորածների առաջն առնեին: Եվ եթե զորեղին չդիմադրելը խոհեմության քաղաքականություն է, ապա ինչո՞ւ, հարց էր տալիս «Մշակը», Աչրգյանի, Օրմանյանի կողմից այդ խոհեմության քաղաքականության գործադրությունը օգտակար քաղաքականություն չի համարվում[2]: Թերթը չեչտում էր, որ Դաշնակցության քաղաքականությունը չբաժանող ուժերը, մանավանդ սահմանադրական ռամկավարները Թուրքիայում և հայ կադետական-մշակականները Կովկասում, գտնում են, որ ընդհակառակը, թուրքահայերը պետք է բուռն կերպով բողոքեն հայ ժողովրդի նկատմամբ ներկա թուրքական կառավարության գործած ամեն մի անիրավության, իրավունքների ամեն մի բռնաբարության դեմ[3]:

---

[1] ***«Մշակ»,*** *№ 250, 9 նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Նույն տեղում, № 88, 27 ապրիլի 1912 թ.:*

[3] *Նույն տեղում:*

Եթե Դաշնակցությունն արդեն չորս տարի է, ինչ լիովին հրաժարվել է Իթթիհադի հանցագործ վարչակարգի դեմ պայքար մղելուց, ապա հայի ինչի՞ն է պետք զենք ունենալը, կրկին զինվելը: Պատասխանը հստակ էր. հայը զենքի պետք ունի իր կյանքը, պատիվը, ինչքը, օջախը «աւազակ քիւրտի, արիւնարբու արաբի ու ֆելլահի, մոլեռանդ թուրք ոհմակի յարձակումներէն պաշտպանելու համար... Այս է օրուան ամենակարեւոր պահանջը»[1], արդեն ստիպված այսպես էր գրում հայկական ազգային հեղափոխական կուսակցություններից ամենանշանավորի տպագիր օրգանը: Կառավարությունն, անկասկած, ուզում է վերջ տալ ավազակախմբերի գոյությանը, գրում էին դաշնակցական մամուլի ուրիշ օրգաններ, բայց նրա ձեռքերը դեռ ամեն տեղ չեն հասնում, պաշտոնյաները տկար են և անհոգ, բանակը զբաղված է վերակառուցումներով: Օգտվելով սահմանադրական կառավարության զբաղվածությունից, քուրդը, ֆելլահը և մյուսները իրենց ցանկացած պահին հարձակվում են հայի վրա: Կառավարությունը որևէ մեղք չունի, որ չի կարողանում արգելք դնել այդ հարձակումների առջև, որովհետև նա զբաղված է ներքին ու արտաքին հսկայածավալ խնդիրների լուծմամբ: Այդ պատճառով, ասում էին դաշնակցական գործիչները, կառավարությանն օգնելու և ավազակախմբերի դեմ պայքարի նրա պարտականությունների մի մասն իրենց վրա վերցնելու համար հայերը պետք է զինվեն: «Հայը..., իբրեւ մարդ, պէտք է զէնք ունենայ վայրենութեանց դէմ ինքզինք պաշտպանելու համար: Եթէ չունենայ, ամօթ է: ... Այս տեսակ ինքնապաշտպանութիւն մը ոչ միայն հակառակութիւն չէ սահմանադրական կառավարութեան, այլ իրապէս օգնութիւն է անոր: Դաշնակցութիւնը, իբրեւ դաշնակից Օսմ[անեան] Քոմիթէին եւ բոլոր ազատական տարրերուն, գործելու է համոզելու թիւրք կառավարութիւնը քաջալերել ու զինել հայերը իրենք զիրենք պաշտպանելու համար»[2]:

Իրավացի էին սահմանադրական ռամկավարները, հնչակ-

---

[1] **«Ասպարէզ»,** № 156, 4 օգոստոսի 1911 թ.:

[2] Նույն տեղում:

յաններն ու Թուրքահայ հասարակության քաղաքական մյուս ուժերն ու հոսանքները, որոնք խստորեն քննադատում էին Դաշնակցության՝ Իթթիհադի բացահայտ հակահայկական քաղաքականության պաշտպանության հերթական պատճառաբանությունները, միաժամանակ կրկին ու կրկին մատնացույց էին անում Թուրքահայ ժողովրդի անելանելի կացության հիմնական մեղավորներին՝ Իթթիհադի կոմիտեին ու նրա կառավարությանը[1]:

Սահմանադրական ռամկավարները – որոնք իրենց կուսակցության ստեղծման օրերին մտածում էին, թե գործելու են միայն օսմանյան սահմանադրության շրջանակներում և աշխատելու են չսրել իրենց հարաբերությունները երիտթուրքական իշխանությունների հետ – արդեն վեց-յոթ ամիս անց համոզվել էին, որ Թուրքահայ ժողովուրդը պետք է պատրաստ լինի ամեն տեսակի նոր անակնկալների: Իսկ ահա՛ այժմ, 1911 թվականին, նրանք արդեն հանդես էին գալիս կրկին զինվելու կոչերով:

*Դերերը կարծես փոխվել էին և տարօրինակ վիճակ էր ստեղծվել. Հայ **հեղափոխական** դաշնակցությունը դարձել էր հակահեղափոխական, իսկ Սահմանադրական ռամկավար **հակահեղափոխական** կուսակցությունը՝ հեղափոխական...*

Ոչ միայն սահմանադրական ռամկավարները, այլև ժողովրդական ամենատարբեր խավերի հայերը երազում էին ինքնապաշտպանության համար ազգը զինված տեսնել: Դրանց թվում նույնիսկ կային հայորդիներ, որոնք զենքից ու հեղափոխությունից միշտ հեռու էին մնացել:

Բայց գործնականում հնարավոր չէր զինվել մի չարք պատճառներով. մուսուլմանները հայերին զենք չէին վաճառում, գաղտնի ուղիներով դրսից զենք ներմուծելը գրեթե անիրագործելի էր, ունևոր հայերը չէին համարձակվում այդ նպատակին միջոցներ տրամադրել և այլն: «Իշխանությունները,- գրում է պատմաբան Ստեփան Պողոսյանը,- Թուրք բնակչությանն ամեն

---

[1] Այդ մասին տե՛ս օրինակ՝ Վահան Մալեզյանի «Բառի հետ չի խաղանք» քննադատական հոդվածը Իզմիրի «Դաշինք» օրաթերթում (№ 263, 18 հունիսի (1 հուլիսի) 1910 թ.)՝ արտատպված Կահիրեի «Լրաբեր-Արև» թերթից:

կերպ հորդորում ու չահագրգռում էին զենք ձեռք բերել... Միանգամայն հակառակ պատկեր էր հայկական միջավայրում, նույնիսկ հարուստ հայերը զենքի վրա փող չէին ծախսում: Եթե մահմեդականը զինվում էր հայի վրա հարձակվելու համար, հայը «ինքնապաշտպանության էր պատրաստվում» առանց զենքի»[1]:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔ. ԱՐՇԱՐՈՒՆԻՆ՝ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱԹՈՌԻՆ

Թուրքահայոց կյանքի բարդ պայմաններում պատրիարքական աթոռը շարունակում էր թափուր մնալ, ինչն այլևս անհանդուրժելի էր, քանի որ ժողովրդին ուղղություն տվող հմուտ ձեռք չկար: Վերջապես, երկար ամիսներ հետո, Հայոց Ազգային ժողովը ձեռնարկեց նոր պատրիարքի ընտրությունը:

Բայց նախընտրական ժամանակաշրջանում ժողովի պատգամավորական հատվածները տևականորեն չէին կարողանում որոշ համաձայնության գալ թեկնածուների շուրջ:

Թուրքահայ եկեղեցականությունը բաղկացած էր երկու մասից՝ հին և նոր գործողներից: Առաջինների մեջ փոքր ի չատե նշանավոր, գործունյա, ազգային-եկեղեցական և հասարակական պաշտոնավարության բովից անցած դեմքեր էին՝ Վահրամ Մանկունի, Մաղաքիա Օրմանյան, Եղիշե Դուրյան, Հովհաննես Արշարունի, Ստեփանոս Հովակիմյան, Հովսեփ Սարաջյան, Հմայակ Դիմաքսյան և Գևորգ Երեցյան արքեպիսկոպոսները, իսկ նորերի թվում, որոնք մեծ մասամբ դուրս էին եկել Օրմանյանի և Դուրյանի ղեկավարած Արմաշի դպրեվանքից, աչքի էին ընկնում Բաբգեն Գյուլեսերյան, Թորգոմ Գուչակյան, Զավեն Տեր-Եղիայան և Սմբատ Սաաղեթյան եպիսկոպոսները, որոնք այդ ժամանակ առաջնորդական պաշտոններ էին վարում: Հների մեջ պատրիարքական պաշտոնի համար հարմարագույնը նկատվում

---

[1] ***Ստեփան Պողոսյան,*** *Հայոց ցեղասպանության պատմություն, հատ. II, Պատմագիտական ուսումնասիրություններ, էջ 168:*

էր միայն Արշարունին, բայց որովհետև նա սաստիկ հակադաշնակցական ուղղություն ուներ, հետևապես նրա նկատմամբ մեծ հակադրություն կար Ազգային Ժողովի դաշնակցական պատգամավորության կողմից[1]:

Վերջապես, երկար ձգձգումներից հետո, 1911 թ. նոյեմբերի 30-ին գումարվեց Հայոց ազգային պատգամավորական ժողովը: Երեք օր տևած ժողովի օրակարգի հիմնական հարցը Թուրքահայոց նոր պատրիարքի ընտրությունն էր:

Փակ, գաղտնի քվեարկության համար ժողովն առաջադրել էր երեք արքեպիսկոպոսների՝ Հովհաննես Արշարունու, Եղիշե Դուրյանի և Հովսեփ Սարաջյանի թեկնածությունները: Այդ թեկնածություններից հատկապես Արշարունու շուրջ բուռն վիճաբանություններ ծավալվեցին: Ժողովի դաշնակցական պատգամավորները վճռականապես հանդես եկան նրա թեկնածության դեմ: Սրբազանը Դաշնակցության երդվյալ հակառակորդ լինելով առաջիններից մեկն էր եղել, որ խստորեն ու հետևողականորեն, քննադատել էր 1907 թ. դեկտեմբերին Իթթիհադի հետ այդ կուսակցության կնքած «եղբայրական դաշինքը» և ընդհանրապես գտնում էր, որ դա չարունակում է կործանարար դեր կատարել Թուրքահայոց կյանքում:

Դաշնակցական պատգամավորներն իրենց ելույթներում շատ վտանգավոր էին համարում պատրիարքական աթոռը Արշարունուն հանձնելը: «Նա ջղային է և անզուսպ»,- ասում էին նրանք՝ անընդունելի համարելով սրբազանի չափից ավելի համարձակ պահվածքը իթթիհադական իշխանությունների նկատմամբ, հիշեցնում էին երիտթուրքերի հասցեին ուղղված նրա բազմաթիվ «անտեղի» ու «անզգույշ» քննադատությունները, սրբազանին հանդիմանում էին «դիվանագիտական հմտություններ չունենալու» համար:

Ելույթ ունեցողների մեծ մասը ջերմորեն պաշտպանում էր Արշարունու թեկնածությունը, բարձր գնահատում նրա մարդկային արժանիքները, հարուստ գիտելիքները, լեզուների քաջի-

---

[1] Տե՛ս **«Արօր»**, № 9, սեպտեմբեր, 1911:

մացությունը (գերազանց տիրապետում էր ֆրանսերենին ու գերմաներենին, հմուտ էր մանավանդ թուրքերենում), մարտնչող բնավորությունը, ազգայինն ու հասարակականը անձնականից միշտ վեր դասելը:

1911 թ. դեկտեմբերի 2-ի նիստում ժողովի 92 պատգամավորների քվեարկությամբ Արշարունին ստացավ 52, Դուրյանը՝ 36, Սարաջյանը՝ 1 քվե[1]:

Հովհաննես Արշարունու պատրիարք ընտրվելով վերջ գտավ Վահրամ արք. Մանկունու տեղապահությունը:

Հովհաննես արք. Արշարունին (աշխարհական անունը՝ Միհրան Մանուկյան) այդ ժամանակ 57 տարեկան էր, ճանաչված էր որպես մաքուր ու անշահասեր եկեղեցական: Նա Կ. Պոլսի Ղալաթիայի լիցեի շրջանավարտ էր, նախկինում եղել էր Բուրսայի թեմի առաջնորդ, հետո եղավ պատրիարքական տեղապահ՝ Դուրյան սրբազանի պատրիարք ընտրվելուց առաջ, միաժամանակ քարոզիչ էր Սկյուտարի Թաղի եկեղեցում[2]:

ԻԹԹԻԼԱՖԸ ԻԹԹԻՀԱԴԻ ԴԵՄ

Իտալա-թուրքական չարունակվող պատերազմում երիտթուրքերի կրած ռազմական անհաջողությունները վարպետորեն օգտագործեցին Իթթիհադի քաղաքական հակառակորդները:

Երիտթուրքական կուսակցության մեջ ամեն ինչ չէր, որ նրա ղեկավարների սրտովն էր: Կազմակերպության գործունեությունից դժգոհ կուսակցականների թիվն օրեցօր ստվարանում էր: Իթթիհադի ներսում ձևավորվեց երկու խմբավորում՝ աջ ու ձախ: Դժգոհության ալիքը վանեց և այնտեղից դուրս մղեց մեծ թվով համեմատաբար ողջամիտ բողոքավոր տարրերի:

Երիտթուրքերի կործանարար գործողությունները մտրա-

---

[1] Տե՛ս **«Արարատ»**, № 1, հունվար, 1912, էջ 22:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 24-26:

կող Իթթիհադի բալկանյան ձախ կոմիտեն, որ հիմնականում բաղկացած էր դժգոհ ու ընդդիմադիր տարրերից, հրատարակել էր մի կոչ, որում ասվում էր, թե «խոստացուած բարենորոգումները ոչ մի տեղ դեռ չեն իրագործուած եւ առհասարակ դրութիւնն ամենեւին չի լաւացել՝ համեմատած նախկին ռեժիմի հետ»: Երիտթուրքերի պարագլուխ Ահմեդ Ռիզան այդ կոչի դեմ հրատարակել էր պատասխան, որով ամեն բանում աշխատում էր մեղադրել Եվրոպային և Օսմանյան կայսրության ոչ թուրք ազգություններին: «Թուրքիան,- գրում էր նա,- բնակեցուած է ապերախտ եւ բթամիտ ազգերով. նրանք բռնակալութեան լծի տակ այնքան են աղտոտուել ու թմրել, որ երբ երեւաց իսկական ազատութիւնը, նրանք չկարողացան եւ խելք չունեցան ըմբռնել դրա արժէքը, չընտելացան դրան, չկարողացան յարմարուել սահմանադրական նոր եւ ամէնքի համար հաւասարութիւն բերած կարգերին»[1]:

Ապա Ահմեդ Ռիզան մեղադրում էր Եվրոպային և մանավանդ Անգլիային, որոնք «ոչ միայն չօգնեցին մեզ» բարենորոգումներ կատարելու Թուրքիայում, այլև միավորվելով՝ խափանեցին երիտթուրքերի բարենորոգումների ծրագիրը[2]:

Այսպիսով, փոխանակ իրենց թերությունների ու հանցանքները նկատելու, Թուրքիայի վարիչները մեղադրում էին իրենց երկրի ժողովուրդներին ու եվրոպական երկրներին: Դա էր հիմնական պատճառներից մեկը, որ Իթթիհադի շարքերում մշտական տենդ էր, գնալով մեծանում էր հատկապես կուսակցությունից հեռացող, մտավորականների թիվը: Իթթիհադի քաղաքականության քննադատությունը շարունակում էր նոր թափ առնել:

Կայսրության դրությունը վտանգավոր էին համարում բազմաթիվ թուրք նշանավոր գործիչներ: 1911 թ. վերջերին Կ. Պոլսի լրագրերը տպագրեցին նախկին մեծ վեզիր Քյամիլ փաշայի նույն թվականի աշնանը Եգիպտոսում տված մի զեկուցումը, որի շարադրանքը նա ուղարկել էր սուլթան Մեհմեդ V Ռեշադին: Փա-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 12, 20 հունվարի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

չան գրում էր, թե վտանգված է Օսմանյան պետության գոյությունը, որը գտնվում է բաժան-բաժան լինելու նախօրյակին: Կայսրության ներքին տագնապի գլխավոր պատճառը նախկին մեծ վեզիրը համարում էր երիտթուրքերի տիրապետությունը: Քանի դեռ այդ կուսակցությունն իր ձեռքում է պահում երկրի կառավարման մենաշնորհը, քանի նա դեռ չի նվիրվել խաղաղ, չինարար աշխատանքի, Թուրքիան տալու է բոլոր հարմար առիթներ, որպեսզի արտաքին քաղաքական աշխարհը փութացնի նրա վերջնական անկումն ու բաժանումը: Հայրենիքի փրկությունը Թուրք պետական գործիչը տեսնում էր քաղաքական ասպարեզից Իթթիհադի հեռանալու մեջ միայն[1]:

Կայսրության ճակատագրական գահավիժումն ու նրա հետզհետե անդամահատումը չարունակվում էին: Երեք տարի առաջ Բոսնիայի և Հերցեգովինայի միացումն Ավստրո-Հունգարիային՝ մի անխուսափելի փրկանք էր, որ Թուրքիան պիտի տար աբդուլհամիդյան վարչակարգից ազատված լինելու համար, գրում էր Ֆյամիլ փաշան: Բայց այսօր այլևս անկարելի է նույն կերպ բացատրել քաղաքական այն փոթորիկները, որոնք հավաքված են Թուրքիայի գլխին: Տրիպոլիսը ձեռքից գնացել է, Կրետեն սպասում է իր հերթին, Ալբանիան ժամանակավորապես լռած է, բայց ոչ հաղթված, Ռումելիան հեղափոխական եռանդուն գործունեության մեջ է, Եմենը փաստորեն արդեն հասել է իր ինքնավարությանը, և վաղը սուլթանը պիտի զրկվի նույնիսկ մարգարեի հաջորդի՝ խալիֆի տիտղոսից: Այդ բոլորի վրա ավելանում է մի նոր շարժում՝ քրդականը[2]:

Ֆյամիլ փաշայի զեկուցման շարադրանքի մեջ տեղ չէր գտել Հայաստանը, քանի որ նա հայկական շարժումը լիակատար ձախողված և այլևս անվտանգ էր համարում:

1911 թ. նոյեմբերի սկզբին ընդդիմադիր մի շարք կազմակերպություններ և խմբեր Կ. Պոլսում կազմեցին միասնական բլոկ՝ գնդապետ Սաղրկ բեյի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ: Սա զինվորական բարձրաստիճան պաշտոնյա էր եղել և

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 35, 19 փետրվարի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

հանդիսացել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության եռանդուն գործիչներից մեկը: Դուրս գալով այդ կուսակցության շարքերից և թողնելով զինվորական ծառայությունը՝ նա ամբողջովին նվիրվել էր Իթթիհադի դեմ պայքարին՝ հարվածելով գլխավորապես Սալոնիկի կենտրոնական կոմիտեին:

Բլոկի մեջ մտան «Ազատություն և համաձայնություն» («Հյուրրիեթ վե իթթիլաֆ» (որը ստեղծվել էր 1908 թ.), «Ազատականներ» («Ահրար» – 1909 թ.), «Ժողովրդական» («Ահրար ֆըրկասը» – 1910 թ.), «Օսմանյան ժողովրդական կուսակցություն» («Ֆրկա-ի իրադ» – 1908 թ.), «Չափավոր ազատականներ» («Մյուտեդիլ հյուրրիեթ պերվերան ֆըրկասը» – 1909 թ.), «Բարենորոգումների օսմանյան կուսակցություն» («Իսլահատ-ը էսասիե օսմանիե ֆըրկասը» – 1909 թ.) կուսակցությունները և ուրիշներ[1]:

Շատ չանցած, բլոկը վերափոխվեց կուսակցության՝ «Հյուրրիեթ վե իթթիլաֆ» (կամ ուղղակի «Իթթիլաֆ») անունով, որի ստեղծման մասին պաշտոնապես հայտարարվեց 1911 թ. նոյեմբերի 21-ին[2]:

Իր կազմության առաջին շաբաթն իսկ այդ կազմակերպությունն ընդգրկեց օսմանյան խորհրդարանի պատգամավորական ժողովի չափավոր ազատական և ժողովրդական կուսակցությունների խմբակցությունների ավելի քան 100 անդամի, իսկ շուրջ 40 պատգամավոր ևս մտադիր էր հետևել իր գործընկերներին:

Նորաստեղծ կուսակցությանը միացան ազգային փոքրամասնությունների նշանավոր ներկայացուցիչներից շատերը և առանձին քաղաքական կազմակերպություններ, այդ թվում՝ հնչակյան կուսակցությունը:

Հայ պատգամավորներից երկուսը նույնպես մտան Իթթիլաֆի մեջ: Նրանք էին Իթթիհադի անդամ բժիշկ Նազարեթ Տաղավարյանը (որը նորաստեղծ կուսակցության եռանդուն հիմ-

---

[1] Տե՛ս Г. З. Алиев., Турция в период правления младотурок (1908-1918 гг.), "Наука", Москва, 1972, с. 212.

[2] Տե՛ս նույն տեղում:

նաղիրներից մեկը եղավ) և Իթթիհադին սնուցող նշանավոր բարերարներից Ստեփան Սպարթալին, որը հուսախաբ հեռացավ երիտթուրքերից և Իթթիլաֆի կարևոր գործիչներից մեկը դարձավ: Նորակազմ կուսակցությանն անդամագրվեցին նաև խորհրդարանի հույն, բուլղար, արաբ և ալբանացի պատգամավորներ:

«Հյուրրիեթ վե իթթիլաֆի» ղեկավարության մեջ էին Դամադ Ֆերիդ փաշան, Իբրահիմ Հակկը փաշան, Նազարեթ Տաղավարյանը, նշանավոր արաբ գործիչ Աբդուլ Համիդ ալ-Զահրաուին, սենատոր, մարշալ Ֆուադ փաշան, հրապարակախոս Թահիր Խայրէդդին բեյը, Սաղրկ բեյը, փիլիսոփա Ռիզա Թևֆիքը, դոկտ. Ռիզա բեյը և ուրիշներ[1]:

Նոր կուսակցության երևան գալը Թուրքական իրականության մեջ մի անխուսափելի պահանջ էր, որի պատճառներից գլխավորը երկիրն օրենքներով կառավարելու Իթթիհադի դրսևորած անընդունակությունն էր:

«Հյուրրիեթ վե իթթիլաֆի» կազմը բաղկացած էր հեռատես Թուրքերից և կայսրության հպատակ ազգությունների ներկայացուցիչներից: Նրա ծրագիրն իր հիմնական գծերով հակառակ էր Իթթիհադի ծրագրին:

Իթթիլաֆականները խոստովանում էին, որ Օսմանյան կայսրությունն անհնար է կառավարել միայն Թուրք տարրի տիրապետությամբ: Նրանք ընդունում էին, որ երկրի զանազան բաղկացուցիչ ազգություններն ու տարրերը պետք է հավասարապես նկատվեն երկրի տերեր, և որ բոլորի գործակցությամբ միայն կարող է բարեկարգվել ընդհանուր հայրենիքը: Ելնելով այդ սկզբունքից՝ նրանք ճանաչում էին կայսրության բաղկացուցիչ ազգությունների իրավունքները: Ծրագրի 14-րդ հոդվածում նշված էր, որ առաջվա նման պետք է պահպանվեն ոչ-իսլամ ժողովուրդների հասարակական կյանքը, կրոնական ազատ պաշտամունքը, նրանց ունեցած առանձնաշնորհումները: 16-րդ

---

[1] ***Տե՛ս Томас Эдуард Лоуренс,*** *Восстание в пустине. Воспоминания об англо-арабских операциях против Турции (համառոտ թարգմանություն անգլերենից), Москва, 1929, с. 604.*

հոդվածն ազդարարում էր, որ պարտադիր է կայսրության բոլոր տարրերի միությունը, քանի որ բոլորի շահերը նույնն են: 17-րդ հոդվածի բովանդակությունը հետևյալն էր. Օսմանյան կայսրության զանազան բաղկացուցիչ տարրերին ու կրոններին պատկանող անհատներն ազատ են – միայն օսմանյան միությանը չվնասելու պայմանով – կրոնական, գրական, գիտական ու տնտեսական աշխատանքների ձեռնարկման մեջ՝ հավաքաբար կամ անհատաբար: Նաև այդ նպատակով կարող են հիմնել իրենց կրոնին ու ցեղին հատուկ գիտական ու տնտեսական ամեն տեսակ հաստատություններ: Ապա՝ Յուրաքանչյուր ցեղ անարգել կարող է ծառայել այն կրոնին, որին ինքը պատկանում է, պայմանով, սակայն, որ չվնասի մյուս ցեղերի և կրոնների հավասար իրավունքներին[1]:

Նորաստեղծ կուսակցության՝ ընդդիմադիր «Իկդամ» թերթում առաջին անգամ հրատարակված ծրագիրը 71 հոդված էր պարունակում: Այդ փաստաթղթով կուսակցությունն իր խնդիրն էր համարում պաշտպանել սահմանադրության տառն ու ոգին, երաշխավորում էր մամուլի և ժողովների ազատությունը, հանդես էր գալիս տնտեսության առավել ազատականացման պահանջով: Արտաքին քաղաքականության մեջ կուսակցությունը պետք է հետամուտ լիներ Անգլիայի հետ Թուրքիայի մերձեցմանը[2]:

Ծրագիրն ազդարարում էր, որ «կառավարությունը օրինական հնարավոր բոլոր օժանդակությունները պետք է ընձեռի կայսրության բոլոր ազգերին՝ առանց խտրականության» (17-րդ հոդված), քանի որ «Օսմանյան կայսրությունը զանազան տարրերի քաղաքական ճշմարիտ միություն է» (1-ին հոդված):

Հակառակ կրթության վերաբերյալ Իթթիհադի նեղհայաց սկզբունքին, Իթթիլաֆը ոչ միայն ճանաչում էր կայսրության այլազան էթնիկական խմբերի իրավասությունը ազգային ուսումնարաններ բացելու խնդրում, այլև գտնում էր, որ դրանք պետք է պետական ուսումնական հաստատություններին հա-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 84, 22 ապրիլի 1912 թ.:

[2] Տե՛ս **Г. З. Алиев,** Турция в период правления младотурок (1908-1918 гг.), с. 213.

մարժեք ճանաչվեն: Եթե երկրի բաղկացուցիչ ազգերից որևէ մեկի կրթական ծրագիրը համապատասխանում է պետական նույնաստիճան ուսումնարանների ծրագրին, այդ դեպքում ազգային ուսումնարանն ավարտող սանն իրավունք ունի առանց քննություն հանձնելու ընդունվել իր ավարտած կրթարանի ծրագրից մի աստիճան բարձր ծրագիր ունեցող պետական ուսումնարան (27-րդ հոդված):

Ելնելով այն բանից, որ սահմանադրական բոլոր երկրներում պետական պաշտոնյաները պարտավոր են հետևել օրվա կառավարության վարած քաղաքականությանը, Իթթիլաֆականները միաժամանակ գտնում էին, որ իշխող կուսակցությունն իրավունք չունի պահանջելու, որ նրանք հեռացվեն զբաղեցրած պաշտոնից՝ այլ կուսակցության պատկանելու համար: Նկատի առնելով այս հանգամանքը՝ Իթթիլաֆն իր ծրագրի 53-րդ հոդվածում ամրագրել էր. «Հայրենիքի շահը պահանջում է, որ բոլոր պաշտոնյաները գտնվեն գոյություն ունեցող քաղաքական հոսանքներից դուրս»:

Վերը նշված սկզբունքներն այնպիսիք էին, որոնք լիովին բավարար էին սիրաշահելու կայսրության բաղկացուցիչ բոլոր ցեղերին ու ազգություններին՝ առանց վնասելու թուրք տարրին:

Իր ստեղծման առաջին իսկ օրերից Իթթիլաֆն անզիջում կռվի ճակատ բացեց Իթթիհադի դեմ:

Առանձին տարբերություններով հանդերձ, նրանք երկուսը, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, նույն կտավի երկու երեսներն էին:

Ջուր էին հնչակյանները Իթթիլաֆի հետ մեծ հույսեր կապում և նրա համակիր զինակիցն էին Իթթիհադի դեմ մղվող պայքարում: Պատահել էր այնպես, որ Դաշնակցության համեմատ Հնչակը հարվածներ էր ստանում երկու ճակատից. նրա անդամները հետապնդվում էին և՛ հայ, և՛ որպես Իթթիհադին մրցակից Իթթիլաֆի դաշնակից լինելու համար: Հնչակը մոլորվել էր երկու սոճիների արանքում՝ այնպես էլ չըմբռնելով, որ երկու կուսակցություններն էլ հայ ժողովրդի թշնամիներն են՝ մեկը (Իթթիհադը)՝ ոխերիմ, մյուսը (Իթթիլաֆը)՝ առժամանակ թաքցնելով իր ժանիքները:

Հայկական քաղաքական կազմակերպությունների գործու-

նեությունը լավ ուսումնասիրած ամերիկահայ գործիչներից մեկը՝ Մանուկ Ճիզմեճյանը նկատում էր. «Իթթիհատը կամ Իթթիլաֆը գաղափարական կամ դասակարգային հակառակորդներ չէին, այլ՝ աթոռի ախոյեաններ: Երկուքի համար ալ «սրբազան» պարտականութիւն էր հայերու ի սպառ բնաջնջումը որեւէ միջոցով: Թրքական բոլոր կուսակցութիւնները, անգամ զառամեալ կրօնաաւատատիրականը, յարձակողական նացիոնալիզմով էին տոգորուած»[1]:

Այն ժամանակ, երբ երկրին ու պետությանը սպառնում էր արտաքին վտանգը, ներսում Թուրքական կուսակցությունները, միմյանց դեմ ծառացած, աշխատում էին իրար տապալել ու կործանել, իսկ ներքին նահանգներում ավազակախմբերն ու կեղեքիչները նախկինի պես ժողովրդին պահում էին ահ ու սարսափի մեջ:

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՅՐՈՒՄԸ

Երկրում Իթթիհադի ազդեցության ուժեղացմանը զուգընթաց՝ սրընթաց ընկել էր օսմանյան խորհրդարանի նշանակությունը, թեև այնտեղ վճռորոշ մեծամասնություն էին կազմում երիտթուրքերը[2]: Քանի որ սահմանադրությունն այլևս մի թղթի կտոր էր, բոլորովին ձևական էր դարձել նաև պառլամենտի նշանակությունը:

Մոտավորապես նույն վիճակում էր հայտնվել նաև կառավարությունը: Մեծ վեզիր Սաիդ փաշան խաղալիք էր Իթթիհադի և նրա ընդհանուր քարտուղար Հաջի Ադիլ բեյի ձեռքին: Սրանց*

---

[1] **Մանուկ Յ. Ճիզմէճեան,** *Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890–1925, էջ 143:*

[2] **Տե՛ս Л. Вакс,** *Очерки истории национально-буржуазных революций на Востоке, (1905-1914 гг.), Персия, Турция, Китай, с. 74.*

* **Սա ներքին գործերի նախարարի խորհրդականն էր 1909 թ. գարնանը և ամեն ջանք թափել էր Կիլիկիայի հայոց կոտորածների իսկական պատասխանատուներին պաշտպանելու և մեղքը հայոց վրա բեռցնելու համար, ինչի համար էլ պարգևատրվել էր՝ Իթթիհադի ընդհանուր քարտուղար ընտրվելով:**

որոշումներով կամ հրամաններով տեղի էին ունենում հակաօրինական գործողություններ Իթթիհադի հակառակորդների նկատմամբ: Երիտթուրքական կոմիտեն 1911 թ. դեկտեմբերին խորհրդարանի քննության էր ներկայացրել թափառաշրջիկների մասին օրենք, որը դեռ գործածության մեջ չդրած՝ Իթթիհադը դա գործածեց իր իմացած ձևով: Ամեն օր ձերբակալվում էին հարյուրավոր մարդիկ, այդ թվում բազմաթիվ հայեր, և թաղային կոմիսարների քմահաճույքով ենթարկվում քննության՝ ժողովրդին ահաբեկելու և սարսափի մեջ պահելու համար:

Թեև համապարփակ էր Իթթիհադի ազդեցությունը խորհրդարանի վրա, բայց վերջինս դեպքից դեպք փորձում էր ցույց տալ իր ատամները և որոշումներ էր ընդունում, որոնք երիտթուրքական կոմիտեի սրտովը չէին լինում: Այդպես եղավ 1911 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, երբ խորհրդարանը փորձեց փոքր-ինչ վերահսկողություն սահմանել բյուջեի վրա[1]:

Մոլեգնաբար իշխանությունը գրկած՝ Իթթիհադի կոմիտեն չէր կարող ներել նույնիսկ հլու-հնազանդ խորհրդարանի «հանդուգն արարքը», և նա սուլթանից կտրուկ պահանջեց ցրել պատգամավորական ժողովը:

1912 թ. հունվարի 5 (18)-ին սուլթան Մեհմեդ V Ռեշադի իրադեով խորհրդարանը ժամկետից վեց ամիս չուտ ցրվեց[2]:

Դա Իթթիհադի նոր հաղթանակն էր:

Երիտթուրքերի դաշնակից հայ պատգամավորներից ոչ ոք որևէ առարկություն չհայտնեց տեղի ունեցած կամայականության կապակցությամբ[3]:

Պառլամենտը լուծարվելուց հետո Իթթիհադական գործիչները բռնազբոսիկ փութկոտությամբ ձեռք առան լուծելու «Արևելյան Անադոլուի», այսինքն՝ Հայաստանին վերաբերող խնդիրները: Այդ նպատակով ստեղծվեց «բարեկարգիչ հանձնա-

---

[1] Տե՛ս Х. З. Габидуллин, Младотурецкая революция. Исторические очерки, с. 162.

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս «Հորիզոն», № 36, 21 փետրվարի 1912 թ.:

ժողով», նշանակվեցին նրա նախագահն ու անդամները, անգամ որոշվեց նրանց մեկնելու ժամկետը և քանիցս այդ մասին ծանուցվեց: Միաժամանակ Բարձր Դուռը երկար-բարակ ձևակերպումներով մշակեց բարենորոգումների անցկացման ծրագիր, ուր թղթի վրա գրված էր, թե արևելյան նահանգներում ինչպես են վերակազմվելու դատական ու վարչական մարմինները, ինչպես է հաստատվելու «կատարյալ արդարություն», ինչ ձեռնարկներ պիտի արվեն երաշխավորելու համար մարդկանց ապահովությունը, ինչպես է լուծվելու հողային հարցը գրկյալ կողմի համար նպաստավոր կերպով և այլն: Նույնիսկ ասում էին, որ այդ ամենը հաջողությամբ իրագործելու համար բավական պատկառելի գումար է դրվել հանձնաժողովի տրամադրության տակ[1]:

Պետական և ազգային շրջանակները և մամուլն ամիսներով զբաղվեցին Սաիդ փաշայի դահլիճի այդ ձեռնարկով, անթիվանհամար թղթեր մրոտեցին, իսկ այնտեղ՝ գավառում, ժողովուրդն սպասում էր՝ աչքերը հառած Կ. Պոլսից եկող հրաշագործ հանձնաժողովի ճամփին: Բայց ավա՜ղ:

Հանձնաժողովի անդամներն իրար հետևից հրաժարվեցին մեկնել, իսկ «Արևելյան Անադոլուի» բարեփոխումների «պատրաստված» ծրագիրը, Բարձր Դռան աշխատակազմերում երկար ճամփորդություն կատարելուց հետո, գնաց հանգչելու փոշոտ թղթերի դեզերի տակ:

Քանի որ գումարվելու էր նոր խորհրդարան, ուստի կառավարությունը, «խղճահար ու խոնարհ հարգանքով» դեպի սահմանադրության տառն ու ոգին, իբր արդեն իր լիազորություններից վեր խնդիր, «Արևելյան Անադոլուի» կացության քննություն կատարելը և համապատասխան որոշում ընդունելը հանձնեց գալիք խորհրդարանի իրավասության:

Բնականաբար, ո՛չ հանձնաժողով մնաց մեջտեղում, ո՛չ ծրագիր, ո՛չ էլ «Արևելյան Անադոլուի» (Հայաստանի) համար «հատուկ բարենորոգումների» մասին խոսք ու խնդիր: Այժմ,

---

[1] Տե՛ս **«Ազգ»** (Պոսթոն), № 33, 29 հունվարի 1913 թ.:

երբ հայերը կառավարությանը հիշեցնում էին բարենորոգումների մասին, լսում էին նույն պատասխանը՝ բարենորոգության պիտի ենթարկվեն ոչ միայն հայաբնակ նահանգները, այլև իսլամ բնակչություն ունեցող բոլոր նահանգները՝ միաժամանակ և հավասարապես[1]*:*

ՏՆԱՎԵՐ ԱՆՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Թուրքահայ հասարակության այլազան քաղաքական ձրգտումներ ունեցող ուժերը, բնականաբար, չէին կարող համաձայնության գալ և նախընտրական միասնական ծրագիր ընդունել: Եվ որպես դրա հետևանք՝ պայքար, կռիվ սկսվեց ամեն տեղ՝ մամուլում, պատրիարքարանում, Ազգային ժողովում: Իրարանցում էր ամենուր: Թանաքի գետեր և խոսքի հեղեղներ էին թափվում ընտրողներ որսալու համար: Հայոց համար, բացի խորհրդարանական ընտրություններից, կարծես այլ հարց գոյություն չուներ[2]*:*

1905–1907 թթ. Կովկասում տեղի ունեցած թուրք-հայկական ընդհարումների ժամանակ ընդհանուր վտանգի դեմ միավորվել էին կովկասահայ հասարակության համարյա բոլոր խավերը, բացի սոցիալ-դեմոկրատիայի գաղափարական ազդեցության տակ գտնվող շերտերից: Այդ կռիվներում հայերի տարած տպավորիչ հաղթանակը Դաշնակցության փառքի պսակն էր: Նա էր թե՛ ինքնապաշտպանական և թե՛ հարձակողական մարտերի կազմակերպիչն ու գլխավորողը:

Կովկասահայության հակառակ՝ թուրքահայությունն իր պատմության ամենաճակատագրական պահերին անգամ չկարողացավ գոնե մի կարճ ժամանակով ազգովին միավորվել: Նրա ներսում երբեք մի պահ անգամ դադար չառան ներքին երկպառակությունն ու հակառակությունները: Այդ ծանրագույն պահին հայկական իրականությունը ամբողջության մեջ քաո-

---

[1] *Տե՛ս* ***«Ազգ»****, № 33, 29 հունվարի 1913 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Հորիզոն»****, № 99, 12 մայիսի 1912 թ.:*

սային պատկեր էր ներկայացնում: Ազգային կյանքն ընթանում էր ջղաձգային ցնցումներով: Ներքին երկպառակություններն ու գժտությունները խորապես հուզում, ալեկոծում էին մտքերը: Նորից գլուխ էին բարձրացնում միջկուսակցական անսկզբունք պայքարն ու անվերջ փոխադարձ ամբաստանությունները: «Արօրը» սրտի դառնությամբ արձանագրում էր, թե Հայաստանում մշակութային կյանք ստեղծելու, ժողովրդի տնտեսական ու մտավոր զարգացմանը նպաստելու, տգիտությունն ու խավարը հալածելու կոչված ուժերը, ընդհակառակը, իրար դեմ կանգնած, նախանձ, ատելություն ու հեռ են սերմանում[1]: Կուսակցությունները, ինչպես և անհատ գործիչները հալածում, անվանարկում էին միմյանց, կայսրության մյուս ազգերին ու Եվրոպային ներկայանում իրար հակասող, իրար այպանող ու չեզոքացնող արարքներով:

Միջկուսակցական անսկզբունք պայքարն ու փոխադարձ ամբաստանություններն առաջվա պես հաճախ էին հասցնում հայկական հասարակության ամենաեղկելի երևույթին՝ ծեծ ու ջարդի, նույնիսկ ազգային խայտառակություն հանդիսացող եղբայրասպանությունների՝ ժողովրդի ուշադրությունը չեղելով ազգի կենսական, բախտորոշ խնդիրներից: Այդ տեսակետից առաջնության «դափնին» նախկինի պես Դաշնակցությանն էր պատկանում:

Բայց Դաշնակցությունը նույնպես անդառնալի կորուստներ էր ունենում:

Նյու Յորքում հրատարակվող «Արագած» շաբաթաթերթը ցավով նշում էր, որ հայկական մթնոլորտում ոչ մի կերպ չեն դադարում ներքին կռվազանության ու ատելության ժխորները, կուսակցական անձուկ և քինախնդիր հակընդդիմությունները: Ինչո՞ւ նույն նպատակին կոչված, նույն նպատակը դավանել հավակնող անհատներն ու խմբերը չպիտի կարողանան ազգային հավաքականությանը սպառնացող վտանգների դեմ միաձույլ կամք դրսևորել: Ինչո՞ւ, վերջապես, հայերը չեն կարողա-

---

[1] ***«Արօր»****, № 5, մայիս, 1910, էջ 134:*

նում դուրս գալ անդադար վեճերի այն ջրապտույտից, որն անտանելի է դարձնում հանրային կացությունը, ջլատում ընդհանուր թշնամու դեմ իրենց պայքարի կամքը, պատվար է կանգնեցնում ազգային հնարավոր վերածննդի հոսանքի դեմ[1]:

Հենց այդ հանգամանքը հաշվի առնելով, սահմանադրական ռամկավար ուսանողական միության օրգան «Վերածնունդ» պարբերաթերթը (Կ. Պոլիս) հաստատում էր. «Տաքարիւն ենք, ինքնահաւան ենք եւ օտարամոլ: Ահա այս է պատճառը այն երեւոյթին. որով բոլոր դասական պատմագիրները մեզի որակած են իբրեւ անմիաբան: Միայն մենք չենք սակայն անմիաբան. ոչ միայն անմիաբան այլ նաեւ մեր նախահայրերուն պէս ու աշիրէթական կեանքով ապրող ազգեր շատ կան՝ ինչպէս օրինակ արաբները: Ճիշդ մեզի պէս տաքարիւն, թայֆայամոլ, ինքնահաւան եւ անկախ աշիրէթներու բաժնուած են անոնք ալ ներկայիս մէջ թէ անցեալին՝ խնդիր չէ՝ բայց մարդիկը գէթ **օտարամոլ** չեղան մեզի պէս»[2]:

Պարբերականը շարունակում էր. «Ո՞վ ենք արդարեւ, մէկ-երկու միլիոն ժողովուրդ ասդին անդին ցրուած, երեք-չորս դաւանանքի բաժնուած. չորս կուսակցութիւն եւ քանի մը տասնեակ ազգային այլեւայլ խմբակցութիւն ունեցող ժողովուրդ մը»[3]: Այս պայմաններում հայերին թույլատրելի՞ է այդքան անմիաբան, միմյանց նկատմամբ այդքան անհաշտ լինել, երբ նրանց առջև կանգնած է արյունարբու Իթթիհադը, իր թուրք ու քուրդ տարրերից կազմված սպառազեն գնդերով:

Իսկ Բոստոնի «Ազգ» շաբաթաթերթը գրում էր. «Մեր վերջին քառորդ դարու պատմութիւնը եթէ աչքի առջեւ բերենք, պիտի տեսնենք, որ մեր ձախողութիւններուն, մեր աղէտներուն պատճառը շատ անգամ մենք իսկ եղած ենք մեր ուռուցիկ եւ անտեղի խօսքերով: Խօսք՝ ու առանց գործի միայն խօսք, այս եղած է գրեթէ մեր ամբողջ գործունէութիւնը»[4]:

---

[1] **«Արազած»**, № 13, 17 օգոստոսի 1911 թ.:

[2] **«Վերածնունդ»**, № 2, հունիս, 1912, էջ 9:

[3] Նույն տեղում, № 6, հոկտեմբեր, 1912, էջ 13:

[4] **«Ազգ»**, № 17, 9 հոկտեմբերի 1912 թ.:

Իսկ ինչու հայ մարդու մոտ «խոսքն առանց գործի» է: Այս հարցն է, որ կարոտ էր խոր հետազոտման: Հիրավի, լոկ աշխարհագրական և պատմական պատճառների քննությունը շատ հեռուներ կտաներ: Հայաստան երկրի դիրքն ու բնական կազմությունը հայ մարդու մեջ այլազան ժողովուրդների արյան և նրանց հոռի բարքերի ներկայությունը քիչ բաժին չունեին հայոց տխուր փոխհարաբերություններում: Բայց հայ ժողովրդի նկարագրում այդ բացասական ազդակների ներգործությունն ու թողած ազդեցությունը բոլորովին ջնջված կամ գոնե զգալիորեն նվազած պիտի լինեին, եթե դրանք շարունակ չչեչտվեին ու չմշտնջենավորվեին ուրիշ կարգի շարժառիթներով: Ճշմարիտ է, որ բնական և պատմական պատճառները գործում են մարդկանց կամքից անկախ և վերջին հաշվով անդարմանելի են, բայց չէ՞ որ ազգային բարոյական ազգային բարոյական ազդակներն ի վիճակի են դրանք գոնե սրբագրելու ու բարեփոխելու: Նշված երևույթի ուսումնասիրումն ու ճանաչումը կարող էր պարզել, թե որտեղից և ինչ տարրերից է սնուդ քաղում հայկական հոչակավոր անմիաբանությունը՝ համառորեն շարունակելով իր գոյությունը:

Խորունկ ու յաւակնոտ ***տգիտութիւն****, սանձարձակ ու կամապաշտ* ***անկարգապահութիւն****, տարրական բարեկրթութեան եւ իրարու հանդէպ* ***յարգանքի բացարձակ պակաս*** *– ահա՛ անմիութիւն ըսուած քառասուն գլուխով հրէշին երեք ամէնէն աչքառու գլուխները*[*]*, զորս եթէ փչրել ու ջախջախել կարելի ըլլար, անիկա այլեւս չպիտի կրնար շնչել ու ապրիլ մեր մէջ»*[1]*,– գրում էր «Ազգն» իր խմբագրականներից մեկում:*

Արդուլհամիդյան ռեժիմի օրոք, երբ գավառում ժամանակը հոսում էր ծուլորեն և հայ գյուղացու նահապետական կյանքը դեռ լիովին խաթարված չէր, գավառահայությունը Կ. Պոլիսը նկատում էր իրենից խորթացած մի հատված, որը որևէ առնչություն չուներ հայկական տանջանքների հետ: Բայց հիմա, Օսմանյան հեղափոխությունից հետո, վիճակն արմատապես փոխ-

---

[1] ***«Ազգ»****, № 22, 13 նոյեմբերի 1912 թ.:*

վել էր: Երկրում արագ զարգացող իրադարձությունների կենտրոնը Պոլիսն էր, ուր տեղի ունեցող փոփոխությունները, առճակատումները, պայքարն անմիջապես ազդում էին Թուրքահայաստանի ազգային կյանքի վրա:

Այժմ Պոլիսը, իրբև կենտրոն, իր ձեռքն էր առել ազգին հուզող բոլոր խնդիրները, հետևաբար Պոլսի նկատմամբ գավառների հայության անտարբերությունը համարյա վերջ էր գտել: Զէ՞ որ այնտեղ էին որոշվում իր գոյության և իրավունքի հետ առնչվող բախտորոշ բազմաբնույթ հարցերը:

Իսկ պոլսահայ կյանքը հիմա ամբողջովին ընկղմված էր ներազգային ճգնաժամային պայքարի մեջ: Աբդուլհամիդյան վարչակարգի ժամանակ այդպիսի անսանձ պայքար չէր կարող լինել, որովհետև կար միայն մեկ հասարակաց թշնամի՝ աբդուլհամիդականությունը, որի մահաբեր թաթի տակ չկար հայ հասարակական և ազգային կյանք՝ բառիս իսկական իմաստով:

Սահմանադրության հռչակումից հետո հեղափոխական հոսանքն իր մեջ էր առել նաև գավառահայությանը: Նրա քաղաքական աշխուժացումը հիմա ներազգային կյանքում բազմաթիվ բացասական դրսևորումներ էր ունենում: Կ. Պոլսի լավն ու վատը արագորեն թափանցում էին գավառ և այստեղ նույնպես պատճառ դառնում անտեղի պայքարների:

Ցավով արձանագրելով, որ անհամերաշխության որոմը տարածվել է ողջ Թուրքահայաստանում, Հայոց ձորից Վանի «Աշխատանք» թերթին ուղարկած թղթակցության հեղինակը վկայում էր.

«Մեր դրութիւնը, մեր գիւղական ներքին կեանքը՝ սահմանադրութենէն առաջ կարծես աւելի անդորը, աւելի խաղաղ էր քան այժմ. արտաքին թշնամիները որքան ուժեղ կ'երեւէին եւ միշտ սպառնալից, սակայն դարձեալ չէին կարող պատճառել մեզ այն սարսափելի վնասներն առաջ ինչ որ կը բերէ (կը բերեն) այժմ մեր գաւառացիներու ներկայ անմիաբանութիւնը եւ գիւղական ներքին վէճերը, որոնց չնորհիւ այսօր կարգ մը գիւղերու մէջ ո՛չ կը համաձայնին ոչխարարած վարձել, ո՛չ նախրորդ, ո՛չ ոէս, ո՛չ գզիր, ո՛չ ջրբաշ եւ ո՛չ էլ քանդուած ջրի առուներ կամ ճանապարհներ չինել. գիւղական բոլոր գործերը մնացեր են

երեսի վրայ, ինչ որ պատճառ պիտի լինի անոր տնտեսութեան քայքայման»[1]:

Կարծես «Աշխատանքի» այդ հոդվածի արձագանքն էր Ամասիա քաղաքում հրատարակվող հնչակյան «Ամասիա» թերթի հրապարակումը, ուր կան այսպիսի տողեր.

«Գաւառներու մէջ դասակարգային կռիւը կը մղուի եւ աւելի կը զօրանայ հարուստի եւ աղքատի, կեղեքողի եւ կեղեքուողի, հարստահարողի եւ հարստահարուողի խտրական ոգին»[2]:

Հայ գյուղացու խորտակյալ վիճակը չտկելու բոլոր ջանքերը զուր էին անցնում:

Գնալով ուժեղանում էին հակասությունները Կ. Պոլսի և գավառի հայության միջև: Պոլսի հայոց իշխանությունները օրեցօր հեռանում էին գավառահայությունից: Պոլսահայերը նախկինում էլ արհամարհանք էին տածում գավառահության հանդեպ, բայց այժմ դա ընդհանրական էր դարձել: Երբ խոսք էր լինում գավառի հայերի տառապանքների մասին, քաղքենի պոլսահայը «Գաւառացիներ են, ճանը՛մ...» ասելով անցնում էր իր գործին: «Գաւառացի» բառը դառնում էր մի տեսակ նախատական ածական՝ նետված գյուղացի ազգակցի երեսին:

«Պոլիսը և «գավառները»» վերնագրի տակ «Դրօշակը» գրում էր. «Թիւրքահայ ժողովրդի ամբողջութեան, գաւառական վաստակաւոր ու տառապող հայութեան անունից ճամարտակող Պոլսի ազգայինները յաճախ երևան են բերել ապշեցուցիչ կուրութիւն և քար անտարբերութիւն դէպի գաւառը»[3]: Նրանք անկարող են եղել լսելու Թուրքահայության, հատկապես հայկական նահագների հայերի չդադարող բողոքները, տեսնելու նրանց անտանելի վիճակը և փորձելու ինչ-որ չափով օգնելու ազգակիցներին: Հալածվող ու հարստահարվող հայ գյուղացիների աղաղակը, որ Հայաստանից հասնում էր Բոսֆորի ափերը, որևէ չոչափելի ազդեցություն չէր թողնում պոլսահայության

---

[1] **«Աշխատանք»**,, № 16, 15 մայիսի 1911 թ.:

[2] **«Ամասիա»** (Ամասիա), № 3, 15 նոյեմբերի 1911 թ.:

[3] **«Դրօշակ»**, № 2-3, փետրվար-մարտ, 1914, էջ 3:

վերին խավերի վրա: Այդ ամենից ելնելով, «Դրօշակը» ցավով եզրահանգում էր. «Միամտութիւն է գաւառի վերածնութիւնը, նրա իրաւունքների յարգանքը, նրա անմիջական կարիքների ու ցաւերի դարմանը Պոլսից ակնկալել...»[1]:

Ընդհանուր կարծիքն այն էր, որ Պոլիս-Գավառ հակասութիւնների խորացման պատճառներից մեկն այն է, որ գավառահայութիւնը պատշաճ կերպով չի ներկայացված ազգային իշխանութիւններում, ամենից առաջ՝ Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովում:

Ինչպես իր տեղում (աշխատության III գրքում) նշել ենք, Հայոց Ազգային սահմանադրությունը Ազգային ժողովում անբավարար թվով ձայներ էր նախատեսել գավառահայության համար: Եթե միայն պոլսահայությունն այնտեղ ուներ 80 պատգամավորական տեղ, բացի այդ՝ Պոլսի կղերը ժողովում ներկայացված էր 20 պատգամավորով, բովանդակ գավառը Ժողովում հազիվ 40 ներկայացուցիչ ուներ: Ընդ որում՝ գավառներից ընտրվածների զգալի մասը ոչ թե տեղերից էր, այլ՝ Պոլսից: Այս բոլորին ավելանում էր գավառներում ընտրված պատգամավորների անպատասխանատվությունն իրենց ընտրողների հանդեպ:

«Բութանիա» թերթը չեշտում էր, որ գավառն այլևս չի կարող անտարբեր ու լուռ հանդիսատես լինել այն երևույթի նկատմամբ, որը չարունակում է հայությանը պարզել Պոլսի Ազգային ժողովը, մի «օրենսդիր» մարմին, որը բացարձակապես ոչ մի չինարար աշխատանք չի կատարել անցած երեք տարիներին: «Գավառը ատելութեամբ, խառն զայրոյթով է որ կը կարդայ ատենագրութիւնները Ազգ. Ժողովին, ուրկէ ո՛չ մէկ ձայն կը բարձրանայ յանուն իր բազմապիսի պէտքերուն, որուն ամպիոնին վրայ միմիայն իր անունը կը շահագործուի այն մեծամասնութեան կողմէ՝ որ փոքրամասնութեան մը ներկայացուցիչն է միայն եւ ո՛չ թէ իր, հարազատ ժողովուրդինը:

---

[1] ***«Դրօշակ»**, № 2-3, փետրվար-մարտ, 1914, էջ 3:*

Ալ բա՛ւ է սակայն: Գաւառը տէրը կը կանգնի այսուհետեւ իր իրաւունքին...

... Հարկ է ուրեմն վերջ տալ այդ անարդարութեան, հարկ է կտրել ու մաքրել բուն վէրքը...

*– **Դէպի Գաւառ,** այս է պահանջող ձայնը: Եւ մենք իբրեւ գաւառական մամուլ, իբրեւ Գաւառի ձայնը, կը կրկնենք զայն ու պիտի կրկնենք միշտ: Ամէնէն առաջ եւ ամէնէն աւելի կը պահանջենք երկու բան. **հաւասար ներկայացուցչութիւն եւ երեսփոխանական պատասխանատուութիւն»*[1] *(ընդգծումը թերթինն է:– Հ. Ս.):*

Չնայած մեծապես ախտահարված էր գավառի բարոյականությունը, թուլացած էին նրա՝ ազգովին ապրելու կովանները, բայց էլի, այնուամենայնիվ, նա էր շարունակում մնալ հայ ցեղային ոգու գլխավոր պահապանը: Ուստի պատահական չէ, որ հաճախակի էր լսվում Թուրքահայաստանից եկող բողոքի ձայնը՝ «Մի՛ արհամարհէք Գաւառը»:

Ամասիացիների խոհերն արտահայտող «Ամասիա» պարբերականը Կ. Պոլսի հայոց իշխանություններին կոչ էր անում հաշվի առնել Գավառի գնալով մեծացող հոգսերը, որովհետև «գաւառցիներն են ազգի սիւնը»[2]*:*

«Գաւառի դերը ազգ[ային] վերածնութեան գործին մէջ» վերնագրով հոդվածում, որի հեղինակը ազգային հերոս Անդրանիկի հարազատներից գրականագետ Գագիկ Օզանյանն էր, ասված էր, որ չնայած գավառահայության կյանքի անտանելի պայմաններին, բայց հենց գավառում է, որ պահվում-պահպանվում է հայության ազգային ոգին: «Ես հայ քրիստոնյա եմ» գավառցու այս խոսքերում չրջանակվում էր ամեն բան՝ պարտականության գաղափար, ազգային ոգի, բարեգործության ըմբռնում և այլն: Հայկական սովորություններն, ընտանեկան կյանքը, հասարակական գործունեությունը գավառում ունեին իրենց որոշակի աչքառու հայկական դրոշմը: «Մեկ խոսքով,-

---

[1] ***«Բութանիա»**, № 2, 10 հունիսի 1911 թ.:*

[2] ***«Ամասիա»**, № 2, 30 հոկտեմբերի 1911 թ.:*

նշում էր Գ. Օղանյանը,- հայ կեանքը խտացած է գաւառներու մէջ, ուր կարծես տակաւին այլասերումը աղաղակող համեմատութիւն մը չէ ստացած»[1]:

Նույն միտքը արտահայտված է «Ամասիայի» հաջորդ համարում. ազգի վերանորոգումը պիտի գա Գավառից, այլ ոչ թե մայրաքաղաքից, ուստի «Գաւառը պէտք է իր պատմական նշանակելի տեղն ունենայ համահայկական կեանքին մէջ եւ ունենայ հասարակական չինիչ գործունէութիւն մը, որ գաւառական միջնավայրէն դուրս ելնելով տարածուէր բովանդակ հայկական վերածնութեան սահմաններուն մէջ ալ»[2]:

Շատերն էին համոզված, որ բոլոր ներազգային բացասական երևույթների աղբյուրն ի վերջո Պոլիսն է, որը փաստորեն չուներ լիարյուն հայկական կյանք, իսկ ծանոթ դեմքերը, քիչ բացառությամբ, հեռու էին ժողովրդի հոգսերից, համախմբող դեր չէին կատարում նրա ալեկոծ ու տարուբերվող կյանքում: Այլևս չկար նախորդ շրջանի գրական անզուգական երգիծանքը, որն իր հարազատ ժողովրդին էր թողել մեծն Պարոնյանը, իսկ ազնիվ գրականություն երկնողներին կարելի էր հաշվել մատների վրա: Որքա՜ն հիմա քիչ են անկեղծ ու ճշմարիտ գործիչները օսմանյան մայրաքաղաքում, որքա՜ն դատարկ ու սին են պոլսահայ թերթերը[3],- գրում էր «Հորիզոնը»:

Մոտավորապես նույն տեսակետն էր արտահայտում Վանի «Աշխատանքը», որը ցավով նշում էր, թե գաղափարի ու գրականության աստվածը կարծես վաղուց մեռել է Բոսֆորի ափերի հայ իրականության մեջ, այն գրականության, որը դյուցազներգում էր հայկական ըմբոստության ու տառապանքի հերոսներին, որոնք իրենց զոհաբերում էին հայրենիքի գաղափարին, գրականություն, որը հրաշակերտեց այնպիսի գլուխգործեցներ, որոնց նմանը դժվար կարելի է գտնել հայոց հազարամյակների պատմության մեջ[4]:

---

[1] ***«Ամասիա»**, № 2, 30 հոկտեմբերի 1911 թ.:*

[2] *Նույն տեղում, № 3, 15 նոյեմբերի 1911 թ.:*

[3] *Տե՛ս **«Հորիզոն»**, № 2, 16 հունվարի 1911 թ.:*

«Գծուծ չահերու, անձնական խծբծանքներու, եսամոլական ձգտումներու տիրապետութեան շրջան մըն է», մի այլ առիթով գրում էր «Հորիզոնը»[1]:

Ավետիք Իսահակյանը Փարիզում գտնվող Ավետիս Ահարոնյանին Կ. Պոլսից գրում էր 1912 թ. ապրիլին.

«Ամենից առաջ Պոլիսն ինձ զզուեցրեց. գարշելի միջավայր է: Եթէ մարդ այստեղ մի երկու տարի ապրի, բոլորովին կը ցամաքի, կը սնանկանայ: Ատելի երկիր է, նմանը չկայ: Հոգեպէս համարեա միայնակ եմ ապրում: Ընկերները զբաղուած են ընտրական գործերով եւ կարծես թէ ընկերներ էլ չկան... Դեռ ոչ մի պոլսահայի հետ չմտերմացայ: Եւ այդ չնչինները կարիք էլ չունեն մարդու մօտենալու: Համիդը ոչ թէ դրանց մորթել է ֆիզիկապէս, այլ հոգիներն էլ է քամել ու տրորել աղբակոյտերի մէջ... Եւ այսպիսով ո՞ւր պիտի գնայ մեր վերջը. ի՞նչ պիտի անենք... Ես իսկապէս մոլորուել եմ, չգիտեմ անելիքս...»[2]:

Պոլսահայ մտավորականությունն ի վիճակի չէր իր հետևից տանելու հասարակական լայն խավերին, որովհետև կուռ կազմվածք ու կազմակերպվածություն չուներ:

Իրավ է, որ օսմանյան մայրաքաղաքում կային մեծ թվով հայ փաստաբաններ, բժիշկներ, գրագետներ, ուսուցիչներ, այսինքն՝ ամեն կարգի զարգացած մարդկանց մի բազմություն, բայց նրանք համախումբ չէին, չկային նրանց շաղկապող և դեպի հասարակական կյանք մղող զորավոր կապեր: Կ. Պոլսի և նրա արվարձանների մեծ ընդարձակության վրա ցիր ու ցան, անջատ և իրարից անտեղյակ, անհատական անձուկ շրջանակով զոհացող այդ անհատները չէին կարող մտավորականության կազմակերպված ընդհանրություն կազմել:

Հայերի անհաշտությունն իր ամենօրյա հաստատումն էր գտնում հայկական մամուլի էջերում թե՛ Թուրքիայում և թե՛ արտասահմանում: Այդ մամուլն իր որակով առաջվա պես զգալիորեն զիջում էր կովկասահայ մամուլին, բայց շատ ավելի աղմ-

---

[1] **«Հորիզոն»**, № 3, 23 հունվարի 1911 թ.:

[2] Տե՛ս **«Հայրենիք»**, № 4 (279), ապրիլ, 1949, էջ 43:

կալից էր ու անհանդուրժող: Թերթերի ու հանդեսների էջերը կրքոտ բանակռվի ասպարեզ էին, ուր խաչվում էին բազում գրչասրեր[1]:

«Հորիզոնը» մորմոք էր հայտնում. «Կա՞յ Թրքահայ լրագրութիւն – չատ քիչ բացառութեամբ – հայհոյանքներու եւ անիմանալի լրբութիւններու հեղեղին մէջ: ... Ունեցանք չատ թւով օրաթերթեր, պստիկ ու մեծ ծաւալով, ունեցանք երկնցած մազերով, սրածայր մօրուքով խմբագիրներ, ունեցանք այս բոլորը մենք, բայց ոչ մէկ լուրջ գրական հանդէս, որ ցոլացնէր Թուրքահայ միտքը. Գաւառը խորունկ պժգանքով կը նայի հիմակ Պոլիսի դէմ, այնքան չատ տեսաւ հոն սուտի, հայհոյանքի եւ մատնութեան խնկարկուները: Լրագիրները հազիւ թէ կը կարդացուին, եւ չատ անգամ ամենակարեւոր լուրի մ'իսկ չուզուիր հաւատ ընծայել, որովհետեւ այնքան չատ անգամներ հերքումներ հրատարակուած են իրարու դէմ եւ այնքան չատ անգամ չէզոքացուած»[2]:

Թուրքահայ մամուլը հրապարակ բերողների գնահատականն այսպես է ձեւակերպել Կ. Պոլսի հայոց պատրիարք Արշարունի սրբազանը Ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ Ե Սուրենյանցին գրած նամակներից մեկում. «Շահամոլ և ազգադաւ լրագրապետեր ու խմբագիրներ, որոնց նիստուկացը, մտայնությունը չարութեամբ լի է, անուանարկիչ հրատարակութիւններով կը վարկաբեկեն մարդկանց»[3]:

Ինչ խոսք, սովորական պայմաններում քննադատությունը օգտակար և անհրաժեշտ է ազգի մշտական վերանորոգման ու առաջադիմության համար, բայց հայկական մամուլի էջերում տեղի ունեցող անընդհատ ու մոլեգին ինքնաաճաղկումը ջլատում էր ժողովրդի ոգին: Թերթերն ու հանդեսները լիարժեք չէին կա-

---

[1] Թուրքահայ մամուլի անպարկեշտ պահվածքի մասին տե՛ս **«Դաշինք»**, № 250, 3 (16) հունիսի 1910 թ.:

[2] **«Հորիզոն»**, № 43, 24 փետրվարի 1910 թ.:

[3] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 109, թ. 4:

տարում իրենցից սպասվող դերը, ավելին, մեծ մասամբ նպաստում էին հայկական հասարակության մեջ անհաշտության ու պառակտումների խորացմանը:

Կահիրեի «Լուսաբեր-Արեւ» թերթում անդրադառնալով այդ հարցին, Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության նշանավոր գործիչներից Լեւոն Մկրտիչյանը գրում էր, որ ազգի մամուլը այդ նույն ազգի պատկերն է, հետեւապես, ինչ թերություններ ու առավելություններ ունի ազգը՝ նրա լրագրությունը նույնպես պիտի ունենա համանման թերություններ և առավելություններ: Ապա՝ «Մենք ցեղ մըն ենք չատ չուտ խանդավառուող եւ մի փոքր բան է յուսահատուող: Մեր մամուլն ալ, իբրեւ հարազատ լուսանկարը մեր ցեղին, ոչինչ, աննշան դէպք մը կը բորբոքէ, կը լաւատեսէ, եւ դարձեալ, թեթեւ ձախողանքի մը ի տես՝ երեմէական մռայլ ողբեր կ'արձակէ:

Հայ լրագրութիւնը չի կրցած որեւէ օգտակար դեր ունենալ հայ քաղաքական կեանքին իբրեւ առաջնորդ»[1]:

Կ. Պոլսի «Արեւելքը» տպագրել էր Երվանդ Օտյանի հոդվածը, որտեղ նույն քաղաքի «Լուսարձակ» թերթում լույս տեսած հակադաշնակցական հոդվածների և որպես դրանց պատասխան, դաշնակցականների կողմից այդ պարբերականի արտոնատեր և խմբագիր Սիմոն էֆ. Զեմլեքչյանին ծեծի ենթարկելու կապակցությամբ գրում էր.

«Պէտք է ըսեմ, որ այդ քննադատականները լղրճուկ գռեհկութեան գլուխ-գործոցներ են, որոնք գրուած էին կարծես բաց կոյուղիի մը եզերքը հայհոյիչ ջրհանկրի մը կողմէ՝ որուն իր աշխատակցութիւնը նուիրած էր անկիրթ ու տխմար ժամկոչ մը: Երբեք հայ լրագրութիւնը այդքան «բայաղի» բան չէր արտադրած կարծեմ:

... Այս ամէնքը սակայն իրաւունք չեն տար դաշնակցականի մը՝ սոփայով (մահակ:- Հ. Ս.) պատասխանել այդ գրութեանց, եւ իրենց գործած արարքը այնքան վատ արարք մըն է, որքան այդ

---

[1] ***«Լուսաբեր-Արեւ»*** *(Գահիրէ), № 944, 16 փետրվարի 1911 թ.:*

օրաթերթի պայքարի լեզուն՝ զզուելի ու գանելիք»[1]:

*Միմյանց հակառակ էին առանց բացառության հայկական հասարակության բոլոր քաղաքական ուժերը: **Հնչակյաններն** առաջվա պես դաշնակցականներին դիտում էին իբրև ոխերիմ թշնամիների, միաժամանակ բացառում էին ռամկավարների հետ համագործակցելու հնարավորությունը: **Վերակազմյալ հնչակյանները** լինելով Դաշնակցության կողքին, Հնչակի (նազարբեկյանական թև) և հին Հնչակի (սապահգյուլյանական թև) երդվյալ հակառակորդներ էին, միաժամանակ անհաշտ էին ռամկավարների հետ: **Սահմանադրական ռամկավարները** տանել չէին կարողանում դաշնակցականներին, վերակազմյալներին և հին հնչակյաններին: **Դաշնակցականները** ատելությամբ էին լցված հնչակյանների ու սահմանադրական ռամկավարների հանդեպ, մշտապես չեչտում էին, թե նրանց հետ որևէ համաձայնություն անհնարին է[2]...*

Հատկապես կատաղի էին Դաշնակցություն-Հնչակ հարաբերությունները: Վանում Դաշնակցության օրգան «Աշխատանք» թերթը գրում էր. «Ամբողջ տասն եւ եօթ տարի Հնչակեաններն այնքան եռանդ եւ էներգիա չեն ցուցաներ բռնապետութեան դէմ մղած իրենց կռուին մէջ, որքան Հ. Յ. Դաշնակցութեան դէմ. չը պատահեցանք ցայժմ ոեւէ Հնչակեան թերթ մը, գործիչ մը, որ Դաշնակցութեան հանդէպ կրքեր գրգռելէն զատ տարբեր ընթացք մը ցուցանէր: Թերեւս տանելի էր այդ պայքարը, եթէ մղուեր պատշաճութեան սահմաններուն մէջ, մարդավայել եղանակով մը»[3]: Մոտավորապես նման գնահատական տալով «ռամկավարներ կոչուածներին», «Աշխատանքը» նշում էր, որ իր «գոյութենէն ի վեր» Ռամկավար կուսակցությունը յուրացրել է Դաշնակցության դեմ պայքարի բոլոր անընդունելի միջոցները[4]:

---

[1] **«Արեւելք»,** 21 հունիսի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Աշխատանք»,** № 10, 20 մարտի 1911 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 5 (101), 1 դեկտեմբերի 1912 թ.:

[4] Տե՛ս նույն տեղում:

Դաշնակցության դեմ հակադաշնակցականների անդիջում պայքարը թերթը բացատրում էր նրանով, որ Դաշնակցությունն ամեն տեղ լայնածավալ ճյուղերով իր մեջ է պարփակել ամբողջ հայկական կյանքը՝ ազգային մարմիններով, դպրոցներով, մշակութային հաստատություններով: Նա իր գոյությամբ լայնարձակ ստվեր է գցել մյուս քաղաքական ուժերի վրա, որի տակ նրանք համարյա չեն երևում: Քանի դեռ կանգուն է այդ կուսակցությունը, թզուկ պիտի մնան մյուսները: Հենց դա է պատճառը, որ մյուս քաղաքական ուժերը գերմարդկային ճիգեր են թափում վարկաբեկելու Դաշնակցությունը[1]:

Այսպիսին էր թուրքահայ քաղաքական դաշտի պատկերը 1912 թ. սկզբին՝ բզկտված ու փոխադարձ թշնամանքով լի: «Աւետաբեր» շաբաթաթերթի տեսաբան Հ. Մամիկոնյանը գրում էր.

«Այս ողորմելի անհատական կամ կուսակցական փոքրոգի, անձկամիտ քինախնդրութեան մէջ կարելի՞ է միթէ խեղդել ազգային ամէնէն կենսական շահերը: Միթէ կարելի՞ է այսչափ տգիտութեամբ ու կուրութեամբ շարժիլ ազգի մը գոյութեան հետ առնչութիւն ունեցող քաղաքական պարագաներու հանդէպ: Միթէ մեր մտաւոր աչքերը այնչափ կուրցա՞ծ են որ ներկայ վայրկեանին կարեւորութիւնը հասկնալու կարողութիւն չէ մնացած մեր մէջ: Այսպիսի խեղճ մտայնութիւն մը յուսաբեկիչ չէ՞»[2]:

Թուրքահայ նշանավոր գործիչներից մեկը հարց էր տալիս. ինչո՞ւ հայոց մեջ ծագած հակասությունները շատ հաճախ են վերածվում թշնամության, իսկ «յառաջադէմ ազգեր կը լուծեն իրենց մէջ ամենածանր խնդիր գրչով ու լեզուով, օրէնքով եւ կարգապահութեամբ: Այդ ազգերի ներսում փոքրամասնությունն օրինական ճանապարհով կարող է պայքար մղել իր նպատակների համար, խոսքով ու գրչով առաջ քաշել սեփական գաղափարները: Դա ամեն կերպ ողջունելի է, քանի որ հենց գա-

---

[1] Տե՛ս **«Աշխատանք»**, № 5 (101), 1 դեկտեմբերի 1912 թ.:

[2] **«Աւետաբեր»**, № 51, 21 դեկտեմբերի 1912 թ.:

դափարների բախումից է ծագում լույսը, իսկ մարմնական բախման արդյունքը լինում է վրեժխնդրությունը կամ արյունը: «Մի՞թէ սանձարձակ ազգ [ենք] մենք, չունի՞նք օրէնք ու դաստիարակութիւն ... Հիմա ժամանակն է որ իրարու գէշ աչքով չնայինք, օգնենք իրարու եւ միանալով աւելցնենք մեր ոյժը եւ պահենք մեր արժանապատուութիւնը ուրիշ ազգաց առաջ»[1]:

Բայց ասողին լսող էր պետք...

Ազգային հավաքական կամք այնպէս էլ չէր ձևավորվում:

Ո՞ւր էր ելքը այդ ամենից: «Մեր ազգային ներքին համերաշխութիւնը միակ կռուանն է, որուն պէտք է կառչիլ ամէն գնով, եթէ չենք ուզեր այս ազգին կազմալուծման ու քայքայման ապիկար վկաներն ըլլալ»,- փափագ էր հայտնում «Դաշինքը»[2]: Ազգային միաբանության աղեկտուր կոչ էր անում հնչակյան «Ամասիա» թերթը[3]:

Իսկ ազգային մարմնի քայքայման առաջն ինչպե՞ս առնել: «Արօրի» հոդվածագրի կարծիքով՝ միջոցը մեկն էր՝ «Ժողովրդի ոյժերը ջլատող, նրա հիւթերը ծծող եւ մաչող ոյժերի դէմ պէտք է կազմակերպուել եւ կազմակերպուած պայքար մղել»[4]:

Հայության ավանդական անմիաբանությունը Իթթիհադի տիրապետության շրջանում ուղղակի աղետաբեր էր դառնում ողջ Թուրքահայության համար: Այդ երկյուղալի հեռանկարը Վահան Թեքեյանն այսպես էր չեչտադրում.

«Խղճի գերագանց պարտք մըն է ինծի համար կրկնել – որովհետեւ ամենատխուր, բայց նաեւ ամենաանկեղծ համոզումս է ան – թէ հայ ազգին գոյութեան սպառնացող էն մեծ վտանգը ներքին վտանգ մըն է հիմա, որ աւելի խորազդեցիկ եւ վճռական է՝ քան բոլոր ջարդերն ու հալածանքները»[5]:

Ընայած ազգային սթափ անհատների մչտական նախազ-

---

[1] ***«Արարատ»,*** *№ 11, նոյեմբեր, 1910, էջ 1046:*

[2] ***«Դաշինք»,*** *№ 247, 30 ապրիլի (12 մայիսի) 1910 թ.:*

[3] *Տե՛ս* ***«Ամասիա»,*** *№ 10, 30 փետրվարի 1912 թ.:*

[4] ***«Արօր»,*** *№ 5, մայիս, 1910, էջ 134:*

[5] ***«Շիրակ»,*** *№ 18, 6 հունիսի 1909 թ.:*

գուշացումներին, հայկական քաղաքական ուժերը, նախկինի պես, ապարդյուն վեճեր ու անօգուտ պայքարներ էին մղում: Երկար տարիներ միմյանց հասցրած անպատվություններից ու վիրավորանքներից իրարից դժգոհ, նրանք ցրված էին տարբեր ուղղությունների վրա, բայց իրենց իմացածն անելու, անիմաստ ու անզիջում հակառակությունները չարունակելու վճռականությամբ լի:

Հայությունը քաղաքական կրկեսի վրա երևում էր իբրև դանդաղանած ու խայտաբղետ անմիաբան մի զանգված՝ չարժելով չրջապատող ազգերի քմծիծաղը:

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՆՈՐ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օսմանյան խորհրդարանը տակավին նոր էր իր վերջին չունչը փչել, երբ սկսվեց ընտրական պայքարը:

Խորհրդարանի փակումից հետո Իթթիհադի կոմիտեի ընդհանուր քարտուղար Հաջի Ադիլ բեյը վարչապետ Սաիդ փաշային առաջարկեց մինչև նոր խորհրդարանի ընտրությունները չեչտված իթթիհադական մի քանի գործիչների առնել կառավարության մեջ:

Երեք տարի չարունակ լինելով Իթթիհադ կուսակցության կոմիտեի ընդհանուր քարտուղարը և լավ իմանալով, թե ովքեր են կուսակցության հավատարիմ և ովքեր անհարազատ տարրերը, Ադիլ բեյը թունդ իթթիհադական պաչտոնյաներից կազմեց մի ամուր միջուկ, որը նախընտրական չրջանում պետք է անզիջում պայքար մղեր կուսակցության հակառակորդների դեմ:

Բոլորի համար պարզ էր, որ Իթթիհադը կայսրության բոլոր կարևոր պաչտոնները ձգտելու է հանձնել Թուրք ցեղին պատկանող երիտթուրքերին: Քրիստոնյաները, առավելապես հայերը, կարող էին միայն երկրորդական և երրորդական պաչտոններ զբաղեցնել: Վալիներն ու մութասերիֆները, ըստ իթթիհադա-

կան սկզբունքի, պետք է պատկանեին իսլամ կրոնին, իսկ քրիստոնյա վալի կարելի էր նշանակել միայն ոչ կարևոր շրջանի համար: Օսմանյան կայսրությունը վարել բացառապես Թուրք ցեղին պատկանող անձերի ձեռքով – ա՛յս էր Իթթիհադի սկզբունքը: Այդ մարզում հաջողություն ունենալու համար նա ձեռքի տակ ուներ հզոր միջոցներ՝ բանակ, պաշտոնեություն և այլն:

Իթթիհադն առաջվա պես իրեն ամուր էր զգում բոլոր առումներով: Նա կայսրությունում իշխանության տերն էր, ուներ պինդ կառուցվածք՝ խիստ կարգապահությամբ: 1911 թ. կուսակցությունը երկրում ուներ 4800 մասնաճյուղ՝ 135 հազար անդամներով: Կազմակերպության հզորության հիմքերից մեկը նրա ֆինանսական մեծ հնարավորություններն էին: Որպես տուրք նրա գանձարանն էր մտնում կուսակցության անդամ պետական պաշտոնյաների ամսական ռոճիկի 2 տոկոսը: Բացի դրանից, կոմիտեն օգտվում էր կառավարության գաղտնի ֆինանսավորումից: Նրա ձեռքում էին, մասնավորապես, օսմանյան նավատորմի վերակազմության նպատակով 1911 թ. Թուրքիայում բացված հասարակական հանգանակությունից ստացված մոտ մեկ միլիոն ոսկի գումարը, ինչպես նաև գահընկեց սուլթան Աբդուլ Համիդի գոհարեղենն ու Ելդզի մյուս հարստությունները[1]:

Քիչ թե շատ կարևոր պաշտոններում գտնվող իթթիհադականներն իրենց անձնական բարօրության և ստացած պաշտոնը ձեռքից բաց չթողնելու ձգտումից դրդված, ստիպված էին կուրորեն համակերպվել կուսակցության վերին ղեկավարության բոլոր հրահանգներին, այլապես անհապաղ կզրկվեին իրենց պաշտոններից:

Նախընտրական շրջանում և ընտրությունների ժամանակ Իթթիհադի կոմիտեն խստագույն հսկողություն էր սահմանել, որպեսզի պաշտոնյաներն ինքնագլուխ գործողությունների չդիմեն: Այն վալիները, մութասերիֆներն ու գայմագամները, որոնք անխոհեմություն անելով փորձում էին որոշ չափով ինքնուրույն

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 85, 24 ապրիլի 1912 թ.:*

գործել, անհապաղ հեռացվում էին զբաղեցրած պաշտոններից:

Օրինակ՝ Կեսարիայի և ապա Նիկոմեդիայի կառավարիչ, արդարության սահմաններում քիչ թե շատ գործել փորձած Ջեմալ բեյը, Իթթիհադի ճնշման տակ ստիպված հրաժարական էր տվել, որից հետո մի աննշան պատրվակով բանտարկվել, որպեսզի չմասնակցի խորհրդարանի ընտրություններին[1]:

Ադանայի վիլայեթի նորանշանակ վալի Մուստաֆա Նեդիմը տեղ հասնելուն պես իր մոտ է կանչում իրեն հանձնած նահանգի պաշտոնեությանը և նրան հայտարարում. «Կառավարությունն իթթիհադական է, ուրեմն եւ պաշտօնեաները պիտի նոյնը լինեն: Ձեզանից նրանք, ովքեր չեն պատկանում Իթթիհադին, թող հրաժարուեն պաշտօններից...»[2]:

Ընայած այդ ամենին, քաղաքական հողի վրա Իթթիհադն արդեն ուներ լուրջ հակառակորդ՝ հանձին Իթթիլաֆի («Համերաշխություն և ազատություն» կուսակցություն): Ահա՛ այս երկու կուսակցություններն էին, որ օսմանյան նոր (երկրորդ) խորհրդարանի ընտրություններում պետք է չափեին իրենց ուժերը*: Նրանք իրար դեմ կանգնած էին համարյա հավասար ուժերով:

1909 թվականից ի վեր Օսմանյան պետության ներքին քաղաքական կյանքում հպատակ ազգերի համար դրանից ավելի փափուկ կացություն չէր եղել: Նրանք այս երկու քաղաքական ուժերից պետք է ընտրեին մեկին, ընդ որում, Իթթիհադը քրիստոնյա ազգերի բացահայտ ու փորձված հակառակորդն էր, իսկ երկրորդը՝ Իթթիլաֆը, դեռ իշխանություն չէր ունեցել և դժվար էր նրա իսկական դեմքը որոշել: Նրանք կանգնել էին դեմառդեմ՝ իշխանությունը սեփականելու ձգտումով: Որի՞ կողմն անցնել, որի՞ն ձայն տալ, որի՞ խոսքին հավատալ: Եթե ոչ-թուրք ազգերը հարեին Իթթիհադին, ատելի կղառնային Իթթիլաֆին, և եթե

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 85, 24 ապրիլի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

* Խորհրդարանի նախընտրական շրջանում Իթթիհադի և Իթթիլաֆի միջև անդիջում պայքարի մասին տե՛ս **«Լուսարձակ»**, № 30, 18 (31) դեկտեմբերի 1911 թ.:

վերջինս հաղթեր, դժվար չէր պատկերացնել նրանց վիճակը: Եթե հարեին Իթթիլաֆին, ապա հազիվ թե կարողանային փրկվել Իթթիհադի վրեժխնդրությունից: Նախընտրական բուռն պայքարում երկուսն էլ նպատակ էին դրել խորհրդարանում մեծամասնություն չահելով տիրանալ կառավարման դեկին և հասնել իրենց բաղձալի նպատակներին:

Երկրորդ պատգամավորական ժողովի ընտրությունների կանոնադրության համաձայն՝ յուրաքանչյուր պատգամավոր պետք է ընտրվեր 50000 բնակչության հաշվով: Հետևաբար, քանի որ հայերը Թուրքիայում նկատված էին երկու միլիոն, ուստի, բնականաբար, նրանք պիտի ունենային ամենաքիչը 20 պատգամավոր: Բացի այդ, նկատի առնելով հայերի ցիրուցան վիճակը կայսրության մեջ և նրանց կենտրոնացումը մի շարք կարևոր վայրերում, կարելի է ենթադրել, որ թուրքահայ ժողովուրդը կարող էր ունենալ նույնիսկ 27 պատգամավոր ընտրելու իրավունք՝ ըստ հետևյալ ցուցակի. Ռոդոսթո՝ 1, Կարին՝ 2, Կոզան՝ 1, Հալեպ՝ 1, Կեսարիա՝ 1, Իզմիր՝ 1, Նիկոմեդիա՝ 1, Մուշ՝ 2, Վան՝ 2, Խարբերդ՝ 1, Տիգրանակերտ՝ 1, Երզնկա՝ 1, Տրապիզոն՝ 1, Սեբաստիա՝ 1, Բուրսա՝ 1, Պոլիս՝ 2, Մարաշ՝ 1, Բաղեշ՝ 1, Եվդոկիա (Թոգատ)՝ 1, Ամասիա՝ 1, Ադանա՝ 1, Յոզղատ՝ 1, Արզնի՝ 1[1]*:*

Բայց երիտթուրքերն այնպես էին բաժանել ընտրական շրջանները, որպեսզի հայաբնակ գավառները խառնակեն մուսուլման բնակչություն ունեցող գավառների հետ, որի արդյունքում վերջիններս ընտրողների կեսից ավելին էին դարձել: Ինչ խոսք, նման ընտրական շրջաններում անխուսափելիորեն պատգամավորներ կընտրվեին թուրքեր կամ քրդեր, իսկ հայերը չէին կարող իրենց թվին համապատասխան տեղեր ունենալ պառլամենտում: Ահա թե ինչու հայոց պատրիարքարանը պահանջեց ընտրությունների գործը հանձնել յուրաքանչյուր ազգի, որպեսզի նա իր ներսում կազմի ընտրական շրջաններ և պատգամավորներ ընտրի իր ուզած մարդկանց: «Երիտասարդ թուրքերը

---

[1] *Տե՛ս* ***«Աւետարեր»****, № 38, 21 սեպտեմբերի 1912 թ.:*

սարսափեցան այս մտքից, որովհետև եթէ ազգային ընտրութեան դրութիւնը ընդունէին, Օսմանեան պարլամէնտում Թուրք երեսփոխանների թիւը փոքրամասնութիւն պիտի կազմէր: Յոյները, հայերը եւ բուլղարները միանալով արաբների հետ՝ պիտի կազմէին բացարձակ մեծամասնութիւն եւ ամբողջ երկրի կառավարութիւնը իրենց ձեռքը պիտի առնէին: Այս պատճառով ընտրական դրութեան այս ձեւը երբեք չընդունուեց...»[1]:

Ելնելով ընտրությունների նոր կանոններից, պատրիարքարանը կազմեց ու հրապարակեց հայ պատգամավորների ընտրությունների հրահանգ, ուր նշված էին, թե այդ կարևոր պարագային ի՞նչ ուղղության են պարտավոր հետևել հայոց առաջնորդարանները, որպեսզի ընտրությունները լինեն ազգին նպաստավոր, հայերը կարողանան պետք եղած թվով պատգամավորներ ուղարկել խորհրդարան[2]: Հրահանգում ասված էր, որ հայ պատգամավորներին պետք է ընտրել ելնելով ոչ թե նրանց կուսակցական պատկանելությունից, այլ՝ անձնական կարողություններից[3], այսինքն՝ ընտրել այն թեկնածուներին, որոնք բարի համբավ ունեն, հմուտ են օրենքների իմացության մեջ, նախաձեռնող են, թուրքերեն լեզուն իմանում են գերազանց, որպեսզի կարողանան պառլամենտում ըստ արժանվույն բարձրաձայնել հայությանը հուզող հարցերը: Նպատակահարմար էր համարվում յուրաքանչյուր ընտրական շրջանի համար առաջադրել մեկ հայ թեկնածու, որպեսզի չխորացվեն հակասությունները հայկական քաղաքական ուժերի միջև, բոլոր միջոցները գործադրել ընտրապայքարում գեղծումներ թույլ չտալու համար և այլն[4]:

Նույն պահանջները առաջադրում էր նաև մամուլը: Ռամկավարների «Վերածնունդ» ամսաթերթը «Ընտրական պայքարը» խմբագրականում և հույս էր հայտնում, որ հայ ժողովուրդն

---

[1] **Հրաչեայ Աճառեան**, Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.), էջ 64:

[2] **«Աւետարեր»**, № 38, 21 սեպտեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Բութանիա»**, № 10, 17 մարտի 1912 թ.:

[4] Տե՛ս **«Աւետարեր»**, № 38, 21 սեպտեմբերի 1912 թ.:

ընտրական պայքարում չահագրգռություն կդրսևորի, որպեսզի արդար իրավունքով կարողանա պատգամավորական ժողովում իր թվին համապատասխան ստանալ իրեն հասնող աթոռները: Հայության կողմից ընտրված պատգամավորները պետք է լինեն ազգի պահանջները համարձակորեն պաչտպանող, իրենց պարտքը կատարելու կարող անձինք[1]:

Ընտրարչավի ընթացքում թուրքական երկու կուսակցությունները՝ Իթթիհադն ու Իթթիլաֆը կատաղի պայքար էին մղում հպատակ քրիստոնյա ազգերի քվեները չահելու համար: Այդ նպատակով, նրանք օգտագործում էին բոլոր՝ մերթ սպառնական, մերթ փաղաքչական միջոցները: Երկուսն էլ ափ էին առել նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի դռները՝ օգտագործելով օսմանյան խորհրդարանի հայ (մասնավորապես՝ իթթիհադական) անդամներից ոմանց: Վերջիններս ջանք էին գործադրում Արչարունի սրբազանին համոզելու, որ եթե Պոլսում և գավառում հայերն ավելի չատ քվեներ տան Իթթիլաֆին, քան Իթթիհադին, ապա սրա հաղթանակի դեպքում անտանելի վիճակ կստեղծվի հայության համար՝ նրան կատաղի վրեժխնդրության թիրախ դարձնելով:

Մենք չգիտենք, թե Արչարունի սրբազանն ի՞նչ պատասխան էր տվել իրեն դիմած իթթիհադական հայ պատգամավորներին, բայց հայտնի է, որ նա որքան հնարավոր է ձգձգում էր իր կարծիքի արտահայտումը: Դա պատահական չէր. թուրքական երկու կուսակցությունները խոստումներ էին տալիս հայերին, բայց այլևս նրանց հավատացող չկար: Նախընթաց տարիներին խոստումների պակաս չէր եղել, բայց չէր եղել նաև իրական որևէ դրական քայլ: Քանի՞-քանի անգամ Բարձր Դուռը Թուրքահայաստանում քրդերի սանձարձակությունները սահմանափակելու նպատակով միջոցներ ձեռնարկելու «պատրաստակամություն էր հայտնել», բայց այդպես էլ բան չէր արել: «Մինչդեռ մենք կը հաւատայինք, թէ ներքին գործոց նախարարին մէկ կտրուկ հրամանը կը բաւէր մէկ անգամէն դադրեցնելու

---

[1] **«Վերածնունդ»**, № 5, սեպտեմբեր, 1912, էջ 2:

հայաբնակ գաւառներու մէջ տիրող անապահով կացութիւնը, բաւական էր որ կուսակալներն ու կառավարիչները անձնապէս պատասխանատու բռնուէին պատահած անախորժ դէպքերուն»[1],- գրում էր «Լուսարձակը»:

Ելնելով դրանից, թերթը հայոց պատրիարքարանին կոչ էր անում թուրքական երկու գլխավոր կուսակցություններից ոչ մեկին աջակից չլինել:

Երեք տարիների փորձը ցույց էր տվել, որ հայ ազգը չպիտի գործիք դառնա թուրքական կուսակցություններից ոչ մեկի ձեռքին, այլ պետք է փորձի իր վիճակի մեջ գտնվող ժողովուրդների հետ ձեռք-ձեռքի տված պահանջել իր իրավունքների հարգում՝ ում ձեռքն էլ անցնի երկրի կառավարումը[2]:

Այդպես էր կարծում նաև «Վերածնունդը», որը գտնում էր, որ եթե հայության պահանջները չբավարարվեն, ապա ավելորդ կլինի հայ ընտրողների մասնակցությունն ընտրություններին: Արտահայտելով սահմանադրական ռամկավարների տեսակետը, թերթը հարցը կտրուկ էր դնում. հայերը չպիտի միանան օսմանյան բլոկին, քանի դեռ կառավարությունը չի ճանաչել նրանց ազգային իրավունքները: Եթե մերժվի այդ պահանջը՝ «բան մը կը մնայ ընել հայոց, բողոքել ինչպէս ըրին նախորդ ընտրութեան միջոցին Սահմ[անադրական] Ռամկավար եւ Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնները՝ ձեռնպահ մնալով (այսինքն՝ ընտրություններին չմասնակցելով:- Հ. Ս.): Այնուհետև «Վերածնունդը» հաստատում էր այն իրողությունը, որ հայ ժողովրդի բոլոր խավերում հանրային զգացումը անվրեպ հակաիթթիհադական է՝ Իթթիհադի ազգայնամոլ ու անարդար կառավարության վարած ծայրահեղ հակահայկական քաղաքականության պատճառով: «Իթթիհատական հոսանքը գոյութեան իրաւունք չունի Հայոց համար արդի պարագաներուն մէջ: Հայ ժողովուրդը իր կուսակցութեանց միջոցաւ պլօքի մը ձեւով միացած՝ Իթթիհատական շարժումին դէմ պէտք է գործէ եւ նորէն

---

[1] **«Լուսարձակ»**, № 41, 29 նոյեմբերի (11 դեկտեմբերի) 1911 թ.:

[2] Նույն տեղում:

իր կուսակցութեանց միջամտութեամբը՝ պէտք է երթայ համերաշխիլ Օսմ[անեան] հակահեթեթհատական պլօքին հետ՝ պայմանով որ անիկայ ճանչնայ հայոց իբր ժողովրդային ոգիով սնած տարր եւ իբր ինքնուրոյն ստորոգելիներ ունեցող ազգի մը ներկայացուցած պահանջները»[1]*:*

Հույները, հայերը, բուլղարները, արաբները և մյուս ոչ-թուրքերը անել վիճակի էին մատնված: Այդ ընդհանուր անորոշության մեջ հայոց պատրիարքարանը հայ ընտրողներին խորհուրդ տվեց ընտրությունների ընթացքում ձեռնպահ մնալ թուրքական երկու կուսակցությունների թեկնածուներին ձայն տալուց՝ մեկ կամ մյուս կողմին թշնամի չդառնալու համար, միաժամանակ ընտրական գործերի ղեկը հանձնեց հայկական կուսակցություններին[2]*: Դա նշանակում էր վերջնականապես ջնջել ազգային պատրիարքարանի հեղինակությունը և դրանով իսկ նվիրագործել ազգի շահերը ներկայացնելու իրավունքից նրան զրկելու Բարձր Դռան ցանկությունը: Տարիներ շարունակ վերջինս համառորեն պայքարում էր քրիստոնյաների հոգևոր բարձր իշխանությունների քաղաքական իրավունքները վերացնելու, նրանց մյուս իրավասությունները սահմանափակելու և դրանք զուտ կրոնական շրջանակի մեջ սեղմելու համար, բայց հաջողություն չէր ունենում: Եվ ահա՛, այդ կրոնական իշխանություններից մեկը կամավոր հրաժարվում էր իր իրավունքներից, դրանով իսկ խոստովանելով, որ ինքն այլևս քաղաքական գործոն չէ: Սա ինքնասպանության նման մի բան էր, որը հաչտ էր գալիս ոչ միայն թուրքերի պահանջներին, այլև հայկական հեղափոխական կուսակցությունների տեսակետներին: Տարբերությունն այն էր, որ թուրքական իշխանությունների նպատակը հայոց պատրիարքարանի քաղաքական իրավունքների ջնջումն էր, իսկ հայկական կուսակցություններինը՝ դրանց ծայրահեղ սահմանափակումը:*

Ի վերջո, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը և Ազգային ժո-

---

[1] ***«Վերածնունդ»****, № 5, սեպտեմբեր, 1912, էջ 3:*

[2] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 20, 29 հունվարի 1912 թ.:*

ղովը երկար վիճաբանություններից հետո որոշեցին խորհրդարանի նախընտրական շրջանում Թուրքահայոց շահերի պաշտպանությունը փոխանցել ՀՅ դաշնակցությանը:

Այդպես վարվելով, պատրիարքարանում կարծում էին, թե վերջինս Իթթիհադի օգտին հայ ընտրողների քվեներն ապահովելուց առաջ բանակցությունների մեջ կմտնի նրա հետ, կառաջադրի մի շարք հրատապ լուծում պահանջող խնդիրներ, առաջին հերթին՝ հողային խնդիրը: Բայց Հայոց բարձրաստիճան կղերականները որևէ երաշխիք չունեին, թե սահմանադրության վերահաստատումից հետո անցած չուրջ քառասուն ամիսներին հայերին միշտ խաբած Իթթիհադը, այժմ հանկարծ իր խոստումները կկատարի: Ինչպե՞ս կարելի էր հավատալ, թե հայերի հանդեպ կարող է բարյացակամ լինել Իթթիհադը, մի կուսակ-ցություն, որի առաջին նշանաբանը քրիստոնյաներին երկրի քաղաքական կյանքից ամբողջովին դուրս մղելն էր:

Ոչ միայն պատրիարքարանն էր ձեռքերը լվացել և մի կողմ քաշվել ընտրական գործընթացներից, այլև Հայոց Ազգային պատգամավորական ժողովը:

Ընտրական խնդիրը Ազգային ժողովում քննարկման հարց դարձավ պատրիարքարանի՝ «անկողմնակալ ձեռնպահություն» ազդարարելուց հետո:

Ժողովի կենտրոնի մեծամասնությունը կարծիք հայտնեց, թե պատրիարքարանի նշանակությունը վար առնելու Իթթիհադի ջանքերին հակադարձելու և նրա հեղինակությունը փրկելու համար պատրիարքը պետք է ընտրական գործի մեջ գոնե մի վերին հսկող դեր կատարի: Այդ առաջարկը քվեարկության դրվեց և ընդունվեց որոշում, ուր ասված էր, թե ընտրական պայքարի ընթացքում բոլոր հայկական կազմակերպությունները պարտավոր են իրենց գործողությունները համաձայնեցնել պատրիարքարանի հետ:

Այդ որոշումը Դաշնակցությունն իր համար անընդունելի համարեց, հայտարարելով, որ եթե պատրիարքարանն իրեն չեզոք է համարել ընտրապայքարում, ապա այսօր-վաղը նույն ուղին է բռնելու նաև Ազգային ժողովը, ուստի նրա ընդունած որոշումը որևէ իրավական ուժ չունի:

Չնայած դրան, Ազգային կեդրոնական վարչությունը, Ազգային ժողովի որոշման հիման վրա գործի դրեց իր վերին հսկողության իրավունքը՝ փորձելով համերաշխության հողի վրա բերել և ի մի համախմբել ազգային բոլոր կուսակցություններին, ինչպես նաև հայ կաթոլիկ և հայ բողոքական համայնքներին[1]:

Հակառակ այն բանի, որ «Համաձայնական ժողով» անվանյալ անպաշտոն այդ մարմնի խորհրդակցություններին մասնակցում էին դաշնակցականների, հնչակյանների և վերակազմյալների ներկայացուցիչները, բայց նույն կուսակցությունների ուրիշ ներկայացուցիչներ առանձին-առանձին սկսել և շարունակում էին բանակցությունները թուրքական կուսակցությունների հետ: Առանց սպասելու «Համաձայնական ժողովի» եզրակացությանը՝ դաշնակցականներն ու վերակազմյալներն իրենց ձեռքը երկարել էին Իթթիհադին, իսկ հնչակյանները հարել էին Իթթիլաֆին:

Շատ չանցած՝ Իթթիհադին հարեցին նաև Ազգային ժողովի Ազատական թևը և հայ կաթոլիկները:

Անկախ մնացին Ազգային ժողովի կենտրոնի խմբակցությունը, սահմանադրական ռամկավարները և հայ բողոքականները, որոնք դեռևս չէին կողմնորոշվել:

Իսկ որո՞նք էին միջկուսակցական առճակատումների մանրամասները, ընտրողների առջև ի՞նչ փաստարկներով ու խոստումներով էին հանդես գալիս հայկական քաղաքական ուժերը չորս ամիս տևած նախընտրական պայքարի ընթացքում:

Ընտրապայքարում առաջին տեղն, անշուշտ, գրավում էին դաշնակցականները՝ Իթթիհադի երբեմնի եռանդուն դաշնակիցները, որոնք այժմ վերանորոգում էին հին դաշինքը (այժմ, ի-հարկե, ժամանակավոր կերպով՝ իբրև մարտավարություն)՝ խորհրդարանում հնարավորինս շատ տեղ գրավելու համար:

Իթթիհադին միանալու իրենց քայլերը դաշնակցականներն արդարացնում էին այն պատճառաբանությամբ, թե հայությունը շատ թույլ է, հետևապես Իթթիհադին հակառակվելու այլևս

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 63, 25 մարտի 1912 թ.:

ուժ չունի: Թույլը պետք է հարի ուժեղին[1]: «Իթթիհատին յարիլ պէտք է անոր համար, որ ան զօրաւոր է, եւ մենք զօրաւորին աջակցութեամբն է, որ կրնանք հայ մեբուսներ ունենալ»[2]:

Դաշնակցականներն ասում էին, թե այս անգամ իթթիհադականների հետ իրենց գործակցությունը իրականացվում է որոշակի պայմաններով՝ «նրանցից զիջումներ կորզելու համար»: Բայց ի՞նչ զիջումների մասին է խոսքը՝ ուզում էին իմանալ ընտրողները դաշնակցական պատգամավորական թեկնածուների հետ ունեցած հանդիպումների ժամանակ: Պատասխանը մեկն էր լինում՝ «Դրանք շատ կարևոր բաներ են», բայց իրենք, ցավոք, դրանց մասին չեն կարող տեղեկացնել, քանի որ դրանք չհրապարակելու պայմանավորվածություն կա: «Միայն անոր (Իթթիհադի:- Հ. Ս.) աջակցութեամբ է, որ կրնանք հայ մեբուսներ ունենալ,- ասում էին նրանք և ավելացնում:- Եթե հայերը Իթթիլաֆին յարին, որովհետեւ յաղթանակը Իթթիհատին պիտի մնայ, անիկա չարաչար պիտի լուծէ վրէժը, նոյնիսկ հայերը ջարդելով, հետեւաբար պէտք է զգոյշ ըլլալ եւ չզայրացնել Իթթիհատը»[3]:

Միակ «պայմանավորվածությունը», որի մասին դաշնակցականները բացահայտորեն խոսում էին, վերաբերում էր նոր խորհրդարանում հայ պատգամավորների թվին: Ասում էին, թե արդեն հաստատ վճռված է, որ Իթթիհադը հայերին տալու է 20 պատգամավորական մանդատ և բոլոր թեկնածուները առաջադրվելու են Դաշնակցության ցուցակով. ավելին, Իթթիհադը իբր խոստացել է, որ իրենց նախարարական մի պաշտոն է տալու կազմվելիք կառավարության մեջ:

Դաշնակցությունը, սակայն, անտեղյակ էր, որ հենց այդ նույն ժամանակ Իթթիհադի կոմիտեն որոշում էր ընդունել հայերին չտալ 20 պատգամավորական մանդատ, այլ, լավագույն

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 70, 5 ապրիլի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, № 63, 25 մարտի 1912 թ.:

դեպքում, պառլամենտում նրանց համար նախատեսել 16 տեղ: Բայց այդ թիվը նույնպես չափից ավելի մեծ համարելով, կոմիտեն հաջորդ նիստում իջեցրել էր 3-ով՝ հայերին պատգամավորական 13 տեղ թողնելով:

Դաշնակցության հակառակորդները մերժում էին ուժեղի թևի տակ կուչ գալու վարդապետությունը, տվյալ դեպքում՝ Իթթիհադին լիովին հանձնվելու գործելակերպը և գտնում, որ «մեզի համար ամենէն կենսական խնդիրն է օսմ[անեան] երեսփոխանական ժողովին մեջ հայոց շահերը քաջաբար պաշտպանող ներկայացուցիչներ ունենալ»[1]: «Մշակը» գրում էր, որ դաշնակցականների տեսակետը «ուրացում ըլլալով բովանդակ հայկական անցեալին՝ զզուելի է բոլոր հայոց... Երթալ անոր (Իթթիհադի:- Հ. Ս.) ծոցը իյնալ, իբր գօրաւորի, կը նշանակէ վատաբար տեղի տալ եւ [Եւրոպային] վկայել, թէ հայերը գոհ են Իթթիհատէն»[2]: Զորավորին հարելու մարտավարությունը վճռականապես բացառելով, սահմանադրական ռամկավարներն ասում էին, որ ոչ միայն Դաշնակցությունը, այլև մյուս հայկական հեղափոխական կուսակցությունները (Հնչակյան, վերակազմյալ) եթե հզոր և արյունախում գազանը չոյելու ունակություն ունենային նախկինում, ապա 1895-1896-ին զուր տեղը 300.000 հայերի արյունը չէր թափվի, և այսօր Թուրքիայում հայությունը տնտեսական, բարոյական և մշակութային անհամեմատ առաջացյալ դիրքեր կունենար: Նրանք հիշեցնում էին, որ ժամանակին, երբ Խորեն արք. Աչըգյանը, Բարդուղիմեոս եպս. Զամիչյանը, Հովհաննես Նուրյանը, Սիմոն Մագսուտը այդ նույն տեսակետն էին հայտնում, Դաշնակցությունը նրանց դավաճան էր անվանում, իսկ ահա՛ այժմ ինքն է չոյում նույնքան արյունռուչտ գազանի գլուխը: Հիմա դաշնակցականները կա՛մ պետք է ընդունեին, թե նշված անձինք դավաճաններ չէին, կա՛մ՝ որ իրենք նույնպես դավաճաններ են, քանզի «համակերպութեան, ան-

---

[1] **«Լուսարձակ»,** № 52, 9 (22) հունվարի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»,** № 70, 5 ապրիլի 1912 թ.:

մոունչ համբերատարութեան եւ անպայման հնազանդութեան ներբողը կը հիւսեն»[1]:

Քննադատելով Դաշնակցության ղեկավարների՝ հայոց ազգային արժանապատվությունը տրորող «անվայելուչ չահասիրական կեցուածքը» («Իթթիհատը օրուայ ուժեղ, իշխող եւ տիրող կուսակցութիւնն է, եթէ նրան հակառակ գնանք՝ կվնասուենք»), Թավրիզում հրատարակվող «Միտք» պարբերականը նկատում էր, որ «նոքա (դաշնակցականները:– Հ. Ս.) որդեգրում եւ սրբագործում են այն ծանր **մեղադրանքը**, որով տարիներից ի վեր դատապարտում են Մեծ Հայ Օրմանեանին, որ նույնպէս տիրողին հակառակել չէր ուզել իր պատրիարքութեան օրով, որ հայերը նորէն չջարդուէին կամ չվնասուէին»[2]:

Իթթիհադը Թուրքերի հակառակորդ էր հայտարարել կայսրության ոչ իսլամ ժողովուրդներին և պետության բաղկացուցիչ մյուս տարրերին: Վերջիններս իրենց դժգոհությունը փոխակերպում էին զայրույթի, մեկը մյուսից խիստ հայտարարություններ էին անում, ինչպես, ասենք, հույները, կամ զենք էին բարձրացնում, ինչպես դա անում էին մակեդոնացիները և մանավանդ ալբանացիները: Այդ երկու հետամնաց ժողովուրդները, որոնց չարժման ղեկավարների թվում եվրոպական իմաստով հագիվ երեք–չորս մտավորականների կարելի էր մատնացույց անել, ժամանակին հասկացան, որ երիտասարդ Թուրքերի սահմանադրությունը կայսրության ծայրագավառների օտար ու ճընշված ազգերի համար չէ, ուստի զենքը ցած չդրեցին և ըմբոստ խիզախումով պահանջեցին իրենց ազգային խնդիրների լուծումը:

Ի տարբերություն այդ ժողովուրդների, սահմանադրությունից հետո հայերը միայն աղիողորմ խնդրանքներ էին հղում իշխանություններին: Իր ներսում ունենալով լուսավոր ուղեղներով բարձրարժեք մտավորականության մի բավական ստվար զանգված, ազգի ամենախոշոր քաղաքական ուժը, երկար տարիների ընթացքում տառապանքով ձեռք բերած զենքերը հանձնելով

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 70, 5 ապրիլի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Միտք»**, № 22, 4 օգոստոսի 1912 թ.:

պետության պատկան մարմիններին, ցրել էր իր զինված ջոկատները, դարձել օրինական կուսակցություն և Իթթիհադական սահմանադրության անձուկ շրջանակներում փաստորեն վերածվել էր սոսկ մշակութային գործիչների և օրինապահ քաղաքացիների մի կազմակերպության: Բայց չէ՞ որ ամեն ժամանակ և ամեն տեղ մարդիկ հարգանք են տածել և տածում են նրա՛նց նկատմամբ, ովքեր գիտեն պայքարել իրենց իրավունքների համար: Հետևաբար, գնալ ու մտնել զորավոր, բռնակալ Իթթիհադի ծոցը, նշանակում էր վատաբար վկայել, թե հայերը գոհ են իրենց տանջող թուրքական իշխանություններից:

Օսմանյան հեղափոխությունից չորս տարի հետո նույնպես առեղծվածային էր մնում այն կերպարանափոխությունը, որ կրել էր աբդուլհամիդյան շրջանի Դաշնակցությունը Իթթիհադի տիրապետության օրոք՝ կտրականապես փոխելով իր քաղաքական ուղեգիծն ու վարքագիծը: Ավելի քան 20 տարի չարունակ հայոց հարցը զենքով լուծելու գաղափարին լծված կուսակցությունն այժմ նոր խորհրդարանի նախընտրական շրջանում հանդես էր գալիս թուրքական ազգայնական կուսակցության հետ մի ընդհանուր բլոկում, այն դեպքում, երբ վերջինս խաչ էր քաշել Դաշնակցության ծրագրի այն հիմնադրույթների վրա, որոնք վերաբերում էին Հայաստանին՝ որպես պատմական ուրույն տարածաշրջանի, և հայ ժողովրդին՝ որպես օսմանյան հասարակության ազգային ամփոփ հատվածի:

Դաշնակցության մամուլի օրգանները նախասահմանադրական շրջանում արհամարհանքով էին գրում երիտթուրքերի մասին, ծաղրում նրանց՝ որպես ոչ զտարյուն հեղափոխականների ու անգործունյա ճառասանների, իբրև զանգվածներից կտրված և «Փարիզում ճգնած գեներալների»: Օսմանյան սահմանադրության վերականգնումից հետո կուսակցությունը հրաժարվեց իր հեղափոխական, դիվանագիտական ու քարոզչական գործունեության վրա՝ բավականանալով հայկական դպրոցներին ուսուցիչներ մատակարարելով և ազատ մամուլ ունենալով:

Անհասկանալի էր մնում մի հանգամանք ևս:

Սոցիալիստական իդեալներ ունեցող և պետության կազմա-

կերպման ամենանպատակահարմար ձևը հանրապետությունը համարող Դաշնակցությունն այժմ քայլում էր մինչև ուղնուծուծը ազգայնամոլ և երկրում ըստ էության խմբային միապետություն հաստատած Իթթիհադի հետ և կանգնել էր նրա քաղաքական հարթակի վրա:

Մարդիկ չէին մոռացել, որ նախասահմանադրական շրջանում եվրոպական մայրաքաղաքներում և նշանավոր կենտրոններում Դաշնակցության Արևմտյան բյուրոյի ջանքերով կյանքի էին կոչվել ուսանողական բազմաթիվ կազմակերպություններ, որոնք հայանպաստ լայն գործունեություն էին ծավալել: Զուգահեռաբար, կուսակցությունը պարբերաբար դիմումներ էր հղում եվրոպական կառավարությունների, քաղաքական բնույթի կոնֆերանսների, խորհրդարանականների, հայագետների, հայասեր գործիչների, մամուլի օրգանների հասցեներով, կազմակերպում էր հողվածների ու ժողովածուների տպագրություն: Այդ ամենը թեև հիմնականում միայն բարոյական նշանակություն ուներ, բայց հայկական անծայր դժբախտությունների ծովում թերևս սփոփիչ դարմանումներ էին:

Կար ժամանակ, երբ Սասունի բարձունքներից հայ հերոս ֆիդայիներն ազդարարում էին Դաշնակցության՝ «ինքնավար Հայաստան» պահանջող խրոխտ նշանախոսքերը, որոնք կուսակցության ծրագրային ձգտումների սրբություն սրբոցն էին, նրա հեղափոխական կռվի նշանաբանը: Իսկ այսօր այդ ամենը, այդ փառավոր անցյալը ջուրն էր նետվում՝ հանուն օսմանյան խորհրդարանում մի քանի պատգամավորական տեղ զբաղեցնելու:

Հայ մտավորական շրջաններում ծագել էր մի ուրիշ հարց ևս. սոցիալիստական գաղափարներ դավանող Դաշնակցությունը ինչո՞ւ է խորհրդարանական պայքարում թուրքիզմի ու պանթուրքիզմի դրոշը ծածանող, ծայրահեղ հետադիմական ուժից ձգտում ստանալ մեկ նախարարական պաշտոն ապագա կառավարության մեջ:

Իր այդ քայլը կուսակցությունը պատճառաբանում էր նրանով, որ եվրոպական սոցիալիստական շարժման մեջ գոյություն

ունեցող ուժեղ հոսանքներից մեկը՝ ժորեսիզմը կանգնած է թուրքական կառավարության պաշտպանության դիրքերի վրա: Միքայել Վարանդյանը չեշտում էր, որ մեծագույն սոցիալիստներից մեկը՝ Ժան Ժորեսը – որի հմայքը միշտ գերել է Դաշնակցության շարքերին – վճռականորեն հանդես է գալիս երիտթուրքերին քննադատողների դեմ: Բայց Վարանդյանը չէր ասում, թե ինչո՞ւ էր այդպես: Իրականում, եվրոպական սոցիալիստական կուսակցությունների համարյա բոլոր պարագլուխները Թուրքիայի հարցում պաշտպանում էին իրենց կառավարություններին, որոնք հանդես էին գալիս Օսմանյան կայսրության status quo-ի պահպանման օգտին, ընդդեմ այդ պետության ամբողջականության պահպանման դեմ հանդես եկող Ռուսաստանի:

Բայց հայտնի էր նաև, որ Ամստերդամում տեղի ունեցած Երկրորդ ինտերնացիոնալի 6-րդ կոնգրեսը (14-20 օգոստոսի 1904 թ.) հատուկ բանաձև էր ընդունել, որով բոլոր երկրների սոցիալիստական կուսակցություններին կտրականապես արգելել էր խորհրդարանական նախընտրական պայքարի ընթացքում որևէ ձևի բլոկի մեջ մտնել բուրժուական կուսակցությունների հետ, խորհրդարանական ընտրությունների գնալ սեփական ցուցակով՝ չխոսելով այն մասին, որ բուրժուական կառավարության մեջ մտնելը և պաշտոն ստանալը կոնգրեսը համարել էր բացահայտ դավաճանություն աշխատավորների շահերին:

Հենց Ամստերդամի կոնգրեսի այդ որոշումն էր խախտել սոցիալիստական պայքարի փառավոր անցյալ ունեցող Ժորեսը՝ հանդես գալով բուրժուական կառավարության մեջ սոցիալիստ նախարարներ ունենալու տեսակետի պաշտպանությամբ: Իր մարտավարությամբ նա նպաստեց, որպեսզի Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության պարագլուխներից Ալեքսանդր Միլերանը ոչ միայն ընտրվի երկրի խորհրդարանի անդամ, այլև բուրժուական կառավարության մեջ նախարարական պաշտոններ ստանա: Այդ հակասոցիալիստական մարտավարությամբ և à la Միլերան արկածախնդրական փորձարկումով ժորեսիզմը, ինչպես և սպասելի էր, ձախողության մատնվեց: Համաչխար-

հային սոցիալիստական շարժման փառահեղ դեմքը, ի վերջո զգալով իր կոպիտ սխալը, հավատարիմ ընկերներով միացավ Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության ներսում ձևավորվող գեղիստական մարքսիստական (կոմունիստական) խմբակցության և կորցրեց իր կչիռը սոցիալիստական շարժման մեջ:

Եվ ահա՛ այժմ Միքայել Վարանդյանը նույնիսկ post factum արդարացնում էր ձախողության մատնված ժորեսիզմի խորհրդարանական մարտավարությունը և դա փոխադրում թուրքական իրականություն: Նրա կարծիքով՝ եթե սոցիալիստները բուրժուական խորհրդարաններում կազմում են պատգամավորական խմբակցություններ և նույնիսկ մտնում են բուրժուական կառավարությունների մեջ, հետևապես միանգամայն արդարացված են իր կուսակցության համագործակցությունը Իթթիհադի հետ և նույնիսկ միացյալ պատգամավորական խմբակցության ստեղծումը թուրքական խորհրդարանում: Բայց պատմաբան – «քաղաքագետը» հաշվի չէր առնում, որ ժորեսիզմի՝ Եվրոպայում թույլ տված սխալները Թուրքիայի պայմաններում հայերի համար կործանարար են դառնում:

Ուրեմն, խստորեն դատապարտելի էր թուրքական պանիսլամական-ազգայնամոլական կուսակցության ամպհովանու ներքո «խորհրդարանական» գործունեություն ունենալը Թուրքիայի նման երկրում: Ծրագրային սոցիալիզմը զոհ էր բերվել թուրքական ազգայնամոլության: Լինել Իթթիհադին ստորադասված խմբակցություն խորհրդարանում, նշանակում էր իրեն զրկել ընդդիմախոսության բոլոր հնարավորություններից, ամբողջովին կորցնել սեփական դեմքը:

*Ինչ վերաբերում է խորհրդարանական նախընտրական պայքարում **ՍԴ հնչակյան կուսակցության** բռնած ուղեգծին, ապա նախ նշենք, որ նա, ինչպես ցույց ենք տվել իր տեղում, սատարում էր Իթթիհադ կուսակցության կատաղի հակառակորդ Իթթիլաֆին՝ նրա ձևավորման հենց սկզբից:*

*Եվ ահա՛ այժմ հնչակյանները միացել էին Իթթիլաֆին, զինակցել նրա հետ: Այդ դաշինքը նույնպես թեև չէր համապատասխանում թուրքահայերի առօրյա **շահերին**, բայց քանի որ*

ուղղված էր իշխանության վրա գտնվող Իթթիհադի դեմ, ուստի ավելի համապատասխանում էր հայերի **զգացմունքներին:** Հայության հանդեպ թշնամաբար տրամադրված աբդուլհամիդաբարո Իթթիհադ կուսակցության տապալումը տվյալ ժամանակ դարձել էր հայոց և կայսրության ոչ-իսլամ ազգությունների հիմնական բաղձանքը:

Ազգայնամոլական և համիսլամական գաղափարների վրա ստեղծված այդ կուսակցության դեմ պայքարը առաջինը սկսել էին Թուրքիայի հույները, որոնք ազգային հուժկու նկարագիր էին ցույց տվել: Նրանք չէին երկյուղում պարտությունից, գտնելով, որ տվյալ պահին իրենց պարտությունը նույնիսկ կարող է հաղթանակի հավասարազոր լինել, քանզի զենքը ձեռքին մեռնելը վեհ առաքելություն էին համարում:

Նախընտրելով հարել Իթթիլաֆին, հնչակյանները հույս ունեին, թե իրենց կմիանան նաև ազգի մյուս մասերը և, որպես երիտթուրքերից ամենից ավելի վնասներ կրած ազգերից մեկի անդամներ, կծառանան բռնապետական կարգերի դեմ:

Իթթիլաֆին հնչակյանների միանալը ոգևորություն չառաջացրեց հայկական շրջաններում: Սահմանադրական ռամկավարները և ընդհանրապես բոլոր ազատականները գտնում էին, որ Իթթիլաֆն ըստ էության Իթթիհադի երկվորյակն է, որ նրա անդամները նույն մոլեռանդ թուրքերն են՝ նույնքան ազգայնական, նույնքան համիսլամական և նույնքան կեղեքող: Այդ որակավորումների դեմ հնչակյանները միայն մի արդարացում ունեին, ասելով, որ չի կարելի գնահատական տալ որևէ կուսակցության նախքան նրա իշխանության վրա գտնվելը:

Հնչակյանները հայ հասարակությանը կոչ էին անում աչխույժ մասնակցություն բերել խորհրդարանական ընտրություններին, թեև լավ գիտեին, որ իրենց բլոկի պարտությունն անխուսափելի է, քանի որ Իթթիհադը, հենված զենքի ուժի վրա, երկրի մի ծայրից մյուսը իր օգտին բռնությամբ ապահովելու է քվեների մեծ մասը: Հետևաբար հայերի քվեն կարող էր զուտ բարոյական նշանակություն ունենալ: Եթե այդ բարոյական իրավունքը կիրարկենք ի նպաստ Իթթիհադի, ասում էին հնչակյանները, բոլորին ցույց տված պիտի լինենք, թե հայությունը

գոհ է այդ ոճրագործ կուսակցությունից, իսկ եթե դեմ քվեարկենք, գոնե դրանով ցույց կտանք, թե դեմ ենք ստեղծված բռնակալ, անիրավ և հայահալած վարչակարգին:

«Ապագայ պատմությունը կարծեմ թէ աւելի պիտի արդարացնէ ՍԴ հնչակեաններու բողոքի ժեստը, քան թէ ՀՅ դաշնակցութեան նուաստացուցիչ համակերպութիւնը»[1], – գրում էր «Մշակի» թղթակիցը Կ. Պոլսից:

Անցյալում հնչակյան կուսակցությանը մշտապես ատած երիտթուրքերն այժմ, երբ սա ընտրություններ էր գնում Իթթիլաֆի հետ դաշնակցած, ընկալում էին որպես բացահայտ թշնամական ուժ:

Ուրիշ մեղադրանքների հետ Իթթիհադն իր գլխավոր քաղաքական հակառակորդին՝ Իթթիլաֆին մեղադրում էր նաև այն բանի համար, որ, իբր, նա կայսրության թուրքերի շահերը զոհաբերում է երկրի ոչ-թուրքերի շահերին: Նկատի առնելով, որ հնչակյան կուսակցությունը ջերմորեն պաշտպանել է Իթթիլաֆի քաղաքական ծրագիրը, երիտթուրքերն իրենց մրցակցին մեղադրում էին, թե նա հայերի նկատմամբ կիրառում է չպատճառաբանված սիրախոսության և հաճոյանալու մարտավարություն, ավելորդ հոգատարություն ցուցաբերում ի վնաս մյուս ոչ-թուրքերի:

Երիտթուրք ղեկավարների այսպիսի հայտարարությունները առաջ բերեցին ազգային իշխանությունների խոր դժգոհությունը, որն արտացոլվում էր պոլսահայ մամուլի էջերում: Եվ դա այն դեպքում, երբ թուրքական երկու կուսակցությունները – որոնց՝ խորհրդարանում տեղեր գրավելու հավանականությունը մոտավորապես հավասար էր – պայքար էին մղում ամեն մի ձայնի համար: Այդ էր պատճառը, որ իթթիհադական վարչապետ Սաիդ փաշան հայերի դժգոհությունը մեղմելու և որքան հնարավոր է նրանցից շատ ձայներ ստանալու նպատակով հանդես եկավ հայտարարությամբ, թե ինքը շատ մտահոգ է հայերի վիճակով: «Մեր հայ հայրենակիցներուն դրութիւնը բնաւ գոհա-

---

[1] **«Մշակ»**, № 71, 6 ապրիլի 1911 թ.:

ցուցիչ չէ,- ասում էր նա,- ուստի կառավարութեան անմիջական պարտականութիւնն է բացառիկ միջոցներու դիմել ան բարուքելու համար»[1]:

Սաիդ փաշայի այդ հայտարարությունը Իթթիլաֆը համարեց հերթական անհեթեթ ամբոխահաճություն, իսկ հայերն ընկալեցին որպես հերթական խոստումներից մեկը, որը չի կատարվելու:

Մյուս հայկական քաղաքական կազմակերպությունը՝ ***վերակազմյալ հնչակյան կուսակցությունը,*** *անցնելով ներքին պառակտումների ու քայքայման շրջան, 1912 թ. 200-250 հոգուց բաղկացած մի ոչ մեծ խումբ էր ներկայացնում և, հետևաբար չէր կարող որևէ դերակատարություն ունենալ հայկական կյանքում:*

Ի տարբերություն ընդհանուր առմամբ սոցիալիստական գաղափարներ դավանող հնչակյան կուսակցության, վերակազմյալ հնչակյան կուսակցությունը թե՛ իր ծրագրով և թե՛ ծագումով ազգայնական էր: Այս երկուսը հակոտնյա ուժեր էին, թեև Վերակազմյալը գոյացել էր Հնչակից: Ի տարբերություն հնչակյանների, վերակազմյալները, մտնելով Դաշնակցության հովանու ներքո, նրանց նման դաշինքի մեջ էին մտել Իթթիհադի հետ:

Նշենք, որ կիլիկիահայոց ջարդի օրերին վերակազմյալ հնչակյանները, ի դեմս իրենց «Առաւօտ» թերթի, բուռն հարձակումներ էին կատարում իթթիհադական կառավարության վրա՝ նրան մեղադրելով կոտորածները կազմակերպելու համար: Հետագայում, Իթթիլաֆի ստեղծումից հետո, նրանք խստորեն քննադատում էին նաև այս կուսակցությանը: Բայց նոր խորհրդարանում գոնե մեկ պատգամավոր ունենալու ակնկալիքով վերակազմյալները կտրուկ շրջադարձ կատարեցին դեպի Իթթիհադը՝ ոտնատակ տալով իրենց ազգայնական ծրագիրը, ծագումը և անցած ուղին:

Պարադոքսն այն էր, որ այժմ հեղափոխականների դերում

---

[1] ***«Ազգ»****, № 33, 29 հունվարի 1913 թ.:*

հանդես էին գալիս չափավոր հայ քաղաքական գործիչները և, ամենից առաջ, սահմանադրական ռամկավարները, ապա նաև՝ ազատականներն ու հայ բողոքականները: Սրանք հայ ժողովրդի ոխերիմ թշնամի էին համարում ոչ միայն Իթթիհադին, այլև Իթթիլաֆին, և փրկության հույսը դիմադրության, զենքի հետ էին կապում:

Հիրավի՝ դերերը փոխվել էին:

Հայկական քաղաքական կազմակերպությունների թվում ***Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության*** *կատարածը բացառիկ էր այդ օրերին: Թեև իբրև քաղաքական միավոր հայկական հասարակական շարժման մեջ նա դեռ առաջին դիրքերում չէր, բայց նրա շարքերում ընդգրկված էին մարդիկ, որոնք խորապես համոզված էին դավանած գաղափարների ճշմարտացիության մեջ և իրենց իրական գործունեության ընթացքում հետևողականորեն առաջնորդվում էին դրանցով: Նրանք ամենից առաջ բարոյական ազդակներ էին հաղորդում դալկացած ու գունատ հայկական իրականությանը, արտահայտում էին հայութեան այն շերտերի տրամադրությունները, որոնք խորապես հիասթափված էին քառորդ դարի կենսագրություն ունեցող հայկական հեղափոխական երեք կուսակցություններից (ՀՅԴ, Հնչակ, Վերակազմյալ Հնչակ):*

Ինչպես նշվել է իր տեղում, Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը Հայոց Ազգային ժողովի կենտրոնի խմբակցության ղեկավար ուժն էր: Այստեղ համախմբված էին այն անձինք, ովքեր ներկայացնում էին հայ հասարակության ոչ-կուսակցական մեծամասնության քաղաքական տրամադրությունները:

Խորհրդարանի պատգամավորների նախընտրական շրջանում սահմանադրական ռամկավարները հարկ չտեսան բանակցել թուրքական կուսակցությունների հետ, քանի որ դրանցից որևէ մեկին հարելու բնավ միտք չունեին: Այդ իսկ պատճառով նրանք հետևողականորեն հետևում էին Իթթիհադ և Իթթիլաֆ կուսակցությունների պայքարին չմիջամտելու մարտավարությանը:

Բայց 1912 թ. մարտի կեսերից, ընտրական պայքարի եռուն շրջանում, Հայոց Ազգային ժողովի կենտրոնի խմբակցությունում տրամադրություններն սկսեցին երերալ ու փոխվել: Խմբակցության առաջատար դեմքեր Հայկ Խոջասարյանը, Սարգիս Սվինը (Սյունդյուձյան) և Ներսես Օհանյանը թեքվեցին դեպի Իթթիհադը և մի քանի օրում կարողացան իրենց հետևից տանել ամբողջ կենտրոնը, բացի սահմանադրական ռամկավարներից: Նրանք Իթթիհադի և Դաշնակցության հետ ստորագրեցին պաշտոնական թուղթ՝ նրանց պաշտպանելու մասին: Այսպիսով, սահմանադրական ռամկավարներն Ազգային ժողովում մնացին մենակ:

Ստեղծված բարդ իրավիճակում սահմանադրական ռամկավարները Հայոց Ազգային ժողովում ազդարարեցին իրենց ձեռնպահությունը: Դա նշանակում էր, որ կուսակցության անդամները ազատ էին իրենց դիրքորոշումներում՝ ձայն տալ այս կամ այն բլոկին կամ առհասարակ չմասնակցել ընտրություններին:

Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության կենտրոնական ակումբը 1912 թ. մարտի 22-ին հանդես եկավ հայտարարությամբ, որում մանրամասն նկարագրված էր ստեղծված վիճակը: Հայտարարությունն ազդարարում էր.

«Սահմ. Ռամկ. Կուս. Կեդր. ակումբս ներկայիս հաստատելով հանդերձ իր ձեռնպահութիւնը օսմ[անեան] երեսփ[ոխանական] ընտրութեանց գործին մէջ, ազատ կը կացուցանէ իր մասնաճիւղերը ի հարկին որոշել իրենց գործունէութեան եղանակը՝ յարգելու համար իրենց նախապէս ստանձնած յանձնառութիւնները»[1]:

Այս հայտարարությունը, իհարկե, որոշակի զիջում էր Իթթիհադի հետ գործակցության կողմնակից կենտրոնի խմբակցությանը: Հավանաբար, դա արդյունք էր այն բանի, որ սահմանադրական ռամկավարների շարքերում նույնպես երևացել էին տատանումներ (հատկապես փոխվելու վրա էր Վահան Թեքեյանի տրամադրությունը), որի պատճառներից մեկն, անշուշտ,

---

[1] ***«Մշակ»**, № 73, 10 ապրիլի 1912 թ.:*

այն էր, որ ընտրապայքարում հայոց պատրիարքարանի չեզոքության ազդարարումից հետո Արշարունի պատրիարքը, շատ չանցած, հրաժարվել էր անկողմնակալության սկզբունքից, անցել Դաշնակցության կողմը և մեկ օրից մյուսը Իթթիհադի ջերմ պաշտպան դարձել:

Նախընտրական շրջանում Իթթիհադի օգտին բուռն գործունեություն էր ծավալել նաև Գրիգոր Զոհրապը: Կ. Պոլսի մի թաղից մյուսը գնալով՝ նա ներբողում էր Իթթիհադին՝ մոռանալով այդ ոճրագործ կուսակցության դեմ իր նախորդ զայրալից հայտարարությունները:

Բայց սահմանադրական ռամկավարների շարքերում տատանումները կարճ տևեցին: Մարտի 22-ի հայտարարությունը նրանք համարեցին որոշակի նահանջ իրենց ընդհանուր սկզբունքներից: Մարտի 30-ին կուսակցությունը լիովին խզեց իր կապերը Հայոց Ազգային ժողովի կենտրոնի խմբակցության հետ, և ղեկավար մարմինը կազմակերպության անդամներին հրահանգեց միասնաբար ու համարձակորեն բոյկոտել ընտրությունները:

Ապրիլի 1-ին Բերայում տեղի ունեցավ Հայոց Ազգային ժողովի կենտրոնի հերթական «համերաշխության ժողովը»: Ներկա էին կենտրոնի առաջատար դեմքեր Հայկ Խոջասարյանը, Սարգիս Սվինը, Ներսես Օհանյանը (կենտրոնի խմբակցությունից), Ստեփան Գարայանը (որի ատենապետությամբ էր տեղի ունենում ժողովը), Արամ Հալաճյանը (ազատական խմբակցությունից), Մանուկ Մարիկյանը, Գրիգոր Ոսկյանը, Գրիգոր Մինեջյանը (հայ կաթոլիկ հարանվանությունից), Գրիգոր Շահբազը (հայ ավետարանական հասարակությունից), Վահան Փափազյանը և Արշակ Վռամյանը (բուն անունով՝ Օննիկ Դերձակյան) (ՀՅ դաշնակցությունից): Զէին ներկայացված հնչակյան և սահմանադրական ռամկավար կուսակցությունները, թեև ժողովը կոչվում էր «համերաշխության»:

Ժողովը միաձայնությամբ որոշեց.

1) Ընտրություններում քվեարկել Իթթիհադի օգտին,

2) Ընտրված հայ պատգամավորներին պարտավորեցնել. ա) Հասնել այն բանին, որ օսմանյան սահմանադրության հա-

մաձայն, օսմանյան բոլոր բաղկացուցիչ ցեղերի համար ապահովվի իրավունքների հավասարություն, բ) Պաշտպանել «պատրիարքարանների առանձնաշնորհումներ» անվան տակ Օսմանյան պետության ճանաչած իրավունքներն ու իրավասությունները, գ) Ջանալ լուծել տալ հողային, կրթական և հայաբնակ նահանգների բարեկարգության խնդիրները, ինչպես նաև ազգային գոյության և իրավունքների հետ կապ ունեցող բոլոր հարցերը, դ) Ամեն անգամ, երբ վերը նշված հարցերի մասին առիթ ներկայանա, բոլոր հայ պատգամավորները պարտավոր պիտի լինեն կազմել և գործել իբրև օսմանյան խորհրդարանի հայ խմբակցություն.

3) Վերոնշյալ հանձնառությունները ստանձնող պատգամավորական թեկնածուները պիտի հռչակվեն ազգային ընտրելիներ, իսկ ազգային իշխանությունները և քաղաքական կուսակցությունները համակամ կերպով պիտի նպաստեն նրանց հաջողությանը[1]:

Դրանից անմիջապես հետո Հայոց Ազգային ժողովի կենտրոնը դիմեց Դաշնակցությանը և խոստացավ պաշտպանել Իթթիհադին, բայց դրա փոխարեն պահանջեց, որպեսզի ՀՅԴ-ն Իթթիհադից ստանա մի հավելյալ պատգամավորական տեղ (13 + 1)՝ Մինաս Ջերազին կենտրոնի կողմից խորհրդարանի անդամ ընտրելու համար: Դաշնակցությունը խոստացավ հարցը բարձրացնել Իթթիհադի առաջ: Հայտնի չեղավ՝ բարձրացրե՞լ էր, թե՞ ոչ: Քանի որ կենտրոնն արդեն ստորագրել էր Իթթիհադին և Դաշնակցությանը պաշտպանելու մասին թուղթը, ուստի վերջինիս այլևս պետք չէր հոգալ խորհրդարանում Մինաս Ջերազի համար լրացուցիչ մեկ տեղ ևս տալու մասին: ՀՅ դաշնակցության Կ. Պոլսի Պատասխանատու մարմինը (կենտրոնական կոմիտեն) Ազգային ժողովի կենտրոնին տեղյակ պահեց, թե Իթթիհադը հրաժարվել է ավելացնել հայ պատգամավորների թիվը, այսինքն՝ մերժել է կենտրոնի պահանջը[2]:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 83, 21 ապրիլի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Հորիզոն»**, № 99, 12 մայիսի 1912 թ.:

Ավելին, բուն ընտրությունների նախօրյակին Իթթիհադի կոմիտեն հերթական անգամ կրճատեց հայերի համար Դաշնակցությանը խոստացած պատգամավորական 13 տեղերից երկուսը՝ դրանք իջեցնելով 11-ի, այսինքն՝ այնքանի, որքան հայերն ունեին օսմանյան առաջին խորհրդարանում: «Հայերը ծայրահեղորեն արհամարհված են»[1],- գրում էր «Osmanischer Zeit» թերթը:

Ընտրություններն ընթացան կոպիտ կեղծիքների, փոխադարձ սպառնալիքների ու չանտաժի ծանր մթնոլորտում, գործի էր դրվել կաչառքների մեքենան, եռանդուն կերպով միջամտում էին զորքը և ոստիկանությունը: Ի դեպ, նշենք, որ ընտրություններին զորքի և ոստիկանության միջամտությանը նպաստել էին Հայոց Ազգային ժողովի կենտրոնի անդամները և հայոց պատրիարքարանը[2]: Վերջինս դիմել էր ներքին գործերի նախարարություն՝ խնդրելով Պոլսում և գավառներում տեղի ունենալիք ընտրություններին այսուհետև ոստիկաններ բերել՝ կանխելու համար հայ ընտրողների և հայկական քաղաքական ուժերի անօրինական գործողությունները (ընտրողների կաչառում, նրանց կամարտահայտության խախտումներ, բռնությունների կիրառում, քվեաթերթիկների կեղծումներ և այլն): Հայ թեկնածուները մեկը մյուսի վրա հայհոյախառն ցեխ էին չպրտում՝ փոխանակ ներկայացնելու իրենց արժանիքներն ու անելիքները պառլամենտում[3]: Ընտրությունների վերջնական արդյունքները դեռ հայտնի չէին, բայց շատ լրագրեր հաճությամբ արձանագրում էին Իթթիհադի յուրաքանչյուր հաղթությունը: Իրականությունը, սակայն, այն էր, որ պատգամավորական թեկնածուների երեք քառորդը ոչ թե ընտրվել էր, այլ երիտթուրքերի կոմիտեի կողմից ուղղակի նշանակվել էր:

Մի կողմից խաբելով, թե ինքը կնպաստի, որ 11 բոլոր տեղերն անցնեն հայերին, Իթթիհադը մյուս կողմից ամեն ինչ

---

[1] Տե՛ս **«Լուսարձակ»**, № 52, 9 (22) հունվարի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Միտք»**, № 21, 21 հուլիսի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Բուլթանիա»**, № 6, 22 փետրվարի 1912 թ.:

անում էր, որպեսզի արդեն գրանցված հայ թեկնածուները անհրաժեշտ ձայներ չհավաքեն: Իթթիհադի Ադանայի վիլայեթի տեղական կոմիտեի ջանքերով պատգամավոր չընտրվեց Սիսում (Կոզան) գրանցված հայ թեկնածուն. հայերի համար նախատեսված տեղը կորավ և ընտրվեց մի թուրք: Նույն բանը տեղի ունեցավ Համբարձում Պոյաճյանի հետ, որի կորցրած տեղում ուրիշ հայ չառաջադրվեց: Դաշնակցությունը Ռոդոսթոյում թեկնածու էր առաջադրել Սմբատ Քյաթիպյանին, բայց երիտթուրքերն այնպես արեցին, որ նրա փոխարեն պատգամավոր ընտրվեց Իթթիհադի հավատարիմ Հակոբ Պոյաճյանը: Դաշնակցության պաշտպանած Հմայակ Խոսրովյանը նույնպես չընտրվեց: Վանի և Մուշի ընտրություններում մեկական հայ պատգամավոր ընտրվելու պատճառով հայ պատգամավորների թիվը հասավ ընդամենը 10-ի՝ անցյալ պառլամենտի 11-ի փոխարեն[1]: Երկրորդ պառլամենտի 10 հայ պատգամավորներից 9-ը ընտրվել էր Դաշնակցություն - Իթթիհադ միացյալ ցուցակով:

Ո՛չ հայոց պատրիարքարանը, ո՛չ կուսակցությունները և ո՛չ էլ ընտրված հայ պատգամավորները որևէ բողոք չներկայացրին թուրքական իշխանություններին: «Աւետաբերը» գրում էր. «...Ընտրութեանց միջոցին փորձառութեամբ տեսանք թէ հայերը իրենց գերագոյն շահերը պաշտպանելու համար ի՞նչպիսի անհոգութեամբ վարուեցան եւ թէ ի՞նչպէս ընտրական դաւերու զոհ գացին ազգին կամքն ու փափաքները: Իթթիհատը համաձայնեցաւ ան ատեն Դաշնակցութեան հետ եւ բոլոր հայ երեսփոխանները այս երկու կուսակցութիւններէն միայն ընտրուեցան: Տեսանք ամէնս թէ ի՞նչպէս Իթթիհատը նախ մեծ խոստումներով սիրաշահեցաւ մեր հայ կուսակցութիւնները եւ թէ ի՞նչպէս խաբեց զանոնք իր խոստացած հայ երեսփոխաններուն հազիւ կէսը ընտրել տալով»[2]:

Ահա՛ այսպես, առանց այլևայլության, իթթիհադականներն իրենց բացարձակ տիրապետությունը հաստատեցին նոր խորհրդարանում: Նրանք լիովին բավարարված էին. 260 պատ-

---

[1] **«Մշակ»**, № 92, 2 մայիսի 1912 թ.:

[2] **«Աւետաբեր»**, № 33, 17 օգոստոսի 1912 թ.:

գամավորների մեջ Իթթիհադն ընդամենը 25-30 ընդդիմադիր պատգամավոր ուներ: Մնացածները պատրաստ էին ժամ առաջ հանդիսավորությամբ իթթիհադականներին հավատարմության երդում տալ: Իթթիհադը դարձավ միահեծան միապետը երկրում:

Խորհրդարանական ընտրություններից հետո հայկական մամուլը լայնորեն քննարկում և վերլուծում էր նրա արդյունքները և տարամերժ ենթադրություններ կատարում: Մի բան, սակայն, բոլորի համար պարզ էր. հայերն ամբողջովին տանուլ են տվել:

Ընտրությունների առիթով մամուլը նաև բարձրացնում էր ազգային բարոյականությանը հարակցվող բազմաբնույթ խնդիրներ: Տարբեր ուղղությունների պարբերականները չեչտում էին, թե որևէ մակարդակով կատարվող ընտրությունների ժամանակ միմյանց նկատմամբ հարգանքի զգացում տածելը բացառիկ բան է հայոց բարքերում: Հայկական մամուլը հայրենակիցներին անդադար կոչ էր անում առաջավոր հասարակություններից սովորել, թե ինչպես պետք է ընտրություններ կատարել: «Ժամանակ» (Կ. Պոլիս) թերթը ցավով նշում էր, թե որևէ հույս չկա, որ հայերը երբևէ Եվրոպայից կամ Ամերիկայից կսովորեն ընտրելու քաղաքակիրթ ձևերն ու կանոնները: Անդրադառնալով Միացյալ Նահանգներում տեղի ունեցած նախագահական վերջին ընտրություններին, թերթը հիշեցնում էր, որ նախընտրական շրջանում աննախընթաց անզիջում պայքար էր ծավալվել նախագահական թեկնածուների միջև, բայց ընտրություններից հետո այդ պայքարի հետքն անգամ չի մնացել: Ընտրություններում հաղթանակ տարած Վուդրո Վիլսոնին չտապեցին առաջինը շնորհավորել նրա երկու հակառակորդները՝ Թեոդոր Ռուզվելտն ու Վիլյամ Հովարդ Տաֆտը: «Ու այսօր ընտրեալը, իբրեւ նախագահ ամերիկեան մեծ հանրապետութեան, յարգանքը կը վայելէ ո՛չ միայն տեմոքրատներուն, այլ հաւասարապէս յառաջդիմականներուն ու հանրապետականներուն ալ»[1]: Թերթը ոչ պակաս ուշագրավ էր համարում, որ նախընտրական շրջանում Ռուզ-

[1] **«Ժամանակ»**, № 1281, 18 նոյեմբերի 1912 թ.:

վելտի դեմ կատարված մահափորձից հետո մյուս երկու մրցակիցները՝ Վիլսոնն ու Տաֆթը դադարեցրին իրենց նախընտրական գործունեությունը, որովհետև վերքեր ստացած մրցակիցն ի վիճակի չէր փոխադարձ պայքար մղելու: «Այս երեւույթները,- նշում էր «Ժամանակը»,- քաղաքակիրթ ժողովուրդներու համար սովորական բաներ են, իսկ մեր մէջ՝ չատ ցանցառ ու հազուադէպ: Մենք հաւասարապէս կոյր ենք մեր հակառակորդներուն արժանիքը ու մեր բարեկամներուն թերութիւնները տեսնելու համար»[1]:

Օսմանյան նոր խորհրդարանն իր գործունեությունն սկսեց 1912 թ. ապրիլի 28-ին:

Առաջին իսկ նիստում խորհրդարանի նախագահ ընտրվեց Խալիլ բեյը:

Բացման օրը Իթթիլաֆի նախորդ կուսակցապետ Դամադ Ֆերիդ փաշան խորհրդարանում հանդես եկավ ելույթով և բողոքեց կատարված ընտրական գեղծումների, մեքենայությունների և սպառնալիքների դեմ: Նա չեչտում էր, որ ընտրությունները մեծ հարված եղան սահմանադրական կարգերին: Սահմանադրությունը, ասում էր նա, Օսմանյան կայսրության փրկության վերջին խարիսխն է, և նրան տրված ամեն մի հարված արագացնում է պետության կործանումը:

Ֆերիդ փաշայի հարուցած մեղադրանքների դեմ հանդես եկավ ներքին գործերի նախարարի տեղակալ Թալեաթ բեյը, որը, սպառնալիքներ տեղալով, մերժեց բոլոր մեղադրանքները և դրանք ճշմարտության խեղաթյուրում, սուտ ու անիրավ որակեց: Թալեաթ բեյին պաշտպանեցին Իթթիհադի ցուցակով խորհրդարան մտած համարյա բոլոր պատգամավորները՝ գոռում-գոչյունով և հայհոյալից բացականչություններով[2]: Այդ աղմուկին եռանդով միացել էին նաև հայ պատգամավորները: Ո՞վ կարող էր հակառակը խոսել մի վայրում, ուր, ընդդիմադիրների թիվը չնչին էր (եղածը հիմնականում ալբանացիներ ու

---

[1] ***«Ժամանակ»**, № 1281, 18 նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս **«Մշակ»**, № 92, 2 մայիսի 1912 թ.:*

արաբներ էին): Իթթիհադականները, գրեթե ամենքը, ընտրվել էին կեղծիքներով և ամեն տեսակի այպանելի այլ միջոցներով:

Օսմանյան երկրորդ խորհրդարանը ներկայացնում էր մի անբնական վիճակ, ուր ամեն առաջարկ պիտի ընդունվեր կամ մերժվեր իթթիհադական պատգամավորների քվեով:

Երբ նախորդ տարիների ընդդիմադիր պատգամավորները ցույց էին տալիս իթթիհադականների սխալները, սրանք միշտ արդարանում էին այն բանով, թե երկրի կրած դժվարությունների հիմնական պատճառն իրենց քաղաքական հակառակորդների քննադատություններն են, կառավարության նկատմամբ հակառակությունները, որոնք քայքայում են հասարակության միասնությունը[1]:

Հիմա մեղքն ուրիշների վրա նետելը դառնում էր անհնարին, քանի որ իրենք բռնությամբ ու կեղծիքներով ստեղծել էին հիմնականում իթթիհադական մի խորհրդարան՝ ստանձնելով երկրի կառավարման բացարձակ պատասխանատվությունը: Այլ խոսքով, նրանք իրավիճակի կատարյալ տերերն էին: Եվ եթե այժմ չկարողանային պետությունը փրկել հետագա քայքայումից, ապա այս անգամ իրենց վարկաբեկումն ու անկումը նույնպես կատարյալ կլինեին:

Ահա՛ այս պայմաններում երիտթուրքերը դաշնակցական պատգամավորներին առաջարկեցին միավորվել իրենց պատգամավորական խմբակցությանը և հանդես գալ հակաիթթիհադական յուրաքանչյուր ելույթի դեմ: Առաջարկն արվեց սպառնալիքներով: Դա հաղթանակած ուժի կողմից բացահայտ հեգնանք էր «դաշնակցի» նկատմամբ: Վերջապես, Դաշնակցությունն այս անգամ փոքր-ինչ համարձակություն ունեցավ: ՀՅԴ Կ. Պոլսի կենտրոնական կոմիտեն գրավոր պատասխանեց, թե «ընտրութիւններու ընթացքին տխուր յաղթանակը ձեռք բերուած կը նկատենք երկրի ընտրական խղճուկ սիստեմն իսկ արհամարհելով, հազարաւոր կեղծիքներ ու խաբէութիւններ գործադրելու գնով»: Կենտրոնական կոմիտեն տարակուսանքով չարունակում

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 99, 12 մայիսի 1912 թ.:

էր. «Արդեօք ոչնչութիւն չէ՞ այն օրէնսդիր ժողովը, որու մէջ բոլոր անդամները նոյն մտածելակերպը ունին», որ «ան այլեւս օրէնսդիր ժողով մը չէ, այլ՝ բարեկամներու խմբակցութիւն մը»[1]:

Միայն հետագա մի քանի օրերին հայ պատգամավորներն իրենց համար պարզեցին, որ օսմանյան խորհրդարանը երիտթուրքերի մի ակումբից ուրիշ բան չէ: Նույն եզրակացությանը հանգեցին նաև հայկական կազմակերպությունները: Բոլորն, առանց բացառության, հիասթափված էին, բոլորը «մարտական» դիրքերը թողել էին և գանգատավոր դարձել: Բողոքում էին և ողբում, որովհետև ոչ մեկ հայկական կուսակցություն որևէ ընտրական տեղամասում չէր հաղթել, բոլորը պարտված էին, ներառյալ՝ Դաշնակցությունը: Գանգատներն ու հանդիմանություններն այլևս ոչինչ էին այն իրականության առջև, որի անունն էր մենիչխանություն:

«Ինչի՞ էինք սպասում՝ ի՞նչ դուրս եկաւ»,- կուսակցության ձախողումն այսպիսի հոռետեսությամբ էր արձանագրում Դաշնակցության օրգան «Հորիզոնը»[2]:

ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ԲԱՎԻՂՆԵՐՈՒՄ

Նոր ձևավորված օսմանյան խորհրդարանում Իթթիհադն իրեն այնքան հզոր էր զգում, որ բացեիբաց հայտարարում էր, թե իր կամքից չբխող որևէ օրենք այնտեղ չի ընդունվի:

Տարօրինակ կացություն էր ստեղծվել հայ պատգամավորների համար: Հայությունը, որպես Օսմանյան կայսրությունը կազմող ազգություններից մեկը, պետք է իր ներկայացուցիչներն ունենար օսմանյան Մեջլիս-ի մերուսանում (Պատգամավորների ժողովում): Բայց հայ պատգամավորները Թուրքիայի հայության ներկայացուցիչները չէին և այդպիսին չէին կարող համարվել: Նրանց չէր ընտրել Թուրքիայի հայությունը, հետևապես՝ նրա կամքի արտահայտիչները չէին, այլ՝ Իթթիհադի կամքը կատա-

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»,** № 99, 12 մայիսի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

ղողներ էին: Այդ իսկ պատճառով նրանք ազգային շահերի և իրավունքների պաշտպանության որոշակի ծրագիր չունեին և պարտավոր էին ղեկավարվել իրենց ընտրել տված Իթթիհադի կամ, լավագույն դեպքում, իրենց կուսակցության նեղ ծրագրով:

Բայց թե Իթթիհադի ծրագիրը որքա՞ն էր «նպաստավոր» Թուրքիայի քրիստոնյա ազգությունների և, մասնավորապես, հայերի համար, մենք տեսանք աշխատության նախորդ էջերում:

Նոր ընտրված խորհրդարանում հայ պատգամավորներն իրենց աղքատ ազգականների պես էին պահում: Նիստերում նրանք կա՛մ ելույթ չէին ունենում, կա՛մ ամբիոն բարձրանալիս միայն մի իրավունք ունեին՝ գովել իթթիհադական պատգամավորներին ու հավանություն տալ նրանց նախաձեռնություններին: Նրանք չէին բարձրացնում հայությանը հուզող հարցեր, չէին բողոքում Թուրքահայաստանում և այլուր հայերի նկատմամբ թուրքերի ու քրդերի իրականացրած, չդադարող ոճիրների դեմ: Հայությունն անզեն գամված էր գետնին և գթասրտություն էր հայցում առանց կռվի ու դիմադրության: Հայ պատգամավորները պարտավոր էին իրենց ազգի բողոքը խորհրդարան հասցնել, այնտեղ կռվի ճակատ բանալ երիտթուրքական իշխանությունների դեմ: Բայց չէին անում, այլ՝ ձեռները ծալած, սպասում էին Իթթիհադի կոմիտեի ցուցումներին:

Իսկ Իթթիլաֆի կամ նույնիսկ Իթթիհադի ցուցակով ընտրված բուլղար, հույն, մակեդոնացի, ալբանացի, արաբ պատգամավորները խորհրդարանում բառիս բուն իմաստով մաքառում էին իրենց ազգային իրավունքների համար:

Հայ պատգամավորները կարծես չէին ուզում տեսնել, թե այդ այլազգի պատգամավորները խորհրդարանում ինչպես են իրենց հերոսաբար պահում, զայրալից ելույթներ ունենում թուրք պատգամավորների, Իթթիհադի կոմիտեի և նրա կառավարության վարած քաղաքականության դեմ: Սրանց համարձակ ելույթները պայմանավորված էին իրենց ազգային տարածքներում ունեցած բազմաքանակ զինված կազմավորումներով, որոնք զենքի չաչյունով էին իրենց իրավունքները խլում թուրքական կառավարության ձեռքից: Այլ խոսքով, այդ ազգերը կարողանում էին իրենց հակաթուրքական հրապարակային

կոիվը զուգորդել խորհրդարանական պայքարի հետ:

Այլազգի պատգամավորների խորհրդարանական պայքարի լարվածությունը ցույց տալու համար վկայակոչենք, օրինակ, ալբանացի պատգամավորներին:

Ի տարբերություն հայ պատգամավորների, որոնց մեծ մասը քաջատեղյակ էր սոցիալիստական ուսմունքներին և կարող էր օրերով պատմել դրանց բովանդակության և նպատակների մասին, ալբանացի պատգամավորների թվում որևէ սոցիալիստ չկար, նրանցից որևէ մեկը գաղափար անգամ չուներ սոցիալիզմի մասին: Բայց չգիտեին մի ուրիշ բան ևս՝ էժանագին դրոշներ ծածանել: Անկեղծ լեռնականների ցավագգաց հուզումներով նրանք գիտեին հարկավոր րոպեներին իրենց խորհրդարանական ուժգին ապտակները հասցնել հարազատ ժողովրդին ճնշող թուրք «ասպետներին»:

Խորհրդարանի հայ պատգամավորները լիովին մեկուսացված էին և շրջապատված արհամարհանքի մթնոլորտով:

Հայ գործիչների և հայության նկատմամբ նույնպիսի արհամարհանք թևածում էր նաև Բարձր Դռանը:

Սաիդ փաշայի դահլիճում կարճ ժամանակով (մեկ ամիս) ներքին գործերի նախարար աշխատած Ջեմալ բեյը* փորձում էր որոշ քայլեր անել Հայաստանում դրությունն ինչ-որ չափով շտկելու ուղղությամբ: Սրա պաշտոնավարման ժամանակ Զոհրապը և Վարդգեսը քանիցս գնացել էին նրա մոտ և խնդրել Հայաստանի նահանգներից մեկի կուսակալ նշանակել մի հայի: Ամեն անգամ նրանք մերժում են ստանում այն պատճառաբանությամբ, թե դա է՛լ ավելի կգրգռի քրդերին:

Դրա փոխարեն Ջեմալ բեյն առաջարկել էր, որ եթե հայերը կուսակալի համար հարմար մարդ ունեն, թող նրա թեկնածությունը ներկայացնեն կառավարությանը՝ Եվրոպական Թուրքիայի նահանգներից մեկում այդ պաշտոնին կարգելու համար:

Ջեմալ բեյի առաջարկը թուրք պետական պաշտոնյայի սովորական խաբեություններից մեկն էր:

---

* Զչփոթել հետագայի եռապետության անդամ, հայոց դահճապետներից Ջեմալ փաշայի հետ:

Կառավարությունը ոչ միայն մտածել անգամ չէր ուզում որևէ հայի որևէ բարձրաստիճան պաշտոն տալու մասին, այլև վերջին, հատուկենտ բարձրաստիճան պաշտոն ունեցողներին ազատում էր աշխատանքից:

1912 թ. մայիսի 2-ին խորհրդարանի մեծամասնության խմբակցության նիստում քննության էին դրվել մի քանի նախարարությունների հաշվետվություններն անցած 1911 թ. կատարած աշխատանքների մասին: Մտքերի փոխանակության ժամանակ անբավարար համարվեց միայն առևտրի նախարար, իթթիհադական Պետրոս էֆ. Հալաճյանի գործունեությունը: Նրան անվստահություն հայտնեց նաև կառավարությունը: Հալաճյանն աշխատանքից ազատվեց:

Իթթիհադն այդպես էր վերաբերվում նաև այլազգի մյուս քրիստոնյաների և ընդհանրապես ոչ-թուրք «խորթ» տարրերի նկատմամբ, որոնք պետության կենսագործունեության բոլոր ոլորտներից դուրս էին մղվում:

Առիթ ենք ունեցել ասելու, որ Օսմանյան պետության ազգաբնակչության ընդհանուր թվի 1/3-ը քրիստոնյա էր: Ուստի արդարացի կլիներ հուսալ, որ համամասնական թվով, 30 վալիներից (նահանգապետներ) 10-ը, 129 մութասերիֆներից (գավառապետներ) 43-ը և 578 գայմագամներից (գավառակապետներ) 192-ը քրիստոնյաներ լինեին: Դա արդարացի և քաղաքակիրթ կլիներ: Բայց Օսմանյան պետության մեջ անգամ մեկ քրիստոնյա վալի չկար: Կային մի քանի մութասերիֆներ և մոտ 20 գայմագամներ, որոնք բոլորն, առանց բացառության, թուրքացած քրիստոնյաներ էին: Երիտթուրքերը քրիստոնյաների այդ չնչին թիվն անգամ չհանդուրժեցին. 1911-1912 թթ. նրանք բոլորն անխնա դուրս մղվեցին պետական կառավարման ոլորտներից: Քրիստոնյաներն ազատվեցին նաև տնտեսական, հասարակական, մշակութային պաշտոններից, լուսավորության, բժշկության և մյուս բնագավառներից:

Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական ուսումնարանի առաջին ուսուցիչները հայեր էին եղել, բայց 1911-ին այնտեղ արդեն որևէ հայ դասախոս չկար: Այդ ուսումնարանից դուրս մղվեցին նաև բոլոր հույները: Պետական սանիտարական խորհրդի

կազմից նույնպես հեռացվեցին բոլոր հայերը[1]: Բայց չէ՞ որ նախկինում հայ բժիշկները հռչակված էին ողջ կայսրության մեջ. գուցե հիմա նրանք բոլորը զրկվել էին իրենց ընդունակություններից...

Վերհիշենք, որ աբդուլհամիդյան շրջանում գոնե կար հստակ մի կարգ. եթե որևէ հայ, հույն կամ այլ քրիստոնյա պաշտոնյայի տեղը ազատվում էր, այդ թափուր պաշտոնում, որպես կանոն, նույն ազգից հաջորդն էր նշանակվում: Այժմ պաշտոնից ազատված քրիստոնյայի փոխարեն անպայման իսլամ էր նշանակվում:

Խտրականությունն ամենուր էր:

Օսմանյան լուսավորության նախարարության բյուջեն կազմելու ժամանակ որոշվել էր 1911-1912 ուսումնական տարում դպրոցներին տրվելիք գումարներից, վերջապես, օրինական բաժին հանել ոչ-իսլամ հասարակությունների դպրոցներին: Իթթիհադական վարչությունը ցանկանում էր, որ յուրաքանչյուր ուսուցչի հասանելիք աշխատավարձն անմիջականորեն նրան վճարվեր կառավարության ներկայացուցչի միջոցով: Օրինակ՝ Բուրսայի կազաներից (գավառակ) մեկը, որի վարժարաններին հասանելիք տարեկան նպաստի գումարը կազմել էր 50 ոսկի, ուներ 60 քրիստոնյա (որից ավելի քան 20-ը՝ հայկական) տարրական կրթական հաստատություն՝ 100 ուսուցիչներով: Սրանցից յուրաքանչյուրին բաժին էր ընկնում ամսական 4.25 դուրուշ (34 կոպեկ)[2], այն դեպքում, երբ իսլամական դպրոցների ուսուցիչները 8-10 անգամ ավելի աշխատավարձ էին ստանում: Տարօրինակ և ապօրինի պահանջի դեմ բողոքեցին պատրիարքարաններն ու մերժեցին ընդունել այդ նպաստի գումարները: Միայն երկար վեճերի ու Միջպատրիարքարանային հանձնաժողովի ջանքերի շնորհիվ կարելի եղավ որոշել, որ քրիստոնյա ուսումնարաններին տրվելիք նպաստը հանձնվի առաջնորդարաններին: Այդ որոշումը, սակայն, ըստ էության չգործադրվեց, քանի որ կառավարությունը պատրիարքարաններին ուղարկած

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 97, 9 մայիսի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

թեղքերեում պատվիրել էր անորոշ ժամանակ սպասել[1]:

«Անորոշ ժամանակը» չարունակվեց մինչև օսմանյան պատգամավորական ժողովի ընտրությունների վերջը: Նոր խորհրդարանի առաջին իսկ նիստերից մեկում քննության առնվեց ոչ-իսլամ ուսուցիչների վարձատրման հետ կապված հարցը և որոշում ընդունվեց վերջ տալ ստեղծված անորոշությանը՝ ուսուցիչների ռոճիկի չափը թողնել նույնը և դրա վճարումը կատարել իշխանությունների ներկայացուցիչների միջոցով:

Հարցի քննարկման ժամանակ ոչ-մուսուլման պատգամավորներից ոմանք ընդվզեցին անարդար ու խտրական որոշման դեմ, բայց որևէ հայ պատգամավոր ծպտուն չհանեց:

Հայության նկատմամբ թուրքական իշխանությունների ատելությունը գնալով ծովանում էր: Տագնապ ու մտատանջություն հարուցող փաստերը բազում էին, մեկը մյուսից տհաճ:

Օրինակ՝ Կ. Պոլսի հասարակությունը կազմել էր հոբելյանական հանձնախումբ՝ նշելու համար հայտնի դերասանապետ և հանրային գործիչ Մարտիրոս Մնակյանի բեմական գործունեության 50-ամյակը:

Մնակյանի հոբելյանական հանդիսությունը տեղի ունեցավ 1912 թ. ապրիլի 28-ին: Այդ օրը տարբեր տեղերից ստացվեցին հարյուրավոր հեռագրեր, որոնց հեղինակները ջերմագին չնորհավորանքներ էին հղում մեծ արվեստագետին: Ստացված հեռագրերի 90 տոկոսը ուղարկել էին ռուսահայերը, հակառակ այն բանին, որ դերասանապետը ռուսահայ բեմի վրա եղել էր ընդամենը երեք թատերաշրջանում, այն էլ իր դերասանական կյանքի սկզբնական օրերին:

Ծագումով հայ լինելով՝ Մնակյանն իր արվեստով պատկանում էր թուրքական թատրոնին. նա իր կյանքի լավագույն մասը, ամբողջ 35 տարի, մաչել էր թուրքական բեմերի վրա: Նա էր եղել թուրքական թատրոնի հիմնադիրը:

Գնահատելով թուրքական թատրոնին Մարտիրոս Մնակյանի մատուցած գնահատելի ծառայությունը, «Մշակը» գրում

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 97, 9 մայիսի 1912 թ.:

էր. «**Հեյալի, մեյդան-օյինիի** և **մեհդայի** նախնական ու կիսավայրենի թատրոններին վարժած, դրանց խենէշ ու ապականիչ անբարոյականութիւններով առլեցուն, վայրի կրքերը բորբոքող խեղկատակութիւններով սնուած թուրք հասարակութեանը ազնիւ գաղափարներ ներշնչելու համար Մնակեանը մաքառել էր 35 տարի՝ չարունակ կուրծք տալով իր վրայ ծանրացող ճնշումներին: ... Իրենով էր սկսում բարոյականութիւն քարոզող կրթիչ ու ազնուացնող թուրք թատրոնը եւ իբրեւ այդ թատրոնի հիմնադիր ու մշակ, նա ամենամեծ իրաւունքն ունէր վայելելու թուրք հասարակութեան երախտագիտութիւնը...»[1]:

Բայց կատարվեց այն, ինչ պետք է կատարվեր թուրքական ազգայնամոլությամբ հագեցած մթնոլորտում: Հոբելյանական հանդեսին չեկավ գոնե մեկ թուրք, չնայած հրավիրատոմսեր էին ուղարկվել բազմաթիվ թուրք նշանավոր մարդկանց՝ նախարարների ու երևելի այլ պաշտոնյաների, գրողների ու հրապարակախոսների, մշակութային գործիչների, այդ թվում՝ թուրքական թատրոնների դերասանների ու դերասանապետների, որոնց մեծ մասը թատերական արվեստի դպրոց էր անցել հոբելյարի ձեռքի տակ: Սրանք բոլորը ոչ միայն չէին ընդունել հրավիրատոմսերը, այլև դրանք վերադարձրել էին ցուցադրաբար ու արհամարհանքով: Հոբելյանական հանձնախմբի անդամ կարգված թուրք գրող և ծերակուտական Էքրեմ բեյը, չբարեհաճելով ընդունել իրեն բերած տոմսակը, դա վերադարձրել էր ամենայն անպատկառությամբ, հայերի և նրանց կրոնի հասցեին վայրենի հիշոցների ուղեկցությամբ: Մեհմեդ V Ռեշադ սուլթանի առաջին քարտուղար Խալիլ Զիա բեյը, որը ևս հոբելյանական հանձնախմբի անդամ էր, նույնպես վայրենաբար մերժել էր իրեն ուղարկած տոմսակը: Եվ դա այն դեպքում, երբ բոլոր հայտագրերը կազմված էին թուրքերեն, նաև ողջ հոբելյանական միջոցառումն անցկացվեց թուրքերեն:

Թուրքերի՝ բոլոր տոմսակները վերադարձնելը ապշության էր մատնել հոբելյանական հանձնախմբին:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 108, 22 մայիսի 1912 թ.:

Ապերախտության և վայրենի չովինիզմի մի նոր ցցուն դրսևորում էր դա[1]:

Օսմանյան պատգամավորական նոր ժողովի աշխատանքներն սկսվելուց հետո, 1912 թ. մայիսին, գումարվեց Հայոց Ազգային ժողովի նոր նստաշրջանի առաջին նիստը, ուր կատարվեց նոր դիվանի ընտրությունը: Դիվանի կազմում ընտրվեցին Գաբրիել Նորատունկյանը (Ա ատենապետ), Հայկ Խոջասարյանը (Բ ատենապետ), բժիշկ Նազարեթ Տաղավարյանը (Գ ատենապետ), Երվանդ Բեյազջյանը (Ա ատենադպիր), Վահան Թեքեյանը (Բ ատենադպիր), Անտոն Թարաքը (Գ ատենադպիր):

Բայց Ազգային ժողովն այժմ բացարձակապես զրկված էր իր իրավունքներից: Ամեն անգամ, երբ պատրիարքարանից բողոք կամ խնդրանք էր հասնում Բարձր Դուռ, այնտեղից այլևս պատասխան չէր հետևում, լավագույն դեպքում՝ բանավոր հայտնում էին, թե կա օսմանյան խորհրդարան, որտեղ աթոռներ են զբաղեցնում նաև հայերը:

Ընդհանուր անտանելի վիճակը թևաթափ էր արել ազգային իշխանություններին: Հայ գործիչները տրամադրություն չունեին անգամ հոգալու ազգային առօրյա հոգսերը: Մարդիկ դադարել էին ազգային կյանքի որևէ բնագավառի համար ապագայի ծրագրեր կազմելու և իրագործելու մասին մտածելուց: Ահա՛ բազում օրինակներից մեկը.

Ամբողջ Թուրքահայաստանում ոչ միայն չկար որևէ բարձրագույն կրթական հաստատություն, այլև գոնե ֆրանսիական լիցեյների դասընթացներ ունեցող կրթական հաստատություն: Ամբողջ Թուրքահայությունն ուներ միայն երկու ազգային աշխարհիկ միջնակարգ դպրոց՝ Կարինի «Սանասարյանը» և Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանը, որոնք գործում էին հիմնականում ռուսահայերի բարեգործական հատկացումների միջոցով. Սանասարյան դպրոցը՝ աստրախանցի հարուստ առևտրական Հովսեփ Իզմիրյանցի հիմնադրամի հատկացրած գումարներով, Կեդրոնականը՝ նաև կովկասահայերից ստացված նվիրատվություններով:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 108, 22 մայիսի 1912 թ.:

Եվ ահա՛ Թուրքահայության համար մի բարձրագույն ուսումնական հաստատություն ունենալու հնարավորություն էր ստեղծվել:

Շուշեցի հայտնի մեծահարուստ Ավետիս Ղուկասյանը (1837-1902) մահից առաջ գրած կտակներից մեկով 250.000 ռուբլի էր հատկացրել Թուրքահայաստանում համալսարան հիմնելու համար[1]: Կտակը բացել էին նրա մահից (1902 թ. դեկտեմբեր) 10 տարի հետո, և հանգուցյալի փափագի կատարմանը ձեռնարկելու որևէ արգելք չկար: Բայց անագորույն վիճակը և ապագայի անորոշությունը Կ. Պոլսի հայկական իշխանություններին որևէ ցանկություն չէին թողել զբաղվելու Ավետիս Ղուկասյանի կտակի իրականացման հարցով:

Երբ Թուրքահայաստանի հայությունը ենթակա է ամենօրյա հալածանքների, կողոպուտի ու սպանության, երբ նրա գլխին մշտապես կախված է սովամահության սպառնալիքը, ավելորդ է անգամ խոսել այնտեղ համալսարան բացելու մասին, ասում էին հայոց պատրիարքարանում: Հիրավի, օտարի երկարամյա տիրապետությունը, սովն ու չարքաշ կյանքը այդ ժողովրդին քայքայել էին նյութապես, միաժամանակ մեծապես խաթարել նրա բարոյական ոգին, այլասերել ազգային հատկանիշները, նրան հետ չպրտել մտավորապես ու բարոյապես:

Թուրքահայաստան այցելած Ա-Դո-ն գրում էր. «Երբ մենք դիտում էինք այդ բոլորը, ապա մտքով տեղափոխում Կովկաս, ռուսահայ ժողովրդի մէջ ու համեմատում այդ երկու ժողովուրդների վիճակը, մեզ պաչարում էր մի թախիծ, մի ծանր մտահոգութիւն. որքան, որքա՜ն տաճկահայը յետ էր մնացել ռուսահայից, որը ռուսական կուլտուրայի շնորհիւ ահագին առաջադիմութիւն էր գործել, նիւթական, մտաւոր եւ բարոյական դիրքեր գրաւել. եւ մենք խորը համոզմունքով բացականչում էինք.

– Ինչո՞ւ թշւառ տաճկահայը վիճակակից չէ եղել ռուսահային»[2]:

---

[1] *Տե՛ս «Լումայ», № 6, նոյեմբեր-դեկտեմբեր, 1902:*

[2] *Ա-Դո, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները, էջ 350-351:*

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԲԱՆԻԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՅՈՑ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ

Օսմանյան կայսրությունը 1912 թվական էր մտել բազմապիսի չլուծված խնդիրների ծանրության տակ կքած: Բոլոր ներքին ու արտաքին մարզերում տագնապահարույց վիճակ էր: Տրիպոլիտանական պատերազմից հետո Կրետեի խնդիրն ավելի էր կնճռոտել: Բայց Բարձր Դռան համար մտահոգիչ էր հատկապես այն, որ բալկանյան պետությունների միջև գնալով տեղի էր ունենում մերձեցման գործընթաց, որն, անկասկած, կարող էր ուղղված լինել միայն Թուրքիայի դեմ:

Թուրքիան 1912 թ. գարնանն ընդհարվեց նաև մի ուրիշ տագնապի հետ. օսմանյան տիրապետության դեմ հանդես եկած Ալբանիայի ընդվզումը նույն թվականի հուլիսի սկզբին վերածվել էր ապստամբության[1]:

Ապստամբները նախապես, տարիներ շարունակ, մեծաքանակ զենք էին կուտակել: «Ալբանացիներն այս րոպեիս ունեն թե՛ զենք, թե՛ փող»,- հաստատում էր ռուսական "Русское Слово" թերթն իր 1912 թ. № 147-ում:

Ապստամբության շարժիչ ուժերը երկու հայտնի ցեղախմբերն էին՝ մալիսորները և միրիդիտները: Թուրքերի դեմ առաջինն արդար կռվի դուրս եկան մալիսորները: Մեծամասնությամբ կաթոլիկ այդ ցեղը բավական ժամանակ էր, որ սկսել էր թշնամանալ մուսուլմանների հետ: Զեռնոգորիայի սահմանագլխի ալբանացի ժողովրդի թվում միայն 12 հազար մուսուլման կար[2]: Մալիսորներն ունեին ընդամենը 3000-4000 զինյալ՝ 40.000-ի հասնող օսմանյան բանակի դեմ: Բայց չուտով նրանց միացավ Ալբանիայի ամենաբազմաքանակ և ուժեղ՝ միրիդիտ-

---

[1] Տե՛ս **И. С. Галкин,** *Дипломатия европейских держав в связи с освободительным движением народов Европейской Турции в 1905-1912 гг., изд-во Московского университета, Москва, 1960, с. 164.*

[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1269, 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

ների ցեղախումբը, որն ի վիճակի էր զորահավաքի ենթարկելու մինչև 20 հազար մարդ[1]:

Առաջին իսկ չաբաթներից ապստամբները հասան լուրջ հաջողության, որի հիմնական պատճառներն էին նրանց բնածին քաջությունը և մանավանդ երկրի լեռնային անմատչելիությունը:

Ալբանական խրոխտ ապստամբության առաջ երիտթուրք ղեկավարները գլուխները կորցրել էին[2]:

Թուրքերի դեմ զենքը ձեռքին կռվող ալբանացուն օսմանյան խորհրդարանում անձնուրացությամբ, առանց վախի պաշտպանում էին ալբանացի պատգամավորները: Այդպես էր ոչ միայն Ալբանիայում լայն ծավալ ստացած ապստամբության օրերին, այլև խորհրդարանի գոյության անցած չորս տարիների ընթացքում: Ալբանացի պատգամավորների արիությանը, կորովին ու տաղանդին բազմիցս անդրադարձել էր եվրոպական մամուլը, չեշտելով, որ իրենց ազգային շահերին վերաբերող մեծ ու փոքր որևէ խնդիր նրանց ուշադրությունից չի վրիպում:

Հայկական մամուլը խորհրդարանի հայ պատգամավորներին կոչ էր անում հետևել ալբանացի քաղաքական գործիչների օրինակին:

«Աւետաբերը» գրում էր. «Հակառակ ժողովին (պատգամավորական ժողովի:- Հ. Ս.) ահագին մեծամասնութեան դժկամութեան եւ դժգոհութեան՝ անոնք (օսմանյան խորհրդարանի ալբանացի պատգամավորները:- Հ. Ս.) առիւծի պէս անվեհեր կը դիմագրաւեն ամէն հակառակութեանց, եւ եթէ ամէն անգամ իրենց ուզածը ընդունիլ տալու հնարաւորութիւն չեն ունենար, գոնէ ամբողջ աշխարհ ալպանական ցաւերով կը զբաղցնեն: Այս ալպանացի երեսփոխանները քաղաքական մեծ քաջութիւն եւ հաստատամտութիւն ցոյց տուին: Մեր հայ երեսփոխանները, ընդհակառակը, մասամբ իթթիհատական եւ մասամբ ալ անոնց համակիր անձերէ կազմուած ըլլալով, գոնէ անգամ մը քաղաքացիական քաջութիւն չունեցան Օսմ[անեան] հայութեան տա-

---

[1] Տե՛ս **«Արօր»**, № 5-6, մայիս-հունիս, 1911, էջ 183-185:

[2] Տե՛ս **«Միտք»**, № 18, 30 հունիսի 1912 թ.:

ռապանքները, ծովացեալ ցաւերը ազդուօրէն եւ փաստացի կերպով ներկայացնելու Օսմ[անեան] Երեսփ[ոխանական] Ժողովին առջեւ»[1]:

Ալբանիայի սահմաններն անհայտ էին, անցյալը՝ մութ, նրա բնակչության ծագումը՝ առեղծվածային: Վայրագ ու անգիտակից ալբանական ցեղերը դարեր շարունակ իրենց անունը կապել էին Թուրքական բռնակալության հետ, մասնակից դարձել նրա գործած ոճիրներին: Արնաուտը Թուրքական կայսրության տրորված ժողովուրդների սարսափն է եղել: Քաղաքակրթությամբ լինելով ծայրահեղորեն հետամնաց, Ալբանիան չուներ պետականության համար պատրաստի գործիչներ, բազմատարրության պատճառով այնտեղ չկային ազգային միություն ու լիակատար համերաշխության ոգի, հետևապես չէր կարելի սպասել, թե Օսմանյան կայսրությունից անջատ ինքնուրույն ալբանական պետություն կստեղծվի: Բայց այդ ամենի փոխարեն Ալբանիան՝ Եվրոպական Թուրքիայի այդ Քուրդիստանը, ազատագրական գոռ պայքարի էր ելել՝ ունենալով կամք, վճռականություն ու զենք, որոնցից որևէ մեկը Թուրքահայությունը չուներ այդ ճակատագրական պահին:

Նշենք նաև, որ Ալբանիայի վրա վաղուց ի վեր աչք ունեին՝ մի կողմից Ավստրո-Հունգարիան, մյուս կողմից՝ Իտալիան: Այդ երկու պետություններից ում ձեռքն էլ ընկներ երկիրը, նա էլ կդառնար լիակատար տեր Ադրիական ծովում: Ահա՛ այս հանգամանքն է, որ իրար էր խառնել նշված պետություններին, որոնցից ամեն մեկը ճիգեր էր թափում մյուսից հափշտակելու առաջնության դափնին: Կտրվելով Թուրքիայից, Ալբանիան կդառնար կռվախնձոր պետությունների ձեռքում, դրանով իսկ կխախտվեր եվրոպական խաղաղության հավասարակշռությունը, որից ավելի շատ կվնասվեր Թուրքիան, քան որևէ մի այլ պետություն: Ուրեմն հենց իր շահի տեսակետից Թուրքիան պետք է աշխատեր հնար եղածին չափ շուտով հանգցնել կրակը, քանի հրդեհը դուրս չէր եկել իր նեղ սահմաններից: Այդ նշանակում

---

[1] **«Աւետարեր»**, *№ 33, 17 օգոստոսի 1912 թ.:*

էր, որ Ալբանիան պետք է լայն ինքնավարություն ստանար: Բայց դրա փոխարեն Բարձր Դուռը ձեռնարկում էր բոլոր միջոցները՝ ապստամբությունը որքան հնարավոր է արագ ճնշելու համար: Ամեն օր Կ. Պոլսից զորքեր էին ուղարկվում Ալբանիա[1]: Հազարավոր պահեստային զինվորներ բանակ էին կանչվել, որոնց թվում կային նաև շատ քրիստոնյա, այդ թվում հայ զինվորներ: Բայց մայրաքաղաք Կ. Պոլսում ստացվող լուրերը սփոփիչ չէին:

Ալբանիայում ծագած ապստամբությունը ծայրահեղորեն սրել էր նաև կայսրության ներքին դրությունը: Կառավարությունը գիտակցում էր, որ ապստամբությունն սպառնալի վիճակ է ստեղծելու Ռումելիի համար և կարող է չղթայական ուժով զարկ տալ հակաթուրքական տրամադրություններին ամբողջ Բալկաններում[2]:

Գնալով բարդացող վիճակը ռազմական նախարար Մահմուդ Շևքեթ փաշային ստիպեց դիմել խորհրդարանին՝ վավերացնելու զինվորական մի քանի օրենքներ: Իտալիայի դեմ պատերազմում մեծ ծախսեր կատարած Թուրքիայի բյուջեն հազիվ թե կարողանար դիմանալ պահանջվող ֆինանսական նոր հատկացումներին:

Այն բանից հետո, երբ մեծ վեզիր Սաիդ փաշան ֆինանսների նախարար Նայիլ բեյին ստիպեց լրիվ ծավալով կատարել խորհրդարանի վավերացրած զինվորական նոր օրենքներով նախատեսված միջոցառումների ֆինանսավորումը, վերջինս հայտարարեց, թե ինքը չի կարող կատարել Մահմուդ Շևքեթ փաշայի անվերջ պահանջները, քանի որ երկիրը ի վիճակի չէ տոկալու նորանոր ծախսերի ծանրության տակ: Այդ հայտարարությունից հետո Նայիլ բեյը 1912 թ. կեսերին հրաժարվեց պաշտոնից:

Երկիրը տնտեսական խոր ճգնաժամ էր ապրում, իսկ Իթթիհադի պարագլուխները նախկինի նման ավելի շատ մտածում էին իրենց բարեկեցության ու առաջխաղացի մասին: Ալբանիա-

---

[1] **«Աւետաբեր»**, № 33, 17 օգոստոսի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Արօր»**, № 5-6, մայիս-հունիս, 1911 թ., էջ 183-185:

յում տեղի ունեցող ապստամբությունն առիթ դարձավ, որպեսզի 1911 թ. աշնանն իրենց պաշտոններից վտարված ծայրահեղ ազգայնամոլ նախկին նախարարները զանազան ձևերով նորից զբաղեցնեն իրենց աթոռները: Դա հնարավոր եղավ, որովհետև Իթթիհադի կոմիտեն այդ միջոցին, ավելի քան երբեք, իրեն զգում էր զորավոր, հակառակ նրան, որ արտաքին քաղաքականության մեջ մեկը մյուսի հետևից ցուցաբերում էր իր անճարակությունը: Փոստի և հեռագրի նախարար դարձած Թալեաթ բեյը վճռական էր տիրելու իր նախկին աթոռին: Այն բանից հետո, երբ ներքին գործոց նախարարի տեղակալ Հաջի Ադիլ բեյը, իբրև բարեկարգիչ հանձնաժողովի նախագահ, ուղարկվեց Ռումելի, նրա աթոռը գրավեց Թալեաթը՝ թողնելով փոստի և հեռագրի նախարարի պաշտոնը[1]: Եվս մի քայլ էր պետք նախարարի նախկին աթոռին տիրանալու համար:

Ալբանիայում Իթթիհադի սանձարձակ գործողությունները խիստ քննադատության էին ենթարկվում եվրոպական մամուլի, նշանավոր դիվանագետների, գիտության և արվեստի գործիչների կողմից, որոնք օսմանյան կառավարությանը խորհուրդ էին տալիս գնալ ոչ թե ալբանացիների հետ հետագա առճակատման, այլ փորձել նրանց հետ ընդհանուր լեզու գտնել, ձեռնարկել անհրաժեշտ բարեփոխումներ ապստամբ երկրում:

Ալբանացի ժողովրդի կողմն էր նաև հայերի համակրանքը: Այդ համակրանքը փոխադարձ էր[*]*: Վանի «Աշխատանք» թերթը*

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 110, 24 մայիսի 1912 թ.:*

[*] *Ժամանակի հայկական մամուլում տեղեկություններ էին հրապարակվել (տե՛ս օրինակ՝ «Ժամանակ», № 1273, 10 (23) նոյեմբերի 1912 թ.), թե ալբանացիները մտադիր են եղել իրենց ազատագրական պայքարի հաջողության դեպքում Ալբանիայի ղեկավար կարգել մի հայի՝ ալբանական իշխան Տիգրան Շեհապին, որին թուրքական իշխանություններն աքսորել էին և 1910 թվականից գտնվում էր Հարավային Աֆրիկայում: Հյուսիսային Ալբանիայի գլխավոր անձը նրան նամակով խնդրել էր վերադառնալ Ալբանիա և երկրի ղեկն ստանձնել: Այդ մասին Քեյփթաունից հեռագրել էին «Դեյլի տելեգրաֆ» թերթին: Սակայն որևէ արխիվում կամ ալբանական ապստամբությանը նվիրված աշխատություններում չենք հանդիպել այդ փաստը հաստատող որևէ վկայության:*

գրում էր. «Ինչո՞ւ խրտնել ազգութիւններու ինքնավարութենէն, երբ դա իրական պահանջ է ու պետութեան շահն ալ այդ կը պահանջէ: Ինչո՞ւ դէմ գնալ ժողովուրդներու տարրական իրաւունքներուն եւ այդպիսով ստեղծել նոր Ալբանիա ու Արաբիա»[1]:

Իթթիհադի կոմիտեն, սակայն, տրամադիր չէր անսալու ո՛չ երկրի ներքին ընդդիմութան ձայնին և ո՛չ էլ հետևելու եվրոպացիների խորհրդին: Ավելին, երիտթուրքական կուսակցության մեջ գնալով ուժեղանում էր իշխանությունն ամեն գնով պահելու կողմնակիցների թևը: Նրանցից շատերը կարծում էին, թե կուսակցությանը կարելի է փրկել միայն ուժեղացնելով պատժամիջոցները Ալբանիայի և ընդհանրապես կայսրության ոչ-թուրք բնակչության դեմ, մեկընդմիշտ լուծել պետության կայունության հարցը կամ թաղվել նրա փլատակների տակ:

Ալբանական խնդրի ուժով կյանքի կոչված զինվորական նոր օրենքներից առավել ծավալունը սենատում քննության դրված զինակոչի մասին օրենքն էր, որի տրամադրության համաձայն՝ մինչև 45 տարեկան բոլոր քաղաքացիները, անկախ ազգային ու կրոնական պատկանելությունից, պիտի կանչվեին զորավարժանքների, որպեսզի հարկ եղած պարագայում զենքի տակ մտնեին[2]: Օրենքը կարող էր տեղի տալ ծանր հետևանքների՝ մեծ վնասներ հասցնելով երկրի տնտեսությանը:

Զինակոչի մասին օրինագծի քննարկումը սենատում մեծ մտատանջություն էր առաջ բերել հույների, հայերի և բուլղարների պատրիարքարաններում, որոնք գործակցաբար բողոքի ձայն բարձրացրին դրա դեմ:

Այս անգամ հատկապես համառ էր հայոց պատրիարքարանը: Հովհաննես արք. Արշարունի պատրիարքը խնդրի կապակցությամբ դիմումներ էր հղել գրեթե բոլոր նախարարներին և խնդրել նրանց օժանդակությունը օրինագիծը բարեփոխելու համար: Նրա գլխավոր փաստարկն այն էր, որ մինչև 1908 թ. կայսրության բոլոր քրիստոնյաներն իրենց ծննդյան օրից ենթարկվել են միանվագ տուրքի՝ ամբողջ կյանքում զինվորական

---

[1] **«Աշխատանք»**, № 28, 15 օգոստոսի 1911 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 10, 24 մայիսի 1912 թ.:

ծառայության չկանչվելու համար: Հիմա ինչո՞ւ նրանք բոլորը պետք է պարտավորված լինեն ծառայելու բանակում այն դեպքում, երբ նրանց զինակոչի տարիքի որդիներն արդեն կատարում են իրենց զինվորական պարտքը[1]:

Կ. Պոլսի հայկական թերթերը նշում էին, որ ջղագրգիռ բնավորություն ունեցող և իր մտածածն արտահայտող հայոց պատրիարքը նախարարների հետ հանդիպումների ժամանակ տեղի թե անտեղի գործածում էր խիստ և անհարկի բառեր: Օրինակ՝ Մահմուդ Շևքեթ փաշայի մոտ զրույցի ընթացքում նա ասել էր. «Փոխանակ միլիտարիզմին ուժ տալու, եթե ուժ տայիք արդարությանը՝ շատ ավելի մեծ ծառայություն մատուցած կլինեիք երկրին»: Ռազմական նախարարին, անշուշտ, հազիվ թե հաճելի է եղել լսել այդ խոսքերը, թեև նա արտաքինից ցույց էր տվել, թե համակրանք է տածում պատրիարքի խոսքերին[2]:

Արշարունի պատրիարքը չափազանց լարված մթնոլորտում էր զրույց ունեցել օսմանյան կոմիտեի ամենազորավոր անդամներից մեկի՝ ներքին գործոց փոխնախարար Թալեաթ բեյի հետ: Հանդիպումից հետո վերջինս իր «հայ բարեկամներին» խորհուրդ էր տվել ազդել պատրիարքի վրա, որպեսզի նա սահման դնի իր բառերին: Թալեաթը դրանով, անկասկած, հետապնդել էր մի նպատակ ևս՝ Հայոց Ազգային ժողովում դժգոհության հոսանք առաջ բերել պատրիարքի դեմ և խորացնել պառակտումը Կ. Պոլսի հայության մեջ[3]:

Իսկ Ալբանիայում կրակը հանգցնել չէր հաջողվում:

Եվրոպական կառավարություններից որևէ մեկը չէր հավատում, թե ալբանացիները ապստամբության ընթացքում որչափ էլ ուժեղ ու տոկուն լինեն, հազիվ թե կարողանան մինչև վերջ դիմանալ ծանր պայքարին և հասնել իրենց նպատակին՝ ինքնավարության, քանի որ «բազմացեղ են և կուլտուրապես հետամնաց»: Բայց պատահեց այն, ինչ պատահելու էր. շատ չանցած, ալբանացիները ոչ միայն ինքնավարություն ստացան, այլև ան-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 10, 24 մայիսի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

կախ պետականության տեր դարձան:

Եվ ինչ օգուտ, որ հայ ժողովուրդը բազմացեղ չէր, հազարամյակների բարձր մշակույթ ուներ, նրա երկիրը նույնպես լեռնոտ էր և հարմար էր ազատագրական կռվի համար: Նա հիմա զինաթափ էր, հետևապես, արհամարհված:

Մինչ ալբանացիները համառորեն կռվում էին իրենց ինքնավարության համար, այդ նույն ժամանակ, Թուրքահայությունը ոչ միայն ինքնավարության մասին ծպտուն անգամ չէր հանում, այլև իր ֆիզիկական գոյության պահպանումն էր միայն համարում գերնպատակ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԶՈՒՄԸ ԻԹԹԻՀԱԴԻՑ

Անտանելի դարձնելով Թուրքահայության կյանքը, Իթթիհադը միաժամանակ 1911 թ. սկզբներից տարբեր առիթներով հարվածներ էր հասցնում Դաշնակցությանը և այլևս հաշվի չէր առնում նրա տեսակետներն ու կարծիքը Թուրքահայության հարցերին անդրադառնալիս:

Բայց նույնիսկ Դաշնակցությունը ստորացնելու երիտթուրքերի բացահայտ վերաբերմունքի պայմաններում ընդհուպ մինչև 1912 թ. սկիզբը ՀՅԴ ղեկավարությունը համբերությամբ կուլ էր տալիս իրեն հասցրած վիրավորանքները: Ավելին, կուսակցության առանձին ղեկավար գործիչներ շարունակում էին հավատալ, թե իրենց նկատմամբ Իթթիհադի անբարյացակամ վերաբերմունքը ժամանակավոր բնույթ ունի և կայսրության շուրջը զարգացող վտանգավոր իրադարձությունները երիտթուրքերին կստիպեն համախմբել իրենց հավատարիմ բոլոր ուժերին:

Ռուս արևելագետ Արիադնա Տըրկովան, որը 1911 թ. աշնանը եկել էր Կոստանդնուպոլիս, այստեղ դեկտեմբերին «Ազատամարտի» խմբագրությունում հանդիպել և զրույցներ էր ունեցել Թերթի աշխատակիցների և խմբագիր Վռամյանի հետ:

«Նա (Վռամյանը:- Հ. Ս.) մոտեցավ ինձ և շատ սիրալիր խոսեց ֆրանսերեն,- վերհիշել էր Տըրկովան:- Ռուսերեն նա չգի-

տեր, որովհետև ծագումով Վանից էր և կրթություն էր ստացել Փարիզում: Հենց այդ առաջին հանդիպման ժամանակ Վռամյանն ինձ հետ խոսեց երիտթուրքերի մասին, որպես իրենց հաստատուն համախոհ:

– Այո՛, իհարկե, Իթթիհադը շատ սխալներ ունի: Բայց վաղո՞ւց են նրանք իշխանության: Մի՛ մոռացեք, թե ինչ ժառանգություն ստացան նրանք համիդյան ռեժիմից: Նրանք ձգտում են օրինականություն ստեղծել: Բոլոր դեպքերում՝ նրանց պետք է սահմանադրության անկեղծ բարեկամներ համարել: Եթե դուք իմանայիք, թե ինչպիսի՜ ծանր լծի տակ էր ապրում երկիրը մինչ հեղափոխությունը: Եվ հետո, երիտթուրքերի մեջ կան ազնիվ մարդիկ, որոնց կարելի է ապավինել. խորհրդարանի ներկա նախագահ Ահմեդ Ռիզա բեյը, Հուսեյն Ջահիդը: Վերջապես, Թալեաթ–բեյը: Նա կրթություն չունի, բայց շատ բոցավառ և ազնիվ հայրենասեր է: Նա հասկանում է, որ Թուրքիայի փրկությունը բարենորոգումներն են:

– Դա՝ Թուրքե՞րի համար: Իսկ հայերի համար որտե՞ղ է փրկությունը: Զէ՞ որ, համենայն դեպս, երիտթուրքերի ժամանակ էլ եղավ կոտորած Ադանայում: Մի՞թե դուք երաշխավորված եք կրկնությունից:

Իմ զրուցակիցների աչխույժ դեմքերն անմիջապես մթնեցին: Ջարդ: Ինչ սարսափելի արձագանք, ինչպիսի՜ հիշողություններ են արթնացնում այդ նողկալի, զազրելի բառերը ենթակա ժողովրդի հոգում, որի գլխին, որպես մշտական սպառնալիք, բարձրացված է տիրոջ արյունոտ բռունցքը...

– Ո՛չ, ո՛չ: Դա չի կարող կրկնվել,– կտրուկ և փութկոտ, չափազանցված փութկոտությամբ ասաց Վռամյանը,– Ադանայի ջարդը հին ռեժիմի մնացորդն էր. Իթթիհադն ինքն էր վրդովված: Նրանք ամեն ինչ արեցին... Բայց, իհարկե, ես չեմ թաքցնում: Մեր՝ դաշնակցականներիս, դրությունը շատ ծանր էր...»[1]:

Այնուհետև տեղի է ունենում Տրրկովայի զրույցը խմբագրության աչխատակիցների հետ: «Հիմա ո՞րն է ձեր քաղաքա-

---

[1] **Аріадна Тыркова**, *Старая Турція и младотурки. Годь вь Костантинополь, Петроградь, 1916, с. 76.*

կան տակտիկան», հարցումին նա ստանում է հետևյալ պատասխանը. «Հիմնականում դաշնակցել Իթթիհադի հետ... Մենք գործում ենք՝ հենվելով գլխավորապես երիտթուրքերի ձախ թևի վրա: Իսկ «Նրանցից դուք ո՞ւմ եք համարում ձախեր» հարցումին հետևել էր այս բացատրությանը. «Բոլոր իսկական սահմանադրականներին՝ Թալեաթ բեյին, Ջավիդ բեյին, Խալիլ բեյին, Հաջի Ադիլ բեյին, Նազըմ բեյին... Մենք նրանց հետ շատ մոտ ենք: Միայն շատ դժվար է ստիպել նրանց, որ բարձրացնեն քաղաքական հարցեր: Դե, նրանք շատ անկիրթ են: Ստիպված ենք ամիսներով նրանց բացատրել այնպիսի պարզ հասկացություններ, ինչպիսին է համեմատական ներկայացուցչությունը: Նրանց մեջ միակ կրթված մարդը Ջավիդ բեյն է: Կոմիտեի հետ շատ մոտիկ լինելով՝ մենք հաճախ նրանց հետ չենք քվեարկում և ընդհանրապես պահպանում ենք լիարժեք անկախություն: Բայց հենվում ենք նրանց վրա և հույսներս կապում ենք միայն նրանց հետ: Եթե երիտթուրքերը ձախողվեն՝ մենք նույնպես կորած ենք»[1]:

Տըրկովայի հետ հանդիպման ժամանակ նույն տեսակետն այսպես էր ձևակերպել օսմանյան խորհրդարանի անդամ Գարեգին Փաստրմաճյանը. «Երիտթուրքերը մեզ հետ մոտ են ամենից առաջ այն պատճառով, որ նրանք անկեղծ սահմանադրականներ են»[2]:

Այսպես էր Դաշնակցությունը բնորոշում երիտթուրք պարագլուխներին նույնիսկ 1911-ի վերջավորությանը:

Արիադնա Տըրկովան պատմել է, որ եթե դաշնակցական ղեկավարներից Վռամյանը 1911 թ. դեկտեմբերին իր կուսակիցներին համարում էր երիտթուրքերի դաշնակիցներ, ապա արդեն 1912 թ. գարնանը, երբ խորհրդարանը ցրվեց և Իթթիհադը նոր ընտրությունների ժամանակ անօրինություններ կատարեց, նույն Վռամյան իրեն ասում էր. «Կարծում եմ՝ մենք սխալվեցինք: Մենք նրանց համարում էինք անկիրթ, բայց ազնիվ մար-

---

[1] ***Аріадна Тыркова**, Старая Турція и младотурки. Годь вь Костантинополь, с. 78, 79.*

[2] *Նույն տեղում, էջ 66:*

դիկ: Իսկ նրանք խաբեբաներ, քաղաքական սրիկաներ են՝ պատրաստ ամեն ինչի, որպեսզի կպչեն իշխանությանը: Եթե այս անգամ էլ նրանք մեզ խաբեն, ապա ես արձակում եմ ձեռքերս: Այդ դեպքում մենք այլ ձևով կգործենք»[1]:

Տրրկովան շարունակում էր. «Նրա (Վռամյանի:- Հ. Ս.) ենթադրություններն իրականացան: Ընտրությունների ժամանակ երիտթուրքերը ամենաբացահայտ ձևով խաբեցին հայերին, չպահպանեցին որևէ բան, որ խոստացել էին, ընտրական օրենքը չուռ էին տալիս և խորհրդարան էին ուղարկում՝ ում ուզում էին»*:

Իթթիհադի հետ կապերը խզելու հետևողական կողմնակիցներ էին Սիմոն Զավարյանը և Հարություն Շահրիկյանը[2], որոնք գտնում էին, որ խզումն արդեն ուշացած է և կուսակցության մյուս ղեկավարներին կոչ էին անում որքան կարելի է շուտ ազատվել երիտթուրքերի կապանքներից:

Ավետարանականների օրգան «Աւետարերը» (Կ. Պոլիս) ճիշտ էր համարում Իթթիհադից խզվելու Դաշնակցության մտադրությունը: Թերթը գրում էր. «Թէեւ Դաշնակցութիւնը քաղաքական ձեռնհասութեան տիպար օրինակ մը չէ եղած ցայժմ եւ յաճախ գաղափարամոլութենէ եւ իր վարիչներուն անփորձութենէն մղուելով շատ մը սխալ եւ աղիտաբեր ընթացքներու մէջ գտնուած է, սակայն ան իր կենսունակութիւնը պահպանելու համար միշտ գերագոյն ջանքեր ըրած է, եւ չնայելով իր կարգ մը առաջնորդներուն վարդապետական մոլեռանդութեան ու իրականութեան հանդէպ ցուցադրած միակողմանի

---

[1] **Аріадна Тыркова**, *Старая Турція и младотурки. Годь въ Костантинополь, с. 79-80.*

* Առաջ անցնելով Ա. Տրրկովան ավելացնում էր. «Մեզանից ոչ մեկն այն ժամանակ չէր կարող մտածել, որ այդ բոլոր խաբեությունները մանկական խաղեր էին՝ համեմատած այն բոլոր սարսափների հետ, որոնք սպասվում էին առջևում և՛ հայ զանգվածների, և՛ նրա իդեալիստ առաջնորդների համար: Իթթիհադի գլխավոր առաջնորդ Թալեաթ բեյը, որին Վռամյանը համարում էր ամենաազնիվ և ամենամաքուր երիտթուրքերից մեկը, դարձավ հայ ժողովրդի դահիճը, Վռամյանին ու նրա ընկերներին սպանողը» (նույն տեղում, էջ 80):

[2] Տե՛ս **«ՎԷՄ»**, № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 17:

մտածելակերպին, ձգտած է կեանքի հրամայողական պահանջներուն առջեւ ի վերջոյ խոնարհիլ եւ իրականութեան դառն դասերէն օգտաչատ խրատներ քաղել»[1]:

Հայկական հակադաշնակցական մամուլը հարցնում էր, թե ինչո՞ւ 1912 թ. գարնանից Դաշնակցությունը որոշեց վերջնականապես խզվել Իթթիհադից, այն դեպքում, երբ դեռ մի քանի շաբաթ առաջ ՀՅԴ Արեւելյան շրջանի ռայոնական ժողովն իր մի շրջաբերականում ազդարարել էր, թե «այսօր մենք բախտ ունինք վայելելու մեր ազատութիւնը»[2]:

Դաշնակցականներն այդ հարցին պատասխան չէին տալիս, բայց չեչտում էին, որ խորհրդարանական վերջին ընտրություններն իրենց համոզել են, որ Իթթիհադի և Դաշնակցության ջրերն այլևս չեն կարող մի առվով գնալ:

ՀՅԴ օրգան «Բութանիա» թերթը գրում էր, որ իթթիհադականների կատարած կեղծիքները ամբողջովին պարզվեց պառլամենտական վերջին ընտրությունների ժամանակ: Կառավարության կողմից ի վնաս հայերի կատարվեցին անթիվ-անհամար կեղծիքներ՝ ոտնակոխ անելով այն համաձայնությունը, որ տեղի էր ունեցել Դաշնակցության և կառավարող կուսակցության միջև, համաձայն որի պետք է փոխադարձաբար պաշտպանվեին երկու կողմերի թեկնածուները: Դրանից առաջ ունեցած դժգոհությունը և ընտրությունների հետևանքները լցրին դաշնակցականների համբերության բաժակը, որի հետևանքով նրանք հեռացան կառավարող կուսակցությունից և նրա իշխանությունից[3]: Պարբերականը չեչտում էր, որ իրենք տարիներ շարունակ ամեն ինչ արել են, որպեսզի երիտթուրք պարագլուխները հրաժարվեն հայության նկատմամբ տածած ատելությունից, հակահայկական գործնական բիրտ քաղաքականությունից, բայց այդ բանը չեն հաջողել:

Նույն «Բութանիա» թերթն իր մի ուրիշ համարում ևս անդրադառնում էր այդ խնդրին. «Ամէն պարագայի տակ իրենցմէ

---

[1] **«Աւետարեր»**, № 8, 22 փետրվարի 1913 թ.:

[2] Տե՛ս **Լէօ**, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, էջ 66:

[3] **«Բութանիա»**, № 10, 11 (24) նոյեմբերի 1912 թ.:

(երիտթուրքերից:– Հ. Ս.) ո՛չ նուազ անկեղծութեամբ աշխատեցանք (դաշնակցականները:– Հ. Ս.) ամրապնդելու նոր ռէժիմը: Շատերը հիասթափուեցան եւ հեռացան անոնցմէ, փոխադրելով իրենց անվստահութիւնը անձերու վրայէն նաև դէպի ռէժիմը: Սակայն, մենք չարունակեցինք հաւ[ա]տալ Երիտասարդ Թուրքերուն, կամ աւելի ճիշդը՝ ուզեցինք հաւ[ա]տալ, քանի որ պարզ կերպով կը տեսնէինք թէ Սահմանադրութիւնը Թուրքիոյ անկախութեան վերջին կայանն է»[1]:

*Բայց այդ բանն այնպես էլ դաշնակցականները չհաջողեցինք, չարունակում էր թերթը, թեև **«Մենք եղանք՝ կարելի է ըսել թէ աւելի Երիտասարդ Թուրք քան թէ նոյն իսկ իրենք էին...** (ընդգծումը մերն է:– Հ. Ս.)»[2]:*

Դառնաղի՜ խոստովանություն...

*Դաշնակցության նշանավոր գործիչ Վահան Փափազյանը շատ տարիներ հետո հանձն էր առնում. «... Արդար պէտք է ըլլալ ըսելու, որ (Իթթիհադից:– Հ. Ս.) Դաշնակցութեան խզումէն առաջ հայութեան բազմաթիւ **տարրերը** արդէն իսկ խզած էին ամէն կապ Օսմ[անեան] Սահմանադրութեան (Իթթիհադի ?:– Հ. Ս.) հետ՝ կորսնցնելով ամէն հաւատ ու վստահութիւն»[3]: «Բութանիան» գրում էր. «Կարգը եկաւ մեր (դաշնակցականների:– Հ. Ս.) հիասթափումին, թէպէտ ամէնէն վերջը, բայց աւելի զօրաւոր էր մեր այդ հիասթափումը՝ նոյնքան աւելի ալ հիմնաւոր եղաւ մեր անվստահութիւնը, որովհետեւ այդ անվստահութիւնը կը բղխէր մեր երկար զննութենէն ու փորձառութիւններէն: Եւ այժմ մեր ներկայիս անկեղծ համոզումն է, որ Օսմանեան Սահմանադրութենէն բան դուրս չի գար: Թուրք կառավարութիւնը որոնցմէ ալ որ կազմուի, խոստումներէ զատ ո՛չ մէկ բանի ընդունակ է»[4]:*

*ՀՅԴ ղեկավարությունը վերջապես սրբագրեց ճակատագրական **Մեծ Սխալը**՝ խզեց կապերը Իթթիհադից, չեղյալ հայ-*

---

[1] ***«Բութանիա»**, № 17, 27 դեկտեմբերի 1912 թ. (9 հունվարի 1913 թ.):*

[2] *Նույն տեղում:*

[3] ***Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Բ, էջ 89:*

[4] ***«Բութանիա»**, № 17, 27 դեկտեմբերի 1912 թ. (9 հունվարի 1913 թ.):*

տարարեց 1907 թ. դեկտեմբերին Փարիզում կնքած Իթթիհադ - Դաշնակցություն դաշինքը, որն աղետաբեր էր եղել Թուրքա-հայության համար:

Դաշնակցություն - Իթթիհադ «եղբայրական դաշինքը», որը տևել էր 52 ամիս, այլևս փլուզված էր:

Դաշնակցության կատարած վճռական քայլը, այնուամենայնիվ, սփոփիչ էր. թեև մեծ ուշացումով, վերջապես նա դուրս էր պրծել Իթթիհադի ճիրաններից:

Դա 1912 թ. ապրիլին էր...*

Դաշնակցության կատարած խզումը ջերմորեն ողջունեցին հայկական հասարակության զանազան քաղաքական ուժերն ու հոսանքները, հայ նշանավոր հասարակական ու մշակութային շատ գործիչներ:

Ալեքսանդր Շիրվանզադեն գրում էր. «... Ուրախալի է մանաւանդ այն, որ երիտասարդ Թուրքերի երէկւայ հայ դաշնակիցները (դաշնակցական ղեկավարները:- Հ. Ս.) սթափւել են վերջապէս, եւ երես դարձրել նրանցից ու աշխատում են գործել հակառակ ուղղութեամբ»[1]:

Շիրվանզադեն ուրախալի էր համարում, որ «հայ ժողովրդի մոլորեալ զաւակները բռնել են այն ուղին, որ վաղուց բռնած պէտք է լինէին»[2]:

Դաշնակցությունն ուրիշ ելք չուներ: Նա ընդհարված էր Հնչակ և հատկապես Հայ սահմանադրական ռամկավար կու-

---

* *Ավելի որոշակի՝ Իթթիհադից հեռանալու Դաշնակցության որոշումը կայացել էր ապրիլի 20-ին, իսկ մայիսի 10-ին արդեն իրականություն էր խզումը: Հետաքրքրական է, որ Իթթիհադից հեռանալուց անմիջապես հետո Դաշնակցությունն սկսեց նրան քննադատել չատերի համար անսպասելի ատելությամբ: Ավելին, ՀՅԴ-ի ղեկավարությունը հայությանը մեղադրում էր երիտթուրքական իշխանապետության դեմ պայքարի ոգի չդրսևորելու համար: «Դրօշակը» գրում էր. «Պիտի զգա՞նք, վերջապէս, որ մի տխուր ու քստմնալի բացառութիւն ենք ազգերի համաշխարհային քարտէզի վրայ, ամենէն աւելի թուլամորթը, ամենէն աւելի անփոյթը՝* ***ազգային գոյութեան*** *չարաբաստիկ խնդրի հանդէպ» (****«Դրօշակ»****, № 7-8, հուլիս-օգոստոս, 1912, էջ 177):*

[1] ***«Մշակ»****, № 214, 30 սեպտեմբերի 1914 թ.:*

[2] *Նույն տեղում:*

սակցությունների հետ ու նրանց համարում էր հակառակորդներ, իսկ իր հետևից գնացող Վերակազմյալ հնչակը այլևս որևէ ազդեցություն չուներ հայկական իրականության վրա և իր քաղաքական հոգևարքն էր ապրում:

Այսպիսով, Դաշնակցությունը մեկուսացվել էր քաղաքական դաշտում. նա մերժված էր ***վերևից՝*** *երիտթուրքական իշխանություններից, միաժամանակ զրկված էր* ***ներքևի՝*** *հայ քաղաքական ուժերի աջակցությունից:*

Ո՞վ էր խաբել և ո՞վ խաբվել: Երիտասարդ թուրքերը խաբեցին Դաշնակցությա՞նը, թե՞ հակառակը:

Միամիտ պիտի լինել պնդելու, թե խաբել էր Դաշնակցությունը:

Իհարկե, Դաշնակցությունն Իթթիհադի հետ բարեկամացել էր բնավ ոչ նրա նկատմամբ ունեցած սիրուց: «Հորիզոնը» հարց էր տալիս. մի՞թե դաշնակից երիտթուրքերին աջակցելով՝ կուսակցության համար վերջանում է ամեն ինչ: Թուրքական պետությունը թող քայքայվի, բայց ոչ հայերի մասնակցությամբ: Տեղի ունենալիք քայքայումը նրանց ձեռնտու կլինի, եթե դա հատկապես պայմանավորվի արտաքին քաղաքական, այլ ոչ թե ներքին հանգամանքներով: Ոչ ոք չի ասի, թե Թուրքիայի ամբողջական պահպանումը հայերի բարի կամքից է կախված: «Այս հարցում հայերը չափազանց թույլ ու խեղճ մի նեցուկ կարող են դառնալ: Եւ քայքայումը կարող է առաջանալ առանց նրանց կամքի, հակառակ նրանց կամքի»[1]:

Իթթիհադից Դաշնակցության ուշացած խզումը որևէ դրական հետևանք չէր կարող ունենալ: Ընդհակառակը՝ ողջ հայության նկատմամբ ավելի թանձրացավ երիտթուրքերի ատելությունը և ավելի բացահայտ դարձավ նրանց թշնամությունը:

Այս պայմաններում թուրքահայության ֆիզիկական փրկության հարցը, առանց կուսակցական խտրության, դառնում էր բոլոր հայերի մտահոգության առաջին առարկա:

---

[1] ***«Հորիզոն»,*** *№ 136, 21 փետրվարի 1912 թ.:*

Վերահաս վտանգից ելք փնտրելու համար Հայոց Ազգային ժողովի Կեդրոնական վարչությունը մի գաղտնի խորհրդակցություն նախաձեռնեց և հրավիրեց: Մասնակցում էին Ազգային ժողովի նշանավոր երեսփոխաններ, օսմանյան խորհրդարանի հայ անդամները և հայկական քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Մտքերի փոխանակումից հետո խորհրդակցությունը եկավ այն եզրակացության, որ հայության ներքին ուժերն անբավարար են դիմագրավելու մեծ վտանգը, ուստի միայն մի մչուչոտ ելք է մնում՝ ապավինել մեծ տերությունների հնարավոր աջակցությանը, բայց չխզել պաշտոնական կապերը երկրի տերերի հետ[1]:

Բոլորը, սակայն, ներքնապես համոզված էին, որ մեծ տերություններից որևէ մեկը Թուրքիայում ունեցած իր շահերը չի զոհի հանուն հայության:

Այդ անելանելի վիճակում Դաշնակցությունն արդեն սկսեց խոսել բոլոր հայ քաղաքական ուժերի համախմբման անհրաժեշտության մասին: Կուսակցության ղեկավարությունը, վերջապես, եկել էր այն համոզման, որ «պէտք է վճռական քայլեր ընել նախ՝ **ներքին միութիւն ստեղծելու** (ընդգծումը մերն է:- Հ. Ս.)՝ որոշ նպատակի եւ միջոցներու կիրառման շուրջ»[2]:

Իսկ ո՞ւր էր Դաշնակցության ղեկավարության խելքը մինչ այդ: Զէ՞ որ տարիներ շարունակ հայկական քաղաքական մյուս բոլոր ուժերը, հայ հասարակությունն ընդհանրապես ծով խոսք ու մելան էին ծախսել Դաշնակցությանը կոչ անելով, նրա ղեկավարներին հորդորելով և խնդրելով միանալ, համազգային մի բռունցք կազմել և ամուր պատվար ստեղծել Իթթիհադի հայատյաց քաղաքականության դեմ, բայց միշտ կտրուկ մերժումի, նույնիսկ ծաղր ու ծանակի էին հանդիպել: Նրանք ականատես էին եղել, թե դաշնակցական գործիչներն ինչպես էին ցուցադրաբար «եղբայրություն» անում երիտթուրք ոճրագործների հետ, չողոքորթում նրանց, օսմանյան խորհրդարանում տեղեր

---

[1] Տե՛ս **Վահան Փափազեան,** Իմ յուշերը, հատ. Բ, էջ 90:

[2] Տե՛ս նույն տեղում:

գրավելու համար ամեն տեսակ զիջումների գնում և այլն: Այնպես որ հիմա չատ ուշ էր «ներքին միութիւն» ստեղծելու համար:

Համախմբվածության մասին այժմ խոսք անգամ չէր կարող լինել այն պարզ պատճառով, որ ժողովուրդը մասնատված էր, բաժան-բաժան: Ազգի ներսում տարիների անզիջում, մոլեռանդ պայքարները, եղկելի կուսակցականամոլությունը քայքայել էին ազգի մարմինը: Այդ բաժան-բաժան մասերը հավաքելու ունակ որևէ քաղաքական ուժ այլևս չկար:

Բայց եթե նույնիսկ Թուրքահայության ներսում մի հրաշքով ազգային միասնություն ստեղծվեր՝ միևնույնն է, բան չէր փոխվի, քանզի նա զինաթափ էր: Զենքը գտնվում էր Թուրքերի ու քրդերի ձեռքին: Միայն զինված զանգվածները կարող կլինեին նոր կոտորածների առաջն առնել կամ գոնե մեղմել դրանց ծավալները: Տարիներ առաջ զենք ձեռք բերող ու Թուրքահայաստան հասցնող գլխավոր ուժը եղել էր Դաշնակցությունը, բայց Օսմանյան հեղափոխությունից հետո նա ավելորդ զբաղմունք էր համարել ժողովրդին զինելը, ասելով, թե «Սահմանադրական Թուրքիան այնտեղ ապրող բոլոր ազգերի մայր հայրենիքն է»:

Ո՛չ դաշնակցականների կեղծ թե անկեղծ բարեկամությունը երիտթուրքերի հետ և ո՛չ էլ Թուրքական կառավարության անիրավությունների դեմ Կովկասի ու Թուրքիայի հայ ազատականների ազդու բողոքներն այլևս ի վիճակի չէին փոխելու հայության դրությունը:

ԱՆՓՈՓՈԽ ԸՆԹԱՑՔ

1912 թ. գարունը որևէ դրական փոփոխություն չբերեց Թուրքահայության կյանքում: Ավելին, Հայաստանը կրկին հայտնվել էր սովի ճիրաններում: Զնայած հայոց ազգային իշխանությունների ուժերից վեր ձեռնարկումներին, վիճակը բարելավման միտումներ չէր դրսևորում: Շարունակվում էր հայերի սովորական դժոխային կյանքը: Ո՛չ Կ. Պոլսի հայոց պատրիար-

քարանը, ո՛չ էլ քաղաքական կազմակերպությունները կացությունն ի վիճակի չէին որևէ չափով ուղղորդելու:

Փոքր ինչ սփոփիչ էր, որ հայերի անագորույն կյանքի մասին ոչ-իթթիհադական թուրքական մամուլում դեպքից-դեպք հայտնվում էին հոդվածներ և այլ նյութեր Հայաստանի դրության մասին, որոնցում նաև կառավարությանը դիմումներ էին լինում՝ զբաղվելու Հայաստանի հարցերով:

Հայության վիճակի մասին 1912 թ. ապրիլ-հունիս ամիսներին մի քանի «հայանպաստ» ակնարկներ եղան օսմանյան խորհրդարանում, որոնք, սակայն, որևէ նշանակություն չունեցան իշխանությունների համար:

Արդեն 1912 թ. գարնանը միայն անվանապես կարելի էր խոսել օսմանյան սահմանադրության մասին: Իթթիհադի կոմիտեի՝ երկրում հաստատած բռնապետությունը համընդհանուր էր ու համապարփակ: Թուրքիայում որևէ մեկն այլևս չէր հավատում երկրի բարեշինությանն ու վերածնությանը, մանավանդ չէր հավատում, որ դրանք կկատարվեն թուրքերի ձեռքով: Այս բառերն այնքան հնացած էին այլևս, որ չէին կարող բացատրել Հայաստանի կացությունը, որը «մնացել էր այնպէս, ինչպէս 5-10 տարի առաջ»[1]:

Նույնքան անմխիթար էր թուրքահայոց ազգային իշխանությունների վիճակը: Չորս տարվա ընթացքում ընտրվել էին պատրիարքական երեք տեղապահ ու երեք պատրիարք, Ազգային ժողովը թեև ազատորեն գործում էր, բայց փոքր ի չատե աչքի ընկնող դեր չունեցավ: Այդ տարիների ընթացքում նա չկարողացավ գոնե չնչին չափով կարգավորել Երուսաղեմի պատրիարքարանում կատարված զեղծումների, պատրիարքի ընտրության, Օրմանյանի ամբաստանության, Աղթամարի վանքի կողոպտման, Սանասարյան դպրոցի ֆինանսավորման և բազմաթիվ այլ հարցերը, որոնք ամեն անգամ չարունակաբար մտնում էին ժողովի նիստերի օրակարգ, բայց լուծում չգտնելով, հանվում էին քննարկումներից:

---

[1] ***«Արօր»**, № 5-6, մայիս-հունիս, 1912:*

Իսկ Իթթիհադի ու նրա կառավարության մտքով անգամ չէր անցնում որևէ աջակցություն ցույց տալ հայոց ազգային իշխանություններին: Հայաստանը, Թուրքահայությունը Հայոց պատրիարքարանը, Ազգային ժողովն ու նրա Կեդրոնական վարչությունը, քաղաքական կազմակերպությունները և հայկական մամուլը նրանք դիտում էին որպես իրենց ճանապարհին ընկած խութեր ու արգելքներ:

Հայերից քչերն էին միայն հավատում, թե կարող է մի բան բարեփոխվել: Այդ էր պատճառը, որ Կ. Պոլսի հայկական քաղաքական շրջաններում, հատկապես պոլսահայ մեծահարուստների շահերն արտահայտող հայ քաղաքական գործիչների, հատկապես Հայոց Ազգային ժողովի կենտրոնի պատգամավորական խմբակցության անդամների մոտ տրամադրություն էր առաջ եկել ընդհանրապես հրաժարվել Թուրքական կառավարությանը պահանջներ ներկայացնելուց, աշխատել չխառնվել նրա գործերին, բավարարվել միայն ներազգային խնդիրներով:

Նշված խմբակցության անդամների մի խումբ, չափազանց ազատական համարելով սահմանադրական ռամկավարների ծրագիրը, 1912 թ. հունիսին Կ. Պոլսում ձևավորել էր մի նոր, ծայրահեղ պահպանողական կուսակցություն: Կազմակերպության ստեղծման նախաձեռնողները եղան Թեքիրդաղից ընտրված պատգամավոր Հակոբ Պոյաճյանը, դատավոր Հարություն Մոստիչյանը, Սարգիս Սվինը, Հայկ Խոջասարյանը, դոկտ. Նազարեթ Տաղավարյանը, Խաչիկ Սվաճյանը, Պարգև Փափազյանը, Ներսես Օհանյանը և ուրիշներ: Կուսակցության հիմնադիրները հունիսի 30-ին անցկացրին առաջին ժողովը, որը քննության առավ կազմակերպության ծրագիրը: Բայց իր կարճատև գոյության ընթացքում նորաստեղծ կուսակցությունը որևէ նկատելի դեր չխաղաց հայ քաղաքական կյանքում և որոշ ժամանակ անց ինքնալուծարվեց:

Թուրքահայը սարսափը հոգում սպասում էր իրենից անկախ զարգացող իրադարձություններին: Նա, անզեն ու անուժ, ընկած էր Իթթիհադ կոչվող սպառազեն գազանի առջև:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ԻԹԹԻՀԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ: ԻԹԹԻԼԱՖՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽ

Թուրքիայի քաղաքական դաշտի ամենամեծ դերակատարները 1912 թ. շարունակում էին մնալ երկու կուսակցություն՝ «Իթթիհադ վե Թերաքքին» և «Հյուրրիեթ վե Իթթիլաֆը»: Դրանցից առաջինը օսմանյան սահմանադրության վերականգնումից հետո իշխանության տերն էր՝ երկիրը կառավարելով համաձայն իր ծրագրային սկզբունքների ու պատկերացումների: Մյուս կուսակցությունը՝ Իթթիլաֆը, ստեղծման իսկ օրից ընդդիմություն էր Իթթիհադին և ձգտում էր իշխանության:

1912 թ. ամռանը երկրում տեղի ունեցան այնպիսի ներքին զարգացումներ, որոնք անսպասելիորեն իշխանության բերեցին ընդդիմադիր կուսակցությանը:

1912 թ. հունիս-հուլիս ամիսներին Թուրքիան գտնվում էր քաղաքական սուր կացության մեջ: Մի կողմից Տրիպոլիտանական պատերազմն էր, մյուս կողմից՝ ալբանացի և արաբ ժողովուրդների ապստամբությունները, հուզումները զորքում, խառնակ ու ալեկոծ վիճակը ողջ երկրում: Գնալով աճում էր ընդհանուր դժգոհությունը երիտթուրքերի քաղաքականությունից:

Մանասթրում տեղաբաշխված թուրքական զորքը 1912 թ. հունիսին ապստամբել էր, որի պատճառով երկիրը ծանր տագնապի էր մատնվել: Ապստամբները պահանջում էին Սաիդ փաշայի դահլիճի հրաժարականը և ռազմական նախարար ու գլխավոր հրամանատար Մահմուդ Շևքեթ փաշայի հեռացումը:

Վիճակը մեղմելու և դահլիճը փրկելու համար Սաիդ փաշան ստիպված պաշտոնաթող արեց տվյալ ժամանակի պետական ամենախոշոր գործչին՝ Շևքեթ փաշային: Դա մեծ հարված էր

պետության վարկին, որի կառավարությունը հենվում էր այդ ռազմական գործչի ժողովրդականության վրա և մեծապես օգտվում նրա անձի շուրջ ստեղծված հարգանքից:

Մանասթրրում ապստամբած զորամասերի հրամանատարները և նրանց դեմ գնալուց հրաժարվող զինվորականները պահանջում էին իրենց զբաղեցրած պաշտոններից հեռացնել նաև Ջավիդ, Թալեաթ, Հաջի Ադիլ բեյերին, ավելին, առաջ էին քաշում նույնիսկ սուլթանի հրաժարականի պահանջը[1]:

Բայց անընդմեջ չորս տարի ռազմական նախարարի պաշտոնն զբաղեցրած Շևքեթ փաշայի հեռացումով հնարավոր չեղավ հակահեղեղական շարժման առաջն առնել:

Այս պայմաններում Սաիդ փաշային միայն մի բան էր մնում անելու՝ իր կառավարության վստահության հարցը դնել խորհրդարանի քննարկման:

Մոսկվայում լույս տեսնող "Русское Слово"-ն գրում էր, որ ահրարների նոր կուսակցությունը սկսել է գերակշիռ դիրք գրավել Թուրքիայում: Կանգ առնելով երիտթուրքերի գործած հանցանքների և այն սխալների վրա, որ թույլ են տվել եվրոպական մեծ պետությունները՝ գործողության լիակատար ազատություն տալով երիտթուրքերին, թերթը գալիս էր այն եզրակացության, որ այժմ պետք է որոշ աջակցություն ցույց տալ ահրարների կուսակցությանը, որպեսզի նա կարողանա երիտթուրքերին տապալել և երկրի կառավարումն իր ձեռքը վերցնել: Պարբերականը նշում էր.

«... Այժմ, երբ երիտթուրքական վարչակարգը մատնվել է լիակատար սնանկության, եվրոպական դիվանագիտությունը պետք է վերաքննի իր հարաբերությունները թուրքական պետության հետ: Միջազգային դիվանագիտության ու եվրոպական հասարակության հիմնական մեղքն այն է, որ նրանք չնկատեցին երիտթուրքական վերածնության նեղ ազգայնական և ազգայնամոլական էությունը: ... Երիտասարդ թուրքերի «սխրագործությունները» Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչությանն

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»,*** *№ 153, 15 հուլիսի 1912 թ.:*

ստիպեցին ափսոսանքով հիշել նույնիսկ արյունախում սուլթանի ժամանակները: Եվրոպական պետությունների անտարբերությունը երիտթուրքերի գործած ոճիրների հանդեպ Կ. Պոլսում համարվեց իբրև այդ պետությունների լիակատար անզորության նշան, և երիտթուրքերը համակվեցին խրոխտության մտագարությամբ, որից նրանց չեն կարողանում բուժել նույնիսկ իտալական թնդանոթների որոտները»[1] (թերթը նկատի ուներ Տրիպոլիտանական պատերազմը):

Այնուհետև "Русское Слово"-ն չեշտում էր, թե ամեն ինչից երևում է, որ երիտթուրքերի տիրապետությանը պետք է հաջորդի ահրարների տիրապետությունը, մի կուսակցություն, որը ազատամիտ տարրերի դաշնակցություն է և որի նշանաբանը Օսմանյան կայսրության քաղաքակիրթ բոլոր ազգություններին ազգային լայն ինքնավարություն տալն է: Քանի որ կուսակցության ծրագիրը համակված էր դաշնային ոգով, ուստի նա տրամագծորեն հակառակ էր երիտթուրքերի կենտրոնացման և զանազան ցեղերի թուրքացման քաղաքականությանը: Հոդվածագիրը հույս էր հայտնում, որ նախարարների ապագա դահլիճը լինելու է ազատամիտ և ամենից առաջ աշխատելու է խաղաղ միջոցներով լուծել ծայրամասերի հարցերը, լայն ինքնավարություն տալ Ալբանիային, Մակեդոնիային, Արաբիային, ինչպես և հայերին: Ահրարը ոչ թե թղթի վրա, այլ գործնականում պետք է ցույց տա, որ քրիստոնյաները մուսուլմաններին հավասար են, և երկուսն էլ օգտվում են նույն իրավունքներից[2]:

Թերթի կանխատեսումը չատ չուտով իրականություն դարձավ. հոդվածի հրապարակումից ընդամենը չորս օր հետո Իթթիհադը զրկվեց իշխանությունից:

1912 թ. հուլիսի 4 (17)-ին խորհրդարանը լսեց Սաիդ փաշայի կառավարության վստահության հարցը: Վարչապետի և արտգործնախարար Ասիմ բեյի հայտարարություններից հետո 194 թեր և 1 դեմ ձայնով պատգամավորները վստահության քվե տվին կառավարությանը[3]:

---

[1] **"Русское Слово"**, 1 июля 1912 г.

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 153, 15 հուլիսի 1912 թ.:

Խորհրդարանի հայ պատգամավորական խմբակցության բոլոր 10 անդամները, որոնցից միայն մեկը չէր անցել ՀՅԴ-ԻԹ-Թիհադ ցուցակով, նույնպես քվե տվեցին Սաիդ փաշայի կառավարությանը վստահություն տալու բանաձևին:

Այդ խորապատկերի վրա խղճուկ տպավորություն թողած խորհրդարանի հայ պատգամավորների պահվածքը, «Միտք» (Թավրիզ) թերթն այսպես էր ձևակերպում. «Նրանք նստում են այնտեղ (խորհրդարանում:- Հ. Ս.) խղճահանգիստ և լուռ արձանի պես՝ վստահության քվե տալով այն կառավարությանը, որը թշնամի է հայությանը»[1]:

Հարցի քննարկման ժամանակ հայ պատգամավորներից որևէ մեկը ձայն չբարձրացրեց Հայաստանում շարունակվող սարսափների մասին, այն դեպքում, երբ ալբանացի չորս պատգամավորներ քվեարկությունից առաջ հանդես եկան ելույթներով և խստիվ քննադատեցին Սաիդ փաշայի կառավարությանը՝ Ալբանիայում և Հայաստանում շարունակվող բռնությունների առաջը չառնելու համար[2]: Նրանք այն աստիճան էին զայրացել Հայաստանում իթթիհադական պաշտոնյաների կամայականություններից, որ երիտթուրքերի պարագլուխներին տալիս էին «մարդկային խղճից զուրկ», «ամենախիստ պատժի արժանի» և նմանատիպ այլ որակումներ:

«Մշակը» գրում էր, որ հակառակ ալբանացի պատգամավորների խիզախ մերկացումների, հայ պատգամավորների լռությունը նշանակում է, որ Հայաստանում «երջանկություն» ու «անդորրություն» են տիրում, այնպես, ինչպես արդուլհամիդյան օրերին: Բայց եթե այն ժամանակ «հայերը ստիպուած էին գոչել «մեր երջանկութիւնն ու անդորրութիւնը կատարյալ են», գիտենք, թէ ինչու էր այդ արւում. Օրմանեանը եւ նրա համախոհներն ամեն ինչ անում էին մեղմելու Մեծ գաղանի արիւնալափ կիրքը: Բայց ինչո՞ւ այժմ, սահմանադրական Թուրքիայում, հայ պատգամաւորները բողոքի ձայն չեն բարձրացնում [ինչխանու-

---

[1] ***«Միտք»,*** *№ 22, 1912 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Մշակ»,*** *№ 148, 10 հուլիսի 1912 թ., նույն տեղում № 158, 21 հուլիսի 1912 թ.:*

թյունների դեմ]: Թերթերը ճիշտ են գրում, թէ նրանք չեն ուզում իրենց մերուսական տաքուկ տեղերը զոհել ազգի շահերին»: Այնուհետև «Մշակը» հայ պատգամավորներին տալիս էր հետևյալ գնահատականը. «Այսպիսով, շատ ցայտուն երեևան է գալիս հայ տափակամիտ մերուսների քաղաքական կարճատեսութիւնը, հայ ժողովրդի շահերի ըմբռնման նրանց անկարողութիւնն ու տհասութիւնը»[1]:

Բայց Սաիդ փաշայի կառավարությանը տված վստահության քվեն երկար կյանք չունեցավ: Հաջորդ օրը, հուլիսի 5-ին, վարչապետարանի բյուջեի քվեարկության ժամանակ հակաիթթիհադական պատգամավորները վարչապետից պահանջեցին հարցի առթիվ խորհրդարանի առաջ հանգամանալից բացատրություններ տալ: Վարչապետն այդ բանն արեց և, չգիտես ինչու, ելույթի վերջում կրկին վստահության խնդիր հարուցեց, որը և ստացավ:

Դրանից հետո խորհրդարանից դուրս գալով, վարչապետը, բոլորի համար անսպասելի, սուլթան Մեհմեդ V Ռեշադին հրաժարական ներկայացրեց: Որպես գործից քաշվելու հիմնական շարժառիթ նա փաստարկել էր ռազմական նախարարի պաշտոնի հարմար թեկնածու չգտնելու իր անկարողությունը, բայց իրողությունն այն էր, որ նա այդ քայլին դիմել էր Մանասթիրում ապստամբած բարձրաստիճան զինվորականների պահանջով: Նրանք սպառնացել էին, որ եթե վարչապետը հրաժարական չտա, ապստամբը զորքը կշարժվի Կ. Պոլսի վրա[2]:

Երկար տատանումներից հետո նույն օրը, հուլիսի 5 (18)-ի երեկոյան, սուլթանը տվեց իր համաձայնությունը[3]:

Երկիրը տագնապի և անորոշ կացության մատնվեց:

Եվ այսպես, զորքի ու ժողովրդի ընդհանուր բողոքի չնորհիվ 1912 թ. հուլիսի 5 (18)-ին տապալվում է Իթթիհադի կառավարությունը:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 153, 15 հուլիսի 1912 թ.:

[2] Նույն տեղում, № 158, 21 հուլիսի 1912 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 148, 10 հուլիսի 1912 թ.:

Հաջորդ օրը՝ հուլիսի 6-ին, սուլթանը վարչապետ նշանակեց Լոնդոնում Թուրքիայի դեսպան Թևֆիկ փաշային*, որը, սակայն, պաշտոնի վրա մնաց ընդամենը մի քանի օր: Նշանակման ժամանակ սուլթանը ցանկություն էր հայտնել, որ նոր դահլիճը հիմնականում կազմված լինի ոչ-կուսակցական, անկախ անձերից:

Շևքեթ փաշայի պաշտոնազրկումից և Սաիդ փաշայի դահլիճի տապալումից հետո հերթը հասել էր Իթթիհադին:

Խորհրդարանում ստվար մեծամասնություն ունենալով հանդերձ Իթթիհադն ի վիճակի չեղավ դահլիճ կազմելու միայն իր գաղափարակիցներից: Արդյունքում ձևավորվեց մի կառավարություն, որի կազմը, ըստ էության, հակաիթթիհադական էր:

Վարչապետի պաշտոնը հանձնվեց Ղազի Ահմեդ Մուխթար փաշային, որը լայն ժողովրդականություն ուներ երկրում**:

Կառավարության մեջ մտավ նաև նախկին վարչապետ Հուսեյն Հիլմի փաշան, որն ստանձնեց արդարադատության նախարարի պաշտոնը: Հայոց Ազգային ժողովի ատենապետ Գաբրիել էֆ. Նորատունկյանը նշանակվեց արտաքին գործերի նախարար: Ռազմական նախարար նշանակվեց զինվորականների նշանակած թեկնածուն՝ Նազըմ փաշան: Դահլիճին մեջ մտավ նաև նախկին վարչապետ Քյամիլ փաշան՝ իբրև Պետական խորհրդի նախագահ, որին պաշտպանում էին բոլոր ոչ-իթթիհադականները և համարում վարչապետի ամենահարմար թեկնածու: Շեյխ ուլ-իսլամ հայտարարվեց Ջեմալէդդին էֆենդին, որն աբդուլհամիդյան օրերին և սահմանադրության առաջին տարում, շուրջ 17 տարի, խելացիորեն վարել էր այդ պաշտոնը: Նախկին վարչապետ Ֆերիդ փաշային առաջարկվեց ներքին

---

* 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո Թևֆիկ փաշան կարճատև ժամանակ վարել էր վարչապետի պաշտոնը:

** Ահմեդ Մուխթար փաշան հռչակվել էր 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ՝ կազմակերպելով Բուլղարիայի Պլևնա բնակավայրի համառ դիմադրությունը, ինչի համար էլ սուլթան Աբդուլ Համիտ II-ից ստացել էր հազվադեպ չնորհվող «Ղազի» («Հաղթական») տիտղոսը:

գործերի նախարարի աթոռը, բայց նա մերժեց առաջարկը:

Թուրքիայի համար տագնապալի պահին Գաբրիել էֆ. Նորատունկյանին կրկին այդ կարևորագույն պաշտոնին կանչելը ցույց էր տալիս այդ մարդու մեծ տաղանդը: Նախկինի պես, դիվանագիտական շրջաններում Նորատունկյանն արժանանում էր հիացմունքի, մեծապես գնահատվում տեղական թե արտասահմանյան մամուլում: Բայց արի ու տես, որ նրա թեկնածության դեմ արտահայտվում էր Դաշնակցության «Ազատամարտ» թերթը՝ նրան անվանելով «անգույն» ու «անհետևողական», թեև, ի վերջո, ստիպված էր միանալ Նորատունկյանին բարձր գնահատողներին:

Ահմեդ Մուխթար փաշայի դահլիճը, արդարև, կարող էր կոչվել անկուսակցական, քանի որ դա հիմնականում բաղկացած էր հմուտ ու փորձված անկախ անձերից: Դրանով իսկ կատարված էր նաև սուլթանի ցանկությունը:

Բայց կառավարության կազմի փոփոխությունները բանակի սպայակազմին և բարձր հրամանատարությանը չէին գոհացնում: Սպաների միությունը համառորեն պահանջում էր վարչապետի պաշտոնը հանձնել Քյամիլ փաշային և խորհրդարանը անհապաղ ցրել: Դա նշանակում էր, որ Իթթիհադի փոխարեն երկիրը վարող ուժը դարձել է զինվորականությունը, որի ազդեցության տակ էլ կազմավորվել էր նոր կառավարությունը: Իշխանությունից դժգոհ զինվորական բարձրաստիճան հրամանատարները Մանասթրից տեղափոխվելով հաստատվել էին Մարմարայի եզերքին գտնվող Բոսթանջի արվարձանում, որտեղից բանակցում էին Ելդրզի հետ:

Ընդդիմադիր շրջաններին կապված թուրք սպաները, խորհրդարանական ընտրություններում երիտթուրքերի գործած զանգվածային խախտումներին որպես բողոք, իրենց զորամասերով 1912 թ. մայիս–հունիսին հեռացան Մակեդոնիայի լեռները՝ պահանջելով սահմանադրության ճշգրիտ կիրառում[1]: Ստեղծվեց սպաների նոր միություն՝ «Հայրենիքի փրկիչների ռազ-

---

[1] **Տե՛ս Х. З. Габидуллин,** *Младотурецкая революция. Исторические очерки, с. 162.*

մական լիգա» անունով[1]: Միության մեջ կարևոր թիվ էին կազմում ալբանացի բարձաստիճան զինվորականները: «Դրօշակը» նկատում էր, թե այնտեղ «մաս եւ ազդեցութիւն ունեն ալբանական արիւնն ու ազգային ոգին»[2]:

Սպաների այդ նոր միությունը հուլիսի 12-ին հրապարակ հանեց օսմանյան ողջ սպայությանն ուղղված հայտարարություն, որը չարադրված էր դիվանագիտական նուրբ լեզվով և կրում էր «Մի քանի խոսք երկրի իրական կացության և օսմանցի լուսամիտ սպաների պարտականության մասին» վերնագիրը: Հուլիսի 13-ից սկսած դա տպագրվեց Կ. Պոլսի համարյա բոլոր թերթերում, այդ թվում՝ հայկական մամուլում: Փաստաթղթում սպաներն այն միտքն էին զարգացնում, թե Եվրոպան լքել է Թուրքիային, քանի որ նրա կառավարիչները չեն կարողացել երկրում սահմանադրական վարչություն հաստատել: Նրանք ելքը տեսնում էին նախկին անգլիասեր քաղաքականությանը վերադառնալու մեջ: Ելնելով այդ ընդհանուր նպատակից՝ սպաների միությունն առաջադրում էր հետևյալ պահանջները. 1) Արդի կառավարության փոխարեն նշանակել ուրիշը, որն ի վիճակի լինի շահելու Եվրոպայի վստահությունը, 2) Արգելել անպատասխանատու տարրերի միջամտությունները կառավարության գործերին, 3) Լուրջ քննություն կատարել, և եթե ապացուցվի, որ վերջին ընտրությունների արդյունքները չեն համապատասխանում ազգի կամքին, ցրել խորհրդարանը, նշանակել նոր ընտրություններ և խստիվ բացառել ընտրական գործերին ոստիկանության կամ զորքի միջամտությունները: Գալով բանակին՝ սպաների միությունը պահանջում էր. Ա) Բանակից վտարել քաղաքականությունը, Բ) Բանակ վերադարձնել պետական պաշտոններում գտնվող բոլոր սպաներին, Գ) Բանակ մտցնել արդարության սկզբունքը՝ հենված հետևյալ չորս կետերի վրա՝ 1. Բարձրաստիճան սպաները պատասխանատու պիտի լինեն իրենց արարքների համար, 2. Զինվորական դատարան-

---

[1] ***Տե՛ս Х. З. Габидуллин,*** *Младотурецкая революция. Исторические очерки, с. 162.*

[2] ***«Դրօշակ»****, № 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, 1912, էջ 278:*

ները պետք է անկախ, որևէ ազդեցությունից զերծ լինեն, 3. Սպայական պաշտոնների բարձրացումը պետք է կատարվի զինվորական կանոնագրքին խիստ համապատասխան, 4. Պետք է դարմանվեն Եմեն և այլ պատերազմական վայրեր ուղարկած սպաների դեմ գործած անիրավությունները[1]:

Հայտարարությունը հրապարակելուց անմիջապես հետո սպաների միությունը որոշակի գործողությունների անցավ: Նա խորհրդարան ուղարկեց մի գրություն՝ պահանջելով առաջիկա 48 ժամում լուծարվել: Դրանում նաև ասված էր, որ վերջին չրջանում Իթթիհադը և խորհրդարանի ղեկավարությունը սուլթանի մոտ քանիցս սպաների միության դեմ սադրիչ զրգռումներ են արել: «Թէեւ ձեր այս ընթացքն արժանի է պատժի, բայց մենք փափագ չունենք անմաքուր արիւնով աղտոտուել, բայց անհրաժեշտ ենք համարում ձեզ ազդարարել, որ եթէ չապացուցէք, որ կողմ էք ներկայ պատգամաւորական ժողովի լուծարմանը, որը ժողովրդի եւ բանակի արդար պահանջն է, այն դէպքում մենք կկատարենք մեր հայրենասիրական պարտքը»[2]:

Նույն օրը, հուլիսի 12-ին, օսմանյան խորհրդարանի նախագահ Խալիլ բեյը, բացելով հերթական նիստը, հրապարակեց սպաների միության սպառնագիրը: Պատգամավորները բուռն ելույթներով արձագանքեցին: Նրանք հայտարարություններ էին անում, թե խորհրդարանի ցրման պահանջը հակասահմանադրական է, ուստի իրենք մահվան գնով կպահպանեն իրենց իրավունքները:

Երիտթուրք պատգամավորների բարձրացրած այս վայնասունին միացան հայ պատգամավորները: Նրանցից Պետրոս Հալաճյանը, որն իրեն ներկայացնում էր իբրև թունդ իթթիհադական, պահանջեց բոլոր միջոցներով զսպել սպաներին: Բուռն կերպով հանդես գալով սպաների դեմ՝ Վարդգեսը նույնպես

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 159, 22 հուլիսի 1912 թ., **«Միտք»**, № 22, 4 օգոստոսի 1912 թ., **И. С. Галкин**, Дипломатия европейских держав в связи с освободительным движением народов Европейской Турции в 1905-1912 гг., с. 166-167:

[2] **«Մշակ»**, № 159, 22 հուլիսի 1912 թ.:

խորհրդարանին կոչ արեց չցրվել և գոյության համար մինչև վերջ դիմադրել:

Օսմանյան նախարարական և խորհրդարանական տագնապը նշանակում էր Իթթիհադի տապալումը, և դա կարևոր անդրադարձ ունեցավ հայ կյանքի վրա:

Երբ Իթթիհադը իշխանության վրա էր, դաշնակցականները հայկական միջավայրում կացության տերն էին, բայց այժմ, երբ փոխվել էր իրավիճակը, նրանք չփոթվել ու չվարել էին: Իրենց օրինավոր նկատած խորհրդարանական վերջին ընտրություններն այսօր անօրինական էին հայտարարվել, և դաշնակցական պատգամավորները ստիպված համաձայնել էին այդ գնահատականին: «Ազատամարտն» արդեն գրում էր, թե հույժ կենտրոնացման սկզբունքով, գործադրած անօրինակ խստություններով և ծայրահեղ ազգայնական գործելակերպով Իթթիհադը երկիրը հասցրել էր կործանման եզրին:

Հիմա բախտը ժպտում էր իթթիլաֆականներին, իսկ դա ենթադրել էր տալիս, թե թատերաբեմ պիտի բարձրանան նրանց համախոհ հնչակյանները, որոնք սահմանադրությունից հետո Թուրքիայի քաղաքական կյանքում նկատելի որևէ դեր չէին խաղացել:

*Ուրախություն հայտնելով Իթթիլաֆի հաղթանակի կապակցությամբ, Թավրիզի հնչակյանամետ «Միտք» թերթը գրում էր. «Իտտահատի սոսկալի տապալմամբ հրապարակի տէրն է դառնում Իթթիլաֆը, որի հետ բլոկ էին կազմել հնչակեանները, որ բաղկացուցիչ ազգերի առանձնաշնորհմանց, **ինքնավարութեանց** (ընդգծումը թերթինն է:- Հ. Ս.) պաշտպան է եւ որի ագիտացիայով գլուխ եկաւ ալբանական անչիջելի ապստամբութիւնը, որ տապալեց երբեմնի դիկտատոր Մահմուդ Շէվքէթ Փաշային, Իթթիհադին եւ պառլամէնդի փակման առիթ հանդիսացաւ: ... Ասպարէզը մնում է Իթթիլաֆին»[1]:*

Հայերը մտավախություն ունեին, որ Հնչակը նույնպես ասպարեզ մտնելուց հետո կարող է գլորվել ճակատագրական այն

---

[1] ***«Միտք»,*** *№ 22, 4 օգոստոսի 1912 թ.:*

սխալների մեջ, որ կատարել էր Դաշնակցությունը[1]: Ահա՛ թե այդ մասին ինչ ենք կարդում «Մշակի» չնորհալի թղթակից Շռայլի հոդվածում, գրված հուլիսի 14-ին.

«Հիմա բաղդը կժպտի Իթթիլաֆականներու: Հետեւաբար կերեւայ թէ հնչակեաններն են, որ պիտի թատերաբեմին վրայ գան: **Հաճելի նորութիւն մը պիտի ըլլար ազգին համար**, եթէ այս կուսակցութիւնը որ նկուն մնացած է սահմանադրութիւնէն այս կողմ, երբէք դեր մը չկարենալով կատարել, հիմա, երբ բաղդը իրեն կժպտի, ինքն ալ չգլտորի այն սխալներուն եւ անխոհեմութիւններուն մէջ, որոնք **դաշնակցականները ըրին ազգին...**

Ողջունելով ի բոլոր սրտէ Իթթիլաֆ-Հնչակեան յաջողութիւնը, յոյս ունինք, որ իր հերթին Իթթիլաֆը իր շրջանկատ, հեռատես եւ խոհեմ ընթացքով գործն այնպէս իմաստութեամբ կտանի, որ կհեռացնէ վրահաս փոթորիկը Օսմանեան կայսրութեան գլխէն: **Միայն բաղկացուցիչ տարրերուն բաւարարելով է,** որ անվթար կմնայ ամբողջականութիւնը Օսմ[անեան] կայսրութեան եւ միայն այդ ոչ-չովէն կառավարութիւնն է, որ նորէն բարեկամ կդարձնէ բազմաց» (ընդգծումները թերթինն են:- Հ. Ս.)[2]:

Հավանական էր, որ այս անգամ Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը նույնպես իր ձայնը լսելի կդարձներ և կկարողանար ընտրական նոր պայքարում իր խոսքը հաջողությամբ առաջ տանել:

Բայց խորհրդարանը չէր չտապում ցրվել, և դա առաջ էր բերում նրա հասցեին նոր սպառնալիքներ հատկապես զինվորականների կողմից: Այդ սպառնալիքներից ամենածանրը Իզմիրի հրամանատար Աբդուլլա փաշայի հեռագիրն էր Բարձր Դռան հասցեով, որ եթե խորհրդարանն անհապաղ չցրվի, ապա ինքը իր 30-հազարանոց զորամասին հրաման կտա երկաթուղով շարժվել Կ. Պոլսի վրա[3]:

Ընդվզող զինվորականության մեջ հատկապես եռանդուն դեր էին խաղում իթթիհադականների շարքերում գտնվող ահ-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 160, 24 հուլիսի 1912 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, № 172, 7 օգոստոսի 1912 թ.:

բարականները («Հյուրրիեթ վե իթթիլաֆի» անդամներն ու համակիրները):

Հույժ տագնապալի այդ պահին կառավարությանն այլ բան չէր մնում անելու, եթե ոչ ժամ առաջ լուծարելու խորհրդարանը՝ գոհացում տալու համար հետզհետե ավելի մեծ համեմատություններ առնող դժգոհություններին և ըմբոստություններին:

Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն, կառավարության և խորհրդարանի միջև ծագած վեճի դեպքում պետք է կազմվեր պատգամավորական հանձնախումբ՝ ուսումնասիրելու վիճակը և խորհրդարանի ցրման մասին տալու իր եզրակացությունը: Դրա համար անհրաժեշտ էր սենատի համաձայնությունը, որը և ձեռք բերվեց:

Իր հերթին, նախարարներից կազմված մասնախումբը՝ Գաբրիել էֆ. Նորատունկյան և Հուսեյն Հիլմի փաշա կազմով, սենատի սահմանադրական հանձնաժողովին առջև ավելի մանրամասնորեն պարզեց կացությունը: Արդյունքում հանձնաժողովին եզրակացությունը սենատում ընդունվեց 28 թեր, 5 դեմ և 1 ձեռնպահ ձայնով: Բայց դա ռազմական նախարար Մահմուդ Շևքեթ փաշային պաշտոնաթողությունից չփրկեց: Բանակը հանգստացնելու համար երիտթուրքական կառավարությունը զոհեց ռազմական նախարարին. 1912 թ. հուլիսի 10-ին Մեհմեդ Շևքեթ փաշան ստիպված հրաժարական տվեց: Բայց բանակում առաջվա պես չարունակվում էին հուզումները, իսկ կառավարությունն այլևս անկարող էր հանգստացնելու զորքերին, որոնք հրաժարվում էին կռվի մեկնել ապստամբ Ալբանիայի դեմ:

Նույն օրվա՝ հուլիսի 10-ի գիշերը սուլթանը ստորագրեց խորհրդարանը լուծարելու իրադեն:

Դա նշանակում էր, որ իշխանության գլուխ է եկել Իթթիլաֆը:

Իմանալով սուլթանական իրադեի մասին՝ հետևյալ օրը Իթթիհադը որոշեց հեռանալուց առաջ վերջին մարտը տալ. հավաքվեց խորհրդարանը, և սկսվեց անեծքների ու սպառնալիքների տարափ կառավարության վրա:

Առաջինը ելույթ ունեցավ նախորդ կառավարության ֆի-

նանսների նախարար Ջավիդ բեյը, որի խոսքի հիմնական իմաստն այն էր, թե Իթթիլաֆը և Իթթիհադի մյուս ընդդիմադիրները պետական հեղաշրջում են կատարել՝ նպատակ ունենալով վերադառնալ Աբդուլ Համիդի օրերին:

Ջավիդի նետած կարթի մեջ հեշտությամբ ընկավ պատգամավոր Վարդգեսը, որը ելույթ ունենալով նշեց, թե նոր կառավարությունից «իսկապէս համիդեան հոտ կը փչէ»: Երբ սա վերջացրեց ելույթը, Ջավիդ բեյը տեղից գոչեց, թե նոր կառավարությունը մտադիր է Հայոց Ազգային սահմանադրությունը ոչնչացնել, և Իթթիհադն այդ առիթով իր խոր մտահոգությունն է հայտնում[1]: Եվ սա ասում էր պարագլուխներից մեկն այն կուսակցության, որը փաստորեն ոչնչացրել էր Հայոց Ազգային սահմանադրությունը, իսկ Հայոց Ազգային պատրիարքարանի ազդեցությունը իշխանական ոլորտներում հասցրել էր զրոյի: Չորս տարվա ընթացքում, երբ այդ կուսակցությունը երկրի բացարձակ տերն էր, ոչ մի բան չարեց ի նպաստ հայոց, հայաբնակ նահանգների մեջ որևէ բարվոքում չմտցրեց: Ավելին, հենց նրա իշխանության օրոք էր, որ կատարվեց Ադանայի սոսկալի ջարդը:

Իթթիհադական պատգամավորները առաջարկեցին անվստահություն հայտնել կառավարությանը, որպես հակասահմանադրականի, և անհրաժեշտ համարեցին խորհրդարանին արձակուրդ տալ անորոշ ժամանակով: Այդ որոշման օգտին կողմ քվեարկեցին նաև հայ պատգամավորները:

Բայց կառավարությունը չեղյալ հայտարարեց խորհրդարանի որոշումը, քանի որ, սուլթանի իրադեով արդեն լուծարված լինելով, նա նման որոշումներ ընդունելու այլևս իրավասու չէր:

Վարչապետ Ահմեդ Մուխթար փաշան հուլիսի 11-ի կեսօրից հետո եկավ խորհրդարան, որի դահլիճում միայն մի քանի պատգամավորներ էին գտնվում, և կարդաց խորհրդարանը լուծարելու մասին սուլթանի հրամանագիրն ու հրամայեց բոլորին հեռանալ շենքից, որը և առնվեց հսկողության տակ:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 172, 7 օգոստոսի 1912 թ.:

Հաջորդ օրերին երիտթուրք մի չարք պարագլուխներ, և առաջին հերթին Ջավիդ բեյը, ձայնակից ունենալով իրենց հավատարիմ մնացած պատգամավորներին, Պոլսի զանազան մասերում ժողովներ էին գումարում՝ հանդես գալիս ճառերով ու կոչերով: Նրանք համոզմունք էին հայտնում, որ շատ շուտով իրենք գալու են իշխանության և անողոք կերպով պատժելու են հակահեղեղիհադական շարժումն առաջ բերողներին, չեղյալ են հայտարարելու խորհրդարանի ընդունած որոշումները և դարձյալ այս կազմով շարունակելու են նրա նիստերը[1]:

Այսպիսով, Ջավիդ բեյը և նրա զինակիցները ըստ էության իրենց կուսակիցներին բացահայտորեն ապստամբության կոչ էին անում և գործունեության խռովարարական ծրագիր առաջադրում:

Այդ հայտարարությունները և հակակառավարական դավադրություններ սարքելու փորձերը կառավարությանն ստիպեցին ռազմական վիճակ հայտարարել Կ. Պոլսում և երիտթուրքական գաղափարական հնոցում՝ Սալոնիկում:

Ամենուր խոսվում էր այն մասին, թե Իթթիհադն ամեն ջանք պետք է գործադրի բանակի մեջ նոր թափով քարոզչություն մղելու համար: Նա սպառնում էր ներկա կառավարությունից անկախ մի ուրիշ կառավարություն կազմել, խորհրդարանի նիստերը գումարել Կ. Պոլսից դուրս՝ կայսրության մի ուրիշ քաղաքում, մինչև որ կտիրեն մայրաքաղաքին և իշխանությունը կրկին իրենց ձեռքը կվերցնեն:

Բայց երկրի զինվորականության մեջ Իթթիհադի վարկն այն աստիճան էր ընկել, որ նրա սպառնալիքներն այլևս որևէ ազդեցություն չէին գործում:

Թուրքահայերը սպասում էին, թե իշխանության գլուխ անցնելուց հետո իրենց նկատմամբ ինչ դիրք է բռնելու Իթթիլաֆ կուսակցությունը: Նրանք հույս ունեին, թե այդ իշխանությունն ավելի օգտակար կլինի հայերի համար, քան եղավ երիտթուրքերի տիրապետությունը:

Այս կարծիքին էին նաև կովկասահայ մամուլն ու քաղա-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 172, 7 օգոստոսի 1912 թ.:

քաղաքները: «Մշակը» գրում էր. «Մեր կարծիքով Թուրքիայի հայութիւնը եւ գլխաւորապէս պատրիարքարանը, ազգային վարչութիւնը, առողջամիտ, չիտակ մտաւորական դասը պէտք է առաջադրեն հայութեան հետեւյալ նուազագոյն պահանջները. 1) Լայն ինքնավարութիւն ազգային-եկեղեցական, կրթական-կուլտուրական բոլոր գործերի տնօրինութեան մէջ, 2) Օսմանեան պառլամենտում հայերի համար յատկացնել գոնէ 25-30 տեղ եւ պատգամաւորների ընտրութիւնը կատարել Հայոց Ազգային ժողովում, այլ ոչ թէ յանձնել կուսակցութիւններին, 3) Հողային հարցին տալ անմիջական լուծում, այն է՝ վերադարձնել հայերից յափշտակուած հողերը, 4) Պետական-քրէական օրէնքները խստօրէն գործադրել բոլոր այն անհատների ու կուսակցութիւնների դէմ, որոնք, դուրս գալով օրէնքների սահմաններից, կփորձեն բռնութիւններ գործադրել ազգային վարիչ մարմինների եւ հաստատութիւնների վրա»[1]*:*

Իշխանության գլուխ անցնելուց հետո առաջին օրերին Իթթիլաֆը կարծես հակված էր դիմել որոշ քայլերի: Մեկ ամսում փոխվեցին Հայաստանի գրեթե բոլոր կուսակալները, բայց նորերի թվում ձեռնհաս և հեղինակավոր անձնավորություններ չկային: Թերևս բացառություն էր Բաղեշի կուսակալ նշանակված Ալի փաշան: Սա խստաբարո ու արդարակորով մարդ էր, ծագումով չերքեզ, որը սկսել էր գործուն կերպով հակազդել հայերի նկատմամբ քրդերի ավազակային գործողություններին: Իսկ օրինակ՝ Վանի նոր կուսակալ Իզզեթ բեյը, որը քուրդ էր ու քրդերի անսքող պաշտպան, նոր աղետների դուռ բացեց հայերի համար: Թուրքիզմի քարոզչությունն առաջվա պես մղվում էր ուժգին թափով: Ինչպես գրում է Արշակ Ալպոյաճյանը, այդ տարիներին «Հայաստանի մէջ համիտական շրջանի յատուկ կեղեքումները, հարստահարութիւնները եւ ջարդի սպառնալիքները շարունակուեցան թերեւս աւելի յաւելեալ եւ ճոխացեալ, հայերը որոշ տեսան, թէ խաբէութիւն մը եւ կեղծիք մըն էին ... երկրին մէջ արդարութիւն եւ ապահովութիւն հաստատելու խոստումները, որոնք [իթթիլաֆական] թուրքերը կ'ընէին»[2]*:*

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»,*** *№ 154, 17 հուլիսի 1912 թ.:*

[2] ***Արշակ Ալպոյաճեան,*** *Պատմութիւն Մալաթիոյ, Պէյրութ, 1961, էջ 879:*

Կ. Պոլսի Հայոց Ազգային պատգամավորական ժողովը, որն իր պառակտումներով ու ամլությամբ ներկայացնում էր սահմանադրական շրջանի հայկական անգործության ամենատիպիկ պատկերը, հանկարծ որոշեց իր վրայից թոթափել անտարբերության մշուշը և պահի նշանակության որոշ ըմբռնում ցույց տվեց:

1912 թ. օգոստոսի 24-ին Հայոց Ազգային ժողովը Ղալաթիայում հավաքվեց նիստի, որը նրա շուրջ 50-ամյա տարեգրության մեջ անօրինակ և բացառիկ էր իր մարտական տրամադրվածությամբ ու իշխանությունների հանդեպ անզիջում ընդդիմությամբ:

Ժողովին, բացի պատգամավորներից, ներկա էին մեծ թվով ներկայացուցիչներ Թուրքահայաստանից և կայսրության տարբեր տեղերից: Եկել էին հույսով, որ հայոց ազգային իշխանությունը մի դարման կգտնի իրենց ցավերին: Հետաքրքրությունն այնքան մեծ էր, որ հարյուրավոր մարդիկ, տեղ չգտնելով դահլիճում, հավաքվել էին դրսում և սպասում էին ժողովի վճռին: Իսկ ներսում ժողովականների ջղերի լարված լինելը ցույց էին տալիս, թե ողջ ազգը մատնված է հուսահատության:

Նիստին եկել էին ոչ միայն հայ, այլև բազմաթիվ օտար թերթերի թղթակիցներ:

Այդ նիստը Ազգային ժողովի համար անսովոր էր նաև մի ուրիշ առումով. բոլոր պատգամավորները տրամադրված էին համերաշխ աշխատանքի ու գործակցության, մի հանգամանք, որ Ազգային ժողովի կյանքում և ընդհանրապես, հայոց համար բացառիկ երևույթ էր: Անսովոր էր նաև այն, որ պատգամավորները նիստի էին ներկայացել պատասխանատվության բարձր զգացումով և լրջմիտ երևույթ ունեին:

Բոլորը հույս ունեին, որ Ազգային ժողովի ընդունելիք հուսահատական հայտարարությունները պետք է որ ազդեն թուրքական հանրային կարծիքի և Բարձր Դռան վրա, մանավանդ որ Իթթիլաֆի կառավարությունը տարբեր առիթներով հայտարա-

ել էր, որ ինքը չահագրգռված չէ ներքին բաղում խնդիրներին նորերն ավելացնելու[1]:

Պատգամավորները պետք է որոշակի պարզեին մի բան. Թուրքահայաստանում հայերին արհավիրքներից հեռու պահելու համար Իթթիլաֆի կառավարությունը պատրաստ է արդյոք գժտվելու քրդերի հետ, թե՞ հայի արյունն առաջվա պես մատաղ էր արվելու քրդության կողոպուտի ու սպանությունների կրքերին: Կառավարությունը կանգնած էր երկընտրանքի առջև և պետք է ընտրություն կատարեր երկու ուղիների միջև. վերջ տալ հայերի նկատմամբ քրդերի բռնություններին կամ շարունակել անտեսել վերջիններիս արյունալի արարքները:

Նիստն սկսվելուն պես այն կառավարության դեմ խաղաղ ցույցի հանգամանք ստացավ:

*Բացելով Ազգային ժողովի նիստը՝ **Հայկ Խոջասարյանը** չեշտեց օրվա բացառիկ նշանակությունը և կատարյալ սառնասրտություն պահպանելու կոչ արեց ժողովականներին:*

*Խոսք վերցնելով՝ պատրիարք **Հովհաննես արք. Արշարունին** նշեց, որ հայոց հոգսերի առթիվ ինքը հանդիպել է վարչապետին և օսմանյան համարյա բոլոր նախարարներին, նրանց հետ ունեցել է դառը խոսակցություններ ու բուռն վիճաբանություններ, ստացել լոկ սին խոստումներ, որոնք պետք է դիտել որպես բացահայտ խաբկանք: Ուստի, ասում էր նա, համակերպվողի հուսահատությամբ այսօր կանգնած ենք մեր նվաղած կամքի ու նվաստացած արժանապատվության մերկությանը դեմ-հանդիման: Մեր երկիրն ու մեր ժողովուրդը ապրում են դեկադանս:*

«Երբ բողոք ներկայացուցինք վարչապետին,- ժողովականներին պատմում էր պատրիարքը,- ան ըսաւ թէ «հոգ մի՛ ընէք, վերջին սպանութեանց հեղինակներուն ի՞նչ արիւնռուչտ մարդասպաններ ըլլալնին գիտեմ»: Վարչապետը յետոյ ըսած է թէ հայերը թող ինքզինքնին պաշտպանեն, քանի որ կառավարութիւնը ի վիճակի չէ: Մենք ըսինք թէ մերինները զէնք չունին, ինչպէ՞ս պաշտպանեն ինքզինքնին: Անոնց ձեռքը զէնք կայ, մեր ձեռքը՝ չկայ»[2]:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 194, 2 սեպտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 196, 5 սեպտեմբերի 1912 թ.:

Այնուհետև պատգամավորների խնդրանքով Հովհաննես արք. Արշարունին մանրամասներ է ներկայացնում ներքին գործոց նախարար Ալի Դանիշ բեյի հետ ունեցած հանդիպումից, երբ վերջինս պատրիարքին մեղադրել էր հայերի սպանությունների մասին չափազանցված տվյալներ ներկայացնելու համար:

«Հայոց պատրիարքարանը սուտ չի խոսիր երբեք,- պատասխանեցի: Ներքին գործոց մինիստրն ըսաւ, որ այդ ոճիրները սովորական դէպքեր են, ամեն տեղ ալ մարդիկ իրար կը զարնեն: «Ասոնք սովորական դէպքեր չեն,- ըսի,- ընդհանուր կոտորածի նախաբանն են. դարձեալ այդ կոտորածնե՞րը պիտի կրկնուին: «Ալբանիա **ըսեան** (ապստամբություն:- Հ. Ս.) եղաւ, բանակ ղրկեցիք» ըսի: «Ըսեան մի՛ ըսէք, **քրյամ** (հեղափոխություն:- Հ. Ս.) ըսէ՛ք» պատասխանեց: «Մարդ հարկաւ նստած տեղը յեղափոխութիւն չընէր,- ըսինք,- ոտքի կելլայ: Դուք զօրագունդեր ղրկեցիք Ալբանիա, չատ մը տեղեր գետնի հաւասար ըրիք, ի՞նչպէս նոյն զսպողական միջոցները չէք գործադրեր հոս, խելքերնիս չի հասնիր» պատասխանեցի»[1]:

Պատրիարքի հաղորդումից հետո մտքերի փոխանակություն է սկսվում:

Ելույթ ունենալով, **Ստեփան Գարայանը** ասում է. «Հայ ազգի մարտիրոսութեան պատմութեան մէջ այսօրուան ժողովն յիշատակելի ժողով մը պիտի ըլլայ, եթէ մեր խորհրդակցութիւնները կարենան յանգիլ գործնական, մանաւանդ իրականանալի արդիւնքի մը»[2]: Կացությունը հուսահատական աստիճան ծանր է, չեչտում էր նա, քանզի օսմանյան սահմանադրության հռչակումից ի վեր փոխանակ բարելավվելու, աստիճանաբար ավելի է վատթարանում թուրքահայության դրությունը: Հայությունը համակված է մոտալուտ ընդհանուր ջարդի և կողոպուտի սարսափով: Անհրաժեշտ է անմիջական ու գործնական դարման գտնել: Բայց չարիքի դարմանը գտնելու համար նախ և առաջ պետք է չարիքի պատճառը գտնել: Արդյո՞ք հայերի

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 196, 5 սեպտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

նկատմամբ թուրքերի ու քրդերի ոճրագործությունների դեմ կառավարության անտարբերությունը բացատրվում է նրա կամքի բացակայությամբ, թե՞ կարողություն, ուժ չունենալով, իսկ գուցե թե մի երրորդ պատճառով – ահա հենց ա՛յս հարցն է, որ պետք է պարզել:

Եվ Ս. Գարայանը փորձում է պարզել հարցը: Նա ասում է, որ մենք՝ հայերս, վայրկյան անգամ չենք կարող ենթադրել, թե օսմանյան կառավարությունը հնարավորություն չունի բարելավելու իրենց վիճակը և արգելք դնելու թուրքերի ու քրդերի չդադարող ոճրագործություններին, նրանց ամեն տեսակ անիրավ հարձակումներին: Եթե ընդունենք այդ տեսակետը, նշում էր ելույթ ունեցողը, ապա մեզ կմնա միայն երկու հնարավորություն. խմբովին գաղթել երկրից և կամ ճարահատ մի ուրիշ ծայրագույն միջոցի դիմել, այն է՝ խնդրել օտար քրիստոնյա պետությունների կառավարություններին, որ ըստ դարավոր ավանդույթների և հանուն մարդասիրության, բարեխոսեն Օսմանյան պետության մոտ՝ պաշտպանելու համար մեր ինչքը, պատիվն ու կյանքը:

Առաջին հնարավորության մասին ելույթ ունեցողը չեշտադրում էր, որ հայությունը չի կարող իր հայրենիքը լքել և երկրագնդի որևէ անկյուն գաղթել կամ աշխարհով մեկ ցրվել, «արդ՝ որովհետեւ ազգի մը խմբովին գաղթը ահագին աղէտ մըն է եւ հայոցս դարաւոր հայրենիքին հողին վրայ ապրելու եւ մեռնելու իրաւունքը նուիրական է եւ անբռնաբարելի: Որովհետեւ մենք՝ հայերս, օսմանեան սահմանադրութեան հարկադրած բոլոր պարտականութիւնները լիովին կը կատարենք»[1]:

Ինչ վերաբերում է օտարներին բողոքելուն, ասում էր Ս. Գարայանը, ապա թուրքահայերը սահմանադրությունն ընդունելուց հետո դա անընդունելի են համարում: «Մենք օսմանեան միութեան յարած կը մնանք բոլոր միւս օսմանեան տարրերէն աւելի անկեղծութեամբ, որովհետեւ սահմանադրութեան հոչակումէն ի վեր, Ադանայի արհաւիրքէն վերջն անգամ, հայ ազգը վեհանձնութիւն ու անկեղծութիւն ունեցաւ երբեք որեւէ օտար

[1] **«Մշակ»**, № 196, 5 սեպտեմբերի 1912 թ.:

կառավարութեան չդիմելու եւ միմիայն օսմանեան սահմանադրական կառավարութենէն սպասեց իր իրաւանց պաշտպանութիւնն եւ արդարութեան գործադրութիւնը»:

Ահա՛ «այս ամեն նկատողութեամբ մենք՝ հայերս, կը խորշինք այս երկու յուսահատական միջոցներէն, բայց կը պարտինք ազդու եւ կտրուկ դարման մը խնդրել օսմանեան կառավարութենէն»[1]:

Քանի որ սահմանադրությունից հետո փոխնիփոխ կառավարության գլուխ եկած բոլոր վարչապետները՝ Քյամիլ, Հիլմի, Հակկը, Թևֆիկ, Սաիդ փաշաները, իրար հաջորդած հարյուրավոր վալիները, մութասերիֆները, գայմագամները անթիվ, անհամար խոստումներ էին տվել հայերին, որոնք բոլորն էլ ի դերև էին ելել:

Ուստի Ազգային ժողովում նունիսկ առաջարկություն եղավ այլևս ոչ մի հարցով չդիմել թուրքական իշխանություններին, այլ նրանցից լիովին մեկուսանալ, պարփակել սեփական պատյանի մեջ, միայն ապրել ներազգային կյանքով:

Կտրականապես մերժելով նման մոտեցումը, Ս. Գարայանը գտնում էր, որ պետք է վերջին փորձն անել և կառավարությանը խնդրել, որ նա կարգադրություն իջեցնի տեղերին, որպեսզի Հայաստանի որոշ գավառներում օսմանցի մահմեդական և քրիստոնյա պատավոր անձանցից ու նախկին զինվորներից (ռեդիֆներ) բնակավայրերը պահպանող ջոկատներ ստեղծվեն, բացի այդ, բոլոր քաղաքացիներին արտոնել զենք կրել ինչ-ինչ պայմաններով՝ գոնե իրենց կյանքը պաշտպանելու համար[2]:

*Ստեփան Գարայանից հետո հանդես են գալիս մի քանի պատգամավորներ, որից հետո խոսք է առնում Դաշնակցության նշանավոր գործիչ **Վարդգեսը**: Իր ելույթը նա սկսում է այն հատատումով, որ օսմանյան կառավարությունները փոխվում են, հիմա էլ Իթթիլաֆն է իշխանության գլուխ, բայց պետության քաղաքականությունը հայերի հանդեպ միշտ նույնն է մնում: Քննադատելով հայության հանդեպ Իթթիլաֆի բռնած դիրքը՝*

---

[1] *Տե՛ս **«Մշակ»**, № 196, 5 սեպտեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում, № 197, 6 սեպտեմբերի 1912 թ.:*

Վարդգեսը բանաձևի մի նախագիծ է առաջարկում ժողովին և խնդրում դա հաստատել:

Նախագծի արձանագրական մասում ասված էր, որ ամբողջ չորս տարվա ընթացքում հնարավոր չեղավ խաղաղեցնել հայաբնակ նահանգները, և դրա պատճառը իշխանություններն են: Բանաձևի նախագծում նրա հեղինակը առաջարկում էր կառավարության կողմից հետևյալ գործնական միջոցների անմիջական գործադրությունը.

1) Ձեռնարկել զինվորական խիստ միջոցներ և անմիջապես ձերբակալել ու պատժել Վանի ու Բաղեշի վիլայեթներն ասպատակող ավազակախմբերը և ի մասնավորի Շատախի, Խութի, Մոտկանի, Խիզանի և Զարսանջակի հայտնի մարդասպաններին: Տերերին վերադարձնել կատարված կողոպուտները, պայմանով, որ զսպող զորախմբերն իրենց բնակատեղի չընտրեն հայկական գյուղերը, 2) Արմատական միջոցներ ձեռք առնել կատարված չարաղետ դեպքերի կրկնումն հետայսու բացառելու համար, իսկ մինչ այդ՝ ա) հայկական գյուղերում հաստատել պետության զենքով զինված պահակներ և նրանց պահել մինչև քրդերի կատարյալ զինաթափումը, բ) այդ շրջաններում ավելացնել հայ ժանդարմների ու պաշտոնյաների թիվը՝ հայ բնակչության թվի համեմատ, 3) Հավասարության սկզբունքը կատարյալ պահպանելու համար վերացնել քրդական թեթև հեծելազորքերը (համիդիե), դրանք ենթարկել ընդհանուր զինվորական համակարգին կամ, հակառակ պարագայում, բոլոր ազգությունների համար միևնույն սկզբունքը գործադրել, 4) Էրջորեն զբաղվել հողերը վերադարձնելու խնդրով:

Առաջարկելով նախագիծը՝ Վարդգեսը, այնուհետև, ամեն կետի վերաբերյալ տալիս էր ընդարձակ մեկնաբանություններ, մասնավորապես չեչտում էր, որ քուրդը վախկոտ ժողովուրդ է, ուստի բավական է, որ կառավարությունն անկեղծորեն ցանկանա նրան զսպել և ամեն ինչ կընկնի իր տեղը[1]:

Մի քանի ուրիշ ելույթներից հետո նիստը կարճատև ընդմիջվում է, որի ընթացքում ժողովրդից Ազգային ժողովի դիվա-

---

[1] *Տե՛ս **«Մշակ»**, № 197, 6 սեպտեմբերի 1912 թ.:*

նին ներկայացվում են զանազան համախոսականներ, որոնցից երկուսը աչքի էին ընկնում իրենց բովանդակությամբ և պարունակած առաջարկներով: Այդ համախոսականներից մեկը ներկայացրել էին օսմանյան համալսարանի և երկրագործական համալսարանի հայ ուսանողները, իսկ մյուսը՝ պոլսաբնակ վասպուրականցիները: Երկու համախոսականներն էլ պահանջում էին խիստ պատիժների ենթարկել չարագործներին և հատուցում տալ զոհերին: Կառավարության՝ դա չանելու դեպքում առաջարկվում էր, որ Ազգային ժողովն ու Ազգային կեդրոնական վարչությունը հրաժարական տան, փակեն եկեղեցիները, դպրոցները, ազգային բոլոր պաշտոնական հաստատությունները, այդ թվում՝ պատրիարքարանը, ինչպես նաև բոյկոտել օսմանյան նոր խորհրդարանի ընտրությունները, հայերից պատգամավոր չտալ:

Ընդմիջումից հետո վերսկսված նիստում հանդես են գալիս մի քանի պատգամավորներ և պաշտպանում նշված համախոսականներում արծարծված առաջարկները:

Ապա խոսք է վերցնում Ազգային ժողովի կենտրոն խմբակցության ղեկավար **Դավիթ Տեր-Մովսեսյանը**: Նա ձեռնթափություն, դասալքություն և անիշխանություն է համարում ներկայացված համախոսականների հեղինակների առաջարկները: «Կառավարութիւնը պէտք է գիտնայ եւ համոզուի,- ասում էր նա,- որ հայերը այս երկրին մէջ միակ քաղաքականութիւն մը ունին, հայերը որոշած են պատուի, կեանքի, ինչքի իրենց իրաւունքը պահել, մի հոգի, մի մարմին ըլլալ եւ այսպէս ներկայանալ միշտ»: Նա ցավով նշում էր, որ հայերը երբեք միաբան չեն եղել, Իթթիհադի օրոք ավելի պառակտված մնացին. Դաշնակցությունն աջակից եղավ երիտթուրքերին, հնչակյանները պաշտպանեցին Իթթիլաֆին, սահմանադրական ռամկավարները քննադատում էին կառավարությանը, իսկ պահպանողականներն անելի էին մատնված: Ըստ ելույթ ունեցողի՝ կառավարությունն անցյալին կարծում էր, թե հայերը մի հոգի, մի մարմին են, բայց «չորս տարուան մէջ չկրցանք այս համոզումը ներշնչել, գոնէ չորս տարի ետքը համոզենք: Ամեն անգամ, որ հարստահարութեան խնդիր ներկայացաւ այստեղ, միշտ ճիգ մը, ջանք մը

կար համոզելու, որ համբերող ըլլանք, ձայն չբարձրացնենք, լուռ մնանք: Զորս տարուան մէջ ըսի, 14 տարի վերջն ալ կը կրկնեմ. այս ազգը միմիայն իր ոյժին եւ իր անձնական արժանիքին կրնայ ապաւինիլ: Հայերն այսօր դժբաղդաբար միեւնոյն քաղաքականութեան չեն հետեւիր»[1]:

Ելոյթ են ունենում մի շարք ուրիշ պատգամավորներ, որոնցից մեկը պահանջում է, որ վարչությունն ու պատրիարքը հենց այժմ ներկայացնեն իրենց հրաժարականները:

Այս վերջին առաջարկի առթիվ հանդես է գալիս ***Վահան Թեքեյանը*** *և հորդորում, որ այժմ չի կարելի հրաժարականների հարց դնել: «Կեզրակացնեմ, ըսելով, թէ՝ վարչութիւն եւ պատրիարք լոիկ գործելու են, լուութեամբ կատարուած գործը շատ աւելի ազդեցիկ է, քան ամենաբուռն խօսքերը»: Նա նույնպես չեշտում էր ազգային համերաշխության անհրաժեշտությունը, ասելով. «Կյուսամ, որ այսուհետ ամենքս նոյն զգացումներով կը վարուինք, բայց այժմէն ալ կուզեմ ըսել, թէ պէտք է միշտ միացած ըլլանք եւ ոչ թէ վարդապետական կամ կուսակցական խնդիրներով բաժնուած մնանք, քանի որ այս երկրին մէջ այսքան տարրական բան մը՝ կեանքի ապահովութեան կարօտ ունինք դեռ»[2]:*

Վերջում կրկին խոսք առնելով՝ Հովհ. Արշարունի պատրիարքը հայտարարում է, թե գործելու բոլոր միջոցները դեռ սպառված չեն, հետևաբար հրաժարականի խնդիր հարուցելն ավելորդ է: Նա դյուրահավատորեն նշում էր. «Նկատի առէ՛ք, որ այս թալանները, սպանութիւնները կըլլան վայրենի տեղի մը մէջ. 11-րդ զօրաբանակին հեռագիր գացած է եւ զօրախումբեր շարժման մէջ դրուած են. քանի մը օր համբերութիւն, որպէսզի խոստացուած արդիւնքը տեսնենք»[3]:

Ամփոփելով ժողովին արդյունքները՝ ատենապետ Հայկ Խոջասարյանն առաջարկում է մեկ շաբաթով հետաձգել առաջարկած բանաձևերի և արտահայտած ցանկությունների քվեարկու-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 197, 6 սեպտեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

թյունները: Պատգամավորները ճիշտ են համարում առայժմ հրաժարականների հարց չդնել, հնարավորություն տալ, որպեսզի պատրիարքը բանակցի կառավարության հետ, որից հետո նորից ժողովի հավաքվել տեղեկանալու համար բանակցելու ընթացքում ձեռք բերված արդյունքներին:

Հայկ Խոջասարյանի առաջարկը չդրվեց քվեարկության, բայց ընդունվեց պատգամավորների մեծամասնության համակրական արտահայտություններով: Այսպիսով, նրանց ոգևորությունը բռնկվել ու մարել էր մեկ նիստի ընթացքում: Կրակոտ ու փքուն ճառերին պիտի հաջորդեր անորոշ սպասողականությունը, չնայած բակում խռնված ժողովուրդը պատգամավորներից պահանջում էր չցրվել՝ նախքան մի որոշում կայացնելը:

Կ. Պոլսի հայկական և օտար մամուլը լայնորեն լուսաբանեց Թուրքահայոց Ազգային ժողովի պատմական նիստը և նրանում չոչափված հարցերը:

Այսպես, մայրաքաղաքի ֆրանսերեն թերթերից "Jeun Turc"-ը («Ժեոն Թյուրք») բավական ընդարձակ նկարագրեց ժողովի ընթացքը՝ համակրանքի ջերմ տողեր նվիրելով հայերին: Իսկ "La Liberté"-ն («Լիբերտե») նույնպես ֆրանսալեզու թերթը նիստին նվիրած հոդվածում գրում էր.

«Ավելի քան 30 տարի հայերը ատելություն էին տածում Աբդուլ Համիդի հանդեպ: Նա այդ ժամանակաշրջանում ամեն ջանք գործ դրեց հարստահարելու և տանջելու Թուրքիայի հայ բնակչությանը: Զենք ցանկանում այստեղ պատմել այն բոլոր տառապանքների մասին, որ կրեց հայ ժողովուրդը. դա մեզ շատ հեռու կտաներ: Նոր ռեժիմը որևէ բարվոքում առաջ չբերեց հայոց համար: Արյունը շարունակում էր ոռոգել երկիրը: Ավատապետ բեյերը հայ չինական ժողովրդի հետ վարվում են ինչպես ուզում են՝ ձրի ծառայեցնում ու կողոպտում են նրան: Ողջ հայությունը հուզված է այրիների ու որբերի գանգատներից և սարսափի աղաղակներից»[1]:

Ազգային ժողովի օգոստոսի 24-ի նիստում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ինչպես ասվեց, մեկ չա-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 198, 7 սեպտեմբերի 1912 թ.:

բաթ հետո պետք է հրավիրվեր նոր ժողով, բայց չաբաթը լրանալուց առաջ Արշարունի պատրիարքը հայտարարեց, թե նրա գումարումը հետաձգվում է: Պատճառն այն էր, որ, կատարելով Ազգային ժողովի հանձնարարականը, պատրիարքը դիմումներ էր ներկայացրել կառավարությանը, նաև խնդրել էր իրեն ընդունել, բայց դեռ պատասխան չէր ստացել:

Օգոստոսի 30-ին և 31-ին Արշարունին խորհրդակցության հրավիրեց հայկական մամուլի ներկայացուցիչներին և Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների ներկայացուցիչներին՝ Ազգային ժողովի գումարման հետաձգման պատճառները նրանց բացատրելու համար:

Հայկական մամուլի ներկայացուցիչները խոստացան պատրիարքարանին աջակցել և չգրգռել ժողովրդին, իսկ խմբակցությունների ներկայացուցիչները հավաստիացրին, որ իրենք որևէ խնդիր չեն հարուցի:

Երբ վերջացավ այս խորհրդակցությունը, Ազգային ժողովում ներկայացված կուսակցությունների ներկայացուցիչները նոր խորհրդակցության հավաքվեցին, որպեսզի միասնաբար աշխատեն Ազգային ժողովի առաջիկա նիստին ներկայացվելիք ընդհանուր բանաձևի նախագծի վրա: Բայց նրանք չկարողացան համատեղ եզրակացության գալ և որոշեցին բանաձևի նախագծին կրկին անդրադառնալ ութ օր հետո, փորձելով գոնե այդ ժամանակ համաձայնության գալ[1]:

Այդքան սուր ազգային տագնապի պահին շատ կարևոր էր, որպեսզի հայերը չպառակտվեին, քանի որ այդ պարագան կառավարությունը կարող էր շատ հեշտությամբ օգտագործել:

Մինչ պատրիարքարանում կառավարությունից որևէ լուրի էին սպասում, վարչապետ Ահմեդ Մուխթար փաշան Գաբրիել էֆ. Նորատունկյանին հանձնարարեց «Հայաստանի բարեկարգման նպատակով միջոցներ խորհելու համար» խորհրդակցություն գումարել:

Խորհրդակցությունը կայացավ սեպտեմբերի 1-ին, Նորա-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 201, 12 սեպտեմբերի 1912 թ.:

տունկյանի տանը: Մասնակցում էին նաև ներքին գործերի նախարար Ալի Դանիշ բեյը, Վանի և Բաղեշի նորընտիր կուսակալները, Կեսարիայի և Նիկոմեդիայի նախկին կառավարիչ, նույն օրը Խարբերդի կուսակալ կարգված Ջեմալ բեյը, ինչպես նաև Սամսունի կառավարիչ Հովհաննես Պոյաճյանը:

Խորհրդակցությունը փաստորեն նախարարական մասնախումբ էր, որն ընդունեց համապատասխան որոշումներ, որոնք եթե գործադրվեին, շատ նպաստավոր կլինեին հայերի համար: Հատկապես շատ կարևոր էր հողային խնդրի առաջարկվող լուծումը: Մասնախումբը հանգել էր եզրակացության, որ անհրաժեշտ է հայոց հողային խնդիրը վճռել ոչ թե դատական միջոցներով, այլ՝ վարչական եղանակով: Այդ նպատակով պիտի ստեղծվեին հանձնախմբեր՝ կես առ կես բաղկացած հայ և իսլամ անդամներից, որոնցից մեկը պետք է լիներ տեղի հայ առաջնորդը: Հանձնաժողովների կայացրած վճիռները պարտադիր պետք է կատարվեին: Նույն հողատարածքների համար վիճող այն կողմը, որը զրկվելու էր հողատիրական իրավունքից, պետք է պետական գանձարանից դրամական փոխհատուցում ստանար:

Սեպտեմբերի 5-ին նախարարների խորհուրդը քննեց նախարարական մասնախմբի առաջարկությունները և ընդունեց որոշում, որով հայաբնակ նահանգների վալիներին հանձնարարվում էր բոլոր միջոցներով համերաշխություն ձեռք բերել հայ և քուրդ տարրերի միջև:

Հողային խնդրի կարգավորման համար նախարարների խորհուրդն առայժմ հատկացնում էր 100.000 ոսկի, որը բաժանվելու էր հինգ նահանգների միջև՝ յուրաքանչյուրին 20 հազարական ոսկի:

Արշարունի պատրիարքն, անչուշտ, տեղյակ էր, որ Գաբրիել Նորատունկյանի տանը կայացել է նախարարական մասնախմբի նիստ և այնտեղ ընդունվել են առաջարկություններ կառավարությանը: Ինչպես դրան, սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում ևս նա չարունակեց իր գրավոր ու բանավոր դիմումները, բայց որևէ արդյունքի չէր հասնում: Բարձր Դուռը Արշարունի սրբազանին պատասխանել էր, թե պատրիարքարանից ստացված բոլոր առաջարկությունները մերժվել են: Կառավա-

րությունից հայտնած բանավոր պատասխանից նաև պարզ էր դարձել, որ այնտեղ որևէ մտադրություն չկա միջոցներ ձեռնարկելու հարստահարիչների ու ջարդարարների դեմ:

Հայաստանում վիճակն անփոփոխ էր, հայկական շրջանակներում տիրող հուզումը դեռ հանդարտած չէր:

ՄՈՏԱԼՈՒՏ ԿՈՏՈՐԱԾԻ ՍԱՐՍԱՓԻ ՄԵՋ

Օսմանյան խորհրդարանում տիրական դարձած Իթթիլաֆի իշխանության ժամանակ ևս բազմաչարչար Հայաստանում գրեթե անելանելի վիճակ էր:

1912 թ. կեսերից Հայաստանում վերսկսվել էին ջարդերը:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանում գավառային առաջնորդարաններից ամեն օր շարունակվում էին սրտաճմլիկ հեռագրեր ստացվել գործած ոճիրների, զատ-զատ ու խմբային սպանությունների, ավարառությունների, կանանց ու աղջիկների բռնաբարությունների կամ գերեվարման, բռնի իսլամացման մասին: Հատկապես աղեկտուր էին Վանի ու Բաղեշի կուսակալություններից ստացված լուրերը:

Թուրքերը չիլ աչքով ու ներքին զայրույթով էին նայում, թե ինչպես հայերը, չնայած նրանց անտանելի վիճակին, շարունակում են աշխատել ու գոյատևել: Ձգտելով հայերին դուրս մղել ունեցած վերջին դիրքերից, թուրք խանութպանները, անասնավաճառները, մոլլաները զինված քրդերին դրդում էին մահ ու սարսափ տարածելու անզեն հայերի վրա: Հայերի ջարդերն իրականացնողների դաժանությունը չէր բխում նրանց ուժից, այլ՝ անզորությունից, թերզարգացությունից և անլիարժեքության զգացումից: Թուրքագետ Դմիտրի Երեմեևը նկատում է, որ «հարևան քրիստոնյայի նկատմամբ ունեցած անողոք նախանձը», որ գրգռում է ջարդարարների հոգին, պոռթկում է ախտաբանական մոլեռանդության ձևով և չորս կողմը մահ ու ավեր սփռում[1]:

---

[1] ***Տե՛ս Дмитрий Евгеньевич Еремеев***, *На стыке Азии и Европы, Очерки о Турции и турках, "Наука", Москва, 1980, с. 124.*

Շարունակվում էին հիմնականում քրդերի, ապա նաև թուրքերի ձեռքն անցնել Թուրքահայաստանի ամենաորակյալ, արժեքավոր հողերը: Հայ գյուղացիների մեծ մասն առաջվա պես զրկված էր իր տնտեսությունը վարելու հնարավորությունից, որովհետև նրա ամբողջ հողատարածության վրա նստած էին վաչկատուն խաշնարածները: Մի ուրիշ տեղ քոչվոր անասնապահները փակում էին երթևեկության ուղիները, և երկրագործը չէր կարողանում դաշտ դուրս գալ, մի երրորդ տեղ գյուղն ընկած էր կիրճերի ու ձորերի մեջ՝ զրկված հաղորդակցությունից, մի չորրորդ տեղ գյուղացու հողաբաժինը բաղկացած էր այնպիսի կտորներից, որոնք իրարից բաժանված էին մեծ տարածությամբ, ուրիշների կալվածքներով և այլն:

Գործի գլուխ եկած Իթթիլաֆի կառավարությունը հայտարարել էր, թե հայերի այժմյան ջարդի պատճառը հողային հարցն է, որը պետք է լուծել: Հայտարարության մեջ տեղ գտած «պետք է լուծել» բառերը քրդերը դիտել էին որպես հայերից խլած հողերը նախկին տերերին վերադարձնելու իրական վտանգ, ու նրանցից ամեն մեկը նպատակ էր դրել ոչնչացնել «իր» հողերին սպառնացող նախկին հայ տիրոջը, այդպիսով իր հասկացած ձևով վերջնականապես լուծել հողային հարցը:

Իթթիլաֆի կառավարության հայտարարությունը, որին չէին հետևում որոշակի գործեր, ըստ էության դարձավ սադրանք՝ նոր դժբախտություններ բերելով հայերին:

Նախկինի պես սարսափելի կացություն էր ստեղծված տուրքերի գանձման հարցում: Թե՛ պետական և թե՛ բազմազան այլ տուրքերը միմյանց վրա կուտակված, թուրքահայ ժողովրդին գցել էին անվերջ պարտականությունների մի այնպիսի ցանցի մեջ, որից ազատվելու համար սովորական միջոցներն անզոր էին: Անհրաժեշտ էր պետական միջամտություն, որպեսզի բարեփոխվեր տուրքերի բաշխման ու տուրքերի հավաքման ամբողջ համակարգը և մի բարեկարգ դրություն ստեղծվեր, ինչը չէր արվում:

Հայկական նահանգներում առաջվա պես անտանելի պատկեր էր ներկայացնում արդարադատությունը: Թուրքահայը չէր

վստահում օսմանյան դատարաններին և աշխատում էր խուսափել դրանցից, որովհետև չէր հավատում, թե նրանք կարող են պաշտպանել ճշմարտությունը:

Դեռևս 1911 թ. աշնանը Հայոց ձոր գավառի Քերծ հայաբնակ գյուղի շրջակայքում անհայտ չարագործներ սպանել էին Հալեպցի երեք Թուրքերի, որոնք եկել էին այդ կողմերում ոչխարներ գնելու՝ սիրիական քաղաքներ փոխադրելու և վաճառելու համար:

Այդ սպանության գործում ամբաստանվեց Դաշնակցության զինվոր Բուլղարացի Սարգիսը, որը սպանությունը կատարվելուց երկու-երեք ժամ առաջ այդտեղով անցել էր 8-10 զինված մարդկանցով:

Թեև ամբաստանության համար ուրիշ ոչ մի հիմք չկար, դատարանը, սակայն, կոչնագիր ուղարկեց Սարգսին՝ շտապ ներկայանալու պահանջով: Քանի որ վերջինս հրաժարվեց ներկայանալ, նրան կալանավորելու հրաման արձակվեց:

1912 թ. մարտի 28-ին Վանում մի խումբ ոստիկաններ, իմանալով Սարգսի տեղը, փորձում են գործադրել դատարանի հրամանը և ձերբակալել նրան, բայց նա ատրճանակով կրակ է բացում, որի հետևանքով սպանվում է մի ոստիկան, իսկ նա, օգտվելով ստեղծված խառնաչփոթ վիճակից, կարողանում է փախչել:

Սպանված ոստիկանի թաղումը Վանում հայերի դեմ ուղղված հսկա ցույցի վերածվեց: Թաղման թափորն անձամբ գլխավորում էր վալի Հակկը բեյը:

Այդ դեպքից հետո եկած ամիսներին օր չէր պատահում, որ Վանի վիլայեթում հայի սպանություն չլիներ: Մի հաղորդումից իմանում ենք, որ միայն 1912 թ. օգոստոսի առաջին տասնօրյակում վիլայեթի գյուղերում սպանվել է 26, իսկ Վան քաղաքում՝ 30-ից ավելի հայ: Նույն ժամանակ Փոքր Ասիայի զանազան տեղերում 130 հայ էր սպանվել[1]:

1912 թ. օգոստոսի սկզբներից քրդերն անլուր գազանու-

---

[1] *Տե՛ս **"Вечернее Время"**, 30 августа 1912 г.*

թյուններ էին կատարում Տիգրանակերտում, Մուշում, Բաղեշում, Կարինում, Շատախում...

Կ. Պոլսի նոր կառավարությունը «խիստ» հրամաններ էր տալիս «հետապնդելու» և «անպատճառ ձերբակալելու» ավազակներին, բայց դա «չէր հաջողվում»: Քաջ իմանալով, որ «խիստ» հրամանները ձևական են, սրանք ավելի ու ավելի հանդուգն ու համարձակ էին դառնում:

Ավազակախումբը մտնում էր հայկական գյուղ, այնտեղ մնում երկու-երեք օր, ապրում գյուղացիների հաշվին, նրանցից խլում այն ամենը, ինչը դուր էր գալիս: Երբ քրդերի՝ գյուղ մտնելու մասին իմաց էին տալիս ոստիկաններին, սրանք գնում էին ոչ թե այդ, այլ հարևան գյուղ, այնտեղից մի ուրիշ գյուղ և, ի վերջո, միայն այն գյուղը, ուր, իրոք, գտնվել էին ավազակները, բայց որոնք հիմա այնտեղ չէին: Եվ ահա՛ սկսվում էին գյուղացիների հարցաքննությունները, սպառնալիքները, ապա՝ չարչարանքները: Նրանց մեղադրում էին ավազակներին տեղ տալու և կերակրելու համար: Անիրավված գյուղացիներն այս անգամ ստիպված էին լինում կերակրել ու պահել ոստիկաններին ու նրանց ձիերն այնքան ժամանակ, մինչև կհեռանային գյուղից: Քուրդ հրոսակները գյուղ մտնելիս գյուղացիներին ճիշտ էին ասում. «Մի՛ վախեցեք, քանի մենք գյուղում ենք՝ ոստիկաններ չեն գա, կգան այն ժամանակ, երբ մենք այստեղից արդեն հեռացած կլինենք»:

Ոստիկանները կողոպտիչներին չէին ձերբակալում, որովհետև նրանց հարձակմանը ենթարկվելուց վախենում էին: Ուստի մտածում էին. «Ի՞նչն է մեզ պարտավորեցնում հայերի համար վտանգելու մեր անձը: Հանուն գյավուրների գնդակի զո՞հ դառնալ: «Նեյիմե լազըմ» (Ինչի՞ս է պետք)»»:

Այսպիսին էր ոչ միայն ոստիկանության, այլև թուրքական բոլոր իշխանությունների հոգեբանությունը:

Զուգահեռաբար, հայաբնակ վայրերում արագորեն տարածվում էր իսլամություն ընդունելու ալիքը: Լաթաքիայից արևելք գտնվող և 65 տուն ունեցող Արամո գյուղի բոլոր հայ բնակիչները սեպտեմբերին ընդունեցին իսլամական կրոնը:

Սեպտեմբերի վերջերին եվրոպական մամուլին հայտնի

դարձավ, որ Իթթիհադ կուսակցության Ադանայի կոմիտեն պատրաստվում է հայերի նոր ջարդ կազմակերպել Կիլիկիայում: Ադանայի վալին Կ. Պոլսից միայն հրահանգի էր սպասում:

Մամուլը հաղորդում էր, որ անհանգստացած այդ լուրերից, ֆրանսիական և անգլիական միջերկրածովյան նավատորմիղների հրամանատարները մի քանի ռազմանավեր են ուղարկել Փոքր Ասիա՝ հայերին պաշտպանելու համար: Անկասկած, Փոքր Ասիա ասելով նկատի էր առնվում Կիլիկիան, որովհետև ֆրանսիական և անգլիական նավերը կարող էին մտնել միայն այնտեղի ծովեզրյա քաղաքների ծովախորշերը: Այդ լուրը խոսում էր այն մասին, որ ջարդի վտանգը նորից ամենից առաջ սպառնում էր Կիլիկիայի հայությանը:

Եթե Կիլիկիայում ջարդեր սկսվեին, անկասկած, դրանք կտարածվեին Հայաստանով մեկ, իսկ այնտեղ հասնել չէին կարող ո՛չ անգլիական և ո՛չ էլ ֆրանսիական նավերը: Այստեղ հայերին կարող էր օգնության հասնել միայն ռուսական պետությունը, եթե իհարկե, ցանկանար՝ իր շահերից ելնելով:

Եվրոպական և ռուսական լուրջ թերթերը համարյա ամեն օր տպագրում էին նկարագրություններ այն գազանություններից, որ կատարվում էին անզեն հայ բնակչության նկատմամբ:

"Новое Время" լրագիրն իր երեկոյան հրատարակության՝ *"Вечернее Время"*-ի մեջ, անդրադառնալով հայերի զանգվածային նոր կոտորածների վտանգին, կարծիք էր հայտնում, որ ջարդերի կազմակերպման գլուխ առաջվա նման կանգնած է Իթթիհադ կուսակցության ծրագրով ու ծածուկ հրահանգներով գործող Մուսա բեկը:

«Այդ քուրդը,- նշում էր թերթը,- հարել է «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը ու նրա շարքերում մեծ դեր է կատարում: Այժմ, երբ երիտասարդ թուրքերի վարչակարգը տապալվել է, Մուսա բեկը որոշել է Իթթիհադին հակառակ գնացող ներկա թուրքական կառավարության համար ամեն տեսակ բարդություններ ստեղծել: Քրդերի նոր ոճրագործություններն առանց երիտթուրքական կոմիտեի մասնակցության չեն կատարվում: Խնդիրն այն է, որ հայերը չեն համակրում երիտթուրքերի կոմիտեին և շարունակում են ագիտացիա մղել նրանց

դեմ»: Թերթը համոզված էր, որ «Թուրք բնակիչներն այնպիսի եռանդ չեն դրսևորում ջարդելու հայերին, ինչպես քրդերը: Սրանց առաջնորդ Մուսա բեկի գործակալներն ու վարձկանները վճարներ են ստանում ուղղակի Թուրքական իշխանություններից, որոնք էլ քրդերին հայերի սպանությունների են դրդում»[1]:

Թեև հայկական բոլոր նահանգներն էին ոճրագործությունների վայրեր, բայց Վասպուրականի դրությունն ուղղակի աղետալի էր: Այստեղ անզեն բնակչության նկատմամբ իրենց արյունալի դաժանություններով հատկապես առանձնանում էին Միր-Մհեի և Սաիդի քրդական հրոսակախմբերը: Այս երկու ավազակապետները բացեիրաց հայտարարում էին, թե իրենք որևէ մեկի ենթակա չեն, որ նահանգի տեր-տիրականը իրենք են, այլ ոչ թե վալին կամ նույնիսկ սուլթանը:

Թուրքիայի իրականությունն իր բոլոր տխուր փաստերով գալիս էր մթագնելու վիզը ծուռ Թուրքահայի երևակայությունը, գալիս էր մարելու լույսի վերջին ճառագայթն ապագայի անուրջների և երազների մթնոլորտում: Նրա համար մեռած էր այն հույսը, թե ինքը գոնե մեկ տարի ապրելու է առանց ջարդի սարսափի:

Սթափված ամեն տեսակ երազներից՝ հայ գյուղացին մտածում էր, թե ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով պաշտպանի իր անձը: Քուրդ Սաիդը, Մուսա բեկը, Միր-Մհեն չարունակում էին անարգել ասպատակել ողջ Հայաստանը: Նույնիսկ սահմանադրությունից առաջ հայ գյուղացին այն աստիճան չէր տապակվում քրդական դժոխքի մեջ, ինչպես այդ օրերին:

Թուրքահայաստանում հայերի նկատմամբ գործադրվող նոր ճնշումների ահագնացմամբ, կողոպուտների ու սպանությունների կապակցությամբ Արշարունի սրբազանը չարունակում էր գրություններ ուղարկել Բարձր Դռանը, բայց այնտեղից գրավոր պաշտոնական պատասխան չէր գալիս, կամ պատրիարքի բողոքներին տրվում էին անորոշ խոստումներ, երբեմն էլ տրտունջներ հայտնում, թե ստացված լուրերը չափազանցված են: Լավա-

---

[1] ***Вечернее Время***, *30 августа 1912 г.*

գույն դեպքում կառավարությունը բավարարվում էր իր երրորդական-չորրորդական որոշ վճիռներ հայտնելով բանավոր կերպով: Իսկ ոճրագործներին պատժելու համար տեղական իշխանությունները որևէ իրական միջոց չէին ձեռնարկում: Շփոթված ու հուսահատ պատրիարքը և Ազգային կեդրոնական վարչությունը չգիտեին ինչ անել:

Հայկական նահանգներում հայերի սպանություններն այնպիսի ծավալներ էին ընդունել, որ սեպտեմբերի կեսերին մեծ պետությունները հավաքական վերջնագիր ներկայացրին Բարձր Դռանը՝ պահանջելով անհրաժեշտ կարգ ու կանոն հաստատել Հայաստանում: Դա ինչ-որ չափով ազդեցություն ունեցավ կառավարության վրա: Պատահական չէ, որ վերջնագիրը Կ. Պոլսում ստանալուց երկու օր անց չեյխ ուլ-իսլամը, ստիպված, Վանի և Բիթլիսի ղաղիներին պատվիրել էր մուսուլմաններին զսպելու միջոցներ ձեռնարկել: Բայց կայսրության կրոնապետի հորդորները ոչ մի ազդեցություն չգործեցին քրդերի վրա:

Սեպտեմբերի 20-ին Թուրքիայի արդարադատության նախարարը այցելեց հայոց պատրիարքարան և պատրիարքին: Նա Արշարունի սրբազանին հավաստիացրեց, որ նրա՝ Բարձր Դուռ ուղարկած վերջին պաշտոնական հուշագրին կառավարությունը, իբր, շատ լուրջ է վերաբերվում: Միաժամանակ հիշատակելով պետությունների վերջնագիրը՝ նախարարն ասել էր, թե կառավարությունը միջոցներ է ձեռնարկելու վիճակը չտկելու համար, միայն թե հարկ չկա «մեր ներքին ցավերից» որևէ օտար երկրի բողոքել և նրանից օգնություն հայցել, իմաստ չունի նաև դիմումներ հղել Էջմիածին և անհանգստացնել Ամենայն հայոց կաթողիկոսին:

Այս պատասխանատու պահին Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսն իրեն պահում էր շրջահայաց և շատ զգույշ, իր ամեն մի խոսքն ու քայլը չափում զգոն քաղաքագետին արժանի սառը դատողությամբ ու աչալուրջ կեցվածքով:

Այսպես, *"Русское Слово"* թերթի թղթակիցը իր խմբագրության հանձնարարությամբ պետք է մեկներ Էջմիածին և տեսակցեր կաթողիկոսի հետ: Նրա նպատակն էր պարզել, թե Վեհափառ հայրապետն ի՞նչ կարծիք ունի Թուրքահայաստանում

սկսված հայերի նոր ջարդերի մասին:

Գալով Թիֆլիս՝ Թղթակիցը ստանում է տեղի առաջնորդարանի աջակցությունը և նրա երաշխավորությամբ մեկնում էջմիածին: Բայց այստեղ կաթողիկոսը նրան չի ընդունում: Երբ վերջինս դժգոհում է, կաթողիկոսարանի դիվանապետ Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանը նրան բացատրում է. «Դուք պետք է մտնեք կաթողիկոսի դրության մեջ: Նրա ամեն մի անզգույշ խոսքը, դառնալով ընդհանուրի սեփականությունը, կարող է վնասել Թուրքահայաստանի մեր թշվառ եղբայրների առանց այն էլ անտանելի վիճակին: Մենք գիտենք, որ Թուրքահայերն ակտիվ միջամտություն են սպասում Ռուսաստանից, բայց ինքը՝ կաթողիկոսը, չի կարող և չպետք է հայտնի կարծիք, որովհետև մենք դեռ հաստատ չգիտենք, թե կաթողիկոսի միջնորդությանն ինչպես կվերաբերվի ռուսաց կառավարությունը և ընդհանրապես կցանկանա՞, թե՝ ոչ»[1]:

Որպես հայերի նկատմամբ լայնածավալ նոր ոճրագործությունների: Իբրև գլխավոր պատճառ Դաշնակցությունը մատնացույց էր անում իշխանության եկած Իթթիլաֆին: ՀՅԴ օրգան «Հորիզոնը» (Թիֆլիս) գրում էր (№№ 197, 198, 1912 թ.) թե հայերի նկատմամբ Աբդուլ Համիդի քաղաքականության գլխավոր շարունակողը նոր կառավարությունն է:

Պոլսահայության տագնապն ու հուզումը սաստկացավ ներքին գործերի նախարար Ալի Դանիշ բեյի մի բիրտ հայտարարության պատճառով, որ օգոստոսի կեսերին նա արել էր Հովհաննես Արշարունի պատրիարքին, երբ վերջինս նրան ներկայացրել էր Հայաստանի տարբեր տեղերից հասած հարստահարությունների մասին մի ցուցակ և խնդրել որևէ դարման անել: Նախարարը նախատել էր պատրիարքին, ասելով, թե նա ամեն դատարկ բանի համար դիմումներ է անում կառավարությանը, երբ հայերին հուզող հարցերը պատկան մարմիններին կարող էր ներկայացնել պատրիարքարանի երկրորդական աշխատակիցներից մեկը: «Եթէ ոճիրներ չլինէին պետութեան մէջ,- ավե-

---

[1] **«Մշակ»**, № 212, 26 սեպտեմբերի 1912 թ.:

լացրել էր նա,- այդ դէպքում աւելորդ կլինէր կառավարութեան գոյութիւնը»[1]:

Արշարունի պատրիարքը Ալի Դանիշ բեյի մոտից հեռացել էր խորապես վրդովված ու վիրավորված: Հաջորդ օրը նա դիմել էր վարչապետ Ահմեդ Մուխթար փաշային և բողոքել նախարարի ցուցաբերած գռեհիկ վերաբերմունքից: Վարչապետը լսել էր պատրիարքի գանգատը և խոստացել մոտիկից զբաղվել Հայաստանի հարցերով: Նա նաև պատրիարքի գանգատները կառավարության նիստ էր տեղափոխել: Տեղի ունեցած քննարկման ժամանակ հանդես էր եկել Գաբրիել Նորատունկյանը, իրավացի համարել պատրիարքի բողոքները և պահանջել, վերջապես, գործուն կերպով միջամտել Հայաստանի ներքին կյանքին, կարգ ու կանոն հաստատել այնտեղ[2]:

Արշարունի պատրիարքը և Ազգային կեդրոնական, վարչությունը հույս չունեին, թե վարչապետի ու կառավարության մյուս անդամների տված անորոշ ու տարտամ խոստումները կարող են կատարվել:

Հայոց կրքերը չէին հանդարտվում: Մի քանի տասնյակ տաքարյուն հայ երիտասարդներ Ղալաթիայի եկեղեցում հանրահավաք արեցին և պատրիարքարանից ու Ազգային ժողովից զայրալից պահանջեցին վճռական միջոցների դիմել: Մասնավորապես պահանջ եղավ կազմել մի եկեղեցական պատվիրակություն՝ Արշարունի պատրիարք, Հմայակ արք. Դիմաքսյան և Գրիգորիս արք. Հովհաննեսյան կազմով, գնալ Բարձր Դուռ և մի վերջին ու ազդու դիմում անել կառավարությանը:

Պատվիրակությունն այդ կազմով այցելեց վարչապետին, ռազմական, արդարադատության և կրոնից նախարարներին, նաև՝ շեյխ ուլ-իսլամին: Ամենուրեք Հովհաննես Արշարունի պատրիարքն արել էր ծանր արտահայտություններ, հատկապես ամբաստանել էր Ալի Դանիշ բեյին և հայտարարել, որ հետայսու հայերն այլևս որևէ հարցով նրան չեն դիմի: Պատրիարքը նաև սպառնացել էր, որ եթե Հայաստանում դրությունը բարելավելու համար կառավարությունը կարճ ժամանակում միջոցներ չձեռ-

---

[1] ***«Մշակ»,*** *№ 197, 6 սեպտեմբերի 1912 թ.:*

[2] *Նույն տեղում:*

նարկի, ինքը կհեռանա իր պաշտոնից, ավելին, կփակի բոլոր եկեղեցիները, նաև՝ պատրիարքարանը, և կմեկնի Եվրոպա ու փրկության աղերսանքներով կդիմի օտար կառավարությունների օգնությանը:

Հանդիպումների ընթացքում վարչապետ Ահմեդ Մուխթար փաշան և արդարադատության նախարարը նշել էին, որ պատրիարքի բողոքներն իրավացի են: Վարչապետն ընդունել էր, որ վիճակն առանձնապես ծանր է Վանի վիլայեթում, բայց հույս ունի, որ շուտով այնտեղ դրությունը կլավանա, քանի որ Վանի կուսակալը պաշտոնանկ է արվել, և նրա փոխարեն նշանակվել է մի շատ ձեռներեց անձնավորություն: Նա նաև խոստացել էր, որ անպայման կձերբակալվեն Վասպուրականի պատուհասներ Միր-Մհեն ու Սաիդը, և ընդհանրապես քրդերը արժանի պատիժ կստանան: «Ես չեմ կասկածում,- վերջում ասել էր Ահմեդ Մուխթար փաշան,- որ շուտով, շատ շուտով Հայաստանում վիճակն արմատապէս կփոխուի դէպի լաւը»[1]:

Բայց քչերն էին հավատում դրան:

ԱՐՇԱՐՈՒՆԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԸ

Ի պատասխան այն բանի, որ Իթթիլաֆի կառավարությունը նպատակահարմար չէր գտել անձամբ ընդունել թուրքահայոց պատրիարքին և մերժել էր բավարարություն տալ Հայոց ազգային ժողովի օգոստոսի 24-ի նիստում հնչած առաջարկություններին (որոնք պատրիարքը ամփոփել ու ներկայացրել էր Բարձր Դռանը) սեպտեմբերի 8-ին Հովհաննես արք. Արշարունի պատրիարքը և Հայոց Ազգային ժողովի Կեդրոնական վարչությունը դիմեցին ծայրահեղ քայլի՝ կառավարությանը ներկայացրին իրենց հրաժարականները[2]:

Մի ամբողջ շաբաթ կառավարությունը չէր արձագանքում հրաժարականների փաստին: Վերջապես, 1912 թ. սեպտեմբերի

---

[1] **«Մշակ»**, № 197, 6 սեպտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 201, 12 սեպտեմբերի 1912 թ.:

14-ին, օսմանյան արդարադատության և կրոնների նախարար Հալիմ բեյը այցելում է պատրիարքարան, տեսակցում Արշարունի արքեպիսկոպոսին, նրա հետ մտքեր փոխանակում օրվա անցքերից, ցավ հայտնում, որ պատրիարքը հրաժարական է ներկայացրել:

Արշարունին պատասխանում է, թե իր հրաժարականը Հայաստանում շարունակվող հալածանքների և կառավարության անտարբերության հետևանք է: Սահմանադրության վերահաստատումից հետո, ասում է նա, օսմանյան երկիրը կառավարող բոլոր դահլիճները խոստումներ են շռայլել, բայց այդ խոստումներից գոնե մեկը չի կատարվել: Այս պայմաններում, միանգամայն հասկանալի է, որ պատրիարքն իրավունք ունի իր ժողովրդի նկատմամբ որևէ պատասխանատվություն ստանձնելուց հրաժարվել:

Հալիմ բեյը նշում է, որ պատրիարքի հրաժարականի դիմումն աննպաստ տպավորություն է գործել իր նախարարությունում, քանի որ դա նկատվում է որպես անվստահության մի ցույց ներկա դահլիճի դեմ, որը փորձում է հայաբնակ նահանգներում չտկել իրավիճակը: Պետք է սպասել, մինչև որ նշանակված վայրերը հասնեն նոր նշանակված վալիները, որոնց հստակ հանձնարարականներ են տրված: Ապա նա պատրիարքին տեղեկացնում է, որ մեկ օր առաջ Վանում Միր-Մհեի ավազակախմբին հետապնդելիս սպանվել են մի քանի զինվորներ ու նրանց հրամանատար Ֆյազիմը, և որ դա անառարկելի ապացույց է, թե կառավարությունը վճռել է հետևողականորեն հետապնդել ավազակներին: Այնուհետև Հալիմ բեյը հավաստիացնում է, որ կառավարությունը կգործադրի բոլոր միջոցները Հայաստանում բարեփոխումներ կատարելու համար: Վերջում նա հույս է հայտնում, որ պատրիարքը և Ազգային կեդրոնական վարչությունը ծայրահեղ քայլերից կհրաժարվեն, Իթթիլաֆի կառավարությանը բարյացակամություն և վստահություն ցույց կտան, որպեսզի մոտավոր ապագայում հնարավոր լինի ծրագրված բարենորոգումների արդյունքը տեսնել[1]*:*

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 213, 27 սեպտեմբերի 1912 թ.:*

Հալիմ բեյը հեռացավ՝ անորոշության մատնելով պատրիարքին:

Երկրագնդի բոլոր հայերի, մանավանդ ռուսահայերի նվիրական տենչը և իղձը չարունակում էր մնալ բռնակալության ճիրաններում տառապող հայրենիքի փրկությունը: Հայաստանի ազատագրությունը նրանց երազն էր, անուրջն ու իդեալը: Անցած երեք տասնամյակներին նրանք մեծամեծ զոհողություններ արեցին ազատության գաղափարի հաղթանակի համար, թեև դրանք անօգուտ եղան:

Իսկ ահա այժմ, Թուրքական «դրախտում» հեծող հայությունը կարծես դուրս էր մնացել ռուսահայերի ամենօրյա ուշադրությունից: Նրանց ջանքերը թուլացել էին, Թուրքահայաստանի ժողովրդի վիճակով նրանք այլևս չէին հետաքրքրվում նախկին անձկությամբ ու նախկին հույզերով:

"Раннее Утро" ռուսական թերթի Կ. Պոլսի թղթակից Ֆրուպչինսկին հանդիպում էր ունեցել Արշարունի պատրիարքի հետ և զրույցի համառոտ բովանդակությունը հաղորդել թերթին: Նա գրում էր. «Արշարունի պատրիարքը, որ Թուրք իշխանություններին հրաժարական է ներկայացրել իբրև բողոք, որ նրանք որևէ միջոց չեն ձեռնարկում քրդերին զսպելու համար, չափազանց վշտացած է թե՛ իր հրաժարականի և թե՛ ամեն օր Հայաստանից բռնությունների մասին նոր հեռագրեր ստանալու պատճառով»: Հովհաննես արք. Արշարունին ռուսական թերթի թղթակցին ասել էր.

«Ձեք հավատա, թե ամեն օր և ամեն գիշեր ես ինչ զարհուրանք եմ ապրում, որովհետև չեմ կարող չմտածել սոսկալի ահաբեկչության ենթակա թշվառների մասին: Իշխանությունները միայն խոստումներ են տալիս: Ես բոլորովին չեմ կարող հավատալ նրան (Իթթիլաֆի կառավարությանը:- Հ. Ս.), իսկ նա, կոտորածների համար մեղադրում է երիտթուրքերին: Բայց ով էլ դրա մեջ մեղավոր լինի, բռնությունները որևէ օր չեն ընդհատվում... Ինձ զարմացնում է Ռուսաստանի սառնասրտությունը և անտարբեր վերաբերմունքը ... Ինչո՞ւ ձեր երկիրը չի միջամտում մեզ համար ... Մի՞թե մի ահագին շրջանի (Թուրքահայաստանի:- Հ. Ս.) երկմիլիոնանոց ժողովուրդը Ռուսաստանի պաշտպա-

նությանը արժանի չէ: Ռուսաստանի հովանավորությունը ձեռք բերելու մեր բոլոր փորձերը խուլ լռության են հանդիպում: Ես բազում հեռագրեր ուղարկեցի կաթողիկոսին (Գևորգ Ե-ին: – Հ. Ս.) և խնդրեցի նրա միջնորդությունը ռուսաց կառավարության առաջ, բայց ինձ նույնիսկ չպատասխանեցին...: Բան չպատասխանեցին ...»:

Ապա հաջորդում է հետևյալ հարց ու պատասխանը.

«– Ասում եք, թե կաթողիկոսը Ձեզ ոչ մի անգամ չպատասխանե՞ց»:

Ծերունի պատրիարքը խոնարհեց իր ալեզարդ գլուխը:

– Ոչ մի անգամ... Այնուամենայնիվ ես սպասում եմ... Գուցե նա մեծ ապրումներ ունի...

– Բայց ինչո՞վ եք բացատրում նրա լռությունը:

– Գուցե չի կարող բան ձեռնարկել կամ գուցե չի համարձակվում:

– Իսկ ինչո՞ւ չի համարձակվում:

– Որովհետև իրենց սեփական քաղաքականությունը վարող պետությունները կանգ չեն առնում «մանր-մունր բաների» վրա... Ձէ՞ որ հայերին կոտորում են ամեն օր... Եթե մի տարի անցներ առանց կոտորածի, ամենքը միայն կզարմանային և կհարցնեին իրար. «Ի՞նչ է նշանակում այդ, ինչո՞ւ հայերին այս տարի չեն կոտորում և ե՞րբ կլինի հաջորդ կոտորածը...»:

– Բայց որո՞նք են այդ կոտորածի պատճառները:

– Կառավարության մեջ են: Նա չի ցանկանում հալածել բռնարարքներ գործողներին: Ոստիկանությունը չի ձերբակալում ավազակներին: Ազդեցիկ ավատապետները նպաստում են քրդերի և հայերի թշնամացման: Իշխանությունը բոլոր առումներով այդ խնդրում անգործության է մատնված:

– Բայց դրանից ի՞նչ օգուտ իշխանությանը:

– Նա ատում է հայերին: Հայը երկրի ամենաաղքատ ազգաբնակչությունն է»[1]:

---

[1] ***''Раннее Утро''***, *30 сентября 1912 г.*

Ո՞ՐՆ ԷՐ ԵԼՔԸ ստեղծված նոր, ծանրագույն վիճակից:

Պոլսահայ հակադաշնակցական թերթերն այն տեսակետն էին արծարծում, որ թուրքահայ մտավորականությանն ու ժողովրդին մի ելք է մնացել՝ փրկության հույսը դնել սեփական ուժերի վրա, ամեն ինչ անել բարձրացնելու ազգային օրինավոր իշխանությունների՝ պատրիարքարանի և Հայոց Ազգային ժողովի հեղինակությունը: Դա նրանց հնարավորություն կտար կառավարությանը ներկայանալ ողջ թուրքահայության անունից, համարձակորեն պահանջել վերջ դնել հայոց տանջանքներին, նրանց թույլ տալ զինվել ինքնապաշտպանության համար: Ըստ որում՝ պետք էր հասնել այն բանին, որ զինումը կատարվեր ազգային օրինական իշխանության ձեռքով՝ թույլ չտալով, որ այդ գործին մասնակցություն ունենա Դաշնակցությունը[1]:

Թուրքահայությանը վրա հասած հերթական աղետներին արմատական դարման անելու մյուս միջոցը համարվեց կոմս Բերտոլդի առաջարկը:

Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար կոմս Բերտոլդը, նկատի առնելով Թուրքիայի ներքին ծայրահեղ անկայուն վիճակը, 1912 թ. կեսերին երեք կետից բաղկացած հետևյալ առաջարկն էր արել. 1) Բոլոր մեծ պետությունները Թուրքիայի հարցում պետք է գործեն համատեղ, 2) Թուրքիային պետք է խորհուրդ տալ, որ ի գործ դնի աստիճանական ապակենտրոնացման միջոցներ ի նպաստ Օսմանյան տերության բոլոր ազգերի, 3) Բալկանյան պետություններին հորդորել հանգիստ մնալ:

Այս առաջարկի մեջ հայության համար էական կետը երկրորդն* էր:

---

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 195, 5 սեպտեմբերի 1912 թ.:

* Ահա այդ կետի ֆրանսերեն բնագիրը. "Il propose de conseiller à la Turquie de prendre en faveur de toutes les nationalités de I'Empire Ottoman des mesures de décentralisations progressives" (տե՛ս **«Մշակ»**, № 197, 6 սեպտեմբերի 1912 թ.):

Ինչպես տեսնում ենք, կոմսը վճռականորեն կողմ էր Օսմանյան կայսրության մեջ ապրող ազգությունների կառավարման ապակենտրոնացման սկզբունքին, որի կենսագործմամբ Թուրքիան կարող էր փրկվել ապագա քայքայումից:

Որքան էլ Թուրքական կառավարությունը ազգային տարածքների արհեստական բաժանումներով և գավառների քմահաճ դասավորություններով փորձում էր միջազգային դիվանագիտությանը հավատացնել, Թե հայերը կայսրությունում ոչ մի տեղ ազգային հոծ զանգված չեն կազմում, բայց անհերքելի փաստ էր, Թե որոշակի սահմաններում ամփոփված էր Հայաստան անունով մի ընդարձակ տարածք, մի անուն, որ կարող էր ընդունելի լինել նաև աշխարհի համար:

Հետևաբար, եթե մի քանի գլխավոր հայաբնակ նահանգներին որոշ վարչական իրավունքներ տրվեին, հայերը կարող էին իրենց պատմական տարածքների գոնե մի մասի վրա հոծ ազգաբնակչությամբ վարչական միավոր կազմել:

Ապակենտրոնացումը բոլոր ոչ-Թուրք ազգերին հնարավորություն կտար մասնակից լինել իրենց գործերի կառավարմանը: Թուրքահայաստանի ժողովրդին, օրինակ, կարելի էր տալ ընդհանուր և տեղական տուրքերի հավաքման իրավունքը: Այդ դեպքում պետական գանձարանին կփոխանցվեին ընդհանուր տուրքերը, իսկ տեղական տուրքերից առաջացած միջոցները կգործադրվեին դպրոցների բարեշինության, առողջապահության, երկրագործության զարգացման կարիքների վրա: Ազգային ինքնավարություններին կարելի էր նաև տեղական **ոստիկանություն** *պահելու իրավունք տալ: Ունենալով ոստիկանություն՝ հայերը կարող կլինեին իրենց պաշտպանել քրդերից:*

Ապակենտրոնացման պայմաններում կենտրոնական կառավարությունը ոչ Թե կԹուլանար, այլ, ընդհակառակը, ավելի կուժեղանար, որովհետև, ազատվելով տեղական հոգսերից, նա իր ամբողջ եռանդը կարող էր գործադրել ընդհանուր, համապետական նշանակություն ունեցող խնդիրների վրա:

Աստիճանական ապակենտրոնացումը նույնն էր, ինչ, օրինակ, զեմստվոային վարչությունը Ռուսաստանում, այն տարբերությամբ, որ այդ սիստեմը պետք է գործադրվեր ոչ Թե որո-

չակի նահանգների, այլ որոշակի ազգությունների նկատմամբ, ինչը որ Թուրքիայի պես մի երկրում ամենից հարմարն էր:

Հայկական քաղաքական ուժերի ընդհանուր կարծիքն այն էր, որ բազմաչարչար Հայաստանը միայն ապակենտրոնացման միջոցով կարող էր հանգստություն գտնել իր մարտիրոսական տառապանքներից: Այդ տեսակետից՝ կոմս Բարտոլդի առաջարկը մոտ էր հայերի սրտին:

Բանը, սակայն, այն էր, որ իրենց կյանքի համար բախտորոշ խնդիրները հայերը չէին որոշողը: Որոշողը Թուրքն էր՝ լիներ նա իթթիհադական, թե իթթիլաֆական, միապետական, թե սահմանադրական: Իսկ Թուրքական իշխանությունները բարենորոգումների նկատմամբ առաջվա պես խուլ ու համր էին:

Ելքերը երևակայական էին, միջոցները՝ անտեսանելի:

Իրական ելքը կարող էր լինել մեկը՝ զինվելը: Հայը պետք է զինված լիներ, ինչպես ալբանացին կամ մակեդոնացին: Օտարի բռնադատող լծից ազատության ձգտող մարդկային էակի համար զինվելը բացարձակ, անհետաձգելի ու հրամայական անհրաժեշտություն էր: «Պատրաստ ինքնապաշտպանությա՛ն» — սա՛ է քաղաքացիական գիտակցության վեհագույն պարտականությունը և մարդկային տարրական իրավունքը:

Հայերից շատերն ինքնաբերաբար արտասանում էին «զենք» բառը: Բայց հայը հիմա զենք չուներ, որովհետև միամտորեն, որպես օսմանյան օրինապաշտ քաղաքացի, դա հանձնել էր Թշնամի կառավարությանը, Հայաստանը ռազմակալած Թուրքին: Այդ պահին հայությունն այլևս չուներ նախկին մարտական ոգին, չկային ոխերիմ Թշնամուն գոռ հարվածներ հասցնող անձնազոհ մարտիկները: Նա այլևս ունակ չէր զինվելու և ահաբեկ սպասում էր իրենից անկախ զարգացող իրադարձությունների անորոշ ընթացքին:

Կյանքի ծովում Թուրքահայությունը մնացել էր անղեկ, անլապտեր, մի կտոր տաշեղի նման այս ու այն ափին զարնվելով:

«Նորէն անդունդի ծայրին ենք»,- գրում էր «Դրօշակը»[1]:

---

[1] ***«Դրօշակ»**, № 6, Հունիս, 1912, էջ 145:*

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԷՏԻՐՆԷԻ ԵՐԵՍՓՈԽԱՆ ՅԱԿՈԲ ՊԱՊԻԿԵԱՆԻ

«Արդարութիւնը կը
բարձրացնէ ազգերը, եւ
մեղքն ու ոճիրը կը կործանեն զայն»:
ՍՈՂՈՄՈՆ

Թողած ըլլալով Պոլիսը 12 Մայիսին, մենք, Ֆայիզ պէյ (Պետական Խորհրդոյ Նախագահ Ատեանի Նախագահ) և Յարութիւն Էֆ. Մոստիչեան (Մանասթիրի վիլայէթին Դատական Քննիչ)՝ պատուիրակներ Բ. Դրան, երեսփոխան Եուսուֆ Քէմալ պէյ եւ ես՝ պատգամաւորներ Օսմ. Խորհրդարանի, 16ին հասանք Ատանա, այդ քաղաքին եւ իր շրջականերու մէջ տեղի ունեցած արիւնալի պատահարներուն – որոնք տրտմեցուցած են բոլոր օսմանցիները – պատճառները եւ նկարագիրը ճշդելու եւ ճշմարտութիւնը ճանչցնելու պաշտօնով:

Մեկնելու ատեն կը մտածէի որ այս ցաւալի եղելութիւններու վերաբերեալ լուրերը չատ չափազանցուած էին, եւ խիստ կը փափագէի որ այնպէս ըլլար, վասնզի հին վարչութեան օրով, առանց ոչ մէկ պատճառի, հարիւր հազարաւոր անմեղ հայերու արիւնը դեռ չէր չորցած, եւ այս խեղճ զոհերու անմեղութիւնն ալ վերջապէս երեւան ելած ըլլալով, մեր մուսլիման հայրենակիցները – մէջն ըլլալով կրօնաւորները եւ հասարակ ժողովուրդը – անոնց հողակոյտը այցելած էին, որպէս զի ատով հայերուն վիշտը կարենան մխիթարել եւ մանաւանդ ջնջել ամօթալի մէկ էջը քաղաքակրթութեան պատմութեան:

Այսպէս, բնականաբար ոչ ոք կը փափագէր դարձեալ կրկնուած տեսնել, ի՞նչ չափով որ ըլլայ, նոր դէպքեր՝ որոնք անցեալ ողբերգութիւնները յիշեցնէին:

Սակայն, բարէ՜, ստիպուած եմ հրապարակաւ յայտարարելու, որ իմ անձնական հաստատումներս զիս բոլորովին յուսախաբ ըրին:

Թող ըսեն ի՞նչ որ կ՚ուզեն: Ամէն ոք իր սեփական կարծիքը ունի: Ըստ իս, նմանօրինակ դէպքերու կրկնութիւնը անվրէպօրէն արգիլելու միակ միջոցն է՝ ճշմարտութիւնը ծանօթացնել այնպէս՝ ինչպէս որ է, առանց ամենափոքր վերապահութեան: Եթէ, ընդհակառակը, ջանք տարուի այս դէպքերու մեծութիւնը նուազեցնել, եթէ ուզուի պատասխանատուութեան բաժին մը վերագրել զոհերուն, ատիկա՝ իմ կարծիքով պիտի նշանակէր՝ բաց ճամբայ մը ձգել միեւնոյն դէպքերու կրկնութեան:

Ահա թէ ինչո՛ւ կ՚ուզեմ յստակօրէն եւ անկեղծութեամբ ոչ ոքի դէմ խնայելով Ձեզ ծանօթացնել արդիւնքը իմ քննութիւններուս եւ հաստատումներուս:

Տասնըչորս տարեկանէս սկսեալ կեանքիս մեծ մասը անցուցած եմ քաղաքական խռովութիւններէ փոթորկուած միջավայրերու մէջ: Պուլկարական ապստամբութեան միջոցին Սոֆիա կը գտնուէի. Թուրքեւոուս պատերազմի ատեն Պոսնիա էի՝ կատարեալ քաղաքային պատերազմի մէջ: Կ. Պոլսոյ եւ Քըրք-Քիլիսէի ջարդերուն ականատես վկան եղած եմ: Սակայն երբէք չեմ տեսած եւ ոչ իսկ կրցած եմ երեւակայել սարսափներ՝ որոնք Ատանայինին հետ բաղդատուէին: Այս նահանգին ջարդերը չատ ու չատ գլած անցած են այն բոլորը՝ ինչ որ համիտեան վարչութիւնը այս տեսակին մէջ կազմակերպած է եւ ինչ որ իր բնութեամբ պիտի մնայ յաւիտենական ամօթ մը Օսմ. պատմութեան:

Համիտեան ջարդերու մեծ մասը, այսպէս ըսուած, ունէին տեսակ մը կանոնաւոր կազմակերպութիւն. կը խնայուէր տղայոց, կիներուն, հիւանդներուն, եւ կողոպուտի, հրդեհումի եւ քանդումներու մասին տեսակ մը սեղմում կը դնէին: Ատանայի մէջ ողջ-ողջ այրած են հիւանդները եւ վիրաւորները: Գիւղերու եւ շրջակայի ագարակներուն, Միսիսի եւ Համիտիէի գաղաներուն, ինչպէս նաեւ Հասան-Պէյլիի (Պաղչէի գաղա) մէջ, իբրեւ հարստութիւն եւ կալուած այլեւս ոչինչ կը մնայ. կիներէն եւ հինգ-վեց տարեկան տղաքներէն չատեր վիրաւորուած են. անոնք մինչեւ իսկ առարկայ եղած են ամենադժպհի վարմունքներու: Թարսուսի մէջ լսեցի վաթսունը անցուկ երկու խեղճ պառաւներու գանգատները. անոնք կ՚ողբային որ չէր յարգուած նոյնինքն իսլամական օրէնքը՝ որ կեանքը կը ճանչնայ իբր Աստուծոյ պարգեւը, եւ կիներու պատիւը՝ փատիշահինը, այն աստիճան՝ որ մարդ ըլլալուս համար սարսափ կը զգայի:

Մեր առջեւ բերին 8-12 տարեկան բռնաբարուած 4 աղջնակներ, զանոնք, ի ներկայութեան Էսատ Ռէուֆ պէյի (կառավարիչ Մերսինի) եւ ուրիշ պաշտօնատարներու՝ տարինք իսլամ դայեակի մը մօտ: Տեղեկագիրը ըստ պատշաճի խմբագրուելով պահուած է տեղական իշխանութեանց մօտ: Եղերերգութեան բոլոր ընդարձակութեանը եւ բոլոր զգրելի բարբարոսութեանը մասին գաղափար մը կազմելու համար կը բաւէր տեսնել անթիւ վիրաւորեալները, մանաւանդ խեղճ փոքրիկները՝ ապաստանած Mme. Doughty Wylieի (կին անգլ. հիւպատոսին) հաստատած հիւանդանոցին մէջ. այս ազնիւ կինը, առաւօտէն մինչեւ իրիկուն, հիւանդապահուհիի մը պէս զանոնք կը խնամէր ամէն գովեստէ վեր յարգանքով մը եւ արիութիւնով մը:

Ֆրանսացի եւ գերման քոյրերն ալ անոնցմէ կը խնամէին անջատօրէն:

Գերման հիւանդանոցի քոյր մը դէպքերու պատմութիւնները ընելու ժամանակ, եկաւ վայրկեան մը՝ ուր անկարող եղաւ զայն շարունակել. յետոյ, իր յուզումը անցնելէ վերջ, մեզի ըսաւ որ Աբգարեան վարժարանին մէջ տեղաւորուած, շարժելու անկարող 150 վիրաւորեալներ՝ չէնքին հրդեհումին ատեն ողջ-ողջ այրուած էին: Ատիկա ամենէն կսկծալի մանրամասնութիւններէն մէկն է:

Շատ մարդիկ եւս մահը գտած են բոցերուն մէջ:

Սակայն որովհետեւ անկարելի է ամէն ինչ գրել, պիտի գոհանամ թուելով տակաւին 17 անձերու պարագան — որոնց երկուքը ամերիկեան միսիոնար եւ մէկը՝ բողոքական հովիւ — անզէն, անպաշտպան եւ ոչ մէկ բանէ զանգատող, զորս այրած են Օսմանիէի հայ եկեղեցիին մէջ՝ եկեղեցական պաշտամունքի ժամանակ:

Համիտի վարչութեան օրով՝ կիներու եւ տղայոց կը խնայէին եւ չէին յարձակեր ուրիշ ազգութեանց քրիստոնեաներուն, նոյնիսկ հայ-կաթոլիկներուն եւ հայ-բողոքականներուն [վրայ]: Մինչդեռ Ատանայի քրիստոնեաներուն միջեւ ոչ մէկ խտրութիւն դրած են: Սուրիացիները (սուրիանի քատիմ) եւ սուրիացի կաթոլիկները (սուրիանի-քաթոլիք), որ ըստ լեզուի եւ հանգամանքի հայերէն ոչինչ ունին — վասնզի արաբերէն կը խօսին — ունեցած են, առաջինները՝ 400 զոհ եւ երկրորդները՝ 65. քաղդէացիները (քիլտանի) ունեցած են 200, իսկ յոյները՝ հարիւրեակ մը Ատանայի քաղաքին եւ նոյնքան ալ նահանգին մէջ: Գալով բողոքական-հայերուն՝ անոնք ունեցած են 655 անձ սպաննուած, եւ հայ-կաթոլիկները՝ 200:

Ընդհանրապէս հաստատուած է որ ջարդերու վաղորդայնին միայն յանձնարարուած է յոյները հանգիստ ձգել: Ո՛չ մէկ տեղ քրիստոնեայ տարր մը չէ յարգուած, ինչ որ ալ եղած ըլլայ:

Ատենագրութիւնով մը հաստատուած է որ, Էրզինի (ճէպէլի Պէրէքէթի սանճագին գլխաւոր քաղաքը) մէջ երբ բանտը պարպուեցաւ, բանտարկեալներուն մէջ գտնուող երկու յոյներ սպաննուած են՝ նոյն իսկ տեղական իշխանութեանց ներկայութեանը:

Բոլոր այս փաստերը լայնօրէն կ'ապացուցանեն, որ Ատանայի ջարդերը միմիայն հայերու հանդէպ սարքուած շարժումի մը նկարագիրը չունին, այլ շարժման մը՝ քրիստոնեաներուն եւ ընդհանրապէս Սահմանադրութեան դէմ:

Բաց աստի, նախկին ջարդերու ընթացքին, կողոպուտը, եւ մանաւանդ տուներու եւ ինչքերու աւերումը երբէք չեն ունեցած ա՛յնքան մոլեգնութիւն եւ ո՛չ իսկ տեղի ունեցած են այնքան լայն աստիճանի մը վրայ՝ որքան հիմակուանը:

Մէկ բառով, բոլոր այս սարսափները կ'ապացուցանեն, թէ կատաղի խելագարութեան մը ուրականը անցած էր այս գաւառին վրայէն: Այս վայրագութեանց արդիւնքը այն աստիճանի է, որ անով թաթախուած հոգին կը քանդուի եւ դատելու կարողութիւնը կը կորսնցնէ:

Ա.
Զոհերու թիւը եւ նիւթական վնասներու կարեւորութիւնը

Զոհերու թիւի մասին հաստատած եմ, որ կայ ահռելի տարբերութիւն մը պաշտօնական թիւերուն եւ ուրիշներու կատարած հաշիւին միջեւ: Հայերը եւ օտար թերթերու թղթակիցները համաձայն են ընդունելու թիւ մը, որ կը յածի 25 եւ 30 հազարի մէջ: Գալով կառավարութեան, նախ պաշտօնապէս ցոյց տուաւ իբր 1500 ոչ-իսլամ եւ 1900 իսլամ, իսկ այժմ՝ նոր քննութիւններէ վերջ, անիկա կ'ընդունի 6000ի համագումար թիւը:

Կառավարութեան թիւերը հիմնուած են քաղաքային իշխանութեան տոմարներուն եւ կարգ մը վայրերու մուխթարներուն եւ կրօնականներու տուած ցուցակներուն վրայ: Հարկ չի կայ ըսելու, որ քաղաքային իշխանութեան տոմարները չեն կրնար ներկայանալ իբրեւ հաւատ ընծայուելիք աղբիւրներ, եւ շատ բացայայտ է, որ Ատանայի

իշխանութիւնները ամէն տեսակ միջոցներու դիմեցին՝ քրիստոնեայ զոհերու իրական թիւը պահելու համար: Ատկէ զատ, բազմաթիւ վայրերու մէջ, նոյն ինքն քահանաները եւ մուխթարները կը գտնուին սպաննուածներուն մէջ: Օրինակի համար, Համիտիէի մէջ 7 հոգի յաջողած են պահուելու տեղ մը գտնել, 8 հոգի ալ ապաստան փնտռած են M. Sabatier կոչուած ֆրանսացիի մը գործարանին մէջ, եւ բոլոր մնացեալը – հաշուուած 2000 հոգի՝ օտար թղթակիցներէ – ջարդուած են, մէջը ըլլալով քահանան եւ մուխթարը:

Պէտք է նկատի ունենալ, որ այդ եղանակին գործաւորներու ահագին թիւ մը եկած էր այս գաղային մէջ, եւ որովհետեւ ասոնք չէին արձանագրուած, անկարելի է հաշուել անոնց ճշգրիտ թիւը:

Տա՛յր երկինք, որ հիւպատոսներու եւ թղթակիցներու հաշիւները չափազանցուած ըլլային:

Սակայն տրուած ըլլալով Ատանայի կարեւորութիւնը՝ տնտեսական տեսակէտով, տրուած ըլլալով նաեւ որ ջարդերը տեղի ունեցած են աշխատանքի եւ առուտուրի ամենէն եռուզեռ շրջանին, Անատոլուի գանազան նահանգներէն եւ նոյն իսկ Մուսուլի նման այնքան հեռաւոր նահանգէ մը հասած գործաւորներու ընդհանուր թիւը 40 կամ 50 հազարէն նուազ պէտք չէր ըլլալ: Այս թիւին առնուազն կէսը կազմուած էր հայերէ, որոնց մեծագոյն մասը ջարդուած է:

Զիհնի փաշա (դէպքերէն վերջ կարգուած վալի Ատանայի) տեսակցութեան մը միջոցին օր մը կ'ըսէր ինծի, թէ անկարելի էր ընդունիլ, որ հայ զոհերու թիւը կարենար հասնիլ 15 հազարի, քանի որ պաշտօնական տոմարներու համաձայն, Ատանա քաղաքը 13 հազարէն աւելի հայ չէր հաշուեր: Սակայն, Նորին Վսեմութիւնը, ինչպէս որ կ'երեւար, մոռցած էր, որ երբ իր գործունէութեան վրայ կը խօսէր, իբր յաջողութիւն կը նկատէր իրենց երկիրը ճամբած ըլլալը 10.000 հայ գործաւորներ, որոնք հասած էին ուրիշ վայրերէ եւ բանակած՝ կայարանին մօտ վրաններու տակ կամ բացօթեայ: Երբոր այս կէտը յիշեցուցի իրեն, Նորին Վսեմութիւնը ստիպուեցաւ լռել: Կրնա՞ր այլ կերպ շարժիլ՝ իր պարծած յաջողութիւնը առանց կասկածի տակ թողելու:

Ենթադրենք, որ այս խեղճ մարդոց կէսը գտնուելով հոս-հոն, քաղաքէն դուրս, առանց զէնքի, կրցած է կեանքը ազատել. անշուշտ միւս կէսը կորսուած է առանց հետք մը ձգելու որեւէ պաշտօնական տոմարի մէջ:

Մնաց որ, ես քաղուած մը պիտի տամ Ներքին Գործոց Նախա-

բարութեան ուղղուած հաւաքական տեղեկագրէ մը՝ ստորագրուած Բ. Դրան պատուիրակ Ֆայիզ պէյի եւ Մոստիչեան էֆ.ի, ինչպէս նաեւ Մերսինի կառավարիչ Էսատ Ըէուֆ պէյի կողմէ.

«Ատանայի վիլայէթին ցաւալի դէպքերու ընթացքին սպաննուած անձերու թիւն է, քաղաքային իշխանութեանց տոմարներու համաձայն՝ 5683 – մէջը հաշուելով զինուորները եւ ոստիկան զինուորները – որոնց 1487ը՝ իսլամ եւ 4196ը՝ ոչ-իսլամ: Սակայն որովհետեւ հաւանական է, որ ըլլար առժամապէս այս տեղերը հաստատուած եւ չարձանագրուած անձերու մեծ թիւ մը, հաւասարապէս մեռան. եւ որովհետեւ այժմ կարելի չէ այս անհատներու թիւը ճշդել, կը կարծենք որ սպաննուածներու ընդհանուր թիւը պիտի ըլլայ, իսլամ եւ ոչ-իսլամ, մօտաւորապէս 15000 հոգի: Միեւնոյն ատեն պէտք չէ մոռնալ որ 30.000 անձեր, պատանի եւ տղայ, կը մնան առանց ապաստանի եւ առանց ոչ մէկ նիւթական միջոցներու»:

Կը կրկնեմ, տա՜յր Աստուած, որ այս պարոններն ալ խաբուած ըլլային զոհերու թիւին վերաբերմամբ: Բայց չատ կը վախնամ որ այսպէս եղած ըլլայ:

Արդարեւ, պէտք է երեւակայել որ Հաճընի մէջ իսկ, ուր ջարդ տեղի չունեցաւ – թէեւ հայերը հոն են որ պաշարուած մնացին – ցարդ ճշգրիտ լուր չէ առնուած 3000 հայերու մասին, որոնք Ատանայի նահանգին մէջ կը գտնուէին: Հաճընն ըլլալով լեռնային եւ անբերրի քաղաք մը, իր բնակիչները ստիպուած են այլուր երթալ՝ օրապահիկ ճարելու համար:

Անհերքելի է, որ ոչ-ընիկ զոհերու թիւը մեծ է. բայց առնուազն մէկ տարի պէտք է կարենալ հասկնալու համար ճիշդ թիւը այն անձերուն, որոնց ճակատագիրը անծանօթ կը մնայ, վասնզի այս թիւը իւրաքանչիւր վիլայէթի տուած պաշտօնական տեղեկութիւններու վրայ միայն կրնայ հիմնուիլ:

Ամէն պարագայի տակ՝ պէտք է ընդունիլ, որ Ատանայի եւ շրջակայից մէջ բնակող օտարահպատակ գաղթականութեանց երեւելիները կրնան հաշուել աւելի պաղարիւնով, մանաւանդ օտար թղթակիցները, որոնք կրնային ամէն տեղեր ազատօրէն մուտք գործել իրենց հետախուզութեանց համար: Հետեւաբար, սպասելով որ ճիշդ թիւերը ստուգուին իւրաքանչիւր վիլայէթի մէջ, իմ կարծիքով, այժմուս զոհերու ամէնէն հաւանական թիւն է օտարներու ցոյց տուածը, որ 20 հազարէն վար չէ:

Ինչ կը վերաբերի նիւթական կորուստներուն, բաւական է ինձ ըսել, որ Ատանայի նահանգը, Կայսրութեան ամէնէն բարգաւաճ եւ ամէնէն հարուստներէն մին, այսօր միմիայն աւերակներու կոյտ մըն է՝ տխրատեսիլ եւ լռին:

Զիհնի փաշայի համաձայն, Ատանա քաղաքին մէջ հրդեհուած եւ քանդուած շէնքերը, ըստ քանակութեան, կը ներկայացնեն ամբողջութեան մէկ հինգերորդը, եւ ըստ արժէքին՝ մէկ երրորդը:

Պատկանեալ վարչութեան տուիքերուն համաձայն, հրդեհուած կալուածներու համագումար արժէքը կը ներկայացնէ մօտաւորապէս 96.000 օսմ. ոսկի: Իմ կարծիքով, աջ կողմէն գէրոյի մը յաւելումովն իսկ այս գումարը անբաւական պիտի ըլլար, վասն զի սուրիացի երեւելի մը, Էլիաս Թիւրքմանի, տեսած է անէացումը իր անշարժ կալուածներուն՝ 30.000 ոսկի արժէքով, գումար մը որ հիմնուած է վերոյիշեալ վարչութեան պաշտօնական թիւերուն վրայ: Պաղչէի մէջ, ուր ամէն կարելի խնայողութիւններով ուզուած է շինել տնակներ՝ ուր հազիւ կարելի է պատսպարուիլ մթնոլորտի խստութիւններէն, հաստատուած է, որ իւրաքանչիւրին համար պէտք էր ծախսել նուազագոյնը 96 ոսկի: Արդ, բացայայտ է որ յարաբերօրէն ճիշդ թիւ մը ունենալու համար պէտք է ընդունիլ 50 ոսկիի նուազագոյն եւ 500 ոսկիի առաւելագոյն չափ մը՝ իւրաքանչիւր այրած շէնքի համար, ինչ որ ցոյց պիտի տար պաշտօնական գնահատումներու իսկական արժէքը:

Հաւասարապէս օգտակար է յիշել, որ Ատանայի մէջ ապահովագրական ընկերութեանց հատուցանելի վնասներու գումարը կը հասնի 750.000 ոսկիի: Աւելորդ փաստ մը եւս՝ պաշտօնական թիւերու արժէքը ցոյց տուող:

Հարկադրուած եմ եզրակացնել, որ նիւթական կորուստներու ընդհանուր գումարը, անշարժ, շարժուն կալուածներով, 3 միլիոն օսմ. ոսկիէն պակաս պէտք չէ ըլլայ:

Բ.
Խռովութեանց պատճառները. — Ինչպէ՞ս սկսան եւ իրենց ընթացքը շարունակեցին

Պոլսոյ մէջ Մարտ 31ի հակայեղափոխական շարժումը սկսելուն հետ միասին, միեւնոյն օրուան ցերեկէն վերջ, անմիջապէս որ հեռագիրը արձագանգը տուաւ այն դէպքերուն, որոնց մայրաքաղաքը

թատր հանդիսացած էր, Ատանայի մէջ խռովութիւնները պայթեցան:

Յաջորդ օրը, Չորեքշաբթի, այս խռովութիւնները կը փոխուէին ջարդերու, որոնք տեւեցին երեք օր եւ վերջացան Ապրիլ 3ին:

Յետոյ, Ռումէլիէն եկած վաշտերուն հասած իրիկունն իսկ (Կիրակի, 12 Ապրիլ), անոնք կը վերսկսէին՝ մինչեւ Երեքշաբթի վերջ գտնելով:

Այս անիմաստ մոլեգնութեան իմաստը բաւարար կերպով հասկրնալու համար անհրաժեշտ է քիչ մը յետ երթալ, երթալ նոյն իսկ մինչեւ Սահմանադրութեան վաղորդայնը:

Սահմանադրական վարչութեան վերահաստատումը գէշ կերպով կը պատշաճէր շահերուն այս երեւելիներուն, որոնց հին վարչութիւնը ապօրէն հեղինակութիւն մը կ'ապահովէր: Ուրեմն, ինքնաբերաբար, այդ երեւելիները կը սնուցանէին ամենամեծ մախանք մը նոր վարչութեան դէմ, եւ, շատ բնականօրէն, ընդդէմ հայերուն, որոնք պատրաստ էին իրենց արիւնը թափելու՝ այդ Սահմանադրութիւնը պահպանելու համար: Այսպէս, այդ մարդերը մտածեցին, որ նոր ըէժիմին դէմ յաջողութեամբ յարձակելու համար նախ պէտք էր հայերը բնաջնջել: Ամբոխին տգիտութենէն եւ միամտութենէն օգտուելով, ամէն կողմ հայերու դէմ տարաձայնեցին զրպարտութիւններ – զրպարտութիւններ, որոնք ժողովուրդի ամէնէն փափուկ զգացումները վիրաւորելու բնոյթն ունէին:

Ասիկա չէր ամէնը:

Մերթ կ'ըսուէր, թէ հայերը կը զինուէին իսլամները ջարդելու եւ անոնց կիները առեւանգելու նպատակով, մերթ սուտ զրոյցներ կը հանէին, որոնց համեմատ՝ հայերը իբրեւ թէ մեղանչած ըլլան իսլամական կրօնքին դէմ եւ անարգած՝ բարեպաշտական հաստատութիւնները:

Այսօր ստուգուած է, որ իսլամ բնակչութիւնը գրգռելու ձգտող այս սուտերը տարածուած էին ամբողջ Անատոլուի մէջ: Հին վարչութեան օրով ջարդեր տեսած նահանգներու կարգ մը երեսփոխաններ մեզի կը պատմեն, թէ այն ատենուայ կարգախօսը կու գար մայրաքաղաքէն, պաշտօնական զեկոյցի ձեւով, ծանուցանելով հաւանական ժամանումը յեղափոխականներու, որոնք իբրեւ թէ կառավարութեան եւ իսլամական իրաւունքներու վրայ յարձակելու նպատակ ունէին, եւ կը յանձնարարէին իսլամ բնակչութիւնը տեղեակ պահել այս իրողութիւններուն:

Ցամաքի ճամբով մեկնած ըլլալով՝ գիշեր մը Գոնիայի մէջ ան-

ցուցինք: Վիլայէթի թահրիրաթ միւտիրին եւ ոստիկան զօրաց հրամանատարը կայարանը զմեզ դիմաւորած էին՝ վալիին անունով մեզի բարի եկ մաղթելու համար: Այս էֆէնտիները խօսակցութեան ընթացքին մեզի տեղեկացուցին, թէ միեւնոյն օրը այդ քաղաքին մէջ որոշ չափով շարժումի նշաններ կը տեսնուէին, իսլամները չուկայ եկած էին՝ ցգլուխ զինուած, հայերը ապաստանած էին իրենց տուները եւ կամ իսլամ բարեկամներու մօտ. բարեբախտաբար չուտ գիտցուած էր, որ այս շարժումին պատճառը սուտ լուր մըն էր ու այսպէսով խռովութիւններէ խուսափած էին: Անմիջապէս վալիին մօտ գացինք այս դէպքին նկարագիրը հասկնալու համար:

Ահա թէ ինչ էր խնդիրին էութիւնը:

Նախընթաց օր Պօղ-Քըրի (Գոնիայի գաղա) գայմագամէն հեռագիր մը հասած էր, որ կը հաղորդէր շրջող զրոյց մը, որուն համաձայն՝ 5000 հայեր գաղային մէջ մտած՝ սկսած էին հրդեհել եւ աւերել գիւղերը, եւ թէ իսլամ բնակչութիւնը գերագրգռուելով, ըէտիֆներու մթերանոցին մէջ գտնուած զէնքերը աւարի տուած էր: Հեռագիրը կ՚աւելցնէր, թէ զինուորական ոյժի մը չգոյութեան պատճառով, տեղական իշխանութիւնները իսլամ բնակչութիւնը կը ղրկէին շրջակայ գլխաւոր դիրքերուն վրայ՝ մինչեւ որ հասնէին գայմագամին պահանջած օգնութիւնները:

Այս հեռագրին հասնելուն վրայ, ըէտիֆներու տեղական վաչտը զէնքի տակ կանչուած եւ հապճեպով ղրկուած էր, հանգստեան կոչուած տարիքոտ սպայի մը հրամանատարութեան տակ: Սակայն վերջ ի վերջոյ հասկցած էին այս 5000 հայերու առասպելին էութիւնը: Խնդիրը կը յանգէր յիսնեակ մը գնչուներու վրայ, որոնք հոնկէ կ՚անցնէին, ինչպէս ամէն տարի սովորաբար: Ահաւասիկ պատճառը բոլոր այս վրդովմունքներուն...:

Գայմագամին հեռագիրը տեղի տուած էր զօրակոչի մը եւ Գոնիայի իսլամներուն մէջ զրգռութեան մը՝ հայերուն դէմ:

Բռնապետութեան ուրիշ կուսակիցներ, ինչպէս Հաճընի միւֆթին եւ իր գաւակները՝ Ահմէտ, Ճէվտէթ եւ Իզզէթ էֆէնտիները, հարցաքննիչ-դատաւորի փոխանորդ Սապրի էֆէնտի եւ Գօզանի (Սիս) նախադատ ատենի անդամ Հիւսէյին էֆէնտի՝ սանձարձակ կերպով դէմ արտայայտուած են Սահմանադրութեան եւ Հաւասարութեան, եւ բացայայտօրէն ժողովուրդը զրդած են քեաֆիրները սպաննել[ու] եւ իրենց ինչքերուն տիրանալ[ու]: Այս դէպքը ապացուցուած է Ատանայի

պատժական դատարանը գտնուած թռուցիկ-կոչերով:

Հրապարակաւ միեւնոյն ուղղութեամբ պրոպականտ մը եղած է Պաղչէի նախորդ միւտիրին կողմէ:

Բացայայտ է, որ այս արուեստական գրգռութիւնները հոս ու հոն տեղի տուած են հայկական ջարդերու սկզբնաւորութեանց: Օրինակ, Էշճար-Ուչաղբի մէջ սպաննուած են համբնցի երեք հայեր. Քարսի (հավանաբար՝ Քրիսթիան-Քարիասի:- Հ. Ս.) ըսուած ուրիշ գիւղի մը մէջ ուրիշ երկու հայեր սպաննուած են, յետոյ յօշոտուած եւ այրուած:

Այս ոճիրներու հեղինակները առանց այլեւայլի իրենց արարքը խոստովանած են իբր պատճառ ցոյց տալով վերոյիշեալ գրգռութիւնները: Հակառակ ատոր, ասոնք, հիւանդութեան կեղծ պատրուակին տակ – իրականութեան մէջ անոնց փախուստը դիւրացնելու համար – Ատանայի հիւանդանոցը փոխադրուած են:

Վարուելու այս եղանակը քաջալերութիւն մըն էր բոլոր եղեռնագործներուն:

Ատանա քաղաքին մէջ, միապետութեան կուսակիցները ամէն յերիւրածոյ միջոցներու դիմեցին՝ իսլամներու կարծիքը հայերուն դէմ հանելու համար: Ժողովուրդին մէկ մասին կ'ըսէին, թէ այգիներուն մէջ հայ մը մեղապարտ յարաբերութիւններ ունեցած էր իսլամ կիներու հետ, թէ այն հայ երիտասարդը, որ իսլամ մը սպաննած եւ ուրիշ մը վիրաւորած էր իր պատիւը պաշտպանելուն համար, հայ թաղին մէջ պահուած կը մնար, թէ հայերը մեծ քանակութեամբ զէնքեր գնած էին եւ կը պատրաստուէին յարձակիլ իսլամներու վրայ: Աւելի վար խաւերու եւ չարագործութեանց ընդունակ տարրերու կ'ըսուէր, թէ պէտք էր ջարդել քեաֆիրները՝ անոնց ինչքերուն տիրանալու համար, թէ Սահմանադրութիւնը իսլամին օրէններուն հակառակ հռչակուած էր՝ ապահովելու համար քրիստոնեաներու, մասնաւորաբար հայերու շահերը:

Ջարդերէն քանի մը օր առաջ, «Իթիտալ» թերթին խմբագրութեան կողմէ կազմակերպուած միթինկի մը մէջ, բոլոր իսլամ դասակարգերը – պաշտօնեայ, կրօնական, զինուոր եւ գործաւոր – կ'աշխատին զանգուածային յարձակման մը պատրաստուելու համար: Վալին կը հաւաստէ, որ զէնքերու մթերանոցը կողոպտուեցաւ այս գերագրգռուած ամբոխին կողմէ: Սակայն տրուած ըլլալով, որ մթերանոցը պահպանուած էր պահակախումբի մը կողմէ, եւ թէ այս պահակները, ո՛վ որ ալ ըլլար, առանց դիմադրութեան մտնելու պիտի չթողէին, թէ

ապացուցուած չէ որ պահակներուն եւ ժողովուրդին միջեւ բախում մը տեղի ունեցած ըլլայ, թէ միեւնոյն բանը պատահած է նահանգին բոլոր այն մասերուն մէջ՝ ուր այս պատճառներով ջարդեր տեղի ունեցած են, կասկած չի թողուր որ զէնքերը բաշխուած են կառավարական հրամանով:

Երկու հայ երեւելիներ սպաննուած են միեւնոյնինքն վալիին աչքին տակ, միւսը այն տեսակ վայրի մը մէջ՝ ուր գացած էր վերջնոյս կողմէ իրեն վստահուած պաշտօն մը կատարելու համար: Կառավարութիւնը ոչ միայն ոճրագործները չի ձերբակալեց՝ այլ անոնցմով անգամ չի շահագրգռուեցաւ: Այս ընթացքը կը ձգտէր ոճրագործները քաջալերելու, զանոնք ամէն տեսակ գրգռութիւններու մղելու եւ հրահրելու անոնց յոռի բնազդները: Ժամը 4ին բոլոր կառավարական պաշտօնեաները, երեւելիները, ինչպէս նաեւ խուժանը հաւաքուած էին՝ ամէնքը կրելով փաթթոց: Ասոր վրայ, հայերը, որ առաւօտէն ի վեր իրենց գործերով զբաղած էին, ստիպուած են իրենց վաճառատուները գոցել եւ ապաստանիլ իրենց տունները: Ասիկա բացարձակապէս անհերքելի ապացոյց մըն էր, թէ իրենք չէին կրնար ոչ մէկ յարձակողական միտում ունենալ:

Անատօլուի ջարդերուն ժամանակ, մտքերը խաղաղեցնելու պատրուակին տակ, կը ստիպէին հայերը որպէսզի տուներէն դուրս ելլեն եւ խանութները վերաբանան. իրականութեան մէջ նպատակնին էր զրկել զանոնք ամէն ինքնապաշտպանական միջոցէ եւ իսլամներու կողմէ անոնց բնաջնջումը դիւրացնել: Ատանայի վալին դիմած է միեւնոյն միջոցին: Այնպէս որ ջարդը եւ կողոպուտը մեթոտիկ կերպով սկսուած է խողխողումովը հայերուն, որոնք վալիին պնդումներուն տեղի տալով, կը գտնուէին փողոցներուն կամ իրենց վաճառատուներուն մէջ: Յետոյ ամբոխը յարձակած է Հայ Թաղին վրայ՝ սպաննելու համար բոլոր անոնք, որ տուն ապաստանած [էին] կամ հոնկէ բնաւ դուրս չէին ելած: Այն ատեն է միայն, որ հայերը գտնուելով օրինաւոր ինքնապաշտպանութեան մը հարկին տակ, զինուած դիմադրութիւն մը ցոյց տուած են, ուրկէց պատահած են երկուստեք կորուստներ: Սակայն, որովհետեւ ո՛չ մէկ հայ երբէք չէ յարձակած իսլամ Թաղին վրայ, եւ որ բոլոր իսլամ սպաննուածները գտնուած են Հայ Թաղին կամ ասոր մօտակայ դիրքերու վրայ, բացարձակօրէն անկարելի է պնդել, որ հայերու ձեռք առած միջոցը պաշտպանողական եւ Թուրքերունը յատկապէս պատրաստուած յարձակողական չ՛ըլլայ:

Խռովութիւնները այսպէս իրենց ընթացքը չարունակեցին մինչեւ 4 Ապրիլ:

Օսման էֆէնտի անունով իսլամի մը ընտանիքը կը բնակէր Հայոց Թաղին մէջ: Այս ընտանիքը ոչ միայն ոչ ոք չի խորհեցաւ նեղել, այլ ընդհակառակը, ամէն վտանգէ ապահով տեղ մը դրին զայն: Նմանապէս Հաճընի եւ Զորք-Մարզուանի (Տէօրթ-Եօլ) մէջ գտնուող իսլամ ընտանիքներ, հեռի ամենափոքր մտահոգութեան մը ենթարկուելէ, հայերու կողմէ ամէն կարգի հոգածութեան առարկայ եղան:

Ահաւասիկ դարձեալ նիւթական եւ չօշափելի ապացոյց մը, որ հայերը իսլամներ կոտորելու վատ մտադրութիւնը չեն ունեցած երբէք:

Կուսակալ ճէվատ պէյ Ներքին Գործոց Նախարարութեան ուղղուած տեղեկագրով մը կը պնդէ, որ իրեն անկարելի եղած էր կարգը պահպանել զինուորական միակ ջոկատով մը ընդդէմ չարագործներու եւ մարդասպաններու, որոնք ոչ մէկ բանի կ'ուզէին ականջ դնել:

Սակայն Ապրիլ 4ին, Հայոց Թաղը բնակող վերոյիշեալ Օսման էֆէնտիի միջոցաւ հայերը նամակ մը ուղղեցին կառավարութեան, ուր կը կրկնէին այն հաւաստիքը, թէ իրենք երբէք գէշ դիտումներ ունեցած չեն: Արդ, այս գրութենէն անմիջապէս վերջ տրուած կառավարական միակ հրաման մը բաւական եղաւ յարձակումը դադրեցնելու: Դարձեալ այս պարագան յայտնի փաստ մըն է, որ կոտորածները պատրաստուած եւ կազմակերպուած էին տեղական իշխանութեանց գիտակցութեամբ եւ հրամանով:

Ապրիլ 12ին սկսուած ջարդը, ինչպէս Ապրիլ 1ինը, վերագրուած էին ծիծաղելի կերպով յարմարցուած արտառոց պատճառի մը, որպէսզի ատով պատասխանատուութիւնը ձգեն հայերուն վրայ:

ճէվատ պէյ, իր տեղեկագրին մէջ, կ'ուզէ հաւատալ եւ հաւատացնել, որ Հայոց Թաղէն զինուորական ջոկատներու վրայ կրակուած ըլլալով, վերջինները յարձակած են այդ Թաղին վրայ: Իսկ հրդեհումներու եւ աւարառութիւններու վրայէն լռութեամբ կ'անցնի:

Սակայն քննութիւնը ցոյց տուաւ, որ ո՛չ թէ միայն նիւթապէս անկարելի էր Հայոց Թաղէն կրակել զինուորական բանակատեղիին վրայ, այլ նաեւ այն տունը, ուրկէ կը պնդուէր թէ հրացան պարպուած է, իսլամէ մը բնակուած էր: Խնդիրը կը կայանար, ուրեմն, կարգ մը իսլամներու խառնակչութեան վրայ, այդպէսով զինուորները հայոց դէմ գրգռելու համար:

Յարգելի երեսփոխանները անշուշտ կը յիշեն, որ Մարտ 31ի

չարժման ժամանակ, յետադիմական մը – Թերեւս Շէյխ Վահէթի – երեսփոխանական ժողովէն հրացան պարպեց Այա-Սոֆիայի հրապարակը բանակած զինուորներու վրայ, որոնք փոխադարձեցին:

Այս միջոցը – որուն նպատակն էր երեսփոխաններու կոտորածը առաջացնել – ինչպէս կը տեսնուի, ճիշդ ու ճիշդ այն միջոցն է, որ գործադրուեցաւ Ատանայի մէջ: Երկու չարժումներու[ն] նմանութիւնը աչքառու է:

Յարգելի ընկերս՝ Եուսուֆ Քէմալ պէյ կը գրէ. «...Թէպէտ հրացան նետուած վայրերու մօտակաները կարգ մը հայոց տուներ կային...», ատով կարծես բոլորովին չի մերժեր այն կարելիութիւնը, թէ հրացանաձգութիւնը հայերու կողմէ կատարուած ըլլար: Սակայն, իմ հասկացողութեամբս, այս մասին ամենափոքր կասկած մը ներելի չէ, նկատելով որ իրենց սեփական թաղէն դուրս բնակող բոլոր հայերը Ապրիլ 4ին սպանուած էին, այնպէս որ 12-ին – թուական երկրորդ կոտորածին – այդ շրջանակներու մէջ ոչ մէկ հայ մնացած էր: Ուստի, զինուորներու վրայ կատարուած հրացանաձգութիւնը իսլամի մը կողմէ միայն կրնար տեղի ունենալ:

Անկարելի է բաւական ուժգին բացատրութիւններ գտնել՝ նկարագրելու համար սարսափը եւ վայրագութիւնը այս երկրորդ կոտորածին, որ տեւած է երկու օր:

Այս սպանդի միջոցին էր, որ ողջ-ողջ այրած են հիւանդները եւ այն վիրաւորները, որոնք հասած էին շրջակայ ագարակներէն եւ գիւղերէն եւ կամ կը գտնուէին դպրոցական շէնքին մէջ:

Ճէվատ պէյ իր տեղեկագրին մէջ աւելորդ համարած է խօսիլ այն սարսափելի մահացումին մասին, որուն այդ դժբաղդները ենթարկուեցան բոցերուն մէջ, բառ մը չըսէր փորերնին պատռուած յղի կիներու, խողխողուած մանուկներու եւ ուրիշ հազար տեսակի անանուն վայրագութիւններուն վրայով: Բայց չէ մոռցած խնամով նօթագրելու, որ Հայոց Թաղին հրդեհումին միջոցին մեծ քանակութեամբ ռումբեր եւ ուժանակներ պայթած են: Այս զրպարտութեան լաւագոյն հերքումը կու տայ այն պարագան, որ հայերը, իրենց ինքնապաշտպանութեան միջոցին, ռումբեր կամ ուժանակներ չեն գործածած: Իրենց պաշտպանութիւնը կատարած են հասարակ զէնքերով, այնպէս որ բացայայտ է, որ եթէ տէր եղած ըլլային նմանօրինակ միջոցներու՝ կրնային զանոնք դիւրութեամբ գործածել եւ անոնց արդիւնքը կարելի էր շատ դիւրութեամբ ճանչնալ: Նմանօրինակ պայթուցիկներու ամենափոքր մէկ

հետքին անգամ չենք պատահած, որպէսզի կարողանայինք անոնց գործածութիւնը ենթադրել, ուստի եւ շատ բնական է, թէ ատիկա յայտնի չարախօսութիւն մըն է, որուն նպատակն է հայերու վրայ ձգել դէպքերու[ն] պատասխանատուութիւնը:

Գալով այն թնդանօթ կոչուածներուն, որոնք իբրեւ թէ խռովութեանց միջոցին Ատանայի շրջակայքը գտնուած են, ատոնք երկու հատ ջուրի խողովակներ էին՝ փայտով շրջապատուած եւ վառօդով լեցուած: Նաճար օղլու գիւղին հայերը զայն պատրաստած էին գործածելու համար՝ չունենալով ուրիշ պաշտպանութեան միջոցներ. ու ասիկա անգամ մը եւս կու գայ ապացուցանելու, որ այդ կողմերու հայերը ապստամբութեան գաղափարներ սնուցանելէ շատ հեռի էին:

Բոլոր այս մանրամասնութիւնները վճռականօրէն կ'ապացուցանեն իրողութիւն մը. այսինքն այն, թէ Ատանայի մէջ կառավարական պաշտօնեաները եւ անոնց արբանեակները կանխահոգ կարգադրութեամբ պատրաստած են այնպիսի պարագաներ, որ իրենց մտածումով՝ իրենց վրայ ինկած պատասխանատուութիւնը պիտի կարենային նուազեցնել այն ջարդերուն մէջ, զոր իրենք իսկ ծրագրեցին եւ որոշեցին, գէթ պաշտօնապէս, այդ պատասխանատուութիւնը նետել հայերուն վրայ: Այս նպատակին հասնելու եւ իսլամներու վայրագ մոլեգնութիւնը արդարացնելու համար, դիմեցին ամէն տեսակ սուտերու եւ զինուորներու բանակատեղիին վրայ կրակելու գաղրելի միջոցին:

Ճէվատ պէյ կ'աւելցնէ, թէ հայերը բազմաթիւ զէնքեր գնած են եւ թէ մէկ քանի ամսուան միջոցին Ատանա ներմուծուած են 12.000 կտոր հրացաններ:

Ճիշդ է, որ հայերը զէնքեր գնած են: Սակայն ներածուած բոլոր մթերքը հայերու կողմէ չէ գնուած: Ընդհակառակը – ինչպէս արդէն ամէն տեղ – այս զէնքերուն մեծագոյն մասը առնուած է իսլամներու կողմէ:

Հոս հարցում մը կը ցցուի:

Հայերը իրաւունք ունի՞ն զէնքեր գնելու:

Իմ կարծիքով, այս խնդիրը գլխաւոր կարեւորութիւն մը ունի Ատանայի դէպքերուն [վեր] լուծման համար, եւ կ'արժէ որ ատոր պատասխանենք ամէն բանէ առաջ:

Կը կարծեմ, թէ անկարելի է հայերուն զլանալ բոլոր օսմանցիներուն հասարակաց եղող իրաւունք մը: Եւ հայերը նոյն իսկ ամէն ժամանակ – եւ մինչեւ ցարդ – նշաւակ եղած ըլլալով ամէն տեսակ

յարձակումներու, կեղեքումներու եւ կոտորածներու, Կայսրութեան միւս տարրերէն աւելի իրենց օրինաւոր ինքնապաշտպանութեանը համար զինուելու հարկին տակ կը գտնուին: Կառավարութիւնը հայերը այն պարագային միայն պէտք էր արգիլեր, երբ առանց բացառութեան բոլոր օսմանցիներու զէնք կրելու արտօնութիւնը վերցնէր եւ զանոնք կատարելապէս զինաթափ ընէր: Բայց մերժել այս իրաւունքը ցեղի մը, որ զէնքին կը դիմէ մի միայն ինքնապաշտպանութեան համար, մինչդեռ զայն կ՚արտօնեն յարձակող տարրերու – ինչ որ են նաեւ ներկայ րոպէիս – պարզապէս պիտի նշանակէր խլամներու կողմէ ոչխարներու պէս բնաջնջման դատապարտել զանոնք: Ոչ մէկ օսմանցի պիտի ընդունէր այդ կարգի անարդարութիւն մը:

Հետեւաբար, երբ հայերուն, ուրիշ տարրերու օրինակին վրայ, զինուած ըլլալը նկատուի խռովութեան կամ ապստամբութեան նշան մը, կարելի չէ ընել այդ՝ առանց արդարութիւնը եւ ողջմտութիւնը բռնաբարելու: Եւ հարկադրուած ենք ընդունելու, որ Ատանայի դէպքերը այնպէս էին, որ հայերը չէին կրնար չի հպատակիլ իրենց օրինաւոր ինքնապաշտպանութեան հրամայական պահանջին:

Անկասկած պիտի գայ օր մը, ուր սահմանադրական կառավարութիւնը յարգել պիտի տայ իր իշխանութիւնը հանդէպ թալանիչներուն եւ ոճրագործներուն եւ պիտի զինաթափ ընէ բոլոր օսմանցիները: Այն ատեն ոչ ոք հարկ պիտի տեսնէ մտածելու ինքնապաշտպանութեան վրայ: Սակայն համոզուած եմ, որ մինչեւ այդ երջանիկ օրուան ժամանումը, ո՛չ մէկ օրէնք, ո՛չ մէկ խիղճ պիտի կրնար մեղադրել հայերը՝ իրենց օրինաւոր ինքնապաշտպանութեանը համար:

Այս չէ բոլորը:

Ամբողջ աշխարհ համաձայն է, որ բացարձակ միապետութեան մը վերադարձի վտանգները դեռ կատարելապէս հեռացուած չեն: Հետեւաբար, ամէն օսմանցի պարտաւոր է արթուն մնալ նման հաւանականութեան մը հանդէպ, եւ հակառակ պարագային, Սահմանադրութիւնը պաշտպանել զէնքով:

Ընդհանուրին ծանօթ է, որ երկու հայ կուսակցութիւնները, Դաշնակցութիւն եւ Հնչակ, հաւասար Իթթիհատ եւ Թէրաքքիի, իրենց բոլոր ջանքերը կեդրոնացուցած են այս նուիրական պարտքին կատարման:

Մարտ 31ի պատահարներու ատեն Պոլսոյ մէջ հայերը պատրաստ էին իրենց կեանքին գինովը պաշտպանելու Սահմանադրութիւնը:

Ատանայի, ինչպէս ամբողջ Կայսրութեան մէջ, հայերու ընթացքը միեւնոյնը եղած է: Ինչպէս – առ ի չգոյէ ապացոյցի – կարելի չէ եղած գտնել փաստ մը, որ կարենար ենթադրել տալ, թէ հայերը կը սնուցանէին հայրենասիրական զգացումներու հակառակ գաղափար մը, այսինքն անջատողականութիւն. բան մը որ, մանաւանդ հրապարակաւ գնուած զէնքեր՝ չէին կրնար վերագրուիլ յետին նպատակներու: Եթէ հայերը Օսմ. Հայրենիքին հանդէպ գէշ դիտումներ սնուցած ըլլային, անոնք, Պոլսոյ դէպքերու ընթացքին, չպիտի նուիրուէին այնքան կատարեալ անձնուրացութեամբ եւ վեհանձնութեամբ՝ Սահմանադրութեան պաշտպանութեան եւ կարգի պահպանութեան համար, հակառակ այն մոլեգին վիշտին, զոր Ատանայի դէպքերը արթնցուցած էին անոնց սրտին մէջ:

Կը կարծեմ, թէ ամէն անկողմնակալ օսմանցի զայրոյթ պէտք է զգայ հայերու ցոյց տուած ուղիղ եւ օրինաւոր վարմունքին ի վնաս՝ անոնց հանդէպ նետուած գարշելի զրպարտութիւններէն:

Օսմանիէ, Համիտիէ, Թարսուս, Զորք-Մարզուան, Հաճըն եւ այլուր, դէպքերը պատահած են – համեմատութիւնները պահելով – միեւնոյն եղանակաւ: Յերիւրածոյ սուտերը եւ հայերու վերագրուած արուեստական խռովութիւնները եւ յարձակմանց կեղծ իրարանցումները՝ միեւնոյն վաճառանիշը կրող ապրանքներ էին:

Օրինակի համար, Ասաֆ պէյ, ճէպէլի-Պէրէքէթի կառավարիչը, Ապրիլ 2ին հեռագրած է կուսակալութեան եւ Օսմանիէի գայմագամութեան, թէ անհիմն է Զորք-Մարզուանի հայերուն վերագրուած յարձակումը, եւ թէ ընդհակառակը, այս վերջինները օգնութիւն կը խնդրէին: Միեւնոյն օրը կուսակալութեան կը հեռագրէ նաեւ, որ Թաճիրլիի աշիրէթը – որ Օսմանիէի մէջ աւերումներու սկսած էր – յարձակած էր Զորք-Մարզուանի վրայ: Օսմանիէէն, Համիտիէէն, շրջակայ ուրիշ գիւղերէ ստացուած հեռագիրներ կը ծանուցանէին, թէ ամէն տեղ՝ Ատանայէն խմբովին հասնող ընիկ կամ եկուոր իսլամներն էին, որ ոճիրներ կը գործէին եւ հանրային կարգը կը խանգարէին:

Հակառակ ասոր, միեւնոյն Ասաֆ պէյը Ապրիլ 3ին կը հեռագրէ Ներքին Գործոց Նախարարութեան, թէ՝ Հասան-Պէյլիի եւ Զէյթունի ֆետայիները հաւաքուած են սանճագը քարուքանդ ընելու համար եւ շատ հաւանաբար պիտի գան մինչեւ Ատանա: Ապրիլ 4-ին, հեռագրաւ հրահանգ կ'ուղէ Նախարարութենէն եւ Կուսակալութենէն՝ Փայաս-Քալէի 400 բանտարկեալները ազատ արձակելու, անոնցմով կազմելու

համար վաչտ մը եւ զանոնք զինել հրացաններով եւ ռազմանիւթերով՝ զորս կը պահանջէ Իսկէնտէրունէն: Իր ծրագիրը կը գործադրէ. կ՚արձակէ բանտարկեալները, կը զինէ եւ զանոնք կը մղէ հայերուն դէմ:

Ինչպէ՞ս բացատրել չարժելու այս եղանակը եւ ինչո՞վ որակել զայն:

Ասաֆ պէյ կ՚ուզէ հաւատացնել, որ Համիտիէի կոտորածը սկսած է այդ քաղաքին քահանային կողմէ Արսլան պէյի վրայ պարպուած ատրճանակի հարուածէ մը: Սակայն ապացուցուած է, որ յիշեալ քահանան հողի մը գնման համար վճարած էր 40 ոսկի եւ կառավար[չ]ատուն գացած էր՝ իր գնած հողին պաշտօնական մուրհակները ստանալու համար: Ուստի, ողջմտութեան հակառակ է ընդունիլ, որ մի միայնակ կառավար[չ]ատուն եկած անձ մը կարենար մարդասպանութիւն մը գործել, եւ յայտնապէս երեւան կու գայ, որ ցոյց տրուած փաստը ամենապարզ սուտ մըն է:

Մնաց որ, ֆրանսացի մը, M. Sabatier եւ Ապտիլ Խալիք անունով պարկեշտ միւսլիման մը, վկայած են, որ քահանան իսլամներուն կողմէ սպաննուեցաւ՝ առանց ոչ մէկ պատճառի:

Իմ կարծիքով, Ատանայի դէպքերուն նկարագիրը բաւական չափով կը յայտնուի այն ուրախութիւններէն, որոնցմով հայերու եւ ընդհանրապէս քրիստոնեայ տարրին դէմ տարուած յաղթանակը տօնուեցաւ: Ապրիլ 12ին, մինչդեռ մէկ կողմէն քանի մը ոստիկան-զինուորներ՝ ջարդերէն վերապրած խեղճ հայերու խումբ մը քաղաքէն դուրս կը վանէին, ուրիշ ոստիկան-զինուորներ՝ վիլայէթին բոլոր բարձր պաշտօնատարներուն ներկայութեանը «Կեցցէ՜ Սուլթան Համիտ, անկցի՛ ազատութիւնը» աղաղակներով Սահմանադրութեան վաղորդայնին քաղաքին հրապարակին վրայ կանգնուած յաղթական կամարը կը քանդէին:

Այս միջադէպը շատ յատկանշական է:

Գ.
Կառավարութեան ընթացքը դէպքերէն առաջ եւ վերջը

Վերեւ յիշատակուած իրողութիւնները ներկայացնելէ վերջ, ինծի աւելորդ կը թուի զբաղիլ կուսակալ ՃԷվատ պէյի եւ Ատանայի պաշտօնատարներուն, ինչպէս նաեւ Ճէպէյլի-Պէրէքէթի կառավարիչին

ընթացքին վրայ: Իմ կարծիքով, իրենց ընթացքը ապացուցած է, օրէնքով ճշդուած բոլոր պայմաններուն մէջ, որ անոնք բացարձակապէս յանցապարտ են իրենց խառնակչութիւնով, կազմակերպչութիւնով եւ աշխատակցութիւնով: Սակայն ինչ որ ամէնէն սարսափելին է այս զարհուրելի դէպքերուն մէջ, իմ կարծիքով, վարուելու այն եղանակն է որուն հայերը ենթարկուեցան կոտորածներէն ետք, ինչպէս նաեւ այն դժոխային միջոցները, զորս գործադրեցին վերապրողները բնաջնջելու համար:

Ջարդերէն վերջ Ատանայի մէջ գրեթէ հայեր մնացած չէին: Մէկ մասը սպաննուած էր, միւսը յաջողած էր փախչիլ. մնացորդը ոչխարի հօտի մը նման դրուած էր քանի մը ոստիկան-զինուորներու հսկողութեան տակ: Երբ քննութիւնը սկսաւ, մէկ կողմէ կը տեսնուէին մարդկային խեղճուկ բեկորներ՝ սիրելիներու մարմիններուն վրայ թափուած արցունքներէն սպառած, միւս կողմէ՝ բոլոր գրգռիչները, ոճիրներու կազմակերպիչները, թալանիչները եւ մարդասպանները: Այս պայմաններուն տակ ի՞նչ ըրած է տեղական կառավարութիւնը: Անիկա բանտարկեց վերապրողներուն մէջ աչքի ընկնող բոլոր անձերը եւ զանոնք չղթայի զարկաւ՝ կառավարութեան դէմ ապստամբած եւ զինուորներուն վրայ զէնք պարպած ըլլալու ամբաստանութեամբ:

Այս տարօրինակ ընթացքը արդիւնքը ունեցաւ չգիտցողներուն ալ սովրեցնելու, որ կոտորածներու հեղինակը եւ կազմակերպիչը նոյնինքն տեղական կառավարութիւնն էր:

Երբէք չէ ուրացուած, որ հայերը զէնք գործածած են: Ոչ ոք ուզած է նոյնպէս ուրանալ, որ զինուորներ եւ ուրիշ իսլամներ սպաննուած են հայերու նետած գնդակներէն: Բայց խնդիր է գիտնալը, թէ նման պարագաներու տակ զէնքի գործածութիւնը կարելի՞ է պատժել: Ահա՛ այն խնդիրը, զոր մինչեւ այսօր լուծելու մասին Պատերազմական Ատեանը բոլորովին անփոյթ կը գտնուի:

Ինչպէս արդէն ըսինք, հայերը ապաստանած ըլլալով իրենց թաղը՝ իրենց տուներուն մէջ, իսլամ ամբոխը եւ զինուորները նոյն տեղը անոնց վրայ յարձակած են. այնպէս որ՝ հայերը միմիայն զբաղած են իրենց պաշտպանութիւնով: Այս մասին ոչ մէկ կասկած գոյութիւն ունի: Այն տուներուն ճակատները, ուր հայերը դիմադրեցին, թէ՛ զինուորներու եւ թէ՛ պաշիպօզուքներու կողմէ արձակուած գնդակներէն ծակծկուած են:

Ո՞ր օրէնքը կամ խիղճը պիտի կարենար թոյլ տալ պատժելու անձ

մը, որ սպաննած է նախայարձակ մէկը՝ նմանօրինակ պայմաններու մէջ:

Օրինաւոր ինքնապաշտպանութիւնը ո՛չ միայն օրէնքով ընդունուած է, այլ նաեւ բնական օրէնք մըն է՝ հաստատուած մարդկային խիղճով: Զկայ մարդ մը, նոյնիսկ անասուն մը, որ չը զգայ ինքզինք պաշտպանելու բնածին պէտքը:

Ի՞նչ պատճառաբանութիւն կարելի էր մէջ բերել՝ ընդունելու համար որ հայ տարրը զուրկ ըլլայ այս իրաւունքէն:

Տեղական կառավարութիւնը, իր ոճիրը թաքցնելու նպատակով, Պատերազմական Ատեանի կազմութենէն առաջ իսկ պատրաստեց սուտ վկաներ եւ ամբաստանողներ: Օգտուելով ջարդէ պրծած հայերու վերադարձէն եւ այդ տարաբախտներու ազատ կերպով արտայայտուելու անհամարձակութենէն, ամէն ճիգ թափած է այս զարհուրելի դէպքերու մեծութիւնը ծածկելու եւ անոնց բնոյթը եղծելու համար: Բոլոր այն հայերը, որոնք օրինաւոր ինքնապաշտպանութեամբ իրենց զէնքին դիմած էին, քննութիւն կատարելու կամ վկայութիւններ առնուելու կեղծ պատրուակին տակ՝ ոճիրով ամբաստանուեցան:

Յիշեալ կառավարութիւնը իր գործունէութեան չափանիշը ցոյց տուաւ Պատերազմական Ատեանին առջեւ ղրկելով անմեղներու այս խումբը՝ զանոնք դատապարտել տալու նպատակով:

Դ.
Պատերազմական Ատեանը

Պատերազմական Ատեանը կազմող սպաներու պատուաւորութիւնը եւ պարկեշտութիւնը վիրաւորող ոչինչ պիտի ըսեմ: Սակայն, պէտք է յայտարարեմ, որ անոնք չունէին բաւարար չափով օրինական եւ քննչական ծանօթութեանց զարգացումը: Զեմ կրնար նմանապէս իմ զարմանքս ծածկել այն իրողութեան, որ միամտութիւնն ունեցան իբր դատական հիմ ընդունելու տեղացի բարձր պաշտօնեաներուն եւ ժողովուրդի զանազան խաւերուն կողմէ պատրաստուած դատախազներու բերած սխալ վկայութիւնները՝ մէկ կամ ամբողջ, մեծ ու պզտիկ բոլոր գործերուն մէջ, այնքան խոր կերպով ընդելուզուած էին:

Ատանայի Պատերազմական Ատեանի վճիռները տրուած ըլլալով այս հիմերուն վրայ, բնականօրէն զուրկ են դատաստանական եւ օրինական արժէքէ:

Վեց հայեր յիշեալ ատեանին կողմէ դատապարտուած են մահ-ուան՝ Օհան Օղլու խան կոչուած խանի մը մէջ յիսնեակ մը իսլամներ սպաննած ըլլալու յանցանքով: Սակայն զարմանալի է, որ նկատի չէ առնուած թէ, 1. Խնդրոյ առարկայ սպաննուած իսլամները այդ խանին մէջ բնակողներ չէին. 2. Թէ անոնք կասկածելի մարդիկ էին, քաղաքին զանազան թաղերէն հասած՝ Հայոց թաղին կից այս խանին մէջ, ուր ընելիք բան մը չունէին, ինչ որ կ'ապացուցանէ, թէ հոն հաւաքուած էին հայերուն վրայ յարձակելու նպատակով. 3. Թէ իրենց մահը կը զուգադիպի ճիշդ հայերուն դէմ եղած յարձակումին միջոցին:

Այն իրողութիւնը, որ հանգիստ թողուած են հեղինակները այն անանուն ոճիրներուն, որոնց Ատանա եւ իր շրջակաները թատր հանդիսացած են եւ որոնք ազգային աղէտքի մը համեմատութիւնները առած են, այն իրողութիւնը, որով խնայուած է այս յեղուզակներուն, եւ ասոր փոխարէն դատապարտուած են հայ դժբաղդ վերապրողներ, որոնց միակ յանցանքը օրինաւոր ինքնապաշտպանութեամբ մահուընէ խուսափիլը եղած է, չեմ կրնար ինքզինքս արգիլել տեսնելէ կրկին տպագրութիւն մը՝ վերստին աչքէ անցուած եւ ճոխացած – Պոլսոյ համիտական կոտորածներուն:

Պատերազմական Ատեանի այդ էֆէնտիները բոլորովին կ'անգի-տանան, որ ոճիրներու վերաբերեալ խնդիրներու մէջ դատաւորները ստիպուած չեն իբր պարզ ճշմարտութիւն ընդունիլ վկաներու բոլոր ըսածները, եւ թէ ընդհակառակը, անոնք օրէնքով պարտաւոր են ճշդելու, թէ այդ տրուած վկայութիւնները կը յարմարի՞ն նիւթական կարելիութիւններու հետ, եւ հետեւաբար, ընդունելի՞ են կամ ոչ:

Քննչական պայմաններու անբաւականութեան պատճառովն է, որ Պատերազմական Ատեանը կը շարունակէ դատապարտել այնպիսի անձեր, որ չուկայէն փախչելով ապաստանած են օտարահպատակնե-րու տուներ, ուրկէ, նոյնիսկ օտարահպատակ երեւելիներու հաւաս-տումներուն համաձայն, խռովութեանց բովանդակ տեւողութեանը միջոցին դուրս չէին ելած:

Պարտաւոր ենք հաւասարապէս մտածել, որ Պատերազմական Ատեանը նմանապէս տեղեակ չէ Սահմանադրութեան պատմութեան եւ օսմանեան տարրերու քաղաքական կեանքին, վասնզի անիկա **Դաշ-նակցութեան** կուսակցութենէն զատ **Դրօշակ** կոչուած յեղափոխական ինքնակոչ կուսակցութեան մը վրայ ալ կը խօսի, եւ յայտնի կերպով կատարելապէս կ'անգիտանայ, որ Դաշնակցական կուսակցութիւնը

նոյնքան կանոնաւոր եւ յարգելի կուսակցութիւն մըն է՝ որքան Իթթիհատ եւ Թէրաքքըն: Ատեանին մահավճիռները տրուած են այն միեւնոյն նախապաշարումներով, որոնց հայ կուսակցութիւնները նշաւակ եղած էին հին վարչութեան օրով, եւ այսպէս անիկա կը կործանէ Օսմանեան Սահմանադրութեամբ հաստատուած իրերու կարգը եւ քաղաքական եւ ընկերային կեանքը:

Այս ամէնը կրնա՞յ մեր արժանիքը եւ մեր ազգային պատիւը բարձրացնել յաչս քաղաքակիրթ աշխարհի:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այս սարսռալի ճշմարտութիւնները ճանչցնելու համար որոշումս տալէ առաջ՝ շատ տատամսեցայ ու երկարօրէն մտածեցի: Գաղափարն ունեցայ նոյն իսկ զանոնք թեթեւցնելու՝ որպէս զի չի վշտացնեմ իմ իսլամ ընկերակիցներս:

Սակայն ազգի մը անդամներէն կամ կրօնքի մը յարողներէն միոյն կողմէ գործուած ոճիրներու պատասխանատուութիւնը չի կրնար հաւաքաբար կշռել այդ ազգին կամ կրօնքին վրայ:

Իսլամական օրէնքը, հեռի՛ ընդունելէ այդ կարգի վայրագութիւններ, ամենափոքր անարդարութիւն մը չի թոյլատրեր: Անիկա կը հրամայէ ամէն բանի մէջ ճշմարտութիւնը որոնել: Այս այսպէս ըլլալով, հարկ չի տեսայ ծածկելու այն իրողութիւնները, զորս ես հաստատած եմ եւ որոնց համոզումը ունիմ:

Ձեմ կարծեր, որ այդ ճշմարտութիւններու մերկացումը կարենայ տարրերու միջեւ անհամերաշխութիւնը աւելցնել: Վասն զի ես յոյս ունիմ, որ այս վայրենի խելագարութիւնը չպիտի երկար տեւէ:

Հին վարչութեան օրով սովորութիւն էր ոճիրները պահել, ուրանալ, փաստերը խեղաթիւրել:

Այդ վնասակար դրութեան չնորհիւ, այն հիւանդութիւնը, որմէ երկիրը կը տառապէր իբր չարաւալից վէրքէ մը, Կայսրութեան կողին փակչած փտախտի մը ձեւն առած էր:

Արդ, հիւանդութիւն մը կը բուժուի այն ատեն միայն երբ կ'ախտաճանաչուի եւ կը դարմանուի:

Պահելով զանիկա՝ կարելի չէ բուժումը ձեռք բերել:

Գո՛նէ այդպէս է իմ կարծիքս:

Վերջացնելէ առաջ ստիպուած եմ ամենախոր ցաւով աւելցնելու,

որ **Իթթիհատ եւ Թէրաքքը** կուսակցութեան անդամները Ատանայի վայրագ եղերերգութեան կազմակերպման եւ գործադրութեան մասնակցած են: Այս իրողութիւնը հաստատուած է նահանգին զանազան տարրերուն կողմէ, հիւպատոսներէ, ամերիկացի միսիոնարներէ եւ լատին քահանաներէ:

Բաց աստի, օտար թերթերը արձագանգը եղած են այս սարսափներուն, եւ հասարակաց կարծիքը գրեթէ համոզուած է, որ անոնք գործն են **Իթթիհատ եւ Թէրաքքը**ին:

Այն պարագային, որ կուսակցութեան մասն կազմող ոճրապարտ անհատներ չարտաքսուին իր ծոցէն եւ իրենց արժանի պատիժը չի կրեն, **Իթթիհատ եւ Թէրաքքը**ի վրայ ծանրացող մեղքերը անհերքելի պիտի մնային:

Ներկայ ժամուս, ուր կառավարութիւնը, եթէ կարելի է այսպէս ըսել, բոլորովին մեր կուսակցութեան ձեռքը կը գտնուի, կրնանք զոհերուն անմիջական օգնութիւն մը հասցնել, առանց բացառութեան յանցաւորները պատժել Օրէնքին բոլոր խստութիւնովը եւ, նման աղէտներու կրկնութիւնը արգիլող անվրէպ միջոցներ ձեռք առնել, ու այսպէս Կուսակցութեան եւ Կառավարութեան վարկը վերահաստատել եւ հայրենիքը փրկել:

13/25 Յունիս (1909)

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Իրենց նո՛յնքան չահեկան պարունակութեանը համար, ստորեւ կը դնենք Պապիկեանի այն քանի մը հեռագիրները, որոնք իր կողմէ ի պաշտօնէ քաշուած են Ատանայէն: Աւելցնենք որ ատենին, բոլոր այս վաւերաթուղթերը տարաբաղդ Ս. Սուինի* կողմէ լուսանկարուած եւ ուրիշներու կողմէ ֆրանսերէնի թարգմանուելով ղրկուած են զանազան հայանպաստ խմբակցութեանց կամ անհատներու, ասոնց կարգին նաեւ Pro Armenia-ի, ուրկէ թարգմանած ենք ներկայ գործին ամբողջութիւնը:

Յ. Ս. (Հակոբ Սարգսյան:- Հ. Ս.)

---

* Նկատի ունի Կ. Պոլսի պատրիարքարանի դիվանապետ, Մեծ եղեռնի ընթացքում նահատակված Սարգիս Սվինը (Սյունդյուճյան):- Հ. Ս.:

ՊԱՏԱՍԽԱՆ
31 Մայիս 1325 (1909) Հեռագրին

Երէկ մեկնեցանք Օսմանիէէն, եւ Հարունիէ գիւղէն անցնելով՝ ուշ ատեն հասանք Պաղչէ: Այս գիւղին բնակչութիւնը յափշտակուած գոյքերու փնտռտուքէն եւ վերագրաւումէն գրգռուած, հայերուն դարձեալ կը սպառնայ: Իսլամները – չգիտեմ թէ ինչպէս – տեղեկացած են Զորք-Մարգուանի վերջին միջադէպին, եւ այս առթիւ կը պատմեն, թէ այդ վայրը ռմբակոծուած է: «Զորք-Մարգուանի եկեղեցին կործանած է, կ՚ըսեն հայերուն, ու մենք պիտի կոտորենք ձենէ բոլոր ողջ մնացորդները: Հոս գտնուող 25 զինուորները պիտի չի կրնան զձեզ պաշտպանել: Իսլամ կիները այս զինուորներուն ձեռքերը կապելու բաւական են»:

Կոտորածներէն խուսափած քանի մը հայեր, այս սպառնալից չարախօսութիւններէն զարհուրած, Պաղչէ եկան՝ զինուորներուն հրամայող տասնապետի մը ընկերակցութեամբ: Անոնց հասնելէն ետք Պաղչէի մէջ հրկիզեցին դեռ կանգուն մնացող չորս տուներէն մին:

Հակառակ այս ամէն սարսափներուն, որուն վկան եղանք մեր անցքին վրայ ամէն տեղ, տեսանք Պաղչէի միւֆթին – Զորք-Մարգուանի մէջ հսկողութեան տակ առնուած – որ իր ընկերներուն հետ ազատօրէն կը շրջէր:

Մեր քննութենէն կատարելապէս համոզուեցանք, որ Ռամազանի Պայրամէն առաջ իսլամներու եւ քրիստոնեաներու միջեւ յարաբերութիւնները լաւ էին: Այդ թուականին է, որ ջարդի շչուկները շրջան ընելու սկսան: Այս խնդրոյն մասին բողոք բարձուած է Ճէպէլի-Պէրէքէթի կառավարիչին մօտ, ու այդ պատճառով նոյն իսկ դատական քննութիւն մը բացուած է:

Բացի այս տարածուած զրոյցէն՝ որուն համաձայն Պաղչէի միւֆթին իր քարոզներուն մէջ յայտարարած է, թէ Սահմանադրութիւնը հայերու գործն էր. թէ Սահմանադրական Վարչութիւնը իսլամներուն վնասակար էր եւ թէ անոր հաստատած հաւասարութիւնը՝ Շէրիաթին հակառակ, այս միեւնոյն միւֆթին օր առաջ տեղեակ էր այն դէպքերուն, որոնք Զորեքշաբթի առտու պիտի ծագէին Ատանայի մէջ, ու միեւնոյն օրուան իրիկունը Համիտիէի մէջ գիշերանց մարդ ղրկած էր Հարունիէ՝ Հաճի Խալիլ պէյի եւ Հասան աղայի ետեւէն, անոնց հետ կազմակերպելու համար այն ջարդը եւ կողոպուտը, որոնց Ուրբաթ սկսան:

Դարձեալ այս միեւնոյն միւֆթիին է, որ Պաղչէի մէջ 30 ոսկի կաշառք գրպանած է գերմաններէ՝ տեղւոյն մէջ ասոնց վարձած տունը պաշտպանելու համար:

Հակառակ անոր որ այս փաստերը ո՛չ մէկ հերքում կը վերցնեն, վերին աստիճանի զարմացած եմ տեսնելով, որ այս միւֆթիին եւ իր արբանեակները ազատօրէն կը շրջին:

Այս իրողութիւնը, ինչպէս նաեւ միւֆթիին Պաղչէ մուտքը իր որդ-ւոյն հետ, ուր, իբր նշան ուրախութեան, ողջունուեցան հրացանա-ձգութեամբ իսլամ բնակչութենէն – որ սպառնալիքի տակ հայերը ստիպած էր ի նպաստ միւֆթիին հեռագիր քաշել եւ գոհունակութեան գիր մը ստորագրել – նոր քաջալերանք մը պիտի գտնէ իր ոճիրներուն մէջ: Ընդհակառակը, վերոգրեալ դէպքերը հայերուն համար պիտի ըլլան նոյնքան յուսահատութեան պատճառներ:

Ճշմարիտ օսմանցիի իմ զգացումներս զիս կը մղեն եզրակացնելու, որ այդ կարգի դէպքեր անկարելի կ՚ընծայեն տարբերու միջեւ բարեկա-մական յարաբերութիւնները ո՛չ միայն այս տեղերուն, այլ եւ ամբողջ Կայսրութեան մէջ:

Գործելու այնպիսի ուղղութիւն մը ընդունած են, որուն ողբալի հետեւանքները հեռագրի մը մէջ խտացնել կարելի չէ: Բայց եւ այնպէս կու գամ յանուն հայրենիքին խնդրել, որ այդ բանէն հրաժարին:

ՀԵՌԱԳԻՐ ՈՒՂՂՈՒԱԾ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Քաշուած 25 Մայիս 1325 (1909) թուականին

Մեր Յանձնաժողովը ծանօթացաւ այն հեռագրին, զոր Ատանայի կրօնական պետերը Ձեր Վսեմութեան ուղղած էին:

Իմ կարծիքով՝ ասոնք կատարելապէս իրաւունք ունին:

Արդէն դժուար չէր նախատեսել, թէ Պատերազմական Ատեանը այս արդիւնքին պիտի յանգէր: Ահա թէ ինչո՛ւ պարտք համարած էի վճիռներու գործադրութեան յետաձգումը խնդրել: Այս խորհուրդը, դժբաղդաբար, նկատողութեան չէ առնուած: Նոյնպէս Թարսուսէն քաշած էի հեռագիր մը, ստորագրուած նաեւ էսատ Ըէուֆ պէյի կողմէ, խնդրելու համար որ անարդարօրէն բանտարկուած հայերու – ինչպէս Քերովբէ էֆէնտիի* – քննութիւնը կարենար շարունակուիլ՝ առանց

* Շատ հավանաբար նկատի ունի Ադանայի թեմի աեաջնորդարանի 1905-1915 թթ. դիվանապետ Քերովբե Փափազյանին:- Հ. Ս.:

յիշեալները բանտին մէջ վար դրուելու:

Զեր Վսեմութիւնը հրամայած է ընթացք տալ այս խնդրանքին, սակայն այդ հրամանը չէ գործադրուած. վասնզի մինչդեռ Պատերազմական Ատեանի պարտքն էր Պաղտատի զատէի, Պօշնաք Սալիհի, Իհսան Ֆիքրիի եւ Ատանայի անոնց գործակիցներուն եւ Պաղչէի Սայիտ աղայի, Հաճի Խալիլի եւ Հասան աղայի, ինչպէս նաեւ Օսմանիէի եւ Իհսանիէի միեւնոյն դասակարգի ջարդարարներուն քննութիւնները փութացնել եւ անյապաղ վճիռները գործադրել, եւ, անգամ մը կարգը վերահաստատելէ վերջ, պատժական կամ քաղաքային ուրիշ յանցանքներու քննութիւնը թողուլ սովորական դատարաններու: Պատերազմական Ատեանը, փոխանակ այսպէս վարուելու – ինչ որ իրեն համար պարտականութիւն մըն էր – երկու ամսուայ իր գումարումներու ընթացքին նկրտեցաւ հայկական ապստամբութիւն մը երեւան հանելու: Իր բոլոր գործունէութիւնը յատկացուց պատժելու խեղճ վերապրողներ – որոնց միակ ոճիրը այն էր, որ իրենց կեանքը պաշտպանած էին – իր որոշումներուն մէջ հիմնուելով միմիայն քաղաքային եւ զինուորական պաշտօնեաներու յայտարարութեանց եւ վկայութեանց, ինչպէս նաեւ Պաղտատի զատէի նման ոճրագործներու. բոլորը հեղինակ եւ կազմակերպիչ խռովութեանց:

Վստահելի աղբիւրէ մը տեղեկացած եմ, որ Հաճընի շրջանակին մէջ, մեծ թիւով հայեր 7–8 հոգինոց խումբերով շղթայի զարնուած՝ ամենագէշ վարմունքներու զոհուած են:

Երէկ ուշ ժամանակ հոս հասայ եւ տեղեկացայ, թէ հակառակ Զերդ Վսեմութեան հրամանին, Քերովբէ էֆէնտին եւ իր դասակարգին պատկանող հայերը ա՛լ աւելի մեծ խստութիւններու առարկայ են եւ թէ հայերէն մաս մը գաղթելու սկսած է:

Նախորդ կուսակալ ճէվատ պէյ, թերթերու մէջ հրատարակուած իր տեղեկագրով կը հաւաստէ, թէ կոտորածը սկսած է գրոյցի մը հետեւանքով – որուն ստութիւնը այլապէս ծանօթ է ճէվատ պէյի – որուն համաձայն իբր թէ կին մը եւ քանի մը խլամներ հայերու կողմէ սպաննուած են այգիներուն մէջ:

Սակայն դատարանական թղթերով եւ վաւերական տեղեկութիւններով վճռականօրէն հաստատուած է, թէ ջարդերու շչուկները Բամազան Պայրամիէն ի վեր շրջան կ՚ընէին: Ընկերակիցներս ալ այս կէտը հաստատած են իրենց հեռագիրներուն մէջ:

Ըստ իս, միմիայն ճէպէլի-Պէրէքէթի սանճագին մէջ կոտորուած

հայերու թիւը նուազագոյնը 3000ը կ'անցնի: Բացի Զորք-Մարզուանէն, ուր հայերը օրինաւոր դիմադրութիւն մը ըրած են, բոլոր գաւառին մէջ հայապատկան միակ չէնք իսկ կանգուն չի մնար:

Հետեւաբար, եթէ Պատերազմական Ատեանը՝ աղէտէն փրկուած հայերը նեղելէ չարգիլուի, ներկային եւ ապագային համար բացած պիտի ըլլանք անբուժելի վէրքեր:

Պատիւ ունիմ վերջին անգամ ասիկա Ձերդ Վսեմութեան յայտարարելու:

ՀԵՌԱԳԻՐ ՈՒՂՂՈՒԱԾ ՎԱՐՁԱՊԵՏՈՒԹԵԱՆ՝ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՏԵԱՆԻ ՎՃԻՌՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԱՂԵՐՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Թուական՝ 7 Յունիս 1325 (1909)

Կը խնդրուի Ձերդ Վսեմութենէն, որ բարեհաճի յետաձգել Պատերազմական Ատեանի վճիռներուն գործադրութիւնը՝ մինչեւ որ մեր քննութիւնը աւարտի:

ՅԱԿՈԲ

ԶՈՀԵՐՈՒ ԹԻՒԸ

Ատանայի եւ իր շրջանակներուն մէջ սպաննուած հայերու թիւը մօտաւորապէս 21.000 հոգիի կը հասնի:

Այս թիւը կը բաժնուի հետեւեալ կերպով.

Ատանա եւ շրջակայ ագարակներու մէջ	9780
Թարսը-Վէրտի » » »	1280
Սայ-Կէչիտ	850
Էսէ Հաճիլի	1558
Օսմանիէ	1111
Պօստան-Զիֆթլիք	1277
Քուրտլար	4734
	19479

Յոյներ	*250*
Սուրիացիներ (սիւրիանի)	*850*
Քաղդէացիներ (քիլտանի)	*422*
	1522
Համագումար՝	*21.001*

Թէպէտեւ հայ, հայ-կաթոլիկ, բողոքական, յոյն, սուրիացի եւ քաղդէացի Առաջնորդարաններու տուած թիւերը 21.000ի գումարը կ'անցնին, սակայն մեր քննութիւնը հաստատեց այս վերջին թիւը:

Անկախաբար այս զոհերէն, զանազան իսլամ ազարակներու մէջ սպաննուած են ուրիշ անձեր, որոնց թիւը յայտնի չէ:

ՑՈՒՑԱԿ

1911 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՐԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ

Ռուսաստանում

Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանց – Մայր աթոռի միաբան
Ներսես արքեպիսկոպոս Խապայան – Բեսարաբիայի թեմի առաջնորդ
Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանց – Ամենայն Հայոց կաթողիկոսական տեղապահ
Անանիա արքեպիսկոպոս Համազասպյան – Շամախու թեմի առաջնորդ
Հովհաննես արքեպիսկոպոս Շիրակունի – Մայր աթոռի միաբան
Հուսիկ արքեպիսկոպոս Մովսիսյան – Սինոդի անդամ և «Արարատ» հանդեսի խմբագիր
Բարդուղիմեոս եպիսկոպոս Զամիչյան – Մայր աթոռի միաբան
Ղևոնդ եպիսկոպոս Մարդուկեսյան – ս. Էջմիածնի Մայր տաճարի լուսարարապետ
Սարգիս եպիսկոպոս Փիլոյան – Սևանի մենաստանի վանահայր
Աչոտ եպիսկոպոս Շախյան – Մայր աթոռի միաբան
Մխիթար եպիսկոպոս Տեր-Մկրտչյան – Աստրախանի թեմի առաջնորդ
Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյան – Սինոդի անդամ
Եփրեմ եպիսկոպոս Սուքիասյան – Վրաստանի թեմի ժամանակավոր կառավարիչ
Խորեն եպիսկոպոս Մուրադբեգյան – Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ

Թուրքիայում

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան – Կ. Պոլսի հայոց նախկին պատրիարք
Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան – Կ. Պոլսի հայոց նախկին պատրիարք
Գրիգորիս արքեպիսկոպոս Հովհաննեսյան
Վահրամ արքեպիսկոպոս Մանկունի – Կ. Պոլսի հայոց պատրիարքական տեղապահ
Եղնիկ արքեպիսկոպոս Ապահունի
Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյան – Նիկոմեդիայի (Իզմիտ) Թեմի առաջնորդ
Գևորգ արքեպիսկոպոս Երեցյան
Հովսեփ արքեպիսկոպոս Սարաջյան – Վանի Թեմի առաջնորդական տեղապահ
Հովհաննես արքեպիսկոպոս Արչարունի
Ներսես արքեպիսկոպոս Խարախանյան – Տարոնի Թեմի առաջնորդ
Դանիել արքեպիսկոպոս Հակովբյան – Երուսաղեմի պատրիարքական տեղապահ
Հմայակ եպիսկոպոս Դիմաքսյան
Մաղաքիա եպիսկոպոս Տերունյան
Գաբրիել եպիսկոպոս Ճևահիրճյան
Հակոբ-Աչոտ եպիսկոպոս Փափազյան
Մովսես եպիսկոպոս Գեոմրյուքճյան – Բաղդադի պատրիարքական փոխանորդ
Տրդատ եպիսկոպոս Պալյան
Եղիշե եպիսկոպոս Զիլինգիրյան
Մկրտիչ եպիսկոպոս Աղավնունի – Եգիպտոսի Թեմի առաջնորդ*
Կարապետ եպիսկոպոս Մազլումյան – Բանդրմայի Թեմի առաջնորդ
Բարգեն եպիսկոպոս Գյուլեսերյան – Գաղատիայի Թեմի առաջնորդ
Զավեն եպիսկոպոս Տեր-Եղիայան – Տիգրանակերտի Թեմի առաջնորդ
Սմբատ եպիսկոպոս Սաադեթյան – Կարինի Թեմի առաջնորդ
Թորգոմ եպիսկոպոս Գուչակյան
Հովսեփ եպիսկոպոս Այվազյան

---

* *Իսկական ազգանունը՝ Եղմնակյան:*

Պարսկաստանում

Սահակ արքեպիսկոպոս Այվատյան – Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդ

Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան – Ատրպատականի թեմի առաջնորդ

Եվրոպայում

Գևորգ եպիսկոպոս Ութուճյան – Եվրոպայի հայոց թեմի առաջնորդ[1]

---

[1] *Հիմքը՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 28։*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Ա-Դօ (բուն անունով՝ Տեր-Մարտիրոսյան Հովհաննես) 58, 59, 97, 1029

Աբբաս I շահ Սաֆավի 660

Աբբաս Միրզա Ղաջար (Պարսկաստանի գահաժառանգ) 749

Աբդալ Խալո (Կիլիկիայի Խայբրլը գյուղի բնակիչ) 20

Աբդիլ-Սամէդ խան (Թուրքական գյուղերի սեփականատեր Ատրպատականում) 626

Աբդոլ Հասան խան (տե՛ս Մոիզ Սոլթան)

Աբդոլ Հոսեյն Միրզա Ղաջար (տե՛ս Ֆարման Ֆարմա)

Աբդուլ Ազիզ (Օսմանյան կայսրության սուլթան) 777, 809, 811, 813, 830

Աբդուլ Համիդ II (Կարմիր սուլթան, Համիդ, Համիտ) (Օսմանյան կայսրության սուլթան) 8, 9, 11, 18, 32, 34, 40, 51, 85, 96, 203, 214, 273, 277, 381, 439, 579, 761, 776, 778, 785, 809, 813, 830, 853, 856, 893, 897, 944, 945, 952, 958, 962, 986, 993, 1054, 1061, 1072, 1082, 1095, 1109

Աբդուլ Մեջիդ (Օսմանյան կայսրության սուլթան) 813

Աբդուլլա փաշա (մարշալ, Եմեն ուղարկված օսմանյան զորքի հրամանատար) 870

Աբդուլլա փաշա (Իզմիրում օսմանյան զորքի հրամանատար) 1059

Աբել քահանա (Կ. Պոլսում) 883

Աբոլֆաթհ Միրզա Ղաջար (տե՛ս Սալար Դովլե)

Աբովյան Խաչատուր 159

Աբրահամ (պարսկական հեղափոխության Խոյ-Ավարայրի կռիվներում զոհված հայ մարտիկ) 220, 769

Աբրահամ խան Բախտիարի (տե՛ս Հովակիմյան Աբրահամ)

Աբրահամյան Մարտիրոս (ծածկանունը՝ Բաչգառնեցի Մարտիրոս) (ՀՅԴ խմբապետ) 219, 220, 305

Աբրահամյան Ռ. («Բիրժևիե վեդոմոստիի» լրագրող) 401

Ադել խան (Ատրպատականի հայաբնակ Մուժամբար գյուղի սեփականատեր) 192, 196

Ադիլ բեյ (Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարության խորհրդական, Իթթիհադ կուսակցության ընդհանուր քարտուղար) 16, 34, 35, 974, 992, 1034, 1039, 1050

(Ադիվար) Խալիդե Էդիբ (երիտթուրք կին գործիչ) 852

Ադոնց Նիկողայոս 385, 386

Ադոսիդես Ա. (ֆրանսիացի հեղինակ) 36

Ազադ օլ Մոլք (բուն անունով՝ Ալի Ռեզա խան Ղաջար) (դեռահաս Ահմեդ շահի խնամակալ) 517, 619

Ազարյան Մանուկ (Կ. Պոլսի Ազգ. կեդրոնական վարչության ատե-

նապետ) 801, 802, 807, 834, 883
Ազիզ օլ Մոլք (տե՛ս Քամրան Միրզա Ղաջար)
Ազիզբեկով Մեչադի (բոլշևիկ գործիչ) 534
Ազնավուր Պետրոս (ծածկանունը՝ Ժորժ Բրեզոլ) (գրքի հեղինակ) 36
Ազնավուրյան Արամայիս (ՀՅԴ գործիչ) 297, 422
Աթաբեկյան Լևոն (բժիշկ, ՀՅԴ, ապա Էսէռ գործիչ) 304, 309, 423, 475
Աթաբեկյան Վանի (Ջրաբերդի մելիք) 324
Աթաթուրք (բուն անունով՝ Մուստաֆա Քեմալ) 771
Ալեքսան (պարսկական հեղափոխության Թեհրանի համար կռիվներում զոհված թավրիզեցի հայ մարտիկ) 272, 769
Ալեքսանդր II Ռոմանով (Ռուսաստանի կայսր) 449
Ալեքսանդր III Ռոմանով (Ռուսաստանի կայսր) 495
Ալեքսանդր Մակեդոնացի 932
Ալեքսանդրով Պ. Ա. (դատական քննիչ Ռուսաստանում) 460, 467
Ալեքսանյան Լևոն (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորության թեկնածու) 389
Ալթունյան Գ. («Ղարաբաղի» լրագրող) 401
Ալի խան (տե՛ս Արշադ Դովլե)
Ալի խան (տե՛ս Սաադ Դովլե)
Ալի փաշա (Օսմանյան կայսրության մեծ վեզիր, Հայոց Ազգ. սահմանադրությունը «չնորհողը») 827
Ալի փաշա (Բաղեշի նահանգապետ) 1063
Ալի Դանիշ բեյ (Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար) 1066, 1074, 1082, 1083
Ալի-ղուլի խան Բախտիարի (տե՛ս Սարդար Ասադ)
Ալի Ռեզա խան Ղաջար (տե՛ս Ազադ օլ Մոլք)
Ալի Քեմալ (համաթուրքականության գաղափարախոս) 843
Ալիխանյան քահանա (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 388
Ալիխանով-Ավարսկի Մաքսուդ (Ռուսաստանի բանակի գեներալ) 432
Ալոյան Գալուստ (ծածկանունը՝ Թորոս) (ՀՅԴ գործիչ) 184
Ալպոյաճյան Արչակ (պատմաբան) 81, 883, 910, 920, 921, 923, 954, 957, 1063
Ախոյան Կարապետ (ժողովրդական տաղասաց) 46
Ակնունի Էդուարդ (տե՛ս Մալումյան Խաչատուր)
Ակսակով (դատախազ Ռուսաստանում) 304, 424, 466, 468, 470
Ահարոնյաններ (Ավետիս Ահարոնյանի ընտանիքը) 355
Ահարոնյան Ավետիս (գրող, ՀՅԴ գործիչ) 62, 295, 298, 299, 304, 328, 351, 354-359, 422, 472, 481, 485, 486, 490, 510, 942, 955, 986
Ահարոնյան Վարդգես (գրող, Ավ. Ահարոնյանի որդին) 299, 320, 321, 354, 355, 357, 419, 481
Ահմեդ Մուխթար փաշա (տիտղոսը՝ Ղազի) (Թուրք զորահրամանատար, Օսմանյան կայսրության մեծ վեզիր) 1054, 1055, 1061, 1073, 1083, 1084
Ահմեդ Ջեմալ փաշա (իթթիհադական եռապետության անդամ, հայոց դահճապետներից) 845, 1023

Ահմեդ Ռեֆիք (երիտթուրք գործիչ) 852
Ահմեդ Ռիզա բեյ (օսմանյան խորհրդարանի նախագահ, Իթթիհադի պարագլուխներից) 35, 809, 810, 846, 848, 893, 968, 1038
Ահմեդ Սամի բեյ (երիտթուրք գործիչ) 888
Ահմէտ Էֆէնտի (Հաճընի մուֆթիի որդին) 1101
Աղա Մոհամմեդ խան Ղաջար (Ղաջար արքայատոհմի հիմնադիրը Պարսկաստանում) 749
Աղաբեկյան Մարկոս («Կոունկ» պարբերականի հրատարակիչ և խմբագիր) 502
Աղաղադյան Վահան քահանա («Մշակ» թերթի թղթակից) 401
Աղաղարյան Կարապետ (Ադանայի նահանգի Համիդիե ավանում նահատակված էվերեկցի հայ) 22
Աղաղարյան Հաջի (Ադանայի նահանգի Համիդիե ավանում նահատակված էվերեկցի հայ) 22
Աղաղարյան Մկրտիչ (Ադանայի նահանգի Համիդիե ավանում նահատակված էվերեկցի հայ) 22
Աղաղարյան Սարգիս (Ադանայի նահանգի Համիդիե ավանում նահատակված էվերեկցի հայ) 22
Աղաղարյան Սիմոն (Ադանայի նահանգի Համիդիե ավանում նահատակված էվերեկցի հայ) 22
Աղամալյան Արտեմ (բոլշևիկ գործիչ) 534
Աղամալյան Լևոն (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 475
Աղամալյան Մարիամ («Մշակ» թերթի աշխատակից) 503
Աղամալյան Մկրտիչ (ծածկանունը՝ Սարհատ) (ՀՅԴ գործիչ) 184, 219, 220, 295, 306
Աղայան Ղազարոս (գրող) 299, 355, 385, 387, 503, 507
Աղայե Բեհբըհանի (բուն անունով՝ Սեյիդ Աբդուլլահ) (Պարսկաստանի հայության առաջին ներկայացուցիչը երկրի մեջլիսում) 543
Աղայե Իմամ Ջումա (տիտղոս է. շիա բարձրաստիճան հոգևորական Պարսկաստանում) 665
Աղայե Սադր Ուլեմա (տիտղոս է. շիա բարձրաստիճան հոգևորական Պարսկաստանում) 665
Աղայե Սեյիդ Քեմալուդդին (շիա բարձրաստիճան հոգևորական Պարսկաստանում) 665
Աղասյան Աղասի (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 90
Աղավելյան Բաբկեն վարդապետ (Մայր աթոռի դիվանապետ) 279, 282, 339, 389
Աղավնունի Մկրտիչ եպիսկոպոս (բուն ազգանունով՝ Եղմնակյան) (Եգիպտոսի թեմի առաջնորդ) 1121
Աղբալյան Նիկոլ (ՀՅԴ, պետական և մշակույթի գործիչ) 689, 735
Ամառյան Հրաչյա (մեծանուն հայագետ) 6, 25, 60, 75, 88, 97, 869, 942, 996
Ամեմյան Մովսես (պետական դումայի անդամ) 146, 147, 424
Ամեմյան Տիգրան բեյ (ակնաբույժ, Ազգ. երեսփոխանական ժողովի ատենապետ) 825, 834
Ամեմով Մոիսեյ (տե՛ս Ամեմյան Մովսես)
Ամանուլլահ Միրզա Ղաջար (տե՛ս

Զիա Դովլե)
Ամին Սոլթան (բուն անունով՝ Միրզա Ասղար խան Աթաբեկ) (հակասահմանադրական զորահրամանատար Ռեշտում) 246
Ամին օլ Զարբ (տիտղոս Է. Պարսկաստանի գանձապետը) 164
Ամիր Աչրաֆ (ցեղապետ Ատրպատականում) 555
Ամիր Հեշմաթ (սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 717
Ամիր Մոզաֆֆար Բախտիարի (սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 655
Ամիր Մոֆախխամ (տե՛ս Սարդար Մոֆախխամ)
Ամիր Մուջահիդ (սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 682
Ամիրյան Գևորգ (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 387
Ամիրյան Թադևոս (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 475
Ամիրյան Խաչատուր (տե՛ս Դաշնակցական Խեչո)
Ամուրեան Անդրէ (բուն ազգանունով՝ Տէր-Օհանեան) (ՀՅԴ գործիչ, խմբագիր) 158, 182, 187, 188, 190, 194, 197, 239-241, 431, 473, 517, 852, 854
Ամրան խան (ցեղապետ Ատրպատականում) 573
Այուբ խան (գնդապետ, պարսկական կազակների զորահրամանատար) 561
Այվազյան (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 483, 484
Այվազյան Հովսեփ եպիսկոպոս 1121
Այվազովսկի Գաբրիել վարդապետ («Մասեաց աղաւնի» թերթի հրատարակիչ և խմբագիր) 502
Այվազովսկի Հովհաննես (աչխարհահռչակ ծովանկարիչ) 810, 811
Այվատյան Սահակ արքեպիսկոպոս (Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդ) 216, 543, 1122
Անդրանիկ (տե՛ս Օզանյան Անդրանիկ)
Անդրեև (Գանձակի փոխնահանգապետ) 432
Անդրեևսկի (Ռուսաստանի սենատի ավագ քարտուղար) 468
Անդրեևսկի (ռուսաստանցի փաստաբան) 424, 438
Անդրոնիկով (ռուսաստանցի փաստաբան) 424
Անիսոնյան (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 483
Անտոնի (միտրոպոլիտ, Ռուս ուղղափառ եկեղեցու սինոդի նախագահ) 284
Անտոնի (ռուս ուղղափառ եկեղեցու հոգևորական) 343
Անտոնյան Հայկ (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 403
Աչրգյան Խորեն արքեպիսկոպոս (Կ. Պոլսի պատրիարք) 962, 1003
Աչճյան Համբարձում վերապատվելի (Ադանայում) 5, 30, 33
Աչոտ խան (տե՛ս Դաշնակցական Խեչո)
Ապահունի Եղնիկ արքեպիսկոպոս 1121
Ապտիլ Խալիք (պարկեշտ մուսուլման Ադանայի նահանգի Համիդիե ավանում) 1109
Առաքելյան Գևորգ (Թիֆլիսաբնակ

Հայ մտավորական, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 308, 461
Առաքելյան Համբարձում («Մշակ» թերթի խմբագիր, հրապարակագիր) 5, 104–107, 112, 126, 208, 296, 358, 388, 413, 442, 443, 503, 507, 510, 512, 581, 661, 789
Ասատուր (պարսկական հեղափոխության Դամգանի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Ասատրյան Հայկ (ազգայնական գործիչ) 942, 943
Ասաֆ պէյ (տե՛ս Մեհմեդ Ասաֆ Էսադ բեյ)
Ասիմ բեյ (Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար) 1051
Ասլան (պարսկական հեղափոխության կռիվներում վիրավորված հայ մարտիկ) 558
Ասլան (պարսկական հեղափոխության Ղարադաղի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Ասլան բեյ (Հաճրնի մոտակա Շար գյուղի հարևան չերքեզական գյուղի երևելի) 25
Ասլան խան (տե՛ս Ստեփանյան Ասլան)
Աստղունի Գևորգ (ՍԴՀԿ գործիչ Էնզելիում) 579
Ասրիբեկյան Ալեքսանդր (երդվյալ հավատարմատար Ռուսաստանում) 426
Ավագյան Ավագ խան (Ատրպատական Թեմական խորհրդի անդամ) 196
Ավետիսյան Հակոբ Հաջի (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 308
Ավետիսյան Վարդան (գրքի հեղինակ) 365
Ատոմ (տե՛ս Շահրիկյան Հարություն)
Ատրպետ (բուն անունով՝ Մուբահյաջյան Սարգիս) (գրող, խմբագիր) 219, 781
Արասխանյան Ավետիք 126, 443
Արարատյան Ալեքսանդր («Մշակ» թերթի աշխատակից) 503
Արզումանյան Միշա (ՀՅԴ գործիչ) 328
Արծրունի Անդրեաս («Մշակ» թերթի աշխատակից) 503
Արծրունի Գրիգոր («Մշակ» թերթի հիմնադիր-խմբագրապետ) 502–504, 506, 507
Արծրունի Վահան (բժիշկ, հասարակական գործիչ Թիֆլիսում) 126
Արղությաններ (իշխանական տոհմ Ռուսաստանում) 763
Արղության-Երկայնաբազուկ Հովսեփ (իշխան, ՀՅԴ հայդուկ) 304, 309, 423, 464, 475
Արմեն Գարո (տե՛ս Փաստրմաջյան Գարեգին)
Արմչտեդ (Ռիգայի քաղաքագլուխ) 423
Արչադ Դովլե (մյուս տիտղոսը՝ Սարդար Արչադ, բուն անունով՝ Ալի խան) (հակասահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 635, 636, 650–652, 655, 670, 671, 734, 738
Արչակ Սյունեցի (ՀՅԴ մարտիկ Թավրիզում) 189
Արչակ քահանա (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 388
Արչարունի Հովհաննես եպիսկոպոս (ապա արքեպիսկոպոս, Կ. Պոլսի պատրիարք) 42, 277, 444, 814, 817,

883, 898, 899, 965–967, 987, 997, 1014, 1035, 1036, 1065, 1066, 1071, 1073, 1074, 1080–1086, 1121
Արշարունի Նաշիդ (Կ. Պոլսի պատրիարքի եղբայրը) 817
Արսեն (պարսկական հեղափոխության Խոյ-Ավարայրի կռիվներում զոհված հայ մարտիկ) 220, 769
Արսեն (պարսկական հեղափոխության Ղազվին-Համադան գծի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Արսենյան (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 826
Արսլան բեյ (Թուրք երևելի Ադանայի նահանգի Համիդիե ավանում) 1109
Արտակ վարդապետ (Թուրքահայ հոգևորական) 281
Արտեմ (ծածկանունը՝ Ռադմիկ) (Մուժամբարի կռվում զոհված ՀՅԴ մարտիկ,) 180, 194, 197, 769
Արտէմ (տե՛ս Արտեմ)
Արտէմ (պարսկական հեղափոխության Խոյի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Արտյուշ (ՀՅԴ անդամ Մանգլիսում) 301
Արտուշ խան Շահրիար (ՀՅԴ խմբապետ Թավրիզում) 219
Արփիարյան Արփիար 503
Աւօ (տե՛ս Թումոյեան Աւօ)
Աֆթանդիլյան Արմենակ (դպրոցի ուսուցիչ) 173

Բ

Բաբախանյան Առաքել (տե՛ս Լեո)
Բաբան զադե Իսմայիլ Հակկը բեյ (Երիտթուրք պարագլուխ և գաղափարախոս) 852, 887
Բաբան զադե Մուստաֆա Զիհնի փաշա (Ադանայի նահանգապետ) 887, 1097, 1099
Բագրաձե (պրիստավ) 462
Բագրատունի Հակոբ (Լիբանանի խորհրդարանի անդամ) 796
Բալաբանով (Նախիջևանի քաղաքագլուխ) 426
Բալայան Գերասիմ (ՀՅԴ գործիչ, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 304, 475
Բալաջան (տե՛ս Ստեփանյան Ստեփան)
Բալեան-Տէր-Յակոբեան Սեղա (գրքի համահեղինակ) 191, 732, 756, 767
Բախտիարով (Ռուսաստանի սենատի անդամ) 423, 433
Բահաթրյան Գաբրիել («Մշակ» թերթի աշխատակից) 503
Բահրամ խան (խոջաբեկլուցի զորահրամանատար Ատրպատականում) 574
ալ-Բահրի Սալիմ (Կահիրեի ալ-Ազհար համալսարանի ռեկտոր) 36
Բաղդադի զադե Աբդուլ Կադեր (Թուրք երևելի Ադանայում) 14, 37, 1117
Բաղդադյան Սարգիս (ՍԴԲՀԿ, ապա բոլշևիկ գործիչ) 372
Բաղդասարյան Հմայակ վարդապետ (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 388
Բաղդիչյան Մարիամ (ժողովրդական տաղասաց) 46
Բաղր խան (պարսկական հեղափոխության գլխավոր գործիչներից) 166, 188, 198, 204, 208, 229, 231, 250, 520, 555–557, 561, 562, 565–567, 588, 592, 594–598, 600, 601,

671, 692, 759
Բայազիդ զադե Գադրի փաշա (Թուրք երևելի Մարաշում) 26
Բայբուրդյան Վահան Ա. (իրանագետ, պատմաբան, դեսպան) 92, 677, 875, 903
Բանվոր Խեչո (տե՛ս Կախոյան Խաչատուր)
Բանվորյան Սեդրակ (ՍԴՀԿ գործիչ Թավրիզում) 200
Բաչգառնեցի Մարտիրոս (տե՛ս Աբրահամյան Մարտիրոս)
Բաջի օղլի Տիգրան (պարսկական հեղափոխության Խոյ-Ավարայրի կռիվներում զոհված հայ մարտիկ) 220, 769
Բաջօղլի (տե՛ս Բաջի օղլի Տիգրան)
Բատունյանց (ՀՅԴ ահաբեկիչ Ռուսաստանում) 423
Բարդիժ (պետական դումայի անդամ) 155
Բարսեղյան Արմենակ (ՀՅԴ գործիչ) 321
Բարսեղյան Գեղամ (գրող, խմբագիր) 65, 107, 108
Բարսեղյան Սարգիս (տե՛ս Օդաբաչյան Պողոս)
Բարր (ռուսաստանցի փաստաբան) 424, 426, 459
Բեկզադյան Ալեքսանդր (բոլշևիկ գործիչ) 364
Բեկզադյան Տիգրան (հասարակական և պետական գործիչ) 387, 388, 512, 513
Բեհբությաններ (իշխանական տոհմ Թիֆլիսում) 763
Բեհբութով Վասիլի (իշխան, Թիֆլիսի քաղաքագլուխ) 300
Բեհզադ Քերիմ (իրանցի պատմաբան) 771
Բեյազջյան Երվանդ (Ազգ. երեսփոխանական ժողովի Ա ատենադպիր) 1028
Բենիկ վարդապետ (Մայր աթոռի միաբան) 336
Բեռյուք խան (տե՛ս Զելերիանլու Բեռյուք խան)
Բերար Վիկտոր (ֆրանսիացի հայասեր հասարակական գործիչ) 354
Բերբերաչվիլի Իվանե (վրացի ահաբեկիչ Պարսկաստանում) 618
Բերբերյան Մինաս (հասարակական գործիչ, խմբագիր) 408, 475, 479
Բերնչտամ (ռուսաստանցի փաստաբան) 424
Բերտոլդ (կոմս, Ավստրո-Հունգարիայի կայսրության արտաքին գործերի նախարար) 1088, 1090
Բէհբուդեան Սանդրօ (ժողովածուների կազմող) 133
Բիկով (ռուսաստանցի փաստաբան) 424, 425
Բիչերախով (ծագումով հայ ատաման Ռուսաստանի բանակում) 744
Բլաղնով (Պարսկաստան ներխուժած ռուսական բանակի կապիտան) 269
Բյուրատ Սմբատ (բուն անունով՝ Տեր-Ղազարյան Սմբատ) (գրող, խմբագիր) 45
Բոբրինսկի (իշխան, խավարամոլ) 323
Բոբրինսկի 2-րդ (պետական դումայի սահմանադրական անդամ) 155
Բոգդանովիչ Յուրի Նիկոլաևիչ (ռուսաստանցի նարոդնիկ հեղափոխական) 414
Բոգոլեպով (ռուս բարձրաստիճան պետական ծառայող) 362
Բոնապարտ Նապոլեոն 761
Բոնչ-Բրուևիչ Վլադիմիր Դմիտրիևիչ

(բոլշևիկ հրապարակախոս) 533
Բոչգեզենյան Հարություն (օսմանյան խորհրդարանի անդամ) 911
Բոր-Ռամենսկի Ե. (բոլշևիկ մտավորական) 531
Բորյան Բագրատ (բոլշևիկ գործիչ) 364
Բորոյան Սմբատ (ծածկանունը՝ Մախլուտո) (անվանի հայդուկ) 169, 221
Բուդաղյան (երդվյալ հավատարմատար Ռուսաստանում) 424, 484
Բուլղարացի (Թեքիրդաղցի) Գևորգ (ՀՅԴ մարտիկ Թավրիզում) 180, 189, 197
Բուլղարացի Սարգիս (ՀՅԴ մարտիկ) 1077
Բրեզոլ Ժորժ (տե՛ս Ազնավուր Պետրոս)

Գ

Գաբաև (գեներալ, Պարսկաստանում ռուսական զորքերի հրամանատար) 638
Գազազյան Հովսեփ (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 90
Գազանջյան Տիգրան (ՍԴՀԿ գործիչ Թեհրանում) 580, 615
Գազե (գերմանացի հրահանգիչ պարսկական կազակական գնդում) 569
Գառնակերյան Գրիգորիս արքեպիսկոպոս (Մայր աթոռի միաբան) 130, 131
Գասպարյան Արիստակես (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 825
Գասպարյան Հարություն («Մշակ» թերթի լրագրող) 401, 443
Գավաֆյան Արշակ (ծածկանունները՝ Էրզրումցի Արշակ, Քեռի, Ֆարհատ) (անվանի հայդուկ) 174, 181–183, 186–188, 194, 205, 206, 220, 233, 567, 570, 575, 596, 645, 646, 655, 689, 691, 693, 709, 710, 726, 729, 730, 740, 746, 747, 753, 754, 757, 765
Գավրիլով (Ռուսաստանի բանակի գեներալ) 426
Գարագաշյան Արտաշես 319
Գարամանյան Հ. (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 403
Գարայան Հակոբ (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 90
Գարայան Ստեփան (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 882, 1014, 1066–1068
Գարին (Ռուսաստանի սենատի անդամ) 423
Գեգեչկորի Եվգենի (պետական դումայի անդամ, մենշևիկ պարագլուխ) 155
Գենդրիկով (կոմս, Նիկոլայ II-ի պալատի արարողապետ) 282
Գենջյան Զարեհ (ՀՅԴ գործիչ) 933, 934
Գենջ-Օղլուև Ք. (մեծահարուստ, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 423, 425, 475, 477
Գեոմրյուքճյան Մովսես եպիսկոպոս (Բաղդադի պատրիարքական փոխանորդ) 1121
Գերուկ (տե՛ս Շիշմանյան Ղևոնդ եպիսկոպոս)
Գերստներ (ավստրիական բանակի գեներալ) 748
Գէորգ (զորավար, սուրբ) 756
Գիբբոնս Հերբերտ Ադամս (ամերիկա-

ցի միջազգայնագետ, պատմաբան) 33, 36
Գիգո (տե՛ս Մաթիաշվիլի Գ.)
Գիւլխանդանեան Աբրահամ (տե՛ս Գյուլխանդանյան Աբրահամ)
Գլազունով Ի. (Սանկտ Պետերբուրգի քաղաքագլուխ) 423
Գյուլեսերյան Բարկեն եպիսկոպոս (Գաղատիայի թեմի առաջնորդ) 403, 883, 965, 1121
Գյուլխանդանյան Աբրահամ (ծածկանունը՝ Սևիկյան Ա.) 184, 295, 304, 306, 426, 475, 689
Գյուվենդ զադե Մուխթար (Թուրք մարդասեր Տարսոնում) 21
Գնաճյան Սարգիս (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 90
Գոգոլ Նիկոլայ Վասիլևիչ (ռուս անվանի գրող) 146
Գոլանջյան Էդուարդ (բանաստեղծ) 45
Գոլդշտեյն (ռուսաստանցի փաստաբան) 424, 484
Գոլիցին Գրիգորի (իշխան, Կովկասի փոխարքա) 116, 137, 153, 159, 415, 451, 456,
Գորկի Մաքսիմ (բուն անունով՝ Պեշկով Ալեքսեյ Մաքսիմովիչ) (ռուս գրող) 366-368
Գորոյան Արշակ խան (գեներալ-ադյուտանտ, հայազգի ռազմական գործիչ Պարսկաստանում) 213, 656-660, 662-670
Գորոյեանց Նազար Յ. (պարսկահայ գործիչ) 192
Գոյումճեան (հաւանաբար Յովհաննէս, Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարության փոխ-խորհրդական) 942
Գոյումջյան Տիգրան (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 403
Գուշակյան Թորգոմ եպիսկոպոս 391, 965, 1121
Գուտուլեան Գրիգոր (գրքի հեղինակ) 24
Գուրկո-Կրյաժին Վ. Ա. (խորհրդային թուրքագետ) 5, 857, 862, 866, 867
Գուրկոյ (սևհարյուրյակային գործիչ Ռուսաստանում) 323
Գրաչևսկի Միխայիլ Ֆեոդորովիչ (ռուսաստանցի նարոդնիկ հեղափոխական) 414
Գրիգոր (հայ մարտիկների հրամանատար պարսկական հեղափոխության կռիվներում) 655, 707, 708
Գրիգոր Ա Պարթև (Լուսավորիչ) 130, 286, 290, 344, 385
Գրիգոր Նարեկացի (սուրբ) 108
Գրիգորի եպիսկոպոս (Ռուս ուղղափառ եկեղեցու հոգևորական) 343
Գրիգորիս վարդապետ (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 388
Գրիգորյան Ա. (Եփրեմ խանի դամբանախոսներից Թավրիզում) 735
Գրուզենբերգ Օսկար (ռուսաստանցի փաստաբան) 424, 426, 435, 438, 479
Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեսթեջյան 119, 120, 384
Գևորգ Ե Տփղիսեցի Սուրենյանց 122, 125, 130, 148, 279, 280, 284, 342, 343, 380, 382, 387, 389, 391, 401-405, 408-411, 494-497, 500, 501, 618, 627, 636, 642-644, 665, 668, 721, 722, 747, 749, 987, 1081, 1087, 1120
Գևորգ (պարսկական հեղափոխության Թավրիզի մոտակայքի կռիվ-

ներում սպանված ՀՅԴ մարտիկ) 308, 769
Գևորգ (Թիֆլիսաբնակ հայ մտավորական) 308
Գևորգյան Արա (երևանաբնակ երաժիշտ) 46
Գևորգյան Գ. (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 422
Գևորգյան Խաչատուր (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 463

Դ

Դալի (ՀՅԴ մարտիկ Թավրիզում) 194
Դամադ Ֆերիդ փաշա (Իթթիլաֆի պարագլուխ) 971, 1019
Դանիել (պարսկական հեղափոխության կռիվներում զոհված իգդիրցի մարտիկ) 258
Դանիելյան Գրիչ խան (Եփրեմ խանի թիկնապահը) 565, 607, 728
Դանտոն Ժորժ-Ժակ (Ֆրանսիական մեծ հեղափոխության ղեկավարներից) 739
Դաշնակցական Խեչո (մյուս ծածկանունը՝ Աչոտ խան, բուն անունով՝ Ամիրյան Խաչատուր) (ՀՅԴ մարտիկ) 306, 561, 655, 689, 691, 693, 757, 765
Դաստակյան Աբրահամ (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 387
Դավթյան Աղասի (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 477
Դավթյան Անահիտ (Եփրեմ խանի կինը) 242, 589, 731,
Դավթյան Եփրեմ (Եփրեմ խան) (պարսկական հեղափոխության գլխավոր առաջնորդներից) 174, 237, 239-254, 256-271, 273, 274, 293, 516, 517, 520-524, 526, 527, 531, 535, 546, 552, 554-562, 565-578, 581-586, 588-590, 592-597, 599-603, 606-613, 618, 622, 623, 627, 628, 633, 637, 640, 645-647, 649, 652, 653, 655, 656, 660-666, 669, 670, 674-677, 680-694, 696-699, 702, 706-710, 714, 715, 720, 725-740, 753, 757, 760, 765-767, 771, 934
Դավթյան Շողի (Եփրեմ խանի քույրը) 239
Դավիդյան (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 461
Դավիդյանց Եփրեմ (տե՛ս Դավթյան Եփրեմ)
Դավիթ Անանուն (բուն անունով՝ Տեր-Դանիելյան Դավիթ) (ՍԴԲՀԿ ղեկավար) 372-375, 823
Դավիթխանյան Կոստանդ (ՍԴՀԿ գործիչ Թեհրանում) 580
Դավիթխանյան Սրբուհի (ՍԴՀԿ գործիչ Թեհրանում) 580
Դարաբ Միրզա Ղաջար (հակասահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 564, 565, 619
Դարբինյան Ռուբեն (բուն անունով՝ Զիլինգարյան Արտաշես) (ՀՅԴ գործիչ, խմբագիր) 66, 425
Դաւիթ բէկ (Սյունիքի իշխանապետ-սպարապետ) 736
Դեղեչկելյանի (իշխան, Կովկասի փոխարքայի փոխարինող) 541
Դելիանով (ռուս բարձրաստիճան պետական ծառայող) 362
Դեկեր Դանիել («Ադանա» խտասա-

լիկի բառերի ամերիկացի հեղինակ) 46
Դերձակյան Ռուբեն (ծածկանունը՝ Փայլակ) (ՀՅԴ գործիչ) 182, 184
Դերձակյան Օննիկ (տե՛ս Վռամյան Արշակ)
Դիմաքսյան Հմայակ եպիսկոպոս (ապա արքեպիսկոպոս, Կ. Պոլսում) 965, 1083, 1121
Դիոսկոր Անթուան հայր (Հիսուսյան ֆրանսիացի վարդապետ Աղանայում) 19
Դոլգոջիև (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 462, 475
Դոլուխանյան Պ. (իրավաբան Ռուսաստանում) 512
Դովլաթյան (ՀՅԴ ահաբեկիչ Ռուսաստանում) 423
Դորերի (կոմս, սևհարյուրյակային գործիչ) 323
Դուբրովին Ա. Ի. («Ռուսսկոյե զնամյա»-ի խմբագիր) 582
Դուդայ (ՀՅԴ մարտիկ Թավրիզում) 194
Դումերգ Էմիլ (ֆրանսիացի հեղինակ) 36
Դուրյան Եղիշե եպիսկոպոս (ապա արքեպիսկոպոս), (Կ. Պոլսի պատրիարք) 100, 125, 130, 131, 275, 276, 391, 403-405, 408, 410, 411, 797-800, 803, 804, 806-808, 820, 821, 823, 824, 834, 835, 879, 880, 883, 884, 965-967, 1121
Դուրյան Ղևոնդ ծայրագույն վարդապետ (Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ) 801, 802, 820, 821
Դրո (բուն անունով՝ Կանայան Դրաստամատ) (ՀՅԴ մարտիկ, ահաբեկիչ և զինվորական գործիչ) 295
Դևիլ Շարլ (Պարսկաստանի փոստի նախկին գլխավոր տեսուչ) 666
Դևոյան Տիգրան (ՀՅԴ գործիչ) 184
Դևրիշ բեյ (օսմանյան խորհրդարանի անդամ) 888

Ե

Եղիգարյան (Եղիգարով) Սերգեյ (վաճառական Ղարաքիլիսայում, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 301, 423, 483, 484
Եզոպոս (հույն առակագիր) 773
Եկատերինա II Ռոմանովա (Ռուսաստանի կայսրուհի) 449, 539
Եկարյան Արմենակ (արմենական, ապա ՌԱԿ գործիչ) 211
Եղիազարյան Խոսրով (ՀՅԴ մարտիկ Թավրիզում) 219
Եղիայեան Բիւզանդ (լիբանանահայ հեղինակ, մանկավարժ) 5, 22, 120
Եղիկյան (ՍԴՀԿ գործիչ Ռեչտում) 620, 621
Եղմնակյան Մկրտիչ եպիսկոպոս (տե՛ս Աղավնունի Մկրտիչ եպիսկոպոս)
Ենգիբարյան Գարեգին (հրապարակագիր) 581, 582, 761, 823
Ենիկոլոփյան Ռաֆայել խան (հայազգի զորահրամանատար Պարսկաստանում) 672
Ենովք Շահեն (բուն անունով՝ Իբրանոսյան Շահեն) (դերասան Կ. Պոլսում) 881
Եուսուֆ Քեմալ պէյ (տե՛ս Յուսուֆ Քեմալ բեյ)
Եսայան Արամ (Հովհ. Թումանյանի մասին հուշագրող) 302, 314
Եսայան Զապել (գրող, հասարակա-

կան գործիչ) 22, 29, 319, 795, 796
Եսայան Տիգրան (Զապել Եսայանի հարազատներից) 795
Եսաջանյան Լևոն (բանաստեղծ) 45
Երամյան Համբարձում (անվանի մանկավարժ) 98, 381, 812, 814, 914, 932
Երեմեև Դմիտրի Եվգենևիչ (խորհրդային թուրքագետ) 1075
Երեցյան Ասատուր (Կ. Պոլսի «Սուրհանդակ» թերթի խմբագիր) 443
Երեցյան Գևորգ արքեպիսկոպոս 125, 965, 1121
Երկաթէ պատրիարք (տե՛ս Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի Իզմիրլյան)
Երոպկին (Ռուսաստանի ազնվականների պարագլուխ) 423
Երուխան (բուն անունով՝ Սրմաքեշխանլյան Երվանդ) (գրող, խմբագիր) 84–86,
Երվանդ (ՀՅԴ խմբապետ Թավրիզում) 173

Զ

Զաբլովսկի (Պարսկաստան ներխուժած ռուսական բանակի կապիտան) 269
Զախարին (դատական փորձաքննիչ Ռուսաստանում) 460, 479
ալ-Զահրաուի Աբդուլ Համիդ (Իթթիլաֆի արաբ ղեկավար) 971
Զամիսլովսկի (պետական դումայի անդամ) 155
Զասուլիչ Վերա Իվանովնա (ռուսաստանցի հեղափոխական ահաբեկիչ, նարոդնիկ, ապա մենշևիկ) 414
Զավարյան Սիմոն (ՀՅԴ հիմնադիրներից) 55, 56, 74, 83, 295, 322, 356, 827, 828, 1040
Զավրիյան Դավիթ (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 423, 477, 483
Զավրիև (երդվյալ հավատարմատար, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 462, 463
Զավրիև Հովհաննես (տե՛ս Զավրյան Հովհաննես)
Զավրյան Հովհաննես (բժիշկ, ՀՅԴ գործիչ) 55, 56, 295
Զարգարյան Մկրտիչ (դպրոցի ուսուցիչ) 173
Զարգարյանց (ՀՅԴ անդամ հավանաբար Մանգլիսում) 301
Զարդարյան Ռուբեն (գրող, խմբագիր) 51, 65, 882, 942
Զարեհ (պարսկական հեղափոխության Զունուսի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Զարղամ Սոլթան (տիտղոս է. հակասահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 594, 655
Զարուդնի Ալեքսանդր (ռուսաստանցի փաստաբան) 424, 438, 459, 484, 488, 489
Զաւարեան Սիմէօն (տե՛ս Զավարյան Սիմոն)
Զաւարեան Սիմոն (տե՛ս Զավարյան Սիմոն)
Զաքարիա Ա Զագեցի կաթողիկոս Ամենայն հայոց 105
Զաքարյան Վահան (ՀՅԴ Թավրիզի կենտրոնական կոմիտեի անդամ) 171
Զեբա խանում Ղաջար (Մահմեդ Ալի շահի դուստրը) 541
Զեքի բեյ (երիտթուրք գործիչ) 888
Զիա Դովլե (բուն անունով՝ Ամանոլ-

լահ Միրզա Ղաջար) (Թավրիզի սահմանադրական զինվորական նահանգապետ) 717
Զիա օլ Ուլեմա (տիտղոս Է. չիա բարձրաստիճան սահմանադրական հոգևորական Թավրիզում) 717
Զիհնի փաչա (տե՛ս Բաբան զադե Մուստաֆա Զիհնի փաչա)
Զինովև (Ռուսաստանի դեսպանը Կ. Պոլսում) 112, 279, 918
Զոլոտարով (Բորչալուի գավառապետ) 436, 437
Զոլոտարև Ի. Ս. (Ռուսաստանի ներքին գործերի նախարարի տեղապահ) 427, 430
Զոհրաբ խան (ժանդարմերիայի հայազգի պետ Պարսկաստանում) 213, 523
Զոհրաբ խան (բժիշկ, Եփրեմ խանի հետ նույն օրը զոհված պարսիկ հեղափոխական) 728, 729
Զոհրաբյան Հուսիկ վարդապետ (Մայր աթոռի միաբան) 336
Զոհրապ Գրիգոր (գրող, փաստաբան, օսմանյան խորհրդարանի անդամ) 23, 36, 51, 300, 319, 444, 445, 736, 777, 882, 911, 1014, 1023
Զորյան Բարթող (ծածկանունը՝ Ժիրայր) (խմբագիր) 65
Զորյան Ստեփան (տե՛ս Ռոստոմ)
Զուլումաթ (բուն անունով՝ Հովհաննես) (պարսկական հեղափոխության Խոյի կռիվներում զոհված հայ մարտիկ) 170, 220, 769
Զվայյանսկի (Սանկտ Պետերբուրգի քաղաքագլուխ) 423

Է

Էլմասյան Կ. (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 426
Էլմար Յ. (տե՛ս Հովհաննիսյան Հովսեփ)
Էմիր Բահադուր Ջենգ (հակասահմանադրական զինվորական նախարար Պարսկաստանում) 224, 635
Էմիր Մուկերհեմ (մազանդարանցի խոշոր կալվածատեր, Լեհիջանի նախկին նահանգապետ) 639
Էմիր ուլ Շահիր (հավանաբար տիտղոս Է. ավազակապետ Պարսկաստանում) 571
Էյն Դովլե (բուն անունը՝ Սոլթան Աբդոլ Մեջիդ Միրզա Ղաջար) (հակասահմանադրական պետական և զինվորական գործիչ Պարսկաստանում) 164–168, 193, 194, 196, 199, 203, 205, 247, 613, 619
Էնիկոլոփ Մամիկոնյան Ջհանգիր (հայազգի պետական գործիչ Պարսկաստանում) 213
Էնվեր բեյ (երիտթուրք զինվորական պարագլուխ) 841, 843, 925, 935, 936
Էպեյան Լևոն (թուրքերենով հորինող ժողովրդական տաղասաց) 46
Էսատ Ըէուֆ պէյ (Մերսինի կառավարիչ) 1095, 1098, 1116
Էսմերյան (ՀՅԴ գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ) 382
Էքսերջյան Հմայակ քահանա (Կ. Պոլսում) 826
Էքրեմ բեյ (թուրք գրող, օսմանյան սենատի անդամ) 1027

Թ

Թաղէոս (պարսկական հեղափոխության Դամգանի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Թաղևոսյան Լևոն (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 304, 475
Թաղևոսյան Ստեփան (ծածկանունը՝ Սամսոն խան) (ՀՅԴ գործիչ Սալմաստում) 169, 183, 221, 726
Թալեաթ բեյ (տե՛ս Մեհմեդ Թալեաթ բեյ)
Թահիր փաշա (Բաղեշի նահանգապետ) 873
Թահիր Խայրէդդին բեյ (Իթթիլաֆի ղեկավարներից) 971
Թաղի Ջաբար օղլի (հակասահմանադրական ավազակապետ Պարսկաստանում) 573
Թաղիզադե Սեյիդ Հասան (հեղափոխական քաղաքական գործիչ Թավրիզում) 200, 231, 540, 595, 732
Թամամչյան Իսահակ (հասարակական գործիչ Բաքվում) 132, 133
Թայիրյան Արտեմ (ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեի անդամ) 295, 304
Թավաքալյան Բագրատ վարդապետ 503
Թարաք Անտոն (Ազգ. երեսփոխանական ժողովի Գ ատենադպիր) 1028
Թաքելի զադե Օսման բեյ (Ադանայի Հայոց Թաղում բնակվող Թուրք երևելի) 16, 1104
Թեոդիկ (բուն անունով՝ Լափճինճյան Թեոդոս) 42, 45
Թեքեյան Վահան (բանաստեղծ, խմբագիր, ՀՍՌԿ, ապա ՌԱԿ գործիչ) 9, 286, 403, 815, 883, 991, 1013, 1028, 1071
Թէոդիկ Արշակուհի (Թեոդիկի կինը, գրքի հեղինակ) 22
Թէրզեան Յակոբ Յ. (դեղագործ, գրքի հեղինակ) 14–16, 20, 22, 28, 42
Թիմուր աղա (քուրդ ցեղապետ Մակուում) 166
Թոլայան Երվանդ (Կ. Պոլսի «Կավռոչ» երգիծաթերթի արտոնատեր-խմբագրապետ) 833
Թոխմախյան Արսեն 240
Թորգոմյան Վահրամ (բժիշկ, Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 882
Թորոս (տե՛ս Ալոյան Գալուստ)
Թորոսյան Հ. (ՀՅԴ գործիչ) 328
Թոփչյան Եղիշե (ՀՅԴ գործիչ) 295, 327, 328
Թումանյաններ (գրողի ընտանիքը) 479, 481
Թումանյան Անուշ (գրողի դուստրը) 299
Թումանյան Աչխեն (գրողի դուստրը) 299, 419, 436, 458, 480
Թումանյան Արեգ (գրողի զավակը) 299
Թումանյան Արտավազդ (գրողի որդին) 299
Թումանյան Արփիկ (գրողի դուստրը) 299
Թումանյան (Թումանով) Գեորգի (իշխան, թերթի խմբագիր) 302
Թումանյան Թամար (գրողի դուստրը) 299
Թումանյան Համլիկ (գրողի որդին) 299
Թումանյան Հովհաննես 68, 158–161, 277, 289, 298– 303, 314–316, 320, 321, 336, 344– 346, 349–351, 356,

358, 377, 378, 387, 418, 419, 423, 425, 426, 435–437, 473, 476, 479–482, 772–774
Թումանյան Մարիամ (իշխանուհի, բարեգործ Թիֆլիսում) 302
Թումանյան Նվարդ (գրողի դուստրը) 299, 358, 418, 419, 479, 480, 482
Թումանյան Մուշեղ (գրողի ավագ որդին) 299, 316, 358, 436, 480
Թումանյան Սեդա (գրողի դուստրը) 299
Թումանյան Վահան (գրողի եղբայրը) 315
Թումանյան Օլգա (գրողի կինը) 480
Թումանյանց (առևտրական տան և գյուղերի սեփականատեր Թավրիզում) 523, 626, 756
Թումոյեան Աւօ (գրքի կազմող, «Յեղափոխական ալպոմ» պարբերականի հրատարակիչ և խմբագիր) 219
Թունյանց Ալեքսան խան (Թումանյանց առևտրական տան նախկին ծառայող Թավրիզում) 523
Թուրգութ փաշա (Ալբանիա ուղարկված օսմանյան զորքերի հրամանատար) 868
Թուրսարգիսյան Ղևոնդ ծայրագույն վարդապետ (Կիլիկիայի կաթողիկոսության միաբան, Սիսի ինքնապաշտպանության կազմակերպիչ) 25
Թուրքմանի Էլիաս (տուժած սիրիացի կալվածատեր Ադանայի նահանգում) 1099
Թևֆիկ փաշա (Օսմանյան կայսրության դեսպանը Լոնդոնում, ապա մեծ վեզիր) 1054, 1068

Ժ

Ժելիխովսկի (Ռուսաստանի սենատի անդամ) 483
Ժեյլաբով Անդրեյ Իվանովիչ (ռուսաստանցի նարոդնիկ հեղափոխական) 414
Ժղենտի (Բաքվի ոստիկանապետի օգնական) 432
Ժորես Ժան (ֆրանսիացի սոցիալիստ պարագլուխ, Ֆրանսիայի Ազգային ժողովի անդամ) 36, 1007

Ի

Իբրահիմ աղա (պարսիկ հեղափոխական) 169
Իբրահիմ Հակկը փաշա (Օսմանյան կայսրության մեծ վեզիր) 800–802, 804– 807, 846, 876, 894, 971, 1068
Իզզաթուլլահ խան (տե՛ս Իզո խան)
Իզզեթ բեյ (Վանի նահանգապետ) 1063
Իզզեթ Դովլե (տիտղոս Է. Մահմեդ Ալի շահի հարազատներից) 273
Իզզեթ փաշա (Եմեն ուղարկված օսմանյան զորքերի հրամանատար) 870
Իզզէթ Էֆէնտի (Հաճընի մուֆթիի որդին) 1101
Իզմիրլյան Մատթեոս արքեպիսկոպոս (տե՛ս Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի Իզմիրլյան)
Իզմիրյանց Հովսեփ Աղա (ղզլարցիաստրախանցի մեծահարուստ, գրական մրցանակի հիմնադիր) 348, 1028
Իզո խան (Մակուի սարդարի եղբայրը) 166, 167, 169, 215
Իզվոլսկի Ալեքսանդր Պետրովիչ

(Ռուսաստանի արտաքին գործերի նախարար) 133, 225, 325
Իլխան (տե՛ս Ամիր Մոֆախխամ)
Իկբալ Սալթանե (բուն անունը՝ Մուրթազա-զուլի խան, Մակուի սարդար) 166, 169
Իհսան Ֆիքրի (Ադանայի «Իթիդալ» թուրքական թերթի սաղրիչ խմբագիր) 33, 1117
Իմամ Իսնա Աշրի (տե՛ս Իմամ Մեհդի)
Իմամ Մեհդի (շիաների գլխավոր իմամներից վերջինը – 12-րդը) 606
Իմամ Յահիա (Եմենի կրոնական և քաղաքական առաջնորդ) 870
Իմամ Շամիլ (կովկասցի կրոնական և ռազմական գործիչ) 539
Իննովկենտիոս արքեպիսկոպոս (Վրաստանի Էկզարխ) 343
Իշխանյան Բախչի (ՍԴԲՀԿ ղեկավար) 370, 373
Իոակիմ III (Կ. Պոլսի հունաց տիեզերական պատրիարք) 898
Իսահակյան Ավետիք 239, 277, 289, 298, 300, 316, 349, 350, 355-359, 422, 485-487, 490, 736, 986
Իսկենդեր խան (հակասահմանադրական գործիչ Ատրպատականում) 622
Իսմայիլ (Բախչեի հայակեր մուֆթի) 24,
Իսմայիլ խան Սավադկուհի (հակասահմանադրական զորահրամանատար Մազանդարանում) 632, 639, 652
Իսմեթ (իթթիհադական զինվորական ղեկավար) 925
Իսրայել (երրայեցիների նահապետ) 449
Իսֆենդիար (թուրք ավազակապետ Ադանայում) 13
Իվան (Եփրեմ խանի ջոկատի արցախցի հայ մարտիկ) 253
Իվանով Միխայիլ Սերգեևիչ (ռուս արևելագետ պատմաբան) 182, 204, 225, 227, 245-247, 527, 535, 600, 601, 678, 679, 708
Իփեկյան Գասպար («Ազատամարտի» խմբագիրներից) 65

Լ

Լադոմիրսկի (պետական դումայի խավարամոլ անդամ) 155
Լազարյան Ժանեթ (հանրագիտարանի հեղինակ) 607
Լազարյան Հովհաննես (իշխան) 324
Լազարև Ա. (Ռուսաստանի բանակի գեներալ-մայոր) 343
Լազարև Իվան (տե՛ս Լազարյան Հովհաննես)
Լավիս Էռնեստ (ֆրանսիացի հասարակական գործիչ) 354
Լավրենտև (ռուսաստանցի փաստաբան) 424, 425
Լավրով Նիկոլայ Մատվեևիչ (խորհրդային արևելագետ պատմաբան) 248, 601, 602, 688
Լարենց Լևոն (տե՛ս Քիրիչճյան Լևոն)
Լերեդինսկի Ե. (Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազի տեղակալ) 488
Լեհման-Հաուպտ Կարլ (գերմանացի արևելագետ) 291
Լենեակ (ռուսական պետական բարձրաստիճան պետական ծառայող) 343
Լենին Վլադիմիր Իլյիչ (բուն ազգանունով՝ Ուլյանով) 360, 368, 531-533, 536, 577, 771
Լեո (բուն անունով՝ Բաբախանյան

Առաքել) (պատմաբան, հրապարակագիր) 9, 126, 294, 295, 297-299, 304, 319, 328, 331, 386, 387, 437, 503, 508, 581, 850, 855, 903, 928, 929, 1041
Լերմոնտով Միխայիլ Յուրիևիչ (ռուս բանաստեղծ) 146, 156
Լրժին Ն. Ն. (ռուս դատաքննիչ) 303-306, 309, 310, 312, 314, 317, 318, 359, 441, 457-462, 464-469, 484, 487
Լիսիչկին (պետական դումայի անդամ) 155
Լիվինգստոն (լորդ, Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ) 254
Լյախով Վլադիմիր Պլատոնովիչ (գնդապետ, պարսկական կազակական բրիգադի հրամանատար) 199, 257, 258, 267, 269-272, 520, 524, 533, 560
Լոկոֆր (Պարսկաստանի ֆինանսների ամերիկացի պատասխանատուներից) 679
Լոնկֆել[լ]ո Հենրի Ուոդսուորտ (ամերիկացի բանաստեղծ) 74
Լոուիզը Ջերալդ (Մեծ Բրիտանիայի դեսպանը Կ. Պոլսում) 33
Լոպատին Գերման Ալեքսանդրովիչ (ռուսաստանցի նարոդնիկ հեղափոխական) 414
Լոռիս-Մելիքյաններ (իշխանական տոհմ Ռուսաստանում) 763
Լութֆի Ֆիքրի (երիտթուրք գործիչ) 895
Լուկաչին (տե՛ս Սրապիոնյան Սարգիս)
Լուկիանով (Ռուս ուղղափառ եկեղեցու սինոդի պրոկուրոր) 284
Լուսինյան Օվանեսա (ժողովրդական տաղասաց) 46
Լևոն (ՀՅԴ ագուլիսցի մարտիկ Թավրիզում) 194
Լևոնյան Գարեգին (մատենագետ, Աչուղ Ջիվանու որդին) 299

Խ

Խաժակ Գարեգին (բուն ազգանունով՝ Զաքայյան) (ՀՅԴ գործիչ) 295, 304, 355, 422, 472
Խալաթյան Գրիգոր (պրոֆեսոր) 503
Խալիլ բեյ (Օսմանյան կայսրության խորհրդարանի իթթիհադական խմբակցության ղեկավար, ապա խորհրդարանի նախագահ) 203, 895, 925, 1019, 1039, 1057
Խալիլ Զիա բեյ (Մեհմեդ V Ռեշադի առաջին քարտուղար) 1027
Խալիլ խան Միրփանջ (սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 552, 560
Խալիկյան Տիգրան (ամերիկահայ պատմաբան) 793
Խալիֆ Բաղդադ (Մեհմեդ Ալի շահի անունը կեղծ անցագրում) 634
Խանազատ(յան) (ՍԴՀԿ հիմնադիրներից) 443, 638
Խանասորի Վարդան (տե՛ս Մեհրաբյան Վարդան)
Խանլար (պարսկական հեղափոխության Դամգանի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Խաչատրյան Սմբատ (երդվյալ հավատարմատար Ռուսաստանում) 424
Խապայան Ներսես արքեպիսկոպոս (Բեսարաբիայի թեմի առաջնորդ) 1120
Խատիսյան Ալեքսանդր (Թիֆլիսի քաղաքագլուխ, ՀՅԴ գործիչ, ՀՀ վարչապետ) 296, 387, 405, 416, 417,

419, 426, 436, 437, 442, 512
Խատիսյան Գևորգ (փաստաբան Թիֆլիսում) 387, 419, 424, 480, 488, 489
Խատիսյան Կոստանդին (լեռնային ինժեներ, հասարակական գործիչ Բաքվում) 139, 143-145, 288, 512
Խարախանյան Ներսես եպիսկոպոս (Տարոն-Մուշի թեմի առաջնորդ) 609, 1121
Խեզար խան (խոջաբեկլուցի զորահրամանատար) 573, 574
Խեչտոյանց (ֆեդայի, Սարգիս Կուկունյանի խմբի անդամ) 492
Խեչո (պարսկական հեղափոխության կռիվներում զոհված ղազախեցի հայ մարտիկ) 258
Խեչո (պարսկական հեղափոխության Ղարա Թեփեի մոտի կռիվներում զոհված հայ մարտիկ) 263
Խեչոյան-Քաչոյան Պավլե (Նորադուզ գյուղացի) 492, 493
Խզմալյան Թադևոս 387
Խէչո (պարսկական հեղափոխության Ֆիրուզաբադի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Խլեբնիկով (ռոստովցի հայազգի վաճառական, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ) 423
Խոլոդովսկի (Նովոչերկասկի դատաստանական պալատի նախագահ) 317
Խոմենտովսկի (ռուսաստանցի փաստաբան) 424
Խոմյակով Նիկոլայ Ալեքսեևիչ (պետական դումայի նախագահ) 135, 142, 143, 145
Խոջայան Լևոն (պահպանողական գործիչ) 507
Խոջայան Հովհաննես քահանա (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 489
Խոջայան Մակիչ (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 477
Խոջասարյան Հայկ (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 1013, 1014, 1028, 1048, 1065, 1071, 1072
Խոստիկյան Միսակ («Սուրհանդակ» թերթի լրագրող) 401
Խոսրով խան Բախտիարի (տե՛ս Սարդար Զաֆար)
Խոսրովյան Հմայակ (օսմանյան խորհրդարանի պատգամավորության թեկնածու) 1017
Խորէն (պարսկական հեղափոխության կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Խուդավերդյան Ներսես արքեպիսկոպոս (թուրքահայ հոգևորական) 281
Խուցյան Խորեն քահանա (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորության թեկնածու) 389
Խրլոպյան Տիգրան ճ. վերապատվելի (գրքի հեղինակ) 27

Ծ

Ծատուրյան Ալեքսանդր (ծածկանունը՝ Ալեքսանդր Ռուբենի) (ՍԴԲՀԿ, ապա բոլշևիկ գործիչ) 372
Ծատուրյան Ալեքսանդր (բանաստեղծ) 480
Ծատուրյան Անդրեաս (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 477, 483
Ծերթելևի (բանաստեղծ, իշխան) 323
Ծովանյան Սարգիս (տե՛ս Սևքարեցի Սաքո)

Կ

Կազարինով (ռուսաստանցի փաստաբան) 424, 425
Կախոյան Ասատուր (ծածկանունը՝ Բանվոր Խեչո) (բոլշևիկ գործիչ) 534, 535
Կաճկաճյանց Ն. (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 387
Կամենսկի (պետական դումայի անդամ) 155
Կանայան Ստեփան (բանասեր, մանկավարժ) 401
Կանևա (իտալական արշավախմբի զորահրամանատարը Լիբիայում) 931
Կապուտիկյան Բարունակ (մանկավարժ) 56
Կասյան Սարգիս (բուն ազգանունով՝ Տեր-Գասպարյան) (բոլշևիկ գործիչ) 364
Կասո (Ռուսաստանի լուսավորության նախարար) 361
Կասպարով Վլադիսլավ (բոլշևիկ գործիչ) 364, 666
Կասսո (տե՛ս Կասո)
Կարամզին Նիկոլայ Միխայլովիչ (ռուս գրող, հրապարակագիր և պատմաբան) 323
Կարա-Մուրզա Պողոս (հասարակական գործիչ) 512
Կարապետ (Ադանայում բնակող բալուցի հայ) 12, 13
Կարա Փափախ (տե՛ս Նիկոլ Դուման)
Կարենյան Հակոբ («Կովկաս» շաբաթաթերթի հրատարակիչ և խմբագիր) 502
Կարինյան Արտաշես (բուն ազգանունով՝ Գաբրիելյան) (ՍԴԲՀԿ, ապա բոլշևիկ գործիչ) 364, 372
Կարճիկյան (երդվյալ հավատարմատար Ռուսաստանում) 424
Կարճիկյան Խաչատուր (ՀՅԴ գործիչ) 328
Կարմիր սուլթան (տե՛ս Աբդուլ Համիդ II)
Կարյագին (ռուսաստանցի փաստաբան) 479
Կարո (աստրախանցի, ՀՅԴ ահաբեկիչ Ռուսաստանում) 295
Կարո (ֆեդայի) 184
Կարո (արտամետցի, ՀՅԴ մարտիկ Թավրիզում, զոհվել է Ալվարի կռվում) 180, 194, 197, 220, 769
Կեմպե (ռուսաստանցի դատախազ) 465, 466
Կերենսկի Ալեքսանդր Ֆեոդորովիչ (ռուս փաստաբան, քաղաքական և պետական գործիչ) 424-426, 438
Կերնս (Պարսկաստանի ֆինանսների համար իբրև պատասխանատու հրավիրված ամերիկացի) 679
Կիրալչիչ Նիկոլայ Իվանովիչ (ռուսաստանցի նարոդնիկ հեղափոխական) 414
Կիրակոս Ա Վիրապեցի կաթողիկոս Ամենայն հայոց 105
Կիրակոս վարդապետ (տե՛ս Կիրակոս Ա Վիրապեցի կաթողիկոս Ամենայն հայոց)
Կլընջյան (ընտանիք Քեսապում) 27
Կոբիյակով Յուրի («Ռուսսկոյե սլովո»-ի լրագրող) 401
Կոզանօղլուներ (Սիսի շրջանի դերեբեյիներ) 5
Կոկովցև Վլադիմիր Նիկոլաևիչ (Ռուսաստանի ֆինանսների նախարար, ապա վարչապետ) 360, 495
Կոմիտաս վարդապետ (բուն անունով՝ Սողոմոնյան Սողոմոն) 302, 303,

330, 394
Կոչեն Դենի (Ֆրանսիայի Ազգային ժողովի անդամ) 35
Կոսոյան Հայկակ (Հրապարակագիր) 72
Կովալև (Գանձակի նահանգապետ) 426
Կովալևսկի Մաքսիմ Մաքսիմովիչ (ռուս նարոդնիկ հեղափոխական, գիտնական) 323, 414
Կորոլենկո Վլադիմիր Գալակտիոնովիչ (ռուս գրող, հրապարակագիր, հասարակական գործիչ) 479
Կորսակ (ռուսաստանցի դատախազ) 460
Կուլիշեր (ռուսաստանցի փաստաբան) 484
Կուկունյան(ց) Սարգիս (ազատագրական պայքարի առաջամարտիկ) 240, 356, 415, 491-493
Կուրաբչևսկի (ռուսաստանցի փաստաբան) 424, 425
Կուրլով (Ռուսաստանի ներքին գործոց նախարարի օգնական) 280
Կուրտիկյան Ստեփան (Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ներկայացուցիչ) 899
Կվավաձե Իլարիոն (վրացի ահաբեկիչ Պարսկաստանում) 618
Կրավցով Ա. Ն. (Ռուսաստանի սենատի անդամ, ՀՅԴ դատական գործի ատյանի նախագահ) 423, 429, 430, 466, 474, 475, 477
Կրուչեան (պետական դումայի խավարամոլ անդամ) 146

Հ

Հազար (Թուրքմեն ցեղապետ Պարսկաստանում) 574
Հազրեթ-ղուլի խան Խոջաբեկլինսկի (ցեղապետ Ատրպատականում) 573
Հալաճյան Արամ (Ազգ. երեսփոխական ժողովի անդամ) 801, 883, 1014
Հալաճյան Պետրոս (Եղբայրասպանության զոհ, ռամկավար գործիչ) 818
Հալաճյան Պետրոս (Օսմանյան կայսրության առևտրի նախարար, օսմանյան խորհրդարանի անդամ) 894, 911, 1024, 1057
Հալիմ բեյ (Օսմանյան կայսրության արդարադատության և կրոնների նախարար) 1085, 1086
Հախումյան Սեմեոն («Մշակ» թերթի աշխատակից) 503
Հակկը բեյ (Վանի նահանգապետ) 1077
Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոս Ամենայն հայոց 105
Հակոբ վարդապետ Ջուղայեցի (տե՛ս Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոս Ամենայն հայոց)
Հակոբյան Գասպար (ՀՅԴ Թավրիզի կենտրոնական կոմիտեի անդամ) 172
Հակովբյան Դանիել արքեպիսկոպոս (Երուսաղեմի պատրիարքական տեղապահ) 1121
Հաճի Խալիլ պէյ (Թուրք երևելի Բախչե-Համիդիեում) 1115, 1117
Համազասպյան Անանիա արքեպիսկոպոս (Շամախու թեմի առաջնորդ) 288, 403, 1120

Համբարձումյան Կոստի (Կոստյա) (ՀՅԴ ֆեդայի) 191
Համբարյան Ազատ (պատմաբան) 866
Համիդ (տե՛ս Աբդուլ Համիդ II)
Համիտ (տե՛ս Աբդուլ Համիդ II)
Համսուն Կնուտ (նորվեգիացի գրող) 852, 853
Հայդար խան Ամու օղլու (բախտիար զորահրամանատար Պարսկաստանում) 594
Հայկազն Միհրդատ (ՀՅԴ գործիչ) 382, 388, 405
Հայր Աբրահամ (տե՛ս Սահակյան Ավետիք)
Հայրապետյան (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 825, 826
Հաջի Ադիլ բեյ (տե՛ս Ադիլ բեյ)
Հաջի Ալի Դավաֆրուչ (սահմանադրական գործիչ Թավրիզում) 717
Հաջի խան (հակասահմանադրական գործիչ Պարսկաստանում) 619
Հաջի Մահմեդ (հեղափոխական մարտական ուժերի հրամանատար Թավրիզում) 204
Հաջի Մամեդ Թաղի (Սալմաստի Սավրա գյուղի սեփականատեր) 645
Հաջիյան (Եփրեմ խանի դամբանախոսներից Թավրիզում) 735
Հաջի Փեչնամազ (սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 169, 714
Հասան աղա (Թուրք երևելի Բախչե-Հարունիեում) 1115, 1117
Հասան բեյ (երիտթուրք գործիչ) 895
Հասան խան (Երևանի վերջին խան Սարդար Հոսեյնի եղբայրը) 704
Հասան Ֆեհմի բեյ (երիտթուրք գործիչ, «Սերբեստի» թերթի խմբագիր) 888, 892
Հարդինգ Չարլի (Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար) 33
Հարդվիգ (Ռուսաստանի դեսպանը Պարսկաստանում, ապա դեսպանորդը Սերբիայում) 936
Հարություն (պարսկական հեղափոխության Ավարայրի կռիվներում զոհված հայ մարտիկ) 220
Հարություն (պարսկական հեղափոխության կռիվներում վիրավորված պարսկահայ կամավոր) 561
Հարությունյան Գեորգի (արևելագետ պատմաբան) 534–536, 545, 578
Հարությունյան Խոսրով (Թավրիզահայ մեծահարուստ) 207
Հարությունյան Հարություն (ՍԴՀԿ գործիչ Ռեշտում) 579
Հարությունյան Մարտիրոս (ծածկանունը՝ Շիրակնի) (ՀՅԴ գործիչ) 321
Հարությունյան Սամսոն (իրավաբան, Հայ ժողովրդական կուսակցության պարագլուխ) 126, 311, 312, 387, 402, 404, 426, 512
Հարությունյան Սարիբեկ (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 422
Հեկտո (պարսկական հեղափոխության Սալմաստի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Հեյդարով (պետական դումայի անդամ) 155
Հերակլէս (դյուցազն հունական դիցաբանության մեջ) 129
Հեքիմյան Գևորգ (ժողովրդական տաղասաց, բռնաղատված հայրենադարձ) 46
Հիդայաթ խան (տե՛ս Մոխբեր Սալթանե)
Հիսուս Քրիստոս 283, 336, 344, 370
Հիսէյին Էֆէնտի (Օսմանյան կայս-

բության Նախադատ ատյանի անդամ) 1101
Հոմելյանց (ՀՅԴ ահաբեկիչ) 423
Հոսեյն Ալի խան (փոլաթլի ցեղի առաջնորդ Պարսկաստանում) 571
Հոսեյն (իբն Ալի իբն Աբի Թալեբ) (չիա 12 գլխավոր իմամներից 3-րդը) 559
Հոսեյն խան (Երևանի վերջին խանսարդարը) 704
Հոսեյն-դուլի խան (Սալար Դովլեի անները, հակասահմանադրական գործիչ Պարսկաստանում) 634
Հոսեյն-դուլի խան (տե՛ս Նավվաբ)
Հովակիմյան Աբրահամ (մականունը՝ Աբրահամ խան Բախտիարի) (պարսկական հեղափոխության զինվորական գործիչ) 257, 263, 265-268, 552, 557, 560, 561
Հովակիմյան Ստեփանոս արքեպիսկոպոս (Նիկոմեդիայի թեմի առաջնորդ) 389, 405, 965, 1121
Հովհաննես (Ադանայում հաստատված բալուցի Կարապետի որդին) 12, 13
Հովհաննեսյան Գրիգորիս արքեպիսկոպոս (Կ. Պոլսում) 1083, 1121
Հովհաննիսյան Աչոտ (ՍԴԲՀԿ, ապա բոլշևիկ և պետական գործիչ, պատմաբան) 372
Հովհաննիսյան Հակոբ (ռամկավար գործիչ) 796
Հովհաննիսյան Հովհաննես (20-րդ դարասկզբի բանաստեղծ) 388
Հովհաննիսյան Հովսեփ (ծածկանունները՝ Յ. Էլմար, Ֆարրո) (ՀՅԴ գործիչ Պարսկաստանում, խմբագիր) 172, 181, 188, 232, 241, 249, 261-263, 267, 269, 271, 645, 649, 655, 689-691, 717, 721, 727, 765, 766, 769
Հովհաննիսյան Տիգրան (Թիֆլիսեցի) 488
Հովնանյան Հովհան (միլիոնատեր) 355
Հովույան Իսահակ (ՍԴՀԿ գործիչ Ռեչտում) 579
Հովսեփյան Ա. (բոլշևիկ գործիչ) 364
Հովսեփյան(ց) Գարեգին վարդապետ 227, 232, 336, 426
Հովսեփյան Կ. (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 422
Հունո (բուն անունով՝ Տեր-Մարտիրոսյան Հարություն աղա) (ՀՅԴ սալմաստեցի ֆեդայի) 240
Հուսեյն էֆենդի (Ադանայի նահանգի Մյուրֆետ գյուղի թուրք երևելի) 26
Հուսեյն Հիլմի փաշա (Օսմանյան կայսրության մեծ վեզիր) 48, 280, 797, 800, 805, 844, 1054, 1060, 1068
Հուսեյն Ջահիդ բեյ (երիտթուրք գործիչ) 843, 887, 1038
Հուսիկ Ա Պարթև 105
Հուսիկ քահանա (Կ. Պոլսում) 883
Հրայր (փառակեցի ֆեդայի) 184, 219
Հրանտ վարդապետ (հավանաբար՝ Հովասափյան, Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 403
Հրաչ (ՀՅԴ մարտիկ Թավրիզում) 180
Հրաչ (ծածկանունը՝ Պապաչա) (կաղզվանցի խմբապետ) 194

Ղ

Ղազարյան Կ. (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 426

Ղազարյան Հայկազն Գ. (գրքի հեղինակ) 33, 35, 40, 52, 53
Ղազարյան Հովհաննես (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 476, 483
Ղազարոսյան Ղազարոս (ծածկանունը՝ Մարզպետ) (ՀՅԴ գործիչ) 48
Ղազի Ալի (ավազակապետ Պարսկաստանում) 743
Ղաթր (Ադանայի նահանգի Համիդիե ավանում հաստատված մարաշցի) 22
Ղահրաման (սահմանադրական զորահրամանատար Թավրիզում) 196
Ղաճարներ (տե՛ս Ղաջարներ)
Ղաջարներ (արքայատոհմ Պարսկաստանում) 173, 189, 222, 225, 226, 253, 602, 603, 635, 703, 742, 744, 749, 764
Ղասեմ խան Ամիրթուման (Ղազվինի նահանգապետ) 253
Ղարախանյան Հովհաննես խան (Նոր Ջուղայում) 653
Ղարիբյան Համբարձում (ծածկանունը՝ Պլո Թագավոր) (ՀՅԴ գործիչ) 296
Ղարիբյան Համբարձում (կարսեցի արհեստավոր, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 443
Ղիաս Նիզամ (տիտղոս Է. Ղազվինի քրդական էյալեթի ցեղապետ) 250, 251
Ղոլամ Հոսեյն խան Մոթամետ (սոցիալիստ դեմոկրատ գործիչ Էնզելիում) 579
Ղրիմ-Գիրեյ (Ղրիմի թաթար վերջին խանը) 539
Ղուկասյան Ավետիս (չուչեցի մեծահարուստ) 1029
Ղուկասյան Պ. (պետական դումայի անդամ) 426

Ճ

Ճէվատ պէյ (տե՛ս Մեհմեդ Ջևադ բեյ)
Ճէվտէթ էֆէնտի (Հաճընի մուֆթիի որդին) 1101
Ճիզմէճեան Մանուկ Գ. (ամերիկահայ գործիչ և գրքի հեղինակ) 813, 819, 833, 974
Ճևահիրճյան Գաբրիել եպիսկոպոս 1121

Մ

Մագուտ(յան) Սիմոն (Կ. Պոլսի ևրևելիներից) 962, 1003
Մադաթ (պարսկական հեղափոխության Շահարադի կռիվներում զոհված հայ մարտիկ) 261, 769
Մազլումյան Կարապետ եպիսկոպոս (Բանդրմայի թեմի առաջնորդ) 1121
Մաթիաչվիլի Գ. (ծածկանունը՝ Գիգո) (բոլշևիկ գործիչ) 534
Մալեզյան Վահան (ՀՍՌԿ գործիչ) 796, 964
Մալեք զադե (իրանցի պատմաբան) 771
Մալխասյանց Արտաչես (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 309
Մալխասյանց Ղևոնդ (ՀՅԴ անդամ, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 309
Մալխասյան(ց) Ստեփան (բանասեր, բառարանագիր) 298, 509
Մալումյան Խաչատուր (ծածկանունը՝

Ակնունի Էդուարդ) (ՀՅԴ գործիչ) 65, 73, 84, 284, 290, 296, 305, 309, 310, 319, 320, 350–354, 503, 507
Մակար Ա Թեղուտցի Տեր-Պետրոսյան կաթողիկոս Ամենայն հայոց 338, 381
Մակարով (Ռուսաստանի ներքին գործերի նախարար) 427, 430, 495
Մակինցյան Պողոս (գրականագետ, պետական գործիչ) 480
Մակլակով Վասիլ Ալեքսեևիչ (պետական դումայի անդամ) 424, 469
Մահմեդ I շահ Ղաջար 213, 749
Մահմեդ Ալի շահ Ղաջար 162, 164, 169, 199, 208, 211, 222, 223, 225, 228, 247, 252, 254, 255, 257, 259, 263, 273, 307, 514, 516, 518, 519, 521, 527, 536, 538–541, 546–548, 560, 564, 592, 602, 604, 613–615, 623, 629–632, 634–641, 643, 650, 652, 653, 655–657, 659–663, 666–668, 670, 672, 673, 675, 677, 678, 685, 689, 694, 707–709, 711–713, 715, 724, 731, 734, 743, 745, 748, 749, 752, 759, 772, 830
Մահմեդ խան (Սարդար Ասադի որդին) 733
Մահմեդ Հասան Միրզա Ղաջար (Մահմեդ Ալի շահի կրտսեր որդին) 540
Մահմեդ-զուլի խան (սահմանադրական գործիչ Թավրիզում) 717
Մահմեդ-զուլի խան Ավարսկի (Թուրքմեն ցեղապետ Պարսկաստանում) 573
Մահմեդ օղլի (Թավրիզի «Շաֆագ» թերթի խմբագիր) 717
Մահմէդ Ալի (տե՛ս Մահմեդ Ալի շահ Ղաջար)
Մահմուդ խոջա (Ադանայի նահանգի Մյուրֆետ գյուղի թուրք երևելի Հուսեյն էֆենդիի որդին) 26
Մահմուդ Շէվքէթ Փաշա (տե՛ս Մահմուդ Շևքեթ փաշա)
Մահմուդ Շևքեթ փաշա (Ազատարար բանակի հրամանատար, Օսմանյան կայսրության պատերազմական նախարար) 18, 801–803, 808, 886, 892, 893, 921, 1033, 1036, 1049, 1050, 1054, 1058, 1060
Մամադ-Ալի շահ (տե՛ս Մահմեդ Ալի շահ Ղաջար)
Մամեդ-զուլի խան (սահմանադրական զորամիավորման հրամանատար Թավրիզում) 196
Մամիկոն (պարսկական հեղափոխության Ղարա Թեփեի մոտի կռիվներում զոհված հայ մարտիկ) 263
Մամիկոն (պարսկական հեղափոխության Ֆիրուզաբադի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Մամիկոն (պարսկական հեղափոխության Խոյ-Ավարայրի կռիվներում զոհված հայ մարտիկ) 220, 769
Մամիկոնյան Հ. (Կ. Պոլսի «Աւետաբեր» շաբաթաթերթի տեսաբան) 990
Մամիկոնյան-Էնիկոլոփյան Նարիման խան (հայազգի պետական գործիչ Պարսկաստանում) 213
Մամիկոնյան Ստեփան (հասարակական գործիչ Թիֆլիսում) 126
Մամյան Համբարձում (հերոսաբար զոհված մուժամբարցի ծերունի) 197
Մամյան Նորայր (հրապարակագիր և խմբագիր Պարսկաստանում) 191, 196, 543, 719
Մամուրյան Հրանտ (Իզմիրի «Դաչինք» թերթի արտոնատեր) 64

Մանասյան Սարգիս (ՀՅԴ գործիչ, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 304, 438, 476, 483
Մանդինյան Ստեփանոս քահանա («Մեղու Հայաստանի» թերթի հրատարակիչ և խմբագիր) 502
Մանթաշեան Աղէքսանդր (տե՛ս Մանթաշյան Ալեքսանդր)
Մանթաշյան Ալեքսանդր (նավթարդյունաբերող, բարեգործ) 297, 333, 334, 452
Մանկունի Վահրամ եպիսկոպոս (ապա արքեպիսկոպոս) (Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ) 125, 383, 387–391, 885, 965, 967, 1121
Մանուկյան Արամ (բուն անունով՝ Հովհաննիսյան Սարգիս, մականունը՝ Արամ փաշա) (ՀՅԴ և պետական գործիչ) 56, 62
Մանուկյան Միհրան (տե՛ս Արչարունի Հովհաննես արքեպիսկոպոս)
Մանուկյան Վռամշապուհ (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 883
Մանվելյան Սարգիս (Գանձակի Փիպ գյուղացի ՀՅԴ գործիչ) 489
ալ-Մանֆալութի Մուհամմեդ Լութֆի (եգիպտացի արաբ հեղինակ) 36
Մաչուրյան Ալեքսանդր (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 477
Մաջդ Դովլե (տիտղոս Է. հակասահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 204
Մառ Նիկոլայ (Նիկողայոս) (ռուսաստանցի հայագետ) 281, 282, 479
Մասեհ խան (հակասահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 252, 253
Մասեհյան Հովհաննես խան (տիտղոսը՝ Մոսայեդ Սալթանե) (պետական գործիչ Պարսկաստանում, թարգմանիչ) 213, 510, 622, 689, 719
Մատակյան Գայանե («Մշակ» թերթի աշխատակից) 503
Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի Զուխաջյան կաթողիկոս Ամենայն հայոց 384
Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի Իզմիրլյան կաթողիկոս Ամենայն հայոց 15, 29, 72, 81, 123, 126, 130–133, 275–291, 330–342, 344–348, 376–378, 382, 384, 393, 407, 494, 543, 609, 617, 618, 781, 816, 835
Մատինյան Բագրատ (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 477, 483
Մարատ Ժան-Պոլ (ֆրանսիական մեծ հեղափոխության ղեկավարներից) 739
Մարգարէ (տե՛ս Մուհամմեդ իբն Աբդալլահ)
Մարգուլիես (ռուսաստանցի փաստաբան) 424
Մարդուկեսյան Ղևոնդ եպիսկոպոս (ս. Էջմիածնի Մայր տաճարի լուսարարապետ) 403, 1120
Մարզպետ (տե՛ս Ղազարոսյան Ղազարոս)
Մարիկյան Մանուկ (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 1014
Մարկով 2-րդ (տե՛ս Մարկով Նիկոլայ)
Մարկով Նիկոլայ (պետական դումայի խավարամոլ անդամ) 138, 140, 151–154
Մարկևիչ (Ռուսաստանի սենատի

անդամ) 423
Մարտիկյան Սերգո (բոլշևիկ գործիչ) 534
Մարտիրոս (պարսկական հեղափոխության Ալվարի կովում զոհված հայ մարտիկ) 769
Մարտիրոսյան Սարգիս (ՍԴՀԿ գործիչ Ռեշտում) 579
Մարտով (մակեդոնական հեղափոխական կազմակերպության առաջնորդ) 843
Մարտով Լ. (բուն անունով՝ Յեղերբաում Յուրի) (մենշևիկ ղեկավար գործիչ) 365, 366
Մարր (պրոֆէսսոր) (տե՛ս Մառ Նիկոլայ)
Մգելաձե Լասո (ծածկանունը՝ Տրիա Վ.) (մենշևիկ կամավոր Թավրիզում, գրքի հեղինակ) 208, 246, 519, 523, 607
Մեդնիկյան Հովհաննես (իրավաբան, «Մշակ» թերթի աշխատակից) 305, 475
Մելիք (տե՛ս Յուսուֆյան Հովհաննես)
Մելիք-Ազարյան Ալեքսանդր (մեծահարուստ բարեգործ Թիֆլիսում) 277, 296, 309, 423, 425, 475, 477
Մելիք-Աղամալյան Հ. (Երևանի քաղաքագլուխ) 512
Մելիք-Անդրեասյան Պետրոս խան (ռուսների կախաղան հանած մուժամբարցի ՍԴՀԿ գործիչ) 720, 721
Մելիքե Ջեհան (տիտղոս Է. Մահմեդ Ալի շահի տիկնանց տիկինը) 539, 541, 640
Մելիք-Թանգյան Ներսես վարդապետ (ս. Էջմիածնի վանքի կառավարիչ, հետագայում Ատրպատականի թեմի երկարամյա առաջնորդ) 341, 426, 437, 438, 747, 768
Մելիքյան Արշավիր (բոլշևիկ գործիչ) 364
Մելիքյան Իսահակ (լուսանկարիչ, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 475
Մելիք-Շահ (սելջուկ սուլթան) 812
Մելիք-Շահնազարյանց Կոստանդին (գրող, գյուղատնտես) 406
Մելիք-Ջհանյան Ջհանգիր-բեկ (Ղարադաղի ընդհանուր հսկիչ) 625
Մելիք-Փաշայան Ալեքսանդր («Մշակ» թերթի աշխատակից) 503
Մելիք-Օհանջանյան Փ. (Էջմիածնի սինոդի պրոկուրոր) 131
Մելյան Հրանտ (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 463, 464
Մելյան Մեսրոպ ավագ քահանա 396
Մելքոնյան Ղևոնդ (ուսուցիչ, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 304
Մելքոնյան Տաճատ վարդապետ (Մայր աթոռի միաբան) 762
Մեհմեդ (Ադանայի նահանգի Էրզին ավանում հաստատված մարաչցի թուրք երիտասարդ) 22
Մեհմեդ II Ֆաթիհ (Օսմանյան կայսրության սուլթան) 777, 812
Մեհմեդ V Ռեշադ (Օսմանյան կայսրության սուլթան) 37, 69, 91, 92, 95, 280, 809, 968, 975, 1027, 1053,
Մեհմեդ Ասաֆ էսադ բեյ (Ջերելի-Բերեքեթի սանջակի հայակեր մութասերիֆ) 21, 23, 1108, 1109
Մեհմեդ Զիա բեյ (երիտթուրք գաղափարախոս) 852
Մեհմեդ Թալեաթ բեյ (հետագայում փաշա) (իթթիհադական պարագլուխ, Օսմանյան կայսրության

ներքին գործերի նախարար, հետագայում մեծ վեզիր, հայոց դահճապետներից) 48, 91, 797, 801, 803, 808, 844, 845, 855, 870, 871, 887, 894, 935, 1019, 1034, 1036, 1038–1040, 1050
Մեհմեդ Ջևադ բեյ (Ադանայի նահանգապետ) 11, 13, 14, 17, 19, 31, 34, 1104–1106, 1109, 1117
Մեհմեդ Սարահէդդին (օսմանյան իշխան, Աբդուլ Համիդ II-ի քրոջ որդին) 63, 843, 892
Մեհմէտ Ալի (տե՛ս Մահմեդ Ալի շահ Ղաջար)
Մեհրաբյան Արշակ (ծածկանունը՝ Սրինգ) (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 304, 477, 483
Մեհրաբյան Վարդան (ծածկանունը՝ Խանասորի Վարդան) (անվանի ֆեդայի) 180, 181
Մեծն Մուրադ (տե՛ս Պոյաճյան Համբարձում)
Մեղավորյան Հակոբ (իրավաբան) 396
Մենչիկով (պետական դումայի խավարամոլ անդամ) 146
Մենչիկով Լեոնիդ (Սանկտ Պետերբուրգի «Նովոյե վրեմյա» թերթի խմբագիր) 347, 427, 447–454, 702
Մեչադի Սադեղ Հարեմ (Թեհրանի ոստիկանապետ) 613
Մեչչերյակով (իշխան, Նիկոլայ Կարամզինի թոռը) 323
Մեջդ օլ Մոլք (բուն անունով՝ Միրզա Մոհամմեդ խան Սենեկի) (երևելի անձ Պարսկաստանում) 552, 584
Մեսրոպ Մաշտոց 508
Միլերան Ալեքսանդր (Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության պարագլուխներից) 1007
Միլլեր Ալեքսանդր Յակովլևիչ (Ռուսաստանի հյուպատոսության ավագ խորհրդականը, ապա հյուպատոսը Թավրիզում) 229, 407, 566, 567, 595, 609, 616, 633, 671, 714, 715, 719–724
Միլյուկով Պավել Նիկոլաևիչ (պետական դումայի անդամ, կադետական կուսակցության հիմնադիրներից) 155, 323, 424
Միխայլով Ադրիան Ֆեոդորովիչ (ռուսաստանցի նարոդնիկ հեղափոխական) 414
Միխո (ՀՅԴ գանձակեցի մարտիկ Թավրիզում) 194
Մինախորյան Վահան (էսէռ պարագլուխ) 56, 452
Մինասեան Լեւոն Գ. (իրանահայ պատմաբանասեր) 653
Մինասյան Գևորգ Ալեքսանդրի (Խարկովի համալսարանի նախկին ուսանող) 349
Մինասյան Խ. (ՀՅԴ անդամ Թեհրանում) 690
Մինեջյան Գրիգոր (հայ կաթոլիկ երևելի Կ. Պոլսում) 1014
Միսակ (պարսկական հեղափոխության կռիվներում վիրավորված սուրմալվեցի հայ մարտիկ) 561
Միսակ (պարսկական հեղափոխության Թավրիզի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Միրաբո Օնորե Գաբրիել Ռիկետի (կոմս, ֆրանսիական մեծ հեղափոխության ղեկավարներից) 739
Միրզա Ալի խան Սարթիփ (տե՛ս Սարդար Ֆաթեհ)
Միրզա Ասղար խան Աթաբեկ (տե՛ս Ամին Սոլթան)
Միրզա Էհսան խան (տե՛ս Մոստոու-

ֆի օլ Մեմալիք)
Միրզա խան Սոլեյման (Պարսկաստանի դեմոկրատական կուսակցության ղեկավար) 615
Միրզա Հասան (հակասահմանադրական պարագլուխ Թավրիզում) 168
Միրզա Հասան խան (ոստիկանության պաշտոնատար Պարսկաստանում) 733
Միրզա Հոսեյն խան (տե՛ս Մոբթամըն օլ Մոլք)
Միրզա Մելքոն խան (ազգանունը՝ Գրիգորյան-Մելքումյան, տիտղոսը՝ Նազեմ Դովլե) (հայազգի պետական գործիչ Պարսկաստանում) 213
Միրզա Մոհամմեդ խան Սենեկի (տե՛ս Ռեշիդ օլ Մոլք)
Միրզայան(ց) Հովսեփ (Պարսկաստանի մեջլիսի անդամ, ՀՅԴ գործիչ) 523, 545, 628, 642, 735
Միրզա Շիտի (հակասահմանադրական պարագլուխ Թավրիզում) 168
Միրզա Քերիմ (հակասահմանադրական պարագլուխ Թավրիզում) 168
Միր-Մհե (քուրդ ավազակապետ Արևմտյան Հայաստանում) 873, 1080, 1084, 1085
Միցկևիչ (Ռուսաստանի սենատի անդամ, Կովկասի փոխարքայի օգնական) 155
Միքայելյան Քրիստափոր (ՀՅԴ հիմնադիրներից) 503, 754, 761
Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոս Ամենայն հայոց 103, 108, 112, 122, 311, 342, 346, 377, 383, 384
Մկրտիչյան Լևոն (ՀՍՌԿ ղեկավարներից) 278, 287, 875, 988
Մկրտչյան Ա. (Վանի «Աչխատանք» թերթի հոդվածագիր) 904
Մկրտչյան Արմենակ (ՀՅԴ Թավրիզի կենտրոնական կոմիտեի անդամ) 171, 172
Մկրտչյան Բալասան (ՍԴՀԿ գործիչ Էնզելիում) 579
Մնակյան Մարտիրոս (դերասանապետ Կ. Պոլսում) 1026, 1027
Մնացականյան Ավետիք (բժիշկ, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 304, 422
Մնացականյան Տիգրան (մուժամբարցի, ՀՅԴ Թեհրանի կենտրոնական կոմիտեի անդամ, Կիլիկիայի հայկական պետության նախաձեռնողներից) 192, 689
Մնջո (ՀՅԴ մարտիկ Թավրիզում) 189
Մոզաֆֆերէդդին շահ Ղաջար 213, 528, 749
Մոզյան Մանվել (ՍԴՀԿ Թեհրանի մասնաճյուղի ղեկավար) 579, 615
Մոբթամըն օլ Մոլք (բուն անունով՝ Միրզա Հոսեյն խան) (պետական բարձրաստիճան ծառայող Պարսկաստանում) 733
Մոիզ Սոլթան (մյուս տիտղոսը՝ Սարդար Մուխի, բուն անունով՝ Արդոլ Հասան խան) (սահմանադրական բախտիարների զորահրամանատար) 261, 516, 535, 594, 598, 599, 655
Մոին Հոմայուն (տիտղոս Է. սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 562, 570, 655
Մոլլա Ղորբան Ալի (հետադիմական գործիչ Պարսկաստանում) 549, 554, 585
Մոլով (Ռուսաստանի սենատի ավագ քարտուղար) 468
Մոխբեր Սալթանե (բուն անունով՝ Հիդայաթ խան) (Ատրպատականի

գեներալ-նահանգապետ) 526, 550, 622
Մոհամմեդ Ռեզա շահ Փահլավի 768, 771
Մոմթազ Սոլթան (տիտղոս է. շահի խնամակալ Նասր օլ Մոլքի ներկայացուցիչ) 733
Մոմոճան (թուրք մարդասեր Տարսոնում) 21
Մոնթասեր Դովլե (տիտղոս է. սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 261, 552, 707
Մոնտեֆորտե (կոմս, Թեհրանի ոստիկանապետ) 612
Մոջալլալ Սոլթան (տիտղոս է. հակասահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 728, 730
Մոսթեշար Դովլե (տիտղոս է. պետական բարձրաստիճան ծառայող Պարսկաստանում) 733
Մոստիչյան Հարություն (օսմանյան դատարանի քննիչ, դատավոր, Ազգ. կեդրոնական վարչության ատենապետ) 38, 883, 1048, 1093, 1098
Մոստոուֆի օլ Մեմալիք (բուն անունով՝ Միրզա Էհսան խան) (վարչապետ Պարսկաստանում) 593, 594, 596, 611, 612, 617, 619, 621, 625
Մովսես Գ Տաթևացի կաթողիկոս Ամենայն հայոց 105
Մովսես վարդապետ Սյունեցի (տե՛ս Մովսես Գ Տաթևացի կաթողիկոս Ամենայն հայոց)
Մովսիսյան Հովսեփ (պարսկահայ աքսորյալ ազատամարտիկ) 240
Մովսիսյան Հուսիկ արքեպիսկոպոս (ս. Էջմիածնի սինոդի անդամ, «Արարատ» հանդեսի խմբագիր) 1120
Մովսիսյան Ռաֆայել (ՍԴՀԿ գործիչ Թավրիզում) 200
Մորթազա-զուլի խան (տե՛ս Սանի Դովլե)
Էլ-Մուայյեդի Շերիֆ (երիտթուրք գործիչ) 895
Մուկուչ (պարսկական հեղափոխության Դամգանի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Մուհամմեդ իբն Աբդալլահ (իսլամի հիմնադիրը) 606, 782
Մունիր փաշա (Լիբիայում օսմանյան զորքերի հրամանատար) 931
Մուշեղ վարդապետ 426
Մուշեղյան Լևոն (իրավաբան, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 304, 423
Մուշիր Դովլե (տիտղոս է. զինվորական բարձրաստիճան պաշտոնատար Պարսկաստանում) 733
Մուշիր Սալթանե (տիտղոս է. զինվորական բարձրաստիճան պաշտոնատար Պարսկաստանում) 519
Մուջտեհիդ Սղաթը Իսլամ (տիտղոս է. սահմանադրական բարձրաստիճան հոգևորական Թավրիզում) 717
Մուսա-բեկ (քուրդ ավազակապետ Տարոնում) 1079, 1080
Մուսա Էֆենդի (թուրք երևելի Ադանայի նահանգի էրզին ավանում) 22
Մուսյան Գ. (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 422
Մուստաֆա Նեղիմ (Ադանայի նահանգապետ) 994
Մուստաֆա փաշա (Գրբրգ-խան

գյուղի սեփականատեր) 28, 44
Մուրադ V (Օսմանյան կայսրության սուլթան) 809
Մուրադ խան (պարսկական հեղափոխության կռիվներում վիրավորված պարսկահայ մարտիկ) 561
Մուրադ Սոլթան (տիտղոս Է. սահմանադրական ոստիկանապետ Թավրիզում) 717, 721
Մուրադբեգյան Խորեն եպիսկոպոս (Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ) 403, 495, 1120
Մուրադյան (Մուրադով) Արշակ (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 476, 483
Մուրադյան Մ. (բժիշկ, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 422
Մուրադյան Մելքիսեդեկ արքեպիսկոպոս (Իզմիրի թեմի առաջնորդ) 377
Մռավյան Ասքանազ (բոլշևիկ գործիչ) 364
Մսերյան Մսեր («Ճռաքաղ» թերթի հրատարակիչ և խմբագիր) 502
Մևլան զադե Ռիֆաթ (թուրք հեղինակ և երիտթուրք գործիչ) 32, 33, 892

Յ

Յ. Ս. (տե՛ս Սարգիսյան Հակոբ)
Յաբլոնովսկի Սերգեյ («Ռուսսկոյե սլովո» թերթի աշխատակից) 464
Յաբլոնսկի (ռուսաստանցի փաստաբան) 424
Յակուլով (հայազգի փաստաբան Մոսկվայում) 424
Յամին Նիզամ (տիտղոս Է. սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 682
Յանչևսկի Գ. (Սանկտ Պետերբուրգի հեռագրական գործակալության թղթակից) 697
Յար Մուհամմեդ խան (պարսիկ զորահրամանատար) 557, 709
Յարութիւն 1 (պարսկական սահմանադրության Խոյի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Յարութիւն 2 (պարսկական սահմանադրության Խոյի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Յեկեն Վելիէդդին (եգիպտաբնակ թուրք մտավորական) 36
Յովհաննիսեան Յովսէփ (տե՛ս Հովհաննիսյան Հովսեփ)
Յուսուֆ Աքչուրա (երիտթուրք գաղափարախոս) 852
Յուսուֆ Քեմալ բեյ (օսմանյան խորհրդարանի անդամ) 39, 1093, 1105
Յուսուֆյան Հովհաննես (ծածկանունները՝ Մելիք, Վահանյան) (ՀՅԴ գործիչ) 356

Ն

Նաղիրաձե (դատական թարգմանիչ Ռուսաստանում) 460, 467, 468
Նազար Ալի խան (հակասահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 674
Նազարբեկ(յան) Ավետիս (ՍԴՀԿ հիմնադիրներից) 356,
Նազարբեկյան Թովմաս (գեներալ-լեյտենանտ) 203
Նազարեթյան Արամ (հասարակական գործիչ Թիֆլիսում) 126
Նազարյանց Ստեփանոս («Հիսսիսա-

փայլի» հրատարակիչ և խմբագիր) 502
Նազեմ Դովլե (տե՛ս Միրզա Մելքոն խան)
Նազըմ (բժիշկ, երիտթուրք պարագլուխ) 33, 853, 854, 1039
Նազըմ փաշա (Օսմանյան կայսրության պատերազմական նախարար) 932, 1054
Նազիֆ Սուլեյման (թուրքերեն «Հակկ» թերթի խմբագրապետ) 499
Նազլեան Յովհաննէս արքեպիսկոպոս (Տրապիզոնի հայ կաթոլիկ թեմի վիճակավոր) 52, 945
Նաիբ Սալթանե (տե՛ս Քամրան Միրզա Ղաջար)
Նալբանդյան Երվանդ քահանա (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորության թեկնածու) 389
Նալբանդյան Միքայել (գրող, լուսավորիչ) 502
Նալբանդյան Մնացական (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 477, 483
Նալբանդյան Վահրամ (ՀՅԴ Ղարաքիլիսայի կոմիտեի անդամ) 301
Նակաչիձե (Բաքվի նահանգապետ) 432
Նաղի խան (տե՛ս Ռեչիդ օլ Մոլք)
Նայիլ բեյ (Օսմանյան կայսրության ֆինանսների նախարար) 895, 1033
Նաջաֆ-ղուլի խան Բախտիարի (տե՛ս Սամսամ Սալթանե)
Նասեր խան (Ղազվինի քրդական էյալեթի ցեղապետի որդին) 250
Նասեր Սալթանե (տե՛ս Սիփահդար)
Նասրէդդին շահ Ղաջար 213, 548, 603, 612, 749
Նասր-իլ-Միլք (տե՛ս Նասր օլ Մոլք)
Նասրոլլահ խան Յուրչինսկի (շահ-սևան ցեղապետ Պարսկաստանում) 569, 571
Նասր օլ Մոլք (դեռահաս Ահմեդ շահ Ղաջարի խնամակալ) 520, 593, 618, 620–622, 624, 627, 628, 637, 669, 676, 698, 719, 731, 733
Նավասարդյան Բագրատ (բժիշկ, հասարակական գործիչ Թիֆլիսում) 139
Նավվաբ (բուն անունով՝ Հոսեյն-ղուլի խան) (երևելի անձ Պարսկաստանում) 733
Նատո (պարսկական հեղափոխության Թեհրանի համար կռվում զոհված թուրքահայ մարտիկ) 272, 769
Նար-Պէյ Խորէն արքեպիսկոպոս (բուն ազգանունով՝ Գալֆայեան) 763
Նաքս Ֆիլանդեր Զեյզ (ԱՄՆ պետական քարտուղար) 680
Նեկրասով Նիկոլայ Ալեքսեևիչ (ռուս գրող) 146
Նեմիրովիչ-Դանչենկո Վլադիմիր Իվանովիչ (գրող, թատերագիր, ռեժիսոր) 323, 744
Նեմցե Պետրոս (վարպետ արհեստավոր Կ. Պոլսում) 809
Ներատով (Թեհրանում Ռուսաստանի դեսպանորդ) 654
Ներսես Ա Պարթև կաթողիկոս 105
Ներսես Ե Աչտարակեցի կաթողիկոս Ամենայն հայոց 108, 384
Ներսես քահանա (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 403
Նժդեհ Գարեգին (բուն ազգանունով՝

Տեր-Հարությունյան) (ռազմական և գաղափարական անվանի գործիչ) 221, 431
Նիթրա (տե՛ս Շահրիկյան Հարություն)
Նիկիտին (գնդապետ, Ռեչտում ափ իջած ռուսական զորքերի հրամանատար) 614
Նիկոլ (Եփրեմ խանի խմբապետներից) 728
Նիկոլ (ՀՅԴ գանձակեցի մարտիկ Թավրիզում, զոհվել է Մուժամբարի կռվում) 180, 194, 197, 769
Նիկոլ (պարսկական հեղափոխության Սուջեի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Նիկոլ Դուման (մյուս ծածկանունը՝ Կարա Փափախ, բուն անունով՝ Տեր-Հովհաննիսյան Նիկողոս) (ականավոր ֆեդայապետ) 175, 181, 295, 321, 322, 645-649, 657, 671, 715, 725, 726, 757, 768
Նիկոլայ I Ռոմանով (Ռուսաստանի կայսր) 449, 704
Նիկոլայ II Ռոմանով (Ռուսաստանի կայսր) 137, 148, 149, 157, 208, 273, 277, 280-282, 284, 290, 325, 339, 340, 483, 495, 500, 501, 541, 700, 828, 830, 918
Նիկոլսոն Արթուր (Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար) 225
Նիկոլայ Ալեքսեևիչ (տե՛ս Խոմյակով Նիկոլայ Ալեքսեևիչ)
Նիյազի բեյ (երիտթուրք զինվորական գործիչ) 844
Նիոդնիչանսկի (ռուսաստանցի փաստաբան) 424
Նիտհեմ (ԱՄՆ կոնգրեսի անդամ) 353
Նոլդե Բորիս (բարոն, գաղտնի խորհրդական Ռուսաստանում) 135-138, 141, 149
Նովիչև Ա. Դ. (խորհրդային թուրքագետ) 857
Նորատունկյան Գաբրիել (Ազգ. երեսփոխանական ժողովի ատենապետ, Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար) 879, 881, 883, 886, 1028, 1054, 1055, 1060, 1073, 1074, 1083
Նորհատյան Համազասպ (ՀՅԴ գործիչ) 295
Նուրյան Հովհաննես (Կ. Պոլսի երևելիներից) 1003
Նեսկի Ալեքսանդր (ռուս իշխան, Ռուս ուղղափառ եկեղեցու սուրբ) 501

Շ

Շախյան Աչոտ եպիսկոպոս (Արցախի թեմի առաջնորդ) 279, 426, 1120
Շահազիզ Սմբատ (բանաստեղծ, մանկավարժ, հրապարակախոս) 503
Շահբազ Գրիգոր (հայ ավետարանական երևելի Կ. Պոլսում) 1014
Շահնազարով (մեծահարուստ, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 423
Շահումյան Ստեփան (բոլշևիկ ղեկավար գործիչ Անդրկովկասում) 364-370, 373-375
Շահվերդյան Շահբազ (Լոռու Այգեհատ գյուղացի) 315, 436
Շահրիկյան Հարություն (ծածկանունները՝ Ատոմ, Նիթրա) (ՀՅԴ գործիչ) 51, 65, 66, 295, 794, 858, 865, 872, 882, 946, 1040
Շամիլ (պարսկական հեղափոխության Խոյի կռիվներում զոհված հայ մարտիկ) 220, 769

Շամսէդդին բեյ (Օսմանյան կայսրության վակըֆների արաբ նախարար) 848
Շապոշնիկյան (հայազգի մեծահարուստ, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 423, 477, 483
Շարաֆյան (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 438
Շարոյանց (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 483
Շաքիր (քուրդ ավազակապետ Արևմտյան Հայաստանում) 873
Շելկովնիկյաններ (ծագումով նուխեցի զինվորականների և գիտնականների տոհմ) 763
Շելկովնիկյան Բեհբութ (Ռուսաստանի բանակի գեներալ-մայոր) 763
Շեհապ Տիգրան (ալբանական իշխան) 1034
Շեյխ Սալիմ (ուսանող, սահմանադրական զինվորական ուժերի հրամանատար Թավրիզում) 204, 717
Շեյխ Սեիդ Ալի (քուրդ ավազակապետ Արևմտյան Հայաստանում) 873, 875
Շերիֆ փաշա (գեներալ, Իթթիհադին ընդդիմադիր կուսակցապետ) 891-893
Շերմազանյան Գալուստ (պատմաբանասեր) 168, 213
Շեքսպիր Վիլյամ 510
Շէյխ Վահէթի (հետադիմական կրոնական գործիչ Կ. Պոլսում) 1105
Շիբլին (Մեծ Բրիտանիայի հյուպատոսը Թավրիզում) 717
Շիշմանյան Ղևոնդ եպիսկոպոս (ծածկանունը՝ Գերուկ) («Մշակ» թերթի աշխատակից) 503
Շիտով Գ. Վ. (ռուս պատմաբան) 189, 253, 602, 703, 764
Շիրակունի Հովհաննես արքեպիսկոպոս (Մայր աթոռի միաբան) 403, 1120
Շիրակնի (տե՛ս Հարությունյան Մարտիրոս)
Շիրինյան Գամեր (Կ. Պոլսի ազգ. պատրիարքարանի դիվանապետ) 801, 826
Շիրվանզադե (բուն անունով՝ Մովսիսյան Ալեքսանդր) (գրող) 131, 333, 1043
Շոսա Սալթանե (տիտղոս Է. Մեհմեդ Ալի շահի եղբայրներից, հակասահմանադրական գործիչ Պարսկաստանում) 549, 614, 635, 642, 678, 700
Շուայլ («Մշակ» թերթի հոդվածագիր) 1059
Շուջաա Դովլե (բուն անունով՝ Սամադ խան) (զորահրամանատար Պարսկաստանում) 555-557, 561, 562, 632, 633, 651, 652, 713-718
Շուջաա Նիզամ (տիտղոս Է. հակասահմանադրական գործիչ Պարսկաստանում) 170
Շուստեր Մորգան (Պարսկաստանի ֆինանսական համակարգի պատասխանատու) 677-680, 685, 700, 738
Շչեգլովիտով (Ռուսաստանի արդարադատության նախարար) 303, 459, 460, 467, 469, 490

Ո

Ոսկյան Գրիգոր (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 1014
Ուաշինկթըն Ճորճ (ԱՄՆ առաջին

նախագահը) 74
Ութուճյան Գևորգ եպիսկոպոս (Եվրոպայի թեմի առաջնորդ) 1122
Ուիլի Դաութի (Մեծ Բրիտանիայի հյուպատոսը Մերսինում) 16, 19, 1095
Ուլդուզ (թուրքմեն ցեղապետ Պարսկաստանում) 574
Ումանսկի (ռուսաստանցի փաստաբան) 424
Ուրֆալյան Դավիթ էֆենդի (նահատակ հայ իրավաբան Ադանայում) 14

Զ

Զալխուչյան Գրիգոր (հասարակական գործիչ, իրավաբան, պատմաբան, հետագայում ՀՀ հյուպատոսը Դոնի Ռոստովում) 424
Զամիչյան Բարդուղիմեոս եպիսկոպոս (Մայր աթոռի միաբան) 402, 1003, 1120
Զապլին Վիկտոր Վ. (գնդապետ, ռուսական արշավախմբի հրամանատար Պարսկաստանում) 542, 721
Զարիխով (Ռուսաստանի ներքին գործերի նախարարության պաշտոնատար) 427
Զարիկով Ն. Վ. (Ռուսաստանի դեսպանը Կ. Պոլսում) 444, 445, 918
Զարիքոֆ (տե՛ս Զարիկով Ն. Վ.)
Զարուխչյան Մարտիրոս (ՀՅԴ գործիչ Թավրիզում) 189, 194, 197
Զերիչև (Ռուսաստանի սենատի անդամ) 483
Զելերիանլու Արշադ (ղարադաղցի ավազակապետ) 194
Զելերիանլու Բեռյուք խան (Ռահիմ խանի որդին) 555
Զելերիանլու Զարղամ խան (ղարադաղցի ավազակապետ) 166, 193, 194, 549
Զելերիանլու Ռահիմ խան (տիտղոսը՝ Սարդար Նուսրեթ) (հակասահմանադրական զորահրամանատար Ատրպատականում) 166, 169, 183, 204, 219, 220, 549–551, 555–566, 585, 615, 616, 619, 622, 626, 635, 672
Զելերիանլու Սամսամ (Սամի) խան (ղարադաղցի ավազակապետ) 166, 193, 194, 198, 549
Զեմադուրով (սևհարյուրյակային գործիչ Ռուսաստանում) 323
Զեոմլեքչյան Սիմոն (Կ. Պոլսի «Լուսարձակ» թերթի արտոնատեր և խմբագիր) 988
Զերաղ Մինաս (հասարակական գործիչ Կ. Պոլսում) 281, 1015
Զերքեղյան Սամսոն (հրապարակագիր) 413
Զերքեզով (ռուսաստանցի փաստաբան) 424
Զիարով (ռուսաստանցի փաստաբան) 424
Զիլինգարյան Գևորգ (ՍԴՀԿ գործիչ Թեհրանում) 580
Զիլինգիրյան Եղիշե եպիսկոպոս 1121
Զիխաչև Պյոտր Ալեքսանդրովիչ (ռուս աշխարհագրագետ և երկրաբան) 281
Զինչինյան (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 476
Զիֆթե-Սարաֆ Օննիկ (արևմտահայ գրող) 403
Զխեիձե Նիկոլայ (պետական դումայի անդամ, մենշևիկ պարագլուխ) 141, 155

Զոլաքեան Յակոբ (սիրիահայ պատմաբանասեր, մանկավարժ) 27, 28
Զոպանյան Արշակ (գրող, խմբագիր, կուսակցական և հասարակական գործիչ) 45, 132, 277, 289, 290, 330, 358, 832, 857
Զուբար Գևորգ (իրավաբան) 413
Զուբար Պողոս (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 477
Զուգասդյան Զավեն (ծածկանունը՝ Տիգրան Զավեն) (խմբագիր) 65

Պ

Պալասանյան Ստեփան («Մշակ» թերթի աշխատակից) 503
Պալաքյան Գրիգորիս վարդապետ 330, 338, 340, 341
Պայլաններ (արքունի ճարտարապետների տոհմ Կ. Պոլսում) 809
Պայլան Կարապետ (արքունի ճարտարապետ Կ. Պոլսում) 811
Պայլան Հակոբ (արքունի ճարտարապետ Կ. Պոլսում) 809, 811
Պայլան Նիկողայոս (արքունի ճարտարապետ Կ. Պոլսում) 809, 811
Պայլան Սարգիս (արքունի ճարտարապետ Կ. Պոլսում) 809, 811
Պայլան Տրդատ եպիսկոպոս 125, 1121
Պաղտատի զատէ (տե՛ս Բաղդադի զաղէ Արդուլ Կադեր)
Պաղր խան (տե՛ս Բաղր խան)
Պանիրյան Հայրապետ (ՀՅԴ Թավրիզի կենտրոնական կոմիտեի անդամ, գրքի հեղինակ) 165, 166, 168, 169, 172, 521, 691
Պապաչա (տե՛ս Հրաչ)
Պապաջանյան Միքայել (պետական դումայի անդամ) 490, 512, 513
Պապիկյան Հակոբ (օսմանյան խորհրդարանի անդամ, իթթիհադական) 30, 37, 39–41, 1093, 1114, 1118
Պաստրյուլին (գնդապետ, Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետ) 349
Պավել Ռոմանով (Ռուսաստանի կայսր) 449
Պավլովիչ (պետական դումայի անդամ) 155
Պատալով Ս. (ռուս բժիշկ) 156
Պատկանյան Գաբրիել քահանա («Արարատ» չաբաթաթերթի հրատարակիչ և խմբագիր) 502
Պատկանյան Ռափայել (բանաստեղծ, ազգային գաղափարախոս) 503
Պարզյանց Սուքիաս արքեպիսկոպոս (Մայր աթոռի միաբան) 130, 403, 410, 413, 1120
Պարթևյան Սուրեն (բուն անունով՝ Պարտիզպանյան Սիսակ) (գրող, խմբագիր) 29, 30, 32, 64, 815, 823, 857
Պարոնյան Հակոբ (անվանի երգիծագիր, խմբագիր) 827, 985
Պետերսոն Ն. (Կովկասի փոխարքայի օգնական) 157
Պետրոս Զինագործ (դաշնակցական գործիչ) 173
Պետրոս Մեծ Ռոմանով (Ռուսաստանի առաջին կայսրը) 151, 449
Պետրոսյան Համբարձում (սղերդցի արհեստավոր) 173
Պետրոսյան Ղարիբ (սղերդցի արհեստավոր) 173
Պետրով (ռուսական պետական բարձրաստիճան ծառայող) 343
Պետրովիչ (պարսկական հեղափոխության Ավարայրի կռիվներում

զոհված մարտիկ) 220
Պերովսկայա Աննա Լվովնա (ռուսաստանցի նարոդնիկ հեղափոխական) 414
Պերևերզև (ռուսաստանցի փաստաբան) 424, 426, 459, 484
Պիղատոս Պոնտացի (Պաղեստինի հռոմեական կառավարիչ) 587
Պիմեն վարդապետ (Ռուս ուղղափառ եկեղեցու հոգևորական) 343
Պինկերտոն Նաթ (ամերիկյան խուզարկողական գործակալության պարագլուխ) 582
Պիոնյան Կարապետ (ՀՅԴ Թավրիզի կենտրոնական կոմիտեի անդամ, դպրոցի տնօրեն) 171, 189
Պլատոնով (դատական քննիչ Ռուսաստանում) 468
Պլո Թագավոր (տե՛ս Ղարիբյան Համբարձում)
Պոդգուրսկի (Բաքվի քաղաքապետի օգնական) 426
Պոլլան (Ռուսաստանի սենատի անդամ) 483
Պոլնով (ռուսաստանցի փաստաբան) 424
Պոխիտոնով (Ռուսաստանի հյուպատոսը Թավրիզում) 165
Պոկլևսկի-Կոզել Ս. Ս. (ռուսաստանցի դիվանագետ Թեհրանում) 563, 593, 594, 598, 608, 614, 617, 652, 675, 676, 702, 715
Պոկրովսկի Ի. Պ. (պետական դումայի անդամ) 533
Պողոս աղա (Ադանայի նահանգի Բախչե ավանի հայ երևելի) 24
Պողոսյան Նիկոլ (ծածկանունը՝ Վանա Իշխան) (ՀՅԴ գործիչ) 308, 309
Պողոսյան Ստեփան (Խորհրդային Հայաստանի պետական և կուսակցական գործիչ, պատմաբան) 964, 965
Պոյաճյան Հակոբ (օսմանյան խորհրդարանի անդամ) 911, 1017, 1048
Պոյաճյան Համբարձում (ծածկանունը՝ Մեծն Մուրադ) (ՍԴՀԿ ֆեդայապետ, օսմանյան խորհրդարանի անդամ) 36, 882, 911, 1017
Պոյաճյան Հովհաննես (Սամսունի կառավարիչ) 1074
Պոպովիցկի (դատական փորձաքննիչ Ռուսաստանում) 479
Պոտտո Վասիլի Ալեքսանդրովիչ (Ռուսաստանի բանակի գեներալ, ռազմական պատմաբան) 323, 324
Պուլտուգյան եղբայրներ (Ադանայում կախաղան հանված երեք եղբայրներ) 38
Պուշկին Ալեքսանդր Սերգեևիչ (ռուս բանաստեղծ) 146, 156,
Պուրիշկևիչ Վլադիմիր Միտրոֆանովիչ (պետական դումայի սևհարյուրյակային անդամ) 138, 140–148, 150, 151, 154–157
Պոռչյան Պերճ (գրող) 503
Պրեսանսե Ֆրանսիս դը (ֆրանսիացի հրապարակագիր և հասարակական գործիչ) 40, 41, 354
Պրուդոն Պիեռ-Ժոզեֆ (ֆրանսիացի փիլիսոփա) 857
Պոչնաք Սալիհ (մուսուլման հայակեր երևելի անձ Ադանայում) 1117

Ջ

Ջավիդ բեյ (Օսմանյան կայսրության ֆինանսների նախարար) 801, 887, 888, 894, 1039, 1050, 1061, 1062
Ջավիդ փաշա (Ալբանիա ուղարկված

օսմանյան զորքերի հրամանատար) 868
Ջելալ Նուրի (երիտթուրք գաղափարախոս) 852, 945
Ջեմալ բեյ (Կեսարիայի, ապա Նիկոմեդիայի կառավարիչ, ապա Խարբերդի նահանգապետ) 994, 1074
Ջեմալ բեյ (Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար) 1023
Ջեմալ փաշա (տե՛ս Ահմեդ Ջեմալ փաշա)
Ջեմալէդդին էֆենդի (Օսմանյան կայսրության շեյխ-ուլ-իսլամ) 1054
Ջին Թորոս (բուն ազգանունով՝ Տաղտաղանյան) (ոստիկան, Կարս-Բազարում հայերի ինքնապաշտպանության կազմակերպիչ) 25
Ջհանգիր խան (բախտիար զորահրամանատար Պարսկաստանում) 557
Ջհանչահ խան (Խամսայի կառավարիչ Պարսկաստանում) 554
Ջուլիտինի Ջովանի (Իտալիայի վարչապետ) 913
Ջումշուդ (ՀՅԴ մարտիկ Թավրիզում) 189

Ռ

Ռազմիկ (տե՛ս Արտեմ)
Ռահիմ խան (տե՛ս Ջելերիանլու Ռահիմ խան)
Ռային Էսմայիլ (իրանցի պատմաբան) 771
Ռաչիդ (քուրդ ավազակապետ Արևմտյան Հայաստանում) 873
Ռաչմաճյան Տիգրան (ՀՅԴ գործիչ, մանկավարժ, դպրոցի տնօրեն) 387
Ռեզա (չիաների 12 գլխավոր իմամներից) 559
Ռեզա (մազանդարանցի երիտասարդ՝ հեղափոխության կողմնակիցների ճամբարում) (տե՛ս Ռեզա շահ Փահլավի)
Ռեզա-զուլի խան (չահսևան զորահրամանատար Պարսկաստանում) 570
Ռեզա շահ Փահլավի 552, 560, 768
Ռեյնկե (դատախազ Ռուսաստանում) 484
Ռեչիդ Դովլե (տիտղոս Է. ավազակապետ Ատրպատականում) 626, 642
Ռեչիդ Սոլթան (տիտղոս Է. հակասահմանադրական գործիչ Խորասանում) 632, 639
Ռեչիդ օլ Մոլք (բուն անունով՝ Նաղի խան) 552, 570, 584
Ռզա (քուրդ ավազակապետ Արևմտյան Հայաստանում) 873
Ռընան Էռնեստ (ֆրանսիացի փիլիսոփա) 819
Ռիդ Մայն (գրող) 143
Ռիզա բեյ (բժիշկ, Իթթիլաֆի պարագլուխներից) 971
Ռիզա Թևֆիք (երիտթուրք գործիչ, փիլիսոփա) 895, 896, 971
Ռիզա Նուրի (օսմանյան խորհրդարանի անդամ) 894
Ռիզախ (բռնագրավիչ՝ Արևմտյան Հայաստանում) 75
Ռիֆաթ փաշա (Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար) 786, 787, 808
Ռյազանով (Լոռու նախկին գավառապետ) 436, 437
Ռչտունի Գուրգեն (ՍԴՀԿ գործիչ Ղազվինում) 579
Ռչտունի Գևորգ (ՍԴՀԿ գործիչ Թեհրանում) 580
Ռոբեսպիեր Մաքսիմիլիեն (Ֆրան-

սիական մեծ հեղափոխության ղեկավարներից) 739
Ռոդաչև Նիկոլայ Միխայլովիչ (ռուսաստանցի նարոդնիկ հեղափոխական) 414
Ռոմանով (Ռուսաստանի հյուպատոսը Ղազվինում) 252, 256
Ռոմանովներ (Ռուսաստանի արքայական-կայսերական տոհմ) 501, 700
Ռոմանով Միխայիլ Նիկոլաևիչ (մեծ իշխան) 156
Ռոմանովա Ալեքսանդրա Ֆեոդորովնա (Նիկոլայ II-ի կինը) 340, 495, 500
Ռոմանովա Մարիա Ֆեոդորովնա (Ալեքսանդր III-ի կինը, Նիկոլայ II-ի մայրը) 284, 500
Ռոստոմ (պարսկական հեղափոխության Արդաբիլի կոիվներում զոհված հայ մարտիկ) 769
Ռոստոմ (բուն անունով՝ Զորյան Ստեփան) (ՀՅԴ հիմնադիրներից) 171, 174, 178, 185-189, 229, 233, 295, 318, 522, 523, 691, 757
Ռոստոմյան (Ռոստոմով) (գաղափարապաշտ գրող) 306
Ռուբեն աբեղա (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 388
Ռուբէն (Թիֆլիսի «Սուրհանդակ» թերթի նամակագիր) 406
Ռուզվելտ Թեոդոր (ԱՄՆ նախագահ) 1018

Ս

Սաադ Դովլե (բուն անունով՝ Ալի խան) (Պարսկաստանի արտաքին գործերի նախարար) 223-225
Սաադեթյան Սմբատ եպիսկոպոս (Կարինի թեմի առաջնորդ) 403, 965, 1121
Սաբաթիեներ (Ադանայի նահանգի Համիդիե ավանում հաստատված ֆրանսիացի ընտանիք) 22
Սաբաթիե Շարլ (Ադանայի նահանգի Համիդիե ավանում հաստատված ֆրանսիացի երիտասարդ) 22
Սաբահէդդին (տե՛ս Մեհմեդ Սաբահէդդին)
Սաղրկ բեյ (գնդապետ, Իթթիհադին ընդդիմադիր գործիչ) 969, 971
Սազոնով Սերգեյ Դմիտրիևիչ (Ռուսաստանի արտաքին գործերի նախարար) 615, 616, 638, 679, 707, 711,
Սաթթար խան (հեղափոխության ղեկավարը Թավրիզում) 165-168, 182, 185, 187-189, 196, 198, 200, 203-205, 207-209, 215, 217, 218, 220, 229, 231, 235-237, 248, 250, 520, 551, 565, 566, 568, 592, 594-603, 610, 648, 671, 683, 684, 692, 717, 759
Սաթունյան Գարեգին արքեպիսկոպոս (Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդ) 279, 280, 282
Սաթունյան Նիկողայոս (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 405, 411, 423, 475
Սաիդ (քուրդ ավազակապետ Վասպուրականում) 1080, 1084
Սաիդ փաշա (Օսմանյան կայսրության մեծ վեզիր) 897, 909, 911, 912, 933, 974, 976, 992, 1010, 1011, 1023, 1033, 1049-1054, 1068
Սալար Դովլե (բուն անունով՝ Աբոլֆաթհ Միրզա Ղաջար) (Մեհմեդ Ալի շահի եղբայրը, հակասահմանադրական զորահրամանատար

Պարսկաստանում) 549, 572, 614, 615, 633, 634, 637, 638, 641, 642, 650–652, 656, 664, 673–675, 677, 685, 686, 691, 698, 699, 708, 709, 711, 713, 726–728, 730, 734, 738, 743, 745
Սալար Դովլէ (տե՛ս Սալար Դովլե)
Սալար Էտ Դովլէ (տե՛ս Սալար Դովլե)
Սալար-ուդ-Դովլէ (տե՛ս Սալար Դովլե)
Սալար Հիշամ (հեղափոխական բախտիարների զորահրամանատար) 268
Սալար Մոֆախխամ (տե՛ս Սարդար Մոֆախխամ)
Սալար Ֆաթեհ (տե՛ս Սարդար Ֆաթեհ)
Սալդատ (պարսկական հեղափոխության կռիվներում զոհված կովկասցի կամավորի մականունը) 561
Սալեհ Աբբաս Ալի (իրանցի պատմաբան) 771
Սահաբը Իխթիար (տիտղոս Է. Երևելի անձ Պարսկաստանում) 733
Սահակ Բ Խապայան կաթողիկոս Կիլիկիո 5, 29, 120, 121
Սահակյան Ավետիք (ծածկանունը՝ Հայր Աբրահամ) (ՀՅԴ գործիչ) 304, 423, 484
Սահակյան Կորյուն վարդապետ (Գանձակի թեմի առաջնորդ, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 305, 311, 423, 435, 475, 483
Սաղաթելյան Հովհաննես (պետական դումայի անդամ) 138, 150–152, 512, 513
Սամադ խան (տե՛ս Շուջաա Դովլե)
Սամէդ խան (= Սամադ խան) (տե՛ս Շուջաա Դովլե)
Սամսամ Սալթանե (բուն անունով՝ Նաջաֆ-ղուլի խան Բախտիարի) (սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում, վարչապետ) 221, 222, 259, 597, 628, 629, 637, 652, 653, 681, 706, 724
Սամսոն խան (տե՛ս Թադևոսյան Ստեփան)
Սայամով (ՀՅԴ ահաբեկիչ Ռուսաստանում) 423
Սայիտ աղա (Թուրք երևելի Ադանայի նահանգի Բախչե ավանում) 1117
Սանի Դովլե (բուն անունով՝ Մորթազա-ղուլի խան) (Պարսկաստանի ֆինանսների նախարար) 618
Սապահ-Գիւլեան Ստեփան (բուն անունով՝ Տեր-Դանիելյան Ստեփանոս) (ՍԴՀԿ ղեկավար գործիչ) 79, 82, 957,
Սապրի Էֆէնտի (հարցաքննիչ դատավորի փոխանորդ Օսմանյան կայսրությունում) 1101
Սասունի Կարո (ՀՅԴ գործիչ, գրքի հեղինակ, խմբագիր) 62
Սարաջյան Հովսեփ արքեպիսկոպոս 965–967, 1121
Սարբազ Խեչո (ՀՅԴ մարտիկ) 305, 476
Սարգիս (պարսկական հեղափոխության կռիվներում վիրավորված պարսկահայ մարտիկ) 561
Սարգիս (պարսկական հեղափոխության կռիվներում գերի ընկած հայ մարտիկ) 561
Սարգիսյան Հակոբ («Բութանիա» թերթի խմբագիր, թարգմանիչ և «Կիլիկիա» գրախանութի սեփականատեր Կ. Պոլսում) 41, 1114

Սարգսյան Եփրեմ (ՀՅԴ գործիչ) 478
Սարգսյան Քրիստափոր (Թերթի խմբագիր) 307
Սարդար Ասադ (բուն անունով՝ Ալի-զուլի խան Բախտիարի) (սահմանադրական բախտիարների զորահրամանատար) 221, 222, 259, 260, 263–266, 268, 271, 273, 274, 519, 521, 530, 531, 539, 552, 575, 593, 596, 597, 602, 688, 731, 733
Սարդար Արչադ (տիտղոս է. տե՛ս Արչադ Դովլե)
Սարդար Աֆխամին (բուն անունով՝ Աղա Բալախան) (Գիլանի նահանգապետ) 247
Սարդար Բահադուր (Սարդար Ասադի որդին) 552, 561, 565, 566, 569–573, 575, 576, 584–586, 596, 597, 633, 655, 674, 731
Սարդար Զաֆար (բուն անունով՝ Խոսրով խան Բախտիարի) (սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 673, 674
Սարդար խան (տիտղոս է. խոջարեկլուցի զորահրամանատար) 574
Սարդար Մանսուր (տիտղոս է. զորահրամանատար Պարսկաստանում) 520
Սարդար Մոզաֆֆար (տիտղոս է. հակասահմանադրական զորահրամանատար Պարսկաստոնում) 251
Սարդար Մոհթալիոն (տիտղոս է. սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 655
Սարդար Մոհթեշամ (տիտղոս է. սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 674
Սարդար Մուխի (տե՛ս Մոիզ Սոլթան)
Սարդար Մոֆախխամ (տիտղոս է. սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 164, 259, 673, 674
Սարդար Նուսրեթ (տե՛ս Զելերիանլու Ռահիմ խան)
Սարդար Ջենգ Բախտիարի (սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 674
Սարդար Ֆաթեհ (նույն ինքը՝ Սալար Ֆաթեհ, բուն անունով՝ Միրզա Ալի խան Սարթիփ) (զորահրամանատար Պարսկաստանում) 251, 266, 672
Սարհատ (տե՛ս Ադամայան Մկրտիչ)
Սարուխանյան Թ. («Էրիվանսկի վեստնիկի» լրագրող) 401
Սարուխանյան Սարգիս (ՀՅԴ գործիչ) 183
Սաքոնով (Ռուսաստանի բանակի գեներալ) 426
Սաֆա՛ի Էբրահիմ (իրանցի պատմաբան) 164, 771
Սաֆարալիններ (ռուսահպատակ ընտանիք Պարսկաստանում) 619
Սեթխանյան Ծատուր խան (հայազգի պետական գործիչ Պարսկաստանում) 213
Սեթո (ՀՅԴ մարտիկ Թավրիզում, զոհվել է Ալվարի կռվում) 180, 220, 769
Սեիդ Ալի (չարագործ Խիզանում) 75
Սեղբոսյան Սիմոն Ս. (բժիշկ, Ազգ. կեղրոնական վարչության ատենապետ) 833, 879, 881, 882, 885
Սեյիդ Աբդուլլա (մուջտեհիդ Պարսկաստանում) 608
Սեյիդ Աբդուլլահ (տե՛ս Աղայե Բեհբըհանի)
Սեղբոսյան Հրաչ (ՀՅԴ փոխխմբապետ) 173

Սենեմ Խանում (արյունախում Թրքուհի Ադանայի նահանգի Խայբրլը գյուղում) 20
Սեռքելի Խալիդ էֆենդի (Մուսալեռան մուդիր) 28
Սեպեխդար (տե՛ս Սիփահդար)
Սերգեև (ավագ դատախազի օգնական Ռուսաստանում) 424, 470
Սերերրյակովներ 763
Սերենգյուլյան Հովհաննես (ծածկանունը՝ Վարդգես) (ՀՅԴ գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ) 36, 319, 825, 876, 895, 896, 911, 1023, 1057, 1061, 1068, 1069
Սերոբյան Մուշեղ եպիսկոպոս (Ադանայի թեմի առաջնորդ) 17, 29, 39, 125, 855, 950
Սէթօ (տե՛ս Սեթո)
Սիամանթո (բուն անունով՝ Յարճանյան Ատոմ) (բանաստեղծ) 45, 65, 737, 955,
Սիղամանով-Էրիսթով (իշխան, փաստաբան Ռուսաստանում) 424, 425
Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոս Ամենայն հայոց 105
Սիմեոն վարդապետ Երևանցի (տե՛ս Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոս Ամենայն հայոց)
Սիմոն (ՀՅԴ ալեքսանդրապոլցի մարտիկ Թավրիզում) 194
Սիմոն (հայ մարտիկների խմբի հրամանատար Պարսկաստանում) 708
Սիմոնյան Սիմոն (ՍԴՀԿ գործիչ Էնզելիում) 579
Սիմոնյան Ստեփան (ՍԴՀԿ գործիչ Ռեշտում) 579
Սիմոնյանց Պետրոս («Մեղու Հայաստանի» պարբերականի հրատարակիչ և խմբագիր) 502
Սիփահդար (մյուս տիտղոսը՝ Նաիբ Սալթանե, բուն անունով՝ Ֆաթհուլլահ խան Ռեշտի) (խոշոր կալվածատեր Պարսկաստանում, վարչապետ) 164, 165, 168, 204, 247, 253, 255-257, 260, 264, 266, 267, 269, 271, 273, 274, 519, 521, 531, 539, 546, 568, 574-576, 578, 586, 590-593, 612, 622, 625, 627, 628, 651, 681, 698, 718, 731, 733, 734
Սկարյատին (ռուսաստանցի փաստաբան) 424, 426, 459
Սկարնյակով (ռուսաստանցի փաստաբան) 424
Սկոբելև Միխայիլ Դմիտրիևիչ (Ռուսաստանի բանակի գեներալ, գեներալ-ադյուտանտ) 541
Սմբատ (պարսկական հեղափոխության Թեհրանի կոիվներում զոհված հայ մարտիկ) 258, 769
Սմբատյան Մեսրոպ արքեպիսկոպոս (Մայր աթոռի միաբան) 130, 131, 290
Սմիրնով Կ. (ռուսական մամուլում հոդվածի հեղինակ) 567
Սմիրնով Կ. (գեռահաս Ահմեդ շահ Ղաջարի դաստիարակ) 739, 770
Սյունդյուձյան Սարգիս (ծածկանունը՝ Սարգիս Սուին) (Ազգ. երեսփոխական ժողովի անդամ) 43, 1013, 1014, 1048, 1114
Մնարսկի Իվան Ալեքսանդրովիչ (գեներալ, Ատրպատական ներխուժած Ռուսաստանի զորքերի հրամանատար) 229, 230, 233, 234, 542, 716, 717
Սոլթան Աբդոլ Մեջիդ Միրզա Ղաջար (տե՛ս Էյն Դովլե)
Սոլթան Ահմեդ շահ Ղաջար 274, 517, 539, 540, 542, 546, 590, 620, 637,

667, 748–750
Սոկոլով Ն. (ռուսաստանցի փաստաբան) 355, 424, 459, 479, 483, 484
Սողոմոն Իմաստուն (հրեից թագավոր) 1093
Սողոմոնյան Հայկ (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 304
Սողոմոնյան Նիկողայոս քահանա (Գանձակի Աղջաղալա գյուղի հոգևոր հովիվ) 305
Սովլաթ Դովլե (տիտղոս Է. կաչկայների ցեղապետ Պարսկաստանում) 632, 651, 709
Սոտնիկյան Պ. («Ռեչ» պարբերականի լրագրող) 401
Սուին Սարգիս (տե՛ս Սյունդյուճյան Սարգիս)
Սուլեյման Միրզա Ղաջար (Պարսկաստանի մեջլիսում ընդդիմության ղեկավար) 545
Սուլեյման Նազիֆ բեյ («Օսմանլը» թերթի հրապարակագիր) 34
Սունդուկյան Գաբրիել (թատերագիր) 509
Սուջյան Արտաչես (ՀՅԴ մարտական խմբի հրամանատար Պարսկաստանում) 715
Սուվորին Ս. Ս. (ռուս մեծահարուստ, խավարամոլ, «Նովոյե վրեմյա» թերթի սեփականատեր) 323
Սուրեն (տե՛ս Տեր-Մկրտչյան Ստեփան)
Սուրենյան Ավետիս (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 826
Սուրենյանց Գևորգ արքեպիսկոպոս (տե՛ս Գևորգ Ե Տփղխեցի Սուրենյանց կաթողիկոս Ամենայն հայոց)
Սուրենյանց Վարդգես (անվանի գեղանկարիչ) 479
Սուքիաս քահանա (Կ. Պոլսում) 883
Սուքիասյան Եփրեմ վարդապետ (ապա եպիսկոպոս) (Վրաստանի թեմի ժամանակավոր կառավարիչ) 332, 345, 1120
Սպանդարյան Սուրեն (բոլշևիկ գործիչ) 364, 580–583
Սպանդարյան Սպանդար (կոմունիստ գործիչ) 581
Սպարթալը Ստեփան (օսմանյան խորհրդարանի անդամ) 319, 971
Սպենդիար(յան) Հովհաննես (իրավաբան) 403
Սվազլյան Վերժինե (ազգագրագետ-բանահավաք) 46
Սվաճյան Խաչիկ (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 1048
Ստեպանով Վասիլի (պետական դումայի անդամ) 154
Ստեփանե Խորեն եպիսկոպոս («Հայկական աշխարհ» պարբերականի հրատարակիչ և խմբագիր) 502
Ստեփանյան Ալեքսանդր (բժիշկ, հասարակական գործիչ Թիֆլիսում) 126
Ստեփանյան Ասլան (խմբապետ Ասլան, Ասլան խան) (ՀՅԴ խմբապետ Պարսկաստանում) 523
Ստեփանյան Կ. (բժիշկ) 426
Ստեփանյան Հարություն (ՀՅԴ Թեհրանի կենտրոնական կոմիտեի անդամ) 689
Ստեփանյան Հովակ (ՀՅԴ գործիչ) 647, 768
Ստեփանյան Միքայել (ՀՅԴ Թեհրանի կենտրոնական կոմիտեի անդամ) 689
Ստեփանյան Ստեփան (ծածկանունը՝ Բալաջան) (ՀՅԴ գործիչ) 171, 174, 233, 735

Ստոլիպին Պյոտր Արկադևիչ (Ռուսաստանի վարչապետ) 103, 113, 133, 140, 148–150, 157, 228, 282, 291, 303, 312, 317, 318, 322, 323, 359, 360, 421, 591, 634
Ստրուկով (Ռուսաստանի բանակի գեներալ) 323
Սրապիոնյան Սարգիս (ծածկանունը՝ Լուկաչին) (ՍԴԲՀԿ, ապա բոլշևիկ կուսակցական ու պետական գործիչ) 372
Սրինգ (տե՛ս Մեհրաբյան Արշակ)
Սրվանձտյանց Համազասպ (անվանի ֆեդայի) 295, 304, 423, 477, 483
Սև Գևորգ (ՀՅԴ խմբապետ, պարսկական հեղափոխության Սոֆիանի կռիվներում զոհված հայ մարտիկ) 220, 769
Սևակ Ռուբեն (բուն ազգանունով՝ Զիլինգիրյան) (բանաստեղծ) 45
Սևիկյան Ա. (տե՛ս Գյուլխանդանյան Աբրահամ)
Սևքարեցի Սաքո (բուն անունով՝ Մովսիսյան Սարգիս) (անվանի ֆեդայի) 181

Վ

Վակս Լ. (խորհրդային արևելագետ) 678, 764, 974
Վահանյան (տե՛ս Յուսուֆյան Հովհաննես)
Վահանյան Պ. (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 422
Վայեզի (Եփրեմ խանի դամբանախոսներից Թավրիզում) 733, 734
Վանա Իշխան (տե՛ս Պողոսյան Նիկոլ)
Վանա Սարգիս (տե՛ս Օղաբաչյան Պողոս)
Վանովսկի (գեներալ, Ռուսաստանի պետական բարձրաստիճան պաշտոնատար) 362
Վասրֆ (իթթիհադական զինվորական ղեկավար) 925
Վատացի Է. (Ռուսաստանի սենատի անդամ, Կովկասի փոխարքայի օգնական) 343
Վատրոլսկի Ն. Պ. (իշխան, Ռուսաստանի բանակի գնդապետ) 524, 594
Վարանդյան Միքայել (բուն ազգանունով՝ Հովհաննիսյան) (ՀՅԴ գործիչ, պատմաբան) 66, 176–178, 251, 252, 258, 306, 318, 321, 322, 354, 420, 444, 448, 487, 633, 728, 752, 754, 760, 768, 906, 1007, 1008
Վարդապարյան Բագրատ ծայրագույն վարդապետ (ապա եպիսկոպոս) 125, 389, 495, 1082
Վարդապարյան Փիլիպոս (Թիֆլիսաբնակ բարեգործ) 316
Վարդան (պարսկական հեղափոխության կռիվներում վիրավորված արևմտահայ մարտիկ) 561
Վարդանյան Ավետիս (սահմանադրական մարտիկների խմբապետ Պարսկաստանում) 552, 557, 561, 595, 597
Վարդանյան-Նազարբեկ(յան) Մարո (ՍԴՀԿ հիմնադիրներից) 356
Վարդանյան Վարդան (ՀՅԴ Թավրիզի կենտրոնական կոմիտեի անդամ) 172
Վարդանյան Օ. (Թիֆլիսի «Հովիտ» չաբաթաթերթի հոդվածագիր) 385
Վարդանյան Ֆլորա (ՍԴՀԿ գործիչ Թավրիզում) 200
Վարդգես (տե՛ս Սերենգյուլյան Հովհաննես)

Վարժապետյան Ներսես արքեպիսկոպոս (Կ. Պոլսի պատրիարք) 377
Վելիկո (Եփրեմ խանի խմբի վրացի կամավոր) 247
Վելիչկո (պետական դումայի խավարամոլ անդամ) 146, 324
Վեհապետյան Մկրտիչ եպիսկոպոս 125
Վեու Պոլ դյու (ֆրանսիացի հեղինակ) 36
Վերամինսկի Մահմուդ (չեչեն, երևելի անձ Պարսկաստանում) 619
Վերմիշյան (Վերմիշև) Քրիստափոր (Թերթի խմբագիր) 307, 308, 666
Վերյովկին (Ռուսաստանի արդարադատության նախարարի տեղակալ) 469
Վերն Ժյուլ (գիտաերևակայական ժանրի վեպերի հեղինակ) 143
Վեքիլով (Ղազախի կովկասյան թուրք ղեկավարներից) 315, 436
Վիլսոն Վուդրո (ԱՄՆ նախագահ) 1018, 1019
Վիկտոր-Էմմանուիլ III Սավոյացի (Իտալիայի թագավոր) 918
Վիշնևսկի (Ռուսաստանի սենատի օբեր-քարտուղար) 460
Վոլ (մենշևիկ հոդվածագիր) 577, 578
Վոլկենշտեյն (ռուսաստանցի փաստաբան) 424, 426, 479, 484
Վոստորգով հայր (պետական դումայի խավարամոլ անդամ)
Վորոբանով (զորավար, Թավրիզում Ռուսաստանի զորքերի հրամանատար) 717
Վորոնցով-Դաշկով Իլարիոն Իվանովիչ (կոմս, գեներալ-ադյուտանտ, Կովկասի փոխարքա) 114-117, 130, 135-138, 140, 141, 145, 147-150, 152-155, 229, 255, 288, 322, 324, 325, 341-343, 376, 416, 417, 448, 451, 494, 563, 615, 721
Վորոնցովա-Դաշկովա Ելիզավետա Անդրեևնա (կոմսուհի, Կովկասի փոխարքայի կինը) 341,
Վորովսկի Վացլավ Վացլավովիչ (բոլշևիկ հրապարակախոս) 533
Վռամյան Արշակ (բուն անունով՝ Դերձակյան Օննիկ) (ՀՅԴ գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ) 382, 790, 814, 1014, 1037-1040
Վրացյան Սիմոն (ՀՅԴ գործիչ, ՀՀ վարչապետ) 138, 174, 297, 317, 318, 327, 328, 358, 486, 490, 726
Վոլթեր (բուն անունով՝ Արուե Մարի-Ֆրանսուա) (ֆրանսիացի փիլիսոփա, գրող և պատմաբան) 819

Տ

Տաղավարյան Նազարեթ (խմբագիր, օսմանյան խորհրդարանի անդամ) 36, 883, 899, 911, 970, 971, 1028, 1048
Տատա (ՀՅԴ արցախցի մարտիկ Թավրիզում) 180
Տաֆտ Վիլյամ Հովարդ (ԱՄՆ նախագահ) 353, 680, 1018, 1019
Տեպենկո Նիկոլայ Վասիլևիչ (պետական դումայի անդամ) 424
Տեր-Անդրեասյան Երվանդ (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 405
Տեր-Ավետիքյան Ստեփան (պետական դումայի անդամ, ՀՅԴ դատական գործով մեղադրյալ) 423, 483, 484
Տեր-Դանիելյան Գրիչ(ա) (Եփրեմ խանի թիկնապահը) 269
Տեր-Եղիայան Զավեն ծայրագույն վարդապետ (ապա եպիսկոպոս)

392, 965, 1121
Տեր-Թադևոսյանց Հովհաննես (տե՛ս Թումանյան Հովհաննես)
Տեր-Իսրայելյան Աշոտ քահանա (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 477
Տեր-Կարապետյան Գեղամ (ծածկանունը՝ Տատրակ) (ՀՅԴ գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ) 911
Տեր-Հակոբյան Արշակ (ծածկանունը՝ Քեչիչզադե) (հրապարակագիր) 192
Տեր-Հովհաննիսյան Աբգար (ՍԴՀԿ գործիչ Ղազվինում) 579
Տեր-Հովհաննիսյան Իսահակ (ՍԴՀԿ գործիչ Էնզելիում) 579
Տեր-Հովհաննիսյան Նիկոլայ (Ատրպատականի Թեմական խորհրդի անդամ) 196
Տեր-Ղուկասյաններ 763
Տեր-Մատթեոսյան Մատթեոս վարդապետ (ս. Էջմիածնի սինոդի անդամ) 389, 495
Տեր-Մարտիրոսյան Կամսարական (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 477
Տեր-Մինասյան Երվանդ վարդապետ (Մայր աթոռի միաբան, ապա կարգաթող, բանասեր) 336, 401, 581, 823
Տեր-Մկրտչյան Կարապետ ծայրագույն վարդապետ (ապա եպիսկոպոս) (Ատրպատականի թեմի առաջնորդ) 125, 193, 196, 202, 207, 211, 212, 227, 232, 233, 332, 335, 380, 403, 405-408, 413, 543, 609, 617, 618, 625, 626, 636, 642, 643, 668, 669, 699, 719, 722-724, 747, 1122
Տեր-Մկրտչյան Մխիթար ծայրագույն վարդապետ (ապա եպիսկոպոս) (Աստրախանի թեմի առաջնորդ) 609, 1120
Տեր-Մկրտչյան Ստեփան (ծածկանունը՝ Սուրեն) (ՀՅԴ գործիչ) 184
Տեր-Մովսեսյան Դավիթ (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 883, 1070
Տեր-Մովսիսյան Մեսրոպ վարդապետ (ապա ծայրագույն վարդապետ, հետո եպիսկոպոս) (ծածկանունը՝ Մագիստրոս, Մայր աթոռի միաբան, բանասեր) 279, 282, 391, 403-405, 410, 495, 609, 1120
Տեր-Ներսեսով (տե՛ս Տեր-Ներսիսյան)
Տեր-Ներսիսյան (դատական փորձաքննիչ Ռուսաստանում) 479
Տեր-Ստեփանյան Վահան քահանա (նահատակված Ադանայի նահանգի Բախչե ավանում) 24
Տերյան Վահան (բուն ազգանունով՝ Տեր-Գրիգորյան) (բանաստեղծ) 160, 480
Տերունյան Մաղաքիա եպիսկոպոս 1121
Տերտերյան Համբարձում (ՀՅԴ գործիչ) 328
Տէմիրճեան Վարդան եպիսկոպոս (Կիլիկիո աթոռի միաբան, պատմաբանասեր) 191, 273
Տէր Խաչատուրեան Արտաշէս (մատենագետ) 716
Տէր-Մկրտչեան Կարապետ եպիսկոպոս (տե՛ս Տեր-Մկրտչյան Կարապետ եպիսկոպոս)
Տէր-Յակոբեան Բարգէն (գրքի համահեղինակ) 191, 732, 756, 767
Տրրկովա Արիադնա (ռուսաստանցի արևելագետ) 1037-1040

Տիգրան (պարսկական հեղափոխությունի Խոյի կռիվներում զոհված հայ մարտիկ) 769
Տիգրան Զավեն (տե՛ս Զուգասզյան Զավեն)
Տիգրանյան Ա. (ՀՅԴ դատական գործով մեղադրյալ Ռուսաստանում) 426
Տիգրանյան Հ. (Ալեքսանդրապոլի նախկին քաղաքագլուխ) 512
Տիգրանյան Սիրական (Գևորգյան ճեմարանի դասախոս) 355, 475, 479
Տիզենհաուզեն Վ. (կոմս, Երևանի նահանգապետ) 131, 343, 402, 409, 426
Տիլպեր (տե՛ս Տիլպերյան Երվանդ)
Տիլպերյան Երվանդ (պոլսահայ հրապարակագիր և հասարակական գործիչ) 319
Տիմոշկին (պետական դումայի խավարամոլ անդամ) 140, 151, 155
Տիրայր վարդապետ (Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր) 403
Տոլստոյ Լև Նիկոլաևիչ (կոմս, ռուս գրող) 146, 368–370
Տոչյան Թ. (Թիֆլիսի «Հորիզոն» թերթի լրագրող) 401
Տրդատ Գ Արչակունի 385
Տուրգենև Իվան Սերգեևիչ (ռուս գրող) 146

Ր

Ռաֆֆի (բուն անունով՝ Մելիք-Հակոբյան Հակոբ) 108, 503, 543, 719, 768

Փ

Փալթաջի Էմեր (Թուրք մարդասպան Ադանայի նահանգի Բախչե ավանում) 24
Փահլավիներ (արքայական տոհմ Իրանում) 164
Փայլակ (տե՛ս Դերձակյան Ռուբեն)
Փանոս (պարսկական հեղափոխության Խոյ-Ավարայրի կռիվներում զոհված հայ մարտիկ) 220, 769
Փաստրմաջյան Գարեգին (ծածկանունը՝ Արմեն Գարո) (ՀՅԴ գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ) 295, 319, 911, 1039
Փափազյան Հակոբ-Աչոտ եպիսկոպոս 391, 402, 1121
Փափազյան Միքայել (ՍԴՀԿ գործիչ Թեհրանում) 580
Փափազյան Պարգև (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 1048
Փափազյան Վահան (ՀՅԴ գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ) 320, 871, 876, 882, 907, 908, 911, 925, 926, 1014, 1042, 1045
Փափազյան Վրթանես (գրող) 387, 402, 405
Փափազյան Քերովբե (Ադանայի թեմի առաջնորդարանի դիվանապետ) 5, 31, 120, 1116, 1117
Փիթոև (Թիֆլիսաբնակ հայ կապալառու) 152
Փիլոյան Սարգիս եպիսկոպոս (Սևանի մենաստանի վանահայր) 1120

Ք

Քալանթար Ալեքսանդր («Մշակ» թերթի խմբագրապետ) 126, 146, 329, 413, 503, 507, 512, 581, 789
Քալանթարյան (երդվյալ հավատարմատար Ռուսաստանում) 424
Քամրան Միրզա Ղաջար (տիտղոսները՝ Ազիզ օլ Մոլք, Նաիբ Սալթանե) (հակասահմանադրական պե-

տական գործիչ Պարսկաստանում) 223, 273, 619
Քանանյան Գևորգ (Լազարյան ճեմարանի վերատեսուչ) 355
Քանանյան Վարվառե (մոսկվաբնակ բարեգործ) 355, 357
Քաչալ Ղազար (տե՛ս Քոչարյան Ղազար)
Քաջազնունի Հովհաննես (ՀՅԴ գործիչ, ՀՀ վարչապետ) 322, 422
Քեմհաճեան (վարպետ փայտագործների տոհմ Կ. Պոլսում) 809
Քեչիչզադե (տե՛ս Տեր-Հակոբյան Արշակ)
Քեչիչյան Արշակ (խմբապետ Միհրանի եղբայրը) 329
Քեչիչյան Գևորգ (եղբայրասպանության զոհ ռամկավար գործիչ) 818
Քեչիչյան Կիրակոս աղա (Ադանայի նահանգի Հասանբեյլի գյուղի գյուղապետ) 23
Քեչիչյան Հարեթ (խմբապետ Միհրանի եղբայրը) 328, 329
Քեչիչյան Միհրան (ՀՅԴ խմբապետ, հետագայում՝ ՀՅԴ-ից անջատողական շարժման պարագլուխ) 304, 327-329, 434
Քեչիչյան Պետրոս (Ադանայի նահանգի Հասանբեյլի գյուղի գյուղապետի որդին) 24
Քեռռ Հուսեյն փաշա (բռնակալ Արճակում) 75, 873
Քեչյան Բյուզանդ («Բիւզանդիոն» թերթի խմբագրապետ) 44, 45, 833
Քեռի (տե՛ս Գավաֆյան Արշակ)
Քեսրաուի Ահմեդ (իրանցի պատմաբան) 164, 260, 261, 771
Քերբալաի զադե Էսադ (Թուրք մարդասեր Տարսոնում) 21
Քերիմ խան (Ղարադաղի բռնակալ) 550, 625, 626
Քերիմ խան (Նախիջևանի վերջին խանը) 704
Քիյառ Պիեռ (ֆրանսիացի խմբագիր) 63
Քիրիչճյան Լևոն (ծածկանունը՝ Լևոն Լարենց) (ամերիկահայ խմբագիր և գործիչ) 847, 877
Քյազիմ (Վանում քրդերի սպանած Թուրք սպա) 1085
Քյաթիպյան Սմբատ (օսմանյան խորհրդարանի պատգամավորության թեկնածու) 1017
Քյամիլ փաշա (Օսմանյան կայսրության մեծ վեզիր) 968, 969, 1054, 1055, 1068
Քոչարյան Ղազար (ծածկանունը՝ Քաչալ Ղազար) (ՀՅԴ խմբապետ) 219
Քրիստի Թոմաս վերապատվելի (դոկտոր, Տարսոնի Սեյնթ Պոլ կոլեջի տնօրեն) 21
Քրիստի Քարմելայթ (վերապատվելի Թոմաս Քրիստիի կինը) 21

Օ

Օգաբաչյան Պողոս (ծածկանունները՝ Վանա Սարգիս, Սարգիս Բարսեղյան) (ՀՅԴ գործիչ) 56
Օգանյան Անդրանիկ (ազգային հերոս) 486, 984
Օգանյան Գագիկ (հասարակական գործիչ, մանկավարժ) 984, 985
Օկոյաչվիլի Առաքել (բոլշևիկ Թիֆլիսում) 535
Օկսանին («Զեմչչինա» թերթի աշխատակից) 447
Օհանյան Ներսես (Ազգ. երեսփոխական ժողովի անդամ) 1013,

1014, 1048
Օհանջանյան Համազասպ (Համո) (ՀՅԴ գործիչ, ՀՀ վարչապետ) 295, 304, 309, 423, 426, 437, 438, 472, 476, 483
Օհանջանյան Սարգիս (ՀՅԴ գործիչ) 184
Օմար իբն Խաթթաբ (արաբ խալիֆ) 812
Օպոչինին Վ. («Գոլոս զեմլի» պարբերականի հոդվածագիր) 457
Օսինսկի Վալերիան Անդրեևիչ (ռուսաստանցի նարոդնիկ հեղափոխական) 414
Օսման փաշա (մուշիր, օսմանյան 4-րդ զորաբանակի ընդհանուր քննիչ) 901-905
Օվսեենկո (Թեհրանում Ռուսաստանի դեսպանության ներկայացուցիչ) 256
Օտյան Գրիգոր (Հայոց Ազգ. սահմանադրության գլխավոր մշակողներից) 782
Օտյան Երվանդ (անվանի երգիծագիր) 86, 988
Օրմանյան Մաղաքիա արքեպիսկոպոս (Կ. Պոլսի պատրիարք) 112, 113, 124-126, 130, 131, 304, 335, 376, 378-387, 391, 401, 403-405, 407-409, 413, 699, 905, 962, 965, 1004, 1047, 1052, 1121
Օրջոնիկիձե Գրիգորի Կոնստանտինովիչ (ծածկանունը՝ Սերգո) 535, 536, 569, 575-578

Ֆ

Ֆաթալի չահ Ղաջար 749
Ֆաթհ Ալի չահ (տե՛ս Ֆաթալի չահ)
Ֆաթհուլլահ խան Ռեչտի (տե՛ս Սիփահդար)
Ֆեմիդա (արդարադատության դիցուհի հունական դիցաբանության մեջ) 431
Ֆայիզ պէյ (Օսմանյան կայսրության Պետական խորհրդի Նախագահ ատյանի նախագահ) 1093, 1098
Ֆարման Ֆարմա (բուն անունով՝ Արդոլ Հոսեյն Միրզա Ղաջար) (սահմանադրական զորահրամանատար Պարսկաստանում) 709, 710, 726, 728, 730
Ֆարրո (տե՛ս Հովհաննիսյան Հովսեփ)
Ֆերիդ փաշա (Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար) 44
Ֆերիդ փաշա (օսմանյան խորհրդարանի անդամ) 845
Ֆերիդ փաշա (Օսմանյան կայսրության մեծ վեզիր) 876, 1054
Ֆերիման Ֆրեդերիկ Զաքեոս Դուկետ (անգլիացի, գրքի հեղինակ) 36
Ֆէրիտ փաշա (տե՛ս Ֆերիդ փաշա՝ Օսմանյան կայսրության մեծ վեզիր)
Ֆիգներ Վերա Նիկոլաևնա (ռուսաստանցի նարոդնիկ հեղափոխական) 414
Ֆուա Ալբեր («Մեչվերեթ» թերթի խմբագիր, հրեա) 893
Ֆուադ փաշա (մարշալ, օսմանյան սենատի անդամ, Իթթիլաֆի ղեկավարներից) 971
Ֆրանգուլյան Սարգիս Հովհաննեսի (պետական դումայի՝ Աստրախանից ընտրված անդամ) 513
Ֆրանս Անատոլ (ֆրանսիացի անվանի գրող) 354
Ֆրոդրով (գանձակեցի ռուս) 488
Ֆրուպչինսկի («Ռանյեյե ուտրո» թերթի Կ. Պոլսի թղթակից) 1086

Айрапетян М. Э. (գրքի համահեղինակ) 918, 930, 936
Алиев Г. З. (խորհրդային պատմաբան) 970, 972
Арабаджян Завен Артемьевич (պատմաբան) 232
Арутюнян Георгий С. (տե՛ս Հարությունյան Գեորգի)

Бауер О. (գրքի հեղինակ) 913
Борьян Б. А. (խորհրդահայ պատմաբան) 4

Вакс Л. (տե՛ս Վակս Լ.)

Габидуллин Х. З. (խորհրդային պատմաբան) 917, 975, 1055, 1056
Галкин И. С. (ռուսաստանցի պատմաբան) 1030, 1057
Гиббонс Герберт Адамс (տե՛ս Գիբբոնս Հերբերտ Ադամս)
Государ Император (տե՛ս Նիկոլայ II Ռոմանով)
Гурко-Кряжин В. А. (տե՛ս Գուրկո-Կրյաժին Վ. Ա.)

Джемаль-паша (տե՛ս Ահմեդ Ջեմալ փաշա)

Еремеев Дмитрий Евгеньевич (տե՛ս Երեմեև Դմիտրի Եվգենևիչ)
Ермак Ф. (ռուսաստանցի պատմաբան) 361

Иванов Михаил Сергеевич (տե՛ս Իվանով Միխայիլ Սերգեևիչ)
Иранский С. (պատմաբան) 222, 226, 231, 247, 252, 267, 268, 271, 517, 524, 564, 634, 635, 670, 675

Кабанов П. (ռուսաստանցի պատմաբան) 361
Каджары (տե՛ս Ղաջարներ)
Келенджеридзе Антон Кириллович (վրացի, գրքի հեղինակ) 255, 535
Кесрави Ахмед (տե՛ս Քեսրաուի Ահմեդ)
Кирова Кира Эммануиловна (ռուսաստանցի, գրքի հեղինակ) 915, 923
Кисилев Владимир Иванович (ռուսաստանցի պատմաբան) 940
Конделоро Дж. (իտալացի, գրքի հեղինակ) 913
Кузнецов Н. (ռուսաստանցի պատմաբան) 361

Лавров Николай Матвеевич (տե՛ս Լավրով Նիկոլայ Մատվեևիչ)
Лосовский Юрий Петрович (գրքի հեղինակ) 914
Лоуренс Томас Эдуард (բրիտանացի հետախույզ արաբական Արևելքում) 971
Любин Валерий Петрович (ռուսաստանցի պատմաբան) 943

Мандельштам Андрей Николаевич (ռուսաստանցի հեղինակ, դիվանագետ) 868
Матвеев А. М. (ռուսաստանցի պատմաբան) 534
Мизиано Каролина Франческовна (իտալացի, գրքի հեղինակ) 914
Миллер Анатолий Филиппович (ռուսաստանցի արևելագետ) 926, 936
Могилевич А. А. (գրքի համահեղինակ) 918, 930, 936

Найт Э. (գրքի հեղինակ) 843
Новичев А. Д. (տե՛ս Նովիչև Ա. Դ.)

Орджоникидзе Серго (տե՛ս Օրջոնիկիձե Գրիգորի Կոնստանդինովիչ)

Павлович М. (գրքի համահեղինակ) 222, 226, 231, 247, 252, 267, 268, 271, 517, 524, 564, 634, 635, 670, 675
Петерсон Н. (տե՛ս Պետերսոն Ն.)
Прудон Пьер-Жозеф (տե՛ս Պրուդոն Պիեռ-Ժոզեֆ)
Пуришкевич В. (տե՛ս Պուրիշկևիչ Վլադիմիր Միտրոֆանովիչ)

Сеидзаде Д. Б. (ադրբեջանցի, գրքի հեղինակ) 142
Сенкевич И. Г. (խորհրդային պատմաբան) 867
Скиф 741
Сокольский Н. (ռուսաստանցի, գրքի հեղինակ) 941, 942

Тарле Евгений Викторович (ռուսաստանցի պատմաբան) 841
Триа В. (տե՛ս Մգելաձե Լասո)

Троцкий Лев Давидович (բոլշևիկ ղեկավար գործիչ) 468
Тыркова Ариадна (տե՛ս Տըրկովա Արիադնա)

Шитов Г. В. (տե՛ս Շիտով Գ. Վ.)

Черенц (գրքահրատարակիչ Մոսկվայում) 857

Яхимович Зинаида Павловна (գրքի հեղինակ) 923

Gauvain A. (գրքի հեղինակ) 846

Kaligian Dikran Mesrob (տե՛ս Խալիկյան Տիգրան)

Sabatier (ֆրանսիացի գործարանատեր Աղանայի նահանգի Համիդիե ավանում) 1097, 1109

Woods H. Ch. (անգլիացի հեղինակ) 867
Wylie Doughty (տե՛ս Ուիլի Դաութի)

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաղան (քաղաք Պարսկաստանում) 655
Աբգարեան վարժարան (Ադանայում) 1095
Աբդօղլու (գյուղ Ադանայի սանջակում) 20
Ագարակ (գյուղ Երևանի նահանգի Վաղարշապատի գավառում) 362
Ադարադար (քաղաք Թուրքիայում՝ Նիկոմեդիայի շրջանում) 933
Ադանա (քաղաք, սանջակ և նահանգ) 5, 6, 10–22, 26, 29–34, 36–40, 42–47, 49, 50, 65, 73, 80, 120, 775, 788, 790, 793–797, 802, 805– 808, 887, 904, 907, 909, 954, 955, 959, 994, 995, 1017, 1038, 1061, 1067, 1079, 1093–1103, 1105–1112, 1114–1118
Ադրբեյջան (տե՛ս Ատրպատական)
Ադրիական ծով 937, 940, 1032
Ադրիանապոլիս (քաղաք Թուրքիայի եվրոպական մասում) (տե՛ս նաև Էդիրնե) 704
Ազատության հրապարակ (Սալոնիկ քաղաքում) 841
ալ-Ազհար համալսարան (Կահիրեում) 36
Աթենք 868, 937
Աթըք (գյուղ Հալեպի նահանգի Բեյլանի գավառակում) 28
Ալաա Դովլե պողոտա (Թավրիզում) 733
Ալան (բնակավայր Ատրպատականում) 556, 557
Ալաչկերտ 181
Ալավերդի 296, 362
Ալափունար (ագարակ Ադանայի նահանգի Կոզանի գավառակում) 25
Ալբանիա 851, 867, 868, 877, 913, 925, 926, 945, 948, 954, 958, 969, 1030–1036, 1051, 1052, 1060, 1066
Ալբուլաղ (բնակավայր Պարսկաստանում) 709
Ալեքսանդրապոլ 17, 118, 146, 297, 328, 349, 362, 363, 475, 512, 781, 783, 931
Ալեքսանդրետ (նավահանգիստ Կիլիկիայում) 23, 43,
Ալեքսանդրիա (նավահանգիստ Եգիպտոսում) 98, 287, 381
Ալեքսանդրովսկ (բնակավայր Սիբիրում) 476
Ալպանիա (տե՛ս Ալբանիա)
Ալուար (բնակավայր Ատրպատականում) 769
Ախալցխա 413
Ախթալա 535
Ախուրեան 17, 37, 197, 219, 223–225, 231, 234, 235, 237, 262, 295, 308, 401, 418, 428, 430, 432, 433, 459, 461, 475, 477, 493, 517, 537–540, 564, 626, 627, 634, 637, 640, 642, 680, 713, 781, 782, 811, 925, 926, 931–933, 937
Ակտյուբինսկ (բնակավայր Սիբիրում) 476
Ահար (Ատրպատականի նահանգի Ղարադաղի գավառի կենտրոնը) 557–563, 644
Ահմեդաբադ (բնակավայր Պարսկաստանում) 269

Ահունի (Թավրիզի արվարձան) 715
Ահչայ (գյուղ Ատրպատականում) 570
Աղա-Բաբա (գյուղ Ղազվինի մոտ) 251
Աղաղան (հայկական գյուղ Ատրպատականում) 192, 242
Աղբակ (դաշտ) 77, 242
Աղդամ (գյուղ Աղանայի նահանգի Կոզանի գավառակում) 25
Աղեքսանդրիա (տե՛ս Ալեքսանդրիա)
Աղզը-Բեոյյուք (հայկական գյուղ Կիլիկիայում) 20
Աղթամար 118, 120, 387, 837, 1047
Աղջաղալա (գյուղ Գանձակի նահանգում) 305
Ամասիա (քաղաք Սեբաստիայի նահանգում) 462, 903, 982, 984, 985, 991, 995
Ամերիկա (տե՛ս նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներ) 71, 73, 84, 98, 121, 190, 328, 356, 385, 421, 671, 680, 755, 902, 1018
Ամերիկայի Միացյալ Նահանգներ (տե՛ս նաև Ամերիկա) 42, 122, 298, 320, 352, 353, 420, 425, 490, 680, 738, 793, 830, 847, 958, 1018
Ամիրախըզ (Թաղ Թավրիզում) 166, 167,
Ամուր (գետ) 241
Ամսթերտամ 1007
Ամրակըզ (տե՛ս Ամիրախըզ)
Այա-Սոֆիայի հրապարակ (Կ. Պոլսում) 1105
Այաս (նավահանգիստ Կիլիկիայում) 21
Այգեհատ (գյուղ Լոռիում) 315
Այգեստան (Վանի արվարձան) 790
Այնթապ 22, 819
Այփողան (լեռ Ատրպատականում) 560, 562
Անադոլու (տե՛ս Անատոլիա)
Անատոլիա 785, 804, 854, 862, 874, 946, 1097, 1100, 1103
Անատոլու (տե՛ս Անատոլիա)
Անատօլու (տե՛ս Անատոլիա)
Անգլիա (տե՛ս նաև Մեծ Բրիտանիա) 78, 81, 226, 235, 445, 451, 643, 678, 679, 685, 711, 822, 830, 863, 918, 943, 968, 972
Անգորա 883
Անդերուն (գյուղ և գավառակ Կիլիկիայում) 26
Անդրկովկաս 142, 144, 145, 180, 182, 184, 191, 206, 238, 239, 291, 293, 294, 297, 303, 319, 322, 350, 362-365, 372, 415, 416, 439, 448, 451, 452, 454, 488, 511-513, 534-536, 545, 578, 666, 704, 744,
Անըջըք (գյուղ Աղանայի նահանգի Անդերունի գավառակում) 26
Անթաքիա (տե՛ս Անտիոք)
Անթիլիաս 5, 27, 653
Անի 143
Անտիոք (քաղաք և գավառակ) 10, 27, 28
Ապենինյան թերակղզի 917
Աջամի (տարածաշրջան Պարսկաստանում) 758
Աջի գետ (տե՛ս Աջի-չայ)
Աջի-չայ (Թավրիզով անցնող գետ) 166, 167, 169, 187, 231
Աջու (բնակավայր Ատրպատականում) 215
Առաջաւոր Ասիա 942, 943
Ասիա 177, 532, 694, 695, 841-844, 861, 1075
Ասիաբադ (բնակավայր Պարսկաստանում) 650
Ասիական Թուրքիա 4

Աստապատ (գյուղ Նախիջևանում) 190
Աստարա (բնակավայր Ատրպատականում) 238, 568, 575, 757
Աստրաբադ (քաղաք Պարսկաստանում) 224, 225, 260, 635, 708, 711, 757
Աստրախան 118, 125, 223, 241, 411, 513, 609, 1120
Ասրան (հայաբնակ գյուղ Ատրպատականի նահանգի Ղարադաղի գավառում) 626
Ավայսին (թուրքաբնակ գյուղ Ատրպատականի նահանգի Ղարադաղի գավառում) 626
Ավարայր 220
Ավստրիա (տե՛ս նաև Ավստրո-Հունգարիա) 354, 632, 636, 748, 863, 913
Ավստրո-Հունգարիա (տե՛ս նաև Ավստրիա) 235, 718, 867, 918, 943, 969, 1032, 1088
Ատանա (տե՛ս Ադանա)
Ատրպատական 118, 164, 165, 169, 170, 174, 176-184, 190, 191, 193, 194, 196, 197, 199, 201, 202, 204-207, 211, 212, 217, 218, 234-236, 238, 242, 247, 273, 403, 405-407, 526, 543, 544, 549, 550, 554-556, 563, 565-567, 580, 603, 609, 613, 617, 618, 623, 625, 627, 632, 634, 636, 643, 644, 646, 648, 650, 656, 668, 669, 671, 678, 681, 697, 699, 703, 705, 714, 718-723, 725, 740-743, 746-748, 757, 759, 768, 931, 1122
Արաբական թերակղզի (տե՛ս նաև Արաբիա) 859
Արաբիա (տե՛ս նաև Արաբական թերակղզի) 851, 859, 862, 877, 889, 926, 958, 1035, 1051
Արաբկիր 388
Արաբստան (տե՛ս Խուզիստան)
Արագած 43, 475, 847, 850, 877, 902, 919, 978, 979
Արամո (հայաբնակ գյուղ Լաթաքիայի արևելքում) 1078
Արարատ 53, 57, 90, 99-102, 117, 118, 128-130, 133, 149, 151, 277, 279-284, 286, 288-290, 333, 334, 341-343, 376, 378, 392, 401, 502, 749, 753, 781, 797, 799, 819, 821, 822, 825, 826, 833, 836, 837, 880-882, 884, 967, 991, 1120
Արարատյան աշխարհ 955
Արարատյան դաշտ 292
Արաք (տարածաշրջան Պարսկաստանում) 758
Արաքս 180, 182-185, 190, 219, 230, 232, 703, 704
Արդաբիլ (քաղաք Ատրպատականում) 205, 231, 551, 552, 555, 568-573, 576, 585, 592, 638, 650, 723, 757, 769
Արդահան 712
Արդատլի (գյուղ Ադանայի նահանգի Անդերունի գավառակում) 26
Արդնի (քաղաք Տիգրանակերտի նահանգում) 995
Արճակ (չրջան Վանի նահանգում) 75
Արճեշ 77
Արմաշ 108
Արմաշի դպրեվանք 380, 965
Արմավիր (քաղաք Հյուսիսային Կովկասում) 350
Արմենիա (տե՛ս Հայաստան)
Արտաւիլ (տե՛ս Արդաբիլ)
Արցախ (տե՛ս նաև Ղարաբաղ) 190, 239, 279, 324, 393, 403, 408, 411, 703, 736

Արք (Թավրիզի միջնաբերդը) 166, 167, 187, 714,
Արևելյան Անադոլու 500, 946, 950, 975, 976
Արևելյան Թրակիա 862
Արևելյան Հայաստան 161, 362, 400, 705
Արևելք 21, 37, 41, 76–80, 82, 84–87, 93, 122, 131, 159, 177, 221, 231, 270, 283, 379, 533, 534, 602, 678, 696, 722, 736, 764, 807, 809, 853, 863, 879, 974, 989
Արևմուտք 159, 696, 850
Արևմտյան Եվրոպա 297, 615
Արևմտյան Հայաստան (Արևմտահայաստան, Երկիր, Թիւրքական Հայաստան, Թուրքահայաստան, Թուրքաց Հայաստան) (տե՛ս նաև Հայաստան) 3, 6, 56, 59, 65, 71, 72, 81, 83, 84, 106, 110, 158, 182, 210, 233, 240, 294, 356, 372, 406, 420, 431, 462, 484, 489, 756, 792, 815, 818, 819, 866, 873, 874, 876, 877, 901, 903, 904, 909, 939, 946, 952, 957, 981, 984, 997, 1022, 1028, 1029, 1046, 1064, 1065, 1076, 1080–1082, 1086, 1089,
Արֆալի (գյուղ Անտիոքի մոտ) 27
Աֆղանստան 547, 753
Աֆրիկա 81, 914, 932, 942,

Բ

Բաբերդ 328, 403
Բագու (տե՛ս Բաքու)
Բագրևանդ 403
Բաղամաք (բնակավայր Թեհրանի մոտ) 264, 265, 269
Բաղեն (շրջան Ավստրիայում) 632, 640
Բաթում 146, 280
Բալադահ (բնակավայր Պարսկաստանում) 655
Բալկաններ 420, 804, 853, 859, 860, 1033, 1088
Բալու 12, 403
Բախչե (ավան և գավառակ Ադանայի նահանգում) 23, 24, 40, 1094, 1099, 1102, 1115–1117
Բախտիարիա (տարածաշրջան Պարսկաստանում) 221, 222, 259, 263, 527
Բահար (գյուղ Համադանի մոտ) 710, 728
Բահարստան (մեջլիսի պալատը Թեհրանում) 516
Բաղդադ 388, 403, 870, 924, 1121
Բաղեչ (տե՛ս նաև Բիթլիս) 403, 884, 911, 995, 1063, 1069, 1074, 1075, 1078
Բաղեչահ (պալատ Թեհրանում) 199, 224
Բաղեչահ (գյուղ Պարսկաստանում) 674, 675
Բայազետ 355, 388, 403
Բայկալ (լիճ) 241
Բանդուզ (տե՛ս Պնդուզ)
Բանդրմա (քաղաք Թուրքիայում) 816, 1121
Բանկ Օտտոման (Կ. Պոլսում) 761
Բասարգեչար (գյուղ Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում) 492
Բասեն (քաղաք, գավառ և գավառակ Արևմտյան Հայաստանում) 181
Բասիթ (հրվանդան Սիրիայում) 27
Բասրա 870
Բատաղե (բնակավայր Պարսկաստանում) 675
«Բարձրավանդակ» (տե՛ս Սասուն)
Բարսում (գյուղ Շամխորի շրջանում) 239, 240

Բարֆրուշ (քաղաք Պարսկաստանում) 224, 639, 670, 672, 757
Բաքու 118, 132, 136, 139, 142, 143, 145–147, 167, 173, 200, 229, 237, 238, 243, 281, 285, 287, 288, 292, 295, 297, 304, 306, 307, 309, 355, 365, 371, 426, 432, 443, 492, 507, 512, 513, 535, 536, 571, 573, 574, 579, 598, 599, 611, 620, 621, 633, 635, 656, 663, 665, 666, 672, 712, 713, 719, 721, 755, 761, 762, 924
Բելաջարի (բնակավայր ներկայի Աղբրբեջանի տարածքում) 288
Բելգիա 298, 923
Բելգրադ 936
Բելուջիստան 547, 548, 758
Բեհբութովի փողոց (Թիֆլիսում) 300
Բեհջեղարադ (Թեհրանի արվարձան) 268
Բեյլան (գավառակ Հալեպի նահանգում) 28
Բեյրութ 27, 32, 33, 43, 47, 52, 55, 66, 138, 188, 191, 219, 273, 486, 716, 796, 828, 846, 866, 876, 937, 940, 1063
Բենգազի (քաղաք Լիբիայում) 915, 932, 935, 936
Բենդեր-Աբբաս (նավահանգիստ Պարսկաստանում՝ Պարսից ծոցի ափին) 758
Բեչիկթաչ (թաղամաս Կ. Պոլսում) 809
Բեռլին 65, 111, 213, 291, 407, 445, 446, 490, 510, 622, 632, 719, 731, 748, 775, 785, 786, 789, 798, 839, 939, 940
Բեսարաբիա 118, 138, 141, 403, 408, 411, 1120
Բերա (թաղամաս Կ. Պոլսում) 280, 319, 778, 816, 828, 830, 831, 843, 1014
Բերդ (հայաբնակ գյուղ Ատրպատականի նահանգի Ղարադաղի գավառում) 626
Բերիա (տե՛ս նաև Հալեպ) 41
Բիթլիս (տե՛ս նաև Բաղեշ) 58, 59, 873, 1029, 1081
Բիրմա 750, 753
Բիւզանդիոն 18, 21, 24, 25, 30–32, 34, 37, 44, 45, 50, 90, 99, 230, 231, 254, 276, 288, 379, 410, 411, 499, 695, 696, 699, 807, 808, 822, 829, 830–833, 878, 879, 892, 893, 899–901, 903, 904
Բյուզանդիա 860
Բյուրական (գյուղ) 330, 331
Բոսթանջի (Կ. Պոլսի արվարձան) 1055
Բոսնիա 851, 867, 949, 969, 1094
Բոստոն 68, 93, 122, 166, 284, 299, 320, 353, 425, 680, 793, 855, 976, 979
Բոսֆոր (նեղուց) (տե՛ս նաև Վոսփոր) 50, 811, 982, 985
Բորչալու (գավառ Թիֆլիսի նահանգում) 300, 301, 436
Բութանիա 827, 905, 933, 934, 983, 984, 996, 1016, 1041, 1042
Բուլանըխ (շրջան Արևմտյան Հայաստանում) 48, 75
Բուլանըխ (տե՛ս Բախչե)
Բուլղարիա 8, 71, 84, 190, 553, 851, 945, 949, 951, 1054
Բուխարա 450
Բուշեհր (քաղաք Պարսկաստանում) 227, 228, 259, 691, 701
Բուրավուջ (գյուղ Ատրպատականում) 555, 556
Բուրունեյ (խարակ Քեսապի գավառակի Կարադուրան գյուղի ծովափին) 27
Բուրսա 277, 388, 403, 967, 995, 1025

Բոնակոթ (գյուղ Սիսիանի շրջանում) 190
Բրագուշ (բնակավայր Ատրպատականում) 556, 557
Բրեդֆորտ (քաղաք ԱՄՆում) 353
Բրիտանական Կոլումբիա (նահանգ Կանադայում) 81
Բրուջերդ (քաղաք Պարսկաստանում) 548, 675, 677

Գ

Գաղը-Քեոյ (գյուղ Ադանայի սանջակում) 21
Գաթրլար (գյուղ Ադանայի նահանգի Էրզինի գավառակում) 23
Գալիցիա 762
Գահիրէ (տե՛ս Կահիրե)
Գաղատիա (շրջան Փոքր Ասիայում) 388, 883, 1121
Գանլը-Դերե (գյուղ Հալեպի նահանգի Բեյլանի գավառակում) 28
Գանձակ (տե՛ս նաև Ելիզավետպոլ) 118, 288, 305, 310, 311, 426, 432, 488, 492, 493, 512, 513, 703
Գատչինա 284
Գարուս (բնակավայր Պարսկաստանում) 650
Գեմի-Սյուրեն (գյուղ Ադանայի սանջակում) 21
Գեոզալթ (գյուղ Ադանայի սանջակում) 21
Գեոմուր (հայկական գյուղ Նախիջևանում) 190
Գեոչչյու (տե՛ս Գոչի)
Գեոք-Զայիր (գյուղ Ադանայի նահանգի Բախչեի գավառակում) 24
Գեոք-Ջեիզ (գյուղ Ադանայի նահանգի Մարաշի սանջակում) 26
Գեոքսուն (տե՛ս Կոկիսոն)
Գերմանիա 203, 235, 445, 452, 718, 719, 745, 746, 748, 830, 863, 916, 918, 923, 926, 930, 943
Գըզլաջ (գյուղ Ադանայի նահանգի Բախչեի գավառակում) 24
Գըրրգ-խան (գյուղ Հալեպի նահանգի Բեյլանի գավառակում) 28, 44
Գիլան (նահանգ Պարսկաստանում) 186, 221, 238, 239, 243- 247, 249, 255, 256, 261, 264, 521, 531, 535, 536, 584, 623, 651, 703, 705, 751
Գլենդել (քաղաք ԱՄՆ-ում) 191
Գյումուշ-Թեփե (տեղանուն Պարսկաստանում) 635, 711, 712
Գնիե (գյուղ Սիրիայի Ռուճի հովտում) 28
Գոզ-Օլուգ (գյուղ Ադանայի սանջակում) 20
Գողգոթա 487
Գոմոր (քաղաք պատմական Պաղեստինում) 41
Գոմս (գյուղ Մշո դաշտում) 75
Գոյակ (գյուղ Ադանայի նահանգի Բախեչի գավառակում) 24
Գոնիա (քաղաք և գավառ) 5, 30, 33, 1100, 1101
Գոչի (գյուղ Անտիոքի մոտ) 27
Գորիս 190
Գութազլի (գյուղ Ադանայի նահանգի Հաճընի գավառակում) 26
Գումբաթը-Ղաբուս (նավահանգիստ Պարսկաստանում՝ Կասպից ծովի ափին) 635
Գում-Գափու (թաղամաս Կ. Պոլսում) 761, 805, 806, 808, 910
Գուչջու (գյուղ Ադանայի նահանգի Բախչեի գավառակում) 24
Գուրիա (շրջան Վրաստանում) 704
Գևորգյան ճեմարան (ս. Էջմիածնում) 123, 335, 355, 363, 381, 394, 395, 495

Գօղան (տե՛ս Կողան)

Դ

Դալլար (գյուղ Ղամարլուի շրջանում) 308
Դալմատիա 913
Դամասկոս 866, 870
Դամգան (բնակավայր Պարսկաստանում) 650, 670, 707, 708, 769
Դամղան (տե՛ս Դամգան)
Դավաչի (Թաղ Թավրիզում) 166, 168, 188, 189
Դարաղիզ (կիրճ Ատրպատականում) 230
Դարաչամբ (հայկական գյուղ Ատրպատականում) 182
Դարաչի (տե՛ս Դարաչամբ)
Դարդանել (նեղուց) 937, 940
Դաւրէժ (տե՛ս Թավրիզ)
Դեգե-Աղաջ (բնակավայր Թուրքիայի եվրոպական մասում) 18
Դեմավենդ (լեռ Թեհրանի մոտ) 639
Դեյիրմեն-Դերե (գյուղ Ադանայի նահանգի Անդերունի գավառակում) 26
Դեչահ (բնակավայր Թեհրանի մոտ) 259
Դեոնգելե (գյուղ Ադանայի նահանգի Մարաչի սանջակում) 26
Դեորթ-Յոլ (ավան և գավառակ Ադանայի նահանգում) 23, 1104, 1108, 1115, 1118
Դետրոյտ 320
Դերբենտ 703
Դերնա (քաղաք Կիրենաիկայում) 932
Դերջան (գավառակ Կարինի նահանգում) 403
Դիարբեքիր (տե՛ս նաև Տիգրանակերտ) 392
Դիզա (գյուղ Ատրպատականում) 573, 574, 730
Դիզֆուլ (քաղաք Պարսկաստանում) 548
Դոբրուջա (քաղաք Ռումինիայում) 887
Դոդեկանեզ (կղզեխումբ Եգեական ծովում) 915, 937, 939, 941
Դոլմաբախչե (պալատ Կ. Պոլսում) 37, 280
Դոլուլուք (գյուղ Մարաչի սանջակի Կոկիսոնի շրջանում) 26
Դոն (գետ) 305, 329
Դոնեցկ 360
Դոնոնի Հյուրանոց (Սանկտ Պետերբուրգում) 479
«Դուրան» (տե՛ս Տարոն)
Դսեղ (գյուղ Լոռիում) 300, 316

Ե

Եաս (Թուրքաբնակ գյուղ Ատրպատականի նահանգի Ղարադաղի գավառում) 626
Եգեական ծով 868, 915, 920, 936, 937, 941
Եգիպտոս 5, 8, 17, 36, 61, 84, 110, 190, 287, 388, 914, 924-926, 932, 935, 941, 951, 968, 1121
Ելդրզ (պալատ Կ. Պոլսում) 32, 48, 50, 51, 91, 335, 811, 993, 1055
Ելիզավետպոլ (տե՛ս նաև Գանձակ) 146, 310, 491, 512, 563
Եկատերինոդար 564, 616
Եմեն 96, 102, 804, 870, 925, 931, 969, 1057
Ենիսեյ (գետ Սիբիրում) 477
Եսայան դպրոց (Կ. Պոլսի Բերա թաղամասում) 778
Եվդոկիա (քաղաք և գավառակ Սե-

բաստիայի նահանգում) 995
Եվրոպա 35, 52, 69, 78, 85, 103, 121, 123, 356, 394, 526, 564, 593, 620, 622, 633, 638, 640, 656, 657, 663, 669, 681, 775, 786, 787, 792, 796, 822, 846, 851, 860, 863, 876, 897, 918, 922, 926, 933, 936, 940, 953, 961, 968, 978, 1003, 1008, 1018, 1056, 1075, 1084, 1122
Եվրոպական Թուրքիա 867, 1023, 1030, 1032, 1057
Երե-Բախան (գյուղ Ադանայի նահանգի Հաճընի գավառակում) 25
Երզնկա 866, 995
Երկիր (տե՛ս Արևմտյան Հայաստան)
Երուսաղեմ 109, 118, 123, 338, 342, 387, 395, 1047, 1120, 1121
Երևան 1, 2, 4, 30, 33, 46, 47, 59, 92, 97, 118, 119, 131, 133, 146, 159, 161, 180, 181, 232, 289, 292, 296, 298, 299, 303, 306, 308, 336, 342, 343, 348-350, 360, 362-365, 402, 411, 415, 426, 459, 490, 493, 495, 512, 531, 532, 534, 535, 582, 677, 703, 704, 771, 840, 866, 875
Եւրոպա (տե՛ս Եվրոպա)
Եւրօպա (տե՛ս Եվրոպա)

Զ

Զանգեզուր (տե՛ս նաև Սյունիք, Սյունյաց աշխարհ) 181, 292
Զարանդ (բնակավայր Պարսկաստանում) 673, 674
Զեյթուն 5, 26, 1108
Զենջան (քաղաք և չրջան Պարսկաստանում) 552, 554, 555, 585, 651, 713, 757
Զերգենդե (գյուղ Թեհրանի հյուսիսում) 273, 599
Զէյթուն (տե՛ս Զեյթուն)
Զմյուռնիա (տե՛ս Իզմիր)
Զոդ (գյուղ Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում) 362, 492
Զունուս (բնակավայր Պարսկաստանում) 769

Է

Էա (հին քաղաք Լիբիայում) 915
Էդիրնե (տե՛ս նաև Ադրիանապոլիս) 37, 1093
Էմամ-չայ (գետ Պարսկաստանում) 670
Էնդերուն (տե՛ս Անդերուն)
Էնզելի (նավահանգիստ Պարսկաստանում՝ Կասպից ծովի ափին) 200, 228, 238, 243, 245, 248, 249, 258, 274, 535, 539, 541, 575, 579, 584, 620, 633, 664, 665, 679, 706, 712, 757
Էնզիլ (բնակավայր Փոքր Ասիայում) 878
Էնթիլի (գյուղ Ադանայի նահանգի Բախչեի գավառակում) 24
Էշճար-Ուչաղը (բնակավայր Կիլիկիայում) 1102
Էոզերլի (գյուղ Ադանայի նահանգի Դեորթ-Յոլի գավառակում) 23
Էպիրոս (տարածաշրջան Հունաստանում) 948
Էջեմլի (գյուղ Ադանայի նահանգի Անդերունի գավառակում) 26
Էջմիածին 53, 99, 103-108, 110-123, 125, 127, 128, 130-134, 137, 148, 153, 211, 227, 275-277, 279-284, 286, 287, 289, 292, 316, 330-336, 338, 340-344, 346, 347, 363, 373, 376, 381, 382, 384-396, 398, 400-402, 404, 407, 408, 411, 413, 452,

494-496, 500-502, 504, 508, 582, 617, 618, 665, 693, 747, 750, 762, 823, 835, 838, 884, 885, 1081, 1082, 1120
Էսէ Հաճիլի (բնակավայր Կիլիկիայում) 1118
Էսֆահան (տե՛ս Իսֆահան)
Էտիրնէ (տե՛ս Էդիրնե)
Էրզին (գյուղ և գավառակ Ադանայի նահանգում) 22, 1096
Էրզինջան (տե՛ս Երզնկա)
Էրզրում (քաղաք և նահանգ) (տե՛ս նաև Կարին) 58, 59, 92, 96, 327, 355, 901, 1029
Էքրեզ (գյուղ Ադանայի նահանգի Էրզինի գավառակում) 23
Էքիզլեր (գյուղ Ադանայի նահանգի Էրզինի գավառակում) 23

Թ

Թաթարական նեղուց (Հեռավոր Արևելքում) 241
Թալիշ (շրջան Պարսկաստանում) 205, 245, 260
Թալիշ (շրջան ներկայի Ադրբեջանի տարածքում) 703
Թաղիարադ (բնակավայր Ատրպատականում) 645
Թահիրլի (աշիրեթաբնակ բնակավայր Կիլիկիայում) 1108
Թանրը-Վէրտի (բնակավայր Կիլիկիայում) 1118
Թավրիզ 139, 162, 163, 165-171, 173, 178-189, 191-194, 196- 208, 210, 215, 217-221, 225- 227, 229- 234, 236, 238, 241, 242, 244, 245, 247, 250, 254, 308, 508, 517, 522, 526, 531, 536, 541, 542, 544, 546, 551, 552, 555, 556, 565-569, 575, 577, 579, 580, 586, 589, 592, 595, 609, 613, 616, 644-649, 671, 672, 678, 691, 692, 694, 698, 699, 702, 713-722, 724, 725, 732, 735, 742, 743, 747, 748, 751, 757-759, 769, 957, 1004, 1052, 1058
Թարապուլուս (տե՛ս Տրիպոլիս)
Թարթառ (գետ Արցախում) 492
Թարսուս (Տարսոն) (քաղաք Կիլիկիայում) 1094, 1108, 1116
Թաւրիզ (տե՛ս Թավրիզ)
Թեհրան 62, 158, 164-166, 168, 171, 176, 182, 185-187, 192, 198, 199, 205, 207, 208, 210-212, 215, 217, 224, 225, 228, 236, 238, 239, 241, 244, 247, 252-262, 264-270, 272-274, 420, 431, 438, 517, 520, 522-524, 526, 528, 529, 536-544, 548, 554, 555, 559, 563-569, 574, 575, 578, 579, 584-586, 588-595, 598-601, 607, 608, 610-616, 618, 621, 622, 624, 627, 628, 633, 634, 636-642, 645, 649-656, 664, 666, 667, 670-680, 682-684, 686, 687, 689-694, 698, 702, 705, 707-712, 714-716, 718, 721, 725, 726, 730-732, 734, 735, 738, 742, 746, 748-751, 757, 769, 771
Թեոդոսիա (քաղաք Ղրիմում) 502
Թեքիրդաղ (տե՛ս Ռոդոսթո)
Թեքիրչե (գյուղ Ադանայի նահանգի Կոզանի սանջակում) 25
Թէհրան (տե՛ս Թեհրան)
Թիւրքիա (տե՛ս Օսմանյան կայսրություն)
Թիֆլիս 5, 16, 34, 51, 55, 56, 63, 77, 111, 113, 118, 119, 126, 134, 135, 137, 139, 146, 149, 157, 184, 191, 200, 202, 211, 237, 240, 255, 279, 281, 287-289, 292, 294-296, 298-

302, 304, 306–308, 314–316, 320, 324, 325, 327, 328, 335, 343, 348–351, 354, 355, 373, 374, 387, 396, 403, 408, 413, 414, 416, 419, 421, 423, 425, 426, 430, 432, 436, 443, 454, 458, 479, 480, 488, 491, 499, 502, 505, 507, 509, 510, 514, 518, 534–536, 544, 558, 563, 567, 578, 581, 593, 594, 598, 609, 636, 638, 640, 666, 671, 676, 680, 712, 744, 761, 763, 798, 824, 836, 845, 849, 875, 941, 959, 1082
Թիֆլիսի գիմնազիա 497
Թլան (ագարակ Ադանայի նահանգի Կոզանի սանջակում) 25
Թոսբաղա Գալեսի (Թաղամաս Ադանայում) (տե՛ս նաև Շաաբանիե) 12
Թյունեքաբուն (շրջան Պարսկաստանի Գիլանի նահանգում) 519, 651
Թյուրքիա (տե՛ս Թուրքիա)
Թոգատ (տե՛ս Եվդոկիա)
Թոփխանե (զորանոց Թավրիզում) 733
Թունիս 914, 941, 943
Թուրինջլի (գյուղ Ադանայի նահանգի Էրզինի գավառակում) 23
Թուրքահայաստան (տե՛ս Արևմտյան Հայաստան)
Թուրքաց Հայաստան (տե՛ս Արևմտյան Հայաստան)
Թուրքեստան 547, 949, 951
Թուրքիա (տե՛ս Օսմանյան կայսրություն)
Թուրքիա (հանրապետություն) 47
Թուրքմենական անապատ (Պարսկաստանում) 225
Թուրքմենական տափաստան (Պարսկաստանում) 650, 653
Թուրքմենչայ (գյուղ Թավրիզ-Թեհրան ճանապարհի վրա) 703–705
Թրակիա 868
Թրիփոլի (տե՛ս Տրիպոլիս)

Ժ

Ժամացույցի հրապարակ (Ադանայում) 18
Ժնև 30, 69, 486, 624, 787

Ի

Իգահատ (տե՛ս Այգեհատ)
Իգդիր 355
Իզմիտ (տե՛ս Նիկոմեդիա)
Իզմիր 43, 64, 102, 278, 287, 388, 815, 818, 825, 857, 865, 866, 924, 939, 964, 995, 1059
Իհսանիէ (բնակավայր Կիլիկիայում, հավանաբար պետք է լինի Իսլահիե) 1117
Իմերեթ 118, 125, 279, 403, 411, 704
Ինաբա (գյուղ Ատրպատականում) 562
Ինար (ավան Պարսկաստանում) 665
Ինջիրլիք (գյուղ Ադանայի սանջակում) 21
Իսլահիե (ավան և գավառակ Ադանայի նահանգում) 24
Իսկէնտէրուն (տե՛ս Ալեքսանդրետ)
Իստրիա 913
Իսֆահան 171, 176, 222, 259, 260, 576, 589, 618, 651, 653, 757
Իվանովո 360
Իտալական Լիբիա 941, 943
Իտալիա 28, 35, 718, 913–918, 922–924, 926–928, 931, 933, 934, 936–943, 1032, 1033
Իրան (տե՛ս նաև Պարսկաստան) 164, 170, 204, 211, 219, 225, 227, 232,

245–248, 260, 261, 521, 525–527, 534–536, 552, 564, 569, 576, 581, 600–602, 606, 608, 616, 622, 637, 654–656, 667, 669, 675, 677–680, 684, 688, 701, 734, 749, 753, 759, 765, 767, 768, 841–844
Իրանական սարահարթ 586
Իրանական Քուրդիստան (տե՛ս Իրանյան Քուրդիստան)
Իրանյան Քուրդիստան (տե՛ս նաև Պարսկական Քուրդիստան, Քուրդիստան) 235, 236, 633, 708, 741
Իրկուտսկ (քաղաք Սիբիրում) 477

Լ

Լաբինսկ (բնակավայր Ռուսաստանում) 258
Լազարյան ճեմարան (Մոսկվայում) 288, 355
Լաթաքիա 27, 1078
Լալազար պողոտա (Թավրիզ) 733
Լալայի-Սարդար (տեղանուն Ատրպատականում) 187
Լայպցիգ 407
Լանգյան (բնակավայր Ատրպատականում) 573
Լարիջան (բնակավայր Պարսկաստանում) 727, 728
Լարիստան (նահանգ Պարսկաստանում) 758
Լափաչլը (տե՛ս Լափաջլը)
Լափաջլը (գյուղ Ադանայի նահանգի Բախչեի գավառակում) 24
Լեհաստան 291, 762
Լեհիջան (նահանգ Պարսկաստանում) 639
Լենա (գետ Սիբիրում) 362
Լեռնապար (Վանա լճի հարավային շրջանը) 308
Լիբանան 218, 796, 864, 870
Լիբիա 741, 914, 915, 927, 931, 935, 937, 942, 946
Լիլավա (Թաղ Թավրիզում) 173, 189
Լիլավայի դպրոց (Թավրիզում) 721
Լիմ անապատ 388, 403
Լինգե (բնակավայր Պարսկաստանում) 227
Լիպսո (կղզի Դոդեկանեզում) 941
Լիվասյան (գյուղ Պարսկաստանի Զարմահալ գավառում) 257
Լիրո (կղզի Դոդեկանեզում) 941
Լոզան 356, 358, 481, 486, 620, 940–943
Լոնդոն 41, 213, 224, 258, 539, 627, 634, 638, 688, 701, 711, 793, 846, 867, 940, 1054
Լոռի 315, 436, 437
Լոս Անջելես 353
Լորիստան (նահանգ Պարսկաստանում) 548
Լուր (պարսկաբնակ գյուղ Ատրպատականում) 193
Լուրիստան (նահանգ Պարսկաստանում) 260, 650, 734, 758

Խ

Խաթրատ (գյուղ Բաբերդ քաղաքի մոտ) 328
Խալխալ (հայկական գյուղ Նախիջևանում) 190
Խալխալ (քաղաք Ատրպատականում) 205, 571
Խամուն լիճ (Պարսկաստանում) 758
Խամսա (շրջան Պարսկաստանում) 554
Խայբրլը (գյուղ Ադանայի նահանգում) 20
Խանագյահ (հայաբնակ գյուղ Ատրպատականի նահանգի Ղարադա-

ղի գավառում) 623
Խանապատ (բնակավայր Պարսկաստանում) 674
Խանասոր (դաշտ) 180, 242, 305, 646
Խառնը (տե՛ս Հարունիե)
Խասգյուղ (գյուղ Մշո դաշտում) 901
Խաստրխան (գյուղ Աղանայի նահանգի Կոզանի գավառակում) 25
Խարբերդ 54, 387, 911, 995, 1074
Խարզան (գյուղ Ղազվինի մոտ) 251
Խարկ (քաղաք Պարսկաստանում) 227
Խարկով 349
Խիաբան (թաղ Թավրիզում) 166, 167
Խիաբանէ Արամնէ (պողոտա Թեհրանում) 756
Խիզան (գավառակ Բաղեշի նահանգում) 75, 873, 1069
Խոյ 166, 170, 178, 184, 190–192, 203, 219, 220, 232, 546, 644, 723, 744, 757, 769
Խոյգան (հայաբնակ գյուղ Պարսկաստանի Փերիայի գավառում) 653
Խոջանեֆես (բնակավայր Պարսկաստանում) 712
Խորասան (նահանգ Պարսկաստանում) 260, 540, 632, 650, 703, 758
Խորեմաբադ (քաղաք Պարսկաստանում) 548
Խորուզլու (ավան Ատրպատականում) 574
Խուդափերին (կամուրջ Արաքսի վրա) 564, 616
Խուզիստան (նահանգ Պարսկաստանում) 758
Խութ (գավառակ Բաղեշի նահանգում) 1069

Կ

Կաղո (կղզի Դողեկանեզում) 941
Կաին (տարածաշրջան Պարսկաստանում) 758
Կալե-Դերեսի (գյուղ Աղանայի նահանգի Հաճընի գավառակում) 25
Կալիֆորնիա 352, 353
Կալխի (կղզի Դողեկանեզում) 941
Կալկաթա 750
Կալուգա 539
Կահիրե 36, 110, 211, 935, 964, 988
Կաղզվան 363
Կանադա 81, 354
Կապան (գյուղ Աղանայի նահանգի Անդերունի գավառակում) 26
Կասըմքենտ (հայաբնակ գյուղ Ատրպատականի նահանգի Ղարադաղի գավառում) 626
Կասպից ծով 238, 241, 528, 541, 614, 635, 636, 653, 712, 748
Կավկազ (տե՛ս Կովկաս)
Կարա-Հեոյյուք (գյուղ Աղանայի նահանգի Էրզինի գավառակում) 23
Կարագյուլներ (գյուղ Աղանայի նահանգի Էրզինի գավառակում) 23
Կարադաշ (գյուղ Աղանայի սանջակում) 21
Կարադուրան (գյուղ Հալեպի նահանգի Քեսապի գավառակում) 27
Կարակ (քաղաք Ներկայի Հորդանանի տարածքում) 870
Կարավանք (տե՛ս ս. Թադեոս առաքյալի վանք)
Կարին (տե՛ս նաև Էրզրում) 54, 72, 233, 318, 327, 328, 380, 388, 415, 746, 778, 799, 819, 901, 911, 995, 1028, 1078, 1121
Կարկառ (գավառ Արևմտյան Հայաստանում) 873

Կարմիր վանք (Նախիջևան) 190
Կարյագինո (գյուղ Արցախում) 564
Կարս 118, 146, 296, 355, 362, 363, 415
Կարս-Բազար (ավան Ադանայի նահանգի Հաճընի գավառակում) 25
Կեդրոնական վարժարան (Կ. Պոլսում) 1028
Կելատի Նադիր (բնակավայր Պարսկաստանի հյուսիս-արևմուտքում) 757
Կենտրոնական Ռուսաստան 291, 511
Կեպեն (տե՛ս Կապան)
Կեսարիա (քաղաք և գավառ) 28, 994, 995, 1074
Կերգանրուդ (բնակավայր Պարսկաստանում) 757
Կիլիկիա 4-11, 14-16, 20-22, 24-26, 28-32, 35-37, 42, 43, 45-47, 51, 52, 64, 69, 80, 85, 90, 118, 120, 121, 127, 192, 278, 342, 395, 775, 794-796, 805, 887, 909, 956, 974, 1079
Կիպրոս 30, 43
Կիրենաիկա (տարածաշրջան Լիբիայում) 914, 915, 917, 932, 935, 936, 941
Կիև 359, 360
Կյուրենե (տե՛ս Կիրենաիկա)
Կոզան (սանջակ Ադանայի նահանգում) 24, 911, 995, 1101, 1017
Կոլիմնո (կղզի Դոդեկանեզում) 941
Կոկիսոն (չրջան Ադանայի նահանգի Մարաշի սանջակում) 26
Կողբ (ավան Երևանի նահանգի Սուրմալուի գավառում) 362
Կոյակ (տե՛ս Գոյակ)
Կոպենհագեն 321, 322
Կոս (կղզի Դոդեկանեզում) 941
Կոստանդնուպոլիս (Կ. Պոլիս, Պոլիս, Ստամբուլ) 9-11, 14, 16-18, 21, 22, 24, 28-31, 33, 36-45, 47-50, 52, 53, 55, 56, 61-69, 72, 78, 79, 81, 83, 84, 89, 91, 95, 97, 99-101, 106-108, 112, 113, 118, 121-124, 127, 128, 131, 132, 163, 203, 208, 220, 234, 235, 239, 249, 273, 275, 277-281, 304, 319, 320, 328-332, 335, 337, 338, 341, 342, 352, 354-357, 377, 379-383, 385-392, 395, 396, 403, 404, 413, 444, 450, 485, 489, 499, 510, 623, 624, 641, 646, 654, 695, 699, 716, 736, 742, 749, 750, 754, 758, 761, 769, 778, 784, 788, 790, 794, 795, 798, 805, 809-813, 816-818, 820, 824, 825, 827-829, 831, 833, 834, 836-838, 842, 846, 852, 858, 860, 862, 865, 872, 875, 878, 882, 884, 885, 887, 892, 893, 895, 897, 898, 904, 906, 910, 911, 916, 918, 919, 923-925, 927-931, 936, 938, 939, 942, 953-956, 965, 967-969, 976, 979-988, 995, 997, 999, 1010, 1014-1016, 1018, 1020, 1024, 1026, 1028, 1029, 1033, 1036-1040, 1046, 1048, 1051, 1053, 1056, 1059, 1062, 1064, 1072, 1075, 1078, 1079, 1081, 1086, 1093, 1094, 1099, 1107, 1108, 1112, 1114, 1121
Կոստանցա (քաղաք Ռումինիայում) 957
Կովկաս 8, 66, 71, 76, 77, 93, 99, 112, 115-117, 122, 124, 132, 135-151, 153-157, 167, 173, 179, 182, 183, 185, 187, 189, 197, 204, 210, 219, 226, 229, 232, 233, 237, 239, 242, 243, 245, 255, 256, 258, 279, 280, 282, 284, 287- 292, 296, 297, 306, 313, 322-326, 333, 337, 341, 343, 347, 352, 356, 371, 376, 385, 387, 392, 395, 413, 415, 416, 418, 419, 425, 426, 428, 431, 432, 439, 440,

444, 447, 448, 450–452, 454–456, 460, 465, 471, 473, 475, 480, 486, 490–492, 494, 497, 502, 509, 511, 512, 523, 524, 526, 531, 541, 553, 554, 561, 563, 565, 567, 579, 583, 609, 615, 616, 644, 654, 668, 671, 698, 712, 714–716, 721, 746, 747, 755, 756, 770, 778, 829, 831, 832, 852, 939, 949, 955, 962, 977, 1029, 1046
Կովկասյան Հայաստան 3
Կում (քաղաք Պարսկաստանում) 260, 673, 709, 710
Կուրու-Զեչմե (Կ. Պոլսի արվարձան) 811
Կտուց անապատ 388, 403
Կրետե 868, 926, 937, 951, 969, 1030

Հ

Հաագա 924
Հալեպ (քաղաք, սանջակ և նահանգ) (տե՛ս նաև Բերիա) 5, 20, 26, 28, 33, 38, 41, 805, 866, 911, 995
Հալլե (քաղաք Գերմանիայում) 407
Հախս (գյուղ Երևանի նահանգի Վաղարշապատի գավառում) 362
Հաճրն (քաղաք և գավառակ Ադանայի նահանգում) 25, 795, 1098, 1101, 1104, 1108, 1117
Համադան 176, 224, 260, 548, 592, 636, 650, 673, 675, 676, 681, 709, 710, 726, 728, 730, 735, 757, 769
Համատան (տե՛ս Համադան)
Համիդիե (ավան Ադանայի նահանգի Մարաշի սանջակում) 22, 40, 1094, 1097, 1108, 1109, 1115
Համիտիէ (տե՛ս Համիդիե)
Հայ լեռ 24
Հայաստան (Արմենիա, Հայկական աշխարհ, Հայոց հայրենիք) (տե՛ս նաև Հայաստանի Հանրապետություն, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն) 4, 8, 11, 30, 31, 33, 41, 48, 53, 55, 61, 63, 65, 66, 79–84, 88, 124, 133, 139, 142, 151–153, 158–161, 235, 291, 300, 301, 318, 324, 332, 349, 352, 357, 358, 362, 363, 371, 383, 401, 406, 408, 433, 444, 450, 488, 490, 492, 502, 513, 517, 543, 634, 636, 642, 644, 703–705, 723, 741, 754, 761, 786, 799, 833, 851, 862, 871, 877, 885, 903, 942, 943, 949, 955, 969, 975, 976, 978, 980, 982, 1005, 1006, 1023, 1046–1048, 1052, 1063, 1068, 1073, 1075, 1079–1086, 1089, 1090, 1114
Հայաստանի Հանրապետություն (տե՛ս նաև Հայաստան, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն) 47, 203
Հայկազյան դպրոց (Թեհրանում) 270
Հայկազյան-Թամարյան դպրոց (Թավրիզում) 189, 732,
Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (տե՛ս նաև Հայաստան, Հայաստանի Հանրապետություն) 298, 362, 364, 771
Հայ(ոց) թաղ (Ադանայում) 1103–1105, 1112
Հայոց ձոր (գավառակ Վանի նահանգում) 873, 981, 1077
Հայրենիք (տե՛ս Արևմտյան Հայաստան)
Հաջի-Մուսալը (գյուղ Հալեպի նահանգի Բեյլանի գավառակում) 28
Հաջի-Զավուշ (գյուղ Ադանայի նահանգի Իսլահիեի գավառակում) 24

Հասան-Պէյլի (տե՛ս Հասանբեյլի)
Հասանբեյլի (գյուղ Ադանայի նահանգի Բախչեի գավառակում) 23, 24, 40, 1094, 1108
Հասրետան (գյուղ Ատրպատականի նահանգի Ղարադաղի գավառում) 616
Հարավային Աֆրիկա 1034
Հարավային Պարսկաստան 758, 926
Հարունիե (գյուղ Ադանայի նահանգի Բախչեի գավառակում) 24, 1115
Հարս (գյուղ Ատրպատականում) 557
Հերցեգովինա 851, 867, 969
Հիջազ 96, 870
Հիսուսյան վարժարան (Վանում) 100
Հիսուսյանների վանք (Ադանայում) 19
Հիւսիսային Կովկաս (տե՛ս Հյուսիսային Կովկաս)
Հյուսիս-Կասպիական մարզ 705
Հյուսիսային Ալբանիա 1034
Հյուսիսային Ատրպատական 549
Հյուսիսային Աֆրիկա 923
Հյուսիսային Իրան (տե՛ս նաև Հյուսիսային Պարսկաստան) 236, 545, 566, 747
Հյուսիսային Կովկաս 139, 350, 452, 478
Հյուսիսային Նախիջևան 190
Հյուսիսային Պարսկաստան (տե՛ս նաև Հյուսիսային Իրան) 234, 242, 247, 266, 534, 546, 549, 551, 576, 578, 595, 639, 646, 703, 706, 723, 726, 740, 741, 745, 761, 931
Հնդկական օվկիանոս 547
Հնդկաստան 84, 118, 215, 224, 227, 259, 385, 543, 750, 753, 924, 951, 1122
Հոլանդիա 84, 298
Հորդանան 870
Հունաստան 851, 868, 937, 941, 949
Հունգարիա (տե՛ս նաև Ավստրո-Հունգարիա) 84, 762
Հոոդոս (կղզի Եգեական ծովում) 941
Հռոմ 380, 801, 916, 917, 923, 927, 931, 936, 937, 942
Հռոմեական կայսրություն 916

Ղ

Ղազախ 315, 435- 437
Ղազախ-խանե (զորանոց Թեհրանում) 269, 270
Ղազանչի (հայաբնակ գյուղ Նախիջևանում) 190
Ղազվին 176, 242, 249-257, 260, 266, 269, 274, 541, 549, 579, 589, 591, 614, 627, 679, 706, 707, 713, 748, 757, 769
Ղալա թաղ (Թավրիզում) 722
Ղալաթիա (թաղամաս Կ. Պոլսում) 816, 910, 967, 1064, 1083
Ղամարլու 308
Ղասրե Շիրին (քաղաք Պարսկաստանում) 548
Ղարա Թեփե (գյուղ Թեհրանի մոտ) 259, 262, 265
Ղարաբաղ (տե՛ս նաև Արցախ) 118, 119, 324, 401, 411, 469, 697
Ղարադաղ (գավառ Ատրպատականի նահանգում) 166, 178, 192, 194, 207, 212, 217, 242, 243, 550, 555, 557, 558, 562, 565, 566, 574, 616, 622, 623, 625-627, 631, 642-644, 661, 705, 722, 755, 769
Ղարամելիք (Թավրիզի արվարձան) 715
Ղարաքիլիսա 301
Ղափան 296, 362
Ղնեյ (տե՛ս Գնիե)
Ղորվա (բնակավայր Ատրպատակա-

նում) 730
Ղուլուտի (հայկական գյուղ Ատրպատականի նահանգի Ղարադաղի գավառում) 622
Ղրիմ 84, 539

Ճ

Ճավա 750
Ճէպէլի Պէրէքէթ (տե՛ս Ջերելի-Բերեքեթ)

Մ

Մազանդարան 247, 255, 256, 632, 639, 650, 655, 672, 673, 705
Մալաթիա 1063
Մալաիր (բնակավայր Պարսկաստանում) 673
Մակեդոնիա 784, 845, 851, 866-868, 877, 926, 937, 945, 948, 949, 1051, 1055
Մակու 166, 169, 178, 190, 203, 215, 216, 627, 642, 705
Մայր աթոռ (տե՛ս Էջմիածին)
Մանագկերտ 819
Մանասթիր (քաղաք Թուրքիայի Եվրոպական մասում) 37, 919, 1049, 1050, 1053, 1055, 1093
Մանգլիս 301
Մաչեղլու (գյուղ Բուլանըխի շրջանում) 75
Մաչղի մեյդան (հրապարակ Թավրիզում) 717
Մասիս 159, 502
Մարալան (թաղ Թավրիզում) 167
Մարաղա (քաղաք Ատրպատականում) 169, 187, 713, 723
Մարանդ (ավան Ատրպատականում) 170, 230, 757
Մարաչ (քաղաք և սանջակ Ադանայի նահանգում) 22, 26, 995
Մարզվան 878
Մարմարա ծով 1055
Մարոկկո 916, 918, 923
Մաքրիգյուղ (թաղամաս Կ. Պոլսում) 910
Մեղինա 96
Մեզգյար (Թումանյանցին պատկանող հայկական գյուղ Ատրպատականի նահանգի Ղարադաղի գավառում) 626
Մեզկիթեոնի (գյուղ Հալեպի նահանգի Բեյլանի գավառակում) 28
Մեծ Բրիտանիա (տե՛ս նաև Անգլիա) 16, 33, 35, 44, 225, 235, 254, 262, 268, 273, 530, 588, 701, 741, 742, 752, 774, 793
Մեծ Լեպտիս (հին քաղաք Լիբիայում) 915
Մեկրան (տարածաշրջան Պարսկաստանում) 758
Մեհրաբադ (այգի Թեհրանի մոտ) 584
Մեհրաբան (բնակավայր Ատրպատականում) 558
Մեշեդեսեր (քաղաք Պարսկաստանի կասպիական ծովափին) 224
Մեշկին (բնակավայր Ատրպատականում) 574
Մեշհեդ (քաղաք Պարսկաստանում) 221, 540, 559, 655, 757
Մետեխի բանտ (Թիֆլիսում) 298, 300, 302, 314, 316, 351, 358, 418, 419
Մերձավոր Արևելք 5, 453, 553, 833, 867, 915
Մերսին 16, 21, 44, 1095, 1098
Մերվ մզկիթ (Թեհրանում) 608
Մեքքա 471, 540

Միանդոաբ (քաղաք և շրջան Ատրպատականում) 645
Միանե (բնակավայր Ատրպատականում) 568, 757
Մինգրելիա 704
Միջագետք 5, 804, 862, 870
Միջերկրական ծով 30, 917, 936, 938, 940, 943,
Միսիս (ավան Աղանայի նահանգում) 20, 40, 1094
Միրաբադ (բնակավայր Պարսկաստանում) 540
Մյուրֆետ (գյուղ Աղանայի նահանգի Հաճբնի գավառակում) 26
Մշկունյաց լեռներ 192
Մոկաց լեռներ 873
Մոսկոփ (տե՛ս Ռուսաստան)
Մոսկվա 4, 5, 118, 157, 170, 180, 182, 204, 222, 232, 248, 260, 281, 285, 287, 288, 296, 311, 323, 328, 335, 355, 360, 361, 365, 380, 381, 407, 420, 421, 424, 447, 468, 480, 500, 502, 534, 652, 678, 739, 741, 755, 762, 764, 841, 843, 845, 857, 862, 867, 868, 877, 913–915, 917, 918, 921, 923, 926, 940, 941, 943, 970, 971, 1030, 1050, 1075
Մովլաթ-խան (ամրոց Պարսկաստանում) 707
Մոտկան (շրջան Սասունում) 1069
Մուժամբար (հայկական գյուղ Ատրպատականում) 191–198, 207, 211, 215, 648, 726, 769
Մուժամբար-չայ (ձորակ Ատրպատականում) 192
Մուղան (դաշտ Ատրպատականում և ներկայի Ադրբեջանի հարավում) 559, 573, 574
Մուշ (քաղաք և դաշտ) 54–56, 58, 75–77, 92, 95, 98, 462, 609, 802, 874, 901, 903, 904, 911, 995, 1017, 1078
Մուշեղյան-Արգարյան վարժարան (Աղանայում) 19
Մուսալեռ (գավառակ) (տե՛ս նաև Սվեդիա) 28
Մուսուլ 392, 633, 1097
Մուստաֆա փաշայի մզկիթ (Գրբրգ-խանում) 44
Մօտաւոր Արեւելք (տե՛ս Մերձավոր Արևելք)

Յ

Յակուբիե (գյուղ Սիրիայի Ռուճի հովտում) 28
Յակուտսկ (քաղաք Սիբիրում) 477
Յամադի (գյուղ Անտիոքի մոտ) 27
Յանբք-Դեյիրմեն (գյուղ Աղանայի նահանգի Բախչեի գավառակում) 24
Յավր էֆենդի (ագարակ Աղանայի նահանգի Կոզանի սանջակում) 25
Յեզդ (քաղաք Պարսկաստանում) 758
Յոզդատ 995
Յուզբաչ-չայ (բնակավայր Ղազվինի մոտ) 250
Յուսուֆաբադ (Թեհրանի արվարձան) 268

Ն

Նազիրվան (գյուղ Երևանի նահանգի Վաղարշապատի գավառում) 362
«Նալբանդ» (տե՛ս Նոր Նախիջևան, Ռոստով)
Նախիջևան 190, 203, 230, 292, 413, 426, 703, 704
Նաճար օղլու (տե՛ս Նաջարլի)

Նաջարլի (գյուղ Աղանայի նահանգի Դեորթ-Յոլի գավառակում) 23, 1106
Նաջաֆ (քաղաք Իրաքում) 221, 597, 628, 681
Նարգի (գյուղ Ղազվինի մոտ) 254
Նարմաշիր (տարածաշրջան Պարսկաստանում) 758
Նեոյի[-սյուռ-Մառն] (բնակավայր Փարիզի մերձակայքում) 749
Ներչինսկ (բնակավայր Սիբիրում) 476
Ներսիսյան հոգևոր դպրոց (Թիֆլիսում) 288
Ներսիսյան վարժարան (Թիֆլիսում) 123
Ներքին Զոքաքլի (գյուղ Աղանայի նահանգի Կոզանի գավառակում) 25
Նիզիրո (կղզի Դոդեկանեզում) 941
Նիժ (ուղիաբնակ գյուղ Նուխիի գավառում) 491
Նիկոլաևսկ (բնակավայր Սիբիրում) 476
Նիկոմեդիա 389, 994, 995, 1074, 1121
Նիր (գյուղ Ատրպատականում) 569, 570
Նիցցա 632
Նիւ Եորք (տե՛ս Նյու Յորք)
Նյու Բրունչվիկ (քաղաք ԱՄՆ-ում) 793
Նյու Յորք 5, 18, 43, 53, 320, 353, 850, 877, 919, 978
Նոյվան (վիճակ Ատրպատականի նահանգի Ղարադաղի գավառում) 626
Նովոչերկասկ (քաղաք Ռուսաստանում) 296, 300, 303-306, 315, 317, 350, 351, 414, 427, 430, 432, 458
Նովոռոսիյսկ (քաղաք Ռուսաստանում) 351, 408
Նորադուզ (գյուղ Սևանի ափին՝ Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում) 492, 493
Նոր Բայազետ (գավառ Երևանի նահանգում) 362, 492, 493
Նոր Նախիջևան (տե՛ս նաև Ռոստով) 6, 118, 131, 146, 288, 296, 305, 350
Նոր Ջուղա 118, 215, 648, 653, 750, 757
Նորդուզ (բնակավայր Արևմտյան Հայաստանում) 873, 874
Նորվեգիա 852
Նուբարան (բնակավայր Պարսկաստանում) 674
Նուխի (գավառ) 491, 492, 763

Շ

Շաաբանիե (թաղամաս Աղանայում) (տե՛ս նաև Թոսբաղա Գալեսի) 12, 15
Շահ Արդոլ Ազիզ մզկիթ (Պարսկաստանում) 599
Շահաբադ (պալատ Թեհրանում) 260, 261, 269, 769
«Շահաստան» (տե՛ս Թեհրան)
Շահսևան Սենդի (բնակավայր Պարսկաստանում) 674
Շահրիար (ավան Թեհրանի մոտ) 264
Շահրուդ (քաղաք Պարսկաստանում) 637, 650, 670, 707, 708, 711
«Շամ» (տե՛ս Վասպուրական)
Շամախի 118, 288, 403, 408, 411, 1120
Շամգադան (թաղ Թավրիզում) 187, 715
Շամխոր 239
Շապին-Գարահիսար 819
Շատախ 873, 874, 1069, 1078
Շար (գյուղ Աղանայի նահանգի Հաճընի գավառակում) 25

Շար-Դերեսի (գյուղ Աղանայի նահանգի Հաճընի գավառակում) 25
Շաքարլու (գյուղ Ատրպատականում) 563
Շերեքլի (տե՛ս Շիվիլգի)
Շեմսապատ (բնակավայր Պարսկաստանում) 674
Շեյխ-Մուրադ (գյուղ Կիլիկիայում) 20
Շեյխ-Յաղուբ (գյուղ Բուլանըխի շրջանում) 75
Շեչ-Գիլան (թաղ Թավրիզում) 168
Շեքի (քաղաք և շրջան ներկայի Ադրբեջանի տարածքում) 703
Շիվիլգի (գյուղ Աղանայի նահանգի Անդերունի գավառակում) 26
Շիրազ (քաղաք Պարսկաստանում) 176, 639, 701, 709
Շիրակ 9, 34, 35, 286, 991
Շիրվան (քաղաք և շրջան ներկայի Ադրբեջանի տարածքում) 703
Շորավ (գյուղ Ատրպատականում) 644
Շուլավեր (գյուղ Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում) 300
Շուշի 118, 123, 146, 190, 292, 309, 324, 413, 469, 507
Շուշիի թեմական դպրոց 123
Շպալերնայա փողոց (Սանկտ Պետերբուրգում) 478
Շվեյցարիա 35, 356, 445, 578, 656, 941

Ո

«Ոսկանապատ» (տե՛ս Բաքու)
Ուդինսկ (քաղաք Սիբիրում) 241
Ուզունուզ (գյուղ Ատրպատականում) 184
Ուճաֆիկ-Էորա (գյուղ Աղանայի նահանգի Կոզանի սանջակում) 25
Ուչի (բնակավայր Շվեյցարիայում) 940, 941, 943
Ուստր (քաղաք ԱՄՆ-ում) 320
Ուրմի (տե՛ս Ուրմիա)
Ուրմիա (քաղաք և լիճ Ատրպատականում) 169, 184, 220, 233, 235, 236, 529, 546, 567, 571, 697, 705, 714, 723, 744, 748, 769

Զ

Զաղալու (գյուղ Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում) 492
Զարկար (գյուղ Ատրպատականում) 564
Զարմահալ (գավառ Պարսկաստանում) 257, 653
Զարսանջակ 1069
Զաքուրաղաջ (գյուղ Աղանայի նահանգի Անդերունի գավառակում) 26
Զեմբերիքենդ (Հայոց գերեզմանատուն Բաքվում) 762
Զեոնոզորիա 868, 945, 1030
Զիկագո 353
Զինաստան 532, 678, 753, 853, 974
Զիչրա (քաղաք Հնդկաստանում) 750
Զմչկածագ (գավառակ Խարբերդի նահանգում) 388
Զնգուչ (ավան Տիգրանակերտի նահանգում) 403
Զորք-Մարզուան (տե՛ս Դեորթ-Յոլ)
Զորք-Մարզպան (տե՛ս Դեորթ-Յոլ)
Զրաղան (պալատ Կ. Պոլսում) 809, 811

Պ

Պալքաններ (տե՛ս Բալկաններ)
Պաղեստին 5, 41, 851, 859
Պաղչէ (տե՛ս Բախչե)

Պատինո (կղզի Դոդեկանեզում) 941
Պարսից ծոց 547
Պարսկական Քուրդիստան (տե՛ս նաև Իրանյան Քուրդիստան, Քուրդիստան) 178
Պարսկահայք 3, 668, 705, 755
Պարսկաստան (տե՛ս նաև Իրան) 71, 103, 118, 119, 138, 159, 162–166, 168–183, 185, 187–190, 192, 194, 197, 200– 202, 206, 208, 210, 212–217, 221, 222, 225–229, 231–239, 242–244, 246, 247, 250, 252, 253, 255, 256, 258, 260, 267–269, 271, 274, 293, 294, 306, 307, 376, 406, 420, 431, 446, 448, 449, 451, 514–522, 524, 525, 528, 531–547, 551, 553, 554, 559–561, 564, 565, 567, 572, 574, 576–581, 583–589, 591, 600, 602, 605, 607, 608, 612– 616, 618–620, 622–625, 627, 629–639, 641, 643–648, 656–666, 668–671, 673, 675– 680, 685–689, 691, 694–707, 711, 713, 718, 719, 724–726, 731, 732, 734, 735, 737–743, 745–755, 757–760, 762, 764, 770, 774, 830, 873, 931, 974, 1122
Պետերբուրգ (տե՛ս Սանկտ Պետերբուրգ)
Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտ 478
Պետերհոֆ (կայսերական նստավայրը Սանկտ Պետերբուրգի մերձակայքում) 282, 284
Պետրոպավլովսկի տաճար (Սանկտ Պետերբուրգում) 495
Պետրովսկ 541
Պէյրութ (տե՛ս Բեյրութ)
Պիսկորի (կղզի Դոդեկանեզում) 941
Պիրմա (տե՛ս Բիրմա)
Պլևնա (քաղաք Բուլղարիայում) 1054
Պնդուղ (գյուղ Ադանայի նահանգի Անդերունի գավառակում) 26
Պոսթոն (տե՛ս Բոստոն)
Պոսնիա (տե՛ս Բոսնիա)
Պրագա 532
Պրովիդենս (քաղաք ԱՄՆ-ում) 79, 353
Պոզ-Քրը (բնակավայր Գոնիայի գավառում) 1101
Պոստան-Զիֆթլիք (ագարակ Ադանայի նահանգում) 1118

Ջ

Ջամալարադ (բնակավայր Ատրպատականում) 557, 558
Ջասեկ (քաղաք Պարսկաստանում) 224
Ջեբելի-Բերեքեթ (սանջակ Ադանայի նահանգում) 21, 23, 1096, 1108, 1109, 1115, 1117
Ջերիկ (գյուղ Ադանայի նահանգի Էրզինի գավառակում) 23
Ջերրայիլ (չրջան Արցախում) 564
Ջուլֆա պարսկական (տե՛ս նաև Ջուլֆա, Ջուլֆա ռուսական) 182, 184, 190, 219, 223
Ջուլֆա ռուսական (տե՛ս նաև Ջուլֆա, Ջուլֆա պարսկական) 182, 190, 192
Ջուլֆա (տե՛ս նաև Ջուլֆա պարսկական, Ջուլֆա ռուսական) 166, 170, 182–184, 204, 219, 220, 230, 231, 236, 748
Ջրաբերդ (գավառ Արցախում) 324

Ռ

Ռաչտ (տե՛ս Ռեչտ)

Ռեչտ 176, 186, 233, 238, 242–250, 252, 253, 255–257, 259, 266, 274, 529, 530, 535, 536, 543, 544, 549, 576–579, 584, 586, 614, 620, 628, 706, 720, 757

Ռիգա 423

Ռոդոսթո (ավան Մարմարա ծովի ափին) 388, 911, 995, 1017, 1048

Ռոսիա (տե՛ս Ռուսաստան)

Ռոստով (Դոնի Ռոստով) (տե՛ս նաև Նոր Նախիջևան) 168, 287, 296, 304, 305, 329, 351, 534, 755

Ռուդբար (տարածաշրջան Պարսկաստանում) 758

Ռութբարի (կիրճ Պարսկաստանում) 250

Ռում (Հովիտ Սիրիայում) 27, 28

Ռումելի(ա) (նահանգ Օսմանյան կայսրության եվրոպական մասում) 16, 38, 866, 969, 1033, 1034, 1100

Ռումինիա 84, 851, 887, 945, 957

Ռումլու (գյուղ Ադանայի նահանգի Կոզանի սանջակում) 25

Ռուսահայաստան (տե՛ս Արևելյան Հայաստան)

Ռուսաստան (Ռուսական երկիր, Ռուսական կայսրություն, Ռուսական պետություն, Ռուսական տերություն, Ռուսաց պետություն, Ռուսաց տերություն, Ռուսիա) 4, 62, 71, 81, 87, 103, 104, 111, 113, 118–120, 122, 123, 132, 134–136, 138–140, 142–145, 147–153, 155–161, 165, 172, 202, 214, 216, 225, 226, 234–238, 256, 262, 268, 273, 278, 279, 281–283, 285, 289–291, 293, 294, 297, 298, 300, 301, 313, 314, 319–321, 324, 325, 342, 348, 353, 360, 361, 363–366, 368, 370, 384, 387, 389, 390, 394, 403, 407, 409–411, 414, 417, 418, 420, 424, 425, 431, 432, 439, 442, 445–451, 453, 455, 470, 471, 473, 474, 476, 479, 484, 491, 494, 495, 497–499, 501, 506, 511, 513, 523, 530, 533, 534, 539–541, 550, 554, 563, 564, 588, 590, 591, 615, 617, 619, 622, 623, 627, 633, 634, 638, 643, 646, 651, 654, 657, 659, 679, 685, 693–698, 701, 703–705, 707, 710–712, 715, 719, 720, 723, 725, 730, 741, 742, 744, 745, 747, 748, 750–752, 754, 755, 763, 774, 780, 828–833, 842, 844, 861, 896, 902, 918, 919, 921, 924, 940, 1007, 1079, 1082, 1086, 1087, 1089, 1120

Ռևանդուզ (բնակավայր Վերին Միջագետքում՝ ներկայի Իրաքի ծայր հյուսիսում) 633

Ս

«Սարանջի» համալսարան (Ստամբուլում) 47

Սարզեվար (քաղաք Պարսկաստանում) 757

Սարզեվարան (Ջիրոֆտ) Բամ (չրջան Պարսկաստանում) 758

Սարրատ (հին քաղաք Լիբիայում) 915

Սաղրաղամ Աթաբեկի անվան դրոսայգի (Թեհրանում) 593, 595, 597–599, 602, 603, 607, 692

Սալը Փունար (գյուղ Ադանայի նահանգի Կոզանի սանջակում) 25

Սալմաստ 169, 183, 184, 186, 190–192,

203, 219, 220, 221, 233, 236, 242, 243, 529, 546, 580, 645, 646, 697, 705, 714, 715, 723, 726, 744, 769
Սալոնիկ 33, 841, 844, 845, 850, 855, 866, 919, 920, 924, 947, 970, 1062
Սախալին 240–242, 356, 491
Սահարա (անապատ) 932
Սամաթիա (թաղամաս Կ. Պոլսում) 910
Սամսուն (քաղաք Սև ծովի թուրքական ափին) 56, 1074
Սայ-Բուռնու (գյուղ Ադանայի նահանգի Բախչեի գավառակում) 24
Սայ-Գեչիտ (գյուղ Ադանայի նահանգի Էրզինի գավառակում) 22, 1118
Սայ-Կէչիտ (տե՛ս Սայ-Գեչիտ)
Սան Ստեֆանո (Կ. Պոլսի արվարձան) 450
Սան Ֆրանցիսկո 320, 353
Սանասարյան դպրոց (Կարինում) 58, 318, 778, 1028, 1047
Սանկտ Պետերբուրգ (տե՛ս նաև Ленинград, Петроград) 114, 117, 118, 130, 133, 135, 145–147, 151, 157, 165, 228, 229, 232, 254, 258, 273, 275–282, 284, 285, 287, 288, 292–294, 308, 309, 311, 312, 317, 322, 325, 328, 330, 335, 351, 354, 358–361, 390, 401, 414, 418–420, 423–426, 428, 430, 433, 436, 437, 442–445, 447, 449–451, 453, 458, 460, 465, 478–481, 486–488, 494, 495, 497, 499–501, 521, 524, 533, 534, 539, 541, 559, 582, 591, 594, 613–615, 617, 627, 628, 634, 638, 639, 652, 676, 680, 692, 694, 697, 698, 701, 702, 707, 718, 721, 723, 743, 745, 747, 755, 913, 918
Սասուն 53–56, 76, 181, 240, 691, 952, 1006
Սավ (տե՛ս Բատաղե)
Սավադկուհ (լեռ և լեռնանցք Ատրպատականում) 632, 639, 650, 652, 672, 673, 707
Սավեհ (բնակավայր Պարսկաստանում) 674
Սավրա (գյուղ Ատրպատականի նահանգի Սալմաստի գավառում) 645
Սար (պարսկաբնակ գյուղ Ատրպատականում) 193
Սարը-Զինար (գյուղ Հալեպի նահանգի Բեյլանի գավառակում) 28
Սարբլար (գյուղ Ադանայի նահանգի Մարաշի սանջակում) 24, 26
Սարի (բնակավայր Պարսկաստանում) 670, 672, 711
Սարիղամիչ 363
Սարվարդ սար (Սյունիքում) 190
Սեբաստիա 403, 911, 995
Սեմնան (քաղաք Պարսկաստանում) 650, 670, 707
Սեյդավար (գյուղ Ատրպատականում) 644
Սեյնթ Պոլ կոլեջ (Տարսոնում) 21
Սենեկ (բնակավայր Պարսկաստանում) 552
Սերաբ (բնակավայր Պարսկաստանում) 557, 562, 569
Սերբիա 851, 945
Սիբիր 241, 303, 476, 477, 485, 489, 698
Սիթի (կղզի Դոդեկանեզում) 941
Սիհուն (գետ Կիլիկիայում) 17, 30, 45
Սինա (քաղաք Պարսկաստանում) 664
Սինոպ (քաղաք Սև ծովի թուրքական ափին) 56
Սիս 5, 22, 25, 105, 795, 1017, 1101
Սիսդով (գյուղ Ղազվինի մոտ) 254
Սիսիան 190
Սիսիմադան (տեղանուն Ալավերդու մոտ) 362

Սիստան (տարածաշրջան Պարսկաստանում) 758
Սիրենայիքա (տե՛ս Կիրենաիկա)
Սիրիա 5, 851, 859
Սիւրուն (հայաբնակ գյուղ Ատրպատականի նահանգի Ղարադաղի գավառում) 626
Սիցիլիա 914
Սիփահ-Սալար (թաղ Թեհրանում) 270
Սիփահ-Սալարի մզկիթ (Թեհրանում) 269
Սկարպոնտո (կղզի Դոդեկանեզում) 941
Սկյուտար (թաղամաս Կ. Պոլսի ասիական ափին) 62, 768, 833, 967
Սղերդ (գավառ Բիթլիսի նահանգում) 388
Սյունիք (տե՛ս նաև Զանգեզուր, Սյունյաց աշխարհ) 190
Սյունյաց աշխարհ (տե՛ս նաև Զանգեզուր, Սյունիք) 239, 736
Սոդոմ (քաղաք պատմական Պաղեստինում) 71, 109
Սոլթանաբադ (թաղ Թեհրանում) 272, 273
Սոլթանաբադ (քաղաք Պարսկաստանում) 548, 650, 673, 709
Սողանջը (գյուղ Հալեպի նահանգի Բեյլանի գավառակում) 28
Սոուջ-Բուլաղ (քաղաք Ատրպատականում) 169, 567, 633, 634, 743
Սուլդուզ (բնակավայր Պարսկաստանում) 633, 634
Սուջէ (բնակավայր Պարսկաստանում) 769
Ս. Ամենափրկիչ վանք (Նոր Ջուղայում) 750
Ս. Աստվածածին եկեղեցի (Թավրիզի Լիլավա թաղում) 722
Ս. Աստվածածին եկեղեցի (Կ. Պոլսի մայր եկեղեցին) 816, 817
Ս. Բարթողիմեոսի վանք (Աղբակի գավառում) 242
Ս. Գևորգ եկեղեցի (Թեհրանում) 756
Ս. Երրորդություն եկեղեցի (Կ. Պոլսի Բերա թաղամասում) 280, 319, 816, 828, 830, 831
Ս. Թադեոս առաքյալի (Թադեի) վանք (Ատրպատականում) 627, 643, 644
Ս. Կարապետ եկեղեցի (Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում) 833
Ս. Ղազար (Մխիթարյան միաբանության կղզին Վենետիկում) 823
Ս.Պողոս եկեղեցի (Տարսոնում) 21
Ս. Ստեփանոս Նախավկայի վանք (Ատրպատականում) 182, 190
Սուրի (բնակավայր Պարսկաստանում) 635
Սուրիջե (գյուղ Պարսկաստանում) 728
Սուրխաբ (թաղ Թավրիզում) 168
Սոֆիա 942, 1094
Սոֆիան (բնակավայր Պարսկաստանում) 220, 769
Սպահան (տե՛ս Իսֆահան)
Սպարկերտ (գավառ Արևմտյան Հայաստանում) 873
Սպորադյան կղզեխումբ (Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում) 941
Սվեդիա (տե՛ս նաև Մուսալեռ) 27
Ստամբուլ (տե՛ս Կոստանդնուպոլիս)
Ստամպոլիա (կղզի Դոդեկանեզում) 941
Ստոկհոլմ 891
Սև ծով 56
Սևանա լիճ 492
Սևանի մենաստան 1120
Սևաստոպոլ (նավահանգիստ Ղրիմում) 304
Սևքար (գյուղ ՀՀ-ում) 181

Սօտգին (հայաբնակ գյուղ Ատրպատականի նահանգի Ղարադաղի գավառում) 626
Սօֆիա (տե՛ս Սոֆիա)

Վ

Վահկա (գյուղ և գավառակ Աղանայի նահանգում) 25
Վաղարշապատ (տե՛ս նաև Էջմիածին) 275, 289, 335, 362
Վան 54, 56, 58, 59, 72, 76, 77, 98, 100, 181, 308, 309, 381, 418, 640, 726, 741, 790, 812, 814, 819, 837, 849, 873, 883, 884, 901, 903, 906, 909, 911, 914, 929, 932, 939, 981, 985, 989, 995, 1017, 1029, 1034, 1038, 1063, 1069, 1074, 1075, 1077, 1081, 1084, 1085, 1121
Վանդեա (նահանգ Ֆրանսիայում) 547, 673
Վառնա 328, 387, 486, 553, 906, 907
Վասմինջ (տե՛ս Վասպինջ)
Վասպինջ (գյուղ Թավրիզի մոտ) 165, 193, 196, 199, 205, 714
Վասպուրական 97, 98, 192, 381, 671, 758, 770, 812, 814, 908, 914, 929, 932, 1080, 1084
Վենետիկ 823
Վերամ (բնակավայր Պարսկաստանում) 639, 651
Վերին Զոքաքլի (գյուղ Աղանայի նահանգի Կոզանի գավառակում) 25
Վիեննա 174, 178, 293, 318, 327, 553, 620, 632, 748
Վիլնո (քաղաք Ռուսաստանի կայսրությունում) 303, 458, 467, 468
Վլադիկավկազ 309, 350
Վոլգա 118
Վոլոչինա 620
Վոսփոր (նեղուց) (տե՛ս նաև Բոսֆոր) 510,
Վորոնեժ (նահանգ Ռուսաստանում) 139, 151, 152,
Վրաստան 111, 118, 125, 255, 279, 343, 403, 411, 704, 1120
«Վրեժ» (տե՛ս Թավրիզ)

Տ

Տագանրոգ 306
Տաթևի վանք 437
Տալվորիկ (գյուղ Սասունում) 802
Տաճկաստան (տե՛ս Օսմանյան կայսրություն)
Տարոն 21, 53-56, 72, 1121
Տէօրթ-Եօլ (տե՛ս Դեորթ-Յոլ)
Տիգրանակերտ (տե՛ս նաև Դիարբեքիր) 388, 403, 813, 849, 995, 1078, 1121
Տուլա (քաղաք Ռուսաստանում) 323, 423, 534
Տրանսիլվանիա 84
Տրապիզոն 52, 203, 328, 355, 388, 819, 945, 995
Տրենտինո 913
Տրիեստե (քաղաք Իտալիայում՝ Սլովենիայի հետ սահմանի վրա) 913
Տրիպոլիս (քաղաք Լիբիայում) 96, 914, 915, 923, 926, 927, 929-932, 935, 940, 942, 969
Տրիպոլիտանիա (տարածաշրջան Լիբիայում) 914-918, 920, 923-926, 928, 929, 931, 941, 943

Ր

Ռումէլի (տե՛ս Ռումելի)

Յ

Յարսկոյե-Սելո (ցարական ամառանոց Սանկտ Պետերբուրգի մոտ) 495
Յյուրիխ 486

Փ

Փայջուկ (հայկական գյուղ Ատրպատականի նահանգի Սալմաստի գավառում) 580
Փայաս (նավահանգիստ Կիլիկիայում) 21, 1108
Փայաս-Քալե (տե՛ս Փայաս)
Փայտակարան 565
Փանկալթի (Թաղամաս Կ. Պոլսում) 801
Փարիզ 9, 35, 41, 45, 63, 65, 84, 132, 175, 178, 184, 208, 214, 222, 277, 289, 330, 334, 354, 380, 485, 529, 617, 620, 632, 638, 801, 843, 846, 891, 893, 927, 940, 943, 986, 1005, 1038, 1043
Փարք-օթել (հյուրանոց Թեհրանում) 270
Փերիա (գավառ Պարսկաստանում) 653
Փիպ (հայկական գյուղ Գանձակի նահանգում) 488, 489
Փիրան (գյուղ Արևմտյան Հայաստանում) 75
Փոչտը (բնակավայր Պարսկաստանում) 650
Փոքր Ասիա 4, 279, 851, 859, 863, 930, 939, 941, 1077, 1079
Փրավիտենս (տե՛ս Պրովիդենս)

Քաղաս (բնակավայր Պարսկաստանում) 554

Քալաքբար (մեծ գյուղ Ատրպատականում) 563, 565
Քանքավար (բնակավայր Ատրպատականում) 730
Քարսի (գյուղ Կիլիկիայում, հավանաբար՝ Քրիսթիան-Քարիասի) 1102
Քեզլերեն (գյուղ Ադանայի նահանգի Իսլահիեի գավառակում) 24
Քեյվան (չրջան Ատրպատականի նահանգի Ղարադաղի գավառում) 626, 642, 644, 755
Քեյփթաուն (քաղաք Հարավային Աֆրիկայում) 1034
Քեոսթենջե (տե՛ս Կոստանցա)
Քեոր-Ղայս (գյուղ Ադանայի նահանգի Էրզինի գավառակում) 23
Քեորօղլուն-Բոչայը (գյուղ Ադանայի նահանգի Էրզինի գավառակում) 23
Քեսապ (գյուղ և գավառակ Հալեպի նահանգում) 27
Քեսնե (գյուղ Ադանայի նահանգի Իսլահիեի գավառակում) 24
Քերբալա՛ (քաղաք Իրաքում) 559
Քերեջ (կիրճ և կամուրջ Ղազվին-Թեհրան ճանապարհին) 255, 257, 258, 260-262, 264, 269, 538
Քերծ (հայաբնակ գյուղ Վանի նահանգի Հայոց ձոր գավառում) 1077
Քերման (նահանգ Պարսկաստանում) 709, 758
Քերմանշահ (քաղաք Պարսկաստանում) 548, 614, 615, 633, 638, 650, 708, 709, 758
Քրբ-Քիլիսէ (բնակավայր Օսմանյան կայսրությունում) 1094

Քիչիֆլի (գյուղ Ադանայի նահանգի Մարաշի սանջակում) 26
Քիչնաղ (գյուղ Ադանայի նահանգի Իսլահիեի գավառակում) 24
Քիւրտիսթան (տե՛ս Քուրդիստան)
Քղի (ավան Կարինի նահանգում) 388
Քյոլն 632
Քութայիս 432
Քուհ (բնակավայր Պարսկաստանում) 650
Քուռ (գետ) 703
Քուրդիստան (տարածաշրջան Իրանում) (տե՛ս նաև Իրանյան Քուրդիստան, Պարսկական Քուրդիստան) 623, 650, 758, 862, 877, 1032
Քուրտլար (բնակավայր Կիլիկիայում) 1118
Քրիստիան-Քեոյ (գյուղ Ադանայի սանջակում) 21

Օ

Օդեսա (նավահանգիստ Ուկրաինայում) 281, 541, 614, 615, 632, 640, 712
Օզարլի (տե՛ս Էոզերլի)
Օլթի (ավան Կարսի մարզում) 363
Օհան Օղլու խան (Ադանայում) 1112
Օչական (գյուղ) 508
Օջագլը (տե՛ս Օջախլը)
Օջախլը (գյուղ Ադանայի նահանգի Դեորթ-Յոլի գավառակում) 23
Օսմանիե (ավան Ադանայի նահանգի Ջերելի-Բերեքեթի գավառում) 22, 40, 1095, 1108, 1115, 1117, 1118
Օսմանյան կայսրություն (Թիւրքիա, Թուրքիա, Տաճկաստան, Տաճկաց պետություն, Օսմանյան Թուրքիա, Օսմանյան հայրենիք, Օսմանյան պետություն, Օսմանյան տերություն) 3, 7–9, 29, 37, 38, 52, 53, 56, 62, 63, 65–71, 77, 78, 81, 86, 87, 92–96, 102–104, 110, 118–121, 127, 159, 163, 170, 172, 176, 178, 203, 206, 210, 216, 217, 229, 233, 234, 236, 237, 248, 268, 274, 279, 287, 297, 318, 320, 329, 356, 376, 380, 381, 388, 391, 403, 409, 410, 415, 417, 442, 444–446, 448–451, 453, 471, 484, 485, 489, 491, 498, 499, 510, 513, 553, 554, 567, 581, 599, 601, 602, 614, 632, 633, 648, 654, 662, 671, 677, 678, 688, 697, 704, 706, 708, 715, 754, 756, 768, 770, 771, 776, 778–783, 785–787, 789, 791–794, 798, 801, 802, 805, 806, 815, 818, 827, 829, 830, 831, 833, 834, 838, 840–848, 850, 851, 853–855, 857–859, 861–869, 875, 878, 883, 884, 888, 892, 893, 897, 904, 906, 913, 915–924, 926–928, 930–946, 950–954, 958–962, 968–972, 974, 986, 993–995, 1003, 1007–1009, 1015, 1019, 1021, 1022, 1024, 1030, 1032, 1033, 1038–1040, 1042, 1044–1047, 1049–1052, 1054–1056, 1058, 1059, 1063, 1067, 1072, 1075, 1080, 1081, 1088–1090, 1108, 1121
Օրդու (քաղաք Սև ծովի Թուրքական ափին) 56
Օրյոլ 304, 493

Ֆ

Ֆասըլը (գյուղ Ադանայի նահանգի Էրզինի գավառակում) 23
Ֆարս (նահանգ Պարսկաստանում) 260, 613, 758

Ֆեքե (տե՛ս Վահկա)
Ֆիլադելֆիա 320, 353
Ֆինլանդիա 153, 291, 450
Ֆիրուզաբաղ (բնակավայր Պարսկաստանում) 769
Ֆիրուզ-Բահրամ (բնակավայր Թեհրանի մոտ) 266
Ֆիրուզկուհ (տեղանուն Պարսկաստանում) 655
Ֆնտրճաղ (գյուղ Աղանայի նահանգի Մարաշի սանջակում) 26
Ֆրանսիա 22, 28, 35, 44, 279, 445, 536, 547, 749, 761, 830, 863, 916, 918, 923, 1007, 1008
Ֆրեզնո 243, 813, 912
Ֆրնուզ (գյուղ Աղանայի նահանգի Մարաշի սանջակում) 26

Азербайджан 142
Азия (տե՛ս Ասիա)
Армения (տե՛ս Հայաստան)
Арм. ССР (տե՛ս Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն)

Баку (տե՛ս Բաքու)
Ближный Восток (տե՛ս Մերձավոր Արևելք)

Ван (տե՛ս Վան)
Восток (տե՛ս Արևելք)
Восточная Среднеземноморья 915, 923

Грузия (տե՛ս Վրաստան)

Европа (տե՛ս Եվրոպա)
Европейская Турция (տե՛ս Եվրոպական Թուրքիա)
Египет (տե՛ս Եգիպտոս)
Ереван (տե՛ս Երևան)

Закавказья (տե՛ս Անդրկովկաս)

Иран (տե՛ս Իրան)
Италия (տե՛ս Իտալիա)

Кавказ (տե՛ս Կովկաս)
Киликия (տե՛ս Կիլիկիա)
Китай (տե՛ս Չինաստան)
Константинополь (տե՛ս Կոստանդնուպոլիս)

Ленинград (տե՛ս նաև Սանկտ Պետերբուրգ, Петроград) 4, 189, 468, 678, 764, 857

Месопотамия (տե՛ս Միջագետք)
Москва (տե՛ս Մոսկվա)
Мушь (տե՛ս Մուշ)

Оттоманская империя (տե՛ս Օսմանյան կայսրություն)

Палестина (տե՛ս Պաղեստին)
Париж (տե՛ս Փարիզ)
Персия (տե՛ս Պարսկաստան)
Петроград (տե՛ս նաև Սանկտ Պետերբուրգ, Ленинград) 33, 1038

Россия (տե՛ս Ռուսաստան)
Русь (տե՛ս Ռուսաստան)

Санкт-Петербург (տե՛ս Սանկտ Պետերբուրգ)
Сирия (տե՛ս Սիրիա)
СССР 4, 189, 764
Средняя Азия 534

Ташкент 534
Тбилиси (տե՛ս Թիֆլիս)
Тифлис (տե՛ս Թիֆլիս)
Турция (տե՛ս Օսմանյան կայսրություն)

Южный Кавказ 492

Эриван (տե՛ս Երևան)

Armenia (տե՛ս Հայաստան)

Berlin (տե՛ս Բեռլին)

Empire Ottoman (տե՛ս Օսմանյան

կայսրություն)
Europe (տե՛ս Եվրոպա)

Libia Italiana (տե՛ս Իտալական Լիբիա)
London (տե՛ս Լոնդոն)

Near East (տե՛ս Մերձավոր Արևելք)
New Brunswick (տե՛ս Նյու Բրունշվիկ)
New York (տե՛ս Նյու Յորք)
Orient (տե՛ս Արևելք)
Österreich (տե՛ս Ավստրիա)

Turquie (տե՛ս Օսմանյան կայսրություն)

U. K. (տե՛ս Մեծ Բրիտանիա)
U. S. A. (տե՛ս Ամերիկայի Միացյալ Նահանգներ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ
Իրարանցումներ ու փորձանքներ 3

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ
Կովկասահայության տագնապները 275

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ
Պարսկաստանը ալեբախումների հորձանուտում 514

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ
Ռազմա-քաղաքական իրադրությունը Պարսկաստանում
հեղափոխության աստիճանական անկման պայմաններում:
Սահմանադրական ուժերի հետնապահային
մարտերը և պարտությունը 700

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ
Հակասական զարգացումներ Թուրքահայոց կյանքում 775

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ
Իթթիհադի կառավարության տապալումը: Իթթիլաֆն
իշխանության գլուխ 1049

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 1091

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 1123

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 1173

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

ԳԻՐՔ

IV

Ստորագրված է տպագրության՝ 01.11.2010 թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:
Հրատ. 73,2 մամուլ, տպագր. 75,25 մամուլ = 70,0 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 41:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալեք Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52

1203